

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆԻ
ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԵՎ ՎԱՐՉԱԿԱՆ
ԳՈՐԾԵՐՈՎ
ՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ ԸՆՏՐԱՆԻ**

ՀՈՒՆՎԱՐ-ԴԵԿՏԵՄԲԵՐ 2011

ՀԱՏՈՐ V

Երևան
Փրինտինգ
2012

ՀՏԴ 347.9(479.25)
ԳՄԴ 67.99(2Հ)92
Հ 247

Հ 247 Հայաստանի Հանրապետության Վճռաբեկ դատարանի
քաղաքացիական և վարչական գործերով որոշումների ընտրանի
(հունվար-դեկտեմբեր 2011). -Եր.: Փրինթինֆո, 2012, 632 էջ:

Ժողովածուն կազմեցին

Լիպարիտ Դրմեյան ՀՀ վճռաբեկ դատարանի նախագահի խորհրդական,
իրավագիտության թեկնածու, ԵՊՀ դասախոս

Էմիլ Ամիրխանյան ՀՀ վճռաբեկ դատարանի նախագահի խորհրդական,
իրավագիտության թեկնածու

Էլեկտրոնային կրիչում առկա իրավական ակտերի հղումների համակարգը և
որոշումների դասակարգումները տրամադրվել են **ARMLAW** դատական ակտերի
որոնման համակարգի կողմից

ՀՏԴ 347.9(479.25)
ԳՄԴ 67.99(2Հ)92

ISBN 978-9939-831-36-7

- © Հայաստանի Հանրապետության Վճռաբեկ դատարան
- © Լիպարիտ Դրմեյան (բովանդակության համար)
- © Էմիլ Ամիրխանյան (բովանդակության համար)

giz



On behalf of
**Federal Ministry
for Economic Cooperation
and Development**

«Հարավային Կովկասում իրավական և դատական
բարեփոխումների համար խորհրդատվություն»
ծրագիր

Programm "Rechts- und Justizreformberatung im Südkaukasus"

Սույն ընտրանին հրատարակվել է Գերմանիայի միջազգային
համագործակցության ընկերության (GIZ)
օժանդակությամբ

Սույն ընտրանում արտահայտված տեսակետները պարտադիր չէ,
որ արտացոլեն ԳԴՀ կառավարության տեսակետները

ՆԱԽԱԲԱՆ

Անցած հինգ տարիների ընթացքում ձևավորված դատական պրակտիկան ցույց է տալիս, որ առկա է դատական իշխանության ողջ ներուժն օրենսդրության կատարելագործման, դրանում առկա թերությունների վերացման համար օգտագործելու միտում: Այս առումով կարևորագույն գործառնություն է վերապահված Վճռաբեկ դատարանին: Հանդես գալով որպես Հայաստանի Հանրապետության դատական եռաստիճան համակարգի բարձրագույն ատյան՝ Վճռաբեկ դատարանի դերը հատկապես կարևորվեց 2005 թվականի սահմանադրական բարեփոխումների արդյունքում, որով սահմանվեց, որ ՀՀ վճռաբեկ դատարանը կոչված է լինելու օրենքի միատեսակ կիրառման երաշխավորը և նպաստել իրավունքի զարգացմանը:

Հատկանշական է, ստորադաս և նաև Վճռաբեկ դատարանի կողմից հղումների կատարումը ՀՀ բարձրագույն դատական ատյանի որոշումներին, ինչն անատարկելիորեն վկայում է Հայաստանի Հանրապետությունում իրավական նոր մշակույթի ձևավորման մասին: Նման միտումները դրական առաջխաղացման հետ մեկտեղ առաջ են բերում նորանոր հարցեր ու խնդիրներ, որոնց անհրաժեշտ են արդյունավետ լուծումներ: Անհրաժեշտություն է առաջանում ապահովել դատական ակտի, որպես դատարանի դիրքորոշումը առարկայացնող աղբյուրի հասանելիությունը հանրությանը: Հարկ է ընդգծել, որ օրենքների միատեսակ կիրառությունն ինքնանպատակ չէ, այն իր հերթին կոչված է մարդու իրավական պաշտպանվածության բարձրացմանը, մասնավորապես՝ կոչված է նպաստելու դատարանի և օրենքի առջև բոլորի հավասարությանը: Եթե օրենքը որոշակի ձևով կիրառվել է մի անձի նկատմամբ, ապա հասարակության մնացած անդամները նմանատիպ գործերով կարող են դատարանից պահանջել, որպեսզի նույն օրենքն իրենց նկատմամբ էլ նույն կերպ կիրառվի: Դրանով հնարավոր կլինի ապահովել իրավական որոշակիությունը և իրավական կանխատեսելիությունը: Վճռաբեկ դատարանի նախադեպային որոշումների նպատակը հենց դատավարության բոլոր մասնակիցների համար կանխատեսելի արդարադատության ապահովումն է: Կանխատեսելի արդարադատության իրականացումն ապահովելու նպատակով Վճռաբեկ դատարանը պետք է հետևի, որ ստորադաս դատական ատյանների դատական ակտերը լինեն ոչ միայն օրինական, այլ նաև իրավական, համապատասխանեն իրավական որոշակիության սկզբունքին, Վճռաբեկ դատարանի դիրքորոշումներին և իրենց գործունեությամբ նպաստեն իրավունքի զարգացմանը: Այս կարևոր սկզբունքի ամրագրումն արդեն իսկ հսկայական քայլ է առաջ և թույլ կտա առաջիկայում օրենսդրորեն առավել հստակ ամրագրել այն երաշխիքները, որոնք կապահովեն դատական համակարգի միասնականությունը և բարձրագույն դատական ատյանի դերն այս հարցում: Օրենքի միատեսակ կիրառման համար կարևոր է այն հանգամանքը, որ Վճռաբեկ դատարանի որոշումները մատչելի լինեն հասարակության համար, որի արդյունքում կբարձրանա

նաև հասարակական վստահության մակարդակն արդարադատության նկատմամբ:

Դատական ակտերի մատչելիությունն ապահովվում է տարբեր միջոցների կիրառմամբ, այդ թվում ՀՀ վճռաբեկ դատարանի որոշումների ընտրանիների հրապարակմամբ, որոնք արդյունավետ լուծումների շնորհիվ ապահովում են դատական ակտերի հասանելիություն հասարակության շահագրգիռ խմբերին:

Սույն ժողովածուն կոչված է նպաստելու հասարակության իրավագիտակցության, դատական իշխանություն կրողների պատասխանատվության զգացումը բարձրացնելուն, այն կօգնի դատավորներին, փաստաբաններին ծանոթանալ Վճռաբեկ դատարանի իրավական դիրքորոշումներին և հետևել դրանց: Կարևոր է ժողովածուի դերը ոչ միայն իրավակիրառ պրակտիկայի միատեսակությունն ապահովելու գործում, այլև արդարադատության թափանցիկության գործում: Այս ընտրանին ՀՀ վճռաբեկ դատարանի քաղաքացիական և վարչական գործերով որոշումների հինգերորդ ժողովածուն է և ներառում է գրքում ընդգրկված դատական ակտերի համառոտագրերը: Երեք տարի անընդմեջ որոշումների ընտրանիները լույս են տեսնում առարկայական դասակարգմամբ, որտեղ որոշումները ներկայացվում են ըստ որոշմամբ լուծում տված խնդրի ճյուղային պատկանելության, ինչը հնարավորություն է տալիս առավել հեշտությամբ գտնել որոնվող դատական ակտը:

Ժողովածուն ներառում է նաև լազերային սկավառակ, որում ներառված է գրքի էլեկտրոնային տարբերակը: Էլեկտրոնային կրիչում առկա նորարարական լուծումները հնարավորություն են տալիս արագ և արդյունավետ ծանոթանալ ոչ միայն ՀՀ վճռաբեկ դատարանի որոշումներին, այլև այդ որոշումների համառոտագրերում պարունակվող իրավական ակտերին: Վերջիններիցս յուրաքանչյուրը պարունակում է ակտիվ հղում, որոնց միջոցով կարելի է մուտք գործել համապատասխան կայք և ծանոթանալ իրավական ակտի վերջին ինկորպորացիային: Նույն սկզբունքն է կիրառվել նաև Մարդու իրավունքների եվրոպական դատարանի որոշումների նկատմամբ. գործերի անվանումների ակտիվ հղումները հնարավորություն են տալիս մուտք գործել ՄԻԵԴ որոշումների տեղեկատվական բազա և ծանոթանալ որոշման ամբողջական տեքստին:

Ե. ԽՈՒՆԴԿԱՐՅԱՆ

ՀՀ վճռաբեկ դատարանի քաղաքացիական
և վարչական պալատի նախագահ



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆԻ
ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԵՎ ՎԱՐՉԱԿԱՆ
ԳՈՐԾԵՐՈՎ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ ԸՆՏՐԱՆԻ**

Թիվ 5

Հունվար-դեկտեմբեր 2011

ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԳՈՐԾԵՐ

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԿԱՐԳ

Իրավունքների և ազատությունների դատական պաշտպանությունը	1
Տեղական ինքնակառավարումը ՀՀ-ում	17

ՊԵՏԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՀԻՄՈՒՆՔՆԵՐ

Պետական գույքի մասնավորեցում	22
------------------------------------	----

ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ

Քաղաքացիական իրավունքների պաշտպանությունը	29
---	----

Քաղաքացիական իրավունքի սուբյեկտներ

Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություններ.....	44
Սնանկություն.....	61

Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցում.....	90
--	----

Սեփականության իրավունք և այլ գույքային իրավունքներ

Ընդհանուր դրույթներ.....	98
Պայմանագրով գույք ձեռք բերողի սեփականության իրավունքի ծագման պահը	107
Ձեռքբերման վաղեմություն.....	115
Ինքնակամ կառույց	150
Ընդհանուր սեփականություն	156
Ընդհանուր դրույթներ գրավի մասին.....	166
Սեփականության իրավունքի և այլ գույքային իրավունքների պաշտպանությունը.....	190

Գործարքի անվավերություն.....	206
------------------------------	-----

Հայցային վաղեմություն.....	217
----------------------------	-----

Ընդհանուր դրույթներ պարտավորությունների մասին

Պարտավորությունները կատարելը	245
Երաշխավորություն	251
Նախավճար	256
Պարտավորությունները դադարելը	245

Պայմանագրերից ծագող պարտավորություններ	
Ապրանքների մատակարարում	261
Վարկ	269
Ապահովագրություն	279
Վնաս պատճառելու և անհիմն հարստացման հետևանքով ծագած պարտավորություններ	
Ընդհանուր դրույթներ վնասի հատուցման մասին	288
Քաղաքացու կյանքին կամ առողջությանը պատճառված վնասը հատուցելը	299
Ժառանգման իրավունք	337
ԸՆՏԱՆԵԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ	
Ծնողների և զավակների իրավունքներն ու պարտականությունները	349
Ընտանիքի անդամաների ալիմենտային պարտավորությունները	375
ԱՆԽՆԱՏԱՆՔԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆՔ	381
ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱՊԱՀՈՎՈՒԹՅՈՒՆ	390
ՏՆՏԵՍԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ	395
ՀՈՂԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆՔ	401
ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ	
Ապացույցներ և ապացուցում	411
Դատական ծախսեր	428
Դատական ծանուցումներ	442
Հայցի հարուցումը	455
Գործի վարույթի կասեցումը	468
ՎԱՐՉԱԿԱՆ ԳՈՐԾԵՐ	
ՊԵՏԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՀԻՄՈՒՆՔՆԵՐ	
Ստուգումների կազմակերպում և անցկացում	473
ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ	502
ՄԱՔՍԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆՔ	526
ԳՈՒՅՔԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱՆՑՈՒՄ	547
ՎԱՐՉԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ	
Ապացույցներ և ապացուցում	555
Դատական ծախսեր	564
Վարույթը վերաքննիչ դատարանում	574

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԿԱՐԳ

ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ԵՎ ԱԶԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴԱՏԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ

01.07.2011թ.

1. Հայկ Սահակյան v. ՀՀ ֆինանսների նախարարության, քաղ. գործ թիվ ԵԿԳ/0780/02/09 (պատճառված վնասի հատուցման պահանջի մասին) **Էջ 1-10**

Խնդիրը. Արդյո՞ք Մարդու իրավունքների եվրոպական դատարանի կողմից բարոյական վնասի հատուցման վերաբերյալ դիրքորոշումը պարտադիր է ՀՀ դատարանների համար բարոյական վնասի հատուցման հարցը լուծելիս:

Վճռաբեկ դատարանի դիրքորոշումը

Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ Եվրոպական դատարանը պատճառված բարոյական վնասը փոխհատուցում է համապատասխան լիազորության առկայության շրջանակում, այսինքն՝ բարոյական վնասի փոխհատուցում սահմանելը դատարանի լիազորությունն է, և հենց այդ դատարանն էլ իրավասու է կիրառել այն: Մինչդեռ ՀՀ դատական օրենսգրքի 15-րդ հոդվածի 4-րդ մասը սահմանում է ոչ թե Եվրոպական դատարանի այս կամ այն լիազորությունները ներպետական ատյաններում կիրառելու, այլ նույնանման փաստական հանգամանքներով գործի քննության ժամանակ դատական ակտի հիմնավորումների (այդ թվում՝ օրենքի մեկնաբանությունների) պարտադիր լինելու պահանջ:

** Միաժամանակ, սույն որոշմամբ ՀՀ վճռաբեկ դատարանը անդրադարձել է ապօրինի դատարարություն, քրեական պարասիսանսարության ենթարկելու, որպես խախտման միջոց կալանք կամ չքաղցակայելու մասին արտագրություն կիրառելու դեպքում անձին պարձատված վնասի հատուցման, ինչպես նաև վնասի հատուցման հայցերով պետական փորձի վճարման պարտավորության հարցին:*

2. Արտակ Գալստյան v. Հարություն Դրիգո, քաղ. գործ թիվ ԵԱՆԳ/0461/02/10 (սեփականության իրավունքը ձանաչելու և պետական գրանցում կատարելու պահանջի մասին) **Էջ 11-16**

Խնդիրը. Արդյո՞ք ՀՀ վերաքննիչ դատարանը, կայացնելով մի դատական ակտ, որն ստորագրվել է ոչ այն դատավորի կողմից, որն այն կայացրել է, «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին մասի իմաստով կարող է որակվել որպես «օրենքի հիման վրա ստեղծված դատարան»:

Վճռաբեկ դատարանի դիրքորոշումը.

Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ Եվրոպական դատարանը իր նախադեպային որոշմամբ նշել է, որ «օրենքի հիման վրա ստեղծված դատարան» արտահայտությունը վերաբերում է ոչ միայն դատարանի օրենքի ուժով ստեղծված լինելու հանգամանքին, այլ նաև դատարանի կազմի օրինական լինելուն (տես՝ Պոստլոսկո ընդդեմ Ռուսաստանի Եվրոպական դատարանի 04.06.2003 թվականի վճիռը, գանգատ 63486/00, կետ 39,Բուսկարինի ընդդեմ Սան Մարինո Եվրոպական դատարանի 04.05.2000 թվականի վճիռը, գանգատ 31657/96):

Նման պայմաններում Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ Վերաքննիչ դատարանը, կայացնելով մի դատական ակտ, որն ստորագրվել է ոչ այն դատավորի

կողմից, որն այն կայացրել է, «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի (այսուհետ՝ Կոնվենցիա) 6-րդ հոդվածի 1-ին մասի իմաստով չի գործել որպես «օրենքի հիման վրա ստեղծված դատարան»:

ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՈՒՄԸ ՀՀ-ՈՒՄ

27.12.2011թ.

3. Տանյա Մելիքյան v. Տավուշի մարզի Բերդի քաղաքապետ, քաղ. գործ **Էջ 17-21**
 ՏԳՉ/0081/02/11 (աշխատանքում վերականգնելու և հարկադիր պարապուրդի գումար վճարելու պահանջների մասին)

Խնդիր. Արդյո՞ք համայնքի ավագանու համաձայնությունը պարտադիր է համայնքային ենթակայության ոչ առևտրային կազմակերպությունների ղեկավարների ազատման համար:

Վճռաբեկ դատարանի դիրքորոշումը. «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի վերոհիշյալ նորմերի համակարգային վերլուծության արդյունքում Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ նշված օրենքով հստակ տարանջատված են համայնքային ենթակայության իրավաբանական անձանց կազմակերպարավական ձևերը (բյուջետային հիմնարկներ, առևտրային և ոչ առևտրային կազմակերպություններ), ինչպես նաև դրանց ղեկավարների նշանակման և ազատման կարգը: Ընդ որում, օրենքը համայնքի ավագանու համաձայնությունը պարտադիր է համարում միայն բյուջետային հիմնարկների ղեկավարների նշանակման և ազատման, ինչպես նաև ոչ առևտրային կազմակերպությունների ղեկավարների նշանակման ժամանակ, իսկ ոչ առևտրային կազմակերպությունների ղեկավարների ազատման համար համայնքի ավագանու համաձայնությունը չի պահանջում:

ՊԵՏԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՀԻՄՈՒՆՔՆԵՐ

ՊԵՏԱԿԱՆ ԳՈՒՅՔԻ ՄԱՍՆԱՎՈՐԵՑՈՒՄ

04.03.2011թ.

4. Ջիվանշիր և Լաուրա Ծատրյաններ v. Արթուր Մանուկյան, ՀՀ Սյունիքի մարզի Տաթևի գյուղապետարան, ՀՀ կառավարությանն առընթեր պետական գույքի կառավարման վարչություն, քաղ. գործ **Էջ 22-28**
 ՄԳ/0809/02/09 (պետական գույքի մասնավորեցման պայմանագիրը և կենցաղի տան զբաղեցրած հողատարածքը վաճառելու մասին համայնքի ղեկավարի որոշումն անվավեր ճանաչելու պահանջների մասին)

Խնդիր. Ո՞ր պահին անձը պետք է համարվի ընկերության (ձեռնարկության) կամ «փոքր» օբյեկտի աշխատավորական կոլեկտիվի անդամ, որպեսզի ունենա մասնավորեցվող օբյեկտի գույքը ձեռք բերելու իրավունք:

Վճռարեկ դատարանի դիրքորոշումը. Վճռարեկ դատարանն արձանագրել է, որ օրենսդիրն ընկերության (ձեռնարկության) կամ «փոքր» օբյեկտի աշխատավորական կոլեկտիվի անդամ համարվելու հանգամանքը պայմանավորել է ոչ թե օբյեկտի մասնավորեցման, այլ մասնավորեցման մասին որոշում ընդունելու պահով և ամրագրել է մասնավորեցման օբյեկտը դրա աշխատավորական կոլեկտիվին առաջարկելու անհրաժեշտություն:

ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ

ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ

27.12.2011թ.

5. «Վահան ԵՀԱ» ՍՊԸ v. «Գլոբալ Գոլդ Հանքավան» ՍՊԸ, քաղ. գործ ԵԿԴ/0060/04/10 (սնանկ ձանաչելու պահանջի մասին) **Էջ 29-34**

Խնդիր. Արդյո՞ք պայմանագրով սահմանված վեճերի լուծման հատուկ կարգի սահմանումը խախտում է անձի՝ իր իրավունքների դատական պաշտպանության սահմանադրական իրավունքը և արդյո՞ք այն սահմանափակում է անձի՝ սնանկ ձանաչելու պահանջի ներկայացման իրավունքը:

Վճռարեկ դատարանի դիրքորոշումը. Վճռարեկ դատարանն արձանագրել է, որ քաղաքացիական իրավունքների պաշտպանության համար օրենսդիրը, ի սպասելիքում անձի իրավունքների դատական պաշտպանության սահմանադրական իրավունքի, նախատեսում է դատարան դիմելու հնարավորություն: Միաժամանակ, պայմանագրային հարաբերությունների ղեկավարող կողմերը որոշակի ազատություն ունեն ոչ միայն պայմանագրի կնքելու, պայմանագրի տեսակները, պայմանագրի պայմանները որոշելու, այլև պայմանագրի հետ կապված վեճերի լուծման կարգը սահմանելու առումով:

Վճռարեկ դատարանը գտել է, որ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 13-րդ, և 437-րդ հոդվածների գործողությունն սպառնալից է անձի՝ դատական պաշտպանության սահմանադրական իրավունքի սպառնալից հարաբերակցության նպատակով դատարանները պայմանագրային վեճեր քննելիս պետք է պարզեն նաև հետևյալ հարցը՝ Արդյո՞ք տվյալ պայմանագրի հետ կապված վեճի լուծման այլ կարգ է սահմանված և Արդյո՞ք այն պահպանվել է: Վճռարեկ դատարանը գտել է, որ այդ հանգամանքը չի խախտում անձի՝ իր իրավունքների դատական պաշտպանության սահմանադրական իրավունքը, քանի որ տվյալ դեպքն անձին ընդհանրապես չի զրկում իր՝ պայմանագրից ծագած իրավունքների խախտման համար դատարան դիմելու իրավունքից, այլ ուղղակի նախատեսում է դրա իրականացման որոշակի կարգ, որը, ելնելով պայմանագրային հարաբերությունների իմաստից, լիովին համաչափ է անձի սահմանադրական իրավունքների համատեքստում:

Միաժամանակ, Վճռարեկ դատարանն արձանագրել է, որ ՀՀ քաղաքացիական օրենսգրքով այդ հնարավորությունն ամենևին չի սահմանափակում պարտապանի՝ սնանկ ձանաչելու պահանջի ներկայացման իրավունքը և այն չի ստորադասում գումարի բռնագանձման պահանջ ներկայացնելու իրավունքին: Այսինքն՝ նշված դեպքերից յուրաքանչյուրում կողմն ազատված չէ պայմանագրով նախատեսված պարտականությունը կատարելուց:

14.10.2011թ.

6.Ստիլստինգ Ադմինիստրատենկանտոր Ֆայնենշլ Փերֆորմանս Հոլդինգս հիմնադրամ, «Լուքսթեմա Լիմիթեդ» ընկերություն, «Յուկոս Ինթերնեշլ UK B.V.» ընկերություն և Արմեն Միքայելյան v. ՀՀ արդարադատության նախարարության իրավաբանական անձանց պետական ռեգիստրի գործակալության Արաբկիրի տարածքային բաժին, «Նեֆտեննայա կոմպանիա «Ռոսնեֆտ»» ԲԲԸ, քաղ. գործ ԵԱԲԳ/1494/02/10 (առոչինչ գործարքի անվավերության հետևանքներ կիրառելու պահանջի մասին)

**Էջ
35-43**

Խնդիր. Դատարան դիմելու իրավունքի իրացման դեպքում որոնք են հայցվորի շահագրգռվածությունը որոշելու վավերապայմանները:

Վճռաբեկ դատարանի դիրքորոշումը. Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ շահագրգռվածությունը դատարան ներկայացված որևէ պահանջի քննության նախապայման է, ուստի դատարանը պետք է պարզի բոլոր քննվող գործերով հայցվորի շահագրգռվածության հարցը: Դատարան դիմելով՝ հայցվորը պետք է հիմնավորի, իսկ դատարանը՝ պարզի:

1. Հայցվորի որ իրավունքներն են իրականում խախտվել և ինչ անբարենպաստ հետևանքների են հանգեցրել այդ խախտումները,

2. Ներկայացված հայցի նպատակը Արդյո՞ք իրավունքների և օրինական շահերի պաշտպանությունն ու վերականգնումն է, և հնարավոր է Արդյո՞ք ընտրված միջոցով պաշտպանել կամ վերականգնել հայցվորի իրավունքները (կամ, համապատասխան դեպքերում, նրան պատճառված վնասը փոխհատուցել):

** Միաժամանակ ՀՀ վճռաբեկ դատարանը անդրադարձել է լուծարումից հեղու ընկերության գույքը վերջինիս բաժնետիրոջը տրամադրելու, լուծարված ընկերությունից գումար բռնագանձելու, իրավաբանական անձի անձնական օրենքի կիրառման և արագացված դատաքննություն անցկացնելու հարցերին:*

ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՍՈՒԲՅԵԿՏՆԵՐ

Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություններ

01.07.2011թ.

7. Լենա Տոնյան, Անիչկա Ավետիսյան, Ավարդ Մկրտչյան, Անահիտ Բաբայան, Շուշիկ Լանոյան, Մարիետա Զաքարյան, Վարդան Վարդանյան, Սիրան Դավթյան, Վարսիկ Մոսիկյան, Սվետլանա Մարտիրոսյան v. «Հանրախանութ Դիմաց» ՍՊԸ, Հրանտ Շահնազարյան, քաղ. գործ ԼԴ/0891/02/09 (Ընկերության մասնակիցների 05.12.2007 թվականի արտահերթ ընդհանուր ժողովի թիվ 2 արձանագրությունն անվավեր ճանաչելու, անվավերության հետևանքներ կիրառելու և Ընկերության մասնակիցների բաժնեմասերի ձշտում կատարելու պահանջների մասին)

**Էջ
44-49**

Խնդիր. Արդյո՞ք սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունից դուրս գալու մասին դիմում ներկայացրած մասնակիցն ունի այդ ընկերության ընդհանուր ժողովի որոշումները վիճարկելու իրավունք:

Վճռաբեկ դատարանի դիրքորոշումը. Վճռաբեկ դատարանը արձանագրել է, որ այն պահից, երբ ընկերության մասնակիցը դիմում է ընկերությունից դուրս գալու

համար, նրա բաժնեմասերն անցնում են ընկերությանը, իսկ այդ պահից սկսած վերջինս չի կարող ընկերության ընդհանուր ժողովի որոշումներն անվավեր ճանաչելու պահանջով դիմել դատարան, քանի որ վերջինս, այդ բաժնեմասերի նկատմամբ արդեն չունենալով սեփականության իրավունք, չի համարվում ընկերության մասնակից:

14.10.2011թ.

8. Գոմիդաս Հարթոնյան v. «Ագուր-Քոմփ» ՍՊԸ, տնօրեն Ռաֆայել Մկրտչյան, Գուրգեն Մարտիրոսյան, քաղ. գործ ԵԱԴԴ/0832/02/09 (ընկերությունից դուրս գալու, բաժնեմասն առանձնացնելու և որպես դրա հետևանք նրա գրանցման վայրն իր տարածքից հանելու պահանջի մասին)

Էջ
50-60

Խնդիր. Արդյո՞ք սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության մասնակցի՝ ընկերությունից դուրս գալու համար անհրաժեշտ է որոշակի նախապայմանների առկայություն:

Վճռաբեկ դատարանի դիրքորոշումը. ՀՀ վճռաբեկ դատարանը արձանագրել է, որ ընկերության մասնակցի նշված իրավունքի իրացման համար որևէ նախապայման չի պահանջվում, և դա կախված է բացարձակապես մասնակցի կամահայտնությունից: Սա նշանակում է, որ մասնակցի նշված իրավունքի իրացման հիմքում ընկած չէ այս կամ այն սուբյեկտի (սույն գործով պատասխանողների) պարտականությունը՝ դրսևորելու որոշակի վարքագիծ, որի կատարումն անհրաժեշտ կլինի մասնակցի այդ իրավունքի իրացման համար:

Մասնկություն

04.03.2011թ.

9. Սարգիս Ամիրխանյան v. «Ջեներալ Տրանստորլո Մ.Ք.» ՓԲԸ, քաղ. գործ ԵՇԴ/0045/04/09 (սնանկ ճանաչելու պահանջի մասին)

Էջ
61-65

Խնդիր. 1. Արդյո՞ք սնանկության վարույթի ընթացքում պարտատերերի պահանջների վերջնական ցուցակի հաստատումը բոլոր դեպքերում առնչվում է պարտապանի իրավունքներին:

2. Արդյո՞ք օրենքը նախատեսում է սնանկության վարույթի ընթացքում պարտատերերի վերջնական ցուցակը մասնակի հաստատելու հնարավորություն:

Վճռաբեկ դատարանի դիրքորոշումը.

1. Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ պահանջների վերջնական ցուցակը հաստատելու մասին որոշումը չի կարող չառնչվել պարտապանի իրավունքներին, քանի որ այն պարունակում է հենց նրա գույքից բավարարում ստանալու իրավունք ունեցող անձանց ցանկը, ուստի պարտապանը համարվում է շահագրգիռ անձ, հետևաբար ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 2-րդ հոդվածի հիմքով օժտված է դատարան դիմելու իրավունքով: Բացի այդ, պարտապանի այդ իրավունքն ուղղակիորեն ամրագրված է նաև «Մասնկության մասին» ՀՀ օրենքի 46-րդ հոդվածի 8-րդ մասում, որը որևէ բացառություն չի անում պահանջների վերջնական ցուցակը հաստատելու մասին որոշումը բողոքարկելու համար:

2. Վճարել դատարանն արձանագրել է, որ բոլոր դեպքերում դատարանը պարտավոր է կայացնել որոշում նախնական ցուցակում ընդգրկված բոլոր պարտատերերի մասով, և օրենքը չի նախատեսում պարտատերերի վերջնական ցուցակը մասնակի հաստատելու հնարավորություն:

Հետևաբար, Վճարել դատարանը գտել է, որ պահանջների վերջնական ցուցակը հաստատելու մասին որոշումը պետք է կայացվի ներկայացված բոլոր առարկությունների քննարկման արդյունքում, որով պետք է անդրադառնալ նախնական ցուցակում ընդգրկված բոլոր պարտատերերի պահանջների հաստատման կամ մերժման հարցերին:

01.04.2011թ.

10. «Արդշինբանկ» ԲԲԸ լուծարվող բանկ v. Սպարտակ Երիցյան, քաղ. գործ ԵԱԲԳ/0018/04/10 (սնանկ ճանաչելու պահանջի մասին)

Էջ
66-73

Խնդիր. Արդյո՞ք սնանկ ճանաչելու դիմումը վարույթ ընդունել մասին դատարանի որոշումը ստանալուն հաջորդող 7 օրվա ընթացքում սնանկությունը չվիճարկելը պարտապահին զրկում է սնանկության վճիռը բողոքարկելու և սնանկությունը վիճարկելու հնարավորությունից:

Վճարել դատարանի դիրքորոշումը.

Վճարել դատարանն արձանագրել է, որ «Մսանկության մասին» ՀՀ օրենքի 20-րդ հոդվածի ուժով ապահովվում է սնանկ ճանաչելու վճիռը պարտապահի կողմից բողոքարկելու իրավունքը և այդ դատական ակտի վերանայման հնարավորությունը ու այն կախվածության մեջ չի դրվում սնանկության դիմումը վարույթ ընդունելու մասին որոշումը ստանալու պահից 7 օրվա ընթացքում պարտապահի կողմից իր սնանկությունը գրավոր վիճարկելու հանգամանքից:

11. «Լեոնամետալուրգիայի ինստիտուտ» ՓԲԸ v. «Սիփան 1» ՍՊԸ, քաղ. գործ ԵԿԴ/0074/04/09 (սնանկ ճանաչելու պահանջի մասին)

Էջ
74-79

Խնդիր. Արդյո՞ք սնանկ ճանաչելու հիմքում դրված գործարքների վիճարկման պայմաններում պարտավորությունը կարող է անվիճելի համարվել:

Վճարել դատարանի դիրքորոշումը. Վճարել դատարանն արձանագրել է, որ «Մսանկության մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 2-րդ մասից հետևում է, որ սնանկ ճանաչելու հիմք է ոչ թե վճարային պարտավորության, այլ անվիճելի վճարային պարտավորության առկայությունը: «Մսանկության մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 2-րդ մասի «բ» կետի հիմքով վճարային պարտավորությունների անվիճելի լինելը կասկածի տակ առնելու համար բավարար է ոչ միայն պարտապահի պարտավորության կամ կետանցի բացակայության փաստն ապացուցող հիմքերի առկայությունը, այլ նյութափրավական վեճի առկայությունը, որն ինքնին պարտավորության վիճելիությունը հավաստող հիմք է:

Հիմք ընդունելով վերոգրյալը, Վճարել դատարանը գտել է, որ «Մսանկության մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 2-րդ մասի «բ» կետի՝ «պահանջի դեմ առարկելու բավարար հիմքեր» ձևակերպումը ներառում է նաև պարտավորության հիմքերի հետ կապված նյութափրավական վեճի առկայությունը:

27.05.2011թ.

13. «Ռոբերտ Հարությունյան v. Ռադիկ Ենգիբադյան, քաղ. գործ ԵԶ ԵԱՆԴ/0003/04/09 (սնանկ ձանաչելու պահանջի մասին) Էջ 80-84

Խնդիր. Ո՞ր հարցին պետք է անդրադառնա դատարանը սնանկության գործերով պարտատիրոջ կողմից օրենքով սահմանված ժամկետի բացթողմամբ պահանջ ներկայացված լինելու դեպքում:

Վճռաբեկ դատարանի դիրքորոշումը. Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ պարտատերերի կողմից իրենց պահանջները ներկայացնելու համար օրենքը սահմանում է մեկամսյա ժամկետ: Միաժամանակ, օրենսդիրը նախատեսել է այդ ժամկետը վերականգնելու հնարավորություն, որի դեպքում դատարանը պետք է որոշի պահանջը սահմանված ժամկետներում չներկայացնելու պատճառների հարգելիությունը: Հիմք ընդունելով վերոգրյալը՝ Վճռաբեկ դատարանը գտել է, որ դատարանը, ելնելով «Մասնկության մասին» ՀՀ օրենքի 82-րդ հոդվածի 2-րդ մասի պահանջից, պահանջը սահմանված ժամկետներում չներկայացնելու պատճառների հարգելիությունը որոշելուց հետո միայն կարող է անդրադառնալ պահանջը համապատասխան հերքում գրանցելու կամ գրանցումը մերժելու հարցին:

27.12.2011թ.

14. «Երևանի մերձքաղաքային ուղևորատար ավտոտրանսպորտային» ԲԲԸ-ի լուծարային հանձնաժողովի դիմումը, քաղ. գործ ԵԿԴ/0018/04/10 (սնանկ ձանաչելու պահանջի մասին) Էջ 85-89

Խնդիր. Այս որոշմամբ ՀՀ վճռաբեկ դատարանը «Մասնկության մասին» ՀՀ օրենքի համատեքստում անդրադարձել է լուծարման գործընթացում գտնվող պարտապանի մոտ հարկերի և պարտադիր վճարների գերավճարների առկայությունը պարզելուն ուղղված ուսումնասիրությունների անցկացման հարցին:

Վճռաբեկ դատարանի դիրքորոշումը. Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ պարտապանի մոտ ստուգում կամ ուսումնասիրություն իրականացնելն արգելելն օրենսդիրը պայմանավորել է պարտապանի լուծարման գործընթացը սկսելու հետ: Այսինքն՝ լուծարման գործընթացում գտնվող պարտապանի մոտ ստուգում կամ ուսումնասիրություն չի թույլատրվում իրականացել, բացառությամբ հարկերի և պարտադիր վճարների գերավճարների առկայությունը պարզելուն ուղղված ուսումնասիրությունների, ընդ որում, պարտապանի լուծարման գործընթաց սկսելու մասին դատարանն ընդունում է որոշում:

** Միաժամանակ ՀՀ վճռաբեկ դատարանը արձանագրել է, որ Ընկերությանը սնանկ ձանաչելու դիմում ներկայացնելու փաստով ավարտվել է ՀՀ քաղաքացիական օրենսգրքով նախատեսված կանոնակարգումներով Ընկերությունը լուծարելու գործընթացը, և սկսվել է «Մասնկության մասին» ՀՀ օրենքով նախատեսված կանոնակարգումներով Ընկերությանը սնանկ ձանաչելու դատական վարույթը:*

ԳՈՒՅՔԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱՆՑՈՒՄ

14.10.2011թ.

15. «Երևանի քաղաքապետ v. Գոհար Արամյան, քաղ. գործ ԵԿԳ/3032/02/09 (հողամասի վարձակալության պայմանագիրը լուծելու և որպես դրա հետևանք գույքի նկատմամբ իրավունքի պետական գրանցամատյանում կատարված սեփականության և վարձակալության իրավունքների գրառումները չեղյալ համարելու պահանջների մասին):

Էջ 90-97

Խնդիր. Արդյո՞ք գույքի նկատմամբ իրավունքի գրառումը կարող է չեղյալ համարվել և արդյո՞ք նման պահանջը ենթակա է դատարանում քննության:

Վճռաբեկ դատարանի դիրքորոշումը. Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ գույքի նկատմամբ իրավունքների գրանցման, դադարեցման, չեղյալ ճանաչելու հետ կապված հարաբերությունները կարգավորվում են «Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին» ՀՀ օրենքով, իսկ նշված օրենքը սեփականության իրավունքի գրառումը չեղյալ հայտարարելու իրավական հնարավորություն չի նախատեսում: Նույն օրենքի 33-րդ հոդվածը նախատեսում է միայն անշարժ գույքի վարձակալության իրավունքի պետական գրանցման և անշարժ գույքի վարձակալության իրավունքի գրանցման վկայականը չեղյալ հայտարարելու իրավական հնարավորություն:

Հետևաբար, Վճռաբեկ դատարանը գտել է, որ դատարանն իրավասու չէ գույքի նկատմամբ սեփականության իրավունքի գրառումը չեղյալ համարել, հետևաբար նման պահանջը ենթակա չէ դատարանում քննության:

ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ ԵՎ ԱՅԼ ԳՈՒՅՔԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐ

Ընդհանուր դրույթներ

01.07.2011թ.

16. Տիգրան Եսոբյան v. Սամվել Ստեփանյան, Լիլիա Ստեփանյան, քաղ. գործ ԿԳԻ/0289/02/10 (գույքը կալանքից (արգելանքից) ազատելու պահանջի մասին)

Էջ 98-106

Խնդիր. 1. Այս որոշմամբ ՀՀ վճռաբեկ դատարանը անդրադարձել է սեփականության իրավունքից զրկելու համար անհրաժեշտ պայմանների հարցին:

2. Քրեական գործով վարույթն ավարտվելուց հետո կալանքի (արգելանքի) տակ գտնվող գույքի պատկանելիության վերաբերյալ վեճ ծագելու դեպքում ո՞ր դատարանին է ընդդատյա շահագրգիռ անձի (գույքի սեփականատիրոջ կամ դրա օրինական տիրապետողի) գույքն արգելանքից հանելու վերաբերյալ իրավունքի պաշտպանությունը:

Վճռաբեկ դատարանի դիրքորոշումը. 1. Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ Մարդու իրավունքների եվրոպական դատարանի նախադեպային իրավունքի համաձայն՝ թիվ 1 արձանագրության 1-ին հոդվածը բաղկացած է 3 առանձին կանոններից, որի առաջին կանոնը ձևակերպում է գույքից անարգել օգտվելու իրավունքը, երկրորդը վերաբերում է գույքի առգրավման հարցերին և այդ

անչությունը հստակ պայմաններ է սահմանում, իսկ երրորդ կանոնն ընդունում է, որ պետությունները, ի թիվս այլ իրավասությունների, իրավունք ունեն ընդհանուր շահից ելնելով վերահսկել գույքի օգտագործումը՝ այդ օրենքների կիրառման անհրաժեշտության պարագայում (Տես՝ Սպորրոնգը և Լոնրոդն ընդդեմ Շվեդիայի գործով Եվրոպական դատարանի 23.09.1982 թվականի վճիռը, կետ 61):

Գույքից անարգել օգտվելու միջամտությունը կարող է թույլատրելի համարվել, եթե՝

1. նախատեսված է օրենքով

2. բխում է հանրային շահից

3. անհրաժեշտ է ժողովրդավարական հասարակությունում:

Առաջին պայմանը ենթադրում է համապատասխան օրենքի առկայություն, որը նախատեսում է սեփականության օգտագործման սահմանափակումները: Այն միաժամանակ պետք է բավարարի թիվ 1 արձանագրությանը և Եվրոպական դատարանի վճիռներով սահմանված պահանջները (տես Ջեյմսը և այլոք ընդդեմ Միացյալ Թագավորության գործով Եվրոպական դատարանի 1986 թվականի փետրվարի 21-ի վճիռը, կետ 67): Երկրորդ պայմանը սահմանում է, որ սեփականության իրավունքի իրականացման միջամտությունը պետք է հետապնդի իրավաչափ նպատակ՝ ելնելով ընդհանուր, հանրային շահից (տես Former king of Greece and others v Greece գործով Եվրոպական դատարանի 2000 թվականի նոյեմբերի 23-ի վճիռը, կետ 83):

Երրորդ պայմանը նախատեսում է, որ գույքից անարգել օգտվելու միջամտությունը պետք է անհրաժեշտ լինի ժողովրդավարական հասարակությունում և ուղղված լինի իրավաչափ նպատակի հասնելուն: Անհրաժեշտ է բարենպաստ հավասարակշռություն ստեղծել հանրության շահից բխող պահանջմունքների և անհատի իրավունքների միջև: Նման բարենպաստ հավասարակշռությանը հնարավոր չէ հասնել այն դեպքերում, երբ գույքի սեփականատերը ստիպված է «անհատական և չափազանց մեծ անհարմարություններ» կրել: Կոնվենցիայի խախտում սկզբունքորեն տեղի չի ունենա, եթե առկա է կոնվենցիոն իրավունքին ավելի քիչ սահմանափակող միջոց քան այն, որն ընտրվել է որոշակի նպատակի հասնելու համար, սակայն երկու միջոցներն էլ դուրս չեն պետության հայեցողության թույլատրելի շրջանակից: Պետության հայեցողության թույլատրելի շրջանակները կախված են գործի հանգամանքներից, Կոնվենցիայով երաշխավորված իրավունքի տեսակից, միջամտության արդյունքում հետապնդվող իրավաչափ նպատակի բնույթից, ինչպես նաև միջամտության ծավալներից (Տես Former king of Greece and others v Greece գործով Եվրոպական դատարանի 2000 թվականի նոյեմբերի 23-ի վճիռը, կետ 89, Սկոլլոն ընդդեմ Իտալիայի գործով Եվրոպական դատարանի 1995 թվականի սեպտեմբերի 28-ի վճիռը, կետ 32):

2. Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի 45-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերը թե քաղաքացիական, և թե քրեական գործերով երաշխավորում են արգելադրված գույքի սեփականատիրոջ կամ այլ օրինական տիրապետողի իրավունքների պաշտպանությունը նաև այն դեպքում, երբ գործով վարույթն ավարտվել է: Ի դեպ, նախատեսվել են նաև այդ իրավունքի իրականացման մեխանիզմները, այն է՝ գույքն արգելանքից հանելու վերաբերյալ հայցով դիմել գույքի գտնվելու վայրի առաջին ատյանի դատարան: Վերոնշյալից հետևում է, որ թե քաղաքացիական, և թե քրեական գործերի վարույթների ավարտից հետո շահագրգիռ անձը պետք է գույքն արգելանքից

հանելու վերաբերյալ հայցով դիմի գույքի գտնվելու վայրի առաջին ատյանի դատարան, որն իրենից ենթադրում է համապատասխան պահանջի քննությունը քաղաքացիական դատավարության կարգով:

Պայմանագրով գույք ձեռք բերողի սեփականության իրավունքի ծագման պահը

27.12.2011թ.

17. Գրիգոր Խաչատրյան v. ՀՀ ոստիկանության «Ճանապարհային ոստիկանություն» ծառայության թիվ 2 հաշվառման քննական ստորաբաժանում, Վարդան Սաղաթելյան, Գալինա Լիվադոնովա, Ալբերտ Ամիրյան, քաղ. գործ ԵԷԴ/0231/02/11 (գույքն արգելանքից հանելու պահանջի մասին)

**Էջ
107-114**

Խնդիր. Տրանսպորտային միջոցի առուծախի պայմանագրով սեփականության իրավունքի փոխանցման պահը:

Վճռարեկ դատարանի դիրքորոշումը. Վճռարեկ դատարանն արձանագրել է, որ ավտոմեքենայի առուվաճառքի պայմանագրի կնքման պահին գործող օրենսդրությամբ տրանսպորտային միջոցի նկատմամբ իրավունքի պետական գրանցման պարտադիր պահանջի և նշված պայմանագրով դրա առարկայի նկատմամբ սեփականության իրավունքի ծագման պահի վերաբերյալ որևէ դրույթ նախատեսված չլինելու պայմաններում վիճելի ավտոմեքենայի դիմաց վճարում կատարելու պահից ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 176-րդ հոդվածի 1-ին կետի և 507-րդ հոդվածի 1-ին կետի ուժով դրա նկատմամբ ծագում է ձեռք բերողի սեփականության իրավունքը:

Ձեռքբերման վաղեմություն

04.03.2011թ.

18. Արծրունի Մանուչարյան v. Ջանիբեկ Մանուչարյան, քաղ. գործ ԼԴ/1832/02/08 (ձեռքբերման վաղեմության ուժով հողամասի նկատմամբ սեփականության իրավունքը ճանաչելու պահանջի մասին)

**Էջ
115-121**

Խնդիր. Արդյո՞ք այլ անձին սեփականության իրավունքով պատկանող հողամասում ինքնակամ շինություն կառուցելը, ինչպես նաև դրա կառուցմանը սեփականատիրոջ կողմից չխոչընդոտելը բավարար են արձանագրելու, որ շինություն կառուցող անձը հողամասը տիրապետում է բարեխիղճ և հիմք հանդիսանալ շինությամբ ծանրաբերոնված հողամասի նկատմամբ ձեռքբերման վաղեմության ուժով սեփականության իրավունքի ճանաչման համար:

Վճռարեկ դատարանի դիրքորոշումը. Վճռարեկ դատարանն արձանագրել է, որ հողամասի սեփականատիրոջ կողմից ինքնակամ շինության կառուցապատմանը չխոչընդոտելը բավարար չէ վեճի առարկա գույքը բարեխիղճ տիրապետելու և սեփականատիրոջ կողմից հողամասի նկատմամբ սեփականության իրավունքից հրաժարումը հաստատված համարելու համար:

19. Կառլեն և Արմեն Բաղդասարյաններ v. Ատոմ և Մարոս Բաղդասարյաններ, Էջ
քաղ. գործ ԵՄԴ/0324/02/08 (ձեռքբերման վաղեմության ուժով անշարժ գույքի 174-182
նկատմամբ սեփականության իրավունքը ճանաչելու պահանջի մասին)

Խնդիր. Արդյո՞ք հողամասը տիրապետողները համարվում են բարեխիղճ տիրապետողներ և ձեռքբերման վաղեմության ուժով կարող է ճանաչվել նրանց սեփականության իրավունքը, եթե այդ հողամասը ընդհանուր օգտագործման տարածք է և տիրապետվում է այլ անձնանց կողմից ևս:

Վճռաբեկ դատարանի դիրքորոշումը. Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ այն հանգամանքը, որ վեճի առարկա հողամասը ընդհանուր օգտագործման տարածք է, բավարար է այդ տարածքի նկատմամբ օգտագործողների մի մասի տիրապետման բարեխիղճությանը բացակայությունը արձանագրելու համար:

01.07.2011թ.

20. Պարզև Հարությունյան v. Շողիկ Կարապետյանի, Միշա, Արթուր և Արտակ Բեյբուդյաններ, քաղ. գործ ԵՄԴ/0110/02/10 (ձեռքբերման վաղեմության ուժով անշարժ գույքի նկատմամբ սեփականության իրավունքի ճանաչման պահանջի մասին և ըստ հակընդդեմ հայցի՝ վտարման պահանջի մասին) Էջ
131-136

Խնդիր. Արդյո՞ք վեճի առարկա հանդիսացող բնակարանում բնակվելը և այնտեղ հաշվառվելը, բավարար են արձանագրելու, որ անձը բացահայտ տիրապետում է անշարժ գույքը:

Վճռաբեկ դատարանի դիրքորոշումը. Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ ձեռքբերման վաղեմության հիմքով սեփականության իրավունք հայցող անձի կողմից վեճի առարկա բնակարանում բնակվելը և այնտեղ հաշվառված լինելը բավարար է արձանագրելու համար գույքը բացահայտ տիրապետման փաստը:

29.07.2011թ.

21. Լյուդմիլա Յվետկովա v. Սվետլանա Հովակիմյան, քաղ. գործ Էջ
ԳԴ/0145/02/10 (սեփականության իրավունքի գրանցումն անվավեր ճանաչելու, դրա 137-143
հիմքում դրված փաստաթղթերն առջինն ճանաչելու և սեփականության իրավունքը ճանաչելու պահանջների մասին և ըստ հակընդդեմ հայցի ձեռքբերման վաղեմության ուժով սեփականության իրավունքը ճանաչելու պահանջի մասին)

Խնդիր. Արդյո՞ք ձեռքբերման վաղեմության ուժով սեփականության իրավունքի ձեռքբերման իմաստով տիրապետումը կարող է համարվել բարեխիղճ, եթե այն հիմնված է շրջանային խորհրդի գործադիր կոմիտեի որոշման, բնակարանը սեփականաշնորհելու մասին քաղաքապետի որոշման և սեփականության իրավունքի պետական գրանցման վրա:

Վճռաբեկ դատարանի դիրքորոշումը. Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ շրջանային խորհրդի գործադիր կոմիտեի որոշման, բնակարանը սեփականաշնորհելու մասին քաղաքապետի որոշման և սեփականության իրավունքի պետական գրանցման հիմքով անձի մոտ ծագել է «օրինական սպասելիք»-ի առկայություն: Այսինքն՝ նա ունեցել է բավարար իրավական հիմքեր վստահելու վերը նշված ակտերի իրավաչափությանը, որոնք ուղղվել են նրա համար որոշակի իրավունքներ առաջացնելուն, նրա մոտ ստեղծել են իրավաչափ իրավական ակտի տպավորություն, հետևաբար վեճի առարկա գույքի տիրապետման բարեխիղճությունն առկա է:

29.07.2011թ.

22. Վարդիթեր Հովհաննիսյան v. ՀՀ Արարատի մարզի Արտաշատի քաղաքապետարան, ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի Արտաշատի տարածքային ստորաբաժանում, քաղ. գործ ԱՎԳ/0235/02/10 (ձեռքբերման վաղեմության ուժով սեփականության իրավունքը ճանաչելու և սեփականության իրավունքի պետական գրանցումն անվավեր ճանաչելու պահանջների մասին և ըստ հայցի՝ հողամասն ուրիշի ապօրինի տիրապետումից հետ վերադարձնելու պահանջի մասին)

**Էջ
144-149**

Խնդիր. Արդյո՞ք անշարժ գույքի տիրապետման և օգտագործման փաստը կարող է հաստատվել վկաների ցուցմունքներով:

Վճռարեկ դատարանի դիրքորոշումը. Վճռարեկ դատարանն արձանագրել է, որ Դատարանը միջնորդության մերժման հիմքում դնելով ՀՀ Քաղաքացիական դատավարության օրենսգրքի 51-րդ հոդվածի 1-ին կետը, չի հիմնավորել այն հանգամանքը, որ որևէ օրենքով առկա է անշարժ գույքի տիրապետման և օգտագործման փաստը նաև վկաների ցուցմունքներով հաստատելու արգելք կամ սահմանափակում:

Ինքնական կառույց

27.12.2011թ.

24. Ռոբերտ Նազարյան v. Աիդա և Հարություն Նազարյաններ, քաղ. գործ ԾԳ/1799/02/10 (որոշակի գործողություններ կատարելուն պարտավորեցնելու պահանջի մասին)

**Էջ
150-155**

Խնդիր. Արդյո՞ք ընդհանուր բաժնային սեփականության հողամասի վրա գտնվող ինքնական շինությունների օրինականացման համար անհրաժեշտ է բոլոր սեփականատերերի համաձայնությունը:

Վճռարեկ դատարանի դիրքորոշումը. Վճռարեկ դատարանն արձանագրել է, որ ընդհանուր բաժնային սեփականության հողամասի վրա գտնվող ինքնական շինությունների օրինականացման համար անհրաժեշտ է բոլոր սեփականատերերի համաձայնությունը, քանի որ բաժնային սեփականության մեջ բաժիններն առանձնացված չլինելու պայմաններում ինքնական շինությունների օրինականացման ժամանակ պետք է հաշվի առնվի այն հանգամանքը, որ սեփականության մեջ բաժիններն առանձնացվելու դեպքում կարող է խախտվել այն ընդհանուր սեփականության մասնակցի շահը, որը համաձայնություն չի տվել ինքնական կառույցների օրինականացման համար:

Ընդհանուր սեփականություն

04.03.2011թ.

25. Ազնիվ Մինասյան v. Օդարուհի Կիրակոսյան և այլք, քաղ. գործ ԵԿԳ/3249/02/09 (պարտապանի բաժինն առանձնացնելու և դրա վրա բռնագանձում տարածելու պահանջների մասին)

**Էջ
156-159**

Խնդիր. Արդյո՞ք դատարանն ունի հայեցողական լիազորություն ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 197-րդ հոդվածով նախատեսված կարգով գույքը հրապարակային սակարկություններով վաճառելու որոշում կայացնելիս և կաշկանդված չէ նույն հոդվածի 3-5-րդ կետերով սահմանված պահանջներով:

Վճռաբեկ դատարանի դիրքորոշումը. Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ ՀՀ Քաղաքացիական օրենսգրքի 197-րդ հոդվածի 6-րդ կետով սահմանված կանոնը, համաձայն որի՝ «ընդհանուր գույքը բաժանելու կամ դրանից նույն հոդվածի 3-5-րդ կետերում սահմանված կանոններով բաժին առանձնացնելու ակնհայտ աննպատակահարմարության դեպքում դատարանն իրավունք ունի վճիռ կայացնել գույքը հրապարակային սակարկություններով վաճառելու մասին՝ ստացված գումարը հետագայում բաշխելով ընդհանուր սեփականության մասնակիցների միջև՝ նրանց բաժիններին համաչափ» չպետք է մեկնաբանել որպես նշված պայմանների առկայության դեպքում դատարանի՝ տվյալ գույքը հրապարակային սակարկություններով վաճառելու հայեցողական լիազորություն: Հիշյալ նորմում «իրավունք ունի» ձևակերպումը անհրաժեշտ է մեկնաբանել միայն որպես մինչ նույն հոդվածի 3-5-րդ կետերում նախատեսված հանգամանքներն ապացուցված լինելը գույքը հրապարակային սակարկություններով վաճառելու արգելք, իսկ հիշյալ 3-5-րդ կետերում նախատեսված հանգամանքների ապացուցված լինելու դեպքում Վճռաբեկ դատարանը գտել է, որ դատարանի համար ծագում է պարտականություն գույքը հրապարակային սակարկություններով վաճառելու մասին վճիռ կայացնելու համար:

29.07.2011թ.

26. Դավիթ Ասատրյան v. Սվետլանա Ասատրյան և Արթուր Գասիսյան, քաղ. գործ ԵՄԴ/0199/02/10 (բաժնային սեփականություն հանդիսացող բնակարանից բաժինը բնեղենով առանձնացնելու պահանջի մասին) **Էջ 160-165**

Խնդիր. Արդյո՞ք այն դեպքում, երբ բաժնային սեփականության մասնակցի բաժինը բնեղենով առանձնացնելը չի թույլատրվում օրենքով կամ այդպիսի առանձնացումն անհնար է առանց ընդհանուր սեփականության ներքո գտնվող գույքին անհամաչափ վնաս պատճառելու, առանձնացող սեփականատերը բաժնային սեփականության մյուս մասնակիցներից կարող է պահանջել վճարել իր բաժնի արժեքը միայն նրանց համաձայնությամբ:

Վճռաբեկ դատարանի դիրքորոշումը. Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ այն դեպքում, երբ բաժնային սեփականության մասնակցի բաժինը բնեղենով առանձնացնելը չի թույլատրվում օրենքով կամ այդպիսի առանձնացումն անհնար է առանց ընդհանուր սեփականության ներքո գտնվող գույքին անհամաչափ վնաս պատճառելու, առանձնացող սեփականատերը բաժնային սեփականության մյուս մասնակիցներից կարող է պահանջել վճարել իր բաժնի արժեքը միայն նրանց համաձայնությամբ, քանի որ այդպիսի համաձայնության բացակայությունը կհանգեցնի կամքի ինքնավարության և գույքային ինքնուրույնության սկզբունքի խախտման, հետևաբար նաև անձի սեփականության իրավունքի խախտման:

** Միաժամանակ ՀՀ վճռաբեկ դատարանը անդրադարձել է պայմանով վճիռ կայացնելու խնդրին՝ արձանագրելով դատական ակտի որոշակիության սկզբունքի խախտում:*

Ընդհանուր դրույթներ գրավի մասին

01.04.2011թ.

27. «Յունիբանկ» ՓԲԸ v. Գևորգ Նիկոլյան և այլոք, քաղ. գործ ԵԱՆԴ/0399/02/09 (գույքն ապօրինի տիրապետումից հետ վերցնելու և վտարելու պահանջների մասին և Գևորգ Նիկոլյանի հակընդդեմ հայցի ընդդեմ Ընկերության՝գումար բռնագանձելու պահանջի մասին)

**Էջ
166-172**

Խնդիր. Գրավադրված անշարժ գույքն իրացնելիս ճիշտ գինը կարող է համարվել տվյալ պահին շուկայում գործող ողջամիտ գին:

Վճռարեկ դատարանի դիրքորոշումը. Վճռարեկ դատարանն արձանագրել է, որ գրավադրված անշարժ գույքն իրացնելիս տվյալ պահին շուկայում գործող ողջամիտ գինը կարող է լինել միայն դրա արագ վաճառքի գինը, այսինքն՝ լիկվիդացիոն արժեքը, քանի որ միայն նման ձևով է հնարավոր ապահովել գրավի առարկայի արագ իրացումն ու գրավատուի պահանջների բավարարումը:

01.07.2011թ.

28. Անաիդա Ավագյան v. Լևոն Ավագյան և այլոք, քաղ. գործ ԵԷԴ/0431/02/09 (ըստ օրենքի ժառանգության իրավունքի վկայագրերը և դրանց հիման վրա անշարժ գույքի նկատմամբ կատարված սեփականության իրավունքի գրանցումը, հիփոթեքի պայմանագիրը և դրա հիման վրա կատարված հիփոթեքի իրավունքի պետական գրանցումն անվավեր ճանաչելու, բնակարանի 2/3 բաժնի նկատմամբ փաստացի տիրապետմամբ ժառանգությունն ընդունած ժառանգ ճանաչելու պահանջների մասին)

**Էջ
173-179**

Խնդիր. Այս որոշմամբ ՀՀ վճռարեկ դատարանն անդադարձել է հիփոթեքի պայմանագիր կնքելու իրավունք ունեցող անձանց հարցին:

Վճռարեկ դատարանի դիրքորոշումը. Վճռարեկ դատարանն արձանագրել է, որ անշարժ գույքը կարող է տնօրինել, այդ թվում նաև գրավի առարկա դարձնել այն անձը, ով այդ գույքի նկատմամբ սեփականության իրավունքը ենթարկել է պետական գրանցման:

Բացի այդ, Վճռարեկ դատարանը գտել է նաև, որ հիփոթեքի պայմանագրի կնքման ժամանակ Բանկը չգիտեր և պարտավոր էլ չէր իմանալ գրավի առարկայի նկատմամբ այլ անձանց հավակնությունների մասին:

29. «Արդշինիսվեստբանկ» ՓԲԸ v. Արթուր Մինասյան, Միլենա Աղամալյան, քաղ. գործ ԵԿԴ/0704/02/09 (գումար բռնագանձելու, գրավադրված գույքից բաժնեմաս առանձնացնելու և դրա վրա բռնագանձում տարածելու պահանջների մասին)

**Էջ
180-189**

Խնդիր. Արդյո՞ք գրավով ապահովված վարկային պայմանագրի պարտավորությունները պարտապանի կողմից չկատարելու դեպքում բռնագանձում կարող է տարածվել պարտապանի այլ գույքի վրա, եթե գրավի առարկան դեռևս իրացված չէ:

Վճռարեկ դատարանի դիրքորոշումը. Վճռարեկ դատարանն արձանագրել է, որ պարտատերը իր պահանջները պետք է բավարարի նախ գրավի առարկայի արժեքից, որի անբավարարության դեպքում նոր միայն կարող է պակաս գումարն ստանալ պարտապանների այլ գույքից: Դրանից հետևում է, որ քանի դեռ չի լուծվել գրավի ամբողջ առարկայի վրա բռնագանձում տարածելու հարցը և պարզ չէ, թե

գրավի առարկայի իրացումից ստացված գումարն Արդյո՞ք բավարար չէ պարտատիրոջ պահանջները բավարարելու համար, պարտապանի այլ գույքի վրա բռնագանձում չի կարող տարածվել:

Սեփականության իրավունքի և այլ գույքային իրավունքների պաշտպանությունը

01.04.2011թ.

30. Տիգրան Բարաջանյան v. Գայանե Բարաջանյան, քաղ. գործ **Էջ 190-194**
ԱՐԴ/0867/02/09 (ապօրինի տիրապետումից գույքը հետ վերադարձնելու պահանջի մասին)

Խնդիր. Արդյո՞ք հողամասը կարող է հետ պահանջվել ուրիշի ապօրինի տիրապետումից, եթե չեն վիճարկվել դրա նկատմամբ սեփականության իրավունքի ծագման հիմքերը:

Վճռաբեկ դատարանի դիրքորոշումը. Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ վեճի առարկա հողամասի նկատմամբ գրանցված սեփականության իրավունքի առկայության, սեփականության իրավունքի գրանցման վերաբերյալ վարչական ակտը վիճարկված չլինելու պայմաններում ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 274-րդ հոդվածով սահմանված ապօրինի տիրապետման դեպքն առկա չէ:

27.05.2011թ.

31. Ներսես Պողոսյան v. Արամ Միլիտոնյան և այլք, քաղ. գործ **Էջ 195-199**
ԱՐԴ/0647/02/09 (ավտոմեքենայի առուվաճառքի պայմանագիրն անվավեր ճանաչելու պահանջի մասին)

Խնդիր. Արդյո՞ք առուվաճառքի պայմանագրի կնքման դեպքում օտարված գույքի համար գնորդի կողմից վճարում չկատարելը հիմք է արձանագրելու համար, որ գույքը սեփականատիրոջ տիրապետումից դուրս է եկել նրա կամքից անկախ:

Վճռաբեկ դատարանի դիրքորոշումը. Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ առուվաճառքի պայմանագրի կնքման դեպքում օտարված գույքի համար ձեռք բերողի կողմից չվճարելը չի կարող վկայել տվյալ գույքի՝ սեփականատիրոջ տիրապետումից նրա կամքից անկախ դուրս գալու մասին:

27.12.2011թ.

32. Գերասիմ Սամվելյանի դիմումը, քաղ. գործ **Էջ 200-205**
ԵԱՆԴ/0862/02/10 (սեփականության իրավունքով ավտոմեքենան տիրապետելու փաստը հաստատելու պահանջով)

Խնդիր. Արդյո՞ք տրանսպորտային միջոցների նկատմամբ անձի սեփականության իրավունքը ՀՀ մաքսային օրենսգրքի 130-րդ հոդվածի կիրառմամբ ենթակա է ճանաչման դատական կարգով, եթե առկա չեն հափշտակության հատկանիշներ:

Վճռաբեկ դատարանի դիրքորոշումը. Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ ՀՀ մաքսային օրենսգրքի 130-րդ հոդվածի 5-րդ մասի կիրառելիության համար անհրաժեշտ են, որպեսզի արտաքին տնտեսական գործունեության ապրանքային

անվանացանկի 8702, 8703, 8704, 8705 ապրանքային դիրքերին դասվող ապրանքները և (կամ) տրանսպորտային միջոցները գտնվեն հետախուզման մեջ և առկա լինեն շարժիչի կամ նույնացման համարի վերադաջում կամ համարների ջնջում կամ հափշտակության այլ հատկանիշներ:

Վճարել դատարանը նշված վերլուծության հիման վրա արձանագրել է, որ շարժիչի կամ նույնացման համարի վերադաջումը կամ համարների ջնջումը հափշտակության հատկանիշներ են, որոնք պետք է առկա լինեն ՀՀ մաքսային օրենսգրքի 130-րդ հոդվածի 5-րդ մասով նախատեսված կանոնները կիրառելու համար: Այսինքն՝ օրենսդիրը նշված կանոնների կիրառելիությունն ամեն դեպքում կապում է հափշտակության հատկանիշների հետ, որոնց առկայության դեպքում միայն կարող է կիրառվել ՀՀ մաքսային օրենսգրքի 130-րդ հոդվածի 5-րդ մասի կանոնը, այսինքն՝ տրանսպորտային միջոցների նկատմամբ բարելավող ձեռք բերողի սեփականության իրավունքը կարող է ձանաչվել դատական կարգով, իսկ մաքսային հայտարարագիրը մաքսային մարմին ներկայացվի, եթե առկա է համապատասխան դատական ակտը, և այն մտել է օրինական ուժի մեջ:

ԳՈՐԾԱՐՔԻ ԱՆՎԱՎԵՐՈՒԹՅՈՒՆ

04.03.2011թ.

33. Յուրի և Սիլվա Զարգարյաններ v. Արշակ Զարգարյան և այլոք, քաղ. գործ ԵԱՔԳ/2506/02/09 (առուվաճառքի պայմանագիրն անվավեր ճանաչելու պահանջի մասին) **Էջ 206-211**

Խնդիր. Այս որոշմամբ վճարել դատարանը անդրադարձել է կեղծ լինելու հիմքով գործարքի առոչնչության հարցին:

Վճարել դատարանի դիրքորոշումը. Վճարել դատարանն արձանագրել է, որ գործարքի կեղծ լինելը փաստելու համար անհրաժեշտ է ապացուցել, որ այն կնքվել է առանց իրավական հետևանքներ առաջացնելու մտադրության, այսինքն՝ նպատակ չի հետապնդել կողմերի համար առաջացնել իրավունքներ և պարտականություններ:

01.04.2011թ.

34. Սեդա Մկրտումյան v. Հովհաննես Մինասյան և այլոք, քաղ. գործ ԵԱՔԳ/2566/02/09 (լիազորագիրն անվավեր ճանաչելու և գործարքի անվավերության հետևանքները կիրառելու պահանջների մասին) **Էջ 212-216**

Խնդիր. Արդյո՞ք սակավամտություն, դեբիլություն հոգեկան հիվանդությամբ տառապող անձի կնքած գործարքն կարող է անվավեր ճանաչվել, եթե այդ անձը դեռևս օրինական ուժի մեջ մտած վճռով չի ճանաչվել անգործունակ:

Վճարել դատարանի դիրքորոշումը. Վճարել դատարանն արձանագրել է, որ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 307-րդ հոդվածով նախատեսվում է հոգեկան խանգարման հետևանքով արդեն իսկ անգործունակ ճանաչված քաղաքացու կնքած գործարքի առոչնչ լինելը, իսկ նույն օրենսգրքի 311-րդ հոդվածով՝ գործունակ, սակայն գործարքի կնքման պահին այնպիսի վիճակում գտնվող քաղաքացու կնքած գործարքի անվավերությունը, երբ նա ընդունակ չի եղել հասկանալու իր գործողությունների նշանակությունը կամ ղեկավարելու դրանք: Ընդ որում, ՀՀ քաղաքացիական

օրենսգրքի 311-րդ հոդվածում նշված գործարքներն օրենսդիրը դասել է վիճահարույց գործարքների շարքին: Այսինքն՝ վերոնշյալ հոդվածներով նախատեսված կարգավորումները տարբերվում են ոչ միայն գործարք կնքելու պահին անձանց կարգավիճակով, այլ նաև կնքված գործարքի իրավական հետևանքներով, այն է՝ օրենքի ուժով առոչինչ համարվելու (անկախ դատարանի կողմից նման ճանաչումից) կամ վիճահարույց լինելու (դատարանի կողմից այդպիսին ճանաչվելու ուժով) հանգամանքով:

Հիմք ընդունելով վերոգրյալը, Վճռաբեկ դատարանը անհիմն է համարել Վերաքննիչ դատարանի եզրահանգումն այն մասին, որ լիազորագիրը չի կարող անվավեր ճանաչվել այն պատճառաբանությամբ, որ անձը լիազորագիր տալու պահին անգործունակ ճանաչված չէր, քանի որ Վերաքննիչ դատարանի կողմից վկայակոչված հիմքը ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 307-րդ հոդվածով նախատեսվում է որպես գործարքի առոչնչության, այլ ոչ թե անվավերության հիմք:

ՀԱՅՑԱՅԻՆ ՎԱՂԵՄՈՒԹՅՈՒՆ

04.03.2011թ.

35. Սուրեն Վարդանյան v. Հայկազ Մկրտչյան, քաղ. գործ ԳԳ1/0205/02/09 (գումար բռնագանձելու պահանջի մասին)

Էջ
217-222

Խնդիր. Ո՞ր պահից է սկսում հոսել հայցային վաղեմության ժամկետը այն դեպքում, երբ անձը պարտավորվել է վաճառել անշարժ գույքի իր բաժնեմասը՝ առանց նշելու պայմանագիր կնքելու ժամանակահատվածը, սակայն հետագայում չի կնքել առուվաճառքի պայմանագիր:

Վճռաբեկ դատարանի դիրքորոշումը. Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ գրավոր հայտարարությամբ ստանձնած պարտավորության կատարման ժամկետ նախատեսված չլինելու և ժամկետի որոշման պայմանների բացակայության պատճառներում անձը իրավունք ուներ այդ պարտավորությունը կատարել ինչպես հայտարարությունը տալու օրը, այնպես էլ դրանից հետո՝ ողջամիտ ժամկետում:

Հիմք ընդունելով վերոնշյալը Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ սույն գործով հայցային վաղեմության ժամկետի հաշվարկը չի կարող սկսվել համապատասխան գրավոր հայտարարությունը տալու օրվանից:

01.07.2011թ.

36. Ռադիկ Ենգիբարյանի սնանկության գործով կառավարիչ v. «Վանակն Ապակի» ՍՊԸ և այլք, քաղ. գործ ԾԳ/0376/02/10 (գործարքները և դրանց հիման վրա կատարված գրանցումներն անվավեր ճանաչելու պահանջների մասին)

Էջ
223-227

Խնդիր. Արդյո՞ք հայցային վաղեմություն կիրառելու դիմում կարող է ներկայացվել դատաքննության ավարտից հետո՝ մինչև դատական ակտի հրապարակումը:

* Միաժամանակ ՀՀ վճռաբեկ դատարանը անդրադարձել է «վճռի կայացում» և «վճռի հրապարակում» հասկացությունների մեկնարկությանը:

Վճռաբեկ դատարանի դիրքորոշումը. Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ օրենսդիրը, ամրագրելով հայցային վաղեմության ընդհանուր երեք տարվա

Ժամկետը, միաժամանակ սահմանել է կարգ, որի առկայության դեպքում դատարանը պետք է քննարկան առարկա դարձնի հայցային վաղեմության հարցը: Այն է՝ պետք է առկա լինի հայցային վաղեմություն կիրառելու մասին գործին մասնակցող անձի կողմից դիմում և այդ դիմումը պետք է ներկայացվի մինչև Դատարանի կողմից վճիռ կայացնելը: Այսինքն՝ օրենսդրի կողմից հստակ սահմանվել է ժամկետ, այն է՝ հայցային վաղեմություն կիրառելու մասին դիմումը ներկայացնել մինչև վճիռ կայացումը:

Վճռաբեկ դատարանը նաև արձանագրել է, որ «վճիռ կայացումը» և «վճիռ հրապարակումը» միմյանցից էականորեն տարբերվող հասկացություններ են:

Մասնավորապես, վճիռ կայացնելը դատական քննության եզրափակիչ փուլն է, որը, ի տարբերություն դատավարության նախորդ փուլերի, ընթանում է դատական քննությունից անմիջապես հետո՝ պահպանելով գործի քննության անընդհատության սկզբունքը, որից հետո միայն դատարանը հրապարակում է այն դոկրատ դատական նիստում: Այս փուլում դատարանը, իրականացնելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 131-րդ հոդվածի 1-ին կետով սահմանված լիազորությունները, կայացնում է վճիռ: Դա է պատճառը, որ օրենսդիրը ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 124-րդ հոդվածի ուժով կողմերին իրավունք է վերապահել ներկայացնել միջնորդություններ մինչև դատարանի կողմից դատաքննության ավարտը:

«Վճիռ հրապարակումը» դատավարական մի փուլ է, որն հաջորդում է «վճիռ կայացմանը»: Այսինքն, «վճիռ հրապարակման փուլում» դատարանը հրապարակում է արդեն իսկ գոյություն ունեցող, այն է՝ կայացված վճիռը:

29.07.2011թ.

37. Արարատի քնակարանային կոմունալ տնտեսություն v. Աիդա Ադազարյան, քաղ. գործ ԱՎԳՆ/0982/02/09 (գումար բռնագանձելու պահանջի մասին)

Էջ 228-233

Խնդիր. Ո՞ր դեպքում է պարտապանի պարտքի ճանաչումը վկայող գործողությունը ընդահատում հայցային վաղեմության ժամկետի ընթացքը:

Վճռաբեկ դատարանի դիրքորոշումը. Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ հայցային վաղեմության ժամկետի ընդհատման հիմք կարող է հանդիսանալ պարտավոր անձի այն գործողությունը, որը կատարվել է հայցային վաղեմության ժամկետում: Այսինքն՝ պարտավոր անձի այն գործողությունը, որը կատարվել է հայցային վաղեմության ժամկետի ավարտից հետո, չի կարող բնորոշվել որպես պարտքի ճանաչմանն ուղղված գործողություն, հետևաբար և չի կարող հիմք հանդիսանալ արդեն իսկ ավարտված հայցային վաղեմության ժամկետի ընդհատման համար:

14.10.2011թ.

38. Արմեն Ավագյան v. Արտավազ Խաչատրյան, քաղ. գործ ԵԲԳ/0365/02/08 (գումար բռնագանձելու պահանջի մասին)

Էջ 234-244

Խնդիր. Այս որոշմամբ ՀՀ վճռաբեկ դատարանը գնահատել է անձի՝ շտապօգնության բաժանմունքում գտնվելը, որպես հայցային վաղեմության ժամկետի բացթողումը հարգելի համարելու հիմք:

Վճռաբեկ դատարանի դիրքորոշումը. Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ նույն գործի փաստերի համաձայն՝ Արմեն Ավագյանի կողմից 03.12.2010

թվականին ներկայացված՝ բաց թողնված հայցային վաղեմության ժամկետը հարգելի ճանաչելու և վերականգնելու մասին միջնորդությանը կից ներկայացվել է բժշկական հիվանդանոցի կողմից տրված գրությունն այն մասին, որ Արմեն Ավագյանն ընդունվել է շտապօգնության բաժանմունք 2007 թվականի սեպտեմբերի 10-ին և բուժումից հետո հիվանդանոցից դուրս է գրվել 2007 թվականի սեպտեմբերի 18-ին: Վերը նշվածը հաշվի առնելով՝ Վճռաբեկ դատարանը գտել է, որ Վերաքննիչ դատարանը չի գնահատել այն փաստը, որ Արմեն Ավագյանը բժշկական հաստատությունում բուժվել է ընդամենը 8 օր՝ 2007 թվականի սեպտեմբերի 10-ից մինչև 2007 թվականի սեպտեմբերի 18-ը: Ու թեև Արմեն Ավագյանին խորհուրդ է տրվել խուսափել ինտենսիվ ֆիզիկական գործողություններից և ճամփորդությունից, տվյալ դեպքում առկա չէ օրենքով նախատեսված այն բացառիկ դեպքը, այն է՝ հայցվորի ծանր հիվանդությունը, անօգնական վիճակը, անգրագիտությունը և այլն, որը բավարար հիմք կհանդիսանար հայցային վաղեմության բաց թողնված ժամկետը հարգելի ճանաչելու և վերականգնելու մասին միջնորդությունը բավարարելու համար, քանի որ Արմեն Ավագյանը զրկված չէր իր իրավունքների ենթադրյալ խախտման հիմքով դիմելու դատարան:

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ
Պարտավորությունները կատարելը

04.03.2011թ.

39. Մելիք Ավետյան v. Անահիտ Եսոբյան, քաղ. գործ ԱՎԳՅ/0042/02/10 (գույքն **Էջ**
արգելանքից հանելու պահանջի մասին) **245-250**

Խնդիր. Արդյո՞ք փոխառության պայմանագրի բացակայության պայմաններում գումար վճարելու մասին պարտավորագրի առկայությունը պարտապանի պարտավորությունը պարտատիրոջ նկատմամբ դարձնում է անվիճելի, իսկ պարտավորության գումարը՝ բռնագանձման ենթակա:

Վճռաբեկ դատարանի դիրքորոշումը. Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ պարտավորագիրը պարտապանի կողմից ի հավաստումն պարտավորության տրված պարտքային փաստաթուղթ է, որով պարտապանն ընդունում է իր պարտքը պարտատիրոջ հանդեպ:

Վճռաբեկ դատարանը հիմք ընդունելով գումար վճարելու վերաբերյալ պարտավորագրի առկայությունը, ինչպես նաև այն հանգամանքը, որ հայցադիմումի դեմ ներկայացված առարկություններով պատասխանողը ընդունել է հայցվորի հետ առևտրային հարաբերությունների մեջ լինելու փաստը, արձանագրել է, որ պատասխանողը ըստ էության ընդունել է իր պարտավորությունը հայցվորի նկատմամբ, որոնք ծագել են առևտրային հարաբերություններից:

Երաշխավորություն

04.03.2011թ.

40. Արմաս ՍԳԸ-ի սնանկության գործով կառավարիչ Ռոբերտ Մարգարյան v. Արմեն Մկրտչյան, քաղ. գործ ԵԿԳ/2818/02/09 (գումարի բռնագանձման պահանջի **Էջ**
մասին) **251-255**

Խնդիր. Արդյո՞ք երաշխավորը կարող է պատասխանատվություն կրել վարկային պայմանագրով պարտապանի առջև, վերջինիս կողմից վարկային պայմանագրով նախատեսված պարտավորությունների չկատարման դեպքում:

Վճռաբեկ դատարանի դիրքորոշումը. Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ երաշխավորի հանդեպ պարտատեր է Բանկը, որին էլ պատկանում է պահանջի իրավունքը, իսկ վարկատուն տվյալ պարագայում պարտատեր չէ, հետևաբար վերջինիս կառավարչի պահանջը՝ երաշխավորից գումար բռնագանձելու մասին անհիմն է:

Նախավճար

27.05.2011թ.

41. Թեյմուր Նազարի և Արիան Նազարի v. Հովհաննես և Հրայա Էջ Սարաֆյաններ, քաղ. գործ ԵԱԲԳ/1246/02/09 (գույքն արգելանքից հանելու պահանջի մասին): **256-260**

Խնդիր. Անշարժ գույքի տնօրինման դեպքում, երբ կարող է կնքվել նախավճարի պայմանագիր:

Վճռաբեկ դատարանի դիրքորոշումը. Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ անշարժ գույքի առուվաճառքի պայմանագրի դեպքում հիմնական պայմանագիրը կարող է կնքվել միայն օրենքով նախատեսված ձևով և պայմաններով, հետևաբար, նախավճարի պայմանագիրը չի կարող որակվել որպես հիմնական առուվաճառքի պայմանագրի կնքման ապացույց, բացի այդ, անիմաստ է դառնում նաև նախավճարի պայմանագրի կնքումը հիմնական պայմանագրի կնքումից հետո, քանի որ օրենքով նախատեսված ձևով և կարգով կնքված անշարժ գույքի առուվաճառքի պայմանագրի առկայության դեպքում նախավճարի պայմանագրի կնքումն իմաստագրկվում է, քանի որ այն չի ծառայելու նախավճարի ինստիտուտի կարգավորման նպատակներին, այն է՝ ապացուցողական գործառնություն, քանի որ հիմնական պայմանագրի առկայությունն ինքնին դրա կնքման ապացույց է, ինչպես նաև պայմանագրի կատարման ապահովման գործառնություն, քանի որ հենց հիմնական պայմանագիրը բավարար է դրա կատարումն ապահովելու համար: Այսինքն՝ այն բոլոր դեպքերում, երբ հիմնական պարտավորության ծագումը պայմանավորվում է օրենքով նախատեսված կարգով կնքված պայմանագրի առկայությամբ, այդ դեպքում նախավճարի պայմանագիրն այլևս չի կատարում իր հիմնական գործառնությունները:

Շիմք ընդունելով վերոգրյալը՝ Վճռաբեկ դատարանն անհիմն է համարել Վերաքննիչ դատարանի եզրահանգումն այն մասին, որ «կողմերի միջև առկա «նախավճարի պայմանագիր» վերտառությամբ գործարքը կհամարվեր նախավճարի պայմանագիր միայն, եթե առկա լիներ հիմնական պարտավորությունը՝ անշարժ գույքի առուվաճառքի պայմանագիրը»:

Միաժամանակ, Վճռաբեկ դատարանը գտել է, որ անշարժ գույքի դեպքում նախավճարի պայմանագրի տարրեր պարունակող պայմանագիր կարող է կնքվել այն դեպքերում, երբ այն ուղղված է օրենքով նախատեսված կարգով կնքված նախնական պայմանագրի կատարման ապահովմանը՝ նախավճարի պայմանագրի համար օրենքով նախատեսված իրավական հետևանքները նախատեսելով որպես նախնական պայմանագրի չկատարման հետևանք:

Պարտավորությունները դադարելը

04.03.2011թ.

42. Մելիք Ավետյան v. Անահիտ Ենոքյան, քաղ. գործ ԱՎԳ3/0042/02/10 (գույքն էջ 245-250
արգելանքից հանելու պահանջի մասին):

Խնդիր. Այս որոշմամբ ՀՀ վճարել դատարանը անդադարձել է պարտավորության նորացման հարցին:

Վճարել դատարանի դիրքորոշումը. Վճարել դատարանն անհիմն է համարել վճարել բողոքի այն փաստարկը, որ առևտրային գործունեությունից ծագած պարտավորությունը փոխարինվել է փոխառության պարտավորությամբ, հիմք ընդունելով այն հանգամանքը, որ գործով չի հիմնավորվել նորացման վերաբերյալ պահանջների պահպանմամբ և փոխառության պայմանագիր կնքելու համար նախատեսված ձևով կնքված պայմանագրի առկայությունը, ինչը ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 886-րդ հոդվածի պահանջն է:

ՊԱՅՄԱՆԱԳՐԵՐԻՑ ԾԱԳՈՂ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ապրանքների մատակարարում

04.03.2011թ.

43. «Գոլդ Օյլ» ՍՊԸ v. «Կարդինալ Ինթերնեյշլ» ՍՊԸ, քաղ. գործ էջ 261-268
ԵԷԳ/1452/02/09 (գումարի բռնագանձման պահանջի մասին)

Խնդիր. Մատակարարված ապրանքների համար չվճարված գումարը բռնագանձելու պահանջի մասին գործ քննելիս, հր փաստերն են կազմում ապացուցման առարկան, այն դեպքում, երբ վիճարկվում է մատակարարված ապրանքների՝ օգտագործման համար պիտանի լինելու հանգամանքը:

Վճարել դատարանի դիրքորոշումը. Վճարել դատարանն արձանագրել է, որ սույն գործի լուծման համար էական նշանակություն ունեն գնորդ Ընկերության կողմից ընդունած ապրանքի որակի ստուգման և մատակարար Կազմակերպությանը հայտնաբերված անհամապատասխանությունների կամ թերությունների մասին անհապաղ գրավոր տեղեկացնելու պարտավորության կատարման փաստի առկայությունը:

Վճարել դատարանը նաև գտել է, որ մատակարարված ապրանքի անորակ (տվյալ դեպքում ժամկետանց) լինելու փաստի ապացուցման պարտականությունը կրում է գնորդ Ընկերությունը: Այսինքն՝ այն կողմը, որի վրա օրենքով սահմանված կարգով դրված է ընդունած ապրանքի որակի ստուգման և մատակարարին հայտնաբերված թերությունների մասին անհապաղ գրավոր տեղեկացնելու պարտականության կատարումը:

Վարկ

27.05.2011թ.

44. «Արդշինինվեստբանկ» ՓԲԸ v. «Լանդրաս» ՍՊԸ, քաղ. գործ ԵՋ ԵԲԳ/0595/04/08 (սնանկ ճանաչելու պահանջի մասին)

**ԵՋ
269-278**

Խնդիր. Արդյո՞ք վարկային պայմանագրով նախատեսված տուգանային տոկոսները համարվում են պատասխանատվության միջոց:

Վճռաբեկ դատարանի դիրքորոշումը. Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 411-րդ հոդվածի 1-ին կետը կարգավորում է դրամական պարտավորությունները չկատարելու դեպքում առաջացող պատասխանատվության միջոցների կիրառման հետ կապված հարաբերությունները, իսկ նույն հոդվածի նույն կետի 2-րդ պարբերությունը վերաբերում է այն դեպքերին, երբ օրենքով կամ պայմանագրով նախատեսվում է վնասի հատուցման կամ տոկոսի այլ չափ (նույն կետի 1-ին պարբերությամբ սահմանված չափից տարբերվող), որը նույնպես պատասխանատվության միջոց է: Այսինքն՝ տվյալ դեպքում տուժանքի տեսքով լրացուցիչ պարտավորությունը ծագել է հիմնական պարտավորության չկատարման հետևանքով, և իրենից ներկայացնում է պատասխանատվության միջոց անկախ այն հանգամանքից, թե այն նախատեսված է օրենքով, թե պայմանագրով:

Ապահովագրություն

01.07.2011թ.

45. Արման Մինայան, Սուսաննա Բաղյան v. «ՌԱՍԿՈ ապահովագրական» ՍՊԸ, քաղ. գործ ԵԿԳ/1462/02/09 (գումարի բռնագանձման պահանջի մասին)

**ԵՋ
279-287**

Խնդիր. Արդյո՞ք իրավաչափ է վնասի հատուցում տրամադրելուց հրաժարվելը այն դեպքում, երբ հրաժարման հիմքում դրվում է այնպիսի հանգամանք, որը ապահովագրական ընկերությանը հայտնի է եղել ապահովագրության պայմանագիր կնքելիս:

Վճռաբեկ դատարանի դիրքորոշումը. Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ ապահովագրական ընկերությունն է կրում լիազորված անձի՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով տվյալ ավտոտրանսպորտային միջոցը վարելու օրինական հիմք և համապատասխան կարգի վարորդական իրավունք ունենալու հանգամանքը ստուգելու պարտավորություն և դրանից ելնելով՝ որոշում է ապահովագրության պայմանագիրը կնքելու կամ չկնքելու հարցը: Վճռաբեկ դատարանը գտել է, որ եթե ապահովագրական ընկերությունը, ներկայացված փաստաթղթերի գնահատման արդյունքում անտեսելով ներկայացված փաստաթղթերում առկա թերությունները, այնուամենայնիվ, կնքում է ապահովագրության պայմանագիր, այսինքն՝ պատրաստակամություն է հայտնում, որպեսզի համապատասխան ավտոտրանսպորտային միջոցն այդ անձի կողմից վարելու հետևանքով առաջացած պատահարները լինեն ապահովագրության պայմանագրի առարկա, ապա ընկերությունն այլևս չի կարող վկայակոչել նման թերությունների առկայությունը և պետք է կատարի պայմանագրից բխող բոլոր պարտավորությունները:

Նման պայմաններում Վճռաբեկ դատարանը գտել է, որ տեղի չի ունեցել ապահովագրության վկայագրի մաս կազմող կանոնների խախտում, հետևաբար ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 345-րդ հոդվածի ուժով ապահովագրական ընկերությունը պարտավոր է հատուցել ապահովագրական վճարը:

ՎՆԱՍ ՊԱՏՃԱՌԵԼՈՒ ԵՎ ԱՆՀԻՄՆ ՀԱՐՍՏԱՑՄԱՆ ՀԵՏԵՎԱՆՔՈՎ ԾԱԳԱԾ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ընդհանուր դրույթներ վնասի հատուցման մասին

01.07.2011թ.

46. Արամ Դավթյան, «Վանք» ՍՊԸ v. Հայաստանի Հանրապետություն՝ **Էջ 288-303**
ի դեմ ՀՀ ֆինանսների նախարարության, «Հայկական երկաթուղի» ՓԲԸ, քաղ. գործ ՀՔԴՆ/0012/02/08 (ապօրինի քրեական պատասխանատվության ենթարկելու, որպես խափանման միջոց կալանք կիրառելու, չհեռանալու մասին ստորագրություն վերցնելու, ոչ ողջամիտ ժամկետում դատաքննության, անմարդկային վերաբերմունքի հետևանքով պատճառված վնասի հատուցման պահանջի մասին)

Խնդիր. 1. Այս որոշմամբ ՀՀ վճռաբեկ դատարանը անդրադարձել է ապօրինի դատապարտելու, քրեական պատասխանատվության ենթարկելու, որպես խափանման միջոց կալանք կամ չբացակայելու մասին ստորագրություն կիրառելու դեպքում անձին պատճառված վնասի հատուցման հարցին:

2. Արդյո՞ք արդարացվածն ազատված է պետական մարմինների և պաշտոնատար անձանց ապօրինի գործողությունների (անգործության) հետևանքով պատճառված վնասի հատուցման հայցերով պետական տուրքի վճարումից:

Վճռաբեկ դատարանի դիրքորոշումը.

1. Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ ելնելով արդարացվածի կարգավիճակի առանձնահատկություններից, վերջինիս իրավական և փաստական վիճակի վերականգնման անհրաժեշտությունից և սահմանադրական և միջազգային իրավական դրույթներից, օրենսդիրը սահմանել է ապօրինի կերպով ազատությունից զրկված արդարացվածին հասցված վնասների ամբողջ ծավալով հատուցման կանոնը: Ընդ որում, հատուցվում են այն վնասները, որոնք ապօրինի դատապարտելու, քրեական պատասխանատվության ենթարկելու, որպես խափանման միջոց կալանք կամ չբացակայելու մասին ստորագրություն կիրառելու հետևանք են: Վճռաբեկ դատարանը հարկ է համարում նշել, որ օրենսդիրը սահմանում է այն վնասները, որոնք պետք է հատուցվեն:

Մասնավորապես, վերոնշյալ նորմերի համադրումը ցույց է տալիս, որ արդարացվածն իրավունք ունի պահանջելու հատուցելու՝

աշխատավարձը

թոշակը

նպաստները

վճարված դատական ծախսերը

փաստաբանին վճարված գումարները

հնարավոր բաց թողնված օգուտները այլ եկամուտ, որից անձը զրկվել է:

Վճռաբեկ դատարանը գտել է, որ արդարացվածի վնասի հատուցման առկայության և չափի նկատմամբ տարածվում են նաև ՀՀ քաղաքացիական օրենսգրքով նախատեսված վնասի հատուցման կանոնները:

2. Վճռաբեկ դատարանն հիմք ընդունելով ՀՀ սահմանադրական դատարանի 14.12.2010 թվականի թիվ ՄԴՈ-929 որոշումը, որով «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքի 22-րդ հոդվածի առաջին մասը, այնքանով, որքանով չի սահմանում այլ սուբյեկտներից բացի, արդարացվածին՝ իրավասու պետական մարմինների և պաշտոնատար անձանց ապօրինի գործողությունների (անգործության) հետևանքով պատճառված վնասի հատուցման հայցերով պետական տուրքի վճարումից ազատելու վերաբերյալ արտոնություն նախատեսող դրույթ՝ արգելափակելով անձի սահմանադրական իրավունքի իրացումը, ձանաչվել է ՀՀ Սահմանադրության 16-րդ հոդվածի 4-րդ մասին և 20-րդ հոդվածի 5-րդ մասին հակասող և անվավեր, գտել է, որ պետական տուրքի բռնագանձման մասով Վերաքննիչ դատարանի որոշումը պետք է բեկանել:

47. Լուսինե Աբրահամյան, Հակոբ Մուրադյան v. «Դավիթ երթուղային տաքսի» ՓԲԸ, քաղ. գործ ԵԱՔԳ/0754/02/09 (վնասը հատուցելու պահանջի մասին):

Էջ
304-310

Խնդիր. Արդյո՞ք վնասված գույքի իրացման արդյունքում տուժողի ստացած եկամուտը կարող է հաշվի առնվել վնասի առկայության հարցը պարզելիս և հիմք հանդիսանալ վնասի առկայության դեպքում դրա հատուցումը մերժելու համար:

Վճռաբեկ դատարանի դիրքորոշումը. Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ վնասն առկա է դրա հասցվելու փաստի ուժով, իսկ վնասված գույքի իրացման արդյունքում տուժողի ստացած եկամուտը չի կարող հաշվի առնվել վնասի առկայության հարցը պարզելիս և չի կարող հիմք հանդիսանալ վնասի առկայության դեպքում դրա հատուցումը մերժելու համար:

** Միաժամանակ ՀՀ վճռաբեկ դատարանը անդրադարձել է ոչ հստակ փորձագիտական եզրակացության պարագայում փորձագետին բանավոր բացատրություն տալու համար դատարան հրավիրելու հարցին:*

14.10.2011թ.

48. Տիգրան Քոչարյան v. Աշոտ Քոչյան, Արթուր Քոչյան, քաղ. գործ ԵԱՔԳ/0610/02/10 (առողջությանը և գույքին պատճառված վնասը հատուցելու պահանջի մասին)

Էջ
311-317

Խնդիր. 1. Այս որոշմամբ ՀՀ վճռաբեկ դատարանը անդրադարձել է շրջապատի համար առավել վտանգի աղբյուրի հետ կապված «գործունեություն» եզրույթի մեկնաբանմանը:

2. ՀՀ վճռաբեկ դատարանը անդրադարձել է նաև առավել վտանգի աղբյուրի սեփականատիրոջը պատասխանատվությունից ազատելու հիմքերին:

Վճռաբեկ դատարանի դիրքորոշումը. 1. Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ «իրավաբանական անձինք և քաղաքացիները, որոնց գործունեությունը կապված է շրջապատի համար առավել վտանգի աղբյուրի հետ» օրենսդրական ձևակերպումը պետք է մեկնաբանել նշված հոդվածի ամբողջ իրավակարգավորման և ձևակերպման համատեքստում՝ մասնավորապես հաշվի առնելով, որ նույն հոդվածում

օրենսդիրը բացահայտում է, թե ինչպես է դրսևորվում տրանսպարտային միջոցների հետ կապված քաղաքացիների գործունեությունը: Որպես այդպիսին համարվում է տրանսպարտային միջոցի օգտագործումը:

Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ օրենսդիրն այս դեպքում նկատի է ունեցել ցանկացած գործունեություն, որը վնաս պատճառելու առավել վտանգ է ներկայացնում այն հիմնավորմամբ, որ մարդն ի վիճակի չէ ամբողջական, լիակատար վերահսկողություն իրականացնել նմանատիպ գործունեության նկատմամբ: Ընդ որում, այդ գործունեությունը կապված է նյութական աշխարհի որոշակի օբյեկտների օգտագործման, շահագործման հետ, որոնք շրջապատի համար մեծ վտանգավորություն են ներկայացնում:

Հիմք ընդունելով վերոնշյալը՝ Վճռաբեկ դատարանը գտել է, որ օրենսդիրը «գործունեությունը կապված է շրջապատի համար առավել վտանգի աղբյուրի հետ» ձևակերպմամբ նկատի չի ունեցել միայն տվյալ ֆիզիկական կամ իրավաբանական անձի մասնագիտական գործունեությունը: «Գործունեություն» եզրույթն օգտագործվել է սովորական իմաստով, և «գործունեություն» ասելով օրենսդիրը նկատի է ունեցել ոչ թե անձի մասնագիտական գործունեությունը, այլ ցանկացած գործունեությունը՝ անկախ դրա մասնագիտական կամ ոչ մասնագիտական լինելու հանգամանքից, այլապես դա կհակասեր հողվածի (առավել վտանգի աղբյուրով պատճառված վնասի ինստիտուտի) էությանն ու տրամաբանությանը:

Ավելին, Վճռաբեկ դատարանը գտել է, որ տվյալ հողվածի իմաստով «գործունեությունը» կարող է դրսևորվել անձի թե՛ մեկանգամյա, թե՛ բազմակի գործողության կատարմամբ կամ անգործության դրսևորմամբ, իսկ «գործունեությունը» առավել վտանգի աղբյուրի օգտագործման, պահպանման, փոխադրման, շահագործման հետ կապված գործողությունների ամբողջությունն է, համախումբը:

Այսպիսով, Վճռաբեկ դատարանը եզրակացրել է, որ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1072-րդ հոդվածի կիրառման համար անհրաժեշտ է հետևյալ պայմանների միաժամանակյա առկայությունը՝

1. Այն պետք է լինի ֆիզիկական կամ իրավաբանական անձի գործունեություն
2. Գործունեությունը պետք է կապված լինի ցանկացած օբյեկտի հետ, որը շրջապատի համար առավել վտանգ է ներկայացնում
3. Գործունեությունը պետք է կապված լինի օբյեկտի (առավել վտանգի աղբյուրի) օգտագործման, պահպանման, փոխադրման, շահագործման և այլնի հետ ինչպես մասնագիտական, այնպես էլ ոչ մասնագիտական գործունեության շրջանակներում:

2. Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ տրանսպարտային միջոցով վնաս պատճառելիս այդ միջոցի սեփականատերը միայն այն դեպքում պատասխանատվություն չի կրում այդ աղբյուրի պատճառած վնասի համար, երբ ապացուցում է, որ

1. առավել վտանգի աղբյուրն օրինական հիմքով (վարձակալության իրավունք, լիազորագրով տրանսպարտային միջոցները վարելու իրավունք և այլն) փոխանցվել է այլ անձի տիրապետմանը, կամ

2. առավել վտանգի աղբյուրը դուրս է եկել իր տիրապետումից այլ անձանց ապօրինի գործողությունների հետևանքով, և միայն այդ դեպքում է, որ տրանսպարտային միջոցի պատճառած վնասի համար պատասխանատվությունը կրում են տրանսպարտային միջոցն ապօրինի տիրապետած անձինք:

27.12.2011թ.

49. Սամվել Պողոսյան Վ. «Երևան Զուր» ՓԲԸ և այլոք, քաղ. գործ Էջ ԿԴ3/0069/02/08 (ընտանիքի կյանքին և առողջությանը սպառնացող վտանգը 318-323 վերացնելու ուղղությամբ անգործությունը վերացնելուն պարտավորեցնելու պահանջի մասին)

Խնդիր. Այս որոշմամբ ՀՀ վճարել դատարանն անդրադարձել է ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1059-րդ հոդվածի առաջին մասի կիրառման համար անհրաժեշտ վտանգի առկայությունը պարզելու խնդրին:

Վճարել դատարանի դիրքորոշումը. Վճարել դատարանն արձանագրել է, որ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1059-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված հայցն իր տեսակով ամբողջությամբ չի հանդիսանում դելիկտային, քանի որ դրա հարուցման համար անհրաժեշտ պայման է ապագայում վնաս պատճառելու վտանգի առկայությունը և ոչ թե արդեն իսկ պատճառված վնասը: Նշված հոդվածով նախատեսված հայցի հարուցումը նույն օրենսգրքի 14-րդ հոդվածի 3-րդ կետով նախատեսված քաղաքացիական իրավունքների պաշտպանության եղանակներից մեկն է, որի համաձայն՝ քաղաքացիական իրավունքների պաշտպանությունն իրականացվում է իրավունքը խախտող կամ դրա խախտման համար վտանգ ստեղծող գործողությունները կանխելով:

50.«Տավուշի մարզի Աղավնավանքի միջնակարգ դպրոց պետական Էջ հանրակրթական ուսումնական հաստատություն» պետական ոչ առևտրային կազմակերպություն Վ. Փայլակ Արշակյան, քաղ. գործ ԳԴ4/0208/02/10 (գումարի բռնագանձման պահանջի մասին) 324-328

Խնդիր. Արդյո՞ք վնասի առկայությունը ապացուցելու համար բավարար է օրինական ուժի մեջ մտած գումարի բռնագանձման վերաբերյալ վճիռի առկայությունը, թե կողմը պետք է ապացուցի նշված վճիռի կատարման փաստը:

Վճարել դատարանի դիրքորոշումը. Վճարել դատարանն արձանագրել է, որ օրինական ուժի մեջ մտած վճիռի առկայությունը, որով Ընկերությունը պարտավորվում է իր աշխատողի փոխարեն կատարել գումարի վճարման պարտավորություն, բավարար է Ընկերության համար վնասի առկայությունը փաստելու համար անկախ այն հանգամանքից համապատասխան վճիռը կատարվել է թե ոչ:

Քաղաքացու կյանքին կամ առողջությանը պատճառված վնասը հատուցելը

27.12.2011թ.

51. Վեներա Դավթյան Վ. «Հողշինմունիթորինգ» ՊՈԱԿ, քաղ. գործ Էջ ԵԱԲԳ/2447/02/10 (վնասը հատուցելու պահանջի մասին) 329-336

Խնդիր. 1. Արդյո՞ք ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1078-րդ հոդվածի 2-րդ կետի համաձայն՝ վնասը հատուցելիս հաշվի է առնվում տուժողի կողմից առողջության քայքայումից հետո ստացած աշխատավարձը (եկամուտը):

2. Արդյո՞ք գործը դատական կարգով քննության մեջ գտնվելու հանգամանքը հիմք է ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 411-րդ հոդվածը չկիրառելու համար:

* Միաժամանակ ՀՀ վճարելի դատարանն անդրադարձել է «կորցրած աշխատավարձ» կամ «կորցրած եկամուտ» հասկացության մեկնարանությանը:

Վճարելի դատարանի դիրքորոշումը. 1. Վճարելի դատարանը ՀՀ Քաղաքացիական օրենսգրքի 1078-րդ հոդվածի 1-ին և 2-րդ կետերի համեմատական վերլուծության արդյունքում եկել է այն եզրահանգման, որ «կորցրած աշխատավարձ» կամ «կորցրած եկամուտ» հասկացությունն օրենսդիրն օգտագործել է՝ որպես աշխատունակության կորստի հետևանքով աշխատել չկարողանալու և համապատասխան աշխատավարձ (եկամուտ) չստանալու հետևանք, և այդ հոդվածով համապատասխան հատուցում ստանալու տուժողի իրավունքի նախատեսումն իրականում նպատակ է հետապնդում հնարավորինս վերականգնել վերջինիս իրավունքները, այսինքն՝ մինչև առողջությանը վնաս պատճառելը եղած վիճակը վերականգնելը, երբ առողջությունը չվնասվելու դեպքում սովորական պայմաններում կաշխատեր և կստանար համապատասխան վարձատրություն: Ինչ վերաբերում է 1078-րդ հոդվածի 2-րդ կետով սահմանված դրույթին, ըստ որի՝ վնասը հատուցելիս հաշվի չի առնվում տուժողի կողմից առողջության քայքայումից հետո ստացած աշխատավարձը (եկամուտը), ապա Վճարելի դատարանը գտել է, որ այդ նորմի իմաստն այն է, որ առողջության քայքայումից հետո աշխատելու դեպքում աշխատավարձ ստանալը չի վերացնում առողջությունը վերականգնելու փուլում չաշխատելու հետևանքով չստացած, կորցրած աշխատավարձը (եկամուտը) և այլ վնասները ստանալու տուժողի իրավունքը:

2. Վճարելի դատարանը գտել է, որ գործը դատական կարգով քննության մեջ գտնվելու հանգամանքը հիմք չէ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 411-րդ հոդվածը չկիրառելու համար, քանի որ անձի՝ գումար վճարելու պարտավորությունը ծագել է այն պահից, երբ կողմերի միջև ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1078-րդ հոդվածի հիման վրա և նույն օրենսգրքի 1079-րդ հոդվածով սահմանված չափով առաջացել են վնաս պատճառելուց բխող իրավահարաբերություններ: Հետևաբար գործի դատական կարգով քննությունն ընդամենը անձի՝ իր իրավունքների դատական պաշտպանության եղանակն էր, որի ընթացքում դատարանը քննել է նախկինում ծագած իրավահարաբերությունների հետևանքով վնասի հատուցման հարցը:

ԺԱՌԱՆԳՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ

01.07.2011թ.

52. Գևորգ Բերբերյան v. Մարինե Բերբերյան, քաղ. գործ ԵԱԲԳ/1018/02/09 **Էջ 337-342**
(ժառանգությունն ընդունելու համար բաց թողնված ժամկետը հարգելի համարելու և ըստ կտակի ժառանգությունն ընդունած ժառանգ ձևապատկերի պահանջների մասին)

Խնդիր. Արդյո՞ք ըստ կտակի ժառանգությունը կարող է ընդունվել ժառանգական գանգվածում ներառված գույքի փաստացի տիրապետմամբ:

Վճարելի դատարանի դիրքորոշումը. Ելնելով ժառանգական իրավահարաբերությունների բնույթից՝ Վճարելի դատարանն արձանագրել է, որ ժառանգության ընդունումը ժառանգի կողմից իրականացվող կանխամտածված, ակտիվ գործողությունների համակցություն է, որն ուղղված է ժառանգական գույքն իր

սեփականությունը դարձնելուն: Այսինքն, թե ըստ օրենքի և թե ըստ կտակի ժառանգության ընդունման դեպքում ժառանգը պետք է գիտակցի և նրա գործողությունները պետք է նպատակաուղղված լինեն համապատասխան ժառանգության ընդունմանը: Հետևաբար, ըստ կտակի ժառանգության ընդունման դեպքում ժառանգի կողմից պետք է ձեռնարկվեն ակտիվ քայլեր, որը պետք է ուղղված լինի հենց ըստ կտակի ժառանգությունն ընդունելուն: Ժառանգի գործողություններից պետք է բխի, որ դրանք միաված են ոչ թե ըստ օրենքի ժառանգությունն ընդունելուն (եթե ըստ կտակի ժառանգը նաև ըստ օրենքի ժառանգ է), այլ հենց ըստ կտակի ժառանգությունն ընդունելուն, որն էլ կարող է իրականացվել միայն ժառանգության բացման վայրի նոտարին դիմում հանձնելու եղանակով:

Եթե օրենքով սահմանված կարգով և ժամկետներում ժառանգը միջոցներ չի ձեռնարկում ըստ կտակի ժառանգությունն ընդունելու համար, ապա ժառանգությունը կատարվում է ըստ օրենքի:

01.04.2011թ.

53. Շողեր Գրիգորյան v. ՀՀ Կենտրոն նոտարական տարածքի նոտար Նունե Սարգսյան, վարչ. գործ ՎԳ/5269/05/09 (ժառանգության իրավունքի վկայագիր տալու և պարտավորեցնելու պահանջի մասին)

Էջ
343-348

Խնդիր. Որո՞նք են Ժառանգության գանգվածի որոշման գործընթացում ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 135-րդ հոդվածը կիրառելիս նոտարի կողմից գնահատման ենթակա հանգամանքները:

Վճռաբեկ դատարանի դիրքորոշումը. Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ ժառանգության իրավունքի վկայագիր տալու ժամանակ նոտարը պետք է որոշի նաև ժառանգության գանգվածի կազմը, որի մեջ է մտնում ժառանգության բացման օրը ժառանգատուին պատկանող գույքը: Միաժամանակ, ժառանգության գանգվածի որոշման գործընթացում նոտարը պետք է հաշվի առնի Հայաստանի Հանրապետության՝ նախկինում և ներկայումս գործող օրենսդրական կանոնակարգումների առանձնահատկությունները: Սասնավորապես՝ նախկինում գործող կանոնակարգումների համաձայն՝ հողի սեփականության և մշտական օգտագործման իրավունքը հաստատվում էր պետական ակտով, որը տրվում էր պատգամավորների տեղական խորհրդի գործադիր կոմիտեի կողմից, իսկ գյուղացիական տնտեսությունը որպես սեփականություն կարող էր ունենալ նաև բնակելի տներ և հողամասեր, որոնց նկատմամբ իրավունքներն իրենց հերթին ձևակերպվում էին գյուղացիական ընտանիքի գլխի անունով և նույնպես ձանաչվում էին նրա անվամբ ձևակերպվող պատգամավորների գյուղական, ավանային, քաղաքային խորհուրդների գործադիր կոմիտեների կողմից տրվող պետական ակտի հիման վրա: Հաշվի առնելով նշված կանոնակարգումները, ինչպես նաև սեփականության իրավունքի պաշտպանության անհրաժեշտությունը՝ ներկայումս գործող կանոնակարգումների համաձայն՝ մինչև 06.05.1999 թվականը հողամասերի նկատմամբ իրավունքների վերաբերյալ սահմանված կարգով տրված կամ ձեռք բերված փաստաթղթերը պահպանել են իրենց իրավաբանական ուժը, դրանք վերագրանցման ենթակա չեն և հիմք են հանդիսանում անշարժ գույքի նկատմամբ գործարքներ կատարելու համար: Այսինքն՝ ժառանգության իրավունքի վկայագիր տալու ժամանակ ժառանգության գանգվածի որոշման գործընթացում նոտարը պետք է հաշվի առնի, որ նախկինում տրված պետական ակտը դա գույքի նկատմամբ իրավունքը հաստատող

և դրա պատկանելիության հարցը որոշող պետության կողմից տրված և ճանաչված պաշտոնական փաստաթուղթ է: Հետևաբար, նույնպես ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 135-րդ հոդվածը պետք է մեկնաբանվի՝ հաշվի առնելով ՀՀ հողային օրենսգրքի 52-րդ հոդվածի 4-րդ մասով և «Գույքի սկստումամբ իրավունքների պետական գրանցման մասին» ՀՀ օրենքի 56-րդ հոդվածով սահմանված առանձնահատկությունները, ինչպես նաև իրավահարաբերության ծագման պահին գործող օրենսդրական կանոնակարգումները:

ԸՆՏԱՆԵԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ

ԾՆՈՂՆԵՐԻ ԵՎ ԶԱՎԱԿՆԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐՆ ՈՒ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

27.05.2011թ.

54. Մերուժան Մանուչարյան և այլոք v. Քրիստինե Մանուչարյան, քաղ. էջ գործ ԾԴ/1501/02/10 (երեխայի հետ շփվելու, դաստիարակությանն ու կրթությանը 349-353 մասնակցելու կարգ սահմանելու պահանջների մասին)

Խնդիր. Արդյո՞ք դատական ակտով երեխայի տատի և պապի՝ իրենց թոռան հետ շփվելու իրավունքի ճանաչման դեպքում այդ իրավունքի իրացումն հնարավոր է, եթե դատարանը չի սահմանում շփման կարգ:

Վճռաբեկ դատարանի դիրքորոշումը. Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ Վերաքննիչ դատարանը դատական ակտ կայացնելիս նշելով, որ հայցը բավարարում է մասնակիորեն և փաստորեն թույլատրելով հայցվորներին շփվել թոռան հետ, ըստ էության, ճանաչել է ՀՀ ընտանեկան օրենսգրքի 56-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված իրավունքը՝ առանց սահմանելու շփման կարգ, որը կարող է անհնարին դարձնել նման շփումը:

01.07.2011թ.

55. Ռուզաննա Թորոսյան v. Նվեր Մկրտչյան, քաղ. գործ ԵԱԲԴ/1688/02/08 (երեխայի խնամքն ու բնակության վայրը նաև իր մոտ որոշելու պահանջի մասին) էջ 354-361

Խնդիր. Արդյո՞ք ամուսինների միջև համաձայնության բացակայության դեպքում, ամուսնալուծությունից հետո ծնողների՝ միմյանցից առանձին ապրելու դեպքում դատարանն իրավունք ունի երեխայի ապրելու վայրը որոշել երկու տարբեր երկրներում գտնվող ծնողների մոտ՝ առաջնորդվելով միայն ծնողներից մեկի՝ երեխայի խնամքին և դաստիարակությանը մասնակցելու իրավունքի ապահովման անհրաժեշտությամբ:

Վճռաբեկ դատարանի դիրքորոշումը. Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ երեխաների ծնողներից մեկի հետ ապրելու հարցը դատարանը որոշում է՝ առաջնորդվելով երեխայի լավագույն շահերով: Մասնավորապես, տարբեր երկրներում բնակվող ծնողների երեխայի ապրելու վայրը որոշելիս դատարանը պետք է հաշվի առնի այնպիսի հանգամանքներ, ինչպիսիք են՝ ծնողների կողմից նախապես որոշված երեխայի բնակության վայրը, երեխայի տարիքը, կրթության վայրը,

համապատասխան երկրի և այդտեղ բնակվող ծնողի հետ երեխայի կապվածությունը հիմնավորող այլ հանգամանքներ, ինչպես նաև երեխայի ապրելու վայրի պարբերաբար փոփոխության հնարավոր բացասական հետևանքները երեխայի հոգևեկան, հոգևոր և բարոյական զարգացման և դաստիարակության վրա:

Վերոգրյալի հիման վրա Վճռաբեկ դատարանը գտել է, որ Դատարանը չէր կարող երեխայի ապրելու վայրը որոշել երկու տարբեր երկրներում գտնվող ծնողների մոտ՝ առաջնորդվելով միայն ծնողներից մեկի՝ երեխայի խնամքին և դաստիարակությանը մասնակցելու իրավունքի ապահովման անհրաժեշտությամբ, առանց հաշվի առնելու երեխայի լավագույն շահը:

14.10.2011թ.

56. Մանուկ Ղազանյան v. Ալինա Չոբանյան, քաղ. գործ ԵԿԴ/1314/02/10 (տեսակցության վայր և տեսակցության նոր կարգ սահմանելու պահանջի մասին)

**Էջ
362-366**

Խնդիր. Արդյո՞ք ծնողի՝ ԱՄՆ-ում բնակվելու և աշխատելու, Հայաստանում հաճախակի լինելու կամ չլինելու հանգամանքները խոչընդոտ են երեխայի հետ իր բնակության վայրում տեսակցելու եւ շփվելու իրավունքի տրամադրման համար:

Վճռաբեկ դատարանի դիրքորոշումը. Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ ծնողի՝ ԱՄՆ-ում բնակվելու և աշխատելու, Հայաստանում հաճախակի լինելու կամ չլինելու հանգամանքները խոչընդոտ չեն անձին իր երեխայի հետ Երևան քաղաքում գտնվող իր բնակության վայրում տեսակցելու և շփվելու իրավունք տրամադրելու համար:

27.12.2011թ.

57. Նինա Գուլյան v. Ալի Ղուլչիյան, Զինա Ղուլչյան, քաղ. գործ ԱԲԱԴ/0264/02/11 (երեխաների խնամքն ու դաստիարակությունն իրեն հանձնելու պահանջի մասին և ըստ հակընդդեմ հայցի՝ երեխաների խնամքն ու դաստիարակությունն իրենց հանձնելու, ավտոմեքենան հրապարակային սակարկություններով վաճառելու՝ ստացված գումարը հետագայում ընդհանուր սեփականության մասնակիցների միջև բաժիններին համաչափ բաշխելու պահանջների մասին)

**Էջ
367-374**

Խնդիր. Արդյո՞ք դատարանը, տասը տարին լրացած երեխայի կարծիքը հաշվի առնելով վերջիններիս խնամակալությունը հարազատներին հանձնելու պայմաններում, խախտում է մոր՝ այլ անձանց հանդեպ երեխային դաստիարակելու նախապատվության իրավունքը:

Վճռաբեկ դատարանի դիրքորոշումը. Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ Վերաքննիչ դատարանը, տասը տարին լրացած երեխաների կարծիքը հաշվի առնելու հիմքով վերջիններիս խնամակալությունը հարազատներին հանձնելու պայմաններում, ըստ էության, խախտել է ծնողի՝ այլ անձանց հանդեպ երեխային դաստիարակելու նախապատվության, երեխաների դաստիարակության, առողջության, լիարժեք ու ներդաշնակ զարգացման և կրթության համար հոգ տանելու իրավունքները և պարտականությունները:

ԸՆՏԱՆԻՔԻ ԱՆԴԱՄՆԵՐԻ ԱԼԻՄԵՆՏԱՅԻՆ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

01.04.2011թ.

58. Արմեն Գրիգորյան v. Էլվիրա Գրիգորյան, քաղ. գործ ԵԱԲԴ/0823/02/10 Էջ
375-380

Խնդիր. Արդյո՞ք անձի ընտանեկան դրության փոփոխությունը բավարար է հաստատված համարելու նրա գույքային դրության փոփոխության փաստը և հետևաբար ալիմենտի չափը փոփոխելու համար:

Վճռաբեկ դատարանի դիրքորոշումը. Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ դատարանն ալիմենտի չափը նվազեցնելու կամ ավելացնելու դեպքում պարտավոր է հաշվի առնել ոչ միայն կողմերի ընտանեկան, այլ նաև նրանց գույքային դրության՝ վաստակի և (կամ) այլ եկամտի փոփոխությունը, որի ապացուցման պարտականությունը, ինչպես նաև չապացուցման դեպքում դրա բացասական հետևանքները պետք է կրի այդ փաստը վկայակոչած կողմը: Այսինքն՝ նշված հանգամանքներն ինքնուրույն ապացուցման ենթակա են, և միայն կողմի ընտանեկան դրության փոփոխությունը դեռևս բավարար չէ նրա գույքային դրության՝ վաստակի և (կամ) այլ եկամտի փոփոխության վերաբերյալ որևէ փաստ հաստատված համարելու և եզրահանգում կատարելու համար:

ԱՇԽԱՏԱՆ-ՔԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆՔ

01.07.2011թ.

59. ՀՀ աշխատանքի պետական տեսչության Գեղարքունիքի մարզային կենտրոն v. «Սևանի պոլիկլինիկա» ՊՓԲԸ-ի տնօրեն Ռիտա Ժամհարյան, վարչ. գործ ՎԴԶ/0090/05/10 (գումար բռնագանձելու պահանջի մասին, և ըստ հակընդդեմ հայցի՝ վարչական ակտն առոչինչ ձանաչելու պահանջի մասին): Էջ
381-389

Խնդիր. Արդյո՞ք ՀՀ օրենսդրությամբ նախատեսված է համատեղությամբ կատարվող աշխատանքի համար առանձին պայմանագիր կնքելու ձևական պահանջ:

Վճռաբեկ դատարանի դիրքորոշումը. Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ հիմնական աշխատանքային պայմանագիրն աշխատողի և գործատուի միջև և նրանց ստորագրությամբ մեկ փաստաթուղթ կազմելու միջոցով գրավոր կնքված համաձայնություն է, որում պարտադիր պետք է նշվեն որոշակի տվյալներ և ներառվեն որոշակի պայմաններ, իսկ առանց աշխատանքային պայմանագիր կնքելու կամ խախտումով կնքված աշխատանքային պայմանագրի հիման վրա կատարվող աշխատանքը համարվում է անօրինական աշխատանք: Իրավահարաբերության ծագման պահին ՀՀ աշխատանքային օրենսգրքի գործող խմբագրությունը չի պարունակել նաև համատեղությամբ կատարվող աշխատանքի համար առանձին պայմանագիր կնքելու ձևական պահանջ, այլ գուտ սահմանվել է, որ համատեղությամբ աշխատանքը պետք է կատարվի աշխատանքային պայմանագրի հիման վրա:

ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱՊԱՀՈՎՈՒԹՅՈՒՆ

01.07.2011թ.

60. Մայրան Շահբազյանի դիմումը, քաղ. գործ ԵԱՆԳ/1131/02/10 (իրավաբանական նշանակություն ունեցող փաստի հաստատման պահանջի մասին)

Էջ
390-394

Խնդիր. Արդյո՞ք բժշկական կենտրոնի տնօրենի գրությունը, դրան կից ներկայացված աշխատավարձի անձնական քարտերի պատճենները, վկաների ցուցմունքները, աշխատավարձի հաշվարկման անձնական քարտում առկա գրառումները կարող են դիտվել աշխատանքային ստաժը հաստատող վերաբերելի և թույլատրելի ապացույցներ:

Վճռաբեկ դատարանի դիրքորոշումը. Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ Վերաքննիչ դատարանը անտեսել է բժշկական կենտրոնի տնօրենի գրությունը, դրան կից ներկայացված աշխատավարձի անձնական քարտերի պատճենները, վկաների ցուցմունքները, աշխատավարձի հաշվարկման անձնական քարտում առկա գրառումները և չի նշել այդ ապացույցների մերժման հիմքերը:

Հիմք ընդունելով վերոգյալը՝ Վճռաբեկ դատարանը գտել է, որ ստորադաս դատարանների կողմից չի կատարվել գործում առկա բոլոր ապացույցների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտություն:

ՏՆՏԵՍԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ

01.07.2011թ.

61. Ռաֆիկ Այվազյան v. ՀՀ Տավուշի մարզի Լուսաձոր համայնքի ղեկավար Սուրեն Քոչարյան, քաղ. գործ ՏԳ1/0214/02/10 (սեփականության իրավունքը ձևապահելու պահանջի մասին)

Էջ
395-400

Խնդիր. Արդյո՞ք լուծարվող կոլտնտեսությունների և խորհունտեսությունների հիմնական ֆոնդերի և մյուս գույքի իրացումը կարող է իրականացվել հողային բարեփոխումների և սեփականաշնորհման հանձնաժողովի որոշմամբ:

Վճռաբեկ դատարանի դիրքորոշումը. Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ 22.01.1991 թվականին ընդունված «Գյուղացիական և գյուղացիական կոլեկտիվ տնտեսությունների մասին» ՀՀ օրենքը վերաբերում է գյուղատնտեսական հողերը քաղաքացիներին որպես սեփականություն տրամադրելու կարգին, ինչպես նաև լուծարվող կոլտնտեսությունների, խորհունտեսությունների և գյուղատնտեսական այլ ձեռնարկությունների հիմնական ֆոնդերի իրացման կարգին: Գյուղացիական և գյուղացիական կոլեկտիվ տնտեսությունների հողամասերի տրամադրման վերաբերյալ հարցերի լուծման համար կազմված հողային բարեփոխումների և սեփականաշնորհման կենտրոնական, մյուղային, շրջանային և տեղական հանձնաժողովներն օրենքով սահմանված կարգով իրավասու էին կատարել միայն հողատկանցումներ սեփականաշնորհման ձևով, իսկ լուծարվող կոլտնտեսությունների և խորհունտեսությունների հիմնական ֆոնդերի և մյուս գույքի իրացումը պետք է կատարվեր միայն համապատասխան լուծարքային հանձնաժողովների կողմից: Հիմք ընդունելով այն հանգամանքը, որ սույն վեժը վերաբերում է կոլտնտեսությանը պատկանող անասնապահական շինությունների իրացման, այլ ոչ թե պետական

սեփականություն հանդիսացող հողամասերի իրացման կարգին, հետևաբարՎճռաբեկ դատարանն արձանագրել է, որ հողային բարեփոխումների և սեփականաշնորհման հանձնաժողովի որոշումը սույն վեճի լուծման համար չի կարող առաջացնել որևէ իրավական հետևանք, քանի որ լուծարվող կոլտնտեսությունների և խորհրտնտեսությունների հիմնական ֆոնդերի և մյուս գույքի իրացման լիազորություն ունեցել են միայն լուծարքային հանձնաժողովները, այն էլ աճուրդային վաճառքի կարգով:

ՀՈՂԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆՔ

27.05.2011թ.

62. Հնայակ Մարտիրոսյան v. Արարատ Մկրտչյան և այլոք, քաղ. գործ **Էջ**
ԵԿԴ/2343/02/08 (դրամական փոխհատուցման դիմաց բաժնային սեփականության **401-410**
իրավունքը դադարեցնելու պահանջի մասին)

Խնդիր. Արդյո՞ք մինչև ՀՀ 1991 թվականի հողային օրենսգրքի ուժի մեջ մտնելը բնակելի տան նկատմամբ ժառանգություն ընդունելու դեպքում անձը դառնում է նաև այդ տնով ծանրաբեռնված և փաստացի առանձնացված հողամասի սեփականատեր:

Վճռաբեկ դատարանի դիրքորոշումը. Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ ՀՀ նախկին Հողային օրենսգրքի ուժի մեջ մտնելը՝ 15.03.1991 թվականը, հողը պետության բացառիկ սեփականությունն էր և հատկացվում էր բացառապես օգտագործման իրավունքով: Բնակելի տան շինարարության և դրա սպասարկման համար քաղաքացիների ունեցած հողամասերն անհատույց որպես սեփականություն նրանց են թողնվել միայն ՀՀ նախկին Հողային օրենսգրքի ուժի մեջ մտնելուց հետո՝ 15.03.1991 թվականից:

ՔԱՂԱՔԱՅԻԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

ԱՊԱՑՈՒՅՑՆԵՐ ԵՎ ԱՊԱՑՈՒՑՈՒՄ

01.07.2011թ.

63. ՀՀ գլխավոր դատախազություն v. Արսեն Աղիլխանյան, քաղ. գործ **Էջ**
ԵՄԴ/0091/02/10 (գումարի բռնագանձման պահանջի մասին) **411-416**

Խնդիր. Արդյո՞ք օրինական ուժի մեջ մտած դատավճռով հաստատված փաստը նախադատելի է քաղաքացիական դատավարության կարգով քննվող գործով, եթե այդ փաստի հաստատման համար հիմք հանդիսացող ապացույցը (ստուգման ակտ) անվավեր է ճանաչվել վարչական դատավարության կարգով:

Վճռաբեկ դատարանի դիրքորոշումը. Վճռաբեկ դատարանը ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 52-րդ հոդվածի 3-րդ մասով և հիմք ընդունելով օրինական ուժի մեջ մտած դատավճռով հաստատված այն հանգամանքը, համաձայն որի՝ անձը իրականացնել է ապօրինի ձեռնարկատիրական գործունեություն, ինչի հետևանքով պետությանը պատճառել է խոշոր չափի վնաս, արձանագրել է, որ պետությանը վնաս պատճառելու փաստը նախադատելի է և կրկին ապացուցման ոչ ենթակա:

14.10.2011թ.

64. Գովիդաս Հարթունյան v. «Ագուր-Քոմփ» ՍՊԸ, տնօրեն Ռաֆայել Մկրտչյան, Գուրգեն Մարտիրոսյան, քաղ. գործ ԵԱԳԴ/0832/02/09 (ընկերությունից դուրս գալու, բաժնետնասն առանձնացնելու և որպես դրա հետևանք նրա գրանցման վայրն իր տարածքից հանելու պահանջի մասին)

**Էջ
417-427**

Խնդիր. Արդյո՞ք այն դեպքում, երբ կողմը գրավոր ապացույց է ներկայացնում պատճենի տեսքով դատարանը պարտավոր է պահանջել գրավոր ապացույցի բնօրինակի կամ պատշաճ վավերացված պատճենի ներկայացումը, այն դեպքում, երբ դատարանը այն գնահատում է որպես ապացուցում պահանջող փաստ:

Վճռաբեկ դատարանի դիրքորոշումը. Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ գործի քննությունը դատաքննության նախապատրաստական փուլով իրականացնելիս դատարանը պարտավոր է կողմերի հետ քննարկել ապացուցում պահանջող փաստերի շրջանակը և ապացուցման պարտականությունը կողմերի միջև բաշխել ապացուցման պարտականության բաշխման կանոններին համապատասխան: Ընդ որում, գործի լուծման համար էական նշանակություն ունեցող ապացուցման ենթակա փաստերի շրջանակը որոշելն անմիջական կախվածության մեջ է գտնվում գործին մասնակցող անձանց վկայակոչած փաստերի վերաբերյալ մյուս կողմի ներկայացրած առարկություններից:

Միաժամանակ, Վճռաբեկ դատարանը նշել է, որ գործը դատաքննության նախապատրաստելու ինստիտուտը նպատակաուղղված է ապահովելու գործի արդյունավետ քննությունը: Այդ նպատակով օրենսդիրը գործը դատաքննության նախապատրաստելու ժամանակ սահմանում է ոչ միայն կողմերի, այլև դատարանի գործողությունները: Այսինքն՝ դատարանն այդ փուլով դատավարությունը պետք է անցկացնի իր առջև դրված խնդիրներն իրականացնելու համար, և գործը դատաքննության նախապատրաստելու ժամանակ դատարանի գործողությունները պետք է ուղղված լինեն ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 53-րդ հոդվածով նախատեսված ապացույցների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտության համար համապատասխան պայմանների ապահովմանը, գործի համար նշանակություն ունեցող ապացուցման ենթակա փաստերի որոշմանը և գործը լուծելու համար ճիշտ իրավանորմերի կիրառմանը: Գրավոր ապացույցները դատարան ներկայացվում են երկու ձևով՝ բնօրինակով կամ պատշաճ վավերացված պատճենի ձևով: Ընդ որում, դատարանը, պարզելով գործով ապացուցման ենթակա փաստերը, կողմից կարող է պահանջել համապատասխան գրավոր ապացույցներ, իսկ անհրաժեշտության դեպքում փաստաթղթերի բնօրինակները:

Հիմք ընդունելով վերոգրյալը և հաշվի առնելով այն հանգամանքը, որ Դատարանը գործը դատաքննության նախապատրաստելիս պարզելով գործով ապացուցման ենթակա փաստերը, ընդունել է հայցադիմումին կից ներկայացրած փոստային անդորրագրերի պատճենները, գործի դատաքննության ընթացքում հետազոտել է այդ ապացույցները, դրանք հետազոտելիս չի պահանջել ներկայացնել այդ փոստային անդորրագրերի ինչպես բնօրինակը, այնպես էլ դրանց վավերացված պատճենները, սակայն վճռի հիմքում դրել է դրա բնօրինակը կամ պատշաճ վավերացված պատճենը չներկայացնելու հանգամանքը, Վճռաբեկ դատարանը գտել է, որ Դատարանը խախտել է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 54-րդ հոդվածը:

ԴԱՏԱԿԱՆ ԾԱԽՍԵՐ

04.03.2011թ.

65. «Արդշինիկավետրանկ» ՓԲԸ v. Արամայիս, Արմեն և Ալվինա **Էջ 428-436**
Մինասյաններ, քաղ. գործ ԼՂ/0777/02/09 (վարկային պայմանագրով պարտքն ամբողջությամբ բռնագանձելու, բռնագանձումը գրավի առարկայի և այլ գույքի վրա տարածելու, վարկային պայմանագրով նախատեսված տոկոսները հաշվեգրելու պահանջների մասին)

Խնդիր. Արդյո՞ք դատարանը կարող է դատարաններում պետական տուրքի գծով արտոնություն սահմանել:

Վճռաբեկ դատարանի դիրքորոշումը. Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ դատարաններում պետական տուրքի գծով արտոնություն, այդ թվում պետական տուրքի վճարումից ազատման տեսքով, կարող են սահմանել նաև դատարանները կամ դատավորները՝ հաշվի առնելով կողմերի գույքային դրությունը, որն էլ ուղղված է «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին մասով և ՀՀ Սահմանադրության 18-րդ հոդվածի 1-ին մասով երաշխավորված՝ յուրաքանչյուր անձի դատական պաշտպանության իրավունքի լիարժեք իրականացմանը: Միաժամանակ, Վճռաբեկ դատարանը որոշել է կողմին ազատել պետական տուրքի վճարումից հաշվի առնելով նրա գույքային դրությունը, այն հանգամանքը, որ նրա խնամքին են անչափահաս զավակները, ինչպես նաև այն, որ վերջինս ստանում է սոցիալական նպաստ:

66. Մարինա Պողոսյան v. «Ղ-Տելեկոմ» ՓԲԸ, «Վոլոյյա Անթատանյան» **Էջ 437-441**
ՓԲԸ, քաղ. գործ ԵԱԲԴ/1149/02/09 (պայմանագիրն անվավեր ճանաչելու և վնասը հատուցելու պահանջների մասին)

Խնդիր. Արդյո՞ք բարոյական վնասի հատուցման պահանջներով ենթակա է գանձման պետական տուրք:

Վճռաբեկ դատարանի դիրքորոշումը. Վճռաբեկ դատարանը բարոյական վնասի հատուցման պահանջի մասով պետական տուրքի հարցին անդրադառնալիս արձանագրել է, որ այն ենթակա չէ գանձման հետևյալ պատճառաբանությամբ. սույն իրավահարաբերության ծագման պահին գործող ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 17-րդ հոդվածով օրենսդիրը հստակ սահմանել է, թե ինչն է համարվում վնաս, և ակնհայտ է, որ դրանց շարքում բացակայում է բարոյական վնասը: Այսինքն՝ ՀՀ օրենսդրությամբ բարոյական վնասի, ինչպես նաև դրա փոխհատուցման ինստիտուտ նախատեսված չէ:

ԴԱՏԱԿԱՆ ԾԱՆՈՒՑՈՒՄՆԵՐ

04.03.2011թ.

67. Մարիամ Մանուկյան v. Արմեն Առաքելյան և այլք, քաղ. գործ 08-1442 **Էջ 442-445**
(բնակելի տարածության անհատույց օգտագործման իրավունքը փոխհատուցմամբ դադարեցնելու և տարածքից վտարելու պահանջների մասին)

Խնդիր. Արդյո՞ք վերաքննիչ դատարանը, հաստատված համարելով՝ դատական նիստի վայրի և ժամանակի մասին պատշաճ ծանուցված չլինելու փաստը և բեկանելով դատական ակտը, դուրս է գալիս վերաքննիչ բողոքի շրջանակներից, այն դեպքում, երբ բողոք բերող անձը նշել է, որ հնարավորություն չի ունեցել մասնակցել դատական նիստին և որևէ անդրադարձ չի կատարել դատական նիստի մասին ծանուցված չլինելու հարցին:

Վճռաբեկ դատարանի դիրքորոշումը. Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ Վերաքննիչ դատարանն անտեսել է այն հանգամանքը, որ կողմը վերաքննիչ բողոքում հստակ նշել է, որ հնարավորություն չի ունեցել մասնակցել դատական նիստին և որևէ անդրադարձ չի կատարել դատական նիստի մասին ծանուցված չլինելու հարցին: Այսինքն՝ Վերաքննիչ դատարանը հաստատված է համարել, որ կողմը պատշաճ չի ծանուցվել դատական նիստերի ժամանակի և վայրի մասին այն պայմաններում, երբ վերջինս վերաքննիչ բողոքում նման փաստարկ չի նշել և Դատարանի վճիռը բողոքարկել է այն հիմքով, որ հնարավորություն չի ունեցել ներկա գտնվելու դատական նիստին:

Հիմք ընդունելով վերոգրյալը Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ Վերաքննիչ դատարանը դուրս է եկել վերաքննիչ բողոքի հիմքերի և հիմնավորումների սահմաններից:

27.05.2011թ.

68. Հովիկ Դալլաքյան v. Սաթենիկ Դալլաքյան և այլոք, քաղ. գործ ԵԱԲԳ/0996/02/10 (վտարելու պահանջի մասին)

**Էջ
446-449**

Խնդիր. Արդյո՞ք դատարանը, գործին մասնակցող անձանց պատշաճ ծանուցելով դատական նիստի վայրի և ժամանակի մասին, սակայն սկսելով այն շուրջ 40 րոպե ուշացմամբ խախտում է կողմերի իրավահավասարության և մրցակցության դատավարական սկզբունքները:

Վճռաբեկ դատարանի դիրքորոշումը. Վճռաբեկ դատարանն հաստատված համարելով, որ դատարանը դատական նիստը սկսել է նախատեսվածից շուրջ 40 րոպե ուշացումով, արձանագրել է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 78-րդ, 79-րդ և 116-րդ հոդվածների պահանջների խախտում:

29.07.2011թ.

69. Երևանի Շենգավիթ վարչական շրջանի ղեկավար v. Աշոտ Սալազարյան, քաղ. գործ ԵԿԴ/0964/02/10 (գումարի բռնագանձման պահանջի մասին)

**Էջ
450-454**

Խնդիր. Արդյո՞ք դատարանը պատասխանողին ծանուցելու անհնարինության դեպքում պարտավոր է ծանուցագիր ուղարկել ոչ միայն հայցվորի նշած հասցեով այլև պատասխանողին սեփականության իրավունքով պատկանող և գործում առկա մեկ այլ բնակարանի հասցեով:

Վճռաբեկ դատարանի դիրքորոշումը. Վճռաբեկ դատարանն արձանագրել է գործին մասնակցող անձանց՝ դատական նիստի օրվա, ժամի և վայրի մասին իրազեկելու կապակցությամբ դատարանի կողմից ակտիվ գործողություններ կատարելու պարտականությունը: Ընդ որում, անկախ ծանուցման եղանակից,

ծանուցումը պետք է լինի այնպիսին, որով հնարավոր է ապացուցել գործին մասնակցող անձին դատական նիստի մասին տեղեկացնելու փաստը:

Հիմք ընդունելով վերոգրյալը և հաշվի առնելով, որ Դատարանը, ունենալով կողմին սեփականության իրավունքով պատկանող այլ գույքի հասցե, պատշաճ և բավարար միջոցներ չի ձեռնարկել նրան այդ հասցեով ծանուցելու ուղղությամբ, Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ Դատարանը կողմին գրկել է դատարանում իր դատավարական իրավունքներից օգտվելու հնարավորությունից:

ՀԱՅՑԻ ՀԱՐՈՒՑՈՒՄԸ

04.03.2011թ.

70. Թերեզա Քոչարյան v. Անահիտ Հարությունովա, քաղ. գործ **Էջ**
ԵԱԲԴ/0481/02/10 (գումարի բռնագանձման պահանջի մասին) **455-459**

Խնդիր. Արդյո՞ք «Հայցադիմումը վարույթ ընդունելու մասին» որոշման մեջ պատասխանողի ազգանվան «ովա» վերջավորության փոխարեն «յան» նշվելու հանգամանքը անձին կարող են հիմք տալ կարծելու, թե գործն իր դեմ հարուցված չէ:

Վճռաբեկ դատարանի դիրքորոշումը. Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ «Հայցադիմումը վարույթ ընդունելու մասին» որոշման մեջ պատասխանողի ազգանվան «ովա» վերջավորության փոխարեն «յան» նշվելու հանգամանքը անձին չէին կարող հիմք տալ կարծելու, թե գործն իր դեմ հարուցված չէ, հիմք ընդունելով այն հանգամանքը, որ որոշման մեջ նշվել է ստացողի բնակության վայրը, ինչպես նաև հայցի հիմքը կազմող ստացողի կողմից տրված ստացականը, նրա համար բավարար էին համոզված լինելու, որ ստացված հայցը հարուցված է իր դեմ:

27.05.2011թ.

71. Վիզեն Ուրուշանյան v. Սուրիկ Մեղրակյան, քաղ. գործ **Էջ**
ԵՇԴ/0473/02/10 (անհիմն հարստացմամբ ստացած գումարը վերադարձնելու պահանջի մասին) **460-467**

Խնդիր. Արդյո՞ք հայցի հիմքում դրված ապացույցի ներկայացումը նոր հայցով դատարան դիմելիս կարող է համարվել այլ հիմքով հայցի ներկայացում:

Վճռաբեկ դատարանի դիրքորոշումը. Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ հայցի փաստական հիմքերի ներկայացումը և դրանք հիմնավորող ապացույցները չներկայացնելը տարբեր իրավաբանական նշանակություն և հետևանքներ ունեն: Հայցի հիմքում դրված փաստերի վերաբերյալ ապացույցներ չներկայացնելը հիմք է հայցը մերժելու համար, իսկ հայցի փաստական հիմքի ներկայացումն անձին գրկում է այդ հիմքով նորից դատարան դիմելու հնարավորությունից: Նման պայմաններում Վճռաբեկ դատարանը գտել է, որ հայցի հիմքում դրված որոշակի փաստական հանգամանքները հիմնավորող ապացույցը տվյալ դատավարության շրջանակներում չներկայացնելու պարագայում նույն փաստական հանգամանքների հիման վրա հայց ներկայացնելու դեպքում տվյալ ապացույցը ներկայացնելը չի կարող որակվել որպես այլ հիմքով հայցի ներկայացում:

Այսպիսով, Վճռաբեկ դատարանը եզրակացրել է, որ նույն հիմքերով օրենսդրական եզրույթը ներառում է հայցի փաստական և իրավական հիմքերը, այլ ոչ թե դրանք հիմնավորող ապացույցները:

* Միաժամանակ ՀՀ վճարելի դատարանը անդրադարձել է «հայցի հիմք» հասկացությանը և դրա տարրերին, արձանագրելով, որ հայցի փաստական հիմքն այն հանգամանքներն են, որոնց հետը նյութական իրավունքի նորմը կապում է իրավահարաբերությունների առաջացումը, փոփոխումը կամ դադարումը, իսկ հայցի իրավական հիմքը այն իրավական նորմերն են, որոնք կարգավորում են վիճելի իրավահարաբերությունը:

ԳՈՐԾԻ ՎԱՐՈՒՅԹԻ ԿԱՍԵՑՈՒՄԸ

27.05.2011թ.

72. Կարեն Հարությունյան v. Բարկեն Մելքոնյան, քաղ. գործ ԵԷԴ/1048/02/08 (հիփոթեքի պայմանագրով գրավադրված անշարժ գույքի վրա բռնագանձում տարածելու և այն հրապարակային սակարկություններով վաճառելու պահանջների մասին):

Էջ 468-472

Խնդիր. Արդյո՞ք դատարանը կարող է կասեցված գործի վարույթը վերսկսել գործի վարույթի կասեցումն առաջացրած միայն մեկ հանգամանքը վերանալու պայմանում:

Վճարելի դատարանի դիրքորոշումը. Վճարելի դատարանն արձանագրել է, որ այն դեպքերում, երբ դատարանի համար գործի վարույթի կասեցման հիմք են ոչ թե մեկ, այլ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 105-րդ հոդվածով նախատեսված մի քանի հիմքեր, դատարանը գործի վարույթը վերսկսելու հարցին անդրադառնալիս պետք է քննարկի ոչ միայն մեկ, այլ այն բոլոր հիմքերը, որոնց հիման վրա կասեցվել է գործի վարույթը:

ՎԱՐՉԱԿԱՆ ԳՈՐԾԵՐ

ՊԵՏԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՀԻՄՈՒՆՔՆԵՐ

ՍՏՈՒԳՈՒՄՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄ ԵՎ ԱՆՑԿԱՑՈՒՄ

04.03.2011թ.

73. Լուսինե Ասլանյան v. ՀՀ Կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի Մյասնիկյանի հարկային տեսչության, վարչ. գործ ՎԳ/0280/05/10 (ակտն անվավեր ճանաչելու (վերացնելու) պահանջի մասին)

Էջ 473-479

Խնդիր. Արդյո՞ք այն դեպքում, երբ խախտումը կատարվում է մինչև ստուգումը, սակայն ընդգրկվում է ստուգման ժամանակաշրջանում, ապա ստուգմամբ այդպիսի խախտման արձանագրումը և դրա համար պատասխանատվության առաջադրումը կարող է դիտվել որպես ստուգումից դուրս իրականացվող գործողություն:

Վճարելի դատարանի դիրքորոշումը. Վճարելի դատարանն արձանագրել է, որ ստուգումը տնտեսվարող սուբյեկտի ծավալած փաստացի գործունեության՝ օրենքների և այլ իրավական ակտերի պահանջներին համապատասխանությունը պարզելուն ուղղված հանձնարարագրի հիման վրա իրականացվող ընթացակարգ է: Ստուգում իրականացնելու մասին հանձնարարագրում այլ տվյալներից

բացի պետք է նշվի նաև ստուգմամբ ընդգրկվող ժամանակաշրջանը, որն ունի էական նշանակություն, քանի որ տնտեսվարող սուբյեկտի ծավալած փաստացի գործունեությունը ստուգվում է միայն հանձնարարագրում նշված ստուգմամբ ընդգրկվող ժամանակաշրջանի համար: Այսինքն՝ այն դեպքում, երբ խախտումը կատարվում է մինչև ստուգումը, սակայն ընդգրկում է ստուգման ժամանակաշրջանը, ապա ստուգմամբ այդպիսի խախտման արձանագրումը և դրա համար պատասխանատվության առաջադրումը չի կարող դիտվել որպես ստուգումից դուրս իրականացվող գործողություն:

04.03.2011թ.

74. «Մթար Դիվայդ» ՓԲԸ v. ՀՀ Կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե, վարչ. գործ ՎԳ/5848/05/08 (ակտն անվավեր ձանաչելու պահանջի մասին) **Էջ 480-486**

Խնդիր. Արդյո՞ք հսկիչ-դրամարկղային մեքենաների շահագործման կանոնների պահպանության հետ կապված ստուգումներ իրականացնելիս ստուգում իրականացնող անձը տնտեսվարող սուբյեկտին պետք է ներկայացնի ստուգման հանձնարարագիր:

Վճռաբեկ դատարանի դիրքորոշումը. Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ «Հայաստանի Հանրապետությունում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 3-րդ կետով նախատեսված ստուգման անցկացման մասին ծանուցելու պարտականությունը հսկիչ-դրամարկղային մեքենաների շահագործման կանոնների պահպանության հետ կապված ստուգումներին չի վերաբերում, սակայն դա չի նշանակում, որ ստուգում իրականացնող անձը ընդհանրապես չպետք է տնտեսվարող սուբյեկտին ներկայացնի ստուգման հանձնարարագիրը: Մասնավորապես, Վճռաբեկ դատարանը գտել է, որ այնուամենայնիվ տնտեսվարող սուբյեկտը մինչ ստուգումը փաստացի սկսելը իրավունք ունի ծանոթանալու ստուգման հանձնարարագրին, ստուգելու համար ստուգում իրականացնող համապատասխան անձի լիազորությունների առկայությունը:

01.04.2011թ.

75. «Գյուղատնտեսական ասոցիացիաների ֆեդերացիա» իրավաբանական անձանց միություն v. ՀՀ Կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի Էջմիածնի տարածքային հարկային տեսչություն, վարչ. գործ ՎԳ4/0278/05/09 (գումար բռնագանձելու պահանջի մասին) **Էջ 487-493**

Խնդիր. Արդյո՞ք ստուգման ժամկետի երկարաձգումը և ստուգման ընթացքի կասեցումն ինքնուրույն ընթացակարգեր են և մեկ ստուգման ընթացքում դրանցից որևէ մեկի կիրառումը կարող է բացառել մյուսի կիրառման հնարավորությունը:

Վճռաբեկ դատարանի դիրքորոշումը. Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ ստուգման ժամկետի երկարաձգումը և ստուգման ընթացքի կասեցումն ինքնուրույն ընթացակարգեր են, որոնցից յուրաքանչյուրի կիրառման համար անհրաժեշտ են համապատասխան իրավական և փաստական հիմքեր, և մեկ ստուգման ընթացքում դրանցից որևէ մեկի կիրառումը չի կարող բացառել մյուսի կիրառման հնարավորությունը:

01.07.2011թ.

76. ՀՀ Կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի **Էջ 494-501**
 Եղեգնաձորի տարածքային հարկային տեսչությունն v. «Արթուր Հովսեփյան» ԱԶ,
 վարչ. գործ ՎԴՅ/0011/05/10 (գումար բռնագանձելու պահանջի մասին)

Խնդիր. Արդյո՞ք հսկիչ-դրամարկղային մեքենաների կիրառման ճշտության ստուգումը նույնանում է հսկիչ գնման հետ:

Վճռարեկ դատարանի դիրքորոշումը. Վճռարեկ դատարանն արձանագրել է, որ հսկիչ գնումը ստուգումից տարբերվում է ինչպես հետապնդվող նպատակով, այնպես էլ այն իրականացնելու համար անհրաժեշտ իրավական հիմքով: Մասնավորապես՝ ստուգումը համապատասխան պետական մարմնի ղեկավարի (փոխարինող պաշտոնատար անձի) հրամանի կամ հանձնարարագրի հիման վրա իրականացվող ընթացակարգ է, որով պարզվում է տնտեսվարող սուբյեկտի ներկայացրած հաշվետվությունների արժանահավատությունը և վերջինիս ծավալած փաստացի գործունեության համապատասխանությունն օրենքների և այլ իրավական ակտերի պահանջներին: Իսկ հսկիչ գնումը հարկային մարմնի ղեկավարի կամ հարկային տեսչության պետի գրավոր հանձնարարագրի հիման վրա հարկային պարտավորությունների հաշվարկման (գնահատման) նպատակով իրականացվող ապրանքների, առարկաների, աշխատանքների, ծառայությունների գների, Հայաստանի Հանրապետությունում ռեզիդենտների ու ոչ ռեզիդենտների կողմից իրականացվող արժույթային գործարքների վերահսկողության և հսկիչ-դրամարկղային մեքենաների շահագործման կանոնների պահպանման ուսումնասիրություն է: Այսինքն՝ հսկիչ գնում իրականացնելու համար դրա վերաբերյալ հարկային մարմնի ղեկավարի կամ հարկային տեսչության պետի կողմից պարտադիր կերպով պետք է տրվի գրավոր հանձնարարագիր, որի բացակայության դեպքում հարկային մարմնի կողմից իրականացվող որևէ գործողություն, այդ թվում՝ նաև՝ համապատասխան պետական մարմնի ղեկավարի (փոխարինող պաշտոնատար անձի) հրամանի կամ հանձնարարագրի հիման վրա իրականացվող ստուգումը որևէ դեպքում չի կարող համարվել հսկիչ գնում:

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ

27.05.2011թ.

77. «Կարեն Դեմիրճյանի անվան Երևանի մետրոպոլիտեն» ՓԲԸ v. ՀՀ **Էջ 502-517**
 կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի Արաբկիրի 1
 հարկային տեսչություն, վարչ. գործ ՎԴ/0240/05/09 (ակտն անվավեր ճանաչելու
 պահանջի մասին)

Խնդիր. Այս որոշմամբ ՀՀ վճռարեկ դատարանն անդրադարձել է կապիտալ ծախսերի բնորոշմանը:

** Միաժամանակ ՀՀ վճռարեկ դատարանն անդրադարձել է սուբսիդիան ավելացված արժեքի հարկով հարկելու խնդրին:*

Վճռարեկ դատարանի դիրքորոշումը. Վճռարեկ դատարանն արձանագրել է, որ հարկվող շահույթը որոշելիս համախառն եկամուտը նվազեցվում է հիմնական միջոցների վրա կատարված ընթացիկ ծախսերի չափով, իսկ հիմնական միջոցի վրա կատարված կապիտալ բնույթի ծախսերն ավելացվում են այն հիմնական

միջոցի հաշվեկշռային արժեքին, որի վրա կատարվել են, և ամորտիզացվում են «Շահութահարկի մասին» ՀՀ օրենքի 12-րդ հոդվածով սահմանված կարգով և ժամկետներում: Ամորտիզացիոն մասհանումների տարեկան մեծությունը հաշվարկվում է որպես հիմնական միջոցի սկզբնական արժեքի և տվյալ խմբի կամ ոչ նյութական ակտիվի համար սահմանված ամորտիզացիոն ժամկետի հարաբերություն: Հիմնական միջոցների վրա կատարված ընթացիկ ծախսերի չափով համախառն եկամուտը նվազեցնելու կամ կապիտալ բնույթի ծախսերը հիմնական միջոցի հաշվեկշռային արժեքին ավելացնելու կանոնակարգումներն իրականացնելու տեսանկյունից էական նշանակություն ունի հիմնական միջոցների վրա կատարված ծախսերն ընթացիկ կամ կապիտալ բնույթի ծախսերի տարանջատելու պահանջը: Մասնավորապես՝ հիմնական միջոցների վրա կատարված ծախսերը համարվում են կապիտալ ծախսեր, եթե դրանց արդյունքում վերակառուցման, վերազինման, արդիականացման, հիմնանորոգման կամ ընդլայնման միջոցով վերափոխվում է հիմնական միջոցների վիճակը և (կամ) հիմնական միջոցի վրա հաշվետու տարվա ընթացքում կատարված ծախսերի մեծությունը գերազանցում է այդ հիմնական միջոցի սկզբնական արժեքի 10 տոկոսը, իսկ հիմնական միջոցների վրա կատարված ծախսերը համարվում են ընթացիկ ծախսեր, եթե դրանք չեն համարվում կապիտալ ծախսեր: Այսինքն՝ հիմնական միջոցների վրա կատարված ծախսերի արդյունքում վերակառուցման, վերազինման, արդիականացման, հիմնանորոգման կամ ընդլայնման միջոցով հիմնական միջոցների վիճակը վերափոխելու պայմանից բացի հիմնական միջոցի վրա հաշվետու տարվա ընթացքում կատարված ծախսերի մեծությունը հիմնական միջոցի սկզբնական արժեքի 10 տոկոսը գերազանցելու պայմանի առկայության դեպքում այդպիսի ծախսերը նույնպես համարվում են կապիտալ ծախսեր, ինչը հաստատվում է նաև կապիտալ ծախսերը բնութագրող սահմանման մեջ «կամ» շաղկապի առկայությամբ:

27.12.2011թ.

78. «Հայփոստ» ՓԲԸ v. ՀՀ Կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե, վարչ. գործ ՎԳ/1912/05/10 (ակտն անվավեր ճանաչելու պահանջի մասին և ըստ հակընդդեմ հայցի՝ գումար բռնագանձելու պահանջի մասին) **Էջ 518-525**

Խնդիր. Արդյո՞ք բջջային օպերատորների կանխավճարային քարտերը վճարային փաստաթղթեր են և հանդիսանում են վճարային գործիք:

Վճռաբեկ դատարանի դիրքորոշումը. Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ իրականացնելով բջջային կապի տարրեր օպերատորների կողմից թողարկված կանխավճարային քարտերի մանրածախ վաճառք՝ Ընկերությունը վերագրյալ նորմերի իմաստով չի իրականացրել վճարային գործիքների և վճարահաշվարկային փաստաթղթերի պրոցեսինգ և քլիրինգ:

ՄԱՔՍԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆՔ

04.03.2011թ.

79. ՀՀ Կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե v. Էջ Էդգար Թադևոսյան, Արգիշտի Հովսեփյան, վարչ. գործ ՎԳ6/0365/05/08 (գումար **526-533**)

բռնագանձելու և մաքսային պարտավորությունը կատարելուն պարտավորեցնելու պահանջների մասին, և ըստ հակընդդեմ հայցի՝ որոշումը փոփոխելու պահանջի մասին)

Խնդիր. 1. Արդյո՞ք անձի նկատմամբ ընդունված վարչական պատասխանատվության ենթարկելու մասին որոշումը համարվում է օրենքի խախտմամբ ընդունված, եթե նրա նկատմամբ մաքսային կանոնների խախտման վերաբերյալ վարույթ չի սկսվել և չի իրականացվել:

2. Մաքսային սահմանը հատելիս «Կանաչ» ուղու ընտրության դեպքում բանավոր հայտարարագրումը երբ կարող է դիտվի որպես իրավաչափ:

Վճռաբեկ դատարանի դիրքորոշումը. 1. Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ մաքսային կանոնների խախտման հայտնաբերման ժամանակ կազմվում է մաքսային կանոնների խախտման վերաբերյալ արձանագրություն: Այդ պահանջի կատարումը կրում է պարտադիր բնույթ և մաքսային կանոնների խախտման վերաբերյալ իրականացվող վարույթի ընթացքում ունի առանցքային նշանակություն, քանի որ այդպիսի վարույթը սկսված է համարվում արձանագրության կազմման պահից, որից անմիջապես հետո էլ վարչական պատասխանատվության ենթարկվող անձի համար ՀՀ մաքսային օրենսգրքով երաշխավորվում են այնպիսի իրավունքներ, որոնց իրականացումն անխափանդ է կապված է նաև արձանագրություն կազմելու գործընթացի հետ:

Մաքսային կանոնների խախտման վերաբերյալ վարույթ իրականացնող պաշտոնատար անձը պարտավոր է ապացույցները գնահատել իր ներքին համոզմունքով՝ հիմնված գործի՝ իրենց ամբողջությամբ վերցված բոլոր հանգամանքների համակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտման վրա: Այդ պահանջի կատարումն ապահովելու համար վերջինս պարտավոր է նաև լուծել այն հարցը, թե Արդյո՞ք ճիշտ է կազմվել վարչական իրավախախտման վերաբերյալ արձանագրությունը:

Վերոգրյալ պահանջների խախտմամբ իրականացված մաքսային կանոնների խախտման վերաբերյալ վարույթը որևէ դեպքում չի կարող դիտվել որպես գործի՝ իրենց ամբողջությամբ վերցված բոլոր հանգամանքների համակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտման վրա հիմնված վարույթ, իսկ դրա արդյունքում ընդունված վարչական ակտը պետք է դիտվի որպես օրենքի խախտմամբ ընդունված վարչական ակտ:

2. Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ այն դեպքում, երբ տեղափոխվում են հայտարարագրման ենթակա ապրանքներ, ապա դրանք տեղափոխող անձը պարտավոր է ընտրել «Կարմիր» ուղին, իսկ հակառակ դեպքում նախատեսված է «Կանաչ» ուղին, որի ընտրության դեպքում այն հատելը համարվում է հայտարարագրման ենթակա ապրանքներ չունենալու մասին բանավոր հայտարարագրում: Այսինքն՝ «Կանաչ» ուղու ընտրության դեպքում բանավոր հայտարարագրումը կդիտվի որպես իրավաչափ միայն այն դեպքում, երբ ապրանքներ տեղափոխող անձն իր մոտ չունենա հայտարարագրման ենթակա ապրանքներ:

80. Ալեքսանդր Դերձակյան v. Հայաստանի ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե, վարչ. գործ ՎԳ/3633/05/09 (միջամտող ոչ իրավաչափ վարչական ակտն անվավեր ճանաչելու պահանջի մասին, և ըստ հայցի՝ տուգանքի, պետական տուրքի գումարների բռնագանձման և մաքսային

Էջ
534-541

պարտավորության կատարմանը պարտավորեցնելու պահանջների մասին)

Խնդիր. Արդյո՞ք «Ժամանակավոր ներմուծում» մաքսային ռեժիմով ներմուծված ավտոմեքենան միայն վարելու համար այլ անձի հանձնելը կարող է դիտարկվել որպես մաքսային կանոնների խախտում:

Վճռաբեկ դատարանի դիրքորոշումը. Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ մաքսային հսկողության իրականացումը նպատակ ունի ապահովել Հայաստանի Հանրապետության օրենքներով և այլ իրավական ակտերով, ինչպես նաև միջազգային պայմանագրերով ամրագրված դրույթների պահպանումը, ինչպես նաև պահպանել ապրանքների և տրանսպորտային միջոցների տեղափոխման կարգը:

Օրենսդիրը, ՀՀ մաքսային օրենսգրքի 139-րդ հոդվածի 1-ին կետի գ) ենթակետի ուժով ամրագրելով, որ «Ժամանակավոր ներմուծում» մաքսային ռեժիմով գրանցված տրանսպորտային միջոցները ներմուծման պահից մինչև այլ մաքսային ռեժիմով բացթողման պահը գտնվում են մաքսային հսկողության տակ, միաժամանակ ՀՀ մաքսային օրենսգրքի 198-րդ հոդվածով սահմանել է արգելք, այն է՝ մաքսային հսկողության տակ գտնվող տրանսպորտային միջոցն առանց մաքսային մարմնի թույլտվության այլ անձի չհանձնելու տեսքով:

Այսինքն՝ օրենսդրորեն տվյալ նորմով սահմանվել է կանոն, ըստ որի՝ «Ժամանակավոր ներմուծում» մաքսային ռեժիմով ներմուծված ապրանքները և տրանսպորտային միջոցներն իրավունք ունի փաստացի տիրապետել և օգտագործել միայն այն անձը, որը ստացել է թույլտվություն ապրանքները և տրանսպորտային միջոցները տվյալ ռեժիմով ներմուծելու համար: Ընդ որում, տվյալ նորմի պահպանման նպատակով էլ իրականացվում է մաքսային հսկողություն:

01.07.2011թ.

81. Գևորգ Աղոյան v. ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե, վարչ. գործ ՎԳ/0927/05/10 («Վարչական տույժ նշանակելու մասին» որոշումն առջին ճանաչելու պահանջի մասին) **ԷԶ 542-546**

Խնդիր. Արդյո՞ք ապրանքների մաքսագերծման հետ կապված անհրաժեշտ գործողությունների կատարման համար լիազորված անձի անունից հանդես եկող լիազորված անձը ՀՀ մաքսային օրենսգրքի իմաստով հանդիսանում է հայտարարատու:

Վճռաբեկ դատարանի դիրքորոշումը. Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ հայտարարագրված տեղեկությունների հավաստիության համար պատասխանատվություն է կրում հայտարարատուն, որպիսին համարվում է ապրանքներ տեղափոխող կամ մաքսային բրոքեր (միջնորդ) հանդիսացող անձը, կամ ապրանքներ տեղափոխող անձի լիազորված անձը:

Հինք ընդունելով վերոգրյալը՝ Վճռաբեկ դատարանը գտել է, որ ապրանքների մաքսագերծման հետ կապված անհրաժեշտ գործողությունների կատարման համար լիազորված անձի անունից հանդես եկող լիազորված անձը ապրանքներ տեղափոխող անձի լիազորված անձը չէ, հետևաբար ՀՀ մաքսային օրենսգրքի 2-րդ հոդվածի «ժա» կետի և 131-րդ հոդվածի 1-ին մասի ուժով չի կարող համարվել հայտարարատու, այսինքն՝ պատասխանատվություն չի կարող կրել հայտարարագրված տեղեկությունների հավաստիության համար:

ԳՈՒՅՔԻ ՆԿԱՏԱՄԱՄԲ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱՆՑՈՒՄ

27.12.2011թ.

82. Դավիթ Խաչատրյան v. Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի Արտաշատի տարածքային ստորաբաժան, վարչ. գործ ՎԳ3/0150/05/10 (պետական գրանցման մերժումն անիրավաչափ և անվավեր ձևաչելու, անշարժ գույքի սեփականության իրավունքը գրանցելուն պարտավորեցնելու պահանջների մասին)

**Էջ
547-554**

Խնդիր. Արդյո՞ք Վճռաբեկ դատարանի նախկինում արտահայտած դիրքորոշումն այն մասին, որ անշարժ գույքի նկատմամբ կատարված գործարքից բխող իրավունքների գրանցման ժակետի բացթողումը չի հանգեցնում գործարքի առոչնչության, կիրառելի է նաև «Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին» ՀՀ օրենքի 23-րդ հոդվածում կատարված փոփոխությունից հետո:

Վճռաբեկ դատարանի դիրքորոշումը. Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ Վճռաբեկ դատարանի նախկինում արտահայտած իրավական դիրքորոշումը կիրառելի է նաև «Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին» ՀՀ օրենքի 23-րդ հոդվածում կատարված փոփոխությունից հետո, քանի որ Վճռաբեկ դատարանի նախադեպային որոշման հիմքում ընկած իրավական վերլուծությունները վերաբերում են անշարժ գույքի հետ կատարվող գործարքների՝ ՀՀ քաղաքացիական օրենսգրքով կարգավորվող առանձնահատկություններին, որի էությունը կայանում է նրանում, որ գործարքը վավեր է, եթե կնքված է պայմանագրի ձևով, իսկ պայմանագիրը կնքված է համարվում դրանից բխող իրավունքների պետական գրանցման պահից:

ՎԱՐՉԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ապացույցներ և ապացուցում

04.03.2011թ.

83. «Էյչ-Էս-Բի-Սի Բանկ Հայաստան» ՓԲԸ v. ՀՀ ֆինանսների նախարարություն, ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե, վարչ. գործ ՎԴ/4971/05/09 (շրջանային խորհրդի գործադիր կոմիտեի որոշումը, սեփականության իրավունքի պետական գրանցումը անվավեր ձևաչելու, բնակարանի նկատմամբ սեփականության իրավունքի փաստը ձևաչելու, ըստ օրենքի ժառանգության իրավունքի վկայագրերն անվավեր ձևաչելու պահանջների մասին)

**Էջ
555-563**

Խնդիր. 1. Արդյո՞ք միևնույն կողմերի մասնակցությամբ նախկինում քննված քաղաքացիական գործով օրինական ուժի մեջ մտած դատարանի վճռով հաստատված փաստերն ունեն նախադատելի նշանակություն, եթե այդ փաստերը տեղ են գտել դատական ակտի «դատարանությամբ պարզված հանգամանքները» մասում այլ ոչ թե «դատարանի կողմից հաստատված հանգամանքներ» մասում:

2. Արդյո՞ք ՀՀ կառավարության որոշումը կարող է կիրառվել և ունենալ գերակայություն օրենքի նկատմամբ, եթե այն առավել բարենպաստ պայմաններ է սահմանում անձի համար:

Վճռաբեկ դատարանի դիրքորոշումը. 1. Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ ՀՀ վարչական դատարանի վճռի՝ «Դատաքննությանը պարզված հանգամանքները» մասում տեղ են գտել համապատասխան ապացույցների հետազոտման և գնահատման արդյունքում դատարանի կողմից պարզված, այսինքն՝ հաստատված գործի հանգամանքները, փաստերը, որն ըստ էության համարվում է վճռի պատճառաբանական մասը: Այսինքն՝ «դատարանի կողմից պարզված հանգամանքներ» և «դատարանի կողմից հաստատված հանգամանքներ» հասկացություններն ընդհանուր առմամբ նույնն են:

2. Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ 1. անձի համար նախընտրելի իրավական ակտի կիրառման կանոնը վերաբերում է հավասար իրավաբանական ուժ ունեցող նորմատիվ իրավական ակտերին կամ դրա տարբեր մասերին, 2. այդ կանոնը վերաբերում է նորմատիվ իրավական ակտերի միջև հակասությունների լուծմանը: Նման պայմաններում Վճռաբեկ դատարանը գտել է, որ «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 2-րդ հոդվածում նախատեսված՝ հարկ վճարողի օգտին հարկային օրենսդրությամբ սահմանված դրույթները կիրառելու կանոնը նույնպես պետք է գործի օրենքի գերակայության սկզբունքի հիման վրա, հետևաբար ՀՀ կառավարության որոշումը չի կարող գերակայություն ունենալ օրենքի նկատմամբ, թեկուզև այդ ակտով անձի համար առավել բարենպաստ պայմաններ են սահմանված:

Դատական ծախսեր

01.07.2011թ.

84. ՀՀ ոստիկանության «Ճանապարհային ոստիկանություն» ծառայություն **Էջ**
v. Գարեգին Գալոյան, վարչ. գործ ՎԴԶ/0035/05/10 (գումար բռնագանձելու պահանջի **564-568**
մասին)

Խնդիր. 1. Արդյո՞ք հակընդդեմ հայց ներկայացնելը հիմք է վճարման կարգադրության վարույթից հայցային վարույթի անցնելու համար, եթե հակընդդեմ հայցը վերադարձվել է:

2. Արդյո՞ք վճարման կարգադրության վարույթից հայցային վարույթի անցնելու դեպքում վճարման կարգադրության դիմում ներկայացրած կողմից պետք է գանձվի պետական տուրք:

Վճռաբեկ դատարանի դիրքորոշումը. 1. Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ հակընդդեմ հայցադիմում ներկայացնելն արդեն իսկ բավարար է՝ վճարման կարգադրության վարույթից հայցային վարույթի անցում կատարելու և վճարման կարգադրությունը վերանալու համար: Վերոգրյալի հիման վրա Վճռաբեկ դատարանը գտել է, որ փաստարկն այն մասին, որ Դատարանը, վերադարձնելով հակընդդեմ հայցը, չպետք է անցում կատարեր հայցային վարույթի, անհիմն է և չունի որևէ իրավական հիմք:

2. Հիմք ընդունելով այն հանգամանքը, որ վճարման կարգադրություններ արձակելու մասին դիմումներով դիմողներն ազատված են պետական տուրք վճարելու պարտականությունից, իսկ անցումը հայցային վարույթի կատարվում է վճարման կարգադրության վարույթում հակընդդեմ հայց ներկայացնելու հիմքով, Վճռաբեկ

դատարանն արձանագրել է, որ տվյալ դեպքում հայցային վարույթը վճարման կարգադրության վարույթի շարունակությունն է, հետևաբար, այդ դեպքում նույնպես արդեն իսկ հայցվորի կարգավիճակ ստացած անձը չի կարող կրել պետական տուրքի վճարման պարտականություն:

14.10.2011թ.

85. ՀՀ ոստիկանության «Ճանապարհային ոստիկանություն» ծառայություն v. Ավագ Սաֆրազյան, վարչ. գործ ՎԴՆ/0082/05/10 (տուգանքի գումարը բռնագանձելուն ուղղված գործողություններն անօրինական ձանաչելու և վճարման կարգադրության մասին հայցադիմումը մերժելու պահանջի մասին)

**Էջ
569-573**

Խնդիր. ՀՀ վճարել դատարանը անդրադարձել է պետական մարմնի ներկայացրած հայցը բավարարվելու դեպքում դատական ծախսերի լուծման հարցին:

Վճարել դատարանի դիրքորոշումը. Վճարել դատարանն արձանագրել է, որ Վերաքննիչ դատարանի կողմից հայցի մերժված մասը բավարարելու, իսկ հակընդդեմ հայցը մերժելու պայմաններում ըստ էության Ոստիկանության հայցը բավարարվել է ամբողջությամբ, իսկ Ավագ Սաֆրազյանի հայցը մերժվել է: Հետևաբար, Ոստիկանության հայցը բավարարվելու պայմաններում վերջինիս վրա պետական տուրքի պարտավորություն չէր կարող դրվել: Բացի այդ, Վճարել դատարանը նշել է, որ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 59-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետի համաձայն՝ եթե պատասխանող է հանդիսացել պետական կամ տեղական ինքնակառավարման մարմինը կամ պաշտոնատար անձը, ապա դատական ծախսերը դրվում են Հայաստանի Հանրապետության կամ համապատասխան համայնքի վրա, եթե պատասխանողի որոշումը, գործողությունը կամ անգործությունը դատարանը ձանաչել է ոչ իրավաչափ:

Վերոնշյալ նորմից հետևում է, որ՝

1. եթե պատասխանողը պետական մարմին է, ապա դատական ծախսերը դրվում են Հայաստանի Հանրապետության վրա,

2. Հայաստանի Հանրապետության վրա դատական ծախսերը դրվում են, եթե պատասխանողի որոշումը, գործողությունը կամ անգործությունը դատարանը ձանաչել է ոչ իրավաչափ:

Սույն գործով 245.000 ՀՀ դրամ տուգանքի գումարը բռնագանձելուն ուղղված գործողություններն անօրինական ձանաչելու և վճարման կարգադրության մասին հայցադիմումը մերժելու պահանջի մասին հակընդդեմ հայցն արդյունքում մերժվել է: Նման պայմաններում Վճարել դատարանը եզրակացնում է, որ դատական ծախսը չէր կարող դրվել Ոստիկանության վրա, քանի որ վերջինիս որոշումը, գործողությունը կամ անգործությունը ոչ իրավաչափ չի ձանաչվել:

Վարույթը վերաքննիչ դատարանում

14.10.2011թ.

86. «Գազվագ» ՍՊԸ v. ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամտոտների կոմիտե, վարչ. գործ ՎԴՆ/4047/05/09 (ակտը մասնակի անվավեր ձանաչելու (վերացնելու) պահանջի մասին, և ըստ հակընդդեմ հայցի՝ ակտն անվիճիվ թողնելու և գումար բռնագանձելու պահանջների մասին)

**Էջ
574-577**

Խնդիր. Արդյո՞ք վերաքննիչ վարչական դատարանը դուրս է գալիս վերաքննիչ բողոքի շրջանակներից, երբ բեկանում է դատական ակտը և գործն ուղարկում նոր քննության, այն դեպքում, երբ բողոք բերողը պահանջել էր բեկանել և փոփոխել վճիռը՝ բավարարելով իր հակընդդեմ հայցի չբավարարված մասը:

Վճռաբեկ դատարանի դիրքորոշումը. Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ ՀՀ վարչական վերաքննիչ դատարանը դատական ակտը պետք է վերանայի և գործն ըստ էության լուծող դատական ակտի վերաքննության արդյունքում իր լիազորություններն իրականացնի բացառապես վերաքննիչ բողոքում ներկայացված պահանջի սահմաններում: Այսինքն՝ կախված այն հանգամանքից, թե գործով ներկայացված պահանջների որ մասն է բողոքարկվում վերաքննության կարգով, այդ մասի շրջանակներում էլ Վերաքննիչ դատարանը պետք է իրականացնի ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 117.13-րդ հոդվածով նախատեսված իր լիազորությունները:

Վերոգրյալի հիման վրա Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ Վերաքննիչ դատարանը, Տեսչության վերաքննիչ բողոքի հիման վրա վերանայելով Դատարանի 10.12.2010 թվականի վճիռը և բեկանելով նաև վերաքննիչ բողոք բերած անձի հակընդդեմ հայցի բավարարված մասը, դուրս է եկել դրանում ներկայացված պահանջի սահմաններից, ինչի արդյունքում թույլ է տվել ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 117.12-րդ հոդվածի 1-ին մասի խախտում, ինչը հանգեցրել է գործի սխալ լուծման:

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԿԱՐԳ

ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ԵՎ ԱՉՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴԱՏԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի որոշում	Քաղաքացիական գործ թիվ ԵԿԴ/0780/02/09	2011թ.
Քաղաքացիական գործ թիվ ԵԿԴ/0780/02/09		
Նախագահող դատավոր՝	Տ. Նազարյան	
Դատավորներ՝	Կ. Հակոբյան	
	Տ. Սահակյան	

ՈՐՈՇՈՒՄ ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քաղաքացիական և վարչական պալատը (այսուհետ՝ վճռաբեկ դատարան)

<i>նախագահությամբ</i>	Ե. ԽՈՒՆԴԿԱՐՅԱՆԻ
<i>մասնակցությամբ դատավորներ</i>	Մ. ԴՐՄԵՅԱՆԻ
	Վ. ԱԲԵԼՅԱՆԻ
	Վ. ԱՎԱՆԵՍՅԱՆԻ
	Ա. ԲԱՐՍԵՂՅԱՆԻ
	Գ. ՀԱԿՈՐՅԱՆԻ
	Տ. ՊԵՏՐՈՍՅԱՆԻ
	Ե. ՍՈՂՈՄՈՆՅԱՆԻ

2011 թվականի հուլիսի 01-ին դռնբաց դատական նիստում, քննելով Հայկ Սահակյանի վճռաբեկ բողոքը ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 04.12.2009 թվականի որոշման դեմ՝ ըստ Հայկ Սահակյանի հայցի ընդդեմ ՀՀ ֆինանսների նախարարության՝ պատճառոված վնասի հատուցման պահանջի մասին,

ՊԱՐԶԵՑ

1. Գործի դատավարական նախապատմությունը

Դիմելով դատարան՝ Հայկ Սահակյանը պահանջել է Հայաստանի Հանրապետությունից՝ ի դեմս ՀՀ ֆինանսների նախարարության, բռնագանձել 1.318.300 ՀՀ դրամ՝ որպես պատճառոված կյուբական վնաս, և 15.400 եվրոյին համարժեք ՀՀ դրամ՝ որպես բարոյական վնասի փոխհատուցում:

Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ համայնքների ընդհանուր իրավասության դատարանի (այսուհետ՝ Դատարան) 25.09.2009 թվականի վճռով հայցը բավարարվել է մասնակիորեն՝ ՀՀ ֆինանսների նախարարությունից հոգուտ Հայկ Սահակյանի

բոնագանձվել է 215.100 ՀՀ դրամ, որից 118.300 ՀՀ դրամը՝ որպես վնաս, իսկ 96.800 ՀՀ դրամը՝ որպես բաց թողնված օգուտ, իսկ հայցը մնացած մասով մերժվել է:

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի (այսուհետ՝ Վերաքննիչ դատարան) 04.12.2009 թվականի որոշմամբ Հայկ Սահակյանի վերաքննիչ բողոքը մերժվել է, իսկ ՀՀ ֆինանսների նախարարության վերաքննիչ բողոքը բավարարվել է՝ Դատարանի 25.09.2009 թվականի վճիռը մասնակիորեն բեկանվել և փոփոխվել է. Հայկ Սահակյանի հայցի՝ բարոյական վնասի հատուցման պահանջի մասով գործի վարույթը կարճվել է, իսկ 118.300 ՀՀ դրամ վնասի հատուցման պահանջի մասով՝ մերժվել: Մնացած մասով Դատարանի վճիռը թողնվել է օրինական ուժի մեջ: Հայկ Սահակյանից հօգուտ ՀՀ ֆինանսների նախարարության բոնագանձվել է 3.549 ՀՀ դրամ որպես վերջինիս կողմից Վերաքննիչ դատարանում նախապես վճարված պետական տուրք, ինչպես նաև Հայկ Սահակյանից հօգուտ ՀՀ պետական բյուջեի բոնագանձվել է 178.660 ՀՀ դրամ որպես Դատարանում հայցադիմում ներկայացնելու համար նախատեսված, բայց չբոնագանձված պետական տուրք:

Սույն գործով վճռաբեկ բողոք է ներկայացրել Հայկ Սահակյանը:

Վճռաբեկ բողոքի պատասխան չի ներկայացվել:

Վճռաբեկ դատարանի 27.01.2010 թվականի որոշմամբ վճռաբեկ բողոքն ընդունվել է վարույթ:

Վճռաբեկ դատարանի 08.09.2010 թվականի որոշմամբ գործի վարույթը կասեցվել է մինչև «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքի 22-րդ հոդվածի՝ ՀՀ Սահմանադրությանը համապատասխանելու հարցը լուծելու համար ՀՀ սահմանադրական դատարանի կողմից համապատասխան որոշում կայացնելը:

ՀՀ սահմանադրական դատարանի 14.12.2010 թվականի թիվ ՍԴՈ-929 որոշմամբ «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքի 22-րդ հոդվածի առաջին մասն այնքանով, որքանով չի սահմանում այլ սուբյեկտներից բացի, արդարացվածին՝ իրավասու պետական մարմինների և պաշտոնատար անձանց ապօրինի գործողությունների (անգործության) հետևանքով պատճառված վնասի հատուցման հայցերով պետական տուրքի վճարումից ազատելու վերաբերյալ արտոնություն նախատեսող դրույթ՝ արգելափակելով անձի սահմանադրական իրավունքի իրացումը, ճանաչվել է ՀՀ Սահմանադրության 16-րդ հոդվածի 4-րդ մասին և 20-րդ հոդվածի 5-րդ մասին հակասող և անվավեր:

Վճռաբեկ դատարանի 24.01.2011 թվականի որոշմամբ թիվ ԵԿԴ/0780/02/09 քաղաքացիական գործի վարույթը վերսկսվել է:

2. Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը

Սույն վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

Վերաքննիչ դատարանը խախտել է ՀՀ Սահմանադրության 19-րդ հոդվածը, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 53-րդ հոդվածը, ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1064-րդ հոդվածը, ՀՀ դատական օրենսգրքի 15-րդ հոդվածի 4-րդ մասը:

Բողոք բերած անձը նշված պնդումը պարձառարանում է հեղկյալ փաստարկներով.

Վերաքննիչ դատարանը եզրակացրել է, որ Դատարանը Հայկ Սահակյանի կողմից 118.300 ՀՀ դրամի պահանջին անդրադառնալիս չի պարզել այդ ծախսերի անհրաժեշտ և ողջամիտ լինելը: Մինչդեռ Վերաքննիչ դատարանն անտեսել է, որ Հայկ

Սահակյանի կողմից ներկայացված իր եղբոր՝ Արմեն Սահակյանի գրություն-հաշվարկը և որպես վկա Դատարանում տված ցուցմունքը, ինչպես նաև ՀՀ արդարադատության նախարարության քրեակատարողական վարչության 24.02.2009 թվականի գրությունը վերաբերելի և անհրաժեշտ ապացույցներ են անհիմն կալանքի տակ գտնված հայցվորի կրած վնասի հաստատման համար: Այն, որ հանձնույցները եղել են սննդամթերք և հագուստ, ակնհայտ է, քանի որ կալանքի տակ գտնված անձանց սնվելու և հագնվելու պարագաներ են պետք, իսկ դրանք ընդունելիս մանրամասն գնման են ենթարկվում, և չթույլատրված առարկաները չեն ընդունվում:

Դատարանը մերժել է Հայկ Սահակյանի հայցը բարոյական վնասի փոխհատուցման պահանջի մատով՝ այդ ինստիտուտը ՀՀ օրենսդրությամբ նախատեսված չլինելու պատճառաբանությամբ, իսկ Վերաքննիչ դատարանը գործի վարույթն այդ մատով կարճել է՝ վեճը դատարանում քննության ենթակա չլինելու պատճառաբանությամբ: Չնայած ՀՀ քաղաքացիական օրենսգիրքը բարոյական վնասի փոխհատուցում չի նախատեսել, սակայն «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիան (այսուհետ՝ Կոնվենցիա) սահմանում է բարոյական վնասի հատուցում: Մասնավորապես՝ Թահիր Էլսին և մյուսներն ընդդեմ Թուրքիայի (գործ թիվ 23145/93 և 25091/04), 13.11.2003 թվականի Սուլեյման Յիլդիրիմն ընդդեմ Թուրքիայի (գործ թիվ 40518/98) 29.06.2004 թվականի Մարդու իրավունքների եվրոպական դատարանի (այսուհետ՝ Եվրոպական դատարան) վճիռներով նախադեպ է ստեղծվել պատճառված բարոյական վնասը փոխհատուցելու վերաբերյալ, ինչն էլ ՀՀ դատական օրենսգրքի 15-րդ հոդվածի 4-րդ մասի ուժով պարտադիր է դատարանի համար նույնանման փաստական հանգամանքներով գործի քննության ժամանակ:

Բացի այդ, Վերաքննիչ դատարանը որոշել է Հայկ Սահակյանից հօգուտ ՀՀ պետական բյուջեի բռնագանձել 178.660 ՀՀ դրամ որպես Դատարանում հայցադիմում ներկայացնելու համար նախատեսված, բայց չբռնագանձված պետական տուրք այն դեպքում, երբ հենց նույն որոշմամբ Վերաքննիչ դատարանը Հայկ Սահակյանի կողմից ներկայացված բարոյական վնասի պահանջը չի բավարարել՝ պատճառաբանելով, որ այն ոչ գույքային պահանջ է, իսկ ՀՀ օրենսդրությամբ դրա համար հատուցում նախատեսված չէ: Այսպիսով, Վերաքննիչ դատարանը, ծանրաբեռնելով պետական տուրք մուծելու հսկայական գումարներով Հայկ Սահակյանին, որը 44 օր գտնվել է անհիմն կալանքի տակ, դրել է մի իրավիճակի մեջ, որը խոչընդոտում է նրան իրեն պատճառված վնասի մատով ներկայացնելու իր արդարացի պահանջը:

Վերոգրյալի հիման վրա բողոք բերած անձը պահանջել է մասնակիորեն բեկանել Վերաքննիչ դատարանի 04.12.2009 թվականի որոշումը և այն փոփոխել՝ Հայկ Սահակյանի օգտին բռնագանձել 15.400 եվրոյին համարժեք ՀՀ դրամ՝ որպես բարոյական վնասի փոխհատուցում, 118.300 ՀՀ դրամ՝ որպես պատճառված գույքային վնաս, ինչպես նաև բեկանել Վերաքննիչ դատարանի 04.12.2009 թվականի որոշման՝ Դատարանում հայցադիմում ներկայացնելու համար որպես պետական տուրք 178.660 ՀՀ դրամ բռնագանձելու մասը:

3. Վճռաբեկ բողոքի քննության համար նշանակություն ունեցող փաստերը

Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1. Հոիփսիմե Գինոյանի հայտարարության հիման վրա՝ 07.08.2007 թվականին Էրեբունու ոստիկանության քննչական բաժնի կողմից ՀՀ քրեական օրենսգրքի 112-րդ հոդվածի 1-ին մասի հատկանիշներով հարուցվել է քրեական գործ՝ Երևան քաղաքի Արցախի փողոցի 12-րդ շենքի թիվ 28 բնակարանի բնակիչ Հոիփսիմե Գինոյանի առողջությանը ծանր վնաս պատճառելու փաստի առթիվ (հատոր 1-ին, գ. թ. 20):

2. 30.08.2007 թվականին Հայկ Սահակյանը ձերբակալվել է, իսկ 31.08.2007 թվականի որոշմամբ նրան մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 112-րդ հոդվածի 1-ին մասով, և որպես խափանման միջոց կիրառվել է կալանավորումը (հատոր 1-ին, գ. թ. 20):

3. Նախաքննության ընթացքում դատարանի 28.09.2007 թվականի որոշմամբ Հայկ Սահակյանը գրավով ազատվել է կալանքից, սակայն քրեական հետապնդման մարմինը 04.10.2007 թվականի որոշմամբ վերացրել է գրավի ձևով ընտրված խափանման միջոցը և Հայկ Սահակյանը կրկին կալանավորվել է, իսկ 22.10.2007 թվականի որոշմամբ դատարանը, բավարարելով պաշտպանական բողոքը, վերացրել է քննիչի 04.10.2007 թվականի գրավի ձևով ընտրված խափանման միջոցը վերացնելու մասին որոշումը՝ ուժի մեջ թողնելով դատարանի՝ 28.09.2007 թվականին ընտրված կալանավորում խափանման միջոցը գրավով փոխարինելու մասին որոշումը, և Հայկ Սահակյանին անհապաղ ազատ է արձակել կալանքից (հատոր 1-ին, գ. թ. 19):

4. Էրեբունի և Նուբարաշեն համայնքների առաջին ատյանի դատարանի 13.12.2007 թվականի դատավճռով Հայկ Սահակյանը ձանաչվել է անպարտ և արդարացվել է (հատոր 1-ին, գ. թ. 17-18):

5. ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի 28.03.2008 թվականի որոշմամբ Էրեբունի և Նուբարաշեն համայնքների առաջին ատյանի դատարանի դատավճիռը թողնվել է օրինական ուժի մեջ: Նշված որոշման մեջ արձանագրվել է, որ «Հ. Սահակյանն անազատության մեջ է եղել 2007թ. օգոստոսի 30-ից մինչև սեպտեմբերի 28-ը և նույն թվականի հոկտեմբերի 04-ից մինչև 19-ը» (հատոր 1-ին, գ. թ. 20):

6. Ըստ գործում առկա հանձնույթների վերաբերյալ ցուցակի՝ հայցվորին քրեակատարողական հիմնարկ տարվել է 16 անվանում սննդամթերք՝ 41.500 ՀՀ դրամ ընդհանուր արժողությամբ, և 14 անվանում հագուստ ու անհրաժեշտ այլ պարագաներ՝ ընդհանուր 76.800 ՀՀ դրամ արժողությամբ, ինչպես նաև կատարվել է տրանսպորտային ծախս՝ 2.000 ՀՀ դրամ (հատոր 1-ին, գ. թ. 11-12):

7. Ըստ ՀՀ ԱՆ քրեակատարողական վարչության 24.02.2009 թվականի գրության՝ Հայկ Սամվելի Սահակյանի անձնական գործում գտնվող տեսակցությունների, հանձնույթների, փաթեթների և ծանրոցների հաշվառման քարտի ուսումնասիրությամբ պարզվել է, որ «ՀՀ ԱՆ «Նուբարաշեն» քրեակատարողական հիմնարկում 30.08.2007թ.-ից մինչև 28.09.2007թ. և 04.10.2007թ.-ից մինչև 19.10.2007 թվականը գտնվելու ընթացքում իր եղբոր՝ Արմեն Սահակյանի կողմից ստացել է հանձնույթ 7 /յոթ/ անգամ, որոնց ընդհանուր քաշը կազմել է 107 կգ: Նշված ժամանակահատվածում գործող կարգի համաձայն՝ հանձնույթներ ընդունելու դիմումների պահպանման ժամկետը եղել է մեկ տարի, ուստի հնարավոր չէ հայտնել տվյալներ ընդունված հանձնույթների տեսականու մասին: Հանձնույթների արժեքների մասին գրանցումներ չեն կատարվում» (հատոր 1-ին, գ.թ. 13):

4. Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումները

Քննելով վճռաբեկ բողոքը նշված հիմքի սահմաններում՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ այն հիմնավոր է մասնակիորեն հետևյալ պատճառաբանությամբ.

Վճռաբեկ դատարանը, որոշելու համար վճռաբեկ բողոքի հիմքի հիմնավորվածությունը, բողոքի սահմաններում անհրաժեշտ է համարում անդրադառնալ հետևյալ իրավական հարցերին՝

• ապօրինի դատապարտելու, քրեական պատասխանատվության ենթարկելու, որպես խախտման միջոց կալանք կամ չբացակայելու մասին ստորագրություն կիրառելու դեպքում վնասի հատուցման կանոններին,

• Մարդու իրավունքների եվրոպական դատարանի կողմից բարոյական վնասի հատուցման վերաբերյալ դիրքորոշման պարտադիրությամբ ՀՀ դատարանների համար բարոյական վնասի հատուցման հարցը լուծելիս,

• սույն գործով պետական տուրքի լուծման հարցերին:

1. Ապօրինի դատապարտելու, քրեական պարտասխանատվության ենթարկելու, որպես խախտման միջոց կալանք կամ չբացակայելու մասին ստորագրություն կիրառելու դեպքում վնասի հատուցման կանոնները:

ՀՀ Սահմանադրության 16-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ յուրաքանչյուր ոք իրավունք ունի ազատությունից ապօրինի զրկման կամ ապօրինի խուզարկության դեպքում օրենքով սահմանված հիմքերով և կարգով պատճառված վնասի հատուցման:

ՀՀ Սահմանադրության 18-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի իր իրավունքների և ազատությունների դատական, ինչպես նաև պետական այլ մարմինների առջև իրավական պաշտպանության արդյունավետ միջոցների իրավունք:

Կոնվենցիայի 5-րդ հոդվածի 5-րդ կետի համաձայն՝ յուրաքանչյուր ոք, ով, ի խախտումն նույն հոդվածի դրույթների, ձերբակալման կամ կալանավորման գոհ է դարձել, իրավունք ունի հայցի ուժով օժտված փոխհատուցման:

Կոնվենցիայի 13-րդ հոդվածի համաձայն՝ յուրաքանչյուր ոք, ում նույն կոնվենցիայով ամրագրված իրավունքներն ու ազատությունները խախտվում են, ունի պետական մարմինների առջև իրավական պաշտպանության արդյունավետ միջոցի իրավունք, նույնիսկ եթե խախտումը կատարել են ի պաշտոնե գործող անձինք:

Վերոնշյալ նորմերից հետևում է, որ պետական մարմինների ապօրինի գործողությունների հետևանքով անձին ազատությունից ապօրինի զրկելու դեպքում վնասի հատուցման իրավունքը սահմանադրական սկզբունք է, որն ամրագրված է նաև միջազգային իրավական ակտերով:

Բացի այդ, Միավորված Ազգերի Կազմակերպության 09.12.1988 թվականի «Որևէ ձևով ձերբակալվող կամ կալանավորվող անձանց պաշտպանության սկզբունքների ժողովածուի» (հաստատվել է ՄԱԿ-ի Գլխավոր Ասամբլեայի 09.12.1988 թվականի 43/173 բանաձևով) 35-րդ սկզբունքով սահմանվել է դիրքորոշում այն մասին, որ պետական պաշտոնատար անձի գործողությունների կամ զանցառությունների հետևանքով պատճառված վնասը՝ ի խախտումն սույն սկզբունքների բովանդակված իրավունքների, ենթակա է հատուցման՝ **պատասխանատվության կիրառվող նորմերի համաձայն, որոնք նախատեսված են ներքին օրենսդրությամբ:**

Միաժամանակ, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ վերոնշյալ սկզբունքի կենսագործումը պետք է դիտարկել իրավական պաշտպանության արդյունավետ միջոցների սկզբունքի լույսի ներքո հատկապես այն դեպքում, երբ անձը վնաս է կրել պետական մարմինների ապօրինի գործողությունների հետևանքով:

Վճռաբեկ դատարանի վերոնշյալ դիրքորոշումը հիմնավորվում է նաև Մարդու իրավունքների եվրոպական դատարանի վճիռներով: Մասնավորապես, Մարդու իրավունքների եվրոպական դատարանի նախադեպային իրավունքում ձևավորվել է

այն դիրքորոշումը, որ ազատությունից անօրինական զրկված անձի փոխհատուցման իրավունքը պետք է ապահովված լինի որոշակիության բավարար աստիճանով (*յրես Ռեհբոկն ընդդեմ Մյովենիայի (Rehbock v. Slovenia) գործով Եվրոպական դատարանի 11.11.2000 թվականի վճիռը, կետը 92*): Մարդու իրավունքների եվրոպական դատարանը նշել է նաև, որ Կոնվենցիայի 5-րդ հոդվածի 5-րդ կետը կիրառելի է այն փոխհատուցումների նկատմամբ, որոնք կապված են 1-ին, 2-րդ, 3-րդ, 4-րդ կետերի խախտման հետևանքով ազատությունից զրկելու հետ (*յրես Վասսինկն ընդդեմ Նիդերլանդների գործով Եվրոպական դատարանի 27.09.1990 թվականի վճիռը, կետը 38, Wassink v. the Netherlands, judgment of 27 September 1990, Series A no. 185-A, p. 14, § 38*): Փոխհատուցման իրավունքը, որը նախատեսված է 5-րդ հոդվածի 5-րդ կետով, ենթադրում է, որ Կոնվենցիայի վերոնշյալ կետերից մեկի խախտումը հաստատվել է կամ ներպետական մարմինների կամ Կոնվենցիոն ինստիտուտների կողմից (*յրես Ն. Մին ընդդեմ Իտալիայի գործով Եվրոպական դատարանի 18.12.2002 թվականի վճիռը, կետը 49, N.C. v. ITALY, Application no. 24952/94, p. 49*): Մարդու իրավունքների եվրոպական դատարանը ձանաչել է Կոնվենցիայի 5-րդ հոդվածի 5-րդ կետի խախտում այն դեպքում, երբ օրենսդրությունը սահմանում է փոխհատուցման իրավունքը, սակայն պրակտիկայում անձը չի ստանում փոխհատուցում, այսինքն՝ այդ իրավունքը բավականաչափ հստակ չէ (*յրես Սակիկը և ուրիշներն ընդդեմ Թուրքիայի գործով Եվրոպական դատարանի 26.11.1997 թվականի վճիռը, կետեր 55-61*):

Վճռաբեկ դատարանը գտնում է, որ վերոնշյալ նորմերի ապահովման նպատակով օրենսդրությունը բավարար որոշակիությամբ սահմանում է ազատությունից ապօրինի զրկման դեպքում պատճառված վնասի հատուցման հիմքերը և կարգը:

Մասնավորապես, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 66-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ արդարացվածն իրավունք ունի պահանջել իրեն անօրինական ձերբակալման, կալանավորման, որպես մեղադրյալ ներգրավելու և դատապարտման **հետևանքով պատճառված գույքային հատուցում ամբողջ ծավալով՝** հաշվի առնելով հնարավոր բաց թողնված օգուտները: Նույն հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ արդարացվածը որպես հատուցում իրավունք ունի ստանալ՝ աշխատավարձը, թոշակը, նպաստները, այլ եկամուտներ, որոնցից նա զրկվել է, ինչպես նաև վճարված դատական ծախսերը, փաստաբանին վճարված գումարները:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1064-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ ապօրինի դատապարտելու, քրեական պատասխանատվության ենթարկելու, որպես խափանման միջոց կալանք կամ չբացակայելու մասին ստորագրություն կիրառելու, վարչական տույժի ենթարկելու **հետևանքով պատճառված վնասը**, օրենքով սահմանված կարգով, լրիվ ծավալով հատուցում է Հայաստանի Հանրապետությունը՝ անկախ հետաքննության, նախաքննության, դատախազության և դատարանի պաշտոնատար անձանց մեղքից: Քաղաքացուն հետաքննության, նախաքննության, դատախազության մարմինների ապօրինի գործունեությամբ պատճառված վնասը, որը չի հանգեցրել սույն հոդվածի 1-ին կետում նախատեսված հետևանքներին, հատուցվում է սույն օրենսգրքի 1063-րդ հոդվածում նախատեսված հիմքերով և կարգով:

Վերոնշյալ հոդվածների վերլուծությունից հետևում է, որ ելնելով արդարացվածի կարգավիճակի առանձնահատկություններից, վերջինիս իրավական և փաստական վիճակի վերականգնման անհրաժեշտությունից և սահմանադրական և միջազգային իրավական դրույթներից, օրենսդիրը սահմանել է ապօրինի կերպով ազատությունից

գրկված արդարացվածին հասցված վնասների ամբողջ ծավալով հատուցման կանոնը: Ընդ որում, հատուցվում են այն վնասները, որոնք ապօրինի դատապարտելու, քրեական պատասխանատվության ենթարկելու, որպես խափանման միջոց կալանք կամ չքացակայելու մասին ստորագրություն կիրառելու հետևանք են:

Վճռարեկ դատարանը հարկ է համարում նշել, որ օրենսդիրը սահմանում է այն վնասները, որոնք պետք է հատուցվեն:

Մասնավորապես, վերոնշյալ նորմերի համադրումը ցույց է տալիս, որ արդարացվածն իրավունք ունի պահանջելու հատուցելու՝

աշխատավարձը

թոշակը

նպաստները

վճարված դատական ծախսերը

փաստաբանին վճարված գումարները

հնարավոր բաց թողնված օգուտները

այլ եկամուտ, որից անձը գրկվել է:

Վճռարեկ դատարանը գտնում է, որ արդարացվածի վնասի հատուցման առկայության և չափի նկատմամբ տարածվում են նաև ՀՀ քաղաքացիական օրենսգրքով նախատեսված վնասի հատուցման կանոնները:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 17-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ անձը, ում իրավունքը խախտվել է, կարող է պահանջել իրեն պատճառված վնասների լրիվ հատուցում, եթե վնասների հատուցման ավելի պակաս չափ նախատեսված չէ օրենքով կամ պայմանագրով:

Նույն օրենսգրքի 17-րդ հոդվածի 2-րդ կետի համաձայն՝ վնասներ են իրավունքը խախտված անձի ծախսերը, որ նա կատարել է կամ պետք է կատարի խախտված իրավունքը վերականգնելու համար, նրա գույքի կորուստը կամ վնասվածքը (իրական վնաս), ինչպես նաև չստացված եկամուտները, որոնք այդ անձը կստանար քաղաքացիական շրջանառության սովորական պայմաններում, եթե նրա իրավունքը չխախտվեր (բաց թողնված օգուտ):

Վերը նշված հոդվածների վերլուծությունից հետևում է, որ նմանատիպ գործերով վնասի հատուցման համար պարտադիր պայման է պարտապանի ոչ օրինաչափ վարքագծի, վնասների, վնասների ու ոչ օրինաչափ գործողության միջև պատճառահետևանքային կապի առկայությունը:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 48-րդ հոդվածի առաջին կետի համաձայն՝ գործին մասնակցող յուրաքանչյուր անձ պետք է ապացուցի իր վկայակոչյալ փաստերը:

Փաստորեն, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 48-րդ հոդվածի հիմքով վնասի հատուցման համար պարտադիր պայման հանդիսացող տարրերից՝ հայցվորի մոտ վնասների առկայության, պատասխանողի մոտ ոչ օրինաչափ վարքագծի առկայության, վնասների ու ենթադրյալ վնաս պատճառող անձի ոչ օրինաչափ գործողության միջև պատճառահետևանքային կապի առկայության հանգամանքների ապացուցման բեռը կրում է հայցվոր կողմը (*տես «Մասնա-Մանասա» ՍՊԸ-ն ընդդեմ Դանիել Ղասարոլյանի՝ պարձառված վնասի հատուցման պահանջի մասին թիվ ԵԲԳ/0086/02/08 գործով ՀՀ վճռարեկ դատարանի 26.06.2009 թվականի որոշումը*):

Ըստ գործում առկա հանձնուքների վերաբերյալ ցուցակի՝ հայցվորին

քրեակատարողական հիմնարկ է տարվել 16 անվանում սննդամթերք՝ 41.500 ՀՀ դրամ ընդհանուր արժողությամբ, և 14 անվանում հագուստ ու անհրաժեշտ այլ պարագաներ՝ 76.800 ՀՀ դրամ ընդհանուր արժողությամբ:

Վերաքննիչ դատարանը գտել է, որ հատուցման ենթակա չէ 118.300 ՀՀ դրամի պահանջը և այդ մասով բեկանել է Դատարանի վճիռը, քանի որ հանձնույնները Հայկ Սահակյանին փոխանցվել են վերջինիս ցանկությամբ և համաձայնությամբ, իսկ գործում որևէ ապացույց առկա չէ, որով կհիմնավորվեր նման քանակության և արժողության ապրանքների և սննդի ստացման անհրաժեշտությունն ու ողջամտությունը:

Վճռաբեկ դատարանը, ուսումնասիրելով գործում առկա հանձնույնների վերաբերյալ ցուցակը, գտնում է, որ դրանում նշված սննդամթերքի, ինչպես նաև հագուստի հետ կապված ծախսերի և վնաս պատճառող անձի ոչ օրինաչափ գործողության միջև առկա չէ որևէ պատճառահետևանքային կապ, քանզի դրանք մարդու գոյությունն ապահովող այն բնական անհրաժեշտությունն են, որ յուրաքանչյուր ոք հարկադրված է ձեռք բերել՝ անկախ նրանից կալանավայրում է գտնվում, թե՛ իր բնակարանում: Այլ կլիներ իրավիճակը, եթե կատարված ծախսերի անհրաժեշտությունն ուղղակիորեն առաջանար վնաս պատճառած անձի ոչ իրավաչափ գործողության հետևանքով, ինչպես օրինակ՝ առողջությանը պատճառված վնասի հետևանքով հատուկ սննդակարգով սնվելու, դեղերի, վիրահատության կամ վնասված գույքը նախկին տեսքի բերելու հետ կապված ծախսերը և նմանատիպ այլ ծախսեր, որի անհրաժեշտությունը չէր առաջանա սովորական պայմաններում՝ վնաս պատճառած անձի ոչ օրինաչափ գործողության բացակայության դեպքում:

Այսպիսով, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Հայկ Սահակյանի հաշվին կատարված հիշյալ ծախսերը չեն կարող համարվել ապօրինի կալանավորման հետևանքով պատճառված վնաս, քանի որ դրանք ուղղակիորեն չեն առաջացել ոչ օրինաչափ գործողության արդյունքում, այլ դրանց կատարումը պայմանավորված է մարդու գոյատևելու բնական անհրաժեշտությամբ:

2. Մարդու իրավունքների եվրոպական դատարանի կողմից բարոյական վնասի հատուցման վերաբերյալ դիրքորոշման պարտադիրությունը ՀՀ դատարանների համար բարոյական վնասի հատուցման հարցը լուծելիս:

Անդրադառնալով Հայկ Սահակյանի վճռաբեկ բողոքի՝ բարոյական վնասի բռնագանձման պահանջի հիմնավորումներին, մասնավորապես այն փաստարկին, որ Եվրոպական դատարանի վճիռներով նախադեպ է ստեղծվել պատճառված բարոյական վնասը փոխհատուցելու վերաբերյալ, ինչն էլ ՀՀ դատական օրենսգրքի 15-րդ հոդվածի 4-րդ մասի ուժով պարտադիր է դատարանի համար նույնանման փաստական հանգամանքներով գործի քննության ժամանակ, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ այն անհիմն է հետևյալ պատճառաբանությամբ.

ՀՀ դատական օրենսգրքի 15-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ որոշակի փաստական հանգամանքներ ունեցող գործով վճռաբեկ դատարանի կամ Մարդու իրավունքների եվրոպական դատարանի **դատական ակտի հիմնավորումները (այդ թվում՝ օրենքի մեկնաբանությունները)** պարտադիր են դատարանի համար նույնանման փաստական հանգամանքներով գործի քննության ժամանակ, բացառությամբ այն դեպքի, երբ վերջինս ծանրակշիռ փաստարկների մատնանշմամբ հիմնավորում է, որ դրանք կիրառելի չեն տվյալ փաստական հանգամանքների նկատմամբ:

Կոնվենցիայի 41-րդ հոդվածի համաձայն՝ եթե դատարանը գտնում է, որ տեղի է ունեցել Կոնվենցիայի կամ դրան կից Արձանագրությունների խախտում,

իսկ համապատասխան Բարձր պայմանավորվող կողմի ներպետական իրավունքն ընձեռում է միայն մասնակի հատուցման հնարավորություն, ապա Դատարանը որոշում է անհրաժեշտության դեպքում տուժած կողմին արդարացի փոխհատուցում տրամադրել:

Բողոք բերող անձի կողմից վկայակոչված՝ Սուլեյման Յալդիրիմն ընդդեմ Թուրքիայի գործով Եվրոպական դատարանը, արձանագրելով, որ տեղի է ունեցել Կոնվենցիայի 5-րդ հոդվածի 3-րդ կետի խախտում (կետ 33), գտել է, որ հայցվորին առանց իրավական միջամտության 10 օրով ոստիկանությունում պահելու համար որպես ոչ նյութական վնաս պետք է փոխհատուցվի 3.500 եվրո (կետ 44):

Վճռաբեկ դատարանը հարկ է համարում արձանագրել, որ Եվրոպական դատարանը պատճառված բարոյական վնասը փոխհատուցում է համապատասխան լիազորության առկայության շրջանակում, այսինքն՝ բարոյական վնասի փոխհատուցում սահմանելը դատարանի լիազորությունն է, և հենց այդ դատարանն էլ իրավասու է կիրառել այն: Մինչդեռ ՀՀ դատական օրենսգրքի 15-րդ հոդվածի 4-րդ մասը սահմանում է ոչ թե Եվրոպական դատարանի այս կամ այն լիազորությունները ներպետական ատյաններում կիրառելու, այլ նույնանման փաստական հանգամանքներով գործի քննության ժամանակ դատական ակտի հիմնավորումների (այդ թվում՝ օրենքի մեկնաբանությունների) պարտադիր լինելու պահանջ:

Հիմք ընդունելով վերոգրյալը՝ Վճռաբեկ դատարանը հիմնավոր է համարում Վերաքննիչ դատարանի կողմից բարոյական վնասի հատուցման պահանջի մատուցումը ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 109-րդ հոդվածի 1-ին կետի կարգով սույն քաղաքացիական գործի վարույթը կարճելը, քանի որ Հայաստանի Հանրապետության քաղաքացիաիրավական հարաբերությունները կարգավորող օրենսդրությունը բարոյական վնասի հատուցումը որպես պատասխանատվության տեսակ չի նախատեսում, որպիսի հիմքով վեճը ենթակա չէ դատարանում քննության:

3. Սույն գործով պետական փութքի լուծման հարցերը:

Ինչ վերաբերում է սույն գործով Հայկ Սահակյանի կողմից հայցադիմում, վերաքննիչ և վճռաբեկ բողոքների համար պետական տուրք գանձելու հարցին, ապա Վճռաբեկ դատարանը գտնում է, որ այդ հարցը պետք է համարել լուծված հետևյալ պատճառաբանությամբ.

ՀՀ սահմանադրական դատարանի 14.12.2010 թվականի թիվ ՄԴՈ-929 որոշմամբ «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքի 22-րդ հոդվածի առաջին մասն այնքանով, որքանով չի սահմանում այլ սուբյեկտներից բացի, արդարացվածին՝ իրավասու պետական մարմինների և պաշտոնատար անձանց ապօրինի գործողությունների (անգործության) հետևանքով պատճառված վնասի հատուցման հայցերով պետական տուրքի վճարումից ազատելու վերաբերյալ արտոնություն նախատեսող դրույթ՝ արգելափակելով անձի սահմանադրական իրավունքի իրացումը, ճանաչվել է ՀՀ Սահմանադրության 16-րդ հոդվածի 4-րդ մասին և 20-րդ հոդվածի 5-րդ մասին հակասող և անվավեր:

Վերաքննիչ դատարանը, ՀՀ ֆինանսների նախարարության վերաքննիչ բողոքը բավարարելով, որոշել է Հայկ Սահակյանից հոգուտ ՀՀ ֆինանսների նախարարության բռնագանձել 3.549 ՀՀ դրամ՝ որպես վերջինիս կողմից Վերաքննիչ դատարանում նախապես վճարված պետական տուրք, ինչպես նաև Հայկ Սահակյանից հոգուտ ՀՀ պետական բյուջեի բռնագանձել 178.660 ՀՀ դրամ՝ որպես Դատարանում հայցադիմում ներկայացնելու համար նախատեսված, բայց չբռնագանձված պետական տուրք:

Վճռաբեկ դատարանը, հիմք ընդունելով ՀՀ սահմանադրական դատարանի 14.12.2010 թվականի թիվ ՄԴՌ-929 որոշումը, գտնում է, որ պետական տուրքի բռնագանձման մասով Վերաքննիչ դատարանի որոշումը պետք է բեկանել:

Այսպիսով, պետական տուրքի գանձման մասով վճռաբեկ բողոքի հիմքի առկայությունը Վճռաբեկ դատարանը դիտում է բավարար՝ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 227-րդ հոդվածի ուժով Վերաքննիչ դատարանի որոշումը մասնակիորեն բեկանելու համար:

Միաժամանակ, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ սույն գործով անհրաժեշտ է կիրառել ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 240-րդ հոդվածի 1-ին կետի 4-րդ ենթակետով սահմանված՝ ստորադաս դատարանի դատական ակտը փոփոխելու Վճռաբեկ դատարանի լիազորությունը հետևյալ հիմնավորմամբ.

ՀՀ Սահմանադրության 19-րդ հոդվածի և Կոնվենցիայի 6-րդ հոդվածի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի ողջամիտ ժամկետում իր գործի քննության իրավունք: Սույն գործով վեճի լուծումն էական նշանակություն ունի գործին մասնակցող անձանց համար: Վճռաբեկ դատարանը գտնում է, որ գործը ողջամիտ ժամկետում քննելը հանդիսանում է ՀՀ Սահմանադրության և Կոնվենցիայի նշված հոդվածներով ամրագրված՝ անձի արդար դատաքննության իրավունքի տարր: Հետևաբար, գործի անհարկի ձգձգումները վտանգ են պարունակում նշված իրավունքի խախտման տեսանկյունից: Տվյալ դեպքում Վճռաբեկ դատարանի կողմից ստորադաս դատարանի դատական ակտը փոփոխելը բխում է արդարադատության արդյունավետության շահերից, քանի որ սույն գործով վերջնական դատական ակտ կայացնելու համար նոր հանգամանք հաստատելու անհրաժեշտությունը բացակայում է:

Դատական ակտը փոփոխելիս Վճռաբեկ դատարանը հիմք է ընդունում սույն որոշման պատճառաբանությունները, ինչպես նաև գործի նոր քննության անհրաժեշտության բացակայությունը:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 240-241²-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

ՈՐՈՇԵՑ

1. Վճռաբեկ բողոքը բավարարել մասնակիորեն: Բեկանել ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 04.12.2009 թվականի որոշման՝ Հայկ Սահակյանից հօգուտ ՀՀ ֆինանսների նախարարության 3.549 ՀՀ դրամ և ՀՀ պետական բյուջեի 178.660 ՀՀ դրամ պետական տուրք բռնագանձելու մասը և այն փոփոխել. պետական տուրքի հարցը համարել լուծված: Մնացած մասով որոշումը թողնել օրինական ուժի մեջ:

2. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

*ՆԱԽԱԳԱՀՈՂ՝ ստորագրություն
ԴԱՏԱՎՈՐՆԵՐ՝ ստորագրություններ*

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական Քաղաքացիական գործ թիվ ԵԱՆԴ/0461/02/10
դատարանի որոշում 2011թ.
Քաղաքացիական գործ թիվ ԵԱՆԴ/0461/02/10
Նախագահող դատավոր՝ Կ. Չիլինգարյան
Դատավորներ՝ Ն. Տավարացյան
Ա. Պետրոսյան

ՈՐՈՇՈՒՄ ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քաղաքացիական
և վարչական պալատը (այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

Նախագահությամբ

մասնակցությամբ դատավորներ

Ե. ԽՈՒՆԴԿԱՐՅԱՆԻ

Ա. ԲԱՐՍԵՂՅԱՆԻ

Վ. ԱԲԵԼՅԱՆԻ

Վ. ԱՎԱՆԵՍՅԱՆԻ

Մ. ԴՐՄԵՅԱՆԻ

Գ. ՀԱԿՈԲՅԱՆԻ

Տ. ՊԵՏՐՈՍՅԱՆԻ

Ե. ՍՈՂՈՄՈՆՅԱՆԻ

2011 թվականի հուլիսի 01-ին

դռնբաց դատական նիստում, քննելով Ելենա Ավետյանի վճռաբեկ բողոքը ՀՀ
վերաքննիչ քաղաքացիական դատարանի 21.03.2011 թվականի որոշման դեմ՝ ըստ
հայցի Արտակ Գալստյանի ընդդեմ Հարություն Դրիգոյի՝ սեփականության իրավունքը
ձանաչելու և պետական գրանցում կատարելու պահանջի մասին,

ՊԱՐԶԵՑ

1. Գործի դատավարական նախապատմությունը

Դիմելով դատարան՝ Արտակ Գալստյանը պահանջել է Հարություն Դրիգոյին
սեփականության իրավունքով պատկանող Երևանի Զաքյան փողոցի 8-րդ շենքի թիվ
18 բնակարանի և ձեղնահարկի նկատմամբ ձանաչել սեփականության իրավունքը և
կատարել պետական գրանցում:

Երևանի Ավան և Նոր Նորք վարչական շրջանների ընդհանուր իրավասության
դատարանի (այսուհետ՝ Դատարան) 26.04.2010 թվականի վճռով հաստատվել է Արտակ
Գալստյանի և Հարություն Դրիգոյի միջև 07.04.2010 թվականին կնքված հաշտության
համաձայնությունը և գործի վարույթը կարճվել է: Վճիռը հրապարակման պահից
հայտարարվել է օրինական ուժի մեջ մտած:

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի (այսուհետ՝ Վերաքննիչ դատարան) 21.03.2011 թվականի որոշմամբ Դատարանի 26.04.2010 թվականի վճռի դեմ Ելենա Ավետյանի վերաքննիչ բողոքը մերժվել է, և Դատարանի 26.04.2010 թվականի վճիռը թողնվել է օրինական ուժի մեջ:

Սույն գործով վճռաբեկ բողոք է ներկայացրել Ելենա Ավետյանը:

Վճռաբեկ բողոքի պատասխան է ներկայացրել Արտակ Գալստյանը:

2. Վճռաբեկ բողոքի հիմքերը, փաստարկները և պահանջը

Սույն վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքերի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

1. Վերաքննիչ դատարանը խախտել է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 228-րդ հոդվածը:

Բողոք բերած անձը նշված պնդումը պարձառաքանում է հետևյալ փաստարկներով.

Վերաքննիչ դատարանի 09.07.2010 թվականի որոշմամբ Ելենա Ավետյանի վերաքննիչ բողոքն ընդունվել է վարույթ, որը ստորագրվել է նախագահող դատավոր Կարեն Զիլինգարյանի, դատավորներ Ամրահի Պետրոսյանի և Աստղիկ Խատատյանի կողմից: Նշված կազմով Վերաքննիչ դատարանը 05.08.2010 թվականին, 21.10.2010 թվականին հրավիրել է դատական նիստեր, իսկ 04.11.2010 թվականին հրավիրված դատական նիստում պետք է հրապարակվեր դատական ակտը: Սակայն 04.11.2010 թվականի դատական նիստում հայտարարվել է, որ դատարանի կազմում տեղի է ունեցել փոփոխություն և դատավոր Աստղիկ Խատատյանի փոխարեն դատարանի կազմում ընդգրկվել է դատավոր Նախշուն Տավարացյանը, որի հիմքով գործի քննությունը վերսկսվել է: Նույն դատական նիստի ընթացքում հայտարարվել է, որ դատական ակտը կհրապարակվի 21.03.2011 թվականին:

21.03.2011 թվականին դատական ակտը հրապարակվել է նախագահող դատավոր Կարեն Զիլինգարյան, դատավորներ Ամրահի Պետրոսյան և Նախշուն Տավարացյան կազմով, սակայն որոշումը ստանալուց հետո պարզվել է, որ դատավոր Նախշուն Տավարացյանի փոխարեն այն ստորագրել է դատավոր Տարոն Նազարյանը:

2. Վերաքննիչ դատարանը խախտել է ՀՀ Սահմանադրության 8-րդ, 18-րդ, 19-րդ, 31-րդ հոդվածները, «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածը, 1-ին արձանագրության 1-ին հոդվածը, կիրառել է ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 198-րդ հոդվածի 3-րդ կետը, 279-րդ հոդվածի 1-ին կետը, որոնք չպետք է կիրառեր, խախտել է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 33-րդ, 219-րդ հոդվածները:

Բողոք բերած անձը նշված պնդումը պարձառաքանում է հետևյալ փաստարկներով.

Վերաքննիչ դատարանը հաշվի չի առել այն հանգամանքը, որ Դատարանը, հաստատելով հաշտության համաձայնությունը, չի պարզել թե արդյոք դրանով կարող են խախտվել այլ անձանց իրավունքներն ու օրինական շահերը, թե ոչ: Դա այն դեպքում, երբ վիճելի բնակարանը 2005 թվականին ձեռք է բերվել ամուսիններ Կարեն և Ելենա Ավետյանների կողմից, որոնց ամուսնությունը գրանցվել է 24.11.1981 թվականին: Միայն 2009 թվականի մարտ ամսին Կարեն Ավետյանը փաստացի ամուսնալուծվել է Ելենա Ավետյանից և տեղափոխվել է այլ հասցե, իսկ Ելենա

Ավետյանը գավակների հետ միասին մինչ օրս բնակվում է վիճելի հասցեում: Այսինքն՝ վիճելի գույքը ձեռք է բերվել համատեղ ամուսնության ընթացքում և դրա 1/4-ը մասի սեփականատերն օրենքի ուժով Ելենա Ավետյանն է, անկախ իրավունքի պետական գրանցումից:

Վերաքննիչ դատարանը քննության առարկա չի դարձրել ու չի անդրադարձել վերաքննիչ բողոքում նշված փաստարկներին: Ավելին, Վերաքննիչ դատարանը, դուրս գալով վերաքննիչ բողոքի սահմաններից, քննարկման առարկա է դարձրել Հարություն Դրիգոյի և Կարեն Ավետյանի միջև կնքված նվիրատվության պայմանագրի իրավաչափության հարցը:

Վերոգրյալի հիման վրա բողոք բերած անձը պահանջել է բեկանել Վերաքննիչ դատարանի 21.03.2011 թվականի որոշումը և գործն ուղարկել ստորադաս դատարան՝ նոր քննության:

2.1 Վճռաբեկ բողոքի պատասխանի հիմնավորումները

Սույն գործի նախապատրաստական փուլում Հարություն Դրիգոն համաձայնվել է պարտքի դիմաց Արտակ Գալստյանին զիջել Երևանի Չաքյան փողոցի 8-րդ շենքի թիվ 18 բնակարանը և ձեղնահարկը, որը նոտարական կարգով վավերացված 04.05.2010 թվականի առուվաճառքի պայմանագրով վաճառվել է Ռուսաստանի Դաշնության քաղաքացի Հարություն Հովհաննիսյանին: Վերջինիս անունով կատարվել է իրավունքի պետական գրանցում և տրվել է թիվ 2694808 սեփականության իրավունքի գրանցման վկայականը: Տվյալ դեպքում, եթե Ելենա Ավետյանն իրականում չի իմացել իր բնակարանի օտարման մասին, որն ըստ բողոք բերող անձի 2005 թվականին ձեռք է բերվել իր և ամուսնու՝ Կարեն Ավետյանի կողմից, և սեփականության իրավունքի գրանցման վկայականը տրվել է միայն Կարեն Ավետյանի անվամբ, ապա Կարեն Ավետյանը պետք է կրի ամբողջ պատասխանատվությունը: Այսինքն՝ Արտակ Գալստյանը տեղյակ չի եղել ու որևէ կապ չունի նույն բնակարանի վերաբերյալ նախկինում կատարված գործարքների հետ:

3. Վճռաբեկ բողոքի քննության համար նշանակություն ունեցող փաստերը

Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը

1. 06.07.2010 թվականի մակագրության թերթիկի համաձայն՝ Ելենա Ավետյանի վերաքննիչ բողոքի քննությունը հանձնարարվել է Վերաքննիչ դատարանի հետևյալ կազմին՝ նախագահող դատավոր Կարեն Չիլինգարյան, դատավորներ՝ Աստղիկ Խառատյան, Ամրահի Պետրոսյան (գ.թ. 50):

2. Վերաքննիչ դատարանը՝ նախագահող դատավոր Կարեն Չիլինգարյան, դատավորներ՝ Աստղիկ Խառատյան, Ամրահի Պետրոսյան կազմով, 09.07.2010 թվականի որոշմամբ Ելենա Ավետյանի վերաքննիչ բողոքն ընդունել է վարույթ (գ.թ. 79):

3. Նախագահող դատավոր Կարեն Չիլինգարյանը 10.03.2011 թվականին ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի նախագահին խնդրել է թիվ ԵԱՆԿ/0461/02/10 քաղաքացիական գործով դատարանի կազմում ընդգրկված դատավոր Աստղիկ Խառատյանի արձակուրդում գտնվելու կապակցությամբ

դատարանի կազմում ընդգրկել մեկ այլ դատավորի (**գ.թ. 136**):

4.Վերաքննիչ դատարանի նախագահի 10.03.2011 թվականի մակագրության թերթիկի համաձայն՝ դատավոր Աստղիկ Խառատյանի փոխարեն դատարանի կազմում ընդգրկվել է դատավոր Նախշուն Տավարացյանը (**գ.թ. 135**):

5.10.03.2011 թվականին քաղաքացիական գործը քննվել և 21.03.2011 թվականի որոշումը հրապարակվել է նախագահող դատավոր Կարեն Չիլինգարյան, դատավորներ Նախշուն Տավարացյան, Ամրահի Պետրոսյան կազմով (**գ.թ. 137-139**):

6. 21.03.2011 թվականի որոշումը ստորագրվել է նախագահող դատավոր Կարեն Չիլինգարյանի, դատավորներ Տարոն Նազարյանի, Ամրահի Պետրոսյանի կողմից (**գ.թ. 142**):

7.Գործում առկա չէ ապացույց դատավոր Տարոն Նազարյանին դատարանի կազմում ընդգրկելու մասին:

4. Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը

Քննելով վճռաբեկ բողոքը նշված հիմքերի սահմաններում՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ՝

1) վճռաբեկ բողոքն առաջին հիմքով հիմնավոր է հեղուկապ պարձառաբանությամբ.

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 228-րդ հոդվածի 2-րդ կետի համաձայն՝ վճիռը բոլոր դեպքերում ենթակա է բեկանման, եթե՝

1) դատարանը գործը քննել է ոչ օրինական կազմով.

2) դատարանը գործը քննել է գործին մասնակցող անձանցից որևէ մեկի բացակայությամբ, որը պատշաճ ձևով չի տեղեկացվել նիստի ժամանակի և վայրի մասին.

3) **վճիռը ստորագրել է ոչ այն դատավորը, որը կայացրել է այն.**

4) վճիռը կայացրել է ոչ այն դատավորը, որը մտնում է գործը քննող դատարանի կազմի մեջ.

5) գործից բացակայում է դատական նիստի արձանագրությունը:

Սույն գործի փաստերի համաձայն՝ 06.07.2010 թվականի մակագրության թերթիկի համաձայն՝ Ելենա Ավետյանի բերած վերաքննիչ բողոքի քննությունը հանձնարարվել է Վերաքննիչ դատարանի հետևյալ կազմին՝ նախագահող դատավոր Կարեն Չիլինգարյան, դատավորներ՝ Աստղիկ Խառատյան, Ամրահի Պետրոսյան: Վերաքննիչ դատարանը նշված կազմով 09.07.2010 թվականի որոշմամբ Ելենա Ավետյանի վերաքննիչ բողոքն ընդունել է վարույթ: Այնուհետև 10.03.2011 թվականին նախագահող դատավոր Կարեն Չիլինգարյանը ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի նախագահին խնդրել է թիվ ԵԱԿ/0461/02/10 քաղաքացիական գործով դատարանի կազմում ընդգրկված դատավոր Աստղիկ Խառատյանի արձակուրդում գտնվելու կապակցությամբ դատարանի կազմում ընդգրկել մեկ այլ դատավորի: ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի նախագահի 10.03.2011 թվականի մակագրության թերթիկի համաձայն՝ դատավոր Աստղիկ Խառատյանի փոխարեն դատարանի կազմում ընդգրկվել է դատավոր Նախշուն Տավարացյանը: 10.03.2011 թվականին քաղաքացիական գործը քննվել և 21.03.2011 թվականի որոշումը հրապարակվել է նախագահող դատավոր Կարեն Չիլինգարյան, դատավորներ **Նախշուն Տավարացյան**, Ամրահի Պետրոսյան կազմով, սակայն դատական ակտը

ստորագրվել է նախագահող դատավոր Կարեն Չիլինգարյանի, դատավորներ **Տարոն Նազարյանի**, Ամրահի Պետրոսյանի կողմից:

Ենելով վերոգրյալից և սույն գործի փաստերի համադրման արդյունքում Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ սույն քաղաքացիական գործով Վերաքննիչ դատարանի բողոքարկվող որոշումը ստորագրել է ոչ այն դատավորը, որն այն կայացրել է: Մասնավորապես՝ դատավոր **Տարոն Նազարյանը** չի կայացրել բողոքարկվող որոշումը, քանի որ ընդգրկված չէր դատարանի կազմում: Նման եզրահանգման համար Վճռաբեկ դատարանը հիմք է ընդունում նաև այն հանգամանքը, որ գործում առկա չէ դատավոր Տարոն Նազարյանին դատարանի կազմում ընդգրկելու մասին որևէ ապացույց:

Վճռաբեկ դատարանը հարկ է համարում արձանագրել, որ Եվրոպական դատարանը Պոսոխովն ընդդեմ Ռուսաստանի գործով նշել է, որ «օրենքի հիման վրա ստեղծված դատարան» արտահայտությունը վերաբերում է ոչ միայն դատարանի օրենքի ուժով ստեղծված լինելու հանգամանքին, այլ **նաև դատարանի կազմի օրինական լինելուն** (*տես՝ Պոսոխովն ընդդեմ Ռուսաստանի Եվրոպական դատարանի 04.06.2003 թվականի վճիռը, գանգալը 63486/00, կետ 39, Բուսկարիինին ընդդեմ Ման Մարիին Եվրոպական դատարանի 04.05.2000 թվականի վճիռը, գանգալը 31657/96*):

Նման պայմաններում Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ Վերաքննիչ դատարանը, կայացնելով մի դատական ակտ, որն ստորագրվել է ոչ այն դատավորի կողմից, որն այն կայացրել է, «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի (այսուհետ՝ Կոնվենցիա) 6-րդ հոդվածի 1-ին մասի իմաստով չի գործել որպես «օրենքի հիման վրա ստեղծված դատարան»:

Վճռաբեկ դատարանն իր՝ նախկինում կայացրած որոշումներում անդրադարձել է Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին մասով երաշխավորված օրենքի հիման վրա ստեղծված դատարանի իրավական վերլուծությանը:

Մասնավորապես Վճռաբեկ դատարանը նշել է, որ Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին մասում ամրագրված **օրենքի հիման վրա ստեղծված** անկախ ու անաչառ դատարանի կողմից դատաքննության իրավունքի երաշխավորման համար անհրաժեշտ են մի շարք պահանջներ, որոնց պետք է բավարարի վեճը քննող դատական մարմինը: Այդ պահանջներից մեկն էլ այն է, որ դատարանը պետք է ստեղծված լինի օրենքի հիման վրա: Մասնավորապես, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ նշված պահանջը սերտորեն կապված է դատարանի կազմավորման ընթացակարգի հետ, որը պետք է համապատասխանի օրենքին (*տես՝ «Ինժգրբայ» բաց բաժնետիրական ընկերության բաժնետերեր Համլեյր Հովակիմյանի հայցն ընդդեմ ՀՀ ԱԵ դատական ակտերի հարկադիր կատարումն ապահովող ծառայության՝ «Պարտապանին որոշակի գործողություններ կատարելն արգելելը մասնակի վերացնելու մասին» 2007 թվականի օգոստոսի 14-ի որոշումն անվավեր ճանաչելու պահանջի մասին Վճռաբեկ դատարանի 24.07.2009 թվականի թիվ 3-96 (ՎԴ) որոշումը*):

Այսպիսով, վճռաբեկ բողոքի առաջին հիմքի առկայությունը Վճռաբեկ դատարանը դիտում է բավարար՝ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 228-րդ հոդվածի ուժով Վերաքննիչ դատարանի որոշումը բեկանելու համար:

Ինչ վերաբերում է վճռաբեկ բողոքի երկրորդ հիմքում նշված դատավարական և

նյութական իրավունքի նորմերի խախտված լինելու վերաբերյալ հիմնավորումներին, ապա Վճռաբեկ դատարանը ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 228-րդ հոդվածի խախտված լինելու պայմաններում դրանց չի անդրադառնում:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 240-241²-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

ՈՐՈՇԵՑ

1. Վճռաբեկ բողոքը բավարարել: Բեկանել ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 21.03.2011 թվականի որոշումը և գործն ուղարկել նույն դատարան՝ նոր քննության:

2. Պետական տուրքի բաշխման հարցին անդրադառնալ գործի նոր քննության ընթացքում:

3. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

*ՆԱԽԱԳԱՀՈՂ՝ պրորազրոյթյուն
ԴԱՏԱՎՈՐՆԵՐ՝ պրորազրոյթյուններ*

ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՈՒՄԸ ՀՀ-ՈՒՄ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական Քաղաքացիական գործ թիվ ՏԴ2/0081/02/11
 դատարանի որոշում 2011թ.
 Քաղաքացիական գործ թիվ ՏԴ2/0081/02/11
 Նախագահող դատավոր՝ Ն. Տավարացյան
 Դատավորներ՝ Ս. Միքայելյան
 Դ. Խաչատրյան

ՈՐՈՇՈՒՄ ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քաղաքացիական և վարչական պալատը (այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

*նախագահությամբ
մասնակցությամբ դատավորներ*

Ե. ԽՈՒՆԴԿԱՐՅԱՆԻ
 Տ. ՊԵՏՐՈՍՅԱՆԻ
 Վ. ԱԲԵԼՅԱՆԻ
 Ս. ԱՆՏՈՆՅԱՆԻ
 Վ. ԱՎԱՆԵՍՅԱՆԻ
 Ա. ԲԱՐՍԵՂՅԱՆԻ
 Մ. ԴՐՄԵՅԱՆԻ
 Գ. ՀԱԿՈԲՅԱՆԻ
 Է. ՀԱՅՐԻՅԱՆԻ
 Ե. ՍՈՂՈՄՈՆՅԱՆԻ

2011 թվականի դեկտեմբերի 27-ին
 դռնբաց դատական նիստում, քննելով ՀՀ Տավուշի մարզի Բերդի քաղաքապետի (այսուհետ՝ Քաղաքապետ) վճռաբեկ բողոքը ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 29.07.2011 թվականի որոշման դեմ՝ ըստ հայցի Տանյա Մելիքյանի ընդդեմ Քաղաքապետի՝ աշխատանքում վերականգնելու և հարկադիր պարապուրդի գումար վճարելու պահանջների մասին,

ՊԱՐԶԵՑ

1. Գործի դատավարական նախապատմությունը

Դիմելով դատարան՝ Տանյա Մելիքյանը պահանջել է վերականգնել նախկին աշխատանքում Բերդի քաղաքային համայնքի մշակույթի տան տնօրենի պաշտոնում, ինչպես նաև Քաղաքապետից բռնագանձել հարկադիր պարապուրդի գումարը:

ՀՀ Տավուշի մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի (դատավոր՝ Զ. Զաքինյան) (այսուհետ՝ Դատարան) 24.05.2011 թվականի վճռով հայցը բավարարվել է:

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի (այսուհետ՝ Վերաքննիչ

դատարան) 29.07.2011 թվականի որոշմամբ Քաղաքապետի վերաքննիչ բողոքը մերժվել է, և Դատարանի 24.05.2011 թվականի վճիռը թողնվել է օրինական ուժի մեջ:

Սույն գործով վճռաբեկ բողոք է ներկայացրել Քաղաքապետը:

Վճռաբեկ բողոքի պատասխանն չի ներկայացվել:

2. Վճռաբեկ բողոքի հիմքերը, փաստարկները և պահանջը

Սույն վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

Վերաքննիչ դատարանը չի կիրառել ՀՀ աշխատանքային օրենսգրքի 113-րդ հոդվածի 1-ին մասի 9-րդ կետը, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 14-րդ, 15-րդ կետերը, 28-րդ հոդվածը, 32-րդ հոդվածի 3-րդ կետը, որոնք պետք է կիրառեր, կիրառել է «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 32-րդ հոդվածի 9-րդ կետը, որը չպետք է կիրառեր, խախտել է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 47-րդ, 53-րդ, 131-րդ հոդվածները:

Բողոք բերած անձը նշված պնդումը պարզապես անհիմն է հետևյալ փաստարկներով.

Վերաքննիչ դատարանը հաշվի չի առել, որ համայնքում գործող կազմակերպությունների կազմակերպափրավական ձևերը հստակ տարանջատված են՝ բյուջետային հիմնարկներ, առևտրային և ոչ առևտրային կազմակերպություններ, որոնց ղեկավարների նշանակման և ազատման կարգը ևս տարանջատված է: Այսպես՝ համայնքի ավագանին համաձայնություն է տալիս միայն բյուջետային հիմնարկների ղեկավարների նշանակմանն ու ազատմանը, իսկ ոչ առևտրային կազմակերպությունների ղեկավարների ազատման համար համայնքի ավագանու համաձայնությունը պարտադիր չէ: Բերդի քաղաքային համայնքի մշակույթի տունը համայնքային ոչ առևտրային կազմակերպություն է, հետևաբար, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 32-րդ հոդվածի 9-րդ կետը, որը սահմանում է բյուջետային հիմնարկի ղեկավարի նշանակման և ազատման կարգը, տվյալ պարագայում կիրառելի չէ: Մինչդեռ, Դատարանը, չպարզելով նշված մշակույթի տան կազմակերպափրավական կարգավիճակը, առանց դրա վերաբերյալ որևէ ապացույցի հետազոտման հաստատված է համարել Տանյա Մելիքյանի՝ բյուջետային հիմնարկի ղեկավար լինելու փաստը այն դեպքում, երբ դատաքննության ընթացքում այդ հարցն ընդհանրապես քննության առարկա չի դարձվել: Հետևաբար, բողոք բերած անձը մշակույթի տան կազմակերպափրավական ձևի վերաբերյալ ապացույց չի ներկայացրել, քանի որ հստակ իմացել է դրա կարգավիճակի մասին:

Վերոգրյալի հիման վրա բողոք բերած անձը պահանջել է բեկանել Վերաքննիչ դատարանի 29.07.2011 թվականի որոշումը և գործն ուղարկել նոր քննության:

3. Վճռաբեկ բողոքի քննության համար նշանակություն ունեցող փաստերը

Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1) Քաղաքապետի 21.02.2007 թվականի թիվ 6 հրամանի և նույն օրը կնքված աշխատանքային պայմանագրի համաձայն՝ Տանյա Մելիքյանը նշանակվել է Բերդի քաղաքային մշակույթի տան տնօրենի պաշտոնում (**հատոր 1-ին, գ.թ. 8, 14-15**):

2) Քաղաքապետի 11.03.2011 թվականի խորհրդակցության թիվ 2

արձանագրությունից և «2011թ. մարտի 4-ին և 10-ին համայնքային ենթակայության հիմնարկներում աշխատանքային կարգապահության ստուգումների արդյունքների մասին» տեղեկանքից քաղվածքների համաձայն՝ մարտի 4-ին՝ ժամը 11-ին, մշակույթի տան տասներեք աշխատողներից աշխատանքի վայրում եղել են վեցը, բացակայել է տնօրենը: Մարտի 10-ին՝ ժամը 11:45-ին, աշխատանքի վայրում եղել են վեց աշխատողներ, բացակայել է տնօրենը: Դեռ ավելին, մարտի 10-ին տնօրենն անհարգելի պատճառով աշխատանքի չի ներկայացել ամբողջ աշխատանքային օրվա ընթացքում (**հատոր 1-ին, գ.թ. 53, 57**):

3) Բերդի քաղաքապետարանի 04.04.2011 թվականի թիվ 2-04 տեղեկանքի համաձայն՝ Տանյա Մելիքյանը մարտի 10-ին ամբողջ աշխատանքային օրվա ընթացքում աշխատանքի չի ներկայացել: Այդ օրը ժամը 16:45-ին վերջինս քաղաքապետարանում բանավոր հայտարարություն է արել աշխատանքի չներկայանալու պատճառի մասին և հրաժարվել է գրավոր բացատրություն տալ (**հատոր 1-ին, գ.թ. 9**):

4) Քաղաքապետի 14.03.2011 թվականի թիվ 14-Ա կարգադրության համաձայն՝ ՀՀ աշխատանքային օրենսգրքի 113-րդ հոդվածի 1-ին մասի 9-րդ կետի հիման վրա անհարգելի պատճառով ամբողջ աշխատանքային օրվա ընթացքում աշխատանքի չներկայանալու հիմքով լուծվել է Բերդի քաղաքային մշակույթի տան տնօրեն Տանյա Մելիքյանի հետ կնքված աշխատանքային պայմանագիրը (**հատոր 1-ին, գ.թ. 58**):

5) Վերաքննիչ բողոքին կից ներկայացվել են Բերդի քաղաքային մշակույթի տան կանոնադրության և իրավաբանական անձի պետական գրանցման վկայականի պատճենները, որոնց համաձայն՝ նշված իրավաբանական անձը համայնքային ոչ առևտրային կազմակերպություն է (**հատոր 1-ին, գ.թ. 88-95**):

6) Սույն գործով չի վիճարկվել Բերդի քաղաքային մշակույթի տան կազմակերպիչի կազմակերպական կարգավիճակի հարցը, և այն Դատարանում քննության առարկա չի դարձել:

4. Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը

Քննելով վճռաբեկ բողոքը նշված հիմքի սահմաններում՝ Վճռաբեկ դատարանը գրնում է, որ այն հիմնավոր է հեղեղյալ պատճառաբանությամբ.

ՀՀ աշխատանքային օրենսգրքի 113-րդ հոդվածի 1-ին մասի 9-րդ կետի համաձայն՝ գործատուն իրավունք ունի աշխատողի հետ լուծելու անորոշ ժամկետով կնքված աշխատանքային պայմանագիրը, ինչպես նաև որոշակի ժամկետով կնքված աշխատանքային պայմանագիրը նախքան դրա գործողության ժամկետի լրանալը անհարգելի պատճառով ամբողջ աշխատանքային օրվա (հերթափոխի) ընթացքում աշխատողի՝ աշխատանքի չներկայանալու դեպքում:

«Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 14-րդ և 15-րդ կետերի համաձայն՝ համայնքի ավագանին օրենքով սահմանված կարգով որոշում է կայացնում համայնքային բյուջետային հիմնարկների, համայնքի մասնակցությամբ առևտրային և ոչ առևտրային կազմակերպությունների ստեղծման, վերակազմակերպման կամ լուծարման մասին, իր որոշմամբ համաձայնություն է տալիս համայնքի ղեկավարի ներկայացրած՝ բյուջետային հիմնարկների և ոչ առևտրային կազմակերպությունների ղեկավարների թեկնածուներին:

Նույն օրենքի 28-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ համայնքի ղեկավարն իր լիազորություններն իրականացնում է իր աշխատակազմի (մասնագետների, կառուցվածքային և առանձնացված ստորաբաժանումների), համայնքային

բյուջետային հիմնարկների, առևտրային և ոչ առևտրային կազմակերպությունների միջոցով, իսկ նույն հոդվածի 5-րդ կետի համաձայն՝ համայնքի ղեկավարն իր ներկայացմամբ և ավագանու համաձայնությամբ նշանակում է համայնքային բյուջետային հիմնարկների ղեկավարներին:

Նույն օրենքի 32-րդ հոդվածի 9-րդ կետի համաձայն՝ համայնքի ավագանու որոշմամբ նշանակում և ազատում է համայնքի բյուջետային հիմնարկների ղեկավարներին:

«Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի վերոհիշյալ նորմերի համակարգային վերլուծության արդյունքում Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ նշված օրենքով հստակ տարանջատված են համայնքային ենթակայության իրավաբանական անձանց կազմակերպատվական ձևերը (բյուջետային հիմնարկներ, առևտրային և ոչ առևտրային կազմակերպություններ), ինչպես նաև դրանց ղեկավարների նշանակման և ազատման կարգը: Ընդ որում, օրենքը համայնքի ավագանու համաձայնությունը պարտադիր է համարում միայն բյուջետային հիմնարկների ղեկավարների նշանակման և ազատման, ինչպես նաև ոչ առևտրային կազմակերպությունների ղեկավարների նշանակման ժամանակ, իսկ ոչ առևտրային կազմակերպությունների ղեկավարների ազատման համար համայնքի ավագանու համաձայնությունը չի պահանջում:

Սույն գործով Դատարանը հայցը բավարարելիս պատճառաբանել է, որ Քաղաքապետը հայցվորի հետ կնքված աշխատանքային պայմանագիրը լուծել է առանց համայնքի ավագանու որոշման՝ խախտելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 32-րդ հոդվածով նախատեսված պահանջը, որով սահմանվում է համայնքի բյուջետային հիմնարկների ղեկավարներին համայնքի ավագանու որոշմամբ նշանակելու և ազատելու մասին համայնքի ղեկավարի պարտադիր լիազորությունը:

Վերաքննիչ դատարանը հիմնավոր է համարել Դատարանի նշված եզրահանգումը և չի անդրադարձել վերաքննիչ բողոքի այն փաստարկին, որ Դատարանն անտեսել է Բերդի մշակույթի տան՝ համայնքային ոչ առևտրային կազմակերպություն հանդիսանալու հանգամանքը, հետևաբար, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 32-րդ հոդվածի 9-րդ կետի պահանջը, որը սահմանում է բյուջետային հիմնարկի ղեկավարի նշանակման և ազատման կարգը, այս պարագայում կիրառելի չէ: Ընդ որում, վերաքննիչ բողոքին կից ներկայացված ապացույցներին և բողոքում հայտնված վերոգրյալ հիմնավորումներին գնահատական չտալը Վերաքննիչ դատարանը հիմնավորել է բողոք բերած անձի կողմից նշված դիրքորոշումը Դատարանում չհայտնելու հանգամանքով:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 219-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ վերաքննիչ դատարանը դատական ակտը վերանայում է վերաքննիչ բողոքի հիմքերի և հիմնավորումների սահմաններում:

Նույն հոդվածի 2-րդ կետի համաձայն՝ վերաքննիչ դատարանն իրավունք չունի նոր ապացույց ընդունելու և բողոքը քննելիս հիմնվում է միայն այն ապացույցների վրա, որոնք ներկայացվել են առաջին ատյանի դատարանին: Եթե առաջին ատյանի դատարանում գործի քննության ժամանակ ապացույցը չի ներկայացվել կողմերի կամքից անկախ հանգամանքներով, ապա վերաքննիչ դատարանը բեկանում է գործը և այն ուղարկում համապատասխան առաջին ատյանի դատարան՝ նոր քննության, եթե գտնում է, որ ապացույցն էական նշանակություն ունի գործի լուծման համար:

Տվյալ նորմի վերլուծությունից հետևում է, որ Վերաքննիչ դատարանում նոր

ապացույցների ընդունումն օրենսդիրը պայմանավորել է որոշակի բացառությամբ, այն է՝ եթե

- առաջին ատյանի դատարանում գործի քննության ժամանակ ապացույցը չի ներկայացվել կողմերի կամքից անկախ հանգամանքներով և

- ապացույցն էական նշանակություն ունի գործի լուծման համար *(տե՛ս ըստ հայցի «Ազուր-Քունի» ՄՊԸ-ի հիմնադիր անդամ Գումիդաս Հարթունյանի ընդդեմ ընկերության, ընկերության հիմնադիր անդամ և Կոնստանտին Ռաֆայել Մկրտչյանի, ընկերության հիմնադիր անդամ Գուրգեն Մարտիրոսյանի՝ ընկերությունից դուրս գալու, բաժնեմասն առանձնացնելու և որպես դրա հետևանք նրա գրանցման վայրն իր փարածքից հանելու պահանջի մասին քաղաքացիական գործով Վճռաբեկ դատարանի 14.10.2011 թվականի թիվ ԵԱԴԴ/0832/02/09 որոշումը):*

Հիմք ընդունելով վերոգրյալը՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ սույն գործով Բերդի քաղաքային մշակույթի տան կազմակերպափրավական կարգավիճակի հարցը չվիճարկվելու և այն Դատարանում քննության առարկա չդարձվելու պայմաններում Քաղաքապետը դրա վերաբերյալ Դատարանում դիրքորոշում չէր կարող հայտնել և համապատասխան ապացույցներ չի ներկայացրել իր կամքից անկախ հանգամանքներով:

Նման պայմաններում Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Վերաքննիչ դատարանը պետք է վերաքննիչ բողոքին կից ներկայացված Բերդի քաղաքային մշակույթի տան կանոնադրության և իրավաբանական անձի պետական գրանցման վկայականի պատճենների հիման վրա բեկաներ Դատարանի վճիռը և գործն ուղարկեր նոր քննության, քանի որ նշված ապացույցների համաձայն՝ Բերդի քաղաքային մշակույթի տունը համայնքային **ոչ առևտրային կազմակերպություն է**, որպիսի հանգամանքն էական նշանակություն ունի սույն գործի լուծման համար:

Այսպիսով, սույն վճռաբեկ բողոքի հիմքի առկայությունը Վճռաբեկ դատարանը դիտում է բավարար՝ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 227-րդ և 228-րդ հոդվածների ուժով Վերաքննիչ դատարանի որոշումը բեկանելու համար:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 240-241²-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

ՈՐՈՇԵՑ

1. Վճռաբեկ բողոքը բավարարել: Բեկանել ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 29.07.2011 թվականի որոշումը և գործն ուղարկել ՀՀ Տավուշի մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարան՝ նոր քննության:

2. Դատական ծախսերի բաշխման հարցին անդրադառնալ գործի նոր քննության ընթացքում:

3. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

ՆԱԽԱԳԱՀՈՂ՝ *ստորագրություն*
ԴԱՏԱՎՈՐՆԵՐ՝ *ստորագրություններ*

ՊԵՏԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՀԻՄՈՒՆՔՆԵՐ

ՊԵՏԱԿԱՆ ԳՈՒՅՔԻ ՄԱՄՆԱՎՈՐԵՑՈՒՄ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական
դատարանի որոշում

Քաղաքացիական գործ թիվ ՍԴ/0809/02/09
2011թ.

Քաղաքացիական գործ թիվ ՍԴ/0809/02/09
Նախագահող դատավոր՝ Գ. Մատինյան
Դատավորներ՝ Լ. Գրիգորյան
Ա. Թումանյան

ՈՐՈՇՈՒՄ

ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Հայաստանի Հանրապետության վճռարեկ դատարանի քաղաքացիական և վարչական
պալատը (այսուհետ՝ Վճռարեկ դատարան)

*նախագահությամբ
մասնակցությամբ դատավորներ*

Ե. ԽՈՒՆԴԿԱՐՅԱՆԻ
Տ. ՊԵՏՐՈՍՅԱՆԻ
Վ. ԱԲԵԼՅԱՆԻ
Ս. ԱՆՏՈՆՅԱՆԻ
Վ. ԱՎԱՆԵՍՅԱՆԻ
Ա. ԲԱՐՍԵՂՅԱՆԻ
Մ. ԴՐՄԵՅԱՆԻ
Գ. ՀԱԿՈԲՅԱՆԻ
Է. ՀԱՅՐԻՅԱՆԻ
Ե. ՍՈՂՈՄՈՆՅԱՆԻ

2011 թվականի մարտի 04-ին

դոնբաց դատական նիստում, քննելով Ջիվանշիր Ծատրյանի վճռարեկ բողոքը
ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 14.07.2010 թվականի որոշման դեմ՝
ըստ հայցի Ջիվանշիր և Լաուրա Ծատրյանների ընդդեմ Արթուր Մանուկյանի, ՀՀ
Սյունիքի մարզի Տաթևի գյուղապետարանի (այսուհետ՝ Գյուղապետարան), ՀՀ
կառավարությանն առընթեր պետական գույքի կառավարման վարչության (այսուհետ՝
Վարչություն)՝ պետական գույքի մասնավորեցման 02.06.2008 թվականի թիվ 7027
պայմանագիրը և Տաթևի կենցաղի տան զբաղեցրած հողատարածքը վաճառելու
մասին ՀՀ Սյունիքի մարզի Տաթև համայնքի ղեկավարի 28.06.2008 թվականի որոշումն
անվավեր ճանաչելու պահանջների մասին,

ՊԱՐԶԵՑ

1. Գործի դատավարական նախապատմությունը.

Դիմելով դատարան՝ Ջիվանշիր և Լաուրա Ծատրյանները պահանջել են անվավեր ճանաչել 02.06.2008 թվականի թիվ 7027 պետական գույքի մասնավորեցման պայմանագիրը և Տաթևի կենցաղի տան գրադեցրած 118,75 քմ մակերեսով հողատարածքը վաճառելու մասին ՀՀ Սյունիքի մարզի Տաթև համայնքի ղեկավարի 28.06.2008 թվականի որոշումը:

ՀՀ Սյունիքի մարզի ընդհանուր իրավասության դատարանի (այսուհետ՝ Դատարան) 15.04.2010 թվականի վճռով հայցը մերժվել է:

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի (այսուհետ՝ Վերաքննիչ դատարան) 14.07.2010 թվականի որոշմամբ Ջիվանշիր Ծատրյանի վերաքննիչ բողոքը մերժվել է, և Դատարանի 15.04.2010 թվականի վճիռը թողնվել է օրինական ուժի մեջ:

Սույն գործով վճռաբեկ բողոք է ներկայացրել Ջիվանշիր Ծատրյանը:

Վճռաբեկ բողոքի պատասխան է ներկայացրել Արթուր Մանուկյանը:

2. Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը.

Սույն վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

Վերաքննիչ դատարանը սխալ է մեկնաբանել «Պետական գույքի մասնավորեցման (սեփականաշնորհման) մասին» ՀՀ օրենքի 2-րդ, 10-րդ, 18-րդ, 26-րդ հոդվածները, «Պետական ձեռնարկությունների և անավարտ շինարարության օբյեկտների սեփականաշնորհման և սպապետականացման մասին» ՀՀ օրենքի 2-րդ հոդվածը, չի կիրառել ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 303-րդ, 304-րդ, 305-րդ հոդվածները, «Պետական գույքի մասնավորեցման (սեփականաշնորհման) մասին» ՀՀ օրենքի 32-րդ հոդվածը, խախտել է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 53-րդ հոդվածը:

Բողոք բերած անձը նշված պնդումը պարզապարզապես է հերյակալ փաստարկներով.

Վերաքննիչ դատարանը հաշվի չի առել, որ «Պետական գույքի մասնավորեցման (սեփականաշնորհման) մասին» և «Պետական ձեռնարկությունների և անավարտ շինարարության օբյեկտների սեփականաշնորհման և սպապետականացման մասին» ՀՀ օրենքների դրույթների համաձայն՝ բողոք բերած անձը սեփականաշնորհվող օբյեկտի աշխատավորական կոլեկտիվի անդամ էր, ուստի և ունեցել է գնման՝ մասնավորեցման նախապատվության իրավունք:

Բացի այդ, Վերաքննիչ դատարանն անտեսել է, որ գործի քննությամբ չի հիմնավորվել 1997 թվականին կամ դրանից հետո Գագիկ Պողոսյանի՝ սեփականաշնորհվող ձեռնարկության աշխատավորական կոլեկտիվի անդամ լինելու հանգամանքը: Գործի նյութերում և Գագիկ Պողոսյանի աշխատանքային գրքույկում առկա գրառումները հակասում են միմյանց, իսկ Վերաքննիչ դատարանը բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ չի գնահատել գործում առկա ապացույցները, որի արդյունքում Գագիկ Պողոսյանը կամայականորեն համարվել է սեփականաշնորհվող ձեռնարկության աշխատավորական կոլեկտիվի անդամ:

Վերոգրյալի հիման վրա բողոք բերած անձը պահանջել է բեկանել Վերաքննիչ դատարանի 14.07.2010 թվականի որոշումը:

2.1. Վճարել բողոքի պատասխանի հիմնավորումները.

Վերաքննիչ դատարանն իրավացիորեն գտել է, որ վիճելի օբյեկտը մասնավորեցման ծրագրում ընդգրկելու, ինչպես նաև մասնավորեցման պայմանագիրը կնքելու պահին բողոք բերած անձը նշված ձեռնարկության աշխատավորական կոլեկտիվի անդամ չէր, քանի որ այդտեղ աշխատել է 1969 թվականից մինչև 1994 թվականը:

3. Վճարել բողոքի քննության համար նշանակություն ունեցող փաստերը.

Վճարել բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1) Ջիվանշիր Ծատրյանի աշխատանքային գրքույկի համաձայն՝ Ջիվանշիր Ծատրյանը 01.02.1968 թվականից մինչև 10.11.1994 թվականն անընդհատ աշխատել է Տաթևի կենցաղի տանը՝ որպես կարող վարպետ (**հատոր 1-ին, գ.թ. 86**):

2) Սեփականաշնորհվող ձեռնարկության փաստացի աշխատողների մասին 15.04.1997 թվականի տեղեկանքի համաձայն՝ Տաթևի կենցաղի տան աշխատողներն են Ջիվանշիր Ծատրյանը և Գագիկ Պողոսյանը: Որպես Գագիկ Պողոսյանի աշխատանքի ընդունման հիմք նշվել է 01.04.1995 թվականի թիվ 9 հրամանը (**հատոր 1-ին, գ.թ. 49**):

3) Գագիկ Պողոսյանի աշխատանքային գրքույկի համաձայն՝ վերջինս Տաթևի կենցաղի տանն աշխատել է 01.02.1989 թվականից մինչև 10.12.1993 թվականը (**հատոր 1-ին, գ.թ. 130**):

4) Կոլեկտիվին օբյեկտը գնելու վերաբերյալ 02.08.1997 թվականին արված գրավոր առաջարկությամբ ՀՀ կառավարության 13.03.1997 թվականի թիվ 40 որոշման համաձայն Տաթևի կենցաղի տունն առաջարկվել է ձեռնարկության աշխատավորական կոլեկտիվին: Նշված առաջարկությունն ստացել է Գագիկ Պողոսյանը (**հատոր 1-ին, գ.թ. 48**):

5) Պետական գույքի մասնավորեցման 02.06.2008 թվականի թիվ 7027 պայմանագրի համաձայն՝ ՀՀ Սյունիքի մարզի Տաթև գյուղում գտնվող կենցաղի տուն «փոքր» օբյեկտը մասնավորեցվել է Արթուր Մանուկյանին (**հատոր 1-ին, գ.թ. 14**):

6) ՀՀ Սյունիքի մարզի Տաթև համայնքի ղեկավարի 28.06.2008 թվականի որոշմամբ Տաթևի կենցաղի տան զբաղեցրած 118,75 քմ մակերեսով հողատարածքը վաճառվել է Արթուր Մանուկյանին (**հատոր 1-ին, գ.թ. 95**):

4. Վճարել դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը.

Քննելով վճարել բողոքը նշված հիմքի սահմաններում՝ Վճարել դատարանը գտնում է, որ բողոքը հիմնավոր է հետևյալ պատճառաբանությամբ.

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 53-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ դատարանը յուրաքանչյուր ապացույց գնահատում է գործում եղած բոլոր ապացույցների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտության վրա հիմնված ներքին համոզմամբ:

«Պետական գույքի մասնավորեցման (սեփականաշնորհման) մասին» ՀՀ օրենքի 2-րդ հոդվածի համաձայն՝ պետական գույքի մասնավորեցման մասին

նույն օրենքով սահմանված կարգով որոշում ընդունելու պահին ընկերության (ձեռնարկության) կամ «փոքր» օբյեկտի աշխատավորական կոլեկտիվի անդամ են համարվում՝

ա) տվյալ ընկերությունում (ձեռնարկությունում) կամ «փոքր» օբյեկտում աշխատողները.

բ) տվյալ ընկերությունում (ձեռնարկությունում) կամ «փոքր» օբյեկտում վերջին երեք տարվա ընթացքում առնվազն մեկ տարվա աշխատանքային ստաժ ունեցող անձինք.

գ) վերջին տասը տարվա ընթացքում տվյալ ընկերությունից (ձեռնարկությունից) կամ «փոքր» օբյեկտից կենսաթոշակի անցած և այնտեղ առնվազն երկու տարվա անընդհատ աշխատանքային ստաժ ունեցող անձինք.

դ) վերջին տասը տարվա ընթացքում տվյալ ընկերությունում (ձեռնարկությունում) կամ «փոքր» օբյեկտում առնվազն մեկ տարվա անընդհատ աշխատանքային ստաժ ունեցող բոլոր կարգի հաշմանդամները.

ե) տվյալ ընկերությունում (ձեռնարկությունում) կամ «փոքր» օբյեկտում առնվազն ութ տարվա ընդհանուր աշխատանքային ստաժ ունեցող անձինք.

զ) ընկերությունների (ձեռնարկությունների) կամ «փոքր» օբյեկտների մասնավորեցման պատճառով վերակազմավորվող կամ լուծարվող վերադաս մարմինների

ազատված աշխատակիցները, ովքեր տվյալ մարմնում ունեն առնվազն մեկ տարվա անընդհատ աշխատանքային ստաժ կամ վերջին երեք տարվա ընթացքում առնվազն երկու

տարվա աշխատանքային ստաժ.

է) ընկերության (ձեռնարկության) կամ «փոքր» մասնավորեցման մասին Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից որոշում ընդունելու պահից հաստիքների կրճատման պատճառով աշխատանքից ազատված անձինք.

ը) տվյալ ընկերությունում (ձեռնարկությունում) կամ «փոքր» օբյեկտում աշխատած կերակրողին կորցնելու կապակցությամբ կենսաթոշակ ստացող անձինք.

թ) տվյալ ընկերությունից (ձեռնարկությունից) կամ «փոքր» օբյեկտից «Զինապարտության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքին համապատասխան

զինծառայության գորակոչված և զինծառայության մեջ գտնվող, ընկերությունում (ձեռնարկությունում) կամ «փոքր» օբյեկտում առնվազն մեկ տարվա աշխատանքային ստաժ ունեցող, ինչպես նաև ընտրովի պետական մարմիններում, տեղական ինքնակառավարման մարմիններում ընտրված անձինք:

«Պետական գույքի մասնավորեցման (սեփականաշնորհման) մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ մասնավորեցվող ընկերության (ձեռնարկության) կամ «փոքր» մասնավորեցման օբյեկտի աշխատավորական կոլեկտիվի անդամ համարվող անձինք ունեն այդ ընկերության (ձեռնարկության) կամ «փոքր» մասնավորեցման օբյեկտի գույքը ձեռք բերելու հավասար իրավունքներ:

Նույն հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ «փոքր» մասնավորեցման դեպքում ուղղակի վաճառքի ձևով այդ օբյեկտների աշխատավորական կոլեկտիվներն ունեն այդ օբյեկտների մասնավորեցման նախապատվության իրավունք:

«Պետական գույքի մասնավորեցման (սեփականաշնորհման) մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ լիազորված պետական մարմինը

Հայաստանի Հանրապետության կառավարության համապատասխան որոշմամբ մասնավորեցվող «փոքր» մասնավորեցման օբյեկտները գրավոր առաջարկում է դրանց աշխատավորական կոլեկտիվներին:

Վիճելի իրավահարաբերության ծագման ժամանակ գործող ՀՀ աշխատանքային օրենսգրքի 259.1-րդ, 259.2-րդ և 259.3-րդ հոդվածների համաձայն՝ աշխատավորական կոլեկտիվը ձեռնարկության լիիրավ տերն է և ունի իր մարմինները՝ ընդհանուր ժողով և խորհուրդ:

Սույն գործով Վերաքննիչ դատարանը, դատական ակտը թողնելով օրինական ուժի մեջ, պատճառաբանել է, որ Ջիվանշիր և Լաուրա Ծատրյանները սեփականաշնորհվող ձեռնարկության մասնավորեցման պահին օբյեկտի աշխատավորական կոլեկտիվի անդամներ չէին, հետևաբար չեն ունեցել գնման՝ մասնավորեցման նախապատվության իրավունք:

Վերաքննիչ դատարանը միաժամանակ նշել է, որ ՀՀ կառավարության առընթեր պետական ունեցվածքի հաշվառման և ապապետականացման վարչությունը 02.08.1997 թվականի թիվ 6660 գրությամբ Տաթևի կենցաղի տունն առաջարկել է տվյալ կենցաղի տան աշխատավորական կոլեկտիվին: Գրավոր առաջարկը ստորագրել և ստացել է աշխատավորական կոլեկտիվի անդամ Գագիկ Պողոսյանը:

Մինչդեռ, սույն գործի փաստերի համաձայն՝ Ջիվանշիր Ծատրյանը 01.02.1968 թվականից մինչև 10.11.1994 թվականն անընդհատ աշխատել է Տաթևի կենցաղի տանը և երրորդ խմբի հաշմանդամ է, իսկ պետական գույքի մասնավորեցման մասին ՀՀ

կառավարության որոշումը կայացվել է 13.03.1997 թվականին: Ըստ սեփականաշնորհվող ձեռնարկության փաստացի աշխատողների մասին 15.04.1997 թվականի տեղեկանքի՝ Տաթևի կենցաղի տան աշխատողներն են Ջիվանշիր Ծատրյանը և Գագիկ Պողոսյանը: Ընդ որում, տեղեկանքում որպես Գագիկ Պողոսյանի աշխատանքի ընդունման հիմք նշվել է 01.04.1995 թվականի թիվ 9 հրամանը, իսկ Գագիկ Պողոսյանի աշխատանքային գրքույկի համաձայն՝ վերջինս Տաթևի կենցաղի տանն աշխատել է 01.02.1989 թվականից մինչև 10.12.1993 թվականը:

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ օրենսդիրն ընկերության (ձեռնարկության) կամ «փոքր» օբյեկտի աշխատավորական կոլեկտիվի անդամ համարվելու հանգամանքը պայմանավորել է ոչ թե օբյեկտի մասնավորեցման, այլ մասնավորեցման մասին որոշում ընդունելու պահով և ամրագրել է մասնավորեցման օբյեկտը դրա աշխատավորական կոլեկտիվին առաջարկելու անհրաժեշտություն:

Հիմք ընդունելով վերոգրյալը՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Տաթևի կենցաղի տան մասնավորեցման մասին ՀՀ կառավարության 13.03.1997 թվականի թիվ 40 որոշումն ընդունելու պահին Ջիվանշիր Ծատրյանը «Պետական գույքի մասնավորեցման (սեփականաշնորհման) մասին» ՀՀ օրենքի 2-րդ հոդվածի բ) և ե) կետերի ուժով վիճելի օբյեկտի աշխատավորական կոլեկտիվի անդամ է, հետևաբար ունեցել է գնման նախապատվության իրավունք:

Վճռաբեկ դատարանը նախկինում կայացրած իր որոշումներում անդրադարձել է դատական ակտերի իրավական հիմնավորվածության հարցին:

Մասնավորապես, Վճռաբեկ դատարանը նշել է, որ յուրաքանչյուր դեպքում դատարանը պարտավոր է տալ որոշման իրավական հիմնավորումը:

Որոշման իրավական հիմնավորումը կայանում է հաստատված փաստերի և իրավահարաբերությունների նկատմամբ իրավունքի համապատասխան նորմի կամ նորմերի ընտրության և կիրառման մեջ, այն նորմի (նորմերի), որի հիման վրա

դատարանը եզրակացություն է անում վիճելի իրավահարաբերության առկայության կամ բացակայության մասին:

Որոշման մեջ ոչ միայն պետք է ցույց տալ նորմատիվ ակտի այս կամ այն հոդվածը, որում ամրագրված է կիրառման ենթակա նորմը, այլև պետք է պատճառաբանվի, թե հատկապես ինչու պետք է կիրառվի հենց այդ նորմը:

Որոշման իրավական հիմնավորումը բնութագրում է ինչպես դատարանի, այնպես էլ նրա որոշման իրավակիրառ գործառույթը, ընդգծում դատական գործունեության և դատական որոշման օրինականությունը:

Միաժամանակ, Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ դատարանը պետք է նշի ոչ միայն այն ապացույցները, որոնց վրա հիմնվել է վիճելի փաստերը հաստատելիս և արդյունքում որոշում կայացնելիս, այլև պետք է պատճառաբանի, թե ինչու է կողմի ներկայացրած այս կամ այն ապացույցը մերժվում: Միայն նման հիմնավորումը կարող է վկայել գործի բազմակողմանի հետազոտության մասին *(տե՛ս ըստ հայցի Ռազմիկ Մարությանի ընդդեմ Սյրեփան և Անահիտ Մարությանների, ՀՀ Կենտրոն նուրարական գրասենյակի՝ ժառանգական գույքի ընդունման փաստի ձանաչման և ըստ օրենքի ժառանգության իրավունքի վկայագիրը մասնակի անվավեր ձանաչելու պահանջների մասին և Սյրեփան և Անահիտ Մարությանների հակընդդեմ հայցի՝ սեփականության իրավունքով պարկանոց բնակելի տան և հողամասի բաժանման պահանջի մասին քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 27.03.2008 թվականի թիվ 3-54(ՎԳ) որոշումը):*

Վճռաբեկ դատարանը գտնում է, որ սույն գործով Վերաքննիչ դատարանը, գտնելով, որ մասնավորեցվող օբյեկտը գնելու գրավոր առաջարկն ստացել է աշխատավորական կոլեկտիվի անդամ Գագիկ Պողոսյանը, չի անդրադարձել վերջինիս՝ նշված ձեռնարկությունում աշխատելու ժամանակահատվածի վերաբերյալ սույն գործում առկա ապացույցների միջև եղած հակասություններին և փաստորեն, չի պարզել, թե «Պետական գույքի մասնավորեցման (սեփականաշնորհման) մասին» ՀՀ օրենքի 2-րդ հոդվածի որ կետի հիմքով է Գագիկ Պողոսյանը համարվում մասնավորեցվող օբյեկտի աշխատավորական կոլեկտիվի անդամ:

Վճռաբեկ դատարանը գտնում է, որ նշված հանգամանքը պարզելուց հետո գնահատման առարկա պետք է դառնար սույն գործի լուծման համար էական նշանակություն ունեցող այն փաստը, թե Գագիկ Պողոսյանն իրավասու էր արդյոք ստանալու աշխատավորական կոլեկտիվին ուղղված օբյեկտի մասնավորեցման առաջարկը և նրան ծանուցելը կարող է համարվել աշխատավորական կոլեկտիվին օբյեկտի մասնավորեցման վերաբերյալ իրազեկում: Այսինքն՝ Վերաքննիչ դատարանը չի հիմնավորել իր եզրահանգումները:

Վճռաբեկ բողոքի պատասխանում բերված փաստարկները հերքվում են վերոնշյալ պատճառաբանություններով:

Այսպիսով, վճռաբեկ բողոքի հիմքի առկայությունը բավարար է, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 227-րդ և 228-րդ հոդվածների համաձայն, Վերաքննիչ դատարանի որոշումը բեկանելու համար:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 240-241²-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

ՈՐՈՇԵՑ

1. Վճռաբեկ բողոքը բավարարել: Բեկանել ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 14.07.2010 թվականի որոշումը և գործն ուղարկել ՀՀ Սյունիքի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարան՝ նոր քննության:

2. Պետական տուրքի բաշխման հարցին անդրադառնալ գործի նոր քննության ընթացքում:

3. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

*ՆԱԽԱԳԱՀՈՂ՝ արորագրություն
ԴԱՏԱՎՈՐՆԵՐ՝ արորագրություններ*

ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ

ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի որոշում	Քաղաքացիական գործ թիվ ԵԿԴ/0060/04/10
Քաղաքացիական գործ թիվ ԵԿԴ/0060/04/10	2011
Նախագահող դատավոր՝	Տ. Նազարյան
Դատավորներ՝	Կ. Հակոբյան Տ. Սահակյան

ՈՐՈՇՈՒՄ

ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քաղաքացիական և վարչական պալատը (այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

նախագահությամբ

մասնակցությամբ դատավորները

Ե. ԽՈՒՆԴԿԱՐՅԱՆԻ

Մ. ԴՐՄԵՅԱՆԻ

Վ. ԱԲԵԼՅԱՆԻ

Ս. ԱՆՏՈՆՅԱՆԻ

Վ. ԱՎԱՆԵՍՅԱՆԻ

Ա. ԲԱՐՍԵՂՅԱՆԻ

Գ. ՀԱԿՈԲՅԱՆԻ

Է. ՀԱՅՐԻՅԱՆԻ

Տ. ՊԵՏՐՈՍՅԱՆԻ

Ե. ՍՈՂՈՍՈՆՅԱՆԻ

2011 թվականի դեկտեմբերի 27-ին

դռնբաց դատական նիստում, քննելով «Գլոբալ Գոլդ Հանքավան» ՍՊԸ-ի (այսուհետ՝ Ընկերություն) վճռաբեկ բողոքը ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 25.03.2011 թվականի որոշման դեմ՝ ըստ դիմումի «Վահան ԵՀԱ» ՍՊԸ-ի (այսուհետ՝ Կազմակերպություն) ընդդեմ Ընկերության սնանկ ձանաչելու պահանջի մասին,

ՊԱՐԶԵՑ

1. Գործի դատավարական նախապատմությունը

Դիմելով դատարան՝ Կազմակերպությունը պահանջել է Ընկերությանը սնանկ ձանաչել:

Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի (դատավոր՝ Ա. Մուքոյան) (այսուհետ՝ Դատարան) 17.12.2010 թվականի վճռով դիմումը բավարարվել է:

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի (այսուհետ՝ Վերաքննիչ դատարան) 25.03.2011 թվականի որոշմամբ Ընկերության վերաքննիչ բողոքը մերժվել է, և Դատարանի 17.12.2010 թվականի վճիռը թողնվել է օրինական ուժի մեջ:

Սույն գործով վճռաբեկ բողոք է ներկայացրել Ընկերությունը:
Վճռաբեկ բողոքի պատասխանն չի ներկայացվել:

2. Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը

Սույն վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

Վերաքննիչ դատարանը խախտել է ՀՀ քաղաքացիական դատարարության օրենսգրքի 53-րդ, 132-րդ հոդվածների պահանջները, սխալ է մեկնաբանել «Մասնկության մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածը, չի կիրառել «Մասնկության մասին» ՀՀ օրենքի 11-րդ հոդվածը, որը պետք է կիրառեր:

Բողոք բերած անձը նշված պնդումը պարձատարանում է հետևյալ փաստարկներով.

Վերաքննիչ դատարանն անտեսել է սույն գործում առկա՝ Կազմակերպության և Ընկերության միջև 17.09.2007 թվականին կնքված աշխատանքի կատարման թիվ 66H-07 պայմանագրի 9.3 կետը, որի համաձայն՝ բոլոր վեճերը, որոնք ծագում են սույն պայմանագրից կամ նրա հետ կապված, պետք է նախ և առաջ քննարկվեն Կատարողի և Պատվիրատուի լիազորված ներկայացուցիչների կողմից՝ բարի կամքի համաձայն լուծում գտնելու նպատակով: Եթե սույն պայմանագրի կողմերը ի վիճակի չեն այդ վեճը լուծել որևէ կողմի կողմից մյուս կողմին վեճի մասին գրավոր ծանուցելուց հետո երեսուն (30) օրվա ընթացքում, ապա այդ վեճը պետք է լուծվի իրավասու դատարանի կողմից՝ գործող օրենսդրությանը համապատասխան:

Մինչդեռ, դիմողը վճարման կապակցությամբ Ընկերությանը երբևէ գրավոր ծանուցում չի տվել և ենթադրյալ վեճը լուծելու որևէ փորձ չի ձեռնարկել, հետևաբար վերջինիս նման գործելակերպը վկայում է այն մասին, որ կամ Ընկերության հետ որևէ վեճ չի ունեցել, կամ ի սկզբանե նպատակ չի ունեցել լուծում գտնել բարի կամքի համաձայն:

Վերաքննիչ դատարանը հաշվի չի առել, որ սույն գործում առկա չէ որևէ ապացույց, որը կհաստատեր, որ Ընկերությունն ի վիճակի չէ կատարելու իր դրամական պարտավորությունները: Առկա ապացույցներով ընդամենը հաստատվել է, որ Ընկերությունը չի կատարել իր պայմանագրային պարտավորությունների մի մասը, ինչն ամենևին չի նշանակում, որ Ընկերությունն ընդհանրապես ի վիճակի չէ կատարելու դրանք, առավել ևս, որ կատարված պարտավորությունների ծավալը կազմում է ավելի քան 170.000.000 ՀՀ դրամ:

Այսպիսով, Վերաքննիչ դատարանը Ընկերությանը սնանկ ճանաչելու որոշում է կայացրել՝ դրա համար չունենալով անհրաժեշտ փաստական և իրավական հիմքեր:

Բացի այդ, Վերաքննիչ դատարանն անտեսել է, որ դատական ակտի հիմքում դրված ապացույցները պարզ և հստակ ցույց են տալիս, որ Դատարանն Ընկերության անվճարունակության փաստը քննարկելու փոխարեն ընդամենը պարզել է դիմողի առջև վճարային պարտավորություն ունենալու հանգամանքը, ինչը բավարար չէ իրավաբանական անձին սնանկ ճանաչելու համար:

Ավելին, ներկայումս Ընկերությունն ամբողջությամբ մարել է դիմողի հանդեպ ունեցած իր վճարային պարտավորությունները, այն է՝ վճարել է դիմողի կողմից

սնանկության վարույթ հարուցելու համար հիմք հանդիսացած 23.249.681 ՀՀ դրամը, որն էլ կրկին վկայում է այն մասին, որ բացակայում են Ընկերությանը սնանկ ճանաչելու հիմքերը, այսինքն՝ կողմերի միջև վեճն ըստ էության սպառվել է, որն էլ հիմք է գործի վարույթը կարճելու համար:

Միաժամանակ, ղեկավարվելով ՀՀ դատական օրենսգրքի 15-րդ հոդվածի 3-րդ մասով՝ որպես իրավական փաստարկ պետք է հիմք ընդունել ՀՀ վճարելի դատարանի 21.12.2006 թվականի որոշումը:

Վերագրյալի հիման վրա բողոք բերած անձը պահանջել է բեկանել Վերաքննիչ դատարանի 25.03.2011 թվականի որոշումը և գործի վարույթը կարճել:

3. Վճարելի բողոքի քննության համար նշանակություն ունեցող փաստերը

1. Կազմակերպության և Ընկերության միջև 17.09.2007 թվականին կնքված աշխատանքի կատարման թիվ 66H-07 պայմանագրով Կազմակերպության (այսուհետ՝ Կատարող) պարտավորվել է Ընկերության (այսուհետ՝ Պատվիրատու) համար կատարել որոշակի աշխատանք, իսկ Պատվիրատուն պարտավորվել է վճարել այդ աշխատանքի համար (1-ին հատոր, գ.թ.12):

2. Նշված պայմանագրի 9.3 կետի համաձայն՝ բոլոր վեճերը, որոնք ծագում են սույն պայմանագրից կամ նրա հետ կապված, պետք է նախ և առաջ քննարկվեն Կատարողի և Պատվիրատուի լիազորված ներկայացուցիչների կողմից՝ բարի կամքի համաձայն լուծում գտնելու նպատակով: Եթե սույն պայմանագրի կողմերը ի վիճակի չեն այդ վեճը լուծել որևէ կողմի կողմից մյուս կողմին վեճի մասին գրավոր ծանուցելուց հետո երեսուն (30) օրվա ընթացքում, ապա այդ վեճը պետք է լուծվի իրավասու դատարանի կողմից՝ գործող օրենսդրությանը համապատասխան (1-ին հատոր, գ.թ.12):

3. Վերը նշված պայմանագրի հավելված Գ-ի 4-րդ կետի համաձայն՝ Կատարողը յուրաքանչյուր ամսվա համար կատարված փաստացի հորատման աշխատանքները ներկայացնում է Պատվիրատուին մինչև հաջորդող ամսվա հինգերորդ օրը՝ ներկայացնելով հանձնման-ընդունման ակտը և կից կատարված աշխատանքների արդյունքները: Նույն պայմանագրի հավելված Բ-ի համաձայն՝ Պատվիրատուն պետք է վճարի աշխատանքի համար աշխատանքների ընդունման-հանձնման ակտը ներկայացնելուց հետո հինգ բանկային օրվա ընթացքում (1-ին հատոր, գ.թ.23, 24):

4. Կատարված հորատման աշխատանքների վերաբերյալ 30.09.2007 թվականի թիվ 9, 31.10.2007 թվականի թիվ 11 և 30.11.2007 թվականի թիվ 13 ակտերով վճարման գին է սահմանվել թիվ 9 ակտով՝ 31.985.118 ՀՀ դրամ, թիվ 13 ակտով՝ 45.597.926 ՀՀ դրամ, թիվ 11 ակտով՝ 49.651.755 ՀՀ դրամ (1-ին հատոր, գ.թ. 6-11):

5. Սույն գործով չի վիճարկվել փաստն այն մասին, որ Պատվիրատուի կողմից վճարում է կատարվել նաև 15.05.2008 թվականին՝ 60.000.000 ՀՀ դրամ, իսկ 30.09.2008 թվականին՝ 12.000.000 ՀՀ դրամ: Պատվիրատուի պարտքը 23.09.2010 թվականի դրությամբ կազմում է 23.249.681 ՀՀ դրամ գումար (1-ին հատոր, գ.թ. 3-4):

4. Վճարելի դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը

Քննելով վճարելի բողոքը նշված հիմքի սահմաններում՝ Վճարելի դատարանը գրնում է, որ այն հիմնավոր է մասնակիորեն հերկյալ պարճառարանությանը.

Իրավահարաբերության ծագման ժամանակ գործող «Մանկության մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ պարտապանը կարող է սնանկ

ճանաչվել դատարանի վճռով՝ սեփական նախաձեռնությամբ (կամավոր սնանկության դիմում) կամ պարտատիրոջ պահանջով (հարկադրված սնանկության դիմում), **եթե պարտապանն անվճարունակ է:**

Նույն օրենքի նույն հոդվածի 2-րդ մասի 1-ին կետի «ա» և «բ» ենթակետերի համաձայն՝ պարտապանը դատարանի վճռով կարող է սնանկ ճանաչվել՝ հարկադրված սնանկության դիմումի հիման վրա, եթե թույլ է տվել օրենքով սահմանված նվազագույն աշխատավարձի հինգհարյուրապատիկը գերազանցող **անվիճելի վճարային պարտավորությունների** 30-օրյա կամ ավելի ժամկետով կետանց, և վճռի կայացման պահին նշված կետանցը շարունակվում է (փաստացի անվճարունակություն): Վճարային պարտավորությունն անվիճելի է, եթե պարտապանը չի առարկում դրա դեմ կամ եթե առարկում է հիշյալ պարտավորության դեմ, սակայն՝

ա) վճարային պարտավորությունը ճանաչված է օրինական ուժի մեջ մտած վճռով կամ դատավճռով, և բացակայում է հաշվանցի հնարավորությունը,

բ) պահանջը հիմնված է գրավոր գործարքի վրա և պարտապանը չի ապացուցում, որ տվյալ պահանջի դեմ առարկելու բավարար հիմքեր ունի (ներառյալ՝ պահանջի հաշվանցը):

Նշված հոդվածի վերլուծությունից հետևում է, որ պարտապանը կարող է պարտատիրոջ պահանջով հարկադրված սնանկության դիմումի հիման վրա դատարանի վճռով սնանկ ճանաչվել, **եթե անվճարունակ է, ինչպես նաև այն դեպքում, երբ առկա է օրենքով նախատեսված չափով անվիճելի վճարային պարտավորությունների** 30-օրյա կամ ավելի ժամկետով կետանց:

Հիմք ընդունելով վերոգրյալը՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ անհիմն է բողոք բերած անձի փաստարկն այն մասին, որ պատասխանողը կարող է սնանկ ճանաչվել միայն իր պարտավորությունների կատարման անհնարինության դեպքում:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 345-րդ հոդվածի 2-րդ կետի համաձայն՝ պարտավորությունները ծագում են **պայմանագրից**, վնաս պատճառելու հետևանքով և սույն օրենսգրքում նշված այլ հիմքերից:

Վերոնշյալի հիման վրա Վճռաբեկ դատարանը գտնում է, որ սնանկության գործերով, երբ վճարային պարտավորությունների համար հիմք են պայմանագրերը, էական նշանակություն ունի նաև պայմանագրային պարտավորությունների և դրանց հետ կապված վեճերի լուծման կարգի ուսումնասիրությունը: Այդ հանգամանքը կարևոր է նրանով, որ պայմանագրային պարտավորությունների չկատարումը, կետանցն անձին սնանկ ճանաչելու հիմք են:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 13-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ քաղաքացիական իրավունքների պաշտպանությունը, Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքով սահմանված գործերի ենթակայությանը համապատասխան, իրականացնում է դատարանը: Նույն հոդվածի 2-րդ կետի համաձայն՝ **պայմանագրով կարող է նախատեսվել կողմերի միջև վեճի կարգավորում** մինչև դատարան դիմելը:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 437-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ քաղաքացիները և իրավաբանական անձինք ազատ են պայմանագիր կնքելիս: Պայմանագիր կնքելուն հարկադրել չի թույլատրվում, բացառությամբ այն դեպքերի, երբ պայմանագիր կնքելու պարտականությունը նախատեսված է սույն օրենսգրքով, օրենքով կամ կամովին ստանձնած պարտավորությամբ: Նույն հոդվածի 4-րդ կետի

համաձայն՝ պայմանագրի պայմանները որոշվում են կողմերի հայեցողությամբ, բացի այն դեպքերից, երբ համապատասխան պայմանի բովանդակությունը սահմանված է օրենքով կամ այլ իրավական ակտերով (հոդված 438):

Վերոնշյալ հոդվածների վերլուծությունից հետևում է, որ քաղաքացիական իրավունքների պաշտպանության համար օրենսդիրը, ի սպառնալուսին անձի իրավունքների դատական պաշտպանության սահմանադրական իրավունքի, նախատեսում է դատարան դիմելու հնարավորություն: Միաժամանակ, պայմանագրային հարաբերությունների դեպքում կողմերը որոշակի ազատություն ունեն ոչ միայն պայմանագիր կնքելու, պայմանագրի տեսակները, պայմանագրի պայմանները որոշելու, այլև պայմանագրի հետ կապված վեճերի լուծման կարգը սահմանելու առումով: Դա բխում է գործարարական հարաբերություններում պայմանագրի կողմերի հարաբերությունների գործընկերային բնույթից, ինչպես նաև ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 11-րդ հոդվածի 1-ին կետից, որի համաձայն՝ քաղաքացիները և իրավաբանական անձինք իրենց պատկանող քաղաքացիական իրավունքները՝ ներառյալ **դրանց պաշտպանության իրավունքը**, իրականացնում են իրենց հայեցողությամբ: Այդ նպատակով օրենսդիրը ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 13-րդ հոդվածի 2-րդ կետով կողմերի համար նախատեսել է իրավական հնարավորություն պայմանագրով նախատեսել ծագած վեճերի կարգավորման կարգ սահմանելու հնարավորություն, մինչև դատարան դիմելը:

Նետևաբար, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ օրենսդրության վերոնշյալ դրույթների գործողությունն սպառնալուսին և անձի՝ դատական պաշտպանության սահմանադրական իրավունքի սպառնալուսին հարաբերակցության նպատակով դատարանները պայմանագրային վեճեր քննելիս պետք է պարզեն նաև հետևյալ հարցը՝ արդյոք տվյալ պայմանագրի հետ կապված վեճի լուծման այլ կարգ է սահմանված և արդյոք այն պահպանվել է: Վճռաբեկ դատարանը գտնում է, որ այդ հանգամանքը չի խախտում անձի՝ իր իրավունքների դատական պաշտպանության սահմանադրական իրավունքը, քանի որ տվյալ դեպքն անձին ընդհանրապես չի զրկում իր՝ պայմանագրից ծագած իրավունքների խախտման համար դատարան դիմելու իրավունքից, այլ ուղղակի նախատեսում է դրա իրականացման որոշակի կարգ, որը, ելնելով պայմանագրային հարաբերությունների իմաստից, լիովին համաչափ է անձի սահմանադրական իրավունքների համատեքստում:

Սույն գործի փաստերի համաձայն՝ Կազմակերպության և Ընկերության միջև 17.09.2007 թվականին կնքված աշխատանքի կատարման թիվ 66H-07 պայմանագրի 9.3 կետի համաձայն՝ բոլոր վեճերը, որոնք ծագում են սույն պայմանագրից կամ նրա հետ կապված, պետք է նախ և առաջ քննարկվեն Կատարողի և Պատվիրատուի լիազորված ներկայացուցիչների կողմից՝ բարի կամքի համաձայն լուծում գտնելու նպատակով: Եթե սույն պայմանագրի կողմերն ի վիճակի չեն այդ վեճը լուծել որևէ կողմի կողմից մյուս կողմին վեճի մասին գրավոր ծանուցելուց հետո երեսուն (30) օրվա ընթացքում, ապա այդ վեճը պետք է լուծվի իրավասու դատարանի կողմից՝ գործող օրենսդրությանը համապատասխան:

Վերաքննիչ դատարանը, անդրադառնալով բողոքաբերի այն պնդմանը, թե դիմողը վճարման կապակցությամբ Ընկերությանը երբևէ գրավոր ծանուցում չի տվել և ենթադրյալ վեճը լուծելու որևէ փորձ չի ձեռնարկել, հետևաբար վերջինիս նման գործելակերպը վկայում է այն մասին, որ կամ պատասխանողի հետ որևէ վեճ չի ունեցել, կամ ի սկզբանե նպատակ չի ունեցել լուծում գտնել բարի կամքի

համաձայն, արձանագրել է, որ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 3-րդ հոդվածի 2-րդ կետից և 11-րդ հոդվածի 1-ին կետից բխում է, որ անձն ինքն իր հայեցողությամբ է որոշում իր իրավունքների պաշտպանության եղանակը և ձևը, հետևաբար գումարի բռնագանձման պահանջ ներկայացնելու փոխարեն սնանկ ձանաչելու պահանջի ներկայացումը դեռևս չի կարող վկայել այն մասին, որ կոնկրետ անձը գործում է այլ անձին վնաս պատճառելու մտադրությամբ:

Մինչդեռ, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Վերաքննիչ դատարանը, ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 3-րդ հոդվածի 2-րդ կետով կողմերի համար նախատեսված իրավական հնարավորությունը, այն է՝ պայմանագրից բխող վեճերի կարգավորման կարգ սահմանելը, գնահատելով որպես սնանկ ձանաչելու պահանջի ներկայացման սահմանափակում, սխալ է մեկնաբանել այն: Մասնավորապես, հիմք ընդունելով վերոնշյալ իրավական հարցի վերաբերյալ վերևում ներկայացված մեկնաբանությունները՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ ՀՀ քաղաքացիական օրենսգրքով այդ հնարավորությունն ամենևին չի սահմանափակում պարտապանի՝ սնանկ ձանաչելու պահանջի ներկայացման իրավունքը և այն չի ստորադասում գումարի բռնագանձման պահանջ ներկայացնելու իրավունքին: Այսինքն՝ նշված դեպքերից յուրաքանչյուրում կողմն ազատված չէ պայմանագրով նախատեսված պարտականությունը կատարելուց:

Հետևաբար, հիմք ընդունելով վերոնշյալը, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ սույն գործով պետք է պարզվեր վեճի լուծման՝ պայմանագրով նախատեսված կարգը պահպանված լինելու հանգամանքը, որը Դատարանը չի կատարել, իսկ Վերաքննիչ դատարանը մերժել է դրա վերաբերյալ բողոքի փաստարկները՝ սխալ մեկնաբանելով ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 3-րդ հոդվածի 2-րդ կետը և 11-րդ հոդվածի 1-ին կետը:

Այսպիսով, վճռաբեկ բողոքի հիմքի առկայությունը Վճռաբեկ դատարանը դիտում է բավարար՝ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 227-րդ և 228-րդ հոդվածների ուժով Վերաքննիչ դատարանի որոշումը բեկանելու համար:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 240-241²-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

ՈՐՈՇԵՑ

1. Վճռաբեկ բողոքը բավարարել մասնակիորեն: Բեկանել ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 25.03.2011 թվականի որոշումը և գործն ուղարկել Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ստյանի դատարան՝ նոր քննության:

2. Դատական ծախսերի բաշխման հարցին անդրադառնալ գործի նոր քննության ընթացքում:

3. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

*ՆԱԽԱԳԱՀՈՂ՝ արտրագրություն
ԴԱՏԱՎՈՐՆԵՐ՝ արտրագրություններ*

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական Քաղաքացիական գործ թիվ ԵԱԲԴ/1494/02/10
դատարանի որոշում 2011թ.
Քաղաքացիական գործ թիվ ԵԱԲԴ/1494/02/10
Նախագահող դատավոր՝ Ս. Սահակյան
Դատավորներ՝ Կ. Հակոբյան
Տ. Նազարյան

ՈՐՈՇՈՒՄ ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քաղաքացիական
և վարչական պալատը (այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

Նախագահությամբ

մասնակցությամբ դատավորներ

Ե. ԽՈՒՆԴԿՎԱՐՅԱՆԻ

Մ. ԴՐՄԵՅԱՆԻ

Վ. ԱԲԵԼՅԱՆԻ

Ս. ԱՆՏՈՆՅԱՆԻ

Վ. ԱՎԱՆԵՍՅԱՆԻ

Ա. ԲԱՐՍԵՂՅԱՆԻ

Գ. ՀԱԿՈՔՅԱՆԻ

Է. ՀԱՅՐԻՅԱՆԻ

Տ. ՊԵՏՐՈՍՅԱՆԻ

Ե. ՍՈՂՈՄՈՆՅԱՆԻ

2011 թվականի հոկտեմբերի 14-ին
դռնբաց դատական նիստում, քննելով Ստիխտինգ Ադմինիստրատենկանտոր
Ֆայնենշլ Փերֆորմանս Հոլդինգս հիմնադրամի (այսուհետ՝ Հիմնադրամ), «Լուքսթոնա
Լիմիթեդ» ընկերության, «Յուկոս Ինթերնեյշնլ UK B.V.» ընկերության և Արմեն
Միքայելյանի վճռաբեկ բողոքը ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 10.06.2011
թվականի որոշման դեմ՝ ըստ Հիմնադրամի, «Լուքսթոնա Լիմիթեդ» ընկերության,
«Յուկոս Ինթերնեյշնլ UK B.V.» ընկերության և Արմեն Միքայելյանի հայցի ընդդեմ
ՀՀ արդարադատության նախարարության իրավաբանական անձանց պետական
ոեգիստրի գործակալության Արաբկիրի տարածքային բաժնի (այսուհետ՝ Պետական
ոեգիստր), «Նեֆտեննայա կոմպանիա «Ռոսնեֆտ»» ԲԲԸ-ի՝ առաջին գործարքի
անվավերության հետևանքներ կիրառելու պահանջի մասին,

ՊԱՐՁԵՑ

1. Գործի դատավարական նախապատմությունը

Դիմելով դատարան՝ Հիմնադրամը, «Լուսաթոնա Լիմիթեդ» ընկերությունը, «Յուկոս Ինթերնեյշնլ UK B.V.» ընկերությունը և Արմեն Միքայելյանը պահանջել են կիրառել առոչինչ գործարքի անվավերության հետևանքներ՝

1) ՍՊԸ-ի մասնակիցների գրանցման քարտում «մասնակցի անվանումը» պայմանավորված վերականգնել «Նեֆտյանայա կոմպանիա «Յուկոս» ԲԲԸ անվանումը.

2) Պետական գրանցման փաստաթղթերում վերականգնել Արմեն Միքայելյանին «Յուկոս ՄՆԳ Ինվեստմենտ» ՍՊԸ-ի գլխավոր տնօրենի պաշտոնում:

Երևանի Արաբկիր և Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի (դատավոր Ս. Ղազարյան) (այսուհետ՝ Դատարան) 23.02.2011 թվականի վճռով հայցը մերժվել է:

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի (այսուհետ՝ Վերաքննիչ դատարան) 10.06.2011 թվականի որոշմամբ Հիմնադրամի, «Լուսաթոնա Լիմիթեդ» ընկերության, «Յուկոս Ինթերնեյշնլ UK B.V.» ընկերության և Արմեն Միքայելյանի վերաքննիչ բողոքը մերժվել է, և Դատարանի 23.02.2011 թվականի վճիռը թողնվել է օրինական ուժի մեջ:

Սույն գործով վճռաբեկ բողոք են ներկայացրել Հիմնադրամը, «Լուսաթոնա Լիմիթեդ» ընկերությունը, «Յուկոս Ինթերնեյշնլ UK B.V.» ընկերությունը և Արմեն Միքայելյանը:

Վճռաբեկ բողոքի պատասխան է ներկայացրել «Նեֆտենայա կոմպանիա «Ռոսնեֆտ»» ԲԲԸ-ն:

2. Վճռաբեկ բողոքի հիմքերը, փաստարկները և պահանջը

Սույն վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքերի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

Վերաքննիչ դատարանը խախտել է ՀՀ Սահմանադրության 3-րդ, 18-րդ, 19-րդ հոդվածները, «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի 6-րդ, 13-րդ հոդվածները, չի կիրառել ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 303-րդ հոդվածի 3-րդ կետը, որը պետք է կիրառեր, կիրառել է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 125-րդ հոդվածը, որը չպետք է կիրառեր, խախտել է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 2-րդ հոդվածը, 28-րդ հոդվածի 1-ին կետի 3-րդ ենթակետը, 48-րդ, 49-րդ, 53-րդ, 122-րդ հոդվածները:

Բողոք քերած անձինք նշված պնդումները պարզապես անտեսել են հետևյալ փաստարկներով.

Վերաքննիչ դատարանը հաշվի չի առել այն հանգամանքը, որ Դատարանի կողմից արագացված դատաքննության կիրառումը հիմնավորված չէ: Արագացված դատաքննության կիրառումով Դատարանը չի կատարել գործի օբյեկտիվ և բազմակողմանի քննություն, հնարավորություն չի տվել հայցվորներին ներկայացնել և դատական նիստի ընթացքում հիմնավորել իրենց դիրքորոշումները, որի արդյունքում սխալ է մեկնաբանել և կիրառել դատավարական իրավունքի մի շարք նորմեր, որով էլ խախտվել են հայցվորների արդար դատաքննության իրավունքը և կայացվել է սխալ դատական ակտ: Դատարանը հնարավորություն չի տվել հայցվորներին ներկայացնել հայցի հիմքն ու առարկան: Դատարանն առանց որևէ հիմքի, առանց

ուսումնասիրելու գործում առկա փաստաթղթերը, որոշում է կայացրել արագացված դատաքննության կիրառման մասին և վճռում հղում կատարել մինչև որոշումը չուսումնասիրված փաստաթղթերին: Փաստորեն, Դատարանը հայցվորներին զրկել է դատական նիստում իրենց կողմից ներկայացված ապացույցները հետազոտելու և դրա արդյունքում իրենց փաստարկները հիմնավորելու հնարավորությունից: Վճռում Դատարանը չի անդրադարձել հայցվորների կողմից բերված և վերջիններիս շահագրգռվածությունը հիմնավորող որևէ փաստի: Այնինչ, լրացուցիչ բացատրություններով հայցվորներն ըստ էության ավելի մանրամասն և հատկապես ՌԴ իրավակիրատ պրակտիկայի վկայակոչմամբ հիմնավորում են սույն գործով իրենց շահագրգռվածության և պատշաճ հայցվոր լինելու հանգամանքը: Ինչպես Դատարանը, այնպես էլ Վերաքննիչ դատարանը պարզապես խուսափել են կատարել իրենց հիմնական պարտականությունը՝ ապահովել արդարադատություն և դատական պաշտպանություն, և հրաժարվել են ուսումնասիրել բողոք բերողների փաստարկներն ըստ էության՝ հաշվի առնելով, որ առուվաճառքի պայմանագիրն առոչինչ էր՝ համաձայն ՌԴ քաղաքացիական օրենսգրքի 169-րդ հոդվածի:

Վերաքննիչ դատարանի կազմում ընդգրկված դատավորները չեն ընթերցել որոշումը, սակայն այն հաստատել են իրենց ստորագրությամբ և կնիքներով: Այդ մասին է վկայում Վերաքննիչ դատարանի որոշման 24-րդ էջի 3-րդ պարբերության սկզբից մինչև 25-րդ էջի 3-րդ պարբերության սկզբի շարադրանքի և 25-րդ էջի 3-րդ պարբերության սկզբից մինչև 26-րդ էջի 3-րդ պարբերության սկզբի շարադրանքի կրկնությունը:

Վերաքննիչ դատարանի որոշումը հակասում է ՀՀ վճռաբեկ դատարանի 29.10.2010 թվականի թիվ ՎԴ/4342/05/09 և 10.11.2010 թվականի թիվ ՎԴ/4680/05/09 որոշումներին:

Վճռաբեկ բողոք բերած անձինք վերը նշված հիմքով պահանջել են բեկանել Վերաքննիչ դատարանի 10.06.2011 թվականի որոշումը և գործն ուղարկել նոր քննության:

2.1. Վճռաբեկ բողոքի պատասխանի հիմնավորումները

Բողոքաբերները, մինչև սույն բողոքը, տվյալ գործի շրջանակներում օգտագործել են իրենց փաստարկները ներկայացնելու բազմաթիվ հնարավորությունները: Նրանք պնդում են, որ իրենց խոչընդոտել են փաստարկներն արդյունավետ ներկայացնել, ինչը չի համապատասխանում իրականությանը: Անվիճելի է այն, որ մինչև տվյալ բողոքը ներկայացնելը, բողոքաբերները միննսույն գործի շրջանակներում ներկայացրել են չորս մրցակցային փաստաթուղթ՝ հայց, հայցի վերաբերյալ լրացուցիչ բացատրություններ, վերաքննիչ բողոք և վերաքննիչ բողոքի վերաբերյալ լրացուցիչ բացատրություններ, որոնցում իրենց պնդմամբ հիմնավորում են շահագրգռվածության առկայության փաստը: Ընթացակարգային խախտումները, որոնք բողոքաբերների կարծիքով թույլ են տրվել գործի քննության ընթացքում, չեն կարող վերջնական դատական ակտերի բեկանման հիմք հանդիսանալ, քանի որ նույնիսկ եթե այդ խախտումները տեղի ունեցած լինեին, ինչի հետ պատասխանողը համաձայն չէ, դրանք չեն հանգեցրել և չէին կարող հանգեցնել գործի սխալ լուծմանը: Դատական քննությունը եղել է թափանցիկ և արդար, անց է կացվել օրենքի, ՀՀ Սահմանադրության, «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական

կոնվենցիայի պահանջներին համապատասխան: Դատարանը հիմնավոր է կիրառել արագացված դատաքննությանը վերաբերող օրենքի կանոնը: Այն դեպքում, երբ դատարանը գտնում է, որ հայցվորները գործով չունեն օրենքով ձանաչվող իրավական շահագրգռվածություն, դրանից տրամաբանորեն հետևում է, որ հայցն ակնհայտ անհիմն է, և այդ դեպքում օրենքը պահանջում է անցնել արագացված դատաքննության:

3. Վճարել բողոքի քննության համար նշանակություն ունեցող վաստերը

1. 04.08.2006 թվականին Մոսկվա քաղաքի արքիտրաժային դատարանն ընդունել է որոշում, որի համաձայն՝ «Նեֆոյանայա կոմպանիա «Յուկոս» ԲԲԸ-ն ձանաչվել է սնանկ, նրա նկատմամբ սահմանվել է մրցութային վարույթ՝ երկու տարի ժամկետով, մրցութի կառավարիչ է նշանակվել Է. Ռեբզոնը /1-ին հատոր, գ.թ. 57-59/:

2. Վերոհիշյալ մրցութային վարույթի իրականացման շրջանակներում 13.08.2007 թվականին «Նեֆտեննայա կոմպանիա «Ռոսնեֆտ» ԲԲԸ-ի և «Նեֆտեննայա կոմպանիա «Յուկոս» ԲԲԸ-ի մրցութային կառավարիչ Է. Ռեբզոնի միջև կնքվել է գույքի առուվաճառքի պայմանագիր, համաձայն որի՝ «Յուկոս ՄՆԳ Ինվեստմենթ» ՍՊԸ-ի կանոնադրական կապիտալում «Նեֆոյանայա կոմպանիա «Յուկոս» ԲԲԸ-ին պատկանող 100% բաժնեմասի նկատմամբ սեփականության իրավունքը փոխանցվել է «Նեֆտեննայա կոմպանիա «Ռոսնեֆտ» ԲԲԸ-ին /1-ին հատոր, գ.թ. 48-56/:

3. Թիվ ԵԶԳ/0002/02/09 քաղաքացիական գործով 09.07.2009 թվականին Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանը /դատավոր Կ.Պետրոսյան/ մերժել է «Յուկոս ՄՆԳ Ինվեստմենթ» ՍՊԸ-ի հայցն ընդդեմ «Նեֆտեննայա կոմպանիա «Ռոսնեֆտ» ԲԲԸ-ի՝ 13.08.2007 թվականի «Նեֆտեննայա կոմպանիա «Ռոսնեֆտ» ԲԲԸ-ի և «Նեֆտեննայա կոմպանիա «Յուկոս» ԲԲԸ-ի մրցութային կառավարիչ Է. Ռեբզոնի միջև կնքված N ԿՌԻ/ԿՊ/18/0001107/2863 գույքի առուվաճառքի պայմանագիրն անվավեր ձանաչելու պահանջով: Նշված վճիռը մտել է օրինական ուժի մեջ:

4. Վճարել դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումները.

Քննելով վճարել բողոքը վերը նշված հիմքի սահմաններում Վճարել դատարանը գտնում է, որ վճարել բողոքն անհիմն է և ենթակա չէ բավարարման հերկյալ պայմառաբանությանը.

Հայցվորների մոտ շահագրգռվածության վերաբերյալ հիմքով վճարել բողոքն անհիմն է հետևյալ պատճառաբանությամբ.

Դատարանը և Վերաքննիչ դատարանը մանրամասն ուսումնասիրել են և ճիշտ են գնահատել տվյալ հայցը հարուցելու մեջ հայցվորներից (բողոք բերած անձանց) յուրաքանչյուրի շահագրգռվածության հարցը:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 303-րդ և դրան համընկնող՝ ՌԴ քաղաքացիական օրենսգրքի 166-րդ հոդվածների համաձայն՝ առոչինչ գործարքի անվավերության հետևանքների պահանջ կարող է ներկայացնել յուրաքանչյուր շահագրգիռ անձ:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 2-րդ հոդվածի համաձայն՝ շահագրգիռ անձն իրավունք ունի նույն օրենսգրքով սահմանված կարգով

դիմել դատարան՝ իր իրավունքների, ազատությունների և օրինական շահերի պաշտպանության համար:

Ենելով նշված իրավական նորմերից՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ շահագրգռվածությունը դատարան ներկայացված որևէ պահանջի քննության նախապայման է, ուստի դատարանը պետք է պարզի բոլոր քննվող գործերով հայցվորի շահագրգռվածության հարցը: Դատարան դիմելով՝ հայցվորը պետք է հիմնավորի, իսկ դատարանը՝ պարզի:

1. Հայցվորի որ իրավունքներն են իրականում խախտվել և ինչ անբարենպաստ հետևանքների են հանգեցրել այդ խախտումները,

2. Ներկայացված հայցի նպատակը արդյոք իրավունքների և օրինական շահերի պաշտպանությունն ու վերականգնումն է, և հնարավոր է արդյոք ընտրված միջոցով պաշտպանել կամ վերականգնել հայցվորի իրավունքները (կամ, համապատասխան դեպքերում, նրան պատճառված վնասը փոխհատուցել):

Հայցվորն իրավունք ունի դատարան դիմելու իր իրավունքների և օրինական շահերի պաշտպանության և վերականգնման համար:

«Լուսթթոնա Լիմիթեդ» ընկերության մասով առաջին ատյանի և վերաքննիչ դատարանները հանգել են այդ անձի շահագրգռվածության բացակայության վերաբերյալ ճիշտ եզրակացության, քանի որ լուծարվող ընկերության գույքը կամ դրա արժեքի մի մասը ստանալու բաժնետիրոջ իրավունքը կարող է իրականացվել մինչև ընկերության լուծարման պահը, այդ թվում սնանկության կարգով:

Տվյալ գործով կողմերը չեն վիճարկել այն փաստը, որ «Նեֆտյանայա կոմպանիա «Յուկոս» ԲԲԸ-ն լուծարվել է սնանկության կարգով՝ ք. Մոսկվայի Արբիտրաժային դատարանի որոշմամբ՝ ընկերության պարտատերերի պահանջների ամբողջական բավարարման համար դրա գույքի անբավարարության հիմքով, և այդ մասին համապատասխան գրառումը կատարվել է իրավաբանական անձանց համապատասխան պետական ռեեստրում: Դատարանի որոշմամբ պարտապան ընկերության լուծարումը սնանկության կարգով նշանակում է, որ այդ ընկերության գույքը չի բավարարել պարտատերերի պահանջների ամբողջական բավարարման համար, ինչը բացառում է պարտատերերի հետ հաշվարկից հետո ընկերության գույքի մի մասի ստացումը բաժնետերերի կողմից՝ այդպիսի գույքի բացակայության պատճառով:

Առաջին ատյանի և վերաքննիչ դատարանները, ճիշտ մեկնաբանելով «Բաժնետիրական ընկերությունների մասին» ՌԴ դաշնային օրենքի 23-րդ հոդվածի և դրան համապատասխանող «Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքի 29-րդ հոդվածի բովանդակությունը, հանգել են հիմնավոր եզրակացության առ այն, որ բաժնետերերի պահանջների բավարարումը կատարվում է լուծարման գործընթացի շրջանակներում և մինչև դրա ավարտը՝ բոլոր պարտատերերի պահանջների բավարարումից հետո մնացած գույքի հաշվին:

Վճռաբեկ դատարանն անհիմն է գտնում «Լուսթթոնա Լիմիթեդ» ընկերության այն փաստարկը, որով հղում է կատարվում ՌԴ Հյուսիս-Կովկասյան Դաշնային արբիտրաժային դատարանի 18.03.2008 թվականի F08-831/08 որոշմանը՝ որպես այդ անձի շահագրգռվածության հիմնավորում: Այդ կապակցությամբ հիմնավոր է Վերաքննիչ դատարանի պատճառաբանությունն առ այն, որ ռուսական դատարանի այդ որոշման մեջ ներկայացված վեճի փաստական հանգամանքները, ինչպես նաև ներկայացված հայցադիմումներն էականորեն տարբերվում են սույն գործի

փաստական հանգամանքներից և ներկայացված պահանջներից: Մասնավորապես, ռուսական դատարանի նշված որոշման մեջ խոսքը գնում է մի գույքի մասին, որը ներառված չի եղել լուծարվող ընկերության գույքի կազմի մեջ, որը ենթակա էր բաշխման նրա մասնակիցների միջև, մինչդեռ սույն վեճում «Յուկոս ՄՆԳ Ինվեստմենթ» ՍՊԸ-ի կանոնադրական կապիտալի 100% բաժնեմասը ներառված է եղել լուծարվող «Նեֆտյանայա կոմպանիա «Յուկոս» ԲԲԸ-ի գույքի կազմի մեջ և վաճառվել է աճուրդով՝ վերջինիս սնանկության գործընթացում:

Բացի այդ, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ նշված գործով ռուսական դատարանը քննել է հայցապահանջ՝ լուծարված ընկերության չբաշխված գույքի նկատմամբ հայցվորների սեփականության իրավունքը ձանաչելու վերաբերյալ, մինչդեռ սույն գործով ներկայացվել է առոչինչ գործարքի անվավերության հետևանքներ կիրառելու պահանջ:

«Յուկոս Ինվեսթմենթս UK B.V.» ընկերության վերաբերյալ նույնպես առաջին ատյանի և վերաքննիչ դատարանները հանգել են այդ անձի շահագրգռվածության բացակայության մասին ճիշտ եզրակացության, քանի որ պահանջը հիմնված է Լոնդոնի միջազգային արբիտրաժային դատարանի որոշման վրա և ուղղված է արդեն լուծարված «Նեֆտյանայա կոմպանիա «Յուկոս» ԲԲԸ-ից գումարի բռնագանձմանը, սակայն ՌԳ քաղաքացիական օրենսգրքի 419-րդ և դրան համապատասխանող ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 435-րդ հոդվածների ուժով իրավաբանական անձի պարտավորությունները դադարում են վերջինիս լուծարմամբ:

Ընդ որում, Վերաքննիչ դատարանը հիմնավոր կերպով է մերժել անգլիական իրավունքի կիրառելիության վերաբերյալ «Յուկոս Ինվեսթմենթս UK B.V.» ընկերության փաստարկը՝ նշելով, որ պայմանագրի նկատմամբ կիրառվող անգլիական իրավունքը կարգավորում է պայմանագրի կողմերի միջև հարաբերությունները: Մինչդեռ պայմանագրի կողմի իրավունակության ծագումն ու դադարումը, այդ թվում պարտավորություններ կրելու՝ դրանց համար պատասխանատու լինելու ունակությունը, կարգավորվում է իրավաբանական անձի անձնական օրենքով (ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1272-րդ հոդված), որը «Նեֆտյանայա կոմպանիա «Յուկոս» ԲԲԸ-ի դեպքում Ռուսաստանի Դաշնության օրենքն է: ՌԳ քաղաքացիական օրենսգրքի 419-րդ հոդվածի համաձայն՝ իրավաբանական անձի լուծարմամբ դադարում են դրա պարտավորությունները:

Վերաքննիչ դատարանը պատճառաբանված կերպով է անհիմն համարել «Յուկոս Ինվեսթմենթս UK B.V.» ընկերության փաստարկները, որոնք բխում են ՌԳ Սահմանադրական դատարանի 09.11.2010 թվականի №1435-Ն/Յ որոշումից՝ որպես իր շահագրգռվածության հիմնավորում: Վերաքննիչ դատարանը վկայակոչել է գործերի փաստական հանգամանքների ակնհայտ տարբերությունը՝ այդ գործով լուծարվող ընկերության գույքն օտարվել է երրորդ անձանց մինչև ընկերության սնանկ ձանաչվելը, այլ ոչ թե սնանկության գործընթացում, ինչպես տեղի է ունեցել սույն գործով: Ավելին, նշված գործով խոսքը գնում է պարտատիրոջ այնպիսի պահանջի մասին, որը ներկայացվել է և ձանաչվել սնանկության շրջանակներում, մինչդեռ սույն գործով «Յուկոս Ինվեսթմենթս UK B.V.» ընկերության նշված պահանջը չի ձանաչվել դատարանի կողմից ՌԳ-ում սնանկության գործընթացի շրջանակներում: Այդ մասին նշում է հենց հայցվորը՝ հաստատելով, որ Լոնդոնի արբիտրաժային դատարանի որոշման վրա հիմնված պահանջը Միրավել ընկերությունը ներկայացրել է սնանկության շրջանակներում, սակայն դատարանն այն չի ձանաչել, որից հետո պահանջի

իրավունքը Սիրավելը զիջել է «Յուկոս Ինթերնեյշնլ UK B.V.» ընկերությանը:

Հիմնադրամի մատվ առաջին ատյանի և վերաքննիչ դատարանները նույնպես հիմնավոր մատնանշել են նշված անձի մոտ շահագրգռվածության բացակայությունը՝ ընդգծելով, որ քանի որ ոչ «Նեֆոյանայա կոմպանիա «Յուկոս» ԲԲԸ-ի նախկին բաժնետերերը (Լյուքսեմբուրգ Լիմիթեդ), ոչ պարտատերերը (Յուկոս Ինթերնեյշնլ) չեն համարվում առոչինչ գործարքի անվավերության հետևանքներ կիրառելու պահանջով հայց ներկայացնելու համար շահագրգռված, այսպես Հիմնադրամը չի կարող ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 2-րդ հոդվածի իմաստով շահագրգռ համարվել այն դեպքում, երբ այն անձինք, ում շահերի պաշտպանության համար Հիմնադրամը գործում է (նախկին բաժնետերեր և պարտատերեր), դատարանի կողմից նույն իրավական նորմի ուժով ձանաչվել են շահագրգռվածություն չունեցող:

Բացի այդ, պնդելով լուծարված «Նեֆոյանայա կոմպանիա «Յուկոս» ԲԲԸ-ի բաժնետերերի և պարտատերերի անունից հանդես գալու իր իրավունքը, Հիմնադրամը չի ներկայացրել որևէ բացատրություն և հաստատում առ այն, թե հատկապես ովքեր են այդ անձինք, գործարքի հետ կապված ինչպես և ինչով են խախտվել նրանց իրավունքները, հատկապես ինչպես այդ իրավունքները հնարավոր կլինի վերականգնել հայցի բավարարման դեպքում, պնդում են արդյոք նրանք հայցը ներկայացված առարկայով և հիմքով, համաձայն են արդյոք, որ Հիմնադրամը պաշտպանի իրենց իրավունքները:

Արմեն Միքայելյանի վերաբերյալ առաջին ատյանի և վերաքննիչ դատարաններն արդարացիորեն նշել են, որ նրա իրավունքները, ներառյալ աշխատանքային իրավունքները, չեն շոշափվել իր կողմից վիճարկվող գործարքով, քանի որ «Յուկոս ՄՆԳ Ինվեստմենթ» ՍՊԸ-ի տնօրենի լիազորությունները դադարեցվել են ոչ թե գործարքով, այլ ընկերության միակ մասնակցի համապատասխան որոշմամբ և դրա հիման վրա իրավաբանական անձանց պետական ռեգիստրում կատարված համապատասխան գրանցմամբ: Ընդ որում, Արմեն Միքայելյանի լիազորությունները կարող էր դադարեցնել և նախկին մասնակիցը՝ «Նեֆոյանայա կոմպանիա «Յուկոս» ԲԲԸ-ն, առանց վիճարկվող գործարքի հետ որևէ առնչության, իսկ գործարքի կատարումից հետո նոր մասնակիցը՝ «Նեֆտեննայա կոմպանիա «Ռոսնեֆտ»» ԲԲԸ-ն կարող էր թե դադարեցնել, թե չդադարեցնել Արմեն Միքայելյանի լիազորությունները:

«Յուկոս ՄՆԳ Ինվեստմենթ» ՍՊԸ-ի մասնակցի որոշումը՝ Արմեն Միքայելյանի՝ որպես տնօրենի լիազորությունները դադարեցնելու մասին, ոչ ոքի կողմից չի վիճարկվել, իսկ նրա կողմից ներկայացված պահանջը՝ պետական ռեգիստրում գրանցման անվավեր ձանաչելու մասին, մերժվել է ՀՀ վարչական դատարանի կողմից թիվ ՎԴ/4342/05/09 և թիվ ՎԴ/4680/05/09 գործերով, ինչը հաստատվում է գործի նյութերում առկա դատական ակտերով:

Այսպիսով, Արմեն Միքայելյանի կողմից սույն գործով բերված հիմնավորումները, որոնցով նա կարող էր ձանաչվել առոչինչ գործարքի անվավերության հետևանքներ կիրառելու մասին հայց ներկայացնելու մեջ իրավական շահագրգռվածություն ունեցող անձ, անհիմն են:

Հաշվի առնելով վերոշարադրյալը՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ առաջին ատյանի և վերաքննիչ դատարանները ճիշտ են պարզել գործով ապացուցման առարկան՝ որոշելով, որ դրա շրջանակում նախևառաջ ներառված է հայցվորների՝ տվյալ պահանջով հայց հարուցելու մեջ շահագրգռվածության առկայության

հարցը, և ճիշտ են սահմանել գործով վերաբերելի հանգամանքների շրջանակը՝ դրա մեջ ներառելով հայցվորների կողմից ներկայացված այն հանգամանքները, որոնք ազդում են սույն հայցը պնդելու համար հայցվորների շահագրգռվածության առկայության հաստատման վրա: Այնուհետև դատարանները ճիշտ են գնահատել այդ հանգամանքները՝ կատարելով հիմնավորված եզրահանգում հայցվորներից յուրաքանչյուրի մոտ շահագրգռվածության բացակայության վերաբերյալ:

Նման հանգամանքներում առաջին ատյանի և վերաքննիչ դատարանների կողմից հայցվորների շահագրգռվածության բացակայության բացահայտումը բավարար իրավական հիմք է հայցն ակնհայտ անհիմն համարելու և մերժելու համար, որի հետևանքով Վերաքննիչ դատարանի կողմից այլ հարցերի քննարկումը, ներառյալ գործարքի առոչնչության հիմքերի և դրա անվավերության հետևանքների կիրառման վերաբերյալ անհրաժեշտ չէր:

Վճռաբեկ դատարանն անհիմն է համարում փաստարկն առ այն, որ արագացված դատաքննության կիրառմամբ առաջին ատյանի դատարանը հայցվորներին զրկել է հավասարության և մրցակցության պայմաններում արդար դատաքննության իրավունքից, քանի որ արագացված դատաքննությունն օրենքով նախատեսված դեպքերում անձանց անորոշ շրջանակի նկատմամբ կիրառելու համար ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքով նախատեսված դատավարական ինստիտուտ է և որպես հետևանք, ոչ մի կերպ ինքնին չի կարող խանգարել արդար դատաքննության և կողմերի այլ իրավունքների ապահովմանը:

Վճռաբեկ դատարանն արձանագրում է նաև, որ Մարդու իրավունքների եվրոպական դատարանն իր նախադեպային որոշումներում բազմիցս նշել է, որ առանց բանավոր քննության դատաքննությունը չի խախտում կողմերի դատական պաշտպանության իրավունքն այն դեպքերում, երբ վեճի լուծման համար դատարանին անհրաժեշտ է պարզել հարցերի սահմանափակ շրջանակ, և այդ հարցերը իրավունքի հարցեր են (տես՝ Allan Jacobsson vs. Sweden, դիմում թիվ 8/1997/792/993, 19.02.1998, §49):

Սույն գործով առաջին ատյանի դատարանը հայցադիմում, իսկ այնուհետև դրա պատասխանը ստանալուց հետո բավականին ժամանակ է ունեցել դրանց բովանդակությանը ծանոթանալու և հայցի և պատասխանի բոլոր փաստարկներին և հիմնավորումներին պատշաճ իրավական գնահատական տալու համար: Այնուհետև դատարանը կողմերի մասնակցությամբ դատական նիստ է հրավիրել և անցկացրել, որի ընթացքում լուծել է կողմերի ներկայացված միջնորդությունները և լրացուցիչ հարցմամբ համոզվել, որ հայցվորները հայցի առարկան կամ հիմքը չեն փոփոխում, որից հետո միայն անցել է արագացված դատաքննության, և մերժել է հայցը հայցվորների մոտ շահագրգռվածության բացակայության հիմքով, որը իրավունքի հարց է, այլ ոչ թե փաստի:

Վճռաբեկ դատարանը նշում է, որ կողմերի հավասարության և մրցակցության սկզբունքները, որոնք արդար դատաքննության իրավունքի կարևոր բաղադրատարր են, պահանջում են, որպեսզի դատավարության կողմերն ունենան հավասար հնարավորություններ ներկայացնելու և պաշտպանելու իրենց իրավունքներն ու օրինական շահերը: Դա նշանակում է, որ կողմերի հավասարության սկզբունքը կարող է խախտվել միայն այն դեպքում, երբ կողմերից մեկին ավելի բարենպաստ հնարավորություններ են տրամադրվել ի վնաս կամ ի հաշիվ մյուս կողմի:

Տվյալ դեպքում բողոք բերած անձը չի ներկայացրել որևէ փաստարկ, որով նվազ

բարենպաստ հնարավորություններ են ստեղծվել՝ իրենց իրավունքները և շահերը պաշտպանելու համար:

Բողոք ներկայացրած անձանց հիմնավորումներն այն մասին, որ Դատարանը չի հետազոտել ներկայացված ապացույցները, այդ թվում չի ներգրավել վկաներին, հերքվում են առաջին ատյանի դատարանի վճռի պատճառաբանությամբ առ այն, որ հայցվորների ներկայացրած ապացույցները Դատարանի կողմից ձանաչվել են ոչ վերաբերելի, քանի որ դրանք ուղղված չեն ապացուցելու հայցվորներից որևէ մեկի գործով շահագրգիռ լինելու հանգամանքը: Նման հանգամանքներում, երբ դատարանը հայցի ակնհայտ անհիմն լինելու մասին եզրահանգման է եկել, առաջին ատյանի դատարանն այլևս չէր կարող ուսումնասիրել ոչ պատշաճ հայցվորի կողմից ներկայացված ապացույցները, որոնք ուղղված են հաստատելու դատարանի կողմից ոչ վերաբերելի ձանաչված փաստերը:

Վճռաբեկ բողոքի մնացած, այդ թվում՝ որոշման տպագիր տեքստում տեղ գտած տեխնիկական թերությունների վերաբերյալ հիմնավորումները չեն ազդել գործի ելքի և կայացված դատական ակտերի իրավական հիմնավորվածության ու օրինականության գնահատման վրա, հետևաբար ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 228-րդ հոդվածի 1-ին կետի հիմքով անհիմն են:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 240-241²-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

ՈՐՈՇԵՑ

1. Վճռաբեկ բողոքը մերժել: ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 10.06.2011 թվականի որոշումը թողնել օրինական ուժի մեջ:

2. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

*ՆԱԽԱԳԱՀՈՂ՝ սպորտագրություն
ԴԱՏԱՎՈՐՆԵՐ՝ սպորտագրություններ*

ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՍՈՒԲՅԵԿՏՆԵՐ

Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություններ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական
դատարանի որոշում

Քաղաքացիական գործ թիվ ԼԳ/0891/02/09
2011թ.

Քաղաքացիական գործ թիվ ԼԳ/0891/02/09

Նախագահող դատավոր՝ Ա. Պետրոսյան

Դատավորներ՝ Ա. Խատատյան

Կ. Չիլինգարյան

ՈՐՈՇՈՒՄ

ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քաղաքացիական
և վարչական պալատը (այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

Նախագահությամբ

մասնակցությամբ դատավորներ

Ե. ԽՈՒՆԴԿԱՐՅԱՆԻ

Մ. ԴՐՄԵՅԱՆԻ

Վ. ԱԲԵԼՅԱՆԻ

Վ. ԱՎԱՆԵՍՅԱՆԻ

Ա. ԲԱՐՍԵՂՅԱՆԻ

Գ. ՀԱԿՈԲՅԱՆԻ

Տ. ՊԵՏՐՈՍՅԱՆԻ

Ե. ՍՈՂՈՄՈՆՅԱՆԻ

2011 թվականի հուլիսի 01-ին

դրբաց դատական նիստում, քննելով «Հանրախանութ Դիմաց» ՍՊԸ-ի (այսուհետ՝ Ընկերություն) և Հրանտ Շահնագարյանի վճռաբեկ բողոքը ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 13.05.2010 թվականի որոշման դեմ ըստ հայցի Լենա Տոնյանի, Անիշկա Ավետիսյանի, Ալվարդ Մկրտչյանի, Անահիտ Բաբայանի, Շուշիկ Լանդյանի, Մարիետա Չաքարյանի, Վարդան Վարդանյանի, Սիրան Դավթյանի, Վարսիկ Մոսիսյանի և Սվետլանա Մարտիրոսյանի ընդդեմ Ընկերության, Հրանտ Շահնագարյանի, երրորդ անձ ՀՀ արդարադատության նախարարության իրավաբանական անձանց պետական ռեզիստրի գործակալության Վանաձորի տարածքային բաժնի (այսուհետ՝ Ռեզիստր) Ընկերության մասնակիցների 05.12.2007 թվականի արտահերթ ընդհանուր ժողովի թիվ 2 արձանագրությունն անվավեր ճանաչելու, անվավերության հետևանքներ կիրառելու և Ընկերության մասնակիցների բաժնեմասերի ձշում կատարելու պահանջների մասին,

ՊԱՐԶԵՑ

1. Գործի դատավարական նախապատմությունը

Դիմելով դատարան՝ Լենա Տոնոյանը, Անիչկա Ավետիսյանը, Ավարդ Մկրտչյանը, Անահիտ Բաբայանը, Շուշիկ Լանոյանը, Մարիետա Զաքարյանը, Վարդան Վարդանյանը, Սիրան Դավթյանը, Վարսիկ Մոսիսյանը և Սվետլանա Մարտիրոսյանը պահանջել են անվավեր ճանաչել Ընկերության մասնակիցների 05.12.2007 թվականի արտահերթ ընդհանուր ժողովի թիվ 2 արձանագրությունը, կիրառել անվավերության հետևանքներ և կատարել Ընկերության մասնակիցների բաժնեմասերի ճշտում:

ՀՀ Լոռու մարզի ընդհանուր իրավասության դատարանի (այսուհետ՝ Դատարան) 22.09.2009 թվականի վճռով հայցը մերժվել է:

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի (այսուհետ՝ Վերաքննիչ դատարան) 13.05.2010 թվականի որոշմամբ վերաքննիչ բողոքը բավարարվել է՝ Դատարանի 22.09.2009 թվականի վճիռը բեկանվել է, և գործն ուղարկվել է նոր քննության:

Սույն գործով վճռաբեկ բողոք են ներկայացրել Ընկերությունը և Հրանտ Շահնազարյանը:

Վճռաբեկ բողոքի պատասխան են ներկայացրել Լենա Տոնոյանը, Անիչկա Ավետիսյանը, Ավարդ Մկրտչյանը, Անահիտ Բաբայանը, Շուշիկ Լանոյանը, Մարիետա Զաքարյանը, Վարդան Վարդանյանը, Սիրան Դավթյանը, Վարսիկ Մոսիսյանը և Սվետլանա Մարտիրոսյանը:

2. Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը

Սույն վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

Վերաքննիչ դատարանը սխալ է մեկնաբանել «Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների մասին» ՀՀ օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասը, խախտել է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 53-րդ հոդվածը:

Բողոք բերած անձինք նշված պնդումը պատճառաբանում են հետևյալ փաստարկներով.

Վերաքննիչ դատարանն անտեսել է, որ Ընկերության մասնակցի՝ Ընկերությունից դուրս գալու դիմումը ներկայացվելու պահից նրա բաժնեմասն օրենքի ուժով փոխանցվում է Ընկերությանը, և այդ հանգամանքը կախվածության մեջ չի դրվում Ընկերությունից դուրս ելող մասնակցի կողմից դիմում ներկայացնելուց հետո նրա կամ մյուս մասնակիցների կամ իրավասու պետական մարմինների գործողություններից: Դրա արդյունքում Վերաքննիչ դատարանը հայցվորների՝ Ընկերությունից դուրս գալու հանգամանքը պայմանավորել է ոչ թե դուրս գալու մասին դիմումը ներկայացնելու պահով, այլ Ռեգիստրում գրանցում կատարելու պահով:

Վերաքննիչ դատարանը չի կատարել ապացույցների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտում, մասնավորապես՝ հաշվի չի առել այն հանգամանքը, որ 12.09.2007 թվականին Լենա Տոնոյանը, Անիչկա Ավետիսյանը, Ավարդ Մկրտչյանը, Անահիտ Բաբայանը, Շուշիկ Լանոյանը, Մարիետա Զաքարյանը, Վարդան Վարդանյանը, Սիրան Դավթյանը, Վարսիկ Մոսիսյանը և Սվետլանա Մարտիրոսյանը ներկայացրել են դիմում՝ Ընկերությունից դուրս գալու մասին:

Վերոգրյալի հիման վրա բողոք բերած անձինք պահանջել են բեկանել Վերաքննիչ դատարանի 13.05.2010 թվականի որոշումը և օրինական ուժ տալ Դատարանի 22.09.2009 թվականի վճիռին:

2.1 Վճռաբեկ բողոքի պատասխանի հիմնավորումները

Վերաքննիչ դատարանը լիովին առաջնորդվել է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 53-րդ հոդվածի պահանջներով:

Ինչ վերաբերում է 12.09.2007 թվականի՝ Ընկերությունից դուրս գալու դիմումին, ապա այն եղել է վերացնող պայմանով, և պայմանը չի իրականացել պատասխանողի մեղքով:

3. Վճռաբեկ բողոքի քննության համար նշանակություն ունեցող փաստերը

Վճռաբեկ բողոքի քննության համար նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1) Լենա Տոնոյանը, Անիչկա Ավետիսյանը, Ալվարդ Մկրտչյանը, Անահիտ Բաբայանը, Շուշիկ Լանդյանը, Մարիետա Զաքարյանը, Վարդան Վարդանյանը, Սիրան Դավթյանը, Վարսիկ Մոսիսյանը և Սվետլանա Մարտիրոսյանը 12.09.2007 թվականին ներկայացրել են դիմում Ընկերությունից դուրս գալու մասին (հատոր առաջին գ.թ. 58-60):

2) Ընկերության մասնակիցների արտահերթ ընդհանուր ժողովի 05.12.2007 թվականի թիվ 2 արձանագրության համաձայն՝ ընդհանուր ժողովը որոշել է՝ հաստատել Ընկերության մասնակիցների նոր կազմը (Լենա Տոնոյանը, Անիչկա Ավետիսյանը, Ալվարդ Մկրտչյանը, Անահիտ Բաբայանը, Շուշիկ Լանդյանը, Մարիետա Զաքարյանը, Վարդան Վարդանյանը, Սիրան Դավթյանը, Վարսիկ Մոսիսյանը և Սվետլանա Մարտիրոսյանը նույնպես ընդգրկվել են նոր կազմում), նվազեցնել Ընկերության կանոնադրական կապիտալը և հաստատել Ընկերության կանոնադրության փոփոխությունը (հատոր 1, գ. թ. 19-22):

4. Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը

Քննելով վճռաբեկ բողոքը նշված հիմքի սահմաններում Վճռաբեկ դատարանը գտնում է, որ այն հիմնավոր է հետևյալ պատճառաբանությամբ.

«Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների մասին» ՀՀ օրենքի 21-րդ հոդվածի համաձայն՝ ընկերության մասնակիցն իրավունք ունի ցանկացած ժամանակ դուրս գալ ընկերությունից՝ անկախ ընկերության կամ նրա մասնակիցների համաձայնությունից: Ընկերության մասնակցի՝ ընկերությունից դուրս գալու հետ կապված հաշվարկները կատարվում են նույն օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված կարգով:

«Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների մասին» ՀՀ օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին պարբերության համաձայն՝ ընկերության մասնակցի՝ ընկերությունից դուրս գալու դիմումը ներկայացնելու պահից նրա բաժնեմասը փոխանցվում է ընկերությանը: Ընկերությունը պարտավոր է ընկերությունից դուրս գալու դիմումը ներկայացնելու պահից՝ 6 ամսվա ընթացքում, մասնակցին վճարել բաժնեմասի (կանոնադրական կապիտալում նրա ավանդի ոչ լրիվ վճարման դեպքում՝ վճարված մասին համապատասխան բաժնեմասի) արժեքը...: Ընդհանուր ժողովի որոշմամբ ընկերությունից դուրս եկող մասնակցին նրա

համաձայնությամբ կարող է տրվել նրա բաժնեմասի արժեքին համապատասխան գույք:

Վերոնշյալ հոդվածներից հետևում է, որ ընկերության մասնակիցը ցանկացած ժամանակ կարող է դուրս գալ ընկերությունից՝ այդ մասին դիմում ներկայացնելով ընկերությանը: Դիմումի ներկայացման պահից վերջինիս բաժնեմասը փոխանցվում է ընկերությանը:

«Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների մասին» ՀՀ օրենքի 45-րդ հոդվածի համաձայն՝ նույն օրենքի, այլ իրավական ակտերի, ինչպես նաև ընկերության կանոնադրության պահանջների խախտմամբ ընդունված կամ ընկերության մասնակցի իրավունքները և օրինական շահերը խախտող ընդհանուր ժողովի որոշումը կարող է դատական կարգով անվավեր ճանաչվել ընկերության մասնակցի դիմումի հիման վրա: Նման դիմում կարող է տրվել երկու ամսվա ընթացքում՝ սկսած այն օրվանից, երբ ընկերության մասնակիցն իմացել կամ պարտավոր էր իմանալ այդպիսի որոշման ընդունման մասին:

«Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների մասին» ՀՀ օրենքի 11-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ ընկերության մասնակից են համարվում ընկերության պետական գրանցման պահից ընկերության բաժնեմասի նկատմամբ սեփականության իրավունք ունեցող անձինք:

Վերոնշյալ հոդվածներից հետևում է, որ ընդհանուր ժողովի որոշումները կարող են դատական կարգով անվավեր ճանաչվել ընկերության մասնակցի դիմումի հիման վրա, իսկ ընկերության մասնակիցն ընկերության բաժնեմասի նկատմամբ սեփականության իրավունք ունեցող անձն է:

Հետևաբար, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ այն պահից, երբ ընկերության մասնակիցը դիմում է ընկերությունից դուրս գալու համար, նրա բաժնեմասերն անցնում են ընկերությանը, իսկ այդ պահից սկսած վերջինս չի կարող ընկերության ընդհանուր ժողովի որոշումներն անվավեր ճանաչելու պահանջով դիմել դատարան, քանի որ վերջինս, այդ բաժնեմասերի նկատմամբ արդեն չունենալով սեփականության իրավունք, չի համարվում ընկերության մասնակից:

Միաժամանակ, Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ օրենսդիրը պաշտպանում է ընկերությունից դուրս եկող անձի իրավունքը՝ պահանջելու վճարել իր բաժնեմասի արժեքը՝ «Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների մասին» ՀՀ օրենքի 23-րդ հոդվածով սահմանված կարգով:

Սույն գործի փաստերի համաձայն՝ Լենա Տոնոյանը, Անիչկա Ավետիսյանը, Ալվարդ Մկրտչյանը, Անահիտ Բաբայանը, Շուշիկ Լանդյանը, Մարիետա Զաքարյանը, Վարդան Վարդանյանը, Սիրան Դավթյանը, Վարսիկ Մոսիսյանը և Սվետլանա Մարտիրոսյանը 12.09.2007 թվականին ներկայացրել են դիմում Ընկերությունից դուրս գալու մասին:

Դատարանը հայցը մերժելիս պատճառաբանել է, որ հայցվորների 12.09.2007 թվականին Ընկերությունից դուրս գալու դիմումով վերջիններս, թեկուզ առանց գիտակցելու, ըստ էության որպես բաժնեմաս չունեցող անձինք, զրկվել են մասնակիցների ընդհանուր ժողովում քվեարկելու և որոշումներ ընդունելու իրավունքից: Հետևաբար վերջիններիս պահանջը՝ Ընկերության մասնակիցների 05.12.2007 թվականի արտահերթ ընդհանուր ժողովի թիվ 2 արձանագրությունն անվավեր ճանաչելու, անվավերության հետևանքներ կիրառելու և ընկերության մասնակիցների բաժնեմասերի ճշտում կատարելու մասին, անիմն է նման

իրավահարաբերության բացակայության հիմնավորմամբ, քանի որ որևէ մասնակցի իրավունք և օրինական շահ չի խախտվել, այլ մասնակիցներն իրենք են, մինչև արձանագրությունը, այդ իրավունքից և շահից հրաժարվել իրենց գրավոր դիմումով:

Վերաքննիչ դատարանը վճիռը բեկանելիս և գործը նոր քննության ուղարկելիս, պատճառաբանել է, որ քաղաքացիական գործում առկա չէ որևէ ապացույց այն մասին, որ հայցվորների բաժնեմասը փոխանցվել է Ընկերությանը, նրանց վճարվել է բաժնեմասերի արժեքը, կամ տրվել է այդ արժեքին համապատասխան գույք: Վերաքննիչ դատարանը պատճառաբանել է նաև, որ վերոհիշյալ ապացույցների բացակայության և Ռեգիստրում 25.02.2008 թվականին կատարված գրանցման պարագայում չի կարող հիմնավորված համարվել հայցվորների՝ Ընկերությունից դուրս գալու հանգամանքը:

Մինչդեռ, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ սույն գործով Վերաքննիչ դատարանը, հաստատված համարելով հայցվորների՝ 12.09.2007 թվականին Ընկերությունից դուրս գալու դիմում ներկայացնելու փաստը, միաժամանակ նշել է, որ չի կարող հիմնավորված համարվել հայցվորների՝ Ընկերությունից դուրս գալու հանգամանքը, հետևաբար հայցվորների 12.09.2007 թվականին Ընկերությունից դուրս գալու մասին դիմում ներկայացված լինելու պայմաններում վերջիններս համարվում են Ընկերությունից դուրս եկած և ընդհանուր ժողովի որոշումները վիճարկելու իրավունք չունեն:

Այսպիսով, վերը նշված հիմքի առկայությունը Վճռաբեկ դատարանը դիտում է բավարար՝ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 227-րդ և 228-րդ հոդվածների ուժով Վերաքննիչ դատարանի 13.05.2010 թվականի որոշումը բեկանելու համար:

Միաժամանակ, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ տվյալ դեպքում անհրաժեշտ է կիրառել ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 240-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով սահմանված՝ առաջին ատյանի դատարանի դատական ակտին օրինական ուժ տալու՝ Վճռաբեկ դատարանի լիազորությունը հետևյալ հիմնավորմամբ. «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի ողջամիտ ժամկետում իր գործի քննության իրավունք: Սույն քաղաքացիական գործով վեճի լուծումն էական նշանակություն ունի գործին մասնակցող անձանց համար: Վճռաբեկ դատարանը գտնում է, որ գործը ողջամիտ ժամկետում քննելը հանդիսանում է Կոնվենցիայի նույն հոդվածով ամրագրված անձի արդար դատաքննության իրավունքի տարր, հետևաբար, գործի անհարկի ձգձգումները վտանգ են պարունակում նշված իրավունքի խախտման տեսանկյունից:

Տվյալ դեպքում, Վճռաբեկ դատարանի կողմից ստորադաս դատարանի դատական ակտին օրինական ուժ տալը բխում է արդարադատության արդյունավետության շահերից, քանի որ սույն գործով վերջնական դատական ակտ կայացնելու համար նոր հանգամանք հաստատելու անհրաժեշտությունը բացակայում է:

Առաջին ատյանի դատարանի դատական ակտին օրինական ուժ տալով՝ Վճռաբեկ դատարանը հիմք է ընդունում սույն որոշման պատճառաբանությունները, ինչպես նաև գործի նոր քննության անհրաժեշտության բացակայությունը:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 240-241²-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

ՈՐՈՇԵՑ

1. Վճռաբեկ բողոքը բավարարել: Բեկանել ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 13.05.2010 թվականի որոշումը և օրինական ուժ տալ ՀՀ Լոռու մարզի ընդհանուր իրավասության դատարանի 22.09.2009 թվականի վճռին:

2. Լենա Տոնոյանից, Անիչկա Ավետիսյանից, Ալվարդ Մկրտչյանից, Անահիտ Բաբայանից, Շուշիկ Լանդյանից, Մարիետա Զաքարյանից, Վարդան Վարդանյանից, Սիրան Դավթյանից, Վարսիկ Մոսիսյանից և Սվետլանա Մարտիրոսյանից հօգուտ «Հանրախանութ Դիմաց» ՍՊԸ-ի համապարտության կարգով բռնագանձել 20.000 ՀՀ դրամ՝ որպես վճռաբեկ բողոքի համար վճարված պետական տուրքի գումարը:

3. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

*ՆԱԽԱԳԱՀՈՂ՝ ստորագրություն
ԴԱՏԱՎՈՐՆԵՐ՝ ստորագրություններ*

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական Քաղաքացիական գործ թիվ ԵԱԴԴ/0832/02/09
դատարանի որոշում 2011թ.
Քաղաքացիական գործ թիվ ԵԱԴԴ/0832/02/09
Նախագահող դատավոր՝ Կ. Հակոբյան
Դատավորներ՝ Տ. Սահակյան
Տ. Նազարյան

ՈՐՈՇՈՒՄ

ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քաղաքացիական
և վարչական պալատը (այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

նախագահությամբ

մասնակցությամբ դատավորներ

Ե. ԽՈՒՆԴԿԱՐՅԱՆԻ

Մ. ԴՐՄԵՅԱՆԻ

Վ. ԱԲԵԼՅԱՆԻ

Ս. ԱՆՏՈՆՅԱՆԻ

Վ. ԱՎԱՆԵՍՅԱՆԻ

Ա. ԲԱՐՍԵՂՅԱՆԻ

Գ. ՀԱԿՈԲՅԱՆԻ

Է. ՀԱՅՐԻՅԱՆԻ

Տ. ՊԵՏՐՈՍՅԱՆԻ

Ե. ՍՈՂՈՄՈՆՅԱՆԻ

2011 թվականի հոկտեմբերի 14-ին

դոնբաց դատական նիստում, քննելով Գոմիդաս Հարթունյանի վճռաբեկ բողոքը ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 27.01.2011 թվականի որոշման դեմ՝ ըստ հայցի «Ազուր-Զոմփ» ՍՊԸ-ի (այսուհետ՝ Ընկերություն) հիմնադիր անդամ Գոմիդաս Հարթունյանի ընդդեմ Ընկերության, Ընկերության հիմնադիր անդամ և տնօրեն Ռաֆայել Մկրտչյանի (այսուհետ՝ Տնօրեն), Ընկերության հիմնադիր անդամ Գուրգեն Մարտիրոսյանի՝ Ընկերությունից դուրս գալու, բաժնեմասն առանձնացնելու և որպես դրա հետևանք նրա գրանցման վայրն իր տարածքից հանելու պահանջի մասին,

ՊԱՐԶԵՑ

1. Գործի դատավարական նախապատմությունը

Դիմելով դատարան՝ Գոմիդաս Հարթունյանը պահանջել է իրեն թույլատրել դուրս գալ Ընկերության հիմնադիր անդամությունից, պարտավորեցնել վճարելու 40% բաժնեմասը և սեփական տարածքից հանել Ընկերության գտնվելու վայրը: Այսուհետև լրացնելով հայցի հիմքն ու առարկան՝ պահանջել է պարտավորեցնել Ընկերությունում կատարել մասնակիցների և կանոնադրության փոփոխություններ. Իրեն՝ որպես 40%

բաժնեմասով մասնակցի, համարել դուրս եկած և լուծել բաժնեմասի հարցը, ինչպես նաև պարտավորեցնել Ընկերության կանոնադրության 1.6 կետում փոխել և գրանցել Ընկերության գտնվելու վայրի իրական հասցեն:

Երևանի Աջափնյակ և Դավթաշեն վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանը (դատավոր Ա. Մխիթարյան) (այսուհետ՝ Դատարան) 29.10.2010 թվականին վճռել է. «Ըստ հայցի «Ագուր-Քոմփ» ՍՊԸ-ի հիմնադիր անդամ Գոմիդաս Հարթունյանի ընդդեմ «Ագուր-Քոմփ» ՍՊԸ-ի, «Ագուր-Քոմփ» ՍՊԸ-ի հիմնադիր անդամ և տնօրեն Ռաֆայել Մկրտչյանի, «Ագուր-Քոմփ» ՍՊԸ-ի հիմնադիր անդամ Գուրգեն Մարտիրոսյանի՝ «Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների մասին» ՀՀ օրենքի 9, 10, 12, 21, 23 հոդվածներով պարտավորեցնել «Ագուր-Քոմփ» ՍՊԸ-ում կատարել մասնակիցների և կանոնադրության փոփոխություններ՝ 40 տոկոս բաժնեմասով մասնակից Գոմիդաս Հարթունյանին համարել դուրս եկած: Պարտավորեցնել Ընկերության կանոնադրության 1.6 կետում փոխել և գրանցել Ընկերության գտնվելու վայրի իրական հասցեն, պահանջների մասով թիվ ԵԱԴԴ/0832/02/09 քաղաքացիական գործի վարույթը՝ կարճել՝ վեճը ենթակա չէ քննության հիմքով: Ըստ հայցի «Ագուր-Քոմփ» ՍՊԸ-ի հիմնադիր անդամ Գոմիդաս Հարթունյանի ընդդեմ «Ագուր-Քոմփ» ՍՊԸ-ի, «Ագուր-Քոմփ» ՍՊԸ-ի հիմնադիր անդամ և տնօրեն Ռաֆայել Մկրտչյանի, «Ագուր-Քոմփ» ՍՊԸ-ի հիմնադիր անդամ Գուրգեն Մարտիրոսյանի՝ պատասխանողներին իր 40 տոկոս բաժնեմասը վճարելուն պարտավորեցնելու մասին պահանջի մասով թիվ ԵԱԴԴ/0832/02/09 քաղաքացիական գործի վարույթը կարճել՝ հայցվորի դատաքննության նախապատրաստական փուլում հայցից հրաժարվելու հիմքով: «Ագուր-Քոմփ» ՍՊԸ-ի հիմնադիր անդամ Գոմիդաս Հարթունյանի հայցն ընդդեմ «Ագուր-Քոմփ» ՍՊԸ-ի, «Ագուր-Քոմփ» ՍՊԸ-ի հիմնադիր անդամ և տնօրեն Ռաֆայել Մկրտչյանի, «Ագուր-Քոմփ» ՍՊԸ-ի հիմնադիր անդամ Գուրգեն Մարտիրոսյանի՝ «Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների մասին» ՀՀ օրենքով բաժնեմասի հարցը լուծելու պահանջի մասով, մերժել»:

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի (այսուհետ՝ Վերաքննիչ դատարան) 27.01.2011 թվականի որոշմամբ Գոմիդաս Հարթունյանի վերաքննիչ բողոքը մերժվել է, և Դատարանի 29.10.2010 թվականի վճիռը թողնվել է օրինական ուժի մեջ:

Սույն գործով վճռաբեկ բողոք է ներկայացրել Գոմիդաս Հարթունյանը:

Վճռաբեկ բողոքի պատասխան է ներկայացրել Ռաֆայել Մկրտչյանը:

2. Վճռաբեկ բողոքի հիմքերը, փաստարկները և պահանջը

Սույն վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքերի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

1) Վերաքննիչ դատարանը խախտել է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 6-րդ, 49-րդ, 53-րդ հոդվածները, 109-րդ հոդվածի 1-ին կետը, 130-րդ, 131-րդ, 132-րդ հոդվածները, 219-րդ հոդվածի 2-րդ կետը:

Բողոք բերած անձը նշված պնդումը պարզապես անհիմն է հետևյալ փաստարկներով.

Վերաքննիչ դատարանը պատճառաբանել է, որ գործում առկա չէ թույլատրելի և վերաբերելի ապացույց, որով կհաստատվեր Գոմիդաս Հարթունյանի՝ Ընկերությունից դուրս գալու դիմում ներկայացնելու փաստը: Մինչդեռ, գործում առկա է Գոմիդաս Հարթունյանի 24.11.2008 թվականի՝ Տնօրենին և Ընկերության մյուս հիմնադիր

Գուրգեն Մարտիրոսյանին ներկայացված դիմումի պատճենը, որում նշվում է նրա՝ Ընկերությունից դուրս գալու ցանկությունը: Ներկայացրել է նաև 20.11.2008 թվականի հարցման պատճենը, որով խնդրել է տալ տեղեկատվություն Ընկերության գործունեության, նրա շահույթի, աշխատակիցների և կնքած պայմանագրերի մասին: Առկա են նաև Տնօրենին և Ընկերությանը դիմելու փոստային անդորրագրերի պատճենները և բնօրինակները:

Վերաքննիչ դատարանը հաշվի չի առել, որ փոստային առաքման անդորրագրերի բնօրինակները Վերաքննիչ դատարանում ներկայացվել են այն պատճառով, որ Գումիդաս Հարթունյանը հնարավորություն չի ունեցել դրանք առաջին ատյանի դատարանում ներկայացնելու: Մասնավորապես, Դատարանում ժամկետ չի տրամադրվել նշված անդորրագրերի բնօրինակները ներկայացնելու համար, ինչն էլ Վերաքննիչ դատարանում չի ընդունվել այն պատճառաբանությամբ, որ բողոքաբերը, ծանուցված լինելով դատական նիստի վերաբերյալ, գրկված չի եղել դրանց բնօրինակը ներկայացնելու հնարավորությունից: Այնինչ, Դատարանը ժամանակ չի տրամադրել փոստային անդորրագրերի բնօրինակները Գումիդաս Հարթունյանի ներկայացուցչին ուղարկելու համար, ինչն էլ հաստատում է, որ Գումիդաս Հարթունյանն իրենից անկախ պատճառներով չի կարողացել ներկայացնել նշված ապացույցը:

Այսպիսով, Վերաքննիչ դատարանը ձիշտ չի գնահատել ապացույցները և սխալ եզրահանգման է եկել՝ կրկնելով Դատարանի պատճառաբանությունները:

2) Վերաքննիչ դատարանը սխալ է կիրառել ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 109-րդ հոդվածի 1-ին կետը:

Բողոք բերած անձը նշված պնդումը պարձառաբանում է հետևյալ փաստարկներով.

Վերաքննիչ դատարանն իրավաչափ է համարել այն, որ սույն վեճը ենթակա չէ դատարանում քննության և եզրահանգել է, որ կողմերի միջև առկա իրավահարաբերության բովանդակության մեջ ներառված չէ հայցվորի՝ իրեն Ընկերությունից դուրս եկած համարելու, Ընկերության կանոնադրության և մասնակիցների փոփոխություններ կատարելու և գրանցման վայրը հայցվորի տարածքից հանելու պահանջի իրավունքը: Մինչդեռ, Գումիդաս Հարթունյանի իրավունքների խախտումն ակնհայտ է, և ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 2-րդ հոդվածի համաձայն՝ ինքն իրավունք ունի սահմանված կարգով դիմել դատարան՝ ՀՀ Սահմանադրությամբ, օրենքներով և այլ իրավական ակտերով սահմանված կամ պայմանագրով նախատեսված իր իրավունքների, ազատությունների և օրինական շահերի պաշտպանության համար: Փաստորեն, խախտվել են իր իրավունքները, և ինքը չի կարողանում Ընկերության գրանցման վայրը հանել իր սեփական տան հասցեից:

Բացի այդ, Ընկերությունը որպես այդպիսին չի գործում Երևանի Դավթաշեն 4-րդ թաղամաս 41/1 հասցեում, որն էլ հաստատված է Երևանի Աջափնյակ և Դավթաշեն բաժնի ԴԱՀԿ-ի կողմից կազմված երեք ակտերով: Բացի այդ, Ընկերությունը չի գործում, և գործունեությունը դադարեցվել է Տնօրենի դիմումի համաձայն: Հետևաբար ընդհանուր ժողով հրավիրելու հնարավորությունը բացառվում է:

Վերագրյալի հիման վրա վճռաբեկ բողոք բերած անձը պահանջել է բեկանել Վերաքննիչ դատարանի 27.01.2011 թվականի որոշումը և գործն ուղարկել նոր քննության:

2.1. Վճռաբեկ բողոքի պատասխանի հիմնավորումները

Վերաքննիչ դատարանն իր որոշման մեջ իրավացիորեն նշել է, որ Գոմիդաս Հարթունյանը Դատարանում պատշաճ ծանուցված է եղել դատական նիստերի մասին, գրկված չի եղել մինչև դատաքննությունը փոստային անդորրագրերի բնօրինակները Դատարան ներկայացնելու հնարավորությունից, սակայն չի ներկայացրել դրանք: Նման պայմաններում փոստային անդորրագրի բնօրինակի չներկայացնելը չի կարող համարվել կողմի կամքից անկախ հանգամանքներում կատարված: Ուստի Վերաքննիչ դատարանն իրավացիորեն չի ընդունել վերաքննիչ բողոքին կից ներկայացված ապացույցները՝ փոստային անդորրագրերը:

Ընկերությունից դուրս գալու մասին դիմումը պետք է ներկայացվի ոչ թե Ընկերության մյուս մասնակիցներին, այլ Ընկերությանը: Տվյալ դեպքում հայցվորի ներկայացրած փոստային անդորրագրերից երևում է, որ նամակներն ուղարկվել են Գուրգեն Մարտիրոսյանին և Ռաֆայել Մկրտչյանին, մինչդեռ Ընկերությունից դուրս գալու մասին դիմումը պետք է ներկայացվեր Ընկերությանը: Բացի այդ, Գոմիդաս Հարթունյանի ներկայացրած անդորրագրերի վրա չկա ուղարկման ամսաթիվ և պարզ չէ, թե այն երբ է ուղարկվել, ինչպես նաև անդորրագրերի վրա բացակայում են հասցեատերերի լրիվ հասցեները:

Սույն քաղաքացիական գործում առկա են բազմաթիվ ապացույցներ, որոնցից երևում է, որ Ընկերությունը գրանցվել է ՀՀ ԱԾ իրավաբանական անձանց պետական ռեգիստրի գործակալությունում և գտնվում է Երևանի Դավթաշեն 4-րդ թաղամաս թիվ 41/1 հասցեում, իսկ գործում բացակայում է որևէ ապացույց Ընկերության լուծարման վերաբերյալ, և այն համարվում է գործող:

3. Վճռաբեկ բողոքի քննության համար նշանակություն ունեցող փաստերը.

Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

1. ՀՀ ԿԱ ԱԳԿՊԿ Դավթաշենի տարածքային ստորաբաժանման կողմից տրված 13.05.2004 թվականի թիվ 1130402 սեփականության իրավունքի գրանցման վկայականի համաձայն՝ Գոմիդաս Հարթունյանը Երևանի Դավթաշեն 4-րդ թաղամասի թիվ 41/1 հասցեում գտնվող ավտոկայանատեղի, ավտոտեխսպասարկման և կայանի սեփականատերն է (հատոր 1-ին, գ.թ.13-14):

2. Ընկերության հիմնադիրների ընդհանուր (հիմնադիր) ժողովի 17.05.2004 թվականի թիվ 1 արձանագրության համաձայն՝ ժողովը որոշել է.

ա) «ՀՀ-ում հիմնադրել «Ագուր-Քոմի» անվանումով ՍՊԸ: Ընկերության գտնվելու վայր ընդունել Հայաստանի Հանրապետություն, ք. Երևան, Դավթաշեն 4-րդ թաղամաս, շենք 41/1 հասցեն: Հաստատել Ընկերության կանոնադրությունը: Ընկերության կանոնադրական կապիտալի չափը սահմանել 50.000 ՀՀ դրամ: Հաստատել Ընկերության հիմնադիրների (մասնակիցների) ցանկը ըստ հետևյալի. Հիմնադիրների (մասնակիցների) տվյալները՝ Կոմիտաս Հարթունյան (ԱՄԾ անձնագիր 093616029, տրված 06.11.96թ., Ֆիլադելֆիայի անձնագրային գործակալության կողմից, հասցե՝ 360 Սթոլար, Ֆրանկլին Լեյքս Նյու Ջերսի 07417

ԱՄՆ), բաժնեմասերի չափը՝ 40%, գումարը՝ 20.000 ՀՀ դրամ, Ռաֆայել Մկրտչյան, բաժնեմասերի չափը՝ 30%, գումարը՝ 15.000 ՀՀ դրամ, Գուրգեն Մարտիրոսյան բաժնեմասերի չափը՝ 30%, գումարը՝ 15.000 ՀՀ դրամ ք) Ընկերության տնօրեն նշանակել Ռաֆայել Մկրտչյանին... (հատոր 1-ին, գ.թ.15):

3. Ընկերության կանոնադրության 4.3 կետի համաձայն՝ Ընկերության մասնակիցն իրավունք ունի ցանկացած ժամանակ դուրս գալ ընկերությունից (անկախ մյուս մասնակիցների համաձայնությունից) (հատոր 1-ին, գ.թ. 21-22):

4. 24.11.2008 թվականի դիմումով Ընկերության հիմնադիր անդամ Գոմիդաս Հարթունյանը Ընկերության տնօրեն Ռաֆայել Մկրտչյանին հայտնել է, որ Ընկերության հիմնադիր անդամ է և ունի 40% բաժնեմաս: Համաձայն «Մահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների մասին» ՀՀ օրենքի 21 և 23 հոդվածների՝ ցանկանում է դուրս գալ Ընկերությունից (հատոր 1-ին, գ.թ.28):

5. Գոմիդաս Հարթունյանի ներկայացուցիչ Սիրվարդ Բաղրամյանի գրության համաձայն՝ ուղղված Ընկերության տնօրեն Ռաֆայել Մկրտչյանին, Գոմիդաս Հարթունյանն Ընկերության 40% բաժնետերն է: Հիմք ընդունելով «Մահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների մասին» ՀՀ օրենքի 12-րդ հոդվածը՝ խնդրել է իրեն տրամադրել տեղեկություններ Ընկերության գործունեության մասին, քանի որ ցանկանում է դուրս գալ Ընկերությունից՝ օգտվելով վերը նշված օրենքի 12-րդ հոդվածի «ե» ենթակետի և նույն օրենքի 14-րդ հոդվածով ամրագրված և իրենց կանոնադրությամբ նախատեսված 4.3 կետի իր իրավունքներից:

ա. Հաշվարկել և տալ տեղեկություն, թե որքան է կազմում ընկերության շահույթը և դրանից առանձին հաշվարկել իր 40% բաժնեմասի արժեքը: Հայտնել՝ ինչու իրեն չի հատկացվել Ընկերության շահույթից ստացված իր հասանելիք մասը: Պատասխանել, թե ինչ արժեքի և ինչ գույք է գնվել իր կողմից բանկերի միջոցով ուղարկված Ընկերությունն ստեղծելու համար ներդրված գումարներով: Ինչ հաշիվներ ունի ընկերությունն օտարերկրյա և ՀՀ բանկերում: Ընկերությունը քանի աշխատակից ունի և ինչպիսի պայմանագրեր է կնքել նրանց հետ: Նշել նաև աշխատաժամերը և նրանց վճարված աշխատավարձի չափը: Խնդրել է պատասխանն ուղարկել իր ներկայացուցչի հասցեով (հատոր 1-ին, գ.թ.31, 54):

6. Համաձայն ՀՀ ԱՆ ԴԱՀԿ ծառայության Կենտրոնական մարմնի հարկադիր կատարման օպերատիվ բաժնի առաջատար խորհրդատու Կ. Խոսրոյանի կողմից 23.01.2009 թվականին կազմված Կատարողական գործողությունների վերաբերյալ արձանագրության՝ Երևանի Աջափնյակ և Դավթաշեն համայնքների ընդհանուր իրավասության դատարանի կողմից 18.12.2008 թվականի թիվ ԵԱԴԿ/0805/02/08 կատարողական թերթի համաձայն պետք է Գոմիդաս Հարթունյանի սեփականության իրավունքի իրականացման խոչընդոտները վերացնել՝ Ռաֆայել Մկրտչյանին պարտավորեցնել ազատել Երևանի Դավթաշեն 4-րդ թաղամասի թիվ 41/1 հասցեում գտնվող անշարժ գույքը՝ այն ամբողջությամբ հանձնելով սեփականատիրոջ տնօրինմանը (հատոր 1-ին, գ.թ.84-86):

7. Ընկերության տնօրենի 21.07.2010 թվականի տեղեկանքի համաձայն՝ Ընկերությունն իր հիմնադիրներից կամ մասնակիցներից, այդ թվում նաև Գոմիդաս Հարթունյանից երբևէ Ընկերությունից դուրս գալու դիմում չի ստացել (հատոր 2-րդ, գ.թ. 102):

8. Գոմիդաս Հարթունյանը հայցադիմումին կից ներկայացրել է 24.11.2008 թվականի փոստային անդորրագրերի պատճենները՝ հասցեագրված հիմնադիրներ

Ռաֆայել Մկրտչյանին և Գուրգեն Մարտիրոսյանին (հատոր 1-ին, գ.թ. 29, հատոր 3-րդ, գ.թ. 55):

9. Սույն գործի քննությունն իրականացվել է դատաքննության նախապատրաստական փուլով:

10. Գործում առկա 18.10.2010 թվականի դատական նիստի արձանագրության համաձայն՝ պատասխանողի ներկայացուցիչը միայն դատաքննության ընթացքում է վիճարկել Գոմիդաս Հարթունյանի կողմից հայցադիմումին կից ներկայացված 24.11.2008 թվականի փոստային անդորրագրերի պատճենները և միջնորդել հանել դրանք ապացույցների շարքից, որպես ոչ պատշաճ ապացույցներ (հատոր 3-րդ, գ.թ. 12):

11. Դատարանը գործի քննության ժամանակ, այդ թվում նաև 18.10.2010 թվականի դատաքննության ընթացքում նշված պատճենները հետազոտելիս Գոմիդաս Հարթունյանից չի պահանջել ներկայացնել այդ փոստային անդորրագրերի ինչպես բնօրինակը, այնպես էլ դրա վավերացված պատճենը: Գոմիդաս Հարթունյանը 24.11.2008 թվականին առաքված փոստային անդորրագրերի բնօրինակները ներկայացրել է վերաքննիչ բողոքին կից (հատոր 3-րդ, գ.թ. 55-56):

12. Սույն գործում առկա չեն Ըկեբության հիմնադիր անդամ Գոմիդաս Հարթունյանի 24.11.2008 թվականի դիմումը և Գոմիդաս Հարթունյանի ներկայացուցիչ Սիրվարդ Բաղրամյանի գրությունն Ընկեբության Տնօրենի և Գուրգեն Մարտիրոսյանի կողմից ստանալու փաստը հավաստող ապացույցներ:

4. Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումները.

Քննելով վճռաբեկ բողոքը նշված հիմքերի սահմաններում՝ Վճռաբեկ դատարանը գրնում է, որ՝

1. վճռաբեկ բողոքն առաջին հիմքով հիմնավոր է մասնակիորեն հեղուկապատճառաբանությամբ՝

ԸՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 48-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ գործին մասնակցող յուրաքանչյուր անձ պետք է ապացուցի իր վկայակոչյաժ փաստերը: Նույն հոդվածի 2-րդ կետի համաձայն՝ գործի լուծման համար էական նշանակություն ունեցող ապացուցման ենթակա փաստերը որոշում է դատարանը՝ **գործին մասնակցող անձանց պահանջների և առարկությունների հիման վրա:**

ԸՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 53-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ դատարանը յուրաքանչյուր ապացույց գնահատում է գործում եղած բոլոր ապացույցների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտության վրա հիմնված ներքին համոզմամբ:

ԸՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 149⁸-րդ հոդվածի 2-րդ կետի 5-րդ և 6-րդ ենթակետերի համաձայն՝ դատարանը նախնական դատական նիստում կողմերի հետ քննարկում է ապացուցում պահանջող փաստերի շրջանակը և ապացուցման պարտականության բաշխման կանոններին համապատասխան՝ կողմերի միջև բաշխում է ապացուցման պարտականությունը, ինչպես նաև սահմանում է ապացույցներ ներկայացնելու ժամկետները, կողմերի միջնորդությամբ, իսկ նույն օրենսգրքով նախատեսված դեպքում իր նախաձեռնությամբ, պահանջում է անհրաժեշտ ապացույցներ, լուծում է փորձաքննություն նշանակելու, դատական նիստին փորձագետներ, վկաներ կանչելու, թարգմանիչ ներգրավելու, տեղում իրեղեն և

գրավոր ապացույցներն ուսումնասիրելու հարցերը:

Վճռաբեկ դատարանն իր՝ նախկինում կայացրած որոշումներում անդրադարձել է վերը նշված նորմերի իրավական վերլուծությանը:

Մասնավորապես, Վճռաբեկ դատարանը նշել է, որ գործի քննությունը դատաքննության նախապատրաստական փուլով իրականացնելիս դատարանը պարտավոր է կողմերի հետ քննարկել ապացուցում պահանջող փաստերի շրջանակը և ապացուցման պարտականությունը կողմերի միջև բաշխել ապացուցման պարտականության բաշխման կանոններին համապատասխան: Ընդ որում, գործի լուծման համար էական նշանակություն ունեցող ապացուցման ենթակա փաստերի շրջանակը որոշելն անմիջական կախվածության մեջ է գտնվում գործին մասնակցող անձանց վկայակոչած փաստերի վերաբերյալ մյուս կողմի ներկայացրած առարկություններից:

Միաժամանակ, Վճռաբեկ դատարանը նշել է, որ գործը դատաքննության նախապատրաստելու ինստիտուտը նպատակաուղղված է ապահովելու գործի արդյունավետ քննությունը: Այդ նպատակով օրենսդիրը գործը դատաքննության նախապատրաստելու ժամանակ սահմանում է ոչ միայն կողմերի, այլև դատարանի գործողությունները: Այսինքն՝ դատարանն այդ փուլով դատավարությունը պետք է անցկացնի իր առջև դրված խնդիրներն իրականացնելու համար, և գործը դատաքննության նախապատրաստելու ժամանակ դատարանի գործողությունները պետք է ուղղված լինեն ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 53-րդ հոդվածով նախատեսված ապացույցների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտության համար համապատասխան պայմանների ապահովմանը, գործի համար նշանակություն ունեցող ապացուցման ենթակա փաստերի որոշմանը և գործը լուծելու համար ճիշտ իրավանդությունների կիրառմանը (*լրես՝ Երևանի քաղաքապետարանի «Երևանի Էլեկտրատրանսպորտ» ՓԲԸ-ի հայցն ընդդեմ Դավիթ Մարտիրոսյանի ու ՀՀ ոստիկանության անձնագրային և վիզաների վարչության Էրեբունի անձնագրային բաժնի՝ հաշվառումից հանելու և առանց փոխհատուցման ապօրինի գրառեցրած տարածքից վտարելու պահանջների մասին ու Դավիթ Մարտիրոսյանի հակընդդեմ հայցը՝ քնակելի տարածության օգտագործման իրավունքը ճանաչելու պահանջի մասին գործով Վճռաբեկ դատարանի 27.05.2011 թվականի թիվ ԵԷԳ/1637/02/09 որոշումը*):

Բացի այդ, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 54-րդ հոդվածի 2-րդ կետի համաձայն՝ գրավոր փաստաթղթերը ներկայացվում են բնօրինակով կամ պատշաճ վավերացված պատճենի ձևով: Փաստաթղթերի բնօրինակները ներկայացվում են այն դեպքում, եթե գործի հանգամանքները, օրենքներին կամ այլ իրավական ակտերին համապատասխան, կարող են հաստատվել միայն նման փաստաթղթով, իսկ անհրաժեշտության դեպքում՝ **դատարանի պահանջով**:

Վերոնշյալ հոդվածից հետևում է, որ գրավոր ապացույցները դատարան ներկայացվում են երկու ձևով՝ բնօրինակով կամ պատշաճ վավերացված պատճենի ձևով: Ընդ որում, դատարանը, պարզելով գործով ապացուցման ենթակա փաստերը, կողմից կարող է պահանջել համապատասխան գրավոր ապացույցներ, իսկ անհրաժեշտության դեպքում՝ փաստաթղթերի բնօրինակները:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 219-րդ հոդվածի 2-րդ կետի համաձայն՝ վերաքննիչ դատարանն իրավունք չունի նոր ապացույց ընդունելու և բողոքը քննելիս հիմնվում է միայն այն ապացույցների վրա, որոնք ներկայացվել են առաջին ատյանի դատարանին: Եթե առաջին ատյանի դատարանում գործի քննության

Ժամանակ ապացույցը չի ներկայացվել կողմերի կամքից անկախ հանգամանքներով, ապա վերաքննիչ դատարանը բեկանում է գործը և այն ուղարկում համապատասխան առաջին ատյանի դատարան՝ նոր քննության, եթե գտնում է, որ ապացույցն էական նշանակություն ունի գործի լուծման համար:

Տվյալ նորմի վերլուծությունից հետևում է, որ Վերաքննիչ դատարանում նոր ապացույցների ընդունումն օրենսդիրը պայմանավորել է որոշակի բացառությամբ, այն է՝ եթե

- առաջին ատյանի դատարանում գործի քննության ժամանակ ապացույցը չի ներկայացվել կողմերի կամքից անկախ հանգամանքներով և

- ապացույցն էական նշանակություն ունի գործի լուծման համար:

Սույն գործով Դատարանն արձանագրել է, որ փոստային առաքման անդորրագրերը ներկայացվել են պատճենների տեսքով, ինչի պարագայում դատարանը գնահատում է որպես ոչ պատշաճ ապացույցներ, քանի որ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 54-րդ հոդվածի 2-րդ կետի համաձայն՝ գրավոր փաստաթղթերը ներկայացվում են բնօրինակով կամ պատշաճ վավերացված պատճենի ձևով:

Սույն գործով Վերաքննիչ դատարանը, դատական ակտը թողնելով օրինական ուժի մեջ, պատճառաբանել է, որ բողոքարեւրն ընդհանուր իրավասության դատարանում ներկայացրել է փոստային անդորրագրերը պատճենի ձևով և ծանուցված լինելով դատական նիստերի վերաբերյալ՝ գրկված չի եղել դրանց բնօրինակը ներկայացնելու հնարավորությունից, ուստի Վերաքննիչ դատարանում նրա ներկայացված փոստային անդորրագրերի բնօրինակները չեն կարող ընդունվել:

Մինչդեռ, սույն գործի փաստերի համաձայն՝ սույն գործի քննությունն իրականացվել է դատաքննության նախապատրաստական փուլով, 18.10.2010 թվականի դատական նիստի արձանագրությամբ պատասխանողի ներկայացուցիչը դատաքննության ընթացքում է միայն վիճարկել Գոմիդաս Հարթունյանի կողմից հայցադիմումին կից ներկայացված 24.11.2008 թվականի փոստային անդորրագրերի պատճենները և միջնորդել հանել դրանք ապացույցների շարքից, որպես ոչ պատշաճ ապացույցներ: Դատարանը գործի քննության ժամանակ, այդ թվում նաև 18.10.2010 թվականին նշանակված դատաքննության ընթացքում նշված պատճենները հետազոտելիս Գոմիդաս Հարթունյանից չի պահանջել ներկայացնել այդ փոստային անդորրագրերի ինչպես բնօրինակը, այնպես էլ դրանց վավերացված պատճենները: Գոմիդաս Հարթունյանը 24.11.2008 թվականին առաքված փոստային անդորրագրերի բնօրինակները ներկայացրել է վերաքննիչ բողոքին կից:

Նման պայմաններում Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Դատարանը, գործը դատաքննության նախապատրաստելիս պարզելով գործով ապացուցման ենթակա փաստերը, ընդունել է Գոմիդաս Հարթունյանի կողմից հայցադիմումին կից ներկայացրած 24.11.2008 թվականի փոստային անդորրագրերի պատճենները՝ հասցեագրված հիմնադիրներ Ռաֆայել Մկրտչյանին և Գուրգեն Մարտիրոսյանին, գործի դատաքննության ընթացքում հետազոտել է այդ ապացույցները, սակայն վճռի հիմքում դրել է դրա բնօրինակը կամ պատշաճ վավերացված պատճենը չներկայացնելու հանգամանքը՝ խախտելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 54-րդ հոդվածը:

Հետևաբար, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ հիմնավոր է բողոք բերած

անձի այն փաստարկը, որ 24.11.2008 թվականին առաքված փոստային անդորրագրերի բնօրինակները առաջին ատյանի դատարանում գործի քննության ժամանակ չի ներկայացվել իր կամքից անկախ:

Միաժամանակ, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ այդ ապացույցները ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 219-րդ հոդվածի 2-րդ կետի ուժով գործի լուծման համար էական նշանակություն չունեն, քանի որ սույն գործում Ընկերության հիմնադիր անդամ Գոմիդաս Հարթունյանի 24.11.2008 թվականի դիմումը և Գոմիդաս Հարթունյանի ներկայացուցիչ Սիրվարդ Բաղդասյանի գրությունն Ընկերության Տնօրենի և հիմնադիր անդամ Գուրգեն Մարտիրոսյանի կողմից ստանալու փաստը հավաստող ապացույցների բացակայության պայմաններում, միայն այդ փոստային անդորրագրերի բնօրինակները բավարար չեն հաստատված համարելու Ընկերությունից դուրս գալու վերաբերյալ Գոմիդաս Հարթունյանի կամքն արտահայտող դիմումն Ընկերություն ներկայացված և դրանք Ընկերությունում ստացված լինելու հանգամանքները:

Ինչ վերաբերում է բողոք բերած անձի այն փաստարկին, որ Վերաքննիչ դատարանը խախտել է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 109-րդ հոդվածի 1-ին կետը, ապա Վճռաբեկ դատարանը գտնում է, որ այն անհիմն է հետևյալ պատճառարանությամբ՝

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 109-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ դատարանը կարծում է գործի վարույթը, եթե վեճը ենթակա չէ դատարանում քննության:

«Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների մասին» ՀՀ օրենքի 12-րդ հոդվածի «ե» կետի համաձայն՝ ընկերության մասնակիցներն իրավունք ունեն՝ անկախ մյուս մասնակիցների համաձայնությունից, ցանկացած պահի դուրս գալ ընկերությունից:

Նույն օրենքի 21-րդ հոդվածի համաձայն՝ ընկերության մասնակիցն իրավունք ունի ցանկացած ժամանակ դուրս գալ ընկերությունից՝ անկախ ընկերության կամ նրա մասնակիցների համաձայնությունից: Ընկերության մասնակցի՝ ընկերությունից դուրս գալու հետ կապված հաշվարկները կատարվում են սույն օրենքի 23-րդ հոդվածի 1-ին կետով սահմանված կարգով:

Տվյալ նորմերից ուղղակիորեն բխում է, որ ընկերության մասնակցի նշված իրավունքի իրացման համար որևէ նախապայման չի պահանջվում, և դա կախված է բացարձակապես մասնակցի կամահայտնությունից: Սա նշանակում է, որ մասնակցի (սույն գործով հայցվորի) նշված իրավունքի իրացման հիմքում ընկած չէ այս կամ այն սուբյեկտի (սույն գործով պատասխանողների) պարտականությունը՝ դրսևորելու որոշակի վարքագիծ (գործողություն, անգործություն), որի կատարումն անհրաժեշտ կլինի մասնակցի այդ իրավունքի իրացման համար:

Սույն գործում առկա չէ որևէ ապացույց այն մասին, որ Ընկերությունից դուրս գալու վերաբերյալ Գոմիդաս Հարթունյանի կամքն արտահայտող դիմումը ներկայացվել և Ընկերության կողմից ստացվել է:

Հետևաբար, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Գոմիդաս Հարթունյանի կողմից չի պահպանվել վեճի լուծման, այն է՝ 40 տոկոս բաժնետնասով Գոմիդաս Հարթունյանին Ընկերությունից դուրս եկած համարելու հայցապահանջի արտադատարանական կարգը, որպիսի պայմաններում վեճն այդ մասով ենթակա չէ դատարանում քննության:

Նման պայմաններում Վճռաբեկ դատարանը գտնում է, որ մերժման է ենթակա Գոմիդաս Հարթունյանի՝ պատասխանողներին իր 40 տոկոս բաժնեմասը վճարելուն պարտավորեցնելու պահանջի մասը հետևյալ պատճառաբանությամբ.

«Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների մասին» ՀՀ օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ Ընկերության մասնակցի՝ ընկերությունից դուրս գալու դիմումը ներկայացնելու պահից նրա բաժնեմասը փոխանցվում է ընկերությանը: **Ընկերությունը պարտավոր է ընկերությունից դուրս գալու դիմումը ներկայացնելու պահից՝ 6 ամսվա ընթացքում**, մասնակցին վճարել բաժնեմասի (կանոնադրական կապիտալում նրա ավանդի ոչ լրիվ վճարման դեպքում՝ վճարված մասին համապատասխան բաժնեմասի) արժեքը, որը որոշվում է ընկերությունից դուրս գալու մասին դիմումը ներկայացնելու պահին ընկերության վերջին հաշվետու ժամանակաշրջանի հաշվապահական հաշվետվությունների հիման վրա:

Վերը նշվածը հաշվի առնելով և սույն գործի փաստերը համադրելով՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Ընկերությունից դուրս գալու վերաբերյալ Գոմիդաս Հարթունյանի կամքն արտահայտող դիմումը ներկայացված և Ընկերության կողմից ստացված լինելու փաստերը պարզված չլինելու պայմաններում հնարավոր չէ հաստատված համարել և արձանագրել «Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների մասին» ՀՀ օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի ուժով Ընկերության կողմից Գոմիդաս Հարթունյանի իրավունքի խախտման փաստը:

Տվյալ դեպքում Վճռաբեկ դատարանը հիմնավոր է համարում Վերաքննիչ դատարանի այն պատճառաբանությունը, որ սույն գործով չի հաստատվել Ընկերության կողմից «Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների մասին» ՀՀ օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի ուժով իր պարտականության կատարման հիմքերի առկայությունը:

2. վճռաբեկ բողոքը երկրորդ հիմքով հիմնավոր է հետևյալ պատճառաբանությամբ՝

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 2-րդ հոդվածի համաձայն՝ շահագրգիռ անձն իրավունք ունի սույն օրենսգրքով սահմանված կարգով դիմել դատարան՝ ՀՀ Սահմանադրությամբ, օրենքով և այլ իրավական ակտերով սահմանված կամ պայմանագրով նախատեսված իր իրավունքների, ազատությունների և օրինական շահերի պաշտպանության համար:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 163-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ սեփականության իրավունքը սուբյեկտի՝ օրենքով և այլ իրավական ակտերով ճանաչված ու պահպանվող իրավունքն է՝ իր հայեցողությամբ տիրապետելու, օգտագործելու և տնօրինելու իրեն պատկանող գույքը:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 277-րդ հոդվածի համաձայն՝ սեփականատերն իրավունք ունի պահանջել վերացնելու իր իրավունքների ամեն մի խախտում, թեկուզև այդ խախտումները զուգորդված չեն եղել տիրապետումից զրկելու հետ:

Վերը նշված նորմերի վերլուծությունից հետևում է, որ սեփականատերն օժտված է իրեն պատկանող գույքն իր հայեցողությամբ տիրապետելու, օգտագործելու և տնօրինելու իրավունքներով և իրավունք ունի պահանջել վերացնելու իր **իրավունքների ամեն մի խախտում**, որոնք կապված են և խոչընդոտում են այդ իրավունքների իրականացմանը:

Սույն գործում առկա ՀՀ ԿԱ ԱԳԿՊԿ Դավթաշենի տարածքային ստորաբաժանման կողմից տրված 13.05.2004 թվականի թիվ 1130402 սեփականության իրավունքի գրանցման վկայականի համաձայն՝ Գոմիդաս Հարթունյանը Երևանի Դավթաշեն 4-րդ թաղամասի թիվ 41/1 հասցեում գտնվող ավտոկայանատեղի, ավտոտեխսպասարկման կայանի սեփականատերն է, Ընկերության հիմնադիրների ընդհանուր (հիմնադիր) ժողովի 17.05.2004 թվականի թիվ 1 արձանագրությամբ՝ ժողովը որոշել է Ընկերության գտնվելու վայր ընդունել Հայաստանի Հանրապետություն, ք. Երևան, Դավթաշեն 4-րդ թաղամաս, շենք 41/1 հասցեն:

Տվյալ դեպքում սեփականատեր Գոմիդաս Հարթունյանը պահանջել է իր սեփականությունը հանդիսացող Երևանի Դավթաշեն 4-րդ թաղամասի թիվ 41/1 հասցեից հանել Ընկերության գրանցման հասցեն:

Հետևաբար, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Գոմիդաս Հարթունյանի պահանջը Ընկերության գրանցման վայրն իր սեփականությունը հանդիսացող տարածքից հանելու մասով բխում է ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 277-րդ հոդվածից:

Ուստի հիմնավոր չէ Վերաքննիչ դատարանի պատճառաբանությունն այդ մասով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 109-րդ հոդվածի 1-ին կետի հիմքով գործի վարույթի կարճելու վերաբերյալ:

Վճռաբեկ բողոքի պատասխանում բերված փաստարկները մասնակիորեն հերքվում են վերոնշյալ պատճառաբանությամբ:

Այսպիսով, վճռաբեկ բողոքի երկրորդ հիմքի առկայությունը Վճռաբեկ դատարանը դիտում է բավարար՝ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 227-րդ և 228-րդ հոդվածների ուժով Վերաքննիչ դատարանի որոշումը մասնակիորեն բեկանելու համար:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 240-241²-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

ՈՐՈՇԵՑ

1. Վճռաբեկ բողոքը բավարարել մասնակիորեն: Բեկանել ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 27.01.2011 թվականի որոշման՝ «Ագուր-Զոմփ» ՍՊԸ-ի գրանցման վայրն իր տարածքից հանելու պահանջի մասը և այդ մասով գործն ուղարկել Երևանի Աջափնյակ և Դավթաշեն վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարան՝ նոր քննության: Որոշումը մնացած մասով թողնել օրինական ուժի մեջ:

2. Դատական ծախսերի բաշխման հարցին անդրադառնալ գործի նոր քննության ընթացքում:

3. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

*ՆԱԽԱԳԱՀՈՂ՝ ստորագրություն
ԴԱՏԱՎՈՐՆԵՐ՝ ստորագրություններ*

ՄՆԱՆԿՈՒԹՅՈՒՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական Քաղաքացիական գործ թիվ ԵՇԴ /0045/04/09
 դատարանի որոշում 2011թ.
 Քաղաքացիական գործ թիվ ԵՇԴ /0045/04/09
 Նախագահող դատավոր՝ Ա. Մկրտչյան
 Դատավորներ՝ Ն. Հովսեփյան
 Ն. Բարսեղյան

ՈՐՈՇՈՒՄ

ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քաղաքացիական
 և վարչական պալատը (այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

*նախագահությամբ
 մասնակցությամբ դատավորներ*

Ե. ԽՈՒՆԴԿԱՐՅԱՆԻ
 Ս. ԱՆՏՈՆՅԱՆԻ
 Վ. ԱԲԵԼՅԱՆԻ
 Վ. ԱՎԱՆԵՍՅԱՆԻ
 Ա. ԲԱՐՍԵՂՅԱՆԻ
 Մ. ԴՐՄԵՅԱՆԻ
 Գ. ՀԱԿՈԲՅԱՆԻ
 Է. ՀԱՅՐԻՅԱՆԻ
 Տ. ՊԵՏՐՈՍՅԱՆԻ
 Ե. ՍՈՂՈՄՈՆՅԱՆԻ

2011 թվականի մարտի 04-ին

դռնբաց դատական նիստում, քննելով ըստ դիմումի Սարգիս Ամիրխանյանի
 և մյուսների՝ «Ջեներալ Տրանստորդ» Մ.Ք. ՓԲԸ-ին (այսուհետ՝ Ընկերություն)
 սնանկ ձանաչելու պահանջի մասին, քաղաքացիական գործով ՀՀ վերաքննիչ
 քաղաքացիական դատարանի 08.10.2010 թվականի որոշման դեմ Ընկերության
 վճռաբեկ բողոքը,

ՊԱՐԶԵՑ

1. Գործի դատավարական նախապատմությունը

Դիմելով դատարան՝ Սարգիս Ամիրխանյանը և մյուսները պահանջել են
 Ընկերությանը ձանաչել սնանկ:

Երևանի Շենգավիթ վարչական շրջանի ընդհանուր իրավասության
 առաջին ատյանի դատարանի (այսուհետ՝ Դատարան) 03.03.2010 թվականի վճռով

Ընկերությունը ձանաչվել է սնանկ:

Դատարանի 21.06.2010 թվականի որոշմամբ հաստատվել է Ընկերության սնանկության գործով պահանջների վերջնական ցուցակը:

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի (այսուհետ՝ Վերաքննիչ դատարան) 08.10.2010 թվականի որոշմամբ Ընկերության վերաքննիչ բողոքը մերժվել է, և Դատարանի 21.06.2010 թվականի որոշումը թողնվել է օրինական ուժի մեջ:

Սույն գործով վճռաբեկ բողոք է ներկայացրել Ընկերությունը:

Վճռաբեկ բողոքի պատասխան չի ներկայացվել:

2. Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը

Վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

Դատարանը խախտել է ՀՀ Սահմանադրության 18-րդ հոդվածը, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 219-րդ հոդվածի 1-ին կետը, «Մասնկության մասին» ՀՀ օրենքի 46-րդ հոդվածը:

Բողոք բերած անձը նշված պնդումը պարձառաքանում է հետևյալ փաստարկներով.

Վերաքննիչ դատարանը գտել է, որ Դատարանի որոշմամբ չեն խախտվել բողոք բերած անձի իրավունքները, քանի որ Դատարանը պահանջների վերջնական ցուցակը հաստատել է՝ հիմք ընդունելով նաև նրա ներկայացրած առարկությունները, որպիսի պայմաններում բացակայում է բողոք բերած անձի որևէ սուբյեկտիվ իրավունքի խախտում: Մինչդեռ, սնանկության վարույթն ընդհանրապես և բողոքարկվող որոշումը՝ մասնավորապես, վերաբերում են Ընկերության իրավունքներին և առավելապես պարտականություններին, քանի որ Դատարանի որոշումը, որը ենթադրաբար հանգեցնելու է սնանկ ձանաչված Ընկերության գույքի վաճառքի, չի կարող չվերաբերել Ընկերության իրավունքներին և պարտականություններին:

Վերաքննիչ դատարանը դուրս է եկել նաև վերաքննիչ բողոքի սահմաններից: Վերաքննիչ բողոքի հիմքը վերաբերել է նրան, որ Դատարանն իրավասու չէր հաստատելու պարտատերերի վերջնական ցուցակը մասնակի՝ մի քանի պարտատերերի մասով, իսկ հետագայում հաստատել նաև մեկ այլ վերջնական ցուցակ: Մինչդեռ, Վերաքննիչ դատարանը, չանդրադառնալով այդ հիմքին, մերժել է բողոքը դրա հիմքերի հետ կապ չունեցող հիմքով, որպիսին է Ընկերության՝ բողոքարկված որոշման դեմ բողոք բերելու իրավունքի բացակայությունը:

Վերոգրյալի հիման վրա վճռաբեկ բողոք բերած անձը պահանջել է բեկանել Վերաքննիչ դատարանի 08.10.2010 թվականի որոշումը և կայացնել նոր դատական ակտ՝ պահանջների վերջնական ցուցակի հաստատումն ամբողջությամբ մերժելու մասին:

3. Վճռաբեկ բողոքի քննության համար նշանակություն ունեցող փաստերը

1. Ընկերության սնանկության գործով կառավարիչը 26.05.2010 թվականին դատարան է ներկայացրել իր կողմից կազմված պարտատերերի պահանջների նախնական ցուցակը, որում ընդգրկվել էին 86 պարտատեր (**հավելված, հատոր 1-ին, գ.թ. 2**):

2. Դատարանը 21.06.2010 թվականի որոշմամբ բավարարել է Ընկերության սնանկության գործով կառավարչի միջնորդությունը, որով վերջինս խնդրել էր պարտատերերի նախնական ցուցակում ներառված տասը պահանջների վերաբերյալ կառավարչի, պարտապանի և պարտատերերի կողմից առարկություն չներկայացնելու հետևանքով հաստատել հիշյալ պահանջների մասով Ընկերության պարտատերերի պահանջների նախնական ցուցակը՝ որպես վերջնական ցուցակ (**հավելված, հատոր 1-ին, գ.թ. 52, 57-61**):

4. Վճարել դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը

Քննարկելով վճարել բողոքը նշված հիմքի սահմաններում Վճարել դատարանը գրնում է, որ այն հիմնավոր է հետևյալ պատճառաբանությամբ.

ՀՀ Սահմանադրության 19-րդ հոդվածի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի իր խախտված իրավունքները վերականգնելու, ինչպես նաև իրեն ներկայացված մեղադրանքի հիմնավորվածությունը պարզելու համար հավասարության պայմաններում, արդարության բոլոր պահանջների պահպանմամբ, անկախ և անկողմնակալ դատարանի կողմից ողջամիտ ժամկետում իր գործի հրապարակային քննության իրավունք:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 2-րդ հոդվածի համաձայն՝ շահագրգիռ անձն իրավունք ունի նույն օրենսգրքով սահմանված կարգով դիմել դատարան՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ, օրենքներով և այլ իրավական ակտերով սահմանված կամ պայմանագրով նախատեսված իր իրավունքների, ազատությունների և օրինական շահերի պաշտպանության համար:

«Մասնկության մասին» ՀՀ օրենքի 46-րդ հոդվածի 6-րդ մասի համաձայն՝ պահանջների ներկայացման համար սահմանված ժամկետից հետո՝ ետօրյա ժամկետում, պահանջների նախնական ցուցակը կառավարիչը ներկայացնում է դատարան, պարտապանին, առավել մեծ պահանջներ ունեցող 5 պարտատերերին և հրապարակում է իրավաբանական անձանց պետական գրանցման մասին տվյալներ հրապարակող մամուլում: Եթե հրապարակումից հետո՝ յոթ օրվա ընթացքում, կառավարիչը, պարտապանը և պարտատերերը նախնական ցուցակի դեմ գրավոր առարկություններ չեն ներկայացնում դատարան, ապա դատավորը ետօրյա ժամկետում առանց նիստ հրավիրելու որոշում է կայացնում պահանջների ցուցակը հաստատելու մասին (**վերջնական ցուցակ**):

Նույն օրենքի 46-րդ հոդվածի 7-րդ մասի համաձայն՝ եթե իրավաբանական անձանց պետական գրանցման մասին տվյալներ հրապարակող մամուլում հրապարակումից հետո՝ յոթ օրվա ընթացքում, կառավարիչը, պարտապանը և պարտատերերը գրավոր առարկություն են ներկայացնում պահանջների նախնական ցուցակի առաջնահերթության կամ որևէ պարտատիրոջ պահանջի վերաբերյալ, ապա դատավորը, առարկությունն ստանալուց հետո՝ յոթ օրվա ընթացքում, հրավիրում է դատական նիստ, որի տեղի և ժամանակի մասին կառավարչին, պարտապանին և պարտատերերին ծանուցում է իրավաբանական անձանց պետական գրանցման մասին տվյալներ հրապարակող մամուլում՝ նիստից առնվազն երեք օր առաջ տրվող հայտարարությամբ կամ ծանուցագիր ուղարկելու միջոցով:

Նույն հոդվածի 8-րդ մասի համաձայն՝ առարկությունների քննարկման արդյունքում դատարանը որոշում է պահանջի օրինականությունը, չափը, առաջնա-

հերթությունը, ապահովվածությունը և որոշում է կայացնում պահանջների **վերջնական ցուցակը հաստատելու մասին**:

Պահանջների վերջնական ցուցակը հաստատելու մասին որոշումը կարող է բողոքարկվել:

Սույն գործով Դատարանը պարտատերերի պահանջների վերջնական ցուցակը հաստատել է պահանջների մի մասով, քանի որ պահանջների մյուս մասի դեմ ներկայացվել էին առարկություններ, որոնք դեռևս քննարկման փուլում էին: Ընկերությունը բողոքարկել է Դատարանի 21.06.2010 թվականի ««Ջեներալ Տրանստորդը» Մ.Ք. ՓԲԸ-ի սնանկության գործով պահանջների վերջնական ցուցակը հաստատելու մասին» որոշումն այն հիմքով, որ Դատարանն իրավասու չէր մասնակի հաստատելու պարտատերերի վերջնական ցուցակն այն դեպքում, երբ մյուս պահանջները դեռևս քննարկման փուլում էին:

Վերաքննիչ դատարանը մերժել է Ընկերության վերաքննիչ բողոքը՝ պատճառաբանելով, որ բողոքարկվող որոշմամբ չեն խախտվել Ընկերության իրավունքները, քանի որ Դատարանը պահանջների վերջնական ցուցակը հաստատել է՝ հիմք ընդունելով նաև վերջինիս ներկայացրած առարկությունները, որպիսի պայմաններում բացակայում է նրա որևէ սուբյեկտիվ իրավունքի խախտում:

Մինչդեռ, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ պահանջների վերջնական ցուցակը հաստատելու մասին որոշումը չի կարող չառնչվել պարտապանի՝ տվյալ դեպքում Ընկերության իրավունքներին, քանի որ այն պարունակում է հենց Ընկերության գույքից բավարարում ստանալու իրավունք ունեցող անձանց ցանկը, ուստի Ընկերությունը համարվում է շահագրգիռ անձ, հետևաբար ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 2-րդ հոդվածի հիմքով օժտված է դատարան դիմելու իրավունքով: Բացի այդ, Ընկերության այդ իրավունքն ուղղակիորեն ամրագրված է նաև «Սնանկության մասին» ՀՀ օրենքի 46-րդ հոդվածի 8-րդ մասում, որը որևէ բացառություն չի անում պահանջների վերջնական ցուցակը հաստատելու մասին որոշումը բողոքարկելու համար:

Ինչ վերաբերում է վճռաբեկ բողոքում բարձրացված այն հարցին, որ Դատարանն իրավասու չէր մասնակի հաստատելու պարտատերերի վերջնական ցուցակն այն դեպքում, երբ մյուս պահանջները դեռևս քննարկման փուլում էին, ապա Վճռաբեկ դատարանը գտնում է, որ այն հիմնավոր է և բխում է սնանկության ոլորտը կարգավորող ՀՀ օրենսդրության իմաստից: Մասնավորապես, «Սնանկության մասին» ՀՀ օրենքի 6-րդ գլուխը կարգավորում է պարտատերերի պահանջների հետ կապված հարցերը, իսկ նույն օրենքի 46-րդ հոդվածը կարգավորում է այդ պահանջների հաստատման կարգը: Նշված հոդվածի վերլուծությունից բխում է, որ պահանջների նախնական ցուցակը մամուլում հրապարակելուց հետո՝ յոթ օրվա ընթացքում, կատավարչի, պարտապանի և պարտատերերի նախնական ցուցակի դեմ գրավոր առարկություններ չներկայացնելու դեպքում դատարանը եռօրյա ժամկետում առանց նիստ հրավիրելու է որոշում կայացնում պահանջների **վերջնական ցուցակը** հաստատելու մասին՝ իսկ նման առարկությունների ներկայացման դեպքում՝ այդ առարկությունների քննարկման արդյունքում է դատարանը որոշում կայացնում պահանջների **վերջնական ցուցակը հաստատելու մասին**: Այսինքն՝ բոլոր դեպքերում դատարանը պարտավոր է կայացնել որոշում նախնական ցուցակում ընդգրկված բոլոր պարտատերերի մասով, և օրենքը չի նախատեսում պարտատերերի վերջնական ցուցակը մասնակի հաստատելու հնարավորություն:

Հետևաբար, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ սույն գործով պահանջների վերջնական ցուցակը հաստատելու մասին որոշումը պետք է կայացվի ներկայացված բոլոր առարկությունների քննարկման արդյունքում, որով պետք է անդրադառնալ նախնական ցուցակում ընդգրկված բոլոր պարտատերերի պահանջների հաստատման կամ մերժման հարցերին:

Ելնելով վերոգրյալից՝ Վճռաբեկ դատարանը եզրահանգում է, որ Վերաքննիչ դատարանի 08.10.2010 թվականի որոշմամբ Ընկերությունը գրկվել է ՀՀ Սահմանադրությամբ և Կոնվենցիայով ամրագրված իր իրավունքները դատական կարգով պաշտպանելու իրավունքից:

Այսպիսով, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ վճռաբեկ բողոքի հիմքի առկայությունը բավարար է, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 227-րդ հոդվածի համաձայն, Վերաքննիչ դատարանի որոշումը բեկանելու համար:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 240-241²-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

ՈՐՈՇԵՑ

1. Վճռաբեկ բողոքը բավարարել մասնակիորեն: Բեկանել ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 08.10.2010 թվականի որոշումը և գործն ուղարկել Երևանի Շենգավիթ վարչական շրջանի ընդհանուր իրավասության առաջին ստյանի դատարան՝ նոր քննության:

2. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

*ՆԱԽԱԳԱՀՈՂ՝ ստորագրություն
ԴԱՏԱՎՈՐՆԵՐ՝ ստորագրություններ*

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական Քաղաքացիական գործ թիվ ԵԱԶԳ/0018/04/10
դատարանի որոշում 2011թ.
Քաղաքացիական գործ թիվ ԵԱԶԳ/0018/04/10
Նախագահող դատավոր՝ Ա. Մկրտչյան
Դատավորներ՝ Ն. Հովսեփյան
Ն. Բարսեղյան

ՈՐՈՇՈՒՄ
ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քաղաքացիական
և վարչական պալատը (այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

*նախագահությամբ
մասնակցությամբ դատավորներ*

Ե. ԽՈՒՆԴԿԱՐՅԱՆԻ
Մ. ԴՐՄԵՅԱՆԻ
Վ. ԱԲԵԼՅԱՆԻ
Ս. ԱՆՏՈՆՅԱՆԻ
Վ. ԱՎԱՆԵՍՅԱՆԻ
Ա. ԲԱՐՍԵՂՅԱՆԻ
Է. ՀԱՅՐԻՅԱՆԻ
Տ. ՊԵՏՐՈՍՅԱՆԻ
Ե. ՍՈՂՈՄՈՆՅԱՆԻ

2011 թվականի ապրիլի 01-ին
դռնբաց դատական նիստում, քննելով Սպարտակ Երիցյանի վճռաբեկ բողոքը
ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 30.07.2010 թվականի որոշման դեմ՝ ըստ
դիմումի «Արդշինբանկ» ԲԲԸ լուծարվող բանկի (այսուհետ՝ Բանկ) ընդդեմ Սպարտակ
Երիցյանի՝ սնանկ ձանաչելու պահանջի մասին,

ՊԱՐԶԵՑ

1. Գործի դատավարական նախապատմությունը

Դիմելով դատարան՝ Բանկը պահանջել է Սպարտակ Երիցյանին ձանաչել
սնանկ:

Երևանի Արաբկիր և Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանների ընդհանուր
իրավասության առաջին ատյանի դատարանի (այսուհետ՝ Դատարան) 24.05.2010
թվականի վճռով դիմումը բավարարվել է:

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի (այսուհետ՝ Վերաքննիչ դատա-

րան) 30.07.2010 թվականի որոշմամբ Դատարանի 24.05.2010 թվականի վճիռը թողնվել է օրինական ուժի մեջ:

Վճռարեկ բողոք է ներկայացրել Սպարտակ Երիցյանը:

Վճռարեկ բողոքի պատասխան է ներկայացրել Բանկի լուծարային կառավարիչ Յուրա Եղիազարյանը:

2. Վճռարեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը

Սույն վճռարեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

Վերաքննիչ դատարանը խախտել է ՀՀ Սահմանադրության 18-րդ, 19-րդ հոդվածները, «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի (այսուհետ՝ Կոնվենցիա) 6-րդ հոդվածը, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 53-րդ հոդվածը, սխալ է մեկնաբանել ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 332-րդ հոդվածը, «Մասնկության մասին» ՀՀ օրենքի 10-րդ, 17-րդ հոդվածների պահանջները:

Բողոք բերած անձը նշված պնդումը պարձառաքանում է հետևյալ փաստարկներով.

Վերաքննիչ դատարանը հաշվի չի առել, որ Երևանի Արաբկիր և Քանաքեռ-Զեյթուն համայնքների առաջին ատյանի դատարանի 16.08.2000 թվականի վճիռի հիման վրա օտարվել է Սպարտակ Երիցյանի կողմից գրավադրված բնակարանը, և Բանկը, բաց թողնելով հայցային վաղեմության ժամկետը, սնանկ ձանաչելու վերաբերյալ դիմումը ներկայացրել է 13.05.2010 թվականին, այսինքն՝ ավելի քան տասը տարի հետո: Փաստորեն, Բանկը բաց է թողել հայցային վաղեմության թե ընդհանուր, թե հատուկ ժամկետները:

Տվյալ դեպքում Վերաքննիչ դատարանն անտեսել է, որ «Մասնկության մասին» ՀՀ օրենքի իմաստով Սպարտակ Երիցյանը պարտապան չի կարող լինել, ուստի չի կարող և սնանկ ձանաչվել:

Վերաքննիչ դատարանը հիմնավոր չի համարել Սպարտակ Երիցյանի կողմից իր սնանկությունը գրավոր վիճարկելու համար նախատեսված 7-օրյա ժամկետի բացթողումը՝ պատճառաբանելով, որ Սպարտակ Երիցյանը չի ներկայացրել որևէ ապացույց այն մասին, որ նա ի վիճակի չէր կամ չէր կարող ինքնուրույն վիճարկել իր սնանկությունը կամ ավելի վաղ դիմել փաստաբանական ծառայություններից օգտվելու համար:

Հետևաբար, Վերաքննիչ դատարանը զրկել է Սպարտակ Երիցյանին դատական պաշտպանության իրավունքից, ինչպես նաև հնարավորություն չի տրվել նրան ներկայացնելու իր առարկությունները, որի արդյունքում խախտվել է ՀՀ Սահմանադրության 18-րդ, 19-րդ հոդվածներով և Կոնվենցիայի 6-րդ հոդվածով երաշխավորված իր արդար դատաքննության իրավունքը:

Վերոգրյալի հիման վրա բողոք բերած անձը պահանջել է բեկանել Վերաքննիչ դատարանի 30.07.2010 թվականի որոշումը և մերժել Բանկի դիմումը:

2.1 Վճռարեկ բողոքի պատասխանի հիմնավորումները

Դատարանի կողմից դիմումը վարույթ ընդունելու մասին որոշումը կայացվել է 13.05.2010 թվականին, և 14.05.2010 թվականին պարտապան Սպարտակ Երիցյանը

ստացել է այն: Որոշումը ստանալուն հաջորդող 7 օրվա ընթացքում Սպարտակ Երիցյանը գրավոր այն չի վիճարկել:

Տվյալ դեպքում Վերաքննիչ դատարանի կողմից պահպանվել են «Մասնակության մասին» ՀՀ օրենքի համապատասխան դրույթները և կայացվել է դատական ակտ, որն ամբողջովին իրավական է, և դրանով իրավացիորեն հաստատվել է, որ Սպարտակ Երիցյանը լուծարվող Բանկի պարտապանն է:

3. Վճարել քողոքի քննության համար նշանակություն ունեցող փաստերը

Վճարել քողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1. Երևանի Արաբկիր և Քանաքեռ-Զեյթուն համայնքների առաջին ատյանի դատարանի՝ 16.08.2000 թվականի թիվ 2-1438/2000 օրինական ուժի մեջ մտած վճռի համաձայն՝ պարտապան Սպարտակ Երիցյանից հօգուտ «Արդշինբանկ» ԲԲԸ-ի բռնագանձվել է 4.577 ԱՄՆ դոլարին և 38 ԱՄՆ ցենտին համարժեք ՀՀ դրամ, այդ թվում հիմնական պարտք՝ 3.000 ԱՄՆ դոլարին համարժեք ՀՀ դրամ, տուժանք՝ 1.577 ԱՄՆ դոլարին և 38 ԱՄՆ ցենտին համարժեք ՀՀ դրամ, ինչպես նաև 91 ԱՄՆ դոլարին և 55 ԱՄՆ ցենտին համարժեք ՀՀ դրամ բռնագանձումը տարածելով գրավադրված՝ Երևանի Օրբելու փողոցի 16-րդ շենքի՝ Սպարտակ Երիցյանի սեփականությունը հանդիսացող 53,54 քմ մակերեսով տարածքի վրա: Տվյալ վճռի հիմքում դրվել է կողմերի միջև 24.06.1999 թվականին կնքված թիվ 33-Վ.ՖՏ վարկային պայմանագիրը (գ.թ. 5):

2. ԴԱՀԿ ծառայության Երևանի ստորաբաժանման (այսուհետ՝ Ծառայություն) «Կատարողական վարույթ հարուցելու մասին» 25.10.2000 թվականի որոշմամբ հարուցվել է կատարողական վարույթ (գ.թ. 6):

3. Ծառայության «Կատարողական վարույթն ավարտելու մասին» 02.10.2001 թվականի որոշմամբ հարուցված կատարողական վարույթն ավարտվել է: Տվյալ որոշմամբ Ծառայությունը, պարզելով, որ կատարողական գործողությունների ընթացքում **պահանջատերը դիմում է ներկայացրել կատարողական թերթը ետ վերադարձնելու մասին**, որոշել է ավարտել Սպարտակ Երիցյանից հօգուտ Բանկի 4.577,38 ԱՄՆ դոլար բռնագանձելու վերաբերյալ 25.10.2000 թվականին հարուցված թիվ 04/1679 կատարողական վարույթը (գ.թ. 7): Կատարողական թերթը նոր կատարման չի ներկայացվել:

4. Բանկի լուծարային կառավարչի և գլխավոր հաշվապահի կողմից ստորագրված և 22.04.2010 թվականին տրված՝ Սպարտակ Երիցյանի պարտքի վերաբերյալ տեղեկանքի համաձայն՝ Ծառայության կողմից աճուրդային կարգով գրավադրված գույքը 1.208.210 ՀՀ դրամ գումարի չափով վաճառվել է, և վաճառքից գոյացած գումարը նպատակաուղղվել է պարտքի մարմանը, որի ընթացքում պարտապանի պարտքը նվազել է և վարկի մայր գումարի պարտքը 22.04.2010 թվականի դրությամբ Բանկին կազմել է 2.423,71 ԱՄՆ դոլարին համարժեք ՀՀ դրամ (գ.թ. 8):

Բանկը դիմում է ներկայացրել Երևանի Արաբկիր և Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարան՝ Սպարտակ Երիցյանին սնանկ ճանաչելու պահանջի մասին: Դատարանի 13.05.2010 թվականի որոշմամբ դիմումն ընդունվել է վարույթ: Սպարտակ Երիցյանը Դատարանի որոշումը ստացել է 14.05.2010 թվականին և 24.05.2010 թվականին Դատարան է

ներկայացրել դիմումի պատասխան, որով վիճարկել է իր սնանկությունը (գ.թ. 2, 42, 44, 46, 54):

4. Վճարել դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը

Քննելով վճարել բողոքը նշված հիմքի սահմաններում Վճարել դարարանը գտնում է, որ այն հիմնավոր է մասնակիորեն հերկյալ պարճառաբանությամբ.

Սույն գործի քննության պահին գործող՝ «Մասնկության մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 2-րդ մասի ա) կետի համաճայն՝ պարտապանը կարող է հարկադրված սնանկության դիմումի հիման վրա սնանկ ճանաչվել, եթե նա թույլ է տվել օրենքով սահմանված նվազագույն աշխատավարձի հինգհարյուրապատիկը գերազանցող անվիճելի վճարային պարտավորությունների 30-օրյա կամ ավելի ժամկետով կետանց, և վճռի կայացման պահին նշված կետանցը շարունակվում է: Վճարային պարտավորությունն անվիճելի է, եթե պարտապանը չի առարկում դրա դեմ, կամ եթե նա առարկում է հիշյալ պարտավորության դեմ, սակայն վճարային պարտավորությունը ճանաչված է օրինական ուժի մեջ մտած վճռով կամ դատավճռով, և բացակայում է հաշվանցի հնարավորությունը:

Վերոնշյալ հոդվածից հետևում է, որ պարտապանը կարող է հարկադրված սնանկության դիմումի հիման վրա սնանկ ճանաչվել երկու պայմանների միաժամանակյա առկայության պայմաններում.

1. պարտապանը թույլ է տվել օրենքով սահմանված նվազագույն աշխատավարձի հինգհարյուրապատիկը գերազանցող անվիճելի վճարային պարտավորությունների 30-օրյա կամ ավելի ժամկետով կետանց,

2. վճռի կայացման պահին նշված կետանցը շարունակվում է:

Այսպիսով՝ Վճարել դատարանը գտնում է, որ պարտապանին սնանկ ճանաչելու մասին հարցը քննարկելու ժամանակ անհրաժեշտ է պարզել, թե արդյոք պարտապանն ունի անվիճելի վճարային պարտավորություն:

Սույն գործով Դատարանը դիմումի բավարարման հիմքում դրել է այն հանգամանքը, որ «Մասնկության մասին» ՀՀ օրենքի 17-րդ հոդվածի համաճայն՝ եթե հարկադրված սնանկության դիմումը վարույթ ընդունելու մասին դատարանի որոշումը ստանալուն հաջորդող 7 օրվա ընթացքում պարտապանը գրավոր չի վիճարկում իր սնանկությունը, ապա 8-րդ օրը դատավորն առանց դատական նիստ հրավիրելու վճիռ է կայացնում պարտապանին սնանկ ճանաչելու մասին, եթե պարտապանն անվճարունակ է կամ առկա են նույն օրենքի 3-րդ հոդվածի երկրորդ մասով նախատեսված հիմքերը:

Վերաքննիչ դատարանը, դատական ակտը թողնելով օրինական ուժի մեջ և արձանագրելով, որ Դատարանի համար պարտադիր էին հետևյալ հանգամանքների առկայության գնահատումը, այն է՝ պարտավորության առկայությունը, որը կգերազանցի նվազագույն աշխատավարձի հինգհարյուրապատիկը, ժամկետանց պարտավորության 30-օրյա կամ ավելի ժամկետով կետանցը, որը Դատարանի վճռի կայացման պահին շարունակվել է, սնանկ ճանաչելու մասին Դատարանի դիմումը վարույթ ընդունելու մասին որոշումը 7-օրյա ժամկետում առարկություններ չներկայացնելը, հաստատված է համարել, որ տվյալ պարագայում պատասխանողի անվիճելի վճարային պարտավորությունները գերազանցում են նվազագույն աշխատավարձի հինգհարյուրապատիկը, և առկա է պարտավորությունների 30-օրյա կամ ավելի ժամկետով կետանց, ինչպես նաև չի ներկայացվել որևէ առարկություն

օրենքով սահմանված ժամկետում: Բացի այդ, Վերաքննիչ դատարանն արձանագրել է, որ Սպարտակ Երիցյանն ունեցել է իր սնանկությունը վիճարկելու բավարար և ողջամիտ հնարավորություն դիմումը վարույթ ընդունելու որոշումը ստանալուց հետո 7-օրյա ժամկետում, ինչը չի կատարել: Մասնավորապես, գործում առկա չէ որևէ ապացույց այն մասին, որ կողմը ի վիճակի չէր կամ չէր կարող ինքնուրույն վիճարկել իր սնանկությունը կամ ավելի վաղ դիմել փաստաբանական ծառայությունից օգտվելու համար:

Վճռաբեկ դատարանը գտնում է, որ բողոքի հիմքում բարձրացված հարցին պատասխանելու համար անհրաժեշտ է պարզել, թե արդյոք վճարային պարտավորություն սահմանող օրինական ուժի մեջ մտած դատական ակտն օրենքով սահմանված ժամկետում կատարման չներկայացնելու դեպքում տվյալ վճռից բխող իրավունքներն ու պարտականությունները ենթակա են կատարման, թե՛ ոչ:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 10-րդ հոդվածի 1-ին կետի 2-րդ պարբերության 3-րդ ենթակետի համաձայն՝ քաղաքացիական իրավունքները և պարտականությունները ծագում են քաղաքացիական իրավունքներ և պարտականություններ սահմանող դատական ակտից:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 14-րդ հոդվածի համաձայն՝ օրինական ուժի մեջ մտած դատական ակտը պարտադիր է բոլոր պետական մարմինների, տեղական ինքնակառավարման մարմինների, դրանց պաշտոնատար անձանց, իրավաբանական անձանց և քաղաքացիների համար ու ենթակա է կատարման Հայաստանի Հանրապետության ամբողջ տարածքում:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 52-րդ հոդվածի 2-րդ կետի համաձայն՝ նախկինում քննված՝ քաղաքացիական գործով օրինական ուժի մեջ մտած դատարանի վճռով հաստատված հանգամանքները նույն անձանց միջև դատարանում այլ գործ քննելիս կրկին չեն ապացուցվում:

«Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ կատարողական թերթը կարող է կատարման ներկայացվել մեկ տարվա ընթացքում սկսած այն օրվանից, երբ օրինական ուժի մեջ է մտել դատական ակտը:

«Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի 25-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ կատարողական թերթի կրկնօրինակ տալու մասին դիմումը պահանջատերը ներկայացնում է կատարողական թերթ տված դատարան: Դիմումը կարող է տրվել մինչև կատարողական թերթը կատարման ներկայացնելու ժամկետի ավարտը:

Սույն գործի փաստերի համաձայն՝ 16.08.2000 թվականի օրինական ուժի մեջ մտած վճռով վճռվել է Սպարտակ Երիցյանից հօգուտ Բանկի բռնագանձել 4.577 ԱՄՆ դոլարին և 38 ԱՄՆ ցենտին համարժեք ՀՀ դրամ՝ բռնագանձումը տարածելով Սպարտակ Երիցյանին սեփականության իրավունքով պատկանող գրավադրված՝ Երևանի Օրբելու փողոցի 16-րդ շենքի 53,54քմ մակերեսով տարածքի վրա: Մշված վճռի հիման վրա 16.08.2000 թվականին տրված կատարողական թերթի համաձայն՝ 25.10.2000 թվականին հարուցվել է կատարողական վարույթ: Կատարողական գործողությունների ընթացքում Բանկը դիմում է ներկայացրել կատարողական թերթը հետ վերադարձնելու մասին, և նշված դիմումի հիմքով 02.10.2001 թվականին կատարողական վարույթն ավարտվել է: 16.08.2000 թվականին տրված թիվ 2-1438 կատարողական թերթը նոր կատարման չի ներկայացվել:

Հիմք ընդունելով վերոգրյալը և գործի փաստերը համադրելով՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ 16.08.2000 թվականի օրինական ուժի մեջ մտած վճռով Բանկի մոտ ծագել է վարկային պարտավորությամբ սահմանված գումարը պահանջելու իրավունք, իսկ Սպարտակ Երիցյանի մոտ՝ այն վճարելու պարտականություն: Սպարտակ Երիցյանի կողմից նշված պարտավորության չկատարման դեպքում Բանկն իրավունք ուներ «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի ուժով դատական ակտն ուժի մեջ մտնելուց հետո մեկ տարվա ընթացքում այն ներկայացնել հարկադիր կատարման: Մինչդեռ, հետագայում կատարողական թերթը 02.10.2000 թվականին հետ վերցնելու և այն օրենքով սահմանված կարգով կրկին կատարման չներկայացնելու պայմաններում Բանկը զրկվել է այդ իրավունքի իրականացման իրավական հնարավորությունից, իսկ Սպարտակ Երիցյանը՝ որպես պարտապան, ազատվել է սույն վճռով սահմանված պարտավորությունից (տես, «Արդշիրքանկ» ԲԲԸ-ի դիմումն ընդդեմ «Արոր-Բագրար» արտադրական կոոպերատիվի՝ սնանկ ճանաչելու պահանջի մասին Վճռաբեկ դատարանի 18.09.2009 թվականի թիվ ՀՔԴ4/0024/04/08 քաղաքացիական գործով որոշումը):

Հետևաբար, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ «Մասնկության մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 2-րդ մասի ուժով բացակայում է Սպարտակ Երիցյանին սնանկ ճանաչելու իրավական հիմքը:

Ինչ վերաբերում է բողոք բերած անձի այն փաստարկին, որ Վերաքննիչ դատարանը հիմնավոր չի համարել Սպարտակ Երիցյանի կողմից սնանկությունը գրավոր վիճարկելու համար նախատեսված 7-օրյա ժամկետի բացթողումը, որի արդյունքում հարգելի չի ճանաչել այդ ժամկետի բացթողումը, ապա Վճռաբեկ դատարանը գտնում է, որ տվյալ համգամանքի առկայությունը սույն գործի լուծման համար էական նշանակություն չունի հետևյալ պատճառաբանությամբ՝

ՀՀ Սահմանադրության 18-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի իր իրավունքների և ազատությունների դատական, ինչպես նաև պետական այլ մարմինների առջև իրավական պաշտպանության արդյունավետ միջոցների իրավունք:

ՀՀ Սահմանադրության 19-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի իր խախտված իրավունքները վերականգնելու, ինչպես նաև իրեն ներկայացված մեղադրանքի հիմնավորվածությունը պարզելու համար հավասարության պայմաններում, արդարության բոլոր պահանջների պահպանմամբ, անկախ և անկողմնակալ դատարանի կողմից ողջամիտ ժամկետում իր գործի հրապարակային քննության իրավունք:

Կոմպենցիայի 6-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ յուրաքանչյուր ոք, երբ որոշվում են նրա քաղաքացիական իրավունքներն ու պարտականությունները կամ նրան ներկայացված ցանկացած քրեական մեղադրանքի առնչությամբ, ունի օրենքի հիման վրա ստեղծված անկախ ու անաչառ դատարանի կողմից ողջամիտ ժամկետում արդարացի և հրապարակային դատաքննության իրավունք:

Եվրոպայի խորհրդի Նախարարների կոմիտեի 1995 թվականի փետրվարի 7-ի թիվ R (95) 5 Հանձնարարականի 1-ին հոդվածի (a) կետով նախատեսված սկզբունքի համաձայն՝ պետք է առկա լինի վերադաս դատարանի (երկրորդ ատյանի դատարան) կողմից ստորադաս դատարանի (առաջին ատյանի դատարանի) ցանկացած որոշման վերանայման հնարավորություն:

Միաժամանակ Վճռաբեկ դատարանը հարկ է համարում արձանագրել, որ

դատական պաշտպանության իրավունքը կարող է սահմանափակվել, սակայն կիրառվող սահմանափակումները չպետք է լինեն այն աստիճան, որ խաթարեն այդ իրավունքի բուն էությունը: Սահմանափակումն անհամատեղելի կլինի Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին կետի հետ, եթե այն իրավաչափ նպատակ չհետապնդի և եթե չլինի ողջամիտ հավասարակշռված կապ գործադրվող միջոցների և հետապնդվող նպատակի միջև (տե՛ս՝ Վճռաբեկ դատարանի 14.04.2008 թվականի թիվ 3-365(ՎԴ) քաղաքացիական գործով որոշումը, «Պայքար և Հաղթանակ» ՄՊԸ-ն ընդդեմ Հայաստանի գործով Մարդու իրավունքների եվրոպական դատարանի 20.12.2007 թվականի թիվ 21638/03 որոշումը, կետ 44):

Բացի այդ, Մարդու իրավունքների եվրոպական դատարանը նշել է, որ այն դեպքերում, երբ բողոքարկման ընթացակարգեր են նախատեսված, Բարձր պայմանավորվող կողմերը պարտավոր են ապահովել իրենց իրավասության տակ գտնվող ֆիզիկական և իրավաբանական անձանց կողմից Կոնվենցիայի 6-րդ հոդվածով սահմանված այն նույն երաշխիքներից օգտվելը վերաքննիչ դատարաններում, ինչպիսիք նրանք ունեն առաջին ատյանի դատարանում (*յրենս Բրուսյա Գունեզ դե լա Տորրեն ընդդեմ Իսպանիայի*, թիվ 26737/95, 1997 թվականի դեկտեմբերի 19, կետ 33, *Թինելի էնդ Սանզ ՄՊԸ-ն ու այլոք և Սաբէլդաֆն ու այլոք ընդդեմ Միացյալ Թագավորության*, թիվ 20390/92, 21322/92, 1998թ. հուլիսի 10, կետ 72 և *Խալֆաուին ընդդեմ Ֆրանսիայի*, թիվ 34791/97, 37):

Սույն գործի քննության պահին գործող՝ «Սնանկության մասին» ՀՀ օրենքի 17-րդ հոդվածի համաձայն՝ եթե հարկադրված սնանկության դիմումը վարույթ ընդունելու մասին դատարանի որոշումը ստանալուն հաջորդող 7 օրվա ընթացքում պարտապանը գրավոր չի վիճարկում իր սնանկությունը, ապա ութերորդ օրը դատավորն առանց դատական նիստ հրավիրելու վճիռ է կայացնում պարտապանին սնանկ ճանաչելու մասին, եթե պարտապանն անվճարունակ է կամ առկա են նույն օրենքի 3-րդ հոդվածի երկրորդ մասով նախատեսված հիմքերը:

«Սնանկության մասին» ՀՀ օրենքի 20-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերի համաձայն՝ դատարանի՝ սնանկության գործն ըստ էության լուծող դատական ակտերը կարող են **բողոքարկվել վերաքննության կարգով**: **Պարտապանին սնանկ ճանաչելու** կամ սնանկ ճանաչելու դիմումը մերժելու **մասին դատարանի վճիռը կարող են բողոքարկել պարտապանը**, պարտատերը (պարտատերերը):

Հիմք ընդունելով վերոգրյալը՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ նշված հոդվածի ուժով ապահովվում է սնանկ ճանաչելու վճիռը պարտապանի կողմից բողոքարկելու իրավունքը և այդ դատական ակտի վերանայման հնարավորությունը ու այն կախվածության մեջ չի դրվում սնանկության դիմումը վարույթ ընդունելու մասին որոշումը ստանալու պահից 7 օրվա ընթացքում պարտապանի կողմից իր սնանկությունը գրավոր վիճարկելու հանգամանքից:

Հիմք ընդունելով վերը նշվածը և սույն գործի փաստերը համադրելով՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Սպարտակ Երիցյանի կողմից սնանկությունը չվիճարկելու և օրենքով սահմանված 7-օրյա ժամկետում առարկություններ չներկայացնելու դեպքում Սպարտակ Երիցյանը չի գրկվում սնանկության վճիռը բողոքարկելու և սնանկությունը վիճարկելու հնարավորությունից:

Այսպիսով, սույն վճռաբեկ բողոքի հիմքի առկայությունը Վճռաբեկ դատարանը դիտում է բավարար՝ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 227-րդ հոդվածի ուժով վերաքննիչ դատարանի որոշումը բեկանելու համար:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 240-241²-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

ՈՐՈՇԵՑ

1. Վճռաբեկ բողոքը բավարարել մասնակիորեն: Բեկանել ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 30.07.2010 թվականի որոշումը և գործն ուղարկել Երևանի Արարկիր և Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարան՝ նոր քննության:

2. Պետական տուրքի բաշխման հարցին անդրադառնալ գործի նոր քննության ժամանակ:

3. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

*ՆԱԽԱԳԱՀՈՂ՝ ստորագրություն
ԴԱՏԱՎՈՐՆԵՐ՝ ստորագրություններ*

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի որոշում
Քաղաքացիական գործ թիվ ԵԿԴ/0074/04/09 2011թ.
Քաղաքացիական գործ թիվ ԵԿԴ/0074/04/09
Նախագահող դատավոր՝ Կ. Զիլինգարյան
Դատավորներ՝ Ա. Խառատյան
 Ա. Պետրոսյան

ՈՐՈՇՈՒՄ

ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քաղաքացիական
և վարչական պալատը (այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

*նախագահությամբ
մասնակցությամբ դատավորներ*

Ե. ԽՈՒՆԴԿԱՐՅԱՆԻ
Ս. ԱՆՏՈՆՅԱՆԻ
Վ. ԱԲԵԼՅԱՆԻ
Վ. ԱՎԱՆԵՍՅԱՆԻ
Ա. ԲԱՐՍԵՂՅԱՆԻ
Մ. ԴՐՄԵՅԱՆԻ
Գ. ՀԱԿՈԲՅԱՆԻ
Է. ՀԱՅՐԻՅԱՆԻ
Տ. ՊԵՏՐՈՍՅԱՆԻ
Ե. ՍՈՂՈՄՈՆՅԱՆԻ

2011 թվականի ապրիլի 01-ին

դոնրաց դատական նիստում, քննելով «Միփան 1» ՍՊԸ-ի վճռաբեկ բողոքը ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 01.11.2010 թվականի որոշման դեմ՝ ըստ դիմումի «Լեոնամետալուրգիայի ինստիտուտ» ՓԲԸ-ի ընդդեմ «Միփան 1» ՍՊԸ-ի՝ «Միփան 1» ՍՊԸ-ին սնանկ ձանաչելու պահանջի մասին,

ՊԱՐԶԵՑ

1. Գործի դատավարական նախապատմությունը

Դիմելով դատարան՝ «Լեոնամետալուրգիայի ինստիտուտ» ՓԲԸ-ն պահանջել է սնանկ ձանաչել «Միփան 1» ՍՊԸ-ին:

Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավատության դատարանի (այսուհետ՝ Դատարան) 27.01.2010 թվականի վճռով դիմումը մերժվել է:

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի (այսուհետ՝ Վերաքննիչ դատարան) 01.11.2010 թվականի որոշմամբ «Լեոնամետալուրգիայի ինստիտուտ» ՓԲԸ-ի վերաքննիչ բողոքը բավարարվել է մասնակիորեն՝ Դատարանի 27.01.2010 թվականի վճիռը բեկանվել է, և գործն ուղարկվել է նոր քննության:

Սույն գործով վճռաբեկ բողոք է ներկայացրել «Սիփան 1» ՍՊԸ-ն:

Վճռաբեկ բողոքի պատասխան չի ներկայացվել:

2. Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը

Սույն վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

Վերաքննիչ դատարանը սխալ է մեկնաբանել է «Մասնկության մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 2-րդ մասի «բ» կետը:

Բողոք բերած անձը նշված պնդումը պարզապես անհիմն է հետևյալ փաստարկներով.

Վերաքննիչ դատարանը Դատարանի վճռի բեկանման հիմքում դրել է այն հանգամանքը, որ «Սիփան 1» ՍՊԸ-ն չի ապացուցել «Մասնկության մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 2-րդ մասի «բ» կետով նախատեսված գրավոր գործարքը վիճարկելու բավարար հիմքեր ունենալու փաստը, այսինքն՝ չի ներկայացրել «Լեոնամետալուրգիայի ինստիտուտ» ՓԲԸ-ի կատարած աշխատանքների խտտանի մասին վկայող թույլատրելի և վերաբերելի ապացույցներ և չի հիմնավորել, որ առկա խտտանը բավարար է վճարային պարտավորությունը կատարելուց իրավաչափ կերպով հրաժարվելու համար: Մինչդեռ պարտապանը դատական կարգով առանձին հայցային վարույթով վիճարկել է սնանկ ձանաչելու պահանջի հիմքում դրված գործարքները, իսկ Դատարանն արդարացիորեն հայցադիմումը վարույթ ընդունելու մասին որոշումը գնահատել է որպես պահանջի հիմքում ընկած հանգամանքների վերաբերյալ նյութաիրավական վեճի առկայություն ու գտել, որ այդ պատճառով վճարային պարտավորության անվիճելի հիմքեր առկա չեն:

Բացի այդ, ՀՀ Սահմանադրական դատարանը 25.02.2008 թվականի թիվ ՍԳՈ-735 որոշմամբ նշել է, որ եթե առկա է վճարային պարտավորությունների վերաբերյալ վեճ, ապա պարտապանը պետք է հնարավորություն ունենա այդ վեճը լիարժեք դատական քննության առարկա դարձնել, որից հետո միայն կարող է հարց դրվել նրա անվիճելի վճարային պարտավորությունների կատարման մասին:

Վերոգրյալի հիման վրա բողոք բերած անձը պահանջել է բեկանել Վերաքննիչ դատարանի 01.11.2010 թվականի որոշումը և օրինական ուժ տալ Դատարանի 27.01.2010 թվականի վճռին:

3. Վճարել բողոքի քննության համար նշանակություն ունեցող փաստերը

Վճարել բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1. «Լեոնամետալուրգիայի ինստիտուտ» ՓԲԸ-ի և «Միփան-1» ՍՊԸ-ի միջև 30.06.2009 թվականին կնքվել է «Գիտատեխնիկական արտադրանքի ստեղծման մասին» թիվ 090630 ՀԼ պայմանագիրը (այսուհետ՝ թիվ 1 պայմանագիր), որի համաձայն՝ դիմումատուն պարտավորվել է իրականացնել «Լիչքվագ-Թեյի և Տերտերասարի հանքավայրերի ոսկի պարունակող հանքաքարերի հարստացման տեխնոլոգիայի մշակում» թեմայով աշխատանքները և տալ համապատասխան հաշվետվություն, իսկ «Միփան-1» ՍՊԸ-ն պարտավորվել է ընդունել կատարված աշխատանքները և վճարել դրանց համար պայմանագրով սահմանված 22.400.000 ՀՀ դրամ (**հատոր 1-ին, գ.թ. 10**):

2. «Լեոնամետալուրգիայի ինստիտուտ» ՓԲԸ-ի և «Միփան-1» ՍՊԸ-ի միջև 01.07.2009 թվականին կնքվել է «Գիտատեխնիկական արտադրանքի ստեղծման մասին» թիվ 090701 ՀԼ պայմանագիրը (այսուհետ՝ թիվ 2 պայմանագիր), համաձայն որի՝ դիմումատուն պարտավորվել է իրականացնել «Լիչքվագ-Թեյի հանքավայրերի ոսկի պարունակող հանքաքարերի վերամշակման հարստացուցիչ ֆաբրիկայի նախագծման համար անհրաժեշտ տեխնոլոգիական կանոնակարգի մշակում» թեմայով աշխատանքներ և տալ համապատասխան հաշվետվություն, իսկ «Միփան-1» ՍՊԸ-ն պարտավորվել է ընդունել կատարված աշխատանքները և վճարել դրանց համար պայմանագրով սահմանված 4.000.000 ՀՀ դրամ (**հատոր 1-ին, գ.թ. 9-10**):

3. Թիվ ԵԿԿ/3493/02/09 քաղաքացիական գործով «Միփան-1» ՍՊԸ-ն հայցադիմում է ներկայացրել Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարան ընդդեմ «Լեոնամետալուրգիայի ինստիտուտ» ՓԲԸ-ի, որով վիճարկել է թիվ 1 և թիվ 2 պայմանագրերը, ինչպես նաև դրանց հիմքով կազմված թիվ 376 և թիվ 420 հաշիվ-ապրանքագրերը: Հայցադիմումը 11.01.2010 թվականի որոշմամբ ընդունվել է Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի վարույթ (**հատոր 1-ին, գ.թ. 85-87**):

4. Վճարել դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումները

Քննելով վճարել բողոքը վերը նշված հիմքի սահմաններում՝ Վճարել դատարանը գտնում է, որ վճարել բողոքը հիմնավոր է հետևյալ պատճառաբանությամբ:

Սույն գործի քննության պահին գործող՝ «Մանկության մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 2-րդ մասի «բ» կետի համաձայն՝ պարտապանը դատարանի վճռով կարող է սնանկ ճանաչվել, եթե նա թույլ է տվել օրենքով սահմանված նվազագույն աշխատավարձի հինգհարյուրապատիկը գերազանցող անվիճելի վճարային պարտավորությունների 30-օրյա կամ ավելի ժամկետով կետանց, և վճռի կայացման պահին նշված կետանցը շարունակվում է: Վճարային պարտավորությունն անվիճելի է, եթե պարտապանը չի առարկում դրա դեմ, կամ եթե նա առարկում է հիշյալ պարտավորության դեմ, սակայն պահանջը հիմնված է գրավոր գործարքի վրա, և պարտապանը չի ապացուցում, որ տվյալ պահանջի դեմ առարկելու բավարար հիմքեր ունի (ներառյալ՝ պահանջի հաշվանցը):

Սույն գործի փաստերի համաձայն՝ «Լեոնամետալուրգիայի ինստիտուտ» ՓԲԸ-ի

և «Սիփան-1» ՍՊԸ-ի միջև 30.06.2009 թվականին կնքվել է «Գիտատեխնիկական արտադրանքի ստեղծման մասին» թիվ 090630 ՀԼ պայմանագիրը, որի համաձայն՝ «Սիփան-1» ՍՊԸ-ն պարտավորվել է ընդունել կատարված աշխատանքները և վճարել դրանց համար պայմանագրով սահմանված 22.400.000 ՀՀ դրամ, իսկ «Լեոնամետալուրգիայի ինստիտուտ» ՓԲԸ-ի և «Սիփան-1» ՍՊԸ-ի միջև 01.07.2009 թվականին կնքված «Գիտատեխնիկական արտադրանքի ստեղծման մասին» թիվ 090701 ՀԼ պայմանագրով «Սիփան-1» ՍՊԸ-ն պարտավորվել է ընդունել կատարված աշխատանքները և վճարել դրանց համար պայմանագրով սահմանված 4.000.000 ՀՀ դրամ, թիվ ԵԿԴ/3493/02/09 քաղաքացիական գործով «Սիփան-1» ՍՊԸ-ն հայցադիմում է ներկայացրել Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարան ընդդեմ «Լեոնամետալուրգիայի ինստիտուտ» ՓԲԸ-ի, որով վիճարկել է թիվ 1 և թիվ 2 պայմանագրերը, ինչպես նաև դրանց հիմքով կազմված թիվ 376 և թիվ 420 հաշիվ-ապրանքագրերը: Հայցադիմումը 11.01.2010 թվականի որոշմամբ ընդունվել է Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի վարույթ:

Դատարանը թիվ ԵԿԴ/3493/02/09 քաղաքացիական գործով «Սիփան-1» ՍՊԸ-ի ներկայացրած հայցադիմումը և այն վարույթ ընդունելու որոշումը որակել է որպես կողմերի միջև նյութաիրավական վեճի առկայության ապացույց և դրել է սույն գործով կայացրած «Սիփան-1» ՍՊԸ-ին սնանկ ձանաչելու պահանջի մասին «Լեոնամետալուրգիայի ինստիտուտ» ՓԲԸ-ի դիմումը մերժելու մասին վճռի հիմքում:

Վերաքննիչ դատարանը Դատարանի վճռի բեկանման հիմքում դրել է այն հանգամանքը, որ «Սիփան 1» ՍՊԸ-ն չի ապացուցել «Մնանկության մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 2-րդ մասի «բ» կետով նախատեսված գրավոր գործարքը վիճարկելու բավարար հիմքեր ունենալու փաստը, այսինքն՝ չի ներկայացրել «Լեոնամետալուրգիայի ինստիտուտ» ՓԲԸ-ի կատարած աշխատանքների խոտանի մասին վկայող թույլատրելի և վերաբերելի ապացույցներ և չի հիմնավորել, որ առկա խոտանը բավարար է վճարային պարտավորությունը կատարելուց իրավաչափ կերպով հրաժարվելու համար: Վերաքննիչ դատարանը գտել է նաև, որ հայցադիմում ներկայացված լինելու և այն վարույթ ընդունված լինելու փաստերն իրականում վկայում են պատասխանող կողմից որպես «գործարք» ներկայացված հանձնման-ընդունման ակտերը և դրանց հիման վրա կազմված հաշիվ-ապրանքագրերը վիճարկված լինելու, ոչ թե պատասխանողի առարկությունների բավարար հիմքերի առկայության մասին:

Վճռաբեկ դատարանը հարկ է համարում քննարկման առարկա դարձնել հետևյալ իրավական հարցադրումը՝ արդյոք սնանկ ձանաչելու հիմքում դրված գործարքների վիճարկումը կարող է համարվել տվյալ պահանջի դեմ առարկելու բավարար հիմքի առկայություն:

Վճռաբեկ դատարանը հարկ է համարում նշել, որ «Մնանկության մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 2-րդ մասի վերլուծությունը վկայում է, որ վճարային պարտավորությունները, որոնց կետանց է թույլ տվել պարտապանը, հիմք են դատարանի վճռով պարտապանին սնանկ ձանաչելու համար, եթե դրանք անվիճելի են, իսկ նշված դրույթը չի բացառում վճարային պարտավորությունների հիմքում դրված գործարքների վերաբերյալ վեճի քննությունն այլ վարույթի շրջանակներում:

Մնան եզրահանգման համար Վճռաբեկ դատարանը հիմք է ընդունում նաև այն հանգամանքը, որ նույն օրենքի 3-րդ հոդվածի 2-րդ մասից հետևում է, որ սնանկ

ճանաչելու հիմք է ոչ թե վճարային պարտավորության, այլ **անվիճելի** վճարային պարտավորության առկայությունը: «Մասնկության մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 2-րդ մասի «բ» կետի հիմքով վճարային պարտավորությունների անվիճելի լինելը կասկածի տակ առնելու համար բավարար է ոչ միայն պարտապանի պարտավորության կամ կետանցի բացակայության փաստն ապացուցող հիմքերի առկայությունը, այլ նյութաիրավական վեճի առկայությունը, որն ինքնին պարտավորության վիճելիությունը հավաստող հիմք է:

Հետևաբար, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ «պահանջի դեմ առարկելու բավարար հիմքեր» ձևակերպումը ներառում է նաև պարտավորության հիմքերի հետ կապված նյութաիրավական վեճի առկայությունը:

Ելնելով վերոգրյալից՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Դատարանն իրավացիորեն մերժել է «Լեռնամետալուրգիայի ինստիտուտ» ՓԲԸ-ի դիմումը, քանի որ նշված դիմումի հիմքում ընկած հանգամանքների շուրջ ծագել է նյութաիրավական վեճ, որը քննարկվում է մեկ այլ գործի վարույթում, իսկ պատասխանողի կողմից հայցադիմում ներկայացնելը (հանձնման-ընդունման գործարքները, ինչպես նաև դրանց հիմքով կազմված թիվ 376 և թիվ 420 հաշիվ-ապրանքագրերն անվավեր ճանաչելու պահանջի մասին), ինչպես նաև հայցադիմումը վարույթ ընդունելու մասին դատարանի որոշման առկայությունը գնահատվում է որպես ապացույց այն մասին, որ պատասխանողը բավարար հիմքեր ունի սնանկ ճանաչելու պահանջի դեմ առարկելու համար:

Այսպիսով, վճռաբեկ բողոքի հիմքի առկայությունը Վճռաբեկ դատարանը դիտում է բավարար՝ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 227-րդ հոդվածի ուժով Վերաքննիչ դատարանի որոշումը բեկանելու համար:

Միաժամանակ, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ սույն գործով անհրաժեշտ է կիրառել ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 240-րդ հոդվածի 1-ին կետի 6-րդ ենթակետով սահմանված՝ առաջին ատյանի դատարանի դատական ակտին օրինական ուժ տալու՝ Վճռաբեկ դատարանի լիազորությունը հետևյալ հիմնավորմամբ.

«Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի ողջամիտ ժամկետում իր գործի քննության իրավունք: Սույն քաղաքացիական գործով վեճի լուծումն էական նշանակություն ունի գործին մասնակցող անձանց համար: Վճռաբեկ դատարանը գտնում է, որ գործն ողջամիտ ժամկետում քննելը հանդիսանում է Կոնվենցիայի նույն հոդվածով ամրագրված անձի արդար դատաքննության իրավունքի տարր, հետևաբար, գործի անհարկի ձգձգումները վտանգ են պարունակում նշված իրավունքի խախտման տեսանկյունից: Տվյալ դեպքում, Վճռաբեկ դատարանի կողմից ստորադաս դատարանի դատական ակտին օրինական ուժ տալը բխում է արդարադատության արդյունավետության շահերից:

Առաջին ատյանի դատարանի վճիռն օրինական ուժ տալիս Վճռաբեկ դատարանը հիմք է ընդունում սույն որոշման պատճառաբանությունները, ինչպես նաև գործի նոր քննության անհրաժեշտության բացակայությունը:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 240-241²-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

ՈՐՈՇԵՑ

1. Վճռաբեկ բողոքը բավարարել: Բեկանել ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 01.11.2010 թվականի որոշումը և օրինական ուժ տալ Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի 27.01.2010 թվականի վճռին:

2. «Լեոնամետալուրգիայի ինստիտուտ» ՓԲԸ-ից հոգուտ «Սիփան 1» ՍՊԸ-ի բռնագանձել 20.000 ՀՀ դրամ՝ որպես վճռաբեկ բողոքի համար վճարված պետական տուրք:

3. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

*ՆԱԽԱԳԱՀՈՂ՝ ստորագրություն
ԴԱՏԱՎՈՐՆԵՐ՝ ստորագրություններ*

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական Քաղաքացիական գործ թիվ ԵԱՆԴ/0003/04/09
դատարանի որոշում 2011թ.
Քաղաքացիական գործ թիվ ԵԱՆԴ/0003/04/09
Նախագահող դատավոր՝ Դ. Խաչատրյան
Դատավորներ՝ Ն. Տավարացյան
Ս. Միքայելյան

ՈՐՈՇՈՒՄ
ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քաղաքացիական
և վարչական պալատը (այսուհետ՝ վճռաբեկ դատարան)

<i>նախագահությամբ</i>	Ե. ԽՈՒՆԴԿԱՐՅԱՆԻ
<i>մասնակցությամբ դատավորներ</i>	Ս. ԱՆՏՈՆՅԱՆԻ
	Վ. ԱԲԵԼՅԱՆԻ
	Վ. ԱՎԱՆԵՍՅԱՆԻ
	Ա. ԲԱՐՍԵՂՅԱՆԻ
	Մ. ԴՐՄԵՅԱՆԻ
	Գ. ՀԱԿՈԲՅԱՆԻ
	Է. ՀԱՅՐԻՅԱՆԻ
	Տ. ՊԵՏՐՈՍՅԱՆԻ
	Ե. ՍՈՂՈՄՈՆՅԱՆԻ

2011 թվականի մայիսի 27-ին

դռնբաց դատական նիստում, քննելով Ռադիկ Ենգիբարյանի սնանկության գործով կտավարիչ Գագիկ Բարխուդարյանի վճռաբեկ բողոքը ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 05.10.2010 թվականի որոշման դեմ՝ ըստ դիմումի Ռոբերտ Հարությունյանի ընդդեմ Ռադիկ Ենգիբարյանի՝ սնանկ ճանաչելու պահանջի մասին,

ՊԱՐԶԵՑ

1. Գործի դատավարական նախապատմությունը

Դիմելով դատարան՝ Ռոբերտ Հարությունյանը պահանջել է Ռադիկ Ենգիբարյանին ճանաչել սնանկ:

Երևանի Ավան և Նոր Նորք վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի 28.07.2009 թվականի վճռով Ռադիկ Ենգիբարյանը ճանաչվել է սնանկ:

Երևանի Ավան և Նոր Նորք վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի 13.08.2009 թվականի որոշմամբ սնանկության գործով կառավարիչ (այսուհետ՝ Կառավարիչ) է նշանակվել Գագիկ Բարխուդարյանը:

Երևանի Ավան և Նոր Նորք վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի (այսուհետ՝ Դատարան) 17.05.2010 թվականի որոշմամբ ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի Խորհրդային հարկային տեսչության, Ռուդիկ Առաքելյանի պահանջների գրանցումը մերժվել է, և հաստատվել է Ռադիկ Ենգիբարյանի պահանջների վերջնական ցուցակը, ըստ որի՝չապահովված «Է» հերթի պարտատերեր են գրանցվել Ռոբերտ Հարությունյանը՝ 87.000.000 ՀՀ դրամ և Հայկ Հարությունյանը՝ 26.000 ԱՄՆ դոլարին համարժեք ՀՀ դրամ պարտավորությունների չափով:

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի (այսուհետ՝ Վերաքննիչ դատարան) 05.10.2010 թվականի որոշմամբ Դատարանի 17.05.2010 թվականի որոշումը մասնակիորեն՝ Ռուդիկ Առաքելյանի պահանջի գրանցումը մերժելու մասով, բեկանվել է և փոփոխվել՝ Ռուդիկ Առաքելյանի դիմումը բավարարվել է. Ռադիկ Ենգիբարյանի նկատմամբ պահանջների վերջնական ցուցակում հաստատվել է Ռուդիկ Առաքելյանի պահանջը՝ 578.200 ԱՄՆ դոլարին համարժեք ՀՀ դրամի, 3.000 եվրոյին համարժեք ՀՀ դրամի և 25.000.000 ՀՀ դրամի չափով՝ որպես չապահովված «Է» հերթի պահանջ: Որոշման մնացած մասը թողնվել է օրինական ուժի մեջ:

Սույն գործով վճռաբեկ բողոք է ներկայացրել Գագիկ Բարխուդարյանը:

Վճռաբեկ բողոքի պատասխաններ են ներկայացրել Հայկ Հարությունյանը և Ռուդիկ Առաքելյանը:

2. Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը

Սույն վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

Վերաքննիչ դատարանը խախտել է «Սնանկության մասին» ՀՀ օրենքի 46-րդ, 82-րդ և 85-րդ հոդվածները:

Բողոք բերած անձը նշված պնդումը պատճառաբանում է հետևյալ փաստարկներով.

Ռուդիկ Առաքելյանը պահանջը ներկայացրել է թերթում հայտարարություն տալուց հետո 41-րդ օրը, այսինքն՝ օրենքով սահմանված մեկամյա ժամկետը լրանալուց հետո: Դա նշանակում է, որ այդ պահանջը հիմնավորված լինելու դեպքում անգամ համարվում է ստորադաս չապահովված պահանջ՝ համաձայն «Սնանկության մասին» ՀՀ օրենքի 85-րդ հոդվածի, ինչն էլ բացառում է այն նույն օրենքի 82-րդ հոդվածի 1-ին մասի «է» կետով նախատեսված պահանջներին դասելը: Ռուդիկ Առաքելյանի պահանջը կարող էր «է» հերթի դասվել միայն այն դեպքում, եթե դատարանը սահմանված ժամկետը բաց թողնելու պատճառը համարեր հարգելի: Մինչդեռ, Վերաքննիչ դատարանը ոչ միայն հարգելի չի համարել ժամկետը բաց թողնելու պատճառը, այլև այդ հանգամանքն ընդհանրապես վերլուծության չի ենթարկել, այնինչ դա կարևոր է պահանջն այս կամ այն հերթին դասելու համար: Բացի այդ, նշված հանգամանքին անդրադառնալու դեպքում հնարավոր չէր ժամկետը բաց թողնելու Ռուդիկ Առաքելյանի պատճառաբանությունը հարգելի համարել, քանի որ «Հայաստանի Հանրապետություն» թերթը ԼՂՀ-ում վաճառվելու փաստական

հանգամանքը հանրահայտ է և չի կարող վիճարկվել: Անհիմն է նաև Ռուդիկ Առաքելյանի մյուս պատճառաբանությունն այն մասին, որ ինքն ունի ռուսական կրթություն և հայերեն չի կարդում, քանի որ դիմումին կից ներկայացված լիազորագրից և նրա ստորագրությունը պարունակող հայերեն տեքստով գործում առկա այլ փաստաթղթերից ակնհայտ է, որ նա հայերենին տիրապետում է:

Վերոգրյալի հիման վրա վճարելի բողոք բերած անձը պահանջել է բեկանել Վերաքննիչ դատարանի 05.10.2010 թվականի որոշումը:

2.1. Վճարելի բողոքի պատասխանների հիմնավորումները

Ռուդիկ Առաքելյանը վճարելի բողոքի պատասխանում նշել է, որ Ղարաբաղում 60-ական թվականներին հայերի համար հայերեն լեզվով ուսուցում չի կազմակերպվել, և նա դպրոց է գնացել այդ թվականներին ու սովորել ռուսերեն լեզվով: Ինչ վերաբերում է գործում առկա հայերեն լեզվով կազմված ստացականներն ստորագրելուն, ապա դրանք ստորագրել է Ռադիկ Ենգիբարյանը, որին ինքը վստահել է, իսկ լիազորագիրն ստորագրել է առանց կարդալու և նոտարին չի հայտնել հայերեն կարդալ չկարողանալու մասին:

Հայկ Հարությունյանը վճարելի բողոքի պատասխանում նշել է, որ Ռուդիկ Առաքելյանը միջնորդություն է ներկայացրել պահանջ ներկայացնելու համար սահմանված բաց թողնված ժամկետը հարգելի համարելու մասին: Դատարանի կողմից միջնորդությունը քննարկվել է, սակայն արդյունքում առանձին որոշում չի կայացվել, ինչի արդյունքում խախտվել է «Մասնկության մասին» ՀՀ օրենքի 85-րդ հոդվածի 2-րդ մասը:

3. Վճարելի բողոքի քննության համար նշանակություն ունեցող փաստերը

1. Երևանի Ավան և Նոր Նորք վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի 28.07.2009 թվականի վճռով Ռադիկ Ենգիբարյանը ձանաչվել է սնանկ (**հատոր 1-ին, գ.թ. 45-48**):

2. Ռադիկ Ենգիբարյանին սնանկ ձանաչելու, պարտատերերի առաջին ժողով նշանակելու և պարտատերերի կողմից պահանջներ ներկայացնելու կարգի մասին հայտարարությունը տրվել է «Հայաստանի Հանրապետություն» թերթի 19.08.2009 թվականի համարում (**հատոր 1-ին, գ.թ. 95**):

3. Ռուդիկ Առաքելյանը 29.09.2009 թվականին պահանջ է ներկայացրել դատարան, որով խնդրել է հարգելի համարել այն ներկայացնելու համար սահմանված բաց թողնված ժամկետը և 223.409.000 ՀՀ դրամի պահանջը գրանցել համապատասխան հերթում (**հատոր 1-ին, գ.թ. 104**):

4. Վճարելի դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը

Քննելով վճարելի բողոքը նշված հիմքի սահմաններում՝ Վճարելի դատարանը գտնում է, որ վճարելի բողոքը հիմնավոր է հեղինակ պայրճառաբանությամբ.

«Մասնկության մասին» ՀՀ օրենքի 46-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ պարտատերերն իրենց պահանջները ներկայացնում են դատարան սնանկության մասին հայտարարությունից հետո՝ մեկամսյա ժամկետում:

«Մասնկության մասին» ՀՀ օրենքի 82-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝

սույն օրենքի 46-րդ հոդվածի առաջին մասով սահմանված ժամկետում դատարան չներկայացված չապահովված պահանջները համարվում են ստորադաս չապահովված պահանջներ: Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ **պահանջները սահմանված ժամկետներում հարգելի պատճառներով չներկայացրած պարտատերերի պահանջները կարող են ընդգրկվել տվյալ պահանջին համապատասխանող հերթում: Պահանջը սահմանված ժամկետներում չներկայացնելու պատճառների հարգելիությունը որոշելու համար դատավորը հրավիրում է դատական նիստ, որի ժամանակի և վայրի մասին կառավարչին, պարտապանին, պարտատերերին ծանուցում է պատշաճ կարգով: Ծանուցվող անձանց թիվը 10-ից ավելի լինելու դեպքում պատշաճ ծանուցում է համարվում իրավաբանական անձանց պետական գրանցման մասին տվյալներ հրապարակող մամուլում հրապարակված հայտարարությունը: **Պատճառների հարգելիության քննարկման արդյունքում դատարանը կայացնում է որոշում, որը կարող է բողոքարկվել:****

Վերոնշյալից հետևում է, որ պարտատերերի կողմից իրենց պահանջները ներկայացնելու համար օրենքը սահմանում է մեկամսյա ժամկետ: Միաժամանակ, օրենսդիրը նախատեսել է այդ ժամկետը վերականգնելու հնարավորություն, որի դեպքում դատարանը պետք է որոշի պահանջը սահմանված ժամկետներում չներկայացնելու պատճառների հարգելիությունը: Հիմք ընդունելով վերոգրյալը՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ դատարանը, ելնելով «Մասնկության մասին» ՀՀ օրենքի 82-րդ հոդվածի 2-րդ մասի պահանջից, պահանջը սահմանված ժամկետներում չներկայացնելու պատճառների հարգելիությունը որոշելուց հետո միայն կարող է անդրադառնալ պահանջը համապատասխան հերթում գրանցելու կամ գրանցումը մերժելու հարցին:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 48-րդ հոդվածի 2-րդ կետի համաձայն՝ գործի լուծման համար էական նշանակություն ունեցող ապացուցման ենթակա փաստերը որոշում է դատարանը՝ գործին մասնակցող անձանց պահանջների և առարկությունների հիման վրա:

Վերոնշյալից հետևում է, որ գործի լուծման համար էական նշանակություն ունեցող փաստերը դատարանը որոշում է՝ հիմք ընդունելով գործին մասնակցող անձանց պահանջները և առարկությունները, ինչպես նաև գործով կիրառման ենթակա իրավական ակտերը:

Հետևաբար, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ պարտատիրոջ կողմից ժամկետը լրանալուց հետո պահանջ ներկայացնելու դեպքում որպես գործի լուծման համար էական նշանակություն ունեցող փաստ համարվում է պահանջը սահմանված ժամկետներում չներկայացնելու պատճառների հարգելիության պարզումը:

Սույն գործի փաստերի համաձայն՝ Երևանի Ավան և Նոր Նորք վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի 28.07.2009 թվականի վճռով Ռադիկ Ենգիբարյանը ճանաչվել է սնանկ: Ռադիկ Ենգիբարյանին սնանկ ճանաչելու, պարտատերերի առաջին ժողով նշանակելու և պարտատերերի կողմից պահանջներ ներկայացնելու կարգի մասին հայտարարությունը տրվել է «Հայաստանի Հանրապետություն» թերթի 19.08.2009 թվականի համարում: Ռադիկ Առաքելյանը 29.09.2009 թվականին պահանջ է ներկայացրել դատարան, որով խնդրել է հարգելի համարել այն ներկայացնելու համար սահմանված բաց թողնված ժամկետը և 223.409.000 ՀՀ դրամի պահանջը գրանցել համապատասխան հերթում:

Դատարանը մերժել է Ռուդիկ Առաքելյանի պահանջը, ուստի չի անդրադարձել այն ներկայացնելու համար սահմանված ժամկետը պահպանված լինելու հարցին:

Վերաքննիչ դատարանը, չանդրադառնալով պահանջը սահմանված ժամկետում ներկայացնելու հարցին, բավարարել է Ռուդիկ Առաքելյանի դիմումը և հաստատել է վերջինիս պահանջը՝ որպես չապահովված «Է» հերթի պահանջ:

Մինչդեռ, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ սույն գործով Դատարանը չի անդրադարձել այն հարցին, իսկ Վերաքննիչ դատարանն անտեսել է այն հանգամանքը, որ հիշյալ պահանջը գրանցելու համար սահմանված բաց թողնված ժամկետը հարգելի համարելու համար առկա էր Ռուդիկ Առաքելյանի դիմումը, մինչև սույն ժամանակ Կառավարչի համապատասխան առարկությունը, որպիսի պարագայում, համաձայն ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 48-րդ հոդվածի 2-րդ կետի, Դատարանը պարտավոր էր որոշել ապացուցման ենթակա համապատասխան փաստը, այն է՝ ժամկետը բաց թողնելու պատճառները հարգելի լինելու հարցը:

Այսպիսով, Վճռաբեկ դատարանը վճռաբեկ բողոքի հիմքի առկայությունը դիտում է բավարար՝ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 227-րդ և 228-րդ հոդվածների ուժով Վերաքննիչ դատարանի որոշումը մասնակիորեն բեկանելու համար:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 240-241-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

ՈՐՈՇԵՑ

1. Վճռաբեկ բողոքը բավարարել: Բեկանել ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 05.10.2010 թվականի որոշման՝ Ռուդիկ Առաքելյանի պահանջը «Է» հերթում ընդգրկելու մասը և այդ մասով գործն ուղարկել Երևանի Ավան և Նոր Նորք վարչական շրջանների առաջին առյանի ընդհանուր իրավասության դատարան՝ նոր քննության: Որոշման մնացած մասը թողնել օրինական ուժի մեջ:

2. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

*ՆԱԽԱԳԱՀՈՂ՝ արորագրություն
ԴԱՏԱՎՈՐՆԵՐ՝ արորագրություններ*

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական
դատարանի որոշում

Քաղաքացիական գործ թիվ ԵԿԴ/0018/04/10
2011թ.

Քաղաքացիական գործ թիվ ԵԿԴ/0018/04/10
Նախագահող դատավոր՝ Ս. Նազարյան
Դատավորներ՝ Կ. Հակոբյան
Ս. Սահակյան

ՈՐՈՇՈՒՄ

ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քաղաքացիական
և վարչական պալատը (այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

*նախագահությամբ
մասնակցությամբ դատավորներ*

Ե. ԽՈՒՆԴԿՎԱՐՅԱՆԻ
Ա. ԲԱՐՍԵՂՅԱՆԻ
Վ. ԱԲԵԼՅԱՆԻ
Ս. ԱՆՏՈՆՅԱՆԻ
Վ. ԱՎԱՆԵՍՅԱՆԻ
Մ. ԴՐՄԵՅԱՆԻ
Գ. ՀԱԿՈԲՅԱՆԻ
Է. ՀԱՅՐԻՅԱՆԻ
Տ. ՊԵՏՐՈՍՅԱՆԻ
Ե. ՍՈՂՈՄՈՆՅԱՆԻ

2011 թվականի դեկտեմբերի 27-ին

դռնբաց դատական նիստում, քննելով ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի (այսուհետ՝ Կոմիտե) Էրեբունու հարկային տեսչության (այսուհետ՝ Տեսչություն) վճռաբեկ բողոքը ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 29.06.2011 թվականի որոշման դեմ՝ ըստ Տեսչության միջնորդության՝ «Երևանի մերձքաղաքային ուղևորատար ավտոտրանսպորտային» ԲԲԸ-ում (այսուհետ՝ Ընկերություն) բյուջեի հետ փոխհարաբերությունների և հարկային մարմնի կողմից վերահսկվող օրենսդրության առանձին պահանջների ճշտության ստուգում կատարելու մասին,

ՊԱՐԶԵՑ

1. Գործի դատավարական նախապատմությունը

Դիմելով դատարան՝ Ընկերության լուծարման հանձնաժողովը (այսուհետ՝ Լուծարման հանձնաժողով) պահանջել է Ընկերությանը ձանաչել սնանկ:

Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների առաջին ատյանի

ընդհանուր իրավասության դատարանի (դատավոր Ա. Սուքոյան) (այսուհետ՝ Դատարան) 20.04.2010 թվականի վճռով դիմումը բավարարվել է:

22.03.2011 թվականին ներկայացված միջնորդությամբ Տեսչությունը պահանջել է թույլատրել Ընկերությունում կատարել բյուջեի հետ փոխհարաբերությունների և հարկային մարմնի կողմից վերահսկվող օրենսդրության առանձին պահանջների ճշտության վերստուգում:

Դատարանի 24.03.2011 թվականի որոշմամբ միջնորդությունը մերժվել է:

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի (այսուհետ՝ Վերաքննիչ դատարան) 29.06.2011 թվականի որոշմամբ Տեսչության վերաքննիչ բողոքը մերժվել է, և Դատարանի որոշումը թողնվել է օրինական ուժի մեջ:

Սույն գործով վճռաբեկ բողոք է ներկայացրել Տեսչությունը:

Վճռաբեկ բողոքի պատասխան չի ներկայացվել:

2. Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը

Սույն վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

Վերաքննիչ դատարանը չի կիրառել ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 67-րդ հոդվածի 5-րդ կետը, «Մասնկության մասին» ՀՀ օրենքի 70-րդ հոդվածը, որոնք պետք է կիրառել, խախտել է «Մասնկության մասին» ՀՀ օրենքի 19-րդ հոդվածը:

Բողոք բերած անձը նշված պնդումը պարձառաքանում է հետևյալ փաստարկներով.

Վերաքննիչ դատարանը հաշվի չի առել, որ Ընկերությունը ՀՀ կառավարության որոշմամբ չի լուծարվել, քանի որ Լուծարման հանձնաժողովը, հաշվի առնելով այն հանգամանքը, որ Ընկերության գույքն անբավարար է պարտատերերի պահանջները բավարարելու համար, դիմել է դատարան Ընկերությանը սնանկ ճանաչելու պահանջով:

Վերաքննիչ դատարանն անտեսել է այն հանգամանքը, որ Ընկերությանը սնանկ ճանաչելուց հետո լուծարման վարույթ սկսելու մասին որոշում չի ընդունվել, այսինքն՝ Ընկերությունը չի գտնվել լուծարման գործընթացում:

Վերոգրյալի հիման վրա բողոք բերած անձը պահանջել է բեկանել Վերաքննիչ դատարանի 29.06.2011 թվականի որոշումը և այն փոփոխել՝ միջնորդությունը բավարարել:

3. Վճռաբեկ բողոքի քննության համար նշանակություն ունեցող փաստերը

Բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1. Ընկերությանը սնանկ ճանաչելու մասին Դատարանի 20.04.2010 թվականի վճռով հաստատված են համարվել հետևյալ հանգամանքները.

ա. ՀՀ կառավարության 18.12.2008 թվականի թիվ 1525-Ա որոշմամբ Ընկերությունը գտնվում է լուծարման գործընթացում.

բ. Ըստ Ընկերության հաշվապահական հաշվեկշռի՝ պարտավորությունները կազմել են 97.649.000 ՀՀ դրամ, իսկ ակտիվները՝ 18.976.000 ՀՀ դրամ (**գ.թ. 4-6**):

2. Տեսչության պետի 22.03.2011 թվականի միջնորդության համաձայն՝ «Նկատի ունենալով այն հանգամանքը, որ ՀՀ վարչապետի 12.03.2011 թվականի թիվ 01/20/3515-Ո հանձնարարականի հանձնարարվել է Ընկերությունում կատարել բյուջեի հետ փոխհարաբերությունների ճշտության վերստուգում 01.10.2007-31.12.2008 թվականները

Ժամանակաշրջանի համար, ուստի ղեկավարվելով «Մասնկության մասին» ՀՀ օրենքի 19-րդ հոդվածի 2-րդ մասով, խնդրում եմ Տեսչությանը թույլատրել Ընկերությունում կատարել բյուջեի հետ փոխհարաբերությունների և հարկային մարմնի կողմից վերահսկվող օրենսդրության առանձին պահանջների ճշտության վերստուգում» (գ.թ. 7):

3. Գործում առկա չէ Ընկերության լուծարման վարույթ սկսելու մասին որոշում:

4. Վճարել դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումները

Քննելով վճարել բողոքը վերը նշված հիմքի սահմաններում՝ Վճարել դատարանը գտնում է, որ վճարել բողոքը հիմնավոր է հետևյալ պարձառաբանությամբ.

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 67-րդ հոդվածի 2-րդ կետի 1-ին ենթակետի համաձայն՝ իրավաբանական անձը կարող է լուծարվել նրա հիմնադիրների (մասնակիցների) կամ կանոնադրությամբ դրա համար լիազորված իրավաբանական անձի մարմնի որոշմամբ՝ ներառյալ այն ժամկետը լրանալու կապակցությամբ, որով ստեղծվել է իրավաբանական անձը, կամ այն նպատակին հասնելու կապակցությամբ, որի համար նա ստեղծվել է:

Նույն հոդվածի 5-րդ կետի համաձայն՝ եթե լուծարվող իրավաբանական անձի գույքի արժեքն անբավարար է պարտատերերի պահանջները բավարարելու համար, ապա այն կարող է լուծարվել միայն սնանկության հետևանքով:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 71-րդ հոդվածի համաձայն՝ իրավաբանական անձը դատարանի վճռով կարող է սնանկ ճանաչվել, եթե նա ի վիճակի չէ բավարարել պարտատերերի պահանջները: Իրավաբանական անձին դատարանով սնանկ ճանաչելու հիմքերը, կարգը, ինչպես նաև սնանկ ճանաչված իրավաբանական անձի պարտատերերի պահանջների բավարարման առանձնահատկությունները սահմանվում են օրենքով:

Նշված նորմերի վերլուծությունից հետևում է, որ իրավաբանական անձը կարող է լուծարվել ինչպես նրա հիմնադիրների, այնպես էլ կանոնադրությամբ դրա համար լիազորված մարմնի որոշմամբ: Նշվածից բացառություն է այն դեպքը, երբ լուծարվող իրավաբանական անձի գույքի արժեքն անբավարար է պարտատերերի պահանջները բավարարելու համար: Այս դեպքում իրավաբանական անձը կարող է լուծարվել միայն սնանկության հետևանքով, որի առանձնահատկությունները սահմանվում են օրենքով: Այսինքն՝ ՀՀ քաղաքացիական օրենսգրքով նախատեսվում է իրավաբանական անձի լուծարում միայն այն դեպքում, երբ պարտապանի ակտիվները բավարարում են պարտատերերի պահանջները, կամ լուծարվող իրավաբանական անձը պարտավորություններ չունի:

«Մասնկության մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ պարտապանը կարող է սնանկ ճանաչվել դատարանի վճռով՝ սեփական նախաձեռնությամբ (կամավոր սնանկության դիմում) կամ պարտատիրոջ պահանջով (հարկադրված սնանկության դիմում), եթե պարտապանն անվճարունակ է:

«Մասնկության մասին» ՀՀ օրենքի 19-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ պարտապանին սնանկ ճանաչելու մասին վճիռն օրինական ուժի մեջ մտնելու պահից պարտապանի մոտ ստուգում կամ ուսումնասիրություն կարող է իրականացվել միայն դատարանի որոշմամբ: Պարտապանի ֆինանսական առողջացման ծրագրի գործողության և լուծարման վարույթում գտնվող պարտապանի գործունեության վերսկսման ժամանակահատվածում, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության

քրեական դատավարության օրենսգրքով նախատեսված դեպքերում ստուգման կամ ուսումնասիրության իրականացման համար դատարանի որոշում չի պահանջվում:

Ստուգման կամ ուսումնասիրության իրականացումը թույլատրելու կամ մերժելու մասին որոշումը կարող է բողոքարկվել վերաքննության կարգով:

Պարտապանի լուծարման գործընթացը սկսվելուց հետո ստուգում կամ ուսումնասիրություն իրականացնելն արգելվում է, բացառությամբ հարկերի և պարտադիր վճարների գերավճարների առկայությունը պարզելուն ուղղված ուսումնասիրությունների:

«Մասնկության մասին» ՀՀ օրենքի 70-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ սույն օրենքով սահմանված ժամկետում ֆինանսական առողջացման ծրագիր չներկայացվելու, ներկայացված ծրագրի հաստատումը մերժվելու, ֆինանսական առողջացման ծրագիրը վաղաժամկետ դադարեցվելու, ֆինանսական առողջացման ծրագրի կատարման մասին կառավարչի հաշվետվության հաստատումը մերժվելու դեպքում դատարանը **որոշում է կայացնում պարտապան իրավաբանական անձի լուծարման** կամ պարտապան անհատ ձեռնարկատիրոջ գործունեության դադարեցման **վարույթ սկսելու մասին** (այսուհետ՝ պարտապանի լուծարում):

Նշված նորմերի վերլուծությունից հետևում է, որ պարտապանի մոտ ստուգում կամ ուսումնասիրություն իրականացնելն արգելելն օրենսդիրը պայմանավորել է պարտապանի լուծարման գործընթացը սկսելու հետ: Այսինքն՝ լուծարման գործընթացում գտնվող պարտապանի մոտ ստուգում կամ ուսումնասիրություն չի թույլատրվում իրականացել, բացառությամբ հարկերի և պարտադիր վճարների գերավճարների առկայությունը պարզելուն ուղղված ուսումնասիրությունների, ընդ որում, պարտապանի լուծարման գործընթաց սկսելու մասին դատարանն ընդունում է որոշում:

Սույն գործով վերաքննիչ բողոքը մերժելիս Վերաքննիչ դատարանը պատճառաբանել է, որ առկա է ՀՀ կառավարության 18.12.2008 թվականի թիվ 1525-Ս որոշումը, ըստ որի՝ Ընկերությունը գտնվում է լուծարման գործընթացում: Հետևաբար, արդեն իսկ համապատասխան մարմնի որոշմամբ Ընկերության նկատմամբ սկսվել է լուծարման գործընթաց, որպիսի պայմաններում կիրառելի է «Մասնկության մասին» ՀՀ օրենքի 19-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ պարբերությունը: Միաժամանակ, Վերաքննիչ դատարանը նշել է, որ այն հանգամանքը, որ Ընկերությանը սնանկ ձանաչելու դիմում Գատարան ներկայացրել է Ընկերության լուծարման հանձնաժողովը, նշանակում է, որ Ընկերությունը գտնվում է լուծարման գործընթացում:

Սույն գործի փաստերի համաձայն՝ Ընկերությանը սնանկ ձանաչելու 20.04.2010 թվականի վճռով Գատարանը հաստատված է համարել հանգամանքներն այն մասին, որ ՀՀ կառավարության 18.12.2008 թվականի թիվ 1525-Ս որոշմամբ Ընկերությունը գտնվում է լուծարման գործընթացում, և ըստ Ընկերության հաշվապահական հաշվեկշռի՝ պարտավորությունները կազմել են 97.649.000 ՀՀ դրամ, իսկ ակտիվները՝ 18.976.000 ՀՀ դրամ:

Ընկերությանը սնանկ ձանաչելուց հետո Տեսչության պետը 22.03.2011 թվականին ներկայացրել է Ընկերությունում բյուջեի հետ փոխհարաբերությունների և հարկային մարմնի կողմից վերահսկվող օրենսդրության առանձին պահանջների ճշտության վերստուգում կատարելու թույլտվություն տալու միջնորդություն, որում մասնավորապես նշել է. «Նկատի ունենալով այն հանգամանքը, որ ՀՀ վարչապետի 12.03.2011 թվականի թիվ 01/20/3515-11 հանձնարարականի հանձնարարվել է

Ընկերությունում կատարել բյուջեի հետ փոխհարաբերությունների ճշտության վերստուգում 01.10.2007-31.12.2008 թվականները ժամանակաշրջանի համար, ուստի ղեկավարվելով «Մասնկության մասին» ՀՀ օրենքի 19-րդ հոդվածի 2-րդ մասով, խնդրում եմ Տեսչությանը թույլատրել Ընկերությունում կատարել բյուջեի հետ փոխհարաբերությունների և հարկային մարմնի կողմից վերահսկվող օրենսդրության առանձին պահանջների ճշտության վերստուգում»:

Վերոգրյալներից ելնելով և սույն գործի փաստերի համադրման արդյունքում Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Վերաքննիչ դատարանի պատճառաբանությունն այն մասին, որ ՀՀ կառավարության 18.12.2008 թվականի թիվ 1525-Ա որոշմամբ Ընկերությունը գտնվում է լուծարման գործընթացում, հետևաբար արդեն իսկ համապատասխան մարմնի որոշմամբ Ընկերության նկատմամբ սկսվել է լուծարման գործընթաց, անհիմն է, քանի որ Լուծարման հանձնաժողովը, հաշվի առնելով այն հանգամանքը, որ Ընկերության 97.649.000 ՀՀ դրամի պարտավորությունները գերազանցում են 18.976.000 ՀՀ դրամի ակտիվները, Ընկերությունը սնանկ ճանաչելու պահանջով դիմել է դատարան: Այսինքն՝ Ընկերությանը սնանկ ճանաչելու դիմում ներկայացնելու փաստով ավարտվել է ՀՀ քաղաքացիական օրենսգրքով նախատեսված կանոնակարգումներով Ընկերությունը լուծարելու գործընթացը, և սկսվել է «Մասնկության մասին» ՀՀ օրենքով նախատեսված կանոնակարգումներով Ընկերությանը սնանկ ճանաչելու դատական վարույթը:

Նետևաբար, Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ սովյալ դեպքում չի հիմնավորվում Ընկերության լուծարման գործընթացում գտնվելու հանգամանքը: Նման եզրահանգման համար Վճռաբեկ դատարանը հիմք է ընդունում այն հանգամանքը, որ գործում առկա չէ «Մասնկության մասին» ՀՀ օրենքի 70-րդ հոդվածի 1-ին մասի ուժով Ընկերության լուծարման վարույթ սկսելու մասին դատարանի որոշում:

Այսպիսով, սույն վճռաբեկ բողոքի հիմքի առկայությունը Վճռաբեկ դատարանը դիտում է բավարար՝ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 227-րդ հոդվածի ուժով Վերաքննիչ դատարանի որոշումը բեկանելու համար:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 240-241²-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

ՈՐՈՇԵՑ

1. Վճռաբեկ բողոքը բավարարել մասնակիորեն: Բեկանել ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 29.06.2011 թվականի որոշումը և գործն ուղարկել Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարան՝ նոր քննության:

2. Դատական ծախսերի բաշխման հարցին անդրադառնալ գործի նոր քննության ընթացքում:

3. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

*ՆԱԽԱԳԱՀՈՂ՝ ստորագրություն
ԴԱՏԱՎՈՐՆԵՐ՝ ստորագրություններ*

**ԳՈՒՅՔԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԵՏԱԿԱՆ
ԳՐԱՆՑՈՒՄ**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ**

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի որոշում Քաղաքացիական գործ թիվ ԵԿԴ/3032/02/09
2011թ.
Քաղաքացիական գործ թիվ ԵԿԴ/3032/02/09
Նախագահող դատավոր՝ Ն. Տավարացյան
Դատավորներ՝ Ս. Միքայելյան
Դ. Խաչատրյան

**ՈՐՈՇՈՒՄ
ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քաղաքացիական
և վարչական պալատը (այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

*նախագահությամբ
մասնակցությամբ դատավորներ*

Ե.ԽՈՒՆԴԿԱՐՅԱՆԻ
Գ.ՀԱԿՈՔՅԱՆԻ
Վ.ԱՔԵԼՅԱՆԻ
Ս.ԱՆՏՈՆՅԱՆԻ
Վ.ԱՎԱՆԵՍՅԱՆԻ
Ա.ԲԱՐՍԵՂՅԱՆԻ
Մ.ԴՐՄԵՅԱՆԻ
Է.ՀԱՅՐԻՅԱՆԻ
Տ.ՊԵՏՐՈՍՅԱՆԻ
Ե.ՍՈՂՈՄՈՆՅԱՆԻ

2011 թվականի հոկտեմբերի 14-ին

դոնբաց դատական նիստում, քննելով Երևանի քաղաքապետի վճռաբեկ բողոքը ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 18.02.2011 թվականի որոշման դեմ՝ ըստ Երևանի քաղաքապետի (այսուհետ՝ Քաղաքապետ) հայցի ընդդեմ Գոհար Արամյանի, երրորդ անձ ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի Մարաշ տարածքային ստորաբաժանման (այսուհետ՝ Կադաստր)՝ հողամասի վարձակալության պայմանագիրը լուծելու և որպես դրա հետևանք գույքի նկատմամբ իրավունքի պետական գրանցամատյանում կատարված սեփականության և վարձակալության իրավունքների գրառումները չեղյալ համարելու պահանջների մասին,

ՊԱՐԶԵՑ

1. Գործի դատավարական նախապատմությունը

Դիմելով դատարան՝ Քաղաքապետը պահանջել է լուծել 29.06.2004 թվականին կնքված հողամասի վարձակալության թիվ 23/35/-436 պայմանագիրը (այսուհետ՝ Պայմանագիր) և որպես դրա հետևանք չեղյալ համարել 14.09.2004 թվականին Գոհար Արամյանի անվամբ գույքի նկատմամբ իրավունքի պետական գրանցամատյանում կատարված սեփականության և վարձակալության իրավունքների գրառումները:

Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավատության առաջին ատյանի դատարանի (դատավոր Ռ. Ներսիսյան) (այսուհետ՝ Դատարան) 14.10.2010 թվականի վճռով հայցը մերժվել է:

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի (այսուհետ՝ Վերաքննիչ դատարան) 18.02.2011 թվականի որոշմամբ Քաղաքապետի վերաքննիչ բողոքը մերժվել է, և Դատարանի 14.10.2010 թվականի վճիռը թողնվել է օրինական ուժի մեջ:

Սույն գործով վճռաբեկ բողոք է ներկայացրել Քաղաքապետը:

Վճռաբեկ բողոքի պատասխան է ներկայացրել Գոհար Արամյանը:

2. Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը

Սույն վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքերի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

1) *Վերաքննիչ դատարանը չի կիրառել ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 612-րդ հոդվածի 2-րդ կետը, 624-րդ հոդվածի 2-րդ կետը, որոնք պետք է կիրառվեն:*

Բողոք բերած անձը նշված պնդումը պարզապես անհիմն է հետևյալ փաստարկներով.

Վերաքննիչ դատարանն անտեսել է, որ Պայմանագրի ժամկետի ավարտից՝ 29.06.2009 թվականից հետո վարձակալված գույքից օգտվելու հիմքով Պայմանագիրը վեր է սկսվել նույն պայմաններով անորոշ ժամկետով, և նման պայմանագրի դեպքում կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի ցանկացած ժամանակ հրաժարվելու վարձակալության պայմանագրից՝ անշարժ գույքի վարձակալության դեպքում այդ մասին մյուս կողմին երեք ամիս առաջ տեղեկացնելով, որը և Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի անշարժ գույքի կառավարման վարչության պետը կատարել է՝ 24.07.2009 թվականին այդ մասին տեղեկացրել է Գոհար Արամյանին: Մինչդեռ Գոհար Արամյանը ձեռնպահ է մնացել պայմանագիրը լուծելու գործընթացից:

2) *Վերաքննիչ դատարանը չի կիրառել ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 279-րդ հոդվածի 1-ին կետը, որը պետք է կիրառվի և կիրառել է նույն հոդվածի 2-րդ կետը, որը չպետք է կիրառվի:*

Բողոք բերած անձը նշված պնդումը պարզապես անհիմն է հետևյալ փաստարկներով.

Վերաքննիչ դատարանի հետևությունն այն մասին, որ Գոհար Արամյանը ոչ թե ոչնչացրել է իր սեփականությունը, այլ ձեռնարկել է Պայմանագրից բխող շինարարական աշխատանքներ, անհիմն է, քանի որ Երևանի Կենտրոն վարչական շրջանի ղեկավարի 30.06.2009 թվականի գրության համաձայն՝ Գոհար Արամյանը

սեփականության իրավունքով իրեն պատկանող 75,4 քմ մակերեսով հարթակը քանդել է և փոս է փորել առանց համապատասխան թույլտվության՝ դրանով իսկ խախտելով նշված պայմանագրով նախատեսված հողամասի օգտագործման նպատակը և պայմանները: Բացի այդ, նշված շինարարական աշխատանքների կատարումը հնարավոր էր բացառապես համապատասխան քաղաքաշինական փաստաթղթերի առկայության պայմաններում:

Վերաքննիչ դատարանն անտեսել է, որ Գոհար Արամյանին տրված անշարժ գույքի սեփականության իրավունքի գրանցման վկայականի համաձայն՝ նրա սեփականությունն է հանդիսանում բացառապես հարթակը, որը ոչնչացվելու հիմքով այլևս գոյություն չունի: Նման պայմաններում ենթակա էր կիրառման ոչ թե ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 279-րդ հոդվածի 2-րդ կետը, այլ նույն հոդվածի 1-ին կետը:

Վերոգրյալի հիման վրա բողոք բերած անձը պահանջել է բեկանել Վերաքննիչ դատարանի 18.02.2011 թվականի որոշումը և այն փոփոխել՝ հայցը բավարարել:

2.1. Վճռաբեկ բողոքի պատասխանի հիմնավորումները

Վերաքննիչ դատարանը նյութական և դատավարական իրավունքի նորմերը սխալ չի կիրառել:

Տվյալ դեպքում Գոհար Արամյանն օգտվել է վարձակալության պայմանագրի 4.1 և 4.2 կետերում նախատեսված իրավունքներից, պայմանագրի պայմանները չեն խախտվել, պայմանագրով կողմերը հողամասի օգտագործման նկատմամբ սահմանափակումներ չեն սահմանել: Գոհար Արամյանը ոչ թե ոչնչացրել է իր սեփականությունը, այլ ձեռնարկել է կապիտալ շինարարական աշխատանքներ: Հետևաբար, Վերաքննիչ դատարանը որոշմամբ ձիշտ է արտահայտել իր պատճառաբանությունները՝ մերժելով հայցվորի վերաքննիչ բողոքը:

3. Վճռաբեկ բողոքի քննության համար նշանակություն ունեցող փաստերը

Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1) Բաղաքապետի 18.05.2004 թվականի «Երևան քաղաքում ինքնակամ կառուցված շենքերի և շինությունների կարգավիճակի մասին» թիվ 871-Ա որոշման և այդ որոշման թիվ 1 հավելվածի (հ/հ 176) համաձայն՝ Երևանի Չարենցի փողոցի թիվ 4 շենքին կից 75,4 քմ մակերեսով ինքնակամ կառուցված հարթակի նկատմամբ ձանաչվել է Քրիստինե Խաչիկոյլյանի սեփականության իրավունքը, իսկ զբաղեցրած հողատարածքը տրամադրվել է վարձակալության 5 տարի ժամկետով (հ.1-ին, գ.թ. 11-13):

2) Հայաստանի Հանրապետության՝ ի դեմս Երևանի քաղաքապետ Ե. Զախարյանի (մի կողմից) և Քրիստինե Խաչիկոյլյանի (մյուս կողմից) միջև 29.06.2004 թվականին կնքվել է Պայմանագիր, որի համաձայն՝ համապատասխան վճարի դիմաց Քրիստինե Խաչիկոյլյանի ժամանակավոր՝ մինչև 18.05.2009 թվականը, տիրապետմանն ու օգտագործմանն է հանձնվել Երևանի Չարենցի փողոցի թիվ 4 շենքին կից վայրում գտնվող 75,4 քմ մակերեսով հողամասը՝ որպես հարթակի զբաղեցրած հողատարածք: Նշված պայմանագիրը ենթարկվել է նոտարական վավերացման (հ. 1-ին, գ.թ. 7-10):

3) Քրիստինե Խաչիկոյլյանի սեփականության իրավունքը 75,4 քմ հարթակի

և վարձակալության իրավունքը 75,4 քմ հողամասի նկատմամբ գրանցվել է Կադաստրում, որի վերաբերյալ նրան 20.07.2004 թվականին տրվել է անշարժ գույքի սեփականության (օգտագործման) իրավունքի գրանցման վկայական (հ. 2-րդ, գ.թ.11-13)։

4) Քրիստինե Խաչիկոյլյանի (մի կողմից) և Գոհար Արամյանի (մյուս կողմից) միջև 17.08.2004 թվականին կնքվել է անշարժ գույքի առուվաճառքի պայմանագիր, որի համաձայն՝ Քրիստինե Խաչիկոյլյանը որոշակի գնի դիմաց Գոհար Արամյանի սեփականությանն է հանձնել վերը նշված հարթակը։ Նշված պայմանագիրը ենթարկվել է նոտարական վավերացման։ Գոհար Արամյանի սեփականության իրավունքը 75,4 քմ հարթակի և վարձակալության իրավունքը 75,4 քմ հողամասի նկատմամբ գրանցվել է Կադաստրում, որի վերաբերյալ նրան 14.09.2004 թվականին տրվել է անշարժ գույքի սեփականության (օգտագործման) իրավունքի գրանցման վկայական (հ. 1-ին, գ.թ.34-36)։

5) Պայմանագրի ժամկետի ավարտից՝ 18.05.2009 թվականից հետո վարձատուն՝ Հայաստանի Հանրապետությունը՝ ի դեմս Երևանի քաղաքապետի, չի առարկել Գոհար Արամյանի կողմից վարձակալված գույքի օգտագործման շարունակմանը։

6) Պայմանագրի ժամկետն ավարտվել է 18.05.2009 թվականին, և կողմերը չեն երկարացրել պայմանագրի գործողության ժամկետը։

7) Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի անշարժ գույքի կառավարման վարչության պետը 24.07.2009 թվականի գրությամբ Գոհար Արամյանին տեղեկացրել է Պայմանագիրը լուծված համարելու մասին (հ. 1-ին, գ.թ.17)։ Նշված փաստը Գոհար Արամյանը չի վիճարկել։

8) Պայմանագրի 22.3 կետով նախատեսված է, որ Պայմանագիրը կարող է վարձատուի կողմից միակողմանի վաղաժամկետ լուծվել Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված հիմքերով կամ Պայմանագրի խախտումների դեպքում։

9) Գոհար Արամյանը չի առարկել իր կողմից սեփականության իրավունքով իրեն պատկանող հարթակը քանդելու փաստի դեմ։

4. Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումները

Քննելով վճռաբեկ բողոքը նշված հիմքի սահմաններում Վճռաբեկ դատարանը գտնում է, որ

1. վճռաբեկ բողոքն առաջին հիմքով հիմնավոր է հեղկյալ պարձառաբանությամբ.

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 624-րդ հոդվածի 2-րդ կետի համաձայն՝ եթե պայմանագրի ժամկետի ավարտից հետո վարձակալը, վարձատուի առարկությունների բացակայությամբ, շարունակում է օգտվել գույքից, պայմանագիրը ճանաչվում է վերսկսված՝ նույն պայմաններով անորոշ ժամկետով (հոդված 612)։

Նշված հոդվածի վերլուծությունից հետևում է, որ վարձակալության պայմանագրի ժամկետն ավարտվելուց հետո այն նույն պայմաններով անորոշ ժամկետով վերսկսված ճանաչելու համար անհրաժեշտ է երկու պարտադիր պայմանների միաժամանակյա առկայությունը, այն է՝ վարձակալած գույքից վարձակալի կողմից օգտվել շարունակելը վարձակալության պայմանագրի ժամկետի ավարտից հետո և այդ ընթացքում այդ գույքից օգտվելու վերաբերյալ վարձատուի առարկությունների բացակայությունը։

Նույն օրենսգրքի 612-րդ հոդվածի 2-րդ կետի համաձայն՝ եթե վարձակալության ժամկետը պայմանագրում որոշված չէ, ապա վարձակալության պայմանագիրը կնքված

է համարվում անորոշ ժամկետով: Այդ դեպքում կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի ցանկացած ժամանակ հրաժարվելու վարձակալության պայմանագրից՝ այդ մասին մյուս կողմին մեկ ամիս առաջ, իսկ անշարժ գույքի վարձակալության դեպքում երեք ամիս առաջ տեղեկացնելով, եթե այլ բան նախատեսված չէ օրենքով:

Նշված հոդվածի վերլուծությունից հետևում է, որ անորոշ ժամկետով կնքված անշարժ գույքի վարձակալության պայմանագրի դեպքում պայմանագրի կողմերն իրավունք ունեն ցանկացած ժամանակ հրաժարվելու այդ պայմանագրից՝ այդ մասին մյուս կողմին երեք ամիս առաջ տեղեկացնելով:

Սույն գործի փաստերի համաձայն՝ Պայմանագրի ժամկետի ավարտից՝ 18.05.2009 թվականից հետո Հայաստանի Հանրապետությունը չի առարկել Գոհար Արամյանի կողմից վարձակալված գույքից օգտվել շարունակելուն, և միայն 24.07.2009 թվականի գրությամբ է Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի անշարժ գույքի կառավարման վարչության պետը Գոհար Արամյանին տեղեկացրել Պայմանագիրը լուծված համարելու մասին:

Նման պայմաններում Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ Պայմանագրի ժամկետի ավարտից հետո այն վերսկսվել է՝ նույն պայմաններով անորոշ ժամկետով, իսկ Հայաստանի Հանրապետությունը, օգտվելով ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 612-րդ հոդվածի 2-րդ կետով իրեն վերապահված իրավունքից, հրաժարվել է Պայմանագրից՝ այդ մասին նույն կետում նշված ժամկետում տեղեկացնելով Գոհար Արամյանին:

Հիմք ընդունելով վերոնշյալ հանգամանքները՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Քաղաքապետի վճռաբեկ բողոքի առաջին հիմքը Վերաքննիչ դատարանի կողմից ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 612-րդ հոդվածի 2-րդ կետը և 624-րդ հոդվածի 2-րդ կետը չկիրառելու մասին հիմնավոր է:

2) բողոքը երկրորդ հիմքով հիմնավոր է հետևյալ պարզառարանությամբ.

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 53-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ դատարանը յուրաքանչյուր ապացույց գնահատում է գործում եղած բոլոր ապացույցների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտության վրա հիմնված ներքին համոզմամբ:

Վճռաբեկ դատարանը փաստում է, որ այս կամ այն հանգամանքի առկայության կամ բացակայության մասին դատարանի եզրակացությունը պետք է լինի գործով ձեռք բերված ապացույցների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտման տրամաբանական հետևությունը՝ հաշվի առնելով դրանց համակցությունը և փոխադարձ կապը, կիրառման ենթակա իրավունքը և ներքին համոզմունքը (*լրես ըստ «Գլենդել Հիլզ» ՓԲԸ-ի դիմումի՝ Երևանի քաղաքացիական դատարանի օրինական ուժի մեջ մտած 31.10.2008 թվականի վճիռը պարզաբանելու պահանջի մասին թիվ ԵՄԳ/0134/02/08 գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 12.03.2010 թվականի որոշումը*):

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 279-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ սեփականության իրավունքը դադարում է սեփականատիրոջ կողմից իր գույքն օտարելու, սեփականության իրավունքից հրաժարվելու, գույքը ոչնչացնելու և գույքի նկատմամբ սեփականության իրավունքի կորստի՝ օրենքով նախատեսված այլ դեպքերում:

Նշված հոդվածի վերլուծությունից հետևում է, որ գույքի նկատմամբ սեփականության իրավունքը դադարում է նաև այն դեպքում, երբ այդ գույքի

սեփականատերը ոչնչացնում է այն:

Սույն գործի փաստերի համաձայն՝ Գոհար Արամյանը քանդելու միջոցով ամբողջությամբ ոչնչացրել է սեփականության իրավունքով իրեն պատկանող՝ 14.09.2004 թվականին իրեն տրված անշարժ գույքի սեփականության իրավունքի գրանցման վկայականում նշված 75,4 քմ հարթակը:

Նման պայմաններում Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ նշված գույքը ոչնչացվելու հետևանքով դրա նկատմամբ դադարել է Գոհար Արամյանի սեփականության իրավունքը:

Մինչդեռ, Վերաքննիչ դատարանը, անտեսելով նշված հանգամանքը, Գոհար Արամյանի կողմից իր գույքի ոչնչացումը դիտել է որպես կապիտալ շինարարության հետ կապված աշխատանքների իրականացում՝ նշելով, որ «վարձակալն օգտվել է հողամասի վարձակալության պայմանագրով նախատեսված իր իրավունքներից՝ իրականացնելով կապիտալ շինարարություն և չի խախտել պայմանագրի պայմանները, քանի որ պայմանագրով կողմերը չեն սահմանել հողամասի օգտագործման նկատմամբ սահմանափակումներ: Նշված հանգամանքը հաստատվում է նաև սույն գործում առկա առևտրի սրահի էքսիզային առաջարկով, որը փաստում է, որ **Գոհար Արամյանը ոչ թե ոչնչացրել է իր սեփականությունը, այլ ձեռնարկել է կապիտալ շինարարական աշխատանքներ**»:

Միաժամանակ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ սույն գործի վարույթը 14.09.2004 թվականին Գոհար Արամյանի անվամբ գույքի նկատմամբ իրավունքի պետական գրանցամատյանում կատարված սեփականության իրավունքի գրառումը չեղյալ համարելու պահանջի մատով ենթակա է կարճման հետևյալ պատճառաբանությամբ.

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 109-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ դատարանը կարճում է գործի վարույթը, եթե վեճը ենթակա չէ դատարանում քննության:

Սույն գործով Քաղաքապետը պահանջել է չեղյալ համարել 14.09.2004 թվականին Գոհար Արամյանի անվամբ գույքի նկատմամբ իրավունքի պետական գրանցամատյանում կատարված **սեփականության իրավունքի գրառումը**:

Վճռաբեկ դատարանը հարկ է համարում արձանագրել, որ գույքի նկատմամբ իրավունքների գրանցման, դադարեցման, չեղյալ ճանաչելու հետ կապված հարաբերությունները կարգավորվում են «Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին» ՀՀ օրենքով, իսկ նշված օրենքը սեփականության իրավունքի գրառումը չեղյալ հայտարարելու իրավական հնարավորություն չի նախատեսում: Նույն օրենքի 33-րդ հոդվածը նախատեսում է միայն անշարժ գույքի **վարձակալության իրավունքի** պետական գրանցման և անշարժ գույքի **վարձակալության իրավունքի** գրանցման վկայականը **չեղյալ հայտարարելու իրավական հնարավորություն**:

Հետևաբար, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ դատարանն իրավասու չէ գույքի նկատմամբ սեփականության իրավունքի գրառումը չեղյալ համարել, հետևաբար նման պահանջը ենթակա չէ դատարանում քննության:

Այսպիսով, վճռաբեկ բողոքի նշված հիմքերի առկայությունը Վճռաբեկ դատարանը դիտում է բավարար՝ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 227-րդ և 228-րդ հոդվածների ուժով Վերաքննիչ դատարանի որոշումը բեկանելու

համար:

Միաժամանակ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ սույն քաղաքացիական գործով անհրաժեշտ է կիրառել ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 240-րդ հոդվածի 1-ին կետի 4-րդ ենթակետով սահմանված՝ ստորադաս դատարանի դատական ակտը փոփոխելու Վճռաբեկ դատարանի լիազորությունը հետևյալ հիմնավորմամբ.

«Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի ողջամիտ ժամկետում իր գործի քննության իրավունք: Սույն քաղաքացիական գործով վեճի լուծումն էական նշանակություն ունի գործին մասնակցող անձանց համար: Վճռաբեկ դատարանը գտնում է, որ գործը ողջամիտ ժամկետում քննելը հանդիսանում է «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի նույն հոդվածով ամրագրված՝ անձի արդար դատաքննության իրավունքի տարր, հետևաբար, գործի անհարկի ձգձգումները վտանգ են պարունակում նշված իրավունքի խախտման տեսանկյունից: Տվյալ դեպքում, Վճռաբեկ դատարանի կողմից ստորադաս դատարանի դատական ակտը փոփոխելը բխում է արդարադատության արդյունավետության շահերից, քանի որ սույն գործով վերջնական դատական ակտ կայացնելու համար նոր հանգամանք հաստատելու անհրաժեշտությունը բացակայում է:

Դատական ակտը փոփոխելիս Վճռաբեկ դատարանը հիմք է ընդունում սույն որոշման պատճառաբանությունները, ինչպես նաև գործի նոր քննության անհրաժեշտության բացակայությունը:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 240-241²-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

ՈՐՈՇԵՑ

1. Վճռաբեկ բողոքը բավարարել: Բեկանել ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 18.02.2011 թվականի որոշումը և այն փոփոխել. Երևանի քաղաքապետի հայցը բավարարել մասնակիորեն՝ լուծել Հայաստանի Հանրապետության՝ ի դեմս Երևանի քաղաքապետ Ե.Զախարյանի (մի կողմից) և Քրիստինե Խաչիկոյլյանի (մյուս կողմից) միջև 29.06.2004 թվականին կնքված հողամասի վարձակալության մասին թիվ 23/35/-436 պայմանագիրը և որպես դրա հետևանք չեղյալ համարել Հայաստանի Հանրապետության՝ ի դեմս Երևանի քաղաքապետ Ե.Զախարյանի (մի կողմից) ու Քրիստինե Խաչիկոյլյանի (մյուս կողմից) միջև 29.06.2004 թվականին կնքված հողամասի վարձակալության թիվ 23/35/-436 պայմանագրից բխող՝ 75,4 քմ հողամասի նկատմամբ Գոհար Արամյանի անվամբ կատարված վարձակալության իրավունքի վերաբերյալ գրառումը:

2. Գործի վարույթը՝ ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի Մարաշ տարածքային ստորաբաժանման գրանցամատյանում Քրիստինե Խաչիկոյլյանի (մի կողմից) և Գոհար Արամյանի (մյուս կողմից) միջև 17.08.2004 թվականին կնքված անշարժ գույքի առուվաճառքի պայմանագրից բխող՝ 75,4 քմ հարթակի նկատմամբ Գոհար Արամյանի անվամբ կատարված սեփականության իրավունքի գրառումը չեղյալ համարելու մատով, կարձել:

3. Գոհար Արամյանից հօգուտ Երևանի քաղաքապետարանի բռնագանձել

34.000 ՀՀ դրամ, որից 4.000 ՀՀ դրամը՝ որպես հայցադիմումը դատարան ներկայացնելու համար վճարված պետական տուրքի գումար, 10.000 ՀՀ դրամը՝ որպես վերաքննիչ բողոք ներկայացնելու համար վճարված պետական տուրքի գումար, 20.000 ՀՀ դրամը՝ որպես վճարելի բողոք ներկայացնելու համար վճարված պետական տուրքի գումար:

4. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

*ՆԱԽԱԳԱՀՈՂ՝ ստորագրություն
ԴԱՏԱՎՈՐՆԵՐ՝ ստորագրություններ*

**ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ ԵՎ ԱՅԼ
ԳՈՒՅՔԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐ**

Ընդհանուր դրույթներ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ**

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի որոշում
Քաղաքացիական գործ թիվ ԿԴ1/0289/02/10
Քաղաքացիական գործ թիվ ԿԴ1/0289/02/10
Նախագահող դատավոր՝ Ս. Սահակյան
Դատավորներ՝ Կ. Հակոբյան
Լ. Գրիգորյան

Քաղաքացիական գործ թիվ ԿԴ1/0289/02/10
2011թ.

**ՈՐՈՇՈՒՄ
ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քաղաքացիական
և վարչական պալատը (այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

*նախագահությամբ
մասնակցությամբ դատավորներ*

Ե. ԽՈՒՆԴԿԱՐՅԱՆԻ
Մ. ԴՐՄԵՅԱՆԻ
Վ. ԱԲԵԼՅԱՆԻ
Վ. ԱՎԱՆԵՍՅԱՆԻ
Ա. ԲԱՐՍԵՂՅԱՆԻ
Գ. ՀԱԿՈՐՅԱՆԻ
Տ. ՊԵՏՐՈՍՅԱՆԻ
Ե. ՍՈՂՈՄՈՆՅԱՆԻ

2011 թվականի հուլիսի 01-ին
դոնբաց դատական նիստում, քննելով Տիգրան Ենոքյանի վճռաբեկ բողոքը
ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 01.10.2010 թվականի որոշման դեմ՝
ըստ դիմումի Տիգրան Ենոքյանի ընդդեմ պարտապան Սամվել Ստեփանյանի և
պահանջատեր Լիլիա Ստեփանյանի՝ գույքը կալանքից (արգելանքից) ազատելու
պահանջի մասին,

ՊԱՐԶԵՑ

1. Գործի դատավարական նախապատմությունը

Դիմելով դատարան՝ Տիգրան Ենոքյանը պահանջել է ՀՀ ԱԱԾ քննչական
վարչության ՀԿԳ ավագ քննիչի 24.12.2008 թվականի «գույքի վրա կալանք դնելու
մասին» որոշմամբ սեփականության իրավունքով պատկանող Կոտայքի մարզի

Ջրվեժ գյուղի «Բ» թաղամասի 30 բնակելի տունը և հողամասն ազատել կալանքից (արգելանքից):

ՀՀ Կոտայքի մարզի ընդհանուր իրավասության դատարանը (այսուհետ՝ Դատարան) 03.06.2010 թվականի վճռով դիմումը բավարարել է:

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի (այսուհետ՝ Վերաքննիչ դատարան) 01.10.2010 թվականի որոշմամբ Դատարանի 03.06.2010 թվականի վճիռը բեկանվել և փոփոխվել է. Տիգրան Ենոքյանի դիմումը մերժվել է:

Սույն գործով վճռաբեկ բողոք է ներկայացրել Տիգրան Ենոքյանը:

Վճռաբեկ բողոքի պատասխան չի ներկայացվել:

2. Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը

Վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

Վերաքննիչ դատարանը սխալ է մեկնաբանել «Դատարանի ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի 45-րդ հոդվածը, չի կիրառել ՀՀ Սահմանադրության 31-րդ հոդվածը և «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի փոփոխված II-րդ արձանագրության 1-ին հոդվածը, որոնք պետք է կիրառվեն:

Բողոք բերած անձը նշված պնդումը պարզապես և հետևյալ փաստարկներով:

Վերաքննիչ դատարանը հաշվի չի առել, որ ՀՀ հյուսիսային քաղաքացիական դատարանի՝ 01.09.2008 թվականի օրինական ուժի մեջ մտած վճռով մերժվել է Լիլիա Ադունցի (Ստեփանյան) հայցն ընդդեմ Սամվել Ստեփանյանի և Տիգրան Ենոքյանի՝ տան և հողամասի առուվաճառքի պայմանագիրը, դրա հիման վրա կատարված պետական գրանցումը մասնակի անվավեր ճանաչելու և որպես անվավերության հետևանք սեփականության իրավունքը ճանաչելու պահանջների մասին:

Բացի այդ, ինչպես այդ դատական ակտով, այնպես էլ հետագայում հարուցված քրեական գործով կայացված դատավճռով հիմնավորվել է, որ Տիգրան Ենոքյանը վիճելի գույքի բարեխիղճ ձեռք բերող է և որևէ պարտավորություն չունի Լիլիա Ստեփանյանի նկատմամբ: Մինչդեռ, քննիչի 24.12.2008 թվականի որոշմամբ կալանք է դրվել իր գույքի վրա, և Երևանի Արաբկիր և Քանաքեռ-Զեյթուն համայնքների առաջին ատյանի դատարանի 05.08.2009 թվականի դատավճռով նշված արգելանքը չի վերացվել:

Իր սեփականության իրավունքի խախտումները վերացնելու համար դիմել է դատական պաշտպանության, ինչպես ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 238-րդ հոդվածի 1-ին մասի, 437-րդ հոդվածի 2-րդ մասի, այնպես էլ «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի 45-րդ հոդվածով սահմանված կարգով: Չնայած Դատարանն իր դիմումը բավարարել է, սակայն Վերաքննիչ դատարանը պատճառաբանել է, որ խախտվել է դիմումի քննության ենթակայության կարգը, քանի որ այն պետք է քննվեր քրեական դատավարության սահմանված կարգով և հակասելով ինքն իրեն՝ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 221-րդ հոդվածի 4-րդ կետի համաձայն բեկանել և փոփոխել է Դատարանի վճիռը:

Վերաքննիչ դատարանը, մերժելով իր դիմումը, թույլ է տվել սեփականատիրոջ իրավունքների խախտում, քանի որ նշված որոշման ուժի մեջ մտնելուց հետո Տիգրան Ենոքյանը կզրկվի իր գույքն արգելանքից հանելու հնարավորությունից: Վերաքննիչ դատարանը, սխալ մեկաբանելով «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի 45-րդ հոդվածը, գտել է, որ այն կիրառելի չէ:

Վերոգրյալի հիման վրա վճարել բողոք բերած անձը պահանջել է բեկանել Վերաքննիչ դատարանի 01.10.2010 թվականի որոշումը և «օրինական ուժ տալ Դատարանի 03.06.2010 թվականի վճիռն կամ կայացնել իր իրավունքների խախտումը վերացնող դատական ակտ»:

3. Վճարել բողոքի քննության համար նշանակություն ունեցող փաստերը

1. Լիլիա Ստեփանյանը 27.03.2004 թվականին նոտարական կարգով վավերացված լիազորագրով լիազորել է Սամվել Ստեփանյանին, որպես Լիլիա Ստեփանյանի ներկայացուցիչ, իր հայեցողությամբ ու իր կողմից սահմանված գնով ու պայմաններով վաճառել Կոտայքի մարզի Ջրվեժ գյուղում գտնվող տնամերձ հողամասի իրեն պատկանող բաժինը:

2. Լիլիա Ստեփանյանը 20.07.2005 թվականին հայտարարություն է տվել նոտարական գրասենյակ՝ վերոհիշյալ լիազորագիրը վերացնելու մասին, որը հաստատվել է նոտարի կողմից և այդ մասին 21.07.2005 թվականին տեղեկացրել է Սամվել Ստեփանյանին, և այդ փաստի վերաբերյալ վերջինս նշում է կատարել այդ հայտարարության տակ:

3. Սամվել Ստեփանյանի, Լիլիա Ստեփանյանի, որի անունից, համաձայն 27.03.2004 թվականի լիազորագրի, հանդես է եկել Սամվել Ստեփանյանը և Տիգրան Ենոքյանի միջև 24.07.2005 թվականին կնքվել է Կոտայքի մարզի Ջրվեժ գյուղի «Բ» թաղամասի թիվ 30 հասցեի բնակելի տան և հողամասի առուվաճառքի պայմանագիր, համաձայն որի՝ Սամվել և Լիլիա Ստեփանյանները վաճառել են, իսկ Տիգրան Ենոքյանը գնել է վերը նշված հասցեի բնակելի տունը և հողամասը, և Տիգրան Ենոքյանի՝ պայմանագրից ծագող իրավունքը գրանցվել է ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի տարածքային ստորաբաժանումում, և նրա անվամբ 26.08.2005 թվականին տրվել է անշարժ գույքի սեփականության իրավունքի գրանցման թիվ 1500283 վկայականը:

4. Լիլիա Ստեփանյանը հայց է ներկայացրել դատարան ընդդեմ Տիգրան Ենոքյանի, Լուսիկ Մատանյանի, Սամվել Ստեփանյանի, ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի Արովյանի տարածքային ստորաբաժանման և Արաբկիր նոտարական տարածքի նոտար Ս.Դանիելյանի՝ բնակելի տան և հողամասի առուվաճառքի պայմանագիրը, դրա հիման վրա կատարված պետական գրանցումը մասնակի անվավեր ճանաչելու և որպես անվավերության հետևանք սեփականության իրավունքը ճանաչելու պահանջների մասին, որը ՀՀ հյուսիսային քաղաքացիական դատարանի 01.09.2008 թվականի վճռով մերժվել է:

5. Լիլիա Ստեփանյանի վերաքննիչ բողոքի հիման վրա ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 26.12.2008 թվականի որոշմամբ վերը նշված վճիռը թողնվել է օրինական ուժի մեջ:

6. Լիլիա Ստեփանյանի դիմումների հիման վրա Սամվել Ստեփանյանի

նկատմամբ հարուցվել է քրեական գործ, որի շրջանակում ՀՀ ԱԱԾ քննչական վարչության ՀԿԳ ավագ քննիչ Ա. Թևանյանի 24.12.2008 թվականի որոշմամբ, դատարանի որոշմամբ գույքի բռնագրավումը և քաղաքացիական հայցն ապահովելու համար կալանք է դրվել Կոտայքի մարզի Ջրվեժ գյուղի «Բ» թաղամասի թիվ 30 բնակելի տան և հողամասի վրա:

7. Երևանի Արաբկիր և Քանաքեռ-Զեյթուն համայնքների ընդհանուր իրավասության դատարանի 05.08.2009 թվականի դատավճռի համաձայն՝ Սամվել Ստեփանյանը մեղավոր է ճանաչվել ՀՀ քրեական օրենսգրքի 178-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով և դատապարտվել է ազատազրկման 4 տարի ժամկետով, առանց գույքի բռնագրավման:

Նրա նկատմամբ կիրառվել է ՀՀ քրեական օրենսգրքի 70-րդ հոդվածը, և նշանակված պատիժը պայմանականորեն չի կիրառվել, նշանակվել է փորձաշրջան՝ 2 տարի ժամկետով: Նույն դատավճռով վճռվել է Սամվել Ստեփանյանից հօգուտ Լիլիա Ստեփանյանի բռնագանձել քրեական գործով մեղադրանքի ծավալով որոշված գույքի արժեքի 1/2-ը և սույն գործով արգելադրված գույքի նկատմամբ դրված արգելանքը պահպանել մինչև Ա.Ստեփանյանի կողմից պարտավորության կատարումը:

8. Քրեական գործով տուժող Լ.Ստեփանյանի և նրա պաշտպան Ա.Արաբաջյանի վերաքննիչ բողոքի հիման վրա ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի 11.11.2009 թվականի որոշմամբ Երևանի Արաբկիր և Քանաքեռ-Զեյթուն համայնքների ընդհանուր իրավասության դատարանի 05.08.2009 թվականի դատավճիռը թողնվել է օրինական ուժի մեջ, իսկ բերված վերաքննիչ բողոքը մերժվել է:

9. Թիվ ԵԱՔԳ/0041/01/09 քրեական գործով Տիգրան Ենոքյանն ունեցել է վկայի կարգավիճակ (գ.թ. 5, 100):

4. Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը

Քննելով վճռաբեկ բողոքը նշված հիմքի սահմաններում՝ Վճռաբեկ դատարանը գրնում է, որ այն հիմնավոր է հետևյալ պարձառաբանությամբ.

«Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի թիվ 1 արձանագրության 1-ին հոդվածի համաձայն՝ յուրաքանչյուր ֆիզիկական կամ իրավաբանական անձ ունի իր գույքից անարգել օգտվելու իրավունք: Ոչ ոքի չի կարելի զրկել նրա գույքից, բացառությամբ ի շահ հանրության և այն պայմաններով, որոնք նախատեսված են օրենքով ու միջազգային իրավունքի ընդհանուր սկզբունքներով:

Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարում արձանագրել, որ Մարդու իրավունքների եվրոպական դատարանի նախադեպային իրավունքի համաձայն՝ թիվ 1 արձանագրության 1-ին հոդվածը բաղկացած է 3 առանձին կանոններից, որի առաջին կանոնը ձևակերպում է գույքից անարգել օգտվելու իրավունքը, երկրորդը վերաբերում է գույքի առգրավման հարցերին և այդ առնչությամբ հստակ պայմաններ է սահմանում, իսկ երրորդ կանոնն ընդունում է, որ պետությունները, ի թիվս այլ իրավասությունների, իրավունք ունեն ընդհանուր շահից ելնելով վերահսկել գույքի օգտագործումը՝ այդ օրենքների կիրառման անհրաժեշտության պարագայում (*Տես Մարդու իրավունքի և Լոնդոնի ընդդեմ Շվեդիայի գործով Եվրոպական դատարանի 23.09.1982 թվականի վճիռը, կետ 61*):

Գույքից անարգել օգտվելու միջամտությունը կարող է թույլատրելի համարվել, եթե՝

1. նախատեսված է օրենքով

2. բխում է հանրային շահից

3. անհրաժեշտ է ժողովրդավարական հասարակությունում:

Առաջին պայմանը ենթադրում է համապատասխան օրենքի առկայություն, որը նախատեսում է սեփականության օգտագործման սահմանափակումները: Այն միաժամանակ պետք է բավարարի թիվ 1 արձանագրությամբ և Եվրոպական դատարանի վճիռներով սահմանված պահանջները (*լրես Ջեյմսը և այլոք ընդդեմ Միացյալ Թագավորության գործով Եվրոպական դատարանի 1986 թվականի փետրվարի 21-ի վճիռը, կետ 67*):

Երկրորդ պայմանը սահմանում է, որ սեփականության իրավունքի իրականացման միջամտությունը պետք է հետապնդի իրավաչափ նպատակ՝ ելնելով ընդհանուր, հանրային շահից (*լրես Former king of Greece and others v Greece գործով Եվրոպական դատարանի 2000 թվականի նոյեմբերի 23-ի վճիռը, կետ 83*):

Երրորդ պայմանը նախատեսում է, որ գույքից անարգել օգտվելու միջամտությունը պետք է անհրաժեշտ լինի ժողովրդավարական հասարակությունում և ուղղված լինի իրավաչափ նպատակի հասնելուն: Անհրաժեշտ է բարենպաստ հավասարակշռություն ստեղծել հանրության շահից բխող պահանջմունքների և անհատի իրավունքների միջև: Նման բարենպաստ հավասարակշռությանը հնարավոր չէ հասնել այն դեպքերում, երբ գույքի սեփականատերը ստիպված է «անհատական և չափազանց մեծ անհարմարություններ» կրել: Կոնվենցիայի խախտում սկզբունքորեն տեղի չի ունենա, եթե առկա է կոնվենցիոն իրավունքին ավելի քիչ սահմանափակող միջոց քան այն, որն ընտրվել է որոշակի նպատակի հասնելու համար, սակայն երկու միջոցներն էլ դուրս չեն պետության հայեցողության թույլատրելի շրջանակից: Պետության հայեցողության թույլատրելի շրջանակները կախված են գործի հանգամանքներից, Կոնվենցիայով երաշխավորված իրավունքի տեսակից, միջամտության արդյունքում հետապնդվող իրավաչափ նպատակի բնույթից, ինչպես նաև միջամտության ծավալներից (*Տես Former king of Greece and others v Greece գործով Եվրոպական դատարանի 2000 թվականի նոյեմբերի 23-ի վճիռը, կետ 89, Սկոլյուն ընդդեմ Բուլղարիայի գործով Եվրոպական դատարանի 1995 թվականի սեպտեմբերի 28-ի վճիռը, կետ 32*):

ՀՀ Սահմանադրության 8-րդ հոդվածի համաձայն՝ Հայաստանի Հանրապետությունում ճանաչվում և պաշտպանվում է սեփականության իրավունքը:

ՀՀ Սահմանադրության 31-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ յուրաքանչյուր ոք իրավունք ունի տիրապետելու, օգտագործելու, տնօրինելու և կտակելու իր սեփականությունը: Ոչ ոքի չի կարելի զրկել սեփականությունից, բացառությամբ դատական կարգով՝ օրենքով նախատեսված դեպքերի:

Շարադրված սահմանադրական դրույթներից հետևում է, որ գույքի տիրապետման, տնօրինման և օգտագործման՝ սեփականատիրոջ իրավագործությունները մեծ կարևորության իրավական արժեքներ են, որոնք ունեն սահմանադրական բնույթ: Դրանց սահմանափակման համար անհրաժեշտ է, որ հակակշիռ իրավական շահն ունենա բացառիկ նշանակություն: Սեփականության իրավունքի սահմանադրական արժեքի կարևորությամբ է պայմանավորված մասնավորապես ՀՀ Սահմանադրության մեջ (31-րդ հոդվածում) հետևյալ երաշխիքների ամրագրումը.

1) սեփականության իրավունքով իրեն պատկանող գույքից անձը կարող է զրկվել

բացառապես օրենքով նախատեսված դեպքերում և օրենքով նախատեսված հիմքերով,
2) սեփականատիրոջ կամքին հակառակ սեփականության իրավունքը կարող է դադարեցվել միայն դատական կարգով՝ դատարանի որոշմամբ (տես՝ Վճռաբեկ դատարանի 27.08.2010 թվականի թիվ ԵՇԴ/0001/11/10 որոշումը):

Սույն գործով Դատարանը, պատճառաբանելով, որ քննիչի 24.12.2008 թվականի որոշմամբ գույքի բռնագրավումը և քաղաքացիական հայցն ապահովելու համար կալանք է դրվել Կոտայքի մարզի Ջրվեժ գյուղի «Բ» թաղամասի թիվ 30 հասցեի բնակելի տան և հողամասի վրա, հետագայում Երևանի Արաբկիր և Քանաքեռ-Զեյթուն համայնքների ընդհանուր իրավասության դատարանի 05.08.2010 թվականի դատավճռով գույքի բռնագրավում ընդհանրապես չի կիրառվել, իսկ արգելադրված գույքի նկատմամբ դրված արգելանքը պահպանվել է մինչև Սամվել Ստեփանյանի կողմից պարտավորության կատարումը, ինչպես նաև արձանագրելով, որ քննիչի որոշմամբ արգելադրված գույքի սեփականատերը Տիգրան Ենոքյանն է, հանգել է այն հետևության, որ Տիգրան Ենոքյանը որևէ պարտականություն կամ պատասխանատվություն չի կրում Սամվել Ստեփանյանի կողմից պահանջատեր Լիլիա Ստեփանյանին խարդախությամբ պատճառված նյութական վնասի վերականգման համար, որպիսի պայմաններում դիմումը ենթակա է բավարարման:

Սույն գործով Վերաքննիչ դատարանը դատական ակտը բեկանելու և այն փոփոխելու՝ դիմումը մերժելու հիմքում դրել է այն հանգամանքը, որ քրեական դատավարության շրջանակում քննիչի որոշմամբ գույքի վրա դրված կալանքը չի կարող վերացվել քաղաքացիական դատավարության կարգով: Միաժամանակ, Վերաքննիչ դատարանն արձանագրել է, որ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 98-րդ հոդվածով սահմանված են քաղաքացիական դատավարության կարգով կիրառվող հայցի ապահովման միջոցները, որոնց շարքում նշված չէ գույքի վրա կալանք դնելը:

Վերը նշվածը հաշվի առնելով՝ Վճռաբեկ դատարանը գտնում է սույն գործով բողոքի հիմքում բարձրացված հարցին պատասխանելու համար պետք է քննարկման առարկա դարձվի հետևյալ իրավական հարցադրումը.

Քրեական գործով վարույթն ավարտվելուց հետո կալանքի (արգելանքի) տակ գտնվող գույքի պարկանելիության վերաբերյալ վեճ ծագելու դեպքում ո՞ր դատարանին է ընդդարյա շահագրգիռ անձի (գույքի սեփականատիրոջ կամ դրա օրինական տիրապետողի)՝ գույքն արգելանքից հանելու վերաբերյալ իրավունքի պաշտպանությունը:

ՀՀ Սահմանադրության 18-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի իր իրավունքների և ազատությունների դատական, ինչպես նաև պետական այլ մարմինների առջև իրավական պաշտպանության արդյունավետ միջոցների իրավունք:

«Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ հարկադիր կատարման միջոցներն են պարտապանի գույքի վրա բռնագանձում տարածելը՝ **արգելանք դնելու և այն իրացնելու միջոցով:**

«Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի 43-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ պարտապանի գույքի վրա բռնագանձում տարածելը ներառում է գույքի վրա **արգելանք դնելը**, այն առգրավելը և հարկադիր իրացնելը (աճուրդ կամ ուղղակի վաճառք):

«Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի 44-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին և 2-րդ կետերի համաձայն՝ արգելանքը կիրառվում է՝ պարտապանի գույքի կամ պարտապանի մոտ գտնվող՝ հայցվորին (պարտատիրոջը)

պատկանող գույքի պահպանումն ապահովելու և այն հետագայում պահանջատիրոջը հանձնելու կամ իրացնելու նպատակով, պարտապանի գույքի բռնագրավելու մասին դատարանի դատավճիռը կատարելու դեպքում:

«Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի 45-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ արգելանքի տակ գտնվող գույքի պատկանելիության վերաբերյալ վեճ ծագելու դեպքում **շահագրգիռ անձն իրավունք ունի գույքն արգելանքից հանելու վերաբերյալ հայցով դիմել գույքի գտնվելու վայրի առաջին ատյանի դատարան:**

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ գույքն արգելանքից հանելու վերաբերյալ հայցը կարող է ներկայացնել **ինչպես այդ գույքի սեփականատերը, այնպես էլ դրա օրինական տիրապետողը**, իսկ նույն հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ գույքն արգելանքից հանելու վերաբերյալ հայցը ներկայացվում է ընդդեմ պարտապանի և (կամ) պահանջատիրոջ: Եթե գույքի վրա արգելանք է դրվել դատավճռով գույքը բռնագրավելու կապակցությամբ, ապա որպես պատասխանող ներգրավվում են դատապարտյալը և համապատասխան ֆինանսական մարմինը: Նույն հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ դատարանը գույքն արգելանքից հանելու վերաբերյալ հայցը քննում է այն ընդունելու օրվանից մեկամսյա ժամկետում:

Վերը նշված նորմերի վերլուծությունից հետևում է, որ գույքի վրա կիրառվող արգելանքը հարկադիր կատարման միջոցներից մեկն է, որը կիրառվում է ինչպես պարտապանի գույքի վրա բռնագանձումն ապահովելու և այն հետագայում պահանջատիրոջը հանձնելու կամ իրացնելու նպատակով (քաղաքացիական և քրեական գործերով), այնպես էլ պարտապանի գույքը բռնագրավելու մասին դատարանի դատավճիռը կատարելու դեպքում (քրեական գործերով):

Ընդ որում՝ օրենսդիրն այլ անձանց իրավունքների պաշտպանության նպատակով, արգելանքի տակ գտնվող գույքի պատկանելիության վերաբերյալ վեճ ծագելու դեպքում շահագրգիռ անձանց համար սահմանել է իրավունք՝ **գույքն արգելանքից հանելու վերաբերյալ հայցով դիմել գույքի գտնվելու վայրի առաջին ատյանի դատարան:**

Այսինքն՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի 45-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերը թե քաղաքացիական, և թե քրեական գործերով երաշխավորում են արգելադրված գույքի սեփականատիրոջ կամ այլ օրինական տիրապետողի իրավունքների պաշտպանությունը նաև այն դեպքում, երբ գործով վարույթն ավարտվել է: Ի դեպ, նախատեսվել են նաև այդ իրավունքի իրականացման մեխանիզմները, այն է՝ **գույքն արգելանքից հանելու վերաբերյալ հայցով դիմել գույքի գտնվելու վայրի առաջին ատյանի դատարան:** Վերոնշյալից հետևում է, որ թե քաղաքացիական, և թե քրեական գործերի վարույթների ավարտից հետո շահագրգիռ անձը պետք է գույքն արգելանքից հանելու վերաբերյալ **հայցով** դիմի գույքի գտնվելու վայրի առաջին ատյանի դատարան, որն իրենից ենթադրում է համապատասխան պահանջի քննությունը քաղաքացիական դատավարության կարգով:

Սույն գործի փաստերի համաձայն՝ քրեական վարույթի ընթացքում քննիչի 24.12.2008 թվականի որոշմամբ, դատարանի որոշմամբ գույքի բռնագրավումը և քաղաքացիական հայցն ապահովելու համար կալանք է դրվել Կոտայքի մարզի Ջրվեժ

գյուղի «Բ» թաղամասի թիվ 30 բնակելի տան և հողամասի վրա: Երևանի Արաբկիր և Քանաքեռ-Զեյթուն համայնքների ընդհանուր իրավասության դատարանի՝ 05.08.2009 թվականի օրինական ուժի մեջ մտած դատավճռով Սամվել Ստեփանյանը մեղավոր է ճանաչվել ՀՀ քրեական օրենսգրքի 178-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով և նա դատապարտվել է ազատազրկման 4 տարի ժամկետով, առանց գույքի բռնագրավման: Նրա նկատմամբ կիրառվել է ՀՀ քրեական օրենսգրքի 70-րդ հոդվածը և նշանակված պատիժը պայմանականորեն չի կիրառվել, նշանակվել է փորձաշրջան՝ 2 տարի ժամկետով: Նույն դատավճռով վճռվել է Սամվել Ստեփանյանից հօգուտ Լիլիա Ստեփանյանի բռնագանձել քրեական գործով մեղադրանքի ծավալով որոշված գույքի արժեքի 1/2-ը և **սույն գործով արգելադրված գույքի նկատմամբ դրված արգելանքը պահպանել մինչև Ս.Ստեփանյանի կողմից պարտավորության կատարումը:**

ՀՀ հյուսիսային քաղաքացիական դատարանի՝ 01.09.2008 թվականի օրինական ուժի մեջ մտած վճռով հաստատվել է այն փաստը, որ վեճի առարկա արգելադրված գույքի սեփականատերը Տիգրան Ենոքյանն է:

Հիմք ընդունելով վերը նշվածը և սույն գործի փաստերը համադրելով, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի 45-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերի ուժով Տիգրան Ենոքյանն իրավունք ունի քրեական վարույթի ավարտից հետո սեփականության իրավունքով իրեն պատկանող գույքը կալանքից (արգելանքից) հանելու հայցով դիմելու ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարան՝ քաղաքացիական դատավարության կարգով գործը քննելու համար:

Այսպիսով, վճռաբեկ բողոքի հիմքի առկայությունը Վճռաբեկ դատարանը համարում է բավարար՝ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 227-րդ և 228-րդ հոդվածների ուժով Վերաքննիչ դատարանի որոշումը բեկանելու համար:

Միաժամանակ, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ սույն գործով անհրաժեշտ է կիրառել ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 240-րդ հոդվածի 1-ին կետի 6-րդ ենթակետով սահմանված՝ առաջին ատյանի դատարանի դատական ակտին օրինական ուժ տալու՝ Վճռաբեկ դատարանի լիազորությունը հետևյալ հիմնավորմամբ.

«Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի ողջամիտ ժամկետում իր գործի քննության իրավունք: Սույն քաղաքացիական գործով վեճի լուծումն էական նշանակություն ունի գործին մասնակցող անձանց համար: Վճռաբեկ դատարանը գտնում է, որ գործը ողջամիտ ժամկետում քննելը հանդիսանում է Կոնվենցիայի նույն հոդվածով ամրագրված անձի արդար դատաքննության իրավունքի տարր, հետևաբար, գործի անհարկի ձգձգումները վտանգ են պարունակում նշված իրավունքի խախտման տեսանկյունից: Տվյալ դեպքում, Վճռաբեկ դատարանի կողմից ստորադաս դատարանի դատական ակտին օրինական ուժ տալը բխում է արդարադատության արդյունավետության շահերից:

Առաջին ատյանի դատարանի վճռին օրինական ուժ տալիս Վճռաբեկ դատարանը հիմք է ընդունում սույն որոշման պատճառաբանությունները, ինչպես նաև գործի նոր քննության անհրաժեշտության բացակայությունը:

Ելևելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 240-241²-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

ՈՐՈՇԵՑ

1. Վճռաբեկ բողոքը բավարարել: Բեկանել ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 01.10.2010 թվականի որոշումը և օրինական ուժ տալ ՀՀ Կոտայքի մարզի ընդհանուր իրավասության առաջին աստիճանի դատարանի 03.06.2010 թվականի վճռին:

2. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

*ՆԱԽԱԳԱՀՈՂ՝ արտրագրություն
ԴԱՏԱՎՈՐՆԵՐ՝ արտրագրություններ*

**ՊԱՅՄԱՆԱԳՐՈՎ ԳՈՒՅՔ ՁԵՌՔ ԲԵՐՈՂԻ
ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ԾԱԳՄԱՆ ՊԱՀԸ**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ**

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական
դատարանի որոշում

Քաղաքացիական գործ թիվ ԵԷԴ/0231/02/11
2011թ.

Քաղաքացիական գործ թիվ ԵԷԴ/0231/02/11

Նախագահող դատավոր՝ Ն. Հովսեփյան

Դատավորներ՝ Ա. Մկրտչյան

Ն. Բարսեղյան

ՈՐՈՇՈՒՄ

ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քաղաքացիական և վարչական
պալատը (այսուհետ՝ վճռաբեկ դատարան)

*Նախագահությամբ
մասնակցությամբ դատավորներ*

Ե. ԽՈՒՆԴԿԱՐՅԱՆԻ
Տ. ՊԵՏՐՈՍՅԱՆԻ
Վ. ԱՐԵԼՅԱՆԻ
Ս. ԱՆՏՈՆՅԱՆԻ
Վ. ԱՎԱՆԵՍՅԱՆԻ
Ա. ԲԱՐՍԵՂՅԱՆԻ
Մ. ԴՐՄԵՅԱՆԻ
Գ. ՀԱԿՈԲՅԱՆԻ
Է. ՀԱՅՐԻՅԱՆԻ
Ե. ՍՈՂՈՄՈՆՅԱՆԻ

2011 թվականի դեկտեմբերի 27-ին

դռնբաց դատական նիստում, քննելով Գրիգոր Խաչատրյանի վճռաբեկ բողոքը
ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 09.09.2011 թվականի որոշման դեմ՝
ըստ հայցի Գրիգոր Խաչատրյանի ընդդեմ ՀՀ ոստիկանության «Ճանապարհային
ոստիկանություն» ծառայության թիվ 2 հաշվառման քննական ստորաբաժանման,
Վարդան Սաղաթեյանի, Գալինա Լիվադոնովայի, Ալբերտ Ամիրյանի, երրորդ անձ ՀՀ
արդարադատության նախարարության դատական ակտերի հարկադիր կատարումն
ապահովող ծառայության Երևանի բաժնի՝ գույքն արգելանքից հանելու պահանջի
մասին,

ՊԱՐԶԵՑ

1. Գործի դատավարական նախապատմությունը

Դիմելով դատարան՝ Գրիգոր Խաչատրյանը պահանջել է արգելանքից հանել «Մերսեդես Բենց CLS 350» մակնիշի 64 00 005 պետհամարանիշի ավտոմեքենան:

Երևանի Էրեբունի և Նուբարաշեն վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի (նախագահող դատավոր՝ Ա. Մերանգուլյան) (այսուհետ՝ Դատարան) 31.05.2011 թվականի վճռով հայցը բավարարվել է:

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի (այսուհետ՝ Վերաքննիչ դատարան) 09.09.2011 թվականի որոշմամբ Ալբերտ Ամիրյանի վերաքննիչ բողոքը բավարարվել է. Դատարանի 31.05.2011 թվականի վճիռը բեկանվել է և փոփոխվել՝ հայցը մերժվել է:

Սույն գործով վճռաբեկ բողոք է ներկայացրել Գրիգոր Խաչատրյանը:

Վճռաբեկ բողոքի պատասխան է ներկայացրել Ալբերտ Ամիրյանը:

2. Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը

Սույն վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

Վերաքննիչ դատարանը սխալ է մեկնաբանել ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 176-րդ հոդվածը, «Ճանապարհային երթևեկության անվտանգության ապահովման մասին» ՀՀ օրենքի 13-րդ հոդվածի 15-րդ կետը, չի կիրառել նույն հոդվածի 16-րդ կետը, որը պետք է կիրառեր, խախտել է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 53-րդ հոդվածը:

Բողոք բերած անձը նշված պնդումը պարզապես և հերկյալ փաստարկներով.

Վերաքննիչ դատարանը հաշվի չի առել, որ 02.07.2009 թվականի առուվաճառքի պայմանագրի կնքման պահին վիճելի ոլորտը կարգավորող ՀՀ օրենսդրությամբ, մասնավորապես՝ «Ճանապարհային երթևեկության անվտանգության ապահովման մասին» ՀՀ օրենքով նախատեսված չեն եղել տրանսպորտային միջոցի նկատմամբ իրավունքի պետական գրանցման կարգ և պայմաններ, այլ ընդամենը նախատեսված է եղել տրանսպորտային միջոցը ոստիկանությունում հաշվառման ներկայացնելու պայման: Ընդ որում, տրանսպորտային միջոցի հետ կատարվող գործարքներից ծագող սեփականության իրավունքի պետական գրանցման ենթարկելու մեխանիզմները կարգավորվել են միայն վերոհիշյալ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին 07.04.2010 թվականի թիվ ՀՕ-36-Ն օրենքով, որն ուժի մեջ է մտել 01.07.2010 թվականին: Սույն գործով ապացուցված է, որ Վարդան Սաղաթեյանի և Ալբերտ Ամիրյանի միջև կնքված առուվաճառքի պայմանագրի հիման վրա ավտոմեքենան Ալբերտ Ամիրյանին չի հանձնվել, այսինքն՝ նշված գույքի նկատմամբ վերջինիս սեփականության իրավունքը չի ծագել, իսկ 02.07.2009 թվականի առուվաճառքի պայմանագրով վիճելի ավտոմեքենան հանձնվել է Գրիգոր Խաչատրյանին, այսինքն՝ այդ պահից սեփականության իրավունքով պատկանում է նրան, մինչդեռ այն գնելուց հետո դրա վրա արգելանք է դրվել:

Վերոգրյալի հիման վրա բողոք բերած անձը պահանջել է բեկանել Վերաքննիչ դատարանի 09.09.2011 թվականի որոշումը և օրինական ուժ տալ Դատարանի 31.05.2011 թվականի վճիռն կամ գործն ուղարկել նոր քննության:

2.1 Վճարել քողոքի պատասխանի հիմնավորումները

Գրիգոր Խաչատրյանը որևէ կերպ չի հիմնավորել վիճելի ավտոմեքենան որոշակի ժամանակահատվածում իրեն հանձնված լինելու փաստը, մինչդեռ Դատարանն առանց որևէ ապացույցի հաստատված է համարել, որ Գրիգոր Խաչատրյանի սեփականության իրավունքը ծագել է գույքը հանձնելու պահից՝ 2009 թվականին: Այսինքն՝ գործում բացակայում է որևէ ապացույց այն մասին, որ Վարդան Սաղաթելյանը մինչև ավտոմեքենայի արգելադրման պահը՝ 28.06.2010 թվականը, այն հանձնել է Գրիգոր Խաչատրյանին: Ավտոմեքենան Գրիգոր Խաչատրյանին հանձնված լինելու վերաբերյալ միակ ապացույցն այն է, որ վերջինս 16.03.2011 թվականին դիմել է պետական գրանցման համար և ստացել է մերժում: Հետևաբար, սույն գործում առկա ապացույցներով հնարավոր չէ հաստատված համարել, որ արգելադրումից առաջ վիճելի ավտոմեքենան հանձնված է եղել Գրիգոր Խաչատրյանին, և այդ պահից նրա մոտ ծագել է սեփականության իրավունք:

3. Վճարել քողոքի քննության համար նշանակություն ունեցող փաստերը

Վճարել քողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1) 20.11.2008 թվականի ավտոմեքենայի առուվաճառքի պայմանագրի համաձայն՝ Վարդան Սաղաթելյանն Ալբերտ Ամիրյանին է վաճառել «Մերսեդես Բենց CLS 350» մակնիշի 64 ՕՕ 005 պետհամարանիշի ավտոմեքենան (**հատոր 1-ին, գ.թ. 9**):

2) Գրիգոր Խաչատրյանի և Վարդան Սաղաթելյանի անունից հանդես եկող Աշոտ Կրոյանի միջև 02.07.2009 թվականին կնքված ավտոմեքենայի առուվաճառքի պայմանագրի համաձայն՝ Վարդան Սաղաթելյանը վաճառում է, իսկ Գրիգոր Խաչատրյանը ձեռք է բերում «Մերսեդես Բենց CLS 350» մակնիշի 64 ՕՕ 005 պետհամարանիշի ավտոմեքենան: Նույն պայմանագրի 2-րդ կետի համաձայն՝ ավտոմեքենայի վաճառքի գինը կազմում է 14.400.000 ՀՀ դրամ, որն արդեն վճարվել է: Նշված պայմանագրով դրա առարկայի նկատմամբ սեփականության իրավունքի ծագման պահի վերաբերյալ որևէ պայման նախատեսված չէ (**հատոր 1-ին, գ.թ. 10**):

Սույն գործով պայմանագրի առարկա ավտոմեքենան գնորդ Գրիգոր Խաչատրյանին հանձնված լինելու փաստը չի վիճարկվել:

3) ՀՀ ոստիկանության «Ճանապարհային ոստիկանություն» ծառայության թիվ 2 հաշվառման քննական ստորաբաժանման 16.03.2011 թվականի որոշմամբ մերժվել է նշված ավտոմեքենան պետական գրանցման ենթարկելու վերաբերյալ Գրիգոր Խաչատրյանի դիմումը այն պատճառաբանությամբ, որ ՀՀ արդարադատության նախարարության դատական ակտերի հարկադիր կատարումն ապահովող ծառայության 21.01.2010 թվականի թիվ 204/02, 29.07.2010 թվականի թիվ 11310/02 և 11.02.2011 թվականի թիվ 2076/02 գրություններով ավտոմեքենան գտնվում է արգելանքի տակ (**հատոր 1-ին, գ.թ. 14**):

4) Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած 09.12.2009 թվականի վճռով հաստատված համարելով այն փաստը, որ 20.11.2008 թվականի պայմանագրով սահմանված 5-օրյա ժամկետում Վարդան Սաղաթելյանի կողմից ավտոմեքենան և դրա վերաբերյալ փաստաթղթերը չեն հանձնվել Ալբերտ Ամիրյանին, Վարդան Սաղաթելյանից հօգուտ Ալբերտ Ամիրյանի բռնագանձվել է 23.000.000 ՀՀ դրամ որպես նշված ավտոմեքենայի համար վճարված գումար, միաժամանակ որոշվել է 26.11.2008

թվականից մինչև գումարի փաստացի վճարման օրը 23.000.000 ՀՀ դրամի նկատմամբ հաշվարկել և բռնագանձել ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 411-րդ հոդվածով նախատեսված տոկոսներ (**հատոր 1-ին, գ.թ. 12, 20-25**):

4. Վճարելի դատարանի պատճառարանությունները և եզրահանգումը

Քննելով վճարելի բողոքը նշված հիմքի սահմաններում՝ Վճարելի դատարանը գրնում է, որ այն հիմնավոր է հետևյալ պարձառարանությամբ.

Սույն գործի առանձնահատկությունների հաշվառմամբ Վճարելի դատարանը գրնում է, որ սլվյալ դեպքում պարզման է ենթակա այն իրավական հարցը, թե 02.07.2009 թվականի առուվաճառքի պայմանագրի հիման վրա վիճելի ավտոմեքենայի նկարմամբ Գրիգոր Խաչատրյանի սեփականության իրավունքը ծագել է, թե ոչ:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 53-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ դատարանը յուրաքանչյուր ապացույց գնահատում է գործում եղած բոլոր ապացույցների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտության վրա հիմնված ներքին համոզմամբ:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 176-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ պայմանագրով գույքը ձեռք բերողի սեփականության իրավունքը ծագում է գույքը հանձնելու պահից, եթե այլ բան նախատեսված չէ օրենքով կամ պայմանագրով, իսկ նույն հոդվածի 2-րդ կետի համաձայն՝ այն դեպքերում, երբ գույքի նկատմամբ իրավունքը ենթակա է պետական գրանցման, ձեռք բերողի սեփականության իրավունքը ծագում է դրա գրանցման պահից:

Նշված հոդվածի վերլուծությունից հետևում է, որ օրենսդիրը պայմանագրի հիման վրա սեփականության իրավունքի ծագումը պայմանավորել է գույքը հանձնելու պահով, բացառությամբ այն դեպքերի, երբ այլ բան է նախատեսված օրենքով կամ պայմանագրով, ինչպես նաև գույքի նկատմամբ իրավունքը ենթակա է պետական գրանցման:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 449-րդ հոդվածի 2-րդ կետի համաձայն՝ եթե օրենքին համապատասխան, պայմանագիր կնքելու համար անհրաժեշտ է նաև հանձնել գույք, պայմանագիրը կնքված է համարվում համապատասխան գույքը հանձնելու պահից (հոդված 177):

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 507-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ գնորդը դառնում է ապրանքի սեփականատեր ապրանքի համար վճարելու պահից, եթե այլ բան նախատեսված չէ պայմանագրով:

Վճարելի դատարանն արձանագրում է, որ 02.07.2009 թվականի ավտոմեքենայի առուվաճառքի պայմանագրի կնքման պահին վիճելի իրավահարաբերությունը կարգավորող «Ճանապարհային երթևեկության անվտանգության ապահովման մասին» ՀՀ օրենքով տրանսպորտային միջոցների հետ կատարվող գործարքներից ծագող սեփականության իրավունքի գրանցման պարտադիր պայման նախատեսված չի եղել: Այդ պահանջը և այն չպահպանելու հետևանքները նախատեսվել են միայն «Ճանապարհային երթևեկության անվտանգության ապահովման մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին 07.04.2010 թվականի թիվ ՀՕ-36-Ն ՀՀ օրենքով, որն ուժի մեջ է մտել 01.07.2010 թվականին: Մասնավորապես՝ նշված օրենքի 4-րդ հոդվածի համաձայն՝ «Ճանապարհային երթևեկության անվտանգության ապահովման մասին» ՀՀ օրենքի 13-րդ հոդվածը շարադրվել է հետևյալ խմբագրությամբ.

1. Տրանսպորտային միջոցների սեփականության, գրավի և լիզինգի պայմանագրով վարձակալության իրավունքները ենթակա են պետական գրանցման: Պետական գրանցման ենթակա տրանսպորտային միջոցների տեսակների ցանկը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

3. Հայաստանի Հանրապետությունում տրանսպորտային միջոցի հետ կատարվող գործարքներից ծագող տրանսպորտային միջոցի սեփականության իրավունքը ծագում է (պետությունը ձանաչում է) պետական գրանցման պահից:

5. Տրանսպորտային միջոցի հետ կատարվող գործարքներից ծագող սեփականության, գրավի կամ լիզինգի պայմանագրով վարձակալության իրավունքի գրանցման պահանջը չպահպանելը հանգեցնում է դրա անվավերության (նման գործարքն առ ոչինչ է), բացառությամբ այլ երկրներում տվյալ երկրի օրենսդրությամբ սահմանված կարգով ծագած սեփականության իրավունքի, որի գրանցման պահանջը չպահպանելը հանգեցնում է օրենքով սահմանված պատասխանատվության:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 438-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ պայմանագիրը պետք է համապատասխանի այն կնքելու պահին գործող օրենքով կամ այլ իրավական ակտերով սահմանված՝ կողմերի համար պարտադիր կանոններին (իմպերատիվ նորմերին): Նույն հոդվածի 2-րդ կետի համաձայն՝ եթե պայմանագիրը կնքելուց հետո ընդունվել է օրենք, որը սահմանում է կողմերի համար պարտադիր այլ կանոններ, քան պայմանագիրը կնքելիս գործող կանոնները, ապա կնքված պայմանագրի պայմանները պահպանում են իրենց ուժը, բացի այն դեպքերից, երբ օրենքում սահմանված է, որ դրա գործողությունը տարածվում է նախկինում կնքված պայմանագրերից ծագող հարաբերությունների վրա:

Տվյալ հոդվածի վերլուծությունից հետևում է, որ պայմանագիրը կնքելուց հետո **նոր օրենք** ընդունվելու դեպքում կնքված **պայմանագրի պայմանները պահպանում են իրենց ուժը**, եթե ընդունված օրենքում ամրագրված չէ կողմերի համար սահմանված պարտադիր այլ կանոնների անմիջական կիրառումը նախկինում կնքված պայմանագրերի նկատմամբ:

Այսպիսով, օրենսդրի կողմից ըստ էության ամրագրվել է այն մոտեցումը, որ նախկինում կնքված պայմանագիրն իր պայմաններով **գերակա է** նոր ընդունված այն օրենքի նկատմամբ, որը սահմանում է կողմերի համար պարտադիր այլ կանոններ: Դա իր հերթին որոշակի երաշխիք է ստեղծում պայմանագրի կողմերի համար և բացառում նրանց կամքից անկախ՝ նոր ընդունված օրենքով, պայմանագրի պայմանների փոփոխումը, որոնք գործել են պայմանագիրը կնքելու պահին, և որոնց պահպանումը պարտադիր էր պայմանագիրը կնքող կողմերի համար:

Միաժամանակ, ընդհանուր կանոնից օրենսդիրը բացառություն է սահմանել այն դեպքը, երբ օրենքում ուղղակիորեն սահմանված է դրա գործողության տարածումը նախկինում կնքված պայմանագրերից ծագող հարաբերությունների վրա (*տե՛ս ըստ հայցի Մարիելյա Ղուկասյանի ընդդեմ Նորայր Վարդանյանի՝ նվիրարվությունը վերացնելու պահանջի մասին քաղաքացիական գործով Վճռաբեկ դալարանի 17.04.2009 թվականի թիվ ԵԲԴ/0318/02/08 որոշումը*):

Տվյալ դեպքում «Ճանապարհային երթևեկության անվտանգության ապահովման մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին 07.04.2010 թվականի թիվ ՀՕ-36-Ն ՀՀ օրենքում սահմանված չէ, որ դրա գործողությունը տարածվում է նախկինում կնքված պայմանագրերից ծագող հարաբերու-

թյունների վրա, հետևաբար 02.07.2009 թվականի ավտոմեքենայի առուվաճառքի պայմանագրի պայմանները պահպանում են իրենց ուժը:

Սույն գործով Դատարանը հայցը բավարարելիս պատճառաբանել է, որ կողմերի միջև առուվաճառքի գործարքի կնքման պահին գործող օրենսդրությամբ չի նախատեսվել այդ տեսակի գույքի նկատմամբ իրավունքի պետական գրանցում, ուստի ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 176-րդ հոդվածի 1-ին կետի հիմքով 2009 թվականին պայմանագրով գույքի նկատմամբ սեփականության իրավունքը փոխանցվել է գնորդին, մինչդեռ ավտոմեքենաների նկատմամբ պետական գրանցման վերաբերյալ օրենքի լրացումները և փոփոխություններն ուժի մեջ են մտել 01.07.2010 թվականին:

Վերաքննիչ դատարանը Դատարանի դատական ակտի բեկանման հիմքում դրել է այն հանգամանքը, որ Գրիգոր Խաչատրյանն առուվաճառքի պայմանագրի կնքումից հետո չի կատարել գույքի նկատմամբ իր իրավունքների պետական գրանցում, հետևաբար նրա սեփականության իրավունքը ավտոմեքենայի նկատմամբ չի ծագել:

Վերաքննիչ դատարանը միաժամանակ նշել է, որ «Ճանապարհային երթևեկության անվտանգության ապահովման մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի համաձայն՝ մինչև 2010 թվականի հուլիսի 1-ը պետական լիազոր մարմնի տրամադրած տրանսպորտային միջոցի հաշվառման վկայագիրը համարվում է տրանսպորտային միջոցի սեփականության իրավունքը հավաստող փաստաթուղթ, իսկ սույն գործով հայցվորը նման փաստաթուղթ չի ներկայացրել, ինչը Դատարանի կողմից անտեսվել է, մինչդեռ տվյալ նորմը կարգավորում է մինչև 2010 թվականի հուլիսի 1-ը հարաբերությունները և սույն գործով կիրառելի է:

Սույն գործի փաստերի համաձայն՝ 02.07.2009 թվականի առուվաճառքի պայմանագրով Վարդան Սաղաթելյանը «Մերսեդես Բենց CLS 350» մակնիշի 64 ՕՕ 005 պետհամարանիշի ավտոմեքենան վաճառել է Գրիգոր Խաչատրյանին, ով պայմանագրի առարկան փաստացի ընդունել է և ամբողջությամբ վճարել է պայմանագրի գինը: Նշված պայմանագրով դրա առարկայի նկատմամբ սեփականության իրավունքի ծագման պահի վերաբերյալ որևէ պայման նախատեսված չէ: Հետագայում Վարդան Սաղաթելյանի պարտավորությունների կատարումն ապահովելու համար նշված ավտոմեքենայի վրա արգելանք է դրվել:

Հիմք ընդունելով վերոգրյալը և սույն գործի փաստերը համադրելով՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ 02.07.2009 թվականի առուվաճառքի պայմանագրի կնքման պահին գործող օրենսդրությամբ, մասնավորապես՝ վիճելի իրավահարաբերությունը կարգավորող «Ճանապարհային երթևեկության անվտանգության ապահովման մասին» ՀՀ օրենքով տրանսպորտային միջոցի նկատմամբ իրավունքի պետական գրանցման պարտադիր պահանջ և նշված պայմանագրով դրա առարկայի նկատմամբ սեփականության իրավունքի ծագման պահի վերաբերյալ որևէ դրույթ նախատեսված չլինելու պայմաններում վիճելի ավտոմեքենայի դիմաց վճարում կատարելու պահից ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 176-րդ հոդվածի 1-ին կետի և 507-րդ հոդվածի 1-ին կետի ուժով դրա նկատմամբ ծագել է Գրիգոր Խաչատրյանի սեփականության իրավունքը: Հետևաբար նշված պայմանագրի կնքումից հետո Վարդան Սաղաթելյանի պարտավորությունների համար նշված ավտոմեքենայի վրա արգելանք դնելն իրավաչափ չէ, քանի որ արգելանք կարող էր դրվել պարտապանին՝ Վարդան Սաղաթելյանին, պատկանող գույքի վրա, մինչդեռ այդ ժամանակ վեճի առարկա ավտոմեքենան վերջինիս չի պատկանել:

Միաժամանակ Վճռաբեկ դատարանը հարկ է համարում արձանագրել, որ սույն գործով «Ճանապարհային երթևեկության անվտանգության ապահովման մասին» ՀՀ օրենքի 13-րդ հոդվածի 15-րդ կետով (յուրացումը կատարվել է վերոհիշյալ 07.04.2010 թվականի թիվ ՀՕ-36-Ն օրենքով) սահմանված տրանսպորտային միջոցի հաշվառման վկայագիր չներկայացնելը սույն գործի լուծման համար էական նշանակություն չունի, քանի որ նշված հոդվածով մինչև 2010 թվականի հուլիսի 1-ը պետական լիազոր մարմնի տրամադրած տրանսպորտային միջոցի հաշվառման վկայագիրը տրանսպորտային միջոցի սեփականության իրավունքը հավաստող փաստաթուղթ համարելու հանգամանքն ամենևին չի նշանակում, որ մինչև 2010 թվականի հուլիսի 1-ը կնքված տրանսպորտային միջոցի գործարքներից ծագող իրավունքները պարտադիր ենթակա են պետական գրանցման կամ այդ նորմը հետադարձ ուժ ունի, այսինքն՝ դրա գործողությունը տարածվում է նախկինում կնքված պայմանագրերից ծագող հարաբերությունների վրա:

Նշված եզրահանգումը հիմնավորվում է նաև նույն հոդվածի 16-րդ կետով, որի համաձայն՝ այն անձը, որ տրանսպորտային միջոցի **սեփականության իրավունք է ձեռք բերել մինչև 2010 թվականի հուլիսի 1-ը** և **չունի** այդ տրանսպորտային միջոցի համար **հաշվառման վկայագիր**, կարող է 2010 թվականի հուլիսի 1-ից հետո տրանսպորտային միջոցի գրանցման և հաշվառման փաստաթղթեր ստանալու համար սույն օրենքով սահմանված կարգով դիմում ներկայացնել պետական լիազոր մարմին: Այսինքն՝ օրենսդիրը տրանսպորտային միջոցի նկատմամբ սեփականության իրավունք ձեռք բերելու հանգամանքը չի կապել տրանսպորտային միջոցի համար հաշվառման վկայագիր և հաշվառման փաստաթղթեր ունենալու հետ:

Վճռաբեկ բողոքի պատասխանում վկայակոչված վիճելի ավտոմեքենան Գրիգոր Խաչատրյանին հանձնելու պահի վերաբերյալ փաստարկին Վճռաբեկ դատարանը չի անդրադառնում հետևյալ պատճառաբանությամբ.

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 224-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ վերաքննության կարգով բողոքարկման ենթակա գործն ըստ էության լուծող դատական ակտերն անձը չի կարող բողոքարկել վճռաբեկ դատարանում, եթե նա նույն հիմքերով չի բողոքարկել դատական ակտը վերաքննիչ դատարանում:

Վճռաբեկ դատարանը նախկինում կայացրած իր որոշումներում անդրադարձել է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 224-րդ հոդվածի 1-ին կետի իրավական վերլուծությանը:

Մասնավորապես, Վճռաբեկ դատարանը նշել է, որ անձը չի կարող վերաքննության կարգով բողոքարկման ենթակա դատական ակտը բողոքարկել Վճռաբեկ դատարան որոշակի հիմքերով, եթե նա նույն հիմքերով չի բողոքարկել այն վերաքննիչ դատարան (*տե՛ս ըստ «Գլուր» ՍՊԸ-ի դիմումի ընդդեմ Հայաստանի կենտրոնական դեպոզիտարիա ինքնակարգավորվող կազմակերպության, ՀՀ ԱՆ Գեղարքունիքի ԴԱՀԿ ծառայության Մարտունի-Վարդենիս տարածաշրջանի բաժանմունքի, երրորդ անձինք Գուրգեն Դարբինյանի, Տիգրան Դարբինյանի, Ֆիրդուս Զաքարյանի և Ժիրայր Գալաթյանի՝ պաշտոնապար անձանց օրենքին հակասող ակտերն անվավեր ճանաչելու պահանջի մասին քաղաքացիական գործով Վճռաբեկ դատարանի 13.02.2009 թվականի թիվ ԳԳ/0171/02/08 որոշումը*):

Սույն գործի փաստերի ուսումնասիրման արդյունքում Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ վճռաբեկ բողոքի պատասխանում նշված վիճելի ավտոմեքենան Գրիգոր Խաչատրյանին հանձնելու պահը վերաքննիչ բողոքում չի վիճարկվել, այսինքն՝ այդ հիմքով Դատարանի վճիռը չի բողոքարկվել վերաքննիչ դատարան, ինչի

արդյունքում այն Վերաքննիչ դատարանի կողմից քննության առարկա չի դարձվել: Հետևաբար Վճռաբեկ դատարանը գտնում է, որ այդ փաստարկը չի կարող քննության առարկա դառնալ նաև Վճռաբեկ դատարանում:

Վճռաբեկ բողոքի պատասխանում նշված մյուս փաստարկները հերքվում են վերոնշյալ պատճառաբանություններով:

Այսպիսով, վճռաբեկ բողոքի հիմքի առկայությունը Վճռաբեկ դատարանը համարում է բավարար՝ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 227-228-րդ հոդվածների ուժով Վերաքննիչ դատարանի որոշումը բեկանելու համար:

Միաժամանակ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ սույն գործով անհրաժեշտ է կիրառել ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 240-րդ հոդվածի 1-ին կետի 6-րդ ենթակետով սահմանված՝ առաջին ատյանի դատարանի դատական ակտին օրինական ուժ տալու՝ Վճռաբեկ դատարանի լիազորությունը հետևյալ հիմնավորմամբ.

«Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի ողջամիտ ժամկետում իր գործի քննության իրավունք: Սույն քաղաքացիական գործով վեճի լուծումն էական նշանակություն ունի գործին մասնակցող անձանց համար: Վճռաբեկ դատարանը գտնում է, որ գործը ողջամիտ ժամկետում քննելը հանդիսանում է Կոնվենցիայի նույն հոդվածով ամրագրված անձի արդար դատաքննության իրավունքի տարր, հետևաբար, գործի անհարկի ձգձգումները վտանգ են պարունակում նշված իրավունքի խախտման տեսանկյունից: Տվյալ դեպքում, Վճռաբեկ դատարանի կողմից ստորադաս դատարանի դատական ակտին օրինական ուժ տալը բխում է արդարադատության արդյունավետության շահերից:

Առաջին ատյանի դատարանի վճռին օրինական ուժ տալիս Վճռաբեկ դատարանը հիմք է ընդունում սույն որոշման պատճառաբանությունները, ինչպես նաև գործի նոր քննության անհրաժեշտության բացակայությունը:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 240-241²-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

ՈՐՈՇԵՑ

1. Վճռաբեկ բողոքը բավարարել: Բեկանել ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 09.09.2011 թվականի որոշումը և օրինական ուժ տալ Երևանի Էրեբունի և Նուբարաշեն վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի 31.05.2011 թվականի վճռին:

2. Այբերտ Ամիրջանից հօգուտ Հայաստանի Հանրապետության բռնագանձել 20.000 (քսան հազար) ՀՀ դրամ՝ որպես վճռաբեկ բողոքի համար վճարման ենթակա և Վճռաբեկ դատարանի 16.11.2011 թվականի որոշմամբ հետաձգված պետական տուրքի գումար:

3. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

*ՆԱԽԱԳԱՀՈՂ՝ ստորագրություն
ԴԱՏԱՎՈՐՆԵՐ՝ ստորագրություններ*

ՁԵՌՔԲԵՐՄԱՆ ՎԱՂԵՄՈՒԹՅՈՒՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական
դատարանի որոշում

Քաղաքացիական գործ թիվ ԼԴ/1832/02/08
2011թ.

Քաղաքացիական գործ թիվ ԼԴ/1832/02/08

Նախագահող դատավոր՝ Տ.Նազարյան

Դատավորներ՝ Կ.Հակոբյան

Տ.Սահակյան

ՈՐՈՇՈՒՄ

ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Հայաստանի Հանրապետության վճարելի դատարանի քաղաքացիական և վարչական
պալատը (այսուհետ՝ վճարելի դատարան)

նախագահությամբ

մասնակցությամբ դատավորներ

Ե. ԽՈՒՆԴԿԱՐՅԱՆԻ

Է. ՀԱՅՐԻՅԱՆԻ

Վ. ԱԲԵԼՅԱՆԻ

Ս. ԱՆՏՈՆՅԱՆԻ

Ա. ԲԱՐՍԵՂՅԱՆԻ

Մ. ԴՐՄԵՅԱՆԻ

Գ. ՀԱԿՈԲՅԱՆԻ

Տ. ՊԵՏՐՈՍՅԱՆԻ

Ե. ՍՈՂՈՄՈՆՅԱՆԻ

2011 թվականի մարտի 4-ին

դռնբաց դատական նիստում, քննելով Արծրունի Մանուչարյանի վճարելի բողոքը ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 05.11.2010 թվականի որոշման դեմ՝ ըստ Արծրունի Մանուչարյանի հայցի ընդդեմ Ջանիբեկ Մանուչարյանի՝ սեփական գույքի տիրապետման խոչընդոտները վերացնելու և ինքնակամ կառույցը քանդելու պահանջների մասին, ինչպես նաև հակընդդեմ հայցի՝ ձեռքբերման վաղեմության ուժով 124քմ մակերեսով զբաղեցրած հողամասի նկատմամբ սեփականության իրավունքը ձանաչելու պահանջի մասին,

ՊԱՐԶԵՑ

1. Գործի դատավարական նախապատմությունը

Դիմելով դատարան՝ Արծրունի Մանուչարյանը պահանջել է պարտավորեցնել Ջանիբեկ Մանուչարյանին վերացնելու սեփականությունից օգտվելու խոչընդոտները և քանդելու Ալավերդու Փիրուզյան փողոցի թիվ 75 հասցեում գտնվող, սեփականության

իրավունքով պատկանող հողամասում ապօրինի կառուցված բնակարանը:

ՀՀ Լոռու մարզի ընդհանուր իրավասության դատարանի 12.06.2008 թվականի վճռով հայցը մերժվել է:

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 13.11.2008 թվականի որոշմամբ Արծրունի Մանուչարյանի վերաքննիչ բողոքը բավարարվել է՝ ՀՀ Լոռու մարզի ընդհանուր իրավասության դատարանի 12.06.2008 թվականի վճիռը բեկանվել է, և գործն ուղարկվել նույն դատարան՝ նոր քննության:

Հակընդդեմ հայցով Ջանիբեկ Մանուչարյանը պահանջել է Ալավերդու Փիրուզյան փողոցի թիվ 75 հասցեում գտնվող Արծրունի Մանուչարյանին սեփականության իրավունքով պատկանող 632.0քմ մակերեսով հողամասի վրա իր կողմից կառուցված տնով զբաղեցված 124քմ մակերեսով հողամասի նկատմամբ ձեռքբերման վաղեմության ուժով ձանաչել սեփականության իրավունքը:

ՀՀ Լոռու մարզի ընդհանուր իրավասության դատարանի 03.11.2009 թվականի վճռով հայցը բավարարվել է, իսկ հակընդդեմ հայցը՝ մերժվել:

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 17.02.2010 թվականի որոշմամբ Ջանիբեկ Մանուչարյանի վերաքննիչ բողոքը բավարարվել է՝ ՀՀ Լոռու մարզի ընդհանուր իրավասության դատարանի 03.11.2009 թվականի վճիռը բեկանվել է, և գործն ուղարկվել նույն դատարան՝ նոր քննության:

ՀՀ Լոռու մարզի ընդհանուր իրավասության դատարանի (այսուհետ՝ Դատարան) 15.06.2010 թվականի վճռով հայցը մերժվել է, իսկ հակընդդեմ հայցը բավարարվել է մասնակիորեն՝ ձեռքբերման վաղեմության ուժով ձանաչվել է Ջանիբեկ Մանուչարյանի սեփականության իրավունքն Ալավերդու Փիրուզյան փողոցի թիվ 75 հասցեում գտնվող, Արծրունի Մանուչարյանին սեփականության իրավունքով պատկանող 632.0քմ մակերեսով հողամասից կառույցով զբաղեցված 34,35քմ հողամասի նկատմամբ:

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի (այսուհետ՝ Վերաքննիչ դատարան) 05.11.2010 թվականի որոշմամբ Արծրունի Մանուչարյանի վերաքննիչ բողոքը մերժվել է, և Դատարանի 15.06.2010 թվականի վճիռը թողնվել է օրինական ուժի մեջ:

Սույն գործով վճռաբեկ բողոք է ներկայացրել Արծրունի Մանուչարյանը:

Վճռաբեկ բողոքի պատասխան է ներկայացրել Ջանիբեկ Մանուչարյանը:

2. Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը

Սույն վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

Վերաքննիչ դատարանը խախտել է ՀՀ Սահմանադրության 31-րդ հոդվածը, «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի 1-ին արձանագրության 1-ին հոդվածը, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 51-րդ հոդվածի 1-ին, 2-րդ կետերը, 53-րդ և 60-րդ հոդվածների 1-ին կետերը, որի արդյունքում չի կիրառել ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 188-րդ, 274-րդ և 277-րդ հոդվածները, որոնք պետք է կիրառել և կիրառել է ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 172-րդ հոդվածի 5-րդ կետը, 187-րդ հոդվածը, որոնք չպետք է կիրառել:

Բողոք բերած անձը նշված պնդումը պարձառաքանում է հետևյալ փաստարկներով.

Վերաքննիչ դատարանը բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ չի գնահատել գործում առկա ապացույցները, պատշաճ իրավական գնահատական չի տվել այն հանգամանքին, որ Արծրունի Մանուչարյանը սեփականության իրավունքով պատկանող Ալավերդու Փիրուզյան փողոցի թիվ 75 հասցեում գտնվող 34,35քմ մակերեսով իր հողամասից հրաժարվելու կապակցությամբ որևէ գործողություններ չի կատարել, ընդհակառակը հոգացել և կատարել է դրա պահպանման համար անհրաժեշտ ծախսերը, տիրապետում է դրա վրա առկա Արծրունի Մանուչարյանին պատկանող կաթսայատունը:

Բացի այդ, Ջանիբեկ Մանուչարյանն ինքնակամ կառույցը սկսել է կառուցել 1983 թվականից, այսինքն՝ համայնքին պատկանող հողամասի վրա, իսկ Արծրունի Մանուչարյանին պատկանող հողամասի վրա սկսել է կառուցել, ըստ էության, 2000-2001 թվականներից և այդ ժամանակահատվածում պահանջել է Ջանիբեկ Մանուչարյանից քանդելու նշված հողամասի վրա գտնվող կաթսայատան վրա իրականացված ինքնակամ կառույցը, այսինքն՝ տվյալ դեպքում առկա չէ Ջանիբեկ Մանուչարյանի կողմից նշված հողամասը բարեխղճորեն, բացահայտ և անընդմեջ տիրապետելու փաստը:

Վերաքննիչ դատարանն անտեսել է նաև այն հանգամանքը, որ Ջանիբեկ Մանուչարյանի կողմից իրականացված ինքնակամ կառույցը հողամասի սեփականատիրոջ պահանջով ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածի հիմքով ենթակա է քանդման:

Վերոգրյալի հիման վրա բողոք բերած անձը պահանջել է բեկանել «դատական ակտերը»:

2.1. Վճռաբեկ բողոքի պատասխանի հիմնավորումները

Վերաքննիչ դատարանի կողմից որոշումը կայացվել է գործում առկա բոլոր ապացույցների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտության հիման վրա, հետևաբար բերված վճռաբեկ բողոքը ենթակա է մերժման:

3. Վճռաբեկ բողոքի քննության համար նշանակություն ունեցող փաստերը

Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1. ՀՀ քաղաքացիական վերաքննիչ դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած 10.12.2007 թվականի վճռով մերժվել է Արծրունի Մանուչարյանի հայցն ընդդեմ Ջանիբեկ Մանուչարյանի և ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի՝ Ալավերդու Փիրուզյան փողոցի թիվ 75 հասցեում գտնվող ինքնակամ կառույցը քանդելու պահանջի մասին (հատոր 1-ին, գ.թ.7-8):

2. ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի Ալավերդու տարածքային ստորաբաժանման 19.12.2007 թվականի թիվ ՆԳ-3065 գրության համաձայն՝ ըստ կադաստրային քարտեզի տվյալների Ալավերդու Փիրուզյան փողոցի թիվ 75 հասցեում Ջանիբեկ Մանուչարյանի անվամբ 128-040 ծածկագրով հաշվառված է 426.0քմ մակերեսով կառուցման և սպասարկման հողամաս, որն իրավունքի պետական գրանցում չի ստացել՝ սեփականության իրավունքը հաստատող փաստաթղթերի բացակայության պատճառով: 21.03.1975 թվականին հաստատված գույքային թերթի հետ համեմատած առկա է Ջանիբեկ Մանուչարյանի

կողմից կառուցված ինքնակամ կառույց, որն Արծվիկ Մանուչարյանին սեփականության իրավունքով պատկանող հողամասից զբաղեցնում է 34,35քմ (հատոր 1-ին, գ.թ.13):

3. ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի Ալավերդու տարածքային ստորաբաժանման 25.01.2008 թվականի թիվ ՆԳ-011 գրության համաձայն՝ ըստ 21.03.1975 թվականին կազմված գույքային թերթի Ալավերդու Փիրուզյան փողոցի թիվ 75 հասցեում Արծվիկ Մանուչարյանի անվամբ սեփականության իրավունքով գրանցված է 608քմ մակերեսով հողամաս և 79,1քմ մակերեսով բնակելի տուն, և արխիվային բոլոր փաստաթղթերում գրառված է «Արծվիկ» անունը (հատոր 1-ին, գ.թ.14):

4. ՀՀ Լոռու մարզի ընդհանուր իրավասության դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած 18.03.2008 թվականի վճռով բավարարվել է Արծրունի Մանուչարյանի դիմումը՝ իրավունք սահմանող փաստաթղթի պատկանելիության փաստը հաստատելու պահանջի մասին: Վճռվել է հաստատել այն փաստը, որ նախկին ՀՍՍՀ կոմունալ տնտեսության մինիստրության «Հայկոմուննախագիծ» ինստիտուտի կողմից «Արծվիկ Արտեմի Մանուչարյան» անուն-հայրանուն-ազգանվամբ 21.03.1975 թվականին տրված բնակելի շենքի գույքային թերթիկը պատկանում է Արծրունի Արտեմի Մանուչարյանին (հատոր 1-ին, գ.թ.19):

5. ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի Ալավերդու տարածքային ստորաբաժանման 14.04.2008 թվականի թիվ ՆԳ-0603 գրության համաձայն՝ ըստ կադաստրային քարտեզի տվյալների Ալավերդու Փիրուզյան փողոցի թիվ 75 հասցեում Արծրունի Մանուչարյանի անվամբ սեփականության իրավունքով հաշվառվել է 632.0քմ մակերեսով հողամաս բնակելի տան կառուցման և սպասարկման համար, իսկ Ջանիբեկ Մանուչարյանի անվամբ հաշվառվել է 426.0քմ մակերեսով հողամաս, որից մոտավորապես 124քմ մակերեսով հողամասը գավթել է Արծրունի Մանուչարյանի հողամասից, որի վրա առկա է ինքնակամ կառույց, որը զբաղեցնում է 42,6քմ մակերես (հատոր 1-ին, գ.թ.51):

6. Ալավերդու քաղաքապետարանի 03.02.2009 թվականի թիվ 50 տեղեկանքի համաձայն՝ Ալավերդու Փիրուզյան փողոցի թիվ 75 հասցեում գտնվող, Արծրունի Մանուչարյանին սեփականության իրավունքով պատկանող հողամասի մասով 03.02.2009 թվականի դրությամբ հողի հարկի գծով պարտք չունի (հատոր 4-րդ, գ.թ.16):

7. «Տեխպրոյեկտ» ՍՊ ընկերության 13.08.2009 թվականի թիվ 4 և 24.08.2009 թվականի թիվ 5 գրությունների համաձայն՝ Ալավերդու Փիրուզյան փողոցի թիվ 75 հասցեում գտնվող Արծրունի Մանուչարյանի կաթսայատան վրա Ջանիբեկ Մանուչարյանի կողմից կառուցված բնակելի կառույցն արգելված է և ըստ գործող շինարարական նորմերի՝ ենթակա է քանդման, ինչպես նաև ինքնակամ կառույցի առկայությունը զրկում է Արծրունի Մանուչարյանի սենյակը լուսավորությունից, և հիմնական խոչընդոտ կարող է լինել շենքերի հեռավորությունը (հատոր 5-րդ, գ.թ. 50-52):

8. Ալավերդու քաղաքապետի 09.10.2009 թվականի թիվ 947 գրության համաձայն՝ Ալավերդու Փիրուզյան փողոցի թիվ 75 հասցեում գտնվող, Արծրունի Մանուչարյանին սեփականության իրավունքով պատկանող հողամասի հողի հարկը վճարել են Անահիտ Մանուչարյանը և Լենիտա Մանուչարյանը (հատոր 6-րդ, գ.թ.39):

9. Ալավերդու քաղաքային համայնքի «Թիվ 1 ԲԾՏ» ԲԲ ընկերության գրության համաձայն՝ Ալավերդու Փիրուզյան փողոցի թիվ 75 տան սեփականատեր Արծրունի Մանուչարյանը 2002-2004 թվականներին մի քանի անգամ բողոքել է Ջանիբեկ

Մանուշարյանի կողմից 34,5քմ մակերեսով հողամասը զավթելու և ինքնակամ կառույց իրականացնելու կապակցությամբ (հատոր 9-րդ, գ.թ.12):

10. Բողոքին կից ներկայացված ՀՀ քաղաքաքաշինության նախարարության քաղաքաշինական պետական տեսչության պետ ՀՀ քաղաքաշինական պետական գլխավոր տեսուչի 01.12.2010 թվականի թիվ 02/25.1/4931-10 գրության համաձայն՝ դեռևս 2000 թվականին Ջանիբեկ Մանուշարյանի կողմից Արծրունի Մանուշարյանին սեփականության իրավունքով պատկանող Ալավերդու Փիրուզյան փողոցի թիվ 75 հասցեում գտնվող հողամասի և կաթսայատան մի մասի վրա ինքնակամ կառուցել է կիսանկողով բնակելի տուն, որի պատի հեռավորությունը սեփականատիրոջ տան պատից և գոյություն ունեցող երկու լուսամուտներից 1մ է: Ինքնակամ կառույցի հետևանքով խախտվել է ՇՆևԿ 2.07.01-89-ով առաջադրվող հակահրդեհային նորմերով շինությունների միջև նվազագույն 6մ հեռավորության և բնական լուսաթափանցելիության նորմերի պահանջները:

11. Բողոքին կից ներկայացված՝ Արծրունի Մանուշարյանին հասցեագրված ՀՀ ոստիկանության Լոռու մարզային վարչության Թումանյանի բաժնի 15.01.2003 թվականի թիվ 184/4 գրության համաձայն՝ Ձեր կողմից 12.01.2001 թվականին և 05.12.2002 թվականին ներկայացվել է դիմումներ այն մասին, որ 2001-2002 թվականներին Ալավերդու Փիրուզյան փողոցի թիվ 75 հասցեում Արծրունի Մանուշարյանին սեփականության իրավունքով պատկանող հողամասում Ջանիբեկ Մանուշարյանն իրականացնում է ինքնակամ շինարարություն:

4. Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը

Քննելով վճռաբեկ բողոքը նշված հիմքի սահմաններում՝ Վճռաբեկ դատարանը գրնում է, որ այն հիմնավոր է հեղինակ պատճառաբանությամբ.

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 53-րդ հոդվածի համաձայն՝ դատարանը յուրաքանչյուր ապացույց գանահատում է գործում եղած բոլոր ապացույցների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտության վրա հիմնված ներքին համոզմամբ:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 280-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ քաղաքացին կամ իրավաբանական անձը կարող է հրաժարվել իրեն պատկանող գույքի սեփականության իրավունքից՝ այդ մասին գրավոր հայտարարելով կամ այնպիսի գործողություններ կատարելով, որոնք ակնհայտ վկայում են գույքի տիրապետումից, օգտագործումից և տնօրինումից նրա մեկուսացման մասին՝ առանց այդ գույքի նկատմամբ որևէ իրավունք պահպանելու մտադրության:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 187-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ քաղաքացին կամ իրավաբանական անձը, որն անշարժ գույքի սեփականատերը չէ, սակայն այն տասը տարվա ընթացքում բարեխղճորեն, բացահայտ և անընդմեջ տիրապետում է որպես սեփական գույք, այդ գույքի նկատմամբ ձեռք է բերում սեփականության իրավունք (ձեռքբերման վաղեմություն):

Վճռաբեկ դատարանը գտնում է, որ ձեռքբերման վաղեմությունն իրենից ներկայացնում է օրենքով նախատեսված որոշակի ժամկետի լրանալու և որոշակի պայմանների վրա հասնելու ուժով **մեկ անձի կողմից սեփականության իրավունքի ձեռքբերման**, իսկ մյուսի կողմից **այդ իրավունքի դադարման** միջոց:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 187-րդ հոդվածի 1-ին կետի վերլուծությունից հետևում է, որ ձեռքբերման վաղեմության ուժով սեփականության իրավունքի

ձեռքբերման համար անհրաժեշտ է մի շարք վավերապայմանների միաժամանակյա առկայությունը: *Մասնավորապես, դրանք են՝*

1. *տիրապետումը պետք է լինի բարեխիղճ: Տիրապետման բարեխիղճությունը գնահատվում է գույքը անձի փաստացի տիրապետմանն անցնելիս: Գույքն անձի փաստացի տիրապետմանը պետք է անցնի առանց որևէ բռնության գործադրման: Տիրապետողի մոտ պետք է առկա լինի այն համոզմունքը, որ նա գույքը ձեռք է բերում օրինական հիմքերով: Տիրապետումը պետք է հիմնված լինի այնպիսի փաստի հիման վրա, որը տիրապետողին կարող է տալ բավարար հիմքեր ենթադրելու, որ նա այդ գույքը տիրապետելու է որպես սեփականություն,*

2. *փաստացի տիրապետողը գույքը պետք է տիրապետի որպես սեփականը, այսինքն՝ գույքը փաստացի տիրապետողը պետք է մասնակցի գույքի կառավարմանը, հոգ տանի դրա պահպանման համար, ինչպես իր սեփական գույքի դեպքում: Անձը պետք է գույքը տիրապետի ինչպես սեփականը նաև երրորդ անձանց հետ հարաբերություններում,*

3. *տիրապետումը պետք է լինի 10 տարի և անընդմեջ: Այսինքն՝ 10 տարվա ընթացքում գույքի տիրապետումը չպետք է ընդհատվի: Տիրապետումը կարող է ընդհատվել կամ տիրապետողի կամքով, երբ նա հրաժարվում է գույքի հետագա տիրապետումից (գույքը դուրս է գալիս նրա տիրապետումից), կամ գույքի սեփականատիրոջ կամ այլ անձանց գործողություններով, որոնք ուղղված են գույքը վերադարձնելուն,*

4. *տիրապետումը պետք է լինի բացահայտ, այսինքն՝ փաստացի տիրապետողը գույքը չպետք է տիրապետի երրորդ անձանցից գաղտնի եղանակով (տես Մարուսյա Աբրահամյանը, Ռուբիկ Միմոնյանն ընդդեմ Միխայել Միմոնյանի, Ջուլիետա Հակոբջանյանի, Արթուր Միմոնյանի, Լարիսա Գևորգյանի, Արման, Անահիտ և Ջուլիետա Միմոնյանների՝ քնակելի տարածության օգտագործման իրավունքը փոխհատուցմանը դադարեցնելու և վտարելու պահանջների մասին թիվ 3-1451(ՎԳ) գործով ՀՀ վճարելի դատարանի 10.10.2007 թվականի որոշումը):*

Վերաքննիչ դատարանը վերաքննիչ բողոքը մերժելիս պատճառաբանել է, որ Ջանիբեկ Մանուչարյանի կողմից Արծրունի Մանուչարյանի տնամերձ հողամասում շինարարությունն իրականացնելու ընթացքում վերջինս տեղյակ էր կատարվող շինարարության մասին և ունենալով հնարավորություն՝ երբևէ իր գույքից օգտվելու սահմանափակման կամ արգելքի պահանջ չի ներկայացրել: Այսինքն՝ դեռևս այն ժամանակ, երբ Ջանիբեկ Մանուչարյանը սկսել է կառուցել ինքնակամ կառույցը, Արծրունի Մանուչարյանը կարող էր արգելել և խոչընդոտել վերջինիս կողմից նշված գործողությունների կատարմանը, մինչդեռ հայցվորը որևէ կերպ արգելք չի ստեղծել: Նշվածը թույլ է տալիս եզրակացնել, որ այդպիսով հայցվորը փաստացի հրաժարվել է իր տնամերձ հողամասի համապատասխան մասից:

Մինչդեռ, հիմք ընդունելով սույն գործի փաստերը, Վճարելի դատարանն արձանագրում է, որ սույն գործում բացակայում է Արծրունի Մանուչարյանի կողմից սեփականության իրավունքով իրեն պատկանող հողամասի սեփականության իրավունքից հրաժարումը, ինչպես նաև Ջանիբեկ Մանուչարյանի կողմից դրա

բարեխիղճ տիրապետումը հիմնավորող որևէ ապացույց: Դեռ ավելին, Վերաքննիչ դատարանն անտեսել է այն հանգամանքը, որ վիճելի հողամասի վրա գտնվում է Արծրունի Մանուչարյանին պատկանող կաթսայատունը: Ընդ որում, Արծրունի Մանուչարյանը նշված հողամասով է մուտք ու ելք կատարում կաթսայատուն, այսինքն՝ այն տիրապետվում և օգտագործվում է Արծրունի Մանուչարյանի կողմից: Ավելին, Արծրունի Մանուչարյանն իրականացրել է նշված հողամասի պահպանման ծախսերը, կատարել է հողի հարկի վճարումները:

Ինչ վերաբերում է Վերաքննիչ դատարանի որոշման՝ վեճի առարկա գույքը Ջանիբեկ Մանուչարյանի կողմից բարեխիղճ տիրապետելու հանգամանքը հաստատված համարելու հիմքում դրված այն հանգամանքին, որ Արծրունի Մանուչարյանը չի խոչընդոտել ինքնակամ շինության կառուցապատման հանգամանքին, ապա Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ սույն գործով այն բավարար չէ Արծրունի Մանուչարյանի կողմից սեփականության իրավունքով իրեն պատկանող հողամասի սեփականության իրավունքից հրաժարումը, ինչպես նաև Ջանիբեկ Մանուչարյանի կողմից դրա բարեխիղճ տիրապետումը հիմնավորելու համար:

Այսպիսով, վճռաբեկ բողոքի հիմքի առկայությունը բավարար է, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 227-րդ և 228-րդ հոդվածների համաձայն, Վերաքննիչ դատարանի որոշումը բեկանելու համար:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 240-241²-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

ՈՐՈՇԵՑ

1. Վճռաբեկ բողոքը բավարարել մասնակիորեն: Բեկանել ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 05.11.2010 թվականի որոշումը և գործն ուղարկել ՀՀ Լոռու մարզի առաջին աստիճանի ընդհանուր իրավասության դատարան՝ նոր քննության:
2. Վճռաբեկ բողոքի համար սահմանված և հետաձգված պետական տուրքի հարցին անդրադառնալ գործի նոր քննության ժամանակ:
3. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

*ՆԱԽԱԳԱՀՈՂ՝ ստորագրություն
ԴԱՏԱՎՈՐՆԵՐ՝ ստորագրություններ*

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական
դատարանի որոշում

Քաղաքացիական գործ թիվ ԵՄԴ /0324/02/08
2011թ.

Քաղաքացիական գործ թիվ ԵՄԴ /0324/02/08

Նախագահող դատավոր՝ Դ. Խաչատրյան

Դատավորներ՝ Ն. Տավարացյան

Ս. Միքայելյան

ՈՐՈՇՈՒՄ
ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քաղաքացիական
և վարչական պալատը (այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

*Նախագահությամբ
մասնակցությամբ դատավորներ*

Ե. ԽՈՒՆԴԿԱՐՅԱՆԻ
Ս. ԱՆՏՈՆՅԱՆԻ
Վ. ԱԲԵԼՅԱՆԻ
Ա. ԲԱՐՍԵՂՅԱՆԻ
Մ. ԴՐՄԵՅԱՆԻ
Գ. ՀԱԿՈԲՅԱՆԻ
Է. ՀԱՅՐԻՅԱՆԻ
Տ. ՊԵՏՐՈՍՅԱՆԻ
Ե. ՍՈՂՈՄՈՆՅԱՆԻ

2011 թվականի մարտի 04-ին

դռնբաց դատական նիստում, քննելով Կառլեն և Արմեն Բաղդասարյանների
վճռաբեկ բողոքը ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 25.03.2010 թվականի
որոշման դեմ՝ ըստ Կառլեն և Արմեն Բաղդասարյանների հայցի ընդդեմ Ատոմ և
Մարուս Բաղդասարյանների՝ ժառանգությունն ընդունած համարելու, տիրապետման
փաստով ըստ օրենքի և ըստ կտակի սեփականության իրավունքով ժառանգական
գույքի՝ տան և հողամասի բաժնեմասը և մուտքային տարածությունն առանձնացնելու
պահանջի մասին և Ատոմ Բաղդասարյանի հակընդդեմ հայցի ընդդեմ Կառլեն և Արմեն
Բաղդասարյանների և «Մալաթիա» նոտարական գրասենյակի՝ կտակը մասնակի
անվավեր ճանաչելու պահանջի մասին և Ատոմ և Մարուս Բաղդասարյանների
հակընդդեմ հայցի ընդդեմ Կառլեն և Արմեն Բաղդասարյանների, երրորդ անձ
ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի
«Շենգավիթ» տարածքային ստորաբաժանման՝ ձեռքբերման վաղեմության ուժով
անշարժ գույքի նկատմամբ սեփականության իրավունքը ճանաչելու պահանջի մասին,

ՊԱՐԶԵՑ

1. Գործի դատավարական նախապատմությունը

Դիմելով դատարան՝ Կառլեն և Արմեն Բաղդասարյանները պահանջել են ժառանգությունն ընդունած համարել, առանձնացնել ժառանգական գույք հանդիսացող Երևանի Շահումյան 16-րդ փողոցի թիվ 63 տան և հողամասի 5/6 մասը, ինչպես նաև կողմերի մուտքային տարածքները:

Հակընդդեմ հայցով դիմելով դատարան՝ Ատոմ Բաղդասարյանը պահանջել է անվավեր ճանաչել Լուսիկ Բաղդասարյանի կողմից արված 22.10.1993 թվականի կտակը:

Երևանի Մալաթիա-Սեբաստիա համայնքի ընդհանուր իրավասության դատարանի 16.06.2008 թվականի վճռով սկզբնական և հակընդդեմ հայցերը բավարարվել են մասնակիորեն:

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 13.11.2008 թվականի որոշմամբ Երևանի Մալաթիա-Սեբաստիա համայնքի ընդհանուր իրավասության դատարանի 16.06.2008 թվականի վճիռը բեկանվել է, և գործն ուղարկվել է նույն դատարան՝ նոր քննության:

Երևանի Մալաթիա-Սեբաստիա համայնքի ընդհանուր իրավասության դատարանի 11.02.2009 թվականի վճռով սկզբնական և հակընդդեմ հայցերը բավարարվել են մասնակիորեն, իսկ Ատոմ և Մարուս Բաղդասարյանների կողմից փաստացի զբաղեցրած հողամասի վրա գտնվող ինքնակամ շինությունների նկատմամբ սեփականության իրավունքը ճանաչելու հայցապահանջի մասով գործի վարույթը կարճվել է:

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 04.06.2009 թվականի որոշմամբ Երևանի Մալաթիա-Սեբաստիա համայնքի ընդհանուր իրավասության դատարանի 11.02.2009 թվականի վճիռը սկզբնական և հակընդդեմ հայցերի մասով բեկանվել է՝ բացառությամբ գործի վարույթը կարճելու մասից, և գործն ուղարկվել է նույն դատարան՝ նոր քննության:

12.11.2009 թվականին վարույթ է ընդունվել Ատոմ և Մարուս Բաղդասարյանների հակընդդեմ հայցը՝ Երևանի Շահումյան 16-րդ փողոցի թիվ 63 հասցեի անշարժ գույքի՝ հողի և շինությունների նկատմամբ ձեռքբերման վաղեմության ուժով իրենց սեփականության իրավունքը ճանաչելու պահանջի մասին:

Երևանի Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի ընդհանուր իրավասության դատարանի (այսուհետ՝ Դատարան) 25.12.2009 թվականի վճռով հայցը բավարարվել է մասնակիորեն՝ Երևանի Շահումյան 16-րդ փողոցի թիվ 63 հասցեում գտնվող բնակելի տան օրինական մաս հանդիսացող ամբողջ երկրորդ հարկաբաժնի նկատմամբ Կառլեն և Արմեն Բաղդասարյանները փաստացի տիրապետման ուժով ճանաչվել են ժառանգությունն ընդունած ժառանգներ, և այդ մակերեսների նկատմամբ ճանաչվել է նրանց սեփականության իրավունքը: Մուտքային տարածությունն առանձնացնելու սկզբնական հայցապահանջը բավարարվել է: Հակընդդեմ հայցը բավարարվել է ամբողջությամբ, իսկ գործի վարույթը՝ կտակը մասնակի անվավեր ճանաչելու պահանջի մասով, կարճվել է:

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի (այսուհետ՝ Վերաքննիչ դատարան) 25.03.2010 թվականի որոշմամբ Կառլեն Բաղդասարյանի և Արմեն Բաղդասարյանի վերաքննիչ բողոքը բավարարվել է մասնակի՝ Դատարանի 25.12.2009 թվականի վճիռը բեկանվել է մասնակիորեն. Կառլեն և Արմեն Բաղդասարյանների

սկզբնական հայքը բավարարվել է մասնակիորեն՝ Երևանի Շահումյան 16-րդ փողոցի թիվ 63 հասցեում գտնվող բնակելի տան օրինական մաս հանդիսացող ամբողջ երկրորդ հարկաբաժնի նկատմամբ Կառլեն և Արմեն Բաղդասարյանները փաստացի տիրապետման ուժով ձանաչվել են ժառանգությունն ընդունած ժառանգներ, իսկ այդ մակերեսների նկատմամբ ձանաչվել է նրանց սեփականության իրավունքը, իսկ բնակելի տնով ծանրաբեռնված հողամասի նկատմամբ ձանաչվել է վերջիններիս համասեփականության իրավունքը: Հակընդդեմ հայքը բավարարվել է՝ Երևանի Շահումյան 16-րդ փողոցի թիվ 63 հասցեում գտնվող բնակելի տան 1-ին հարկի օրինական շենք-շինությունների, ինչպես նաև բակային տարածք հանդիսացող հողատարածքի նկատմամբ ձեռքբերման վաղեմության ուժով ձանաչվել է Ատոմ և Մարուս Բաղդասարյանների սեփականության իրավունքը, իսկ բնակելի տնով ծանրաբեռնված հողամասի նկատմամբ ձանաչվել է վերջիններիս համասեփականության իրավունքը: Վձիռը մնացած մասով թողնվել է օրինական ուժի մեջ:

Սույն գործով վճռաբեկ բողոք են ներկայացրել Կառլեն և Արմեն Բաղդասարյանները:

Վճռաբեկ բողոքի պատասխան են ներկայացրել Ատոմ և Մարուս Բաղդասարյանները:

2. Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը

Սույն վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

Վերաքննիչ դատարանը խախտել է ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 172-րդ, 187-րդ և 279-րդ հոդվածները, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 32-րդ, 131-րդ, 132-րդ, 218-րդ, 219-րդ և 221-րդ հոդվածները:

Բողոք բերած անձինք նշված պնդումը պարզապարզապես են հերկյալ փաստարկներով.

Կառլեն և Արմեն Բաղդասարյանները երբևէ չեն կատարել հակընդդեմ հայցի առարկայի նկատմամբ իրենց սեփականության իրավունքի՝ որևէ ձևով դադարեցնելուն ուղղված գործողություններ, այլ մշտապես տիրապետել են և միջոցներ են ձեռնարկել գույքը պահպանելու համար: Այսպես՝ գործում առկա ՀՀ ԳԱԱ «Փորձաքննությունների ազգային բյուրո» ՊՈԱԿ-ի 18.03.2008 թվականի թիվ 08-0008 եզրակացությունից հետևում է, որ Ատոմ Բաղդասարյանին պատկանող շինությունով ծանրաբեռնված հողամասի մակերեսը կազմում է 86,2 քմ, որն էլ, ըստ սկզբնական հայցով հայցվորների, Շահեն Բաղդասարյանին հատկացված 300 քմ մակերեսով հողամասի մի մասն է: Վերջինիս հետագտնվող տարածքում առկա 1-ին հարկում գտնվող 12,3 քմ խորդանոցը և 52,4 քմ մակերեսով ավտոտնակն օգտագործվում է Կառլեն և Արմեն Բաղդասարյանների հետ համատեղ: Ատոմ, Մարուս, Կառլեն և Արմեն Բաղդասարյանները համատեղ օգտագործում են նաև 203,6 քմ հողամաս, որից 131,4 քմ շինություններից ազատ հողամաս: Տվյալ դեպքում նշված եզրակացության վերլուծության արդյունքում գալիս ենք այն եզրահանգման, որ վիճելի հասցեում առկա շինություններով չծանրաբեռնված հողամասն ընդամենը 131,4 քմ է, որն էլ ըստ էության ընդհանուր օգտագործման տարածք է: Հետևաբար, վիճարկվող որոշմամբ նշված բակային տարածքն օգտագործվում է նաև Կառլեն և Արմեն Բաղդասարյանների կողմից, ուստի այդ տարածքի նկատմամբ Ատոմ և Մարուս Բաղդասարյանների

տիրապետման բարեխղճությունը բացակայում է:

Բացի այդ, Ատոմ և Մարուս Բաղդասարյանները պահանջել են ձեռքբերման վաղեմության ուժով ձանաչել իրենց սեփականության իրավունքը Երևանի Շահումյան 16-րդ փողոցի թիվ 63 հասցեում գտնվող Շահեն Բաղդասարյանի անվամբ հատկացված 300 քմ մակերեսով հողամասի և դրա վրա գտնվող շինությունների նկատմամբ, մինչդեռ Վերաքննիչ դատարանը որոշում է կայացրել նշված հասցեի բնակելի տան 1-ին հարկի օրինական շենք-շինությունների, ինչպես նաև բակային տարածք հանդիսացող հողատարածքի նկատմամբ ձեռքբերման վաղեմության ուժով Ատոմ և Մարուս Բաղդասարյանների սեփականության իրավունքը ձանաչելու, իսկ բնակելի տնով ծանրաբեռնված հողամասի նկատմամբ՝ վերջիններիս համասեփականության իրավունքը ձանաչելու վերաբերյալ: Այսինքն՝ Վերաքննիչ դատարանը որոշում է կայացրել այնպիսի պահանջի վերաբերյալ, որը հակընդդեմ հայցվորները երբևէ չեն ներկայացրել: Մինչդեռ քաղաքացիական դատավարություն սկսելու հիմքը հայցն է, որը ներառում է այն ներկայացնողի պահանջը՝ որպես հայցի առարկա, և պահանջի հիմքում ընկած հանգամանքները՝ որպես հայցի հիմք, և միայն հայցվորն իրավունք ունի փոխել հայցի առարկան և հիմքը:

Վերոգրյալի հիման վրա բողոք բերած անձինք պահանջել են բեկանել Վերաքննիչ դատարանի 25.03.2010 թվականի որոշումը և այն փոփոխել՝ հայցն ամբողջությամբ բավարարել, իսկ հակընդդեմ հայցը մերժել կամ բեկանել Վերաքննիչ դատարանի 25.03.2010 թվականի որոշումը և գործն ուղարկել նոր քննության:

2.1. Վճռաբեկ բողոքի պատասխանի հիմնավորումները

Ատոմ և Մարուս Բաղդասարյանները 10-15 տարի բարեխիղճ, անընդմեջ, բացահայտ տիրապետում, օգտագործում են Երևանի Շահումյան 16 փողոցի թիվ 63 տան 1-ին հարկը, բակային տարածքը՝ իր մուտքի դարպասներով, այլ անձ երբեք չի հավակնել այդ տարածքին: Դեռևս Թորոս Բաղդասարյանի կենդանության ժամանակ այդ տարածքը հատկացվել է իրենց, այսինքն՝ նրանք կամովին հրաժարվել են այդ գույքից՝ ներառյալ 300 քմ մակերեսից: Իրենք եղել են հաշտ, կաթսայատուն են դրել բակի մասում, որից բոլորն օգտվում էին, սակայն տարածքը գազաֆիկացվելուց հետո որոշել են այդ տարածքը հատկացնել բողոք բերած անձանց:

3. Վճռաբեկ բողոքի քննության համար նշանակություն ունեցող փաստերը

Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1. 28.11.1961 թվականի կոլխոզի ժապավենային մատյանի 38 համարով տեղեկանքի համաձայն՝ Թորոս Բաղդասարյանին տրվել է 800 քմ տնամերձ հողամաս Երևանի Շահումյան 16-րդ փողոցի թիվ 63 հասցեում (հատոր 1-ին, գ.թ. 45):

2. Բնակելի տան կառուցման անկետայի համաձայն՝ բնակելի տան կառուցումը սկսվել է 1950 թվականից և ավարտվել է 1955 թվականին (հատոր 1-ին, գ.թ. 13):

3. Երևանի 18-րդ կուսհամագումարի անվան կոլտնտեսության 21.04.1969 թվականի թիվ 3 արձանագրության որոշման համաձայն՝ Թորոս Բաղդասարյանին հատկացված 800 քմ հողամասից 300 քմ-ն հատկացվել է Շահեն Բաղդասարյանին՝ բնակելի տուն կառուցելու համար (հատոր 1-ին, գ.թ. 17):

4. 1970 թվականին տրված գույքային թերթի համաձայն՝ Երևանի Շահումյան

16-րդ փողոցի թիվ 63 տունը՝ 800 քմ հողային տարածությամբ, գույքագրվել է Թորոս Բաղդասարյանի անվամբ (հատոր 1-ին, գ.թ. 46):

5. ՀՀ ազգային արխիվի Երևանի քաղաքային մասնաճյուղի 04.06.2007 թվականի թիվ 01-20/951 արխիվային տեղեկանքի համաձայն՝ պետական արխիվում պահպանվող ՀԽՍՀ Երևանի Շահումյանի շրջանի Շահումյանի անվան 18-րդ շարտհամագումարի անվան կոլտնտեսության 1973 թվականի հողային ժապավենային մատյանից պարզվում է, որ Թորոս Երեմի Բաղդասարյանի անվամբ հաշվառված է 0,05 հա հողամաս (հատոր 1-ին, գ.թ. 31):

6. Թորոս Բաղդասարյանի և Լուսիկ Բաղդասարյանի ամուսնությունը գրանցվել է 23.09.1965 թվականին Շահումյանի շրջանի ԶԱԳՍ-ի բաժնում (հատոր 1-ին, գ.թ. 41):

7. Թորոս Բաղդասարյանը Կառլեն և Շահեն Բաղդասարյանների հայրն է:

8. Թորոս Բաղդասարյանը մահացել է 07.11.1992 թվականին, իսկ Լուսիկ Բաղդասարյանը՝ 29.01.1994 թվականին (հատոր 1-ին, գ.թ. 24):

9. Լուսիկ Բաղդասարյանը 22.10.1993 թվականին արված կտակով Երևանի Շահումյան 16-րդ փողոցի թիվ 63 տունն ամբողջությամբ կտակել է իր թոռ Արմեն Բաղդասարյանին (հատոր 1-ին, գ.թ. 25):

10. Երևանի Մալաթիա-Մեքաստիա համայնքի ընդհանուր իրավասության դատարանի 06.08.2007 թվականի վճռի համաձայն՝ Մարոս Բաղդասարյանը Շահեն Բաղդասարյանի մահից հետո ձանաչվել է նրա ժառանգությունը փաստացի տիրապետմամբ ընդունած ժառանգ (հատոր 2-րդ, գ.թ. 7):

11. 18.03.2008 թվականի ՀՀ ԳԱԱ «Փորձաքննությունների ազգային բյուրո» ՊՈԱԿ-ի փորձագետի կողմից տրվել է թիվ 08-0008 եզրակացությունը, համաձայն որի՝ Երևանի Շահումյան 16 փողոցի թիվ 63 հասցեում գտնվող հողի ընդհանուր մակերեսը կազմում է 560 քմ, որից օրինական հատկացված հողամասի սահմաններում գտնվող տարածքի մակերեսը 551 քմ է, իսկ ինքնակամ զբաղեցված հողամասի մակերեսը՝ 9 քմ: Կառլեն և Արմեն Բաղդասարյանների կողմից օգտագործվող շինությունների մակերեսը կազմում է 122,2 քմ, այդ թվում օրինական շինություններ՝ 77,1 քմ, անօրինական շինություններ՝ 45,1 քմ: Վերջիններիս կողմից օգտագործվող շինություններն ամբողջությամբ գտնվում են 2-րդ հարկում: Մարոս Բաղդասարյանի կողմից փաստացի օգտագործվում է 1-ին հարկաբաժնից 132,6 քմ, այդ թվում օրինական շինություններ՝ 74,8 քմ, անօրինական շինություններ՝ 57,8 քմ: Ատոմ Բաղդասարյանի կողմից փաստացի օգտագործվող շինություններն իրենցից ամբողջությամբ ներկայացնում են անօրինական շինություններ, որոնց ներքին օգտագործելի ընդհանուր մակերեսը կազմում է 488,7 քմ, այդ թվում 86,2 քմ մակերեսը՝ 1-ին հարկում, 81,2 քմ մակերեսը՝ 2-րդ հարկում: Վերջինիս հետագոտվող տարածքում առկա 1-ին հարկում գտնվող 12,3 քմ խորդանոցը և 52,4 քմ մակերեսով ավտոտնակն օգտագործվում է Կառլեն և Արմեն Բաղդասարյանների հետ համատեղ: Միայն Ատոմ Բաղդասարյանի կողմից օգտագործվող հողի մակերեսը կազմում է 154,7 քմ, որից 54,8 քմ գտնվում է հողամասի վերջնամասում, այդ թվում 23,2 քմ զբաղված է անօրինական շինություններով, 31,6 քմ շինություններից ազատ հողամաս է, իսկ 99,9 քմ իրենից ներկայացնում է հողամասի փողոցի նկատմամբ աջ գտնվող, շինություններով զբաղեցված հողամաս: Բացի վերոգրյալից, վերջինիս կողմից Մարոս, Կառլեն և Արմեն Բաղդասարյանների հետ համատեղ օգտագործվում է նաև 203,6 քմ հողամաս, որից 131,4 քմ-ը շինություններից ազատ հողամաս է, 12,3 քմ-ը՝ խորդանոցով զբաղեցված հողամաս, իսկ 59,9 քմ-ը՝ ավտոտնակով զբաղեցված հողամաս (հատոր 1-ին, գ.թ. 114-

116):

4. Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումները

Քննելով վճռաբեկ բողոքը նշված հիմքի սահմաններում՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ այն հիմնավոր է հետևյալ պարձառաբանությամբ:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 187-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ քաղաքացին կամ իրավաբանական անձը, որն անշարժ գույքի սեփականատեր չէ, սակայն այն տասը տարվա ընթացքում բարեխղճորեն, բացահայտ և անընդմեջ տիրապետում է որպես սեփական գույք, այդ գույքի նկատմամբ ձեռք է բերում սեփականության իրավունք (ձեռքբերման վաղեմություն):

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 187-րդ հոդվածի 1-ին կետի վերլուծությունից հետևում է, որ ձեռքբերման վաղեմության ուժով սեփականության իրավունքի ձեռքբերման համար անհրաժեշտ է մի շարք վավերապայմանների միաժամանակյա առկայությունը: Մասնավորապես դրանք են՝

1. տիրապետումը պետք է լինի բարեխիղճ: Տիրապետման բարեխղճությունը գնահատվում է գույքն անձի փաստացի տիրապետմանն անցնելիս: Գույքն անձի փաստացի տիրապետմանը պետք է անցնի առանց որևէ բռնության գործադրման: Տիրապետողի մոտ պետք է առկա լինի այն համոզմունքը, որ նա գույքը ձեռք է բերում օրինական հիմքերով: Տիրապետումը պետք է հիմնված լինի այնպիսի փաստի հիման վրա, որը տիրապետողին կարող է տալ բավարար հիմքեր ենթադրելու, որ նա այդ գույքը տիրապետելու է որպես սեփականություն:

2. Փաստացի տիրապետողը գույքը պետք է տիրապետի որպես սեփականը, այսինքն՝ գույքը փաստացի տիրապետողը պետք է մասնակցի գույքի կառավարմանը, հոգ տանի դրա պահպանման համար, ինչպես իր սեփական գույքի դեպքում: Անձը պետք է գույքը տիրապետի ինչպես սեփականը՝ նաև երրորդ անձանց հետ հարաբերություններում:

3. Տիրապետումը պետք է լինի տասը տարի և անընդմեջ: Այսինքն՝ 10 տարվա ընթացքում գույքի տիրապետումը չպետք է ընդհատվի: Տիրապետումը կարող է ընդհատվել կամ տիրապետողի կամքով, երբ նա հրաժարվում է գույքի հետագա տիրապետումից (գույքը դուրս է գալիս նրա տիրապետումից), կամ գույքի սեփականատիրոջ կամ այլ անձանց գործողություններով, որոնք ուղղված են գույքը վերադարձնելուն:

4. Տիրապետումը պետք է լինի բացահայտ, այսինքն՝ փաստացի տիրապետողը գույքը չպետք է տիրապետի երրորդ անձանցից գաղտնի եղանակով (*լռեն, օրինակ՝ Վոլոդյա և Միշա Նիկողոսյաններ ընդդեմ Մանվել, Սոֆիկ, Մելանյա, Մանվել Սարիբեկյանների և Քնարիկ Աղազարյան, Մանվել Սարիբեկյան և Քնարիկ Աղազարյան ընդդեմ Վոլոդյա և Միշա Նիկողոսյանների՝ ձեռքբերման վաղեմության ուժով սեփականության իրավունքը ձանաչելու, ըստ օրենքի ժառանգության իրավունքի վկայագիրը և սեփականության իրավունքի վկայականը մասնակի անվավեր ձանաչելու պահանջի մասին թիվ 3-1435/ՎԳ քաղաքացիական գործով Վճռաբեկ դատարանի 10.10.2007 թվականի որոշումը*):

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 53-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ դատարանը յուրաքանչյուր ապացույց գնահատում է գործում եղած բոլոր ապացույցների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտության վրա հիմնված ներքին համոզմամբ:

Նշված նորմի վերլուծությունից հետևում է, որ գործի լուծման համար էական նշանակություն ունեցող փաստի հաստատված լինելու հարցը դատարանը պարզում է գործում եղած բոլոր ապացույցների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտման վրա հիմնված ներքին համոզմամբ (*լրես Մամկել Հարությունյանն ընդդեմ Վահագն Մաքանյանի՝ գումար բռնագանձելու պահանջի մասին, թիվ ՀՅԲԴ2/0106/02/08 գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 22.04.2010 թվականի որոշումը*):

Սույն գործում առկա ՀՀ ԳԱԱ «Փորձաքննությունների ազգային բյուրո» ՊՈԱԿ-ի 18.03.2008 թվականի թիվ 08-0008 եզրակացության համաձայն՝ Երևանի Շահումյան 16-րդ փողոցի թիվ 63 հասցեում գտնվող հողի ընդհանուր մակերեսը կազմում է 560 քմ, որից օրինական հատկացված հողամասի սահմաններում գտնվող տարածքի մակերեսը 551 քմ է, իսկ ինքնակամ զբաղեցված հողամասի մակերեսը՝ 9 քմ: Կառլեն և Արմեն Բաղդասարյանների կողմից օգտագործվող շինությունների մակերեսը կազմում է 122,2 քմ, իսկ այդ շինություններն ամբողջությամբ գտնվում են 2-րդ հարկում: Մարուս Բաղդասարյանի կողմից փաստացի օգտագործվում է 1-ին հարկաբաժնից 132,6 քմ մակերես, իսկ Ատոմ Բաղդասարյանի կողմից օգտագործվող հողի մակերեսը կազմում է 154,7 քմ մակերես: Ատոմ Բաղդասարյանի կողմից Մարուս, Կառլեն և Արմեն Բաղդասարյանների հետ համատեղ օգտագործվում է նաև 203,6 քմ հողամաս, որից 131,4 քմ-ը շինություններից ազատ հողամաս է, 12,3 քմ-ը՝ խորդանոցով զբաղեցված հողամաս, իսկ 59,9 քմ-ը՝ ավտոտնակով զբաղեցված հողամաս:

Վերաքննիչ դատարանը ձեռքբերման վաղեմության ուժով Ատոմ և Մարուս Բաղդասարյանների սեփականության իրավունքը ճանաչելիս պատճառաբանել է, որ դատաքննությամբ և գործի փաստերով հաստատվել է այն հանգամանքը, որ Շահեն Բաղդասարյանը հողամասի վրա կառուցել է կարգավիճակը չորոշված բնակելի տուն, որի կառուցումից հետո շուրջ 30 տարի և ավելի այն բակային տարածքով զբաղեցվում և օգտագործվում է Շահեն Բաղդասարյանի, այնուհետև որդու՝ Ատոմ Բաղդասարյանի ընտանիքի կողմից, վերջիններս հոգ են տարել գույքի նկատմամբ, տիրապետել են գույքը որպես սեփականը, և այդ տարիների ընթացքում սեփականատիրոջ կողմից գույքը հետ վերցնելու գործողություններ չեն կատարվել: Երևանի Մալաթիա-Մեքաստիա համայնքի առաջին ատյանի դատարանի 06.08.2007 թվականի վճռի համաձայն՝ Մարուս Բաղդասարյանը ճանաչվել է Շահեն Բաղդասարյանի մահից հետո նրա ժառանգությունը փաստացի տիրապետմամբ ընդունած ժառանգ: Հետևաբար Դատարանը միանգամայն իրավացիորեն բնակելի տան 1-ին հարկի օրինական շենք-շինությունների, ինչպես նաև բակային տարածքի նկատմամբ ճանաչել է Մարուս Բաղդասարյանի և Ատոմ Բաղդասարյանի սեփականության իրավունքը:

Մինչդեռ, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Վերաքննիչ դատարանն անտեսել է գործում առկա ՀՀ ԳԱԱ «Փորձաքննությունների ազգային բյուրո» ՊՈԱԿ-ի փորձագետի թիվ 08-0008 եզրակացությամբ հիմնավորվող այն փաստը, որ վիճելի հասցեում առկա շինություններով չձանաթեռնված հողամասն ընդամենը 131,4 քմ է, որն էլ ընդհանուր օգտագործման տարածք է: Ուստի հիմնավոր է բողոք բերած անձանց փաստարկն այն մասին, որ վիճելի հասցեի բակային տարածքն օգտագործվում է նաև Կառլեն և Արմեն Բաղդասարյանների կողմից, հետևաբար այդ տարածքի նկատմամբ Ատոմ և Մարուս Բաղդասարյանների տիրապետման բարեխղճությունը բացակայում է:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 48-րդ հոդվածի 2-րդ կետի համաձայն՝ գործի լուծման համար էական նշանակություն ունեցող ապացույցման ենթակա փաստերը որոշում է դատարանը՝ գործին մասնակցող անձանց պահանջների

և առարկությունների հիման վրա:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 220-րդ հոդվածի 2-րդ կետի 5-րդ ենթակետի համաձայն՝ վերաքննիչ դատարանի որոշման մեջ պետք է նշվեն գործով պարզված և վերաքննիչ բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերը և այլ իրավական ակտերը, որոնցով ղեկավարվել է վերաքննիչ դատարանը որոշում կայացնելիս:

Վճռաբեկ դատարանն իր նախկինում կայացրած որոշումներում անդրադարձել է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 48-րդ հոդվածի իրավական վերլուծությանը:

Մասնավորապես Վճռաբեկ դատարանը նշել է, որ յուրաքանչյուր գործով կողմերի միջև ապացուցման պարտականությունը ձիշտ բաշխելու համար դատարանն առաջին հերթին պետք է պարզի յուրաքանչյուր գործի լուծման համար էական նշակություն ունեցող փաստերը՝ ելնելով գործին մասնակցող անձանց պահանջներից և առարկություններից (*լրես՝ Էդգար Մարկոսյանի և Զարուհի Գևորգյանի հայցն ընդդեմ Սեդա Սարգսյանի՝ գրավադրված գույքն արգելանքից հանելու պահանջի մասին, և Սեդա Սարգսյանի հակընդդեմ հայցն ընդդեմ Էդգար Մարկոսյանի և Զարուհի Գևորգյանի՝ գումարի բռնագանձման և բռնագանձումը գրավի առարկայի վրա տարածելու պահանջների մասին Վճռաբեկ դատարանի 13.02.2009 թվականի թիվ ԵԱՆԳ/0479/02/08 որոշումը*):

Սույն գործով Ատոմ և Մարոս Բաղդասարյանները հակընդդեմ հայցով պահանջել են ձանաչել իրենց սեփականության իրավունքը Երևանի Շահումյան 16-րդ փողոցի թիվ 63 հասցեում գտնվող, Շահեն Բաղդասարյանի անվամբ հատկացված 300 քմ մակերեսով հողամասի և դրա վրա գտնվող շինությունների նկատմամբ:

Մինչդեռ ինչպես Վերաքննիչ դատարանի որոշումից, այնպես էլ Դատարանի վճռից պարզ չէ, թե վիճելի հասցեի բնակելի տան 1-ին հարկի օրինական շենք-շինությունները, դրանց սպասարկող հողամասը և բակային տարածքը, որոնց նկատմամբ Վերաքննիչ դատարանի որոշմամբ ձանաչվել է հակընդդեմ հայցվորների սեփականության իրավունքը, համընկնում են արդյոք վիճելի հասցեում Շահեն Բաղդասարյանի անվամբ հատկացված 300 քմ մակերեսով հողամասի և դրա վրա գտնվող շինությունների ֆիզիկական չափերի ու փաստացի կարգավիճակի հետ: Դատարանը չի տարանջատել Շահեն Բաղդասարյանի անվամբ հատկացված 300 քմ հողամասը Թորոս Բաղդասարյանին պատկանող 500 քմ հողամասից, ինչի արդյունքում պարզ չէ՝ վիճելի հասցեի բակային տարածքը Թորոս Բաղդասարյանին, թե Շահեն Բաղդասարյանին պատկանող հողատարածքի վրա է գտնվում:

Վճռաբեկ դատարանը գտնում է, որ այդ առումով Դատարանի վճիռը որոշակի չէ, ինչն անտեսվել է նաև Վերաքննիչ դատարանի կողմից բողոքի քննության ժամանակ: Մասնավորապես, անհրաժեշտ է պարզել, թե Թորոս Բաղդասարյանի անվամբ հատկացված 800 քմ հողամասից Շահեն Բաղդասարյանին հատկացված 300 քմ տարածքը վիճելի հասցեում կոնկրետ որ հատվածն է զբաղեցնում և արդյոք նշված բակային տարածքը, ինչպես նաև բնակելի տան 1-ին հարկի օրինական շենք-շինություններով ծանրաբեռնված հողամասը մտնում են այդ 300 քմ տարածքի կազմի մեջ:

Այսպիսով, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Վերաքննիչ դատարանն անտեսել է Դատարանի կողմից սույն գործի լուծման համար էական նշանակություն

ունեցող մի շարք փաստեր չպարզելու հանգամանքը, ինչպես նաև սույն գործով փորձագետի կողմից տրված եզրակացությամբ պարզված գործի լուծման համար նշանակություն ունեցող հանգամանքները պատշաճ չգնահատելու փաստը:

Այսպիսով, վճռաբեկ բողոքի հիմքի առկայությունը Վճռաբեկ դատարանը դիտում է բավարար՝ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 227-րդ և 228-րդ հոդվածների ուժով Վերաքննիչ դատարանի որոշումը բեկանելու համար:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 240-241²-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

ՈՐՈՇԵՑ

1. Վճռաբեկ բողոքը բավարարել: Բեկանել ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 25.03.2010 թվականի որոշումը և գործն ուղարկել Երևանի Մալաթիա-Մեքաստիա վարչական շրջանի ընդհանուր իրավասության դատարան՝ նոր քննության:

2. Վճռաբեկ բողոքի համար հետաձգված պետական տուրքի բաշխման հարցին անդրադառնալ գործի նոր քննության ընթացքում:

3. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

*ՆԱԽԱԳԱՀՈՂ՝ ստորագրություն
ԴԱՏԱՎՈՐՆԵՐ՝ ստորագրություններ*

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական Քաղաքացիական գործ թիվ ԵԱԴԴ/0110/02/10
դատարանի որոշում 2011թ.
Քաղաքացիական գործ թիվ ԵԱԴԴ/0110/02/10
Նախագահող դատավոր՝ Կ. Հակոբյան
Դատավորներ՝ Ս. Սահակյան
Ս. Նազարյան

ՈՐՈՇՈՒՄ

ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քաղաքացիական
և վարչական պալատը (այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

նախագահությամբ

մասնակցությամբ դատավորներ

Ե. ԽՈՒՆԴԿԱՐՅԱՆԻ

Վ. ԱՎԱՆԵՍՅԱՆԻ

Վ. ԱԲԵԼՅԱՆԻ

Ա. ԲԱՐՍԵՂՅԱՆԻ

Մ. ԴՐՄԵՅԱՆԻ

Գ. ՀԱԿՈԲՅԱՆԻ

Տ. ՊԵՏՐՈՍՅԱՆԻ

Ե. ՍՈՂՈՄՈՆՅԱՆԻ

2011 թվականի հուլիսի 01-ին

դռնբաց դատական նիստում, քննելով Պարզև Հարությունյանի վճռաբեկ բողոքը
ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 29.10.2010 թվականի որոշման դեմ՝
ըստ հայցի Պարզև Հարությունյանի ընդդեմ Շողիկ Կարապետյանի, Միշա, Արթուր և
Արտակ Բեյբությունների՝ ձեռքբերման վաղեմության ուժով անշարժ գույքի նկատմամբ
սեփականության իրավունքի ձանձախման պահանջի մասին և ըստ հակընդդեմ հայցի
Շողիկ Կարապետյանի, Միշա, Արթուր և Արտակ Բեյբությունների ընդդեմ Պարզև
Հարությունյանի՝ վտարման պահանջի մասին,

ՊԱՐՉԵՑ

1. Գործի դատավարական նախապատմությունը

Դիմելով դատարան՝ Պարզև Հարությունյանը պահանջել է ձեռքբերման
վաղեմության ուժով Երևանի Եղիազարյան փողոցի թիվ 1 հասցեում գտնվող 112,0 քմ
մակերեսով բնակելի տան և 63,7 քմ մակերեսով հողամասի նկատմամբ ձանձախ իր
սեփականության իրավունքը:

Հակընդդեմ հայցով դիմելով դատարան՝ Շողիկ Կարապետյանը, Միշա, Արթուր
և Արտակ Բեյբությունները պահանջել են Պարզև Հարությունյանին և նրա ընտանիքին
վտարել սեփականության իրավունքով իրենց պատկանող Երևանի Եղիազարյան

փողոցի թիվ 1 հասցեի բնակելի տնից:

Երևանի Աջափնյակ և Դավթաշեն վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի (այսուհետ՝ Դատարան) 13.08.2010 թվականի վճռով հայցը բավարարվել է, իսկ հակընդդեմ հայցը՝ մերժվել:

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի (այսուհետ՝ Վերաքննիչ դատարան) 29.10.2010 թվականի որոշմամբ Շողիկ Կարապետյանի, Միշա, Արթուր և Արտակ Բեյբությանների վերաքննիչ բողոքը բավարարվել է՝ բեկանվել է Դատարանի 13.08.2010 թվականի վճիռը և փոփոխվել. հայցը մերժվել է, իսկ հակընդդեմ հայցը՝ Պարզև Հարությունյանին Երևանի Եղիազարյան փողոցի թիվ 1 հասցեի տնից վտարելու մասին՝ բավարարվել:

Սույն գործով վճռաբեկ բողոք է ներկայացրել Պարզև Հարությունյանը:

Վճռաբեկ բողոքի պատասխան չի ներկայացվել:

2. Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը

Սույն վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

Վերաքննիչ դատարանը խախտել է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 53-րդ հոդվածը, որի արդյունքում չի կիրառել ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 172-րդ և 187-րդ հոդվածերը, որոնք պետք է կիրառեր:

Բողոք բերած անձը նշված պնդումը պարձատարանել է հետևյալ փաստարկներով.

Վերաքննիչ դատարանը վերաքննիչ բողոքի բավարարման հիմքում դրել է այն հանգամանքը, որ Պարզև Հարությունյանի կողմից չի հիմնավորվել գույքը որպես սեփականը և 10 տարի անընդմեջ տիրապետելու փաստը, ինչպես նաև այն հանգամանքը, որ Շողիկ Կարապետյանը, Միշա, Արթուր և Արտակ Բեյբությանները չեն հրաժարվել վիճելի գույքից:

Մինչդեռ, գործում առկա փաստաթղթերով հիմնավորվում է վիճելի գույքը Պարզև Հարությունյանի կողմից տասը տարի բարեխիղճ, բացահայտ և անընդմեջ տիրապետելու փաստը, ինչպես նաև գույքից Շողիկ Կարապետյանի, Միշա, Արթուր և Արտակ Բեյբությանների հրաժարվելու հանգամանքը:

Վերոգրյալի հիման վրա բողոք բերած անձը պահանջել է բեկանել Վերաքննիչ դատարանի 29.10.2010 թվականի որոշումը և օրինական ուժ տալ Դատարանի 13.08.2010 թվականի վճիռն:

3. Վճռաբեկ բողոքի քննության համար նշանակություն ունեցող փաստերը.

Վճռաբեկ բողոքի քննության համար նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

1. Հայկական ԽՍՀ Երևան քաղաքի Մաշտոցի շրջգործկոմի թիվ 1 թաղային կոմիտեի 04.04.1991 թվականին տրված տեղեկանքի համաձայն՝ Պարզև Հարությունյանը մշտական գրանցված է Երևանի Եղիազարյան փողոցի թիվ 1 բնակարանում (հ. 1-ին գ. թ. 95):

2. ՀՀ ոստիկանության Մաշտոցի անձնագրային բաժանմունքի 13.07.2010 թվականի թիվ 42-136/ա տեղեկանքի համաձայն՝ Պարզև Հարությունյանը 04.01.1983 թվականից հաշվառված բնակվում է Երևանի Եղիազարյան փողոցի թիվ 1 տանը (հ. 2-րդ գ. թ. 13):

3. Հայկ Բարսեղյանի և Եպրաքսի Ավետիսյանի 14.03.2010 թվականի հայտարարությունների համաձայն՝ Պարզև Հարությունյանը գնել է Երևանի Եղիազարյան փողոցի 1 տան մի մասը և ապրում է տվյալ հասցեում 1968 թվականից (հ. 1-ին գ. թ. 96-97):

4. Թաղային կոմիտեի նախագահի 05.10.2009 թվականին տրված տեղեկանքի համաձայն՝ Պարզև Հարությունյանը բնակվում է Երևանի Եղիազարյան փողոցի թիվ 1 տանը և նշված հասցեի տունը կառուցել է 1968 թվականին անօրինական, որից հետո շինարարություն չի կատարել (հ. 1-ին գ. թ. 10):

5. 18.04.2008 թվականին Պարզև Հարությունյանի՝ որպես Եղիազարյան 1 հասցեի բաժանորդի և «Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲԸ-ի միջև կնքվել է «Էլեկտրական էներգիայի մատակարարման» թիվ 0930928 պայմանագիրը (հ. 2-րդ գ. թ. 20):

6. ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի Դավթաշեն տարածքային ստորաբաժանման ղեկավարի 28.10.2009 թվականի ԱԳ-5582 գրության համաձայն՝ Պարզև Հարությունյանի բանավոր հայտարարությամբ և ըստ չափագրման արդյունքների՝ Երևանի Եղիազարյան փողոցի թիվ 1 հասցեում նրա կողմից փաստացի օգտագործվում է 112,0 քմ մակերեսով բնակելի տուն և 63,7 քմ մակերեսով հողամաս (բնակելի տան տակ) (հ. 1-ին գ. թ. 12, 80):

7. 29.08.1973 և 28.08.1974 թվականների թիվ 320218 և 052352 ապահովագրական վկայագրերի համաձայն՝ կնքվել է Երևանի Շահումյան 25-րդ փողոցի (ներկայիս՝ Եղիազարյան) թիվ 1 հասցեում գտնվող տնային գույքի ապահովագրության պայմանագիր (հ. 1-ին գ. թ. 92-93):

8. Սեփականության իրավունքի գրանցման 30.09.2009 թվականի թիվ 2675236 վկայականի համաձայն՝ Երևանի Եղիազարյան փողոցի թիվ 1 տան 5/8-րդ մասի նկատմամբ գրանցված է Միշա Բեյբությանի սեփականության իրավունքը, և երեք 1/8-րդական մասերի նկատմամբ՝ Շողիկ Կարապետյանի, Արթուր և Արտակ Բեյբությանների սեփականության իրավունքները (հ. 1-ին գ. թ. 106-107):

9. Շողիկ Կարապետյանը, Միշա, Արթուր և Արտակ Բեյբությանները վեճի առարկա գույքի գույքահարկի, հողի հարկի, մատուցված ծառայությունների վճարումները կատարել են սկսած 2009 թվականից (հ. 1-ին գ. թ. 112-136):

4. Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը

Քննելով վճռաբեկ բողոքը նշված հիմքի ասհմաններում՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ այն հիմնավոր է հեղինակ պարձառաբանությամբ.

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 53-րդ հոդվածի համաձայն՝ դատարանը յուրաքանչյուր ապացույց գնահատում է գործում եղած բոլոր ապացույցների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտության վրա հիմնված ներքին համոզմամբ:

«ՀՀ քաղաքացիական օրենսգրքը գործողության մեջ դնելու մասին» ՀՀ 17.06.1998 թվականի թիվ ՀՕ-229 օրենքի 12-րդ հոդվածի համաձայն՝ օրենսգրքի 187-րդ հոդվածի գործողությունը տարածվում է նաև այն դեպքերի վրա, երբ գույքի տիրապետումն սկսվել է 01.01.1999 թվականից առաջ և շարունակվում է օրենսգրքը գործողության մեջ դնելու պահից:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 172-րդ հոդվածի 5-րդ կետի համաձայն՝ նույն օրենսգրքով նախատեսված դեպքերում և կարգով՝ անձը կարող է սեփականության

իրավունք ձեռք բերել սեփականատեր չունեցող գույքի նկատմամբ, ինչպես նաև այն գույքի, որի սեփականատերն անհայտ է, կամ որից սեփականատերը հրաժարվել է, կամ որի նկատմամբ սեփականության իրավունքը նա կորցրել է օրենքով նախատեսված այլ հիմքերով:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 280-րդ հոդվածի համաձայն՝ քաղաքացին կամ իրավաբանական անձը կարող է հրաժարվել իրեն պատկանող գույքի սեփականության իրավունքից՝ այդ մասին գրավոր հայտարարելով կամ այնպիսի գործողություններ կատարելով, որոնք ակնհայտ վկայում են գույքի տիրապետումից, օգտագործումից և տնօրինումից նրա մեկուսացման մասին՝ առանց այդ գույքի նկատմամբ որևէ իրավունք պահպանելու մտադրության:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 187-րդ հոդվածի համաձայն՝ քաղաքացին կամ իրավաբանական անձը, որն անշարժ գույքի սեփականատերը չէ, սակայն այն տասը տարվա ընթացքում բարեխղճորեն, բացահայտ և անընդմեջ տիրապետում է որպես սեփական գույք, այդ գույքի նկատմամբ ձեռք է բերում սեփականության իրավունք (ձեռքբերման վաղեմություն), ընդ որում, տիրապետման վաղեմությունը վկայակոչող անձը կարող է իր տիրապետման ժամկետին միացնել այն ժամանակը, որի ընթացքում այդ գույքը տիրապետել է այն անձը, որի իրավահաջորդն է ինքը:

Վերոնշյալ հոդվածների համադրումից հետևում է, որ ձեռքբերման վաղեմությունն իրենից ներկայացնում է օրենքով նախատեսված որոշակի ժամկետի լրանալու և որոշակի պայմանների վրա հասնելու ուժով մեկ անձի կողմից սեփականության իրավունքի ձեռքբերման, իսկ մյուսի կողմից՝ այդ իրավունքի դադարման միջոց:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 187-րդ հոդվածի 1-ին կետի վերլուծությունից հետևում է, որ ձեռքբերման վաղեմության ուժով սեփականության իրավունքի ձեռքբերման համար անհրաժեշտ է մի շարք վավերապայմանների միաժամանակյա առկայությունը:

Մասնավորապես դրանք են՝

1. **տիրապետումը պետք է լինի բարեխիղճ**: Տիրապետման բարեխղճությունը գնահատվում է գույքը անձի փաստացի տիրապետմանն անցնելիս: Գույքն անձի փաստացի տիրապետմանը պետք է անցնի առանց որևէ բռնության գործադրման: Տիրապետողի մոտ պետք է առկա լինի այն համոզմունքը, որ նա գույքը ձեռք է բերում օրինական հիմքերով: Տիրապետումը պետք է հիմնված լինի այնպիսի փաստի հիման վրա, որը տիրապետողին կարող է տալ բավարար հիմքեր ենթադրելու, որ նա այդ գույքը ձեռք է բերում և տիրապետելու է որպես սեփականություն:

2. **փաստացի տիրապետողը գույքը պետք է տիրապետի որպես սեփականը**, այսինքն՝ գույքը փաստացի տիրապետողը պետք է մասնակցի գույքի կառավարմանը, հոգ տանի դրա պահպանման համար, ինչպես իր սեփական գույքի դեպքում: Անձը պետք է գույքը տիրապետի ինչպես սեփականը նաև երրորդ անձանց հետ հարաբերություններում:

3. **տիրապետումը պետք է լինի 10 տարի և անընդմեջ**: Այսինքն՝ 10 տարվա ընթացքում գույքի տիրապետումը չպետք է ընդհատվի: Տիրապետումը կարող է ընդհատվել կամ տիրապետողի կամքով, երբ նա հրաժարվում է գույքի հետագա տիրապետումից (գույքը դուրս է գալիս նրա տիրապետումից), կամ գույքի սեփականատիրոջ կամ այլ անձանց գործողություններով, որոնք ուղղված են գույքը վերադարձնելուն:

4. **տիրապետումը պետք է լինի բացահայտ**, այսինքն՝ փաստացի տիրապետողը գույքը չպետք է տիրապետի երրորդ անձանցից գաղտնի եղանակով.

(Տես Մարուսյա Աբրահամյանը, Ռուբիկ Միմոնյանն ընդդեմ Միխայել Միմոնյանի, Ջուլիետրա Հակոբջանյանի, Արթուր Միմոնյանի, Լարիսա Գևորգյանի, Արման, Անահիտ և Ջուլիետրա Միմոնյանների՝ բնակելի տարածության օգտագործման իրավունքը փոխհատուցմանը դադարեցնելու և վրարելու պահանջի մասին և հակընդդեմ հայցի՝ Միխայել Միմոնյանի սեփականության իրավունքի գրանցման վկայականը մասնակի անվավեր ճանաչելու, ձեռքբերման վաղեմության ուժով փաստացի տիրապետումներ գրառեցրած հողամասի և շինության նկարները սեփականության իրավունքը ճանաչելու պահանջի մասին թիվ 3-1451(ՎԴ) գործով Վճռաբեկ դատարանի 10.10.2007 թվականի որոշումը, ինչպես նաև Լենա Արզարյանն ընդդեմ Մկրտիչ Համբարձումյանի, Գրիգոր Գորոյանի՝ ձեռքբերման վաղեմության ուժով գույքի նկարները սեփականության իրավունքը ճանաչելու պահանջի մասին և հակընդդեմ հայցի՝ Մկրտիչ Համբարձումյանի ընդդեմ Լենա Արզարյանի, Անահիտ Գևորգյանի և Գոռ Մահրեայանի՝ ապօրինի գրառեցրած տարածքից վրարելու և հաշվառումից հանելու պահանջի մասին թիվ 3-342 (ՎԴ) գործով Վճռաբեկ դատարանի 23.05.2008 թվականի որոշումը):

Դատարանը հայցի բավարարման և հակընդդեմ հայցի մերժման հիմքում դրել է այն հանգամանքը, որ գործում առկա նյութերով հաստատվում է Պարզև Հարությունյանի կողմից ձեռքբերման վաղեմության ուժով սեփականության իրավունքի ձեռքբերումը, ինչպես նաև Շողիկ Կարապետյանի, Միշա, Արթուր և Արտակ Բեյրությունների իրավանախորդի կողմից վեճի առարկա գույքի նկատմամբ սեփականության իրավունքից հրաժարվելու փաստը:

Վերաքննիչ դատարանը Դատարանի վճռի բեկանման հիմքում դրել է այն հանգամանքը, որ գործում առկա նյութերով հաստատվում է Շողիկ Կարապետյանի, Միշա, Արթուր և Արտակ Բեյրությունների կողմից վեճի առարկա գույքի նկատմամբ սեփականության իրավունքից չհրաժարվելու հանգամանքը, ինչպես նաև այն հանգամանքը, որ Պարզև Հարությունյանը չի հիմնավորել իր կողմից գույքը 10 տարի անընդմեջ տիրապետելու փաստը:

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ Վերաքննիչ դատարանը չի իրականացրել քաղաքացիական գործում առկա ապացույցների պատշաճ գնահատում, մասնավորապես՝ Հայկական ԽՍՀ Երևան քաղաքի Մաշտոցի շրջգործկոմի թիվ 1 թաղային կոմիտեի 04.04.1991 թվականին տրված տեղեկանքի, ՀՀ ոստիկանության Մաշտոցի անձնագրային բաժանմունքի 13.07.2010 թվականի թիվ 42-136/ա տեղեկանքի, թաղային կոմիտեի նախագահի 05.10.2009 թվականին տրված տեղեկանքի, ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի Դավթաշեն տարածքային ստորաբաժանման ղեկավարի 28.10.2009 թվականի ԱԳ-5582 գրության, Հայկ Բարսեղյանի և Եպրաքսի Ավետիսյանի 14.03.2010 թվականի հայտարարությունների, 29.08.1973 և 28.08.1974 թվականների թիվ 320218 և 052352 ապահովագրական վկայագրերի պատշաճ գնահատում:

Նշված ապացույցներով հաստատվում են այն փաստական հանգամանքը, որ Պարզև Հարությունյանը մշտական բնակվում է Երևանի Եղիազարյան փողոցի թիվ 1 բնակարանում 1968 թվականից, որտեղ և հաշվառվել է 04.01.1983 թվականին:

Այսպիսով՝ նշված փաստական հանգամանքներով հերքվում է Վերաքննիչ դատարանի այն եզրահանգումը, որ Պարզև Հարությունյանը վիճելի գույքը չի

տիրապետել ավելի քան 10 տարի անընդմեջ:

Պարզև Հարությունյանը գույքը տիրապետել է բացահայտ, այն չի տիրապետել որևէ անձից գաղտնի: Այսինքն՝ տվյալ դեպքում **առկա է նաև գույքի բացահայտ տիրապետման փաստը:**

Ինչ վերաբերում է Վերաքննիչ դատարանի այն եզրահանգմանը, համաձայն որի գործով չի հիմնավորվել վեճի առարկա գույքի տիրապետման բարեխղճությունը, ինչպես նաև որպես սեփական գույք տիրապետելու փաստը, ապա Վճռաբեկ դատարանը գտնում է, որ այդ հարցը Վերաքննիչ դատարանի կողմից պատշաճ քննության առարկա չի դարձվել: Մասնավորապես, Վերաքննիչ դատարանը պատշաճ գնահատման առարկա չի դարձրել այն հանգամանքը, որ Բալաբեկ Բեյբոյոյանը 1968 թվականին Պարզև Հարությունյանին Երևանի Եղիազարյան փողոցի թիվ 1 հասցում հատկացրել է 63,7 քմ մակերեսով հողամաս, առանձին բնակելի տարածք, վերջինս հաշվառվել ու բնակվել է նշված տարածքում, կառուցել է նոր շինություններ, բացի այդ, սույն գործում առկա են 29.08.1973 և 28.08.1974 թվականների թիվ 320218 և 052352 ապահովագրական վկայագրեր:

Հիմք ընդունելով վերոգրյալը՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ գործը պետք է ուղարկել նոր քննության վեճի առարկա գույքի տիրապետման բարեխղճության հարցը գործում առկա բոլոր ապացույցների բազմակողմանի և պատշաճ քննության նպատակով:

Այսպիսով, վճռաբեկ բողոքի հիմքի առկայությունը Վճռաբեկ դատարանը դիտում է բավարար՝ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 227-րդ և 228-րդ հոդվածների ուժով Վերաքննիչ դատարանի որոշումը բեկանելու համար:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 240-241²-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

ՈՐՈՇԵՑ

1. Վճռաբեկ բողոքը բավարարել մասնակիորեն: Բեկանել ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 29.10.2010 թվականի որոշումը և գործն ուղարկել Երևանի Աջափնյակ և Դավթաշեն վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին աստիանի դատարան՝ նոր քննության:

2. Պետական տուրքի բաշխման հարցին անդրադառնալ գործի նոր քննության ընթացքում:

3. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

*ՆԱԽԱԳԱՀՈՂ՝ ստորագրություն
ԴԱՏԱՎՈՐՆԵՐ՝ ստորագրություններ*

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական Քաղաքացիական գործ թիվ ԳԴ1/0145/02/10
դատարանի որոշում 2011թ.
Քաղաքացիական գործ թիվ ԳԴ1/0145/02/10
Նախագահող դատավոր՝ Գ. Մատինյան
Դատավորներ՝ Լ. Գրիգորյան
Ա. Թումանյան

ՈՐՈՇՈՒՄ

ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քաղաքացիական և վարչական պալատը (այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

նախագահությամբ

մասնակցությամբ դատավորներ

Ե. ԽՈՒՆԴԿԱՐՅԱՆԻ

Տ. ՊԵՏՐՈՍՅԱՆԻ

Վ. ԱԲԵԼՅԱՆԻ

Ս. ԱՆՏՈՆՅԱՆԻ

Վ. ԱՎԱՆԵՍՅԱՆԻ

Ա. ԲԱՐՍԵՂՅԱՆԻ

Մ. ԴՐՄԵՅԱՆԻ

Գ. ՀԱԿՈԲՅԱՆԻ

Է. ՀԱՅՐԻՅԱՆԻ

Ե. ՍՈՂՈՄՈՆՅԱՆԻ

2011 թվականի հուլիսի 29-ին

դռնբաց դատական նիստում, քննելով Սվետլանա Հովակիմյանի վճռաբեկ բողոքը ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 28.12.2010 թվականի որոշման դեմ՝ ըստ հայցի Լյուդմիլա Յվետկովայի ընդդեմ Սվետլանա Հովակիմյանի, երրորդ անձինք Վարդենիսի քաղաքապետարանի (այսուհետ՝ Քաղաքապետարան), ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի Վարդենիսի տարածքային ստորաբաժանման (այսուհետ՝ Կադաստր)՝ սեփականության իրավունքի գրանցումն անվավեր ճանաչելու, դրա հիմքում դրված փաստաթղթերն առոչինչ ճանաչելու և սեփականության իրավունքը ճանաչելու պահանջների մասին, և Սվետլանա Հովակիմյանի հակընդդեմ հայցի ընդդեմ Լյուդմիլա Յվետկովայի՝ ձեռքբերման վաղեմության ուժով սեփականության իրավունքը ճանաչելու պահանջի մասին,

ՊԱՐԶԵՑ

1. Գործի դատավարական նախապատմությունը

Դիմելով դատարան՝ Լյուդմիլա Յվետևոյան պահանջել է առոչինչ ձանաչել Վարդենիսի քաղաքապետի 16.07.1997 թվականի թիվ 34 որոշումը, ՀՀ կառավարությանն առընթեր «Հայրենակրոնատ ՀՄ» տեխնիկական գույքագրման վարչության Վարդենիսի բյուրոյի 30.07.1997 թվականի որոշումը, անվավեր ձանաչել Վարդենիս քաղաքի Լեոնագործների 26-րդ շենքի թիվ 19 բնակարանի նկատմամբ Սվետլանա Հովակիմյանի անվամբ 29.07.2005 թվականին կատարված սեփականության իրավունքի պետական գրանցումը և նշված բնակարանի նկատմամբ ձանաչել սեփականության իրավունքը:

Հակընդդեմ հայցով դիմելով դատարան՝ Սվետլանա Հովակիմյանը պահանջել է ձեռքբերման վաղեմության ուժով ձանաչել սեփականության իրավունքը Վարդենիս քաղաքի Լեոնագործների 26-րդ շենքի թիվ 19 բնակարանի նկատմամբ:

ՀՀ Գեղարքունիքի մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի (այսուհետ՝ Դատարան) 25.10.2010 թվականի վճռով հայցը բավարարվել է, իսկ հակընդդեմ հայցը՝ մերժվել:

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի (այսուհետ՝ Վերաքննիչ դատարան) 28.12.2010 թվականի որոշմամբ Սվետլանա Հովակիմյանի վերաքննիչ բողոքը մերժվել է, և Դատարանի 25.10.2010 թվականի վճիռը թողնվել է օրինական ուժի մեջ:

Սույն գործով վճռաբեկ բողոք է ներկայացրել Սվետլանա Հովակիմյանը:
Վճռաբեկ բողոքի պատասխան չի ներկայացվել:

2. Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը

Սույն վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

Վերաքննիչ դատարանը խախտել է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 51-րդ, 53-րդ հոդվածների, 131-րդ հոդվածի 1-ին կետի 1-ին ենթակետի, 132-րդ հոդվածի 1-ին կետի 4-րդ պարբերության պահանջները, ինչի արդյունքում չի կիրառել ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 187-րդ և 280-րդ հոդվածները, որոնք պետք է կիրառվեին:

Բողոք բերած անձը նշված պնդումը պարզապես անհիմն է հետևյալ փաստարկներով.

Վերաքննիչ դատարանը հաշվի չի առել, որ ՀՀ Վարդենիսի շրջանային խորհրդի գործադիր կոմիտեի 06.02.1996 թվականի թիվ 1/7 որոշմամբ վիճելի բնակարանը հատկացվել է բողոք բերած անձին, որից հետո վերջինս վերանորոգել է այն, դրա նկատմամբ գրանցել է իր սեփականության իրավունքը, մինչ օրս՝ շուրջ 15 տարի իր ընտանիքի անդամների հետ միասին բնակվում է այդտեղ՝ կատարելով դրա հետ կապված բոլոր վճարումները: Այսինքն՝ բողոք բերած անձն ավելի քան տասը տարի բացահայտ, բարեխիղճ և անընդմեջ որպես սեփական գույք տիրապետում և օգտագործում է վիճելի բնակարանը, իսկ Լյուդմիլա Յվետևոյան այդ տարիների ընթացքում նշված բնակարանի նկատմամբ որևէ հավակնություն չի ցուցաբերել: Փաստորեն, Վերաքննիչ դատարանը չի հետազոտել և գնահատել բողոք բերած անձի ներկայացրած ապացույցները և չի մատնանշել այդ ապացույցները մերժելու հիմքերը:

Վերագրյալի հիման վրա բողոք բերած անձը պահանջել է բեկանել Վերաքննիչ դատարանի 28.12.2010 թվականի որոշումը և այն փոփոխել:

3. Վճռաբեկ բողոքի քննության համար նշանակություն ունեցող փաստերը

Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1) 14.09.1995 թվականի սեփականության վկայագրի համաձայն՝ Վարդենիս քաղաքի Լեոնագործների 26-րդ շենքի թիվ 19 բնակարանի նկատմամբ ՀՀ Վարդենիսի շրջանային խորհրդի գործադիր կոմիտեի 15.08.1995 թվականի թիվ 7/5 որոշման հիման վրա կատարվել է Լյուդմիլա Ազարյանի սեփականության իրավունքի պետական գրանցում (**հատոր 1-ին, գ.թ. 17**):

2) ՀՀ Վարդենիսի շրջանային խորհրդի գործադիր կոմիտեի 06.02.1996 թվականի թիվ 1/7 որոշման համաձայն՝ Վարդենիս քաղաքի Լեոնագործների 26-րդ շենքի թիվ 19 բնակարանը հատկացվել է Սվետլանա Հովակիմյանին (**հատոր 1-ին, գ.թ. 83-84**):

3) Վարդենիսի քաղաքապետի 16.07.1997 թվականի թիվ 34 որոշման և կից ցուցակի համաձայն՝ Վարդենիս քաղաքի Լեոնագործների 26-րդ շենքի թիվ 19 բնակարանը սեփականաշնորհվել է Սվետլանա Հովակիմյանին, որի հիման վրա 30.07.1997 թվականին ՀՀ կառավարությանն առընթեր «Հայբնակկոմսոնտ ՀՄ» տեխնիկական գույքագրման վարչության Վարդենիսի բյուրոյի կողմից կատարվել է Սվետլանա Հովակիմյանի սեփականության իրավունքի պետական գրանցումը (**հատոր 1-ին, գ.թ. 74-75, 79-82**):

4) Ըստ 29.07.2005 թվականի անշարժ գույքի սեփականության իրավունքի գրանցման վկայականի՝ Սվետլանա Հովակիմյանի սեփականության իրավունքը Վարդենիս քաղաքի Լեոնագործների 26-րդ շենքի թիվ 19 բնակարանի նկատմամբ գրանցվել է գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման միասնական թիվ 4-8 մատյանի 2272 համարի տակ (**հատոր 1-ին, գ.թ. 71-73**):

5) Վարդենիսի քաղաքապետի 18.10.2010 թվականի տեղեկանքի համաձայն՝ Սվետլանա Հովակիմյանը բնակվում է Վարդենիս քաղաքի Խ. Ստեփանյան (նախկինում Լեոնագործների) 26-րդ շենքի թիվ 19 բնակարանում (**հատոր 1-ին, գ.թ. 60**):

6) Գործում առկա 13.09.2009 թվականի սխեմայի և 11.06.1998 թվականի, 17.11.1998 թվականի, 17.12.1998 թվականի, 1999 թվականի վճարման անդորրագրերի համաձայն՝ Սվետլանա Հովակիմյանը Վարդենիս քաղաքի Լեոնագործների 26-րդ շենքի թիվ 19 հասցեի էլեկտրաէներգիայի մատակարարման բաժանորդն է և վճարել է էլեկտրաէներգիայի վարձը (**հատոր 1-ին, գ.թ. 67-69**):

4. Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը

Քննելով վճռաբեկ բողոքը նշված հիմքի սահմաններում՝ Վճռաբեկ դատարանը գրնում է, որ վճռաբեկ բողոքը հիմնավոր է հեղուկալ պարձառաբանությամբ.

«ՀՀ քաղաքացիական օրենսգիրքը գործողության մեջ դնելու մասին» ՀՀ օրենքի 12-րդ հոդվածի համաձայն՝ օրենսգրքի 187-րդ հոդվածի գործողությունը տարածվում է նաև այն դեպքերի վրա, երբ գույքի տիրապետումն սկսվել է 1999 թվականի հունվարի

1-ից առաջ և շարունակվում է օրենսգիրքը գործողության մեջ դնելու պահին:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 172-րդ հոդվածի 5-րդ կետի համաձայն՝ նույն օրենսգրքով նախատեսված դեպքերում և կարգով՝ անձը կարող է սեփականության իրավունք ձեռք բերել սեփականատեր չունեցող գույքի նկատմամբ, ինչպես նաև այն գույքի, որի սեփականատերն անհայտ է, կամ որից սեփականատերը հրաժարվել է, կամ որի նկատմամբ սեփականության իրավունքը նա կորցրել է օրենքով նախատեսված այլ հիմքերով:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 280-րդ հոդվածի համաձայն՝ քաղաքացին կամ իրավաբանական անձը կարող է հրաժարվել իրեն պատկանող գույքի սեփականության իրավունքից՝ այդ մասին գրավոր հայտարարելով կամ այնպիսի գործողություններ կատարելով, որոնք ակնհայտ վկայում են գույքի տիրապետումից, օգտագործումից և տնօրինումից նրա մեկուսացման մասին՝ առանց այդ գույքի նկատմամբ որևէ իրավունք պահպանելու մտադրության:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 187-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ քաղաքացին կամ իրավաբանական անձը, որն անշարժ գույքի սեփականատեր չէ, սակայն այն տասը տարվա ընթացքում բարեխղճորեն, բացահայտ և անընդմեջ տիրապետում է որպես սեփական գույք, այդ գույքի նկատմամբ ձեռք է բերում սեփականության իրավունք (ձեռքբերման վաղեմություն):

Վերոնշյալ հոդվածների համադրումից հետևում է, որ ձեռքբերման վաղեմությունն իրենից ներկայացնում է օրենքով նախատեսված որոշակի ժամկետի լրանալու և որոշակի պայմանների վրա հասնելու ուժով մեկ անձի կողմից սեփականության իրավունքի ձեռքբերման, իսկ մյուսի կողմից այդ իրավունքի դադարման միջոց:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 187-րդ հոդվածի 1-ին կետի վերլուծությունից հետևում է, որ ձեռքբերման վաղեմության ուժով սեփականության իրավունքի ձեռքբերման համար անհրաժեշտ է մի շարք վավերապայմանների միաժամանակյա առկայությունը: Մասնավորապես դրանք են՝

1. տիրապետումը պետք է լինի բարեխիղճ: Տիրապետման բարեխղճությունը գնահատվում է գույքն անձի փաստացի տիրապետմանն անցնելիս: Գույքն անձի փաստացի տիրապետմանը պետք է անցնի առանց որևէ բռնության գործադրման: Տիրապետողի մոտ պետք է առկա լինի այն համոզմունքը, որ նա գույքը ձեռք է բերում օրինական հիմքերով: Տիրապետումը պետք է հիմնված լինի այնպիսի փաստի վրա, որը տիրապետողին կարող է տալ բավարար հիմքեր ենթադրելու, որ նա այդ գույքը ձեռք է բերում և տիրապետելու է որպես սեփականություն,

2. փաստացի տիրապետողը գույքը պետք է տիրապետի որպես սեփականը, այսինքն՝ գույքը փաստացի տիրապետողը պետք է մասնակցի գույքի կառավարմանը, հոգ տանի դրա պահպանման համար, ինչպես իր սեփական գույքի դեպքում: Անձը պետք է գույքը տիրապետի ինչպես սեփականը նաև երրորդ անձանց հետ հարաբերություններում,

3. տիրապետումը պետք է լինի 10 տարի և անընդմեջ: Այսինքն՝ 10 տարվա ընթացքում գույքի տիրապետումը չպետք է ընդհատվի: Տիրապետումը կարող է ընդհատվել կամ տիրապետողի կամքով, երբ նա հրաժարվում է գույքի հետագա տիրապետումից (գույքը դուրս է գալիս նրա տիրապետումից), կամ գույքի սեփականատիրոջ կամ այլ անձանց գործողություններով, որոնք ուղղված են գույքը

վերադարձնելուն,

4. տիրապետումը պետք է լինի բացահայտ, այսինքն՝ փաստացի տիրապետողը գույքը չպետք է տիրապետի երրորդ անձանցից գաղտնի եղանակով (*յրեն ըար հայցի Մարուսյա Աբրահամյանի, Ռուբիկ Միմոնյանի ընդդեմ Միխայել Միմոնյանի, Զուլիերա Հակոբջանյանի, Արթուր Միմոնյանի, Լարիսա Գևորգյանի, Արման, Անահիտ և Զուլիերա Միմոնյանների՝ բնակելի տարածության օգտագործման իրավունքը փոխհատուցմամբ դադարեցնելու և վտարելու պահանջի մասին և Միխայել Միմոնյանի հակընդդեմ հայցի՝ սեփականության իրավունքի գրանցման վկայականը մասնակի անվավեր ճանաչելու, ձեռքբերման վաղեմության ուժով փաստացի տիրապետմամբ զբաղեցրած հողամասի և շինության նկատմամբ սեփականության իրավունքը ճանաչելու պահանջների մասին թիվ 3-1451(ՎԴ) գործով ՀՀ վճռաբեկ դատարանի քաղաքացիական պալատի 10.10.2007 թվականի որոշումը):*

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 220-րդ հոդվածի 2-րդ կետի 5-րդ ենթակետի համաձայն՝ վերաքննիչ դատարանի որոշման մեջ պետք է նշվեն գործով պարզված և վերաքննիչ բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը, ինչպես նաև այն օրենքը, Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերը և այլ իրավական ակտերը, որոնցով ղեկավարվել է վերաքննիչ դատարանը որոշում կայացնելիս:

Վճռաբեկ դատարանը նախկինում կայացրած իր որոշումներում անդրադարձել է նաև դատական ակտերի իրավական հիմնավորվածության հարցին:

Մասնավորապես, Վճռաբեկ դատարանը նշել է, որ յուրաքանչյուր դեպքում դատարանը պարտավոր է տալ որոշման իրավական հիմնավորումը:

Որոշման իրավական հիմնավորումը կայանում է հաստատված փաստերի և իրավահարաբերությունների նկատմամբ իրավունքի համապատասխան նորմի կամ նորմերի ընտրության և կիրառման մեջ, այն նորմի (նորմերի), որի հիման վրա դատարանը եզրակացություն է անում վիճելի իրավահարաբերության առկայության կամ բացակայության մասին:

Որոշման մեջ ոչ միայն պետք է ցույց տալ նորմատիվ ակտի այս կամ այն հոդվածը, որում ամրագրված է կիրառման ենթակա նորմը, այլև պետք է պատճառաբանվի, թե հատկապես ինչու պետք է կիրառվի հենց այդ նորմը:

Որոշման իրավական հիմնավորումը բնութագրում է ինչպես դատարանի, այնպես էլ նրա որոշման իրավակիրառ գործառույթը, ընդգծում դատական գործունեության և դատական որոշման օրինականությունը:

Միաժամանակ Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ դատարանը պետք է նշի ոչ միայն այն ապացույցները, որոնց վրա հիմնվել է վիճելի փաստերը հաստատելիս և արդյունքում որոշում կայացնելիս, այլև պետք է պատճառաբանի, թե ինչու է կողմի ներկայացրած այս կամ այն ապացույցը մերժվում: Միայն նման հիմնավորումը կարող է վկայել գործի բազմակողմանի հետազոտության մասին (*յրեն ըար հայցի Ռազմիկ Մարությանի ընդդեմ Սյրեփան և Անահիտ Մարությանների, ՀՀ Կենտրոն նուրարական գրասենյակի՝ ժառանգական գույքի ընդունման փաստի ճանաչման և ըար օրենքի ժառանգության իրավունքի վկայագիրը մասնակի անվավեր ճանաչելու պահանջների մասին և Սյրեփան և Անահիտ Մարությանների հակընդդեմ հայցի՝ սեփականության իրավունքով պարկանոթ բնակելի տան և հողամասի բաժանման պահանջի մասին ՀՀ վճռաբեկ դատարանի 27.03.2008 թվականի թիվ 3-54 (ՎԴ) որոշումը):*

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 53-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ դատարանը յուրաքանչյուր ապացույց գնահատում է գործում եղած բոլոր ապացույցների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտության վրա հիմնված ներքին համոզմամբ:

Սույն գործով Վերաքննիչ դատարանը պատճառաբանել է, որ Լյուդմիլա Ցվետկովան, հանդիսանալով վիճելի բնակարանի սեփականատերը, չի հրաժարվել իր գույքից, իսկ նշված բնակարանը Սվետլանա Հովակիմյանին է հանձնվել ոչ թե օրինական հիմքերով և համապատասխան լիազորություններ ունեցող մարմնի կողմից կայացված որոշման հիման վրա, այլ Վարդենիսի քաղաքապետի կողմից կատարված անօրինականության արդյունքում, որը չհանդիսանալով նշված գույքի սեփականատեր՝ օտարել է Լյուդմիլա Ցվետկովային արդեն իսկ սեփականության իրավունքով պատկանող բնակարանը Սվետլանա Հովակիմյանին:

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ ձեռքբերման վաղեմության ուժով սեփականության իրավունքի ճանաչմանը հավակնելիս գույքի տիրապետման բարեխղճությունն առկա է, եթե այդ գույքը **տիրապետողն** այն համոզմունքն ունի, որ գույքը **ձեռք է բերում օրինական հիմքերով**: Ընդ որում, տիրապետումը պետք է հիմնված լինի այնպիսի փաստի վրա, որը **տիրապետողին** կարող է տալ բավարար հիմքեր ենթադրելու, որ նա այդ գույքը ձեռք է բերում և տիրապետելու է որպես սեփականություն: Այսինքն՝ անկախ այն հանգամանքից, թե գույքն այլ անձի տիրապետմանն է անցել օրենքով սահմանված պահանջների պահպանմամբ կամ խախտմամբ, էական է այն հանգամանքը, որ տիրապետողը ենթադրի, որ գույքի տիրապետումն իրեն անցել է օրինական հիմքով:

Միաժամանակ Վճռաբեկ դատարանը հարկ է համարում նշել, որ Մարդու իրավունքների եվրոպական դատարանը տվել է Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին եվրոպական կոնվենցիայի 1-ին արձանագրության 1-ին հոդվածի իմաստով «սեփականություն» հասկացության ընդլայնված մեկնաբանություն՝ օգտագործելով «օրինական սպասելիք» հասկացությունը:

Մասնավորապես, Եվրոպական դատարանն արձանագրել է, որ պահանջի իրավունքն ստանում է «սեփականություն» որակումն այն պահից, երբ անձն ունենում է «օրինական սպասելիք» իր իրավունքներն իրականացնելու համար (*լրեն Պրեսունս Կոմյանիսա Նալիեռան ՍՍ ընդդեմ Բելգիայի թիվ 17849/91 գանգաբով Եվրոպական դատարանի 20.11.1995 թվականի վճիռը*): «Օրինական սպասելիք»-ն առկա է այն բոլոր դեպքերում, երբ անձինք ունեն բավականաչափ իրավական հիմքեր վստահելու այն իրավական ակտերի իրավաչափ լինելուն, որոնք ուղղված են իրենց համար որոշակի իրավունքներ առաջացնելուն, անձի մոտ ստեղծում են իրավաչափ իրավական ակտի սպավորություն և վերաբերում են սեփականության իրավունքին (*լրեն Կոպեցկին ընդդեմ Սլովակիայի թիվ 44912/98 գանգաբով Եվրոպական դատարանի 28.09.2004 թվականի վճիռը*):

Նման պայմաններում Վճռաբեկ դատարանը գտնում է, որ ՀՀ Վարդենիսի շրջանային խորհրդի գործադիր կոմիտեի 06.02.1996 թվականի թիվ 1/7 որոշմամբ Վարդենիս քաղաքի Լեոնագործների 26-րդ շենքի թիվ 19 բնակարանը Սվետլանա Հովակիմյանին հատկացմամբ, հետագայում այն Վարդենիսի քաղաքապետի 16.07.1997 թվականի թիվ 34 որոշմամբ սեփականաշնորհմամբ և տվյալ բնակարանի նկատմամբ սեփականության իրավունքի գրանցմամբ՝ Սվետլանա Հովակիմյանի մոտ

ծագել է «օրինական սպասելիք»-ի առկայություն: Այսինքն՝ նա ունեցել է բավարար իրավական հիմքեր վստահելու վերը նշված ակտերի իրավաչափությանը, որոնք ուղղվել են նրա համար որոշակի իրավունքներ առաջացնելուն, նրա մոտ ստեղծել են իրավաչափ իրավական ակտի տպավորություն, հետևաբար վեճի առարկա գույքի տիրապետման բարեխղճությունն առկա է:

Մինչդեռ, Վերաքննիչ դատարանը սույն գործով կարևորել է վիճելի գույքը Վարդենիսի քաղաքապետի կողմից ոչ օրինական հիմքով օտարելու փաստը և այն բավարար համարել՝ ձեռքբերման վաղեմության ուժով սեփականության իրավունքի բացակայությունը հաստատված համարելու համար՝ չանդրադատնալով գույքը **տիրապետողի՝ բողոք բերած անձի տիրապետման բարեխղճության**, ինչպես նաև ձեռքբերման վաղեմության ուժով սեփականության իրավունքի ճանաչման մյուս վավերապայմանների առկայության հարցին: Մասնավորապես, Վերաքննիչ դատարանը գնահատման առարկա չի դարձրել այն հանգամանքները, որ ՀՀ Վարդենիսի շրջանային խորհրդի գործադիր կոմիտեի 06.02.1996 թվականի թիվ 1/7 որոշմամբ Վարդենիս քաղաքի Լեոնագործների 26-րդ շենքի թիվ 19 բնակարանը հատկացվել է Սվետլանա Հովակիմյանին, իսկ Վարդենիսի քաղաքապետի 16.07.1997 թվականի թիվ 34 որոշմամբ այն սեփականաշնորհվել է: Դրա հիման վրա 30.07.1997 թվականին կատարվել է Սվետլանա Հովակիմյանի սեփականության իրավունքի պետական գրանցում, իսկ 29.07.2005 թվականին նրան տրվել է անշարժ գույքի սեփականության իրավունքի գրանցման նոր վկայական: Ընդ որում, Սվետլանա Հովակիմյանը բնակվում է նշված բնակարանում, այդ հասցեի էլեկտրաէներգիայի մատակարարման բաժանորդն է և վճարել է էլեկտրաէներգիայի վարձը:

Այսպիսով, վճարել բողոքի հիմքի առկայությունը Վճարել դատարանը բավարար է համարում՝ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 227-228-րդ հոդվածների ուժով Վերաքննիչ դատարանի որոշումը բեկանելու համար:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 240-241²-րդ հոդվածներով՝ Վճարել դատարանը

ՈՐՈՇԵՑ

1. Վճարել բողոքը բավարարել մասնակիորեն: Բեկանել ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 28.12.2010 թվականի որոշումը և գործն ուղարկել ՀՀ Գեղարքունիքի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարան՝ նոր քննության:

2. Վճարել բողոքի համար սահմանված և Վճարել դատարանի 02.03.2011 թվականի որոշմամբ հետաձգված պետական տուրքի բաշխման հարցին անդրադատնալ գործի նոր քննության ընթացքում:

3. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

*ՆԱԽԱԳԱՀՈՂ՝ սպորազրույթություն
ԴԱՏԱՎՈՐՆԵՐ՝ սպորազրույթություններ*

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական
դատարանի որոշում 2011թ.

Քաղաքացիական գործ թիվ ԱՎԴ/0235/02/10

Քաղաքացիական գործ թիվ ԱՎԴ/0235/02/10
Նախագահող դատավոր՝ Կ.Զիլինգարյան
Դատավորներ՝ Ա.Խատատյան
Ա.Պետրոսյան

ՈՐՈՇՈՒՄ ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քաղաքացիական և վարչական
պալատը (այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

*նախագահությամբ
մասնակցությամբ դատավորներ*

Ե. ԽՈՒՆԴԿԱՐՅԱՆԻ
Է. ՀԱՅՐԻՅԱՆԻ
Վ. ԱԲԵԼՅԱՆԻ
Ս. ԱՆՏՈՆՅԱՆԻ
Վ. ԱՎԱՆԵՍՅԱՆԻ
Ա. ԲԱՐՄԵՂՅԱՆԻ
Մ. ԴՐՄԵՅԱՆԻ
Գ. ՀԱԿՈԲՅԱՆԻ
Տ. ՊԵՏՐՈՍՅԱՆԻ
Ե. ՍՈՂՈՄՈՆՅԱՆԻ

2011 թվականի հուլիսի 29-ին

դռնբաց դատական նիստում, քննելով Վարդիթեր Հովհաննիսյանի վճռաբեկ
բողոքը ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 30.12.2010 թվականի որոշման
դեմ՝ ըստ Վարդիթեր Հովհաննիսյանի հայցի ընդդեմ ՀՀ Արարատի մարզի
Արտաշատի քաղաքապետարանի, ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի
կադաստրի պետական կոմիտեի Արտաշատի տարածքային ստորաբաժանման,
Երրորդ անձ Մարտին Պետրոսյանի՝ ձեռքբերման վաղեմության ուժով սեփականության
իրավունքը ճանաչելու և սեփականության իրավունքի պետական գրանցումն անվավեր
ճանաչելու պահանջների մասին, և ըստ Մարտին Պետրոսյանի հայցի ընդդեմ
Վարդիթեր Հովհաննիսյանի՝ հողամասն ուրիշի ապօրինի տիրապետումից հետ
վերադարձնելու պահանջի մասին,

ՊԱՐԶԵՑ

1. Գործի դատավարական նախապատմությունը

Դիմելով դատարան՝ Վարդիթեր Հովհաննիսյանը պահանջել է ձեռքբերման
վաղեմության ուժով ճանաչել սեփականության իրավունքն Արտաշատ քաղաքի 03-

001-0003-0013 կադաստրային համարը կրող 570քմ մակերեսով տնամերձ հողամասի նկատմամբ ժառանգության հիմքով և անվավեր ճանաչել Մարտին Պետրոսյանի անվամբ 14.12.2009 թվականին 0,057հա տնամերձ հողամասի նկատմամբ կատարված պետական գրանցումը:

Դիմելով դատարան՝ Մարտին Պետրոսյանը պահանջել է Վարդիթեր Հովհաննիսյանի ապօրինի տիրապետումից հետ վերադարձնել օրենքով սահմանված կարգով իրեն հատկացված սեփականության իրավունքով պատկանող Արտաշատի Կամոյի 14ա հասցեում գտնվող 570քմ տնամերձ հողամասը:

ՀՀ Արարատի և Վայոց ձորի մարզերի ընդհանուր իրավասության դատարանի 09.07.2010 թվականի որոշմամբ նշված քաղաքացիական գործերը միացվել են մեկ վարույթում:

ՀՀ Արարատի և Վայոց ձորի մարզերի ընդհանուր իրավասության դատարանի (այսուհետ՝ Դատարան) 14.09.2010 թվականի վճռով Վարդիթեր Հովհաննիսյանի հայցը բավարարվել է, իսկ Մարտին Պետրոսյանի հայցը՝ մերժվել:

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի (այսուհետ՝ Վերաքննիչ դատարան) 30.12.2010 թվականի որոշմամբ Մարտին Պետրոսյանի և Արտաշատի քաղաքապետարանի վերաքննիչ բողոքը բավարարվել է՝ բեկանվել է Դատարանի 14.09.2010 թվականի վճիռը և փոփոխվել է՝ Վարդիթեր Հովհաննիսյանի հայցը մերժվել է, իսկ Մարտին Պետրոսյանի հայցը՝ բավարարվել:

Սույն գործով վճռաբեկ բողոք է ներկայացրել Վարդիթեր Հովհաննիսյանը:

Վճռաբեկ բողոքի պատասխան է ներկայացրել Մարտին Պետրոսյանը:

2. Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը

Սույն վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

Վերաքննիչ դատարանը խախտել է ՀՀ դատական օրենսգրքի 15-րդ հոդվածի 4-րդ մասը, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 51-րդ հոդվածի 2-րդ կետը, 53-րդ, 209-րդ, 211-րդ հոդվածները, 221-րդ հոդվածի 1-ին կետի 1-ին ենթակետը, որի արդյունքում սխալ է մեկնաբանել ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 187-րդ, 280-րդ հոդվածները:

Բողոք բերած անձը նշված պնդումը պարզապես անհիմն է հետևյալ փաստարկներով.

Վերաքննիչ դատարանը բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ չի գնահատել գործում առկա ապացույցները, պատշաճ իրավական գնահատական չի տվել այն հանգամանքին, որ Արտաշատի «Նորվզու» պայմանական անունով թաղամասից 400քմ մակերեսով թիվ 40 հողակտորը հատկացվել է Հրանտ Մանուկյանին, որն ընտանիքի հետ, մասնավորապես՝ Վարդիթեր Հովհաննիսյանի հետ 1995 թվականից բարեխղճորեն, բացահայտ և անընդմեջ տիրապետել է այն, տնկել է պտղատու ծառեր, հոգացել է դրանց պահպանման խնդիրները, կառուցել է շինություն, ինչի վերաբերյալ դատարանին են ներկայացվել գրավոր հայտարարություններ: Նշված ապացույցներն անտեսվել է Վերաքննիչ դատարանի կողմից:

Վերաքննիչ դատարանն անտեսել է նաև այն հանգամանքը, որ 1992 թվականին Մարտին Պետրոսյանին հատկացված հողամասի նկատմամբ իրավունքի պետական գրանցման նպատակով վերջինս դիմել է ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի Արտաշատի տարածքային ստորաբաժանմանը շուրջ

18 տարի անց և այդ ժամանակահատվածում որևէ գործողություն չի իրականացվել նշված հողամասի նկատմամբ իրավունքը պահպանելու կապակցությամբ:

Վերոգրյալի հիման վրա բողոք բերած անձը պահանջել է բեկանել Վերաքննիչ դատարանի 30.12.2010 թվականի որոշումը և փոփոխել՝ օրինական ուժ տալ Դատարանի 14.09.2010 թվականի վճիռն:

2.1. Վճռաբեկ բողոքի պատասխանի հիմնավորումները

Վերաքննիչ դատարանի կողմից որոշումը կայացվել է գործում ատկա բողոք ապացույցների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտության հիման վրա, հետևաբար բերված վճռաբեկ բողոքն անհիմն է և ենթակա է մերժման:

3. Վճռաբեկ բողոքի քննության համար նշանակություն ունեցող փաստերը

Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1. Վարդիթեր Հովհաննիսյանը և Հրանտ Մանուկյանն ամուսնացել են 18.01.1978 թվականին (հատոր 1-ին, գ.թ.31):

2. ՀՀ պատգամավորների Արտաշատի քաղաքային խորհրդի գործադիր կոմիտեի 16.04.1992 թվականի թիվ 16 արձանագրության որոշմամբ Արտաշատի Կամոյի փողոցի վրա նոր հատկացված տնամերձ հողերից 5-րդ հողակտորը հատկացվել է Մարտին Պետրոսյանին՝ անհատական բնակելի տուն կառուցելու համար և տրվել է Կամոյի փողոց թիվ 14ա փոստային հասցեն (հատոր 1-ին, գ.թ.72-74):

3. ՀՀ պատգամավորների Արտաշատի քաղաքային խորհրդի գործադիր կոմիտեի 31.05.1995 թվականի թիվ 14 արձանագրության որոշմամբ Արտաշատի «Նորվզու» պայմանական անունով թաղամասից հատկացվել է Հրանտ Մանուկյանին հողակտոր՝ բնակարանային շինարարության համար և 1995 թվականի հունիսին Հրանտ Մանուկյանին տրվել է թիվ 36 միասնական օրդերը՝ 400քմ մակերեսով թիվ 40 հողակտորի վերաբերյալ (հատոր 1-ին, գ.թ.15-16):

4. 14.12.2009 թվականի սեփականության իրավունքի գրանցման թիվ 2433202 վկայականի համաձայն՝ Արտաշատի Կամոյի փողոց թիվ 14ա հասցեում գտնվող 0,057հա մակերեսով տնամերձ հողամասի սեփականատերը Մարտին Պետրոսյանն է, հիմք՝ ՀՀ պատգամավորների Արտաշատի քաղաքային խորհրդի գործադիր կոմիտեի 16.04.1992 թվականի թիվ 16 արձանագրության որոշումը և հատակագիծը (հատոր 1-ին, գ.թ. 75-77):

5. Վարդիթեր Հովհաննիսյանին հասցեագրված Արտաշատի քաղաքապետի 14.04.2010 թվականի թիվ 025/166 գրությամբ հայտնվել է, որ Հրանտ Մանուկյանին «Նորվզու» պայմանական անունով թաղամասում հատկացված թիվ 36 միասնական օրդերում նշված թիվ 40 հողակտորը գոյություն չունի (հատոր 1-ին, գ.թ.36):

6. Արտաշատի քաղաքապետի խորհրդականի 24.06.2010 թվականի թիվ 025/173ա գրության համաձայն՝ «Արտաշատ քաղաքի Կամո փողոցի անվանակոչման մասին քաղաքապետարանում տեղեկություններ չեն պահպանվել, իսկ Ազատամարտիկների փողոցն անվանակոչվել է Արտաշատի քաղաքային խորհրդի գործկոմի 27.04.1995թ. թիվ 11 արձանագրության որոշմամբ»: «Թե ինչ պատճառով Մարտին Պետրոսյանի կողմից ժամանակին չի մուծվել նշված հողի հարկը, չենք կարող ձգբրիտ պատասխանել, հնարավոր է այն հանգամանքը, որ իրեն թույլ չեն տվել մշակել

հողակտորը: Հողի հարկը սկսած 1992թ ամբողջությամբ մուծվել է Մ.Պետրոսյանի կողմից 2009թ-ին: Քաղաքապետարանում պահպանվել է ինչպես 1992թ Կամոյի փողոցում հատկացված թվով 10 հողակտորների, այնպես էլ 1995թ հատկացված «Նորվզլու» պայմանական թաղամասի, հետագայում Ագատամարտիկների փողոցի թվով 36 հողակտորների հատակագծերը, որոնք գրությանը կից ներկայացվում է դատարան» (հատոր 1-ին, գ.թ. 83):

7. Մարինե Բաղայանը, Հոիփսիկ Ալոյանը, Հակոբ Արամյանը, Հենրիկ Հովհաննիսյանը երաշխավորագրերով հայտնել են, որ «Կամոյի փողոցի N 5 տնամերձ հողամասը տրվել է 1995թ Հրանտ Միքայելի Մանուկյանին: Մենք որպես այդ փողոցի բնակիչներ երաշխավորում ենք և հաստատում, որ այդ հողատարածքը տարիներ շարունակ մշակել, զբաղվել են ծառատնկմամբ, ամեցրել են խաղողի վազեր և բանջարեղեն» (հատոր 1-ին, գ.թ.17, 30):

8. 17.06.2010 թվականի դատական նիստի արձանագրության համաձայն՝ Դատարանը մերժել է տույն գործով երրորդ անձ Մարտին Պետրոսյանի ներկայացուցչի միջնորդությունը վկա հրավիրելու մասին (հատոր 2-րդ, գ.թ.61):

4. Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը

Քննելով վճռաբեկ բողոքը նշված հիմքի սահմաններում՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ այն հիմնավոր է հեղինակ պարձառաբանությամբ.

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 172-րդ հոդվածի 5-րդ կետի համաձայն՝ նույն օրենսգրքով նախատեսված դեպքերում և կարգով՝ անձը կարող է սեփականության իրավունք ձեռք բերել սեփականատեր չունեցող գույքի նկատմամբ, ինչպես նաև այն գույքի, որի սեփականատերն անհայտ է, կամ որից սեփականատերը հրաժարվել է, կամ որի նկատմամբ սեփականության իրավունքը նա կորցրել է օրենքով նախատեսված այլ հիմքերով:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 280-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ քաղաքացին կամ իրավաբանական անձը կարող է հրաժարվել իրեն պատկանող գույքի սեփականության իրավունքից՝ այդ մասին գրավոր հայտարարելով կամ այնպիսի գործողություններ կատարելով, որոնք ակնհայտ վկայում են գույքի տիրապետումից, օգտագործումից և տնօրինումից նրա մեկուսացման մասին՝ առանց այդ գույքի նկատմամբ որևէ իրավունք պահպանելու մտադրության ...:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 187-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ քաղաքացին կամ իրավաբանական անձը, որն անշարժ գույքի սեփականատեր չէ, սակայն այն **տասը տարվա ընթացքում բարեխղճորեն, բացահայտ և անընդմեջ տիրապետում է որպես սեփական գույք**, այդ գույքի նկատմամբ ձեռք է բերում սեփականության իրավունք (ձեռքբերման վաղեմություն):

Նշված նորմերի համադրումից հետևում է, որ ձեռքբերման վաղեմությունն իրենից ներկայացնում է ՀՀ քաղաքացիական օրենսգրքով նախատեսված որոշակի ժամկետի լրանալու և որոշակի պայմանների վրա հասնելու ուժով **մեկ անձի կողմից սեփականության իրավունքի ձեռքբերման, իսկ մյուս անձի կողմից այդ իրավունքի դադարման միջոց**:

ՀՀ Վճռաբեկ դատարանը ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 187-րդ հոդվածի 1-ին կետի կիրառման վերաբերյալ արդեն իսկ արտահայտել է իրավական դիրքորոշում այն մասին, որ ձեռքբերման վաղեմության ուժով սեփականության իրավունքի ձեռքբերման համար անհրաժեշտ է մի շարք վավերապայմանների միաժամանակյա առկայությունը:

Մասնավորապես՝ դրանք են.

1) Տիրապետումը պետք է լինի բարեխիղճ: Տիրապետման բարեխիղճությունը գնահատվում է գույքն անձի փաստացի տիրապետմանը անցնելիս: Գույքն անձի փաստացի տիրապետմանը պետք է անցնի առանց որևէ բռնության գործադրման: Տիրապետողի մոտ պետք է առկա լինի այն համոզմունքը, որ նա գույքը ձեռք է բերում օրինական հիմքերով: Տիրապետումը պետք է հիմնված լինի այնպիսի փաստի հիման վրա, որը տիրապետողին կարող է տալ բավարար հիմքեր ենթադրելու, որ նա այդ գույքը տիրապետելու է որպես սեփականություն:

2) Փաստացի տիրապետողը գույքը պետք է տիրապետի որպես սեփականը: Այսինքն՝ գույքը փաստացի տիրապետողը պետք է մասնակցի գույքի կառավարմանը, հոգ տանի դրա պահպանման համար ինչպես իր սեփական գույքի դեպքում: Անձը պետք է գույքը տիրապետի ինչպես սեփականը՝ նաև երրորդ անձանց հետ հարաբերություններում:

3) Տիրապետումը պետք է լինի 10 տարի և անընդմեջ: Այսինքն՝ 10 տարվա ընթացքում գույքի տիրապետումը չպետք է ընդհատվի: Տիրապետումը կարող է ընդհատվել կամ տիրապետողի կամքով, երբ նա հրաժարվում է գույքի հետագա տիրապետումից (գույքը դուրս է գալիս նրա տիրապետումից), կամ գույքի սեփականատիրոջ կամ այլ անձանց գործողություններով, որոնք ուղղված են գույքը վերադարձնելուն:

4) Տիրապետումը պետք է լինի բացահայտ: Այսինքն՝ փաստացի տիրապետողը գույքը չպետք է տիրապետի երրորդ անձանցից գաղտնի եղանակով (*յրե՛ս՝ ըստ հայցի Վոլոդյա և Միշա Նիկողոսյանների ընդդեմ Մանվել, Սոֆիկ, Մելանյա, Սամվել Սարիբեկյանների և Քնարիկ Աղազարյանի՝ քնակարարության օգտագործման իրավունքը փոխհատուցմամբ դադարեցնելու և քնակելի Կոնստանտին Կոնստանտինովի մասին, ըստ հակընդդեմ հայցի Մանվել Սարիբեկյանի և Քնարիկ Աղազարյանի ընդդեմ Վոլոդյա և Միշա Նիկողոսյանների՝ ձեռքբերման վաղեմության ուժով սեփականության իրավունքը ձանաչելու, ըստ օրենքի ժառանգության իրավունքի վկայագիրը և սեփականության իրավունքի վկայականը մասնակի անվավեր ձանաչելու պահանջների մասին, ինչպես նաև ըստ Մանվել Սարիբեկյանի և Քնարիկ Աղազարյանի հայցի ընդդեմ Վոլոդյա և Միշա Նիկողոսյանների՝ հողատարածքի նկարում սեփականության իրավունքի գրանցումը մասնակի անվավեր ձանաչելու պահանջի մասին թիվ 3-1435(ՎԴ) քաղաքացիական գործով ՀՀ Վճռաբեկ դատարանի քաղաքացիական պայարի 10.10.2007 թվականի որոշումը*):

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 47-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ գործով ապացույցներ են սույն օրենսգրքով և այլ օրենքներով նախատեսված կարգով ձեռք բերված տեղեկությունները, որոնց հիման վրա դատարանը պարզում է գործին մասնակցող անձանց պահանջները և առարկությունները հիմնավորող, ինչպես նաև վեճի լուծման համար նշանակություն ունեցող այլ հանգամանքների առկայությունը կամ բացակայությունը:

Այդ տեղեկությունները հաստատվում են գրավոր և իրեղեն ապացույցներով, փորձագետների եզրակացություններով, **վկաների ցուցմունքներով**, գործին մասնակցող անձանց ցուցմունքներով:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 44-րդ հոդվածի 2-րդ կետի համաձայն՝ դատարանը վկա կանչում է կողմի միջնորդությամբ:

Սույն քաղաքացիական գործով ներկայացվել են հայտարարություններ, որոնց

համաձայն՝ Մարինե Բաղայանը, Հոփսիկ Ալոյանը, Հակոբ Արամյանը, Հենրիկ Հովհաննիսյանը հայտնել են, որ «Կամոյի փողոցի N 5 տնամերձ հողամասը տրվել է 1995թ Հրանտ Միքայելի Մանուկյանին: Մենք որպես այդ փողոցի բնակիչներ երաշխավորում ենք և հաստատում, որ այդ հողատարածքը տարիներ շարունակ մշակել, զբաղվել են ծառատնկմամբ, աճեցրել են խաղողի վազեր և բանջարեղեն»:

Սույն գործով երրորդ անձ Մարտին Պետրոսյանի ներկայացուցիչը ներկայացրել է միջնորդություն վերոնշյալ հայտարարությունները ստորագրած անձանց սույն քաղաքացիական գործով նշված հանգամանքների վերաբերյալ վկայություն տալու համար ներգրավելու մասին:

Դատարանը, հիմք ընդունելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 51-րդ հոդվածի 1-ին կետը, նշված միջնորդությունը մերժել է:

ՀՀ քաղաքացիական դատավարության 51-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ գործի հանգամանքները, որոնք, օրենքի կամ այլ իրավական ակտերի համաձայն, պետք է հաստատվեն միայն որոշակի ապացույցներով, չեն կարող հաստատվել այլ ապացույցներով:

Մինչդեռ, Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ Դատարանը միջնորդության մերժման հիմքում դնելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 51-րդ հոդվածի 1-ին կետը, չի հիմնավորել այն հանգամանքը, որ որևէ օրենքով առկա է անշարժ գույքի տիրապետման և օգտագործման փաստը նաև վկաների ցուցմունքներով հաստատելու արգելք կամ սահմանափակում:

Հիմք ընդունելով վերոգրյալը, Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ սույն գործով դատարանները միջոցներ չեն ձեռնարկել պարզելու համար գործում առկա հայտարարություններով արձանագրված փաստերի հավաստիությունը:

Այսպիսով, վճռաբեկ բողոքի հիմքի առկայությունը բավարար է, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 228-րդ հոդվածի համաձայն, Վերաքննիչ դատարանի որոշումը բեկանելու համար:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 240-241²-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

ՈՐՈՇԵՑ

1. Վճռաբեկ բողոքը բավարարել մասնակիորեն: Բեկանել ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 30.12.2010 թվականի որոշումը և գործն ուղարկել ՀՀ Արարատի և Վայոց ձորի մարզերի ընդհանուր իրավասության առաջին աստիանի դատարան՝ նոր քննության:

2. Վճռաբեկ բողոքի համար սահմանված և հետաձգված պետական տուրքի հարցին անդրադառնալ գործի նոր քննության ընթացքում:

3. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

*ՆԱԽԱԳԱՀՈՂ՝ ստորագրություն
ԴԱՏԱՎՈՐՆԵՐ՝ ստորագրություններ*

ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՅՑ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական
դատարանի որոշում

Քաղաքացիական գործ թիվ ՇԴ/1799/02/10
2011թ.

Քաղաքացիական գործ թիվ ՇԴ/1799/02/10

Նախագահող դատավոր՝ Ն. Հովսեփյան

Դատավորներ՝ Ա. Մկրտչյան

Ն. Բարսեղյան

ՈՐՈՇՈՒՄ

ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քաղաքացիական
և վարչական պալատը (այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

*նախագահությամբ
մասնակցությամբ դատավորներ*

Ե. ԽՈՒՆԴԿԱՐՅԱՆԻ
Մ. ԴՐՄԵՅԱՆԻ
Վ. ԱԲԵԼՅԱՆԻ
Ս. ԱՆՏՈՆՅԱՆԻ
Վ. ԱՎԱՆԵՍՅԱՆԻ
Ա. ԲԱՐՍԵՂՅԱՆԻ
Գ. ՀԱԿՈԲՅԱՆԻ
Է. ՀԱՅՐԻՅԱՆԻ
Տ. ՊԵՏՐՈՍՅԱՆԻ
Ե. ՍՈՂՈՄՈՆՅԱՆԻ

2011 թվականի դեկտեմբերի 27-ին

դռնբաց դատական նիստում, քննելով Աիդա Նազարյանի վճռաբեկ բողոքը
ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 13.05.2011 թվականի որոշման դեմ՝ ըստ
հայցի Ռոբերտ Նազարյանի ընդդեմ Աիդա և Հարություն Նազարյանների՝ որոշակի
գործողություններ կատարելուն պարտավորեցնելու պահանջի մասին,

ՊԱՐԶԵՑ

1. Գործի դատավարական նախապատմությունը

Դիմելով դատարան՝ Ռոբերտ Նազարյանը պահանջել է պարտավորեցնել
պատասխանողներին չխոչընդոտելու իրեն պատկանող Գյումրի քաղաքի Ֆուրմանովի
փողոցի 4-րդ նրբանցքի թիվ 17 հասցեում գտնվող 70 տոկոս բաժնետնասին
համապատասխան ինքնակամ շինությունների օրինականացման գործընթացին՝
համաձայն «Պ.Ա.Գ. Էսթեյթ» ՍՊ ընկերության կողմից տրված եզրակացության

և հատակազծի, որտեղ կանաչ գույնով նշված են իրենց պատկանող ինքնակամ շինությունները, այդ թվում նաև թիվ 4, 5 և 6 սենյակները, որոնք կառուցվել են իր կողմից, սակայն ապօրինաբար իր տիրապետությունից դուրս են մնացել:

ՀՀ Շիրակի մարզի ընդհանուր իրավասության դատարանի (դատավոր Հ. Հովհաննիսյան) (այսուհետ՝ Դատարան) 10.02.2011 թվականի վճռով հայցը բավարարվել է: Վճռվել է «պարտավորեցնել Աիդա և Հարություն Նազարյաններին չխոչընդոտել Գյումրու Ֆուրամոսվի փողոցի 4-րդ նրբանցք թիվ 17 տնատիրության՝ Ռոբերտ Նազարյանին պատկանող 70 տոկոս բաժնեմասին համապատասխան ինքնակամ շինությունների օրինականացմանը՝ «Պ.Ա.Գ. Էսթեյթ» ՍՊ ընկերության կողմից տրված փաստացի հատակազծի համաձայն: Պատասխանողների կողմից համաձայնություն չտալու դեպքում շինություններն օրինականացնել առանց նրանց համաձայնության»:

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի (այսուհետ՝ Վերաքննիչ դատարան) 13.05.2011 թվականի որոշմամբ Աիդա Նազարյանի վերաքննիչ բողոքը մերժվել է, և Դատարանի 10.02.2011 թվականի վճիռը թողնվել է օրինական ուժի մեջ:

Սույն գործով վճռաբեկ բողոք է ներկայացրել Աիդա Նազարյանը:

Վճռաբեկ բողոքի պատասխան է ներկայացրել Ռոբերտ Նազարյանը:

2. Վճռաբեկ բողոքի հիմքերը, փաստարկները և պահանջը

Սույն վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

Վերաքննիչ դատարանը չի կիրառել ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 190-րդ և 192-րդ հոդվածները, որոնք պետք է կիրառեր, խախտել է ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածի 2-րդ կետը, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 53-րդ, 219-րդ, 220-րդ հոդվածները:

Բողոք բերած անձը նշված պնդումը պարզապես չէ և հետևյալ փաստարկներով.

Վերաքննիչ դատարանն անտեսել է, որ Դատարանը կիրառել է «Ինքնակամ կառուցված շենքերի, շինությունների և ինքնակամ զբաղեցված հողամասերի իրավական կարգավիճակի մասին» ՀՀ 26.12.2002 թվականի թիվ ՀՕ-510-Ն օրենքի 8-րդ հոդվածի 5-րդ կետը, որը չի գործում ուժը կորցրել է 22.02.2005 թվականին: Նշված օրենքն ուժի մեջ է մտել 22.02.2003 թվականին և գործել է մինչև 22.02.2005 թվականը:

Վերաքննիչ դատարանը վերաքննիչ բողոքը չի վերանայել բողոքի բոլոր հիմքերի ու դրանց հիմնավորումների սահմաններում, բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտությամբ չի գնահատել գործում առկա բոլոր ապացույցները, որի արդյունքում որոշման մեջ չի նշել գործով պարզված և վերաքննիչ բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող բոլոր փաստերը և հանգել է սխալ եզրակացության՝ կայացնելով չհիմնավորված և ոչ օրինական դատական ակտ:

Մասնավորապես, Վերաքննիչ դատարանն անտեսել է այն փաստը, որ Ռոբերտ Նազարյանի տնատիրությունը և Աիդա ու Հարություն Նազարյանների տնատիրությունը միմյանցից բաժանված է շուրջ 40 տարի առաջ կառուցված պարսպով, որը գծագրված են նույնիսկ Լենինականի միջշրջանային տեխնիկական գույքագրման բյուրոյի 09.09.1986 թվականի արձանագրության հատակազծում, և գտել է, որ Դատարանը վեճն ըստ էության ճիշտ է լուծել:

Վերաքննիչ դատարանը, եթե օբյեկտիվ գնահատեր գործի ապացույցները,

անգամ պարիսպը 1990 թվականին կամ հետո՝ 1991 թվականին կառուցված լինելու ենթադրյալ եզրակացությունը, սպա հիմնավոր կհամարեր վերաքննիչ բողոքի փաստարկը վիճելի գույքը պարսպով առանձնացված լինելու մասին և հաստատված կհամարեր, որ պարսպով փաստացի առանձնացված ու սեփականության իրավունքով նաև պատասխանողներին պատկանող հողամասի վրա առկա ինքնակամ շինությունների նկատմամբ ենթակա է ճանաչման ոչ թե հայցվորի, այլ պատասխանողների սեփականության իրավունքը:

Վերաքննիչ դատարանն անվիճելի է համարել այն փաստը, որ հայցվոր Ռոբերտ Նազարյանը հողի և շինության 70 տոկոսի սեփականատերն է, և գտել է, որ նրա պահանջն ինքնակամ շինություններն օրինականացնելու վերաբերյալ օրինական են, իսկ պատասխանողները, նրան համաձայնություն չտալով, խոչընդոտում են իր իրավունքներն իրականացնելու համար: Մինչդեռ, գործում առկա չէ որևէ ապացույց ընդհանուր բաժնային սեփականության իրավունքում Ռոբերտ Նազարյանի բաժինը որոշելու, վիճելի հասցեի գույքի 70 տոկոս բաժնեմասի և նույն համամասնությամբ գույքով ծանրաբեռնված ու բակի հողամասի նկատմամբ նրա սեփականության իրավունքը ճանաչելու կամ այդ իրավունքը գրանցված լինելու, ինչպես նաև բաժինն առանձնացնելու մասին:

Գործում, բացի փաստացի կառուցված պարսպից, առկա չէ որևէ այլ ապացույց ընդհանուր բաժնային սեփականության իրավունքում կողմերի բաժինը որոշելու, կողմերին պատկանող հողամասը բաժանելու և առանձնացնելու մասին, որոշված չէ, թե պարսպով առանձնացված հողամասի որ մասը ինչ շինություններով կողմերից ում է պատկանում: Նման պայմաններում անհասկանալի է, թե ինչպես կարելի է որոշել ինքնակամ շինությունների պատկանելիությունը: Արդյունքում, թե՛ Դատարանը, և թե՛ Վերաքննիչ դատարանն անտեսել են, որ Ռոբերտ Նազարյանը որևէ հիմնավոր ապացույց՝ բաժնային սեփականությունում իր բաժինը 70 տոկոս կազմելու, ինչպես վերը նշված փաստերի մասին, մասնավորապես կողմերի բաժինն առանձնացված լինելու, ինչպես նաև յուրաքանչյուրի բաժինը որոշված լինելու, դրանց վրա առկա ինքնակամ շինությունների պատկանելիությունը որոշված լինելու մասին չի ներկայացրել:

Վերոգրյալի հիման վրա բողոք բերած անձը պահանջել է բեկանել Վերաքննիչ դատարանի 13.05.2011 թվականի որոշումը և այն փոփոխել՝ հայցը մերժել:

2.1. Վճարեկ բողոքի պատասխանի հիմնավորումները

Դեռևս 1991 թվականի Լենինականի գույքագրման բյուրոյի կողմից տրված Գյումրի քաղաքի Ֆուրմանովի փողոցի 4-րդ նրբանցք թիվ 17 տան շինությունների և բակի հատակագծով և օրինական ու ինքնակամ շինությունների սեփականատերեր են հանդիսացել Արտաշես Նազարյանը 3/5-րդ և Ռոբերտ Նազարյանը 2/5-րդ բաժնեմասերով: Իսկ ըստ 19.10.2010 թվականի սեփականության իրավունքի թիվ 2412164 վկայականի վիճելի տունը սեփականության իրավունքով պատկանում է Ռոբերտ Նազարյանին՝ 70 տոկոս, Աիդա և Հարություն Նազարյաններին՝ 15-ական տոկոս բաժնեմասերով: Բողոքաբերի փաստարկն այն մասին, որ դատարանը հաշվի չի առել, որ վիճելի գույքը դեռևս 40 տարի առաջ պարսպով առանձնացվել է, անհիմն է, քանի որ թեկուզ մի պահ ընդունենք, որ գույքը պարսպով 40 տարի առաջ առանձնացված է եղել, այնուամենայնիվ, թիվ 2412164 սեփականության վկայականով

Գյումրի քաղաքի Ֆուրմանով փողոցի թիվ 17 տունը սեփականության 70 տոկոս բաժնեմասի իրավունքով պատկանում է Ռոբերտ Նազարյանին, այնպես որ նշված պնդումը սույն վեճի հետ որևէ առնչություն չունի: Ինչ վերաբերում է պատասխանողի այն առարկությանը, թե գործում առկա չէ որևէ ապացույց ընդհանուր բաժնային սեփականության իրավունքում կողմերի բաժինը որոշելու, կողմերին պատկանող հողամասը բաժանելու և առանձնացնելու մասին որոշված չէ, թե պարսպով առանձնացված հողամասի որ մասը ինչ շինություններով կողմերից ում է պատկանում, ապա համաձայն «Պ.Ա.Գ. Էսթեյթ» ՄՊԸ-ի կողմից տրված եզրակացության և հատակագծի՝ կանաչ գույնով նշված են Ռոբերտ Նազարյանին պատկանող ինքնակամ շինությունները, այդ թվում՝ նաև 4, 5 և 6 սենյակները, որոնք կառուցել է հայցվորը, սակայն ապօրինաբար այժմ պատասխանողների տիրապետման տակ են գտնվում:

3. Վճռաբեկ բողոքի քննության համար նշանակություն ունեցող փաստերը

1) Համաձայն 19.10.2010 թվականի սեփականության իրավունքի պետական գրանցման թիվ 2412164 վկայականի՝ Գյումրի քաղաքի Ֆուրմանով փողոցի թիվ 17 տունը սեփականության իրավունքով պատկանում է Ռոբերտ Նազարյանին՝ 70%, Աիդա և Հարություն Նազարյաններին՝ 15-ական % բաժիններով, որում նշված են նաև ինքնակամ շինություններ (1-ին հատոր, գ.թ. 11-12):

2) Ռոբերտ Նազարյանը ցանկացել է Գյումրի քաղաքի Ֆուրմանով փողոցի թիվ 17 հասցեում գտնվող ինքնակամ շինությունների 70 տոկոսն օրինականացնել, որի դեմ առարկել են Աիդա և Հարություն Նազարյանները (1-ին հատոր, գ.թ. 3-5):

4. Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումները

Քննելով վճռաբեկ բողոքը նշված հիմքի սահմաններում Վճռաբեկ դատարանը գրնում է, որ այն հիմնավոր է հեղինակ պատճառաբանությամբ:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ ինքնակամ կառույց է համարվում օրենքով և այլ իրավական ակտերով սահմանված կարգով այդ նպատակի համար չհատկացված հողամասում կամ առանց թույլտվության կամ թույլտվությամբ սահմանված պայմանների կամ քաղաքաշինական նորմերի և կանոնների էական խախտումներով կառուցված կամ վերակառուցված շենքը, շինությունը կամ այլ կառույցը:

Սույն հոդվածի 2-րդ կետի 2-րդ պարբերության համաձայն՝ ինքնակամ կառույցի նկատմամբ ճանաչվում է այն անձի սեփականության իրավունքը, որին սեփականության իրավունքով պատկանում է այն հողամասը, որի վրա գտնվում է կառույցը:

Սույն հոդվածի 4-րդ կետի համաձայն՝ ինքնակամ կառույցները կարող են ճանաչվել օրինական՝ համայնքների ղեկավարների (Երևանում՝ Երևանի քաղաքապետի), համայնքի վարչական տարածքներից դուրս՝ մարզպետների կողմից, կառավարության սահմանած կարգով: Ինքնակամ կառույցը կարող է ճանաչվել օրինական միայն այն անձի դիմումով, որին սեփականության իրավունքով պատկանող հողամասում գտնվում է այդ կառույցը:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 172-րդ հոդվածի համաձայն՝ օրենքի և այլ իրավական ակտերի պահանջների պահպանմամբ անձի կողմից իր համար պատրաստած կամ ստեղծած նոր գույքի նկատմամբ սեփականության իրավունք ձեռք է բերում այդ անձը:

Նշված հոդվածից հետևում է, որ անձը սեփականության իրավունք կարող է ձեռք

բերել օրենքի և այլ իրավական ակտերի պահանջների պահպանմամբ ստեղծած գույքի նկատմամբ:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 191-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ բաժնային սեփականության ներքո գտնվող գույքը տիրապետվում և օգտագործվում է դրա բոլոր մասնակիցների համաձայնությամբ, իսկ համաձայնության բացակայության դեպքում՝ դատարանի սահմանած կարգով:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 192-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ բաժնային սեփականության ներքո գտնվող գույքը տնօրինվում է դրա բոլոր մասնակիցների համաձայնությամբ:

Սույն գործով Վերաքննիչ դատարանը, կիրառելով «Ինքնակամ կառուցված շենքերի, շինությունների և ինքնակամ զբաղեցված հողամասերի իրավական կարգավիճակի մասին» ՀՀ 26.12.2002 թվականի թիվ ՀՕ-510-Ն օրենքի 8-րդ հոդվածի 5-րդ կետը, հաստատված է համարել, որ հայցվորը հանդիսանում է հողի և շինության 70 տոկոսի սեփականատերը և գտել, որ նրա պահանջը ինքնակամ շինություններն օրինականացնելու վերաբերյալ օրինական է, իսկ պատասխանողներն իրենց համաձայնությունը չտալով՝ խոչընդոտում են հայցվորին իր իրավունքներն իրականացնելու համար:

Մինչդեռ, Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ Վերաքննիչ դատարանի կողմից կիրառված «Ինքնակամ կառուցված շենքերի, շինությունների և ինքնակամ զբաղեցված հողամասերի իրավական կարգավիճակի մասին» ՀՀ օրենքը ուժը կորցրել է 22.02.2005 թվականին, հետևաբար այն չէր կարող կիրառվել դատարանի կողմից:

Բացի այդ, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ սույն գործով վեճի լուծման համար էական է ընդհանուր բաժնային սեփականության իրավունքում Ռոբերտ Նազարյանի բաժինն առանձնացված լինելու փաստը (այսինքն՝ այն հանգամանքը, որ ինքնակամ շինությունները գտնվում են միայն Ռոբերտ Նազարյանին սեփականության իրավունքով պատկանող հողամասում), որի առկայության դեպքում միայն կարող էր բավարարվել ինքնակամ շինությունների օրինականացման գործընթացին չխոչընդոտելու պահանջը: Մինչդեռ սույն գործում բացակայում է վերոնշյալ փաստը հիմնավորող որևէ ապացույց:

Նման պայմաններում Վճռաբեկ դատարանը գտնում է, որ ընդհանուր բաժնային սեփականության հողամասի վրա գտնվող ինքնակամ շինությունների օրինականացման համար անհրաժեշտ է բոլոր սեփականատերերի համաձայնությունը, քանի որ բաժնային սեփականության մեջ բաժիններն առանձնացված չլինելու պայմաններում ինքնակամ շինությունների օրինականացման ժամանակ պետք է հաշվի առնվի այն հանգամանքը, որ սեփականության մեջ բաժիններն առանձնացվելու դեպքում կարող է խախտվել այն ընդհանուր սեփականության մասնակցի շահը, որը համաձայնություն չի տվել ինքնակամ կառույցների օրինականացման համար:

Հիմք ընդունելով վերոգրյալը և սույն գործի փաստերը հաշվի առնելով՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Ռոբերտ Նազարյանի հայցը ենթակա է մերժման:

Այսպիսով, վերը նշված հիմքի առկայությունը Վճռաբեկ դատարանը դիտում է բավարար՝ ՀՀ քաղաքացիական դատավարություն օրենսգրքի 227-րդ և 228-րդ հոդվածների ուժով Վերաքննիչ դատարանի որոշումը քննադատելու համար:

Միաժամանակ, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ սույն գործով անհրաժեշտ է կիրառել ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 240-րդ հոդվածի 1-ին կետի 4-րդ ենթակետով սահմանված՝ ստորադաս դատարանի դատական ակտը փոփոխելու Վճռաբեկ դատարանի լիազորությունը հետևյալ հիմնավորմամբ.

ՀՀ Սահմանադրության 19-րդ հոդվածի և «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի (այսուհետ՝ Կոնվենցիա) 6-րդ հոդվածի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի ողջամիտ ժամկետում իր գործի քննության իրավունք: Սույն գործով վեճի լուծումն էական նշանակություն ունի գործին մասնակցող անձանց համար: Վճռաբեկ դատարանը գտնում է, որ գործը ողջամիտ ժամկետում քննելը հանդիսանում է ՀՀ Սահմանադրության և Կոնվենցիայի նշված հոդվածներով ամրագրված՝ անձի արդար դատաքննության իրավունքի տարր: Հետևաբար, գործի անհարկի ձգձգումները վտանգ են պարունակում նշված իրավունքի խախտման տեսանկյունից: Տվյալ դեպքում Վճռաբեկ դատարանի կողմից ստորադաս դատարանի դատական ակտը փոփոխելը բխում է արդարադատության արդյունավետության շահերից, քանի որ սույն գործով վերջնական դատական ակտ կայացնելու համար նոր հանգամանք հաստատելու անհրաժեշտությունը բացակայում է:

Դատական ակտը փոփոխելիս Վճռաբեկ դատարանը հիմք է ընդունում սույն որոշման պատճառաբանությունները, ինչպես նաև գործի նոր քննության անհրաժեշտության բացակայությունը:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 240-241²-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

ՈՐՈՇԵՑ

1. Աիդա Նազարյանի վճռաբեկ բողոքը բավարարել: Բեկանել ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 13.05.2011 թվականի որոշումը և այն փոփոխել՝ Ռոբերտ Նազարյանի հայցը մերժել:
2. Ռոբերտ Նազարյանից հօգուտ Աիդա Նազարյանի բռնագանձել 20.000 ՀՀ դրամ որպես վճռաբեկ բողոքի համար վճարված պետական տուրքի գումար:
3. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

*ՆԱԽԱԳԱՀՈՂ՝ ստորագրություն
ԴԱՏԱՎՈՐՆԵՐ՝ ստորագրություններ*

ԸՆԴՀԱՆՈՒՐ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական
դատարանի որոշում

Քաղաքացիական գործ թիվ ԵԿԴ/3249/02/09
2011թ.

Քաղաքացիական գործ թիվ ԵԿԴ/3249/02/09

Նախագահող դատավոր՝ Ս. Նազարյան

Դատավորներ՝ Կ. Հակոբյան

Տ. Սահակյան

ՈՐՈՇՈՒՄ

ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քաղաքացիական
և վարչական պալատը (այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

նախագահությամբ

մասնակցությամբ դատավորներ

Ե. ԽՈՒՆԴԿԱՐՅԱՆԻ

Վ. ԱՎԱՆԵՍՅԱՆԻ

Վ. ԱԲԵԼՅԱՆԻ

Ս. ԱՆՏՈՆՅԱՆԻ

Ա. ԲԱՐՍԵՂՅԱՆԻ

Մ. ԴՐՄԵՅԱՆԻ

Գ. ՀԱԿՈԲՅԱՆԻ

Է. ՀԱՅՐԻՅԱՆԻ

Տ. ՊԵՏՐՈՍՅԱՆԻ

Ե. ՍՈՂՈՍՄՈՆՅԱՆԻ

2011 թվականի մարտի 04-ին

դռնբաց դատական նիստում, քննելով Ազնիվ Մինասյանի վճռաբեկ բողոքը
ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 26.11.2010 թվականի որոշման դեմ՝ ըստ
հայցի Ազնիվ Մինասյանի ընդդեմ Օդարտի Կիրակոսյանի, Նարինե Բակունցի,
Լևոն Բակունցի՝ պարտապանի բաժինն առանձնացնելու և դրա վրա բռնագանձում
տարածելու պահանջների մասին,

ՊԱՐԶԵՑ

1. Գործի դատավարական նախապատմությունը.

Դիմելով դատարան՝ Ազնիվ Մինասյանը պահանջել է Երևանի Կրիվոյի փողոցի
60 տան՝ Օդարտի Կիրակոսյանին պատկանող 2/3-րդ բաժինն առանձնացնել և դրա
վրա բռնագանձում տարածել:

Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավա-
տության դատարանի (այսուհետ՝ Դատարան) 01.07.2010 թվականի վճռով հայցը
մերժվել է:

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի (այսուհետ՝ Վերաքննիչ դատարան) 26.11.2010 թվականի որոշմամբ Ազնիվ Մինասյանի վերաքննիչ բողոքը մերժվել է, և Դատարանի 01.07.2010 թվականի վճիռը թողնվել է օրինական ուժի մեջ:

Սույն գործով վճռաբեկ բողոք է ներկայացրել Ազնիվ Մինասյանը:
Վճռաբեկ բողոքի պատասխան չի ներկայացվել:

2. Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը.

Սույն վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

Վերաքննիչ դատարանը խախտել է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 53-րդ հոդվածը, որի արդյունքում սխալ է մեկնաբանել ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 197-րդ և 200-րդ հոդվածները:

Բողոք բերած անձը նշված պնդումը պարձառաքանել է հետևյալ փաստարկներով.

Վերաքննիչ դատարանը գտել է, որ դատարանն իրավունք ունի և ոչ թե պարտավոր է գույքը հրապարակային սակարկություններով վաճառելու մասին վճիռ կայացնել: Մինչդեռ, Օրենսդիրը դատարանին նման իրավունք է տվել, որը չի կարող կիրառվել կամայականորեն:

Վերոգրյալի հիման վրա բողոք բերած անձը պահանջել է բեկանել Վերաքննիչ դատարանի 26.11.2010 թվականի որոշումը և գործն ուղարկել նոր քննության:

3. Վճռաբեկ բողոքի քննության համար նշանակություն ունեցող փաստերը.

Վճռաբեկ բողոքի քննության համար նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

1. Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ համայնքների ընդհանուր իրավասության դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած 19.06.2008 թվականի վճռով վճռվել է Օդարուհի Կիրակոսյանից հօգուտ Ազնիվ Մինասյանի բռնագանձել 454.000 ՀՀ դրամ՝ որպես փոխառության գումար, ինչպես նաև կիրառել ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 411-րդ հոդվածը՝ բռնագանձման ենթակա 454.000 ՀՀ դրամ գումարի վրա հաշվարկելով ՀՀ կենտրոնական բանկի կողմից սահմանված բանկային տոկոսներ՝ սկսած 20.12.2007 թվականից մինչև պարտավորությունների դադարման օրը (հ. 1-ին, գ.թ. 90-91):

2. Անշարժ գույքի սեփականության (օգտագործման) իրավունքի գրանցման 10.10.2005 թվականի թիվ 2069031 վկայականի համաձայն՝ Երևանի Կենտրոն համայնքի Կրիվոյ փողոցի թիվ 60 տան 2/3 բաժնի նկատմամբ գրանցված է Օդարուհի Կիրակոսյանի սեփականության իրավունքը, 1/6 բաժնի նկատմամբ՝ Նարինե Բակունցի սեփականության իրավունքը, 1/6 բաժնի նկատմամբ՝ Լևոն Բակունցի սեփականության իրավունքը (հ. 1-ին, գ.թ. 19-21):

3. ՀՀ փորձագիտական կենտրոն Պետական ոչ առևտրային կազմակերպության 05.05.2010 թվականի թիվ 05431007 եզրակացության համաձայն՝ տեխնիկապես հնարավոր չէ Երևանի Կրիվոյի փողոցի թիվ 60 հասցեում գտնվող անշարժ գույքից առանձնացնել Օդարուհի Կիրակոսյանի 2/3 բաժինը, քանի որ հետազոտվող օբյեկտն իր առկա տեղակայմամբ, դիրքով և չափերով, ինչպես նաև 2/3 հարաբերությամբ բաժանման դեպքում բնակելի տանից հասանելիք բաժնի մակերեսների առանձնացումը կբերի ՀՀ քաղաքաշինության բնագավառում գործող նորմատիվ ակտերի պահանջների չպահպանմանը, համատեղ օգտագործման տարածքների նախատեսման և

սահմանափակ օգտագործման (հ. 1-ին գ. թ. 61-66):

4. Վճարելի դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը.

Քննելով վճարելի բողոքը նշված հիմքի սահմաններում Վճարելի դատարանը գործում է, որ այն հիմնավոր է հեղուկալ պարձառաբանությամբ.

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 53-րդ հոդվածի համաձայն՝ դատարանը յուրաքանչյուր ապացույց գնահատում է գործում եղած բոլոր ապացույցների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտության վրա հիմնված ներքին համոզմամբ:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 200-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ բաժնային կամ համատեղ սեփականության մասնակցի մոտ այլ գույքի անբավարարության դեպքում նրա պարտատերն իրավունք ունի ընդհանուր գույքից պարտապանի բաժինն առանձնացնելու պահանջ ներկայացնել՝ դրա վրա բռնագանձում տարածելու համար:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 200-րդ հոդվածի 2-րդ կետի համաձայն՝ եթե բաժինը բնեղենով առանձնացնել անհնար է կամ դրա դեմ առարկում են բաժնային կամ համատեղ սեփականության մնացած մասնակիցները, պարտատերն իրավունք ունի ընդհանուր սեփականության մնացած մասնակիցներից պահանջել շուկայական գնով գնելու պարտապանի բաժինը՝ պարտքը մարելու համար: Ընդհանուր սեփականության մնացած մասնակիցների կողմից պարտապանի բաժինը ձեռք բերելուց հրաժարվելու դեպքում պարտատերն իրավունք ունի պահանջելու բռնագանձումը տարածել ընդհանուր սեփականության իրավունքում պարտապանի բաժնի վրա՝ սույն օրենսգրքի 197-րդ հոդվածին համապատասխան:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 197-րդ հոդվածի 6-րդ կետի համաձայն՝ ընդհանուր գույքը բաժանելու կամ դրանից նույն հոդվածի 3-5-րդ կետերում սահմանված կանոններով բաժին առանձնացնելու ակնհայտ աննպատակահարմարության դեպքում դատարանն իրավունք ունի վճիռ կայացնել գույքը հրապարակային սակարկություններով վաճառելու մասին՝ ստացված գումարը հետագայում բաշխելով ընդհանուր սեփականության մասնակիցների միջև՝ նրանց բաժիններին համաչափ:

Վերոնշյալ հոդվածով ընդհանուր գույքը հրապարակային սակարկություններով վաճառելու համար սահմանվել է պարտադիր նախապայմաններ, այն է՝ ընդհանուր գույքը բաժանելու կամ նույն հոդվածի 3-5-րդ կետերում սահմանված կանոններով բաժինն առանձնացնելու ակնհայտ աննպատակահարմարությունը:

Սույն գործում առկա փաստերի համաձայն՝ Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ համայնքների ընդհանուր իրավասության դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած 19.06.2008 թվականի վճռով վճռվել է Օդարուհի Կիրակոսյանից հօգուտ Ազնիվ Մինասյանի բռնագանձել 454.000 ՀՀ դրամ՝ որպես փոխառության գումար, ինչպես նաև կիրառել ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 411-րդ հոդվածը՝ բռնագանձման ենթակա 454.000 ՀՀ դրամ գումարի վրա հաշվարկելով ՀՀ կենտրոնական բանկի կողմից սահմանված բանկային տոկոսներ՝ սկսած 20.12.2007 թվականից մինչև պարտավորությունների դադարման օրը: Գործում առկա անշարժ գույքի սեփականության (օգտագործման) իրավունքի գրանցման 10.10.2005 թվականի թիվ 2069031 վկայականի համաձայն՝ Երևանի Կենտրոն համայնքի Կրիվոյ փողոցի թիվ 60 տան 2/3 բաժնի նկատմամբ գրանցված է Օդարուհի Կիրակոսյանի սեփականության իրավունքը: Փորձագիտական եզրակացության համաձայն՝ տեխնիկապես հնարավոր

չէ Երևանի Կրիվոյի փողոցի թիվ 60 հասցեում գտնվող անշարժ գույքից առանձնացնել Օդարուհի Կիրակոսյանի 2/3 բաժինը, քանի որ բնակելի տանից հասանելիք բաժինների մակերեսների առանձնացումը կրերի ՀՀ քաղաքաշինության բնագավառում գործող նորմատիվ ակտերի պահանջների չպահպանմանը, համատեղ օգտագործման տարածքների նախատեսման և սահմանափակ օգտագործման:

Սույն գործով Վերաքննիչ դատարանը, դատական ակտը թողնելով օրինական ուժի մեջ, պատճառաբանել է, որ դատարանի կողմից գույքը հրապարակային սակարկություններով վաճառելու մասին վճիռ կայացնելը դատարանի իրավունքն է և ոչ թե պարտականությունը, և դատարանն իր այդ իրավունքն իրականացնում է հայեցողական իրավագործությամբ՝ ելնելով կոնկրետ գործի հանգամանքներից:

Մինչդեռ, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ տվյալ դեպքում ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 197-րդ հոդվածի 6-րդ կետով սահմանված կանոնը, համաձայն որի՝ «ընդհանուր գույքը բաժանելու կամ դրանից նույն հոդվածի 3-5-րդ կետերում սահմանված կանոններով բաժին առանձնացնելու ակնհայտ աննպատակահարմարության դեպքում դատարանն **իրավունք ունի** վճիռ կայացնել գույքը հրապարակային սակարկություններով վաճառելու մասին՝ ստացված գումարը հետագայում բաշխելով ընդհանուր սեփականության մասնակիցների միջև՝ նրանց բաժիններին համաչափ» չպետք է մեկնաբանել որպես նշված պայմանների առկայության դեպքում դատարանի՝ տվյալ գույքը հրապարակային սակարկություններով վաճառելու հայեցողական լիազորություն: Հիշյալ նորմում «իրավունք ունի» ձևակերպումը անհրաժեշտ է մեկնաբանել միայն որպես մինչ նույն հոդվածի 3-5-րդ կետերում նախատեսված հանգամանքներն ապացուցված լինելը գույքը հրապարակային սակարկություններով վաճառելու արգելք, իսկ հիշյալ 3-5-րդ կետերում նախատեսված հանգամանքների ապացուցված լինելու դեպքում Վճռաբեկ դատարանը գտնում է, որ դատարանի համար ծագում է պարտականություն գույքը հրապարակային սակարկություններով վաճառելու մասին վճիռ կայացնելու համար:

Այսպիսով, վճռաբեկ բողոքի հիմքի առկայությունը Վճռաբեկ դատարանը դիտում է բավարար՝ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 227-րդ և 228-րդ հոդվածների ուժով Վերաքննիչ դատարանի որոշումը բեկանելու համար:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 240-241²-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

ՈՐՈՇԵՑ

1. Վճռաբեկ բողոքը բավարարել: Բեկանել ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 26.11.2010 թվականի որոշումը և գործն ուղարկել Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարան՝ նոր քննության:

2. Պետական տուրքի բաշխման հարցին անդրադառնալ գործի նոր քննության ընթացքում:

3. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

*ՆԱԽԱԳԱՀՈՂ՝ ստորագրություն
ԴԱՏԱՎՈՐՆԵՐ՝ ստորագրություններ*

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական
դատարանի որոշում

Քաղաքացիական գործ թիվ ԵՄԴ/0199/02/10
2011թ.

Քաղաքացիական գործ թիվ ԵՄԴ/0199/02/10

Նախագահող դատավոր՝ Կ. Չիլինգարյան

Դատավորներ՝

Ա. Խատատյան Ա. Պետրոսյան

ՈՐՈՇՈՒՄ

ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Հայաստանի Հանրապետության Վճռաբեկ դատարանի քաղաքացիական
և վարչական պալատը (այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

*Նախագահությամբ
մասնակցությամբ դատավորներ*

Ե. ԽՈՒՆԴԿԱՐՅԱՆԻ
Ե. ՍՈՂՈՄՈՆՅԱՆԻ
Վ. ԱԲԵԼՅԱՆԻ
Ս. ԱՆՏՈՆՅԱՆԻ
Վ. ԱՎԱՆԵՍՅԱՆԻ
Ա. ԲԱՐՍԵՂՅԱՆԻ
Մ. ԴՐՄԵՅԱՆԻ
Գ. ՀԱԿՈԲՅԱՆԻ
Է. ՀԱՅՐԻՅԱՆԻ
Տ. ՊԵՏՐՈՍՅԱՆԻ

2011 թվականի հուլիսի 29-ին

դռնբաց դատական նիստում, քննելով Սվետլանա Ասատրյանի և Արթուր Գասիսյանի վճռաբեկ բողոքը ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 25.11.2010 թվականի որոշման դեմ՝ ըստ Դավիթ Ասատրյանի հայցի ընդդեմ Սվետլանա Ասատրյանի և Արթուր Գասիսյանի՝ բաժնային սեփականություն հանդիսացող բնակարանից բաժինը բնեղենով առանձնացնելու պահանջի մասին,

ՊԱՐԶԵՑ

1. Գործի դատավարական նախապատմությունը

Դիմելով դատարան՝ Դավիթ Ասատրյանը պահանջել է Երևանի Ծովակալ Իսակովի պողոտայի 30-րդ շենքի թիվ 4 բնակարանից բնեղենով առանձնացնել իր, Սվետլանա Ասատրյանի և Արթուր Գասիսյանի բաժնեմասերը՝ միաժամանակ հայտնելով, որ համաձայն է Սվետլանա Ասատրյանից և Արթուր Գասիսյանից ստանալ իր բաժնեմասի շուկայական արժեքը, իսկ վերջիններիս կողմից հատուցման անհնարինության դեպքում պատրաստ է վճարել նրանց բաժնեմասի շուկայական արժեքը:

Երևանի Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի ընդհանուր իրավասության դատարանի (այսուհետ՝ Դատարան) 27.07.2010 թվականի վճռով հայցը բավարարվել

է՛ վճովել է պատասխանողներին թույլատրել վճռի օրինական ուժի մեջ մտնելուց հետո 10 օրվա ընթացքում 7.810.000 ՀՀ դրամի չափով փոխհատուցում տրամադրել Դավիթ Ասատրյանին՝ դադարեցնելով վերջինիս սեփականության իրավունքը Երևանի Իսակովի փողոցի (պողոտայի) 30-րդ շենքի թիվ 4 բնակարանի նկատմամբ, վճռի եզրափակիչ մասի 1-ին կետում նշված ժամկետում և չափով փոխհատուցումը պատասխանողների կողմից չտրամադրվելու դեպքում Դավիթ Ասատրյանին թույլատրել 1-ին կետում նշված ժամկետի ավարտից հետո 10-օրյա ժամկետում 3.125.000-ական ՀՀ դրամի չափով փոխհատուցում վճարել Սվետլանա Ասատրյանին և Արթուր Գասիայանին՝ դադարեցնելով վերջիններիս սեփականության իրավունքը Երևանի Իսակովի փողոցի (պողոտայի) 30-րդ շենքի թիվ 4 բնակարանի նկատմամբ:

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի (այսուհետ՝ Վերաքննիչ դատարան) 25.11.2010 թվականի որոշմամբ Սվետլանա Ասատրյանի և Արթուր Գասիայանի վերաքննիչ բողոքը մերժվել է և Դատարանի 27.07.2010 թվականի վճիռը թողնվել է օրինական ուժի մեջ:

Սույն գործով վճռաբեկ բողոք են ներկայացրել Սվետլանա Ասատրյանը և Արթուր Գասիայանը:

Վճռաբեկ բողոքի պատասխան է ներկայացրել Դավիթ Ասատրյանը:

2. Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը

Սույն վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

Վերաքննիչ դատարանը խախտել է ՀՀ Սահմանադրության 18-րդ, 19-րդ հոդվածները, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 28-րդ հոդվածը:

Բողոք բերած անձինք նշված պնդումը պարձառաքանել են հետևյալ փաստարկներով.

Վերաքննիչ դատարանն անտեսել է, որ Դատարանը, ակնհայտորեն իրագել լինելով դատաքննությանը ներկայանալու, ապացույցներ ներկայացնելու և առարկություններ հայտնելու Սվետլանա Ասատրյանի և Արթուր Գասիայանի ցանկության մասին, այնուամենայնիվ վերջիններիս բացակայությամբ լսել է Դավիթ Ասատրյանին և ավարտել է դատաքննությունը, ինչի արդյունքում անհնարին է դարձրել Սվետլանա Ասատրյանի և Արթուր Գասիայանի կողմից ապացույցներ ներկայացնելու և առարկություններ հայտնելու հնարավորությունը:

Վերաքննիչ դատարանն անտեսել է նաև, որ Սվետլանա Ասատրյանի և Արթուր Գասիայանի սեփականության իրավունքը ոտնահարելու առումով Դատարանի կողմից թույլ տրված առերևույթ դատական սխալի հետևանքով նրանք զրկվել են իրենց միակ օթևանից:

Վերոգրյալի հիման վրա բողոք բերած անձինք պահանջել են բեկանել Վերաքննիչ դատարանի 25.11.2010 թվականի որոշումը և գործն ուղարկել նոր քննության:

2.1. Վճռաբեկ բողոքի պատասխանի փաստարկները

Վճռաբեկ բողոքն անհիմն է, իսկ Վերաքննիչ դատարանը Սվետլանա Ասատրյանի և Արթուր Գասիայանի վերաքննիչ բողոքը մերժել է արդարացիորեն:

3. Վճռաբեկ բողոքի քննության համար նշանակություն ունեցող փաստերը

Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

1) 01.02.2010 թվականի անշարժ գույքի սեփականության (օգտագործման) իրավունքի գրանցման թիվ 2707429 վկայականի համաձայն՝ Երևանի Իսակովի 30-րդ շենքի թիվ 4 բնակարանի նկատմամբ Շահումյանի շրջգործկոմի 13.01.1994 թվականի թիվ 2124, Երևանի քաղաքապետի 24.10.2007 թվականի թիվ 4392-Ա որոշումների, 21.07.2008 թվականի թիվ 5480, 17.06.2009 թվականի թիվ 3967 և թիվ 3968 ըստ օրենքի ժառանգության իրավունքի վկայագրերի հիման վրա ՀՀ Կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման միասնական թիվ 01-007-4-9 մատյանի 095 համարի տակ գրանցված է Դավիթ Ասատրյանի՝ 1/2 բաժնեմասով, Սվետլանա Ասատրյանի՝ 1/5 բաժնեմասով, և Արթուր Գասիսյանի՝ 1/5 բաժնեմասով, բաժնային սեփականության իրավունքը (**հատոր 1, գ.թ. 5-7**):

2) «Հայաստանի Հանրապետության փորձագիտական կենտրոն» ՊՈԱԿ-ի 30.06.2010 թվականի փորձագետի թիվ 09931007 եզրակացության «Հետևություններ» բաժնի 1-ին կետի համաձայն՝ Երևանի Իսակովի փողոցի (պողոտայի) 30-րդ շենքի թիվ 4 հասցեում գտնվող բնակարանից Դավիթ Ասատրյանին հասանելիք 1/2 բաժնեմասը տեխնիկապես առանձնացնել մյուս համասեփականատերեր Սվետլանա Ասատրյանին և Արթուր Գասիսյանին հասանելիք 1/5 բաժնեմասերից հնարավոր չէ՝ պահպանելով տարածքների ըստ նպատակային նշանակության օգտագործումը, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության բնագավառում գործող նորմատիվ ակտերի պահանջները (**հատոր 1, գ.թ. 44-52**):

3) Սվետլանա Ասատրյանի և Արթուր Գասիսյանի կողմից Դավիթ Ասատրյանի բաժնի արժեքը վճարելու համաձայնության վերաբերյալ որևէ ապացույց սույն գործի նյութերում առկա չէ:

4) Դատարանի կողմից 19.07.2010 թվականին նշանակված դատական նիստի ժամանակի և վայրի մասին ծանուցագրերը Սվետլանա Ասատրյանին և Արթուր Գասիսյանին են ուղարկվել «ք. Երևան, Իսակովի 30., 4բն.» հասցեով, որպիսի ծանուցագրերը վերջիններս ստացել են 10.07.2010 թվականին (**հատոր 1, գ.թ. 54-61**):

4. Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումները

Քննելով վճռաբեկ բողոքը նշված հիմքի սահմաններում՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ այն հիմնավոր է մասնակիորեն հետևյալ պարձառաբանությամբ.

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ քաղաքացիական օրենսդրությունը հիմնվում է իր կողմից կարգավորվող հարաբերությունների մասնակիցների հավասարության, **կամքի ինքնավարության և գույքային ինքնությունության**, սեփականության անձեռնմխելիության, պայմանագրի ազատության, մասնավոր գործերին որևէ մեկի կամայական միջամտության անթույլատրելիության, քաղաքացիական իրավունքների անարգել իրականացման անհրաժեշտության, խախտված իրավունքների վերականգնման ապահովման, դրանց դատական պաշտպանության սկզբունքների վրա:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 197-րդ հոդվածի 3-րդ կետի համաձայն՝ բաժնային սեփականության մասնակիցների միջև ընդհանուր գույքը բաժանելու կամ դրանից նրանցից մեկի բաժինն առանձնացնելու եղանակի և պայմանների

մասին **համաձայնության բացակայության դեպքում**՝ բաժնային սեփականության մասնակիցն իրավունք ունի դատական կարգով պահանջել ընդհանուր գույքից բնեղենով առանձնացնելու իր բաժինը:

Եթե բաժինը բնեղենով առանձնացնելը չի թույլատրվում օրենքով կամ դա անհնար է առանց ընդհանուր սեփականության ներքո գտնվող գույքին անհամաչափ վնաս պատճառելու, առանձնացող սեփականատերը բաժնային սեփականության մյուս մասնակիցներից կարող է պահանջել վճարելու իր բաժնի արժեքը:

Նույն հոդվածի 4-րդ կետի համաձայն՝ նույն հոդվածի համաձայն, բաժնային սեփականության մասնակցին բնեղենով առանձնացվող գույքի անհամաչափությունը բաժնային սեփականության իրավունքում նրա բաժնին վերացվում է նրան համապատասխան դրամական գումար վճարելով կամ այլ փոխհատուցումով:

Բաժնային սեփականության մասնակցի բաժինը բնեղենով առանձնացնելու փոխարեն մյուս սեփականատերերը կարող են այդ մասնակցի **համաձայնությամբ** նրան փոխհատուցում վճարել: Այն դեպքերում, երբ սեփականատիրոջ բաժինն աննշան է, չի կարող իրապես առանձնացվել և ընդհանուր գույքի օգտագործման մեջ այդ սեփականատերն էական շահ չունի, դատարանը կարող է նաև այդ սեփականատիրոջ համաձայնության բացակայության դեպքում բաժնային սեփականության մյուս մասնակիցներին թույլատրել վճարելու փոխհատուցում:

Նույն հոդվածի 5-րդ կետի համաձայն՝ նույն հոդվածի համապատասխան՝ փոխհատուցումն ստանալու պահից սեփականատերը կորցնում է ընդհանուր գույքում բաժնի նկատմամբ իրավունքը:

Նույն հոդվածի 6-րդ կետի համաձայն՝ ընդհանուր գույքը բաժանելու կամ դրանից նույն հոդվածի 3-5-րդ կետերում սահմանված կանոններով բաժին առանձնացնելու ակնհայտ աննպատակահարմարության դեպքում դատարանն իրավունք ունի վճիռ կայացնել գույքը հրապարակային սակարկություններով վաճառելու մասին՝ ստացված գումարը հետագայում բաշխելով ընդհանուր սեփականության մասնակիցների միջև՝ նրանց բաժիններին համաչափ:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 199-րդ հոդվածի 3-րդ կետի համաձայն՝ ընդհանուր գույքը բաժանելու և դրանից բաժին առանձնացնելու հիմքերը և կարգը սահմանվում են նույն օրենսգրքի 197 հոդվածի կանոններով:

Նշված նորմերի վերլուծությունից հետևում է, որ բաժնային սեփականության մասնակիցն իրավունք ունի պահանջել ընդհանուր գույքից բնեղենով առանձնացնել իր բաժինը միայն այն դեպքում, երբ բաժնային սեփականության մասնակիցների միջև **բացակայում է** ընդհանուր գույքը բաժանելու կամ դրանից նրանցից մեկի բաժինն առանձնացնելու եղանակի և պայմանների մասին **համաձայնություն**:

Միաժամանակ, այն դեպքում, երբ բաժնային սեփականության մասնակցի բաժինը բնեղենով առանձնացնելը չի թույլատրվում օրենքով կամ այդպիսի առանձնացումն անհնար է առանց ընդհանուր սեփականության ներքո գտնվող գույքին անհամաչափ վնաս պատճառելու, առանձնացող սեփականատերը բաժնային սեփականության մյուս մասնակիցներից կարող է պահանջել վճարել իր բաժնի արժեքը միայն նրանց **համաձայնությամբ**, քանի որ այդպիսի համաձայնության բացակայությունը կհանգեցնի **կամրի ինքնավարության և գույքային ինքնությունության** սկզբունքի խախտման, հետևաբար նաև անձի սեփականության իրավունքի խախտման:

Վերոգրյալ համաձայնության պարտադիր լինելը հաստատվում է նաև այն

հանգամանքով, որ բաժնային սեփականության մասնակցի բաժինը բնօրինակում առանձնացնելու փոխարեն մյուս սեփականատերերը նրան փոխհատուցում վճարելու իրավունք ունեն նույնպես միայն նրա **համաձայնությամբ**, բացառությամբ այն դեպքերի, երբ սեփականատիրոջ բաժինն աննշան է, չի կարող իրապես առանձնացվել և ընդհանուր գույքի օգտագործման մեջ այդ սեփականատերն էական շահ չունի:

Սույն գործով Վերաքննիչ դատարանը վերաքննիչ բողոքը մերժելու հիմքում դրել է այն հիմնավորումը, որ Դատարանը, նկատի ունենալով, որ վիճելի բնակարանի բաժնային սեփականության մասնակիցների միջև բացակայում է բաժնային սեփականության ներքո գտնվող գույքը բաժանելու վերաբերյալ համաձայնություն, ինչպես նաև վիճելի բնակարանից տեխնիկապես հնարավոր չէ առանձնացնել Դավիթ Ասատրյանին հասանելիք 1/2 բաժնեմասը Սվետլանա Ասատրյանին և Արթուր Գասիսյանին հասանելիք 1/5 բաժնեմասերից, կիրառել է ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 197-րդ հոդվածի 3-5-րդ կետերով սահմանված հաջորդ նախապայմանը, որը վերաբերում է բաժնային սեփականության իրավունքում բաժնի դիմաց համապատասխան դրամական գումարի վճարմանը կամ այլ փոխհատուցմանը:

Մինչդեռ, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Վերաքննիչ դատարանը, հաստատված համարելով այն հանգամանքները, որ վիճելի բնակարանի բաժնային սեփականության մասնակիցների միջև բացակայում է բաժնային սեփականության ներքո գտնվող գույքը բաժանելու վերաբերյալ համաձայնություն, ինչպես նաև վիճելի բնակարանից տեխնիկապես հնարավոր չէ առանձնացնել Դավիթ Ասատրյանին հասանելիք 1/2 բաժնեմասը Սվետլանա Ասատրյանին և Արթուր Գասիսյանին հասանելիք 1/5 բաժնեմասերից, անտեսել է այն հանգամանքը, որ նման պայմաններում Դատարանն իրավասու չէր Սվետլանա Ասատրյանին և Արթուր Գասիսյանին պարտավորեցնել փոխհատուցում տրամադրել Դավիթ Ասատրյանին, քանի որ այն դեպքում, երբ բաժնային սեփականության մասնակցի բաժինը բնօրինակում առանձնացնելը չի թույլատրվում օրենքով կամ այդպիսի առանձնացումն անհնար է առանց ընդհանուր սեփականության ներքո գտնվող գույքին անհամաչափ վնաս պատճառելու, առանձնացող սեփականատերը բաժնային սեփականության մյուս մասնակիցներից կարող է պահանջել վճարել իր բաժնի արժեքը միայն նրանց համաձայնությամբ, ինչը տվյալ դեպքում առկա չէ:

Միաժամանակ, Դատարանը վճռի եզրափակիչ մասի 2-րդ կետով նույն մասի 1-ին կետում նշված ժամկետում և չափով փոխհատուցումը Սվետլանա Ասատրյանի և Արթուր Գասիսյանի կողմից չտրամադրվելու դեպքում Դավիթ Ասատրյանին թույլատրել է նույն մասի 1-ին կետում նշված ժամկետի ավարտից հետո 10-օրյա ժամկետում փոխհատուցում վճարել Սվետլանա Ասատրյանին և Արթուր Գասիսյանին:

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ Դատարանը, կայացնելով պայմանով վճիռ, անտեսել է, որ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքով նման տեսակի վճիռ կայացնելու լիազորություն իրեն վերապահված չէ, քանի որ այդպիսի տեսակի վճռի կայացումը կարող է հանգեցնել դատական ակտի որոշակիության սկզբունքի խախտման, որպիսի սկզբունքը թեև քաղաքացիական դատավարության օրենսդրությամբ սահմանված չէ, սակայն այն իրավական հասկացություն է և միջազգայնորեն ճանաչված սկզբունք ու ենթադրում է, որ դատական ակտը պետք է լինի որոշակի՝ այն պետք է ձևակերպվի հստակ և հասկանալի, դրա բովանդակությունը պետք է շարադրվի այնպես, որպեսզի դատավարության մասնակիցների համար ակնառու և ակնհայտ լինի, թե իրենց ինչ

իրավունք է տրամադրվում, իրենց որ իրավունքն է սահմանափակվում, իրենց ինչ իրավունքից են զրկում կամ իրենց վրա ինչ պարտականություն է դրվում:

Վերոգրյալի հիման վրա Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Վերաքննիչ դատարանը սխալ է մեկնաբանել ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 197-րդ հոդվածը, ինչպես նաև անտեսել է Դատարանի կողմից թույլ տրված վերը նշված խախտումը:

Ինչ վերաբերում է բողոք բերած անձանց փաստարկին այն մասին, որ Վերաքննիչ դատարանն անտեսել է, որ Դատարանը, ակնհայտորեն իրագել լինելով դատաքննությանը ներկայանալու, ապացույցներ ներկայացնելու և առարկություններ հայտնելու Սվետլանա Ասատրյանի և Արթուր Գասիայանի ցանկության մասին, այնուամենայնիվ վերջիններիս բացակայությամբ լսել է Դավիթ Ասատրյանին և ավարտել է դատաքննությունը, ինչի արդյունքում անհնարին է դարձրել Սվետլանա Ասատրյանի և Արթուր Գասիայանի կողմից ապացույցներ ներկայացնելու և առարկություններ հայտնելու հնարավորությունը, ապա Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ այդ մասով վճռաբեկ բողոքն անհիմն է, իսկ Վերաքննիչ դատարանի պատճառաբանությունները հիմնավոր են, քանի որ սույն գործի փաստերի համաձայն՝ Դատարանի կողմից 19.07.2010 թվականին նշանակված դատական նիստի ժամանակի և վայրի մասին ծանուցագրերը բողոք բերած անձանց են ուղարկվել վերջիններիս բնակության վայրի հասցեով՝ «ք. Երևան, Իսակովի 302., 4բն.», և նրանք այդ ծանուցագրերը ստացել են 10.07.2010 թվականին, սակայն դատական նիստին չեն ներկայացել: Այսինքն՝ բողոք բերած անձինք պատշաճ կարգով ծանուցվել են դատական նիստի ժամանակի և վայրի մասին և նրանք որևէ կերպ չեն զրկվել ապացույցներ ներկայացնելու և առարկություններ հայտնելու հնարավորությունից:

Նշված պատճառաբանություններով հերքվում են վճռաբեկ բողոքի պատրասխանով ներկայացված փաստարկները:

Այսպիսով, սույն վճռաբեկ բողոքի հիմքի առկայությունը Վճռաբեկ դատարանը համարում է բավարար՝ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 227-րդ և 228-րդ հոդվածների ուժով Վերաքննիչ դատարանի որոշումը բեկանելու համար:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 240-241²-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

ՈՐՈՇԵՑ

1. Վճռաբեկ բողոքը բավարարել: Բեկանել ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 25.11.2010 թվականի որոշումը և գործն ուղարկել Երևանի Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարան՝ նոր քննության:

2. Պետական տուրքի բաշխման հարցին անդրադառնալ գործի նոր քննության ընթացքում:

3. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

*ՆԱԽԱԳԱՀՈՂ՝ ստորագրություն
ԴԱՏԱՎՈՐՆԵՐ՝ ստորագրություններ*

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ ԳՐԱՎԻ ՄԱՍԻՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական Քաղաքացիական գործ թիվ ԵԱՆԴ/0399/02/09
դատարանի որոշում 2011թ.
Քաղաքացիական գործ թիվ ԵԱՆԴ/0399/02/09
Նախագահող դատավոր՝ Ա. Խառատյան
Դատավորներ՝ Կ. Զիլինգարյան
Ա. Պետրոսյան

ՈՐՈՇՈՒՄ

ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քաղաքացիական և վարչական պալատը (այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

նախագահությամբ

մասնակցությամբ դատավորներ

Ե. ԽՈՒՆԴԿԱՐՅԱՆԻ
Տ. ՊԵՏՐՈՍՅԱՆԻ
Վ. ԱՐԵԼՅԱՆԻ
Ս. ԱՆՏՈՆՅԱՆԻ
Վ. ԱՎԱՆԵՍՅԱՆԻ
Ա. ԲԱՐՍԵՂՅԱՆԻ
Մ. ԴՐՄԵՅԱՆԻ
Գ. ՀԱԿՈԲՅԱՆԻ
Է. ՀԱՅՐԻՅԱՆԻ
Ե. ՍՈՂՈՄՈՆՅԱՆԻ

2011 թվականի ապրիլի 01-ին

դոնբաց դատական նիստում, քննելով «Յունիքանկ» ՓԲԸ-ի (այսուհետ՝ Ընկերություն) վճռաբեկ բողոքը ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 14.07.2010 թվականի որոշման դեմ՝ ըստ հայցի Ընկերության ընդդեմ Գևորգ, Սիրվարդ, Գագիկ, Գոռ, Ռայիսա Նիկոլյանների, Սյուզաննա Պողոսյանի, Մանե Մարտիրոսյանի՝ գույքն ապօրինի տիրապետումից հետ վերցնելու և վտարելու պահանջների մասին և Գևորգ Նիկոլյանի հակընդդեմ հայցի ընդդեմ Ընկերության՝ գումար բռնագանձելու պահանջի մասին,

ՊԱՐԶԵՑ

1. Գործի դատավարական նախապատմությունը

Դիմելով դատարան՝ Ընկերությունը պահանջել է Գևորգ, Սիրվարդ, Գագիկ, Գոռ, Ռայիսա Նիկոլյանների, Սյուզաննա Պողոսյանի և Մանե Մարտիրոսյանի ապօրինի տիրապետումից հետ պահանջել Երևանի Ավանի 7-րդ փողոցի 2-րդ նրբանցքի թիվ 38/3 բնակելի տունը և նրանց վտարել նշված տնից:

Հակընդդեմ հայցով դիմելով դատարան՝ Գևորգ Նիկոլյանը պահանջել է Ընկերությունից բռնագանձել Երևանի Ավանի 7-րդ փողոցի 2-րդ նրբանցքի թիվ 38/3 բնակելի տան լիկվիդացիոն արժեքի և Ընկերության հանդեպ ունեցած վարկային պարտավորության տարբերությունը կազմող 6.267.978 ՀՀ դրամը:

Երևանի Ավան և Նոր Նորք համայնքների ընդհանուր իրավասության առաջին աստյանի դատարանի (այսուհետ՝ Դատարան) 20.08.2009 թվականի վճռով հայցը բավարարվել է, իսկ հակընդդեմ հայցը՝ մերժվել:

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի (այսուհետ՝ Վերաքննիչ դատարան) 14.07.2010 թվականի որոշմամբ Գևորգ Նիկոլյանի վերաքննիչ բողոքը բավարարվել է մասնակիորեն. Դատարանի 20.08.2009 թվականի վճիռը բեկանվել է հակընդդեմ հայցը մերժելու մասով, և այդ մասով գործն ուղարկվել է նոր քննության:

Սույն գործով վճռաբեկ բողոք է ներկայացրել Ընկերությունը:

Վճռաբեկ բողոքի պատասխան չի ներկայացվել:

2. Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը

Սույն վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքերի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

1) Վերաքննիչ դատարանը չի կիրառել ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 3-րդ հոդվածը, 249-րդ հոդվածի 1-ին կետի 1-ին և 2-րդ ենթակետերը, 437-րդ հոդվածի 1-ին և 4-րդ կետերը, 438-րդ հոդվածը, որոնք պետք է կիրառեր, խախտել է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 47-րդ, 48-րդ, 53-րդ, 131-րդ հոդվածները:

Բողոք բերած անձը նշված պնդումը պարձառաքանել է հետևյալ փաստարկներով.

Վերաքննիչ դատարանը հաշվի չի առել, որ «Յունի Օգենկա» ՓԲԸ-ի 08.07.2009 թվականի թիվ 94 գնահատման հաշվետվության համաձայն՝ վեճի առարկա տան մտավոր լիկվիդացիոն արժեքը 2009 թվականի հունվար ամսին կազմել է 63.000.000 ՀՀ դրամ, իսկ Ընկերության 29.05.2009 թվականի թիվ 31 տեղեկանքի համաձայն՝ Ընկերության հանդեպ Գևորգ Նիկոլյանի ունեցած պարտքը կազմել է 63.732.022,20 ՀՀ դրամ: Այսինքն՝ Ընկերությունը Գևորգ Նիկոլյանին գումար վերադարձնելու պարտավորություն չունի:

2) Վերաքննիչ դատարանը խախտել է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 6-րդ, 14-րդ, 28-րդ, 78-րդ, 80-րդ հոդվածները:

Բողոք բերած անձը նշված պնդումը պարձառաքանել է հետևյալ փաստարկներով.

Վերաքննիչ դատարանն անտեսել է, որ Սյուզաննա Պողոսյանը սկզբնական հայցով պատասխանող է, իսկ հակընդդեմ հայցով հայցվոր Գևորգ Նիկոլյանի ներկայացուցիչն է, որին պատշաճ կերպով ուղարկվել են դատավարական բոլոր փաստաթղթերը:

Վերագրյալի հիման վրա բողոք բերած անձը պահանջել է բեկանել Վերաքննիչ դատարանի 14.07.2010 թվականի որոշումը և օրինական ուժ տալ Դատարանի 20.08.2009 թվականի վճռին:

3. Վճռաբեկ բողոքի քննության համար նշանակություն ունեցող փաստերը

Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ

փաստերը՝

1) Ընկերության և Գևորգ Նիկոլյանի միջև 22.07.2008 թվականին կնքված թիվ 529 վարկային պայմանագրի համաձայն՝ Գևորգ Նիկոլյանին տրամադրվել է 60.000.000 ՀՀ դրամ վարկ՝ տարեկան 17 տոկոս տոկոսադրույքով, մինչև 22.07.2028 թվականը մարման ժամկետով (**հատոր 1-ին, գ.թ. 37-38**):

2) 22.07.2008 թվականի թիվ 529/ԱՀ առուվաճառքի և հիփոթեքի պայմանագրի համաձայն՝ Գևորգ Նիկոլյանը գնել և որպես վարկային պարտավորության ապահովման միջոց գրավադրել է Երևանի Ավանի 7-րդ փողոցի 2-րդ նրբանցքի թիվ 38/3 հասցեում գտնվող բնակելի տունը: Պայմանագրի 2.3 կետի համաձայն՝ անշարժ գույքի ընդհանուր շուկայական լիկվիդացիոն արժեքը կողմերի համաձայնությամբ գնահատվել է 70.000.000 ՀՀ դրամ, 6.4 կետի համաձայն՝ գրավով ապահովվում է գրավատուի պահանջն այն ծավալով, որն առկա է փաստացի բավարարման պահին, իսկ 7.2 կետի համաձայն՝ նույն պայմանագրի 1.1 կետում նշված վարկային պայմանագրով նախատեսված պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու դեպքում Գևորգ Նիկոլյանը տալիս է իր համաձայնությունը իր կողմից չկատարված պարտավորության համապատասխան մասի դիմաց անշարժ գույքն արտադատարանական կարգով Ընկերությանն ի սեփականություն հանձնելու վերաբերյալ: Պայմանագրի 7.3 կետով սահմանվել է, որ Ընկերության պահանջները բավարարելուց հետո գույքի իրացումից ստացված միջոցների մնացորդը կվերադարձվի Գևորգ Նիկոլյանին (**հատոր 1-ին, գ.թ. 6-12**):

3) 26.01.2009 թվականի անշարժ գույքի սեփականության իրավունքի գրանցման թիվ 2586346 վկայականի և Ընկերության կողմից Գևորգ Նիկոլյանին 16.03.2009 թվականին ուղարկված ծանուցման համաձայն՝ Գևորգ Նիկոլյանի կողմից վարկային պարտավորությունները ոչ պատշաճ կատարելու համար ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 249-րդ հոդվածի ուժով և 22.07.2008 թվականի առուվաճառքի և հիփոթեքի թիվ 529/ԱՀ պայմանագրի, Ընկերության 02.10.2008 թվականի թիվ 365 բռնագանձման ծանուցման, Ընկերության 10.01.2009 թվականի թիվ 09/09/11 գրության հիման վրա Երևանի Ավանի 7-րդ փողոցի 2-րդ նրբանցքի թիվ 38/3 հասցեում գտնվող բնակելի տան նկատմամբ 26.01.2009 թվականին գրանցվել է Ընկերության սեփականության իրավունքը (**հատոր 1-ին, գ.թ. 13-17**):

4) Ընկերության 29.05.2009 թվականի տեղեկանքի համաձայն՝ Ընկերության հանդեպ Գևորգ Նիկոլյանի ունեցած վարկային պարտավորության ընդհանուր գումարը 29.01.2009 թվականի դրությամբ կազմել է 63.732.022,20 ՀՀ դրամ (**հատոր 1-ին, գ.թ. 36**):

5) «Յունի Օգենկա» ՓԲԸ-ի 08.07.2009 թվականի գնահատման եզրակացության համաձայն՝ 2009 թվականի հունվարի դրությամբ Երևանի Ավանի 7-րդ փողոցի 2-րդ նրբանցքի թիվ 38/3 հասցեում գտնվող բնակելի տան շուկայական արժեքը կազմել է 79.000.000 ՀՀ դրամ, իսկ լիկվիդացիոն արժեքը՝ 63.000.000 ՀՀ դրամ (**հատոր 2-րդ, գ.թ. 3-17**):

6) Սույն գործով հակընդդեմ հայցը ներկայացրել է Գևորգ Նիկոլյանը, իսկ Սյուզաննա Պողոսյանը հանդես է եկել որպես սկզբնական հայցով պատասխանող և հակընդդեմ հայցվոր Գևորգ Նիկոլյանի ներկայացուցիչ և վերաքննիչ բողոքով վիճարկել է միայն Դատարանի 20.08.2009 թվականի վճռի՝ հակընդդեմ հայցը մերժելու մասը (**հատոր 1-ին, գ.թ. 34-35, 52, 82, հատոր 3-րդ, գ.թ. 4-7**):

7) Սյուզաննա Պողոսյանը պատշաճ կերպով ստացել է Դատարանի 24.06.2009

թվականի, 01.07.2009 թվականի դատական նիստերի վայրի և ժամանակի մասին ծանուցագրերը, հակընդդեմ հայցվոր Գևորգ Նիկոլյանին Երևանի Ավանի 7-րդ փողոցի 2-րդ նրբանցքի թիվ 38/3 հասցեով ուղարկված Դատարանի 23.07.2009 թվականի, 30.07.2009 թվականի դատական նիստերի վայրի և ժամանակի վերաբերյալ ծանուցագրերը, ինչպես նաև Դատարանի վճիռը նույնպես ստացվել են (**հատոր 1-ին, գ.թ. 91, 105, հատոր 2-րդ, գ.թ. 25, 31, 37, 44-45, 81-82**):

4. Վճուրբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը

Քննելով վճուրբեկ բողոքը նշված հիմքերի սահմաններում՝ Վճուրբեկ դատարանը գրնում է, որ՝

1) վճուրբեկ բողոքն առաջին հիմքով հիմնավոր է հետևյալ պարամտաբանությամբ.

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 53-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ դատարանը յուրաքանչյուր ապացույց գնահատում է գործում եղած բոլոր ապացույցների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտության վրա հիմնված ներքին համոզմամբ:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 249-րդ հոդվածի 1-ին կետի 1-ին ենթակետի համաձայն՝ գրավառուն իր պահանջի բավարարման նպատակով իրավունք ունի առանց դատարան դիմելու գրավի առարկայի վրա բռնագանձում տարածելու և իրացնելու այն, այդ թվում՝ գրավ դրված գույքը հիմնական պարտավորության համապատասխան չափի դիմաց գրավառուին կամ գրավառուի նշած երրորդ անձին ի սեփականություն հանձնելու, եթե դա նախատեսված է գրավի պայմանագրով:

Նույն հոդվածի 2-րդ կետի 3-րդ պարբերության 2-րդ նախադասության համաձայն՝ գրավառուն պարտավոր է գրավի առարկան իրացնել **տվյալ պահին շուկայում գործող ողջամիտ գնով:**

ՀՀ առևտրի և տնտեսական զարգացման նախարարության (ստանդարտացման ազգային մարմնի) 29.06.2006 թվականի թիվ 146-Ա հրամանով գործողության մեջ դրված Հայաստանի Հանրապետությունում անշարժ գույքի գնահատման թիվ ՀՍՏ 252-2006 ստանդարտի համաձայն՝ լիկվիդացիոն արժեքն անշարժ գույքի արժեքն է, երբ այն պետք է վաճառվի նմանատիպ անշարժ գույքի վաճառքի համար շուկայում ներկայացման նախատեսված ժամկետից ավելի կարճ ժամանակահատվածում:

Նշված դրույթների վերլուծությունից հետևում է, որ գրավառուն իր պահանջի բավարարման նպատակով իրավունք ունի գրավ դրված գույքը **տվյալ պահին շուկայում գործող ողջամիտ գնի հաշվարկով** հիմնական պարտավորության համապատասխան չափի դիմաց դարձնել իր սեփականությունը կամ հանձնել երրորդ անձին ի սեփականություն:

Վերը նշվածից ելնելով՝ Վճուրբեկ դատարանն արձանագրում է, որ գրավադրված անշարժ գույքն իրացնելիս տվյալ պահին շուկայում գործող ողջամիտ գինը կարող է լինել միայն դրա արագ վաճառքի գինը, այսինքն՝ լիկվիդացիոն արժեքը, քանի որ միայն նման ձևով է հնարավոր ապահովել գրավի առարկայի արագ իրացումն ու գրավառուի պահանջների բավարարումը:

Սույն գործով Դատարանը, պատճառաբանելով, որ «Յունի Օցենկա» ՓԲԸ-ի 08.07.2009 թվականի գնահատման եզրակացության համաձայն՝ 2009 թվականի հունվարի դրությամբ Երևանի Ավանի 7-րդ փողոցի 2-րդ նրբանցքի թիվ 38/3

հասցեում գտնվող բնակելի տան լիկվիդացիոն արժեքը կազմել է 63.000.000 ՀՀ դրամ, իսկ Ընկերության 29.05.2009 թվականի թիվ 31 տեղեկանքի համաձայն՝ Ընկերության հանդեպ Գևորգ Նիկոլյանի ունեցած վարկային պարտավորության ընդհանուր գումարը կազմել է 63.732.022,20 ՀՀ դրամ, գտել է, որ Ընկերությունը Գևորգ Նիկոլյանին գումար վերադարձնելու պարտավորություն չի կարող կրել:

Վերաքննիչ դատարանը, բեկանելով դատական ակտը, պատճառաբանել է, որ Դատարանը հակընդդեմ հայցը մերժելու մասին վճիռը կայացրել է ապացույցների, մասնավորապես՝ կողմերի միջև 22.07.2008 թվականին կնքված թիվ 529 վարկային, 22.07.2008 թվականին կնքված թիվ 529/ԱՀ առուվաճառքի և հիփոթեքի պայմանագրերի, 16.03.2009 թվականին Գևորգ Նիկոլյանին ուղղված բնակելի տարածքն ազատելու վերաբերյալ ծանուցման, 29.05.2009 թվականին Գևորգ Նիկոլյանին ուղղված պարտքի վերաբերյալ տեղեկանքի, «Յունի Օգենկա» ՓԲԸ-ի կողմից տրված հաշվետվության սխալ գնահատման արդյունքում:

Սույն գործի փաստերի համաձայն՝ 22.07.2008 թվականի թիվ 529/ԱՀ առուվաճառքի և հիփոթեքի պայմանագրով Գևորգ Նիկոլյանը գնել և որպես վարկային պարտավորության ապահովման միջոց՝ գրավադրել է Երևանի Ավանի 7-րդ փողոցի 2-րդ նրբանցքի թիվ 38/3 հասցեում գտնվող բնակելի տունը: Պայմանագրի 2.3 կետի համաձայն՝ անշարժ գույքի ընդհանուր շուկայական լիկվիդացիոն արժեքը կողմերի համաձայնությամբ գնահատվել է 70.000.000 ՀՀ դրամ, 6.4 կետի համաձայն՝ գրավով ապահովվում է գրավատուի պահանջն այն ծավալով, որն առկա է փաստացի բավարարման պահին, իսկ 7.2 կետի համաձայն՝ նույն պայմանագրի 1.1 կետում նշված վարկային պայմանագրով նախատեսված պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու դեպքում Գևորգ Նիկոլյանը տալիս է իր համաձայնությունը իր կողմից չկատարված պարտավորության համապատասխան մասի դիմաց անշարժ գույքն արտադատարանական կարգով Ընկերությանն ի սեփականություն հանձնելու վերաբերյալ: Գևորգ Նիկոլյանի կողմից վարկային պարտավորությունները ոչ պատշաճ կատարելու համար նշված բնակելի տան նկատմամբ 26.01.2009 թվականին գրանցվել է Ընկերության սեփականության իրավունքը: Ընկերության 29.05.2009 թվականի տեղեկանքի համաձայն՝ Ընկերության հանդեպ Գևորգ Նիկոլյանի ունեցած վարկային պարտավորության ընդհանուր գումարը 29.01.2009 թվականի դրությամբ կազմել է 63.732.022,20 ՀՀ դրամ: «Յունի Օգենկա» ՓԲԸ-ի 08.07.2009 թվականի գնահատման եզրակացության համաձայն՝ 2009 թվականի հունվարի դրությամբ Երևանի Ավանի 7-րդ փողոցի 2-րդ նրբանցքի թիվ 38/3 հասցեում գտնվող բնակելի տան շուկայական արժեքը կազմել է 79.000.000 ՀՀ դրամ, իսկ լիկվիդացիոն արժեքը՝ 63.000.000 ՀՀ դրամ:

Հիմք ընդունելով վերոգրյալը և սույն գործի փաստերը համադրելով՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Երևանի Ավանի 7-րդ փողոցի 2-րդ նրբանցքի թիվ 38/3 հասցեում գտնվող բնակելի տան նկատմամբ Ընկերության սեփականության իրավունքը գրանցելու պահին Ընկերության հանդեպ Գևորգ Նիկոլյանի ունեցած վարկային պարտավորության ընդհանուր գումարը տվյալ պահին նշված տան լիկվիդացիոն արժեքից ավելի էր: Այսինքն՝ Ընկերությունը տվյալ պահին շուկայում գործող ողջամիտ գնի հաշվարկով Գևորգ Նիկոլյանի պարտավորության չափի դիմաց գրավադրված գույքը դարձրել է իր սեփականությունը, իսկ 22.07.2008 թվականի թիվ 529/ԱՀ առուվաճառքի և հիփոթեքի պայմանագրով գնահատված անշարժ գույքի շուկայական լիկվիդացիոն արժեքը չի կարող գույքն իրացնելու պահին դրա արժեքը

որոշելու հիմք հանդիսանալ: Հետևաբար, Ընկերությունը Գևորգ Նիկոլյանին գումար վերադարձնելու պարտավորություն չունի:

2) *Վճուրբեկ բողոքը երկրորդ հիմքով հիմնավոր է հեղուկալ պայմանադրությանը:*

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 6-րդ հոդվածի համաձայն՝ քաղաքացիական դատավարությունն իրականացվում է կողմերի մրցակցության և իրավահավասարության հիման վրա:

Սույն գործով Վերաքննիչ դատարանը պատճառաբանել է, որ Դատարանում սույն քաղաքացիական գործի քննության ընթացքում քաղաքացիական գործով պատասխանող Սյուզաննա Պողոսյանը մեկնել է երկարատև գործուղման, ինչի արդյունքում գրկվել է իր հետագա դատավարական գործողությունները կատարելու հնարավորությունից: Մասնավորապես՝ չի մասնակցել դատաքննություններին, նրան ծանուցագրերը պատշաճ ձևով չեն ուղարկվել, չի ստացել վճիռի բնօրինակը: Հետևաբար, Դատարանը թույլ է տվել ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 6-րդ հոդվածի խախտում, ինչը հիմնավորվում է համապատասխան դատավարական փաստաթղթերը կողմին պատշաճ ձևով հանձնվելու մասին ապացույցների բացակայությամբ:

Մինչդեռ, սույն գործի փաստերի համաձայն՝ հակընդդեմ հայցը ներկայացրել է Գևորգ Նիկոլյանը, իսկ Սյուզաննա Պողոսյանը հանդես է եկել որպես սկզբնական հայցով պատասխանող և հակընդդեմ հայցվոր Գևորգ Նիկոլյանի ներկայացուցիչ և վերաքննիչ բողոքով վիճարկել է միայն Դատարանի 20.08.2009 թվականի վճիռ՝ հակընդդեմ հայցը մերժելու մասը: Սյուզաննա Պողոսյանը պատշաճ կերպով ստացել է Դատարանի 24.06.2009 թվականի, 01.07.2009 թվականի դատական նիստերի վայրի և ժամանակի մասին ծանուցագրերը, իսկ հակընդդեմ հայցվոր Գևորգ Նիկոլյանը ստացել է Երևանի Ավանի 7-րդ փողոցի 2-րդ նրբանցքի թիվ 38/3 հասցեով ուղարկված Դատարանի 23.07.2009 թվականի, 30.07.2009 թվականի դատական նիստերի վայրի և ժամանակի վերաբերյալ ծանուցագրերը, ինչպես նաև Դատարանի վճիռը:

Հիմք ընդունելով վերոգրյալը՝ Վճուրբեկ դատարանը գտնում է, որ Սյուզաննա Պողոսյանի՝ հակընդդեմ հայցով գործին մասնակցող անձ չլինելու և Դատարանի վճիռը միայն հակընդդեմ հայցի մասով վիճարկելու պայմաններում վերջինիս նկատմամբ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 6-րդ հոդվածով սահմանված դատավարության մրցակցության և իրավահավասարության սկզբունքների խախտում տեղի չի ունեցել:

Այսպիսով, վճուրբեկ բողոքի հիմքերի առկայությունը Վճուրբեկ դատարանը համարում է բավարար՝ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 227-228-րդ հոդվածների ուժով Վերաքննիչ դատարանի որոշումը բեկանելու համար:

Միաժամանակ, Վճուրբեկ դատարանը գտնում է, որ սույն գործով անհրաժեշտ է կիրառել ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 240-րդ հոդվածի 1-ին կետի 6-րդ ենթակետով սահմանված՝ առաջին ատյանի դատարանի դատական ակտին օրինական ուժ տալու՝ Վճուրբեկ դատարանի լիազորությունը հետևյալ հիմնավորմամբ.

«Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության

մասին» Եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի ողջամիտ ժամկետում իր գործի քննության իրավունք: Սույն քաղաքացիական գործով վեճի լուծումն էական նշանակություն ունի գործին մասնակցող անձանց համար: Վճռաբեկ դատարանը գտնում է, որ գործը ողջամիտ ժամկետում քննելը հանդիսանում է Կոնվենցիայի նույն հոդվածով ամրագրված անձի արդար դատաքննության իրավունքի տարր, հետևաբար, գործի անհարկի ձգձգումները վտանգ են պարունակում նշված իրավունքի խախտման տեսանկյունից: Տվյալ դեպքում, Վճռաբեկ դատարանի կողմից ստորադաս դատարանի դատական ակտին օրինական ուժ տալը բխում է արդարադատության արդյունավետության շահերից:

Առաջին ատյանի դատարանի վճռին օրինական ուժ տալիս Վճռաբեկ դատարանը հիմք է ընդունում սույն որոշման պատճառաբանությունները, ինչպես նաև գործի նոր քննության անհրաժեշտության բացակայությունը:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 240-241²-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

ՈՐՈՇԵՑ

1. Վճռաբեկ բողոքը բավարարել: Բեկանել ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 14.07.2010 թվականի որոշումը և օրինական ուժ տալ Երևանի Ավան և Նոր Նորք համայնքների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի 20.08.2009 թվականի վճռին:

2. Գևորգ Նիկոլյանից հոգուտ Հայաստանի Հանրապետության բռնագանձել 188.040 (մեկ հարյուր ութսունութ հազար քառասուն) ՀՀ դրամ՝ որպես վերաքննիչ բողոքի համար վճարման ենթակա պետական տուրքի գումար:

Գևորգ Նիկոլյանից հոգուտ «Յունիբանկ» ՓԲԸ-ի բռնագանձել 188.040 (մեկ հարյուր ութսունութ հազար քառասուն) ՀՀ դրամ՝ որպես վճռաբեկ բողոքի համար վճարված պետական տուրքի գումար:

3. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

*ՆԱԽԱԳԱՀՈՂ՝ արտրագրություն
ԴԱՏԱՎՈՐՆԵՐՔ՝ արտրագրություններ*

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական Քաղաքացիական գործ թիվ ԵԷԴ /0431/02/09
դատարանի որոշում 2011թ.
Քաղաքացիական գործ թիվ ԵԷԴ /0431/02/09
Նախագահող դատավոր՝ Տ. Նազարյան
Դատավորներ՝ Կ. Հակոբյան
Տ. Սահակյան

ՈՐՈՇՈՒՄ

ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քաղաքացիական
և վարչական պալատը (այսուհետ՝ վճռաբեկ դատարան)

նախագահությամբ

մասնակցությամբ դատավորներ

Ե. ԽՈՒՆԴԿՎԱՐՅԱՆԻ

Վ. ԱՔԵԼՅԱՆԻ

Վ. ԱՎԱՆԵՍՅԱՆԻ

Ա. ԲԱՐՍԵՂՅԱՆԻ

Մ. ԴՐՄԵՅԱՆԻ

Գ. ՀԱԿՈՔՅԱՆԻ

Տ. ՊԵՏՐՈՍՅԱՆԻ

Ե. ՍՈՂՈՄՈՆՅԱՆԻ

2011 թվականի հուլիսի 01-ին

դռնբաց դատական նիստում, քննելով «ՎՏԲ-Հայաստան Բանկ» ՓԲԸ-ի վճռաբեկ բողոքը ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 22.01.2010 թվականի որոշման դեմ՝ ըստ Անախդա Ավագյանի հայցի ընդդեմ Լևոն Ավագյանի, ՀՀ «Կենտրոն» նոտարական տարածքի նոտար Ալվարդ Մելքոնյանի, «ՎՏԲ-Հայաստան Բանկ» ՓԲԸ-ի (այսուհետ՝ Բանկ) և երրորդ անձ ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի «Էրեբունի» տարածքային ստորաբաժանման՝ ըստ օրենքի ժառանգության իրավունքի վկայագրերը և դրանց հիման վրա անշարժ գույքի նկատմամբ կատարված սեփականության իրավունքի գրանցումը, հիփոթեքի պայմանագիրը և դրա հիման վրա կատարված հիփոթեքի իրավունքի պետական գրանցումն անվավեր ճանաչելու, բնակարանի 2/3 բաժնի նկատմամբ փաստացի տիրապետմամբ ժառանգությունն ընդունած ժառանգ ճանաչելու պահանջների մասին,

ՊԱՐԶԵՑ

1. Գործի դատավարական նախապատմությունը

Դիմելով դատարան՝ Անախդա Ավագյանը պահանջել է անվավեր ճանաչել Երևանի Մուրացյան փողոցի 192-րդ շենքի թիվ 17 բնակարանի 2/3 բաժնի

նկատմամբ Լևոն Ավագյանի անվամբ ՀՀ Կենտրոն նոտարական տարածքի նոտար Ալվարդ Մելքոնյանի կողմից 23.04.2008 թվականին տրված ըստ օրենքի ժառանգության իրավունքի թիվ 2816 և թիվ 2817 վկայագրերը, դրանց հիման վրա ՀՀ կատարարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի Էրեբունի տարածքային ստորաբաժանման կողմից նշված բաժնի նկատմամբ Լևոն Ավագյանի սեփականության իրավունքի պետական գրանցումը, Լևոն Ավագյանի և Բանկի միջև կնքված և նոտարի կողմից 20.05.2008 թվականին վավերացված հիփոթեքի թիվ 0271 Ա պայմանագիրը և դրա հիման վրա կատարված հիփոթեքի իրավունքի պետական գրանցումը, իրեն ձանաչել Երևանի Մուրացան փողոցի 192-րդ շենքի թիվ 17 բնակարանի 2/3 բաժնի նկատմամբ փաստացի տիրապետմամբ ժառանգությունն ընդունած ժառանգ:

Երևանի Էրեբունի և Նուբարաշեն համայնքների ընդհանուր իրավասության դատարանի (այսուհետ՝ Դատարան) 12.10.2009 թվականի վճռով հայցը բավարարվել է:

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի (այսուհետ՝ Վերաքննիչ դատարան) 22.01.2010 թվականի որոշմամբ Դատարանի 12.10.2009 թվականի վճիռը բեկանվել է, և գործն ուղարկվել է Դատարան՝ նոր քննության:

Սույն գործով վճռաբեկ բողոք է ներկայացրել Բանկը:

Վճռաբեկ բողոքի պատասխան է ներկայացրել Լևոն Ավագյանը:

2. Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը

Սույն վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

Վերաքննիչ դատարանը խախտել է ՀՀ քաղաքացիական դատարարության օրենսգրքի 53-րդ հոդվածը, ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 228-րդ, 247-րդ, 1225-րդ, 1226-րդ, 1227-րդ, 1228-րդ հոդվածները:

Բողոք բերած անձը նշված պնդումը պարձառաքանում է հետևյալ փաստարկներով.

Վերաքննիչ դատարանն անտեսել է այն հանգամանքը, որ հիփոթեքի պայմանագիրը կնքվել է ՀՀ քաղաքացիական օրենսգրքի պահանջների պահպանմամբ, բացակայում է նաև ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 247-րդ հոդվածով նախատեսված գրավի դադարման հիմքերից որևէ մեկը, ուստի առկա չէ հիփոթեքի պայմանագիրն ու դրա հիման վրա կատարված պետական գրանցումն անվավեր ձանաչելու հիմք:

Բացի այդ, առկա չէ նաև Լևոն Ավագյանի ժառանգության իրավունքի վկայագիրն անվավեր ձանաչելու որևէ հիմք, քանի որ Անախդա Ավագյանը սահմանված կարգով և ժամկետում նոտարին դիմում չի ներկայացրել ժառանգությունն ընդունելու համար այն դեպքում, երբ նոտարիատում բացված ժառանգական գործի պայմաններում այդ մասին նա նոտարի կողմից ստացել է ծանուցագիր և այնուամենայնիվ, չի ներկայացրել ընդունելու ժառանգությունը:

Ինչ վերաբերում է Անախդա Ավագյանի կողմից Դատարան ներկայացված փոստային ծանուցման դիմումին և հավաստագրերին, որով իբրև Անախդա Ավագյանը դիմել է նոտարին փաստացի տիրապետմամբ ժառանգությունն ընդունած ժառանգ համարվելու և առկա ժառանգական գործի շրջանակներում այդ մասին Լևոն Ավագյանին բազմիցս ծանուցելու ու վերջինիս՝ այդպես էլ չներկայանալու հանգամանքները, ապա պետք է նշել, որ Դատարանի կողմից անհիմն դրանք

ընդունվել են որպես անհերքելի ապացույցներ, մինչդեռ նոտարի կողմից Դատարան ուղարկված ամբողջ ժառանգական գործում նման ապացույցներ առկա չեն:

Վերագրյալի հիման վրա բողոք բերած անձը պահանջել է բեկանել Վերաքննիչ դատարանի 22.01.2010 թվականի որոշումը և այն փոփոխել՝ հայցը մերժել:

2.1. Վճռաբեկ բողոքի պատասխանի հիմնավորումները

Անախդա Ավագյանը ժառանգությունն ընդունել է գույքը տիրապետելու պահից և պարտավոր չէր դիմել նոտարին, որպեսզի համարվեր ժառանգությունն ընդունած ժառանգ: Նման պայմաններում Լևոն Ավագյանն ընդունում է այդ փաստը և գտնում, որ վիճելի տունն ամբողջությամբ՝ ներառյալ Անախդա Ավագյանի բաժինը, գրավադնելու փաստը հակասում է օրենսդրության պահանջներին:

3. Վճռաբեկ բողոքի քննության համար նշանակություն ունեցող փաստերը

Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1. Հովհաննես Ավագյանը և Իշխանուհի Ավագյանն Անախդա և Լևոն Ավագյանների ծնողներն են, որոնք մահացել են 27.03.1998 թվականին և 24.12.2006 թվականին (հատոր 1-ին, գ.թ.17, 19, 20, հատոր 2-րդ, գ.թ. 92):

2. ՀՍՍՀ Երևան քաղաքի ժողովրդական դեպուտատների Էրեբունի շրջանային սովետի գործադիր կոմիտեի 19.09.1991 թվականի թիվ 22/42 որոշմամբ Երևանի Մուրացան փողոցի 192-րդ շենքի թիվ 17 բնակարանն անհատույց սեփականաշնորհվել է Հովհաննես Ավագյանի անվամբ՝ որպես Հայրենական Մեծ պատերազմի մասնակցի: Երևանի Էրեբունի համայնքի ղեկավարի աշխատակազմի 13.08.2007 թվականի արխիվային տեղեկանքի համաձայն՝ վերոհիշյալ սեփականաշնորհմանը մասնակցել են Հովհաննես, Իշխանուհի և Լևոն Ավագյանները (հատոր 2-րդ, գ.թ. 58, 97):

3. Ըստ օրենքի ժառանգության իրավունքի 23.04.2008 թվականի թիվ 2816 և 2817 վկայագրերի համաձայն՝ Հովհաննես Ավագյանի և Իշխանուհի Ավագյանի մահից հետո Լևոն Ավագյանը ժառանգել է Երևանի Մուրացան փողոցի 192-րդ շենքի թիվ 17 բնակարանից վերջիններիս ունեցած ամբողջ ժառանգական գանգվածը՝ յուրաքանչյուր ժառանգատուին պատկանող 1/3-ական բաժինը (հատոր 2-րդ, գ.թ. 28, 29):

4. ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի «Էրեբունի» տարածքային ստորաբաժանման 02.04.2009 թվականի թիվ 3-2579 գրության համաձայն՝ Երևանի Մուրացան փողոցի 192-րդ շենքի թիվ 17 հասցեում գտնվող անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցում կատարվել է Լևոն Ավագյանի անունով՝ հիմք ընդունելով Էրեբունու շրջգործկոմի 19.09.1991 թվականի թիվ 22/42 որոշումը, ըստ օրենքի ժառանգության իրավունքի 23.04.2008 թվականի թիվ 2816 և թիվ 2817 վկայագրերը: Անշարժ գույքը գրավադրված է «ՎՏԲ Բանկ» ՓԲԸ-ում՝ համաձայն նոտարի 20.05.2008 թվականի թիվ 0271Ա պայմանագրի (հատոր 1-ին, գ.թ. 68):

5. 20.05.2008 թվականի թիվ 0271Ա «Վարկային պայմանագրի» համաձայն՝ Բանկը վարկատուին՝ Էդուարդ Իորդանյանին, տրամադրել է 10.000.000 (տաս միլիոն) ՀՀ դրամ վարկ մինչև 20.05.2011 թվականը մարման վերջնական ժամկետով, տարեկան 22% տոկոսադրույքով (հատոր 2-րդ, գ.թ. 18-19):

6. 20.05.2008 թվականի թիվ 0271Ա «Հիփոթեքի պայմանագրի» 1.2-րդ կետի

համաձայն՝ հիշյալ վարկային պայմանագրով Էդուարդ Բորդանյանի ունեցած վարկային պարտավորությունների կատարման ապահովման համար գրավատուն՝ Լևոն Ավագյանը, գրավ է դրել սեփականության իրավունքով իրեն պատկանող Երևանի Մուրացյան փողոցի 192-րդ շենքի թիվ 17 բնակարանը (սեփականության վկայական թիվ 2259630՝ տրված 06.05.2008 թվականին) (հատոր 2-րդ, գ.թ. 20-21):

7. Անսահյա Ավագյանն ամուսնալուծվելուց հետո՝ 1984 թվականից, իր դստեր հետ մինչ այսօր բնակվում է Երևանի Մուրացյան փողոցի 192-րդ շենքի թիվ 17 հասցեում (հատոր 1-ին, գ.թ. 87):

4. Վճարելի դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումները

Քննելով վճարելի բողոքը նշված հիմքի սահմաններում՝ Վճարելի դատարանը գործում է, որ այն հիմնավոր է մասնակիորեն հերկյալ պարձառաբանությամբ:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 253-րդ հոդվածի համաձայն՝ հիփոթեքը գրավի տեսակներից է:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 261-րդ հոդվածի համաձայն՝ հիփոթեքի պայմանագրով մի կողմը՝ գրավատուն, որը հիփոթեքով ապահովված վարկային պայմանագրով կամ այլ պարտավորությամբ (հիմնական պարտավորությամբ) պարտատերն է, այդ պարտավորությամբ գրավ դրված գույքի արժեքից գրավատուի մյուս պարտատերերի հանդեպ իր դրամական պահանջները բավարարելու նախապատվության իրավունք ունի:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 263-րդ հոդվածի 3-րդ և 4-րդ կետերի համաձայն՝ հիփոթեքի պայմանագիրը պետք է կնքվի գրավոր՝ գրավատուի և գրավատուի, ինչպես նաև պարտապանի, եթե գրավատուն պարտապանը չէ, իսկ եթե նման պայմանագրի կնքման համար անհրաժեշտ է երեք և ավելի կողմերի համաձայնեցված կամքի արտահայտությունը, ապա մյուս կողմերի ստորագրությամբ՝ մեկ փաստաթուղթ կազմելու միջոցով: Հիփոթեքի պայմանագիրը պետք է վավերացվի նոտարական կարգով:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 264-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ հիփոթեքի պայմանագրով գրավի իրավունքը ենթակա է գրանցման:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 226-րդ հոդվածի 5-րդ կետի համաձայն՝ սույն պարագրաֆում պարունակվող՝ գրավի մասին ընդհանուր կանոնները կիրառվում են հիփոթեքի նկատմամբ, եթե այլ կանոններ չեն սահմանված սույն գլխի հիփոթեքին վերաբերող պարագրաֆում:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 247-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ գրավը դադարում է՝

1) գրավով ապահովված պարտավորությունը դադարելով,

2) գրավատուի պահանջով՝ սույն օրենսգրքի 237 հոդվածի 3-րդ կետով նախատեսված հիմքերով,

3) գրավ դրված գույքի ոչնչացման կամ գրավ դրված իրավունքը դադարելու դեպքում, եթե գրավատուն չի օգտվել սույն օրենսգրքի 240 հոդվածի 2-րդ կետով նախատեսված իրավունքից,

4) գրավ դրված գույքը սույն օրենսգրքով սահմանված կարգով իրացվելու (վաճառվելու) դեպքում:

Սույն գործի փաստերի համաձայն՝ 20.05.2008 թվականին Բանկի և Էդուարդ Բորդանյանի միջև կնքվել է թիվ 0271Ա «Վարկային պայմանագիրը», որով վերջինիս

տրամադրվել է 10.000.000 ՀՀ դրամ վարկ մինչև 20.05.2011 թվականը մարման վերջնական ժամկետով, տարեկան 22% տոկոսադրույքով: Այնուհետև ի ապահովումն վերոնշյալ վարկային պայմանագրով Էդուարդ Իորդանյանի ունեցած վարկային պարտավորությունների կատարման՝ 20.05.2008 թվականի թիվ 0271Ա «Հիփոթեքի պայմանագրով» Լևոն Ավագյանը գրավ է դրել սեփականության իրավունքով իրեն պատկանող՝ Երևանի Մուրացան փողոցի 192-րդ շենքի թիվ 17 բնակարանը, և պայմանագրի կնքման ժամանակ հիմք է ընդունվել վերջինիս կողմից ներկայացված՝ նշված անշարժ գույքի 06.05.2008 թվականի թիվ 2259630 սեփականության իրավունքի գրանցման վկայականը:

Դատարանը հայցը բավարարելու հիմքում դրել է այն հանգամանքը, որ Անաիդա Ավագյանն իր դստեր հետ ծնողների կենդանության օրոք բնակվել է վիճելի հասցեում, իսկ վերջիններիս մահից հետո շարունակել է օգտագործել և տիրապետել այդ բնակարանը, այսինքն՝ փաստացի տիրապետմամբ ընդունել է ծնողներին պատկանող վիճելի գույքի 2/3 բաժնի նկատմամբ ժառանգությունը:

Վերաքննիչ դատարանը գործն ուղարկել է նոր քննության՝ պատճառաբանելով, որ սույն գործի քննությամբ չի պարզվել Անաիդա և Լևոն Ավագյանների հոր ժառանգների շրջանակը, Լևոն Ավագյանի կողմից հոր ժառանգությունն ընդունելու փաստը, ինչպես նաև նրանց մոր ժառանգական զանգվածը: «Հիփոթեքի պայմանագրի» մասով Վերաքննիչ դատարանը նշել է, որ ժառանգության վկայագրերի ամբողջությամբ կամ մասնակիորեն անվավեր ճանաչվելու դեպքում Լևոն Ավագյանը կդադարի վիճելի գույքի միակ սեփականատերը լինելուց, ինչն էլ հիմք կհանդիսանա ամբողջությամբ կամ մասնակիորեն ոչ սեփականատեր հանդիսացող անձի կողմից կնքված գործարքի՝ տվյալ դեպքում հիփոթեքի պայմանագրի անվավեր ճանաչելու համար:

Մինչդեռ, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Բանկի և Լևոն Ավագյանի միջև կնքված 20.05.2008 թվականի թիվ 0271Ա «Հիփոթեքի պայմանագիրը» կնքվել է ՀՀ քաղաքացիական օրենսգրքի՝ գրավի (հիփոթեքի) պայմանագրի կնքմանն առաջադրվող վերոհիշյալ նորմերի պահպանմամբ:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 10-րդ հոդվածի 2-րդ կետի համաձայն՝ գույքի նկատմամբ պետական գրանցման ենթակա իրավունքները **ծագում են դրանց գրանցման պահից:**

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 135-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ **անշարժ գույքի նկատմամբ սեփականության իրավունքը** և այլ գույքային իրավունքները, այդ իրավունքների սահմանափակումները, դրանց ծագումը, փոխանցումն ու դադարումը ենթակա են **պետական գրանցման:**

Գրանցման ենթակա են անշարժ գույքի նկատմամբ սեփականության իրավունքը, օգտագործման իրավունքը, հիփոթեքը, սերվիտուտները, ինչպես նաև սույն օրենսգրքով և այլ օրենքներով նախատեսված դեպքերում այլ իրավունքները:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 228-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ գույքի գրավատու կարող է լինել միայն դրա **սեփականատերը:**

Վերոնշյալ նորմերից հետևում է, որ անշարժ գույքը կարող է տնօրինել, այդ թվում նաև գրավի առարկա դարձնել այն անձը, ով այդ գույքի նկատմամբ սեփականության իրավունքը ենթարկել է պետական գրանցման:

«Հիփոթեքի պայմանագիրը» կնքելիս Լևոն Ավագյանը հանդիսացել է գրավի առարկայի՝ Երևանի Մուրացան փողոցի 192-րդ շենքի թիվ 17 բնակարանի միակ

սեփականատերը (հիմք՝ սեփականության իրավունքի գրանցման վկայական թիվ 2259630՝ տրված 06.05.2008 թվականին), ինչը հիմք է տվել Բանկին, վստահելով վարչական ակտի գոյությանը, ի ապահովումն Էդուարդ Իորդանյանի վարկային պարտավորության կատարման, օրենքով սահմանված կարգով կնքելու հիշյալ պայմանագիրը: Անսիդա Ավագյանը հիշյալ գույքի տնօրինման իրավագործությունը կարող էր իրականացնել բացառապես այդ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման պահից, ուստի նա չէր կարող լինել «Հիփոթեքի պայմանագրի» կողմ: Նշված պատճառաբանությամբ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ «Հիփոթեքի պայմանագրի» կնքումը չի կարող դիտվել որպես Անսիդա Ավագյանի սեփականության իրավունքի խախտում:

Բացի այդ, Վճռաբեկ դատարանը գտնում է նաև, որ «Հիփոթեքի պայմանագրի» կնքման ժամանակ Բանկը չգիտեր և պարտավոր էլ չէր իմանալ գրավի առարկայի նկատմամբ այլ անձանց հավակնությունների մասին:

Ինչ վերաբերում է վճռաբեկ բողոքի մյուս փաստարկներին, ապա Վճռաբեկ դատարանը գտնում է, որ դրանք Բանկի իրավունքներին չեն առնչվում, հետևաբար վերջինս այդ հարցում չի կարող համարվել շահագրգիռ անձ, ինչի հետևանքով Վճռաբեկ դատարանն այդ փաստարկները քննարկման առարկա չի դարձնում:

Վերոգրյալ պատճառաբանությամբ Վճռաբեկ դատարանը չի անդրադառնում վճռաբեկ բողոքի պատասխանում բերված փաստարկներին:

Այսպիսով, վճռաբեկ բողոքի հիմքի առկայությունը Վճռաբեկ դատարանը դիտում է բավարար՝ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 227-րդ հոդվածի ուժով Վերաքննիչ դատարանի որոշումը բեկանելու համար:

Միաժամանակ, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ տվյալ դեպքում անհրաժեշտ է կիրառել ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 240-րդ հոդվածի առաջին կետի 4-րդ ենթակետով սահմանված՝ ստորադաս դատարանի դատական ակտը փոփոխելու՝ վճռաբեկ դատարանի լիազորությունը հետևյալ հիմնավորմամբ.

ՀՀ Սահմանադրության 19-րդ հոդվածի և «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի (այսուհետ՝ Կոնվենցիայի) 6-րդ հոդվածի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի ողջամիտ ժամկետում իր գործի քննության իրավունք: Վճռաբեկ դատարանը գտնում է, որ գործը ողջամիտ ժամկետում քննելը հանդիսանում է ՀՀ Սահմանադրության և Կոնվենցիայի վերը նշված հոդվածով ամրագրված անձի արդար դատաքննության իրավունքի տարր, հետևաբար, գործի անհարկի ձգձգումները վտանգ են պարունակում նշված իրավունքի խախտման տեսանկյունից: Տվյալ դեպքում, Վճռաբեկ դատարանի կողմից ստորադաս դատարանի դատական ակտը փոփոխելը բխում է արդարադատության արդյունավետության շահերից:

Դատական ակտը փոփոխելիս Վճռաբեկ դատարանը հիմք է ընդունում սույն որոշման պատճառաբանությունները, ինչպես նաև գործի նոր քննության անհրաժեշտության բացակայությունը:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 240-241²-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

ՈՐՈՇԵՑ

1. Վճռաբեկ բողոքը բավարարել մասնակիորեն: Մասնակիորեն բեկանել և փոփոխել ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 22.01.2010 թվականի որոշումը Լևոն Ավագյանի և «ՎՏԲ-Հայաստան Բանկ» ՓԲԸ-ի միջև կնքված 20.05.2008 թվականի թիվ 0271Ա պայմանագիրը և դրա հիման վրա կատարված հիփոթեքի իրավունքի պետական գրանցումն անվավեր ճանաչելու պահանջի մասով և այդ մասով հայցը մերժել: Մնացած մասով որոշումը թողնել օրինական ուժի մեջ:

2. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

*ՆԱԽԱԳԱՀՈՂ՝ ստորագրություն
ԴԱՏԱՎՈՐՆԵՐ՝ ստորագրություններ*

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական
դատարանի որոշում

Քաղաքացիական գործ թիվ ԵԿԴ/0704/02/09
2011թ.

Քաղաքացիական գործ թիվ ԵԿԴ/0704/02/09

Նախագահող դատավոր՝ Լ. Գրիգորյան

Դատավորներ՝ Գ. Մատինյան

Ա. Թումանյան

ՈՐՈՇՈՒՄ

ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քաղաքացիական և վարչական
պալատը (այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

Նախագահությամբ

մասնակցությամբ դատավորներ

Ե. ԽՈՒՆԴԿԱՐՅԱՆԻ

Տ. ՊԵՏՐՈՍՅԱՆԻ

Վ. ԱԲԵԼՅԱՆԻ

Վ. ԱՎԱՆԵՍՅԱՆԻ

Ա. ԲԱՐՍԵՂՅԱՆԻ

Մ. ԴՐՄԵՅԱՆԻ

Գ. ՀԱԿՈԲՅԱՆԻ

Ե. ՍՈՂՈՄՈՆՅԱՆԻ

2011 թվականի հուլիսի 01-ին

դռնբաց դատական նիստում, քննելով Միլենա Աղամալյանի վճռաբեկ բողոքը ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 08.10.2010 թվականի որոշման դեմ՝ ըստ հայցի «Արդշինինվեստբանկ» ՓԲԸ-ի (այսուհետ՝ Ընկերություն) ընդդեմ Արթուր Մինասյանի և Միլենա Աղամալյանի՝ գումար բռնագանձելու, գրավադրված գույքից բաժնետնաս առանձնացնելու և դրա վրա բռնագանձում տարածելու պահանջների մասին,

ՊԱՐԶԵՑ

1. Գործի դատավարական նախապատմությունը

Դիմելով դատարան՝ Ընկերությունը պահանջել է 22.02.2007 թվականի թիվ 702-010Վ սպառողական վարկի ու թիվ 702-010Գ բաժնետնասի և դրանով հաստատված իրավունքների գրավի պայմանագրերի պահանջների խախտման հիմքով Արթուր Մինասյանից և Միլենա Աղամալյանից համապարտության կարգով բռնագանձել 49.976.142,02 ՀՀ դրամ որպես վարկի մնացորդ, ժամկետանց տոկոսագումար, ժամկետանց վարկի տոկոսագումար և տույժ, 23.500.000 ՀՀ դրամ վարկի մնացորդ գումարին հաշվեգրել և բռնագանձել տոկոսներ թիվ 702-010Վ սպառողական վարկի պայմանագրի 18-րդ կետով նախատեսված տարեկան 42 տոկոս դրույքով, ինչպես նաև գրավի առարկա «Ռասկո» ԱՍՊԸ-ի կանոնադրական կապիտալում

Էդուարդ Արաբխանյանին և Միլենա Աղամալյանին համատեղ սեփականության իրավունքով պատկանող 10 տոկոս բաժնեմասից առանձնացնել և բռնագանձումը տարածել Միլենա Աղամալյանի՝ 25.000.000 ՀՀ դրամ անվանական արժեքով 5 տոկոս բաժնեմասի, դրանով հաստատված իրավունքների, ինչպես նաև Արթուր Մինասյանին և Միլենա Աղամալյանին սեփականության իրավունքով պատկանող այլ գույքի վրա:

Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ համայնքների ընդհանուր իրավասության դատարանի 15.09.2009 թվականի վճռով հայցը բավարարվել է մասնակիորեն՝ 34.935.382,43 ՀՀ դրամ բռնագանձելու մասով, իսկ մնացած մասով հայցը մերժվել է:

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 10.12.2009 թվականի որոշմամբ Ընկերության վերաքննիչ բողոքը բավարարվել է մասնակիորեն՝ բեկանվել է Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ համայնքների ընդհանուր իրավասության դատարանի 15.09.2009 թվականի վճռի՝ հայցը մերժելու մասը, և գործն այդ մասով ուղարկվել է նոր քննության: Վճռի մնացած մասը թողնվել է օրինական ուժի մեջ:

ՀՀ վճռաբեկ դատարանի քաղաքացիական և վարչական պալատի 03.02.2010 թվականի որոշմամբ վերադարձվել է ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 10.12.2009 թվականի որոշման դեմ Միլենա Աղամալյանի ներկայացուցչի վճռաբեկ բողոքը:

Գործի քննության ընթացքում Ընկերությունն ավելացրել է հայցապահանջի չափը և պահանջել է Արթուր Մինասյանից և Միլենա Աղամալյանից համապարտության կարգով բռնագանձել 58.034.388,59 ՀՀ դրամ:

Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի (այսուհետ՝ Դատարան) 27.07.2010 թվականի վճռով հայցը բավարարվել է:

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի (այսուհետ՝ Վերաքննիչ դատարան) 08.10.2010 թվականի որոշմամբ Միլենա Աղամալյանի վերաքննիչ բողոքը բավարարվել է մասնակիորեն՝ Դատարանի 27.07.2010 թվականի վճիռը մասնակիորեն բեկանվել և փոփոխվել է՝ որոշվել է Արթուր Մինասյանից և Միլենա Աղամալյանից համապարտության կարգով բռնագանձել 23.099.366,16 ՀՀ դրամ, իսկ 23.500.000 ՀՀ դրամ վարկի մնացորդի գումարը, 3.806.279,82 ՀՀ դրամ ժամկետանց տոկոսագումարը, 3.717.522,23 ՀՀ դրամ ժամկետանց վարկի տոկոսագումարը, 3.911.220,38 ՀՀ դրամ տույժը, նախապես վճարված 698.708 ՀՀ դրամ պետական տուրքը բռնագանձելու մասով քաղաքացիական գործի վարույթը կարճվել է: Վճիռը մնացած մասով թողնվել է օրինական ուժի մեջ:

Սույն գործով վճռաբեկ բողոք է ներկայացրել Միլենա Աղամալյանը:

Վճռաբեկ բողոքի պատասխան է ներկայացրել Ընկերությունը:

2. Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը

Սույն վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքերի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

1) Վերաքննիչ դատարանը խախտել է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 53-րդ հոդվածի 1-ին կետը, 130-րդ հոդվածի 3-րդ կետը, 132-րդ հոդվածի 1-ին կետի 4-րդ պարբերությունը, ինչի արդյունքում չի կիրառել ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 133-րդ հոդվածի 1-ին կետը, 242-րդ հոդվածի 1-ին կետը, 434-րդ հոդվածի 1-ին կետը, 1184-րդ հոդվածի 1-ին կետը, 1188-րդ հոդվածի 1-ին կետը, 1189-րդ հոդվածի 1-ին կետը, 1224-րդ, 1227-րդ հոդվածները, «Երևան քաղաքում տեղական

ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 110-րդ հոդվածի 1-ին մասը, որոնք պետք է կիրառվեն:

Բողոք բերած անձը նշված պնդումը պարձառաքանում է հետևյալ փաստարկներով.

Վերաքննիչ դատարանը չի իրականացրել գործում առկա բոլոր ապացույցների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտում: Մասնավորապես՝ անտեսել է այն հանգամանքը, որ կողմերի միջև կնքված գրավի պայմանագրի 1-ին կետի 2-րդ պարբերությունից և 2-րդ կետից բխում է, որ վարկային պարտավորության խախտման դեպքում գրավառուն նախապատվության կարգով իր պահանջների բավարարում պետք է ստանա, և այդ նպատակով բռնագանձումը պետք է տարածվի ողջ գրավի առարկայի, այսինքն՝ «Ռասկո» ԱՄԳԸ-ի կանոնադրական կապիտալում գրավատուներին սեփականության իրավունքով պատկանող 50.000.000 ՀՀ դրամ անվանական արժեք ունեցող բաժնեմասի վրա ամբողջությամբ և ոչ թե միայն գրավի առարկայի մի մասի՝ բողոք բերած անձին պատկանող բաժնեմասի վրա:

Բացի այդ, Վերաքննիչ դատարանը հաշվի չի առել, որ գրավատուներից Էդուարդ Արաբխանյանի մահը չի կարող հիմք ծառայել գրավի պայմանագրի կնքման պահին վերջինիս պատկանող 5 տոկոս բաժնեմասի վրա բռնագանձում չտարածելու համար, քանի որ նրա մահով պարտավորությունը չի դադարել և գրավի պայմանագրով Էդուարդ Արաբխանյանի ստանձնած պարտավորությունների կատարումը կարող է տեղի ունենալ առանց վերջինիս մասնակցության, և այն անխզելիորեն կապված չէ նրա անձի հետ: Էդուարդ Արաբխանյանի մահից հետո նրա ժառանգությունը ոչ ոք չի ընդունել, իսկ նրա վերջին բնակության վայրը Երևան քաղաքն է, հետևաբար, գրավի պայմանագրի կնքման պահին Էդուարդ Արաբխանյանին պատկանող բաժնեմասը համապարփակ իրավահաջորդության կարգով անցել է այլ անձի՝ Երևան համայնքին, որը և ներկայումս նշված բաժնեմասի սեփականատերն է: Ընդ որում, գրավի պայմանագրի 32-րդ կետով հստակ սահմանվել է, որ պայմանագրով ստանձնած պարտավորությունների կատարումը պարտադիր է կողմերի իրավահաջորդների համար, հետևաբար, Էդուարդ Արաբխանյանին պատկանող բաժնեմասի նկատմամբ Ընկերության գրավի իրավունքը ներկայումս պահպանվում է, և գրավի պայմանագրում Էդուարդ Արաբխանյանին որպես իրավահաջորդ փոխարինել է Երևան համայնքը, որը և կրում է պայմանագրով Էդուարդ Արաբխանյանի ստանձնած բոլոր պարտավորությունները: Հետևաբար, Երևան համայնքը, որպես պատասխանող, պետք է մասնակից դարձվեր սույն գործին:

2) Վերաքննիչ դատարանը չի կիրառել ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 375-րդ հոդվածի 1-ին կետը, 382-րդ հոդվածի 4-րդ կետը, 437-րդ հոդվածի 3-րդ կետը, որոնք պետք է կիրառվեն:

Բողոք բերած անձը նշված պնդումը պարձառաքանում է հետևյալ փաստարկներով.

Վերաքննիչ դատարանը հաշվի չի առել, որ գրավի պայմանագիրը վերնագրված է «Բաժնեմասի և դրամով հավաստված իրավունքների գրավի պայմանագիր», սակայն այն, ըստ էության, խառը պայմանագիր է, քանի որ դրա 10.2-րդ, 10.7-րդ, 12-րդ և 25-րդ կետերը լիովին համապատասխանում են ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 375-րդ հոդվածի 1-ին կետով սահմանված երաշխավորության պայմանագրի հասկացությանը, հետևաբար նշված կետերի նկատմամբ ենթակա են կիրառման երաշխավորության

պայմանագրի վերաբերյալ կանոնները: Մասնավորապես՝ նշված օրենսգրքի 382-րդ հոդվածի 4-րդ կետի համաձայն՝ 23.02.2009 թվականի դրությամբ երաշխավորությունը, այն է՝ գրավի պայմանագրի վերոհիշյալ կետերի գործողությունը դադարել է, քանի որ 22.02.2007 թվականի վարկային պայմանագրով վարկը տրվել է օգտագործման 12 ամիս ժամկետով, այսինքն՝ երաշխավորությամբ ապահովված պարտավորության կատարման ժամկետը սահմանված է եղել մինչև 22.02.2008 թվականը: Հետևաբար, Ընկերությունը կարող էր բողոք բերած անձի դեմ հայց հարուցել մինչև 23.02.2009 թվականը, մինչդեռ հայցը դատարան է ներկայացրել նշված ժամկետի ավարտից հետո՝ 08.04.2009 թվականին, ուստի 23.02.2009 թվականից հետո գրավի պայմանագրի 10.2-րդ, 10.7-րդ, 12-րդ և 25-րդ կետերը չէին կարող հիմք հանդիսանալ Արթուր Մինայանի թույլ տված վարկային պարտավորության խախտման համար բողոք բերած անձի համապարտ պատասխանատվության առաջացման համար:

3) Վերաքննիչ դատարանը չի կիրառել ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 369-րդ հոդվածի 1-ին կետը և 372-րդ հոդվածը, որոնք պետք է կիրառեր:

Բողոք բերած անձը նշված պնդումը պարձառաքանում է հետևյալ փաստարկներով.

Վերաքննիչ դատարանը հաշվի չի առել, որ հայցագնից՝ 58.034.388,59 ՀՀ դրամից 30.728.108,77 ՀՀ դրամը (հայցագնի կեսից ավելին) կազմում են վճարման ենթակա տուժանքները, այսինքն՝ տուժանքն ակնհայտորեն անհամաչափ է վարկային պարտավորության խախտման հետևանքներին, որպիսի պայմաններում Դատարանը ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 372-րդ հոդվածի կիրառմամբ պետք է պակասեցներ տուժանքի չափը, ինչը, սակայն, չի արել: Ընդ որում, թեև Միլենա Աղամայանը երկու անգամ (18.01.2008 թվականին և 15.07.2008 թվականին) դիմել է Ընկերությանը՝ խնդրելով իր պահանջների ամբողջական բավարարում ստանալ գրավի առարկայի արժեքից, սակայն Ընկերությունն այդ ուղղությամբ քայլեր չի ձեռնարկել, որի հետևանքով էլ հենց առաջացել է վարկային պարտավորության խախտման հետևանքների և հաշվարկված տուժանքների միջև առկա անհամաչափությունը:

Վերոգրյալի հիման վրա բողոք բերած անձը պահանջել է բեկանել Վերաքննիչ դատարանի 08.10.2010 թվականի որոշման՝ Արթուր Մինայանից և Միլենա Աղամայանից համապարտության կարգով 23.099.366,16 ՀՀ դրամ բռնագանձելու և վճիռը մնացած մասով օրինական ուժի մեջ թողնելու մասերը և գործն այդ մասերով ուղարկել նոր քննության:

2.1 Վճռաբեկ բողոքի պատասխանի հիմնավորումները

Սույն գործով Երևան համայնքը չի կարող լինել գրավատու Էդուարդ Արաբխանյանին պատկանող բաժնեմասի սեփականատերը, քանի որ Ընկերությունը՝ որպես պարտատեր, օրենքով սահմանված ժամկետում դիմում-պահանջ է ներկայացրել վերջինիս ժառանգներին և ժառանգության բացման վայրի նոտարին:

Ինչ վերաբերում է վճռաբեկ բողոքի այն պնդմանը, որ բռնագանձում չէր կարող տարածվել միայն գրավի առարկայի՝ Միլենա Աղամայանին պատկանող բաժնեմասի վրա, ապա սույն վեճը լուծելիս դատարանները հաշվի են առել այն հանգամանքը, որ Էդուարդ Արաբխանյանի ժառանգությունը դեռևս ընդունված չէ, իսկ ՀՀ օրենսդրությունը հնարավորություն է ընձեռում, ինչպես նաև իրավունքից տեսանկյունից չի արգելում պահանջատիրոջը (գրավատուին) ընդհանուր գույքից

(գրավիճ) առանձնացնել պարտապանի բաժինը՝ դրա վրա բռնագանձում տարածելու համար:

Տվյալ դեպքում Արթուր Մինասյանի պարտավորությունների չկատարման դեպքում Միլենա Աղամալյանի համապարտ պատասխանատվությունը ծագել է կողմերի միջև կնքված գրավի պայմանագրով, իսկ ՀՀ քաղաքացիական օրենսդրությամբ համապարտ պատասխանատվություն նախատեսված է ոչ միայն երաշխավորության, այլև քաղաքացիաիրավական այլ գործարքների դեպքերում:

Կողմերի միջև կնքված սպառողական վարկի պայմանագրով սահմանված ժամկետում Արթուր Մինասյանի կողմից վարկի գումարը չվճարելու հետևանքներն արտահայտվել են չվճարված գումարին այլ չափով տոկոսների հաշվարկելու և գանձելու ձևով: Ընդ որում, նշված պայմանագրի 18-րդ կետում նշված պարտավորությունների խախտման համար նախատեսված տոկոսների չափը համապատասխանել է պայմանագրի կնքման պահին գործող ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 411-րդ հոդվածի 1-ին կետի 2-րդ պարբերությամբ դրամական պարտավորությունների խախտման համար դիսպոզիտիվ կերպով սահմանված դրույթին, իսկ տոկոսների չափը սահմանվել է կողմերի կամահայտությամբ:

Այսպիսով, Վերաքննիչ դատարանը թույլ չի տվել դատական սխալ և գործում առկա ապացույցները հետազոտել է բազմակողմանի ու օբյեկտիվ:

3. Վճարել քողոքի քննության համար նշանակություն ունեցող փաստերը

Վճարել քողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1) Ընկերության և Արթուր Մինասյանի միջև 22.02.2007 թվականին կնքված թիվ 702-010Վ սպառողական վարկի պայմանագրի համաձայն՝ Արթուր Մինասյանին տրամադրվել է 23.500.000 ՀՀ դրամ վարկ՝ տարեկան 26 տոկոս տոկոսադրույքով, 12 ամիս մարման ժամկետով (**հատոր 1-ին, գ.թ. 10-11**):

2) Ի ապահովումն 22.02.2007 թվականի թիվ 702-010Վ սպառողական վարկի պայմանագրով Արթուր Մինասյանի ստանձնած պարտավորության կատարման՝ 22.02.2007 թվականի թիվ 702-010Գ բաժնեմասի և դրանով հավաստված իրավունքների գրավի պայմանագրով Էդուարդ Արաբխանյանը և Միլենա Աղամալյանը գրավադրել են «Ռեսկո» ԱՄԳԸ-ի կանոնադրական կապիտալում իրենց սեփականության իրավունքով պատկանող 50.000.000 ՀՀ դրամ անվանական արժեքով 10 տոկոս բաժնեմասը և դրանով հավաստված իրավունքները (այսուհետ՝ գրավի առարկա): Գրավի պայմանագրի 1-ին կետի 2-րդ պարբերության համաձայն՝ վարկային պարտավորությունը խախտելու դեպքում գրավառուն իր պահանջները նախապատվության իրավունքով բավարարում է գրավի պայմանագրի 2-րդ կետում նշված գրավի առարկայի արժեքից: Նույն պայմանագրի 12-րդ կետի համաձայն՝ գրավատուները և պարտապանը համապարտ պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ, վարկային պարտավորությամբ և պայմանագրով ստանձնած պարտավորությունների խախտման համար, իսկ 25-րդ կետի համաձայն՝ եթե գրավի առարկան իրացնելուց հետո ստացված գումարը բավարար չէ գրավառուի պահանջները բավարարելու համար, ապա գրավառուն իրավունք ունի պակաս գումարն ստանալ գրավատուների և/կամ պարտապանի այլ գույքից (**հատոր 1-ին, գ.թ. 12-13**):

3) Ըստ 23.02.2007 թվականի թիվ 000018 վկայագրի՝ ՀՀ արդարադատության

նախարարության իրավաբանական անձանց պետական ռեգիստրի գործակալության Կենտրոնի տարածքային բաժնի կողմից 23.02.2007 թվականին «Ռասկո» ԱՄՊԸ-ի կանոնադրական կապիտալում 10 տոկոս բաժնեմասի նկատմամբ գրանցվել է Ընկերության գրավի իրավունքը (**հատոր 1-ին, գ.թ. 16**):

4) Համաձայն 12.08.2008 թվականի թիվ ԱԱ 097936 մահվան վկայականի՝ Էդուարդ Արաբխանյանը 11.08.2007 թվականին մահացել է (**հատոր 1-ին, գ.թ. 22**):

5) Էդուարդ Արաբխանյանի մահից հետո նրա ժառանգությունը չի ընդունվել, և այդ փաստը սույն գործով չի վիճարկվել:

6) Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ համայնքների ընդհանուր իրավասության դատարանի 15.09.2009 թվականի վճիռը 34.935.382,43 ՀՀ դրամ Արթուր Մինասյանից և Միլենա Աղամալյանից համապարտության կարգով բռնագանձելու մասով մտել է օրինական ուժի մեջ (**հատոր 1-ին, գ.թ. 99-104**):

4. Վճարել դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը

Քննելով վճարել բողոքը նշված հիմքերի սահմաններում՝ Վճարել դատարանը գտնում է, որ՝

1) վճարել բողոքն ստացին հիմքով հիմնավոր է մասնակիորեն հեղուկապարձառաբանությամբ.

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 53-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ դատարանը յուրաքանչյուր ապացույց գնահատում է գործում եղած բոլոր ապացույցների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտության վրա հիմնված ներքին համոզմամբ:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 251-րդ հոդվածի 2-րդ կետի համաձայն՝ եթե գրավ դրված գույքն իրացնելուց ստացված գումարը բավարար չէ գրավատուի պահանջները բավարարելու համար, նա իրավունք ունի պակաս գումարն ստանալ պարտապանի այլ գույքից, եթե այլ բան նախատեսված չէ պայմանագրով:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 362-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ պարտապանների համապարտ պարտականության դեպքում պարտատերն իրավունք ունի, ինչպես բոլոր պարտապաններից համատեղ, այնպես էլ յուրաքանչյուրից պահանջել կատարելու պարտավորությունն ինչպես լրիվ, այնպես էլ պարտքի մի մասով:

Սույն գործով Վերաքննիչ դատարանը, օրինական ուժի մեջ թողնելով Դատարանի 27.07.2010 թվականի վճիռ՝ բռնագանձումը Միլենա Աղամալյանին սեփականության իրավունքով պատկանող այլ գույքի վրա տարածելու մասը, պատճառաբանել է, որ Միլենա Աղամալյանի վարկային պարտավորությունները չեն սահմանափակվել միայն գրավադրված գույքով:

Սույն գործի փաստերի համաձայն՝ Ընկերության և Արթուր Մինասյանի միջև 22.02.2007 թվականին կնքված թիվ 702-010Վ սպառողական վարկի պայմանագրով Արթուր Մինասյանին տարեկան 26 տոկոս տոկոսադրույքով տրամադրվել է 23.500.000 ՀՀ դրամ վարկ 12 ամիս մարման ժամկետով: Ի սպառնալուստի նշված վարկային պայմանագրով Արթուր Մինասյանի ստանձնած պարտավորության կատարման՝ 22.02.2007 թվականի թիվ 702-010Գ բաժնեմասի և դրանով հաստատված իրավունքների գրավի պայմանագրով Էդուարդ Արաբխանյանը և Միլենա Աղամալյանը գրավադրել են գրավի առարկան: Գրավի պայմանագրի 1-ին կետի 2-րդ պարբերության համաձայն՝ վարկային պարտավորությունը

խախտելու դեպքում գրավառուն իր պահանջները նախապատվության իրավունքով բավարարում է գրավի պայմանագրի 2-րդ կետում նշված գրավի առարկայի արժեքից: Նույն պայմանագրի 12-րդ կետի համաձայն՝ գրավատուները և պարտապանը համապարտ պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ, վարկային պարտավորությամբ և պայմանագրով ստանձնած պարտավորությունների խախտման համար, իսկ 25-րդ կետի համաձայն՝ եթե գրավի առարկան իրացնելուց հետո ստացված գումարը բավարար չէ գրավառուի պահանջները բավարարելու համար, ապա գրավառուն իրավունք ունի պակաս գումարն ստանալ գրավատուների և/կամ պարտապանի այլ գույքից:

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ գրավադրված գույքը բաժանելի լինելու պայմաններում ՀՀ քաղաքացիական օրենսգիրքը գրավառու-պարտատիրոջ կողմից գրավի առարկայի մի մասի վրա բռնագանձում տարածելու վերաբերյալ պահանջ ներկայացնելու որևէ արգելք չի նախատեսել: Այսինքն՝ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 11-րդ հոդվածի 1-ին կետի ուժով գրավառու-պարտատերն իրեն պատկանող քաղաքացիական իրավունքները՝ ներառյալ դրանց պաշտպանության իրավունքը, իրականացնում է իր հայեցողությամբ: Ավելին, ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 362-րդ հոդվածի 1-ին կետը պարտատիրոջն իրավունք է վերապահել համապարտ պարտապաններից յուրաքանչյուրից պահանջել լրիվ կամ մասնակիորեն կատարել պարտավորությունը, իսկ ընդհանուր համատեղ սեփականության ներքո գտնվող գույքը գրավ դնելիս ընդհանուր սեփականության մասնակիցներն օրենքի և գրավի պայմանագրի ուժով պարտատիրոջ առջև կրում են համապարտ պատասխանատվություն:

Տվյալ դեպքում Ընկերությունը դատարան ներկայացրած հայցադիմումով այլ պահանջների հետ միասին պահանջել է ընդհանուր սեփականություն հանդիսացող գրավի առարկայից առանձնացնելու սեփականության մասնակիցներից մեկի բաժինը և բռնագանձումը տարածել դրա վրա:

Հինք ընդունելով օրենսդրի կարգավորումները և կողմերի միջև կնքված գրավի պայմանագրի պայմանները՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Ընկերությունն իր պահանջները պետք է բավարարի նախ գրավի առարկայի արժեքից, որի անբավարարության դեպքում նոր միայն կարող է պակաս գումարն ստանալ պարտապանների այլ գույքից: Դրանից հետևում է, որ քանի դեռ չի լուծվել գրավի ամբողջ առարկայի վրա բռնագանձում տարածելու հարցը և պարզ չէ, թե գրավի առարկայի իրացումից ստացված գումարն արդյոք բավարար չէ պարտատիրոջ պահանջները բավարարելու համար, պարտապանի այլ գույքի վրա բռնագանձում չի կարող տարածվել: Մինչդեռ, Վերաքննիչ դատարանը գրավի ամբողջ առարկայի իրացման հարցը լուծված չլինելու պայմաններում օրինական ուժի մեջ է թողել Դատարանի վճռի՝ Միլենա Աղամալյանի այլ գույքի վրա բռնագանձում տարածելու մասը, ինչի հետևանքով խախտվել է վերջինիս՝ ՀՀ Սահմանադրությամբ և միջազգային իրավունքի նորմերով երաշխավորված սեփականության իրավունքը:

Վճռաբեկ դատարանը չի անդրադառնում Էդուարդ Արաբխանյանին պատկանող գրավի առարկայի բաժնեմասը համապարփակ իրավահաջորդության կարգով այլ անձի անցնելու և այդ կապակցությամբ վճռաբեկ բողոքում նշված նյութական և դատավարական իրավունքի նորմերի խախտման վերաբերյալ փաստարկին հետևյալ պատճառաբանությամբ.

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 208-րդ հոդվածի 3-րդ կետի

համաձայն՝վերաքննիչ բողոքը (կամ դրա մասը) ենթակա է քննության, եթե բողոք բերող անձը տվյալ հարցի վերաբերյալ բողոքում արտահայտած իր դիրքորոշումը հայտնել է առաջին ատյանի դատարանում գործի քննության ժամանակ: Բացառություն է այն դեպքը, երբ բողոք բերող անձը զրկված է եղել այդ հարցի վերաբերյալ առաջին ատյանի դատարանում գործի քննության ժամանակ իր դիրքորոշումը հայտնելու հնարավորությունից:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 222-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ վճռաբեկ դատարանը բողոքի հիման վրա նույն օրենսգրքով նախատեսված դեպքերում և կարգով վերանայում է վերաքննիչ դատարանի դատական ակտերը:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 224-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ վերաքննության կարգով բողոքարկման ենթակա գործն ըստ էության լուծող դատական ակտերն անձը չի կարող բողոքարկել վճռաբեկ դատարանում, եթե նա նույն հիմքերով չի բողոքարկել դատական ակտը վերաքննիչ դատարանում:

Սույն գործի նյութերի ուսումնասիրման արդյունքում Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ բողոք բերած անձը վճռաբեկ բողոքում նշված գրավի առարկայի՝ Էդուարդ Արաբխանյանին պատկանող բաժնեմասը համապարփակ իրավահաջորդության կարգով այլ անձի անցնելու վերաբերյալ փաստարկը Դատարանում չի վկայակոչել, ընդ որում, գործում առկա չէ որևէ ապացույց այն մասին, որ բողոք բերող անձը զրկված է եղել այդ հարցի վերաբերյալ Դատարանում իր դիրքորոշումը հայտնելու հնարավորությունից: Չնայած բողոք բերած անձը նշված փաստարկը վերաքննիչ բողոքում նշել է, սակայն Վերաքննիչ դատարանը, վերը նշված պատճառաբանությունից ելնելով, դրան չի անդրադարձել և այն քննության առարկա չի դարձրել: Հետևաբար, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ այդ փաստարկը չի կարող քննության առարկա դառնալ նաև Վճռաբեկ դատարանում:

Այնուամենայնիվ, Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ Երևան համայնքին գործի քննությանը մասնակից չդարձնելու հարցով վերջինիս կողմից բողոք չի բերվել, իսկ Ընկերության կողմից Երևան համայնքին գործին մասնակից չդարձնելը չի կարող դիտվել որպես նյութական կամ դատավարական իրավունքի խախտում, քանի որ Ընկերությունը Երևան համայնքի դեմ որևէ պահանջ չի ներկայացրել, իսկ որևէ այլ անձ չի կարող պարտադրել, որ նա նման պահանջ ներկայացնի:

2) վճռաբեկ բողոքը երկրորդ հիմքով անհիմն է հեղինակ պատճառաբանությամբ.

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 52-րդ հոդվածի 2-րդ կետի համաձայն՝ նախկինում քննված՝ քաղաքացիական գործով օրինական ուժի մեջ մտած դատարանի վճռով հաստատված հանգամանքները նույն անձանց միջև դատարանում այլ գործ քննելիս կրկին չեն ապացուցվում:

Սույն գործով Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ համայնքների ընդհանուր իրավասության դատարանի 15.09.2009 թվականի վճիռը 34.935.382,43 ՀՀ դրամ բռնագանձելու մատով մտել է օրինական ուժի մեջ, որով հաստատվել է Ընկերության հանդեպ Արթուր Մինասյանի և Միլենա Աղամալյանի համապարտ պարտավորություն ունենալու հանգամանքը: Հետևաբար, նշված հանգամանքը կրկին ապացուցման ենթակա չէ, իսկ Արթուր Մինասյանի կողմից թույլ տրված վարկային պարտավորության խախտման համար Միլենա Աղամալյանի՝ համապարտ պատասխանատվություն չկրելու վերաբերյալ վճռաբեկ բողոքի փաստարկն անհիմն է:

3) Սույն որոշման առաջին հիմքում նշված պատճառաբանության հիման վրա Վճռաբեկ դատարանը չի անդրադառնում նաև վճռաբեկ բողոքի երրորդ հիմքին, քանի որ բողոք բերած անձը վարկային պարտավորության խախտման հետևանքների և հաշվարկված տուժանքների միջև անհամաչափության առկայության վերաբերյալ Դատարանում որևէ դիրքորոշում չի հայտնել: Չնայած բողոք բերած անձը նշված փաստարկը վերաքննիչ բողոքում նշել է, սակայն Վերաքննիչ դատարանը, վերը նշված պատճառաբանությունից ելնելով, ըստ էության այն քննության առարկա չի դարձրել: Հետևաբար, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ այդ փաստարկը չի կարող քննության առարկա դառնալ նաև Վճռաբեկ դատարանում:

Վճռաբեկ բողոքի պատասխանում բերված փաստարկները մասնակիորեն հերքվում են վերոնշյալ պատճառաբանություններով:

Այսպիսով, վճռաբեկ բողոքի առաջին հիմքի մասնակի հիմնավոր լինելը Վճռաբեկ դատարանը բավարար է համարում՝ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 227-րդ և 228-րդ հոդվածների ուժով Վերաքննիչ դատարանի որոշումը մասնակիորեն բեկանելու համար:

Միաժամանակ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ տվյալ դեպքում անհրաժեշտ է կիրառել ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 240-րդ հոդվածի 1-ին կետի 4-րդ ենթակետով սահմանված՝ ստորադաս դատարանի դատական ակտը փոփոխելու ՀՀ վճռաբեկ դատարանի լիազորությունը հետևյալ հիմնավորմամբ.

ՀՀ Սահմանադրության 19-րդ հոդվածի և «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի (այսուհետ՝ Կոնվենցիայի) 6-րդ հոդվածի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի ողջամիտ ժամկետում իր գործի քննության իրավունք: Վճռաբեկ դատարանը գտնում է, որ գործը ողջամիտ ժամկետում քննելը հանդիսանում է ՀՀ Սահմանադրության և Կոնվենցիայի վերը նշված հոդվածով ամրագրված անձի արդար դատաքննության իրավունքի տարր, հետևաբար, գործի անհարկի ձգձգումները վտանգ են պարունակում նշված իրավունքի խախտման տեսանկյունից: Տվյալ դեպքում, Վճռաբեկ դատարանի կողմից ստորադաս դատարանի դատական ակտը փոփոխելը բխում է արդարադատության արդյունավետության շահերից:

Դատական ակտը փոփոխելիս Վճռաբեկ դատարանը հիմք է ընդունում սույն որոշման պատճառաբանությունները, ինչպես նաև գործի նոր քննության անհրաժեշտության բացակայությունը:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 240-241²-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

ՈՐՈՇԵՑ

1. Վճռաբեկ բողոքը բավարարել մասնակիորեն: Բեկանել ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 08.10.2010 թվականի որոշման՝ գումարի բռնագանձումը Միլենա Աղամալյանին սեփականության իրավունքով պատկանող այլ գույքի վրա տարածելու մասը և այդ մասով այն փոփոխել. «Արդշինինվեստբանկ» ՓԲԸ-ի հայքը

մերժել: Որոշման մնացած մասը թողնել օրինական ուժի մեջ:

2. «Արդշինինվեստբանկ» ՓԲԸ-ից հոգուտ Հայաստանի Հանրապետության բնագանձել 20.000 (քսան հազար) ՀՀ դրամ որպես վճռաբեկ բողոքի համար վճարման ենթակա պետական տուրքի գումար:

Միլենա Աղամալյանից հոգուտ Հայաստանի Հանրապետության բնագանձել 692.981 (վեց հարյուր ինսուներկու հազար ինը հարյուր ութսունմեկ) ՀՀ դրամ որպես վճռաբեկ բողոքի համար վճարման ենթակա պետական տուրքի գումար:

3. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

*ՆԱԽԱԳԱՀՈՂ՝ ստորագրություն
ԴԱՏԱՎՈՐՆԵՐ՝ ստորագրություններ*

**ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ԵՎ ԱՅԼ ԳՈՒՅՔԱՅԻՆ
ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ**

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի որոշում
Քաղաքացիական գործ թիվ ԱՐԴՆ/0867/02/09
Քաղաքացիական գործ թիվ ԱՐԴՆ/0867/02/09
Նախագահող դատավոր՝ Ս.Միքայելյան
Դատավորներ՝ Ն.Տավարացյան
Ա.Պետրոսյան

**ՈՐՈՇՈՒՄ
ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քաղաքացիական և վարչական պալատը (այսուհետ՝ վճռաբեկ դատարան)

*նախագահությամբ
մասնակցությամբ դատավորներ*

Ե. ԽՈՒՆԴԿԱՐՅԱՆԻ
Է. ՀԱՅՐԻՅԱՆԻ
Վ. ԱԲԵԼՅԱՆԻ
Ս. ԱՆՏՈՆՅԱՆԻ
Վ. ԱՎԱՆԵՍՅԱՆԻ
Ա. ԲԱՐՍԵՂՅԱՆԻ
Մ. ԴՐՄԵՅԱՆԻ
Գ. ՀԱԿՈԲՅԱՆԻ
Ե. ՍՈՂՈՄՈՆՅԱՆԻ

2011 թվականի ապրիլի 01-ին

դռնբաց դատական նիստում, քննելով Գայանե Բաբաջանյանի վճռաբեկ բողոքը ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 15.12.2010 թվականի որոշման դեմ՝ ըստ Տիգրան Բաբաջանյանի հայցի ընդդեմ Գայանե Բաբաջանյանի՝ ապօրինի տիրապետումից գույքը հետ վերադարձնելու պահանջի մասին,

ՊԱՐԶԵՑ

1. Գործի դատավարական նախապատմությունը

Դիմելով դատարան՝ Տիգրան Բաբաջանյանը պահանջել է վերադարձնել սեփականության իրավունքով Էջմիածնի Արարատյան փողոցի թիվ 19 բնակելի տան տնամերձ հողամասից Գայանե Բաբաջանյանի ապօրինի տիրապետության ներքո գտնվող 56,0քմ մակերեսով հողամասը:

ՀՀ Արմավիրի մարզի ընդհանուր իրավասության դատարանի (այսուհետ՝ Դատարան) 28.09.2010 թվականի վճռով հայցը բավարարվել է: Վճռվել է՝ «սեփականության իրավունքով հայցվոր Տիգրան Վարազդատի Բաբաջանյանին վերադարձնել Էջմիածին քաղաքի Արարատյան փողոցի թիվ 19 բնակելի տան տնամերձ հողամասից պատասխանող Գայանե Վալտերի Բաբաջանյանի ապօրինի տիրապետության տակ գտնվող 56,0քմ մակերեսով հողատարածքը, այն է՝ երկու հողատարածքները միմյանցից տարանջատվող մետաղական ցանկապատը 3,12մ տեղափոխել դեպի աջ, համաձայն «Հայաստանի Հանրապետության Փորձագիտական կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության համապատասխան փորձագետների 25.08.2010 թվականի թիվ 10441007 եզրակացությանը կից՝ թիվ 2 հավելվածի»:

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի (այսուհետ՝ Վերաքննիչ դատարան) 15.12.2010 թվականի որոշմամբ Գայանե Բաբաջանյանի վերաքննիչ բողոքը մերժվել է, և Դատարանի 28.09.2010 թվականի վճիռը թողնվել է օրինական ուժի մեջ:

Սույն գործով վճռաբեկ բողոք է ներկայացրել Գայանե Բաբաջանյանը:

Վճռաբեկ բողոքի պատասխան չի ներկայացվել:

2. Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը

Սույն վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

Վերաքննիչ դատարանը խախտել է ՀՀ Սահմանադրության 19-րդ հոդվածի 1-ին պարբերությունը, «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին մասը, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 51-րդ և 53-րդ հոդվածները, չի կիրառել ՀՀ Սահմանադրության 8-րդ հոդվածի 1-ին պարբերությունը, «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի 1-ին արձանագրության 1-ին հոդվածը, ՀՀ դատական օրենսգրքի 15-րդ հոդվածի 4-րդ կետը, որոնք պետք է կիրառեր:

Բողոք բերած անձը նշված պնդումը պարձառարանել է հետևյալ փաստարկներով.

Վերաքննիչ դատարանը բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ չի գնահատել գործում առկա ապացույցները և անտեսել է, որ Էջմիածնի Արարատյան փողոցի թիվ 19 հասցեում գտնվող 0,0372հա տնամերձ հողամասի նկատմամբ Վալտեր Բաբաջանյանի սեփականության իրավունքը գրանցվել է ՀՀ քաղաքացիական գործերով վերաքննիչ դատարանի՝ 11.01.2000 թվականի օրինական ուժի մեջ մտած վճռով: Վալտեր Բաբաջանյանը 20.07.2000 թվականին նշված հողամասը վաճառել է Գայանե Բաբաջանյանին, իսկ Էջմիածնի Արարատյան փողոցի թիվ 19 հասցեում գտնվող տանը կից 63քմ մակերեսով հողամասն ուղղակի վաճառքի միջոցով Էջմիածնի քաղաքային համայնքը վաճառել է Գայանե Բաբաջանյանին, որոնցից ծագող իրավունքները ենթարկվել են պետական գրանցման:

Քննվող քաղաքացիական գործում առկա չէ որևէ թույլատրելի ապացույց, որով կարող է հաստատվել, որ Էջմիածնի Արարատյան փողոցի թիվ 19 հասցեում գտնվող 112,98քմ մակերեսով հողամասից 56,0քմ վիճելի հողամասը ՀՀ քաղաքացիական գործերով վերաքննիչ դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած 11.01.2000 թվականի վճռով քննության առարկա չի դարձվել:

Վերաքննիչ դատարանը պատշաճ իրավական գնահատական չի տվել այն հանգամանքին, որ օրինական ուժի մեջ մտած դատական ակտերը պարտադիր են բոլոր պետական մարմինների, տեղական ինքնակառավարման մարմինների, դրանց պաշտոնատար անձանց, իրավաբանական անձանց և քաղաքացիների համար ու ենթակա են կատարման ՀՀ ամբողջ տարածքում, ինչի կապակցությամբ իր իրավական դիրքորոշումն է արտահայտել Վճռաբեկ դատարանը 13.02.2009 թվականի որոշմամբ:

Բացի այդ, Գայանե Բաբաջանյանը 56,0քմ վիճելի հողամասն ապօրինի չի տիրապետում, այլ տիրապետում է որպես սեփականություն օրենքով սահմանված կարգով գրանցված պայմաններում: Այսինքն՝ Վերաքննիչ դատարանն անտեսել է, որ Դատարանի կողմից սխալ է կիրառվել ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 274-րդ հոդվածը:

Վերոգրյալի հիման վրա բողոք բերած անձը պահանջել է բեկանել Վերաքննիչ դատարանի 15.12.2010 թվականի որոշումը և այն փոփոխել՝ հայցը մերժել կամ գործն ուղարկել նոր քննության:

3. Վճռաբեկ բողոքի քննության համար նշանակություն ունեցող փաստերը

Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1. ՀՀ քաղաքացիական գործերով վերաքննիչ դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած 11.01.2000 թվականի վճռով բավարարվել է Վալտեր Բաբաջանյանի հայցն ընդդեմ Օֆելյա Շահբազյանի և Տիգրան Բաբաջանյանի՝ ժառանգական հիմունքներով սեփականության իրավունքով տան և տնամերձ հողամասը բաժանելու պահանջի մասին, իսկ հակընդդեմ հայցը՝ Էջմիածնի քաղաքային խորհրդի գործադիր կոմիտեի որոշումն անվավեր ճանաչելու պահանջի մասին՝ մերժվել: Վճռվել է Էջմիածնի Արարատյան փողոցի թիվ 19 հասցեի բնակելի տունը և տնամերձ հողամասը Վալտեր Սուքիասի Բաբաջանյանի և Տիգրան Վարազդատի Բաբաջանյանի միջև բաժանել հետևյալ կերպ. «թիվ 0-1 նկուղը միջնապատով բաժանել երկու մասի և նշանակել 0-1Ա և 0-1Բ: Տան առաջին հարկից՝ թիվ 0-1Ա նկուղը, թիվ 0-5 սանհանգույցը, Գ-30,1քմ մակերեսով պատշգամբը, Գ-5,5քմ մակերեսով պատշգամբը, 2,75մ լայնությամբ մուտքը, երկրորդ հարկից՝ թիվ 1-1 սենյակը 25,1քմ մակերեսով, թիվ 1-2 սենյակը 13,9քմ մակերեսով, թիվ 1-4 սենյակը 13,3քմ մակերեսով, թիվ 1-5 նախսենյակը 15,0քմ մակերեսով, 1,6 մ լայնությամբ միջանցքի մի մասը համաձայն հատակագծի, թիվ 1-10 խոհանոցը 5,2քմ մակերեսով, 8,7 լայնությամբ հողամասը նշված սենյակների ուղղությամբ, թիվ 0-6 ավտոտնակը 19,8քմ մակերեսով, թիվ 1-9 խոհանոցը 5,8քմ մակերեսով սեփականության իրավունքով հատկացնել Վալտեր Սուքիասի Բաբաջանյանին: Տան առաջին հարկից՝ թիվ 0-1Բ նկուղը, թիվ 0-2 նկուղը, թիվ 0-3 սանհանգույցը 6,9 քմ մակերեսով, թիվ 0-4 5,3 քմ մակերեսով սանհանգույցը, երկրորդ հարկից՝ թիվ 1-3 15,5քմ մակերեսով սենյակը, թիվ 1-6 8,6քմ մակերեսով սենյակը, թիվ 1-7 21,5քմ մակերեսով սենյակը, թիվ 1-8 13,6քմ մակերեսով սենյակը, 1,6մ լայնությամբ միջանցքի մի մասը համաձայն հատակագծի, նշված սենյակի ուղղությամբ 8,7մ լայնությամբ հողամասը և Կոմունարների փող. կողմից եղած մուտքը սեփականության իրավունքով հատկացնել Տիգրան Վարազդատի Բաբաջանյանին» (հատոր 1-ին, գ.թ.14-18):

2. ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի Վաղարշապատի տարածքային ստորաբաժանման 13.11.2009 թվականի թիվ 3153 գրության համաձայն՝ ՀՀ քաղաքացիական գործերով վերաքննիչ դատարանի 11.01.2000 թվականի վճռի հիման վրա՝ Էջմիածնի Արարատյան փողոցի թիվ 19 բնակելի տան և 0,0372հա տնամերձ հողամասի նկատմամբ 26.06.2000 թվականին սեփականության իրավունքով գրանցվել է Վալտեր Բաբաջանյանի անվամբ (հատոր 1-ին, գ.թ.36):

3. Նոտարական կարգով վավերացված 20.07.2000 թվականի անշարժ գույքի օտարման պայմանագրով Վալտեր Բաբաջանյանը Էջմիածնի Արարատյան փողոցի թիվ 19 հասցեում գտնվող բնակելի տունը և 0,0372հա տնամերձ հողամասը վաճառել է Գայանե Վալտերի Բաբաջանյանին (հատոր 1-ին, գ.թ.7):

4. Նոտարական կարգով վավերացված 11.12.2007 թվականի հողամասի առուվաճառքի պայմանագրով Էջմիածնի քաղաքային համայնքն Էջմիածնի Արարատյան փողոցի թիվ 19 հասցեում գտնվող տանը կից 63քմ մակերեսով բնակելի կառուցապատման հողամասն ընդլայնման նպատակով ուղղակի վաճառքի միջոցով վաճառել է Գայանե Բաբաջանյանին (հատոր 1-ին, գ.թ. 8-10):

5. 14.12.2007 թվականի սեփականության իրավունքի գրանցման թիվ 2490992 վկայականի համաձայն՝ Էջմիածնի Արարատյան փողոցի թիվ 19 հասցեում գտնվող 179,3քմ ներքին և 237,2քմ արտաքին մակերեսով բնակելի տան և 0,0435հա հողամասի սեփականատերը Գայանե Վալտերի Բաբաջանյանն է, հիմք՝ նոտարական կարգով վավերացված 20.07.2000 թվականի անշարժ գույքի օտարման պայմանագիրը և նոտարական կարգով վավերացված 11.12.2007 թվականի հողամասի առուվաճառքի պայմանագիրը (հատոր 1-ին, գ.թ. 37-38):

4. Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումները.

Քննելով վճռաբեկ բողոքը նշված հիմքի սահմաններում՝ Վճռաբեկ դատարանը գրնում է, որ վճռաբեկ բողոքը հիմնավոր է հետևյալ պարձառաբանությամբ.

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 53-րդ հոդվածի համաձայն՝ դատարանը յուրաքանչյուր ապացույց գնահատում է գործում եղած բոլոր ապացույցների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտության վրա հիմնված ներքին համոզմամբ:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 274-րդ հոդվածի համաձայն՝ սեփականատերն իրավունք ունի իր գույքը հետ պահանջել ուրիշի ապօրինի տիրապետումից:

Վերոհիշյալ հոդվածից հետևում է, որ սեփականատերն իրավունք ունի գույքը հետ պահանջել միայն ապօրինի տիրապետողից: **Տիրապետումը ապօրինի է, եթե այն իրականացվում է առանց որևէ օրինական հիմքի:**

Վճռաբեկ դատարանն իր նախկին որոշումներում արդեն իսկ անդրադարձել է վարչական ակտի իրավաչափության հարցին՝ նշելով որ չվիճարկված և չվերացված վարչական ակտը ենթադրվում է իրավաչափ և պարտադիր է կատարման պետական և հասարակական մարմինների, ձեռնարկությունների, հիմնարկների, կազմակերպությունների, պաշտոնատար անձանց և քաղաքացիների կողմից (*տես՝ Երևանի քաղաքապետարանի հայցն ընդդեմ Հրաչյա Քարամյանի՝ ինքնակամ շինությունը քանդելուն պարպավորեցնելու և 200.000 ՀՀ դրամ վարչական տուգանքը բռնագանձելու պահանջների մասին վարչական գործով Վճռաբեկ դատարանի 27.05.2009 թվականի թիվ ՎԴ/2068/05/08 որոշումը*):

Սույն գործի փաստերի համաձայն՝ 26.06.2000 թվականին Վալտեր Բաբաջանյանի սեփականության իրավունքը Էջմիածնի Արարատյան փողոցի թիվ 19 հասցեում գտնվող 0,0372հա տնամերձ հողամասի նկատմամբ գրանցվել է ՀՀ քաղաքացիական գործերով վերաքննիչ դատարանի՝ 11.01.2000 թվականի օրինական ուժի մեջ մտած վճռի հիման վրա: Ավելին, Գայանե Բաբաջանյանը նշված հողամասի նկատմամբ սեփականության իրավունք ձեռք է բերել Վալտեր Բաբաջանյանից 20.07.2000 թվականի նոտարական կարգով վավերացված անշարժ գույքի օտարման պայմանագրով:

Վերաքննիչ դատարանը վերաքննիչ բողոքը մերժելիս հիմք է ընդունել այն, որ ինչպես տեղատեսությամբ, այնպես էլ կատարված դատական փորձաքննության արդյունքներով պարզվել է, որ պատասխանողի կողմից օգտագործվող հողատարածքի տարբերությունը հայցվորի զբաղեցրած հողատարածքից կազմում է 112,98քմ: Ընդ որում, դատաքննությամբ հաստատվել է նաև, որ նշված 112,98քմ հողատարածքից 56,0քմ վիճելի հողատարածքը չի հանդիսացել ՀՀ քաղաքացիական գործերով վերաքննիչ դատարանի 2000 թվականի հունվարի 11-ին հրապարակված դատական ակտով քաղաքացիական գործի քննության առարկա:

Մինչդեռ, Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ վեճի առարկա 56,0քմ հողամասի նկատմամբ առկա է գրանցված սեփականության իրավունք, վարչական ակտը՝ սեփականության իրավունքի գրանցման վերաբերյալ, վիճարկված և վերացված չէ, իսկ սեփականության իրավունքի գրանցման հիմքն օրինական ուժի մեջ մտած դատական ակտն է:

Հիմք ընդունելով վերոգրյալը՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ սույն գործի փաստերի համաձայն՝ չի հիմնավորվել Գայանե Բաբաջանյանի կողմից 56,0քմ վիճելի հողամասն ապօրինի տիրապետելու փաստը, հետևաբար ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 274-րդ հոդվածով սահմանված ապօրինի տիրապետման դեպքն առկա չէ:

Այսպիսով, սույն վճռաբեկ բողոքի հիմքի առկայությունը բավարար է՝ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 227-րդ և 228-րդ հոդվածների ուժով Վերաքննիչ դատարանի որոշումը բեկանելու համար:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 240-241²-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

ՈՐՈՇԵՑ

1. Վճռաբեկ բողոքը բավարարել: Բեկանել ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 15.12.2010 թվականի որոշումը և գործն ուղարկել ՀՀ Արմավիրի մարզի առաջին աստիանի ընդհանուր իրավասության դատարան՝ նոր քննության:

2. Պետական տուրքի բաշխման հարցին անդրադառնալ գործի նոր քննության ընթացքում:

3. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

*ՆԱԽԱԳԱՀՈՂ՝ սպորտագրություն
ԴԱՏԱՎՈՐՆԵՐ՝ սպորտագրություններ*

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական
դատարանի որոշում

Քաղաքացիական գործ թիվ ԱՐԴ/0647/02/09
2011թ.

Քաղաքացիական գործ թիվ ԱՐԴ/0647/02/09

Նախագահող դատավոր՝ Ա. Խատատյան

Դատավորներ՝ Կ. Չիլինգարյան

Ա. Պետրոսյան

ՈՐՈՇՈՒՄ

ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քաղաքացիական
և վարչական պալատը (այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

նախագահությամբ

մասնակցությամբ դատավորներ

Ե. ԽՈՒՆԴԿԱՐՅԱՆԻ

Վ. ԱՎԱՆԵՍՅԱՆԻ

Վ. ԱԲԵԼՅԱՆԻ

Ս. ԱՆՏՈՆՅԱՆԻ

Ա. ԲԱՐՍԵՂՅԱՆԻ

Մ. ԴՐՄԵՅԱՆԻ

Գ. ՀԱԿՈԲՅԱՆԻ

Է. ՀԱՅՐԻՅԱՆԻ

Տ. ՊԵՏՐՈՍՅԱՆԻ

Ե. ՍՈՂՈՄՈՆՅԱՆԻ

2011 թվականի մայիսի 27-ին

դռնբաց դատական նիստում, քննելով Արշակ Ափոյանի վճռաբեկ բողոքը ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 21.12.2010 թվականի որոշման դեմ՝ ըստ հայցի Ներսես Պողոսյանի ընդդեմ Արամ Միլիտոնյանի, Արթուր Ասրիյանի, Սպարտակ Կարապետյանի՝ ավտոմեքենայի առուվաճառքի պայմանագրերն անվավեր ճանաչելու, գործարքների անվավերության հետևանքներ կիրառելու պահանջների մասին, և ըստ հայցի Ներսես Պողոսյանի ընդդեմ Արշակ Ափոյանի և Սպարտակ Կարապետյանի, ինքնուրույն պահանջ չներկայացնող երրորդ անձ «Կոնվերս Բանկ» ՓԲԸ-ի (այսուհետ՝ Բանկ)՝ ավտոմեքենայի առուվաճառքի պայմանագիրն անվավեր ճանաչելու պահանջի մասին,

ՊԱՐՉԵՑ

1. Գործի դատավարական նախապատմությունը

Դիմելով դատարան՝ Ներսես Պողոսյանը պահանջել է անվավեր ճանաչել Արամ Միլիտոնյանի հետ 09.12.2008 թվականին կնքված «Պորշ-Կայեն» մակնիշի 41 ԼԼ 777 պետհամարանիշի ավտոմեքենայի առուվաճառքի պայմանագիրը, Արամ Միլիտոնյանի և Արթուր Ասրիյանի միջև 17.12.2008 թվականին կնքված նույն ավտոմեքենայի առուվաճառքի պայմանագիրը, Արթուր Ասրիյանի և Սպարտակ

Կարապետյանի միջև 18.12.2008 թվականին կնքված նույն ավտոմեքենայի առուվաճառքի պայմանագիրը և կիրառել գործարքի անվավերության հետևանքներ՝ վերադարձնելով ավտոմեքենան:

ՀՀ Արմավիրի մարզի ընդհանուր իրավասության դատարանի 27.07.2009 թվականի վճռով հայցը բավարարվել է:

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 04.11.2009 թվականի որոշմամբ Սպարտակ Կարապետյանի վերաքննիչ բողոքը բավարարվել է. ՀՀ Արմավիրի մարզի ընդհանուր իրավասության դատարանի 27.07.2009 թվականի վճիռը բեկանվել է, և գործն ուղարկվել է նույն դատարան՝ նոր քննության:

Դիմելով դատարան՝ Ներսես Պողոսյանը պահանջել է նաև անվավեր ճանաչել Սպարտակ Կարապետյանի և Արշակ Ափոյանի միջև 10.08.2009 թվականին կնքված «Պորշ-Կայեն» մակնիշի 19 SU 524 պետհամարանիշի ավտոմեքենայի առուվաճառքի պայմանագիրը:

ՀՀ Արմավիրի մարզի ընդհանուր իրավասության դատարանի 01.02.2010 թվականի որոշմամբ քաղաքացիական գործերը միացվել են մեկ վարույթում:

ՀՀ Արմավիրի մարզի ընդհանուր իրավասության դատարանի (այսուհետ՝ Դատարան) 17.07.2010 թվականի վճռով հայցերը բավարարվել են:

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի (այսուհետ՝ Վերաքննիչ դատարան) 21.12.2010 թվականի որոշմամբ Արշակ Ափոյանի վերաքննիչ բողոքը մերժվել է, և Դատարանի 17.07.2010 թվականի վճիռը թողնվել է օրինական ուժի մեջ:

Սույն գործով վճռաբեկ բողոք է ներկայացրել Արշակ Ափոյանը:

Վճռաբեկ բողոքի պատասխան չի ներկայացվել:

2. Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը

Սույն վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

Վերաքննիչ դատարանը խախտել է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 53-րդ հոդվածը, կիրառել է ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 275-րդ հոդվածի 1-ին կետը, 301-րդ հոդվածի 1-ին կետը, 305-րդ և 476-րդ հոդվածները, որոնք չպետք է կիրառեր:

Բողոք բերած անձը նշված պնդումը պարզապես անտարբեր է հետևյալ փաստարկներով.

Վերաքննիչ դատարանը, բողոքարկվող որոշմամբ փաստելով, որ «Սպարտակ Կարապետյանը չի կարող հանդիսանալ բարեխիղճ ձեռք բերող, քանզի «Պորշ-Կայեն» մակնիշի 41 LL 777 պետական համարանիշի ավտոմեքենան սեփականատիրոջ՝ Ներսես Պողոսյանի տիրապետումից դուրս է եկել վերջինիս կամքից անկախ, այն է՝ Արամ Միլիտոյանի կողմից առանց Ներսես Պողոսյանին ավտոմեքենայի գինը վճարելու, որն էլ այն վաճառել է երրորդ անձանց», անտեսել է, որ վիճելի ավտոմեքենան սեփականատիրոջից ձեռք է բերվել հատուցմամբ, բարեխիղճորեն և տիրապետվում է Արշակ Ափոյանի կողմից:

Բացի այդ, Վերաքննիչ դատարանը պատշաճ իրավական գնահատական չի տվել նաև այն հանգամանքին, որ վերոնշյալ ավտոմեքենան Ներսես Պողոսյանի տիրապետումից դուրս է եկել նրա կամքով՝ նոտարական կարգով վավերացված առուվաճառքի պայմանագրի հիման վրա:

Վերագրյալի հիման վրա բողոք բերած անձը պահանջել է բեկանել Վերաքննիչ դատարանի 21.12.2010 թվականի որոշումը և այն փոփոխել՝ հայցերը մերժել:

3. Վճռաբեկ բողոքի քննության համար նշանակություն ունեցող փաստերը

Վճռաբեկ բողոքի քննության համար նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

1. Ներսես Պողոսյանը 09.12.2008 թվականին «Պորշ-Կայեն» մակնիշի 41 LL 777 պետհամարանիշի (նույնացման համար՝ WP1AA29P65LA25650) ավտոմեքենան վաճառել է Արամ Միլիտոնյանին (հատոր 1-ին, գ. թ. 9, հատոր 3-րդ, գ. թ. 21):

2. Արամ Միլիտոնյանը 17.12.2008 թվականին «Պորշ-Կայեն» մակնիշի 18 LU 062 պետհամարանիշի (նույնացման համար՝ WP1AA29P65LA25650) ավտոմեքենան վաճառել է Արթուր Ասրիյանին (հատոր 1-ին, գ. թ. 19, հատոր 3-րդ, գ. թ. 22):

3. 18.12.2008 թվականին տրված ավտոտրանսպորտային միջոցների ժամանակավոր հաշվառման SD080228 վկայագրի համաձայն՝ «Պորշ-Կայեն» մակնիշի 18 OS 923 պետհամարանիշի (նույնացման համար՝ WP1AA29P65LA25650) ավտոմեքենայի սեփականատերն է Արթուր Ասրիյանը (հատոր 1-ին, գ. թ. 10, հատոր 3-րդ, գ. թ. 25):

4. Արթուր Ասրիյանը 18.12.2008 թվականին «Պորշ-Կայեն» մակնիշի 18 OS 923 պետհամարանիշի (նույնացման համար՝ WP1AA29P65LA25650) ավտոմեքենան վաճառել է Սպարտակ Կարապետյանին (հատոր 1-ին, գ. թ. 18, հատոր 3-րդ, գ. թ. 23):

5. 14.07.2009 թվականին տրված ավտոտրանսպորտային միջոցների ժամանակավոր հաշվառման SE019818 վկայագրի համաձայն՝ «Պորշ-Կայեն» մակնիշի 19 SU 524 պետհամարանիշի (նույնացման համար՝ WP1AA29P65LA25650) ավտոմեքենայի սեփականատերն է Սպարտակ Կարապետյանը (հատոր 2-րդ, գ. թ. 30):

6. Սպարտակ Կարապետյանը 10.08.2009 թվականին «Պորշ-Կայեն» մակնիշի 19 SU 524 պետհամարանիշի ավտոմեքենան (նույնացման համար՝ WP1AA29P65LA25650) վաճառել է Արշակ Ափոյանին (հատոր 2-րդ, գ. թ. 30):

7. Արշակ Ափոյանի կողմից 10.08.2009 թվականին ավտոմեքենան հաշվառելու մասին Ճանապարհային ոստիկանության հաշվառման-քննական ստորաբաժանման պետին հասցեագրված դիմումի՝ ոստիկանության ծառայողի եզրակացությունը բաժնում կատարված գրառման համաձայն՝ «Ավտոմեքենան ստուգված է և ենթակա է հաշվառման» (հատոր 2-րդ, գ. թ. 30):

8. Բանկի և Արշակ Ափոյանի միջև 21.08.2009 թվականին կնքված թիվ 214448 անհատական վարկավորման պայմանագրի 1.1 կետի համաձայն՝ Արշակ Ափոյանին միանվագ տրամադրվել է վարկ՝ 5.000.000 ՀՀ դրամի չափով, իսկ պայմանագրի 3-րդ կետի համաձայն՝ վարկառուին տրամադրված վարկի վերադարձնելիությունը ապահովված է 2005 թվականի արտադրության «Պորշ-Կայեն» մակնիշի ավտոմեքենայի (նույնացման համար՝ WP1AA29P65LA25650) թիվ 1C132485 գրավի պայմանագրով և «Է. Գ. Ս.» ՍՊԸ-ի երաշխավորությամբ (հատոր 2-րդ, գ. թ. 30):

4. Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը

Քննելով վճռաբեկ բողոքը նշված հիմքի ասհմաններում Վճռաբեկ դատարանը գտնում է, որ այն հիմնավոր է հետևյալ պատճառաբանությամբ.

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 275-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ եթե գույքը հատուցմամբ ձեռք է բերվել գույքն օտարելու իրավունք չունեցող անձից, որի մասին ձեռք բերողը չգիտեր կամ չէր կարող իմանալ (բարեխիղճ ձեռք բերող), ապա սեփականատերն իրավունք ունի ձեռք բերողից տվյալ գույքը պահանջել միայն

այն դեպքում, երբ գույքը կորցրել է սեփականատերը կամ այն անձը, ում այդ գույքի սեփականատերը հանձնել է տիրապետման, կամ այն հափշտակվել է մեկից կամ մյուսից, կամ նրանց տիրապետումից դուրս է եկել այլ ճանապարհով՝ անկախ նրանց կամքից:

Վերաքննիչ դատարանը դատական ակտն անփոփոխ թողնելու հիմքում դրել է նաև այն հիմնավորումը, որ «Սպարտակ Կարապետյանը չի կարող հանդիսանալ բարեխիղճ ձեռք բերող, քանզի «Պորշ-Կայեն» մակնիշի 41 ԼԼ 777 պետական համարանիշի ավտոմեքենան սեփականատիրոջ՝ Ներսես Պողոսյանի տիրապետումից դուրս է եկել վերջինիս կամքից անկախ, այն է՝ Արամ Միլիտոսյանի կողմից առանց Ներսես Պողոսյանին ավտոմեքենայի գինը վճարելու, որն էլ այն վաճառել է երրորդ անձանց»:

Մինչդեռ, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ առուվաճառքի պայմանագրի կնքման դեպքում օտարված գույքի համար ձեռք բերողի կողմից չվճարելը չի կարող վկայել տվյալ գույքի՝ սեփականատիրոջ տիրապետումից նրա կամքից անկախ դուրս գալու մասին:

Սույն քաղաքացիական գործով Ներսես Պողոսյանը, 09.12.2008 թվականին կնքված նոտարական վավերացում ստացած առուվաճառքի պայմանագրով «Պորշ-Կայեն» մակնիշի 41 ԼԼ 777 պետհամարանիշի ավտոմեքենան վաճառելով Արամ Միլիտոսյանին, իր կամքով փոխանցել է այդ գույքի նկատմամբ սեփականության իրավունքը: Հետևաբար, այն հանգամանքը, որ Արամ Միլիտոսյանը չի կատարել իր պայմանագրային պարտավորությունը, այն է՝ չի վճարել «Պորշ-Կայեն» մակնիշի 41 ԼԼ 777 պետհամարանիշի ավտոմեքենայի ամբողջ արժեքը, չի կարող հիմք հանդիսանալ գույքը Ներսես Պողոսյանի տիրապետումից իր կամքից անկախ դուրս գալու փաստը հաստատված համարելու համար:

ՀՀ Սահմանադրության 31-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ ոչ ոքի չի կարելի զրկել սեփականությունից, բացառությամբ դատական կարգով՝ օրենքով նախատեսված դեպքերի: «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի 1-ին արձանագրության 1-ին հոդվածի համաձայն՝ ոչ ոքի չի կարելի զրկել սեփական գույքից՝ բացառությամբ հանրային շահերի պաշտպանության համար և օրենքով ու միջազգային իրավունքի ընդհանուր սկզբունքներով նախատեսված պայմաններով:

Եվրոպական դատարանն իր նախադեպերից մեկում նշել է. «Պետությունը կարող է (...) կրել պատասխանատվություն, առաջին հոդվածի տեսանկյունից, մասնավոր անձանց միջև կնքված գործարքներից բխող սեփականության իրավունքի իրականացմանը միջամտելու համար» (տե՛ս Գուստաֆսոնն ընդդեմ Շվեդիայի գործով 25.04.1996 թվականի վճիռ կետ 60):

Հետևաբար, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Վերաքննիչ դատարանը վճիռ կայացնելիս խախտել է «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի առաջին արձանագրության առաջին հոդվածով սահմանված սեփականության անձեռնմխելիության իրավունքը:

Այսպիսով, վճռաբեկ բողոքի հիմքի առկայությունը Վճռաբեկ դատարանը դիտում է բավարար՝ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 227-րդ հոդվածի ուժով Վերաքննիչ դատարանի որոշումը բեկանելու համար:

Միաժամանակ, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ տվյալ դեպքում անհրաժեշտ է կիրառել ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 240-րդ հոդվածի 1-ին կետի 4-րդ ենթակետով սահմանված՝ ստորադաս դատարանի դատական ակտը փոփոխելու ՀՀ վճռաբեկ դատարանի լիազորությունը հետևյալ հիմնավորմամբ.

ՀՀ Սահմանադրության 19-րդ հոդվածի և «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի (այսուհետ՝ Կոնվենցիայի) 6-րդ հոդվածի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի ողջամիտ ժամկետում իր գործի քննության իրավունք: Վճռաբեկ դատարանը գտնում է, որ գործը ողջամիտ ժամկետում քննելը հանդիսանում է ՀՀ Սահմանադրության և Կոնվենցիայի վերը նշված հոդվածներով ամրագրված անձի արդար դատաքննության իրավունքի տարր, հետևաբար, գործի անհարկի ձգձգումները վտանգ են պարունակում նշված իրավունքի խախտման տեսանկյունից: Տվյալ դեպքում, Վճռաբեկ դատարանի կողմից ստորադաս դատարանի դատական ակտը փոփոխելը բխում է արդարադատության արդյունավետության շահերից:

Դատական ակտը փոփոխելիս Վճռաբեկ դատարանը հիմք է ընդունում սույն որոշման պատճառաբանությունները, ինչպես նաև գործի նոր քննության անհրաժեշտության բացակայությունը:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 240-241²-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

ՈՐՈՇԵՑ

1. Վճռաբեկ բողոքը բավարարել: Բեկանել ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 21.12.2010 թվականի որոշումը և այն փոփոխել՝ Ներսես Պողոսյանի հայցերը մերժել:

2. Ներսես Պողոսյանից հօգուտ Արշակ Ափոյանի բռնագանձել 30.000 ՀՀ դրամ որպես վերաքննիչ և վճռաբեկ բողոքների համար վճարված պետական տուրք:

3. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

*ՆԱԽԱԳԱՀՈՂ՝ արդրագրություն
ԴԱՏԱՎՈՐՆԵՐ՝ արդրագրություններ*

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի որոշում
Քաղաքացիական գործ թիվ ԵԱՆԴ/0862/02/10
2011թ.
Քաղաքացիական գործ թիվ ԵԱՆԴ/0862/02/10
Նախագահող դատավոր՝ Կ. Հակոբյան
Դատավորներ՝ Ս. Սահակյան
Ս. Նազարյան

ՈՐՈՇՈՒՄ
ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քաղաքացիական
և վարչական պալատը (այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

*նախագահությամբ
մասնակցությամբ դատավորներ*

Ե. ԽՈՒՆԴԿԱՐՅԱՆԻ
Գ. ՀԱԿՈԲՅԱՆԻ
Վ. ԱԲԵԼՅԱՆԻ
Ս. ԱՆՏՈՆՅԱՆԻ
Վ. ԱՎԱՆԵՍՅԱՆԻ
Ա. ԲԱՐՍԵՂՅԱՆԻ
Մ. ԴՐՄԵՅԱՆԻ
Է. ՀԱՅՐԻՅԱՆԻ
Տ. ՊԵՏՐՈՍՅԱՆԻ
Ե. ՍՈՂՈՄՈՆՅԱՆԻ

2011 թվականի դեկտեմբերի 27-ին

դռնբաց դատական նիստում, քննելով ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի (այսուհետ՝ Կոմիտե) վճռաբեկ բողոքը ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 24.11.2010 թվականի որոշման դեմ՝ ըստ դիմումի Գերասիմ Սամվելյանի՝ սեփականության իրավունքով ավտոմեքենան տիրապետելու փաստը հաստատելու պահանջի մասին,

ՊԱՐԶԵՑ

1. Գործի դատավարական նախապատմությունը

Դիմելով դատարան՝ Գերասիմ Սամվելյանը պահանջել է հաստատել 27.08.2008 թվականին թիվ 535374 փոխադրման ամփոփագրով Հայաստանի Հանրապետության տարածք ներմուծված «Ֆոլկվագեն Պասատ» մակնիշի «WVWPD63B52P129719» նույնացման համարով ավտոմեքենան սեփականության իրավունքով տիրապետելու

փաստը:

27.07.2010 թվականին նշանակված դատական նիստում Կոմիտեն ներգրավվել է որպես երրորդ անձ:

Երևանի Ավան և Նոր Նորք վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի (դատավոր Ս. Ուզունյան) (այսուհետ՝ Դատարան)

24.09.2010 թվականի վճռով դիմումը մերժվել է:

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի (այսուհետ՝ Վերաքննիչ դատարան) 24.11.2010 թվականի որոշմամբ Դատարանի 24.09.2010 թվականի վճիռը բեկանվել է և փոփոխվել՝ դիմումը բավարարվել է:

Սույն գործով վճռաբեկ բողոք է ներկայացրել Կոմիտեն:

Վճռաբեկ բողոքի պատասխան է ներկայացրել Գերասիմ Սամվելյանը:

2. Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը

Սույն վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

Վերաքննիչ դատարանը խախտել է ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 275-րդ հոդվածը, «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 86-րդ հոդվածը, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 48-րդ, 51-րդ և 53-րդ հոդվածները, 189-րդ հոդվածի 2-րդ կետի 8-րդ ենթակետը, 219-րդ և 221-րդ հոդվածները, կիրառել է ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 172-րդ և 273-րդ հոդվածները, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 221-րդ հոդվածի 1-ին կետի 4-րդ ենթակետը, որոնք չպետք է կիրառեր:

Բողոք բերած անձը նշված պնդումը պարզապես անտեսել է հետևյալ փաստարկներով.

Վերաքննիչ դատարանն անտեսել է, որ Դատարանը մանրամասն անդրադարձել է քրեական գործի հարուցումը մերժելու մասին 27.02.2009 թվականի կայացված որոշմանը, վերլուծել է այդ որոշմամբ հաստատված փաստական հանգամանքները, որի արդյունքում եզրակացրել է, որ Գերասիմ Սամվելյանի կողմից ներմուծված ավտոմեքենայի որոշ մասեր պատկանում են այլ ավտոմեքենաների, իսկ Գերասիմ Սամվելյանն ապացույց չի ներկայացրել բողոքում նշված ավտոմեքենաների իրական սեփականատերերի հայտնաբերված լինելու, ինչպես նաև նրանց կողմից իրենց ավտոմեքենաներն օրենքով սահմանված կարգով հետ չպահանջելու վերաբերյալ:

Վերաքննիչ դատարանն անտեսել է, որ Գերասիմ Սամվելյանը որևէ ապացույց չի ներկայացրել մեքենայի շարժիչի փոփոխության օրինականության, այդ փոփոխությունն օրենքով սահմանված կարգով համապատասխան պետական մարմիններում գրանցված լինելու վերաբերյալ, չի անդրադարձել մեքենային տեղադրված իրական շարժիչի գտնվելու վայրի, փոփոխության կատարման ժամանակի, ներկայումս մեքենային տեղադրված շարժիչի ձեռքբերման օրինականության հանգամանքներին:

Վերաքննիչ դատարանը բավարարվել է միայն այն հանգամանքով, որ երկու ավտոմեքենաներն էլ միջազգային հետախուզման մեջ չեն գտնվում: Միչադեո, տվյալ ավտոմեքենան միջազգային հետախուզման մեջ չգտնվելու հանգամանքը չի ապացուցում շարժիչների փոփոխության օրինականությունը և այդ փաստի գրանցված լինելը:

Վերոգրյալի հիման վրա բողոք բերած անձը պահանջել է բեկանել Վերաքննիչ դատարանի 24.11.2010 թվականի որոշումն ու օրինական ուժ տալ Երևանի Ավան և Նոր Նորք վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի 24.09.2010 թվականի վճռին:

2.1 Վճռաբեկ բողոքի պատասխանի հիմնավորումները

Վերաքննիչ դատարանի 24.11.2010 թվականի որոշումը հիմնավոր է, քանի որ Վերաքննիչ դատարանը, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 53-րդ հոդվածի պահանջներին համապատասխան, բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտության հիման վրա գնահատել է գործում առկա ապացույցները, մասնավորապես՝ քրեական գործի հարուցումը մերժելու մասին 27.02.2009 թվականի որոշումը, որտեղ նշվել է, որ 10.10.2008 և 18.11.2008 թվականներին, ՀՀ-ում Ինտերպոլի ԱԿԲ-ից ստացված տեղեկությունների համաձայն, «WVWPD63B52P129719» նույնացման համարով ավտոմեքենա արտադրվել է 2001 թվականին, արտադրության կոդ՝ 3317612 (համապատասխանում է ՀՀ ներմուծված ավտոմեքենայի կոդին), շարժիչի համարն է՝ AWM 083305, իսկ այժմ մեքենային տեղադրված AWM 051253 համարով շարժիչը գործարանի կողմից դրվել է 2001 թվականի արտադրության «WVWPD63B01P272351» նույնացման համարով ավտոմեքենային և այն, որ նշված երկու ավտոմեքենաներն էլ միջազգային հետախուզման մեջ չեն գտնվում, իսկ ներմուծման փաստաթղթերն օրինական են:

3. Վճռաբեկ բողոքի քննության համար նշանակություն ունեցող փաստերը

Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1) 27.08.2008 թվականին Գերասիմ Սամվելյանը թիվ 535374 փոխադրման ամփոփագրով Հայաստանի Հանրապետության տարածք է ներմուծել «Ֆոլկսվագեն Պասատ» մակնիշի «WVWPD63B52P129719» նույնացման համարով ավտոմեքենան (**հատոր 1-ին, գ.թ. 11**).

2) 02.11.2009 թվականին Գերասիմ Սամվելյանը դիմել է ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե վերոնշյալ ավտոմեքենան մաքսագերծելու խնդրանքով: 10.11.2009 թվականի թիվ 28958/11-5 գրությամբ դիմումը մերժվել է այն պատճառաբանությամբ, որ 2009 թվականի հոկտեմբերի 26-ին ուժի մեջ է մտել «ՀՀ մաքսային օրենսգրքում լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքը, որով ՀՀ մաքսային օրենսգրքի 130-րդ հոդվածը լրացվել է նոր՝ 5-րդ մասով, որի համաձայն՝ հետախուզման մեջ գտնվող, ինչպես նաև շարժիչի կամ նույնացման համարի վերադաշման կամ ջնջված համարներով, կամ հավշտակության այլ հատկանիշների առկայությամբ ավտոմեքենայի մաքսային հայտարարագիրը մաքսային մարմին է ներկայացվում ավտոմեքենայի նկատմամբ բարեխիղճ ձեռք բերողի սեփականությունը ձանաչելու մասին դատական ակտն ուժի մեջ մտնելուց հետո՝ մեկամսյա ժամկետում, և որ նշված ավտոմեքենայի մաքսային ձևակերպումը հնարավոր կլինի օրենքով նշված վճռի առկայության դեպքում (**հատոր 1-ին, գ.թ. 19-20**).

3) ՀՀ ոստիկանության ԿՀԴՊ գլխավոր վարչության պետ Հ. Պողոսյանը, պարզելով, որ Գերասիմ Սամվելյանը նշված ավտոմեքենան ձեռք է բերել օրինական

ճանապարհով, ավտոմեքենայի նույնացման, շարժիչի և փոխանցման տուփի համարները վերադասված չեն, այն միջազգային հետախուզման մեջ չի գտնվում, փաստաթղթերն օրինական են, 27.02.2009 թվականին որոշում է կայացրել քրեական գործի հարուցումը հանցագործության դեպքի բացակայության հիմքով մերժելու մասին (**հատոր 1-ին, գ.թ. 13**):

4. Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումները

Քննելով վճռաբեկ բողոքը նշված հիմքի սահմաններում՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ *այն հիմնավոր է հերևյալ պայրճառաբանությամբ*:

Վճռաբեկ դատարանն իր որոշումներում անդրադարձել է ավտոմեքենայի նկատմամբ որպես բարեխիղճ ձեռք բերողի սեփականությունը ճանաչելու մասին հայցի հիման վրա հարուցված գործի քննությունը Կոմիտեի իրավունքներին և պարտականություններին առնչություն ունենալու հարցին (*լրե՞ս Վահրամ Մարգարյանն ընդդեմ ՀՀ ոստիկանության կազմակերպված հանցավորության դեմ պայքարի գլխավոր վարչության՝ որպես բարեխիղճ ձեռք բերողի սեփականությունը ճանաչելու պահանջի մասին ՀՀ վճռաբեկ դատարանի 27.12.2007 թվականի որոշում, քաղաքացիական գործ թիվ ԵԿԴ/0710/02/10*):

Մասնավորապես՝ Վճռաբեկ դատարանը նշել է, որ Կոմիտեն մաքսային ձևակերպում իրականացնող մարմին է, որն իրականացնում է հայտարարագրի գրանցման եղանակով, և գործի քննությունը չի առնչվում Կոմիտեի իրավունքներին ու պարտականություններին՝ արձանագրելով, որ դատարանի վճռով Կոմիտեի որևէ իրավունք չի խախտվել, և վերջինս չի ծանրաբեռնվել լրացուցիչ պարտականություններով:

Այնուհանդերձ, հիմք ընդունելով այն հանգամանքը, որ Կոմիտեն սույն գործով դատարանի կողմից արդեն իսկ ներգրավվել է որպես երրորդ անձ, հետևաբար և ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 28-րդ հոդվածի առաջին կետի 7-րդ ենթակետի ուժով օժտված է դատական ակտը բողոքարկելու իրավունքով, ուստի Վճռաբեկ դատարանը սույն բողոքը քննելիս չի կարող հաշվի չառնել Կոմիտեի դատավարական կարգավիճակից բխող հետևանքները, ուստի և քննարկման առարկա է դարձնում վճռաբեկ բողոքում առկա փաստարկները:

ՀՀ մաքսային օրենսգրքի 130-րդ հոդվածի 4-րդ և 5-րդ մասերի համաձայն՝ հետախուզման մեջ գտնվող, ինչպես նաև շարժիչի կամ նույնացման համարի վերադասված կամ ջնջված համարներով կամ հափշտակության այլ հատկանիշների առկայությամբ արտաքին տնտեսական գործունեության ապրանքային անվանացանկի 8702, 8703, 8704, 8705 ապրանքային դիրքերին դասվող ապրանքներ և (կամ) տրանսպորտային միջոցներ Հայաստանի Հանրապետություն ներմուծելու դեպքում տեղափոխողը կամ նրա լիազորած անձը ներմուծմանը հաջորդող տասնօրյա ժամկետում մաքսային մարմին է ներկայացնում ժամանակավոր հայտարարագիր՝ վճարելով մաքսային վճարները, ինչը հիմք է այդ ապրանքների և (կամ) տրանսպորտային միջոցների ժամանակին չհայտարարագրման համար օրենքով սահմանված տույժերից և վարչական պատասխանատվությունից ազատելու համար: Նույն հոդվածի 4-րդ մասով նախատեսված ապրանքների և (կամ) տրանսպորտային միջոցների համար մաքսային հայտարարագիրը մաքսային մարմին է ներկայացվում նշված ապրանքների և (կամ) տրանսպորտային միջոցների նկատմամբ բարեխիղճ

ձեռք բերողի սեփականությունը ճանաչելու մասին դատական ակտն ուժի մեջ մտնելուց հետո՝ մեկամսյա ժամկետում:

«Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 86-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ իրավական ակտը մեկնաբանվում է դրանում պարունակվող **բառերի և արտահայտությունների տառացի նշանակությամբ՝** հաշվի առնելով օրենքի պահանջները: Իրավական ակտի մեկնաբանությամբ չպետք է փոփոխվի դրա **իմաստը:**

Վերոնշյալ նորմերի՝ «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 86-րդ հոդվածի 1-ին մասի կանոններով մեկնաբանությունից հետևում է, որ ՀՀ մաքսային օրենսգրքի 130-րդ հոդվածի 5-րդ մասի կիրառելիության համար անհրաժեշտ են, որպեսզի արտաքին տնտեսական գործունեության ապրանքային անվանացանկի 8702, 8703, 8704, 8705 ապրանքային դիրքերին դասվող ապրանքները և (կամ) տրանսպորտային միջոցները

1. գտնվեն հետախուզման մեջ

2. առկա լինեն շարժիչի կամ նույնացման համարի վերադաջում կամ համարների ջնջում կամ **հափշտակության այլ հատկանիշներ:**

Վճռաբեկ դատարանը նշված վերլուծության հիման վրա արձանագրում է, որ շարժիչի կամ նույնացման համարի վերադաջումը կամ համարների ջնջումը հափշտակության հատկանիշներ են, որոնք պետք է առկա լինեն ՀՀ մաքսային օրենսգրքի 130-րդ հոդվածի 5-րդ մասով նախատեսված կանոնները կիրառելու համար: Այսինքն՝ օրենսդիրը նշված կանոնների կիրառելիությունն ամեն դեպքում կապում է հափշտակության հատկանիշների հետ, որոնց առկայության դեպքում միայն կարող է կիրառվել ՀՀ մաքսային օրենսգրքի 130-րդ հոդվածի 5-րդ մասի կանոնը, այսինքն՝ տրանսպորտային միջոցների նկատմամբ բարեխիղճ ձեռք բերողի սեփականության իրավունքը կարող է ճանաչվել դատական կարգով, իսկ մաքսային հայտարարագիրը մաքսային մարմին ներկայացվի, եթե առկա է համապատասխան դատական ակտը, և այն մտել է օրինական ուժի մեջ:

Սույն գործի փաստերի համաձայն՝ ՀՀ ոստիկանության ԿՀԴՊ գլխավոր վարչության պետ Հ. Պողոսյանը, պարզելով, որ Գերասիմ Սամվելյանը նշված ավտոմեքենան ձեռք է բերել օրինական ճանապարհով, ավտոմեքենայի նույնացման, շարժիչի և փոխանցման տուփի համարները վերադաջված չեն, այն միջազգային հետախուզման մեջ չի գտնվում, փաստաթղթերն օրինական են, 27.02.2009 թվականին որոշում է կայացրել քրեական գործի հարուցումը հանցագործության դեպքի բացակայության հիմքով մերժելու մասին:

Նման պայմաններում Վճռաբեկ դատարանը գտնում է, որ սույն գործով ՀՀ ոստիկանության ԿՀԴՊ գլխավոր վարչության պետ Հ. Պողոսյանի քրեական գործի հարուցումը մերժելու մասին որոշմամբ հանցագործության՝ տվյալ դեպքում հափշտակության հատկանիշների բացակայությունը հաստատված լինելու պայմաններում ՀՀ մաքսային օրենսգրքի 130-րդ հոդվածի 4-րդ և 5-րդ մասերը կիրառելի չեն:

Հիմք ընդունելով վերոգրյալը՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Գերասիմ Սամվելյանի դիմումը՝ ՀՀ մաքսային օրենսգրքի 130-րդ հոդվածի 4-րդ և 5-րդ մասերի հիմքով ավտոմեքենան սեփականության իրավունքով տիրապետելու փաստը հաստատելու պահանջը, ենթակա է մերժման:

Միաժամանակ, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ տվյալ դեպքում

անհրաժեշտ է կիրառել ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 240-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով սահմանված՝ առաջին ատյանի դատարանի դատական ակտին օրինական ուժ տալու՝ Վճռաբեկ դատարանի լիազորությունը հետևյալ հիմնավորմամբ: «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի ողջամիտ ժամկետում իր գործի քննության իրավունք: Սույն քաղաքացիական գործով վեճի լուծումն էական նշանակություն ունի գործին մասնակցող անձանց համար: Վճռաբեկ դատարանը գտնում է, որ գործը ողջամիտ ժամկետում քննելը հանդիսանում է Կոնվենցիայի նույն հոդվածով ամրագրված անձի արդար դատաքննության իրավունքի տարր, հետևաբար, գործի անհարկի ձգձգումները վտանգ են պարունակում նշված իրավունքի խախտման տեսանկյունից:

Տվյալ դեպքում, Վճռաբեկ դատարանի կողմից ստորադաս դատարանի դատական ակտին օրինական ուժ տալը բխում է արդարադատության արդյունավետության շահերից, քանի որ սույն գործով վերջնական դատական ակտ կայացնելու համար նոր հանգամանք հաստատելու անհրաժեշտությունը բացակայում է:

Առաջին ատյանի դատարանի դատական ակտին օրինական ուժ տալով՝ Վճռաբեկ դատարանը հիմք է ընդունում սույն որոշման պատճառաբանությունները, ինչպես նաև գործի նոր քննության անհրաժեշտության բացակայությունը:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 240-241²-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

ՈՐՈՇԵՑ

1. Վճռաբեկ բողոքը բավարարել մասնակիորեն: Բեկանել ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 24.11.2010 թվականի որոշումը և օրինական ուժ տալ Երևանի Ավան և Նոր Նորք վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի 24.09.2010 թվականի վճռին՝ սույն որոշման պատճառաբանություններով:

2. Գերասիմ Սամվելյանից հօգուտ ՀՀ պետական բյուջեի բռնագանձել 10.000 ՀՀ դրամ որպես վճռաբեկ բողոքի համար վճարված պետական տուրք:

3. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

*ՆԱԽԱԳԱՀՈՂ՝ ստորագրություն
ԴԱՏԱՎՈՐՆԵՐ՝ ստորագրություններ*

ԳՈՐԾԱՐՔԻ ԱՆՎՎԵՐՈՒԹՅՈՒՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի որոշում
Քաղաքացիական գործ թիվ ԵԱԲԳ/2506/02/09
Քաղաքացիական գործ թիվ ԵԱԲԳ/2506/02/09

2011թ.

Նախագահող դատավոր՝ Գ. Մատինյան
Դատավորներ՝ Լ. Գրիգորյան
Ա. Թումանյան

ՈՐՈՇՈՒՄ

ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քաղաքացիական
և վարչական պալատը (այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

*նախագահությամբ
մասնակցությամբ դատավորներ*

Ե. ԽՈՒՆԴԿԱՐՅԱՆԻ
Վ. ԱՎԱՆԵՍՅԱՆԻ
Վ. ԱԲԵԼՅԱՆԻ
Ս. ԱՆՏՈՆՅԱՆԻ
Ա. ԲԱՐՍԵՂՅԱՆԻ
Մ. ԴՐՄԵՅԱՆԻ
Գ. ՀԱԿՈԲՅԱՆԻ
Է. ՀԱՅՐԻՅԱՆԻ
Տ. ՊԵՏՐՈՍՅԱՆԻ
Ե. ՍՈՂՈՄՈՆՅԱՆԻ

2011 թվականի մարտի 04-ին

դռնբաց դատական նիստում, քննելով Արթուր Հարությունյանի վճռաբեկ բողոքը
ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 02.12.2010 թվականի որոշման դեմ՝
ըստ հայցի Յուրի և Սիլվա Զարգարյանների ընդդեմ Արշակ Զարգարյանի, Գայանե
Բարսեղյանի և Արթուր Հարությունյանի՝ առուվաճառքի պայմանագիրն անվավեր
ճանաչելու պահանջի մասին,

ՊԱՐԶԵՑ

1. Գործի դատավարական նախապատմությունը

Դիմելով դատարան՝ Յուրի և Սիլվա Զարգարյանները պահանջել են անվավեր
ճանաչել Արշակ Զարգարյանի և Գայանե Բարսեղյանի միջև 03.09.2009 թվականին և

Գայանե Բարսեղյանի ու Արթուր Հարությունյանի միջև 08.10.2009 թվականին կնքված էքսկլավատորի առուվաճառքի պայմանագրերը:

Երևանի Արաբկիր և Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի 29.01.2010 թվականի վճռով հայցը մերժվել է:

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 29.03.2010 թվականի որոշմամբ Յուրի և Սիլվա Զարգարյանների վերաքննիչ բողոքը բավարարվել է. Դատարանի 29.01.2010 թվականի վճիռը բեկանվել է, և գործն ուղարկվել է նույն դատարան՝ նոր քննության:

Երևանի Արաբկիր և Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի (այսուհետ՝ Դատարան) 22.09.2010 թվականի վճռով հայցը բավարարվել է:

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի (այսուհետ՝ Վերաքննիչ դատարան) 02.12.2010 թվականի որոշմամբ Դատարանի 22.09.2010 թվականի վճիռը թողնվել է օրինական ուժի մեջ:

Սույն գործով վճռաբեկ բողոք է ներկայացրել Արթուր Հարությունյանը:

Վճռաբեկ բողոքի պատասխան են ներկայացրել Յուրի և Սիլվա Զարգարյանները:

2. Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը

Վերաքննիչ դատարանը խախտել է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 53-րդ և 132-րդ հոդվածները, որի արդյունքում սխալ է մեկնաբանել ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 304-րդ, 306-րդ հոդվածները:

Բողոք բերած անձը նշված պնդումը պարձառաբանում է հետևյալ փաստարկներով.

Վերաքննիչ դատարանն անտեսել է, որ Դատարանը պատշաճ չի գնահատել գործում առկա ապացույցները, մասնավորապես՝ էքսկլավատորի տեխնիկական վկայագիրը, Գայանե Բարսեղյանի և «Հովնանյան Ինթերնեյշնլ» ՍՊԸ-ի միջև կնքված տրանսպորտային միջոցի վարձակալության պայմանագիրը, ինչպես նաև Արթուր Հարությունյանի և «ՇՄՇ-23» ԲԲԸ-ի միջև կնքված մեխանիզմի վարձակալության պայմանագիրը: Մինչդեռ, Վերաքննիչ դատարանը պետք է արձանագրեր վերոհիշյալ ապացույցների ոչ պատշաճ գնահատում, քանի որ դրանց պատշաճ գնահատման արդյունքում Դատարանը կփաստեր, որ վեճի առարկա երկու գործարքներն էլ կնքվել էին հստակ իրավաբանական հետևանքներ առաջացնելու մտադրությամբ և առաջացրել են այդ հետևանքները:

Վերաքննիչ դատարանն անտեսել է նաև, որ Գայանե Բարսեղյանը և Արթուր Հարությունյանը տարբեր ընկերությունների հետ կնքել են էքսկլավատորի վարձակալության պայմանագրեր, փաստացի շահագործել են նշված գույքը: Նշվածը նույնպես վկայում է էքսկլավատորի առուվաճառքի պայմանագրերի կնքման պահին նրանց իրական մտադրությունների մասին:

Վերոգրյալի հիման վրա բողոք բերած անձը պահանջել է բեկանել Վերաքննիչ դատարանի 02.12.2010 թվականի որոշումը և այն փոփոխել՝ հայցը մերժել:

2.1. Վճարել բողոքի պատասխանի հիմնավորումները

Վերաքննիչ դատարանի որոշումը կայացվել է գործում առկա բոլոր ապացույցների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտության հիման վրա, հետևաբար վճարել բողոքը ենթակա է մերժման:

Վերաքննիչ դատարանն իրավացիորեն գտել է, որ Դատարանի վճռով կատարված եզրահանգումները օրինական են և հիմնավոր, իսկ առուվաճառքի պայմանագրերը՝ կեղծ:

3. Վճարել բողոքի քննության համար նշանակություն ունեցող փաստերը

Վճարել բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1. ՀՀ գյուղատնտեսության նախարարության գյուղատնտեսական տեխնիկայի պետական տեսչության 05.11.2009 թվականի թիվ 13-4799 գրության համաձայն՝ HYNDAI R-170 W-7 մակնիշի 10-86SL պետհամարանիշի էքսկավատորը հաշվառվել է Արշակ Զարգարյանի անվամբ /հիմք՝ Երևանի Արաբկիր և Քանաքեռ-Զեյթուն համայնքների ընդհանուր իրավասության դատարանի 29.07.2009 թվականի վճիռը/ (հատոր 1-ին, գ.թ. 46):

2. 03.09.2009 թվականի էքսկավատորի առուվաճառքի պայմանագրով Գայանե Բարսեղյանն Արշակ Զարգարյանից գնել է HYNDAI R-170 W-7 մակնիշի 10-86SL պետհամարանիշով էքսկավատորը (հատոր 1-ին, գ.թ.99):

3. 17.09.2009 թվականի տրանսպորտային միջոցի վարձակալության պայմանագրով Գայանե Բարսեղյանը վարձավճարի դիմաց «Հովնանյան Ինտերնեյշնլ» ՍՊԸ-ին է հանձնել HYNDAI R-170 W-7 մակնիշի 10-86SL պետհամարանիշով էքսկավատորը (հատոր 3-րդ, գ.թ. 7):

4. 08.10.2009 թվականի էքսկավատորի առուվաճառքի պայմանագրով Արթուր Հարությունյանը Գայանե Բարսեղյանից գնել է HYNDAI R-170 W-7 մակնիշի 10-86SL պետհամարանիշով էքսկավատորը (հատոր 1-ին, գ.թ.97, հատոր 3-րդ, գ.թ. 12):

5. 14.01.2010 թվականի մեխանիզմի վարձակալության պայմանագրով Արթուր Հարությունյանը վարձավճարի դիմաց «ՇՄԸ-23» ԲԲԸ-ին է հանձնել HYNDAI R-170 W-7 մակնիշի 10-86SL պետհամարանիշով էքսկավատորը (հատոր 3-րդ, գ.թ. 8-10):

4. Վճարել դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումները

Քննելով վճարել բողոքը վերը նշված հիմքի սահմաններում՝ Վճարել դատարանը գտնում է, որ այն հիմնավոր է հետևյալ պարձառաբանությամբ.

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 306-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ կեղծ գործարքը, այսինքն՝ առերևույթ, առանց համապատասխան իրավական հետևանքներ առաջացնելու մտադրության կնքված գործարքը, առչինչ է:

Վերոնշյալ հոդվածից հետևում է, որ գործարքի կեղծ լինելը փաստելու համար անհրաժեշտ է ապացուցել, որ այն կնքվել է առանց իրավական հետևանքներ առաջացնելու մտադրության, այսինքն՝ նպատակ չի հետապնդել կողմերի համար

առաջացնել իրավունքներ և պարտականություններ:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 53-րդ հոդվածի համաձայն՝ դատարանը յուրաքանչյուր ապացույց գնահատում է գործում եղած բոլոր ապացույցների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտության վրա հիմնված ներքին համոզմամբ:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 48-րդ հոդվածի 1-ին և 2-րդ կետերի համաձայն՝ գործին մասնակցող յուրաքանչյուր անձ պետք է ապացուցի իր վկայակոչած փաստերը: Գործի լուծման համար էական նշանակություն ունեցող ապացուցման ենթակա փաստերը որոշում է դատարանը՝ գործին մասնակցող անձանց պահանջների և առարկությունների հիման վրա:

Վճռաբեկ դատարանն իր որոշումներում անդրադարձել է դատական ակտերի իրավական հիմնավորվածության հարցին:

Մասնավորապես, Վճռաբեկ դատարանը նշել է, որ յուրաքանչյուր դեպքում դատարանը պարտավոր է տալ որոշման իրավական հիմնավորումը:

Որոշման իրավական հիմնավորումը կայանում է հաստատված փաստերի և իրավահարաբերությունների նկատմամբ իրավունքի համապատասխան նորմի կամ նորմերի ընտրության և կիրառման մեջ, այն նորմի (նորմերի), որի հիման վրա դատարանը եզրակացություն է անում վիճելի իրավահարաբերության առկայության կամ բացակայության մասին:

Որոշման մեջ ոչ միայն պետք է ցույց տալ նորմատիվ ակտի այս կամ այն հոդվածը, որում ամրագրված է կիրառման ենթակա նորմը, այլ պետք է պատճառաբանվի, թե հատկապես ինչու պետք է կիրառվի հենց այդ նորմը:

Որոշման իրավական հիմնավորումը բնութագրում է ինչպես դատարանի, այնպես էլ նրա որոշման իրավակիրառ գործառույթը, ընդգծում դատական գործունեության և դատական որոշման օրինականությունը:

Գատարանը պետք է նշի ոչ միայն այն ապացույցները, որոնց վրա հիմնվել է որոշում կայացնելիս, այլև պետք է պատճառաբանի, թե ինչու է կողմի ներկայացրած այս կամ այն ապացույցը մերժվում: Միայն նման հիմնավորումը կարող է վկայել գործի բազմակողմանի հետազոտության մասին (*լրես՝ Ալվարդ Խաչատրյանի օրինական ներկայացուցիչ Թեհմինե Խաչատրյանն ընդդեմ Արմեն, Անահիտ Խաչատրյանների, Քանաքեռավանի գյուղապետարանի, ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի Եղվարդի փարածքային ստորաբաժանման Քանաքեռավանի շրջխորհրդի գործկոմի 31.01.1995 թվականի թիվ 1 որոշումը, սեփականության իրավունքի պետական գրանցումը, գրանցման վկայականը մասնակիորեն անվավեր ճանաչելու և համասեփականարեր ճանաչելու պահանջների մասին, և Արմեն Խաչատրյանի հակընդդեմ հայցն ընդդեմ Թեհմինե Խաչատրյանի՝ բնակության իրավունքը դադարեցնելու և բնակելի փարածությունից վտարելու պահանջների մասին թիվ ԿԳ3/0026/02/08 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 26.12.2008 թվականի որոշումը*):

Սույն գործով Վերաքննիչ դատարանը վերաքննիչ բողոքի մերժման հիմքում դրել է այն հանգամանքը, որ Արշակ Զարգարյանի և Գայանե Բարսեղյանի միջև կնքված 03.09.2009 թվականի էքսկավատորի առուվաճառքի պայմանագիրը և Գայանե Բարսեղյանի ու Արթուր Հարությունյանի միջև կնքված 08.10.2009 թվականի էքսկավատորի առուվաճառքի պայմանագիրը կեղծ գործարքներ են, որոնցով իրականում Արշակ Զարգարյանը նպատակ է ունեցել խուսափել Յուրի և Միլվա

Զարգարյանների հանդեպ ունեցած պարտավորությունների կատարումից:

Մինչդեռ, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ գործում առկա չէ որևէ ապացույց, որով հաստատվում է այն փաստը, որ վերոնշյալ գործարքները կնքվել են առանց իրավական հետևանքներ առաջացնելու մտադրության:

Ավելին, Վերաքննիչ դատարանն անտեսել է 17.09.2009 թվականի տրանսպորտային միջոցի վարձակալության պայմանագիրը, համաձայն որի՝ Գայանե Բարսեղյանը վարձավճարի դիմաց «Հովնանյան Ինտերնեյշլ» ՍՊԸ-ին է հանձնել HYNDAI R-170 W-7 մակնիշի 10-86SL պետհամարանիշով էքսկավատորը, ինչպես նաև 14.01.2010 թվականի մեխանիզմի վարձակալության պայմանագիրը, համաձայն որի՝ Արթուր Հարությունյանը վարձավճարի դիմաց «ՇՄՇ-23» ԲԲԸ-ին է հանձնել HYNDAI R-170 W-7 մակնիշի 10-86SL պետհամարանիշով էքսկավատորը, որոնք վկայում են կողմերի՝ իրավական հետևանքներ առաջացնելու մտադրության մասին:

Ինչ վերաբերում է Արշակ Զարգարյանի՝ Յուրի և Սիլվա Զարգարյանների հանդեպ ունեցած պարտավորությունների առկայությանը, ապա Վճռաբեկ դատարանը գտնում է, որ այդ փաստը բավարար չէ՝ պատասխանողների միջև կնքված գործարքները կեղծ լինելու, այսինքն՝ առերևույթ, առանց համապատասխան իրավական հետևանքներ առաջացնելու մտադրության բացակայությունը հաստատված համարելու համար:

Նշված պատճառաբանություններով հերքվում են վճռաբեկ բողոքի պատասխանում բերված փաստարկները:

Այսպիսով, վերը նշված հիմքի առկայությունը Վճռաբեկ դատարանը դիտում է բավարար՝ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 227-րդ և 228-րդ հոդվածների ուժով Վերաքննիչ դատարանի 02.12.2010 թվականի որոշումը բեկանելու համար:

Միաժամանակ, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ տվյալ դեպքում անհրաժեշտ է կիրառել ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 240-րդ հոդվածի 1-ին կետի 4-րդ ենթակետով սահմանված՝ ստորադաս դատարանի դատական ակտը փոփոխելու ՀՀ վճռաբեկ դատարանի լիազորությունը հետևյալ հիմնավորմամբ:

ՀՀ Սահմանադրության 19-րդ հոդվածի և «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի (այսուհետ՝ Կոնվենցիա) 6-րդ հոդվածի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի ողջամիտ ժամկետում իր գործի քննության իրավունք: Վճռաբեկ դատարանը գտնում է, որ գործը ողջամիտ ժամկետում քննելը հանդիսանում է ՀՀ Սահմանադրության և Կոնվենցիայի վերը նշված հոդվածով ամրագրված անձի արդար դատաքննության իրավունքի տարր, հետևաբար գործի անհարկի ձգձգումները վտանգ են պարունակում նշված իրավունքի խախտման տեսանկյունից: Տվյալ դեպքում, Վճռաբեկ դատարանի կողմից ստորադաս դատարանի դատական ակտը փոփոխելը բխում է արդարադատության արդյունավետության շահերից:

Դատական ակտը փոփոխելիս Վճռաբեկ դատարանը հիմք է ընդունում սույն որոշման պատճառաբանությունները, ինչպես նաև գործի նոր քննության անհրաժեշտության բացակայությունը:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 240-241²-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

ՈՐՈՇԵՑ

1. Վճռաբեկ բողոքը բավարարել: Բեկանել ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 02.12.2010 թվականի որոշումը և այն փոփոխել. Յուրի և Սիլվա Զարգարյանների հայցը մերժել:

2. Յուրի և Սիլվա Զարգարյաններից հոգուտ Հայաստանի Հանրապետության բռնագանձել 14.000 ՀՀ դրամ որպես հայցադիմումի և վերաքննիչ բողոքի համար հետաձգված պետական տուրքի գումար, ինչպես նաև հոգուտ Արթուր Հարությունյանի բռնագանձել 30.000 ՀՀ դրամ որպես վերաքննիչ և վճռաբեկ բողոքների համար վճարված պետական տուրքի գումար:

3. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

*ՆԱԽԱԳԱՀՈՂ՝ ստորագրություն
ԴԱՏԱՎՈՐՆԵՐ՝ ստորագրություններ*

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական
դատարանի որոշում

Քաղաքացիական գործ թիվ ԵԱԲԴ/2566/02/09
2011թ.

Քաղաքացիական գործ թիվ ԵԱԲԴ/2566/02/09

Նախագահող դատավոր՝ Ա. Խատաոյան

Դատավորներ՝ Կ. Զիլինգարյան

Ա. Պետրոսյան

ՈՐՈՇՈՒՄ

ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քաղաքացիական
և վարչական պալատը (այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

նախագահությամբ

մասնակցությամբ դատավորներ

Ե. ԽՈՒՆԴԿԱՐՅԱՆԻ

Վ. ԱՎԱՆԵՍՅԱՆԻ

Վ. ԱԲԵԼՅԱՆԻ

Ս. ԱՆՏՈՆՅԱՆԻ

Ա. ԲԱՐՍԵՂՅԱՆԻ

Մ. ԴՐՄԵՅԱՆԻ

Գ. ՀԱԿՈԲՅԱՆԻ

Է. ՀԱՅՐԻՅԱՆԻ

Տ. ՊԵՏՐՈՍՅԱՆԻ

Ե. ՍՈՂՈՄՈՆՅԱՆԻ

2011 թվականի ապրիլի 01-ին

դռնբաց դատական նիստում, քննելով Սեղա Մկրտումյանի վճռաբեկ բողոքը ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 08.12.2010 թվականի որոշման դեմ՝ ըստ հայցի Սեղա Մկրտումյանի ընդդեմ Հովհաննես Մինասյանի, Արաբկիր նտտարական գրասենյակի նտտար Սուսաննա Դանիելյանի, Արթուր Մարգարյանի, երրորդ անձ Արաբկիր վարչական շրջանի խնամակալության հանձնաժողովի, Արմինե Սարգսյանի և Գևորգ Գևորգյանի՝ լիազորագիրն անվավեր ճանաչելու և գործարքի անվավերության հետևանքները կիրառելու պահանջների մասին,

Պ Ա Ր Ջ Ե Ց

1. Գործի դատավարական նախապատմությունը

Դիմելով դատարան՝ Սեղա Մկրտումյանը պահանջել է անվավեր ճանաչել Արմեն Մինասյանի կողմից 01.10.2008 թվականին Հովհաննես Մինասյանի անվամբ տրված լիազորագիրը և կիրառել գործարքի անվավերության հետևանքները:

Երևանի Արաբկիր և Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի 10.06.2010 թվականի վճռով հայցը մերժվել է:

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի (այսուհետ՝ Վերաքննիչ դատարան) 08.12.2010 թվականի որոշմամբ Սեդա Մկրտումյանի վերաքննիչ բողոքը մերժվել է, և Դատարանի վճիռը թողնվել է օրինական ուժի մեջ:

Սույն գործով վճռաբեկ բողոք է ներկայացրել Սեդա Մկրտումյանը:
Վճռաբեկ բողոքի պատասխան չի ներկայացվել:

2. Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը

Վերաքննիչ դատարանը խախտել է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 53-րդ հոդվածը, որի արդյունքում սխալ է մեկնաբանել ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 311-րդ հոդվածը և կիրառել է ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 307-րդ հոդվածը, որը չպետք է կիրառել:

Բողոք բերած անձը նշված պնդումը պարձառաբանում է հետևյալ փաստարկներով.

Վերաքննիչ դատարանն անտեսել է, որ Դատարանը պատշաճ չի գնահատել ՀՀ արդարադատության նախարարությանը կից ամբուլատոր դատահոգեբուժական փորձաքննության հանձնաժողովի 21.07.2008 թվականին տրված թիվ 206/08 եզրակացությունը: Ըստ այդ եզրակացության՝ Արմեն Մինասյանը տատապում է սակավամտություն, դեբիլություն հոգեկան հիվանդությամբ:

Վերաքննիչ դատարանն արձանագրել է, որ լիազորագիր տալու պահին Արմեն Մինասյանը հասկացել է իր գործողությունների նշանակությունը և կարողացել է ղեկավարել դրանք: Մինչդեռ, եթե Վերաքննիչ դատարանը լրիվ, օբյեկտիվ, բազմակողմանի հետազոտեր գործում սակա բոլոր ապացույցները, կհանգեր հակառակ եզրակացության:

Վերոգրյալի հիման վրա բողոք բերած անձը պահանջել է բեկանել Վերաքննիչ դատարանի 08.12.2010 թվականի որոշումը և այն փոփոխել՝ հայցը բավարարել:

3. Վճռաբեկ բողոքի քննության համար նշանակություն ունեցող փաստերը

Վճռաբեկ բողոքի քննության համար նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1. ՀՀ առողջապահության նախարարությանը կից ամբուլատոր դատահոգեբուժական փորձագիտական հանձնաժողովի 21.07.2008 թվականի թիվ 206/08 բժշկական եզրակացության համաձայն՝ Արմեն Մինասյանը տատապում է սակավամտություն, դեբիլություն հոգեկան հիվանդությամբ: Սակավամտությունն արտահայտված է փորձաքննվողի մոտ այն աստիճան, որ գրկում է նրան իր գործողությունների նշանակությունը հասկանալու և դրանք ղեկավարելու հնարավորությունից: Ուստի Արմեն Մինասյանին հարկ է ձանաչել անգործունակ (հատոր 1-ին, գ.թ. 24-25):

2. Արաբկիր և Քանաքեռ-Զեյթուն համայնքների ընդհանուր իրավասության դատարանի 19.09.2008 թվականի վճռով Արմեն Մինասյանը ձանաչվել է անգործունակ: Վճիռն օրինական ուժի մեջ է մտել 21.10.2008 թվականին (հատոր 1-ին, գ.թ. 15, գ.թ. 39):

3. ՀՀ Երևան քաղաքի Արաբկիր թաղային համայնքի ղեկավարի 26.11.2008 թվականի թիվ 159 որոշմամբ Սեդա Մկրտումյանը նշանակվել է Արմեն Մինասյանի խնամակալ (հատոր 1-ին, գ.թ. 15, գ.թ. 39):

4. 01.10.2008 թվականի նոտարական վավերացմամբ լիազորագրի համաձայն՝ Արմեն Մինասյանը լիազորել է Հովհաննես Մինասյանին լինելու իր ներկայացուցիչը

անշարժ գույքի կադաստրի տարածքային ստորաբաժանումներում, վաճառելու ՀՀ Երևան քաղաքի Արաբկիր համայնքի Ա. Խաչատրյան փողոցի 19-րդ շենքի թիվ 35 բնակարանի՝ իրեն պատկանող մասը, ստորագրելու առուվաճառքի պայմանագիրը, ստանալու վաճառքի գումարը և կատարելու այն բոլոր գործողությունները, որոնք կապված են տվյալ հանձնարարության հետ (հատոր 1-ին, գ.թ. 14):

5. ՀՀ առողջապահության նախարարությանը կից ամբուլատոր դատահոգեբուժական փորձագիտական հանձնաժողովի 13.10.2009 թվականի թիվ 253-10-09 գրության համաձայն՝ Արմեն Մինասյանը մանկուց տատապում է սակավամտությամբ, 17.10.1979 թվականին /12 տարեկան/ հաշվառման է վերցվել ՀԲԿ-ի Ավանի հոգեբուժական կլինիկայի դիսպանսերային բաժնում «Մակավամություն, դեբիլություն» ախտորոշմամբ, 21.07.2008 թվականին ենթարկվել է ամբուլատոր դատահոգեբուժական փորձաքննության և վերոնշյալ ախտորոշմամբ ձանաչվել է անգործունակ: Հետևաբար, փորձաքննությունից 2-3 ամիս անց Արմեն Մինասյանը չէր կարող նոտարական գրասենյակում գործարք կնքել, քանի որ նա չէր կարող հասկանալ իր գործողությունների նշանակությունը և ղեկավարել դրանք (հատոր 1-ին, գ.թ. 30):

4. Վճարելի դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը

Քննելով վճարելի բողոքը նշված հիմքի սահմաններում՝ Վճարելի դատարանը գրնում է, որ այն հիմնավոր է հետևյալ պարձառաբանությամբ.

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 53-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ դատարանը յուրաքանչյուր ապացույց գնահատում է գործում եղած բոլոր ապացույցների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտության վրա հիմնված ներքին համոզմամբ:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 307-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ հոգեկան խանգարման հետևանքով անգործունակ ձանաչված քաղաքացու կնքած գործարքն առոչինչ է:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 311-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ գործունակ, սակայն գործարքի կնքման պահին այնպիսի վիճակում գտնվող քաղաքացու կնքած գործարքը, երբ նա ընդունակ չի եղել հասկանալու իր գործողությունների նշանակությունը կամ ղեկավարելու դրանք, դատարանով կարող է անվավեր ձանաչվել այդ քաղաքացու կամ այն անձանց հայցով, որոնց իրավունքները և օրենքով պաշտպանվող շահերը խախտվել են այդ գործարքը կնքելու հետևանքով: Նույն հոդվածի 2-րդ կետի համաձայն՝ հետագայում անգործունակ ձանաչված քաղաքացու կնքած գործարքը դատարանով կարող է անվավեր ձանաչվել նրա խնամակալի հայցով, եթե ապացուցված է, որ գործարքը կնքելու պահին քաղաքացին ընդունակ չի եղել հասկանալու իր գործողությունների նշանակությունը կամ ղեկավարելու դրանք:

Վերոնշյալ հոդվածից հետևում է, որ գործարքը կարող է անվավեր ձանաչվել այն դեպքում, երբ ապացուցվում է **գործարքը կնքած քաղաքացու՝ գործարքի կնքման պահին իր գործողությունների նշանակությունը հասկանալու կամ դրանք ղեկավարելու անընդունակ լինելը** (տե՛ս Հմայակ Բաղայանն ընդդեմ Միսակ Բաղայանի, «Կենտրոն» նույնպիսի փարածքի նույնիսկ նվիրատվության պայմանագիրը և դրա հիման վրա փրված անշարժ գույքի սեփականության իրավունքի գրանցման վկայականն անվավեր ձանաչելու պահանջի մասին ՀՀ վճարելի

դատարանի 01.06.2007 թվականի որոշում, քաղաքացիական գործ թիվ 3-743(ՎԳ)):

Վճռաբեկ դատարանն իր որոշումներում անդրադարձել է դատական ակտերի հիմնավորվածության հարցին (տե՛ս Անժելա Ղազարյանը, Արիփկ և Արմինե Գասպարյաններն ընդդեմ Շուշանիկ Սարգսյանի, Ոսկեհայր, Նունե, Հրանուշ Գասպարյանների ժառանգական գույքը ժառանգների միջև բաժանելու պահանջի մասին ՀՀ վճռաբեկ դատարանի 25.12.2007 թվականի որոշում, քաղաքացիական գործ թիվ 3-1843(ՎԳ)): Ուստի սույն որոշմամբ կրկին չի անդրադառնում տվյալ հարցին:

Սույն գործում առկա ՀՀ առողջապահության նախարարությանը կից ամբուլատոր դատահոգեբուժական փորձագիտական հանձնաժողովի 21.07.2008 թվականի թիվ 206/08 բժշկական եզրակացության համաձայն՝ «Արմեն Մինասյանը տատապում է սակավամտություն, դեբիլություն հոգեկան հիվանդությամբ: Սակավամտությունը արտահայտված է փորձաքննվողի մոտ այն աստիճան, որ գրկում է նրան իր գործողությունների նշանակությունը հասկանալու և դրանք ղեկավարելու հնարավորությունից: Ուստի Արմեն Մինասյանին հարկ է ձանաչել անգործունակ»: Արաբկիր և Քանաքեռ-Զեյթուն համայնքների ընդհանուր իրավասության դատարանի 19.09.2008 թվականի վճռով (օրինական ուժի մեջ է մտել 21.10.2008 թվականին) Արմեն Մինասյանը ձանաչվել է անգործունակ: ՀՀ առողջապահության նախարարությանը կից ամբուլատոր դատահոգեբուժական փորձագիտական հանձնաժողովի 13.10.2009 թվականի թիվ 253-10-09 գրության համաձայն՝ Արմեն Մինասյանը չէր կարող փորձաքննությունից 2-3 ամիս անց նոտարական գրասենյակում գործարք կնքել, քանի որ նա չէր կարող հասկանալ իր գործողությունների նշանակությունը և ղեկավարել դրանք:

Սույն գործով Վերաքննիչ դատարանը, դատական ակտը թողնելով օրինական ուժի մեջ, պատճառաբանել է, որ Արմեն Մինասյանը 01.10.2008 թվականին լիազորագիր տալու պահին անգործունակ ձանաչված չէր: Բացի այդ, Վերաքննիչ դատարանը նշել է, որ գործում առկա ապացույցներով չի հիմնավորվել այն փաստը, որ լիազորագիր տալու պահին Արմեն Մինասյանը չի հասկացել իր գործողությունների նշանակությունը և չի կարողացել դրանք ղեկավարել:

Վճռաբեկ դատարանը հարկ է համարում անդրադառնալ և քննարկման առարկա դարձնել ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 307-րդ և 311-րդ հոդվածներով նախատեսված գործարքի անվավերության հիմքերին և դրանց առանձնահատկություններին: Մասնավորապես, ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 307-րդ հոդվածով նախատեսվում է հոգեկան խանգարման հետևանքով արդեն իսկ **անգործունակ ձանաչված** քաղաքացու կնքած գործարքի **առոչինչ լինելը**, իսկ նույն օրենսգրքի 311-րդ հոդվածով՝ **գործունակ**, սակայն գործարքի կնքման պահին այնպիսի վիճակում գտնվող քաղաքացու կնքած գործարքի **անվավերությունը**, երբ նա ընդունակ չի եղել հասկանալու իր գործողությունների նշանակությունը կամ ղեկավարելու դրանք: Ընդ որում, ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 311-րդ հոդվածում նշված գործարքներն օրենսդիրը դասել է վիճահարույց գործարքների շարքին: Այսինքն՝ վերոնշյալ հոդվածներով նախատեսված կարգավորումները տարբերվում են ոչ միայն գործարք կնքելու պահին անձանց կարգավիճակով, այլ նաև կնքված գործարքի իրավական հետևանքներով, այն է՝ օրենքի ուժով առոչինչ համարվելու (անկախ դատարանի կողմից նման ձանաչումից) կամ վիճահարույց լինելու (դատարանի կողմից այդպիսին ձանաչվելու ուժով) հանգամանքով:

Սույն գործով ներկայացվել է լիազորագիրն անվավեր ձանաչելու

հայցապահանջ՝ հայցի հիմքում դնելով ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 311-րդ հոդվածը, որի համաձայն՝ գործարքն անվավեր ճանաչելու համար հիմք է նաև քաղաքացու (դեռևս անգործունակ չճանաչված)՝ գործարքի կնքման պահին իր գործողությունների նշանակությունը հասկանալու կամ դրանք ղեկավարելու անընդունակ լինելը: Հետևաբար, անհիմն է Վերաքննիչ դատարանի եզրահանգումն այն մասին, որ լիազորագիրը չի կարող անվավեր ճանաչվել այն պատճառաբանությամբ, որ Արմեն Մինասյանը լիազորագիր տալու պահին անգործունակ ճանաչված չէր, քանի որ Վերաքննիչ դատարանի կողմից վկայակոչված հիմքը ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 307-րդ հոդվածով նախատեսվում է որպես գործարքի առոչնչության, այլ ոչ թե անվավերության հիմք:

Բացի այդ, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Վերաքննիչ դատարանը, հաստատված համարելով, որ Դատարանը կատարել է գործում առկա բոլոր ապացույցների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտություն և գնահատում, անտեսել է Դատարանի կողմից ՀՀ առողջապահության նախարարությանը կից ամբուլատոր դատահոգեբուժական փորձագիտական հանձնաժողովի 13.10.2009 թվականի թիվ 253-10-09 գրությունը, ՀՀ առողջապահության նախարարությանը կից ամբուլատոր դատահոգեբուժական փորձագիտական հանձնաժողովի 21.07.2008 թվականի թիվ 206/08 բժշկական եզրակացությունը, ինչպես նաև Արաբկիր և Քանաքեռ-Զեյթուն համայնքների ընդհանուր իրավասության դատարանի 19.09.2008 թվականի վճիռը համակցության մեջ վերոնշյալ պահանջների պահպանմամբ չգնահատելու հանգամանքը:

Այսպիսով, վճռաբեկ բողոքի հիմքի առկայությունը Վճռաբեկ դատարանը դիտում է բավարար՝ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 227-րդ և 228-րդ հոդվածների ուժով Վերաքննիչ դատարանի որոշումը բեկանելու համար:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 240-241²-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

ՈՐՈՇԵՑ

1. Վճռաբեկ բողոքը բավարարել մասնակիորեն: Բեկանել ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 08.12.2010 թվականի որոշումը և գործն ուղարկել Երևանի Արաբկիր և Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին աստիճանի դատարան՝ նոր քննության:

2. Պետական տուրքի բաշխման հարցին անդրադառնալ գործի նոր քննության ընթացքում:

3. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

*ՆԱԽԱԳԱՀՈՂ՝ արտրագրություն
ԴԱՏԱՎՈՐՆԵՐ՝ արտրագրություններ*

ՀԱՅՑԱՅԻՆ ՎԱՂԵՄՈՒԹՅՈՒՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական Քաղաքացիական գործ թիվ Գ-Դ1/0205/02/09
 դատարանի որոշում 2011թ.
 Քաղաքացիական գործ թիվ Գ-Դ1/0205/02/09
 Նախագահող դատավոր՝ Դ. Խաչատրյան
 Դատավորներ՝ Ն. Տավարացյան
 Ս. Միքայելյան

ՈՐՈՇՈՒՄ

ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քաղաքացիական
 և վարչական պալատը (այսուհետ՝ վճռաբեկ դատարան)

նախագահությամբ

մասնակցությամբ դատավորներ

Ե.ԽՈՒՆԴԿԱՐՅԱՆԻ

Գ. ՀԱԿՈԲՅԱՆԻ

Վ.ԱԲԵԼՅԱՆԻ

Ս.ԱՆՏՈՆՅԱՆԻ

Վ. ԱՎԱԼԵՍՅԱՆԻ

Ա.ԲԱՐՍԵՂՅԱՆԻ

Մ.ԴՐՄԵՅԱՆԻ

Է.ՀԱՅՐԻՅԱՆԻ

Տ.ՊԵՏՐՈՍՅԱՆԻ

Ե.ՍՈՂՈՍՈՆՅԱՆԻ

2011 թվականի մարտի 4-ին
 դոնբաց դատական նիստում, քննելով Սուրեն Վարդանյանի վճռաբեկ բողոքը
 ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 30.09.2010 թվականի որոշման դեմ՝
 ըստ հայցի Սուրեն Վարդանյանի ընդդեմ Հայկազ Մկրտչյանի, երրորդ անձ Թաթուլ
 Մարտոյանի՝ գումար բռնագանձելու պահանջի մասին,

ՊԱՐԶԵՑ

1. Գործի դատավարական նախապատմությունը

Դիմելով դատարան՝ Սուրեն Վարդանյանը պահանջել է բռնագանձել Հայկազ
 Մկրտչյանից 11.000.000 ՀՀ դրամ:

ՀՀ Գեղարքունիքի մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի
 դատարանի 14.05.2007 թվականի վճռով հայցը բավարարվել է:

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 17.06.2009 թվականի որոշմամբ
 Հայկազ Մկրտչյանի ներկայացուցչի վերաքննիչ բողոքը բավարարվել է, Դատարանի

14.05.2007 թվականի վճիռը բեկանվել է, և գործն ուղարկվել է նույն դատարան՝ նոր քննության:

ՀՀ Գեղարքունիքի մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի (այսուհետ՝ Դատարան) 21.05.2010 թվականի վճռով հայցը մերժվել է:

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի (այսուհետ՝ Վերաքննիչ դատարան) 30.09.2010 թվականի որոշմամբ Սուրեն Վարդանյանի վերաքննիչ բողոքը մերժվել է, և Դատարանի 21.05.2010 թվականի վճիռը թողնվել է օրինական ուժի մեջ:

Սույն գործով վճռաբեկ բողոք է ներկայացրել Սուրեն Վարդանյանը:

Վճռաբեկ բողոքի պատասխան է ներկայացրել Հայկազ Մկրտչյանը:

2. Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը

Սույն վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

Վերաքննիչ դատարանը խախտել է ՀՀ Սահմանադրության 19-րդ հոդվածը, «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածը, ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 331-րդ և 332-րդ հոդվածները, 337-րդ հոդվածի 1-ին կետը, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 53-րդ հոդվածը, 220-րդ հոդվածի 2-րդ կետի 5-րդ ենթակետը:

Բողոք բերած անձը նշված պնդումը պարձառաքանում է հետևյալ փաստարկներով.

Վերաքննիչ դատարանը, միայն նշելով, որ հայտարարությունը Հայկազ Մկրտչյանը տվել է 13.02.2004 թվականին, իսկ հայցը հարուցվել է 02.04.2007 թվականին, առանց պատճառաբանության կիրառել է հայցային վաղեմություն: Ընդ որում, Վերաքննիչ դատարանը հայցային վաղեմության ժամկետի սկիզբը հաշվել է գումարը ստանալու պահից՝ այն պայմանավորելով այն հետևությամբ, որ գումարը տալու պահին Սուրեն Վարդանյանը գիտեր կամ պետք է իմանար, որ Հայկազ Մկրտչյանը, ստանալով 6.000 ԱՄՆ դոլար գումարը և չկնքելով պայմանագիր, խախտում է իր իրավունքը և անհիմն հարստանում է, քանի որ Հայկազ Մկրտչյանը նշված գումարը Սուրեն Վարդանյանից ձեռք է բերել առանց օրենքով կամ գործարքով սահմանված հիմքերի:

Սույն գործով հայցադիմումը ներկայացնելու հայցային վաղեմության ժամկետը չի խախտվել, քանի որ ընդդեմ Հայկազ Մկրտչյանի ներկայացված՝ գործարքը վավեր ճանաչելու պահանջի մասին հայցը ՀՀ քաղաքացիական վերաքննիչ դատարանի կողմից 25.04.2007 թվականին առանց քննության թողնվելուց հետո ինքը, հասկանալով, որ այդ եղանակով հարցը լուծում չի ստանա, և նման պայմաններում խախտվում են իր իրավունքները, անմիջապես դիմել է վնասը հատուցելու պահանջով: Մինչդեռ, Վերաքննիչ դատարանը, անտեսելով նշված հանգամանքները, հանգել է այն հետևության, որ 48 օր ժամկետով ուշացվել է դատական պաշտպանության հայցումը:

Վերաքննիչ դատարանն առանց պատճառաբանության հանգել է սխալ եզրահանգման, անհասկանալի ձևով ապացույցներ է գնահատել առանց դրանք համադրելու, չի նշել, թե կոնկրետ որ ապացույցով ինչ է հերքվում, չի պարզել գործի բոլոր հանգամանքները, այսինքն՝ գործը չի քննել օբյեկտիվ և բազմակողմանի, որի արդյունքում կայացրել է չհիմնավորված և սխալ որոշում:

Վերաքննիչ դատարանն իր որոշման մեջ չի նշել այն ապացույցները, որոնց հիման վրա հաստատված է համարել հայցային վաղեմության ժամկետի բացթողումը:

Տվյալ դեպքում Հայկազ Մկրտչյանը չի նախատեսել պարտավորության կատարման որոշակի ժամկետ, և նման պայմաններում խախտման փաստը չէր կարող պարզվել ժամկետի ավարտմամբ:

Վերագրյալի հիման վրա բողոք բերած անձը պահանջել է բեկանել Վերաքննիչ դատարանի 30.09.2010 թվականի որոշումը և գործն ուղարկել նոր քննության:

2.1. Վճռաբեկ բողոքի պատասխանի հիմնավորումները

Սուրեն Վարդանյանը գումարի բռնագանձման վերաբերյալ պահանջը Դատարան է ներկայացրել 02.04.2007 թվականին, մինչդեռ 6.000 ԱՄՆ դոլար գումարի վերաբերյալ հայտարարությունը կազմվել և նոտարի կողմից վավերացվել է 13.02.2004 թվականին: Այլ կերպ ասած՝ 3 տարի 48 օր առաջ: Այդ ընթացքում Սուրեն Վարդանյանն օրենքով սահմանված կարգով գումարի բռնագանձման պահանջի մասին հայց դատարան չի ներկայացրել, այսինքն՝ հայցային վաղեմության երեք տարվա ժամկետը չի ընդհատվել:

Այն մասին, որ Հայկազ Մկրտչյանը Սուրեն Վարդանյանին վաճառել է միայն իր բաժնեմասը, վերջինս տեղեկացել է հենց 13.02.2004 թվականին, քանի որ դա նշված է նույն օրը տրված հայտարարության մեջ: Անշարժ գույքը ոչ միայն Հայկազ Մկրտչյանին, այլ նաև Թաթուլ Մարտոյանին սեփականության իրավունքով պատկանելու մասին Սուրեն Վարդանյանը տեղեկացել է նաև 2004 թվականին տեղի ունեցած դատավարությունից՝ հանդես գալով որպես Հայկազ Մկրտչյանի ներկայացուցիչ:

Փաստորեն, Սուրեն Վարդանյանը 13.02.2004 թվականին նոտարի կողմից հիշյալ հայտարարությունը հաստատելու պահից Հայկազ Մկրտչյանի նկատմամբ կարող էր ներկայացնել միայն գումար բռնագանձելու պահանջ, որն ըստ էության ներկայացվել է այն ներկայացնելու համար օրենքով սահմանված հայցային վաղեմության ժամկետից դուրս, և որը բոլոր դեպքերում չէր կարող նույնացվել գոյություն չունեցող առուվաճառքի գործարքից բխող պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հետևանքների հետ, այսինքն՝ չէր կարող առաջացնել Սուրեն Վարդանյանի սեփականության իրավունքը Հայկազ Մկրտչյանի և Թաթուլ Մարտոյանի համատեղ սեփականությունը հանդիսացող Կենցաղի տան նկատմամբ:

3. Վճռաբեկ բողոքի քննության համար նշանակություն ունեցող փաստերը

Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

10) 13.02.2004 թվականին Հայկազ Մկրտչյանը գրավոր հայտարարություն է տվել այն մասին, որ Սուրեն Վարդանյանից կանխիկ ստացել է 6.000 ԱՄՆ դոլար գումար որպես ՀՀ Վարդենիս քաղաքի Երևանյան փողոցի 1-ին հասցեում գտնվող անշարժ գույքից՝ Կենցաղի տնից իրեն հասանելիք առուվաճառքի գումար՝ ամբողջությամբ, և Սուրեն Վարդանյանի նկատմամբ չունի ֆինանսական և այլ, ինչպես նաև տարածքի ու շինության հետ կապված պահանջ: Նշված հայտարարությունը նույն օրը ենթարկվել է նոտարական վավերացման: Հայտարարությունը տալուց հետո Հայկազ Մկրտչյանի և Սուրեն Վարդանյանի միջև այդ գույքի վերաբերյալ առուվաճառքի պայմանագիր չի կնքվել:

11) Սուրեն Վարդանյանը սույն գործով Հայկազ Մկրտչյանից 11.000.000 ՀՀ դրամ

գումար բռնագանձելու վերաբերյալ հայցը Դատարան է ներկայացրել 02.04.2007 թվականին.

12) Հայկազ Մկրտչյանի ներկայացուցիչը, մինչև Դատարանի կողմից վճիռ կայացնելը, դիմում է ներկայացրել դատարան հայցային վաղեմություն կիրառելու մասին:

4.Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումները

Քննելով վճռաբեկ բողոքը վերը նշված հիմքի սահմաններում Վճռաբեկ դատարանը գտնում է, որ *այն հիմնավոր է հետևյալ պարձառաբանությամբ.*

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 331-րդ հոդվածի համաձայն՝ հայցային վաղեմություն է համարվում իրավունքը խախտված անձի հայցով իրավունքի պաշտպանության ժամանակահատվածը:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 332-րդ հոդվածի համաձայն՝ հայցային վաղեմության ընդհանուր ժամկետը երեք տարի է:

Նույն օրենսգրքի 337-րդ հոդվածի 1-ին և 3-րդ կետերի համաձայն՝ հայցային վաղեմության ժամկետի ընթացքն սկսվում է այն օրվանից, երբ անձն իմացել է կամ պետք է իմացած լիներ իր իրավունքի խախտման մասին: Այն պարտավորությունների համար, որոնց կատարման ժամկետը որոշված չէ կամ որոշված է ցպահանջ, հայցային վաղեմության ընթացքն սկսվում է այն պահից, երբ պարտատիրոջ մոտ առաջանում է պարտավորության կատարում պահանջելու իրավունք, իսկ եթե պարտապանին արտոնյալ ժամկետ է տրամադրվել պահանջը կատարելու համար, հայցային վաղեմության հաշվարկն սկսվում է այդ ժամկետի ավարտից հետո:

Վերը նշված հոդվածների վերլուծությունից հետևում է, որ օրենսդիրը, ամրագրելով հայցային վաղեմության ընդհանուր երեք տարվա ժամկետը, միաժամանակ սահմանել է նաև այդ ժամկետի հաշվարկման կարգը, այն է՝ հայցային վաղեմության ժամկետի ընթացքն սկսվում է այն օրվանից, երբ անձն իմացել է կամ պետք է իմացած լիներ իր իրավունքի խախտման մասին (*լրես Ռազմիկ Դարբինյանի հայցի ընդդեմ Գանիել Ղասարողյանի՝ 95.000 ԱՄՆ դոլարի բռնագանձման պահանջի մասին թիվ ԵԷԳ/0723/02/09 գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 02.04.2010 թվականի որոշումը*): Իսկ այն պարտավորությունների համար, որոնց կատարման ժամկետը որոշված չէ կամ որոշված է ցպահանջ՝ հայցային վաղեմության ժամկետի ընթացքն սկսվում է այն պահից, երբ պարտատիրոջ մոտ ծագում է պարտավորության կատարում պահանջելու իրավունքը (*լրես «ԱրմենՏել» ՓԲԸ-ն ընդդեմ Գայանե Նազարեթյանի՝ գումար բռնագանձելու պահանջի մասին թիվ ԵԱԲԳ/0164/02/09 գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 04.12.2009 թվականի որոշումը*):

Միաժամանակ, Վճռաբեկ դատարանը հարկ է համարում նշել, որ օրենսդիրը սահմանել է նաև հայցային վաղեմության ժամկետի հաշվարկման կարգը այն պարտավորությունների համար, որոնց կատարման ժամկետը որոշված չէ կամ որոշված է ցպահանջ: Նշված պարտավորությունների համար հայցային վաղեմության ժամկետի ընթացքն սկսվում է այն պահից, երբ պարտատիրոջ մոտ առաջանում է պարտավորության կատարում պահանջելու իրավունք, իսկ եթե պարտապանին արտոնյալ ժամկետ է տրամադրվել պահանջը կատարելու համար, ապա այդ ժամկետի ավարտից հետո (*լրես «Բեյց» ՍՊԸ-ն ընդդեմ «Նաիրիդ գործարան» ՓԲԸ-ի, երրորդ անձանց «Նաիրիդ Տրապ» ՍՊԸ-ի, «Յուվե Ինվեստ» ՍՊԸ-ի գումարի բռնագանձման և 31.03.2005 թվականի սկզբը չկնքված ձանաչելու պահանջների մասին թիվ*

ԵԲԳ/0075/02/08 գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 13.02.2009 թվականի որոշումը):

Սույն գործի փաստերի համաձայն՝ 13.02.2004 թվականին Հայկազ Մկրտչյանը գրավոր հայտարարություն է տվել այն մասին, որ Սուրեն Վարդանյանից կանխիկ ստացել է 6.000 ԱՄՆ դոլար գումար որպես ՀՀ Վարդենիս քաղաքի Երևանյան փողոցի 1-ին հասցեում գտնվող անշարժ գույքից՝ Կենցաղի տնից իրեն հասանելիք առուվաճառքի գումար: Նշված հայտարարությունը տալուց հետո Հայկազ Մկրտչյանի և Սուրեն Վարդանյանի միջև այդ գույքի վերաբերյալ առուվաճառքի պայմանագիր չի կնքվել:

Հիմք ընդունելով վերոնշյալը՝ Վճռաբեկ դատարանը Հայկազ Մկրտչյանի տված հայտարարությունը գնահատում է որպես վերջինիս կողմից Սուրեն Վարդանյանի օգտին որոշակի գործողություն կատարելու, այն է՝ գույք հանձնելու վերաբերյալ ստանձնած պարտավորություն: Ընդ որում, այդ պարտավորությունը չի նախատեսում դրա կատարման ժամկետ և չի պարունակում ժամկետի որոշման պայմաններ:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 345-րդ հոդվածի համաձայն՝ պարտավորության ուժով մի անձը (պարտապանը) պարտավոր է մեկ այլ անձի (պարտատիրոջ) օգտին կատարել որոշակի գործողություն, այն է՝ վճարել դրամ, հանձնել գույք, կատարել աշխատանք, մատուցել ծառայություն և այլն, կամ ձեռնպահ մնալ որոշակի գործողություն կատարելուց, իսկ պարտատերն իրավունք ունի պարտապանից պահանջել կատարելու իր պարտականությունը, ընդ որում՝ պարտավորությունները ծագում են պայմանագրից, վնաս պատճառելու հետևանքով և նույն օրենսգրքում նշված այլ հիմքերից:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 347-րդ հոդվածի համաձայն՝ պարտավորությունները պետք է կատարվեն պատշաճ՝ պարտավորության պայմաններին, օրենքին և այլ իրավական ակտերի պահանջներին համապատասխան, իսկ նման պայմանների ու պահանջների բացակայության դեպքում՝ գործարար շրջանառության սովորույթներին կամ սովորաբար ներկայացվող այլ պահանջներին համապատասխան:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 352-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ եթե պարտավորությունը նախատեսում է կամ հնարավորություն է ընձեռում որոշել դրա օրը կամ ժամանակահատվածը, ապա պարտավորությունը պետք է կատարվի այդ օրը կամ այդ ժամանակահատվածի ցանկացած պահին: Նույն հոդվածի 2-րդ կետի համաձայն՝ այն դեպքերում, երբ պարտավորությունը կատարման ժամկետ չի նախատեսում և ժամկետի որոշման պայմաններ չի պարունակում, այն պետք է կատարվի պարտավորության ծագումից հետո՝ ողջամիտ ժամկետում:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 408-րդ հոդվածի համաձայն՝ պարտավորության խախտում է համարվում այն չկատարելը կամ անպատշաճ (կետանցով, ապրանքների, աշխատանքների և ծառայությունների թերություններով կամ պարտավորության բովանդակությամբ որոշվող այլ պայմանների խախտմամբ) կատարելը:

Սույն գործի փաստերի համաձայն՝ 13.02.2004 թվականի Հայկազ Մկրտչյանի գրավոր հայտարարության հիման վրա Սուրեն Վարդանյանը սույն գործով Հայկազ Մկրտչյանից 11.000.000 ՀՀ դրամ գումար բռնագանձելու վերաբերյալ հայցը Դատարան է ներկայացրել 02.04.2007 թվականին:

Վերաքննիչ դատարանը բողոքը մերժելու հիմքում դրել է այն հանգամանքը, որ որպես հայցային վաղեմության ժամկետի սկիզբ պետք է դիտարկվել հենց

գումարը ստանալու պահը, որովհետև հայցվորը գիտեր կամ պետք է գիտենար, որ պատասխանողը, ստանալով 6.000 ԱՄՆ դոլար գումար և չկնքելով պայմանագիր, խախտում է իր իրավունքը, ըստ էության անհիմն հարստանում է:

Մինչդեռ, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Վերաքննիչ դատարանի պատճառաբանությունն անհիմն է, քանի որ, ինչպես արդեն իսկ նշվեց, Հայկազ Մկրտչյանի ստանձնած պարտավորությունը չի նախատեսել դրա կատարման ժամկետ և չի պարունակել ժամկետի որոշման պայմաններ, որոնց բացակայության պայմաններում Հայկազ Մկրտչյանն իրավունք ուներ այդ պարտավորությունը կատարել ինչպես հայտարարությունը տալու օրը, այնպես էլ դրանից հետո՝ ողջամիտ ժամկետում:

Հիմք ընդունելով վերոնշյալը և սույն գործի փաստերը համադրելով՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ սույն գործով հայցային վաղեմության ժամկետի հաշվարկը չի կարող սկսվել 13.02.2004 թվականին Հայկազ Մկրտչյանի կողմից գրավոր հայտարարությունը տալու օրվանից, քանի որ Սուրեն Վարդանյանի մոտ իր իրավունքների պաշտպանության համար դատարան դիմելու հայցային վաղեմության ժամկետի հաշվարկը պետք է սկսվեր Հայկազ Մկրտչյանի մոտ պարտավորության կատարման՝ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 352-րդ հոդվածով նախատեսված ժամկետների ավարտից հետո, երբ հայցվորի մոտ կծագեր պարտավորության կատարում պահանջելու իրավունք:

Այսպիսով, վճռաբեկ բողոքի հիմքի առկայությունը Վճռաբեկ դատարանը դիտում է բավարար՝ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 227-րդ և 228-րդ հոդվածների ուժով Վերաքննիչ դատարանի որոշումը բեկանելու համար:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 240-241²-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

ՈՐՈՇԵՑ

1. Վճռաբեկ բողոքը բավարարել: Բեկանել ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 30.09.2010 թվականի որոշումը և գործն ուղարկել ՀՀ Գեղարքունիքի մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարան՝ նոր քննության:

2. Պետական տուրքի բաշխման հարցին անդրադառնալ գործի նոր քննության ընթացքում:

3. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

*ՆԱԽԱԳԱՀՈՂ՝ արտրագրություն
ԴԱՏԱՎՈՐՆԵՐ՝ արտրագրություններ*

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական Քաղաքացիական գործ թիվ **ԸԴ/0376/02/10**
դատարանի որոշում **2011թ.**
Քաղաքացիական գործ թիվ **ԸԴ/0376/02/10**
Նախագահող դատավոր՝ Ա. Մկրտչյան
Դատավորներ՝ Ն. Հովսեփյան
Ն. Բարսեղյան

ՈՐՈՇՈՒՄ
ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քաղաքացիական և վարչական պալատը (այսուհետ՝ վճռաբեկ դատարան)

նախագահությամբ Ե. ԽՈՒՆԴԿԱՐՅԱՆԻ
մասնակցությամբ դատավորներ Մ. ԴՐՄԵՅԱՆԻ
Վ. ԱԲԵԼՅԱՆԻ
Վ. ԱՎԱՆԵՍՅԱՆԻ
Ա. ԲԱՐՍԵՂՅԱՆԻ
Գ. ՀԱԿՈԲՅԱՆԻ
Տ. ՊԵՏՐՈՍՅԱՆԻ
Ե. ՍՈՂՈՍՈՆՅԱՆԻ

2011 թվականի հուլիսի 01-ին

դոնբաց դատական նիստում, քննելով Ռադիկ Ենգիբարյանի սնանկության գործով կառավարչի (այսուհետ՝ Կառավարիչ) վճռաբեկ բողոքը ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 08.10.2010 թվականի որոշման դեմ՝ ըստ հայցի Կառավարչի ընդդեմ «Վանական Ապակի» ՍՊԸ-ի (այսուհետ՝ Ընկերություն), Հայկ Հակոբյանի, Նունիկ Ագաոյանի, Տաթևիկ Հակոբյանի, Հրաչյա Հակոբյանի, Խաչատուր Հակոբյանի և երրորդ անձ «Հայաստանի Կենտրոնական դեպոզիտարիա» ԲԲԸ-ի, «ԱՐՄԵՆԲԲՈԿ» ԲԲԸ-ի՝ գործարքները և դրանց հիման վրա կատարված գրանցումներն անվավեր ճանաչելու պահանջների մասին,

ՊԱՐԶԵՑ

1. Գործի դատավարական նախապատմությունը

Դիմելով դատարան՝ Կառավարիչը պահանջել է անվավեր ճանաչել Ընկերության և Հայկ Հակոբյանի միջև կնքված 05.11.2007 թվականի լրացուցիչ համաձայնագիրը և 14.12.2008 թվականի արժեթղթերի փոխանցման հանձնարարագիրը և որպես այդ գործարքների անվավերության հետևանք անվավեր ճանաչել «Գյումրու ապակու գործարան» ՓԲԸ-ի 931.176 հատ հասարակ անվանական

բաժնետոմսերի նկատմամբ Հայկ Հակոբյանի սեփականության իրավունքի գրանցումը, բաժնետոմսերի նվիրատվության 29.09.2008 թվականի պայմանագրերը, նվիրատվության պայմանագրերի հիման վրա արժեթղթերի փոխանցման հանձնարարագրերը, բաժնետոմսերի նկատմամբ Նունիկ Ազատյանի, Տաթևիկ Հակոբյանի, Հրայր Հակոբյանի և Խաչատուր Հակոբյանի սեփականության իրավունքների գրանցումները և ձևաչել «Գյումրու ապակու գործարան» ՓԲԸ-ի 931.176 հատ հասարակ անվանական բաժնետոմսերի նկատմամբ Ընկերության սեփականության իրավունքը:

ՀՀ Ծիրակի մարզի ընդհանուր իրավասության դատարանի (այսուհետ՝ Դատարան) 08.07.2010 թվականի վճռով հայցը բավարարվել է:

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի (այսուհետ՝ Վերաքննիչ դատարան) 08.10.2010 թվականի որոշմամբ Դատարանի 08.07.2010 թվականի վճիռը բեկանվել է, և գործն ուղարկվել է նույն դատարան՝ նոր քննության:

Սույն գործով վճռաբեկ բողոք է ներկայացրել Կառավարիչը:

Վճռաբեկ բողոքի պատասխան են ներկայացրել Ընկերության տնօրեն Հայկ Հակոբյանը և Նունիկ Ազատյանը, Տաթևիկ, Հրայր, Խաչատուր Հակոբյանները:

2. Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը

Սույն վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

Վերաքննիչ դատարանը խախտել է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 123-րդ հոդվածի 1-ին կետը, 124-րդ հոդվածի 1-ին կետը, 220-րդ հոդվածի 2-րդ կետի 5-րդ ենթակետը, ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 335-րդ հոդվածի 2-րդ կետի պահանջները:

Բողոք բերած անձը նշված պնդումը պարձառաքանում է հետևյալ փաստարկներով.

Վերաքննիչ դատարանը պատճառաբանել է, որ հայցային վաղեմություն կիրառելու վերաբերյալ դիմումը Դատարանին ներկայացվել է մինչև վճռի հրապարակումը, հետևաբար պահանջված են ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 335-րդ հոդվածի 2-րդ կետի պահանջները և Դատարանը, վճռով չանդրադատնալով հայցային վաղեմության կիրառման հարցին, թույլ է տվել դատավարական և նյութական իրավունքի նորմերի խախտում:

Վերաքննիչ դատարանը նույնացրել է «վճիռ կայացնել» և «վճիռ հրապարակել» արտահայտությունները և հաշվի չի առել այն հանգամանքը, որ հայցային վաղեմություն կիրառելու դիմումը Դատարան է ներկայացվել դատաքննության ավարտից հետո, հետևաբար դատաքննությունից հետո ներկայացված որևէ ապացույց կամ դիմում չի կարող դառնալ դատարանի քննության առարկա, դրանք չեն կարող հիշատակվել դատարանի վճռում և լուծում ստանալ:

Վերոգրյալի հիման վրա բողոք բերած անձը պահանջել է բեկանել Վերաքննիչ դատարանի 08.10.2010 թվականի որոշումը:

2.1 Վճռաբեկ բողոքի պատասխանի հիմնավորումները

Հայցային վաղեմություն կիրառելու վերաբերյալ միջնորդություն է արվել ինչպես հայցադիմումի պատասխանում, այնպես էլ 24.06.2010 թվականի դատական նիստի

Ժամանակ, իսկ 06.07.2010 թվականին ներկայացվել է համապատասխան դիմում:

Հայցային վաղեմություն կիրառելու վերաբերյալ դիմումը Դատարանին ներկայացվել է մինչև վճռի հրապարակումը և հետևաբար պահպանված են ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 335-րդ հոդվածի 2-րդ կետի պահանջները:

3. Վճռարեկ բողոքի քննության համար նշանակություն ունեցող փաստերը

1. Ընկերության տնօրեն Հայկ Հակոբյանը 19.05.2010 թվականի հայցադիմումի պատասխանում վկայակոչել է ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 317-րդ հոդվածի 2-րդ կետը, սակայն գործում առկա 24.06.2010 թվականի դատական նիստի արձանագրության համաձայն՝ դատաքննության ընթացքում պատասխանել է, որ հայցադիմումի պատասխանում հղում է կատարել ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 317-րդ հոդվածի 2-րդ կետին, սակայն հայցային վաղեմություն կիրառելու իմաստով դա չի արվել, և միջնորդություն չի ներկայացնում (հատոր 2-րդ, գ.թ. 84-րդ, հատոր 3-րդ, գ.թ. 103):

2. Սույն գործի դատաքննությունն ավարտվել է 24.06.2010 թվականին, և դատական ակտի հրապարակման օրը նշանակվել է 08.07.2010 թվականին (հատոր 3-րդ, գ.թ.101):

3. 06.07.2010 թվականին Ընկերության տնօրեն Հայկ Հակոբյանը դիմում է ներկայացրել Դատարան՝ միջնորդելով կիրառել հայցային վաղեմություն (հատոր 3-րդ, գ.թ. 114, 115, 116):

4. Վճռարեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը

Քննելով վճռարեկ բողոքը նշված հիմքի սահմաններում Վճռարեկ դատարանը գրնում է, որ այն հիմնավոր է հեղինակ պարզառարանությամբ.

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 331-րդ հոդվածի համաձայն՝ հայցային վաղեմություն է համարվում իրավունքը խախտված անձի հայցով իրավունքի պաշտպանության ժամանակահատվածը:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 335-րդ հոդվածի 2-րդ կետի համաձայն՝ դատարանը հայցային վաղեմություն կիրառում է միայն վիճող կողմի դիմումով, որը պետք է տրվի մինչև **դատարանի կողմից վճիռ կայացնելը**: Հայցային վաղեմության ժամկետի լրանալը, որի կիրառման մասին դիմել է վիճող կողմը, հիմք է դատարանի կողմից հայցը մերժելու մասին վճիռ կայացնելու համար:

Վերոնշյալ հոդվածների վերլուծությունից հետևում է, որ օրենսդիրը, ամրագրելով հայցային վաղեմության ընդհանուր երեք տարվա ժամկետը, միաժամանակ սահմանել է կարգ, որի առկայության դեպքում դատարանը պետք է քննարկան առարկա դարձնի հայցային վաղեմության հարցը: Այն է՝ պետք է առկա լինի հայցային վաղեմություն կիրառելու մասին գործին մասնակցող անձի կողմից դիմում և այդ դիմումը պետք է ներկայացվի **մինչև Դատարանի կողմից վճիռ կայացնելը**: Այսինքն՝ օրենսդրի կողմից հատակ սահմանվել է ժամկետ, այն է՝ հայցային վաղեմություն կիրառելու մասին դիմումը ներկայացնել մինչև վճռի կայացումը:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 124-րդ հոդվածի համաձայն՝ բողոք ապացույցները հետազոտելուց հետո նախագահողը գործին մասնակցող անձանց հարցնում է, թե նրանք արդյոք չեն ցանկանում ներկայացնել լրացուցիչ նյութեր՝ դրանք հետազոտելու միջնորդությամբ: Նման միջնորդությունների բացակայության դեպքում նախագահողը գործի քննությունը հայտարարում է ավարտ-

ված, և դատարանը հայտարարում է վճռի հրապարակման վայրն ու ժամանակը:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 131-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ դատարանը վճիռ կայացնելիս գնահատում է ապացույցները, որոշում է, թե գործի համար նշանակություն ունեցող որ հանգամանքներն են պարզվել, և որոնք չեն պարզվել, որոշում է տվյալ գործով կիրառման ենթակա օրենքները և այլ իրավական ակտերը, որոշում է հայցը լրիվ կամ մասնակի բավարարելու կամ այն մերժելու հարցը:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 8-րդ հոդվածի 5-րդ կետի 2-րդ պարբերության համաձայն՝ **դատարանի վճիռը բոլոր դեպքերում հրապարակվում է դռնբաց նիստում**, բացառությամբ որդեգրման գործերով գործն ըստ էության լուծող դատական ակտի եզրափակիչ մասի հրապարակման դեպքերի:

Վերը նշված նորմերի վերլուծության արդյունքում Վճռաբեկ դատարանը հարկ է համարում արձանագրել, որ «վճռի կայացումը» և «վճռի հրապարակումը» միմյանցից էականորեն տարբերվող հասկացություններ են:

Մասնավորապես, վճիռ կայացնելը դատական քննության եզրափակիչ փուլն է, որը, ի տարբերություն դատավարության նախորդ փուլերի, ընթանում է դատական քննությունից անմիջապես հետո՝ պահպանելով գործի քննության անընդհատության սկզբունքը, որից հետո միայն դատարանը հրապարակում է այն դռնբաց դատական նիստում: Այս փուլում դատարանը, իրականացնելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 131-րդ հոդվածի 1-ին կետով սահմանված լիազորությունները, կայացնում է վճիռ: Դա է պատճառը, որ օրենսդիրը ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 124-րդ հոդվածի ուժով կողմերին իրավունք է վերապահել ներկայացնել միջնորդություններ մինչև դատարանի կողմից դատաքննության ավարտը:

«Վճռի հրապարակումը» դատավարական մի փուլ է, որն հաջորդում է «վճռի կայացմանը»: Այսինքն, «վճռի հրապարակման փուլում» դատարանը հրապարակում է արդեն իսկ գոյություն ունեցող, այն է՝ կայացված վճիռը:

Սույն գործով Վերաքննիչ դատարանը դատական ակտի բեկանման հիմքում դրել է այն հանգամանքը, որ հայցային վաղեմություն կիրառելու մասին դիմումը Դատարանին ներկայացվել է մինչև վճռի հրապարակումը, ուստի Դատարանը պարտավոր էր անդրադառնալ այդ դիմումին և պատճառաբանել հայցային վաղեմությունը կիրառելու կամ մերժելու հարցերը: Մինչդեռ, սույն գործի փաստերի համաձայն՝ դատաքննությունն ավարտվել է 24.06.2010 թվականին, իսկ դատական ակտի հրապարակման օր է նշանակվել 08.07.2010 թվականը: Դատաքննության ընթացքում Ընկերության տնօրենը պատասխանել է, որ չնայած այն հանգամանքին, որ հայցադիմումի պատասխանում հղում է կատարվել ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 317-րդ հոդվածի 2-րդ կետին, սակայն դա հայցային վաղեմություն կիրառելու իմաստով չի արվել, և նման միջնորդություն չի ներկայացվում: Դատաքննությունն ավարտվելուց հետո Ընկերության տնօրենը 06.07.2010 թվականին ներկայացրել է հայցային վաղեմություն կիրառելու մասին դիմում:

Հիմք ընդունելով վերոգրյալը և սույն գործի փաստերը համադրելով՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Ընկերության տնօրենը հայցային վաղեմություն կիրառելու մասին դիմումը ներկայացրել է 06.07.2010 թվականին՝ դատաքննության ավարտից հետո:

Նման պայմաններում Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Ընկերության տնօրենը հայցային վաղեմություն կիրառելու մասին դիմումը ներկայացրել է ՀՀ

քաղաքացիական օրենսգրքի 335-րդ հոդվածի 2-րդ կետի խախտմամբ, հետևաբար Դատարանի կողմից իրավացիորեն չի քննարկել հայցային վաղեմություն կիրառելու վերաբերյալ դիմումը:

Այսպիսով, վճռաբեկ բողոքի հիմքի առկայությունը Վճռաբեկ դատարանը դիտում է բավարար՝ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 227-րդ և 228-րդ հոդվածների ուժով Վերաքննիչ դատարանի որոշումը բեկանելու համար:

Միաժամանակ, հաշվի առնելով այն հանգամանքը, որ Վերաքննիչ դատարանը չի անդրադարձել նյութական և դատավարական իրավունքի նորմերի խախտման վերաբերյալ վերաքննիչ բողոքի մյուս փաստարկներին, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ սույն գործը պետք է ուղարկել Վերաքննիչ դատարան՝ նոր քննության:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 240-241²-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

ՈՐՈՇԵՑ

1. Վճռաբեկ բողոքը բավարարել: Բեկանել ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 08.10.2010 թվականի որոշումը և գործն ուղարկել նույն դատարան՝ նոր քննության:

2. Պետական տուրքի բաշխման հարցին անդրադառնալ գործի նոր քննության ընթացքում:

3. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

*ՆԱԽԱԳԱՀՈՂ՝ սպորաագրություն
ԴԱՏԱՎՈՐՆԵՐ՝ սպորաագրություններ*

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական
դատարանի որոշում

Քաղաքացիական գործ թիվ ԱՎԴԻ/0982/02/09
2011թ.

Քաղաքացիական գործ թիվ ԱՎԴԻ/0982/02/09

Նախագահող դատավոր՝ Ս. Մահակյան

Դատավորներ՝ Կ. Հակոբյան

Տ. Նազարյան

ՈՐՈՇՈՒՄ

ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քաղաքացիական
և վարչական պալատը (այսուհետ՝ վճռաբեկ դատարան)

*նախագահությամբ
մասնակցությամբ դատավորներ*

Ե. ԽՈՒՆԴԿԱՐՅԱՆԻ
Ա. ԲԱՐՄԵՂՅԱՆԻ
Վ. ԱԲԵԼՅԱՆԻ
Ս. ԱՆՏՈՆՅԱՆԻ
Վ. ԱՎԱՆԵՍՅԱՆԻ
Մ. ԴՐՄԵՅԱՆԻ
Գ. ՀԱԿՈԲՅԱՆԻ
Է. ՀԱՅՐԻՅԱՆԻ
Տ. ՊԵՏՐՈՍՅԱՆԻ
Ե. ՍՈՂՈՄՈՆՅԱՆԻ

2011 թվականի հուլիսի 29-ին

դռնբաց դատական նիստում, քննելով Աիդա Աղազարյանի վճռաբեկ բողոքը
ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 19.11.2010 թվականի որոշման դեմ՝ ըստ
հայցի «Արարատի բնակարանային կոմունալ տնտեսություն» ԲԲԸ-ի (այսուհետ՝
Ընկերություն) ընդդեմ Աիդա Աղազարյանի՝ գումար բռնագանձելու պահանջի մասին,

ՊԱՐԶԵՑ

1. Գործի դատավարական նախապատմությունը

Դիմելով դատարան՝ Ընկերությունը պահանջել է բռնագանձել Աիդա
Աղազարյանից 75.905 ՀՀ դրամ:

ՀՀ Արարատի և Վայոց ձորի մարզերի ընդհանուր իրավասության դատարանի
(այսուհետ՝ Դատարան) 28.07.2010 թվականի վճռով հայցը բավարարվել է:

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի (այսուհետ՝ վերաքննիչ
դատարան) 19.11.2010 թվականի որոշմամբ Դատարանի 28.07.2010 թվականի վճռի դեմ

Աիդա Աղազարյանի վերաքննիչ բողոքը մերժվել է, և Դատարանի վճիռը թողնվել է օրինական ուժի մեջ:

Սույն գործով վճռաբեկ բողոք է ներկայացրել Աիդա Աղազարյանը:

Վճռաբեկ բողոքի պատասխան է ներկայացրել Ընկերությունը:

2. Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը

Սույն վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքերի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

1) *Վերաքննիչ դատարանը չի կիրառել ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 332-րդ հոդվածը, 337-րդ հոդվածի 1-ին և 3-րդ կետերը, որոնք պետք է կիրառեր, սիսայ է մեկնաբանել 337-րդ, 340-րդ հոդվածները:*

Բողոք բերած անձը նշված պնդումը պարձառաքանել է հետևյալ փաստարկներով.

Վերաքննիչ դատարանն անտեսել է այն հանգամանքը, որ Ընկերության ներկայացրած հաշվարկի համաձայն Աիդա Աղազարյանը պարտավոր էր յուրաքանչյուր ամսվա համար վճարել աղբի և սպասարկման վարձ: Այսինքն՝ եթե Աիդա Աղազարյանն ընթացիկ ամսվան հաջորդող ամսի 1-ի դրությամբ չի վճարել աղբի և սպասարկման վարձը, ապա տվյալ ամսվա վարձավճարի նկատմամբ իր իրավունքի խախտման մասին Ընկերությունն իմացել կամ պարտավոր էր իմանալ հաջորդող ամսվա 1-ից:

Աիդա Աղազարյանը վերջին անգամ վճարում կատարել է 2006 թվականին, իսկ ըստ Ընկերության ներկայացրած հաշվարկի՝ յուրաքանչյուր ամիս պետք է վճարվեր 497 ՀՀ դրամ:

Ընկերության կողմից միայն 24.12.2009 թվականին է հայց հարուցվել, որը Դատարանի նույն օրվա որոշմամբ ընդունվել է վարույթ: Հետևաբար, դատական պաշտպանության ենթակա է միայն 24.12.2006 թվականից հետո ծագած պահանջի իրավունքը: Այսինքն՝ դատական պաշտպանության ենթակա է 2006 թվականի դեկտեմբեր ամսվա և 2007 թվականի 11 ամիսների համար ծագած իրավունքը, որը գումարային արտահայտությամբ կազմում է 5.964 ՀՀ դրամ:

2) *Վերաքննիչ դատարանը չի կիրառել ՀՀ Սահմանադրության 42-րդ հոդվածի 1-ին մասը, «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի 4-րդ մասի 2-րդ կետը, ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 346-րդ, 349-րդ հոդվածները, որոնք պետք է կիրառեր:*

Բողոք բերած անձը նշված պնդումը պարձառաքանել է հետևյալ փաստարկներով.

Վերաքննիչ դատարանը հաշվի չի առել, որ ֆիզիկական և իրավաբանական անձինք պարտավորություններ կարող են կրել բացառապես դրանց՝ օրենքով նախատեսված լինելու դեպքում: Իսկ բացի օրենքով նախատեսված դեպքերի, ֆիզիկական կամ իրավաբանական անձինք սեփական կամքով կարող են ստանձնել պարտավորություններ քաղաքացիաիրավական պայմանագրեր կնքելու եղանակով: Տվյալ դեպքում որպես պահանջի հիմքում ընկած հանգամանքների հիմնավորում Ընկերությունը վկայակոչել է Արարատի քաղաքապետարանի հետ 01.01.1999 թվականին կնքված պայմանագիրը: Նշված պայմանագրի կողմեր են Արարատի քաղաքապետարանը և Ընկերությունը, հետևաբար այդ պայմանագրից

բխող պարտավորական հարաբերություններ ծագել են բացառապես Արարատի քաղաքապետարանի և Ընկերության միջև: Այսինքն՝ Ընկերություն իր գույքային պահանջները կարող է ներկայացնել միայն պայմանագրի մյուս կողմին՝ Արարատի քաղաքապետարանին: Իսկ Աիդա Աղազարյանը պայմանագրի կողմ չէ, հետևաբար նրա համար չէին կարող և չեն սահմանվել իրավունքներ կամ պարտականություններ:

3) *Վերաքննիչ դատարանը կիրառել է «Բազմաբնակարան շենքի կառավարման մասին» ՀՀ օրենքը, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 37-րդ, 60-րդ հոդվածները, որոնք չպետք է կիրառել, չի կիրառել «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 78-րդ հոդվածի 1-ին մասը, ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 438-րդ հոդվածի 1-ին կետը, որոնք պետք է կիրառել:*

Բողոք բերած անձը նշված պնդումը պարձառաքանել է հեղինակաբարկներով.

«Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքն ընդունվել է 03.12.2002 թվականին և ուժի մեջ է մտել 10.01.2003 թվականին, իսկ մինչ այդ գործել է 30.06.1996 թվականին ընդունված «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքը: Գործող օրենքով դրա դրույթներին ամբողջությամբ կամ մասնակիորեն հետադարձ ուժ չի տրվել և չի նախատեսվել դրանց կիրառումը մինչև օրենքն ուժի մեջ մտնելը ծագած հարաբերությունների նկատմամբ: Տվյալ դեպքում Ընկերության և Արարատի քաղաքապետարանի միջև բնակֆոնդի սպասարկման և աղբահանության պայմանագիրը կնքվել է դեռևս 30.06.1996 թվականին ընդունված «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի գործողության ժամանակ, որով նախատեսված չէ որևէ դրույթ, որն իրավունք կտար համայնքի և առևտրային կազմակերպության միջև կնքվող պայմանագրի դրույթներով համայնքի բնակիչների համար սահմանել որևէ պարտականություն:

«Բազմաբնակարան շենքի կառավարման մասին» ՀՀ օրենքը ևս ընդունվել է Ընկերության և Արարատի քաղաքապետարանի միջև վերը նշված պայմանագիրը կնքելուց հետո: Հետևաբար, «Բազմաբնակարան շենքի կառավարման մասին» և «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքները տվյալ իրավահարաբերության վրա չեն կարող տարածվել:

Վերոգրյալի հիման վրա բողոք բերած անձը պահանջել է բեկանել Վերաքննիչ դատարանի 19.11.2010 թվականի որոշումը և այն փոփոխել՝ հայցը մերժել:

2.1 Վճարել քողոքի պատասխանի հիմնավորումները

Աիդա Աղազարյանը մատուցված ծառայությունների դիմաց կուտակված 77.885 ՀՀ դրամ պարտքից վճարել է 1.980 ՀՀ դրամ, պարտք մնալով 75.905 ՀՀ դրամ: Նշված գումարը վճարելով Աիդա Աղազարյանն ընդունել է պարտքի առկայությունը: Հետևաբար, սույն գործով առկա չէ հայցային վաղեմության իրավահարաբերություն:

3. Վճարել քողոքի քննության համար նշանակություն ունեցող փաստերը

Վճարել քողոքի քննության համար էական նշանակություն ունեն հեղինակաբարկներ՝

1) Ընկերության և Արարատի քաղաքապետարանի միջև 01.01.1999 թվականին կնքված պայմանագրի համաձայն՝ 01.01.1999 թվականից քաղաքի մաքրման,

բարեկարգման, կանաչապատման, բնակֆոնդի սպասարկման օբյեկտները հանձնվել են Ընկերությանը: Նույն պայմանագրով Ընկերությունը պարտավորվել է պատշաճ ձևով կատարել բարեկարգման, կանաչապատման, բնակֆոնդի սպասարկման աշխատանքները (**գ.թ. 8**):

2) Ընկերության և Արարատի քաղաքապետարանի միջև 28.03.2008 թվականի, 23.02.2005 թվականի, 2006 թվականի, 23.02.2007 թվականի պայմանագրերով և 01.10.2007 թվականի լրացուցիչ պայմանագրով Ընկերությունը պարտավորվել է կատարել կանաչապատման, բնակֆոնդի և հանրակացարանային տնտեսությունների սպասարկման, բարեկարգման և սպասարկման աշխատանքները (**գ.թ. 24, 30-31, 32, 33, 35-36**):

3) Աիդա Աղազարյանի պարտքի վերաբերյալ Ընկերության ներկայացրած հաշվարկի համաձայն՝ Աիդա Աղազարյանի պարտքը 01.12.2007 թվականի դրությամբ կազմել է 75.905 ՀՀ դրամ, այդ թվում՝ 1999 թվականի դրությամբ պարտքը կազմել է 26.830 ՀՀ դրամ, 2000 թվականի համար պարտքը կազմել է 8.844 ՀՀ դրամ, 2001 թվականի համար՝ 6.924 ՀՀ դրամ, 2002 թվականի համար՝ 5.964 ՀՀ դրամ, 2003 թվականի համար՝ 5.964 ՀՀ դրամ, որից վճարվել է 980 ՀՀ դրամ, 2004 թվականի համար՝ 5.964 ՀՀ դրամ, 2005 թվականի համար՝ 5.964 ՀՀ դրամ, 2006 թվականի համար՝ 5.964 ՀՀ դրամ, որից վճարվել է 1.000 ՀՀ դրամ և 2007 թվականի 11 ամիսների համար՝ 5.467 ՀՀ դրամ: Տվյալ հաշվարկում առկա չէ որևէ նշում այն մասին, թե Աիդա Աղազարյանը 2003 թվականի և 2006 թվականի դրամավաճառի օրն է կատարել համապատասխանաբար 980 ՀՀ դրամ և 1.000 ՀՀ դրամ վճարումներ (**գ.թ. 4**):

4) Ընկերության հայցադիմումը Դատարան է մուտքագրվել 24.12.2009 թվականին (**գ.թ. 3**):

5) Աիդա Աղազարյանը 25.02.2010 թվականի հայցադիմումի պատասխանով միջնորդել է կիրառել հայցային վաղեմություն (**գ.թ. 23**):

4. Վճուրքի դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումները

Քննելով վճուրքի բողոքը վերը նշված հիմքերի սահմաններում՝ Վճուրքի դատարանը գրնում է, որ՝

1) *Վճուրքի բողոքն առաջին հիմքով հիմնավոր է հեղուկայ պարճառարանությամբ.*

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 331-րդ հոդվածի համաձայն՝ հայցային վաղեմություն է համարվում իրավունքը խախտված անձի հայցով իրավունքի պաշտպանության ժամանակահատվածը:

Նույն օրենսգրքի 332-333-րդ հոդվածների համաձայն՝ հայցային վաղեմության ընդհանուր ժամկետը երեք տարի է, բացառությամբ այն դեպքերի, երբ օրենքով սահմանված են հատուկ ժամկետներ:

Նույն օրենսգրքի 337-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ հայցային վաղեմության ժամկետի ընթացքը սկսվում է այն օրվանից, երբ անձն իմացել է կամ պետք է իմացած լիներ իր իրավունքի խախտման մասին: Այդ կանոնից բացառությունները սահմանվում են սույն օրենսգրքով և այլ օրենքներով:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 335-րդ հոդվածի 2-րդ կետի համաձայն՝ դատարանը հայցային վաղեմությունը կիրառում է վիճող կողմի դիմումի հիման վրա: Հայցային վաղեմության ժամկետի լրանալը, որի կիրառման մասին դիմել է վիճող կողմը, հիմք է դատարանի կողմից հայցը մերժելու մասին վճիռ կայացնելու համար:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 340-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ հայցային վաղեմության ժամկետի ընթացքն ընդհատվում է սահմանված կարգով հայցը հարուցելով, ինչպես նաև **պարտավոր անձի կողմից պարտքի ձանաչումը վկայող գործողություններ կատարելով:**

Վերը նշված հոդվածների վերլուծությունից հետևում է, որ օրենսդիրը, ամրագրելով հայցային վաղեմության ընդհանուր երեք տարվա ժամկետը, սահմանել է նաև այդ ժամկետի հաշվարկման կարգը: Միաժամանակ, օրենսդրի կողմից ամրագրվել են նաև այն դեպքերը, որոնց առկայության պայմաններում հայցային վաղեմության ժամկետը ելթակա է ընդհատման:

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ հայցային վաղեմության ժամկետի ընդհատման հիմք կարող է հանդիսանալ պարտավոր անձի այն գործողությունը, որը կատարվել է հայցային վաղեմության ժամկետում: Այսինքն՝ պարտավոր անձի այն գործողությունը, որը կատարվել է հայցային վաղեմության ժամկետի ավարտից հետո, չի կարող բնորոշվել որպես պարտքի ձանաչմանն ուղղված գործողություն, հետևաբար և չի կարող հիմք հանդիսանալ արդեն իսկ ավարտված հայցային վաղեմության ժամկետի ընդհատման համար:

Սույն գործով Աիդա Աղազարյանի վերաքննիչ բողոքը մերժելիս Վերաքննիչ դատարանը պատճառաբանել է, որ 2000 թվականից մինչև 2007 թվականը պատասխանողի կողմից երկու անգամ՝ 2003 թվականին և 2006 թվականին կատարվել է մասնակի վճարում, ինչը բավարար հիմք է փաստելու, որ պատասխանողը կատարել է պարտքի ձանաչումը վկայող գործողություն, որն էլ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 340-րդ հոդվածի համաձայն բավարար հիմք է հայցային վաղեմության ժամկետի ընթացքն ընդհատված համարելու համար:

Միաժամանակ, Վերաքննիչ դատարանը նշել է, որ Դատարանը հայցային վաղեմություն կիրառելու վերաբերյալ պատասխանողի պահանջն իրավացիորեն համարել է անհիմն, պատճառաբանելով, որ պատասխանողն իրեն մատուցված ծառայությունների դիմաց մասնակի վճարումներ կատարելով ընդունել է պարտքը:

Սույն գործի փաստերի համաձայն՝ Աիդա Աղազարյանի պարտքի վերաբերյալ Ընկերության կողմից Դատարան ներկայացրած հաշվարկի համաձայն՝ 01.12.2007 թվականի դրությամբ Աիդա Աղազարյանի պարտքը կազմել է 75.905 ՀՀ դրամ, այդ թվում՝ 1999 թվականի դրությամբ պարտքը կազմել է 26.830 ՀՀ դրամ, 2000 թվականի համար պարտքը կազմել է 8.844 ՀՀ դրամ, 2001 թվականի համար՝ 6.924 ՀՀ դրամ, 2002 թվականի համար՝ 5.964 ՀՀ դրամ, 2003 թվականի համար՝ 5.964 ՀՀ դրամ, որից **վճարվել է 980 ՀՀ դրամ**, 2004 թվականի համար՝ 5.964 ՀՀ դրամ, 2005 թվականի համար՝ 5.964 ՀՀ դրամ, 2006 թվականի համար՝ 5.964 ՀՀ դրամ, որից **վճարվել է 1.000 ՀՀ դրամ** և 2007 թվականի 11 ամիսների համար՝ 5.467 ՀՀ դրամ: Նույն հաշվարկից պարզ չէ, թե Աիդա Աղազարյանը 2003 թվականի և 2006 թվականի դր ամսվա դր օրն է կատարել 980 ՀՀ դրամ և 1.000 ՀՀ դրամ վճարումներ: Իսկ Ընկերության հայցադիմումը Դատարան մուտքագրվել է 24.12.2009 թվականին:

Հիմք ընդունելով վերոգրյալը և սույն գործի փաստերը համադրելով՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ սույն գործի քննությամբ չի պարզվել փաստական հանգամանքն այն մասին, թե Աիդա Աղազարյանի կողմից 2003 և 2006 թվականների վճարումները կոնկրետ, դր ամիսներին և դր օրերին են կատարվել, որպիսի փաստական հանգամանքի պարզումը միայն հնարավորություն կտար պարզելու և հաստատված համարելու, որ կատարված վճարումներով ընդհատվել է հայցային

վաղեմության ժամկետի ընթացքը: Հետևաբար, վճարումների վերաբերյալ համապատասխան ապացույցների բացակայության պայմաններում պարտավոր անձի որևէ գործողություն չի կարող դիտվել որպես պարտքը ճանաչելուն ուղղված գործողություն, հաշվի առնելով նաև այն հանգամանքը, որ պարզ չէ, թե կատարված վճարումները կատարվել են արդյոք հայցային վաղեմության ժամկետի ընթացքում, թե՛ ոչ:

Նման պայմաններում, Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ հայցային վաղեմության կիրառումն ըստ էության մերժելով Վերաքննիչ դատարանը չի իրականացրել քաղաքացիական գործում առկա ապացույցների պատշաճ գնահատում:

Միաժամանակ, հաշվի առնելով այն, որ սույն գործով հայցային վաղեմության կիրառման հարցը ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 335-րդ հոդվածի 2-րդ կետի ուժով ունի էական նշանակություն հայցի բավարարման կամ մերժման հարցում, ուստի Վճռաբեկ դատարանը վճռաբեկ բողոքի մյուս հիմքերին չի անդրադառնում մինչև սույն որոշման մեջ նշված և հայցային վաղեմության հետ կապված փաստական հանգամանքի պարզումը:

Վճռաբեկ բողոքի պատասխանում բերված փաստարկները հերքվում են վերը նշված պատճառաբանություններով:

Այսպիսով, վճռաբեկ բողոքի առաջին հիմքի առկայությունը Վճռաբեկ դատարանը դիտում է բավարար՝ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 227-րդ և 228-րդ հոդվածների ուժով Վերաքննիչ դատարանի որոշումը բեկանելու համար:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 240-241²-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

ՈՐՈՇԵՑ

1. Վճռաբեկ բողոքը բավարարել մասնակիորեն: Բեկանել ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 19.11.2010 թվականի որոշումը և գործն ուղարկել ՀՀ Արարատի և Վայոց ձորի մարզերի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարան՝ նոր քննության:

2. Պետական տուրքի բաշխման հարցին անդրադառնալ գործի նոր քննության ընթացքում:

3. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

*ՆԱԽԱԳԱՀՈՂ՝ ստորագրություն
ԴԱՏԱՎՈՐՆԵՐ՝ ստորագրություններ*

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական
դատարանի որոշում

Քաղաքացիական գործ թիվ ԵՔԴ/0365/02/08
2011թ.

Քաղաքացիական գործ թիվ ԵՔԴ/0365/02/08

Նախագահող դատավոր՝ Ն. Հովսեփյան

Դատավորներ՝ Ա. Մկրտչյան

Ն. Բարսեղյան

ՈՐՈՇՈՒՄ
ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քաղաքացիական
և վարչական պալատը (այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

*նախագահությամբ
մասնակցությամբ դատավորներ*

Ե. ԽՈՒՆԴԿԱՐՅԱՆԻ
Ա. ԲԱՐՍԵՂՅԱՆԻ
Վ. ԱԲԵԼՅԱՆԻ
Ս. ԱՆՏՈՆՅԱՆԻ
Մ. ԴՐՄԵՅԱՆԻ
Գ. ՀԱԿՈԲՅԱՆԻ
Է. ՀԱՅՐԻՅԱՆԻ
Տ. ՊԵՏՐՈՍՅԱՆԻ
Ե. ՍՈՂՈՄՈՆՅԱՆԻ

2011 թվականի հոկտեմբերի 14-ին

դոնբաց դատական նիստում, քննելով Արտավազդ Խաչատրյանի վճռաբեկ բողոքը ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 03.06.2010 թվականի որոշման դեմ՝ ըստ հայցի Արմեն Ավագյանի ընդդեմ Արտավազդ Խաչատրյանի՝ գումար բռնագանձելու պահանջի մասին,

ՊԱՐԶԵՑ

1. Գործի դատավարական նախապատմությունը

Դիմելով դատարան՝ Արմեն Ավագյանը պահանջել է բռնագանձել Արտավազդ Խաչատրյանից 69.900 ԱՄՆ դոլարին համարժեք դրամ, ինչպես նաև սկսած 15.10.2005 թվականից՝ պարտքի գումարի նկատմամբ հաշվարկել ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 411-րդ հոդվածով նախատեսված բանկային տոկոսներ:

Երևանի քաղաքացիական դատարանի (դատավոր՝ Էդ. Ավետիսյան) 07.07.2008 թվականի վճռով հայցը բավարարվել է:

ՀՀ քաղաքացիական վերաքննիչ դատարանի (նախագահող դատավոր՝ Վ. Ավանեսյան, դատավորներ՝ Ա. Խառատյան, Կ. Չիլինգարյան) 20.11.2008 թվականի որոշմամբ բեկանվել է Երևանի քաղաքացիական դատարանի 07.07.2008 թվականի

վճիռը, և գործն ուղարկվել է նոր քննության:

Երևանի Աջափնյակ և Դավթաշեն վարչական շրջանների առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի (դատավոր Ա. Մխիթարյան) (այսուհետ՝ Դատարան) 11.03.2011 թվականի վճռով հայցը մերժվել է:

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի (այսուհետ՝ Վերաքննիչ դատարան) 03.06.2011 թվականի որոշմամբ Դատարանի 11.03.2011 թվականի վճռի դեմ Արմեն Ավագյանի վերաքննիչ բողոքը բավարարվել է. Դատարանի վճիռը բեկանվել և փոփոխվել է՝ հայցը բավարարվել է:

Սույն գործով վճռաբեկ բողոք է ներկայացրել Արտավազդ Խաչատրյանը:

Վճռաբեկ բողոքի պատասխան է ներկայացրել Արմեն Ավագյանը:

2. Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը

Սույն վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքերի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

1) *Վերաքննիչ դատարանը սխալ է մեկնաբանել ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 342-րդ հոդվածը, կիրառել է ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 337-րդ հոդվածը, որը չպետք է կիրառեր, չի կիրառել ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 332-րդ հոդվածը, որը պետք է կիրառեր, խախտել է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 47-րդ, 48-րդ, 51-րդ, 53-րդ, 62-րդ հոդվածները:*

Բողոքը բերած անձը նշված պնդումը պարզապես և հետևյալ փաստարկներով.

Վերաքննիչ դատարանն անտեսել է այն հանգամանքը, որ հայցային վաղեմության եռամյա ժամկետի ընթացքը սկսվել է 15.10.2004 թվականից և ավարտվել է 15.10.2007 թվականին: Այն, որ հայցային վաղեմության ժամկետը սկսվել է 15.10.2004 թվականին, ընդունել է նաև Արմեն Ավագյանի ներկայացուցիչն իր՝ 03.10.2010 թվականի հայցային վաղեմության բաց թողնված ժամկետը հարգելի համարելու և վերականգնելու մասին միջնորդությամբ: Նշված միջնորդությամբ նշվել է, որ Արմեն Ավագյանը գտնվել է ԱՄԵ-ում, և հայցային վաղեմության վերջին 6 ամսվա ընթացքում՝ 10.09.2007 թվականին «Միոկարդի ինֆարկտ» ախտորոշմամբ ընդունվել է Ռոջեր Վիլյամս բժշկական կենտրոնի շտապօգնության բաժանմունք, որտեղից դուրս է գրվել 18.09.2007 թվականին: Վերաքննիչ դատարանը նշվածը համարել է բացառիկ դեպք և հարգելի է համարել հայցային վաղեմության ժամկետը բաց թողնելու պատճառները: Մինչդեռ, Վերաքննիչ դատարանը հաշվի չի առել, որ Արմեն Ավագյանը, նույնիսկ ծանր հիվանդությամբ, ընդամենը 9 օր է գտնվել բժշկական հաստատությունում, այլ ոչ թե հայցային վաղեմության ժամկետի վերջին 6 ամսվա ամբողջ ընթացքում: Այսինքն՝ Արմեն Ավագյանն ունեցել է իր ենթադրյալ խախտված իրավունքների վերականգնման ուղղությամբ միջոցներ ձեռնարկելու հնարավորություն:

Վերաքննիչ դատարանը հաշվի չի առել, որ «Մելլի Տեխնոլոջի» ՍՊԸ-ի (այսուհետ՝ Ընկերություն) կողմից տրված գրության վրա առկա կնիքը չի պատկանում Ընկերությանը, այլ պատկանում է «Մելլի» ընկերությանը, ուստի այդ փաստաթուղթը վերաբերելի ապացույց չէ: Այսինքն՝ խաղային ապարատներն Ընկերությանը չհանձնելու փաստը մնում է չապացուցված, ուստի դրա բացասական հետևանքները կրում է Արմեն Ավագյանը:

Վերաքննիչ դատարանը որպես ապացույց գնահատել է 14.10.2006 թվականի «Համաձայնություն» վերտառությամբ փաստաթուղթը՝ հաշվի չառնելով, որ գործում

անկա թվով երկու փորձագիտական եզրակացություններում խոսք չկա այն մասին, որ նշված փաստաթղթում անկա ստորագրությունն ընդհանուր գծերով նման է պատասխանողի ստորագրությանը: Ավելին, փորձագիտական եզրակացություններով հստակ հետևություն չի տրվել առ այն, որ «Համաձայնություն» վերտառությամբ փաստաթուղթը ստորագրվել է Արտավազդ Խաչատրյանի կողմից:

Բացի այդ, Վերաքննիչ դատարանն անտեսել է այն հանգամանքը, որ փորձագիտական եզրակացությամբ տրվել է հստակ պատասխան, որ վերը նշված փաստաթղթում անկա ստորագրություններն ունեն 2-ից մինչև 3 տարվա վաղեմություն՝ հաշված հետազոտությունը սկսելու պահից՝ 10.06.2010 թվականից: Այսինքն՝ եթե 10.06.2010 թվականից հետո հաշվարկ կատարվի 3 տարի, կատարվի որ «Համաձայնություն» վերտառությամբ փաստաթուղթը կազմվել է 10.06.2007 թվականից հետո, մինչդեռ այն թվագրված է 14.10.2006 թվական: Այսպիսով պետք է փաստել, որ Արմեն Ավագյանի կողմից վկայակոչած 14.10.2006 թվականի համաձայնագրի ուժով որպես հայցային վաղեմության ժամկետի սկիզբ չի կարող ընդունվել դրանում նշված կատարման ժամկետը, այն է՝ 14.10.2007 թվականը:

2) *Վերաքննիչ դատարանը կիրառել է ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 17-րդ, 347-րդ 411-րդ, 1058-րդ հոդվածները, որոնք չպետք է կիրառեր:*

Բողոք բերած անձը նշված պնդումը պարզապես և հերկյալ փաստարկներով.

Վերաքննիչ դատարանի կողմից թույլ տրված վերոնշյալ նյութական և դատավարական նորմերի խախտումները հանգեցրել են ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 17-րդ, 347-րդ 411-րդ, 1058-րդ հոդվածների սխալ կիրառման:

Վերոգրյալի հիման վրա բողոք բերած անձը պահանջել է բեկանել Վերաքննիչ դատարանի 03.06.2011 թվականի որոշումը և օրինական ուժ տալ Դատարանի վճռին:

2.1 Վճռաբեկ բողոքի պատասխանի հիմնավորումները

Վերաքննիչ դատարանը, բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտելով և գնահատելով գործով ներկայացված ապացույցները, իրավացիորեն հարգելի է ձանաչել և վերականգնել է հայցային վաղեմության բաց թողնված ժամկետը:

Հիմնավոր է Վերաքննիչ դատարանի այն հետևությունը, որ Արմեն Ավագյանի կողմից հայցային վաղեմության ժամկետի բացթողումը ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 342-րդ հոդվածի ուժով բացառիկ դեպք էր, քանի որ հայցվորը ծանր հիվանդության և անօգնական վիճակի պատճառով չի կարողացել դիմել դատարան մինչև հայցային վաղեմության ավարտը՝ իր իրավունքների պաշտպանության համար:

Բացի այդ, պատասխանող Արտավազդ Խաչատրյանն ընդունել է խաղային ապարատները ստանալու փաստը, սակայն գումարային պատասխանատվությունից խուսափելու համար հայտնել է, որ խաղային ապարատները հանձնել է՝ չներկայացնելով հանձնարարության պատշաճ կատարման որևէ ապացույց:

3. Վճռաբեկ բողոքի քննության համար նշանակություն ունեցող փաստերը

Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

1) 12.05.2004 թվականի հանձնարարությամբ Արմեն Ավագյանն Արտավազդ Խաչատրյանին հանձնարարել է «Լաքի Մեն» ֆիրմայից՝ Գենադի Սվիրիդովից,

ստանալ խաղային ապարատներ «Ատրոնիկ» (տաս հատ), մաքսագերծված տեսքով և տեղափոխել Ընկերություն՝ վաճառքի համար (**հատոր 1-ին, գ.թ. 14, 15**):

2) Արտավազդ Խաչատրյանի և Գենադի Սվիրդոլովի կողմից 13.09.2004 թվականին կազմված և ստորագրված փաստաթղթի համաձայն՝ Ալբերտ Խաչատրյանը Գենադի Սվիրդոլովից ստացել է 10 Ատրոնիկ՝ խաղերով, շահագործման պատրաստ վիճակում (**հատոր 1-ին, գ.թ. 9, 10**):

3) Արտավազդ Խաչատրյանին հասցեագրված 15.10.2004 թվականի «Առաջարկություն 12.05.2004 թվականին կնքված համաձայնության վերաբերյալ» վերնագրված փաստաթղթի համաձայն՝ «Համաձայն մեր միջև ձեռք բերված պայմանավորվածության Դուք սույն թվականի սեպտեմբերի 13-ին մեր վստահված անձ Գենադի Սվիրդոլովից ստացել եք թվով 10 «Ատրոնիկ» տեսակի խաղային ապարատներ, յուրաքանչյուրը 6.990 ԱՄՆ դոլար արժողությամբ, որը պետք է հանձնեիք «Մելի Տեխնոլոջի» ՍՊԸ-ին վաճառքի համար, սակայն, նկատի ունենալով, որ Դուք պարտավորություն եք վերցրել անձամբ իրացնել և վերադարձնել նշված գումարը և Ձեր կողմից անցած մեկ ամսվա ընթացքում որևէ վճարում չի կատարվել, ուստի առաջարկում եմ Ձեզ սույն նամակը ստանալու պահից մեկ տարվա ընթացքում ամբողջությամբ մարել 69.900 ԱՄՆ դոլար պարտքը» (**հատոր 1-ին, գ.թ. 16**):

4) Արտավազդ Խաչատրյանին հասցեագրված 19.12.2007 թվականի «Ծանուցում 12.05.2004 թվականին կնքված համաձայնության վերաբերյալ» փաստաթղթով Արմեն Ավագյանը հայտնել է, որ «Մեր միջև 12.05.2004 թվականին ձեռք բերված համաձայնությամբ 15.10.2004 թվականին առաջարկություն է ուղարկվել Ձեր կողմից 13.09.2004 թվականին ստացված թվով 10 «Ատրոնիկ» տեսակի խաղային ապարատների արժեքը, որը կազմում է 69.900 ԱՄՆ դոլար, մարել մինչև 15.10.2005 թվականը, սակայն Ձեր կողմից անցած մեկ տարվա ընթացքում որևէ վճարում չի կատարվել, որը դիտվում է որպես պարտավորության կատարումից խուսափում: Ձեր գործողություններով պատճառվել է զգալի վնաս, որը ենթակա է փոխհատուցման: Գտնում եմ, որ վեճը ենթակա է լուծման դատական կարգով և նախագգուշացնում եմ, որ իմ կողմից կրած բոլոր վնասները կփոխհատուցվեն Ձեր հաշվին» (**հատոր 1-ին, գ.թ. 17**):

5) Ընկերության բլանկով, «Մելի» ընկերության կնիքով կնքված 09.05.2008 թվականի թիվ M26/389-008 ռուսերեն լեզվով գրության համաձայն՝ Արտավազդ Խաչատրյանը «Մելի» ընկերության հետ որևէ գործարար հարաբերություններ չի ունեցել, նշված ընկերությանը չի հանձնել Արմեն Ավագյանին պատկանող «Ատրոնիկ» խաղային ապարատները (**հատոր 1-ին, գ.թ. 56**):

6) 14.10.2006 թվականի «Համաձայնագիր» վերնագրված փաստաթղթի համաձայն՝ «Մենք, ներքոստորագրյալներս՝ Արտավազդ Խաչատրյանս և Արմեն Ավագյանս կազմել ենք սույն համաձայնագիրը հետևյալի մասին. Կողմերը համաձայն են երկարացնել վճարման ժամկետ 69.000 ԱՄՆ դոլարի, որը գոյացել է Արտավազդ Խաչատրյանի պարտականությունների չկատարման հետևանքով, ըստ պայմանագրի 12.05.2004 թվականից մինչև 14.10.2007 թվականը» (**հատոր 2-րդ, գ.թ. 61, 62**):

7) «Փորձաքննությունների ազգային բյուրո» ՊՈԱԿ-ի 12.09.2009 թվականի թիվ 09-1387 եզրակացության «Հետևություններ» բաժնի համաձայն՝ «ա. Արտավազդ Խաչատրյանի, թե մեկ այլ անձի կողմից է կատարվել 14.10.2006 թվականի «Համաձայնագիր» խորագիրը կրող փաստաթղթի ստորին ձախ մասում «Խաչատրյան Արտավազդ Ալբերտի» բառերի տակ տեղափոխված ստորագրությունը պարզել

հնարավոր չէ՝ հետազոտելի ստորագրության ինֆորմատիվ գրաֆիկական նյութի սակավության պատճառով: ք. Ներկայացված «Համաձայնագիր» գրառմամբ փաստաթղթում առկա կապտամանուշակագույն ներկանյութով կատարված ստորագրությունների կատարման վաղեմությունը կազմում է 2 տարի (հետազոտության պահից)» **(հատոր 4-րդ, գ.թ. 3-5):**

8) ՀՀ ոստիկանության փորձաքննագիտական վարչության 02.07.2010 թվականի թիվ 691 եզրակացության «Հետևություններ» բաժնի համաձայն՝ «1. 14.10.2006 թվականի «Համաձայնագիր» խորագիրը կրող փաստաթղթում «Խաչատրյան Արտավազդ Ալբերտի» բառերի տակ եղած ստորագրությունը հավանաբար կատարված չէ Արտավազդ Խաչատրյանի, այլ կատարված է մեկ ուրիշ անձի կողմից: Հարցին կոնկրետ պատասխան տալ հնարավոր չեղավ, հետազոտական մասում նշված պատճառով: 2. Փորձաքննությանը ներկայացված «Համաձայնագիր» խորագիրը կրող փաստաթղթում առկա Խաչատրյան Արտավազդ Ալբերտի բառերի տակ, ինչպես նաև Ավագյան Արմեն Մերգելի բառերի տակ կապտամանուշակագույն ներկանյութով կատարված ստորագրությունները, եթե դրանք պահվել են նորմալ ջերմային, լուսային և խոնավության պայմաններում, ունեն 2-ից մինչև 3 տարվա վաղեմություն՝ հաշվարկված հետազոտությունը սկսելու պահից» **(հատոր 5-րդ, գ.թ. 3-8):**

9) Երևանի քաղաքացիական դատարան ներկայացված հայցադիմումի պատասխանով, ինչպես նաև Դատարան ներկայացված դիմումով Արտավազդ Խաչատրյանի ներկայացուցիչը խնդրել է կիրառել հայցային վաղեմություն և այդ հիմքով հայցը մերժել **(հատոր 1-ին, գ.թ. 45-48, հատոր 5-րդ, գ.թ. 30):**

10) Երևանի քաղաքացիական դատարանում գործի քննության ընթացքում Արմեն Ավագյանի ներկայացուցիչն ընդունել է այն փաստը, որ 15.10.2004 թվականի «Առաջարկություն 12.05.2004 թվականին կնքված համաձայնության վերաբերյալ» վերնագրված փաստաթուղթն Արտավազդ Խաչատրյանի կողմից ստանալու վերաբերյալ ապացույց չի կարող ներկայացնել **(հատոր 1-ին, գ.թ. 100):**

11) Դատարան 03.12.2010 թվականին ներկայացված միջնորդությամբ Արմեն Ավագյանի ներկայացուցիչը խնդրել է բաց թողնված հայցային վաղեմության ժամկետը ձանաչել հարգելի և այն վերականգնել **(հատոր 5-րդ, գ.թ. 33-35):**

12) 03.12.2010 թվականին ներկայացված բաց թողնված հայցային վաղեմության ժամկետը հարգելի ձանաչելու և վերականգնելու մասին միջնորդությանը կից ներկայացված Ռոջեր Ուիլյամս բժշկական հիվանդանոցի կողմից տրված գրության համաձայն՝ Արմեն Ավագյանն ընդունվել է Ռոջեր Ուիլյամս բժշկական կենտրոնի շտապօգնության բաժանմունք 2007 թվականի սեպտեմբերի 10-ին և ախտորոշվել է միոկարդի ինֆարկտ: Նա բուժվել և դուրս է գրվել 2007 թվականի սեպտեմբերի 18-ին **(հատոր 5-րդ, գ.թ. 36):**

13) Արմեն Ավագյանի հայցադիմումը Երևանի քաղաքացիական դատարան է մուտքագրվել 17.03.2008 թվականին **(հատոր 1-ին, գ.թ. 3):**

4. Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումները

Քննելով վճռաբեկ բողոքը վերը նշված հիմքերի սահմաններում՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ՝

1) Վճռաբեկ բողոքն առաջին հիմքով հիմնավոր է հեղևյալ պայրճառաբանությամբ.

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 53-րդ հոդվածի 1-ին կետի

համաձայն՝ դատարանը յուրաքանչյուր ապացույց գնահատում է գործում եղած բոլոր ապացույցների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտության վրա հիմնված ներքին համոզմամբ:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 47-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ գործով ապացույցներ են նույն օրենսգրքով նախատեսված կարգով ձեռք բերված տեղեկությունները, որոնց հիման վրա դատարանը պարզում է գործին մասնակցող անձանց պահանջները և առարկությունները հիմնավորող, ինչպես նաև վեճի լուծման համար նշանակություն ունեցող այլ հանգամանքների առկայությունը կամ բացակայությունը: Այդ տեղեկությունները հաստատվում են՝ 1. գրավոր և իրեղեն ապացույցներով, 2. փորձագետների եզրակացություններով, 3. վկաների ցուցմունքներով, 4. գործին մասնակցող անձանց ցուցմունքներով:

Նշված հոդվածների վերլուծությունից հետևում է, որ օրենսդիրը, սահմանելով ապացույցի հասկացությունը, սպառիչ սահմանել է դրանց տեսակները, այն է՝ գրավոր և իրեղեն ապացույցները, փորձագետների եզրակացությունները, վկաների ցուցմունքները, գործին մասնակցող անձանց ցուցմունքները: Ընդ որում, դատարանը յուրաքանչյուր ապացույց գնահատում է գործում եղած բոլոր ապացույցների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտության հիման վրա հիմնված ներքին համոզմամբ, ինչպես նաև պետք է նշի ոչ միայն այն ապացույցները, որոնց վրա հիմնվել է վիճելի փաստերը հաստատելիս և արդյունքում որոշում կայացնելիս, այլև պետք է պատճառաբանի, թե ինչու է այս կամ այն ապացույցը մերժվում: Միայն նման հիմնավորումը կարող է վկայել գործի բազմակողմանի հետազոտության մասին:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 331-րդ հոդվածի համաձայն՝ հայցային վաղեմություն է համարվում իրավունքը խախտված անձի հայցով իրավունքի պաշտպանության ժամանակահատվածը:

Նույն օրենսգրքի 332-րդ հոդվածի համաձայն՝ հայցային վաղեմության ընդհանուր ժամկետը երեք տարի է: Նույն օրենսգրքի 333-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ պահանջների որոշ տեսակների համար օրենքով կարող են սահմանվել հայցային վաղեմության ընդհանուր ժամկետի համեմատությամբ կրճատ կամ ավելի երկար հատուկ ժամկետներ:

Նույն օրենսգրքի 337-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ հայցային վաղեմության ժամկետի ընթացքը սկսվում է այն օրվանից, երբ անձն իմացել է կամ պետք է իմացած լիներ իր իրավունքի խախտման մասին: Այդ կանոնից բացառությունները սահմանվում են սույն օրենսգրքով և այլ օրենքներով, իսկ նույն հոդվածի 2-րդ կետի համաձայն՝ այն պարտավորությունների համար, որոնք կատարելու համար որոշված է որոշակի ժամկետ, հայցային վաղեմության ընթացքն սկսվում է այդ ժամկետի ավարտմամբ:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 335-րդ հոդվածի 2-րդ կետի համաձայն՝ դատարանը հայցային վաղեմությունը կիրառում է վիճող կողմի դիմումի հիման վրա: Հայցային վաղեմության ժամկետի լրանալը, որի կիրառման մասին դիմել է վիճող կողմը, հիմք է դատարանի կողմից հայցը մերժելու մասին վճիռ կայացնելու համար:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 340-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ հայցային վաղեմության ժամկետի ընթացքն ընդհատվում է սահմանված կարգով հայցը հարուցելով, ինչպես նաև պարտավոր անձի կողմից պարտքի ձանաչումը վկայող գործողություններ կատարելով:

Վերը նշված հոդվածների վերլուծությունից հետևում է, որ օրենսդիրը, ամրագրելով հայցային վաղեմության ընդհանուր երեք տարվա ժամկետը, սահմանել

է նաև այդ ժամկետի հաշվարկման կարգը, այն է՝ հայցային վաղեմության ժամկետի ընթացքն սկսվում է այն օրվանից, երբ անձն իմացել է կամ պետք է իմացած լինել իր իրավունքի խախտման մասին: Միաժամանակ, օրենսդրի կողմից ամրագրվել են նաև այն դեպքերը, որոնց առկայության պայմաններում հայցային վաղեմության ժամկետն ընդհատվում է: Ընդ որում, հայցային վաղեմության ժամկետի ընդհատման հիմք կարող է հանդիսանալ սահմանված կարգով հայցի հարուցումը, ինչպես նաև պարտավոր անձի կողմից պարտքի ճանաչումը վկայող գործողություններ կատարելը:

Սույն գործով Դատարանը հայցը մերժելիս հիմք է ընդունել Արմեն Ավագյանի կողմից ներկայացված 15.10.2004 թվականի թվագրությամբ «Առաջարկություն 12.05.2004 թվականին կնքված համաձայնության վերաբերյալ» Արտավազդ Խաչատրյանին հասցեագրված առաջարկությունը և հանգել այն հետևության, որ հայցվորը դեռևս 15.10.2004 թվականին իմացել է իր իրավունքների ենթադրյալ խախտման մասին:

Միաժամանակ Դատարանը, հաստատված համարելով, որ սույն քաղաքացիական գործով հայցվորը դատարան չի ներկայացրել որևէ ապացույց 15.10.2004 թվականի առաջարկությունը, 19.12.2007 թվականի ծանուցումը պատասխանողին ուղարկելու և դրանք Արտավազդ Խաչատրյանի կողմից ստանալու վերաբերյալ, հանգել է այն հետևության, որ սույն գործով բացակայում է ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 337-րդ հոդվածի 2-րդ կետով նախատեսված հայցային վաղեմության ընթացքի սկիզբը հաշվարկելու նախապայմանը:

Բացի այդ, Դատարանը, անդրադառնալով գործում առկա 14.10.2006 թվականի համաձայնագրին, արձանագրել է, որ «Փորձաքննությունների ազգային բյուրո» ՊՈԱԿ-ի 12.09.2009 թվականի թիվ Հւ՝ 09-1387 եզրակացությամբ չի պարզվել, թե ում կողմից է կատարված «Համաձայնագիր» խորագիրը կրող փաստաթղթում «Խաչատրյան Արտավազդ Ալբերտի» բառերի տակ առկա ստորագրությունը, իսկ ՀՀ ոստիկանության փորձաքննագիտական վարչության 02.07.2010 թվականի թիվ 691 եզրակացությամբ պարզվել է, որ «Համաձայնագիր» խորագիրը կրող փաստաթղթում «Խաչատրյան Արտավազդ Ալբերտի» բառերի տակ եղած ստորագրությունը հավանաբար կատարված չէ Արտավազդ Խաչատրյանի, այլ կատարված է մեկ ուրիշ անձի կողմից, ինչի պարագայում վիճելի է մնում հայցվորի կողմից վկայակոչված 14.10.2006 թվականի «Համաձայնագիր» վերնագրով փաստաթուղթը կողմերի միջև կնքված լինելու փաստը: Հետևաբար, հայցվորի կողմից վկայակոչված 14.10.2006 թվականի համաձայնագրի ուժով, որպես հայցային վաղեմության ժամկետի սկիզբ, չի կարող հաշվարկվել համաձայնագրում նշված կատարման ժամկետը՝ 14.10.2007 թվականը:

Անդրադառնալով հայցային վաղեմության բաց թողնված ժամկետը հարգելի ճանաչելու և վերականգնելու մասին Արմեն Ավագյանի ներկայացուցչի միջնորդությանը՝ Դատարանը, հիմք ընդունելով այն հանգամանքը, որ Արմեն Ավագյանն ընդունվել է Ռոջեր Ուիլյամս բժշկական կենտրոնի շտապօգնության բաժանմունք 2007 թվականի սեպտեմբերի 10-ին և բուժումից հետո դուրս է գրվել 2007 թվականի սեպտեմբերի 18-ին, եզրակացրել է, որ Արմեն Ավագյանը չի գտնվել այնպիսի վիճակում, որը ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 342-րդ հոդվածի տրամաբանությամբ կարող է գնահատվել որպես բացառիկ:

Վերաքննիչ դատարանը, դատական ակտը քննանելով և այն փոփոխելով, հիմք է ընդունել 14.10.2006 թվականի համաձայնագրում առկա կողմերի միջև պարտավորությունների կատարման վերջնաժամկետը՝ 14.10.2007 թվականը,

և հաստատված համարել, որ հայցային վաղեմության ժամկետի հոսքը սկսվել է 14.10.2007 թվականից, իսկ իրավունքների պաշտպանության հայցով Արմեն Ավագյանը դատարան է դիմել 2008 թվականի մարտ ամսին, հետևաբար հայցային վաղեմության եռամյա ժամկետը բաց չի թողել: Միաժամանակ անդրադառնալով «Փորձաքննությունների ազգային բյուրո» ՊՈԱԿ-ի 12.09.2009 թվականի թիվ ՀՆ՝ 09-1387 և ՀՀ ոստիկանության փորձաքննագիտական վարչության 02.07.2010 թվականի թիվ 691 եզրակացություններին՝ Վերաքննիչ դատարանը նշել է, որ փորձագետի եզրակացությունը չի կարող դիտվել փաստը հաստատող ստույգ ապացույց, քանի որ դրանով կատեգորիկ հետևություն չի արվել փորձագետին առաջադրված հարցի վերաբերյալ, այլ միայն հավանական եզրահանգում է կատարվել:

Մինչդեռ, սույն գործում առկա՝ Արտավազդ Խաչատրյանին հասցեագրված 15.10.2004 թվականի «Առաջարկություն 12.05.2004 թվականին կնքված համաձայնության վերաբերյալ» վերնագրված փաստաթղթի համաձայն՝ «Համաձայն մեր միջև ձեռք բերված պայմանավորվածության Դուք սույն թվականի սեպտեմբերի 13-ին մեր վստահված անձ Գենադի Սվիրիդովից ստացել եք թվով 10 «Ատրոնիկ» տեսակի խաղային ապարատներ, յուրաքանչյուրը 6.990 ԱՄՆ դոլար արժողությամբ, որը պետք է հանձնեիք «Մելլի Տելսոլոջի» ՄՊԸ-ին վաճառքի համար, սակայն, նկատի ունենալով, որ Դուք պարտավորություն եք վերցրել անձամբ իրացնել և վերադարձնել նշված գումարը և Ձեր կողմից անցած մեկ ամսվա ընթացքում որևէ վճարում չի կատարվել, ուստի առաջարկում եմ Ձեզ սույն նամակը ստանալու պահից մեկ տարվա ընթացքում ամբողջությամբ մարել 69.900 ԱՄՆ դոլար պարտքը», 14.10.2006 թվականի «Համաձայնագիր» վերնագրված փաստաթղթի համաձայն՝ «Մենք, ներքոստորագրյալներս՝ Արտավազդ Խաչատրյանս և Արմեն Ավագյանս կազմել ենք սույն համաձայնագիրը հետևյալի մասին. Կողմերը համաձայն են երկարացնել վճարման ժամկետ 69.000 ԱՄՆ դոլարի, որը գոյացել է Արտավազդ Խաչատրյանի պարտականությունների չկատարման հետևանքով, ըստ պայմանագրի 12.05.2004 թվականից մինչև 14.10.2007 թվականը»: «Փորձաքննությունների ազգային բյուրո» ՊՈԱԿ-ի 12.09.2009 թվականի թիվ 09-1387 եզրակացության «Հետևություններ» բաժնի համաձայն՝ «ա. Արտավազդ Խաչատրյանի, թե մեկ այլ անձի կողմից է կատարվել 14.10.2006 թվականի «Համաձայնագիր» խորագիրը կրող փաստաթղթի ստորին ձախ մասում «Խաչատրյան Արտավազդ Ալբերտի» բառերի տակ տեղավորված ստորագրությունը պարզել հնարավոր չէ՝ հետազոտելի ստորագրության ինֆորմատիվ գրաֆիկական նյութի սակավության պատճառով: Բ. Ներկայացված «Համաձայնագիր» գրառմամբ փաստաթղթում առկա կապտամանուշակագույն ներկանյութով կատարված ստորագրությունների կատարման վաղեմությունը կազմում է 2 տարի (հետազոտության պահից)»: ՀՀ ոստիկանության փորձաքննագիտական վարչության 02.07.2010 թվականի թիվ 691 եզրակացության «Հետևություններ» բաժնի համաձայն՝ «1. 14.10.2006 թվականի «Համաձայնագիր» խորագիրը կրող փաստաթղթում «Խաչատրյան Արտավազդ Ալբերտի» բառերի տակ եղած ստորագրությունը հավանաբար կատարված չէ Ալբերտ Խաչատրյանի, այլ կատարված է մեկ ուրիշ անձի կողմից: 2. Փորձաքննությանը ներկայացված «Համաձայնագիր» խորագիրը կրող փաստաթղթում առկա Խաչատրյան Արտավազդ Ալբերտի բառերի տակ, ինչպես նաև Ավագյան Արմեն Մերգելի բառերի տակ կապտամանուշակագույն ներկանյութով կատարված ստորագրությունները, եթե դրանք պահվել են նորմալ ջերմային, լուսային և խոնավության պայմաններում, ունեն 2-ից մինչև 3 տարվա վաղեմություն՝ հաշվարկված հետազոտությունը սկսելու պահից»:

Հինք ընդունելով վերոգրյալը և սույն գործի փաստերը համադրելով՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Վերաքննիչ դատարանը բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ չի հետազոտել և գնահատել գործով որպես ապացույցներ ձեռք բերված «Փորձաքննությունների ազգային բյուրո» ՊՈԱԿ-ի 12.09.2009 թվականի թիվ 09-1387 և ՀՀ ոստիկանության փորձաքննագիտական վարչության 02.07.2010 թվականի թիվ 691 եզրակացությունները:

Մասնավորապես, Վերաքննիչ դատարանն անտեսել է այն հանգամանքը, որ «Փորձաքննությունների ազգային բյուրո» ՊՈԱԿ-ի 12.09.2009 թվականի թիվ 09-1387 եզրակացությամբ տրվել է հստակ պատասխան այն մասին, որ ներկայացված «Համաձայնագիր» գրառմամբ փաստաթղթում առկա կապտամանուշակագույն ներկանյութով կատարված ստորագրությունների կատարման վաղեմությունը կազմում է 2 տարի (հետազոտության պահից): Այսինքն՝ Վերաքննիչ դատարանը հաշվի չի առել այն հանգամանքը, որ «Համաձայնագիր» խորագիրը կրող փաստաթուղթը **կազմվել է ավելի ուշ, քան այն թվագրված է:** Ավելին, Վերաքննիչ դատարանը հաշվի չի առել, որ տվյալ եզրակացություններով չի հաստատվել նաև այն հանգամանքը, որ ստորագրությունը կատարված է Արտավազդ Խաչատրյանի կողմից:

Նման պայմաններում Վճռաբեկ դատարանը գտնում է, որ անհիմն է Վերաքննիչ դատարանի եզրահանգումն այն մասին, որ հայցային վաղեմության ժամկետի հոսքը սկսվել է 14.10.2007 թվականից (14.10.2006 թվականի «Համաձայնագիր» վերնագրված փաստաթղթում նշված պարտավորությունների կատարման վերջնաժամկետից), հետևաբար Արմեն Ավագյանը հայցային վաղեմության եռամյա ժամկետը բաց չի թողել:

Տվյալ դեպքում, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Արմեն Ավագյանն իր իրավունքների ենթադրյալ խախտման մասին իմացել է 15.10.2004 թվականին (որը «Առաջարկություն 12.05.2004 թվականին կնքված համաձայնության վերաբերյալ» փաստաթղթի կազմման օրն է), հետևաբար, հայցային վաղեմության ժամկետն ավարտվել է 16.10.2007 թվականին, այնինչ իր իրավունքների պաշտպանության համար Արմեն Ավագյանը դատարան է դիմել միայն 17.03.2008 թվականին:

Ինչ վերաբերում է Վերաքննիչ դատարանի այն պատճառաբանությանը, որ Դատարանը ոչ իրավաչափորեն սահմանափակել է հայցվորի իրավունքները, քանի որ հաշվի չի առել, որ օրենսդիրը ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 342-րդ հոդվածի ուժով բացառիկ դեպք սահմանել է բացառապես ֆիզիկական անձի համար՝ ելնելով այն նկատառումից, որ տվյալ դեպքում հայցվորը ոչ թե անփութության կամ անտարբերության պատճառով ժամանակին չի դիմել դատական պաշտպանության, այլ առողջական ծանր վիճակի պատճառով, ապա Վճռաբեկ դատարանն այն գնահատում է անհիմն հետևյալ պատճառաբանությամբ.

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 342-րդ հոդվածի համաձայն՝ բացառիկ դեպքերում, երբ դատարանը հայցվորի անձի հետ կապված հանգամանքների (ծանր հիվանդության, անօգնական վիճակի, անգրագիտության և այլն) հաշվառմամբ հարգելի է ճանաչում հայցային վաղեմության ժամկետի բացթողումը, քաղաքացու խախտված իրավունքը ենթակա է պաշտպանության: Հայցային վաղեմության ժամկետի բացթողման պատճառները կարող են ճանաչվել հարգելի, եթե դրանք տեղի են ունեցել հայցային վաղեմության ժամկետի վերջին վեց ամսում, իսկ եթե այդ ժամկետը հավասար է վեց ամսվա կամ պակաս է վեց ամսից՝ վաղեմության ժամկետի ընթացքում:

Վճռաբեկ դատարանն իր՝ նախկինում ընդունած որոշումներում անդրադարձել է նշված նորմի վերլուծությանը և արձանագրել է, որ օրենսդիրը սույն դրույթով դատարանին հնարավորություն է ընձեռել հարգելի ձանաչել հայցային վաղեմության ժամկետի բացթողումը բացառիկ դեպքերում: Ընդ որում, քաղաքացու խախտված իրավունքը ենթակա է պաշտպանության միայն այն հանգամանքների պայմաններում, երբ բացառիկ դեպքը կապված է հայցվորի անձի հետ, այն է՝ հայցվորի ծանր հիվանդությունը, անօգնական վիճակը, անգրագիտությունը և այլն: Հայցային վաղեմության ժամկետի բացթողման պատճառները կարող են ձանաչվել հարգելի, եթե բացթողման պատճառները տեղի են ունեցել հայցային վաղեմության ժամկետի վերջին վեց ամսվա ընթացքում, իսկ եթե հայցային վաղեմության ժամկետը հավասար է վեց ամսվա կամ պակաս է վեց ամսից, ապա վաղեմության ժամկետի ընթացքում (*լրեն Ռազմիկ Դարբինյանի հայցն ընդդեմ Դանիել Ղասաբողյանի՝ 95.000 ԱՄՆ դոլարի բռնագանձման պահանջի մասին գործով Վճռաբեկ դատարանի 02.04.2010 թվականի թիվ ԵԷԳ/0723/02/09 որոշումը*):

Սույն գործի փաստերի համաձայն՝ Արմեն Ավագյանի կողմից 03.12.2010 թվականին ներկայացված՝ բաց թողնված հայցային վաղեմության ժամկետը հարգելի ձանաչելու և վերականգնելու մասին միջնորդությանը կից ներկայացվել է Ռոջեր Ուիլյամս բժշկական հիվանդանոցի կողմից տրված գրությունն այն մասին, որ Արմեն Ավագյանն ընդունվել է Ռոջեր Ուիլյամս բժշկական կենտրոնի շտապօգնության բաժանմունք 2007 թվականի սեպտեմբերի 10-ին և բուժումից հետո հիվանդանոցից դուրս է գրվել 2007 թվականի սեպտեմբերի 18-ին:

Վերը նշվածը հաշվի առնելով՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Վերաքննիչ դատարանը չի գնահատել այն փաստը, որ Արմեն Ավագյանը բժշկական հաստատությունում բուժվել է ընդամենը 8 օր՝ 2007 թվականի սեպտեմբերի 10-ից մինչև 2007 թվականի սեպտեմբերի 18-ը: Ու թեև Արմեն Ավագյանին խորհուրդ է տրվել խուսափել ինտենսիվ ֆիզիկական գործողություններից և ձանմորդությունից, տվյալ դեպքում առկա չէ օրենքով նախատեսված այն բացառիկ դեպքը, այն է՝ **հայցվորի ծանր հիվանդությունը, անօգնական վիճակը, անգրագիտությունը և այլն**, որը բավարար հիմք կհանդիսանար հայցային վաղեմության բաց թողնված ժամկետը հարգելի ձանաչելու և վերականգնելու մասին միջնորդությունը բավարարելու համար, քանի որ Արմեն Ավագյանը զրկված չէր իր իրավունքների ենթադրյալ խախտման հիմքով դիմելու դատարան:

Նման պայմաններում Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ Արմեն Ավագյանը, իր իրավունքների ենթադրյալ խախտման մասին իմացել է 15.10.2004 թվականին (որը «Առաջարկություն 12.05.2004 թվականին կնքված համաձայնության վերաբերյալ» փաստաթղթի կազմման օրն է), իսկ հայցային վաղեմության ժամկետն ավարտվել է 16.10.2007 թվականին, այնինչ իր իրավունքների պաշտպանության համար դատարան է դիմել միայն 17.03.2008 թվականին: Հետևաբար, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 335-րդ հոդվածի 2-րդ կետի հիմքով Արմեն Ավագյանի հայցը ենթակա է մերժման:

2) Հայցային վաղեմություն կիրառելու մասին բողոքի հիմքը հիմնավոր լինելու պայմաններում Վճռաբեկ դատարանը բողոքի երկրորդ հիմքի քննարկմանը չի անդրադարձնում:

Վճռաբեկ բողոքի պատասխանում բերված փաստարկները հերքվում են վերը նշված պատճառաբանություններով:

Այսպիսով, վճռաբեկ բողոքի առաջին հիմքի առկայությունը Վճռաբեկ դատարանը դիտում է բավարար՝ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 227-րդ և 228-րդ հոդվածների ուժով Վերաքննիչ դատարանի որոշումը բեկանելու համար:

Միաժամանակ, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ տվյալ դեպքում անհրաժեշտ է կիրառել ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 240-րդ հոդվածի 1-ին կետի 6-րդ ենթակետով սահմանված՝ առաջին ատյանի դատարանի դատական ակտին օրինական ուժ տալու՝ Վճռաբեկ դատարանի լիազորությունը հետևյալ հիմնավորմամբ.

«Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի ողջամիտ ժամկետում իր գործի քննության իրավունք: Սույն քաղաքացիական գործով վեճի լուծումն էական նշանակություն ունի գործին մասնակցող անձանց համար: Վճռաբեկ դատարանը գտնում է, որ գործը ողջամիտ ժամկետում քննելը հանդիսանում է Կոնվենցիայի նույն հոդվածով ամրագրված անձի արդար դատաքննության իրավունքի տարր, հետևաբար, գործի անհարկի ձգձգումները վտանգ են պարունակում նշված իրավունքի խախտման տեսանկյունից: Տվյալ դեպքում Վճռաբեկ դատարանի կողմից ստորադաս դատարանի դատական ակտին օրինական ուժ տալը բխում է արդարադատության արդյունավետության շահերից, քանի որ սույն գործով վերջնական դատական ակտ կայացնելու համար նոր հանգամանք հաստատելու անհրաժեշտությունը բացակայում է:

Առաջին ատյանի դատարանի դատական ակտին օրինական ուժ տալով՝ Վճռաբեկ դատարանը հիմք է ընդունում սույն որոշման պատճառաբանությունները, ինչպես նաև գործի նոր քննության անհրաժեշտության բացակայությունը:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 240-241²-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

ՈՐՈՇԵՑ

1. Վճռաբեկ բողոքը բավարարել: Բեկանել ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 03.06.2011 թվականի որոշումը և օրինական ուժ տալ Երևանի Աջափնյակ և Դավթաշեն վարչական շրջանների առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի 11.03.2011 թվականի վճռին:

2. Արմեն Ավագյանից հօգուտ Հայաստանի Հանրապետության բռնագանձել 2.097 ԱՄՆ դոլարին համարժեք ՀՀ դրամ՝ որպես վճռաբեկ բողոքի համար վճարման ենթակա և հետաձգված պետական տուրքի գումար:

3. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

*ՆԱԽԱԳԱՀՈՂ՝ ստորագրություն
ԴԱՏԱՎՈՐՆԵՐ՝ ստորագրություններ*

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Պարտավորությունները կատարելը

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական Քաղաքացիական գործ թիվ ԱՎԴՅ/0042/02/10
դատարանի որոշում 2011թ.
Քաղաքացիական գործ թիվ ԱՎԴՅ/0042/02/10
Նախագահող դատավոր՝ Կ. Հակոբյան
Դատավորներ՝ Ս. Սահակյան
Ս. Նազարյան

ՈՐՈՇՈՒՄ

ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քաղաքացիական
և վարչական պալատը (այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

*նախագահությամբ
մասնակցությամբ դատավորներ*

Ե. ԽՈՒՆԴԿԱՐՅԱՆԻ
Ա. ԲԱՐՍԵՂՅԱՆԻ
Վ. ԱԲԵԼՅԱՆԻ
Ս. ԱՆՏՈՆՅԱՆԻ
Վ. ԱՎԱՆԵՍՅԱՆԻ
Մ. ԴՐՄԵՅԱՆԻ
Գ. ՀԱԿՈԲՅԱՆԻ
Է. ՀԱՅՐԻՅԱՆԻ
Տ. ՊԵՏՐՈՍՅԱՆԻ
Ե. ՍՈՂՈՄՈՆՅԱՆԻ

2011 թվականի մարտի 04-ին
դռնբաց դատական նիստում, քննելով Մելիք Ավետյանի վճռաբեկ բողոքը ՀՀ
վերաքննիչ քաղաքացիական դատարանի 02.07.2010 թվականի որոշման դեմ՝ ըստ հայցի
Մելիք Ավետյանի ընդդեմ Անահիտ Ենոքյանի՝ գումար բռնագանձելու պահանջի մասին,

ՊԱՐԶԵՑ

1. Գործի դատավարական նախապատմությունը

Դիմելով դատարան՝ Մելիք Ավետյանը պահանջել է բռնագանձել Անահիտ
Ենոքյանից 1.250.000 ՀՀ դրամ, դրա նկատմամբ կետանցի օրվանից մինչև
01.01.2010 թվականն ընկած ժամանակահատվածի համար հաշվեգրել տոկոսներ ՀՀ
քաղաքացիական օրենսգրքի 411-րդ հոդվածով նախատեսված կարգով, ինչպես նաև
բռնագանձել 300.000 ՀՀ դրամ՝ որպես փաստաբանական ծառայության մատուցման

համար վճարման ենթակա գումար:

ՀՀ Արարատի և Վայոց ձորի մարզերի ընդհանուր իրավասության դատարանի (այսուհետ՝ Դատարան) 26.03.2010 թվականի վճռով հայցը բավարարվել է:

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի (այսուհետ՝ Վերաքննիչ դատարան) 02.07.2010 թվականի որոշմամբ Անահիտ Ենոքյանի վերաքննիչ բողոքը բավարարվել է: Բեկանվել է Դատարանի 26.03.2010 թվականի վճիռը և փոփոխվել է՝ հայցը մերժվել է:

Սույն գործով վճռաբեկ բողոք է ներկայացրել Մելիք Ավետյանը:

Վճռաբեկ բողոքի պատասխան է ներկայացրել Անահիտ Ենոքյանը:

2. Վճռաբեկ բողոքի հիմքերը, փաստարկները և պահանջը

Սույն վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

Վերաքննիչ դատարանը չի կիրառել ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 298-րդ, 345-րդ, 347-րդ, 430-րդ, 447-րդ, 886-րդ հոդվածները, որոնք պետք է կիրառել, սխալ է մեկնարանել ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 877-րդ, 878-րդ հոդվածները, խախտել է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 47-րդ, 48-րդ, 51-րդ, 53-րդ հոդվածները:

Բողոք բերած անձը նշված պնդումը պարձառարանում է հետևյալ փաստարկներով.

Վերաքննիչ դատարանը բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտությամբ չի գնահատել գործում առկա բոլոր ապացույցները:

Վերաքննիչ դատարանը հաշվի չի առել, որ Մելիք Ավետյանի և Անահիտ Ենոքյանի միջև առկա էր առևտրային պարտավորություն, այն է՝ Մելիք Ավետյանը վաճառելու նպատակով Անահիտ Ենոքյանին տրամադրել է հագուստ և կոշիկ, ինչը Անահիտ Ենոքյանի կողմից չի վիճարկվել և ընդունվել է: Հետագայում կատարված հաշվարկի արդյունքում պարզվել է, որ ապրանքների վաճառքից Անահիտ Ենոքյանը պարտք է Մելիք Ավետյանին 1.250.000 ՀՀ դրամ: Այդ հիմքով Անահիտ Ենոքյանը 29.10.2008 թվականին տվել է ստացական-պարտավորագիր, որով պարտավորվել է մինչև 10.11.2008 թվականը Մելիք Ավետյանին տալ 1.250.000 ՀՀ դրամ: Այսինքն՝ Մելիք Ավետյանի և Անահիտ Ենոքյանի միջև առևտրային գործունեությունից ծագած պարտավորությունը փոխարինվել է փոխառության պարտավորությամբ, իսկ պարտավորությունները պետք է կատարվեն պատշաճ:

Վերոգրյալի հիման վրա բողոք բերած անձը պահանջել է բեկանել Վերաքննիչ դատարանի 02.07.2010 թվականի որոշումը և օրինական ուժ տալ Դատարանի 26.03.2010 թվականի վճիռին:

2.1 Վճռաբեկ բողոքի պատասխանի հիմնավորումները

Անահիտ Ենոքյանի և Մելիք Ավետյանի միջև որևէ պայմանագիր չի կնքվել: Հետևաբար, Մելիք Ավետյանի կողմից ներկայացված պարտավորագիրը չի ծագել օրենքով նախատեսված և ոչ մի հիմքից: Այսինքն՝ վճռաբեկ բողոքում նշված փոխառության պայմանագրին վերաբերող նորմերը տվյալ իրավահարաբերության նկատմամբ կիրառելի չեն:

3. Վճռաբեկ բողոքի քննության համար նշանակություն ունեցող փաստերը

Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1. 29.10.2008 թվականի պարտավորագրով Անահիտ Ենոքյանը պարտավորվել է մինչև 07.11.2008 թվականը Մելիք Ավետյանին տալ 1.250.000 ՀՀ դրամ (**գ.թ. 7**):

2. 23.01.2010 թվականին ներկայացրած հայցադիմումի դեմ առարկություններով Անահիտ Ենոքյանն ընդունել է Մելիք Ավետյանի հետ առևտրային հարաբերությունների մեջ լինելու փաստը (**գ.թ. 14-16**):

4. Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը

Քննելով վճռաբեկ բողոքը նշված հիմքի սահմաններում՝ Վճռաբեկ դատարանը գրնում է, որ այն հիմնավոր է հետևյալ պատճառաբանությամբ.

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 47-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ գործով ապացույցներ են նույն օրենսգրքով նախատեսված կարգով ձեռք բերված տեղեկությունները, որոնց հիման վրա դատարանը պարզում է գործին մասնակցող անձանց պահանջները և առարկությունները հիմնավորող, ինչպես նաև վեճի լուծման համար նշանակություն ունեցող այլ հանգամանքների առկայությունը կամ բացակայությունը: Այդ տեղեկությունները հաստատվում են՝ 1. **գրավոր** և իրեղեն **ապացույցներով**, 2. փորձագետների եզրակացություններով, 3. վկաների ցուցմունքներով, 4. գործին մասնակցող անձանց ցուցմունքներով:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 48-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ գործին մասնակցող յուրաքանչյուր անձ պետք է ապացուցի իր վկայակոչած փաստերը:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 51-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ գործի հանգամանքները, որոնք, օրենքի կամ այլ իրավական ակտերի համաձայն, պետք է հաստատվեն միայն որոշակի ապացույցներով, չեն կարող հաստատվել այլ ապացույցներով:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 53-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ դատարանը յուրաքանչյուր ապացույց գնահատում է գործում եղած բոլոր ապացույցների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտության վրա հիմնված ներքին համոզմամբ:

Նշված նորմի վերլուծությունից հետևում է, որ գործի լուծման համար **էական նշանակություն ունեցող փաստի** հաստատված լինելու հարցը դատարանը պարզում է գործում եղած բոլոր ապացույցների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտման վրա հիմնված ներքին համոզմամբ: Ընդ որում, գործին մասնակցող յուրաքանչյուր անձ իր կողմից վկայակոչած փաստերը հիմնավորելու համար պարտավոր է ներկայացնել այդ փաստերը հիմնավորող ապացույցներ:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 347-րդ հոդվածի համաձայն՝ պարտավորությունները պետք է կատարվեն պատշաճ՝ պարտավորության պայմաններին, օրենքին և այլ իրավական ակտերի պահանջներին համապատասխան, իսկ նման պայմանների ու պահանջների բացակայության դեպքում՝ գործարար շրջանառության սովորույթներին կամ սովորաբար ներկայացվող այլ պահանջներին համապատասխան:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 408-րդ հոդվածի համաձայն՝ պարտավորության խախտում է համարվում այն չկատարելը կամ անպատշաճ (կետանցով, ապրանքների, աշխատանքների և ծառայությունների թերություններով կամ պարտավորության բովանդակությամբ որոշվող այլ պայմանների խախտմամբ) կատարելը:

Սույն գործով Դատարանը, հայցի բավարարման հիմքում դնելով ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 296-րդ և 347-րդ հոդվածները, պատճառաբանել է, որ Անահիտ Ենոքյանը 29.10.2008 թվականին կնքել է գրավոր գործարք, որով պարտավորվել է մինչև տվյալ տարվա նոյեմբերի 10-ը Մելիք Ավետյանին տալ 1.250.000 ՀՀ դրամ: Միաժամանակ Դատարանը նշել է, որ պարտավորագրով ստանձնած պարտքը Անահիտ Ենոքյանը չի վերադարձրել, իսկ պարտավորագիր-գործարքն օրենքով սահմանված կարգով չի վիճարկվել: Դատարանը նշել է նաև, որ Անահիտ Ենոքյանը պարտքը վերադարձնելու վերաբերյալ պատճառաբանությունը հիմնավորող որևէ ապացույց չի ներկայացրել:

Վերաքննիչ դատարանը դատական ակտը բեկանելու հիմքում դրել է այն հանգամանքը, որ 29.10.2008 թվականի փաստաթղթի ուսումնասիրությունից պարզ է դառնում, որ դրանով չի հիմնավորվում Մելիք Ավետյանի կողմից Անահիտ Ենոքյանին 1.250.000 ՀՀ դրամ գումար փոխառությամբ տրամադրելու և այդ հիմքով Անահիտ Ենոքյանի կողմից այն հետ վերադարձնելու պարտավորության ստանձնումը: Միաժամանակ Վերաքննիչ դատարանը նշել է, որ կողմերի միջև չկա փոխառություն իրավահարաբերությունը, քանի որ բացակայում է նման իրավահարաբերության ծագման համար հիմք հանդիսացող փաստական կազմը՝ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 877-րդ և 878-րդ հոդվածներով նախատեսված փոխառության գործարքը:

Սույն գործի փաստերի համաձայն՝ 29.10.2008 թվականի պարտավորագրով Անահիտ Ենոքյանը պարտավորվել է մինչև 07.11.2008 թվականը Մելիք Ավետյանին տալ 1.250.000 ՀՀ դրամ: Իսկ 23.01.2010 թվականին ներկայացրած հայցադիմումի դեմ առարկություններով Անահիտ Ենոքյանն ընդունել է Մելիք Ավետյանի հետ առևտրային հարաբերությունների մեջ լինելու փաստը:

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ 29.10.2008 թվականի պարտավորագիրը պարտապանի կողմից ի հավաստումն պարտավորության տրված պարտքային փաստաթուղթ է, որով պարտապանն ընդունում է իր պարտքը պարտատիրոջ հանդեպ:

Հիմք ընդունելով վերոգրյալը և սույն գործի փաստերը համադրելով՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ 29.10.2008 թվականի պարտավորագրով Անահիտ Ենոքյանն ըստ էության ընդունել է իր պարտավորությունը Մելիք Ավետյանի նկատմամբ, որոնք ծագել են առևտրային հարաբերություններից: Այսինքն՝ ստացականի առկայությունը պատասխանողի պարտավորությունը հայցվորի նկատմամբ անվիճելի է դարձնում, իսկ պարտավորության գումարը՝ բռնագանձման ենթակա:

Ինչ վերաբերում է վճռաբեկ բողոքի այն փաստարկներին, որ առևտրային գործունեությունից ծագած պարտավորությունը փոխարինվել է փոխառության պարտավորությամբ, ապա այն անհիմն է հետևյալ պատճառաբանությամբ.

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 430-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ պարտավորությունը դադարում է կողմերի միջև գոյություն ունեցող սկզբնական պարտավորությունը նույն անձանց միջև մեկ այլ պարտավորությամբ փոխարինելու մասին համաձայնությամբ, որը նախատեսում է դրա այլ առարկա կամ կատարման այլ եղանակ (տրացում):

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 886-րդ հոդվածի համաձայն՝ կողմերի համաձայնությամբ **ստուվաձառքից**, գույքի վարձակալությունից կամ այլ **հիմքերից ծագած պարտքը կարող է փոխարինվել փոխառության պարտավորությամբ**: Փոխառության պարտավորությունում պարտքը փոխարինվում է նորացման վերաբերյալ պահանջների պահպանմամբ (հոդված 430) և փոխառության պայմանագիր կնքելու համար նախատեսված ձևով (հոդված 878):

Մինչդեռ, սույն գործով չի հիմնավորվել նորացման վերաբերյալ պահանջների պահպանմամբ և փոխառության պայմանագիր կնքելու համար նախատեսված ձևով կնքված պայմանագրի առկայությունը:

Վճռաբեկ բողոքի պատասխանում բերված փաստարկները մասնակիորեն հերքվում են վերը նշված պատճառաբանություններով:

Այսպիսով, վճռաբեկ բողոքի հիմքի առկայությունը Վճռաբեկ դատարանը դիտում է բավարար՝ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 227-րդ և 228-րդ հոդվածների ուժով Վերաքննիչ դատարանի որոշումը բեկանելու համար:

Միաժամանակ, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ տվյալ դեպքում անհրաժեշտ է կիրառել ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 240-րդ հոդվածի 1-ին կետի 6-րդ ենթակետով սահմանված՝ առաջին ատյանի դատարանի դատական ակտին օրինական ուժ տալու՝ Վճռաբեկ դատարանի լիազորությունը հետևյալ հիմնավորմամբ.

«Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի ողջամիտ ժամկետում իր գործի քննության իրավունք: Սույն քաղաքացիական գործով վեճի լուծումն էական նշանակություն ունի գործին մասնակցող անձանց համար: Վճռաբեկ դատարանը գտնում է, որ գործը ողջամիտ ժամկետում քննելը հանդիսանում է Կոնվենցիայի նույն հոդվածով ամրագրված անձի արդար դատաքննության իրավունքի տարր, հետևաբար, գործի անհարկի ձգձգումները վտանգ են պարունակում նշված իրավունքի խախտման տեսանկյունից: Տվյալ դեպքում Վճռաբեկ դատարանի կողմից ստորադաս դատարանի դատական ակտին օրինական ուժ տալը բխում է արդարադատության արդյունավետության շահերից, քանի որ սույն գործով վերջնական դատական ակտ կայացնելու համար նոր հանգամանք հաստատելու անհրաժեշտությունը բացակայում է:

Առաջին ատյանի դատարանի դատական ակտին օրինական ուժ տալով՝ Վճռաբեկ դատարանը հիմք է ընդունում սույն որոշման պատճառաբանությունները, ինչպես նաև գործի նոր քննության անհրաժեշտության բացակայությունը:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 240-241²-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

ՈՐՈՇԵՑ

1. Վճռաբեկ բողոքը բավարարել: Բեկանել ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 02.07.2010 թվականի որոշումը և օրինական ուժ տալ ՀՀ Արարատի և

Վայոց ձորի մարզերի ընդհանուր իրավասության դատարանի 26.03.2010 թվականի վճռին:

2. Անահիտ Ենոքյանից հոգուտ Մելիք Ավետյանի բռնագանձել 20.000 ՀՀ դրամ՝ որպես վճռաբեկ բողոքի համար վճարված պետական տուրք, իսկ հոգուտ Հայաստանի Հանրապետության՝ 37.500 ՀՀ դրամ՝ որպես վերաքննիչ բողոքի համար վճարման ենթակա և ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 26.05.2010 թվականի որոշմամբ հետաձգված պետական տուրքի գումար:

3. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

*ՆԱԽԱԳԱՀՈՂ՝ ստորագրություն
ԴԱՏԱՎՈՐՆԵՐ՝ ստորագրություններ*

ԵՐԱՇԽԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական Քաղաքացիական գործ թիվ ԵԿԴ/2818/02/09
դատարանի որոշում 2011թ.
Քաղաքացիական գործ թիվ ԵԿԴ/2818/02/09
Նախագահող դատավոր՝ Ն. Տավարացյան
Դատավորներ՝ Ս. Միքայելյան
Դ. Խաչատրյան

ՈՐՈՇՈՒՄ

ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քաղաքացիական
և վարչական պալատը (այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

նախագահությամբ

մասնակցությամբ դատավորներ

Ե. ԽՈՒՆԴԿԱՐՅԱՆԻ

Վ. ԱՎԱՆԵՍՅԱՆԻ

Վ. ԱԲԵԼՅԱՆԻ

Ս. ԱՆՏՈՆՅԱՆԻ

Ա. ԲԱՐՍԵՂՅԱՆԻ

Մ. ԴՐՄԵՅԱՆԻ

Գ. ՀԱԿՈԲՅԱՆԻ

Է. ՀԱՅՐԻՅԱՆԻ

Տ. ՊԵՏՐՈՍՅԱՆԻ

Ե. ՍՈՂՈՍՈՆՅԱՆԻ

2011 թվականի մարտի 04-ին

դռնբաց դատական նիստում, քննելով Արմեն Մկրտչյանի վճռաբեկ բողոքը
ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 06.10.2010 թվականի որոշման դեմ՝ ըստ
հայցի «Արմաս» ՍՊԸ-ի (այսուհետ՝ Ընկերություն) սնանկության գործով կառավարիչ
Ռոբերտ Մարգարյանի (այսուհետ՝ Կառավարիչ) ընդդեմ Արմեն Մկրտչյանի, երրորդ
անձ «Կոնվերս Բանկ» ՓԲԸ-ի (այսուհետ՝ Բանկ)՝ գումարի բռնագանձման պահանջի
մասին,

ՊԱՐԶԵՑ

1. Գործի դատավարական նախապատմությունը

Դիմելով դատարան՝ Կառավարիչը պահանջել է Արմեն Մկրտչյանից հոգուտ
Ընկերության բռնագանձել 3,823,341 ՀՀ դրամ:

Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր
իրավասության դատարանի (այսուհետ՝ Դատարան) 23.02.2010 թվականի վճռով հայցը
բավարարվել է:

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի (այսուհետ՝ Վերաքննիչ դատարան) 06.10.2010 թվականի որոշմամբ Դատարանի 23.02.2010 թվականի վճիռը թողնվել է օրինական ուժի մեջ:

Սույն գործով վճռաբեկ բողոք է ներկայացրել Արմեն Մկրտչյանը:
Վճռաբեկ բողոքի պատասխան չի ներկայացվել:

2. Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը

Վերաքննիչ դատարանը խախտել է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 53-րդ, 219-րդ և 220-րդ հոդվածները, որի արդյունքում չի կիրառել ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 362-րդ և 377-րդ հոդվածները, «Մասնկության մասին» ՀՀ օրենքի 54-րդ հոդվածի 1-ին մասը:

Բողոք բերած անձը նշված պնդումը պատճառաբանում է հետևյալ փաստարկներով.

Վերաքննիչ դատարանը, անփոփոխ թողնելով Դատարանի վճիռը, չի անդրադարձել ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 362-րդ և 377-րդ հոդվածներին, ինչի արդյունքում չի փաստել Արմեն Մկրտչյանի մոտ Ընկերության նկատմամբ 05.11.2007 թվականին Բանկի և Արմեն Մկրտչյանի միջև կնքված թիվ 131615/բ «Սեփականության իրավունքով պատկանող գույքով երաշխավորության մասին» պայմանագրով պարտավորությունների բացակայությունը: Ըստ էության, Վերաքննիչ դատարանն անտեսել է այն փաստը, որ Արմեն Մկրտչյանը հայցվորի հանդեպ որևէ վճարային պարտավորություն չունի, և վերջինիս հանդեպ Ընկերության Կառավարչի պահանջի իրավունքը չի հաստատվել որևէ ապացույցով:

Վերաքննիչ դատարանը, դատական ակտը անփոփոխ թողնելով և չանդրադառնալով վերաքննիչ բողոքի վերոհիշյալ փաստարկներին, ըստ էության, չի տվել իր որոշման փաստական և իրավական հիմնավորումները:

Վերաքննիչ դատարանը չի կիրառել «Մասնկության մասին» ՀՀ օրենքի 54-րդ հոդվածի 1-ին մասը, որը պարտավոր էր կիրառել, քանի որ տվյալ փաստի կապակցությամբ առկա է Վճռաբեկ դատարանի 12.12.2007 թվականի թիվ 3-1536(ՏԴ)2007թ. քաղաքացիական գործով որոշումը:

Վերոգրյալի հիման վրա բողոք բերած անձը պահանջել է բեկանել Վերաքննիչ դատարանի 06.10.2010 թվականի որոշումը և այն փոփոխել՝ հայցը մերժել:

3. Վճռաբեկ բողոքի քննության համար նշանակություն ունեցող փաստերը

Վճռաբեկ բողոքի քննության համար նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

1. Երևանի քաղաքացիական դատարանի 25.08.2008 թվականի վճռով Ընկերությունը ճանաչվել է սնանկ (գ.թ. 9-13):

2. 05.11.2007 թվականին Ընկերության և Բանկի միջև կնքված թիվ 131615 վարկային պայմանագրով Բանկը Ընկերությանն է տրամադրել 5.000.000 ՀՀ դրամ տարեկան 18 տոկոս տոկոսադրույքով (գ.թ. 24-28):

3. 05.11.2007 թվականին Բանկի և Արմեն Մկրտչյանի միջև կնքված թիվ 131615/բ «Սեփականության իրավունքով պատկանող գույքով երաշխավորության մասին» պայմանագրով Արմեն Մկրտչյանը պարտավորվել է սեփականության իրավունքով պատկանող ամբողջ գույքով պատասխանատվություն կրել Բանկի առջև՝ Բանկի և Ընկերության միջև 05.11.2007 թվականին կնքված թիվ 131615 վարկային պայմանագրով

վարկի գումարը, հաշվեգրված տոկոսները և տուժանքը վերադարձնելու պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման համար (գ. թ. 30-31):

4. Վճռարեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը

Քննելով վճռարեկ բողոքը նշված հիմքի սահմաններում՝ Վճռարեկ դատարանը գտնում է, որ այն հիմնավոր է հերկյալ պարձառաբանությամբ.

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 345-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ պարտավորության ուժով մի անձը (պարտապանը) պարտավոր է մեկ այլ անձի (պարտատիրոջ) օգտին կատարել որոշակի գործողություն. այն է՝ վճարել դրամ, հանձնել գույք, կատարել աշխատանք, մատուցել ծառայություն և այլն, կամ ձեռնպահ մնալ որոշակի գործողություն կատարելուց, իսկ պարտատերն իրավունք ունի պարտապանից պահանջել կատարելու իր պարտականությունը:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 347-րդ հոդվածի համաձայն՝ պարտավորությունները պետք է կատարվեն պատշաճ՝ **պարտավորության պայմաններին**, օրենքին և այլ իրավական ակտերի պահանջներին համապատասխան, իսկ նման պայմանների ու պահանջների բացակայության դեպքում՝ գործարար շրջանառության սովորույթներին կամ սովորաբար ներկայացվող այլ պահանջներին համապատասխան:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 362-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ պարտապանների համապարտ պարտականության դեպքում պարտատերն իրավունք ունի, ինչպես բոլոր պարտապաններից համատեղ, այնպես էլ յուրաքանչյուրից պահանջել կատարելու պարտավորությունն ինչպես լրիվ, այնպես էլ պարտքի մի մասով:

Սույն գործի փաստերի համաձայն՝ 05.11.2007 թվականին Ընկերության և Բանկի միջև կնքվել է թիվ 131615 վարկային պայմանագիր, որով Բանկը Ընկերությանն է տրամադրել 5.000.000 ՀՀ դրամ տարեկան 18 տոկոս տոկոսադրույքով, և 05.11.2007 թվականի «Սեփականության իրավունքով պատկանող գույքով երաշխավորության մասին» թիվ 131615/բ պայմանագրով Արմեն Մկրտչյանը պարտավորվել է սեփականության իրավունքով պատկանող ամբողջ գույքով պատասխանատվություն կրել Բանկի առջև՝ Բանկի և Ընկերության միջև 05.11.2007 թվականին կնքված թիվ 131615 վարկային պայմանագրով վարկի գումարը, հաշվեգրված տոկոսները և տուժանքը վերադարձնելու իր պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման համար:

Վերոնշյալ փաստերից հետևում է, որ Արմեն Մկրտչյանի հանդեպ պարտատեր է Բանկը, որին էլ պատկանում է պահանջի իրավունքը, իսկ Ընկերությունը տվյալ պարագայում պարտատեր չէ, հետևաբար Ընկերության կատավարչի պահանջը՝ Արմեն Մկրտչյանից հօգուտ Ընկերության գումար բռնագանձելու մասին անհիմն է:

Վերը նշված պատճառաբանություններից ելնելով՝ Վճռարեկ դատարանը գտնում է, որ ստորադաս դատարանների կողմից ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 362-րդ հոդվածի 1-ին կետը սխալ է մեկնաբանվել և կիրառվել:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 220-րդ հոդվածի 2-րդ կետի 5-րդ ենթակետի համաձայն՝ Վերաքննիչ դատարանի որոշման մեջ պետք է նշվեն գործով պարզված և վերաքննիչ բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը, ինչպես նաև այն օրենքը, Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերը և այլ իրավական ակտերը, որոնցով ղեկավարվել է վերաքննիչ

դատարանը որոշում կայացնելիս:

Վճռաբեկ դատարանն իր որոշումներում բազմիցս անդրադարձել է դատական ակտերի իրավական հիմնավորվածության հարցին (*տես՝ Ռազմիկ Մարությանի հայցն ընդդեմ Սյրեփան և Անահիտ Մարությանների, ՀՀ Կենտրոն նույրական գրասենյակի՝ ժառանգական գույքի ընդունման փաստի ձանձաղման և ըստ օրենքի ժառանգության իրավունքի վկայագիրը մասնակի անվավեր ձանձաղելու պահանջների մասին և Սյրեփան և Անահիտ Մարությանների հակընդդեմ հայցի՝ սեփականության իրավունքով պարկանող բնակելի տան և հողամասի բաժանման պահանջի մասին քաղաքացիական գործով Վճռաբեկ դատարանի 27.03.2008 թվականի թիվ 3-54(ՎԳ) որոշումը*): Ուստի, սույն որոշմամբ աննպատակահարմար է համարում կրկին անդրադառնալ տվյալ իրավական հարցին:

Մինչդեռ, Վերաքննիչ դատարանի որոշման մեջ նշված չեն այն ապացույցները, որոնցով կհիմնավորվեր Կառավարչի՝ 05.11.2007 թվականի «Սեփականության իրավունքով պատկանող գույքով երաշխավորության մասին» թիվ 131615/բ պայմանագրով Արմեն Մկրտչյանից գումար բռնագանձելու պահանջի իրավունքը:

Նման պայմաններում Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Վերաքննիչ դատարանի որոշումը հիմնավոր չէ:

Հիմք ընդունելով վերոգրյալը՝ Վճռաբեկ դատարանը չի անդրադառնում վճռաբեկ բողոքում բերված մյուս փաստարկներին:

Այսպիսով, վերը նշված հիմքի առկայությունը Վճռաբեկ դատարանը դիտում է բավարար՝ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 227-րդ և 228-րդ հոդվածների ուժով Վերաքննիչ դատարանի 06.10.2010 թվականի որոշումը բեկանելու համար:

Միաժամանակ, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ տվյալ դեպքում անհրաժեշտ է կիրառել ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 240-րդ հոդվածի 1-ին կետի 4-րդ ենթակետով սահմանված՝ ստորադաս դատարանի դատական ակտը փոփոխելու Վճռաբեկ դատարանի լիազորությունը հետևյալ հիմնավորմամբ.

ՀՀ Սահմանադրության 19-րդ հոդվածի և «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի (այսուհետ՝ Կոնվենցիա) 6-րդ հոդվածի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի ողջամիտ ժամկետում իր գործի քննության իրավունք: Վճռաբեկ դատարանը գտնում է, որ գործը ողջամիտ ժամկետում քննելը հանդիսանում է ՀՀ Սահմանադրության և Կոնվենցիայի վերը նշված հոդվածով ամրագրված անձի արդար դատաքննության իրավունքի տարր, հետևաբար գործի անհարկի ձգձգումները վտանգ են պարունակում նշված իրավունքի խախտման տեսանկյունից: Տվյալ դեպքում, Վճռաբեկ դատարանի կողմից ստորադաս դատարանի դատական ակտը փոփոխելը բխում է արդարադատության արդյունավետության շահերից: Դատական ակտը փոփոխելիս Վճռաբեկ դատարանը հիմք է ընդունում սույն որոշման պատճառաբանությունները, ինչպես նաև գործի նոր քննության անհրաժեշտության բացակայությունը:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 240-241²-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

ՈՐՈՇԵՑ

1. Վճուարեկ բողոքը բավարարել: Բեկանել ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 06.10.2010 թվականի որոշումը և այն փոփոխել՝ «Արմաս» ՍՊԸ-ի սնանկության գործով կառավարիչ Ռոբերտ Մարգարյանի հայցը մերժել:

2. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

*ՆԱԽԱԳԱՀՈՂ՝ ստորագրություն
ԴԱՏԱՎՈՐՆԵՐ՝ ստորագրություններ*

ՆԱԽԱՎՃԱՐ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական Քաղաքացիական գործ թիվ ԵԱՔԳ/1246/02/09
դատարանի որոշում 2011թ.
Քաղաքացիական գործ թիվ ԵԱՔԳ/1246/02/09
Նախագահող դատավոր՝ Կ. Հակոբյան
Դատավորներ՝ Տ. Սահակյան
Տ. Նազարյան

ՈՐՈՇՈՒՄ

ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քաղաքացիական և վարչական պալատը (այսուհետ՝ վճռաբեկ դատարան)

*նախագահությամբ
մասնակցությամբ դատավորներ*

Ե. ԽՈՒՆԴԿԱՐՅԱՆԻ
Է. ՀԱՅՐԻՅԱՆԻ
Վ. ԱԲԵԼՅԱՆԻ
Ս. ԱՆՏՈՆՅԱՆԻ
Վ. ԱՎԱՆԵՍՅԱՆԻ
Ա. ԲԱՐՍԵՂՅԱՆԻ
Մ. ԴՐՄԵՅԱՆԻ
Գ. ՀԱԿՈԲՅԱՆԻ
Տ. ՊԵՏՐՈՍՅԱՆԻ
Ե. ՍՈՂՈՄՈՆՅԱՆԻ

2011 թվականի մայիսի 27-ին

դոնբաց դատական նիստում, քննելով Հովհաննես և Հրայր Սարաֆյանների վճռաբեկ բողոքը ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 11.03.2010 թվականի որոշման դեմ՝ ըստ Թեյմուր Նազարիի և Արիան Նազարիի հայցի ընդդեմ Հովհաննես և Հրայր Սարաֆյանների՝ գումարի բռնագանձման պահանջի մասին,

ՊԱՐԶԵՑ

1. Գործի դատավարական նախապատմությունը

Դիմելով դատարան՝ Թեյմուր Նազարին պահանջել է վավեր ձանաչել Հրայր Սարաֆյանի հետ կնքված Երևանի Սեպուհի փողոցի թիվ 4 տան առուվաճառքի գործարքը և դրա նկատմամբ ձանաչել սեփականության իրավունքը:

Երևանի Արաբկիր և Քանաքեռ-Զեյթուն համայնքների ընդհանուր իրավասության դատարանի 21.07.2009 թվականի որոշմամբ Հրայր Սարաֆյանը

փոխարինվել է պատշաճ պատասխանող Հովհաննես Սարաֆյանով:

Թեյմուր Նազարին, փոխելով հայցի հիմքը և առարկան, պահանջել է Հովհաննես Սարաֆյանից բռնագանձել 102.000 ԱՄՆ դոլար, որից 85.000 ԱՄՆ դոլարը 16.11.2007 թվականի նախավճարի պայմանագրով վճարված նախավճարը, իսկ 17.000 ԱՄՆ դոլարը ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 411-րդ հոդվածով սահմանված տոկոսները՝ հաշվարկված 16.11.2007 թվականից մինչև 16.08.2009 թվականը:

Երևանի Արաբկիր և Քանաքեռ-Զեյթուն համայնքների ընդհանուր իրավատության դատարանի 21.08.2009 թվականի որոշմամբ սույն քաղաքացիական գործով Արիան Նազարին ձանաչվել է համահայցվոր:

Երևանի Արաբկիր և Քանաքեռ-Զեյթուն համայնքների ընդհանուր իրավատության առաջին ատյանի դատարանի (այսուհետ՝ Դատարան) 15.09.2009 թվականի վճռով հայցը մերժվել է:

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի (այսուհետ՝ Վերաքննիչ դատարան) 11.03.2010 թվականի որոշմամբ Թեյմուր Նազարիի վերաքննիչ բողոքը բավարարվել է, իսկ Արիան Նազարիի վերաքննիչ բողոքը՝ մերժվել: Դատարանի 15.09.2009 թվականի վճիռը բեկանվել է, և այն փոփոխվել է: Որոշվել է՝ «Թեյմուր Նազարիի հայցը բավարարել մասնակի: Հովհաննես Սարաֆյանից հոգուտ Թեյմուր Նազարիի բռնագանձել 85.000 ԱՄՆ դոլար: ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 411-րդ հոդվածով նախատեսված տոկոսների բռնագանձման պահանջի մասով հայցապահանջը մերժել: Հայցն Արիան Նազարիի մասով և Հրայա Սարաֆյանից գումարի բռնագանձման պահանջի մասով մերժել: Թեյմուր Նազարիից և Արիան Նազարիից հոգուտ պետական բյուջեի բռնագանձել 510 ԱՄՆ դոլարին համարժեք ՀՀ դրամ, որպես առաջին ատյանի և Վերաքննիչ դատարաններում վճարման ենթակա պետական տուրքի գումար: Հովհաննես Սարաֆյանից հոգուտ պետական բյուջեի բռնագանձել 4.250 ԱՄՆ դոլարին համարժեք ՀՀ դրամ, որպես առաջին ատյանի և Վերաքննիչ դատարաններում վճարման ենթակա պետական տուրքի գումարը»:

Սույն գործով վճռաբեկ բողոք են ներկայացրել Հովհաննես և Հրայա Սարաֆյանները:

Վճռաբեկ բողոքի պատասխան են ներկայացրել Թեյմուր և Արիան Նազարիները:

2. Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը

Սույն վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

Վերաքննիչ դատարանը խախտել է ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 395-րդ հոդվածի 1-ին և 2-րդ կետերը, 396-րդ հոդվածի 2-րդ կետի 1-ին պարբերությունը, 408-րդ հոդվածը, 436-րդ հոդվածի 1-ին կետը, 445-րդ հոդվածի 1-ին, 2-րդ, 3-րդ, 4-րդ, 6-րդ կետերը, 466-րդ հոդվածի 1-ին կետը, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 219-րդ հոդվածի 1-ին կետը, 221-րդ հոդվածի 1-ին կետի 2-րդ և 4-րդ ենթակետերը:

Բողոք բերած անձինք նշված պնդումը պարզապես են հետևյալ փաստարկներով.

Վերաքննիչ դատարանը բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ չի գնահատել գործում առկա ապացույցները, այն է՝ Հովհաննես Սարաֆյանի և Թեյմուր Նազարիի միջև 16.11.2007 թվականին կնքված նախավճարի պայմանագիրը: Մասնավորապես,

Վերաքննիչ դատարանն անտեսել է այն հանգամանքը, որ Թեյմուր Նազարին պարտավորվել է նշված նախավճարի պայմանագրով նախատեսված ամբողջ գումարը վճարել մինչև 10.02.2008 թվականը: Պայմանագրով ստանձնած պարտավորությունը Թեյմուր Նազարին պատշաճ չի կատարել, որպիսի փաստը հիմք է ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 396-րդ հոդվածի 2-րդ կետի համաձայն նախավճարը հետ չվերադարձնելու համար:

Վերոգրյալի հիման վրա բողոք բերած անձինք պահանջել են բեկանել Վերաքննիչ դատարանի 11.03.2010 թվականի որոշումը, փոփոխել այն և օրինական ուժ տալ Դատարանի 15.09.2009 թվականի վճռին:

2.1. Վճռաբեկ բողոքի պատասխանի հիմնավորումները

Վերաքննիչ դատարանի կողմից որոշումը կայացվել է գործում առկա բոլոր ապացույցների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտության հիման վրա, հետևաբար բերված վճռաբեկ բողոքը ենթակա է մերժման:

3. Վճռաբեկ բողոքի քննության համար նշանակություն ունեցող փաստերը

Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1. 12.03.2007 թվականի նախավճարի պայմանագրով Երևանի Սեպուհի փողոցի թիվ 4 տունը 280.000 ԱՄՆ դոլարով վաճառելու նպատակով Թեյմուր Նազարին որպես առուվաճառքի պայմանագրի կնքման ապացույց և ի ապահովումն դրա կատարման Հովհաննես Սարաֆյանին վճարել է 30.000 ԱՄՆ դոլար (հատոր 1-ին, գ.թ.8):

2. 06.06.2007 թվականի նախավճարի պայմանագրով Երևանի Սեպուհի փողոցի թիվ 4 տունը 310.000 ԱՄՆ դոլարով վաճառելու նպատակով Թեյմուր Նազարին որպես առուվաճառքի պայմանագրի կնքման ապացույց և ի ապահովումն դրա կատարման Հովհաննես Սարաֆյանին վճարել է ևս 40.000 ԱՄՆ դոլար, ընդամենը՝ 70.000 ԱՄՆ դոլար (հատոր 1-ին, գ.թ.7):

3. 16.11.2007 թվականի նախավճարի պայմանագրի համաձայն՝ «Սարաֆյան Հովհաննես Հրայրյաի անձ N AF0325985, այսուհետև վաճառող սեփականության իրավունքով իրեն պատկանող ք. Երևան Սեպուհի N 4 տուն հասցեում գտնվող անշարժ գույքը վաճառում է սեփականության N 2132548 վկայականով, իսկ 1. Գնորդը՝ Նազարի Արիան Թեյմուրի անձ AG0592217 պարտավորվում է գնել տվյալ անշարժ գույքը 370.000 դոլար (երեք հարյուր յոթանասույն հազար ԱՄՆ դոլար): 2. Ի ապացույց առք ու վաճառքի կնքմանը և կատարմանը գնորդը վաճառողին վճարում է որպես նախավճար (բեռ) 85000 \$ դոլար (ութսունհինգ հազար ԱՄՆ դոլար): 3. Գնորդը պարտավորվում է սույն պայմանագրով նախատեսված ժամանակահատվածում պայմանագրային ամբողջ գումարը վճարել առք ու վաճառքի նոտարական պայմանագրի կնքման պահին: 4. Գնորդը պարտավորվում է սույն պայմանագրով նախատեսված ամբողջ գումարը վճարել մինչև 10.02.2008թ.» (հատոր 1-ին, գ.թ.6):

4. Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումները.

Քննելով վճռաբեկ բողոքը նշված հիմքի սահմաններում՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ վճռաբեկ բողոքը հիմնավոր է հեղևյալ պատճառաբանությամբ.

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 347-րդ հոդվածի համաձայն՝

պարտավորությունները պետք է կատարվեն պատշաճ՝ պարտավորության պայմաններին, օրենքին և այլ իրավական ակտերի պահանջներին համապատասխան, իսկ նման պայմանների ու պահանջների բացակայության դեպքում՝ գործարար շրջանառության սովորույթներին կամ սովորաբար ներկայացվող այլ պահանջներին համապատասխան:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 437-րդ հոդվածի 2-րդ և 3-րդ կետերի համաձայն՝ կողմերը կարող են կնքել ինչպես օրենքով կամ այլ իրավական ակտերով նախատեսված, այնպես էլ չնախատեսված պայմանագիր: Կողմերը կարող են կնքել օրենքով կամ այլ իրավական ակտերով նախատեսված մի քանի պայմանագրերի տարրեր պարունակող պայմանագիր (խառը պայմանագիր): Խառը պայմանագրի կողմերի հարաբերությունների նկատմամբ համապատասխան մասերով կիրառվում են այն պայմանագրերի մասին կանոնները, որոնց տարրերը պարունակվում են խառը պայմանագրում, եթե այլ բան չի բխում կողմերի համաձայնությունից կամ խառը պայմանագրի էությունից:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 395-րդ հոդվածի 1-ին և 2-րդ կետերի համաձայն՝ նախավճար է համարվում այն դրամական գումարը, որ պայմանավորվող կողմերից մեկը պայմանագրով հասանելիք վճարների հաշվին տալիս է մյուս կողմին՝ իբրև պայմանագրի կնքման ապացույց և դրա կատարման ապահովում: Նախավճարի մասին համաձայնությունը, անկախ նախավճարի գումարի չափից, պետք է կնքվի գրավոր:

Սույն գործով Վերաքննիչ դատարանը բողոքը բավարարելիս հիմք է ընդունել այն հանգամանքը, որ կողմերի միջև առկա «նախավճարի պայմանագիր» վերտառությամբ գործարքը կհամարվեր նախավճարի պայմանագիր միայն, եթե առկա լիներ հիմնական պարտավորությունը՝ անշարժ գույքի առուվաճառքի պայմանագիրը, և քանի որ այն բացակայում է՝ չի կնքվել, հետևաբար «նախավճարի պայմանագիրը» ևս առոչինչ է, ուստի Թեյմուր Նազարիի կողմից Հովհաննես Սարաֆյանին վճարված 85.000 ԱՄՆ դոլարը ենթակա է վերադարձման Թեյմուր Նազարիին:

Մինչդեռ, Վճռաբեկ դատարանն անհիմն է համարում նախավճարի ինստիտուտի նման մեկնաբանությունը հետևյալ պատճառաբանությամբ.

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 395-րդ հոդվածից հետևում է, որ նախավճարի պայմանագիր կնքելով հաստատվում է հիմնական պայմանագրի կնքված լինելու հանգամանքը՝ կատարելով նաև պայմանագրի կատարման ապահովման գործառույթ:

Այլ է իրավիճակն անշարժ գույքի վերաբերյալ պայմանագրերի դեպքում: Մասնավորապես, անշարժ գույքի առուվաճառքի պայմանագրի դեպքում հիմնական պայմանագիրը կարող է կնքվել միայն օրենքով նախատեսված ձևով և պայմաններով, հետևաբար, նախավճարի պայմանագիրը չի կարող որակվել որպես հիմնական առուվաճառքի պայմանագրի կնքման ապացույց, բացի այդ, անիմաստ է դառնում նաև նախավճարի պայմանագրի կնքումը հիմնական պայմանագրի կնքումից հետո, քանի որ օրենքով նախատեսված ձևով և կարգով կնքված անշարժ գույքի առուվաճառքի պայմանագրի առկայության դեպքում նախավճարի պայմանագրի կնքումն իմաստազրկվում է, քանի որ այն չի ծառայելու նախավճարի ինստիտուտի կարգավորման նպատակներին, այն է՝ ապացուցողական գործառույթին, քանի որ հիմնական պայմանագրի առկայությունն ինքնին դրա կնքման ապացույց է, ինչպես նաև պայմանագրի կատարման ապահովման գործառույթին, քանի որ հենց հիմնական պայմանագիրը բավարար է դրա կատարումն ապահովելու համար: Այսինքն՝ այն

բոլոր դեպքերում, երբ հիմնական պարտավորության ծագումը պայմանավորվում է օրենքով նախատեսված կարգով կնքված պայմանագրի առկայությամբ, այդ դեպքում նախավճարի պայմանագիրն այլևս չի կատարում իր հիմնական գործառնությունները:

Հիմք ընդունելով վերոգրյալը՝ Վճռաբեկ դատարանն անհիմն է համարում Վերաքննիչ դատարանի եզրահանգումն այն մասին, որ «կողմերի միջև առկա «նախավճարի պայմանագիր» վերտառությամբ գործարքը կհամարվեր նախավճարի պայմանագիր միայն, եթե առկա լիներ հիմնական պարտավորությունը՝ անշարժ գույքի առուվաճառքի պայմանագիրը»:

Միաժամանակ, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ անշարժ գույքի դեպքում նախավճարի պայմանագրի տարրեր պարունակող պայմանագիր կարող է կնքվել այն դեպքերում, երբ այն ուղղված է օրենքով նախատեսված կարգով կնքված նախնական պայմանագրի կատարման ապահովմանը՝ նախավճարի պայմանագրի համար օրենքով նախատեսված իրավական հետևանքները նախատեսելով որպես նախնական պայմանագրի չկատարման հետևանք:

Հիմք ընդունելով վերոգրյալը և ուսումնասիրության առարկա դարձնելով սույն գործով կնքված 16.11.2007 թվականի պայմանագիրը՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ այն իր մեջ պարունակում է առուվաճառքի նախնական պայմանագրի տարրեր, ինչպես նաև նախավճարի պայմանագրի որոշակի տարրեր, որոնք ուղղված են նախնական պայմանագրի կատարմանը, այն է՝ հիմնական պայմանագրի կնքմանը: Այսինքն՝ 16.11.2007 թվականի պայմանագիրն ուղղված էր հիմնական առուվաճառքի պայմանագրի կնքմանը, հետևաբար, հիմնական պայմանագրի բացակայությունը չի կարող հիմք հանդիսանալ կողմերի միջև կնքված պայմանագրի անվավերության համար:

Այսպիսով, սույն վճռաբեկ բողոքի հիմքի առկայությունը բավարար է՝ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 227-րդ և 228-րդ հոդվածների ուժով Վերաքննիչ դատարանի որոշումը բեկանելու համար:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 240-241²-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

ՈՐՈՇԵՑ

1. Վճռաբեկ բողոքը բավարարել մասնակիորեն: Բեկանել ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 11.03.2010 թվականի որոշումը և գործն ուղարկել Երևանի Արաբկիր և Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանների առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարան՝ նոր քննության:

2. Վճռաբեկ բողոքի համար սահմանված և հետաձգված պետական տուրքի հարցին անդրադառնալ գործի նոր քննության ժամանակ:

3. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

*ՆԱԽԱԳԱՀՈՂ՝ արտրագրություն
ԴԱՏԱՎՈՐՆԵՐ՝ արտրագրություններ*

ՊԱՅՄԱՆԱԳՐԵՐԻՑ ԾԱԳՈՂ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ապրանքների մատակարարում

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի որոշում	Քաղաքացիական գործ թիվ ԵԷԴ/1452/02/09 2011թ.
Քաղաքացիական գործ թիվ ԵԷԴ/1452/02/09	
Նախագահող դատավոր՝	Ն. Հովսեփյան
Դատավորներ՝	Ա. Մկրտչյան Տ. Սահակյան

ՈՐՈՇՈՒՄ

ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Հայաստանի Հանրապետության վճռարեկ դատարանի քաղաքացիական
և վարչական պալատը (այսուհետ՝ վճռարեկ դատարան)

*նախագահությամբ
մասնակցությամբ դատավորներ*

Ե. ԽՈՒՆԴԿՎԱՐՅԱՆԻ
Մ. ԴՐՄԵՅԱՆԻ
Վ. ԱԲԵԼՅԱՆԻ
Ս. ԱՆՏՈՆՅԱՆԻ
Վ. ԱՎԱՆԵՍՅԱՆԻ
Ա. ԲԱՐՍԵՂՅԱՆԻ
Գ. ՀԱԿՈԲՅԱՆ
Է. ՀԱՅՐԻՅԱՆԻ
Տ. ՊԵՏՐՈՍՅԱՆԻ
Ե. ՍՈՂՈՄՈՆՅԱՆԻ

2011 թվականի մարտի 04-ին

դռնբաց դատական նիստում, քննելով «Գոլդ Օյլ» ՍՊԸ-ի վճռարեկ բողոքը
ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 26.08.2010 թվականի որոշման դեմ՝
ըստ հայցի «Գոլդ Օյլ» ՍՊԸ-ի (այսուհետ՝ Կազմակերպություն) ընդդեմ «Կարդինալ
Ինթերնեյշլ» ՍՊԸ-ի (այսուհետ՝ Ընկերություն)՝ գումարի բռնագանձման պահանջի
մասին,

ՊԱՐԶԵՑ

1. Գործի դատավարական նախապատմությունը

Դիմելով դատարան՝ Կազմակերպությունը պահանջել է Ընկերությունից բռնագանձել 3.937.500 ՀՀ դրամ՝ որպես 15.04.2009 թվականի թիվ 164 հաշիվ-ապրանքագրով Ընկերությանը մատակարարված ապրանքի դիմաց և Կազմակերպության կողմից չվճարված գումարի պարտք, ինչպես նաև այդ գումարի նկատմամբ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 411-րդ հոդվածով նախատեսված տուկոսները՝ 29.08.2009 թվականից մինչև պարտավորության կատարման օրը:

Երևանի Էրեբունի և Նուբարաշեն վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի (այսուհետ՝ Դատարան) 04.06.2010 թվականի վճռով հայցը մերժվել է:

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի (այսուհետ՝ Վերաքննիչ դատարան) 26.08.2010 թվականի որոշմամբ Դատարանի 04.06.2010 թվականի վճիռը թողնվել է օրինական ուժի մեջ:

Սույն գործով վճռաբեկ բողոք է ներկայացրել Կազմակերպությունը:

Վճռաբեկ բողոքի պատասխան չի ներկայացվել:

2. Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը

Սույն վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

Վերաքննիչ դատարանը խախտել է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 48-րդ հոդվածը, 53-րդ հոդվածի 1-ին կետը:

Բողոք բերած անձը նշված պնդումը պարզապես անհիմն է հետևյալ փաստարկներով.

Վերաքննիչ դատարանը, պատճառաբանելով, որ սույն գործով հայցվորը չի կատարել իր դատավարական պարտականությունը, այն է՝ չի ապացուցել այն հանգամանքը, որ պատասխանողին մատակարարել է ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 485-րդ հոդվածով սահմանված պայմանագրին համապատասխան որակի ապրանք, պատասխանողի վկայակոչած ապրանքի անորակ լինելու փաստն ապացուցելու պարտականությունը դրել է հայցվորի վրա: Մինչդեռ, տվյալ դեպքում Վերաքննիչ դատարանը հաշվի չի առել, որ ապրանքն օգտագործման համար ոչ պիտանի լինելու վերաբերյալ փաստն ապացուցելու պարտականությունը կրում էր պատասխանողը և դրանից բխող բացասական հետևանքները պետք է կրեր նույնպես պատասխանող կողմը:

Վերաքննիչ դատարանը հաշվի չի առել այն հանգամանքը, որ հայցվորի կողմից պահպանվել են ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 485-րդ հոդվածի պահանջները, իսկ պատասխանողի կողմից ստորագրվել է 15.04.2009 թվականի հաշիվ-ապրանքագիրը, որի համաձայն՝ վերջինս ընդունել է ապրանքը և այն ընդունելուց հետո վիճարկվող ապրանքի թերությունների վերաբերյալ գրավոր առարկություններ չի ներկայացրել:

Այսինքն՝ Վերաքննիչ դատարանն անտեսել է, որ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 528-րդ հոդվածի ուժով պատասխանողը պարտավոր էր անորակ ապրանքի պայմաններում անհապաղ գրավոր տեղեկացնել հայցվորին, որը պատասխանող կողմը չի կատարել:

Բացի այդ, Վերաքննիչ դատարանը բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ չի հետազոտել գործում առկա ապացույցները: Մասնավորապես, Վերաքննիչ դատարանը հաշվի չի առել, որ ՀՀ ԿԱ ՊԵԿ-ից ձեռք բերված որևէ ապացույց հիմք չէ հաստատված համարելու, որ 28.04.2008 թվականին սերտիֆիկացված ապրանքն արտադրվել է 15.04.2008 թվականից առաջ:

Հետևաբար, Վերաքննիչ դատարանը վերաբերելի ապացույցի բացակայության պայմաններում, այն է՝ առանց արևածաղկի ձեթի արտադրության վերաբերյալ ստույգ տեղեկություն պարունակող փաստաթղթի, հաստատված է համարել, որ արևածաղկի ձեթը պատասխանողին վաճառելու օրվա դրությամբ եղել է մեկ տարվա պիտանիության ժամկետն անցած, այսինքն՝ արտադրվել է 15.03.2008 թվականից առաջ:

Վերոգրյալի հիման վրա բողոք բերած անձը պահանջել է բեկանել Վերաքննիչ դատարանի 26.08.2010 թվականի որոշումը և այն փոփոխել՝ հայցը բավարարել:

3. Վճռաբեկ բողոքի քննության համար նշանակություն ունեցող փաստերը

Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1. 21.02.2009 թվականից մինչև 08.04.2009 թվականը Կազմակերպությունը մատակարարել է «Չատեյա» ապրանքանիշի արևածաղկի ձեթ Ընկերությանը (հատոր 2-րդ, գ.թ. 22-32):

2. 15.04.2009 թվականին թիվ 164 հաշիվ-ապրանքագրով Կազմակերպությունը 3.937.500 ՀՀ դրամ ընդհանուր արժեքով 1լ տարողությամբ 7.500 հատ «Չատեյա» ապրանքանիշի արևածաղկի ձեթ է մատակարարել Ընկերությանը (հատոր 1-ին, գ.թ. 7, հատոր 2-րդ, գ.թ.31):

3. ՀՀ ԿԱ ՊԵԿ-ի նախագահի առաջին տեղակալի 13.05.2010 թվականի թիվ 14586/7-1 գրության համաձայն՝ Կազմակերպության կողմից «Չատեյա» ապրանքանիշի արևածաղկի ձեթ չի ներմուծվել, իսկ «Կրե-Ար» ՀՁ ՍՊԸ-ի (ՀՎՀՀ 00098548) կողմից 15.04.2008-15.04.2009 թվականների ընթացքում՝ ըստ ՊԵԿ-ի համակարգչային տվյալների, «Չատեյա» ապրանքանիշի արևածաղկի ձեթ 26.04.2008 թվականին ներմուծվել է 97.704 կգ, 21.05.2008 թվականին՝ 97.704 կգ և 12.09.2008 թվականին՝ 146.556 կգ (հատոր 1-ին, գ.թ. 97):

4. «Կրե-Ար» ՀՁ ՍՊԸ-ի կողմից 26.04.2008 թվականին ներմուծված խմբաքանակի համար ապրանքի ծագման սերտիֆիկատ է տրվել ՌԴ Ռոստովի մարզի համապատասխան ծառայության կողմից 24.03.2008 թվականին, 21.05.2008 թվականին ներմուծված ապրանքի ծագման սերտիֆիկատ է տրվել 21.04.2008 թվականին, իսկ 12.09.2008 թվականին ներմուծված խմբաքանակի համար ապրանքի ծագման սերտիֆիկատ է տրվել 28.04.2008 թվականին (հատոր 1-ին, գ.թ. 101-102, 109-110, 118-120):

5. Կազմակերպությունը 21.08.2009 թվականի գրությամբ Ընկերությանը հայտնել է, որ 08.04.2009 թվականի N137, 15.04.2009 թվականի N164 հաշիվ-ապրանքագրերով Կազմակերպությունից գնել է արևածաղկի ձեթ՝ 7.837.500 ՀՀ դրամ արժողությամբ և խնդրել սույն գրությունը ստանալուց հետո նշված գումարը փոխանցել յոթօրյա ժամկետում Կազմակերպության հաշվեհամարին: Տվյալ գրությունն Ընկերությանն ուղարկվել է 21.08.2009 թվականին, որը Ընկերությունը ստացել է 24.08.2009 թվականին: Ընկերության կողմից վճարվել է միայն 08.04.2009 թվականի N137 հաշիվ-ապրանքագրով մատակարարված ապրանքը՝ պարտք մնալով 3.937.500 ՀՀ դրամ գումար (հատոր 1-ին, գ.թ. 10, 9, 8):

4. Վճարելի դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումները

Քննելով վճարելի բողոքը վերը նշված հիմքի սահմաններում Վճարելի դատարանը գտնում է, որ այն հիմնավոր է մասնակիորեն հերկյալ պարձառաբանությամբ.

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 470-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ առուվաճառքի պայմանագրով կողմերից մեկը (վաճառողը) պարտավորվում է մյուս կողմին (գնորդին) որպես սեփականություն հանձնել (գույք) ապրանք, իսկ գնորդը պարտավորվում է ընդունել այդ ապրանքը և դրա համար վճարել որոշակի գումար (գինը), իսկ նույն հոդվածի 5-րդ կետի համաձայն՝ սույն պարագրաֆով նախատեսված դրույթները կիրառվում են առուվաճառքի պայմանագրի առանձին տեսակների (մանրածախ առուվաճառք, ապրանքների մատակարարում, ապրանքների մատակարարում պետական կարիքների համար, էներգամատակարարում, անշարժ գույքի վաճառք) նկատմամբ, եթե այլ բան նախատեսված չէ պայմանագրի այդ տեսակների նկատմամբ սույն օրենսգրքի կանոններով:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 470-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ վաճառողը պարտավոր է գնորդին հանձնել առուվաճառքի պայմանագրին համապատասխանող որակի ապրանք:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 521-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ մատակարարման պայմանագրով ձեռնարկատիրական գործունեություն իրականացնող մատակարար-վաճառողը պարտավորվում է իր արտադրած կամ գնած ապրանքները պայմանավորված ժամկետում (ժամկետներում) հանձնել գնորդին՝ ձեռնարկատիրական գործունեություն իրականացնելու կամ անձնական, ընտանեկան, տնային կամ այլ նմանօրինակ օգտագործման հետ չկապված նպատակներով օգտագործելու համար:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 528-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ գնորդը (ստացողը) պարտավոր է կատարել պայմանագրին համապատասխան մատակարարված ապրանքների ընդունումն ապահովող բոլոր անհրաժեշտ գործողությունները:

Նույն հոդվածի 2-րդ կետի համաձայն՝ **գնորդը** (ստացողը) ընդունված **ապրանքները պետք է գննի** օրենքով, այլ իրավական ակտերով, պայմանագրով կամ գործարար շրջանառության սովորույթներով սահմանված ժամկետում: **Գնորդը (ստացողը) պարտավոր է այդ նույն ժամկետում** օրենքով, այլ իրավական ակտերով, պայմանագրով կամ գործարար շրջանառության սովորույթներով սահմանված կարգով **ստուգել ընդունած ապրանքների քանակն ու որակը և հայտնաբերված անհամապատասխանությունների կամ թերությունների մասին անհապաղ գրավոր տեղեկացնել մատակարարին:**

Հիմք ընդունելով վերոգրյալը՝ Վճարելի դատարանը գտնում է, որ սույն գործի լուծման համար էական նշանակություն ունեն գնորդ Ընկերության կողմից ընդունած ապրանքի որակի ստուգման և **մատակարար Կազմակերպությանը հայտնաբերված անհամապատասխանությունների կամ թերությունների մասին անհապաղ գրավոր տեղեկացնելու պարտավորության** կատարման փաստի առկայությունը:

Սույն գործի փաստերից հետևում է, որ Ընկերությունը վիճարկվող ապրանքը 15.04.2009 թվականի թիվ 164 հաշիվ-ապրանքագրով ընդունել է, որից հետո Ընկերությունն օրենքով, այլ իրավական ակտերով, պայմանագրով կամ գործարար շրջանառության սովորույթներով սահմանված ժամկետում ընդունած ապրանքի որակի

վերաբերյալ գրավոր առարկություններ չի ներկայացրել մատակարարին: Բացի այդ, **գործում բացակայում է վիճելի ապրանքի ժամկետանց լինելը հավաստող որևէ ապացույց:**

Մասնավորապես, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 53-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ դատարանը յուրաքանչյուր ապացույց գնահատում է գործում եղած բոլոր ապացույցների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտության վրա հիմնված ներքին համոզմամբ:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 48-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ գործին մասնակցող յուրաքանչյուր անձ պետք է ապացուցի իր վկայակոչած փաստերը:

Նույն հոդվածի 2-րդ կետի համաձայն՝ գործի լուծման համար էական նշանակություն ունեցող ապացուցման ենթակա փաստերը որոշում է դատարանը՝ գործին մասնակցող անձանց պահանջների և առարկությունների հիման վրա, իսկ նույն հոդվածի 6-րդ կետի համաձայն՝ եթե բոլոր ապացույցների հետազոտումից հետո վիճելի է մնում փաստի առկայությունը կամ բացակայությունը, ապա դրա բացասական հետևանքները կրում է այդ փաստի ապացուցման պարտականությունը կրող կողմը:

Վճռաբեկ դատարանն իր՝ նախկինում կայացրած որոշումներում անդրադարձել է կողմերի միջև ապացուցման դատավարական բեռի բաշխման հարցին:

Մասնավորապես, Վճռաբեկ դատարանը նշել է, որ յուրաքանչյուր գործով կողմերի միջև ապացուցման պարտականությունը ճիշտ բաշխելու համար դատարանն առաջին հերթին պետք է պարզի յուրաքանչյուր գործի լուծման համար էական նշանակություն ունեցող փաստերը՝ ելնելով գործին մասնակցող անձանց պահանջներից և առարկություններից: Ընդ որում, գործի լուծման համար էական նշանակություն ունեցող փաստի առկայությունը կամ բացակայությունը վիճելի լինելու դեպքում դրա բացասական հետևանքները կրում է այդ փաստի ապացուցման պարտականությունը կրող կողմը՝ փաստի ապացուցման պարտականությունը կրում է գործին մասնակցող այն անձը, որը վկայակոչել է այդ փաստը: *(տե՛ս Էդգար Մարկոսյան և Չարուհի Գևորգյան ընդդեմ Սեդա Մարգարյանի՝ գրավադրված գույքն արգելանքից հանելու պահանջի մասին, և ըստ հակընդդեմ հայցի Սեդա Մարգարյանի ընդդեմ Էդգար Մարկոսյանի և Չարուհի Գևորգյանի՝ գումարի բռնագանձման և բռնագանձումը գրավի առարկայի վրա փարսաձելու պահանջների մասին Վճռաբեկ դատարանի 13.02.2009 թվականի թիվ ԵԱՆԴ 0479/02/08 որոշումը):*

Սույն գործով Վերաքննիչ դատարանը, դատական ակտը թողնելով օրինական ուժի մեջ և պատճառաբանելով, որ մատակարարված ապրանքը պիտանիության ժամկետի մեջ լինելու փաստի ապացուցման պարտականությունը կրում է հայցվոր կողմը, հանգել է այն հետևության, որ հայցվոր Կազմակերպությունը չի կատարել իր դատավարական պարտականությունը, այն է՝ չի ապացուցել այն հանգամանքը, որ պատասխանողին մատակարարել է ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 485-րդ հոդվածին համապատասխան որակի ապրանք:

Միաժամանակ, Վերաքննիչ դատարանն արձանագրել է, որ 15.04.2009 թվականին թիվ 164 հաշիվ ապրանքագրով պատասխանողին վաճառված (տվյալ դեպքում մատակարարված) «Զատեյա» ապրանքանիշի արևածաղկի ձեթը վաճառելու օրվա դրությամբ եղել է ժամկետանց, քանի որ փաստաթղթերով հիմնավորված է, որ ձեթի համար ապրանքի ծագման սերտիֆիկատը ՌԴ Ռոստովի մարզի համապատասխան գերատեսչության կողմից տրվել է 28.04.2008 թվականին,

հետևաբար տվյալ խմբաքանակի ձեթն արտադրվել և շշայցվել է ավելի վաղ, որից հետո միայն կարող էր հաջորդել ապրանքի ծագման ժամանակը և վայրը հավաստող սերտիֆիկացման գործընթացը և առաքումը Հայաստանի Հանրապետություն:

Մինչդեռ, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ սույն գործով մատակարարված ապրանքի անորակ (տվյալ դեպքում ժամկետանց) լինելու փաստի ապացուցման պարտականությունը կրում է պատասխանող կողմը՝ գնորդ Ընկերությունը: Այսինքն՝ այն կողմը, որի վրա օրենքով սահմանված կարգով դրված է ընդունած ապրանքի որակի ստուգման և **մատակարարին հայտնաբերված թերությունների մասին անհապաղ գրավոր տեղեկացնելու պարտականության** կատարումը:

Ինչ վերաբերում է Վերաքննիչ դատարանի այն պատճառաբանությանը, որ 15.04.2009 թվականին թիվ 164 հաշիվ-ապրանքագրով պատասխանողին մատակարարված ձեթը վաճառելու օրվա դրությամբ եղել է ժամկետանց, քանի որ ապրանքի ծագման սերտիֆիկատը ՌԴ Ռոստովի մարզի համապատասխան գերատեսչության կողմից տրվել է 28.04.2008 թվականին, ուստի տվյալ խմբաքանակի ձեթն արտադրվել և շշայցվել է ավելի վաղ, որից հետո միայն կարող էր հաջորդել ապրանքի ծագման ժամանակը և վայրը հավաստող սերտիֆիկացման գործընթացը և առաքումը Հայաստանի Հանրապետություն, ապա Վճռաբեկ դատարանը գտնում է, որ ապրանքի ծագման սերտիֆիկատը 28.04.2008 թվականին տրված լինելու հանգամանքը բավարար չէ հաստատված համարելու 15.04.2009 թվականին թիվ 164 հաշիվ-ապրանքագրով Կազմակերպության կողմից Ընկերությանը մատակարարված (վաճառված) «Չատեյա» ապրանքանիշի արևածաղկի ձեթի պիտանիության ժամկետն անցած լինելը:

Հիմք ընդունելով վերոգյալը՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ սույն գործում առկա փաստերով չի հիմնավորվել Կազմակերպության կողմից Ընկերությանը մատակարարված վեճի առարկա «Չատեյա» ապրանքանիշի արևածաղկի ձեթի ժամկետանց լինելու փաստը, որի բացասական հետևանքները ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 48-րդ հոդվածի 2-րդ կետի ուժով կրում է այդ փաստի ապացուցման պարտականությունը կրող կողմը, այսինքն՝ Ընկերությունը:

Հիմք ընդունելով վերոգյալը՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ և Դատարանը, և Վերաքննիչ դատարանը սույն գործով չեն իրականացրել բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտության վրա հիմնված քաղաքացիական գործում առկա ապացույցների պատշաճ գնահատում անտեսելով այն հանգամանքը, որ սույն գործում առկա փաստերով չի հիմնավորվել Կազմակերպության կողմից Ընկերությանը մատակարարված՝ վեճի առարկա «Չատեյա» ապրանքանիշի արևածաղկի ձեթի ժամկետանց լինելու փաստը:

Այսպիսով, վերը նշված հիմքի առկայությունը Վճռաբեկ դատարանը դիտում է բավարար՝ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 228-րդ հոդվածի ուժով Վերաքննիչ դատարանի 26.08.2010 թվականի որոշումը բեկանելու համար:

Միաժամանակ, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Կազմակերպության պահանջը՝ Ընկերությունից ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 411-րդ հոդվածով նախատեսված տոկոսները՝ 29.08.2009 թվականից մինչև պարտավորության կատարման օրը բռնագանձելու մասով, պետք է բավարարել մասնակիորեն հետևյալ պատճառաբանությամբ:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 411-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ ուրիշի դրամական միջոցներն ապօրինի պահելու, դրանք վերադարձնելուց խուսափելու, վճարման այլ կետանցով դրանք օգտագործելու, կամ այլ անձի հաշվին անհիմն ստանալու կամ խնայելու դեպքերում այդ գումարին վճարվում են տոկոսներ: Տոկոսները հաշվարկվում են կետանցի օրվանից մինչև պարտավորության դադարման օրը՝ ըստ համապատասխան ժամանակահատվածների համար Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի սահմանած բանկային տոկոսի հաշվարկային դրույքների:

Սույն գործում առկա Կազմակերպության 21.08.2009 թվականի գրությամբ Ընկերությունից պահանջվել է 08.04.2009 թվականի N137, 15.04.2009 թվականի N164 հաշիվ-ապրանքագրերով գնված 7.837.500 ՀՀ դրամ արժողությամբ արևածաղկի ձեթի համար սահմանված գումարը **գրությունը ստանալուց հետո** յոթօրյա ժամկետում փոխանցել Կազմակերպության հաշվեհամարին: Տվյալ գրությունն Ընկերությանն ուղարկվել է 21.08.2009 թվականին, որն Ընկերությունը ստացել է 24.08.2009 թվականին: Ընկերության կողմից վճարվել է միայն 08.04.2009 թվականի N137 հաշիվ-ապրանքագրով մատակարարված ապրանքը՝ պարտք մնալով 3.937.500 ՀՀ դրամ գումար:

Հաշվի առնելով վերը նշվածը՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ Ընկերությունը գումարային պարտավորությունը պետք է կատարեր գրությունը ստանալուց հետո՝ յոթօրյա ժամկետում, այսինքն՝ մինչև 31.08.2009 թվականը: Հետևաբար, Կազմակերպության դրամական միջոցներն Ընկերության կողմից ապօրինի պահվել են ոչ թե 29.08.2009 թվականից, այլ 01.09.2009 թվականից:

Միաժամանակ, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ տվյալ դեպքում անհրաժեշտ է կիրառել ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 240-րդ հոդվածի 1-ին կետի 4-րդ ենթակետով սահմանված՝ ստորադաս դատարանի դատական ակտը փոփոխելու ՀՀ վճռաբեկ դատարանի լիազորությունը հետևյալ հիմնավորմամբ.

ՀՀ Սահմանադրության 19-րդ հոդվածի և «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի (այսուհետ՝ Կոնվենցիայի) 6-րդ հոդվածի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի ողջամիտ ժամկետում իր գործի քննության իրավունք: Վճռաբեկ դատարանը գտնում է, որ գործը ողջամիտ ժամկետում քննելը հանդիսանում է ՀՀ Սահմանադրության և Կոնվենցիայի վերը նշված հոդվածով ամրագրված անձի արդար դատաքննության իրավունքի տարր, հետևաբար, գործի անհարկի ձգձգումները վտանգ են պարունակում նշված իրավունքի խախտման տեսանկյունից: Տվյալ դեպքում, Վճռաբեկ դատարանի կողմից ստորադաս դատարանի դատական ակտը փոփոխելը բխում է արդարադատության արդյունավետության շահերից:

Դատական ակտը փոփոխելիս Վճռաբեկ դատարանը հիմք է ընդունում սույն որոշման պատճառաբանությունները, ինչպես նաև գործի նոր քննության անհրաժեշտության բացակայությունը:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 240-241²-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

ՈՐՈՇԵՑ

1. Վճռաբեկ բողոքը բավարարել մասնակիորեն: Բեկանել ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 26.08.2010 թվականի որոշումը և այն փոփոխել. «Գոլդ Օյլ» ՍՊԸ-ի հայցը բավարարել՝ «Կարդինալ Ինթերնեյշնլ» ՍՊԸ-ից հոգուտ «Գոլդ Օյլ» ՍՊԸ-ի բռնագանձել 3.937.500 ՀՀ դրամ, ինչպես նաև դրա նկատմամբ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 411-րդ հոդվածով նախատեսված տոկոսները՝ 01.09.2009 թվականից մինչև պարտավորության կատարման օրը:

2. «Կարդինալ Ինթերնեյշնլ» ՍՊԸ-ից հոգուտ «Գոլդ Օյլ» ՍՊԸ-ի բռնագանձել 78.750 ՀՀ դրամ՝ որպես հայցադիմումի համար նախապես վճարված պետական տուրք, իսկ հոգուտ Հայաստանի Հանրապետության բռնագանձել 236.250 ՀՀ դրամ՝ որպես վերաքննիչ և վճռաբեկ բողոքների համար նախատեսված պետական տուրքի գումար:

3. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

*ՆԱԽԱԳԱՀՈՂ՝ ստորագրություն
ԴԱՏԱՎՈՐՆԵՐ՝ ստորագրություններ*

ՎԱՐԿ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական Քաղաքացիական գործ թիվ ԵՔԴ/0595/04/08
դատարանի որոշում 2011թ.
Քաղաքացիական գործ թիվ ԵՔԴ/0595/04/08
Նախագահող դատավոր՝ Ն. Հովսեփյան
Դատավորներ՝ Ա. Մկրտչյան
Ն. Բարսեղյան

ՈՐՈՇՈՒՄ

ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Հայաստանի Հանրապետության Վճռաբեկ դատարանի քաղաքացիական
և վարչական պալատը (այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

*Նախագահությամբ
մասնակցությամբ դատավորներ*

Ե. ԽՈՒՆԴԿԱՐՅԱՆԻ
Ե. ՍՈՂՈՍՈՆՅԱՆԻ
Վ. ԱԲԵԼՅԱՆԻ
Ս. ԱՆՏՈՆՅԱՆԻ
Վ. ԱՎԱՆԵՍՅԱՆԻ
Ա. ԲԱՐՍԵՂՅԱՆԻ
Գ. ՀԱԿՈԲՅԱՆԻ
Է. ՀԱՅՐԻՅԱՆԻ
Տ. ՊԵՏՐՈՍՅԱՆԻ

2011 թվականի մայիսի 27-ին
դոնրաց դատական նիստում, քննելով «Լանդրաս» ՍՊԸ-ի (այսուհետ՝
Ընկերություն) նախկին տնօրեն Արթուր Հովհաննիսյանի (այսուհետ՝ Տնօրեն)
վճռաբեկ բողոքը ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 07.05.2010 թվականի
որոշման դեմ՝ ըստ «Արդշինինվեստբանկ» ՓԲԸ-ի (այսուհետ՝ Բանկ) դիմումի ընդդեմ
Ընկերության՝ սնանկ ճանաչելու պահանջի մասին,

ՊԱՐԶԵՑ

1. Գործի դատավարական նախապատմությունը

Դիմելով դատարան՝ Բանկը պահանջել է ճանաչել Ընկերությանը սնանկ:
Երևանի քաղաքացիական դատարանի 28.07.2008 թվականի վճռով դիմումը
բավարարվել է:

Տսօրենը Բանկի ներկայացրած գումարային պահանջի չափի դեմ ներկայացրել է առարկություններ:

Ընկերության պարտատերերի պահանջների վերջնական ցուցակը հաստատելու մասին Երևանի քաղաքացիական դատարանի 23.09.2008 թվականի որոշմամբ Տսօրենի ներկայացրած առարկությունները մերժվել են, և հաստատվել է Ընկերության պարտատերերի պահանջների վերջնական ցուցակն ըստ հետևյալ առաջնահերթության.

«1. Բանկ՝ 374.132,68 ԱՄՆ դոլարին համարժեք ՀՀ դրամ և 34.875.030,80 ՀՀ դրամ՝ ապահովված «ա» հերթ,

2. Բանկ (դատական ծախսեր)՝ 500.000 ՀՀ դրամ՝ չապահովված «դ» հերթ,

3. ՀՀ Կառավարությանն առընթեր հարկային պետական ծառայության Արաբկիրի-1 հարկային տեսչություն՝ 220.465 ՀՀ դրամ՝ չապահովված «է» հերթ»:

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 05.12.2008 թվականի որոշմամբ Ընկերության վերաքննիչ բողոքը մերժվել է, և Երևանի քաղաքացիական դատարանի 23.09.2008 թվականի որոշումը թողնվել է օրինական ուժի մեջ:

Վճռաբեկ դատարանի 17.04.2009 թվականի որոշմամբ Ընկերության վճռաբեկ բողոքը բավարարվել է մասնակիորեն՝ որոշվել է բեկանել ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 05.12.2008 թվականի որոշման՝ Ընկերության նկատմամբ հաշվարկված տույժերի և տուգանքների մասին Բանկի պահանջը վերջնական ցուցակում հաստատելու մասը, և գործն այդ մասով ուղարկել Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ համայնքների ընդհանուր իրավասության դատարան՝ նոր քննության:

Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ համայնքների ընդհանուր իրավասության դատարանի 02.07.2009 թվականի որոշմամբ Բանկի պահանջը՝ Ընկերության նկատմամբ 89.496,3 ԱՄՆ դոլարի և 7.875.030,8 ՀՀ դրամի չափով տուժանքները, համարվել են ոչ օրինական, և դրանց գրանցումը մերժվել է, իսկ Բանկի պահանջն Ընկերության նկատմամբ օրինական է ճանաչվել 284.636,38 ԱՄՆ դոլարի և 27.000.000 ՀՀ դրամի չափով՝ գրանցելով այն որպես ապահովված պահանջ:

Դիմելով դատարան՝ Բանկը պահանջել է գրանցել Ընկերության նկատմամբ 4.406.115,10 ՀՀ դրամի և 54.451,85 ԱՄՆ դոլարին համարժեք ՀՀ դրամի տոկոսագումարի ապահովված պահանջը, ինչպես նաև չապահովված պահանջը՝ նախապես վճարված պետական տուրքի 500.000 ՀՀ դրամի չափով:

Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի (այսուհետ՝ Դատարան) 10.12.2009 թվականի որոշմամբ Ընկերության նկատմամբ տոկոսագումարների գծով Բանկի պահանջը ճանաչվել է օրինական 31.499,30 ԱՄՆ դոլարին համարժեք ՀՀ դրամի և 3.178.405,71 ՀՀ դրամի չափով՝ գրանցելով այն որպես ապահովված պահանջ, իսկ մնացած մասով պահանջի գրանցումը մերժվել է:

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի (այսուհետ՝ Վերաքննիչ դատարան) 07.05.2010 թվականի որոշմամբ Տսօրենի վերաքննիչ բողոքը մերժվել է, և Դատարանի 10.12.2009 թվականի որոշումը թողնվել է օրինական ուժի մեջ:

Մույն գործով վճռաբեկ բողոք է ներկայացրել Տսօրենը:

Վճռաբեկ բողոքի պատասխան է ներկայացրել Բանկը:

2. Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը

Սույն վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

Վերաքննիչ դատարանը չի կիրառել ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 881-րդ հոդվածի 1-ին կետը, որը պետք է կիրառեր:

Բողոք բերած անձը նշված պնդումը պարձառաքանել է հետևյալ փաստարկներով.

Վերաքննիչ դատարանը, անդրադառնալով ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 881-րդ հոդվածի 1-ին կետի կիրառման վերաբերյալ վերաքննիչ բողոքի հիմքին, փոխառության գումարը վերադարձնելու ժամկետի ավարտից հետո պայմանագրով նախատեսված տոկոսների հաշվարկումը համարել է օրինաչափ՝ հիմք ընդունելով նույն օրենսգրքի 411-րդ հոդվածի 1-ին կետի 2-րդ պարբերությունը: Մինչդեռ, Վերաքննիչ դատարանն անտեսել է, որ նշված տոկոսներն առանց որևէ նախապայմանի դադարել են օրենքի ուժով:

Վերաքննիչ դատարանն անտեսել է նաև, որ Բանկի հետ կնքված վարկային պայմանագրերով սահմանված է, որ վարկը վերադարձնելու ժամկետը Վարկատուի (Ընկերության) կողմից խախտելու դեպքում տոկոսները դադարում են, իսկ ժամկետին չվճարված վարկին վճարվում են տոկոսներ՝ տարեկան զգալի տոկոսադրույքով: Այսինքն՝ տվյալ դեպքում վարկը վերադարձնելու ժամկետի խախտման պահից վարկի տոկոսները դադարել են պայմանագրերի ուժով, իսկ դրանցով նախատեսված ավելի մեծ տոկոսադրույքով սահմանված «տոկոսը» ոչ այլ ինչ է, քան պատասխանատվության միջոց, որը չի կարող կիրառվել, քանի որ առկա է անհաղթահարելի ուժ, ինչը հաստատվել է Վճռաբեկ դատարանի որոշմամբ:

Վերոգրյալի հիման վրա բողոք բերած անձը պահանջել է բեկանել Վերաքննիչ դատարանի 07.05.2010 թվականի որոշումը:

2.1. Վճռաբեկ բողոքի պատասխանի փաստարկները

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 881-րդ հոդվածի 1-ին կետը հղում է կատարում նույն օրենսգրքի 411-րդ հոդվածի 1-ին կետին, որը դիսպոզիտիվ նորմ է և թույլ է տալիս պայմանագրով կողմերի համաձայնությամբ սահմանել տոկոսի չափ: Տվյալ դեպքում Ընկերության հետ կնքված վարկային պայմանագրերով նախատեսված է տոկոսի այլ չափ, հետևաբար սույն գործով ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 411-րդ հոդվածի 1-ին կետով սահմանված կարգը կիրառելի չէ:

Ինչ վերաբերում է բողոք բերած անձի այն փաստարկին, որ պայմանագրերով նախատեսված «տոկոսը» ոչ այլ ինչ է, քան պատասխանատվության միջոց, որը չի կարող կիրառվել, քանի որ առկա է անհաղթահարելի ուժ, ապա նշված փաստարկն իրավաչափ չէ, քանի որ անհաղթահարելի ուժի հետևանքով Ընկերությունն ազատվում է պատասխանատվությունից, այլ ոչ թե իր պայմանագրային՝ վարկի գումարը և դրա նկատմամբ հաշվեգրվող սկզբնական տոկոսները վճարելու պարտավորությունից, որը չի կարող համարվել պատասխանատվության միջոց:

3. Վճռաբեկ բողոքի քննության համար նշանակություն ունեցող փաստերը

Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

Սույն գործով Վճռաբեկ դատարանը 17.04.2009 թվականի որոշմամբ հաստատված է համարել հետևյալ հանգամանքները.

1) 22.12.2004 թվականին, 24.12.2004 թվականին, 29.09.2006 թվականին և 28.03.2007 թվականին Բանկի և Ընկերության միջև կնքվել են համապատասխանաբար թիվ 129, թիվ 131, թիվ 78-06, թիվ 11-07 և թիվ 11-07ա գյուղատնտեսական բարեփոխումների աջակցության ծրագրի շրջանակներում իրականացվող վարկային պայմանագրերը, որոնց համաձայն՝ Բանկն Ընկերությանը տրամադրել է վարկ համապատասխանաբար 80.000 ԱՄՆ դոլար՝ 12,5 տոկոս դրույքաչափով չորս տարի մարման ժամկետով, 20.000 ԱՄՆ դոլար՝ 12,5 տոկոս դրույքաչափով չորս տարի մարման ժամկետով, 200.000 ԱՄՆ դոլար՝ 18 տոկոս դրույքաչափով երեք տարի մարման ժամկետով, 75.000 ԱՄՆ դոլար՝ 17 տոկոս դրույքաչափով երեք տարի մարման ժամկետով, 27.000.000 ՀՀ դրամ 17 տոկոս դրույքաչափով երեք տարի մարման ժամկետով:

Թիվ 129 և թիվ 131 վարկային պայմանագրերի 4-րդ բաժինների (պարտավորությունների խախտման համար պատասխանատվություն) 14-րդ կետերով կողմերը սահմանել են, որ Վարկատուն պատասխանատվություն է կրում ՀՀ օրենսդրությամբ և նույն պայմանագրերով ստանձնած պարտավորությունների խախտման համար, թեկուզև դրանք տեղի են ունեցել իր կամքից անկախ պատճառներով (մեղքի բացակայություն): Պայմանագրերի 15-րդ կետերի համաձայն՝ տոկոսի վճարման ժամկետները խախտելու դեպքում Վարկատուն Բանկի պահանջով վերջինիս վճարում է տույժ (հաշվարկը կատարվում է մինչև 271 օր)՝ չվճարված տոկոսի 0,1 տոկոսի չափով յուրաքանչյուր ուշացված օրացուցային օրվա համար: Պայմանագրերի 16-րդ կետերի համաձայն՝ վարկը վերադարձնելու ժամկետը Վարկատուի կողմից խախտելու դեպքում տոկոսը դադարում է, իսկ ժամկետին չվճարված վարկին վճարվում են տոկոսներ (որոնք հաշվարկվում են կետանցի օրվանից մինչև պարտավորության դադարման օրը)՝ տարեկան 28,8 տոկոս դրույքաչափով, որը հավասար է վարկի տրամադրման պահին գործող բանկային տոկոսի և 16x1,8 գործակցի արտադրյալին:

Թիվ 78-06 վարկային պայմանագրի 4-րդ բաժնի (պարտավորությունների խախտման համար պատասխանատվություն) 17-րդ կետով կողմերը սահմանել են, որ Վարկատուն պատասխանատվություն է կրում ՀՀ օրենսդրությամբ և նույն պայմանագրով ստանձնած պարտավորությունների խախտման համար, թեկուզև դրանք տեղի են ունեցել իր կամքից անկախ պատճառներով (մեղքի բացակայություն): Պայմանագրի 18-րդ կետի համաձայն՝ տոկոսի վճարման ժամկետները խախտելու դեպքում Վարկատուն Բանկի պահանջով վերջինիս վճարում է տույժ (հաշվարկը կատարվում է մինչև 271 օր)՝ չվճարված տոկոսի 0,5 տոկոսի չափով յուրաքանչյուր ուշացված օրացուցային օրվա համար: Պայմանագրի 19-րդ կետի համաձայն՝ վարկը վերադարձնելու ժամկետը Վարկատուի կողմից խախտելու դեպքում տոկոսը դադարում է, իսկ ժամկետին չվճարված վարկին վճարվում են տոկոսներ (որոնք հաշվարկվում են կետանցի օրվանից մինչև պարտավորության դադարման օրը)՝ տարեկան 42 տոկոս դրույքաչափով, որը հավասար է վարկի տրամադրման պահին գործող բանկային տոկոսի և 14x3 գործակցի արտադրյալին:

Թիվ 11-07 և թիվ 11-07ա վարկային պայմանագրերի 4-րդ բաժինների (պարտավորությունների խախտման համար պատասխանատվություն) 17-րդ կետերով կողմերը սահմանել են, որ Վարկատուն պատասխանատվություն է կրում ՀՀ օրենսդրությամբ և նույն պայմանագրերով ստանձնած պարտավորությունների

խախտման համար, թեկուզև դրանք տեղի են ունեցել իր կամքից անկախ պատճառներով (մեղքի բացակայություն): Պայմանագրերի 18-րդ կետերի համաձայն՝ տոկոսի վճարման ժամկետները խախտելու դեպքում Վարկառուն Բանկի պահանջով վերջինիս վճարում է տույժ (հաշվարկը կատարվում է մինչև 271 օր)՝ չվճարված տոկոսի 0,5 տոկոսի չափով յուրաքանչյուր ուշացված օրացուցային օրվա համար: Պայմանագրերի 19-րդ կետերի համաձայն՝ վարկը վերադարձնելու ժամկետը Վարկառուի կողմից խախտելու դեպքում տոկոսը դադարում է, իսկ ժամկետին չվճարված վարկին վճարվում են տոկոսներ (որոնք հաշվարկվում են կետանցի օրվանից մինչև պարտավորության դադարման օրը)՝ տարեկան 39 տոկոս դրույքաչափով, որը հավասար է վարկի տրամադրման պահին գործող բանկային տոկոսի և 13x3 գործակցի արտադրյալին (**հատոր 4, գ.թ. 120-122**):

2) Ի սպասարկումն նշված վարկային պայմանագրերի՝ կողմերի միջև կնքվել են համապատասխան գրավի պայմանագրեր:

3) 08.01.2008 թվականին Բանկին հասցեագրված գրությամբ Ընկերությունը, հայտնելով, որ 2007 թվականի նոյեմբերին աֆրիկյան ժանտախտ հիվանդության պատճառով Ընկերությունում ոչնչացվել են ավելի քան 3.000 գլուխ խոզեր, խնդրել է դադարեցնել տոկոսադրույքների հաշվարկումը մինչև համապատասխան մարմինների կողմից հարցի վերջնական լուծումը:

4) Ի սպասարկումն նշված գրության՝ Բանկը 16.01.2008 թվականի թիվ 08/1-0039 գրությամբ Ընկերությանը հայտնել է, որ տոկոսների հաշվարկի դադարեցումը վարկային պայմանագրով նախատեսված չէ, հետևաբար Բանկը չի կարող տոկոսների հաշվարկը դադարեցնել:

5) 08.08.2008 թվականին Բանկը Երևանի քաղաքացիական դատարան է ներկայացրել պահանջ, որով խնդրել է գրանցել Բանկի պահանջը՝ 500.000 ՀՀ դրամ նախապես վճարված պետական տուրքի, ինչպես նաև 374.132,80 ԱՄՆ դոլար և 34.875.030,80 ՀՀ դրամ չկատարված վարկային պարտավորության գումարների չափերով, որից թիվ 129 պայմանագրով՝ 43.177,79 ԱՄՆ դոլար, այդ թվում՝ 36.800 ԱՄՆ դոլար՝ վարկի մնացորդ, 5.903,26 ԱՄՆ դոլար՝ տույժ, 474,53 ԱՄՆ դոլար՝ տուգանք, թիվ 131 պայմանագրով՝ 10.794,43 ԱՄՆ դոլար, այդ թվում՝ 9.200 ԱՄՆ դոլար՝ վարկի մնացորդ, 1.475,81 ԱՄՆ դոլար՝ տույժ, 118,62 ԱՄՆ դոլար՝ տուգանք, թիվ 78-06 պայմանագրով՝ 216.673,73 ԱՄՆ դոլար, այդ թվում՝ 163.636 ԱՄՆ դոլար՝ վարկի մնացորդ, 36.233,63 ԱՄՆ դոլար՝ տույժ, 16.803,14 ԱՄՆ դոլար՝ տուգանք, թիվ 11-07 պայմանագրով՝ 103.487,31 ԱՄՆ դոլար, այդ թվում՝ 75.000 ԱՄՆ դոլար՝ վարկի մնացորդ, 23.093,32 ԱՄՆ դոլար՝ տույժ, 5.393,99 ԱՄՆ դոլար՝ տուգանք, թիվ 11-07ա պայմանագրով՝ 34.875.030,80 ՀՀ դրամ, այդ թվում՝ 27.000.000 ՀՀ դրամ՝ վարկի մնացորդ, 5.298.000,30 ՀՀ դրամ տույժ, 2.577.030,50 ՀՀ դրամ տուգանք:

6) ՀՀ Կառավարության 07.02.2008 թվականի թիվ 84-Ա որոշման համաձայն՝ ՀՀ Կառավարությունը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետությունում 2007 թվականին արձանագրված խոզերի աֆրիկական ժանտախտ հիվանդության հետևանքով անկաժ և հարկադիր սպանդի ենթարկված կենդանիների սեփականատերերին օժանդակություն ցույց տալու անհրաժեշտությունը, որոշել է նշված սեփականատերերին տրամադրվող օժանդակության գումարի չափը:

7) ՀՀ գյուղատնտեսության նախարարության 10.07.2008 թվականի գրության համաձայն՝ Ընկերությանը հայտնվել է, որ Հայաստանի Հանրապետությունում աֆրիկյան ժանտախտ հիվանդությունից անկաժ և հարկադիր սպանդի ենթարկված

խոզերի սեփականատերերին (որոնց կրած վնասի դիմաց դեռևս օժանդակություն չի տրամադրվել), այդ թվում Ընկերությանն օժանդակություն տրամադրելու հարցը ՀՀ գյուղատնտեսության նախարարի 20.06.2008 թվականի թիվ 04-ԱԳ-14-1687 գրություն-առաջարկությամբ ներկայացվել է անասնահամաձարակների հետևանքով անկած և հարկադիր սպանդի ենթարկված գյուղատնտեսական կենդանիների սեփականատերերին ցուցաբերվող օժանդակության կազմակերպման ազգային հանձնաժողովի քննարկմանը:

8) 10.08.2009 թվականին Բանկը Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ համայնքների ընդհանուր իրավասության դատարան է ներկայացրել նոր պահանջ, որով խնդրել է գրանցել Բանկի ապահովված պահանջը՝ 4.406.115,10 ՀՀ դրամ և 54.451,85 ԱՄՆ դոլարին համարժեք ՀՀ դրամ տոկոսագումարի չափով, ինչպես նաև չապահովված պահանջը՝ նախապես վճարված պետական տուրքի 500.000 ՀՀ դրամի չափով (**հատոր 6, գ.թ. 79-82**):

4. Վճարելի դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումները

Քննելով վճարելի բողոքը նշված հիմքի սահմաններում՝ Վճարելի դատարանը գրնում է, որ այն հիմնավոր է հետևյալ պարձառաբանությամբ.

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 369-րդ հոդվածի 3-րդ կետի համաձայն՝ պարտատերն իրավունք չունի պահանջել վճարելու տուժանք, եթե պարտապանը պատասխանատվություն չի կրում պարտավորությունը չկատարելու կամ անպատշաճ կատարելու համար:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 417-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ պարտապանը պարտավորությունը չկատարելու և (կամ) անպատշաճ կատարելու համար պատասխանատու է մեղքի առկայության դեպքում, եթե այլ բան նախատեսված չէ օրենքով կամ պայմանագրով:

Պարտապանը ճանաչվում է անմեղ, եթե ապացուցում է, որ ինքը պարտավորությունը պատշաճ կատարելու համար ձեռնարկել է իրենից կախված բոլոր միջոցները:

Նույն հոդվածի 3-րդ կետի համաձայն՝ ձեռնարկատիրական գործունեություն իրականացնելիս պարտավորությունը չկատարած կամ անպատշաճ կատարած անձը պատասխանատվություն է կրում, եթե չապացուցի, որ պատշաճ կատարումն անհնար է եղել անհաղթահարելի ուժի, այսինքն՝ տվյալ պայմաններում արտակարգ և անկանխելի հանգամանքների հետևանքով, եթե այլ բան նախատեսված չէ օրենքով կամ պայմանագրով:

Սույն գործով Վճարելի դատարանը 17.04.2009 թվականի որոշմամբ արդեն իսկ արտահայտել է հետևյալ իրավական դիրքորոշումը. «Վերը նշված նորմերի վերլուծությունից հետևում է, որ օրենսդիրը, որպես պարտավորությունը խախտելու համար պատասխանատվության պարտադիր պայման, սահմանել է պարտավորությունը խախտած անձի մեղքի առկայությունը: Նույն հոդվածի 3-րդ կետով նախատեսվել է մեղքի բացակայության պարագայում պարտավորությունը խախտած անձի պատասխանատվությունը, եթե պարտավորությունը բխում է ձեռնարկատիրական գործունեության իրականացումից: Ընդ որում, ձեռնարկատիրական գործունեություն իրականացնելիս պարտավորությունը չկատարած կամ անպատշաճ կատարած անձը ենթակա չէ պատասխանատվության միայն այն դեպքում, եթե ապացուցի, որ պատշաճ կատարումն անհնար է եղել անհաղթահարելի ուժի, այսինքն՝

տվյալ պայմաններում արտակարգ և անկանխելի հանգամանքների հետևանքով: Այդ կանոնը կիրառելի չէ, եթե օրենքով կամ պայմանագրով նախատեսվել է նույնիսկ անհատաշահարելի ուժի առկայության պայմաններում պարտավորությունը չկատարած կամ անպատշաճ կատարած անձի պատասխանատվություն կրելու հանգամանքը»:

Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ «սույն գործի փաստերի համաձայն՝ Բանկի և Ընկերության միջև կնքվել են վարկային պայմանագրեր, որոնցով սահմանվել է, որ «Վարկատուն պատասխանատվություն է կրում ՀՀ օրենսդրությամբ և սույն պայմանագրով ստանձնած պարտավորությունների խախտման համար, թեկուզև դրանք տեղի են ունեցել իր կամքից անկախ պատճառներով (մեղքի բացակայություն)», սակայն նշված պայմանագրերով կողմերը չեն սահմանել անհատաշահարելի ուժի պարագայում պատասխանատվություն չկրելու հանգամանքը բացառող դրույթներ»:

Նման պայմաններում Վճռաբեկ դատարանը գտել է, որ «պայմանագրով այլ բան նախատեսված չլինելու իրավիճակում անհատաշահարելի ուժի առկայության դեպքում ձեռնարկատիրական գործունեություն իրականացնելիս պարտավորությունը չկատարած կամ անպատշաճ կատարած անձը ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 417-րդ հոդվածի 3-րդ կետի հիմքով ենթակա չէ պատասխանատվության»:

Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ «սույն գործի փաստերի համաձայն՝ Ընկերության կողմից վարկային պարտավորությունների պատշաճ կատարումն անհնար է եղել անհատաշահարելի ուժի հետևանքով, այն է՝ 2007 թվականի նոյեմբերին Հայաստանի Հանրապետությունում արձանագրված խոզերի աֆրիկյան ժանտախտ հիվանդության հետևանքով Ընկերության 3.000 գլուխ խոզերի ոչնչացման պատճառով: Վերոնշյալ հանգամանքները հաստատվում են ՀՀ Կառավարության 07.02.2008 թվականի թիվ 84-Ա որոշմամբ, Ընկերության տնօրեն Արթուր Հովհաննիսյանին հասցեագրված ՀՀ գյուղատնտեսության նախարարության 10.07.2008 թվականի գրությամբ, Բանկին հասցեագրված Ընկերության 08.01.2008 թվականի գրությամբ»:

Արդյունքում Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ «Վերաքննիչ դատարանի կողմից պատշաճ գնահատման առարկա չեն դարձվել Բանկի և Ընկերության միջև 22.12.2004 թվականին, 24.12.2004 թվականին, 29.09.2006 թվականին և 28.03.2007 թվականին կնքված համապատասխանաբար թիվ 129, 131, 78-06, 11-07 և 11-07ա գյուղատնտեսական բարեփոխումների աջակցության ծրագրի շրջանակներում իրականացվող վարկային պայմանագրերը (մասնավորապես՝ դրանց 4-րդ բաժինները), ՀՀ Կառավարության 07.02.2008 թվականի թիվ 84-Ա որոշումը, Ընկերության տնօրեն Արթուր Հովհաննիսյանին հասցեագրված ՀՀ գյուղատնտեսության նախարարության 10.07.2008 թվականի գրությունը, Բանկին հասցեագրված Ընկերության 08.01.2008 թվականի գրությունը, որոնց բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտման դեպքում Վերաքննիչ դատարանը կհանգեր հետևության այն մասին, որ Ընկերության կողմից վարկային պարտավորությունների պատշաճ կատարումն անհնարին է եղել անհատաշահարելի ուժի հետևանքով, որպիսի պարագայում Ընկերությունը չի կարող պատասխանատվություն կրել, ուստի և պարտատիրոջը վճարել վարկային պայմանագրի հիմքով հաշվարկված տուժանքները»:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 411-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ **ուրիշի դրամական միջոցներն ապօրինի պահելու, դրանք վերադարձնելուց խուսափելու, վճարման այլ կետանցով դրանք օգտագործելու, կամ այլ անձի հաշվին անհիմն ստանալու կամ խնայելու դեպքերում այդ գումարին վճարվում են տոկոսներ:**

Տոկոսները հաշվարկվում են կետանցի օրվանից մինչև պարտավորության դադարման օրը՝ ըստ համապատասխան ժամանակահատվածների համար Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի սահմանած բանկային տոկոսի հաշվարկային դրույքների:

Նույն կետով նախատեսված կարգը գործում է, եթե **վնասի հատուցման կամ տոկոսի այլ չափ նախատեսված չէ օրենքով կամ պայմանագրով**: Եթե օրենքով կամ պայմանագրով վնասի հատուցման կամ տոկոսի այլ չափ նախատեսված է որոշակի ժամանակահատվածի համար, ապա նույն կետով նախատեսված կարգը չի գործում միայն տվյալ ժամանակահատվածում:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 881-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ եթե փոխառուն սահմանված ժամկետում չի վերադարձնում փոխառության գումարը, ապա փոխառության պայմանագրով նախատեսված տոկոսները դադարում են, իսկ այդ գումարին ենթակա են վճարման միայն **նույն օրենսգրքի 411 հոդվածի 1-ին կետով նախատեսված չափով տոկոսներ**, սկսած այն օրվանից, երբ գումարը պետք է վերադարձվեր մինչև գումարը փոխատուին վերադարձնելու օրը:

Փոխառության պայմանագրում այլ պայմաններով տոկոսներ վճարելու վերաբերյալ համաձայնությունն առչինչ է:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 887-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ վարկային պայմանագրով բանկը կամ այլ վարկային կազմակերպությունը (վարկատուն) պարտավորվում է պայմանագրով նախատեսված չափերով և պայմաններով դրամական միջոցներ (վարկ) տրամադրել փոխառուին, իսկ փոխառուն պարտավորվում է վերադարձնել ստացված գումարը և տոկոսներ վճարել դրանից:

Նույն հոդվածի 2-րդ կետի համաձայն՝ վարկային պայմանագրից բխող հարաբերությունների նկատմամբ կիրառվում են նույն օրենսգրքի 46 գլխում նախատեսված կանոնները, եթե այլ բան նախատեսված չէ նույն գլխի կանոններով և վարկային պայմանագրով:

Նշված իրավանորմերից հետևում է, որ վարկային պայմանագրից բխող հարաբերությունների նկատմամբ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի՝ փոխառությանը վերաբերող 46-րդ գլխում նախատեսված կանոնները չեն կիրառվում, **եթե կողմերն այլ կանոններ են սահմանել վարկային պայմանագրով**, և որոնք չեն հակասում վարկային հարաբերությունները կարգավորող նորմերի պահանջներին: Ընդ որում, օրենսդիրը, ելնելով ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 3-րդ և 437-րդ հոդվածներում ամրագրված պայմանագրի ազատության սկզբունքից, կողմերին հնարավորություն է տալիս պայմանները որոշել իրենց հայեցողությամբ, բացառությամբ այն դեպքի, երբ համապատասխան պայմանի բովանդակությունը սահմանված է ՀՀ քաղաքացիական օրենսգրքի՝ վարկին վերաբերող 47-րդ գլխի իմպերատիվ նորմերով (*ըստ «ՎՏԲ-Հայաստան բանկ» ՓԲԸ-ի Եղեգնաձորի մասնաձյուղի հայցի ընդդեմ Արթուր Մարգարյանի, Արտակ Հարությունյանի և երրորդ անձինք Արտաշ Արտաշյանի, Սուսաննա Մյրեհանյանի և Նելլի Արտաշյանի՝ 2.417.218,7 ՀՀ դրամ վարկի ընդհանուր պարտքի և 48.400 ՀՀ դրամ վճարված պետական փութի գումարների բռնագանձման պահանջի մասին քաղաքացիական գործով Վճուրեկ դատարանի 24.07.2009 թվականի թիվ ԱՎԴ4/0145/02/08 որոշումը*):

Սույն գործով Վերաքննիչ դատարանը վերաքննիչ բողոքը մերժելու հիմքում դրել է այն հիմնավորումները, որ տվյալ դեպքում ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 411-րդ հոդվածի 1-ին կետի 2-րդ պարբերության ուժով նույն կետի 1-ին

պարբերությամբ նախատեսված կարգը կիրառելի չէ, այլ կիրառելի են կողմերի միջև կնքված պայմանագրերով նախատեսված տոկոսադրույքները, անհաղթահարելի ուժի հետևանքով Ընկերությունն ազատված է պատասխանատվությունից և ոչ թե իր պայմանագրային՝ վարկի գումարը և դրա նկատմամբ հաշվեգրվող սկզբնական տոկոսները վճարելու պարտավորությունից, որը նշված օրենսգրքի կանոնակարգումների համաձայն՝ չի կարող պատասխանատվության միջոց համարվել:

Հիմք ընդունելով վերոգրյալը՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ հիմնավոր է Վերաքննիչ դատարանի եզրահանգումն այն մասին, որ սույն գործով կիրառելի են կողմերի միջև կնքված պայմանագրերով նախատեսված տոկոսադրույքները:

Միաժամանակ, ինչ վերաբերում է Վերաքննիչ դատարանի եզրահանգմանն այն մասին, որ անհաղթահարելի ուժի հետևանքով Ընկերությունն ազատված է պատասխանատվությունից և ոչ թե իր պայմանագրային՝ վարկի գումարը և դրա նկատմամբ հաշվեգրվող սկզբնական տոկոսները վճարելու պարտավորությունից, որը նշված օրենսգրքի կանոնակարգումների համաձայն՝ չի կարող պատասխանատվության միջոց համարվել, գուրկ է որևէ իրավական հիմնավորումից հետևյալ պատճառաբանությամբ.

Մասնավորապես՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 411-րդ հոդվածի 1-ին կետը կարգավորում է դրամական պարտավորությունները չկատարելու դեպքում առաջացող **պատասխանատվության** միջոցների կիրառման հետ կապված հարաբերությունները, իսկ նույն հոդվածի նույն կետի 2-րդ պարբերությունը վերաբերում է այն դեպքերին, երբ օրենքով կամ պայմանագրով նախատեսվում է վնասի հատուցման կամ տոկոսի այլ չափ (նույն կետի 1-ին պարբերությամբ սահմանված չափից տարբերվող), որը նույնպես պատասխանատվության միջոց է: Այսինքն՝ տվյալ դեպքում տուժանքի տեսքով լրացուցիչ պարտավորությունը ծագել է հիմնական պարտավորության չկատարման հետևանքով, և իրենից ներկայացնում է պատասխանատվության միջոց անկախ այն հանգամանքից, թե այն նախատեսված է օրենքով, թե պայմանագրով:

Բացի այդ, Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ կողմերը հենց իրենց միջև կնքված վարկային պայմանագրերով վարկը վերադարձնելու ժամկետը խախտելու համար «պայմանագրի պարտավորությունների խախտման համար պատասխանատվություն» բաժնում նախատեսել են պատասխանատվության միջոց տոկոսների ձևով: Այսպես, թիվ 129 և թիվ 131 վարկային պայմանագրերի 16-րդ կետերով սահմանվել է, որ վարկը վերադարձնելու ժամկետը Վարկառուի կողմից խախտելու դեպքում **տոկոսը դադարում է**, և որպես պատասխանատվության միջոց ժամկետին չվճարված վարկին վճարվում են տոկոսներ (որոնք հաշվարկվում են կետանցի օրվանից մինչև պարտավորության դադարման օրը)՝ տարեկան 28,8 տոկոս դրույքաչափով, որը հավասար է վարկի տրամադրման պահին գործող բանկային տոկոսի և 16x1,8 գործակցի արտադրյալին, թիվ 78-06 վարկային պայմանագրի 19-րդ կետով սահմանվել է, որ վարկը վերադարձնելու ժամկետը Վարկառուի կողմից խախտելու դեպքում **տոկոսը դադարում է**, և որպես պատասխանատվության միջոց ժամկետին չվճարված վարկին վճարվում են տոկոսներ (որոնք հաշվարկվում են կետանցի օրվանից մինչև պարտավորության դադարման օրը)՝ տարեկան 42 տոկոս դրույքաչափով, որը հավասար է վարկի տրամադրման պահին գործող բանկային տոկոսի և 14x3 գործակցի արտադրյալին, իսկ թիվ 11-07 և թիվ 11-07ա վարկային պայմանագրերի 19-րդ կետերով սահմանվել է, որ վարկը վերադարձնելու

ժամկետը Վարկառուի կողմից խախտելու դեպքում **տոկոսը դադարում է**, և որպես պատասխանատվության միջոց ժամկետին չվճարված վարկին վճարվում են տոկոսներ (որոնք հաշվարկվում են կետանցի օրվանից մինչև պարտավորության դադարման օրը)՝ տարեկան 39 տոկոս դրույքաչափով, որը հավասար է վարկի տրամադրման պահին գործող բանկային տոկոսի և 13x3 գործակցի արտադրյալին:

Նշված պարձառաքանություններով հերքվում են վճարել բողոքի պարասխանով ներկայացված փաստարկները:

Այսպիսով, սույն վճարել բողոքի հիմքի առկայությունը Վճարել դատարանը համարում է բավարար՝ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 227-րդ հոդվածի ուժով Վերաքննիչ դատարանի որոշումը բեկանելու համար:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 240-241²-րդ հոդվածներով՝ Վճարել դատարանը

ՈՐՈՇԵՑ

1. Վճարել բողոքը բավարարել: Բեկանել ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 07.05.2010 թվականի որոշումը և գործն ուղարկել Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ստյանի դատարան՝ նոր քննության:

2. Դատական ծախսերի բաշխման հարցին անդրադառնալ գործի նոր քննության ընթացքում:

3. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

*ՆԱԽԱԳԱՀՈՂ՝ արտրագրություն
ԴԱՏԱՎՈՐՆԵՐ՝ արտրագրություններ*

ԱՊԱՀՈՎԱԳԻՐՈՒԹՅՈՒՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

ՀՀ Վերաքննիչ քաղաքացիական
դատարանի որոշում

Քաղաքացիական գործ թիվ ԵԿԴ/1462/02/09
2011թ.

Քաղաքացիական գործ թիվ ԵԿԴ/1462/02/09

Նախագահող դատավոր՝ Կ.Հակոբյան

Դատավորներ՝ Տ.Սահակյան

Տ.Նազարյան

ՈՐՈՇՈՒՄ

ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քաղաքացիական
և վարչական պալատը (այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

նախագահությամբ

մասնակցությամբ դատավորներ

Ե. ԽՈՒՆԴԿԱՐՅԱՆԻ

Մ. ԴՐՄԵՅԱՆԻ

Վ. ԱԲԵԼՅԱՆԻ

Վ. ԱՎԱՆԵՍՅԱՆԻ

Ա. ԲԱՐՍԵՂՅԱՆԻ

Գ. ՀԱԿՈԲՅԱՆԻ

Տ. ՊԵՏՐՈՍՅԱՆԻ

Ե. ՍՈՂՈՍՈՆՅԱՆԻ

2011 թվականի հուլիսի 01-ին

դռնբաց դատական նիստում, քննելով «ՌԱՄԿՈ» ապահովագրական
սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության (այսուհետ՝ Ընկերություն)
վճռաբեկ բողոքը ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 02.07.2010 թվականի
որոշման դեմ՝ ըստ հայցի Արման Մինասյանի և Սուսաննա Բաղյանի ընդդեմ
Ընկերության՝ գումարի բռնագանձման պահանջի մասին,

ՊԱՐԶԵՑ

1. Գործի դատավարական նախապատմությունը

Դիմելով դատարան՝ Արման Մինասյանը և Սուսաննա Բաղյանը պահանջել են
Ընկերությունից բռնագանձել 4.240.340 ՀՀ դրամ:

Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր
իրավատության դատարանի (այսուհետ՝ Դատարան) 19.02.2010 թվականի վճռով
հայցը բավարարվել է մասնակիորեն՝ Ընկերությունից հոգուտ Արման Մինասյանի և
Սուսաննա Բաղյանի բռնագանձվել է 2.542.000 ՀՀ դրամ՝ որպես ապահովագրական

վճարի հատուցման, 500.000 ՀՀ դրամ որպես փաստաբանական ծառայության վարձատրության և 50.840 ՀՀ դրամ որպես հայցվորների կողմից նախապես վճարված պետական տուրքի գումարներ:

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի (այսուհետ՝ Վերաքննիչ դատարան) 02.07.2010 թվականի որոշմամբ Ընկերության վերաքննիչ բողոքը մերժվել է, իսկ Արման Մինասյանի և Մուսաննա Բաղյանի վերաքննիչ բողոքը բավարարվել է մասնակիորեն՝ Դատարանի 19.02.2010 թվականի վճիռը՝ ապահովագրական վճարի հատուցման մասով բեկանվել է, և այդ մասով գործն ուղարկվել է նոր քննության:

Սույն գործով վճռաբեկ բողոք է ներկայացրել Ընկերությունը:

Վճռաբեկ բողոքի պատասխան են ներկայացրել Արման Մինասյանը և Մուսաննա Բաղյանը:

2. Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը

Սույն վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

Վերաքննիչ դատարանը խախտել է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 53-րդ հոդվածը, ապահովագրական վկայագրի հավելված հանդիսացող կանոնների 9.1 կետը, սխալ է մեկնաբանել «Ճանապարհային երթևեկության անվրանգության ապահովման մասին» ՀՀ օրենքի 24-րդ հոդվածի 6-րդ կետի «ա» ենթակետը, չի կիրառել «Ճանապարհային երթևեկության անվրանգության ապահովման մասին» ՀՀ օրենքի 27-րդ հոդվածը, որը պետք է կիրառեր և կիրառել է ՀՀ կառավարության 18.09.2008 թվականի թիվ 1158-Ն որոշումը, որը չպետք է կիրառեր:

Բողոք բերած անձը նշված պնդումը պարզապես անհիմն է հետևյալ փաստարկներով.

Վերաքննիչ դատարանն օբյեկտիվ գնահատականի չի արժանացրել այն հանգամանքը, որ, տեղի ունեցած պատահարի արդյունքում պատճառված վնասի ապահովագրական հատուցումն Ընկերության կողմից մերժվել է վարորդի համապատասխան կարգի վարորդական իրավունք չունենալու՝ առանց օրինական հիմքի տրանսպորտային միջոցը շահագործելու հիմքով:

Վերաքննիչ դատարանը հաշվի չի առել ՀՀ ճանապարհային ոստիկանության հետաքննության բաժանմունքի պետ Ա. Մադաթյանի կողմից հաստատված 16.01.2009 թվականի եզրակացությունը, համաձայն որի՝ Արման Մինասյանը թույլ է տվել «Ճանապարհային երթևեկության անվտանգության ապահովման մասին» ՀՀ օրենքի 24-րդ հոդվածի 6-րդ կետի «ա» ենթակետի խախտում, այն է՝ ավտոմեքենան վարել է՝ չունենալով համապատասխան կատեգորիայի վարորդական իրավունք:

Վերաքննիչ դատարանը, մերժելով բողոքը, պատճառաբանել է, որ Արման Մինասյանը սովորել և քննություն է հանձնել «B» և «C» կատեգորիաների վարորդական իրավունքի վկայագրի համար, սակայն ստացել է «C» կատեգորիայի վարորդական իրավունք և, հղում կատարելով ՀՀ կառավարության 18.09.2008 թվականի թիվ 1158-Ն որոշմամբ հաստատված կարգի 32-րդ կետին, որը սահմանում է, որ միաժամանակ «B» և «C» կատեգորիաների վարորդական իրավունքի վկայագրի համար գործնական քննություն ընդունվում է միայն «C» կարգի տրանսպորտային միջոցով, հանգել է այն հետևության, որ բարձր կարգի «C» վարորդական իրավունքի վկայականի առկայության պայմաններում վարորդին արգելված չէ վարել ավելի ցածր՝ «B» կարգի մեխանիկական տրանսպորտային միջոց:

Տվյալ դեպքում Վերաքննիչ դատարանն անտեսել է այն հանգամանքը, որ Արման Մինասյանին վարորդական իրավունքի վկայականը տրվել է 1998 թվականին, հետևաբար վկայակոչած ՀՀ կառավարության 18.09.2008 թվականի թիվ 1158-Ն որոշմամբ հաստատված կարգը կիրառելի չէր նրա նկատմամբ:

Բացի այդ, Վերաքննիչ դատարանը, բավարարելով Սուսաննա Բաղյանի և Արման Մինասյանի վերաքննիչ բողոքը, խախտել է ապահովագրության վկայագրի հավելված հանդիսացող կանոնների 9.1 կետը, որի արդյունքում իրականացրել է ապահովագրական վճարի հատուցման սխալ հաշվարկ:

Վերոգրյալի հիման վրա բողոք բերած անձը պահանջել է բեկանել Վերաքննիչ դատարանի 02.07.2010 թվականի որոշումը:

2.1. Վճռաբեկ բողոքի պատասխանի հիմնավորումները

Դատարանն իրավացիորեն նշել է, որ «С» կարգի վարորդական իրավունքի վկայական ունենալու դեպքում «В» կարգի մեխանիկական տրանսպորտային միջոց վարելով վթարի ենթարկվելը չի կարող հիմք հանդիսանալ ապահովագրական հատուցումը մերժելու համար:

3. Վճռաբեկ բողոքի քննության համար նշանակություն ունեցող փաստերը

Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1. Ընկերության և Սուսաննա Բաղյանի միջև 23.07.2008 թվականին կնքված Ապահովագրության պայմանագրի (ապահովագրության վկայագրի) համաձայն՝ Սուսաննա Բաղյանն ապահովագրել է իրեն սեփականության իրավունքով պատկանող «Մերսեդես Բենց С 240» մակնիշի 15 ՍՕ 433 պետական համարանիշի ավտոտրանսպորտը (այսուհետ՝ Ավտոտրանսպորտ) իրական արժեքի 70%-ի չափով՝ 24.07.2008 թվականից մինչև 23.07.2009 թվականը, և նրան է տրվել Ցամաքային ավտոտրանսպորտի կամավոր ապահովագրության թիվ N US 008385 ապահովագրության վկայագիրը: Նույն վկայագրի 13-րդ կետի համաձայն՝ ոչ պայմանական չվճարվող գումար է սահմանվել 83.000 ՀՀ դրամը՝ յուրաքանչյուր ապահովագրական պատահարի համար (հատոր 1-ին, գ.թ. 1):

2. Ապահովագրության վկայագրի 4-րդ կետի համաձայն՝ ապահովագրի կողմից հայտարարված ապահովագրական (իրական) արժեքը 7.900.000 ՀՀ դրամն է, իսկ նույն վկայագրի 7-րդ կետի համաձայն՝ ապահովագրական գումարն է 5.530.000 ՀՀ դրամ գումարը: Ապահովագրության վկայագրի 5-րդ կետի համաձայն՝ լիազորված վարորդ է Արման Կառլենի Մինասյանը, վարորդական վկայական՝ № 768089, վարորդական ստաժ՝ 1998 թվականից (հատոր 1-ին, գ.թ. 1):

3. Ապահովագրության վկայագրի 16-րդ կետի համաձայն՝ ապահովագրության կանոններն Ընկերության խորհրդի 01.02.2008 թվականի որոշմամբ (արձանագրություն թիվ 018), փոփոխությունները՝ 21.07.2008 թվականի թիվ 32 որոշմամբ հաստատված «Ցամաքային ավտոտրանսպորտի կամավոր ապահովագրության» կանոններն են, որոնք կցվում են սույն վկայագրին (հատոր 1-ին, գ.թ. 1):

4. Ապահովագրության վկայագրի հավելված հանդիսացող «Ցամաքային ավտոտրանսպորտի կամավոր ապահովագրության» կանոնների 1.7.7 կետի համաձայն՝ Լիազորված վարորդն անձ է, որը նշված է Ապահովագրության

պայմանագրում և ունի ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով տվյալ ավտոտրանսպորտային միջոցը վարելու օրինական հիմք և համապատասխան կարգի վարորդական իրավունք, որի կողմից ապահովագրված տրանսպորտային միջոցը վարելու հետևանքով առաջացած պատահարները Կանոններով և պայմանագրով սահմանված պայմաններին համապատասխան հանդիսանում են Ապահովագրության պայմանագրի առարկա (հատոր 1-ին, գ.թ. 13):

5. Նույն կանոնների 2.1 կետի համաձայն՝ ապահովագրության պայմանագրով Ապահովագրողը պարտավորվում է սահմանված որոշակի գումարի (ապահովագրավճարի) դիմաց Կանոններով սահմանված և Ապահովագրության պայմանագրում նշված որոշակի ապահովագրական պատահարի տեղի ունենալու դեպքում Ապահովադրին վճարել ապահովագրված ավտոտրանսպորտի համար Ապահովագրության պայմանագրով սահմանված որոշակի գումարի (ապահովագրական գումար) սահմաններում ապահովագրական հատուցում (հատոր 1-ին, գ.թ. 13):

6. Նույն կանոնների 2.3 կետի համաձայն՝ ավտոտրանսպորտի ապահովագրության պայմանագրի կնքման համար Ապահովադիրը պարտավոր է ներկայացնել ավտոտրանսպորտը վարելու թույլտվություն ունեցող անձի (անձանց) տվյալները (անձնագրային և վարորդական տվյալները) (հատոր 1-ին, գ.թ. 13):

7. Նույն կանոնների 9.1 կետի համաձայն՝ եթե ապահովագրական պատահար տեղի ունենանալու պահին Ապահովագրության պայմանագրով սահմանված ապահովագրական գումարը ցածր է ավտոտրանսպորտի ապահովագրական (իրական և շուկայական) արժեքից, ապա ապահովագրական պատահար տեղի ունենալու դեպքում Ապահովագրողն Ապահովադրին (Շահառուին) վճարում է ապահովագրական հատուցում ապահովագրական պատահարի հետևանքով պատճառված փաստացի վնասի մի մասի չափով՝ ապահովագրական արժեքի նկատմամբ ապահովագրական գումարի համամասնությամբ՝ դրանից մասհանելով Ապահովագրության պայմանագրով նախատեսված ոչ պայմանական չհատուցվող գումարը, բացառությամբ Ապահովագրության պայմանագրով նախատեսված դեպքերի (հատոր 1-ին, գ.թ. 17):

8. 19.12.2008 թվականին Սուսանա Բաղյանին սեփականության իրավունքով պատկանող ավտոմեքենան ենթարկվել է վթարի, ինչի արդյունքում տրվել է ՀՀ ոստիկանության փորձագիտական վարչության փորձագետի 14.01.2009 թվականի թիվ 1513-ԱՊ եզրակացությունը, համաձայն որի՝ ավտոմեքենային պատճառվել է 3.750.000 ՀՀ դրամի նյութական վնաս (հատոր 1-ին, գ.թ. 33-34):

9. Ընկերության գործադիր տնօրենի 19.12.2008 թվականի գրավոր հանձնարարականի հիման վրա տրված 23.01.2009 թվականի թիվ 09-015 եզրակացությամբ մերժվել է Ընկերությունում ապահովագրված «Մերսեդես Բենց C 240» մակնիշի 15 ՍՕ 433 պետական համարանիշի ավտոմեքենայի 19.12.2008 թվականին տեղի ունեցած վթարի հետ կապված ապահովագրական հատուցման վճարումը: Նույն եզրակացությամբ արձանագրվել է, որ Արման Մինասյանն իր բացատրության մեջ նշել է, որ ունի միայն վարորդական իրավունքի «C» կատեգորիա, որը թույլ է տալիս վարել միայն բեռնատար մեքենաներ (հատոր 1-ին, գ.թ. 21-24):

10. ՀՀ ձանապարհային ոստիկանության հետաքննության բաժանմունքի պետ Ա.Մադաթյանի կողմից հաստատված 16.01.2009 թվականի եզրակացության համաձայն՝ Արման Մինասյանը թույլ է տվել «Ձանապարհային երթևեկության անվտանգության ապահովման մասին» ՀՀ օրենքի 24-րդ հոդվածի 6-րդ կետի «ա»

ենթակետի խախտում, այն է՝ ավտոմեքենան վարել է՝ չունենալով համապատասխան կատեգորիայի վարորդական իրավունք (հատոր 1-ին, գ.թ. 29):

11. Գործում առկա հայցվորների միջնորդությամբ Արման Մինասյանը և Սուսաննա Բաղյանը հայցապահանջը լրացրել են և պահանջել են բռնագանձել Ընկերությունից ապահովագրական հատուցումն անհիմն մերժելու հետևանքով իրենց պատճառված վնասները (հատոր 1-ին, գ.թ. 62):

4. Վճարելի դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումները

Քննելով վճարելի բողոքը վերը նշված հիմքի սահմաններում՝ Վճարելի դատարանը գտնում է, որ այն հիմնավոր է մասնակիորեն հեղուկալ պարձառաբանությամբ.

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 345-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ պարտավորության ուժով մի անձը (պարտապանը) պարտավոր է մեկ այլ անձի (պարտատիրոջ) օգտին կատարել որոշակի գործողություն. այն է՝ վճարել դրամ, հանձնել գույք, կատարել աշխատանք, մատուցել ծառայություն և այլն, կամ ձեռնպահ մնալ որոշակի գործողություն կատարելուց, իսկ պարտատերն իրավունք ունի պարտապանից պահանջել կատարելու իր պարտականությունը, իսկ նույն հոդվածի 2-րդ կետի համաձայն՝ պարտավորությունները ծագում են պայմանագրից, վնաս պատճառելու հետևանքով և սույն օրենսգրքում նշված այլ հիմքերից:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 983-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ ապահովագրությունն իրականացվում է ապահովագրողի հետ ապահովագրի կնքած ապահովագրության պայմանագրի և (կամ) ապահովագրական վկայագրով:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 996-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ ապահովագրության պայմանագրով մի կողմը՝ ապահովագրողը, որոշակի միանվագ կամ պարբերական վճարի (ապահովագրավճարի) դիմաց պարտավորվում է մյուս կողմին՝ ապահովագրի կամ նրա մատնանշած անձին (շահառուին), որոշակի ապահովագրական գումարի շրջանակներում հատուցել որոշակի իրադարձության (իրադարձությունների) տեղի ունենալու արդյունքում պատճառված վնասը կամ դրա մի մասը կամ տրամադրել որոշակի գումար (ապահովագրական հատուցում), եթե այդ իրադարձությունների տեղի ունենալը կրում է հավանական և(կամ) պատահական բնույթ և կախված չէ կողմերի կամ ապահովագրված անձի կամ շահառուի կամքից (բացառությամբ կյանքի ապահովագրության այն դեպքերի, երբ հատուցվում է որոշակի հավաստի և ակնկալվող իրադարձության տեղի ունենալը):

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 998-րդ հոդվածի 1-ին կետի 2-րդ ենթակետի համաձայն՝ ապահովագրության պայմանագրի էական պայմաններից մեկն էլ ապահովագրական պատահարը (պատահարները) կամ իրադարձությունն է, որի տեղի ունենալու դեպքում տրվում է ապահովագրական հատուցումը:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 983.1-րդ հոդվածի 6-րդ կետի համաձայն՝ ապահովագրական հատուցումն ապահովագրական պատահարի տեղի ունենալու արդյունքում ապահովագրողի կողմից ապահովագրական պայմանագրի հիման վրա ապահովագրի կամ շահառուին վճարման ենթակա գումարն է՝ դրամական արտահայտությամբ կամ համարժեք գույքով:

Նույն օրենսգրքի 999-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ պայմանները, որոնցով կնքվում է ապահովագրության պայմանագիրը, կարող են որոշվել ապահովագրողի կամ ապահովագրողների միության ընդունած կամ հաստատած ապահովագրության

համապատասխան տեսակի, դասի համար սահմանված ստանդարտ պայմաններով (ապահովագրության ընդհանուր պայմաններ): Եթե ապահովագրության պայմանագիրը կնքվել է ապահովագրողի կամ ապահովագրական միությունների կողմից հաստատված ապահովագրության պայմանագրի ընդհանուր պայմանների հիման վրա, ապա ապահովագրության պայմանագիրը պետք է հղում պարունակի այդ պայմաններին: Նույն հոդվածի 2-րդ կետի համաձայն՝ ապահովագրության ընդհանուր պայմաններում պարունակվող և ապահովագրության պայմանագրի մեջ չընդգրկված պայմանները պարտադիր են ապահովագրի (շահառուի) համար, եթե պայմանագրում ուղղակի վկայակոչված է այդ ընդհանուր պայմանների կիրառումը, և այդ պայմանները կցված են պայմանագրին, իսկ նույն հոդվածի 3-րդ կետի համաձայն՝ ապահովագրության պայմանագիր կնքելիս ապահովագրվողը և ապահովագրողը պետք է գրավոր (ապահովագրական պայմանագրով կամ առանձին համաձայնությամբ) պայմանավորվեն ապահովագրության ընդհանուր պայմանների առանձին դրույթներ փոփոխելու, վերացնելու կամ լրացնելու կարգի վերաբերյալ:

Ապահովագրության վկայագրի հավելված հանդիսացող «Ցամաքային ավտոտրանսպորտի կամավոր ապահովագրության» կանոնների 1.7.7 կետի համաձայն՝ լիազորված վարորդն անձ է, որը նշված է Ապահովագրության պայմանագրում և ունի ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով տվյալ ավտոտրանսպորտային միջոցը վարելու օրինական հիմք և համապատասխան կարգի վարորդական իրավունք, որի կողմից ապահովագրված տրանսպորտային միջոցը վարելու հետևանքով առաջացած պատահարները Կանոններով և պայմանագրով սահմանված պայմաններին համապատասխան հանդիսանում են Ապահովագրության պայմանագրի առարկա:

Նույն կանոնների 2.3 կետի համաձայն՝ ավտոտրանսպորտի ապահովագրության պայմանագրի կնքման համար Ապահովագրողը պարտավոր է ներկայացնել ավտոտրանսպորտը վարելու թույլտվություն ունեցող անձի (անձանց) տվյալները (անձնագրային և վարորդական տվյալները):

Սույն գործով Դատարանը հայցը մասնակի բավարարման հիմքում դրել է այն հանգամանքը, որ ապահովագրության պայմանագիրը (ապահովագրության վկայագիրը) կնքելիս Ընկերությունը, տեղեկացված լինելով, որ Արման Մինասյանն ըստ էության իրավունք չունի վարելու ապահովագրության օբյեկտ հանդիսացող ավտոմեքենան, Արման Մինասյանին չի պարտավորեցրել վարորդական իրավունքի դասը համապատասխանեցնել, այսինքն՝ ապահովագրության վկայագրի կնքման ժամանակ ապահովագրողին հայտնի են եղել ապահովագրության դիսկի գնահատման համար նշանակություն ունեցող բոլոր տեղեկությունները:

Վերաքննիչ դատարանը դատական ակտը մասնակիորեն բեկանելիս կիրառել է ՀՀ կառավարության 18.09.2008 թվականի թիվ 1158-Ն որոշմամբ հաստատված կարգը և արձանագրել, որ «С» կարգի վարորդական իրավունքի վկայագրի առկայության պայմաններում վարորդին արգելված չէ վարելու ավելի ցածր «В» կարգի մեխանիկական տրանսպորտային միջոց: Միաժամանակ, Վերաքննիչ դատարանն արձանագրել է, որ Դատարանի վճռում բացակայում է որևէ անդրադարձ հայցվորների ավելացրած հայցապահանջի հիմնավոր կամ անհիմն լինելու վերաբերյալ, ինչի արդյունքում խախտվել է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 132-րդ հոդվածը: Բացի այդ, Վերաքննիչ դատարանը գտել է, որ Դատարանը հատուցման ենթակա գումարը ճիշտ չի հաշվարկել, մասնավորապես հիմք է ընդունել ոչ թե վնասի

չափը, այլ ավտոտրանսպորտի ապահովագրման չափը: Այսինքն՝ ապահովագրության վկայագրով ոչ թե սահմանված է ապահովագրական պատահարի հետևանքով պատճառված վնասի որոշակի չափի հատուցում (բացառությամբ ոչ պայմանական չհատուցվող գումարի), այլ ավտոտրանսպորտի ապահովագրում դրա իրական արժեքի որոշակի չափով:

Սույն գործում առկա փաստերի համաձայն՝ Ընկերության և Սուսաննա Բաղյանի միջև 23.07.2008 թվականին կնքված Ապահովագրության պայմանագրով (վկայագրով), Սուսաննա Բաղյանն ապահովագրել է իրեն սեփականության իրավունքով պատկանող Ավտոտրանսպորտի իրական արժեքի 70%-ի չափով՝ 24.07.2008 թվականից մինչև 23.07.2009 թվականը, և նրան է տրվել Ցամաքային ավտոտրանսպորտի կամավոր ապահովագրության թիվ N ԱՏ 008385 ապահովագրության վկայագիրը: Վկայագրի 5-րդ կետով որպես լիազորված վարորդ նշվել է Արման Մինասյանը, վարորդական վկայական՝ №768089, վարորդական ստաժ՝ 1998 թվականից: Հետագայում՝ 19.12.2008 թվականին, Սուսաննա Բաղյանին սեփականության իրավունքով պատկանող ավտոմեքենան ենթարկվել է վթարի, ինչի արդյունքում ավտոմեքենային պատճառվել է 3.750.000 ՀՀ դրամի նյութական վնաս: Ընկերության 23.01.2009 թվականի թիվ 09-015 եզրակացությամբ մերժվել է Ընկերությունում ապահովագրված «Մերսեդես Բենց C 240» մակնիշի 15 ՍՕ 433 պետական համարանիշի ավտոմեքենայի 19.12.2008 թվականին տեղի ունեցած վթարի հետ կապված ապահովագրական հատուցման վճարումը: Նույն եզրակացությամբ արձանագրվել է, որ Արման Մինասյանն իր բացատրության մեջ նշել է, որ ունի միայն վարորդական իրավունքի «C» կատեգորիա, որը թույլ է տալիս վարել միայն բեռնատար մեքենաներ:

Հիմք ընդունելով վերը նշվածը և սույն գործի փաստերը համադրելով՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Ընկերության հետ ցամաքային ավտոտրանսպորտի կամավոր ապահովագրության պայմանագիր (վկայագիր) կնքելիս Սուսաննա Բաղյանը կատարել է նշված պայմանագրի անբաժանելի մաս կազմող կանոնների 2.3 կետով սահմանված պարտավորությունը, մասնավորապես՝ որպես Ապահովադիր ներկայացրել է ավտոտրանսպորտը վարելու թույլտվություն ունեցող անձի (անձանց) տվյալները (անձնագրային և վարորդական տվյալները): Ապահովագրության վկայագրի 5-րդ կետով որպես լիազորված վարորդ նշվել է Արման Մինասյանը, վարորդական վկայական՝ №768089, վարորդական ստաժ՝ 1998 թվականից:

Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Ընկերությունն է կրում լիազորված անձի՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով տվյալ ավտոտրանսպորտային միջոցը վարելու օրինական հիմք և համապատասխան կարգի վարորդական իրավունք ունենալու հանգամանքը ստուգելու պարտավորություն և դրանից ելնելով՝ որոշում է ապահովագրության պայմանագիրը կնքելու կամ չկնքելու հարցը: Սույն գործով Ընկերությունը տեղեկացվել էր լիազորված անձի բոլոր այն տվյալների մասին, որոնք, ըստ կանոնների 1.7.7 կետի, անհրաժեշտ և բավարար էին պայմանագիրը կնքելու հարցը լուծելու համար, մասնավորապես, այն որ Արման Մինասյանն ունի միայն վարորդական իրավունքի «C» կատեգորիա, որը թույլ է տալիս վարել միայն բեռնատար մեքենաներ: Հետևաբար, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ եթե Ընկերությունը, ներկայացված փաստաթղթերի գնահատման արդյունքում անտեսելով ներկայացված փաստաթղթերում առկա թերությունները, այնուամենայնիվ, կնքում է ապահովագրության պայմանագիր, այսինքն՝ պատրաստակամություն է հայտնում, որպեսզի համապատասխան ավտոտրանսպորտային միջոցն այդ անձի կողմից

վարելու հետևանքով առաջացած պատահարները լինեն ապահովագրության պայմանագրի առարկա, ապա Ընկերությունն այլևս չի կարող վկայակոչել նման թերությունների առկայությունը և պետք է կատարի պայմանագրից բխող բոլոր պարտավորությունները:

Նման պայմաններում Վճարել դատարանը գտնում է, որ Սուսաննա Բաղյանի կողմից տեղի չի ունեցել ապահովագրության վկայագրի մաս կազմող կանոնների խախտում, հետևաբար ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 345-րդ հոդվածի ուժով Ընկերությունը պարտավոր է հատուցել ապահովագրական վճարը:

Ինչ վերաբերում է Վերաքննիչ դատարանի այն պատճառաբանությանը, որ ՀՀ կառավարության 18.09.2008 թվականի թիվ 1158-Ն որոշմամբ հաստատված կարգից հետևում է, որ «С» կարգի վարորդական իրավունքի վկայագրի առկայության պայմաններում վարորդին արգելված չէ վարելու ավելի ցածր «В» կարգի մեխանիկական տրանսպորտային միջոց, ապա Վճարել դատարանն այդ փաստարկին չի անդրադառնում, քանի որ վերոնշյալ կարգն ընդունվել է 18.09.2008 թվականին, հետևաբար այն կիրառելի չէ 1998 թվականին Արման Մինասյանին տրված վարորդական իրավունքի վկայականի նկատմամբ, առավել ևս որ նման կանոնակարգում նշված կարգում առկա չէ:

Վճարել դատարանը հիմնավոր է համարում Վերաքննիչ դատարանի պատճառաբանությունն այն մասին, որ Դատարանի վճռում բացակայում է անդրադարձ հայցվորների ավելացրած հայցապահանջին, ինչի արդյունքում խախտվել է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 132-րդ հոդվածը:

Ինչ վերաբերում է վճարել բողոքի այն փաստարկին, որ Վերաքննիչ դատարանը խախտել է ապահովագրության վկայագրի հավելված հանդիսացող կանոնների 9.1 կետը, որի արդյունքում իրականացրել է ապահովագրական վճարի հատուցման սխալ հաշվարկ, ապա Վճարել դատարանն այն հիմնավոր է համարում հետևյալ պատճառաբանությամբ՝

Ապահովագրության վկայագրի հավելված հանդիսացող «Ցամաքային ավտոտրանսպորտի կանավոր ապահովագրության» կանոնների 9.1 կետի համաձայն՝ եթե ապահովագրական պատահար տեղի ունենանալու պահին Ապահովագրության պայմանագրով սահմանված ապահովագրական գումարը ցածր է ավտոտրանսպորտի ապահովագրական (իրական և շուկայական) արժեքից, ապա ապահովագրական պատահար տեղի ունենալու դեպքում Ապահովագրողն Ապահովադրին (Շահառուին) վճարում է ապահովագրական հատուցում ապահովագրական պատահարի հետևանքով պատճառված **փաստացի վնասի մի մասի չափով՝ ապահովագրական արժեքի նկատմամբ ապահովագրական գումարի համամասնությամբ՝** դրանից մասհանելով Ապահովագրության պայմանագրով նախատեսված ոչ պայմանական չհատուցվող գումարը, բացառությամբ Ապահովագրության պայմանագրով նախատեսված դեպքերի:

Սույն գործով Սուսաննա Բաղյանն ապահովագրել է իրեն սեփականության իրավունքով պատկանող «Մերսեդես Բենց С 240» մակնիշի 15 ՍՕ 433 պետական համարանիշի ավտոմեքենան իրական արժեքի 70%-ի չափով, գործում առկա Ապահովագրության վկայագրի 4-րդ կետի համաձայն՝ապահովադրի կողմից հայտարարված ապահովագրական (իրական) արժեքը 7.900.000 ՀՀ դրամն է, իսկ նույն վկայագրի 7-րդ կետի համաձայն՝ ապահովագրական գումարն է 5.530.000 ՀՀ դրամը, վճարի հետևանքով ավտոմեքենային պատճառված վնասը 3.750.000 ՀՀ դրամ

է, վկայագրի 13-րդ կետի համաձայն՝ ոչ պայմանական չվճարվող գումար է սահմանվել 83.000 ՀՀ դրամ՝ յուրաքանչյուր ապահովագրական պատահարի համար:

Հիմք ընդունելով վերոգրյալը՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ ապահովագրական գումարը կանոնների 9.1 կետի ուժով ենթակա է հատուցման հետևյալ կերպ. պատճառված իրական վնասի 70%-ից պետք է հանվի պայմանագրով նախատեսված չհատուցվող գումարը, ինչն էլ կկազմի ապահովագրական հատուցման գումարը:

Միաժամանակ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ բողոքարկվող դատական ակտի բեկանման անհրաժեշտությունը բացակայում է, քանի որ ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի որոշմամբ Դատարանի 19.02.2010 թվականի վճիռը՝ ապահովագրական վճարի հատուցման մասով բեկանվել է, և այդ մասով գործն ուղարկվել է նոր քննության:

Այսպիսով, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ սույն գործով Դատարանը կայացրել է ըստ էության ճիշտ դատական ակտ, հետևաբար տվյալ դեպքում անհրաժեշտ է կիրառել ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 240-րդ հոդվածի 1-ին կետի 1-ին ենթակետով սահմանված՝ ստորադաս դատարանի սխալ պատճառաբանված դատական ակտն անփոփոխ թողնելու Վճռաբեկ դատարանի լիազորությունը:

Վերոգրյալից ելնելով, Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ Դատարանում գործի նոր քննության ընթացքում պետք է հիմք ընդունել սույն որոշման պատճառաբանությունները:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 240-241²-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

ՈՐՈՇԵՑ

1. Վճռաբեկ բողոքը մերժել: ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 02.07.2010 թվականի որոշումը թողնել օրինական ուժի մեջ սույն որոշման պատճառաբանություններով:

2. Պետական տուրքի բաշխման հարցին անդրադառնալ գործի նոր քննության ընթացքում:

3. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

*ՆԱԽԱԳԱՀՈՂ՝ ստորագրություն
ԴԱՏԱՎՈՐՆԵՐ՝ ստորագրություններ*

**ՎՆԱՍ ՊԱՏՃԱՌԵԼՈՒ ԵՎ ԱՆՀԻՄՆ ՀԱՐՍԱՑՄԱՆ
ՀԵՏԵՎԱՆՔՈՎ ԾԱԳԱԾ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ**

Ընդհանուր դրույթներ վնասի հատուցման մասին

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ**

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի որոշում Բաղաքացիական գործ թիվ ՀՔԴ1/0012/02/08 2011թ.
Բաղաքացիական գործ թիվ ՀՔԴ1/0012/02/08
Նախագահող դատավոր՝ Ա. Պետրոսյան
Դատավորներ՝ Ա. Խառատյան
Կ. Զիլինգարյան

**ՈՐՈՇՈՒՄ
ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քաղաքացիական
և վարչական պալատը (այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

*նախագահությամբ
մասնակցությամբ դատավորներ*

Ե. ԽՈՒՆԴԿԱՐՅԱՆԻ
Մ. ԴՐՄԵՅԱՆԻ
Վ. ԱԲԵԼՅԱՆԻ
Վ. ԱՎԱՆԵՍՅԱՆԻ
Ա. ԲԱՐՍԵՂՅԱՆԻ
Գ. ՀԱԿՈԲՅԱՆԻ
Տ. ՊԵՏՐՈՍՅԱՆԻ
Ե. ՍՈՂՈՄՈՆՅԱՆԻ

2011 թվականի հուլիսի 01-ին

դոնբաց դատական նիստում, քննելով Արամ Դավթյանի և «Վանք» ՍՊԸ-ի (այսուհետ՝ Ընկերություն) վճռաբեկ բողոքը ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 19.11.2009 թվականի որոշման դեմ՝ ըստ Արամ Դավթյանի և Ընկերության հայցի ընդդեմ Հայաստանի Հանրապետության՝ ի դեմս ՀՀ ֆինանսների նախարարության և «Հայկական երկաթուղի» ՓԲԸ-ի՝ ապօրինի քրեական պատասխանատվության ենթարկելու, որպես խափանման միջոց կալանք կիրառելու, չհետանալու մասին ստորագրություն վերցնելու, ոչ ողջամիտ ժամկետում դատաքննության, անմարդկային վերաբերմունքի հետևանքով պատճառված վնասի հատուցման պահանջի մասին,

ՊԱՐԶԵՑ

1. Գործի դատավարական նախապատմությունը

Դիմելով դատարան՝ Արամ Դավթյանը, պատճառաբանելով, որ ապօրինի քրեական հետապնդման ենթարկվելու, որպես խափանման միջոց կալանք կիրառելու, չհեռանալու մասին ստորագրություն վերցնելու, իր նկատմամբ ոչ ողջամիտ ժամկետներում դատաքնություն իրականացնելու, անմարդկային վերաբերմունքի հետևանքով վնասներ է կրել, պահանջել է Հայաստանի Հանրապետությունից բռնագանձել 226.443.431 ՀՀ դրամ, որից 70.000.000 ՀՀ դրամ գումարը՝ որպես բարոյական վնասի հատուցում:

Դիմելով դատարան՝ «Վանք» ՍՊԸ-ն պահանջել է բռնագանձել «Հայաստանի երկաթուղային ձանապարհ» ՀՆՊՁ-ի (իրավահաջորդ «Հայկական երկաթուղի» ՓԲԸ) կողմից պայմանագրային պարտավորությունները չկատարելու պատճառով իրեն պատճառված վնասները՝ 57.063.769 ՀՀ դրամ գումարի չափով:

ՀՀ հարավային քաղաքացիական դատարանի (այսուհետ՝ Դատարան) 23.05.2008 թվականի վճռով Արման Դավթյանի հայցը բավարարվել է մասնակիորեն՝ Հայաստանի Հանրապետությունից հոգուտ Արամ Դավթյանի բռնագանձվել է 7.000.000 ՀՀ դրամ՝ որպես փաստաբանին վճարվելիք գումար, իսկ մնացած մասով հայցը՝ այդ թվում՝ 70.000.000 ՀՀ դրամ բարոյական վնասի հատուցման պահանջը, մերժվել է: «Վանք» ՍՊԸ-ի հայցն ընդդեմ «Հայկական երկաթուղի» ՓԲԸ-ի՝ 57.063.761 ՀՀ դրամ գումարի բռնագանձման պահանջի մասին մերժվել է: Միաժամանակ վճռվել է Ընկերությունից հոգուտ Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի բռնագանձել 1.141.275 ՀՀ դրամ, իսկ Արամ Դավթյանից՝ 4.388.869 ՀՀ դրամ՝ որպես չվճարված պետական տուրք:

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի (այսուհետ՝ Վերաքննիչ դատարան) 19.11.2009 թվականի որոշմամբ Արամ Դավթյանի և «Վանք» ՍՊԸ-ի վերաքննիչ բողոքը մերժվել է, և Դատարանի 23.05.2008 թվականի վճիռը թողնվել է օրինական ուժի մեջ: Միաժամանակ որոշվել է Ընկերությունից հոգուտ Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի բռնագանձել 1.711.913 ՀՀ դրամ, իսկ Արամ Դավթյանից՝ 6.583.484 ՀՀ դրամ՝ որպես վերաքննիչ բողոքի համար սահմանված պետական տուրք:

Սույն գործով վճռաբեկ բողոք են ներկայացրել Արամ Դավթյանը և Ընկերությունը:

Վճռաբեկ բողոքի պատասխան չի ներկայացվել:

Վճռաբեկ դատարանի 10.02.2010 թվականի որոշմամբ վճռաբեկ բողոքն ընդունվել է վարույթ:

Վճռաբեկ դատարանի 28.06.2010 թվականի որոշմամբ գործի վարույթը կասեցվել է՝ «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքի 22-րդ հոդվածը ՀՀ Սահմանադրությանը համապատասխանելու հարցը լուծելու համար ՀՀ սահմանադրական դատարան դիմելու հիմքով:

ՀՀ սահմանադրական դատարանի 14.12.2010 թվականի թիվ ՍԴՈ-929 որոշմամբ «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքի 22-րդ հոդվածի առաջին մասը, այնքանով, որքանով չի սահմանում այլ սուբյեկտներից բացի, արդարացվածին՝ իրավասու պետական մարմինների և պաշտոնատար անձանց ապօրինի գործողությունների (անգործության) հետևանքով պատճառված վնասի հատուցման հայցերով պետական

տուրքի վճարումից ազատելու վերաբերյալ արտոնություն նախատեսող դրույթ՝ արգելափակելով անձի սահմանադրական իրավունքի իրացումը, ճանաչվել է ՀՀ Սահմանադրության 16-րդ հոդվածի 4-րդ մասին և 20-րդ հոդվածի 5-րդ մասին հակասող և անվավեր:

Վճարել դատարանի 19.01.2011 թվականի որոշմամբ թիվ ՀՔԴ1/0012/02/08 քաղաքացիական գործի վարույթը վերսկսվել է:

2. Վճարել բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը

Սույն վճարել բողոքը քննվում է հետևյալ հիմքի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

Վերաքննիչ դատարանը խախտել է ՀՀ Սահմանադրության 18-րդ հոդվածի 1-ին մասը, «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի (այսուհետ՝ Կոնվենցիա) 3-րդ հոդվածը, 5-րդ հոդվածի 5-րդ կետը, 6-րդ հոդվածի 1-ին կետը, 13-րդ հոդվածը, ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 17-րդ հոդվածի 2-րդ կետը, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 6-րդ հոդվածի 4-րդ կետը, 66-րդ հոդվածի 3-րդ և 4-րդ կետերը, «Պետական փոստի մասին» ՀՀ օրենքի 22-րդ հոդվածը:

Բողոք բերած անձը նշված պնդումը պարձատարանել է հետևյալ փաստարկներով.

Վերաքննիչ դատարանը, իր որոշմամբ պարզելով, որ Արամ Դավթյանին ապօրինի դատապարտելու, որպես խափանման միջոց կալանք կիրառելու, ոչ ողջամիտ ժամկետում դատաքննության, անմարդկային վերաբերմունքի և սեփական հիմնարկի գույքի վրա ապօրինի կալանք դնելու և արդյունքում թանկարժեք ջերմաքարշերի կտրտելու հետևանքով խախտվել է նրա իրավունքը, ոչ թե վերականգնել է խախտված իրավունքը, այլ ավելին, որոշել է իրենից որպես պետական տուրք գանձել 6.583.484 ՀՀ դրամ, իսկ Ընկերությունից՝ 1.711.913 ՀՀ դրամ:

Տվյալ դեպքում Վերաքննիչ դատարանը հաշվի չի առել, որ պետական տուրքի վճարումն Արամ Դավթյանի պարագայում խախտված իրավունքը վերականգնելու համար նախատեսված ծախս է, որը վճարելու դեպքում նա կկրի նյութական վնաս: Այսինքն ստացվում է արադարացվածն իր իրավունքը վերականգնելու համար պետք է կատարի ծախս, որի արդյունքում կկրի վնաս, որն անտրամաբանական է: Վերաքննիչ դատարանը, նշելով, որ կալանքի տակ գտնվելու հետևանքով Արամ Դավթյանի առողջությանը պատճառվել է վնաս, միաժամանակ նշել է, որ վնասի չափը չի հիմնավորվել: Տվյալ դեպքում Վերաքննիչ դատարանը հաշվի չի առել, որ Արամ Դավթյանն իր 30.000.000 ՀՀ դրամի պահանջը հիմնավորել է նրանով, որ նա դեռևս 15 տարի ի վիճակի էր աշխատելու, իսկ աշխատունակության կորստի պատճառով չստացած եկամուտների և հատուկ խնամքի համար անհրաժեշտ է տարեկան 2.000.000 ՀՀ դրամ, որը ամսական կազմում է 167.000 ՀՀ դրամ: Ավելին, գործում առկա եզրակացությանը ապացուցվել է, որ իր մոտ առկա հիվանդությունը համարվում է դժվար բուժվող և հաճախակի միանգամից կրկնվող, և «Գորիս» քրեակատարողական հիմնակի անմարդկային պայմանների պատճառով այն չի բուժվել և մնացորդային երևույթների պատճառով խիստ խանգարվել է իր կողորդիացիան, որի պատճառով ինքն այլևս ի վիճակի չէ կատարել որևէ ֆիզիկական աշխատանք:

Բաց թողնված օգուտի մասով Վերաքննիչ դատարանը չի գնահատել այն հանգամանքը, որ Արամ Դավթյանն Ընկերության ոչ միայն տնօրենն է, այլ նաև

հիմնադիրը, որը հաստատվել է դեռևս Դատարանում: Իսկ այն, որ Ընկերության շահույթը հիմնադիրներինն է, դա ապացուցման կարիք չունի, դա հանրահայտ հանգամանք է: Մասնավորապես, Վերաքննիչ դատարանը հաշվի չի առել, որ մինչև քրեական գործ հարուցելն Ընկերությունն ուներ պայմանագիր և գույք: Քրեական գործի հարուցումով կալանք էր դրվել գույքի վրա, հետագայում քրեական վարույթի ընթացքում կալանքի տակ գտնվող թանկարժեք ջերմաքարշերի կտրտումը մետաղի ջարդոնի նպատակով ամբողջովին ոչնչացրել է Արամ Դավթյանի բիզնեսը, և եթե ջերմաքարշերը չկտրտվեին, ապա բաց թողնված օգուտի պահանջ չէր լինի, քանի որ ջերմաքարշերը շահագործվում են մինչև 25 տարի:

Վերաքննիչ դատարանն անհիմն է համարել նաև «Չեփյու» ՓԲԸ-ին վճարվելիք գումարները՝ որպես վնաս դիտելու փաստարկները: Տվյալ դեպքում Վերաքննիչ դատարանը պատշաճ չի հետազոտել ներկայացված փաստարկները և ապացույցները, մասնավորապես՝ 31.03.1997 թվականի թիվ 17/97 պայմանագրի համաձայն՝ պատասխանող ՀՀ երկաթուղի ՀՆ-ՊՁ-ն պարտավորություն է ունեցել ամսական 66.000 ՀՀ դրամ վճարել Ընկերությանը, որից էլ Ընկերությունը պարտավորվել է ամսական 45.000 ՀՀ դրամ վճարել «Չեփյու» ՓԲԸ-ին, որը սակայն 1999 թվականից Ընկերության կողմից չի կատարվել քրեական գործի հարուցման հետևանքով:

Վերաքննիչ դատարանը մերժել է նաև 7 տարիների ընթացքում տևած քրեական հետապնդման արդյունքում կատարված 4.000.000 ՀՀ դրամ գումարի բռնագանձման պահանջը՝ պատճառաբանելով, որ առաջացած ծախսերի վերաբերյալ քաղաքացիական գործում ապացույցներ առկա չեն: Մինչդեռ գործում առկա է Արամ Դավթյանի անձնագիրն առգրավված լինելու վերաբերյալ արձանագրությունը, որը նրան գրկել է ազատ տեղաշարժման և աշխատանքի հնարավորությունից: Այդ 4.000.000 ՀՀ դրամն իրեն կալանավայրում ապօրինի պահելու, 7 տարի շարունակ հանրապետության տարբեր քաղաքների դատարաններ այցելելու, իր վնասված առողջության պատճառով հատուկ սննդի և դեղորայքի ծախսն է: Անձնագիրն իր մոտ լինելու դեպքում հնարավորություն կունենար աշխատելու և վնաս չէր կրի:

Վերաքննիչ դատարանն անտեսել է նաև փաստաբանների հետ կնքված պայմանագրերը, որտեղ նշված է, որ վճարումը պետք է կատարվի գործով վարույթի ավարտից հետո՝ հաշվի չառնելով, որ օրենքը վնաս է համարում նաև այն ծախսերը, որ պետք է կատարի խախտած իրավունքը վերականգնելու համար:

Բացի այդ, Վերաքննիչ դատարանը մերժել է նաև Ընկերության կողմից 57.063.769 ՀՀ դրամ որպես պայմանագրով նախատեսված աշխատանքների կատարման դիմաց չվճարված գումարի մասով պատճառված վնասի պահանջը՝ հայցային վաղեմության ժամկետների լրանալու պատճառաբանությամբ: Մինչդեռ, Վերաքննիչ դատարանը պատշաճ չի գնահատել ներկայացված 31.03.1997 թվականի թիվ 17/97 պայմանագիրը, որով հետաձգվել են նախկին պայմանագրային պարտավորությունների կատարումը:

Ինչ վերաբերում է 70.000.000 ՀՀ դրամ բարոյական վնասը մերժելուն, ապա Վերաքննիչ դատարանը նշել է, որ այդ մասով վճիռը չի բողոքարկվել, որի արդյունքում չի անդրադարձել վերաքննիչ բողոքի այդ փաստարկին: Մինչդեռ, Վերաքննիչ դատարանն անտեսել է վերաքննիչ բողոքի այն փաստարկը, որով նշվել է. «դատարանը պատշաճ գնահատման չի ենթարկել հայցվորի ցուցմունքները 70.000.000 ՀՀ դրամ գումարի պահանջի մասով, ինչպես նաև հաշվի չի առել հայցվորի վկայակոչած Եվրոպական դատարանի Լաբիտան ընդդեմ Իտալիայի

գործով 06.04.2000 թվականի վճիռը, որպես նախադեպ, որն ընձեռում է արդարացի փոխհատուցման հնարավորություն»:

Վերոգրյալի հիման վրա բողոք բերած անձը պահանջել է բեկանել Վերաքննիչ դատարանի 19.11.2009 թվականի որոշումը՝ վերականգնելով իր և Ընկերության խախտված իրավունքները՝ համապատասխան հատուցում տրամադրելով:

3. Վճարել բողոքի քննության համար նշանակություն ունեցող փաստերը

Վճարել բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1) «Վանք» ՍՊԸ-ն և «Հայաստանի երկաթուղային ձանապարհ» ՀՆՊՁ-ն 25.10.1995 թվականին կնքել են պայմանագիր, համաձայն որի՝ պատվիրատուն՝ «Հայաստանի երկաթուղային ձանապարհ» ՀՆՊՁ-ն հանձնարարել է, իսկ կատարողը՝ «Վանք» ՍՊԸ-ն ստանձնել է թվով 6 հատ ջերմաքարչի ապամոնտաժման, վերանորոգման, տեղափոխման, մոնտաժման և գործարկման-կարգավորման աշխատանքների կատարումը 96.000.000 ՀՀ դրամով: Նախահաշվի համաձայն՝ մեկ ջերմաքարչի ապամոնտաժման, վերանորոգման, տեղափոխման, մոնտաժման և գործարկման-կարգավորման արժեքը 19.200.218 ՀՀ դրամ է (1-ին հատոր, գ.թ. 11-12):

2) «ՀՀ երկաթուղային ձանապարհ» ՀՆՊՁ-ն «Վանք» ՍՊԸ-ին 27.10.1995 թվականին հանձնման-ընդունման ակտով հանձնել է 16 հատ ջերմաքարչեր: Պայմանագրի հիման վրա մեկ ջերմաքարչը Կապանում ապամոնտաժվել և տեղափոխվել է Երևան, մոնտաժվել, կարգաբերվել, 24.12.1996 թվականին փորձարկվել և հանձնվել պատվիրատուին՝ «Երկաթուղի» ՀՆՊՁ-ին, որի դիմաց վերջինս վճարել է 18.625.400 ՀՀ դրամ և մնացել պարտք՝ 574.815 ՀՀ դրամ (1-ին հատոր, գ.թ. 15, 17):

3) «ՀՀ Երկաթուղի» ՀՆՊՁ-ի տնօրեն՝ Վ. Ասրիյանցը 24.02.1997 թվականին գրությամբ առաջարկել է, ֆինանսների բացակայության պատճառով ժամանակավորապես դադարեցնել ջերմաքարչերի տեղափոխումը Կապանից, վարձակալել պահակներ՝ ստանձնելով վարձակալած պահակներին վարձատրելու պարտականություն (1-ին հատոր, գ.թ. 22):

4) «Հայաստանի երկաթուղային ձանապարհ» ՀՆՊՁ-ն և «Վանք» ՍՊԸ-ն 31.03.1997 թվականին կնքել են Կապանի կայարանում ջերմաքարչերի պահպանման պայմանագիրը, համաձայն որի՝ «Հայաստանի երկաթուղային ձանապարհ» ՀՆՊՁ-ն, ի դեմս գլխավոր տնօրեն Դ. Վ. Ասրիյանի, հանձնարարել է կատարողին՝ «Վանք» ՍՊԸ-ին, ի դեմս գլխավոր տնօրեն Արամ Դավթյանի, կազմակերպել ջերմաքարչերի պահպանությունը մինչև Երևան քաղաք ջերմաքարչերի տեղափոխման աշխատանքների ավարտը (1-ին հատոր, գ.թ. 18, 2-րդ հատոր, գ.թ. 31-32):

5) «Վանք» ՍՊԸ-ն և «Չեփյոտ» ԲԲԸ-ն 01.01.1998 թվականին կնքել են պահատվության պայմանագիր, համաձայն որի՝ «Չեփյոտ» ԲԲԸ-ն պարտավորվել է իր տարածքում պահպանել երկու ապամոնտաժված ջերմաքարչերը, իսկ «Վանք» ՍՊԸ-ն պարտավորվել է դրա դիմաց վճարել ամսական 45.000 ՀՀ դրամ (1-ին հատոր, գ.թ. 19):

6) «Վանք» ՍՊԸ-ն և «Չեփյոտ» ԲԲԸ-ն 03.01.2002 թվականին կազմել են ակտ, համաձայն որի՝ «Չեփյոտ» ԲԲԸ-ի և «Վանք» ՍՊԸ-ի միջև կնքված պահատվության պայմանագրի «Վանք» ՍՊԸ-ն 01.01.2002 թվականի դրությամբ «Չեփյոտ» ԲԲԸ-ին

պարտք է 2.160.000 ՀՀ դրամ (2-րդ հատոր, գ.թ. 17):

7) «ՀՀ երկաթուղի շարժակազմ» ՓԲԸ-ի գործադիր տնօրենը 1999 թվականին և 2001 թվականին ընդունել է «Վանք» ՍՊԸ-ի հանդեպ ունեցած՝ իրենց իրավահաջորդության կարգով «ՀՀ Երկաթուղի» ՀՆՊԶ-ից փոխանցված 574.815 ՀՀ դրամի չափով կրեդիտորական պարտքը և հայտնել, որ հարուցված քրեական գործի ունեցվածքի վրա դրված արգելանքների պատճառով պարտքին կանդիդատանան դրանց պարզաբանումից հետո (2-րդ հատոր, գ.թ. 35-36):

8) «Վանք» ՍՊԸ-ի տնօրեն Արամ Դավթյանի նկատմամբ 03.07.2000 թվականին հարուցվել է քրեական գործ 1961 թվականի քրեական օրենսգրքի 182-րդ հոդվածի 2-րդ մասով և 191⁴-րդ հոդվածով (1-ին հատոր, գ.թ. 24):

9) Արամ Դավթյանի նկատմամբ 08.11.2000 թվականին կայացվել է որոշում ՀՀ քրեական օրենսգրքի 89-րդ հոդվածի 1-ին և 4-րդ մասերով և 191⁴-րդ հոդվածով որպես մեղադրյալ ներգրավելու մասին, այն բանի համար, որ նա հանդիսանալով «Վանք» ՍՊԸ-ի նախագահ, կատարել է խարդախություն, այն է 25.10.1995 թվականին պայմանագիր է կնքել «ՀՀ Երկաթուղի» ՀՆՊԶ-ի հետ 6 ջերմաքարշ Կապան տեղափոխելու մասին, որից հետո 1996 թվականի ընթացքում մի քանի իրավաբանական և ֆիզիկական անձանց միջոցով կազմակերպել է 1 ջերմաքարշի փոխադրում, պատվիրատուից ստացել է 186.000.000 ՀՀ դրամ, սակայն ելնելով շահադիտական դրդումներից, չարաշահելով կատարողների վստահությունը, պայմանավորված գումարները ոչ լրիվ կամ ընդհանրապես չվճարելու նպատակով, կատարողական ակտ չկազմելու, գործարքների և կատարված աշխատանքների վերաբերյալ սահմանված կարգով հաշվապահական ձևակերպումներ չկատարելու, ծախսերի վերաբերյալ չհիմնավորված, կեղծ փաստաթղթեր կազմելու միջոցով տիրացել է նրանց վճարման ենթակա 11.658.331 ՀՀ դրամ գումարին: Միաժամանակ, 01.01.1998 թվականին «Զեփյոտ» ԲԲԸ-ի հետ կնքելով 2 ջերմաքարշերի պահպանության պայմանագիր, «ՀՀ Երկաթուղի» ՀՆՊԶ-ից ստացել է ջերմաքարշերի պահպանության համար սահմանված գումարները, և չարաշահելով պահառուի վստահությունը՝ տիրացել է «Զեփյոտ» ԲԲԸ-ին վճարման ենթակա 540.000 ՀՀ դրամ գումարին: Բացի այդ, Արամ Դավթյանը դիտավորյալ չի կատարել Կապանի շրջանային ժողովրդական դատարանի վճիռը 534.400 ՀՀ դրամ հարկի գումար բռնագանձելու մասին (1-ին հատոր, գ.թ. 25-26):

10) 08.11.2000 թվականին Արամ Դավթյանի նկատմամբ հայտարարվել է հետախուզում, իսկ 09.11.2000 թվականին Արամ Դավթյանի նկատմամբ որպես խափանման միջոց է ընտրվել կալանքը: Կալանավորվել է 15.11.2000 թվականին, իսկ 12.01.2001 թվականին կալանքի ժամկետը երկարացվել է 1 ամսով մինչև 15.02.2001 թվականը (1-ին հատոր, գ.թ. 27-28):

11) Արամ Դավթյանի նկատմամբ որպես խափանման միջոց ընտրելու մասին որոշումը 29.01.2001 թվականին վերացվել է՝ առողջական վիճակից ելնելով, և խափանման միջոց է ընտրվել ստորագրություն չհեռանալու մասին: Արամ Դավթյանը սույն քրեական գործով կալանքի տակ է գտնվել 15.11.2000 թվականից մինչև 29.01.2001 թվականը՝ 2 ամիս 14 օր (2-րդ հատոր, գ.թ. 71):

12) Քրեական գործի մասը կարճելու մասին 21.02.2001 թվականի որոշմամբ

ՀՀ քրեական օրենսգրքի 182-րդ հոդվածի 2-րդ մասով և 89-րդ հոդվածի 1-ին, 4-րդ մասերով Արամ Դավթյանի նկատմամբ քրեական հետապնդումը դադարեցվել է արարքում հանցակազմի բացակայության պատճառով (1-ին հատոր, գ.թ. 36-37):

13) Արամ Դավթյանի նկատմամբ 21.02.2001 թվականին մեղադրանքը փոփոխվել և առաջադրվել է նոր մեղադրանք՝ 1961 թվականի խմբագրության ՀՀ քրեական օրենսգրքի 90-րդ հոդվածի 3-րդ մասով և 191⁴-րդ հոդվածով, այն բանի համար, որ նա, հանդիսանալով «Վանք» ՍՊԸ-ի տնօրեն, Կապանի երկաթուղային կայարանի և «Ջեփյոտ» ԲԲԸ-ի տարածքներում գտնվող ջերմաքարշերի պահպանությունը կազմակերպելու համար 1997 թվականի մարտի 31-ին Ընկերության անունից պայմանագիր է կնքել «ՀՀ Երկաթուղի» ՀՆԳԶ-ի հետ, որի համաձայն՝ 1997 թվականի ապրիլ ամսից մինչև 1998 թվականի դեկտեմբեր ամիսը դրամարկային ելքի օրդերներով պարբերաբար ստացել է 1.056.000 ՀՀ դրամ կանխիկ գումար, սակայն չարաշահելով իր պաշտոնական դիրքը, չի կազմակերպել ջերմաքարշերի պահպանությունը, նշված գումարը չի մուտքագրել «Վանք» ՍՊԸ-ի դրամարկո և այն յուրացրել է, որի հետևանքով ջերմաքարշերը ենթարկվել են թալանի, և պետությանը պատճառվել է 29.000.879 ՀՀ դրամ նյութական վնաս: Բացի այդ, հանդիսանալով պաշտոնատար անձ, դիտավորյալ չի կատարել Կապանի շրջ. ժող. դատարանի 08.09.1997 թվականի «Վանք» ՍՊԸ-ից 545.088 ՀՀ դրամ հօգուտ պետական բյուջեի բռնագանձելու մասին վճիռը՝ խոչընդոտներ է ստեղծել հարկադիր կատարողի համար (1-ին հատոր, գ.թ. 38-39):

14) Արամ Դավթյանի նկատմամբ 08.05.2001 թվականին կայացվել է խափանման միջոցը փոխելու մասին որոշում, խափանման միջոց է ընտրվել կալանք, և նրա նկատմամբ 19.06.2001 թվականին հայտարարվել է հետախուզում, Արամ Դավթյանը հայտնաբերվել և ձերբակալվել է 27.06.2001 թվականին (2-րդ հատոր, գ.թ. 72, 73):

15) Մյունիքի մարզի առաջին ատյանի դատարանը 18.07.2001 թվականին Արամ Դավթյանի նկատմամբ ՀՀ քրեական օրենսգրքի 90-րդ հոդվածի 3-րդ մասով և 191⁴-րդ հոդվածով քրեական գործի վարույթը կարճել է, քրեական հետապնդումը դադարեցրել՝ «Հայաստանում քրիստոնեությունը պետական կրոն հռչակելու 1700-ամյակի կապակցությամբ համաներում հայտարարելու մասին» 12.06.2001 թվականի ՀՀ Ազգային ժողովի որոշման 3-րդ կետի համաձայն, մեղադրողի կողմից քրեական հետապնդում իրականացնելուց հրաժարվելու մասին հայտարարության հիմքով: Միաժամանակ Արամ Դավթյանի նկատմամբ ընտրված կալանք խափանման միջոցը վերացվել է, և նա ազատ է արձակվել դատարանի դահլիճից: Արամ Դավթյանը 27.06.2001 թվականից մինչև 18.07.2001 թվականը՝ 22 օր, գտնվել է նախնական կալանքի տակ (1-ին հատոր, գ.թ. 59-60), (2-րդ հատոր, գ.թ. 45-46):

16) ՀՀ քրեական և զինվորական գործերով վերաքննիչ դատարանը 05.09.2001 թվականի որոշմամբ Արամ Դավթյանի կողմից բերված վերաքննիչ բողոքի հիման վրա բեկանել է Մյունիքի մարզի առաջին ատյանի դատարանի 18.07.2001 թվականի որոշումը և գործը վերադարձրել է նույն դատարան՝ նոր դատաքննության (2-րդ հատոր, գ.թ. 49-52):

17) Արամ Դավթյանի բացարկի հիման վրա քրեական գործը Մյունիքի մարզի առաջին ատյանի դատարանից ուղարկվել է Վայոց ձորի մարզի առաջին ատյանի դատարան: Վայոց ձորի մարզի առաջին ատյանի դատարանի 23.01.2003 թվականին

և 03.03.2003 թվականին հետախուզում հայտարարելու մասին և խափանման միջոցը փոխելու և կալանք ընտրելու մասին որոշումների հիման վրա Արամ Դավթյանը 18.02.2005 թվականին երրորդ անգամ կալանավորվել է տեղափոխվել ՀՀ ԱՆ «Նուբարաշեն» քրեակատարողական հիմնարկ (2-րդ հատոր, գ.թ. 74):

18) Վայոց ձորի մարզի առաջին ատյանի դատարանի 22.02.2005 թվականի որոշմամբ Արամ Դավթյանի նկատմամբ ՀՀ քրեական օրենսգրքի 90-րդ հոդվածի 1-ին մասով և 191⁴-րդ հոդվածով քրեական գործի վարույթը կարճվել է, և դադարեցվել քրեական հետապնդումը՝ ՀՀ Ազգային ժողովի վերը նշված 12.06.2001 թվականի համաներման ակտի համաձայն: Արամ Դավթյանը 18.02.2005 թվականից մինչև 22.02.2005 թվականը՝ 4 օր, գտնվել է նախնական կալանքի տակ (2-րդ հատոր, գ.թ. 57-58):

19) ՀՀ քրեական և զինվորական գործերով վերաքննիչ դատարանը 25.04.2005 թվականի որոշմամբ Արամ Դավթյանի կողմից բերված վերաքննիչ բողոքի հիման վրա բեկանել է Վայոց ձորի մարզի առաջին ատյանի դատարանի 22.02.2005 թվականի որոշումը և գործը վերադարձրել նույն դատարան՝ ըստ էության քննության առնելու (1-ին հատոր, գ.թ. 77-78):

20) Վայոց ձորի մարզի առաջին ատյանի դատարանը քրեական գործը դատաքննության նշանակելու մասին որոշմամբ 07.03.2001 թվականի «ՀՀ քրեական օրենսգրքում և վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի համաձայն՝ 90-րդ հոդվածի 3-րդ մասով առաջադրված մեղադրանքը համապատասխանացրել է 90-րդ հոդվածի 1-ին մասին, միաժամանակ 1961 թվականի ՀՀ քրեական օրենսգրքի 90-րդ հոդվածի 1-ին մասով և 191⁴-րդ հոդվածով առաջադրված մեղադրանքները համապատասխանացրել է 18.04.2003 թվականից ընդունված գործող ՀՀ քրեական օրենսգրքին, համապատասխանաբար՝ 179-րդ հոդվածի 1-ին մասին և 353-րդ հոդվածին:

21) Վայոց ձորի մարզի առաջին ատյանի դատարանը 18.05.2006 թվականին դատավճռով Արամ Դավթյանին ՀՀ քրեական օրենսգրքի 353-րդ հոդվածով արդարացրել է և ձանաչել անպարտ, իսկ 18.05.2006 թվականի որոշմամբ քրեական գործը 179-րդ հոդվածի 1-ին մասով ուղարկել է լրացուցիչ նախաքննության (2-րդ հատոր, գ.թ. 58):

22) ՀՀ քրեական և զինվորական գործերով վերաքննիչ դատարանը 29.06.2006 թվականին մեղադրողի և ամբաստանյալի վերաքննիչ բողոքների հիման վրա բեկանել է Վայոց ձորի մարզի առաջին ատյանի դատարանի 18.05.2006 թվականի գործը լրացուցիչ նախաքննության ուղարկելու մասին որոշումը և գործն ուղարկել է նույն դատարան՝ նոր դատաքննության (2-րդ հատոր, գ.թ. 59-62):

23) Վայոց ձորի մարզի առաջին ատյանի դատարանն այլ կազմ չունենալու պատճառով քրեական գործի քննությունը հանձնել է Սյունիքի մարզի առաջին ատյանի դատարանին, որը 24.05.2007 թվականի դատավճռով Արամ Դավթյանին մեղավոր է ձանաչել ՀՀ քրեական օրենսգրքի 179-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված հանցանքում և դատապարտել է ազատազրկման 1 տարի 6 ամիս ժամկետով: Միաժամանակ «ՀՀ անկախության հռչակման 15-րդ տարեդարձի կապակցությամբ

համաներում հայտարարելու մասին» ՀՀ Աժ 07.07.2006 թվականի որոշման կիրառմամբ Արամ Դավթյանն ազատվել է պատժի կրումից (1-ին հատոր, գ.թ. 72-74):

24) ՀՀ վերաքննիչ քրեական դատարանն Արամ Դավթյանի վերաքննիչ բողոքի հիման վրա 20.08.2007 թվականին բեկանել է Սյունիքի մարզի առաջին ատյանի դատարանի 24.05.2007 թվականի դատավճիռը և ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 35-րդ հոդվածի 2-րդ մասի հիմքով, այն է՝ Արամ Դավթյանի մասնակցությունը կատարված հանցագործությանն ապացուցված չլինելու և նոր ապացույցներ ձեռք բերելու բոլոր հնարավորությունները սպառված լինելու, մեղադրողի կողմից Արամ Դավթյանի նկատմամբ քրեական հետապնդում իրականացնելուց հրաժարվելու մասին հայտարարության հիման վրա քրեական գործի վարույթը կարճել է (2-րդ հատոր, գ.թ. 63-66):

25) Գործում առկա գործը դատաքննության նախապատրաստելու դատական նիստի արձանագրության համաձայն՝ Դատարանը հայցվորի հետ քննարկել է ապացուցում պահանջող փաստերի շրջանակը և նշել ապացուցում պահանջող փաստերը: Մասնավորապես արձանագրությամբ՝ 2-րդ հարցով դատարանը նշել է, եթե ծագել է վնասի հատուցման պահանջ ներկայացնելու իրավունքը, ապա ինչ տեսակի վնասներ է կրել Արամ Դավթյանը, իսկ 3-րդ հարցով՝ կոնկրետ ինչ չափով և ինչ ծավալով վնաս է կրել Արամ Դավթյանը: Միաժամանակ արձանագրությամբ նշվել է, որ դատարանը, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 48-րդ հոդվածի համաձայն, ապացուցման պարտականությունը կողմերի միջև բաշխում է հետևյալ կերպ՝ 2-րդ և 3-րդ կետերով նախատեսված փաստերի ապացուցման պարտականությունը դրվել է հայցվոր Արամ Դավթյանի վրա, որից հետո սահմանվել է ապացույցներ ներկայացնելու ժամկետ՝ մինչև դատաքննությունն սկսելը (2-րդ հատոր, գ.թ.132-134):

26) Դատաբժշկական փորձագետի 22.01.2001 թվականի թիվ 08 եզրակացությամբ Արամ Դավթյանի մոտ հաստատվել է հիվանդության առկայություն, որը հետևանք է նախկինում կրած իշեմիկ ինսուլտ՝ «գլխուղեղի արյան շրջանառության սուր խանգարում, վերտեբրոբազիլյար ավազանում, բուլբար երևույթներով, վալենբերգ Զախարչենկոյի սիմպտոմատիկայով հաճախակի սրացումներով» ախտորոշմամբ հիվանդության: Փորձաքննության պահին առկա հիվանդությունը համարվում է դժվար բուժվող և հաճախակի, միանգամից կրկնվող, ունի կյանքի համար վտանգավոր բարդություններ և Արամ Դավթյանի գտնվելը նախաքննական շրջանում կալանքի տակ անհամատեղելի է նրա ունեցած հիվանդությունների հետ (1-ին հատոր, գ.թ. 30-31):

4. Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումները

Քննելով վճռաբեկ բողոքը նշված հիմքի սահմաններում՝ Վճռաբեկ դատարանը գրնում է, որ այն հիմնավոր է մասնակիորեն հերկյալ պարձատրանությամբ.

Վճռաբեկ դատարանը, որոշելու համար վճռաբեկ բողոքի հիմքի հիմնավոր-վածությունը, բողոքի սահմաններում անհրաժեշտ է համարում անդրադառնալ հերկյալ իրավական հարցերին

- ապօրինի դատապարտելու, քրեական պատասխանատվության ենթարկելու, որպես խափանման միջոց կալանք կամ չբացակայելու

մասին ստորագրություն կիրառելու դեպքում վնասի հատուցման կանոններին

- Մարդու իրավունքների եվրոպական դատարանի կողմից բարոյական վնասի հատուցման վերաբերյալ դիրքորոշման պարտադիրությանը ՀՀ դատարանների համար բարոյական վնասի հատուցման հարցը լուծելիս
- սույն գործով պետական տուրքի լուծման հարցերին:

1. Այօրինի դատապարտելու, քրեական պատասխանատվության ենթարկելու, որպես խախտման միջոց կայանք կամ չբացակայելու մասին ստորագրություն կիրառելու դեպքում վնասի հատուցման կանոնները:

ՀՀ Սահմանադրության 16-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ յուրաքանչյուր ոք իրավունք ունի ազատությունից այօրինի զրկման կամ այօրինի խուզարկության դեպքում օրենքով սահմանված հիմքերով և կարգով պարձառված վնասի հատուցման:

ՀՀ Սահմանադրության 18-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի իր իրավունքների և ազատությունների դատական, ինչպես նաև պետական այլ մարմինների առջև իրավական պաշտպանության արդյունավետ միջոցների իրավունք:

Կոնվենցիայի 5-րդ հոդվածի 5-րդ կետի համաձայն՝ յուրաքանչյուր ոք, ով, ի խախտումն նույն հոդվածի դրույթների, ձերբակալման կամ կալանավորման գոհ է դարձել, իրավունք ունի հայցի ուժով օժտված փոխապարտուցման:

Կոնվենցիայի 13-րդ հոդվածի համաձայն՝ յուրաքանչյուր ոք, ում նույն կոնվենցիայով ամրագրված իրավունքներն ու ազատությունները խախտվում են, ունի պետական մարմինների առջև իրավական պաշտպանության արդյունավետ միջոցի իրավունք, նույնիսկ եթե խախտումը կարարել է նաև պաշտոնե գործող անձինք:

Վերոնշյալ նորմերից հետևում է, որ պետական մարմինների այօրինի գործողությունների հետևանքով անձին ազատությունից այօրինի զրկելու դեպքում վնասի հատուցման իրավունքը սահմանադրական սկզբունք է, որն ամրագրված է նաև միջազգային իրավական ակտերով:

Բացի այդ, Միավորված Ազգերի Կազմակերպության 09.12.1988 թվականի «Որևէ ձևով ձերբակալվող կամ կալանավորվող անձանց պաշտպանության սկզբունքների ժողովածուի» (հաստատվել է ՄԱԿ-ի Գլխավոր Ասամբլեայի 09.12.1988 թվականի 43/173 բանաձևով) 35-րդ սկզբունքով սահմանվել է դիրքորոշում այն մասին, որ պետական պաշտոնատար անձի գործողությունների կամ զանցառությունների հետևանքով պատճառված վնասը՝ ի խախտումն սույն սկզբունքների բովանդակված իրավունքների, ենթակա է հատուցման՝ **պատասխանատվության կիրառվող նորմերի համաձայն, որոնք նախատեսված են ներքին օրենսդրությամբ:**

Միաժամանակ, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ վերոնշյալ սկզբունքի կենսագործումը պետք է դիտարկել իրավական պաշտպանության արդյունավետ միջոցների սկզբունքի լույսի ներքո հատկապես այն դեպքում, երբ անձը վնաս է կրել պետական մարմինների այօրինի գործողությունների հետևանքով:

Վճռաբեկ դատարանի վերոնշյալ դիրքորոշումը հիմնավորվում է նաև Մարդու իրավունքների եվրոպական դատարանի վճիռներով: Մասնավորապես, Մարդու իրավունքների եվրոպական դատարանի նախադեպային իրավունքում ձևավորվել է այն դիրքորոշումը, որ ազատությունից անօրինական զրկված անձի փոխհատուցման իրավունքը պետք է ապահովված լինի որոշակիության բավարար աստիճանով (տե՛ս, Ռեիբոկն ընդդեմ Սլովենիայի (Rehbock v. Slovenia) գործով Եվրոպական դատարանի 11.11.2000 թվականի վճիռը, կետ 92): Մարդու իրավունքների եվրոպական

դատարանը նշել է նաև, որ Կոնվենցիայի 5-րդ հոդվածի 5-րդ կետը կիրառելի է այն փոխհատուցումների նկատմամբ, որոնք կապված են 1-ին, 2-րդ, 3-րդ, 4-րդ կետերի խախտման հետևանքով ազատությունից զրկելու հետ (*Կրե'ս, Վասսինկն ընդդեմ Միդելբուրգի գործով Եվրոպական դատարանի 27.09.1990 թվականի վճիռը, կետ 38, Wassink v. the Netherlands, judgment of 27 September 1990, Series A no. 185-A, p. 14, § 38*): Փոխհատուցման իրավունքը, որը նախատեսված է 5-րդ հոդվածի 5-րդ կետով, ենթադրում է, որ Կոնվենցիայի վերոնշյալ կետերից մեկի խախտումը հաստատվել է կամ ներպետական մարմինների, կամ Կոնվենցիոն ինստիտուտների կողմից (*Կրե'ս, Ն. Մին ընդդեմ Իտալիայի գործով Եվրոպական դատարանի 18.12.2002 թվականի վճիռը, կետ 49, N.C. v. ITALY, Application no. 24952/94, p. 49*): Մարդու իրավունքների եվրոպական դատարանը ճանաչել է Կոնվենցիայի 5-րդ հոդվածի 5-րդ կետի խախտում այն դեպքում, երբ օրենսդրությունը սահմանում է փոխհատուցման իրավունքը, սակայն պրակտիկայում անձը չի ստանում փոխհատուցում, այսինքն՝ այդ իրավունքը բավականաչափ հստակ չէ (*Կրե'ս, Սակիկը և ուրիշներն ընդդեմ Թուրքիայի գործով Եվրոպական դատարանի 26.11.1997 թվականի վճիռը, կետեր 55-61*):

Վճռաբեկ դատարանը գտնում է, որ վերոնշյալ նորմերի ապահովման նպատակով օրենսդրությունը բավարար որոշակիությամբ սահմանում է ազատությունից ապօրինի զրկման դեպքում պատճառված վնասի հատուցման հիմքերը և կարգը:

Մասնավորապես, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 66-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ արդարացվածն իրավունք ունի պահանջել իրեն անօրինական ձերբակալման, կալանավորման, որպես մեղադրյալ ներգրավելու և դատապարտման **հետևանքով պատճառված գույքային հատուցում ամբողջ ծավալով՝** հաշվի առնելով հնարավոր բաց թողնված օգուտները: Նույն հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ արդարացվածը որպես հատուցում իրավունք ունի ստանալ՝ աշխատավարձը, թոշակը, նպաստները, այլ եկամուտներ, որոնցից նա զրկվել է, ինչպես նաև վճարված դատական ծախսերը, փաստաբանին վճարված գումարները:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1064-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ ապօրինի դատապարտելու, քրեական պատասխանատվության ենթարկելու, որպես խափանման միջոց կալանք կամ չբացակայելու մասին ստորագրություն կիրառելու, վարչական տույժի ենթարկելու **հետևանքով պատճառված վնասը**, օրենքով սահմանված կարգով, լրիվ ծավալով հատուցում է Հայաստանի Հանրապետությունը՝ անկախ հետաքննության, նախաքննության, դատախազության և դատարանի պաշտոնատար անձանց մեղքից: Քաղաքացուն հետաքննության, նախաքննության, դատախազության մարմինների ապօրինի գործունեությամբ պատճառված վնասը, որը չի հանգեցրել տույն հոդվածի 1-ին կետում նախատեսված հետևանքներին, հատուցվում է տույն օրենսգրքի 1063-րդ հոդվածում նախատեսված հիմքերով և կարգով:

Վերոնշյալ հոդվածների վերլուծությունից հետևում է, որ ելնելով արդարացվածի կարգավիճակի առանձնահատկություններից, վերջինիս իրավական և փաստական վիճակի վերականգնման անհրաժեշտությունից և սահմանադրական և միջազգային իրավական դրույթներից, օրենսդիրը սահմանել է ապօրինի կերպով ազատությունից զրկված արդարացվածին հասցված վնասների ամբողջ ծավալով հատուցման կանոնը: Ընդ որում, հատուցվում են այն վնասները, որոնք ապօրինի դատապարտելու, քրեական պատասխանատվության ենթարկելու, որպես խափանման միջոց կալանք կամ չբացակայելու մասին ստորագրություն կիրառելու հետևանք են:

Վճռարեկ դատարանը հարկ է համարում նշել, որ օրենսդիրը սահմանում է այն վնասները, որոնք պետք է հատուցվեն:

Մասնավորապես, վերոնշյալ նորմերի համադրումը ցույց է տալիս, որ արդարացվածն իրավունք ունի պահանջելու հատուցելու՝

աշխատավարձը

թոշակը

նպաստները

վճարված դատական ծախսերը

փաստաբանին վճարված գումարները

հնարավոր բաց թողնված օգուտները

այլ եկամուտ, որից անձը զրկվել է:

Վճռարեկ դատարանը գտնում է, որ արդարացվածի վնասի հատուցման առկայության և չափի նկատմամբ տարածվում են նաև ՀՀ քաղաքացիական օրենսգրքով նախատեսված վնասի հատուցման կանոնները:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 17-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ անձը, ում իրավունքը խախտվել է, կարող է պահանջել իրեն պատճառված վնասների լրիվ հատուցում, եթե վնասների հատուցման ավելի պակաս չափ նախատեսված չէ օրենքով կամ պայմանագրով:

Նույն օրենսգրքի 17-րդ հոդվածի 2-րդ կետի համաձայն՝ վնասներ են իրավունքը խախտված անձի ծախսերը, որ նա կատարել է կամ պետք է կատարի խախտված իրավունքը վերականգնելու համար, նրա գույքի կորուստը կամ վնասվածքը (իրական վնաս), ինչպես նաև չստացված եկամուտները, որոնք այդ անձը կստանար քաղաքացիական շրջանառության սովորական պայմաններում, եթե նրա իրավունքը չխախտվեր (բաց թողնված օգուտ):

Վերը նշված հոդվածների վերլուծությունից հետևում է, որ նմանատիպ գործերով վնասի հատուցման համար պարտադիր պայման է պարտապանի ոչ օրինաչափ վարքագծի, վնասների, վնասների ու ոչ օրինաչափ գործողության միջև պատճառահետևանքային կապի առկայությունը:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 48-րդ հոդվածի առաջին կետի համաձայն՝ գործին մասնակցող յուրաքանչյուր անձ պետք է ապացուցի իր վկայակոչած փաստերը:

Փաստորեն, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 48-րդ հոդվածի հիմքով վնասի հատուցման համար պարտադիր պայման հանդիսացող տարրերից՝ հայցվորի մոտ վնասների առկայության, պատասխանողի մոտ ոչ օրինաչափ վարքագծի առկայության, **վնասների ու ենթադրյալ վնաս պատճառող անձի ոչ օրինաչափ գործողության միջև պատճառահետևանքային կապի առկայության** հանգամանքների ապացուցման բեռը կրում է հայցվոր կողմը (*տե՛ս*, «Մասնա-Մասնաս» ՍՊԸ-ն ընդդեմ Դանիել Ղասաբօղյանի՝ պարձառված վնասի հատուցման պահանջի մասին թիվ ԵԲԴ/0086/02/08 գործով ՀՀ վճռարեկ դատարանի 26.06.2009 թվականի որոշումը):

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 47-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ գործով ապացույցներ են նույն օրենսգրքով նախատեսված կարգով ձեռք բերված տեղեկությունները, որոնց հիման վրա դատարանը պարզում է գործին մասնակցող անձանց պահանջները և առարկությունները հիմնավորող, ինչպես նաև վեճի լուծման համար նշանակություն ունեցող այլ հանգամանքների

անկայությունը կամ բացակայությունը: Այդ տեղեկությունները հաստատվում են՝ 1. գրավոր ապացույցներով, 2. փորձագետների եզրակացություններով, 3. վկաների ցուցմունքներով, 4. գործին մասնակցող անձանց ցուցմունքներով:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 52-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ գործի հանգամանքները, որոնք պետք է հաստատվեն միայն որոշակի ապացույցներով, չեն կարող հաստատվել այլ ապացույցներով:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 53-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ դատարանը յուրաքանչյուր ապացույց գնահատում է գործում եղած բոլոր ապացույցների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտության վրա հիմնված ներքին համոզմամբ:

Նշված նորմերի վերլուծությունից հետևում է, որ գործի լուծման համար էական նշանակություն ունեցող փաստի հաստատված լինելու հարցը դատարանը պարզում է գործում եղած բոլոր ապացույցների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտման վրա հիմնված ներքին համոզմամբ:

Սույն գործում առկա՝ գործը դատաքննության նախապատրաստելու դատական նիստի արձանագրության համաձայն՝ Դատարանը հայցվորի հետ քննարկել է ապացուցում պահանջող փաստերի շրջանակը և սահմանել հայցվորի կողմից ապացուցում պահանջող փաստերը: Մինչդեռ, Արամ Դավթյանի կողմից վնասի չափը հիմնավորող որևէ ապացույց (բացառությամբ փաստաբանին վճարված գումարի մասից) գործի քննության ընթացքում չի ներկայացվել:

Հիմք ընդունելով վերոգրյալը և սույն գործի փաստերը համադրելով՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Արամ Դավթյանը ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 48-րդ հոդվածի ուժով չի ապացուցել իր պահանջի հիմքում ընկած հանգամանքները:

Ինչ վերաբերում է 40.250.000 ՀՀ դրամ փաստաբանի վարձատրության հատուցման վերաբերյալ բողոք բերած անձի փաստարկին, ապա Վճռաբեկ դատարանը դրան չի անդրադառնում, քանի որ նշված պահանջը մասնակի բավարարելու հիմքում դատարանները դրել են փաստաբանի խելամիտ վարձատրությունը, մինչդեռ նշված պատճառաբանության վերաբերյալ բողոք բերած անձը որևէ հակափաստարկ չի ներկայացրել:

Ինչ վերաբերում է բողոք բերած անձի այն փաստարկին, որ Վերաքննիչ դատարանը, մերժելով նաև Ընկերության կողմից 57.063.769 ՀՀ դրամ որպես պայմանագրով նախատեսված աշխատանքների կատարման դիմաց չվճարված գումարի մատով պատճառված վնասի պահանջը՝ հայցային վաղեմության ժամկետների լրանալու պատճառաբանությամբ, պատշաճ չի գնահատել ներկայացված 31.03.1997 թվականի թիվ 17/97 պայմանագիրը, որով հետաձգվել են նախկին պայմանագրային պարտավորությունների կատարումը, ապա Վճռաբեկ դատարանը գտնում է, որ «Հայաստանի երկաթուղային ճանապարհ» ՀՆՊԶ-ի և «Վանք» ՄՊԸ-ի 31.03.1997 թվականի Կապանի կայարանում ջերմաբարշեղի պահպանման պայմանագիրը բավարար չէ հայցային վաղեմության ժամկետի ընդհատված լինելը հաստատված համարելու համար, քանի որ դրանում բացակայում է նախկին պայմանագրային պարտավորությունների կատարումը հետաձգելու վերաբերյալ որևէ տեղեկություն:

2. Մարդու իրավունքների եվրոպական դատարանի կողմից բարոյական վնասի հատուցման վերաբերյալ դիրքորոշման պարտադիրությունը ՀՀ դատարանների համար բարոյական վնասի հատուցման հարցը լուծելիս:

Անդրադառնալով Արամ Դավթյանի վճռաբեկ բողոքի՝ բարոյական վնասի բռնագանձման պահանջի հիմնավորումներին, մասնավորապես այն փաստարկին, որ Եվրոպական դատարանի վճիռներով նախադեպ է ստեղծվել պատճառված բարոյական վնասը փոխհատուցելու վերաբերյալ, ինչն էլ ՀՀ դատական օրենսգրքի 15-րդ հոդվածի 4-րդ մասի ուժով պարտադիր է դատարանի համար նույնանման փաստական հանգամանքներով գործի քննության ժամանակ, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ այն անհիմն է հետևյալ պատճառաբանությամբ.

ՀՀ դատական օրենսգրքի 15-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ որոշակի փաստական հանգամանքներ ունեցող գործով վճռաբեկ դատարանի կամ Մարդու իրավունքների եվրոպական դատարանի **դատական ակտի հիմնավորումները (այդ թվում՝ օրենքի մեկնաբանությունները)** պարտադիր են դատարանի համար նույնանման փաստական հանգամանքներով գործի քննության ժամանակ, բացառությամբ այն դեպքի, երբ վերջինս ծանրակշիռ փաստարկների մատնանշմամբ հիմնավորում է, որ դրանք կիրառելի չեն տվյալ փաստական հանգամանքների նկատմամբ:

Կոնվենցիայի 41-րդ հոդվածի համաձայն՝ եթե դատարանը գտնում է, որ տեղի է ունեցել Կոնվենցիայի կամ դրան կից Արձանագրությունների խախտում, իսկ համապատասխան Բարձր պայմանավորվող կողմի ներպետական իրավունքն ընձեռում է միայն մասնակի հատուցման հնարավորություն, ապա Դատարանը որոշում է, անհրաժեշտության դեպքում, տուժած կողմին արդարացի փոխհատուցում տրամադրել:

Ինչ վերաբերում է բողոք բերող անձի կողմից վկայակոչված՝ Լաբիտան ընդդեմ Իտալիայի գործին, ապա Վճռաբեկ դատարանը հարկ է համարում արձանագրել, որ Եվրոպական դատարանը պատճառված բարոյական վնասը փոխհատուցում է համապատասխան լիազորության առկայության շրջանակում, այսինքն՝ բարոյական վնասի փոխհատուցում սահմանելը դատարանի լիազորությունն է, և հենց այդ դատարանն էլ իրավասու է կիրառել այն: Մինչդեռ, ՀՀ դատական օրենսգրքի 15-րդ հոդվածի 4-րդ մասը սահմանում է ոչ թե Եվրոպական դատարանի այս կամ այն լիազորությունները ներպետական ատյաններում կիրառելու, այլ նույնանման փաստական հանգամանքներով գործի քննության ժամանակ դատական ակտի հիմնավորումների (այդ թվում՝ օրենքի մեկնաբանությունների) պարտադիր լինելու պահանջ:

Հիմք ընդունելով վերոգրյալը՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ բարոյական վնասի հատուցման պահանջի մատով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 109-րդ հոդվածի 1-ին կետի կարգով սույն քաղաքացիական գործի վարույթը ենթակա է կարճման, քանի որ Հայաստանի Հանրապետության քաղաքացիաիրավական հարաբերությունները կարգավորող օրենսդրությունը բարոյական վնասի հատուցումը որպես պատասխանատվության տեսակ չի նախատեսում, որպիսի հիմքով վեճը ենթակա չէ դատարանում քննության:

3. Սույն գործով պելոպական փուլի լուծման հարցերը:

Ինչ վերաբերում է սույն գործով Արամ Դավթյանի կողմից հայցադիմում, վերաքննիչ և վճռաբեկ բողոքներ ներկայացնելու համար պետական տուրք գանձելու հարցին, ապա Վճռաբեկ դատարանը գտնում է, որ այդ հարցը պետք է համարել լուծված հետևյալ պատճառաբանությամբ.

ՀՀ սահմանադրական դատարանի 14.12.2010 թվականի թիվ ՍԴՌ-929 որոշմամբ «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքի 22-րդ հոդվածի առաջին մասը, այնքանով, որքանով չի սահմանում այլ սուբյեկտներից բացի, արդարացվածին՝ իրավասու պետական մարմինների և պաշտոնատար անձանց ապօրինի գործողությունների (անգործության) հետևանքով պատճառված վնասի հատուցման հայցերով պետական տուրքի վճարումից ազատելու վերաբերյալ արտոնություն նախատեսող դրույթ՝ արգելափակելով անձի սահմանադրական իրավունքի իրացումը, ձանաչվել է ՀՀ Սահմանադրության 16-րդ հոդվածի 4-րդ մասին և 20-րդ հոդվածի 5-րդ մասին հակասող և անվավեր:

Վերաքննիչ դատարանը, Արամ Դավթյանի վերաքննիչ բողոքը մերժելով, որոշել է Արամ Դավթյանից հօգուտ պետական բյուջեի բռնագանձել 6.583.484 ՀՀ դրամ որպես պետական տուրք: Վճռաբեկ դատարանը, հիմք ընդունելով ՀՀ սահմանադրական դատարանի 14.12.2010 թվականի թիվ ՍԴՌ-929 որոշումը, գտնում է, որ պետական տուրքի բռնագանձման մասով Վերաքննիչ դատարանի որոշումը պետք է բեկանել:

Այսպիսով, պետական տուրքի գանձման մասով վճռաբեկ բողոքի հիմքի առկայությունը Վճռաբեկ դատարանը դիտում է բավարար՝ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 227-րդ հոդվածի ուժով Վերաքննիչ դատարանի որոշումը մասնակիորեն բեկանելու համար:

Միաժամանակ, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ սույն գործով անհրաժեշտ է կիրառել ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 240-րդ հոդվածի 1-ին կետի 4-րդ ենթակետով սահմանված՝ ստորադաս դատարանի դատական ակտը փոփոխելու Վճռաբեկ դատարանի լիազորությունը հետևյալ հիմնավորմամբ.

ՀՀ Սահմանադրության 19-րդ հոդվածի և Կոնվենցիայի 6-րդ հոդվածի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի ողջամիտ ժամկետում իր գործի քննության իրավունք: Սույն գործով վեճի լուծումն էական նշանակություն ունի գործին մասնակցող անձանց համար: Վճռաբեկ դատարանը գտնում է, որ գործը ողջամիտ ժամկետում քննելը հանդիսանում է ՀՀ Սահմանադրության և Կոնվենցիայի նշված հոդվածներով ամրագրված՝ անձի արդար դատաքննության իրավունքի տարր: Հետևաբար, գործի անհարկի ձգձգումները վտանգ են պարունակում նշված իրավունքի խախտման տեսանկյունից: Տվյալ դեպքում Վճռաբեկ դատարանի կողմից ստորադաս դատարանի դատական ակտը փոփոխելը բխում է արդարադատության արդյունավետության շահերից, քանի որ սույն գործով վերջնական դատական ակտ կայացնելու համար նոր հանգամանք հաստատելու անհրաժեշտությունը բացակայում է:

Դատական ակտը փոփոխելիս Վճռաբեկ դատարանը հիմք է ընդունում սույն որոշման պատճառաբանությունները, ինչպես նաև գործի նոր քննության անհրաժեշտության բացակայությունը:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 240-241²-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

ՈՐՈՇԵՑ

1. Վճռաբեկ բողոքը բավարարել մասնակիորեն: Բեկանել ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 19.11.2009 թվականի որոշման՝ Հայաստանի Հանրապետությունից հոգուտ Արամ Դավթյանի 70.000.000 ՀՀ դրամ բարոյական վնաս բռնագանձելու, Արամ Դավթյանից հոգուտ Հայաստանի Հանրապետության 6.583.484 ՀՀ դրամ պետական տուրք բռնագանձելու մասերը: Արամ Դավթյանից հոգուտ Հայաստանի Հանրապետության 6.583.484 ՀՀ դրամ որպես պետական տուրք բռնագանձելու մասով այն փոփոխել. պետական տուրքի հարցը համարել լուծված:

70.000.000 ՀՀ դրամ բարոյական վնաս բռնագանձելու մասով քաղաքացիական գործի վարույթը կարձել: Մնացած մասով որոշումը թողնել օրինական ուժի մեջ:

2. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

*ՆԱԽԱԳԱՀՈՂ՝ ստորագրություն
ԴԱՏԱՎՈՐՆԵՐ՝ ստորագրություններ*

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական Քաղաքացիական գործ թիվ ԵԱԲԴ/0754/02/09
դատարանի որոշում 2011թ.
Քաղաքացիական գործ թիվ ԵԱԲԴ/0754/02/09
Նախագահող դատավոր՝ Ա.Մկրտչյան
Դատավորներ՝ Ն.Հովսեփյան
Ն.Բարսեղյան

ՈՐՈՇՈՒՄ

ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Հայաստանի Հանրապետության վճարելի դատարանի քաղաքացիական և վարչական
պալատը (այսուհետ՝ Վճարելի դատարան)

նախագահությամբ

մասնակցությամբ դատավորներ

Ե.ԽՈՒՆԴԿԱՐՅԱՆԻ

Վ.ԱՎԱՆԵՍՅԱՆԻ

Վ.ԱԲԵԼՅԱՆԻ

Ա.ԲԱՐՍԵՂՅԱՆԻ

Մ.ԴՐՄԵՅԱՆԻ

Տ.ՊԵՏՐՈՍՅԱՆԻ

Ե.ՍՈՂՈՍՈՆՅԱՆԻ

2011 թվականի հուլիսի 01-ին

դռնբաց դատական նիստում, քննելով Լուսինե Աբրահամյանի և Հակոբ Մուրադյանի վճարելի բողոքը ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 17.09.2010 թվականի որոշման դեմ՝ ըստ Լուսինե Աբրահամյանի և Հակոբ Մուրադյանի հայցի ընդդեմ «Դավիթ երթուղային տաքսի» ՓԲ ընկերության (այսուհետ՝ Ընկերություն)՝ վնասը հատուցելու պահանջի մասին,

ՊԱՐԶԵՑ

1. Գործի դատավարական նախապատմությունը

Դիմելով դատարան՝ Լուսինե Աբրահամյանը և Հակոբ Մուրադյանը պահանջել են բռնագանձել Ընկերությունից 1.795.400 ՀՀ դրամ պատճառված վնասը, այդ թվում՝ 430.000 ՀՀ դրամը՝ որպես Լուսինե Աբրահամյանին պատճառված վնաս, 220.000 ՀՀ դրամը՝ որպես անչափահաս որդուն՝ Արամ Մուրադյանին պատճառված վնաս, և 1.145.400 ՀՀ դրամը՝ որպես «ԲՄՎ-320i» մակնիշի 01 ՕԼ 278 պետհամարանիշի ավտոմեքենային պատճառված վնաս:

Լուսինե Աբրահամյանը և Հակոբ Մուրադյանը, ավելացնելով հայցային պահանջի չափը, պահանջել են բռնագանձել Ընկերությունից 2.035.308 ՀՀ դրամ պատճառված վնասը, այդ թվում՝ 430.000 ՀՀ դրամը՝ որպես Լուսինե Աբրահամյանին պատճառված վնաս, 220.000 ՀՀ դրամը՝ որպես անչափահաս որդուն՝ Արամ Մուրադյանին

պատճառված վնաս, 1.145.400 ՀՀ դրամը՝ որպես «ԲՄՎ-320i» մակնիշի 01 ՕԼ 278 պետհամարանիշի ավտոմեքենային պատճառված վնաս, և 235.308 ՀՀ դրամը՝ որպես վճարված պետական տուրք և փաստաբանի վարձատրության համար վճարված գումար:

Երևանի Արաբկիր և Քանաքեռ-Զեյթուն համայնքների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի 22.07.2009 թվականի վճռով հայցը բավարարվել է մասնակիորեն:

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 13.11.2009 թվականի որոշմամբ Ընկերության վերաքննիչ բողոքը բավարարվել է՝ բեկանվել է Երևանի Արաբկիր և Քանաքեռ-Զեյթուն համայնքների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի 22.07.2009 թվականի վճիռը և գործն ուղարկվել է նույն դատարան՝ նոր քննության:

Լուսինե Աբրահամյանը և Հակոբ Մուրադյանը, ավելացնելով հայցային պահանջի չափը, պահանջել են բռնագանձել Ընկերությունից 2.310.708 ՀՀ դրամ պատճառված վնասը, այդ թվում՝ 430.000 ՀՀ դրամը՝ որպես Լուսինե Աբրահամյանին պատճառված վնաս, 220.000 ՀՀ դրամը՝ որպես անչափահաս որդուն՝ Արամ Մուրադյանին պատճառված վնաս, 1.145.400 ՀՀ դրամը՝ որպես «ԲՄՎ-320i» մակնիշի 01 ՕԼ 278 պետհամարանիշի ավտոմեքենային պատճառված վնաս, 270.000 ՀՀ դրամը՝ որպես առողջությանը պատճառված վնասի հետևանքով կորցրած աշխատավարձի հատուցում, 244.708 ՀՀ դրամը՝ որպես վճարված պետական տուրք և փաստաբանի վարձատրության համար վճարված գումար:

Երևանի Արաբկիր և Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի (այսուհետ՝ Դատարան) 09.07.2010 թվականի վճռով հայցը բավարարվել է մասնակիորեն: Վճռվել է §§ Դավիթ Երթուղային Տաքսի» ՓԲԸ-ից հոգուտ հայցվորներ Լուսինե Վարդանի Աբրահամյանի և Հակոբ Վազգենի Մուրադյանի բռնագանձել ընդհանուր 1.345.400 ՀՀ դրամ, հոգուտ հայցվոր Լուսինե Վարդանի Աբրահամյանի՝ 280.000 ՀՀ դրամ, հոգուտ Հակոբ Վազգենի Մուրադյանի՝ 45.400 ՀՀ դրամ որպես բավարարված հայցապահանջի չափին համամասն հայցադիմումը դատարան ներկայացնելու համար վերջինիս կողմից վճարված պետական տուրքի գումար: Մնացած գումարները բռնագանձելու մասով հայցը մերժել: Հայցվորներ Լուսինե Վարդանի Աբրահամյանից և Հակոբ Վազգենի Մուրադյանից հոգուտ պատասխանող «Դավիթ Երթուղային Տաքսի» ՓԲԸ-ի բռնագանձել ընդհանուր 52.827 ՀՀ դրամ:

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի (այսուհետ՝ Վերաքննիչ դատարան) 17.09.2010 թվականի որոշմամբ Ընկերության վերաքննիչ բողոքը բավարարվել է մասնակիորեն՝ բեկանվել է Դատարանի 09.07.2010 թվականի վճռի՝ ««Դավիթ Երթուղային Տաքսի» ՓԲԸ-ից հոգուտ Լուսինե Աբրահամյանի և Հակոբ Մուրադյանի 1.145.400 ՀՀ դրամ վթարի հետևանքով «ԲՄՎ-320i» մակնիշի 01 ՕԼ 278 պետհամարանիշի ավտոմեքենային պատճառված վնասի գումարը և դրան համապատասխան դատական ծախսերը բռնագանձելու» մասերը, և գործն այդ մասերով ուղարկվել է նույն դատարան՝ նոր քննության: Դատարանի 09.07.2010 թվականի վճռի մնացած մասը թողնվել է անփոփոխ՝ օրինական ուժի մեջ:

Սույն գործով վճռաբեկ բողոք են ներկայացրել Լուսինե Աբրահամյանը և Հակոբ Մուրադյանը:

Վճռաբեկ բողոքի պատասխան է ներկայացրել Ընկերությունը:

2. Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը

Սույն վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

Վերաքննիչ դատարանը սխալ է մեկնաբանել ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 17-րդ հոդվածը, խախտել է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 6-րդ, 47-րդ, 48-րդ, 53-րդ հոդվածները, 62-րդ հոդվածի 3-րդ կետը:

Բողոք բերած անձինք նշված պնդումը պատճառաբանել են հետևյալ փաստարկներով.

Վերաքննիչ դատարանը բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ չի գնահատել գործում առկա ապացույցները և պատշաճ իրավական գնահատական չի տվել «Փորձագիտական կենտրոն» ՊՈԱ կազմակերպության 23.01.2009 թվականի թիվ 00610910 փորձագետի եզրակացությանը:

Մասնավորապես, Վերաքննիչ դատարանն անտեսել է, որ «Փորձագիտական կենտրոն» ՊՈԱ կազմակերպության 23.01.2009 թվականի թիվ 00610910 փորձագետի եզրակացությամբ հստակ նշվել է, որ ավտոմեքենային պատճառված վնասը և ավտոմեքենայի բացակայությունը չի կարող ինքնին նվազեցնել ավտովթարի հետևանքով ավտոմեքենային պատճառված վնասի չափը, բացի այդ, փորձագետի եզրակացությամբ որևէ «հավանական» կամ «անորոշ» եզրահանգում չի տրվել:

Ավելին, Վերաքննիչ դատարանը պատճառված վնասը հատուցելու վերաբերյալ նորմերի սխալ մեկնաբանության արդյունքում անտեսել է նաև այն հանագամանքը, որ վթարի ենթարկված ավտոմեքենայի վնասի չափը և ավտոմեքենան այդ վիճակում վաճառելու արժեքի հանրագումարը կազմում է ավտոմեքենայի շուկայական արժեքը, հետևաբար ավտոմեքենան վաճառված լինելու փաստը չի կարող նվազեցնել պատճառված վնասի չափը:

Մինչդեռ, Դատարանը «Փորձագիտական կենտրոն» ՊՈԱ կազմակերպության 23.01.2009 թվականի թիվ 00610910 փորձագետի եզրակացությունը գնահատել է գործում առկա ապացույցների հետ և վնասի չափը որոշելիս հանգել ճիշտ եզրահանգման:

Վերոգրյալի հիման վրա բողոք բերած անձինք պահանջել են մասնակիորեն րեկանել Վերաքննիչ դատարանի 17.09.2010 թվականի որոշումը և օրինական ուժ տալ Դատարանի 09.07.2010 թվականի վճռին:

2.1. Վճռաբեկ բողոքի պատասխանի հիմնավորումները

Վերաքննիչ դատարանի կողմից որոշումը կայացվել է գործում առկա բոլոր ապացույցների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտության հիման վրա, հետևաբար վճռաբեկ բողոքը ենթակա է մերժման:

3. Վճռաբեկ բողոքի քննության համար նշանակություն ունեցող փաստերը

Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1. «Փորձագիտական կենտրոն» ՊՈԱ կազմակերպության 23.01.2009 թվականի թիվ 00610910 փորձագետի եզրակացության համաձայն՝ փորձաքննությանը տրամադրված վիճակում «ԲՄՎ-320i» մակնիշի 01 ՕԼ 278 պետհամարանիշի ավտոմեքենայի վնասի չափն արժեքային արտահայտությամբ 03.01.2009 թվականի

դրությամբ վնասվածքների հետևանքով գործող շուկայական գներով կարող է կազմել 1.145.400 ՀՀ դրամ (հատոր 1-ին, գ.թ.31-35):

2. 18.02.2009 թվականի նյութերով քրեական գործի հարուցումը մերժելու մասին որոշմամբ մերժվել է Արևշատ Մանուկյանի կողմից վթար կատարելու և Լուսինե Աբրահամյանի առողջությանը ծանր վնաս պատճառելու փաստի առթիվ նախապատրաստված նյութերով քրեական գործի հարուցումը՝ տուժողի բողոքի բացակայության պատճառով, իսկ անչափահաս Արամ Հակոբի Մուրադյանի առողջությանը թեթև վնաս պատճառելու փաստի առթիվ նախապատրաստված նյութերով քրեական գործի հարուցումը՝ հանցակազմի բացակայության պատճառով (հատոր 1-ին, գ.թ.20-25):

3. Ընկերության 10.06.2008 թվականի թիվ 53 հրամանի համաձայն՝ 10.06.2008 թվականից վարորդ Արևշատ Մանուկյանին ամրացվել է 2608 (4290L64) պետհամարանիշի միկրոավտոբուսն Ընկերության երթուղիներում աշխատելու համար (հատոր 1-ին, գ.թ.18): Նշված ավտոմեքենան սեփականության իրավունքով պատկանել է Ընկերությանը:

4. 08.01.2009 թվականի թիվ 75, 08.01.2009 թվականի թիվ 22, 29.01.2009 թվականի թիվ 201, 29.01.2009 թվականի թիվ 214 և 11.03.2009 թվականի թիվ 3377 և 08.10.2009 թվականի թիվ 77 դրամարկղային մուտքի անդորրագրերի համաձայն՝ Լուսինե Աբրահամյանի և Արամ Մուրադյանի համար վճարվել են «Արմենիա» ՀԲԿ ՓԲ ընկերությանը համապատասխանաբար 5.000 ՀՀ դրամ, 10.000 ՀՀ դրամ, 10.000 ՀՀ դրամ, 5.000 ՀՀ դրամ, 5.000 ՀՀ դրամ և 6.500 ՀՀ դրամ (հատոր 1-ին, գ.թ.6-11):

5. Իրավաբանական ծառայություններ մատուցելու մասին 02.04.2009 թվականի թիվ 11-Ն/09 պայմանագրի հիմքով Լուսինե Աբրահամյանը և Հակոբ Մուրադյանը վճարել են «Նորմա իրավաբանական գրասենյակ» ՍՊ ընկերության հաշվեհամարին 100.000 ՀՀ դրամ (հիմք՝ 01.07.2009 թվականի թիվ 007139 կանխիկ մուտքի անդորրագիրը) (հատոր 1-ին, գ.թ. 72, 74-76):

6. Իրավաբանական բնույթի ծառայություններ մատուցելու մասին 17.05.2010 թվականի թիվ ԻԵ-ԼԱ-ՀՄ-04/05/10 պայմանագրի հիմքով Լուսինե Աբրահամյանը և Հակոբ Մուրադյանը վճարել են «Իրավական եռանկյուն» ՍՊ ընկերության հաշվեհամարին 100.000 ՀՀ դրամ (հիմք՝ 17.05.2010 թվականի թիվ 002515 կանխիկ մուտքի անդորրագիրը) (հատոր 3-րդ, գ.թ. 47-49):

7. Թիվ 35 մանկապարտեզի տնօրենի 23.03.2009 թվականի, 02.07.2009 թվականի և 28.04.2010 թվականի տեղեկանքների համաձայն՝ Լուսինե Աբրահամյանն աշխատել է մանկապարտեզում, ամսական աշխատավարձը կազմել է 90.000 ՀՀ դրամ, իսկ 2008 թվականի հունվար ամսից մինչև դեկտեմբերի 31-ը աշխատավարձի չափը կազմել է 953.000 ՀՀ դրամ, վթարի ենթարկվելու հետևանքով 2009 թվականի հունվարի 8-ից մինչև նույն թվականի ապրիլի 1-ը Լուսինե Աբրահամյանը չի հաճախել աշխատանքի (հատոր 1-ին, գ.թ. 14,84, հատոր 3-րդ գ.թ.41):

8. Հայցադիմումը դատարան ներկայացնելու համար Լուսինե Աբրահամյանը և Հակոբ Մուրադյանը վճարել են 45.400 ՀՀ դրամ (հիմք՝ 10.04.2009 թվականի թիվ 90410008666050, 01.07.2009 թվականի թիվ 007140, 28.04.2010 թվականի թիվ 100428025518048 անդորրագրերը) (հատոր 1-ին, գ.թ. 2, 73, հատոր 3-րդ գ.թ 42), իսկ վճարել բողոք ներկայացնելու համար՝ 34.400 ՀՀ դրամ (հիմք՝ 14.10.2010 թվականի թիվ 000184 անդորրագիրը):

9. 25.01.2010 թվականի առուվաճառքի պայմանագրով Հակոբ Մուրադյանը

«ԲՄՎ-320i» մակնիշի 01OL278 պետհամարանիշի ավտոմեքենան 1.900.000 ՀՀ դրամով վաճառել է Գեղամ Ազիզյանին (հատոր 3-րդ գ.թ 57):

4.Վձռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումները.

Քննելով վձռաբեկ բողոքը նշված հիմքի սահմաններում՝ Վձռաբեկ դատարանը գրնում է, որ վձռաբեկ բողոքը հիմնավոր է մասնակիորեն հերկյալ պատճառաբանությամբ.

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 53-րդ հոդվածի առաջին կետի համաձայն՝ դատարանը յուրաքանչյուր ապացույց գնահատում է գործում եղած բոլոր ապացույցների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտության վրա հիմնված ներքին համոզմամբ:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 47-րդ հոդվածի համաձայն՝ գործով ապացույցներ են նույն օրենսգրքով և այլ օրենքներով նախատեսված կարգով ձեռք բերված տեղեկությունները, որոնց հիման վրա դատարանը պարզում է գործին մասնակցող անձանց պահանջները և առարկությունները հիմնավորող, ինչպես նաև վեճի լուծման համար նշանակություն ունեցող այլ հանգամանքների առկայությունը կամ բացակայությունը: Այդ տեղեկությունները հաստատվում են փորձագետների եզրակացություններով:

Նույն օրենսգրքի 62-րդ հոդվածի 3-րդ կետի 2-րդ պարբերության համաձայն՝ դատարանը կարող է հրավիրել գրավոր եզրակացություն ներկայացրած փորձագետին դրա վերաբերյալ բանավոր բացատրություններ տալու համար, եթե գործի հանգամանքներից բխում է դրա անհրաժեշտությունն ու նպատակահարմարությունը:

Սույն գործով Վերաքննիչ դատարանը գործն ուղարկել է նոր քննության այն պատճառաբանությամբ, որ վնաս կրած գույքի իրացման պայմաններում լրացուցիչ ապացուցման է ենթակա գույքի արժեքը՝ մինչ վնաս պատճառող իրադարձությունը, ինչպես նաև գույքի իրացման արդյունքում տուժողի ստացած եկամտի տարբերությունը: Վերաքննիչ դատարանը հիշյալ դիրքորոշումը հիմնավորել է այն հանգամանքով, որ «գույքի իրացման գնի՝ սկզբնական արժեքից ավելին լինելու դեպքում ըստ էության բացակայում է իրական վնասը, քանի որ իրացնողը ստանում է առնվազն այն չափով հատուցում (գումար), որը կստանար վնաս պատճառողի կողմից տրամադրվող գումարի հաշվին»: Միաժամանակ, Վերաքննիչ դատարանն արձանագրել է, որ «Փորձագիտական կենտրոն» ՊՈԱ կազմակերպության 23.01.2009 թվականի թիվ 00610910 փորձագետի եզրակացությունը չի պարունակում «ԲՄՎ-320i» մակնիշի 01OL278 պետհամարանիշի ավտոմեքենայի վնասվածքների հետևանքով այդ ավտոմեքենայի վնասի չափի հավանական արժեքային արտահայտությունը:

Վձռաբեկ դատարանը գտնում է, որ անհիմն է Վերաքննիչ դատարանի այն եզրահանգումը, որ «գույքի իրացման գնի՝ սկզբնական արժեքից ավելին լինելու դեպքում ըստ էության բացակայում է իրական վնասը, քանի որ իրացնողը ստանում է առնվազն այն չափով հատուցում (գումար), որը կստանար վնաս պատճառողի կողմից տրամադրվող գումարի հաշվին» հետևյալ պատճառաբանությամբ.

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 17-րդ հոդվածի 2-րդ կետի համաձայն՝ վնասներ են իրավունքը խախտված անձի ծախսերը, որ նա կատարել է կամ պետք է կատարի խախտված իրավունքը վերականգնելու համար, նրա գույքի կորուստը կամ վնասվածքը (իրական վնաս), ինչպես նաև չստացված եկամուտները, որոնք այդ անձը կստանար քաղաքացիական շրջանառության սովորական պայմաններում, եթե նրա

իրավունքը չխախտվեր (բաց թողնված օգուտ): Նույն հոդվածի 1-ին կետի համաձայն՝ անձը, ում իրավունքը խախտվել է, կարող է պահանջել իրեն պատճառված վնասների լրիվ հատուցում, եթե վնասների հատուցման ավելի պակաս չափ նախատեսված չէ օրենքով կամ պայմանագրով:

Հիմք ընդունելով վերոգրյալը՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ վնասն առկա է դրա հասցվելու փաստի ուժով, իսկ վնասված գույքի իրացման արդյունքում տուժողի ստացած եկամուտը չի կարող հաշվի առնվել վնասի առկայության հարցը պարզելիս և չի կարող հիմք հանդիսանալ վնասի առկայության դեպքում դրա հատուցումը մերժելու համար:

Ինչ վերաբերում է ավտոմեքենային հասցված վնասի չափը որոշելու նպատակով կատարված փորձաքննությանը, ապա Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Վերաքննիչ դատարանը, հաստատված համարելով այն հանգամանքը, որ փորձագիտական եզրակացությունը բավարար չափով հստակ չէ, այնուամենայնիվ, չի անդրադարձել այն կարևոր հանգամանքին, որ Դատարանը չի հրավիրել փորձագետին բանավոր բացատրություն տալու համար, որի անհրաժեշտությունը սույն գործում առկա էր:

Վերոգրյալի հիման վրա՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ սույն քաղաքացիական գործով Վերաքննիչ դատարանի կողմից սխալ է մեկնաբանվել ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 17-րդ հոդվածը և չի կիրառվել ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 62-րդ հոդվածի 3-րդ կետի 2-րդ պարբերությունը:

Միաժամանակ, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ բողոքարկվող դատական ակտի բեկանման անհրաժեշտությունը բացակայում է, քանի որ ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 17.09.2010 թվականի որոշմամբ Ընկերության վերաքննիչ բողոքը բավարարվել է մասնակիորեն՝ բեկանվել է Դատարանի 09.07.2010 թվականի վճի՝ ««Դավիթ Երթուղային Տարսի» ՓԲԸ-ից հօգուտ Լուսինե Աբրահամյանի և Հակոբ Մուրադյանի 1.145.400 ՀՀ դրամ վթարի հետևանքով «ԲՄՎ-320i» մակնիշի 01 ՕԼ 278 պետհամարանիշի ավտոմեքենային պատճառված վնասի գումարը և դրան համապատասխան դատական ծախսերը բռնագանձելու» մասերը, և գործն այդ մասերով ուղարկվել է նույն դատարան՝ նոր քննության:

Այսպիսով, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ սույն գործով Դատարանը կայացրել է ըստ էության ճիշտ դատական ակտ, հետևաբար տվյալ դեպքում անհրաժեշտ է կիրառել ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 240-րդ հոդվածի 1-ին կետի 1-ին ենթակետով սահմանված՝ ստորադաս դատարանի սխալ պատճառաբանված դատական ակտն անփոփոխ թողնելու Վճռաբեկ դատարանի լիազորությունը:

Վերոգրյալից ելնելով՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ Դատարանում գործի նոր քննության ընթացքում պետք է հիմք ընդունել սույն որոշման պատճառաբանությունները:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 240-241²-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

ՈՐՈՇԵՑ

1. Վճռաբեկ բողոքը մերժել: ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 17.09.2010 թվականի որոշումը թողնել օրինական ուժի մեջ սույն որոշման պատճառաբանություններով:

2. Պետական տուրքի հարցին անդրադառնալ գործի նոր քննության ընթացքում:

3. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

*ՆԱԽԱԳԱՀՈՂ՝ ստորագրություն
ԴԱՏԱՎՈՐՆԵՐ՝ ստորագրություններ*

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական Քաղաքացիական գործ թիվ ԵԱԲԴ/0610/02/10
դատարանի որոշում 2011թ.
Քաղաքացիական գործ թիվ ԵԱԲԴ/0610/02/10
Նախագահող դատավոր՝ Կ.Հակոբյան
Դատավորներ՝ Տ.Սահակյան
Տ.Նազարյան

ՈՐՈՇՈՒՄ ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քաղաքացիական և վարչական պալատը (այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

նախագահությամբ Ե.ԽՈՒՆԴԿԱՐՅԱՆԻ
մասնակցությամբ դատավորները Գ.ՀԱԿՈԲՅԱՆԻ
Վ.ԱԲԵԼՅԱՆԻ
Ս.ԱՆՏՈՆՅԱՆԻ
Վ.ԱՎԱՆԵՍՅԱՆԻ
Ա.ԲԱՐՍԵՂՅԱՆԻ
Մ.ԴՐՄԵՅԱՆԻ
Է.ՀԱՅՐԻՅԱՆԻ
Տ.ՊԵՏՐՈՍՅԱՆԻ
Ե.ՍՈՂՈՄՈՆՅԱՆԻ

2011 թվականի հոկտեմբերի 14-ին դոնբաց դատական նիստում, քննելով Տիգրան Քոչարյանի վճռաբեկ բողոքը ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 02.06.2011 թվականի որոշման դեմ՝ ըստ Տիգրան Քոչարյանի հայցի ընդդեմ Աշոտ և Արթուր Քոչյանների՝ առողջությանը և գույքին պատճառված վնասը հատուցելու պահանջի մասին,

ՊԱՐԶԵՑ

1. Գործի դատավարական նախապատմությունը

Դիմելով դատարան՝ Տիգրան Քոչարյանը պահանջել է Աշոտ և Արթուր Քոչյաններից բռնազանձել 12.257.595 ՀՀ դրամ գումար՝ որպես առողջությանը և գույքին պատճառված վնասի հատուցում:

Երևանի Արաբկիր և Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին աստիճանի դատարանի (դատավոր Ս. Ղազարյան) (այսուհետ՝ Դատարան) 14.03.2011 թվականի վճռով հայցը բավարարվել է մասնակիորեն՝ Աշոտ և Արթուր Քոչյաններից համապարտության կարգով հոգուտ Տիգրան Քոչարյանի

բոնագանձվել է 8.411.799 ՀՀ դրամ՝ որպես առողջությանը և գույքին պատճառված վնասի հատուցում:

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի (այսուհետ՝ Վերաքննիչ դատարան) 02.06.2011 թվականի որոշմամբ Աշոտ և Արթուր Քոչյանների վերաքննիչ բողոքը բավարարվել է, Դատարանի 14.03.2011 թվականի վճիռը մասնակիորեն՝ հայցապահանջի բավարարված մասով բեկանվել և մասնակիորեն փոփոխվել է՝ Տիգրան Քոչարյանի հայցն ընդդեմ Աշոտ Քոչյանի մերժվել է, մնացած մասով գործն ուղարկվել է նույն դատարան՝ նոր քննության:

Սույն գործով վճռաբեկ բողոք է ներկայացրել Տիգրան Քոչարյանը:

Վճռաբեկ բողոքի պատասխան չի ներկայացվել:

2. Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը

Սույն վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքերի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

1. *Վերաքննիչ դատարանը չի կիրառել ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1058-րդ հոդվածի 1-ին կետի երկրորդ պարբերությունը, որը պետք է կիրառեր, կիրառել է ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1058-րդ հոդվածի 1-ին կետի առաջին պարբերությունը, որը չպետք է կիրառեր, սխալ է մեկնաբանել ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1072-րդ հոդվածը:*

Բողոք բերած անձը նշված պնդումը պարձառաբանում է հետևյալ փաստարկներով.

Վերաքննիչ դատարանը, սխալ մեկնաբանելով ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1072-րդ հոդվածը, անհիմն կերպով ընդլայնել է առավել վտանգի աղբյուր հանդիսացող օբյեկտների վերաբերյալ նշված հոդվածում տրված սահմանումը, որի համաձայն՝ տրանսպորտային միջոցները հանդիսանում են առավել վտանգի աղբյուր՝ անկախ դրանք մասնագիտական գործունեության հետ կապված շահագործվելու հանգամանքից: Առավել վտանգի աղբյուրի բնութագրման համար որպես չափանիշ մասնագիտական գործունեությունը չի կիրառվում:

Վերաքննիչ դատարանը, անտեսելով, որ վնասը պատճառվել է առավել վտանգի աղբյուրով, վնասի հատուցման պարտականությունը չի դրել վնաս չպատճառած անձի վրա:

2. *Վերաքննիչ դատարանը խախտել է ՀՀ քաղաքացիական դատարարության օրենսգրքի 10-րդ հոդվածը և 212-րդ հոդվածի 1-ին կետը:*

Բողոք բերած անձը նշված պնդումը պարձառաբանում է հետևյալ փաստարկով.

Վերաքննիչ դատարանի 22.04.2011 թվականի որոշմամբ վերաքննիչ բողոքը վերադարձվել է, իսկ կրկին ներկայացված վերաքննիչ բողոքի պատճենը Տիգրան Քոչարյանի ներկայացուցիչը չի ստացել: Բացի այդ, վերաքննիչ բողոքը վարույթ ընդունելու մասին որոշման մասին Տիգրան Քոչարյանի ներկայացուցիչը ծանուցվել է միայն 11.05.2011 թվականին այն դեպքում, երբ գործի քննությունը նշանակվել է 19.05.2011 թվականին:

Հետևաբար Վերաքննիչ դատարանն անտեսել է, որ չստանալով վերաքննիչ բողոքի պատճենը՝ Տիգրան Քոչարյանը գրկվել է դրա վերաբերյալ երկշաբաթյա ժամկետում պատասխան ուղարկելու իրավունքից:

Վերոգրյալի հիման վրա բողոք բերած անձը պահանջել է մասնակիորեն բեկանել Վերաքննիչ դատարանի 02.06.2011 թվականի որոշումը՝ օրինական ուժ տալով

Դատարանի 14.03.2011 թվականի վճռին՝ Աշոտ Քոչյանից համապարտության կարգով հոգուտ Տիգրան Քոչարյանի բռնագանձում կատարելու մասով, մնացած մասով որոշումը թողնել անփոփոխ և գործն ուղարկել Դատարան՝ նոր քննության:

3. Վճռաբեկ բողոքի քննության համար նշանակություն ունեցող փաստերը

Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1) Երևանի Աջափնյակ և Դավթաշեն համայնքների ընդհանուր իրավասության դատարանի 18.12.2008 թվականի դատավճռով հաստատվել է, որ Արթուր Քոչյանը կատարել է ՀՀ քրեական օրենսգրքի 242-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված արարք, այն է՝ «ՎԱՁ-21011» մակնիշի 610L569 պետհամարանիշի ավտոմեքենայով ընթանալիս թույլ է տվել «Ճանապարհային երթևեկության անվտանգության ապահովման մասին» ՀՀ օրենքի 23-րդ հոդվածի 3-րդ մասի պահանջների հակասող գործողություններ, որի արդյունքում վրատրթի է ենթարկել հետիոտներ Տիգրան Քոչարյանին և Կարեն Խաչատրյանին, որի հետևանքով անգուշությամբ Տիգրան Քոչարյանին պատճառել է ծանր վնաս՝ կյանքին վտանգ սպառնացող, իսկ Կարեն Խաչատրյանի առողջությանը՝ միջին ծանրության վնաս: Նշված դատավճռով Արթուր Քոչյանը մեղավոր է ճանաչվել ՀՀ քրեական օրենսգրքի 242-րդ հոդվածի 1-ին մասով և դատապարտվել է ազատազրկման մեկ տարի ժամկետով՝ տրանսպորտային միջոցներ վարելու իրավունքից երկու տարի ժամկետով զրկմամբ (հատոր 1-ին, գ.թ.13-14):

2) ավտովթարի հետևանքով վնաս պատճառելու պահին «ՎԱՁ-21011» մակնիշի 61 OL 569 պետհամարանիշի ավտոմեքենան հաշվառված էր Աշոտ Քոչյանի անվամբ (հատոր 1-ին, գ.թ.15):

4. Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումները

Քննելով վճռաբեկ բողոքը վերը նշված հիմքերի սահմաններում՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ՝

1. բողոքն առաջին հիմքով հիմնավոր է հետևյալ պարձառաբանությամբ.

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 14-րդ հոդվածի 10-րդ կետի համաձայն՝ քաղաքացիական իրավունքների պաշտպանությունն իրականացվում է վնասներ հատուցելով:

Նույն օրենսգրքի 17-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ անձը, ում իրավունքը խախտվել է, կարող է պահանջել իրեն պատճառված վնասների լրիվ հատուցում, եթե վնասների հատուցման ավելի պակաս չափ նախատեսված չէ օրենքով կամ պայմանագրով: Նույն հոդվածի 2-րդ կետի համաձայն՝ վնասներ են իրավունքը խախտված անձի ծախսերը, որ նա կատարել է կամ պետք է կատարի խախտված իրավունքը վերականգնելու համար, նրա գույքի կորուստը կամ վնասվածքը (իրական վնաս), ինչպես նաև չստացված եկամուտները, որոնք այդ անձը կստանար քաղաքացիական շրջանառության սովորական պայմաններում, եթե նրա իրավունքը չխախտվեր (բաց թողնված օգուտ):

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1058-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ քաղաքացու անձին կամ գույքին, ինչպես նաև իրավաբանական անձի գույքին պատճառված վնասը լրիվ ծավալով ենթակա է հատուցման այն պատճառած անձի կողմից: Վնասի հատուցման պարտականությունն օրենքով կարող է դրվել վնաս չպատճառած անձի վրա: Նույն հոդվածի 2-րդ կետի համաձայն՝ վնաս պատճառած

անձն ազատվում է այն հատուցելուց, եթե ապացուցում է, որ վնասն իր մեղքով չի պատճառվել:

Վերը նշված հոդվածների վերլուծությունից հետևում է, որ վնասի հատուցման համար պարտադիր պայման է պարտապանի ոչ օրինաչափ վարքագծի, վնասների, վնասների և ոչ օրինաչափ գործողության միջև պատճառահետևանքային կապի ու պարտապանի մեղքի միաժամանակյա առկայությունը (*տես՝ Նաբալյա Հակոբյանն ընդդեմ Վարդան Հայրապետյանի՝ վնասի հատուցման պահանջի մասին, թիվ ՀՔԴ 3/0016/02/08 գործով Վճռաբեկ դատարանի 13.02.2009 թվականի որոշումը*):

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 52-րդ հոդվածի 3-րդ կետի համաձայն՝ քրեական գործով օրինական ուժի մեջ մտած դատավճիռը պարտադիր է դատարանի համար միայն այն փաստերով, ըստ որոնց հաստատված են որոշակի գործողություններ և դրանք կատարած անձինք:

Սույն գործի փաստերի համաձայն՝ Երևանի Աջափնյակ և Դավթաշեն համայնքների ընդհանուր իրավասության դատարանի 18.12.2008 թվականի դատավճիռով հաստատված է համարվել, որ Արթուր Քոսյանը, ընթանալով «ՎԱՁ-2101» մակնիշի 610L569 պետհամարանիշի ավտոմեքենայով, թույլ է տվել «Ճանապարհային երթևեկության անվտանգության ապահովման մասին» ՀՀ օրենքի 23-րդ հոդվածի 3-րդ մասի պահանջներին հակասող գործողություններ, որի հետևանքով վրաների է ենթարկել նաև հետիոտն Տիգրան Քոչարյանին՝ դրա արդյունքում անգուշությամբ վերջինիս պատճառելով ծանր վնաս՝ կյանքին վտանգ սպառնացող: Նշված ավտոմեքենան վթարի պահին հաշվառված էր Աշոտ Քոսյանի անվամբ:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1072-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ իրավաբանական անձինք և քաղաքացիները, որոնց գործունեությունը կապված է շրջապատի համար առավել վտանգի աղբյուրի հետ (**տրանսպորտային միջոցների**, մեխանիզմների, բարձր լարվածության էներգիայի, ատոմային էներգիայի, պայթուցիկ նյութերի, ուժեղ ներգործող թույների և այլնի **օգտագործում**, շինարարական և դրա հետ կապված այլ գործունեության իրականացում), պարտավոր են հատուցել առավել վտանգի աղբյուրով պատճառված վնասը, եթե չեն ապացուցում, որ վնասը ծագել է անհաղթահարելի ուժի կամ տուժողի դիտավորության հետևանքով: Առավել վտանգի աղբյուրի սեփականատիրոջը դատարանը կարող է նաև լրիվ կամ մասնակիորեն ազատել պատասխանատվությունից՝ նույն օրենսգրքի 1076-րդ հոդվածի 2-րդ և 3-րդ կետերով նախատեսված հիմքերով: Վնաս հատուցելու պարտականությունը դրվում է առավել վտանգի աղբյուրը սեփականության իրավունքով կամ այլ օրինական հիմքով (վարձակալության իրավունք, լիազորագրով տրանսպորտային միջոցները վարելու իրավունք և այլն) տիրապետող իրավաբանական անձի կամ քաղաքացու վրա:

Նույն հոդվածի 2-րդ կետի համաձայն՝ առավել վտանգի աղբյուրի սեփականատերը պատասխանատվություն չի կրում այդ աղբյուրի պատճառած վնասի համար, եթե ապացուցում է, որ աղբյուրը դուրս է եկել իր տիրապետումից այլ անձանց ապօրինի գործողությունների հետևանքով:

Վերաբնիչ դատարանը, մեկնաբանելով ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1072-րդ հոդվածը, գտել է, որ «իրավաբանական անձինք և քաղաքացիները, որոնց գործունեությունը կապված է շրջապատի համար առավել վտանգի աղբյուրի հետ» արտահայտությունը մեկնաբանելիս և դրա իրական իմաստն ըմբռնելու համար պետք է հիմք ընդունել հետևյալ չափանիշները՝

1. իրավաբանական անձանց և քաղաքացիների գործունեությունը, որը կապված

է շրջապատի համար առավել վտանգի աղբյուրի հետ, պետք է լինի մասնագիտական գործունեություն (իրավաբանական անձի պարագայում բխի դրա կանոնադրությամբ ամրագրված նպատակներից)

2. իրավաբանական անձանց և քաղաքացիների գործունեությունը պետք է ուղղված լինի շրջապատի համար առավել վտանգի աղբյուրի շահագործմանը:

Բացի այդ, Վերաքննիչ դատարանը, Աշոտ և Արթուր Քոչայանների վերաքննիչ բողոքը բավարարելիս պատճառաբանելով, որ «Երևան քաղաքի Աջափնյակ և Դավթաշեն համայնքների ընդհանուր իրավասության դատարանի 18.12.2008 թվականի թիվ ԵԱԴԴ/0028/01/08 վճռով Տիգրան Քոչարյանի առողջությանը ծանր, կյանքին վտանգ սպառնացող վնաս պատճառելու մեջ մեղավոր է ճանաչվել պատասխանողներից Արթուր Քոչայանը», «տվյալ գործով պատասխանատվությունը պետք է սահմանել՝ ելնելով ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1058-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին պարբերության տրամաբանությունից, ըստ որի՝ քաղաքացու անձին կամ գույքին, ինչպես նաև իրավաբանական անձի գույքին պատճառված վնասը լրիվ ծավալով ենթակա է հատուցման այն պատճառած անձի կողմից», արձանագրել է, որ «տվյալ պարագայում պատասխանողներից Աշոտ Քոչայանը չի համարվում պատշաճ պատասխանող՝ համապարտ պարտապան և նրա մատով հայցապահանջը ենթակա է մերժման»:

Վճռաբեկ դատարանը, ելնելով վերոնշյալ իրավական դիրքորոշումների հետ կապված օրենքի միատեսակ կիրառության ապահովման նպատակից, անհրաժեշտ է համարում անդրադառնալ Վերաքննիչ դատարանի նշված մեկնաբանություններին և դրանց համապատասխանությանը ՀՀ քաղաքացիական օրենսգրքի վերոնշյալ դրույթների տրամաբանությանը:

1. Վճռաբեկ դատարանը գտնում է, որ «իրավաբանական անձինք և քաղաքացիները, որոնց գործունեությունը կապված է շրջապատի համար առավել վտանգի աղբյուրի հետ» օրենսդրական ձևակերպումը պետք է մեկնաբանել նշված հոդվածի ամբողջ իրավակարգավորման և ձևակերպման համատեքստում մասնավորապես հաշվի առնելով, որ նույն հոդվածում օրենսդիրը բացահայտում է, թե ինչպես է դրսևորվում տրանսպորտային միջոցների հետ կապված քաղաքացիների գործունեությունը: Որպես այդպիսին համարվում է տրանսպորտային միջոցի օգտագործումը:

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ օրենսդիրն այս դեպքում նկատի է ունեցել ցանկացած գործունեություն, որը վնաս պատճառելու առավել վտանգ է ներկայացնում այն հիմնավորմամբ, որ մարդն ի վիճակի չէ ամբողջական, լիակատար վերահսկողություն իրականացնել նմանատիպ գործունեության նկատմամբ: Ընդ որում, այդ գործունեությունը կապված է նյութական աշխարհի որոշակի օբյեկտների օգտագործման, շահագործման հետ, որոնք շրջապատի համար մեծ վտանգավորություն են ներկայացնում:

Հիմք ընդունելով վերոնշյալը՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ օրենսդիրը «գործունեությունը կապված է շրջապատի համար առավել վտանգի աղբյուրի հետ» ձևակերպմամբ նկատի չի ունեցել միայն տվյալ ֆիզիկական կամ իրավաբանական անձի մասնագիտական գործունեությունը: «Գործունեություն» եզրույթն օգտագործվել է **սովորական իմաստով**, և «գործունեություն» ասելով օրենսդիրը նկատի է ունեցել **ոչ թե անձի մասնագիտական գործունեությունը, այլ ցանկացած գործունեությունը՝** անկախ դրա մասնագիտական կամ ոչ մասնագիտական լինելու հանգամանքից,

այլապես դա կհակասեր հողվածի (առավել վտանգի աղբյուրով պատճառված վնասի ինստիտուտի) էությանն ու տրամաբանությանը:

Ավելին, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ տվյալ հողվածի իմաստով «գործունեությունը» կարող է դրսևորվել անձի **թե՛ մեկանգամյա, թե՛ բազմակի** գործողության կատարմամբ կամ անգործության դրսևորմամբ, իսկ «գործունեությունը» առավել վտանգի աղբյուրի օգտագործման, պահպանման, փոխադրման, շահագործման հետ կապված գործողությունների ամբողջությունն է, համախումբը:

Այսպիսով, Վճռաբեկ դատարանը եզրակացնում է, որ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1072-րդ հոդվածի կիրառման համար անհրաժեշտ է հետևյալ պայմանների միաժամանակյա առկայությունը՝

1. Այն պետք է լինի ֆիզիկական կամ իրավաբանական անձի գործունեություն

2. Գործունեությունը պետք է կապված լինի ցանկացած օբյեկտի հետ, որը շրջապատի համար առավել վտանգ է ներկայացնում

3. Գործունեությունը պետք է կապված լինի օբյեկտի (առավել վտանգի աղբյուրի) օգտագործման, պահպանման, փոխադրման, շահագործման և այլնի հետ ինչպես մասնագիտական, այնպես էլ ոչ մասնագիտական գործունեության շրջանակներում:

2. Անդրադառնալով Վերաքննիչ դատարանի այն պատճառաբանությանը, որ Երևան քաղաքի Աջափնյակ և Դավթաշեն համայնքների ընդհանուր իրավասության դատարանի 18.12.2008 թվականի թիվ ԵԱԴԴ/0028/01/08 վճռով Տիգրան Քոչարյանի առողջությանը ծանր, կյանքին վտանգ սպառնացող վնաս պատճառելու մեջ մեղավոր է ճանաչվել պատասխանողներից Արթուր Քոչյանը, ուստի տվյալ պարագայում պատասխանողներից Աշոտ Քոչյանը չի համարվում պատշաճ պատասխանող՝ համապարտ պարտապան, և նրա մասով հայցապահանջը ենթակա է մերժման, Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարում նշել, որ տրանսպորտային միջոցով վնաս պատճառելիս այդ միջոցի սեփականատերը միայն այն դեպքում պատասխանատվություն չի կրում այդ աղբյուրի պատճառած վնասի համար, երբ ապացուցում է, որ

1. առավել վտանգի աղբյուրն օրինական հիմքով (վարձակալության իրավունք, լիազորագրով տրանսպորտային միջոցները վարելու իրավունք և այլն) փոխանցվել է այլ անձի տիրապետմանը, կամ

2. առավել վտանգի աղբյուրը դուրս է եկել իր տիրապետումից այլ անձանց ապօրինի գործողությունների հետևանքով, և միայն այդ դեպքում է, որ տրանսպորտային միջոցի պատճառած վնասի համար պատասխանատվությունը կրում են տրանսպորտային միջոցն ապօրինի տիրապետած անձինք:

Նման պայմաններում Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ Վերաքննիչ դատարանը, վերը նշված պատճառաբանություններով մասնակի բեկանելով և փոփոխելով Դատարանի 14.03.2011 թվականի վճիռը, անտեսել է, որ սույն գործի փաստերի համաձայն՝ Աշոտ Քոչյանը չի վկայակոչել և չի ապացուցել այն փաստը, որ վերը նշված տրանսպորտային միջոցն օրինական հիմքով գտնվել է Արթուր Քոչյանի տիրապետման տակ, կամ նշված տրանսպորտային միջոցով Տիգրան Քոչարյանին վնաս պատճառելիս այդ միջոցն իր տիրապետումից դուրս է եկել Արթուր Քոչյանի ապօրինի գործողությունների հետևանքով: Այսինքն՝ բացակայել է Աշոտ Քոչյանին՝ որպես առավել վտանգի աղբյուրի տիրոջը, պատասխանատվությունից ազատելու ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1072-րդ հոդվածով նախատեսված հիմքը:

Վերաքննիչ դատարանի կողմից Աշոտ Քոչյանին պատասխանատվությունից

ազատելն այն հիմքով, որ վերը նշված դատավճռով մեղավոր է ձանաչվել միայն Արթուր Քոսյանը, Վճռաբեկ դատարանը գտնում է անհիմն, քանի որ սույն գործի փաստերի համաձայն՝ առկա են Աշոտ Քոսյանին պատասխանատվության ենթարկելու բավարար հիմքեր՝ վերը նշված ավտոմեքենայի սեփականատերն Աշոտ Քոսյանն է, և սույն գործով ապացուցված չէ վերջինիս պատասխանատվությունից ազատելու ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1072-րդ հոդվածով նախատեսված վերը նշված հիմքերը:

2) Վճռաբեկ բողոքի առաջին հիմքը հիմնավոր լինելու պայմաններում Վճռաբեկ դատարանը վճռաբեկ բողոքի երկրորդ հիմքին չի անդրադառնում:

Այսպիսով, վճռաբեկ բողոքի առաջին հիմքի առկայությունը Վճռաբեկ դատարանը դիտում է բավարար՝ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 227-րդ հոդվածի ուժով Վերաքննիչ դատարանի որոշումը մասնակի բեկանելու համար:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 240-241²-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

ՈՐՈՇԵՑ

1. Վճռաբեկ բողոքը բավարարել մասնակիորեն: Բեկանել ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 02.06.2011 թվականի որոշման՝ Տիգրան Քոչարյանի հայցն ընդդեմ Աշոտ Քոսյանի մերժելու մասը և այդ մասով գործն ուղարկել Երևանի Արաբկիր և Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարան՝ նոր քննության: Որոշումը մնացած մասով թողնել օրինական ուժի մեջ:

2. Դատական ծախսերի բաշխման հարցին անդրադառնալ գործի նոր քննության ընթացքում:

3. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

*ՆԱԽԱԳԱՀՈՂ՝ ստորագրություն
ԴԱՏԱՎՈՐՆԵՐ՝ ստորագրություններ*

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական
դատարանի որոշում

Քաղաքացիական գործ թիվ ԿԴ3/0069/02/08
2011թ.

Քաղաքացիական գործ թիվ ԿԴ3/0069/02/08

Նախագահող դատավոր՝ Դ. Խաչատրյան

Դատավորներ՝ Ն. Տավարացյան

Ս. Միքայելյան

ՈՐՈՇՈՒՄ

ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քաղաքացիական և վարչական
պալատը (այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

նախագահությամբ

մասնակցությամբ դատավորներ

Ե. ԽՈՒՆԴԿԱՐՅԱՆԻ

Գ. ՀԱԿՈԲՅԱՆԻ

Վ. ԱԲԵԼՅԱՆԻ

Ս. ԱՆՏՈՆՅԱՆԻ

Վ. ԱՎԱՆԵՍՅԱՆԻ

Ա. ԲԱՐՍԵՂՅԱՆԻ

Մ. ԴՐՄԵՅԱՆԻ

Է. ՀԱՅՐԻՅԱՆԻ

Տ. ՊԵՏՐՈՍՅԱՆԻ

Ե. ՍՈՂՈՄՈՆՅԱՆԻ

2011 թվականի դեկտեմբերի 27-ին

դոնբաց դատական նիստում, քննելով ՀՀ տարածքային կառավարման նախարարության ջրային տնտեսության պետական կոմիտեի (այսուհետ՝ Կոմիտե) վճռաբեկ բողոքը ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 23.02.2011 թվականի որոշման դեմ՝ ըստ Սամվել Պողոսյանի դիմումի ընդդեմ «Երևան Ջուր» ՓԲԸ-ի (այսուհետ՝ Ընկերություն), Կոմիտեի, ՀՀ ֆինանսների նախարարության (այսուհետ՝ Նախարարություն), «Ջրմուղ Կոյուղի» ՓԲԸ-ի (այսուհետ՝ Կազմակերպություն) և Երևանի քաղաքապետարանի՝ ընտանիքի կյանքին և առողջությանը սպառնացող վտանգը վերացնելու ուղղությամբ անգործությունը վերացնելուն պարտավորեցնելու պահանջի մասին,

ՊԱՐԶԵՑ

1. Գործի դատավարական նախապատմությունը

Դիմելով դատարան՝ Սամվել Պողոսյանը պահանջել է պարտավորեցնել Կոմիտեին և Ընկերությանն անհապաղ վերացնել իր ընտանիքի կյանքին և գույքին սպառնացող վտանգը:

ՀՀ Կոտայքի մարզի ընդհանուր իրավասության դատարանի (դատավոր՝

Յու. Բաղդասարյան) (այսուհետ՝ Դատարան) 11.10.2010 թվականի վճռով դիմումը բավարարվել է մասնակիորեն՝ վճռվել է Կոմիտենին պարտավորեցնել վերացնելու դիմող Սամվել Պողոսյանի ընտանիքի կյանքին, առողջությանը և գույքին սպառնացող վտանգը՝ Արգիշ-Երևան ջրատարը Սամվել Պողոսյանի տան ետնամասից տեղափոխելով սահմանված հեռավորության վրա, իսկ Սամվել Պողոսյանի դիմումն ընդդեմ Ընկերության, Նախարարության, Կազմակերպության և Երևանի քաղաքապետարանի՝ առողջությանը սպառնացող վտանգը վերացնելու ուղղությամբ անգործությունը վերացնելուն պարտավորեցնելու պահանջի մասին՝ մերժել:

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի (այսուհետ՝ Վերաքննիչ դատարան) 23.02.2011 թվականի որոշմամբ Նախարարության և Կոմիտեի վերաքննիչ բողոքները մերժվել են, և Դատարանի 11.10.2010 թվականի վճիռը թողնվել է օրինական ուժի մեջ:

Սույն գործով վճռաբեկ բողոք է ներկայացրել Կոմիտեն:

Վճռաբեկ բողոքի պատասխան չի ներկայացվել:

2. Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը

Սույն վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

Վերաքննիչ դատարանը կիրառել է ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1058-րդ հոդվածի 1-ին կետը և 1059-րդ հոդվածի 2-րդ կետը, որոնք չպետք է կիրառեր, չի կիրառել ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 345-րդ հոդվածի 2-րդ կետը, 417-րդ հոդվածի 1-ին կետը, 1059-րդ հոդվածի 3-րդ կետը, ՀՀ ջրային օրենսգրքի 4-րդ հոդվածը և ՀՀ կառավարության 10.09.2009 թվականի «Երևանի քաղաքապետին լիազորություններ վերապահելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 1999 թվականի դեկտեմբերի 22-ի N 765 որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» թիվ 1042-Ն որոշումը, որոնք պետք է կիրառեր, խախտել է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 48-րդ հոդվածի 2-րդ կետը, 51-րդ հոդվածի 1-ին կետը, 53-րդ հոդվածի 1-ին կետը և 54-րդ հոդվածի 2-րդ կետը, 149^թ-րդ հոդվածի 2-րդ կետի 5-րդ ենթակետը:

Բողոք բերած անձը նշված պնդումը պատճառաբանում է հետևյալ փաստարկներով.

Վերաքննիչ դատարանը, Դատարանի կողմից ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1058-րդ հոդվածի կիրառումը հիմնավորված համարելով, չի պատճառաբանել այն: Այսինքն՝ Վերաքննիչ դատարանը, անտեսելով, որ Սամվել Պողոսյանի պահանջը որևէ առնչություն չունի վնասի հատուցման հետ, կիրառել է ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1058-րդ հոդվածը:

Վերաքննիչ դատարանն անհիմն կերպով գտել է, որ Դատարանը ճիշտ է կիրառել ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1059-րդ հոդվածի 2-րդ կետը, քանի որ այն վերաբերում է այն դեպքերին, եթե պատճառված վնասը հետևանք է շենքի, շինության շահագործման կամ այլ արտադրական գործունեության, որը շարունակում է վնաս պատճառել կամ սպառնում է նոր վնասով, մինչդեռ տվյալ դեպքում Կոմիտեն դիմողին վնաս չի պատճառել ոչ նախկինում, ոչ էլ ներկայումս: Վերաքննիչ դատարանը չի անդրադարձել նաև Կոմիտեի այն դիրքորոշմանը, որ Դատարանը հաշվի չի առել ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1059-րդ հոդվածի 3-րդ կետի պահանջները:

Վերաքննիչ դատարանն անտեսել է, որ Դատարանը կողմերի միջև չի բաշխել ապացուցման պարտականությունը, կողմերի հետ չի որոշել, թե սույն գործի լուծման

համար էական նշանակություն ունեցող փաստերը որոնք են, ինչպես նաև կողմերից յուրաքանչյուրը որ հանգամանքը պետք է ապացուցի:

Վերաքննիչ դատարանն անտեսել է, որ ջրատարի անցկացման վերաբերյալ միակ մասնագիտական եզրակացությունը տրվել է Կոմիտեի կողմից ձևավորված մասնագիտական խմբի կողմից, այլ մասնագիտական եզրակացություններ գործում առկա չեն: Մինչդեռ Դատարանը, չժխտելով նշված եզրակացությունը, հանգել է այն համոզման, որ ջրատարը տեղափոխելու պարտավորությունը պետք է կատարի Կոմիտեն:

Վերաքննիչ դատարանն անտեսել է, որ Սամվել Պողոսյանը չի ներկայացրել որևէ ապացույց, որը կհաստատեր տուրը ջրատարի կառուցումից ավելի վաղ կառուցված լինելու փաստը, չի ներկայացրել տուրը շահագործման հանձնելու մասին սահմանված կարգով կազմված ակտը:

Վերաքննիչ դատարանը հաշվի չի առել, որ Դատարանն ապացույցները չի գնահատել գործում եղած բոլոր ապացույցների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտությամբ:

Վերոգրյալի հիման վրա բողոք բերած անձը պահանջել է բեկանել Վերաքննիչ դատարանի 23.02.2011 թվականի որոշումը և գործն ուղարկել նոր քննության:

3. Վճռաբեկ բողոքի քննության համար նշանակություն ունեցող փաստերը

Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1) ՀԽՍՀ ժողովրդական դեպուտատների Նախրիի շրջանային խորհրդի գործադիր կոմիտեի 21.10.1982 թվականի թիվ 16 որոշմամբ Սամվել Պողոսյանին թույլատրվել է Կոտայքի մարզի Գետամեջ գյուղում սկսել իր շենքի շինարարական աշխատանքները (հատոր 1-ին, գ.թ. 7).

2) հողային բարեփոխումների և սեփականաշնորհման տեղական հանձնաժողովի 20.04.1992 թվականի թիվ 3 որոշմամբ վերը նշված հասցեում գտնվող հողը սեփականաշնորհվել է, իսկ 25.05.2005 թվականին գրանցվել է Սամվել, Արայիկ և Լուիզա Պողոսյանների սեփականության իրավունքն այդ գույքի նկատմամբ, որի հիման վրա նրանց տրվել է անշարժ գույքի սեփականության իրավունքի գրանցման վկայական (հատոր 1-ին, գ.թ. 21-23):

4. Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումները

Քննելով վճռաբեկ բողոքը վերը նշված հիմքի սահմաններում Վճռաբեկ դատարանը գտնում է, որ բողոքը հիմնավոր է մասնակիորեն հետևյալ պարճառաբանությամբ:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1059-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ **ապագայում վնաս պատճառելու վտանգը** կարող է հիմք դառնալ վտանգ ստեղծող գործունեությունն արգելելու պահանջով հայցի հարուցման համար:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1059-րդ հոդվածի 1-ին կետի բովանդակությունից բխում է, որ նշված հոդվածն անձին իրավունք է վերապահում հարուցել այդ կետով նախատեսված հայցը **միայն դրանում նշված հիմքերի առկայության պայմաններում**: Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ այդ հայցն իր տեսակով ամբողջությամբ չի հանդիսանում դելիկտային, քանի որ դրա

հարուցման համար անհրաժեշտ պայման է **ապագայում վնաս պատճառելու վտանգի առկայությունը** և ոչ թե արդեն իսկ պատճառված վնասը: Նշված հոդվածով նախատեսված հայցի հարուցումը նույն օրենսգրքի 14-րդ հոդվածի 3-րդ կետով նախատեսված քաղաքացիական իրավունքների պաշտպանության եղանակներից մեկն է, որի համաձայն՝ քաղաքացիական իրավունքների պաշտպանությունն իրականացվում է իրավունքը խախտող կամ դրա խախտման համար **վտանգ ստեղծող** գործողությունները կանխելով:

Սույն գործի փաստերի համաձայն՝ Սամվել Պողոսյանն իր պահանջի հիմքում դրել է ոչ թե արդեն իսկ վնաս պատճառված լինելը, այլ ապագայում իրեն վնաս պատճառվելու վտանգի առկայությունը: Հետևաբար, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ անհիմն է ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1059-րդ հոդվածի կիրառման ենթակա չլինելու վերաբերյալ բողոք բերած անձի փաստարկը:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 48-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ գործին մասնակցող յուրաքանչյուր անձ պետք է ապացուցի իր վկայակոչած փաստերը: Նույն հոդվածի 2-րդ կետի համաձայն՝ գործի լուծման համար էական նշանակություն ունեցող ապացուցման ենթակա փաստերը որոշում է դատարանը՝ գործին մասնակցող անձանց պահանջների և առարկությունների հիման վրա: Իսկ նույն հոդվածի 6-րդ կետի համաձայն՝ եթե բոլոր ապացույցների հետազոտումից հետո վիճելի է մնում փաստի առկայությունը կամ բացակայությունը, ապա դրա բացասական հետևանքները կրում է այդ փաստի ապացուցման պարտականությունը կրող կողմը:

Վերը նշված հոդվածի վերլուծությունից հետևում է, որ յուրաքանչյուր գործով կողմերի միջև ապացուցման պարտականությունը ձիշտ բաշխելու համար Դատարանն առաջին հերթին պետք է պարզի յուրաքանչյուր գործի լուծման համար էական նշակություն ունեցող փաստերը՝ ելնելով գործին մասնակցող անձանց պահանջներից և առարկություններից: Ընդ որում, գործի լուծման համար էական նշանակություն ունեցող փաստի առկայությունը կամ բացակայությունը վիճելի լինելու դեպքում դրա բացասական հետևանքները կրում է այդ փաստի ապացուցման պարտականությունը կրող կողմը (*տես՝ Էդգար Մարկոսյանի և Զարուհի Գևորգյանի հայցն ընդդեմ Սեդա Մարգարյանի՝ գրավադրված գույքն արգելանքից հանելու պահանջի մասին, և ըստ հակընդդեմ հայցի Սեդա Մարգարյանի ընդդեմ Էդգար Մարկոսյանի և Զարուհի Գևորգյանի՝ գումարի բռնագանձման և բռնագանձումը գրավի առարկայի վրա տարածելու պահանջների մասին գործով Վճռաբեկ դատարանի 13.02.2009 թվականի թիվ ԵԱՆԴ/0479/02/08 որոշումը*):

Սույն գործով Դատարանը հայցը բավարարելիս վերը նշված վտանգի առկայության փաստը հաստատված համարելը պատճառաբանել է նրանով, որ Կոմիտեի և Ընկերության գրություններով, ինչպես նաև նշված իրավաբանական անձանց ներկայացուցիչների՝ դատարանին տված ցուցմունքներով հաստատվում է, որ նշված ջրատարը ներկայումս իրական վտանգ է սպառնում Սամվել Պողոսյանի ընտանիքի կյանքին և առողջությանը, ինչպես նաև գույքին, ավելին՝ Ընկերությունը դիմումի պատասխանում հայտնել է, որ վթարի դեպքում այն վերացնելու համար կվնասվի նաև բնակելի տունը:

Վերաքննիչ դատարանը բողոքները մերժելիս իր կողմից կայացված դատական ակտի հիմքում որպես վերը նշված վտանգի առկայությունը հաստատող ապացույցներ ընդունել է նաև Կոմիտեի նախագահի տեղակալ Գ.Այվազյանի 07.02.2007 թվականի

նո 07-ԳԱ 08/176 և 21.03.2007 թվականի նո 10-ԳԱ 05/480 գրությունները և նշել, որ ինչ վերաբերում է բողոք բերող անձանց մյուս փաստարկին, որ Դատարանը չի գնահատել 27.04.2007 թվականի արձանագրությունը, համաձայն որի «Ս.Պողոսյանի հողամասում կառուցված առանձնատան ետնամասով և պատի երկայնքով անցնող 1000 մմ տրամագծով ջրատարը առանձնատան պատից գտնվում է մոտ 20-30 սմ հեռավորության վրա, ինչը, տեղանքի ռելիեֆային պայմաններից ելնելով, գործնականում գրեթե անհնարին է դարձնում տվյալ հատվածում առանձնատան առկայության դեպքում,այսինքն, ջրատարի նշված հատվածի շինմոնտաժային աշխատանքները մեծ հավանականությամբ իրականացվել են քաղաքացի Ս.Պողոսյանի առանձնատան կառուցումից առաջ», ապա նշված արձանագրությունը չէր կարող հիմք հանդիսանալ ջրատարն ավելի վաղ կառուցված լինելու փաստն ապացուցված համարելու համար ինչպես վերը նշված պատճառաբանությամբ, այնպես էլ այնքանով, որքանով, որ դրանում առկա չէ միանշանակ եզրահանգում տվյալ փաստի առթիվ: Ավելին, Վերաքննիչ դատարանը գտել է, որ նշված արձանագրությունը Դատարանի կողմից գնահատվել է այն առումով, որ դրանով հաստատվում է այն փաստը, որ «...Պահպանված չէ ջրատարի նշված հատվածի անօտարելի գոտին և հնարավոր վթարի դեպքում մեծ վնաս կպատճառվի Ս. Պողոսյանի առանձնատանն ու հարակից կառույցներին»:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 47-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ գործով ապացույցներ են նույն օրենսգրքով նախատեսված կարգով ձեռք բերված տեղեկությունները, որոնց հիման վրա դատարանը պարզում է գործին մասնակցող անձանց պահանջները և առարկությունները հիմնավորող, ինչպես նաև վեճի լուծման համար նշանակություն ունեցող այլ հանգամանքների առկայությունը կամ բացակայությունը: Այդ տեղեկությունները հաստատվում են՝ 1. գրավոր ապացույցներով, 2. փորձագետների եզրակացություններով, 3. վկաների ցուցմունքներով, 4. գործին մասնակցող անձանց ցուցմունքներով:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 51-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ գործի հանգամանքները, որոնք, օրենքի կամ այլ իրավական ակտերի համաձայն, պետք է հաստատվեն միայն որոշակի ապացույցներով, չեն կարող հաստատվել այլ ապացույցներով:

Վերը նշված հոդվածների վերլուծությունից հետևում է, որ օրենսդիրը, սահմանելով ապացույցի հասկացությունը, սպառիչ սահմանել է դրանց տեսակները, այն է՝ գրավոր ապացույցները, փորձագետների եզրակացությունները, վկաների ցուցմունքները և գործին մասնակցող անձանց ցուցմունքները: Ընդ որում, գործի հանգամանքները, որոնք օրենքի և այլ իրավական ակտի հիման վրա կարող են հաստատվել միայն որոշակի ապացույցներով, չեն կարող հաստատվել այլ ապացույցներով:

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ դատարանը յուրաքանչյուր ապացույց բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտելու դեպքում պետք է հաշվի առնի, թե որքանով է այդ ապացույցը վերաբերելի և թույլատրելի տվյալ փաստական հանգամանքը հաստատելու կամ մերժելու համար (*տես Սվետլանա Ժուլիկյանն ընդդեմ Անահիտ Խաչատրյանի՝ բնակելի տարածության օգտագործման իրավունքը ձանաչելու, գույքն ուրիշի սպորինի տիրապետումից հետո պահանջելու և վերանորոգման աշխատանքների դիմաց կապարված ծախսերի փոխհարուցման պահանջների մասին թիվ ԵՄԴ/0232/02/08 գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 17.04.2009 թվականի որոշումը*):

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 60-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ գործի քննության ժամանակ ծագող **հատուկ գիտելիքներ պահանջող հարցերի պարզաբանման նպատակով** դատարանը կարող է կողմի (կողմերի) միջնորդությամբ կամ իր նախաձեռնությամբ փորձաքննություն նշանակել:

Վճռաբեկ դատարանն իր նախկին որոշումներում անդրադառնալով փորձաքննության նշանակմանը, արձանագրել է, որ փորձաքննություն նշանակելու մասին միջնորդության բավարարման կամ մերժման հարցը լուծելիս դատարանը պետք է անդրադառնա այն հարցին, **թե արդյոք ներկայացված միջնորդությամբ նշանակվող փորձաքննության արդյունքում կարող է պարզվել գործի լուծման համար նշանակություն ունեցող որևէ փաստ** (*տես Գևորգ Եղիազարյանն ընդդեմ Լազար Մինասյանի՝ բաժնային սեփականության ներքո գրնվող գույքն ստանձնացնելու պահանջի մասին թիվ ԵՇԴ/1406/02/09 գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 01.04.2011 թվականի որոշումը*): Նման տրամաբանությամբ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ գործի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը պարզելու համար դատարանը պետք է պարզի, թե արդյոք այդ փաստի հաստատումը չի պահանջում հատուկ գիտելիքների կիրառում:

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ տվյալ դեպքում Սամվել Պողոսյանի վկայակոչած վտանգի առկայությունը պարզելը պահանջում է համապատասխան բնագավառում հատուկ գիտելիքներ, որի պայմաններում Դատարանը, համաձայն քաղաքացիական դատավարության օրենսգրքի 60-րդ հոդվածի 1-ին կետի, պարտավոր էր նշանակել համապատասխան փորձաքննություն:

Նման պայմաններում Վճռաբեկ դատարանը վճռաբեկ բողոքի հիմքը, կապված ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 48-րդ, 51-րդ, 53-րդ հոդվածների խախտման հետ, համարում է հիմնավոր:

Այսպիսով, վճռաբեկ բողոքի հիմքի առկայությունը Վճռաբեկ դատարանը դիտում է բավարար՝ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 228-րդ հոդվածի ուժով Վերաքննիչ դատարանի որոշումը բեկանելու համար:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 240-241²-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

ՈՐՈՇԵՑ

1. ՀՀ տարածքային կառավարման նախարարության ջրային տնտեսության պետական կոմիտեի վճռաբեկ բողոքը բավարարել: Բեկանել ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 23.02.2011 թվականի որոշումը և գործն ուղարկել ՀՀ Կոտայքի մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարան՝ նոր քննության:

2. Պետական տուրքի բաշխման հարցին անդրադառնալ գործի նոր քննության ընթացքում:

3. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

ՆԱՆՍԱԳԱՀՈՂ՝ *ստորագրություն*
ԴԱՏԱՎՈՐՆԵՐ՝ *ստորագրություններ*

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական
դատարանի որոշում

Քաղաքացիական գործ թիվ ԳԴ4/0208/02/10
2011թ.

Քաղաքացիական գործ թիվ ԳԴ4/0208/02/10

Նախագահող դատավոր՝ Ս. Միքայելյան
Դատավորներ՝ Ն. Տավարացյան
Դ. Խաչատրյան

ՈՐՈՇՈՒՄ

ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քաղաքացիական
և վարչական պալատը (այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

*նախագահությամբ
մասնակցությամբ դատավորներ*

Ե. ԽՈՒՆԴԿԱՐՅԱՆԻ
Վ. ԱՎԱՆԵՍՅԱՆԻ
Վ. ԱԲԵԼՅԱՆԻ
Ս. ԱՆՏՈՆՅԱՆԻ
Ա. ԲԱՐՍԵՂՅԱՆԻ
Մ. ԴՐՄԵՅԱՆԻ
Գ. ՀԱԿՈԲՅԱՆԻ
Է. ՀԱՅՐԻՅԱՆԻ
Տ. ՊԵՏՐՈՍՅԱՆԻ
Ե. ՍՈՂՈՄՈՆՅԱՆԻ

2011 թվականի դեկտեմբերի 27-ին

դոնբաց դատական նիստում, քննելով «Տավուշի մարզի Աղավնավանքի միջնակարգ դպրոց պետական հանրակրթական ուսումնական հաստատություն» պետական ոչ առևտրային կազմակերպության ներկայացուցիչ Սերգեյ Թախրյանի վճռաբեկ բողոքը ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 02.06.2011 թվականի որոշման դեմ՝ ըստ հայցի «Տավուշի մարզի Աղավնավանքի միջնակարգ դպրոց պետական հանրակրթական ուսումնական հաստատություն» պետական ոչ առևտրային կազմակերպության (այսուհետ՝ Կազմակերպություն) ընդդեմ Փայլակ Արշակյանի՝ գումարի բռնագանձման պահանջի մասին,

ՊԱՐԶԵՑ

1. Գործի դատավարական նախապատմությունը

Դիմելով դատարան՝ Կազմակերպությունը պահանջել է Փայլակ Արշակյանից բռնագանձել 1.290.000 ՀՀ դրամ պարտքի գումար և 26.000 ՀՀ դրամ պետական տուրքի գումար:

ՀՀ Գեղարքունիքի մարզի ընդհանուր իրավասության դատարանի (դատավոր՝ Ա. Գաբրիելյան) (այսուհետ՝ Դատարան) 22.02.2011 թվականի վճռով հայցը մերժվել է:

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի (այսուհետ՝ Վերաքննիչ դատարան) 02.06.2011 թվականի որոշմամբ Կազմակերպության վերաքննիչ բողոքը մերժվել է, և Դատարանի 22.02.2011 թվականի վճիռը թողնվել է օրինական ուժի մեջ:

Սույն գործով վճռաբեկ բողոք է ներկայացրել Կազմակերպությունը:
Վճռաբեկ բողոքի պատասխանն չի ներկայացվել:

2. Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը

Վերաքննիչ դատարանը խախտել է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 53-րդ հոդվածը, որի արդյունքում սխալ է մեկնաբանել և չի կիրառել ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 17-րդ հոդվածը և 345-րդ հոդվածը:

Բողոք բերած անձը նշված պնդումը պարձառաբանում է հետևյալ փաստարկներով.

Վերաքննիչ դատարանը չի իրականացրել ապացույցների պատշաճ գնահատում: Մասնավորապես՝ Վերաքննիչ դատարանը պատշաճ չի գնահատել թվով 9 դիմումները, որոնք պատասխանող Փայլակ Արշակյանը, ներկայացնելով հայցվորին որպես դրանցում նշված հեռախոսահամարների քարտերի ստացող, հայցվորի հանդեպ պարտավորվել է կատարել որոշակի գործողություն՝ վճարել գումար:

Մինչդեռ ապացույցների պատշաճ ուսումնասիրության արդյունքում Վերաքննիչ դատարանը կհանգեր այն եզրակացությանը, որ Փայլակ Արշակյանը Կազմակերպության հանդեպ ստանձնել է որոշակի պարտականություն, որը մինչ այսօր չի կատարել:

Չնայած Վերաքննիչ դատարանն ընդունել է, որ ՀՀ Տավուշի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի 24.06.2010 թվականի թիվ ՏԴ-1/0120/02/10 վճռով որոշվել է Կազմակերպությունից հօգուտ «Դ-Տելեկոմ» փակ բաժնետիրական ընկերության բռնագանձել 3.486.271 ՀՀ դրամ՝ որպես մատուցված բջջային հեռախոսակապի ծառայությունների դիմաց պարտքի գումար, սակայն այն չի դիտել փաստական տվյալ՝ Կազմակերպության խախտված իրավունքի վերականգնմանն ուղղված ծախսերի փոխհատուցման վերաբերյալ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 17-րդ հոդվածի 2-րդ կետի կիրառման համար:

Վերոգրյալի հիման վրա բողոք բերած անձը պահանջել է բեկանել Վերաքննիչ դատարանի 02.06.2011 թվականի որոշումը և այն փոփոխել՝ հայցը բավարարել:

3. Վճռաբեկ բողոքի քննության համար նշանակություն ունեցող փաստերը

Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1. «Դ-Տելեկոմ» ՓԲԸ-ի և Կազմակերպության միջև 06.02.2007 թվականին կնքվել է շարժական կապի ծառայությունների մատուցման պայմանագիր:

2. VivaCell գործընկեր Գ բջջային կապի «Արպորատիվ բաժանորդ» դառնալու համար 14.04.2009 թվականին թիվ 1, 2, 3, 4, 5, 6, 7, 8 և 9 դիմումների համաձայն՝ Փայլակ Արշակյանը «Արպորատիվ բաժանորդ» փաթեթի մասնակից է և Կազմակերպությանը հատկացված փաթեթից պատշաճ կարգով ստացել է 89 հատ հեռախոսահամարների քարտեր: Նշված դիմումներով Փայլակ Արշակյանը պարտավորվել է ժամանակին կատարել բոլոր համապատասխան վճարումները կապված 89 հեռախոսահամարների հետ (հատոր 1-ին, գ. թ. 13-21):

3. ՀՀ Տավուշի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի 24.06.2010 թվականի թիվ ՏԴ1/0120/02/10 վճռով որոշվել է Կազմակերպությունից հօգուտ «Ղ-Տելեկոմ» փակ բաժնետիրական ընկերության բռնագանձել 3.486.271 ՀՀ դրամ որպես մատուցված բջջային հեռախոսակապի ծառայությունների դիմաց պարտքի գումար, և 69.725 ՀՀ դրամ որպես նախապես վճարված պետական տուրք (հատոր 1-ին, գ. թ. 6-7):

4. Նշված վճռով Կազմակերպությունից «Ղ-Տելեկոմ» փակ բաժնետիրական ընկերության օգտին բռնագանձված գումարի մեջ ներառված են նաև պատասխանողի կողմից ստացած 89 հատ հեռախոսահամարների համար մատուցված ծառայությունների դիմաց չվճարված գումարները:

4. Վճարելի դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը

Քննելով վճարելի բողոքը նշված հիմքի սահմաններում Վճարելի դատարանը գրնում է, որ այն հիմնավոր է հետևյալ պարձառաբանությամբ.

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 53-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ դատարանը յուրաքանչյուր ապացույց գնահատում է գործում եղած բոլոր ապացույցների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտության վրա հիմնված ներքին հանգմամբ:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 17-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ անձը, ում իրավունքը խախտվել է, կարող է պահանջել իրեն պատճառված վնասների լրիվ հատուցում, եթե վնասների հատուցման ավելի պակաս չափ նախատեսված չէ օրենքով կամ պայմանագրով: Նույն հոդվածի 2-րդ կետի համաձայն՝ վնասներ են՝ իրավունքը խախտված անձի ծախսերը, որ նա կատարել է կամ պետք է կատարի խախտված իրավունքը վերականգնելու համար, նրա գույքի կորուստը կամ վնասվածքը (իրական վնաս), ինչպես նաև չստացված եկամուտները, որոնք այդ անձը կստանար քաղաքացիական շրջանառության սովորական պայմաններում, եթե նրա իրավունքը չխախտվեր (բաց թողնված օգուտ):

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 345-րդ հոդվածի համաձայն՝ պարտավորության ուժով մի անձը (պարտապանը) պարտավոր է մեկ այլ անձի (պարտատիրոջ) օգտին կատարել որոշակի գործողություն. այն է՝ վճարել դրամ, հանձնել գույք, կատարել աշխատանք, մատուցել ծառայություն և այլն, կամ ձեռնպահ մնալ որոշակի գործողություն կատարելուց, իսկ պարտատերն իրավունք ունի պարտապանից պահանջել կատարելու իր պարտականությունը: Պարտավորությունները ծագում են պայմանագրից, վնաս պատճատելու հետևանքով և սույն օրենսգրքում նշված այլ հիմքերից:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 347-րդ հոդվածի համաձայն՝ պարտավորությունները պետք է կատարվեն պատշաճ՝ պարտավորության պայմաններին, օրենքին և այլ իրավական ակտերի պահանջներին համապատասխան, իսկ նման պայմանների ու պահանջների բացակայության դեպքում՝ գործարար շրջանառության սովորույթներին կամ սովորաբար ներկայացվող այլ պահանջներին համապատասխան:

Վերոնշյալ հոդվածների վերլուծությունից հետևում է, որ պարտապանը պարտավոր է ամբողջությամբ կատարել պարտավորության բովանդակությունից և օրենսդրությունից բխող բոլոր պարտավորությունները:

Սույն գործի փաստերի համաձայն՝ ՀՀ Տավուշի մարզի առաջին ատյանի

ընդհանուր իրավասության դատարանի 24.06.2010 թվականի թիվ ՏԴ1/0120/02/10 վճռով որոշվել է Կազմակերպությունից հոգուտ «Ղ-Տելեկոմ» փակ բաժնետիրական ընկերության բռնագանձել 3.486.271 ՀՀ դրամ՝ որպես մատուցված բջջային հեռախոսակապի ծառայությունների դիմաց պարտքի գումար, և 69.725 ՀՀ դրամ՝ որպես նախապես վճարված պետական տուրք, իսկ VivaCell գործընկեր Գ բջջային կապի «Կորպորատիվ բաժանորդ» դառնալու համար 14.04.2009 թվականին թիվ 1, 2, 3, 4, 5, 6, 7, 8 և 9 դիմումներով Փայլակ Արշակյանը դարձել է «Կորպորատիվ բաժանորդ» փաթեթի մասնակից և Կազմակերպությանը հատկացված փաթեթից պատշաճ կարգով ստացել է 89 հատ հեռախոսահամար և պարտավորվել է ժամանակին կատարել բոլոր համապատասխան վճարումները՝ կապված 89 հեռախոսահամարների օգտագործման հետ:

Վերը նշված օրինական ուժի մեջ մտած վճռով հայցվորից «Ղ-Տելեկոմ» փակ բաժնետիրական ընկերության օգտին բռնագանձված գումարի մեջ ներառված է նաև պատասխանողի կողմից ստացված 89 հատ հեռախոսահամարների համար մատուցված ծառայությունների դիմաց նրա կողմից չվճարված գումարները:

Վերաքննիչ դատարանն, անդրադառնալով բողոքաբերի այն պատճառաբանությանը, որ Դատարանը սխալ է մեկնաբանել ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 17-րդ հոդվածի 2-րդ կետի դրույթը, վերլուծելով նշված կետի պահանջները, եզրակացրել է, որ վնասի հասկացության տակ օրենսդիրը ներառել է մի քանի վավերապայմաններ միաժամանակ նշելով, որ քննարկվող պարագայում բողոքաբերի փաստարկը վերաբերում է ապագայում հայցվորի կողմից կատարվելիք ծախսերին:

Վերաքննիչ դատարանը, համադրելով վերը նշված փաստերը, գտել է, որ Կազմակերպության պահանջը՝ 1.290.000 ՀՀ դրամ Փայլակ Արշակյանից բռնագանձելու մասին վերաբերում է միայն գույքային վնասին, որ Կազմակերպությունը կարող է կրել, երբ ի կատար ածվի դատարանի 24.06.2010 թվականի դատական ակտը: Ընդ որում, այդ գումարն իր բովանդակային կազմով ոչ թե ձևավորվել է որպես Փայլակ Արշակյանի կողմից Կազմակերպության սուբյեկտիվ իրավունքների խախտման վերականգնմանն ուղղված դրամական ծախսերի, այլ Կազմակերպության գույքային հավանական նվազեցման փոխհատուցում, ինչը ենթակա է որակման որպես հավանական իրական վնաս, քանի որ վերը նշված դատական ակտը դեռևս չի կատարվել:

Վերոգրյալի հիման վրա վերաքննիչ դատարանը եզրակացրել է, որ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 17-րդ հոդվածի 2-րդ կետի կանոնը վիճելի իրավահարաբերության նկատմամբ կիրառելի չէ:

Մինչդեռ, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Վերաքննիչ դատարանը, հաստատված համարելով, որ Կազմակերպության կողմից դեռևս չի կատարվել ՀՀ Տավուշի մարզի առաջին առյանի ընդհանուր իրավասության դատարանի 24.06.2010 թվականի թիվ ՏԴ1/0120/02/10 վճիռը, որի հիման վրա արձանագրել է, որ վերջինս չի կրել գույքային վնաս, չի կատարել գործում առկա ապացույցների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտություն և գնահատում:

Վճռաբեկ դատարանը գտնում է, որ անկախ ՀՀ Տավուշի մարզի առաջին առյանի ընդհանուր իրավասության դատարանի 24.06.2010 թվականի թիվ ՏԴ1/0120/02/10 վճռի կատարման փաստից, Փայլակ Արշակյանը խախտել է դիմումներով ստանձնած պարտավորությունը, այն է՝ սահմանված ժամկետներում չի կատարել բոլոր համապատասխան վճարումները կապված 89 հեռախոսահամարների

օգտագործման հետ, որի հետևանքով օրինական ուժի մեջ մտած դատական ակտով Կազմակերպության վրա դրվել է այդ թվում պատասխանողի կողմից ստացված և նրա կողմից օգտագործված հեռախոսահամարների համար մատուցված ծառայությունների դիմաց չվճարված գումարները վճարելու պարտավորությունը:

Այսինքն՝ տվյալ դեպքում Փայլակ Արշակյանը, չկատարելով իր կողմից օգտագործված հեռախոսահամարների համար անհրաժեշտ վճարումներ, դրանով իսկ խախտել է Կազմակերպության իրավունքները՝ նրան պատճառելով վնաս, որի հետևանքով Կազմակերպությունը իր խախտված իրավունքները վերականգնելու համար պարտավոր է կատարել դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած վճռով սահմանված հատուցումները:

Վերոգրյալը հիմք է տալիս եզրակացնելու, որ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 53-րդ հոդվածի խախտման, ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 17-րդ և 345-րդ հոդվածների սխալ մեկնաբանման և չկիրառման մասին վճռաբեկ բողոքի հիմքերը հիմնավոր են:

Այսպիսով, վճռաբեկ բողոքի հիմքի առկայությունը Վճռաբեկ դատարանը դիտում է բավարար՝ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 227-րդ և 228-րդ հոդվածների ուժով Վերաքննիչ դատարանի որոշումը բեկանելու համար:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 240-241²-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

ՈՐՈՇԵՑ

1. Վճռաբեկ բողոքը բավարարել մասնակիորեն: Բեկանել ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 02.06.2011 թվականի որոշումը և գործն ուղարկել ՀՀ Գեղարքունիքի մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարան՝ նոր քննության:

2. Պետական տուրքի բաշխման հարցին անդրադառնալ գործի նոր քննության ընթացքում:

3. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

*ՆԱԽԱԳԱՀՈՂ՝ ստորագրություն
ԴԱՏԱՎՈՐՆԵՐ՝ ստորագրություններ*

**ՔԱՂԱՔԱՑՈՒ ԿՅԱՆՔԻՆ ԿԱՄ ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆԸ
ՊԱՏՃԱՌՎԱԾ ՎՆԱՍԸ ՀԱՏՈՒՑԵԼԸ**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ**

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական Քաղաքացիական գործ թիվ ԵԱԲԴ/2447/02/10
դատարանի որոշում 2011թ.
Քաղաքացիական գործ թիվ ԵԱԲԴ/2447/02/10
Նախագահող դատավոր՝ Ա. Պետրոսյան
Դատավորներ՝ Ն. Տավարացյան
Կ. Չիլինգարյան

**ՈՐՈՇՈՒՄ
ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քաղաքացիական և վարչական պալատը (այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

*նախագահությամբ
մասնակցությամբ դատավորներ*

Ե. ԽՈՒՆԴԿԱՐՅԱՆԻ
Ս. ԱՆՏՈՆՅԱՆԻ
Վ. ԱԲԵԼՅԱՆԻ
Վ. ԱՎԱՆԵՍՅԱՆԻ
Ա. ԲԱՐՍԵՂՅԱՆԻ
Մ. ԴՐՄԵՅԱՆԻ
Գ. ՀԱԿՈԲՅԱՆԻ
Է. ՀԱՅՐԻՅԱՆԻ
Տ. ՊԵՏՐՈՍՅԱՆԻ
Ե. ՍՈՂՈՄՈՆՅԱՆԻ

2011 թվականի դեկտեմբերի 27-ին

դռնբաց դատական նիստում, քննելով «Հողշինմունիթորինգ» ՊՈԱԿ-ի (այսուհետ՝ Կազմակերպություն) վճռաբեկ բողոքը ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 29.07.2011 թվականի որոշման դեմ՝ ըստ հայցի Վեներա Դավթյանի ընդդեմ Կազմակերպության՝ վնասը հատուցելու պահանջի մասին,

ՊԱՐԶԵՑ

1. Գործի դատավարական նախապատմությունը

Դիմելով դատարան՝ Վեներա Դավթյանը պահանջել է Կազմակերպությունից բռնագանձել 1.100.803 ՀՀ դրամ՝ որպես 2005 թվականի հունվարից 2008

թվականի ղեկտեմբեր ամիսներն ընկած ժամանակահատվածում չհատուցված կորցրած աշխատավարձ, և այդ գումարին ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 411-րդ հոդվածին համապատասխան հաշվեգրված տոկոսները՝ 114.700 ՀՀ դրամ որպես 660.000 ՀՀ դրամին 01.01.2009 թվականից մինչև 05.11.2010 թվականն ընկած ժամանակահատվածում ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 411-րդ հոդվածին համապատասխան հաշվեգրված տոկոսներ, 230.760 ՀՀ դրամ որպես 2009-2010 թվականների ղեղամիջոցների ձեռքբերման համար կատարված ծախս, և պարտավորեցնել պատասխանողին յուրաքանչյուր տարի իրեն վճարել 261.200 ՀՀ դրամ սկսած 2011 թվականից որպես ղեղերի ձեռքբերման համար անհրաժեշտ գումար:

Երևանի Արաբկիր և Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի (դատավոր՝ Ա. Հունանյան) (այսուհետ՝ Դատարան) 03.06.2011 թվականի վճռով հայցը բավարարվել է մասնակիորեն՝ Կազմակերպությունից հօգուտ Վեներա Դավթյանի բռնագանձվել է 115.380 ՀՀ դրամ որպես 2009-2010 թվականներին ղեղամիջոցների ձեռքբերման համար կատարված լրացուցիչ ծախս, իսկ մնացած մասերով հայցը մերժվել է: Քաղաքացիական գործի վարույթը 130.600 ՀՀ դրամ որպես ղեղերի ձեռքբերման համար անհրաժեշտ գումար, յուրաքանչյուր տարի՝ սկսած 2011 թվականից վճարելու պարտավորեցնելու հայցապահանջի մատով կարճվել է՝ հայցից հրաժարվելու հիմքով:

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 29.07.2011 թվականի որոշմամբ Դատարանի 03.06.2011 թվականի վճիռը մասնակիորեն բեկանվել և փոփոխվել է. որպես 2005 թվականի հունվար ամսից մինչև 2008 թվականի ղեկտեմբեր ամիսն ընկած ժամանակահատվածում չհատուցված կորցրած աշխատավարձի բռնագանձման, այդ գումարին ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 411-րդ հոդվածի համապատասխան տոկոսներ հաշվեգրելու, ինչպես նաև 660.000 ՀՀ դրամին 2009 թվականի հունվարի 01-ից մինչև 2010 թվականի նոյեմբերի 05-ն ընկած ժամանակահատվածի համար ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 411-րդ հոդվածին համապատասխան տոկոսներ հաշվեգրելու մասերով հայցը բավարարվել է:

Սույն գործով վճռաբեկ բողոք է ներկայացրել Կազմակերպությունը:

Վճռաբեկ բողոքի պատասխան է ներկայացրել Վեներա Դավթյանը:

2. Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը

Սույն վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքերի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

1) Վերաքննիչ դատարանը խախտել է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 53-րդ, 130-րդ, 132-րդ հոդվածները, սիսալ է մեկնարանել ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1078-րդ և 1079-րդ հոդվածները:

Բողոք բերած անձը նշված պնդումը պարձառարանում է հետևյալ փաստարկներով.

Երևանի Արաբկիր և Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի՝ 12.04.2010 թվականի օրինական ուժի մեջ մտած

վճռով Կազմակերպությունը պարտավորվել է հոգուտ Վեներա Դավթյանի, սկսած 2009 թվականի հունվարի 1-ից, վճարել վերջինիս աշխատունակության կորստի աստիճանին՝ 60 տոկոսին համապատասխան գումար՝ 30.000 ՀՀ դրամ: Այսինքն՝ դա վկայում է այն մասին, որ վճռով արդեն իսկ սահմանվել է տուժողի կորցրած աշխատավարձի հատուցման չափը, ուստի դրա չափի կրկնակի սահմանումը կհակասի ՀՀ օրենսդրությանը:

Բացի այդ, ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1078-րդ և 1079-րդ հոդվածները վերաբերում են կորցրած աշխատավարձին, այսինքն՝ քաղաքացու առողջությանը վնաս պատճառելու դեպքում չստացված այն աշխատավարձին, որը նա ստանում էր կամ կարող էր ստանալ: Մինչդեռ, Վեներա Դավթյանը Կազմակերպությունում վայր ընկնելու հետևանքով վնասվածք ստանալուց և բուժվելուց հետո՝ 2005 թվականից մինչև 2009 թվականի հունվարի 1-ը, շարունակել է աշխատել նույն Կազմակերպությունում և աշխատավարձ է ստացել, այսինքն՝ այդ ժամանակահատվածում նա կորցրած աշխատավարձ չունի:

2) Վերաքննիչ դատարանը կիրառել է ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 411-րդ հոդվածը, որը չպետք է կիրառել:

Բողոք բերած անձը նշված պնդումը պարձառաքանում է հետևյալ փաստարկներով.

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 411-րդ հոդվածով սահմանված տոկոսները ևս ենթակա չեն գանձման, քանի որ Վեներա Դավթյանն իրեն հասանելիք աշխատավարձն ստացել է մինչև աշխատանքից ազատվելը, հետևաբար Կազմակերպության կողմից գումարներն ապօրինաբար պահելու դեպք առկա չէ:

Վեներա Դավթյանի՝ 114.700 ՀՀ դրամի բռնագանձման պահանջը՝ որպես 01.01.2009-05.11.2010 թվականների համար Երևանի Արաբկիր և Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի 12.04.2010 թվականի թիվ ԵԱԲԴ/1095/02/09 վճռով սահմանված 600.000 ՀՀ դրամի նկատմամբ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 411-րդ հոդվածով նախատեսված հաշվեգրված տոկոսների բռնագանձման մասին, ևս անհիմն է, քանի որ այդ գումարը 05.11.2010 թվականին օրինական ուժի մեջ մտած վճռի հիման վրա բռնագանձվել է, իսկ մինչ այդ գործը քննվում էր դատական կարգով:

Վերոգրյալի հիման վրա բողոք բերած անձը պահանջել է բեկանել Վերաքննիչ դատարանի 29.07.2011 թվականի որոշումը և գործն ուղարկել նոր քննության:

2.1. Վճարել քողոքի պատասխանի հիմնավորումները

Բողոք բերած անձի դիրքորոշումը հետևանք է «աշխատավարձ» և «կորցրած աշխատավարձ» տերմինների նույնացման, մինչդեռ դրանց տարբերությունն էական է. «աշխատավարձը» և դրա հետ կապված հարաբերությունները կարգավորվում են աշխատանքային օրենսդրությամբ, այն վճարվում է աշխատողին աշխատանքային պայմանագրի հիման վրա կատարած աշխատանքի դիմաց, իսկ «կորցրած

աշխատավարձ» այն դրամական գումարն է, որը վճարվում է տուժողին՝ որպես առողջությանը պատճառված վնասի հատուցում, և նշված գումարի վճարման հիմքը քաղաքացուն հաշմություն կամ նրա առողջությանն այլ վնաս պատճառելն է:

Երևանի Արաբկիր և Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի՝ 12.04.2010 թվականի թիվ ԵԱՔԳ/1095/02/09 օրինական ուժի մեջ մտած վճռի հիման վրա Կազմակերպությունը 2009 թվականի հունվարի 1-ից պարտավորվել է վճարելու Վեներա Դավթյանին ամսական 30.000 ՀՀ դրամ որպես առողջությանը պատճառված վնասի հատուցում, որը և վճարել է 05.11.2010 թվականին 660.000 ՀՀ դրամ՝ 01.01.2009-30.10.2010 թվականների համար: 660.000 ՀՀ դրամի նկատմամբ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 411-րդ հոդվածի կիրառման հիմքն այն է, որ բողոք բերած անձը վճռով սահմանված պարտականությունը կատարել է 1 տարի 10 ամիս կետանցով, ուստի նշված հոդվածով նախատեսված տոկոսները ենթակա են հաշվեգրման:

3. Վճարել բողոքի քննության համար նշանակություն ունեցող փաստերը

Վճարել բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1. Համաձայն ՀՀ սոցիալական ապահովության նախարարության ՀՀ բժշկասոցիալական փորձաքննության գործակալության թիվ 00120704 տեղեկանքի՝ Վեներա Դավթյանը տեղի ունեցած դժբախտ դեպքի հետևանքով ունեցել է մասնագիտական աշխատունակության 50 %-ի կորուստ 14.06.2005 թվականի դրությամբ, իսկ 07.06.2006 թվականի դրությամբ աշխատունակության 60 %-ի կորուստ **(հատոր 1-ին, գ.թ. 38-39):**

2. Կազմակերպության կողմից տրված տեղեկանքի համաձայն՝ Վեներա Դավթյանի աշխատավարձը 2005 թվականի հունիսի 10-ից մինչև 2009 թվականի հունվարի 1-ն ընկած ժամանակաշրջանի համար կազմել է ամսական 50.000 ՀՀ դրամ **(հատոր 1-ին, գ.թ. 42):**

3. 01.01.2009 թվականից Վեներա Դավթյանն իր դիմումի համաձայն ազատվել է աշխատանքից **(հատոր 1-ին, գ.թ. 78):**

4. Թիվ ԵԱՔԳ/1095/02/09 քաղաքացիական գործով 12.04.2010 թվականին կայացված և օրինական ուժի մեջ մտած վճռով Կազմակերպությունը պարտավորեցվել է հօգուտ Վեներա Դավթյանի, որպես առողջությանը պատճառված վնասի հատուցում, յուրաքանչյուր ամիս վճարել Վեներա Դավթյանի մասնագիտական աշխատունակության կորստի աստիճանին՝ 60 %-ին համապատասխան գումար՝ սկսած 01.01.2009 թվականից, իսկ թիվ ԵԱՔԳ/0112/02/09 քաղաքացիական գործով 31.03.2009 թվականին կայացված և օրինական ուժի մեջ մտած վճռով Վեներա Դավթյանի հայքը 279.816 ՀՀ դրամ առողջությանը պատճառված վնասի լրացուցիչ ծասերի փոխհատուցման պահանջով բավարարվել է **(հատոր 1-ին, գ.թ. 46-54):**

5. Կազմակերպությունը 12.04.2010 թվականին կայացված և օրինական ուժի մեջ մտած վճռի հիման վրա Վեներա Դավթյանին 05.11.2010 թվականին վճարել է 660.000 ՀՀ դրամ որպես պատճառված վնաս **(հատոր 1-ին, գ.թ. 45-50):**

4. Վճուրբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումները

Քննելով վճուրբեկ բողոքը վերը նշված հիմքերի սահմաններում՝ Վճուրբեկ դատարանը գործում է, որ՝

1) վճուրբեկ բողոքն առաջին հիմքով հիմնավոր է հետևյալ պարձառաբանությամբ:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1078-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ քաղաքացուն հաշմություն կամ նրա առողջությանն այլ վնաս պատճառելու դեպքում հատուցման ենթակա են տուժողի կորցրած աշխատավարձը (եկամուտը), որը նա ստանում էր կամ կարող էր ստանալ, ինչպես նաև առողջության քայքայման հետևանքով ծագած լրացուցիչ ծախսերը՝ ներառյալ բուժվելու, լրացուցիչ սննդի, դեղամիջոցներ ձեռք բերելու, պրոթեզավորման, կողմնակի խնամքի, առողջարանական-կուրորտային բուժման, հատուկ տրանսպորտային միջոցներ ձեռք բերելու, այլ մասնագիտություն ձեռք բերելու համար ծախսերը, եթե պարզվել է, որ տուժողն ունի օգնության ու խնամքի նման տեսակների կարիք և չունի դրանք անվճար ստանալու իրավունք: Նույն հոդվածի 2-րդ կետի համաձայն՝ կորցրած աշխատավարձը (եկամուտը) սահմանելիս տուժողին՝ հաշմության կամ առողջության այլ վնասի հետ կապված, նշանակված հաշմանդամության կենսաթոշակը, ինչպես նաև այլ կենսաթոշակներն ու նպաստները և այլ նմանօրինակ վճարները, որոնք նշանակվել են առողջության քայքայումից առաջ կամ հետո, հաշվի չեն առնվում ու չեն հանգեցնում վնասի հատուցման չափի նվազեցման (հաշվի չեն առնվում ի հաշիվ վնասի հատուցման): Վնասը հատուցելիս հաշվի չի առնվում նաև տուժողի կողմից առողջության քայքայումից հետո ստացած աշխատավարձը (եկամուտը):

Վերոնշյալ հոդվածից հետևում է, որ օրենսդիրը նպատակ է ունեցել առողջությանը պատճառված վնասի հետևանքով կորցրած, այսինքն՝ չստացած աշխատավարձը կամ եկամուտը, որը նա ստանում էր կամ կարող էր ստանալ, ինչպես նաև առողջության քայքայման հետևանքով ծագած լրացուցիչ ծախսերը հատուցելու եղանակով հնարավորինս **վերականգնել տուժողի մոտ նախկինում՝ մինչ առողջությանը հասցված վնասը եղած վիճակը:** Այսինքն՝ օրենքը նախատեսում է քաղաքացուն հաշմություն կամ նրա առողջությանն այլ վնաս պատճառելու դեպքում հատուցման հետևյալ տեսակները՝

1. տուժողի կորցրած աշխատավարձի (եկամտի) հատուցում, որը նա ստանում էր կամ կարող էր ստանալ,

2. առողջության քայքայման հետևանքով ծագած լրացուցիչ ծախսերի հատուցում,

3. այլ մասնագիտություն ձեռք բերելու համար ծախսերի հատուցում:

Վերոգրյալից բացի, այլ տեսակի դրամական փոխհատուցում օրենքով նախատեսված չէ:

Սույն գործի փաստերի համաձայն՝ Վեներա Դավթյանը Կազմակերպության սանհանգույցում ընկնելու հետևանքով ստացել է կոնքազդրային կոտրվածք, որի հետևանքով ունեցել է մասնագիտական աշխատունակության 50 %-ի կորուստ 14.06.2005 թվականի դրությամբ, իսկ 07.06.2006 թվականի դրությամբ աշխատունակության 60 %-ի կորուստ: 2005-2009 թվականները Վեներա Դավթյանը շարունակել է աշխատել Կազմակերպությունում և վարձատրվել է սահմանված կարգով: 01.01.2009 թվականից Վեներա Դավթյանն իր դիմումի համաձայն ազատվել

է աշխատանքից: Վեներա Դավթյանը դիմել է դատարան ատողջությանը պատճառված վնասը՝ կորցրած աշխատավարձը, հատուցելու պահանջով:

Դատարանն այդ մասով մերժել է Վեներա Դավթյանի պահանջը՝ պատճառաբանելով, որ Վեներա Դավթյանը վնասվածք ստանալուց հետո 2005 թվականից մինչև 2009 թվականն ընկած ժամանակաշրջանը շարունակել է աշխատել կազմակերպությունում և ստացել աշխատավարձ, հետևաբար այդ ժամանակաշրջանի համար կորցրած աշխատավարձի մասին խոսք լինել չի կարող:

Վերաքննիչ դատարանը գտել է, որ նյութական իրավունքի նորմերի սխալ կիրառման վերաբերյալ Վեներա Դավթյանի փաստարկները հիմնավոր են, քանի որ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1078-րդ հոդվածի 2-րդ կետի համաձայն՝ վնասը հատուցելիս հաշվի չի առնվում տուժողի կողմից ատողջության քայքայումից հետո ստացած աշխատավարձը (եկամուտը): Այսինքն, եթե հայցվորը ստացել է աշխատավարձ, դա դեռ չի նշանակում, որ վերջինս աշխատունակության կորստի հետևանքով պատճառված վնասի համար չպետք է ստանա վնասի հատուցում:

Մինչդեռ Վճռաբեկ դատարանը ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1078-րդ հոդվածի 1-ին և 2-րդ կետերի համեմատական վերլուծության արդյունքում գալիս է այն եզրահանգման, որ «կորցրած աշխատավարձ» կամ «կորցրած եկամուտ» հասկացությունն օրենսդիրն օգտագործել է՝ որպես աշխատունակության կորստի հետևանքով աշխատել չկարողանալու և համապատասխան աշխատավարձ (եկամուտ) չստանալու հետևանք, և այդ հոդվածով համապատասխան հատուցում ստանալու տուժողի իրավունքի նախատեսումն իրականում նպատակ է հետապնդում հնարավորինս վերականգնել վերջինիս իրավունքները, այսինքն՝ մինչև ատողջությանը վնաս պատճառելը եղած վիճակը վերականգնելը, երբ ատողջությունը չվնասվելու դեպքում սովորական պայմաններում կաշխատեր և կստանար համապատասխան վարձատրություն: Ինչ վերաբերում է 1078-րդ հոդվածի 2-րդ կետով սահմանված դրույթին, ըստ որի՝ վնասը հատուցելիս հաշվի չի առնվում տուժողի կողմից ատողջության քայքայումից հետո ստացած աշխատավարձը (եկամուտը), ապա Վճռաբեկ դատարանը գտնում է, որ այդ նորմի իմաստն այն է, որ ատողջության քայքայումից հետո աշխատելու դեպքում աշխատավարձ ստանալը չի վերացնում ատողջությունը վերականգնելու փուլում չաշխատելու հետևանքով չստացած, կորցրած աշխատավարձը (եկամուտը) և այլ վնասները ստանալու տուժողի իրավունքը:

Այսպիսով, ելնելով վերոգրյալից՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Վեներա Դավթյանի հայցն այս մասով մերժելու վերաբերյալ Դատարանի իրավական դիրքորոշումը հիմնավոր է:

2) *Վճռաբեկ բողոքը երկրորդ հիմքով անհիմն է հետևյալ պարձառաբանությամբ:*

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 411-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ ուրիշի դրամական միջոցներն ապօրինի պահելու, դրանք վերադարձնելուց խուսափելու, վճարման այլ կետանցով դրանք օգտագործելու, կամ այլ անձի հաշվին անհիմն ստանալու կամ խնայելու դեպքերում այդ գումարին վճարվում են տոկոսներ: Տոկոսները հաշվարկվում են կետանցի օրվանից մինչև պարտավորության դադարման օրը՝ ըստ համապատասխան ժամանակահատվածների համար Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի սահմանած բանկային տոկոսի հաշվարկային դրույթների:

Վերը նշված հոդվածից հետևում է, որ դրամական պարտավորության չկատարման

համար գումարին տոկոսներ վճարելու պարտավորության ծագման հիմք է ուրիշի դրամական միջոցներն ապօրինի պահելը (*տես Արամ Հայրապետյանն ընդդեմ Նորիկ Գզիրյանի, Լիլյա և Վիլեն Հայրապետյանների՝ ժառանգությունն ընդունած ժառանգ ճանաչելու և բնակարանը հրապարակային սակարկություններով վաճառելու պահանջների մասին և Վիլեն Հայրապետյանն ընդդեմ Արամ Հայրապետյանի՝ գումարի բռնագանձելու պահանջի մասին, թիվ 3-502(ՎԴ) գործով ՀՀ վճարելի դատարանի 26.09.2008 թվականի որոշումը*):

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1079-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ տուժողի կորցրած աշխատավարձի (եկամտի) հատուցման ենթակա չափը որոշվում է միջին աշխատավարձից (եկամտից) տոկոսներով, որը նա ստացել է մինչև հաշմությունը կամ առողջության այլ վնասվածքը կամ աշխատունակության կորուստը: Այդ տոկոսները որոշվում են տուժողի կողմից մասնագիտական աշխատունակության կորստի, իսկ մասնագիտական աշխատունակության բացակայության դեպքում՝ ընդհանուր աշխատունակության կորստի աստիճանին համապատասխան:

Սույն գործում առկա Երևանի Արաբկիր և Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի՝ 12.04.2010 թվականի թիվ ԵԱԶԳ/1095/02/09 օրինական ուժի մեջ մտած վճռի հիման վրա Կազմակերպությունը 2009 թվականի հունվարի 1-ից պարտավորվել է, որպես առողջության պատճառված վնասի հատուցում, Վեներա Դավթյանին վճարելու ամսական 30.000 ՀՀ դրամ: Կազմակերպությունը 05.11.2010 թվականին վճարել է 660.000 ՀՀ դրամ՝ 01.01.2009-30.10.2010 թվականների համար: Վեներա Դավթյանը պահանջել է 660.000 ՀՀ դրամի նկատմամբ հաշվարկել ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 411-րդ հոդվածով նախատեսված տոկոսներ՝ սկսած 01.01.2009 թվականից, որը կազմել է 114.700 ՀՀ դրամ: Վերաքննիչ դատարանը բավարարել է այս մասով Վեներա Դավթյանի բողոքը՝ պատճառաբանելով, որ դատական ակտից հետևում է, որ պարտավորությունները ծագել են 01.01.2009 թվականին, և դրանց դադարման օրն է 05.11.2010 թվականը, հետևաբար կետանցը կհամարվի 01.01.2009 թվականը:

Վճարելի դատարանը գտնում է, որ Վերաքննիչ դատարանի որոշումն այս մասով հիմնավոր է, քանի որ սույն գործով Վեներա Դավթյանին վերոհիշյալ դրամական միջոցները վճարելու պարտավորությունը Կազմակերպության մոտ ծագել է 01.01.2009 թվականից, ուստի Կազմակերպության կողմից մինչև 05.11.2010 թվականը նշված գումարը չվճարելու արդյունքում վերջինս ապօրինի պահել է Վեներա Դավթյանին վճարվելիք գումարը:

Ինչ վերաբերում է վճարելի բողոքի այն փաստարկին, որ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 411-րդ հոդվածով նախատեսված հաշվեգրված տոկոսների բռնագանձման մասին պահանջն անհիմն է, քանի որ այդ գումարը 05.11.2010 թվականին օրինական ուժի մեջ մտած վճռի հիման վրա բռնագանձվել է, իսկ մինչ այդ գործը քննվում էր դատական կարգով, ապա Վճարելի դատարանը գտնում է, որ տվյալ դեպքում գործը դատական կարգով քննության մեջ գտնվելու հանգամանքը հիմք չէ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 411-րդ հոդվածը չկիրառելու համար, քանի որ Կազմակերպության՝ գումար վճարելու պարտավորությունը ծագել է 01.01.2009 թվականին՝ այն պահից, երբ կողմերի միջև ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1078-րդ հոդվածի հիման վրա և նույն օրենսգրքի 1079-րդ հոդվածով սահմանված չափով առաջացել են վնաս պատճառելուց բխող իրավահարաբերություններ: Հետևաբար գործի դատական կարգով քննությունն ընդամենը անձի՝ իր իրավունքների դատական

պաշտպանության եղանակն էր, որի ընթացքում դատարանը քննել է նախկինում ծագած իրավահարաբերությունների հետևանքով վնասի հատուցման հարցը:

Այսպիսով, վճարել բողոքի առաջին հիմքի առկայությունը վճարել դատարանը դիտում է բավարար՝ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 227-րդ հոդվածի ուժով վերաքննիչ դատարանի որոշումը բեկանելու համար:

Միաժամանակ, վճարել դատարանը գտնում է, որ սույն քաղաքացիական գործով անհրաժեշտ է կիրառել ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 240-րդ հոդվածի 1-ին կետի 4-րդ ենթակետով սահմանված՝ ստորադաս դատարանի դատական ակտը փոփոխելու՝ վճարել դատարանի լիազորությունը հետևյալ հիմնավորմամբ.

ՀՀ Սահմանադրության 19-րդ հոդվածի և «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի (այսուհետ՝ Կոնվենցիա) 6-րդ հոդվածի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի ողջամիտ ժամկետում իր գործի քննության իրավունք: Վճարել դատարանը գտնում է, որ գործը ողջամիտ ժամկետում քննելը հանդիսանում է ՀՀ Սահմանադրության և Կոնվենցիայի վերը նշված հոդվածով ամրագրված անձի արդար դատաքննության իրավունքի տարր, հետևաբար գործի անհարկի ձգձգումները վտանգ են պարունակում նշված իրավունքի խախտման տեսանկյունից: Տվյալ դեպքում, վճարել դատարանի կողմից ստորադաս դատարանի դատական ակտը փոփոխելը բխում է արդարադատության արդյունավետության շահերից:

Դատական ակտը փոփոխելիս վճարել դատարանը հիմք է ընդունում սույն որոշման պատճառաբանությունները, ինչպես նաև գործի նոր քննության անհրաժեշտության բացակայությունը:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 240-241²-րդ հոդվածներով՝ վճարել դատարանը

ՈՐՈՇԵՑ

1. Վճարել բողոքը բավարարել մասնակիորեն: Բեկանել ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 29.07.2011 թվականի որոշման՝ 2005 թվականի հունվար ամսից մինչև 2008 թվականի դեկտեմբեր ամիսն ընկած ժամանակահատվածում չհատուցված կորցրած աշխատավարձի բռնագանձման մասը, և այդ մասով վեներա Դավթյանի հայցը մերժել: Որոշման մնացած մասը թողնել օրինական ուժի մեջ:

2. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

*ՆԱԽԱԳԱՀՈՂ՝ արտրագրություն
ԴԱՏԱՎՈՐՆԵՐ՝ արտրագրություններ*

ԺԱՌԱՆԳՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական Քաղաքացիական գործ թիվ ԵԱԲԴ/1018/02/09
 դատարանի որոշում 2011թ.
 Քաղաքացիական գործ թիվ ԵԱԲԴ/1018/02/09
 Նախագահող դատավոր՝ Ա. Խառատյան
 Դատավորներ՝ Ա. Պետրոսյան
 Կ. Չիլինգարյան

ՈՐՈՇՈՒՄ

ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քաղաքացիական
 և վարչական պալատը (այսուհետ՝ վճռաբեկ դատարան)

նախագահությամբ

մասնակցությամբ դատավորները

Ե. ԽՈՒՆԴԿԱՐՅԱՆԻ

Վ. ԱՎԱՆԵՍՅԱՆԻ

Վ. ԱԲԵԼՅԱՆԻ

Ա. ԲԱՐՍԵՂՅԱՆԻ

Մ. ԴՐՄԵՅԱՆԻ

Գ. ՀԱԿՈԲՅԱՆԻ

Տ. ՊԵՏՐՈՍՅԱՆԻ

Ե. ՍՈՂՈՄՈՆՅԱՆԻ

2011 թվականի հուլիսի 01-ին

դռնբաց դատական նիստում, քննելով Գևորգ Բերբերյանի վճռաբեկ բողոքը
 ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 03.06.2010 թվականի որոշման դեմ՝
 ըստ հայցի Գևորգ Բերբերյանի ընդդեմ Մարինե Բերբերյանի՝ իրավաբանական
 նշանակություն ունեցող փաստերի՝ հողամասը սեփականության իրավունքով
 տիրապետելու փաստը հաստատելու և ժառանգությունն ընդունած ժառանգ ձանաչելու
 պահանջների մասին և հակընդդեմ հայցի՝ ժառանգությունն ընդունելու համար բաց
 թողնված ժամկետը հարգելի համարելու և ըստ կտակի ժառանգությունն ընդունած
 ժառանգ ձանաչելու պահանջների մասին,

ՊԱՐԶԵՑ

1. Գործի դատավարական նախապատմությունը

Դիմելով դատարան՝ Գևորգ Բերբերյանը պահանջել է հաստատել Անի
 Մուրաֆյանի՝ Երևանի Երզնկյան փողոցի թիվ 46 հասցեի 324 քմ մակերեսով
 հողամասի նկատմամբ սեփականության իրավունքի տիրապետման փաստը և
 ձանաչել մորաքրոջ՝ Անի Մուրաֆյանի ժառանգությունն ընդունած ժառանգ և իր
 սեփականության իրավունքը Երևանի Երզնկյան փողոցի թիվ 46 տան 1/2-րդ բաժնի

նկատմամբ:

Հակընդդեմ հայցով դիմելով դատարան՝ Մարինե Բերբերյանը պահանջել է հարգելի համարել իր կողմից ժառանգությունն ընդունելու համար բաց թողնված ժամկետը և իրեն ճանաչել Երևանի Երզնկյան փողոցի թիվ 46 հասցեի ամբողջ անշարժ գույքի նկատմամբ ըստ կտակի ժառանգությունն ընդունած ժառանգ:

Արաբկիր և Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի 24.03.2010 թվականի (այսուհետ՝ Դատարան) վճռով Գևորգ Բերբերյանի հայցը բավարարվել է, իսկ Մարինե Բերբերյանի հակընդդեմ հայցը մերժվել է:

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի (այսուհետ՝ Վերաքննիչ դատարան) 03.06.2010 թվականի որոշմամբ Մարինե Բերբերյանի վերաքննիչ բողոքը բավարարվել է մասնակիորեն. բեկանվել և փոփոխվել է Դատարանի վճիռը՝ Գևորգ Բերբերյանի հայցը մերժվել է, իսկ Մարինե Բերբերյանի հայցը բավարարվել է մասնակիորեն՝ Մարինե Բերբերյանը ճանաչվել է Անի Մուրաֆյանի ժառանգությունն ըստ կտակի ընդունած ժառանգ, իսկ մնացած մասով հակընդդեմ հայցը մերժվել է:

Սույն գործով վճռաբեկ բողոք է ներկայացրել Գևորգ Բերբերյանը:

Վճռաբեկ բողոքի պատասխան է ներկայացրել Մարինե Բերբերյանը:

2. Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը

Վերաքննիչ դատարանը խախտել է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 53-րդ, 130-րդ հոդվածները, չի կիրառել ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1226-րդ, 1227-րդ հոդվածները, 1225-րդ հոդվածի 6-րդ կետը, որոնք պետք է կիրառեր:

Բողոք բերած անձը նշված պնդումը պարձառաքանում է հետևյալ փաստարկներով

Վերաքննիչ դատարանը ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 53-րդ հոդվածի խախտման հետևանքով յուրաքանչյուր ապացույց չի գնահատել գործում եղած բոլոր ապացույցների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտության հիման վրա:

Վերաքննիչ դատարանն անտեսել է, որ սույն քաղաքացիական գործով չի ապացուցվել այն հանգամանքը, որ Մարինե Բերբերյանն օրենքով սահմանված ժամկետում Անի Մուրաֆյանի մահից հետո դիմել է նոտարական գրասենյակ ըստ կտակի ժառանգության իրավունքի վկայագիր ստանալու համար, այսինքն՝ Մարինե Բերբերյանը բաց է թողել օրենքով սահմանված վեցամսյա ժամկետում 11.08.1999 թվականին կազմված կտակի հիման վրա ժառանգության ընդունման ժամկետը, չի ընդունել ժառանգությունն ըստ կտակի, որի պայմաններում ժառանգելու իրավունք են ձեռք բերում ըստ օրենքի ժառանգները:

Վերաքննիչ դատարանը պատշաճ չի գնահատել այն հանգամանքը, որ Գևորգ Բերբերյանը վեցամսյա ժամկետում 20.10.2005 թվականին դիմում է ներկայացրել նոտարին մորաքրոջ՝ Անի Մուրաֆյանի ժառանգությունն ընդունելու վերաբերյալ:

Վերոգրյալի հիման վրա բողոք բերած անձը պահանջել է բեկանել Վերաքննիչ դատարանի 03.06.2010 թվականի որոշումը և օրինական ուժ տալ Դատարանի 24.03.2010 թվականի վճիռն:

2.1. Վճռաբեկ բողոքի պատասխանի հիմնավորումները

Կտակը Մարինե Բերբերյանի կողմից ընդունվել է ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1226-րդ հոդվածի 3-րդ կետի հիմքով կտակված գույքը փաստացի տիրապետելու միջոցով: Ինչ վերաբերում է վճարել բողոքի այն պնդմանը, որ Դատարանը չի կիրառել ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1226-րդ և 1227-րդ հոդվածները, ապա նշված պնդումն անհիմն է, քանի որ նշված հոդվածները դրված են Դատարանի որոշման հիմքում, և Դատարանը որոշմամբ անդրադառնում է դրանց կիրառման շարժառիթներին:

3. Վճարել բողոքի քննության համար նշանակություն ունեցող փաստերը

Վճարել բողոքի քննության համար նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

- 1) Անի Մութաֆյանը մահացել է 05.06.2005 թվականին, Տիրուհի Բերբերյանը մահացել է 25.10.2004 թվականին (հատոր առաջին գ.թ 7-8):
- 2) 11.08.1999 թվականին Անի Մութաֆյանը Երևանի Երզնկյան փողոցի 46 տունն իր գույքով կտակել է Մարինե Բերբերյանին (հատոր առաջին գ.թ 33):
- 3) Գևորգ Բերբերյանը 20.10.2005 թվականին հայտարարություն է ներկայացրել նոտարական գրասենյակ, որ ընդունում է հանգուցյալ Անի Մութաֆյանի մահից հետո մնացած ժառանգական գույքը (հատոր առաջին գ.թ 12):
- 4) Գևորգ Բերբերյանի հարևանների հայտարարության համաձայն՝ Գևորգ Բերբերյանը 1958 թվականից առ այսօր մշտապես բնակվում է Երևանի Երզնկյան փողոցի թիվ 46 տանը (հատոր առաջին գ.թ 66):
- 5) 12.07.2005 թվականի տեղեկանքի համաձայն՝ հանգուցյալ Անի Գևորգի Մութաֆյանը մինչ մահը՝ 06.06.2005 թվականը մշտական հաշվառված է եղել և բնակվել Երզնկյան 46 տանը: Խնամքի տակ անչափահաս և անաշխատունակ երեխաներ չի ունեցել (հատոր առաջին գ.թ 170):
- 6) Գևորգ Բերբերյանը և Մարինե Բերբերյանը հարազատ քույր և եղբայր են, իսկ Անի Գևորգի Մութաֆյանը նրանց մորաքույրն է:

4. Վճարել դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը

Քննելով վճարել բողոքը նշված հիմքի սահմաններում Վճարել դատարանը գտնում է, որ այն հիմնավոր է հետևյալ պատճառաբանությամբ.

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1226-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ ժառանգությունն ընդունվում է ժառանգությունն ընդունելու կամ ժառանգական իրավունքի վկայագիր ստանալու մասին ժառանգի դիմումը ժառանգության բացման վայրի նոտարին հանձնելով:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1226-րդ հոդվածի 3-րդ կետի համաձայն՝ եթե այլ բան ապացուցված չէ, ապա ժառանգությունը ժառանգի կողմից ընդունված է համարվում, երբ նա սկսում է փաստացի տիրապետել կամ կառավարել ժառանգված գույքը՝ ներառյալ, երբ ժառանգը՝

- 1) միջոցներ է ձեռնարկել գույքը պահպանելու և այն երրորդ անձանց ոտնձգություններից կամ հավակնություններից պաշտպանելու համար.
- 2) իր հաշվին կատարել է գույքը պահպանելու ծախսեր.
- 3) իր հաշվից վճարել է ժառանգատուի պարտքերը կամ երրորդ անձանցից ստացել է ժառանգատուին հասանելիք գումարները:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1227-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝

ժառանգությունը կարող է ընդունվել ժառանգության բացման օրվանից վեց ամսվա ընթացքում:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1228-րդ հոդվածի 2-րդ կետի համաձայն՝ ժառանգությունն ընդունելու ժամկետը բաց թողած ժառանգի դիմումի հիման վրա դատարանը կարող է նրան ձանաչել ժառանգությունն ընդունած՝ հարգելի համարելով ժամկետը բաց թողնելու պատճառները, եթե պարզվի, որ ժամկետը բաց թողնելու պատճառ է դարձել այն հանգամանքը, որ ժառանգը չգիտեր և պարտավոր չէր իմանալ ժառանգության բացման մասին ու պայմանով, որ ժառանգությունն ընդունելու ժամկետը բաց թողած ժառանգն այդ ժամկետը բաց թողնելու պատճառները վերացվելուց հետո՝ վեց ամսվա ընթացքում, դիմել է դատարան:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1185-րդ հոդվածի 2-րդ կետի համաձայն՝ ժառանգությունը կատարվում է ըստ օրենքի, եթե չկա կտակ, կամ դրանում սահմանված չէ ամբողջ ժառանգության ձակատագիրը, ինչպես նաև սույն օրենսգրքով սահմանված այլ դեպքերում:

Հիմք ընդունելով վերոգրյալը և ելնելով ժառանգական իրավահարաբերությունների բնույթից՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ ժառանգության ընդունումը ժառանգի կողմից իրականացվող կանխամտածված, ակտիվ գործողությունների համակցություն է, որն ուղղված է ժառանգական գույքն իր սեփականությունը դարձնելուն: Այսինքն, թե ըստ օրենքի և թե ըստ կտակի ժառանգության ընդունման դեպքում ժառանգը պետք է գիտակցի և նրա գործողությունները պետք է նպատակաուղղված լինեն համապատասխան ժառանգության ընդունմանը:

Հետևաբար, ըստ կտակի ժառանգության ընդունման դեպքում ժառանգի կողմից պետք է ձեռնարկվեն ակտիվ քայլեր, որը պետք է ուղղված լինի հենց ըստ կտակի ժառանգությունն ընդունելուն: Ժառանգի գործողություններից պետք է բխի, որ դրանք միտված են ոչ թե ըստ օրենքի ժառանգությունն ընդունելուն (եթե ըստ կտակի ժառանգը նաև ըստ օրենքի ժառանգ է), այլ հենց ըստ կտակի ժառանգությունն ընդունելուն, որն էլ կարող է իրականացվել միայն ժառանգության բացման վայրի նոտարին դիմում հանձնելու եղանակով:

Եթե օրենքով սահմանված կարգով և ժամկետներում ժառանգը միջոցներ չի ձեռնարկում ըստ կտակի ժառանգությունն ընդունելու համար, ապա ժառանգությունը կատարվում է ըստ օրենքի:

Սույն գործի փաստերի համաձայն՝ Անի Մութաֆյանը Երևանի Երզնկյան փողոցի թիվ 46 տունն իր գույքով կտակել է Մարինե Բերբերյանին: Անի Մութաֆյանը մահացել է 05.06.2005 թվականին: Մարինե Բերբերյանը, ժառանգության բացման օրվանից վեցամսյա ժամկետում փաստացի տիրապետելով ժառանգական գույքը, այնուամենայնիվ չի դիմել նոտարական գրասենյակ ըստ կտակի ժառանգությունն ընդունելու նպատակով:

Դատարանը, հայցի բավարարման, իսկ հակընդդեմ հայցի մերժման հիմքում դնելով այն հանգամանքը, որ Մարինե Բերբերյանը ժառանգության բացման օրվանից վեցամսյա ժամկետում չի դիմել նոտարական գրասենյակ ըստ կտակի ժառանգության իրավունքի վկայագիր ստանալու համար, գտել է, որ կտակով թողնված ժառանգությունը չի ընդունվել: Բացի այդ, Դատարանն արձանագրել է նաև, որ Մարինե Բերբերյանը ևս փաստացի տիրապետել և շարունակում է կատավարել ժառանգական գույքը, ինչը չի ժխտել նաև Գևորգ Բերբերյանը:

Վերաքննիչ դատարանը Դատարանի վճիռը բեկանելիս գտել է, որ Մարինե Բերբերյանը մորաքրոջ մահից հետո փաստացի տիրապետել և կառավարել է նրա ժառանգական գույքը, հետևաբար նա ըստ կտակի ժառանգությունն ընդունած ժառանգ է: Վերաքննիչ դատարանը Մարինե Բերբերյանի հակընդդեմ հայցի՝ ըստ կտակի ժառանգությունն ընդունելու պահանջի մասը բավարարելը պատճառաբանել է կտակի առկայությամբ: Միաժամանակ, անհիմն և առարկայազուրկ է համարել հակընդդեմ հայցի այն մասը, որը վերաբերում է ըստ կտակի ժառանգությունն ընդունելու ժամկետի բացթողումը հարգելի համարելուն՝ մերժելով հակընդդեմ հայցի այդ մասը, քանի որ Մարինե Բերբերյանն Անի Մութաֆյանի ժառանգությունը փաստացի ընդունած ժառանգ է:

Հիմք ընդունելով վերոգրյալը և սույն գործի փաստերը համադրելով՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ ժառանգության բացման վայրի նոտարին դիմում չհանձնելու պայմաններում Մարինե Բերբերյանի կողմից չի կատարվել գործողություն, որն ուղղված էր ըստ կտակի, այլ ոչ թե ըստ օրենքի ժառանգության ընդունմանը:

Ավելին, սույն գործով Մարինե Բերբերյանի կողմից ներկայացված հայցապահանջը «ժառանգությունն ընդունելու համար բաց թողնված ժամկետը հարգելի համարելու և ըստ կտակի ժառանգությունն ընդունած ժառանգ ձանաչելու պահանջների մասին» վկայում է, որ վերջինս գիտակցել է ըստ կտակի ժառանգությունն ընդունած չլինելու, դրա համար նախատեսված ժամկետը բաց թողած լինելու հանգամանքը:

Հիմք ընդունելով վերոգրյալը և հաշվի առնելով, որ Մարինե Բերբերյանն Անի Մութաֆյանի մահից հետո՝ 05.06.2005 թվականից, վեցամսյա ժամկետում չի դիմել նոտարական գրասենյակ ըստ կտակի ժառանգության իրավունքի վկայագիր ստանալու համար և չի ներկայացրել որևէ ապացույց, որով կհիմնավորվեր, որ վերջինս իր կամքից անկախ հանգամանքներով չի ներկայացրել ըստ կտակի ժառանգությունն ընդունելու կամ ժառանգական իրավունքի վկայագիր ստանալու մասին դիմումը ժառանգության բացման վայրի նոտարին, Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ սույն գործով ապացուցված չէ Մարինե Բերբերյանի կողմից ըստ կտակի ժառանգությունն ընդունելու փաստը, ինչի արդյունքում ծագել են ըստ օրենքի ժառանգման իրավահարաբերություններ:

Վերոգրյալի հիման վրա Վճռաբեկ դատարանը գտնում է, որ հիմնավոր են վճռաբեկ բողոքի պատճառաբանությունները Վերաքննիչ դատարանի կողմից նյութական իրավունքի նորմի խախտման մասին:

Վճռաբեկ բողոքի պատասխանում առկա փաստարկները հերքվում են վերոնշյալ պատճառաբանություններով:

Այսպիսով, վերը նշված հիմքի առկայությունը Վճռաբեկ դատարանը դիտում է բավարար՝ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 227-րդ և 228-րդ հոդվածների ուժով Վերաքննիչ դատարանի 03.06.2010 թվականի որոշումը բեկանելու համար:

Միաժամանակ, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ սույն գործով անհրաժեշտ է կիրառել ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 240-րդ հոդվածի 1-ին կետի 6-րդ ենթակետով սահմանված՝ առաջին ատյանի դատարանի դատական ակտին օրինական ուժ տալու՝ Վճռաբեկ դատարանի լիազորությունը հետևյալ հիմնավորմամբ:

ՀՀ Սահմանադրության 19-րդ հոդվածի և «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի ողջամիտ ժամկետում իր գործի քննության իրավունք: Սույն գործով վեճի լուծումն էական նշանակություն ունի գործին մասնակցող անձանց համար: Վճռաբեկ դատարանը գտնում է, որ գործը ողջամիտ ժամկետում քննելը հանդիսանում է ՀՀ Սահմանադրության և «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի նշված հոդվածներով ամրագրված՝ անձի արդար դատաքննության իրավունքի տարր: Հետևաբար, գործի անհարկի ձգձգումները վտանգ են պարունակում նշված իրավունքի խախտման տեսանկյունից: Տվյալ դեպքում Վճռաբեկ դատարանի կողմից ստորադաս դատարանի դատական ակտին օրինական ուժ տալը բխում է արդարադատության արդյունավետության շահերից:

Առաջին ատյանի դատարանի վճռին օրինական ուժ տալիս Վճռաբեկ դատարանը հիմք է ընդունում սույն որոշման պատճառաբանությունները, ինչպես նաև գործի նոր քննության անհրաժեշտության բացակայությունը:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 240-241²-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

ՈՐՈՇԵՑ

1. Վճռաբեկ բողոքը բավարարել: Բեկանել ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 03.06.2010 թվականի որոշումը և օրինական ուժ տալ Երևանի Արաբկիր և Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի 24.03.2010 թվականի վճռին:

2. Մարինե Բերբերյանից հոգուտ Գևորգ Բերբերյանի բռնագանձել 20.000 ՀՀ դրամ՝ որպես վճռաբեկ բողոքի համար վճարված պետական տուրքի գումար:

3. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

*ՆԱԽԱԳԱՀՈՂ՝ արտրագրություն
ԴԱՏԱՎՈՐՆԵՐ՝ արտրագրություններ*

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

ՀՀ վարչական դատարանի վճիռ
Վարչական գործ թիվ ՎԴ/5269/05/09
Նախագահող դատավոր՝ Ք. Մկոյան

Վարչական գործ թիվ ՎԴ/5269/05/09
2011թ.

ՈՐՈՇՈՒՄ ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Հայաստանի Հանրապետության Վճռաբեկ դատարանի քաղաքացիական
և վարչական պալատը (այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

նախագահությամբ

մասնակցությամբ դատավորներ

Ե. ԽՈՒՆԴԿԱՐՅԱՆԻ

Ե. ՍՈՂՈՄՈՆՅԱՆԻ

Վ. ԱԲԵԼՅԱՆԻ

Ս. ԱՆՏՈՆՅԱՆԻ

Վ. ԱՎԱՆԵՍՅԱՆԻ

Ա. ԲԱՐՍԵՂՅԱՆԻ

Մ. ԴՐՄԵՅԱՆԻ

Գ. ՀԱԿՈԲՅԱՆԻ

Է. ՀԱՅՐԻՅԱՆԻ

Տ. ՊԵՏՐՈՍՅԱՆԻ

2011 թվականի ապրիլի 01-ին

դռնբաց դատական նիստում, քննելով Շողեր Գրիգորյանի վճռաբեկ բողոքը ՀՀ վարչական դատարանի 11.05.2010 թվականի վճռի դեմ՝ ըստ Շողեր Գրիգորյանի հայցի ընդդեմ ՀՀ Կենտրոն նոտարական տարածքի նոտար Նունե Սարգսյանի (այսուհետ՝ Նոտար)՝ ժառանգության իրավունքի վկայագիր տալուն պարտավորեցնելու պահանջի մասին,

ՊԱՐԶԵՑ

1. Գործի դատավարական նախապատմությունը

Դիմելով դատարան՝ Շողեր Գրիգորյանը պահանջել է պարտավորեցնել Նոտարին ՀՀ Կոտայքի մարզի Կոտայք գյուղում գտնվող, Գնել Գրիգորյանին պատկանող հողամասի և տան նկատմամբ տալ ժառանգության իրավունքի վկայագիր:

ՀՀ վարչական դատարանի (այսուհետ՝ Դատարան) 11.05.2010 թվականի վճռով հայցը մերժվել է:

Սույն գործով վճռաբեկ բողոք է ներկայացրել Շողեր Գրիգորյանը:

Վճռաբեկ բողոքի պատասխան չի ներկայացվել:

2. Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը

Սույն վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքի սահմաններում՝ ներքոհիշյալ հիմնավորումներով.

Դատարանը չի կիրառել ՀՀ հողային օրենսգրքի 52-րդ հոդվածի 4-րդ մասը, որը պետք է կիրառեր, սիսայ է մեկնաբանել ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 135-րդ

հողվածը, 1186-րդ հողվածի 1-ին կետը:

Բողոք բերած անձը նշված պնդումը պարզապես անհիմն է հետևյալ փաստարկներով.

Դատարանն անտեսել է, որ գործում առկա արխիվային տեղեկանքում նշված տնտեսությունների գրքի գրառումն իրականացվել է օրենսդրությամբ սահմանված կարգով, և նշված փաստաթղթով հաստատվում է, որ Գնել Գրիգորյանը, հոր՝ Ստեփան Գրիգորյանի մահից հետո՝ 1987 թվականին, անվանափոխելով վերջինիս պատկանող բնակելի տունը և հողամասը, արդեն իսկ 1991 թվականի ՀՀ հողային օրենսգրքի 9-րդ հողվածի ուժով դրանց նկատմամբ ձեռք է բերել սեփականության իրավունք:

Ինչ վերաբերում է Դատարանի կողմից ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 135-րդ և 1186-րդ հողվածների կիրառմանը, ապա նշված հողվածները կիրառելիս Դատարանը դրանք պետք է մեկնաբաներ ՀՀ հողային օրենսգրքի 52-րդ հողվածի պահանջների հաշվառմամբ: Այսինքն՝ հաշվի առնելով, որ հողամասի և տան նկատմամբ Գնել Գրիգորյանի սեփականության իրավունքի առկայությունը, հետևաբար նաև դրանք վերջինիս պատկանելու հանգամանքները հաստատվում են գործում առկա արխիվային տեղեկանքով և գյուղապետի տված տեղեկանքներով, ապա ըստ էության պահանջված է նաև ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 135-րդ հողվածի պահանջը, ինչից հետևում է, որ առկա է նաև նույն օրենսգրքի 1186-րդ հողվածի 1-ին կետով սահմանված ժառանգատուին պատկանող գույքը:

Այսպիսով, Դատարանը, անհիմն կերպով մերժելով հայցը, Շողեր Գրիգորյանին ըստ էության զրկել է իր կողմից փաստացի տիրապետման հիմքով ընդունված ժառանգությունը տիրապետելու, օգտագործելու և տնօրինելու իրավունքից: Արդյունքում, ոչ միայն լուծում չի ստացել բնակելի տան և հողամասի նկատմամբ Շողեր Գրիգորյանի իրավունքներն օրենքով սահմանված կարգով ձևակերպելու հարցը, այլ նաև վերջինս զրկվել է հետագայում դրա լուծման ամեն մի հնարավորությունից:

Վերոգրյալի հիման վրա բողոք բերած անձը պահանջել է Դատարանի 11.05.2010 թվականի վճիռը բեկանել և փոփոխել՝ հայցը բավարարել:

3. Վճռաբեկ բողոքի քննության համար նշանակություն ունեցող փաստերը

Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

1) 04.09.2009 թվականին տրված թիվ 003991 մահվան վկայականի համաձայն՝ Գնել Գրիգորյանը մահացել է 04.10.2008 թվականին (**գ.թ. 16**):

2) ՀՀ Ազգային արխիվի Արքովյանի տարածքային ներկայացուցչության 30.10.2009 թվականի «ՀՀ Կոտայքի շրջանի Կոտայքի գյուղական խորհրդի գործադիր կոմիտեի 1991-1995 թվականների թիվ 1 տնտեսությունների գրքից» թիվ 01-1/1160 արխիվային տեղեկանքի համաձայն՝ ընտանիքի գլխավոր Գնել Գրիգորյանի տնտեսության անձնական սեփականություն հանդիսացող բնակելի տունը կառուցված է 1962 թվականին, որի մակերեսը կազմում է 100քմ, այդ թվում՝ բնակելի՝ 50քմ, իսկ նրա տնտեսության անձնական օգտագործման տակ գտնվող հողի մակերեսը կազմում է 0,07հա (700քմ), այդ թվում՝ շինությունների տակ (**գ.թ. 19**):

3) ՀՀ Կոտայքի մարզի Կոտայք համայնքի ղեկավարի 30.11.2009 թվականի թիվ 687 և թիվ 688 տեղեկանքների համաձայն՝ Գնել Գրիգորյանին ՀՀ Կոտայքի մարզի Կոտայք գյուղում սեփականության իրավունքով պատկանում է 700քմ մակերեսով

տնամերձ հողամասս և բնակելի տուն, որը տիրապետում, օգտագործում է և դրա մասով վճարումները կատարում է դուստրը՝ Շողեր Գրիգորյանը (**գ.թ. 17-18**):

4) 21.04.2009 թվականին տրված «Ըստ օրենքի ժառանգության իրավունքի» վկայագրի համաձայն՝ Գնել Գրիգորյանի՝ մահացած 04.10.2008 թվականին, գույքի նկատմամբ ժառանգներ են հավասար բաժիններով կինը՝ Գոհարիկ Խաչատրյանը, դուստրերը՝ Շողեր Գրիգորյանը և Մարիամ Գրիգորյանը: Ժառանգական գույքը, որի համար տրվել է նույն վկայագիրը, բաղկացած է Երևանի 16-րդ թաղամասի 45-րդ շենքի թիվ 66 հասցեում գտնվող անշարժ գույքի 1/2 բաժնից (**գ.թ. 21**):

5) Նոտարի 10.12.2009 թվականի՝ Շողեր Գրիգորյանին ուղղված գրության համաձայն՝ Գնել Գրիգորյանի՝ մահացած 04.10.2008 թվականին, մահից հետո ժառանգության իրավունքի վկայագիր չի կարող տրվել, քանի որ անշարժ գույքի պետական գրանցումը չի կատարվել և ներկայացված փաստաթղթերը բավարար չեն ժառանգություն ձևակերպելու համար (**գ.թ. 20**):

6) 22.03.2010 թվականի համաձայնության համաձայն՝ Գոհարիկ Խաչատրյանը և Մարիամ Գրիգորյանը համաձայն են, որ Գնել Գրիգորյանի մահից հետո մնացած՝ ՀՀ Կոտայքի մարզի Կոտայք գյուղում գտնվող անշարժ գույքի նկատմամբ ժառանգության իրավունքի վկայագիրը տրվի Շողեր Գրիգորյանի անվամբ (**գ.թ. 39**):

4. Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումները

Քննելով վճռաբեկ բողոքը նշված հիմքի սահմաններում՝ Վճռաբեկ դատարանը գրնում է, որ այն հիմնավոր է հետևյալ պարզաբանությամբ.

ՀՀ Սահմանադրության 8-րդ հոդվածի 1-ին պարբերության համաձայն՝ Հայաստանի Հանրապետությունում ձանաչվում և պաշտպանվում է սեփականության իրավունքը:

Նախկինում գործող ՀՀ հողային օրենսգրքի (ուժը կորցրել է 02.05.2001 թվականի թիվ ՀՕ-185 օրենքով) 18-րդ հոդվածի 1-ին պարբերության համաձայն՝ հողի սեփականության և մշտական օգտագործման իրավունքը հաստատվում է համապատասխան **պետական ակտով, որը տրվում է պատգամավորների համապատասխան տեղական խորհրդի գործադիր կոմիտեի կողմից:**

«Հայաստանի Հանրապետությունում սեփականության մասին» ՀՀ օրենքի (ուժը կորցրել է 01.01.1999 թվականին՝ 17.06.1998 թվականի թիվ ՀՕ-229 օրենքով) 13-րդ հոդվածի 1-ին պարբերության համաձայն՝ գյուղացիական տնտեսությունը որպես սեփականություն կարող է ունենալ **բնակելի տներ**, տնտեսական շինություններ, **հողամասեր** և տունկեր, մթերատու և բանող անասուններ, թռչուններ, գյուղատնտեսական տեխնիկա և գործիքներ, փոխադրամիջոցներ և այլ գույք՝ գյուղատնտեսական արտադրությունն ինքնուրույն վարելու, արտադրանքը վերամշակելու և իրացնելու համար:

Նույն հոդվածի 4-րդ պարբերության համաձայն՝ գյուղացիական տնտեսությունը ձևակերպվում է գյուղացիական ընտանիքի գլխի անունով: Գյուղացիական տնտեսության իրավունքները ձանաչվում են վերջինիս անվամբ ձևակերպվող և **պատգամավորների գյուղական, ավանային, քաղաքային խորհուրդների գործադիր կոմիտեների կողմից տրվող պետական ակտի հիման վրա:**

Նույն հոդվածի 5-րդ պարբերության համաձայն՝ նույն հոդվածի կանոնները կիրառվում են նաև քաղաքացիների օժանդակ տնտեսության և գյուղացիական ծխի սեփականության նկատմամբ:

«Գյուղացիական և գյուղացիական կոլեկտիվ տնտեսությունների մասին» ՀՀ օրենքի (ուժը կորցրել է 28.11.2006 թվականի թիվ ՀՕ-199-Ն օրենքով) 2-րդ հոդվածի 4-րդ պարբերության համաձայն՝ գյուղացիական տնտեսությունը ձևակերպվում է ընտանիքի գլխավորի անունով: Գյուղացիական տնտեսության իրավունքները ձանաչվում են ընտանիքի գլխավորի անվամբ ձևակերպվող և **պատգամավորների համապատասխան տեղական (գյուղական, ավանային, քաղաքային, քաղաքի շրջանային) խորհրդի գործադիր կոմիտեի կողմից տրվող պետական ակտի հիման վրա:**

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 135-րդ հոդվածի 1-ին կետի 1-ին պարբերության համաձայն՝ անշարժ գույքի նկատմամբ սեփականության իրավունքը և այլ գույքային իրավունքները, այդ իրավունքների սահմանափակումները, դրանց ծագումը, փոխանցումն ու դադարումը ենթակա են պետական գրանցման:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 186-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ ժառանգության զանգվածի մեջ է մտնում ժառանգության բացման օրը ժառանգատուին պատկանող գույքը:

ՀՀ հողային օրենսգրքի 52-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ **մինչև 1999 թվականի մայիսի 6-ը հողամասերի նկատմամբ իրավունքների վերաբերյալ սահմանված կարգով տրված, ձեռք բերված փաստաթղթերն ունեն իրավաբանական ուժ, վերագրանցման ենթակա չեն և հիմք են հանդիսանում անշարժ գույքի նկատմամբ գործարքներ կատարելու համար:**

«Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին» ՀՀ օրենքի 56-րդ հոդվածի համաձայն՝ նույն օրենքով սահմանված՝ **պետական գրանցման համար նախատեսված ժամկետը չի տարածվում մինչև նույն օրենքի ընդունումը Հայաստանի Հանրապետության տարածքում առկա գույքի և դրա նկատմամբ իրավունքներ և սահմանափակումներ հաստատող փաստաթղթերի վրա:** Նշված փաստաթղթերը, անկախ կնքման կամ հաստատման ժամկետից, հիմք են համարվում անշարժ գույքի պետական ռեգիստրի տարածքային ստորաբաժանումներում գույքի նկատմամբ իրավունքների գրանցման համար՝ սեփականատերերի և օգտագործողների կողմից սահմանված կարգով ներկայացնելու դեպքում:

«Նոտարիատի մասին» ՀՀ օրենքի 63-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ըստ օրենքի կամ ըստ կտակի ժառանգության իրավունքի վկայագրեր տալու դեպքում նոտարն ստուգում է ժառանգատուի մահվան փաստը, ժառանգության բացման ժամանակը և վայրը, ազգակցական հարաբերությունները կամ կտակի առկայությունը, **ժառանգության զանգվածի կազմը:**

Նշված նորմերի վերլուծությունից հետևում է, որ ժառանգության իրավունքի վկայագիր տալու ժամանակ նոտարը պետք է որոշի նաև ժառանգության զանգվածի կազմը, որի մեջ է մտնում ժառանգության բացման օրը ժառանգատուին պատկանող գույքը: Միաժամանակ, ժառանգության զանգվածի որոշման գործընթացում նոտարը պետք է հաշվի առնի Հայաստանի Հանրապետության՝ նախկինում և ներկայումս գործող օրենսդրական կանոնակարգումների առանձնահատկությունները: Մասնավորապես՝ նախկինում գործող կանոնակարգումների համաձայն՝ հողի սեփականության և մշտական օգտագործման իրավունքը հաստատվում էր **պետական ակտով, որը տրվում էր պատգամավորների տեղական խորհրդի գործադիր կոմիտեի կողմից,** իսկ գյուղացիական տնտեսությունը որպես սեփականություն կարող էր ունենալ նաև **բնակելի տներ և հողամասեր,** որոնց

նկատմամբ իրավունքներն իրենց հերթին ձևակերպվում էին գյուղացիական ընտանիքի գլխի անունով և նույնպես **ձանաչվում էին նրա անվամբ ձևակերպվող պատգամավորների գյուղական, ավանային, քաղաքային խորհուրդների գործադիր կոմիտեների կողմից տրվող պետական ակտի հիման վրա:** Հաշվի առնելով նշված կանոնակարգումները, ինչպես նաև սեփականության իրավունքի պաշտպանության անհրաժեշտությունը՝ ներկայումս գործող կանոնակարգումների համաձայն՝ մինչև 06.05.1999 թվականը հողամասերի նկատմամբ իրավունքների վերաբերյալ սահմանված կարգով տրված կամ ձեռք բերված փաստաթղթերը պահպանել են իրենց իրավաբանական ուժը, դրանք վերագրանցման ենթակա չեն և հիմք են հանդիսանում անշարժ գույքի նկատմամբ գործարքներ կատարելու համար:

Այսինքն՝ ժառանգության իրավունքի վկայագիր տալու ժամանակ ժառանգության գանգվածի որոշման գործընթացում նոտարը պետք է հաշվի առնի, որ նախկինում տրված **պետական ակտը դա գույքի նկատմամբ իրավունքը հաստատող և դրա պատկանելիության հարցը որոշող պետության կողմից տրված և ձանաչված պաշտոնական փաստաթուղթ է:** Հետևաբար, նոտարը ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 135-րդ հոդվածը պետք է մեկնաբանի՝ հաշվի առնելով ՀՀ հողային օրենսգրքի 52-րդ հոդվածի 4-րդ մասով և «Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին» ՀՀ օրենքի 56-րդ հոդվածով սահմանված առանձնահատկությունները, ինչպես նաև իրավահարաբերության ծագման պահին գործող օրենսդրական կանոնակարգումները:

Վճռաբեկ դատարանը գտնում է, որ վերոնշյալ կարգավորումը գործում է նաև պետական գրանցման ենթակա գույքի այլ տեսակների նկատմամբ: Նման եզրահանգման համար Վճռաբեկ դատարանը հիմք է ընդունում «Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին» ՀՀ օրենքի 56-րդ հոդվածի կարգավորումը, որի համաձայն՝ մինչև այդ օրենքի ընդունումը Հայաստանի Հանրապետության տարածքում առկա գույքի և դրա նկատմամբ իրավունքներ և սահմանափակումներ հաստատող փաստաթղթերի վրա պետական գրանցման համար սահմանված ժամկետը չի տարածվում, և այդ փաստաթղթերը, անկախ դրանց կնքման կամ հաստատման ժամկետից, սեփականատերերի և օգտագործողների կողմից սահմանված կարգով ներկայացվելու դեպքում հիմք են գույքի նկատմամբ իրավունքների գրանցման համար: Ի դեպ, նշվածը գույքի սեփականատիրոջ մահվան դեպքում հնարավոր է իրականացնել միայն նրա ժառանգության ընդունման պայմաններում:

Սույն գործով Դատարանը հայցը մերժելու հիմքում դրել է այն հիմնավորումը, որ ՀՀ հողային օրենսգրքի 52-րդ հոդվածի 4-րդ մասը վերաբերում է հողամասերի նկատմամբ իրավունքների վերաբերյալ սահմանված կարգով տրված, ձեռք բերված փաստաթղթերին, ինչպիսին Շողեր Գրիգորյանի ներկայացրած՝ ՀՀ Ազգային արխիվի Արովյանի տարածքային ներկայացուցչության 30.10.2009 թվականի թիվ 01-1/1160 արխիվային տեղեկանքում նշված ՀՀ Կոտայքի շրջանի Կոտայքի գյուղական խորհրդի գործադիր կոմիտեի 1991-1995 թվականների թիվ 1 տնտեսությունների գրքի գրառումը չի կարող համարվել:

Մինչդեռ, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Դատարանի նշված պատճառաբանությունն անհիմն է, քանի որ ՀՀ Կոտայքի շրջանի Կոտայքի գյուղական խորհրդի գործադիր կոմիտեի 1991-1995 թվականների թիվ 1 տնտեսությունների գրքի գրառմամբ հիմնավորվում է ՀՀ Կոտայքի շրջանի Կոտայք գյուղում գտնվող

1962 թվականին կառուցված 100քմ մակերեսով բնակելի տան և 0,07հա (700քմ) մակերեսով հողամասի նկատմամբ Գնել Գրիգորյանի իրավունքները հաստատող և ձանաչող պետական ակտի առկայությունը, իսկ նախկինում գործող կանոնակարգման համաձայն՝ պետական ակտը դա գույքի նկատմամբ իրավունքը հաստատող և դրա պատկանելիության հարցը որոշող պետության կողմից տրված և ձանաչված պաշտոնական փաստաթուղթ է:

Քննվող վարչական գործի փաստերով հաստատվում է, որ ՀՀ Ազգային արխիվի Աբովյանի տարածքային ներկայացուցչության 30.10.2009 թվականի «ՀՀ Կոտայքի շրջանի Կոտայքի գյուղական խորհրդի գործադիր կոմիտեի 1991-1995 թվականների թիվ 1 տնտեսությունների գրքից» թիվ 01-1/1160 արխիվային տեղեկանքի համաձայն՝ ընտանիքի գլխավոր Գնել Գրիգորյանի տնտեսության անձնական սեփականություն հանդիսացող բնակելի տունը կառուցված է 1962 թվականին, որի մակերեսը կազմում է 100քմ, այդ թվում՝ բնակելի՝ 50քմ, իսկ նրա տնտեսության անձնական օգտագործման տակ գտնվող հողի մակերեսը կազմում է 0,07հա (700քմ), այդ թվում՝ շինությունների տակ:

Հետևաբար, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ ՀՀ Կոտայքի մարզի Կոտայք գյուղում գտնվող, Գնել Գրիգորյանին պատկանող գույքի նկատմամբ ժառանգության իրավունքի վկայագիր տալու գործընթացում ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 135-րդ հոդվածը մեկնաբանվել է՝ հաշվի չառնելով ՀՀ հողային օրենսգրքի 52-րդ հոդվածի 4-րդ մասով և «Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին» ՀՀ օրենքի 56-րդ հոդվածով սահմանված առանձնահատկությունները, ինչպես նաև նախկինում գործող օրենսդրական կանոնակարգումները:

Այսպիսով, սույն վճռաբեկ բողոքի հիմքի առկայությունը Վճռաբեկ դատարանը համարում է բավարար՝ «Հայաստանի Հանրապետության վարչական դատավարության օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության 2010 թվականի հոկտեմբերի 28-ի թիվ ՀՕ-135-Ն օրենքի 21-րդ հոդվածի 4-րդ մասի, ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 118-րդ և 118.3-րդ հոդվածների, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 227-րդ հոդվածի ուժով Դատարանի վճիռը բեկանելու համար:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 118-րդ և 118.3-րդ հոդվածներով, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 240-241²-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

ՈՐՈՇԵՑ

1. Վճռաբեկ բողոքը բավարարել մասնակիորեն: Բեկանել ՀՀ վարչական դատարանի 11.05.2010 թվականի վճիռը և գործն ուղարկել նույն դատարան՝ նոր քննության:

2. Դատական ծախսերի բաշխման հարցին անդրադառնալ գործի նոր քննության ընթացքում:

3. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

*ՆԱԽԱԳԱՀՈՂ՝ ստորագրություն
ԴԱՏԱՎՈՐՆԵՐ՝ ստորագրություններ*

**ԸՆՏԱՆԵԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ
ԾՆՈՂՆԵՐԻ ԵՎ ԶԱՎԱԿՆԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐՆ ՈՒ
ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ**

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական Քաղաքացիական գործ թիվ ԾԴ/1501/02/10
դատարանի որոշում 2011թ.
Քաղաքացիական գործ թիվ ԾԴ/1501/02/10
Նախագահող դատավոր Ա. Պետրոսյան
Դատավորներ՝ Դ. Խաչատրյան
Կ. Զիլինգարյան

**ՈՐՈՇՈՒՄ
ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քաղաքացիական և վարչական պալատը (այսուհետ՝ վճռաբեկ դատարան)

նախագահությամբ Ե. ԽՈՒՆԴԿԱՐՅԱՆԻ
մասնակցությամբ դատավորներ Է. ՀԱՅՐԻՅԱՆԻ
Վ. ԱԲԵԼՅԱՆԻ
Ս. ԱՆՏՈՆՅԱՆԻ
Վ. ԱՎԱՆԵՍՅԱՆԻ
Ա. ԲԱՐՍԵՂՅԱՆԻ
Մ. ԴՐՄԵՅԱՆԻ
Գ. ՀԱԿՈԲՅԱՆԻ
Տ. ՊԵՏՐՈՍՅԱՆԻ
Ե. ՍՈՂՈՄՈՆՅԱՆԻ

2011 թվականի մայիսի 27-ին
դռնբաց դատական նիստում, քննելով Մերուժան, Զավեն և Ելենա Մանուչարյանների վճռաբեկ բողոքը ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 10.02.2011 թվականի որոշման դեմ՝ ըստ Մերուժան, Զավեն և Ելենա Մանուչարյանների հայցի ընդդեմ Քրիստինե Մանուչարյանի, երրորդ անձ ՀՀ Ծիրակի մարզի Ծիրակ համայնքի խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովի (այսուհետ՝ Հանձնաժողով)՝ երեխայի հետ շփվելու, դաստիարակությանն ու կրթությանը մասնակցելու կարգ սահմանելու պահանջների մասին,

ՊԱՐԶԵՑ

1. Գործի դատավարական նախապատմությունը

Դիմելով դատարան՝ Մերուծան, Զավեն և Ելենա Մանուչարյանները պահանջել են սահմանել Մերի Մերուծանի Մանուչարյանի հետ շփման, դաստիարակությանն ու կրթությանը մասնակցելու կարգ՝ Հանձնաժողովի կողմից սահմանված կարգին համապատասխան:

ՀՀ Շիրակի մարզի ընդհանուր իրավասության դատարանի (այսուհետ՝ Դատարան) 04.11.2010 թվականի վճռով հայցը բավարարվել է մասնակիորեն՝ վճռվել է Մերուծան, Զավեն և Ելենա Մանուչարյաններին «թույլատրել մասնակախասակ Մերի Մերուծանի Մանուչարյանի հետ տեսակցելու և դաստիարակությանը մասնակցելու համար շաբաթական երկու անգամ, մեկական ժամով մոր բնակության վայրում, առանձին սենյակում»:

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի (այսուհետ՝ Վերաքննիչ դատարան) 10.02.2011 թվականի որոշմամբ Մերուծան, Զավեն և Ելենա Մանուչարյանների վերաքննիչ բողոքը բավարարվել է մասնակիորեն՝ մասնակիորեն բեկանվել է Դատարանի 04.11.2010 թվականի վճիռը և փոփոխվել՝ հայցը բավարարվել է մասնակիորեն, որոշվել է «Մերուծան Մանուչարյանին թույլատրել մասնակցել երեխայի դաստիարակությանն ու կրթությանը, տեսակցել Մերի Մանուչարյանի հետ շաբաթական երկու անգամ, մեկական ժամով երեխայի բնակության վայրում, իսկ դաստիարակությանն ու կրթությանը մասնակցություն ունենալու կարգ սահմանելու պահանջը մերժել: Զավեն և Ելենա Մանուչարյաններին թույլատրել շփվելու թոռան՝ Մերի Մանուչարյանի հետ, իսկ շփման կարգ սահմանելու մասին պահանջը մերժել»:

Սույն գործով վճռաբեկ բողոք են ներկայացրել Մերուծան, Զավեն և Ելենա Մանուչարյանները:

Վճռաբեկ բողոքի պատասխան է ներկայացրել Քրիստինե Մանուչարյանը:

2. Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը

Սույն վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

Վերաքննիչ դատարանը սխալ է մեկնաբանել ՀՀ ընդհանրական օրենսգրքի 49-րդ, 54-րդ և 56-րդ հոդվածները, խախտել է «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 78-րդ հոդվածի 3-րդ մասի 3-րդ կետը, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 53-րդ և 130-րդ հոդվածները, կիրառել է ՀՀ կառավարության 13.03.2000 թվականի թիվ III որոշումը, որը չպետք է կիրառեր:

Բողոք բերած անձինք նշված պնդումը պարզապես են հետևյալ փաստարկներով.

Վերաքննիչ դատարանը բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ չի հետազոտել գործում առկա ապացույցները, անտեսել է այն հանգամանքը, որ Մերուծան, Զավեն և Ելենա Մանուչարյանների շփումը Մերի Մանուչարյանի հետ սահմանվածից ավելի երկար ժամանակով էլնում է երեխայի՝ ուշադրության արժանի շահերից: Մինչդեռ, Վերաքննիչ դատարանը Զավեն և Ելենա Մանուչարյաններին թույլատրել է շփվել Մերի Մանուչարյանի հետ, սակայն չի սահմանել շփման կարգ: Ավելին, Մերուծան Մանուչարյանի համար սահմանել է՝ տեսակցել Մերի Մանուչարյանին շաբաթական

երկու անգամ մեկական ժամով, ինչը չի բխում երեխայի շահերից:

Վերոգրյալի հիման վրա բողոք բերած անձինք պահանջել են մասնակիորեն բեկանել Վերաքննիչ դատարանի 10.02.2011 թվականի որոշումը և այն փոփոխել/ձայցը բավարարել:

2.1. Վճռաբեկ բողոքի պատասխանի հիմնավորումները

Վերաքննիչ դատարանի կողմից որոշումը կայացվել է գործում առկա բոլոր ապացույցների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտության հիման վրա, հետևաբար բերված վճռաբեկ բողոքն անհիմն է և ենթակա է վերադարձման:

3. Վճռաբեկ բողոքի քննության համար նշանակություն ունեցող փաստերը

Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1. 28.06.2010 թվականի թիվ ԱԲ-086459 ծննդյան վկայականի համաձայն՝ 03.02.2009 թվականին ծնված Մերի Մանուչարյանի ծնողներն են Մերուծան և Քրիստինե Մանուչարյանները (գ.թ. 18):

2. ՀՀ Շիրակի մարզի ընդհանուր իրավասության դատարանի՝ 27.07.2010 թվականի օրինական ուժի մեջ մտած վճռով լուծվել է Մերուծան և Քրիստինե Մանուչարյանների ամուսնությունը (գ.թ. 12-14):

3. Հանձնաժողովի 10.08.2010 թվականի թիվ 3 որոշման համաձայն՝ սահմանվել է Մերուծան, Զավեն և Ելենա Մանուչարյանների և Մերի Մանուչարյանի հետ շփման կարգը, այն է՝ «Մերի Մանուչարյանի հայրը՝ Մերուծան Մանուչարյանը, հնարավորություն է ստանում երեխայի հետ տեսակցել, շփվել, մասնակցել նրա դաստիարակությանը և կրթությանը շաբաթական 2 օր, օրը 3 ժամ: Երեխայի շփումը նաև տատի և պապի հետ ապահովելու համար թույլատրել Մերուծան Մանուչարյանին տեսակցելու ընթացքում երեխային տեղափոխել իր բնակության վայր» (գ.թ. 6):

4. Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումները

Քննելով վճռաբեկ բողոքը վերը նշված հիմքի սահմաններում՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ այն հիմնավոր է մասնակիորեն հետևյալ պարձառաբանությամբ.

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 53-րդ հոդվածի համաձայն՝ դատարանը յուրաքանչյուր ապացույց գնահատում է գործում եղած բոլոր ապացույցների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտության վրա հիմնված ներքին համոզմամբ:

ՀՀ ընտանեկան օրենսգրքի 56-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ երեխայի պապերը, տատերը, եղբայրները, քույրերը և այլ ազգականներն իրավունք ունեն շփվելու երեխայի հետ:

Վերոգրյալ նորմից բխում է, որ երեխայի պապերի, տատերի, եղբայրների, քույրերի և այլ ազգականների իրավունքն է շփվելու երեխայի հետ: Ընդ որում, երեխայի հետ շփումը որևէ ձևով չպետք է խոչընդոտվի ոչ երեխայի ծնողների, ոչ էլ երեխայի պապերի, տատերի, եղբայրների, քույրերի և այլ ազգականների կողմից:

Վերաքննիչ դատարանը որպես իր դիրքորոշման հիմնավորում նշել է, որ «Հաշվի առնելով մի շարք հանգամանքներ, մասնավորապես երեխայի տարիքը,

կապվածությունը մոր հետ, այն, որ երեխային որոշակի ժամանակով մորից բաժանելը կարող է բացասականորեն անդրադառնալ երեխայի վրա, Վերաքննիչ դատարանը գտնում է, որ երեխայի հետ շփվելու համար պարտադիր չէ երեխայի տեղափոխումն իրենց բնակարան»:

Մինչդեռ, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ շփման կարգ հնարավոր էր սահմանել նաև առանց երեխային այլ տեղ տեղափոխելու կարգ սահմանելու: Ըստ էության, նման որոշում է կայացրել Վերաքննիչ դատարանը հոր՝ Մերուժան Մանուչարյանի մասով՝ նրան թույլատրելով մասնակցել երեխայի դաստիարակությանն ու կրթությանը, տեսակցել Մերի Մանուչարյանի հետ **շաբաթական երկու անգամ, մեկական ժամով երեխայի բնակության վայրում:**

Տվյալ դեպքում Վերաքննիչ դատարանը թույլատրել է Չավեն և Ելենա Մանուչարյաններին շփվել թոռան՝ Մերի Մանուչարյանի հետ, սակայն չի սահմանել շփման կարգ, այն է՝ տեսակցության ժամեր և հաճախականություն: Վերաքննիչ դատարանը Մերի Մանուչարյանի պապի ու տատի՝ երեխայի հետ տեսակցության և շփման կարգ սահմանելու պահանջը մերժելիս, ըստ էության, չի հիմնավորել իր դիրքորոշումը:

Վերոգրյալի հիման վրա՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ Վերաքննիչ դատարանը դատական ակտ կայացնելիս նշելով, որ հայցը բավարարում է մասնակիորեն և փաստորեն թույլատրելով Չավեն և Ելենա Մանուչարյաններին միայն շփվել իրենց թոռան՝ Մերի Մանուչարյանի հետ, ըստ էության, ձանաչել է ՀՀ ընտանեկան օրենսգրքի 56-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված իրավունքը՝ առանց սահմանելու շփման կարգ, որը կարող է անհնարին դարձնել նման շփումը:

Վճռաբեկ դատարանն իր նախկին որոշումներում արդեն իսկ անդրադարձել է որոշման իրավական հիմնավորմանը:

Վճռաբեկ դատարանը հարկ է համարում նշել, որ յուրաքանչյուր դեպքում դատարանը պարտավոր է տալ որոշման թե՛ փաստական և թե՛ իրավական հիմնավորումները:

Որոշման իրավական հիմնավորումը կայանում է հաստատված փաստերի և իրավահարաբերությունների նկատմամբ նյութական իրավունքի համապատասխան նորմի կամ նորմերի ընտրության և կիրառման մեջ, այն նորմի (նորմերի), որի հիման վրա դատարանը եզրակացություն է անում վիճելի իրավահարաբերության առկայության կամ բացակայության մասին:

Որոշմամբ ոչ միայն պետք է ցույց տալ նորմատիվ ակտի այս կամ այն հոդվածը, որում ամրագրված է կիրառման ենթակա նորմը, այլ պետք է պատճառաբանվի, թե հատկապես ինչու պետք է կիրառվի հենց այդ նորմը:

Որոշման իրավական հիմնավորումը բնութագրում է ինչպես դատարանի, այնպես էլ նրա դատական ակտի իրավակիրառ գործառույթը, ընդգծում դատական գործունեության և դատական ակտի օրինականությունը (*դրեն՝ Ալվարդ Խաչատրյանի օրինական ներկայացուցիչ Թեհմինե Խաչատրյանն ընդդեմ Արմեն, Անահիտ Խաչատրյանների, Քանաքեռավանի գյուղապետարանի, ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի Եղվարդի փրաածքային արորաբաժանման Քանաքեռավանի շրջխորհրդի գործկոմի 31.01.1995 թվականի թիվ 1 որոշումը, սեփականության իրավունքի պետական գրանցումը, գրանցման վկայականը մասնակիորեն անվավեր ծանաչելու և համասեփականարեր ծանաչելու պահանջների մասին, և Արմեն Խաչատրյանի հսկրնդդեմ հայցն ընդդեմ Թեհմինե*

Խաչատրյանի՝ բնակության իրավունքը դադարեցնելու և բնակելի տարածությունից վրարելու պահանջների մասին ՀՀ վճռաբեկ դատարանի 26.12.2008 թվականի որոշում, քաղաքացիական գործ թիվ ԿԴ3/0026/02/08): Վերոգրյալի հիման վրա Վճռաբեկ դատարանը փաստում է, որ բողոքարկվող որոշումը նշված մասով անհիմն է:

Ինչ վերաբերում է վճռաբեկ բողոքի այն փաստարկին, որ Վերաքննիչ դատարանը Մերի Մանուչարյանին տեսակցելու համար Մերուժան Մանուչարյանի նկատմամբ սահմանել է շաբաթական երկու անգամ մեկական ժամ, ինչը չի բխում երեխայի շահերից, ապա Վճռաբեկ դատարանը գտնում է, որ այն անհիմն է, քանի որ Վերաքննիչ դատարանը որոշում կայացնելիս առանձնակի կարևորություն է վերապահել երեխայի շահերին, որոնք կախված դրանց բնույթից գերակայել են ծնողների շահերի նկատմամբ, հետևաբար գործը քննելիս Վերաքննիչ դատարանը հիմք է ընդունել Մերի Մանուչարյանի առավելագույն շահերը:

Այսպիսով, սույն վճռաբեկ բողոքի հիմքի առկայությունը Վճռաբեկ դատարանը դիտում է բավարար՝ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 227-րդ և 228-րդ հոդվածների ուժով Վերաքննիչ դատարանի որոշման՝ Զավեն և Ելենա Մանուչարյաններին Մերի Մանուչարյանի հետ շփվելու կարգ սահմանելը մերժելու մասը բեկանելու համար:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 240-241-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

ՈՐՈՇԵՑ

1. Վճռաբեկ բողոքը բավարարել մասնակիորեն: Բեկանել ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 10.02.2011 թվականի որոշման՝ Զավեն և Ելենա Մանուչարյաններին Մերի Մանուչարյանի հետ շփվելու կարգ սահմանելը մերժելու մասը և գործն այդ մասով ուղարկել ՀՀ Ծիրակի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարան՝ նոր քննության: ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 10.02.2011 թվականի որոշման մնացած մասը թողնել օրինական ուժի մեջ:

2. Վճռաբեկ բողոքի համար սահմանված և հետաձգված պետական տուրքի հարցին անդրադառնալ գործի նոր քննության ժամանակ:

3. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

ՆԱԽԱԳԱՀՈՂ՝ *ստորագրություն*
ԴԱՏԱՎՈՐՆԵՐ՝ *ստորագրություններ*

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական Քաղաքացիական գործ թիվ ԵԱԲԴ/1688/02/08
դատարանի որոշում 2011թ.
Քաղաքացիական գործ թիվ ԵԱԲԴ/1688/02/08
Նախագահող դատավոր՝ Ա. Պետրոսյան
Դատավորներ՝ Ա. Խատատյան
Կ. Զիլինգարյան

ՈՐՈՇՈՒՄ

ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քաղաքացիական և վարչական
պալատը (այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

*նախագահությամբ
մասնակցությամբ դատավորներ*

Ե. ԽՈՒՆԴԿԱՐՅԱՆԻ
Վ. ԱԲԵԼՅԱՆԻ
Վ. ԱՎԱՆԵՍՅԱՆԻ
Ա. ԲԱՐՍԵՂՅԱՆԻ
Մ. ԴՐՄԵՅԱՆԻ
Գ. ՀԱԿՈՐՅԱՆԻ
Տ. ՊԵՏՐՈՍՅԱՆԻ
Ե. ՍՈՂՈՄՈՆՅԱՆԻ

2011 թվականի հուլիսի 01-ին

դռնբաց դատական նիստում, քննելով Ռուզաննա Թորոսյանի վճռաբեկ բողոքը
ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 02.12.2010 թվականի որոշման դեմ՝ ըստ
հայցի Ռուզաննա Թորոսյանի ընդդեմ Նվեր Մկրտչյանի՝ ամուսնությունը լուծելու և
երեխայի խնամքն ու դաստիարակությունն իրեն հանձնելու պահանջների մասին և
ըստ Նվեր Մկրտչյանի հակընդդեմ հայցի՝ երեխայի խնամքն ու բնակության վայրը
նաև իր մոտ որոշելու պահանջի մասին,

ՊԱՐԶԵՑ

1. Գործի դատավարական նախապատմությունը

Դիմելով դատարան՝ Ռուզաննա Թորոսյանը պահանջել է լուծել Նվեր
Մկրտչյանի հետ ամուսնությունը և երեխայի խնամքն ու դաստիարակությունը հանձնել
իրեն:

Երևանի Արաբկիր և Քանաքեռ-Զեյթուն համայնքների ընդհանուր
իրավասության դատարանի 05.09.2008 թվականի վճռով Ռուզաննա Թորոսյանի հայցը
բավարարվել է:

Երևանի Արաբկիր և Քանաքեռ-Զեյթուն համայնքների ընդհանուր
իրավասության դատարանի 22.09.2008 թվականի լրացուցիչ վճռով սահմանվել է,
որ «Ռուզաննա Թորոսյանի և Նվեր Մկրտչյանի ամուսնությունը լուծելուց հետո

անչափահաս երեխան՝ Անդրանիկ Նվերի Մկրտչյանը՝ ծնված 06.02.2004 թվականին, պետք է ապրի մոր՝ Ռուզաննա Թորոսյանի հետ»:

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 22.10.2009 թվականի որոշմամբ Նվեր Մկրտչյանի ներկայացուցչի բերած վերաքննիչ բողոքը բավարարվել է՝ Երևանի Արաբկիր և Քանաքեռ-Զեյթուն համայնքների ընդհանուր իրավասության դատարանի 05.09.2008 թվականի վճիռը բեկանվել և գործն ուղարկվել է նոր քննության:

Գործի նոր քննության ժամանակ հակընդդեմ հայցով դիմելով դատարան՝ Նվեր Մկրտչյանը պահանջել է երեխայի խնամքն ու բնակության վայրը որոշել նաև իր մոտ:

Երևանի Արաբկիր և Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի (այսուհետ՝ Դատարան) 27.05.2010 թվականի վճռով Ռուզաննա Թորոսյանի հայցն ընդդեմ Նվեր Մկրտչյանի՝ ամուսնությունը լուծելու մասով բավարարվել է, իսկ «երեխայի խնամքն ու դաստիարակությունն իրեն հանձնելու պահանջների մասին և ընդհանրապես իր հետ բնակվելու վերաբերյալ» բավարարվել է մասնակիորեն: Միաժամանակ Դատարանը վճռել է «Նվեր Մկրտչյանի հակընդդեմ հայցն ընդդեմ Ռուզաննա Թորոսյանի՝ երեխայի խնամքն ու բնակության վայրը նաև իրեն հանձնելու պահանջների մասին, ժամկետի մասով բավարարել մասնակի: Սահմանել երեխայի խնամքի և դաստիարակության կարգ, այն է՝ Ռուզաննա Թորոսյանի և Նվեր Մկրտչյանի ամուսնությունը լուծելուց հետո նրանց անչափահաս երեխան՝ Անդրանիկ Նվերի Մկրտչյանը՝ ծնված 06.02.2004թ.-ի փետրվարի 6-ին, յուրաքանչյուր տարվա օգոստոսի 15-ից մինչև հաջորդ տարվա հունիսի 15-ը պետք է ապրի մոր՝ Ռուզաննա Թորոսյանի հետ, իսկ յուրաքանչյուր տարվա հունիսի 15-ից մինչև օգոստոսի 15-ը պետք է ապրի հոր՝ Նվեր Մկրտչյանի հետ»:

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի (այսուհետ՝ Վերաքննիչ դատարան) 02.12.2010 թվականի որոշմամբ Ռուզաննա Թորոսյանի վերաքննիչ բողոքը մերժվել է՝ Դատարանի 27.05.2010 թվականի վճիռը թողնվել է օրինական ուժի մեջ:

Սույն գործով վճռաբեկ բողոք է ներկայացրել Ռուզաննա Թորոսյանը:

Վճռաբեկ բողոքի պատասխան չի ներկայացվել:

2. Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը

Սույն վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

Վերաքննիչ դատարանը կիրառել է ՀՀ ընդհանրական օրենսգրքի 59-րդ, 61-րդ, 63-րդ, 64-րդ հոդվածները, որոնք չպետք է կիրառեր, սխալ է մեկնաբանել «Երեխայի իրավունքների մասին» միջազգային կոնվենցիայի 3-րդ հոդվածը, ՀՀ ընդհանրական օրենսգրքի 17-րդ հոդվածի 2-րդ մասի «ա» կետը, 42-րդ հոդվածի 1-ին մասը, 49-րդ հոդվածի 1-ին մասը, 53-րդ հոդվածը, խախտել է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 53-րդ հոդվածը, 109-րդ հոդվածի 2-րդ կետը և 228-րդ հոդվածը:

Բողոք բերած անձը նշված պնդումը պարզապես անհիմն է հետևյալ փաստարկներով.

Վերաքննիչ դատարանը բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտման հիման վրա չի գնահատել գործում առկա բոլոր ապացույցները, մասնավորապես. 06.02.2004 թվականին Ռուսաստանի Դաշնությունում ծնվել է Նվեր Մկրտչյանի և Ռուզաննա Թորոսյանի որդին՝ Անդրանիկ Մկրտչյանը: 13.06.2006 թվականին

Նվեր Մրկտյանը նոտարական կարգով վավերացված համաձայնությամբ թույլատրել է Անդրանիկ Մկրտչյանին մոր՝ Ռուզաննա Թորոսյանի հետ մեկնել Հայաստանի Հանրապետություն, իսկ 16.10.2006 թվականին ծնողների կողմից տրված համաձայնության հիման վրա 23.02.2007 թվականին Անդրանիկ Մկրտչյանին տրվել է Հայաստանի Հանրապետության անձնագիր: 2008 թվականի հունիս ամսին Նվեր Մկրտչյանը, գալով Երևան, երեխայի հետ զբոսնելու պատրվակով, առանց համապատասխան իրավական հիմքերի առկայության, ինչպես նաև մոր՝ Ռուզաննա Թորոսյանի համաձայնության բացակայության պայմաններում, երեխային տեղափոխել է Ռուսաստանի Դաշնություն: Հետագայում երեխային գտել են Ռուսաստանի Դաշնության Ստավրոպոլի երկրամասի Պրեդգոռնի շրջանի Սուվորովկա ստանցիայի Կառլ Մարքսի փողոցի թիվ 61՝ Նվեր Մկրտչյանի բարեկամին պատկանող տանը:

Վերաքննիչ դատարանի կողմից չի գնահատվել նաև գործում առկա Երևանի Արաբկիր թաղապետարանի խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովի 29.08.2008 թվականի ու Երևանի քաղաքապետարանի «Սուրբ Աստվածամայր բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի 20.04.2010 թվականի հոգեբանի եզրակացությունները:

Բացի այդ, գործում առկա է Երևանի Արաբկիր և Քանաքեռ-Զեյթուն համայնքների ընդհանուր իրավասության դատարանի 22.09.2008 թվականի լրացուցիչ վճիռը, որով սահմանվել է, որ «Ռուզաննա Թորոսյանի և Նվեր Մկրտչյանի ամուսնությունը լուծելուց հետո անչափահաս երեխան՝ Անդրանիկ Նվերի Մկրտչյանը՝ ծնված 06.02.2004 թվականին, պետք է ապրի մոր՝ Ռուզաննա Թորոսյանի հետ», ուստի այս հիմքով գործի վարույթը պետք է կարճվեր:

Վերոգրյալի հիման վրա բողոք բերած անձը պահանջել է բեկանել և փոփոխել Վերաքննիչ դատարանի 02.12.2010 թվականի որոշումը, հայցը բավարարել, իսկ հակընդդեմ հայցի մատուց գործի վարույթը կարճել:

3. Վճռաբեկ բողոքի քննության համար նշանակություն ունեցող փաստերը

Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1) 06.02.2004 թվականին Ռուսաստանի Դաշնությունում ծնվել է Նվեր Մկրտչյանի և Ռուզաննա Թորոսյանի որդին՝ Անդրանիկ Մկրտչյանը (հատոր 1-ին, գ.թ.10):

2) Անդրանիկ Մկրտչյանի հայրը Ռուսաստանի Դաշնության քաղաքացի է (ընակվում է Ռուսաստանի Դաշնության Տյումենի մարզի Խանտի-Մանսիյսկ ինքնավար տարածքի Սուրգութ քաղաքում), իսկ մայրը՝ Ռուզաննա Թորոսյանը, Հայաստանի Հանրապետության քաղաքացի է (ընակվում է Երևանի Քեռու փողոցի թիվ 50 տանը) (հատոր 1-ին, գ.թ.54):

3) 13.06.2006 թվականին Նվեր Մկրտչյանը նոտարական կարգով վավերացված համաձայնությամբ թույլատրել է որդուն՝ Անդրանիկ Մկրտչյանին, մոր՝ Ռուզաննա Թորոսյանի հետ մեկնել Հայաստանի Հանրապետություն (հատոր 4-րդ գ.թ.43):

4) Ծնողների համաձայնության հիման վրա 23.02.2007 թվականին Անդրանիկ Մկրտչյանին տրվել է Հայաստանի Հանրապետության քաղաքացու անձնագիր (հատոր 1-ին, գ.թ.13):

5) ՀՀ ազգային անվտանգության ծառայության քննչական վարչության քննիչի

24.11.2008 թվականի «Անձին որպես մեղադրյալ ներգրավելու մասին» որոշմամբ Նվեր Մկրտչյանը ներգրավվել է որպես մեղադրյալ այն բանի համար, որ չունենալով սահմանված փաստաթղթեր և պատշաճ թույլտվություն՝ անչափահաս երեխա Անդրանիկ Մկրտչյանին ՀՀ «Գոգավան» հսկիչ-անցագրային կետով տեղափոխել է Վրաստանի Հանրապետություն (հատոր 4-րդ, գ.թ.69):

6) ՀՀ ազգային անվտանգության ծառայության քննչական վարչության քննիչի 03.11.2009 թվականի «Քրեական գործի վարույթը կարճելու և քրեական հետապնդումը դադարեցնելու մասին» որոշմամբ «Համաներում հայտարարելու մասին» որոշման հիմքով Նվեր Մկրտչյանի վերաբերյալ քրեական գործի վարույթը կարճվել է (հատոր 4-րդ, գ.թ.81):

7) Երևանի Արաբկիր թաղապետարանի խնամակալության և հոգաբարձության հարցերի հանձնաժողովի 29.08.2008 թվականի եզրակացության համաձայն՝ «Ռուզաննա Թորոսյանն ունի բոլոր բավարար կենսապայմանները և մարդկային արժանիքները՝ իր անչափահաս որդու՝ Անդրանիկ Նվերի Մկրտչյանի (ծնվ. 06.02.2004թ.) խնամքն ու դաստիարակությունը լիարժեք իրականացնելու համար» (հատոր 1-ին, գ.թ.47):

8) Երևանի Արաբկիր վարչական շրջանի խնամակալության և հոգաբարձության հարցերի հանձնաժողովի 10.05.2010 թվականի որոշման համաձայն՝ հանձնաժողովը նպատակահարմար է գտել, որ «Անդրանիկ Նվերի Մկրտչյանը (ծնվ. 06.02.2004թ.) **քնակվի** մոր՝ Ռուզաննա Թորոսյանի հետ (Երևանի Քեռու փողոցի թիվ 50 տուն հասցեում), իսկ նրա խնամքը ծնողները պարտավոր են իրականացնել հավասար» (հատոր 4-րդ, գ.թ.78):

4. Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումները

Քննելով վճռաբեկ բողոքը նշված հիմքի սահմաններում՝ Վճռաբեկ դատարանը գրնում է, որ այն հիմնավոր է մասնակիորեն հետևյալ պատճառաբանությամբ.

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 53-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ դատարանը յուրաքանչյուր ապացույց գնահատում է գործում եղած բոլոր ապացույցների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտության վրա հիմնված ներքին համոզմամբ:

Վճռաբեկ դատարանը փաստում է, որ այս կամ այն հանգամանքի առկայության կամ բացակայության մասին դատարանի եզրակացությունը պետք է լինի գործով ձեռք բերված ապացույցների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտման տրամաբանական հետևությունը՝ հաշվի առնելով դրանց համակցությունը և փոխադարձ կապը, կիրառման ենթակա իրավունքը և ներքին համոզմունքը:

Սույն գործով Դատարանը հայցը և հակընդդեմ հայցը մասնակիորեն բավարարելիս պատճառաբանել է, որ «երեխան հիմնականում պետք է **քնակվի** մոր մոտ, իսկ ամառային արձակուրդների որոշ ժամանակահատվածում՝ հոր հետ», ուստի «ստեղծված պայմաններում հնարավոր չէ որոշակի ժամկետով կամ ընդհանրապես երեխայի խնամքն ու դաստիարակությունը հանձնել ծնողներից մեկին», և վճռի եզրափակիչ մասում սահմանել է երեխայի խնամքի և դաստիարակության կարգ:

Վերաքննիչ դատարանը Ռուզաննա Թորոսյանի վերաքննիչ բողոքի մերժման հիմքում դրել է այն հանգամանքը, որ «հակընդդեմ հայցը մերժելու դեպքում Նվեր Մկրտչյանը ստիպված կլիներ երեխային տեսակցելու համար յուրաքանչյուր անգամ պետությունից պետություն մեկնել», ինչը «կարող է անհարկի սահմանափակել Նվեր

Մկրտչյանի երեխայի խնամքով ու դաստիարակությամբ զբաղվելու իրավունքը»:

Վճռաբեկ դատարանը գտնում է, որ սույն գործով անհրաժեշտ է պատասխանել հետևյալ իրավական հարցադրմանը՝ *արդյոք ամուսինների միջև համաձայնության բացակայության դեպքում, ամուսնալուծությունից հետո ծնողների՝ միմյանցից առանձին ապրելու դեպքում (ընկալ դեպքում փարբեր պետություններում) Դատարանն իրավունք ունեւ երեխայի ապրելու վայրը որոշել երկու փարբեր երկրներում գտնվող ծնողների մոտ՝ առաջնորդվելով միայն ծնողներից մեկի՝ երեխայի խնամքին և դաստիարակությանը մասնակցելու իրավունքի ապահովման անհրաժեշտությամբ:*

«Երեխայի իրավունքների մասին» 1989 թվականի ՄԱԿ-ի կոնվենցիայի (այսուհետ՝ Կոնվենցիա) 3-րդ հոդվածի վերլուծությունից հետևում է, որ Դատարանները երեխայի իրավունքները շոշափող ցանկացած գործ քննելիս առաջնայությունը պետք է տան **երեխայի շահերի առավել ապահովմանը**: Կոնվենցիայով պետությունը պարտավորվում է օրենսդրական, վարչական միջոցներ ձեռնարկել երեխայի շահերի ապահովման համար, սահմանել երեխայի խնամարկյալների, ծնողների իրավունքների և պարտականությունների ծավալը, հետևել պետական և պատկան մարմինների գործունեությանը տվյալ իրավահարաբերություններում միտված **երեխայի բարեկեցության անհրաժեշտ պաշտպանությանը և հոգատարությանը**:

ՀՀ ընտանեկան օրենսգրքի 53-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին պարբերության համաձայն՝ ծնողական իրավունքները չեն կարող իրականացվել երեխաների **շահերին հակառակ**: Երեխաների շահերի ապահովումը պետք է լինի ծնողների հիմնական հոգածության առարկան:

ՀՀ ընտանեկան օրենսգրքի 17-րդ հոդվածի 2-րդ մասի «ա» կետի համաձայն՝ ամուսինների միջև համաձայնության բացակայության դեպքում դատարանը պարտավոր է՝ ա) որոշել, թե ամուսնալուծությունից հետո ծնողներից **ու՞մ հետ** պետք է ապրեն երեխաները:

Վերը նշված հոդվածներից հետևում է, որ երեխաների **ծնողներից մեկի հետ ապրելու** հարցը դատարանը որոշում է՝ առաջնորդվելով երեխայի լավագույն շահերով: Մասնավորապես, տարբեր երկրներում բնակվող ծնողների երեխայի ապրելու վայրը որոշելիս դատարանը պետք է հաշվի առնի այնպիսի հանգամանքներ, ինչպիսիք են՝ ծնողների կողմից նախապես որոշված երեխայի բնակության վայրը, երեխայի տարիքը, կրթության վայրը, համապատասխան երկրի և այդտեղ բնակվող ծնողի հետ երեխայի կապվածությունը հիմնավորող այլ հանգամանքներ, ինչպես նաև երեխայի ապրելու վայրի պարբերաբար փոփոխության հնարավոր բացասական հետևանքները երեխայի հոգեկան, հոգևոր և բարոյական զարգացման և դաստիարակության վրա:

Վերոգրյալի հիման վրա Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Դատարանը չէր կարող երեխայի ապրելու վայրը որոշել երկու տարբեր երկրներում գտնվող ծնողների մոտ՝ առաջնորդվելով միայն ծնողներից մեկի՝ երեխայի խնամքին և դաստիարակությանը մասնակցելու իրավունքի ապահովման անհրաժեշտությամբ, առանց հաշվի առնելու երեխայի լավագույն շահը:

Մասնավորապես, դատարանները, ղեկավարվելով միայն Նվեր Մկրտչյանի շահերի պաշտպանության անհրաժեշտությամբ, անտեսել են սույն գործի հետևյալ փաստական հանգամանքները, այն է՝ դեռևս 13.06.2006 թվականին Նվեր Միկտչյանը նոտարական կարգով վավերացված համաձայնությամբ թույլատրել է որդուն՝ Անդրանիկ Մկրտչյանին, մոր՝ Ռուզաննա Թորոսյանի հետ մեկնել Հայաստանի

Հանրապետություն: Հետագայում ծնողների համաձայնությամբ 23.02.2007 թվականին Անդրանիկ Մկրտչյանին տրվել է Հայաստանի Հանրապետության քաղաքացու անձնագիր: Այսպիսով մինչև սույն գործի քննությունը ծնողներն արդեն իսկ իրենց գործողություններով համաձայնվել են երեխայի բնակության վայրը որոշել մոր մոտ՝ Երևան քաղաքում (Երևանի Քեռու փողոցի թիվ 50 տուն): 2008 թվականի հունիս ամսին Նվեր Մկրտչյանը, գալով Երևան երեխայի հետ զբոսնելու պատրվակով, առանց երեխայի մոր՝ Ռուզաննա Թորոսյանի համաձայնության երեխային տեղափոխել է Հայաստանի Հանրապետությունից դուրս և չի վերադարձրել, ինչի հիման վրա ՀՀ ազգային անվտանգության ծառայության քննչական վարչության քննիչի 24.11.2008 թվականի որոշմամբ Նվեր Մկրտչյանի նկատմամբ քրեական գործ է հարուցվել, ինչն էլ հետագայում «Համաներում հայտարարելու մասին» որոշմամբ կարճվել է: Երևանի Արաբկիր վարչական շրջանի խնամակալության և հոգաբարձության հարցերի հանձնաժողովի 29.08.2008 թվականի եզրակացության համաձայն՝ «Ռուզաննա Թորոսյանն ունի բոլոր բավարար կենսապայմանները և մարդկային արժանիքները՝ իր անչափահաս որդու՝ Անդրանիկ Նվերի Մկրտչյանի (ծնվ. 06.02.2004թ.) խնամքն ու դաստիարակությունը լիարժեք իրականացնելու համար», իսկ 10.05.2010 թվականի եզրակացության համաձայն՝ հանձնաժողովը նպատակահարմար է գտել, որ «Անդրանիկ Նվերի Մկրտչյանը (ծնվ. 06.02.2004թ.) **բնակվի** մոր՝ Ռուզաննա Թորոսյանի հետ (Երևանի Քեռու փողոցի թիվ 50 տուն հասցեում), իսկ նրա խնամքը ծնողները պարտավոր են իրականացնել հավասար» :

Այսպիսով, սույն գործի փաստերի համադրության արդյունքում Վճռաբեկ դատարանը գտնում է, որ ելնելով Անդրանիկ Մկրտչյանի լավագույն շահերից՝ նա պետք է ապրի մոր՝ Ռուզաննա Թորոսյանի հետ:

Միաժամանակ, Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ ՀՀ ընտանեկան օրենսգրքի 51-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ծնողներն իրավունք ունեն և պարտավոր են դաստիարակելու իրենց երեխաներին: Ծնողները պատասխանատվություն են կրում իրենց երեխաների դաստիարակության և զարգացման համար: Նրանք պարտավոր են հոգ տանել իրենց երեխաների առողջության, ֆիզիկական, հոգեկան, հոգևոր և բարոյական զարգացման մասին: Ծնողները բոլոր այլ անձանց հանդեպ ունեն իրենց երեխաներին դաստիարակելու նախապատվության իրավունք:

Սույն օրենսգրքի 54-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ երեխայից առանձին ապրող ծնողն իրավունք ունի երեխայի հետ շփվելու, նրա դաստիարակությանը մասնակցելու, երեխայի կրթություն ստանալու հարցերը լուծելու: Ծնողը, որի հետ ապրում է երեխան, չպետք է խոչընդոտի մյուս ծնողի հետ երեխայի շփմանը, եթե նման շփումը վնաս չի պատճառում երեխայի ֆիզիկական ու հոգեկան առողջությանը, նրա բարոյական զարգացմանը:

Շվեյցարիա հոդվածների վերլուծությունից հետևում է, որ անկախ այն հանգամանքից, թե երեխան ծնողներից ում հետ է ապրելու և հետագայում նրա բնակության վայրը որտեղ կորոշվի, երկու ծնողներն էլ ունեն հավասար հնարավորություն մասնակցելու երեխայի դաստիարակությանն ու զարգացմանը: Տվյալ դեպքում որևէ հանգամանք չի կարող արգելել և ոչ ոք չպետք է խոչընդոտի Նվեր Մկրտչյանին շփվել Անդրանիկ Մկրտչյանի հետ, մասնակցել նրա խնամքին ու դաստիարակությանը, քանի որ սույն վեճի կարգավորման առարկան երեխայի ապրելու հարցի որոշումն է:

Ինչ վերաբերում է գործի վարույթը կարճելու պահանջի վերաբերյալ բողոքի հիմքին, ապա այն անհիմն է հետևյալ պատճառաբանությամբ.

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 109-րդ հոդվածի 2-րդ կետի համաձայն՝ Դատարանը կարճում է գործի վարույթը, եթե նույն անձանց միջև, նույն առարկայի մասին միևնույն հիմքերով վեճի վերաբերյալ առկա է դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած վճիռ:

Սույն գործով որպես նախադատելի դատական ակտ Ռուզաննա Թորոսյանը նշել է Երևանի Արաբկիր և Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի 22.09.2008 թվականի լրացուցիչ վճիռը:

Վճռաբեկ դատարանը գտնում է, որ լրացուցիչ վճիռը չի կարող համարվել օրինական ուժի մեջ մտած վճիռ, քանի որ Վերաքննիչ դատարանի 25.10.2009 թվականի որոշմամբ գործն ըստ էության լուծող դատական ակտը՝ Երևանի Արաբկիր և Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի 05.09.2008 թվականի վճիռը, բեկանվել է, և քաղաքացիական գործն ուղարկվել է նոր քննության: Այսինքն՝ հիմնական դատական ակտը բեկանված լինելու պայմաններում դրա լրացմանն ուղղված լրացուցիչ վճիռը չի կարող համարվել օրինական ուժի մեջ մտած ինքնուրույն դատական ակտ:

Այսպիսով, վճռաբեկ բողոքի հիմքի առկայությունը Վճռաբեկ դատարանը դիտում է բավարար՝ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 227-րդ հոդվածի համաձայն Վերաքննիչ դատարանի որոշումը բեկանելու համար:

Միաժամանակ, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ տվյալ դեպքում անհրաժեշտ է կիրառել ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 240-րդ հոդվածի առաջին կետի 5-րդ ենթակետով սահմանված՝ ստորադաս դատարանի դատական ակտը փոփոխելու ՀՀ վճռաբեկ դատարանի լիազորությունը հետևյալ հիմնավորմամբ.

ՀՀ Սահմանադրության 19-րդ հոդվածի և «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի ողջամիտ ժամկետում իր գործի քննության իրավունք: Վճռաբեկ դատարանը գտնում է, որ գործը ողջամիտ ժամկետում քննելը հանդիսանում է ՀՀ Սահմանադրության և «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի վերը նշված հոդվածով ամրագրված անձի արդար դատաքննության իրավունքի տարր, հետևաբար, գործի անհարկի ձգձգումները վտանգ են պարունակում նշված իրավունքի խախտման տեսանկյունից: Տվյալ դեպքում, Վճռաբեկ դատարանի կողմից ստորադաս դատարանի դատական ակտը փոփոխելը բխում է արդարադատության արդյունավետության շահերից:

Դատական ակտը փոփոխելիս Վճռաբեկ դատարանը հիմք է ընդունում սույն որոշման պատճառաբանությունները, ինչպես նաև գործի նոր քննության անհրաժեշտության բացակայությունը:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 240-241²-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

ՈՐՈՇԵՑ

1. Վճռաբեկ բողոքը բավարարել մասնակիորեն: Բեկանել ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 02.12.2010 թվականի որոշման՝ Ռուզաննա Թորոսյանի հայցը մասնակիորեն մերժելու և Նվեր Մկրտչյանի հակընդդեմ հայցը մասնակիորեն բավարարելու մասերն անփոփոխ թողնելու մասերը և դրանք փոփոխել՝ որոշել, որ 06.02.2004 թվականին ծավաձ Անդրանիկ Նվերի Մկրտչյանը պետք է ապրի մոր՝ Ռուզաննա Թորոսյանի հետ, իսկ Նվեր Մկրտչյանի հակընդդեմ հայցը մերժել: Որոշման մնացած մասը թողնել օրինական ուժի մեջ:

2. Նվեր Մկրտչյանից հօգուտ Ռուզաննա Թորոսյանի բռնագանձել 20.000 ՀՀ դրամ՝ որպես վճռաբեկ բողոքի և 10.000 ՀՀ դրամ՝ որպես վերաքննիչ բողոքի համար վճարված պետական տուրքի գումարներ:

3. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

*ՆԱԽԱԳԱՀՈՂ՝ ստորագրություն
ԴԱՏԱՎՈՐՆԵՐ՝ ստորագրություններ*

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական
դատարանի որոշում

Քաղաքացիական գործ թիվ ԵԿԴ/1314/02/10
2011թ.

Քաղաքացիական գործ թիվ ԵԿԴ/1314/02/10
Նախագահող դատավոր՝ Տ. Նազարյան
Դատավորներ՝ Կ. Հակոբյան
Տ. Սահակյան

ՈՐՈՇՈՒՄ
ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քաղաքացիական և վարչական
պալատը (այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

*նախագահությամբ
մասնակցությամբ դատավորներ*

Ե. ԽՈՒՆԴԿԱՐՅԱՆԻ
Տ. ՊԵՏՐՈՍՅԱՆԻ
Վ. ԱԲԵԼՅԱՆԻ
Ս. ԱՆՏՈՆՅԱՆԻ
Վ. ԱՎԱՆԵՍՅԱՆԻ
Ա. ԲԱՐՍԵՂՅԱՆԻ
Մ. ԴՐՄԵՅԱՆԻ
Գ. ՀԱԿՈԲՅԱՆԻ
Է. ՀԱՅՐԻՅԱՆԻ
Ե. ՍՈՂՈՄՈՆՅԱՆԻ

2011 թվականի հոկտեմբերի 14-ին

դոնբաց դատական նիստում, քննելով Մանուկ Ղազանյանի վճռաբեկ բողոքը
ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 17.03.2011 թվականի որոշման դեմ՝
ըստ հայցի Մանուկ Ղազանյանի ընդդեմ Ալինա Չոբանյանի, երրորդ անձ Երևանի
Կենտրոն վարչական շրջանի խնամակալության և հոգաբարձության մարմնի՝
տեսակցության վայր և տեսակցության նոր կարգ սահմանելու պահանջի մասին,

ՊԱՐԶԵՑ

1. Գործի դատավարական նախապատմությունը

Դիմելով դատարան՝ Մանուկ Ղազանյանը պահանջել է երեխայի՝ Լուսինե
Ղազանյանի հետ տեսակցության կոնկրետ վայր սահմանել Երևանի Մոլդովական
25/4-րդ շենքի 13-րդ բնակարանը և նշված բնակարանի շրջակայքում գտնվող իր
ցանկությամբ հանգստի որևէ վայր, ինչպես նաև սահմանել տեսակցության նոր կարգ՝
առանց մոր ներկայության, շաբաթական 5 օր, օրական 4 ժամ ժամը 16:00-ից մինչև
20:00-ը:

Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր
իրավասության դատարանի (նախագահող դատավոր՝ Գ. Կարախանյան) (այսուհետ՝

Դատարան) 02.11.2010 թվականի վճռով հայցը մերժվել է:

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի (այսուհետ՝ Վերաքննիչ դատարան) 17.03.2011 թվականի որոշմամբ Մանուկ Ղազանյանի վերաքննիչ բողոքը մերժվել է, և Դատարանի 02.11.2010 թվականի վճիռը թողնվել է օրինական ուժի մեջ:

Սույն գործով վճռաբեկ բողոք է ներկայացրել Մանուկ Ղազանյանը:

Վճռաբեկ բողոքի պատասխան չի ներկայացվել:

2. Վճռաբեկ բողոքի հիմքերը, փաստարկները և պահանջը.

Սույն վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

Վերաքննիչ դատարանը խախտել է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 5-րդ, 6-րդ, 51-րդ, 52-րդ, 53-րդ, 219-րդ հոդվածները, սխալ է մեկնաբանել ՀՀ ընդհանրական օրենսգրքի 42-րդ, 49-րդ, 54-րդ հոդվածները:

Բողոք բերած անձը նշված պնդումը պարձառաբանում է հետևյալ փաստարկներով.

Վերաքննիչ դատարանը չի կատարել գործում առկա ապացույցների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտություն, մասնավորապես՝ հաշվի չի առել, որ Երևանի Ավան և Նոր Նորք համայնքների ընդհանուր իրավասության դատարանի 19.09.2008 թվականի վճռով երեխայի հետ տեսակցության կոնկրետ վայր չի նախատեսվել երեխայի մոր՝ Ալինա Չոբանյանի բնակության վայրը, և ընդհանրապես՝ տեսակցության կոնկրետ վայր չի սահմանվել: Նշված վճռով սահմանված չէ նաև, որ բողոք բերած անձի հանդիպումներն իր երեխայի հետ պետք է տեղի ունենան Ալինա Չոբանյանի մասնակցությամբ, մինչդեռ բողոք բերած անձն Ալինա Չոբանյանի պարտադրանքով իր երեխային տեսակցում է ոչ միայն նրա, այլև վերջինիս ընտանիքի անդամների ներկայությամբ: Բացի այդ, եթե նշված վճռի կայացման ժամանակ երեխան շուրջ 1,5 տարեկան էր, դեռ սնվում էր մայրական կաթով և մշտական մայրական խնամքի կարիք ուներ, ապա վիճարկվող որոշման կայացման պահին երեխան արդեն 4 տարեկան է և կարող է հոր հետ տեսակցել ավելի հաճախակի և երկար ժամանակով:

Ավելին, Վերաքննիչ դատարանն անտեսել է նաև Երևանի Կենտրոն վարչական շրջանի խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովի եզրակացությունը, որը տրվել է Ալինա Չոբանյանի, Մանուկ և Լուսինե Ղազանյանների կյանքի հետազոտության հիման վրա՝ ելնելով երեխայի լավագույն շահերից:

Վերոգրյալի հիման վրա բողոք բերած անձը պահանջել է բեկանել Վերաքննիչ դատարանի 17.03.2011 թվականի որոշումը և այն փոփոխել՝ հայցը բավարարել կամ գործն ուղարկել նոր քննության:

3. Վճռաբեկ բողոքի քննության համար նշանակություն ունեցող փաստերը.

Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1) Երևանի Ավան և Նոր Նորք համայնքների ընդհանուր իրավասության դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած 19.09.2008 թվականի վճռով 01.05.2007 թվականին ծնված Լուսինե Ղազանյանի բնակության վայրը որոշվել է մոր՝ Ալինա Չոբանյանի հետ՝ վերջինիս թողնելով երեխայի խնամքը: Միաժամանակ հաշվի

առնելով մանկահասակ երեխայի սննդի, հանգստի ռեժիմը՝ երեխայի հետ հոր՝ Մանուկ Ղազանյանի տեսակցության կարգ է սահմանվել յուրաքանչյուր շաբաթվա հինգշաբթի, ուրբաթ, շաբաթ օրերը՝ ժամը 17:00-ից մինչև 20:00-ը: Նշված վճռով երեխայի հետ տեսակցության կոնկրետ վայր և տեսակցությունն Ալինա Չոբանյանի մասնակցությամբ անցկացվելու վերաբերյալ որևէ կարգ սահմանված չէ: Ընդ որում, նշված վճռի կայացման պահին երեխան եղել է 1 տարի 4 ամսական, իսկ Վերաքննիչ դատարանի որոշման կայացման պահին՝ 3 տարեկան 10 ամսական (**հատոր 1-ին, գ.թ. 9-18**):

2) Երևանի Կենտրոն վարչական շրջանի խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովը, հիմք ընդունելով Ալինա Չոբանյանի, Մանուկ և Լուսինե Ղազանյանների կյանքի հետազոտության ակտը, Մանուկ Ղազանյանի ներկայացուցիչ Լիլիթ Զաքարյանի և Ալինա Չոբանյանի հայտարարություններն ու բացատրությունները, 12.08.2010 թվականին եզրակացություն է տվել այն մասին, որ Մանուկ Ղազանյանը կարող է դատեր՝ Լուսինե Ղազանյանի հետ տեսակցել և շփվել յուրաքանչյուր շաբաթվա երեքշաբթի, հինգշաբթի, ուրբաթ և շաբաթ օրերին, ժամը 16:00-ից մինչև 20:00-ն ընկած ժամանակահատվածում Մանուկ Ղազանյանի բնակության վայրում ք. Երևան Միլոդվական 25/4-րդ շենքի թիվ 13 բնակարանում (**հատոր 1-ին, գ.թ. 31-33**):

3) ՀՀ արդարադատության նախարարության դատական ակտերի հարկադիր կատարումն ապահովող ծառայության Երևան քաղաքի ալիմենտի բռնագանձման բաժնի՝ երեխայի հետ տեսակցություն կազմակերպելու մասին արձանագրությունների համաձայն՝ Լուսինե Ղազանյանի հետ Մանուկ Ղազանյանի տեսակցություններն անցկացվել են Ալինա Չոբանյանի ներկայությամբ (**հատոր 1-ին, գ.թ. 65-77**):

4. Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը.

Քննելով վճռաբեկ բողոքը նշված հիմքի սահմաններում՝ Վճռաբեկ դատարանը գրնում է, որ այն հիմնավոր է հետևյալ պարձառաբանությամբ.

ՀՀ ընտանեկան օրենսգրքի 42-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ երեխան ունի իր ծնողների, պապերի և տատերի, եղբայրների, քույրերի, ինչպես նաև այլ ազգականների հետ շփվելու իրավունք: Ծնողների ամուսնության դադարեցումը, այն անվավեր ճանաչվելը կամ նրանց առանձին ապրելը չեն ազդում երեխայի իրավունքների վրա: Ծնողների առանձին (ընդ որում՝ տարբեր պետություններում) ապրելու դեպքում երեխան նրանցից յուրաքանչյուրի հետ շփվելու իրավունք ունի:

ՀՀ ընտանեկան օրենսգրքի 49-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ծնողներն ունեն հավասար իրավունքներ և կրում են հավասար պարտականություններ իրենց երեխաների նկատմամբ (ծնողական իրավունքներ):

ՀՀ ընտանեկան օրենսգրքի 54-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ երեխայից առանձին ապրող ծնողն իրավունք ունի երեխայի հետ շփվելու, նրա դաստիարակությանը մասնակցելու, երեխայի կրթություն ստանալու հարցերը լուծելու: Ծնողը, որի հետ ապրում է երեխան, չպետք է խոչընդոտի մյուս ծնողի հետ երեխայի շփմանը, եթե նման շփումը վնաս չի պատճառում երեխայի ֆիզիկական ու հոգեկան առողջությանը, նրա բարոյական զարգացմանը:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 53-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ դատարանը յուրաքանչյուր ապացույց գնահատում է գործում եղած բոլոր ապացույցների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտության վրա հիմնված ներքին համոզմամբ:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 220-րդ հոդվածի 2-րդ կետի 5-րդ ենթակետի համաձայն՝ վերաքննիչ դատարանի որոշման մեջ պետք է նշվեն գործով պարզված և վերաքննիչ բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը, ինչպես նաև այն օրենքը, Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերը և այլ իրավական ակտերը, որոնցով ղեկավարվել է վերաքննիչ դատարանը որոշում կայացնելիս:

Վճռաբեկ դատարանն իր որոշումներում բազմիցս անդրադարձել է դատական ակտերի իրավական հիմնավորվածության հարցին:

Մասնավորապես, Վճռաբեկ դատարանը նշել է, որ յուրաքանչյուր դեպքում դատարանը պարտավոր է տալ որոշման իրավական հիմնավորումը:

Որոշման իրավական հիմնավորումը կայանում է հաստատված փաստերի և իրավահարաբերությունների նկատմամբ իրավունքի համապատասխան նորմի կամ նորմերի ընտրության և կիրառման մեջ, այն նորմի (նորմերի), որի հիման վրա դատարանը եզրակացություն է անում վիճելի իրավահարաբերության առկայության կամ բացակայության մասին:

Որոշման մեջ ոչ միայն պետք է ցույց տալ նորմատիվ ակտի այս կամ այն հոդվածը, որում ամրագրված է կիրառման ենթակա նորմը, այլև պետք է պատճառաբանվի, թե հատկապես ինչու պետք է կիրառվի հենց այդ նորմը:

Որոշման իրավական հիմնավորումը բնութագրում է ինչպես դատարանի, այնպես էլ նրա որոշման իրավակիրառ գործառույթը, ընդգծում դատական գործունեության և դատական որոշման օրինականությունը:

Միաժամանակ Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ դատարանը ոչ միայն պետք է նշի այն ապացույցները, որոնց վրա հիմնվել է վիճելի փաստերը հաստատելիս և արդյունքում որոշում կայացնելիս, այլև պետք է պատճառաբանի, թե ինչու է կողմի ներկայացրած այս կամ այն ապացույցը մերժվում: Միայն նման հիմնավորումը կարող է վկայել գործի բազմակողմանի հետազոտության մասին (*տե՛ս ըստ հայցի Ռազմիկ Մարությանի ընդդեմ Սյրեփան և Ասահիյր Մարությանների, ՀՀ Կենտրոն նտրարական գրասենյակի՝ ժառանգական գույքի ընդունման փաստի ձանաչման և ըստ օրենքի ժառանգության իրավունքի վկայագիրը մասնակի անվավեր ձանաչելու պահանջների մասին, Սյրեփան և Ասահիյր Մարությանների հակընդդեմ հայցի՝ սեփականության իրավունքով պարկանող բնակելի տան և հողամասի բաժանման պահանջի մասին քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 27.03.2008 թվականի թիվ 3-54 (ՎԴ) որոշումը*):

Սույն գործով Վերաքննիչ դատարանը, օրինական ուժի մեջ թողնելով Դատարանի դատական ակտը, պատճառաբանել է, որ բողոքաբերը չի նշել, թե ինչպիսի հանգամանքների փոփոխություն է տեղի ունեցել 19.09.2008 թվականի վճռի կայացումից հետո, ինչն այսօր հիմք կարող է հանդիսանալ արդեն իսկ դատական կարգով սահմանված տեսակցության կարգը փոփոխելու համար, և ինչպես է դա բխում երեխայի լավագույն շահերից:

Միաժամանակ Վերաքննիչ դատարանը նշել է, որ Դատարանը համապատասխան գնահատական է տվել Երևանի Կենտրոն վարչական շրջանի խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովի եզրակացությանը և արձանագրել է, որ հանձնաժողովը հաշվի չի առել, որ բողոքաբերը աշխատում և առավելապես բնակվում է ԱՄՆ-ում, չի ուսումնասիրել, թե վերջինս ինչ հաճախականությամբ է լինում Հայաստանում և մեկ տարվա ընթացքում քանի անգամ է հանդիպում երեխայի հետ:

Նման պայմաններում Դատարանը եկել է այն եզրահանգման, որ նպատակահարմար է փոփոխության չենթարկել երեխայի հետ տեսակցության վայրը՝ հաշվի առնելով նաև այն հանգամանքը, որ բողոքաբերը որևէ ապացույց չի ներկայացրել այն մասին, որ Ալինա Չոբանյանի տանը երեխային տեսակցելը բացասաբար է անդրադառնում երեխայի վրա:

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ սույն գործով Վերաքննիչ դատարանը հաշվի չի առել, որ Երևանի Ավան և Նոր Նորք համայնքների ընդհանուր իրավասության դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած 19.09.2008 թվականի վճռով երեխայի հետ տեսակցության կոնկրետ վայր և տեսակցությունն Ալինա Չոբանյանի մասնակցությամբ անցկացվելու վերաբերյալ որևէ կարգ սահմանված չէ, մինչդեռ Լուսինե Ղազանյանի հետ Մանուկ Ղազանյանի տեսակցություններն անցկացվել են Ալինա Չոբանյանի ներկայությամբ, իսկ սույն գործով բողոք բերած անձը պահանջել է սահմանել երեխայի հետ տեսակցության կոնկրետ վայր, ինչպես նաև տեսացության նոր կարգ՝ առանց մոր ներկայության: Ընդ որում, նշված վճռի կայացման պահին երեխան եղել է 1 տարի 4 ամսական, իսկ Վերաքննիչ դատարանի որոշման կայացման պահին՝ 3 տարեկան 10 ամսական:

Ավելին, Վերաքննիչ դատարանն իր որոշմամբ պատշաճ հիմնավորմամբ չի հերքել Երևանի Կենտրոն վարչական շրջանի խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովի եզրակացությամբ նշված Մանուկ Ղազանյանի՝ երեխայի հետ իր բնակության վայրում, այն է՝ ք. Երևան Մոլդովական 25/4-րդ շենքի թիվ 13 բնակարանում տեսակցելու և շփվելու վերաբերյալ եզրահանգումը:

Մասնավորապես, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Վերաքննիչ դատարանի կողմից վկայակոչված Մանուկ Ղազանյանի՝ ԱՄԵ-ում բնակվելու և աշխատելու, Հայաստանում հաճախակի լինելու կամ չլինելու հանգամանքները խոչընդոտ չեն Մանուկ Ղազանյանին երեխայի հետ իր բնակության վայրում, այն է՝ ք. Երևան Մոլդովական 25/4-րդ շենքի թիվ 13 բնակարանում տեսակցելու և շփվելու իրավունք տրամադրելու համար:

Այսպիսով, սույն վճռաբեկ բողոքի հիմքի առկայությունը Վճռաբեկ դատարանը դիտում է բավարար՝ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 227-րդ և 228-րդ հոդվածների ուժով Վերաքննիչ դատարանի որոշումը բեկանելու համար:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 240-241²-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

ՈՐՈՇԵՑ

1. Վճռաբեկ բողոքը բավարարել: Բեկանել ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 17.03.2011 թվականի որոշումը և գործն ուղարկել Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարան՝ նոր քննության:

2. Դատական ծախսերի բաշխման հարցին անդրադառնալ գործի նոր քննության ընթացքում:

3. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

*ՆԱԽԱԳԱՀՈՂ՝ ստորագրություն
ԴԱՏԱՎՈՐՆԵՐ՝ ստորագրություններ*

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական Քաղաքացիական գործ թիվ ԱՐԱԴ/0264/02/11
դատարանի որոշում 2011թ.
Քաղաքացիական գործ թիվ ԱՐԱԴ/0264/02/11
Նախագահող դատավոր՝ Կ. Հակոբյան
Դատավորներ՝ Ս. Սահակյան
Ս. Նազարյան

ՈՐՈՇՈՒՄ ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քաղաքացիական և վարչական պալատը (այսուհետ՝ վճռաբեկ դատարան)

նախագահությամբ

մասնակցությամբ դատավորներ

Ե. ԽՈՒՆԴԿԱՐՅԱՆԻ
Է. ՀԱՅՐԻՅԱՆԻ
Վ. ԱԲԵԼՅԱՆԻ
Ս. ԱՆՏՈՆՅԱՆԻ
Վ. ԱՎԱՆԵՍՅԱՆԻ
Ա. ԲԱՐՍԵՂՅԱՆԻ
Մ. ԴՐՄԵՅԱՆԻ
Գ. ՀԱԿՈԲՅԱՆԻ
Տ. ՊԵՏՐՈՍՅԱՆԻ
Ե. ՍՈՂՈՍՈՆՅԱՆԻ

2011 թվականի դեկտեմբերի 27-ին

դռնբաց դատական նիստում, քննելով Նինա Գույյանի վճռաբեկ բողոքը ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 16.09.2011 թվականի որոշման դեմ՝ ըստ Նինա Գույյանի հայցի ընդդեմ Ալի Դուլչիյանի, Ջինա Դուլչիյանի՝ երեխաների խնամքն ու դաստիարակությունն իրեն հանձնելու պահանջի մասին, ինչպես նաև Ալի Դուլչիյանի, Ջինա Դուլչիյանի հակընդդեմ հայցի ընդդեմ Նինա Գույյանի՝ երեխաների խնամքն ու դաստիարակությունն իրենց հանձնելու, ավտոմեքենան հրապարակային սակարկություններով վաճառելու՝ ստացված գումարը հետագայում ընդհանուր սեփականության մասնակիցների միջև բաժիններին համաչափ բաշխելու պահանջների մասին,

ՊԱՐԶԵՑ

1. Գործի դատավարական նախապատմությունը

Դիմելով դատարան՝ Նինա Գույյանը պահանջել է իր զավակներ Ջինա և

Խանում Բաղրի Գույանների խնամքը և դաստիարակությունը հանձնել իրեն:

Գործի քննության ընթացքում Նինա Գույանը պահանջել է իր գավակներ Զինա և Խանում Բաղրի Գույանների բնակության վայրը որոշել իր բնակության վայրով՝ ՀՀ Արագածոտնի մարզի Ճարձակիս գյուղի հասցեով:

Հակընդդեմ հայցով դիմելով դատարան՝ Ալի Ղուչիյանը և Զինա Ղուչիյանը պահանջել են Զինա և Խանում Բաղրի Գույանների խնամքը և դաստիարակությունը հանձնել իրենց, ինչպես նաև հրապարակային սակարկություններով վաճառել «ՎԱԶ-210630» մակնիշի 23SL837 պետհամարանիշի ավտոմեքենան՝ ստացված գումարը հետագայում բաշխելով ընդհանուր սեփականության մասնակիցների միջև՝ բաժիններին համաչափ:

ՀՀ Արագածոտնի մարզի ընդհանուր իրավասության դատարանի (դատավոր՝ Գ.Խաչատրյան) (այսուհետ՝ Դատարան) 18.07.2011 թվականի վճռով հայցը մերժվել է, իսկ հակընդդեմ հայցը բավարարվել է մասնակիորեն՝ վճռվել է «Երեխաներին թողնել բնակվելու ՀՀ Արագածոտնի մարզի Միջնատուն գյուղում՝ հակընդդեմ հայցվորներ, երեխաների պապիկի՝ Ալի Ղուչիյանի, տատիկի՝ Զինա Ղուչիյանի հետ՝ համատեղ Միջնատուն գյուղ 4-րդ փողոց թիվ 1 տանը՝ խնամքը հանձնելով հակընդդեմ հայցվորներին: Մնացած մասով հակընդդեմ հայցը՝ մերժել»:

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի (այսուհետ՝ Վերաքննիչ դատարան) 16.09.2011 թվականի որոշմամբ Նինա Գույանի վերաքննիչ բողոքը մերժվել է, և Դատարանի 18.07.2011 թվականի վճիռը թողնվել է օրինական ուժի մեջ:

Սույն գործով վճռաբեկ բողոք է ներկայացրել Նինա Գույանը:

Վճռաբեկ բողոքի պատասխան են ներկայացրել Ալի Ղուչիյանը և Զինա Ղուչիյանը:

2. Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը

Սույն վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

Վերաքննիչ դատարանը խախտել է ՀՀ ընդհանրական օրենսգրքի 44-րդ, 49-րդ, 51-րդ, 53-րդ, 56-րդ, 57-րդ հոդվածները, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 13-րդ, 47-րդ, 53-րդ հոդվածները և 130-րդ հոդվածի 3-րդ կետը, չի կիրառել ՀՀ ընդհանրական օրենսգրքի 53-րդ հոդվածի 3-րդ մասը:

Բողոք բերած անձը նշված պնդումը պարձառաբանել է հետևյալ փաստարկներով.

Վերաքննիչ դատարանը բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ չի հետազոտել գործում առկա ապացույցները, անտեսել է այն հանգամանքը, որ ծնողները պատասխանատվություն են կրում իրենց երեխաների դաստիարակության և զարգացման համար, պարտավոր են հոգ տանել իրենց երեխաների առողջության, ֆիզիկական, հոգեկան, հոգևոր և բարոյական զարգացման մասին: Ընդ որում, ծնողները բոլոր այլ անձանց հանդեպ ունեն իրենց երեխաներին դաստիարակելու նախապատվության իրավունք: Հատկանշական է, որ Արագածոտնի մարզի Միջնատուն համայնքի խնամակալության և հոգաբարձության խորհուրդը, ելնելով երեխաների՝ ուշադրության արժանի շահերից, եզրակացությամբ գտել է, որ անչափահաս Զինա և Խանում Բաղրի Գույանների խնամքը և դաստիարակությունը պետք է հանձնել մորը՝ Նինա Գույանին: Մինչդեռ, Զինա և Խանում Բաղրի Գույանների մոր՝ Նինա Գույանի կողմից իր երեխաների խնամքը

և դաստիարակությունն իրականացնելու պատրաստակամության պայմաններում երեխաների խնամքը և դաստիարակությունը պապին և տատին հանձնելը չի բխում երեխաների շահերից:

Վերոգրյալի հիման վրա բողոք բերած անձը պահանջել է բեկանել Վերաքննիչ դատարանի 16.09.2011 թվականի որոշումը և այն փոփոխել՝ հայցը բավարարել, իսկ հակընդդեմ հայցը՝ մերժել:

2.1. Վճռաբեկ բողոքի պատասխանի հիմնավորումները

Վերաքննիչ դատարանի կողմից որոշումը կայացվել է գործում առկա բոլոր ապացույցների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտության հիման վրա, հետևաբար բերված վճռաբեկ բողոքը ենթակա է մերժման:

3. Վճռաբեկ բողոքի քննության համար նշանակություն ունեցող փաստերը

Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1. 21.03.1989 թվականի թիվ 396633 ծննդյան վկայականի համաձայն՝ 28.09.1972 թվականին ծնված Բաղդր Ալիի Գույյանի ծնողներն են 18.06.1946 թվականին ծնված Ալի Ամոյի Ղուլչիյանը և 01.10.1947 թվականին ծնված Զինա Ջամալի Ղուլչիյանը (հատոր1, գ.թ. 38,45,46):

2. Բաղդր Ալիի Գույյանը և Նինա Բինբաշի Մստոյանն ամուսնացել են 11.08.1995 թվականին, և կինը կրում է Գույյան ազգանունը, հիմք՝ 11.08.1995 թվականի թիվ 410254 ամուսնության վկայականը (հատոր1, գ.թ. 11):

3. 20.12.2010 թվականի թիվ ԱԲ-112907 ծննդյան վկայականի համաձայն՝ 31.10.1995 թվականին ծնված Զինա Բաղդրի Գույյանի ծնողներն են Բաղդր Ալիի և Նինա Բինբաշի Գույյանները (հատոր1, գ.թ. 6):

4. 20.12.2010 թվականի թիվ ԱԲ-112908 ծննդյան վկայականի համաձայն՝ 06.02.1998 թվականին ծնված Խանում Բաղդրի Գույյանի ծնողներն են Բաղդր Ալիի և Նինա Բինբաշի Գույյանները (հատոր1, գ.թ. 7):

5. 20.12.2010 թվականի թիվ ԱԲ-036908 մահվան վկայականի համաձայն՝ Բաղդր Ալիի Գույյանը մահացել է 03.07.2010 թվականին (հատոր1, գ.թ. 10):

6. ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության սոցիալական ապահովության պետական ծառայության աշխատակազմի Արագածի սոցիալական ապահովության տարածքային բաժնի 13.05.2011 թվականի թիվ 03/28 և թիվ 03/29 տեղեկանքների համաձայն՝ Ալի Ղուլչիյանը 3-րդ խմբի աշխատանքային հաշմանդամ է և ստանում է 28.554 ՀՀ դրամ կենսաթոշակ, իսկ Զինա Ջամալի Ղուլչիյանը 2-րդ խմբի աշխատանքային հաշմանդամ է և ստանում է 16.128 ՀՀ դրամ կենսաթոշակ (հատոր1, գ.թ. 49,98):

7. Արագածոտնի մարզի Միջնատուն համայնքի խնամակալության և հոգաբարձության խորհրդի եզրակացության համաձայն՝ խնամակալության և հոգաբարձության մարմինը, հիմք ընդունելով երեխաների լավագույն շահերը, նպատակահարմար է գտել, որ անչափահաս Զինա և Խանում Բաղդրի Գույյանների խնամքը և դաստիարակությունն այսուհետ իրականացվի մոր՝ Նինա Գույյանի կողմից (հատոր1, գ.թ. 83-86):

4. Վճարելի դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումները

Քննելով վճարելի բողոքը վերը նշված հիմքի սահմաններում Վճարելի դատարանը գտնում է, որ այն հիմնավոր է հետևյալ պարձառաբանությամբ.

ՀՀ ընտանեկան օրենսգրքի 44-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ տասը տարին լրացած երեխայի կարծիքը հաշվի առնելը պարտադիր է՝ կապված խղճի ազատության հետ, որոշակի միջոցառումներին մասնակցելու, արտադպրոցական կրթություն ստանալուց հրաժարվելու, ծնողներից որևէ մեկի հետ ապրելու, հարազատների հետ շփվելու, օրենքով նախատեսված այլ դեպքերում:

ՀՀ Սահմանադրության 36-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ծնողներն իրավունք ունեն և պարտավոր են հոգ տանել իրենց երեխաների դաստիարակության, առողջության, լիարժեք ու ներդաշնակ զարգացման և կրթության համար:

«Երեխայի իրավունքների մասին» կոնվենցիայի 3-րդ հոդվածի 1-ին և 2-րդ կետերի համաձայն՝ երեխաների նկատմամբ բոլոր գործողություններում, անկախ այն բանից, թե դրանք ձեռնարկվում են սոցիալական ապահովության հարցերով զբաղվող պետական կամ մասնավոր հիմնարկների, դատարանների, վարչական կամ օրենսդրական մարմինների կողմից, առաջնահերթ ուշադրություն է դարձվում երեխայի լավագույն շահերին: Մասնակից պետությունները պարտավորվում են երեխային ապահովել նրա բարեկեցության համար անհրաժեշտ պաշտպանությամբ և հոգատարությամբ՝ ուշադրության առնելով նրա ծնողների, խնամակալների կամ օրենքով նրա համար պատասխանատվություն կրող այլ անձանց իրավունքներն ու պարտականությունները, և այդ նպատակով ձեռնարկում են օրենսդրական ու վարչական բոլոր համապատասխան միջոցները:

«Երեխայի իրավունքների մասին» կոնվենցիայի 7-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ երեխան գրանցվում է ծավելուց անմիջապես հետո և ծննդյան պահից ձեռք է բերում անվան և քաղաքացիության իրավունք, ինչպես նաև, որքան դա հնարավոր է, իր ծնողներին ճանաչելու և նրանց խնամքի իրավունք:

«Երեխայի իրավունքների մասին» կոնվենցիայի 9-րդ հոդվածի 1-ին և 2-րդ կետերի համաձայն՝ մասնակից պետություններն ապահովում են, որ երեխան, հակառակ ծնողների ցանկության, չբաժանվի նրանցից, բացառությամբ այն դեպքերի, երբ իրավասու մարմինները գործող օրենքի և ընթացակարգի համաձայն կայացնեն որոշում, ինչը ենթակա է դատական վերահսկողության, որ այդպիսի բաժանումն անհրաժեշտ է երեխայի շահերը լավագույնս պաշտպանելու տեսակետից: Նման որոշում կարող է անհրաժեշտ լինել այս կամ այն կոնկրետ դեպքում, օրինակ, երբ ծնողները դաժանորեն են վարվում երեխայի հետ կամ հոգ չեն տանում նրա մասին, կամ երբ ծնողներն առանձին են ապրում և հարկ է որոշում կայացնել երեխայի բնակության վայրի վերաբերյալ: Սույն հոդվածի 1-ին կետի համաձայն՝ ցանկացած քննության ընթացքում բոլոր շահագրգիռ կողմերին հնարավորություն է տրվում մասնակցել քննությանը և ներկայացնել իրենց տեսակետները:

«Երեխայի իրավունքների մասին» կոնվենցիայի 18-րդ հոդվածի 1-ին և 2-րդ կետերի համաձայն՝ մասնակից պետությունները գործադրում են բոլոր հնարավոր ջանքերը՝ երեխայի դաստիարակության և զարգացման գործում երկու ծնողների ընդհանուր պատասխանատվության սկզբունքի ճանաչումն ապահովելու համար: Ծնողները կամ համապատասխան դեպքերում օրինական խնամակալները երեխայի դաստիարակության ու զարգացման համար կրում են

հիմնական պատասխանատվություն: Երեխայի լավագույն շահերը նրանց հիմնական հոգաձույթյան առարկան են: Սույն կոնվենցիայում շարադրված իրավունքները երաշխավորելու և դրանց իրականացմանը նպաստելու նպատակով մասնակից պետությունները ծնողներին և օրինական խնամակալներին անհրաժեշտ օգնություն են տրամադրում երեխայի դաստիարակության իրենց պարտականությունները կատարելու գործում և ապահովում են երեխաների խնամքի հաստատությունների և ծառայությունների զարգացումը:

ՀՀ ընտանեկան օրենսգրքի 41-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ յուրաքանչյուր երեխա ունի ընտանիքում ապրելու և դաստիարակվելու, իր ծնողներին ճանաչելու, նրանց հոգատարությանն արժանանալու (որքան դա հնարավոր է), նրանց հետ համատեղ ապրելու իրավունք, բացառությամբ այն դեպքերի, երբ դա կարող է հակասել երեխայի շահերին: Երեխան ունի նաև իր ծնողներից դաստիարակություն ստանալու, նրա շահերի ապահովության, համակողմանի զարգացման, նրա մարդկային արժանապատվությունը հարգելու, ինչպես նաև ֆիզիկական, մտավոր, հոգևոր լիարժեք զարգացման համար անհրաժեշտ կենսապայմաններ ունենալու իրավունք: Ծնողների բացակայության, նրանց ծնողական իրավունքներից զրկված լինելու և ծնողական հոգատարությունից զրկվելու այլ դեպքերում ընտանիքում դաստիարակվելու երեխայի իրավունքն ապահովում է խնամակալության և հոգաբարձության մարմինը՝ սույն օրենսգրքի 17-րդ գլխի նորմերով սահմանված կարգով:

ՀՀ ընտանեկան օրենսգրքի 43-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ երեխան ունի իր իրավունքների և օրինական շահերի պաշտպանության իրավունք: Երեխայի իրավունքների և օրինական շահերի պաշտպանությունն իրականացնում են ծնողները (օրինական ներկայացուցիչները), իսկ սույն օրենսգրքով նախատեսված դեպքերում՝ խնամակալության և հոգաբարձության մարմինը:

ՀՀ ընտանեկան օրենսգրքի 49-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ 11-րդ գլխով նախատեսված ծնողական իրավունքները դադարում են երեխաների տասնութ տարեկանը լրանալով, ինչպես նաև սահմանված կարգով երեխաների ամուսնանալու, օրենքով նախատեսված կարգով մինչև չափահաս դառնալը երեխաների կողմից լրիվ գործունակություն ձեռք բերելու դեպքերում:

ՀՀ ընտանեկան օրենսգրքի 51-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ծնողներն իրավունք ունեն և պարտավոր են դաստիարակելու իրենց երեխաներին: Ծնողները պատասխանատվություն են կրում իրենց երեխաների դաստիարակության և զարգացման համար: Նրանք պարտավոր են հոգ տանել իրենց երեխաների առողջության, ֆիզիկական, հոգեկան, հոգևոր և բարոյական զարգացման մասին: Ծնողները բոլոր այլ անձանց հանդեպ ունեն իրենց երեխաներին դաստիարակելու նախապատվության իրավունք:

ՀՀ ընտանեկան օրենսգրքի 52-րդ հոդվածի համաձայն՝ երեխաների իրավունքների և օրինական շահերի պաշտպանությունը դրվում է նրանց ծնողների վրա: Ծնողները համարվում են իրենց երեխաների օրինական ներկայացուցիչները և նրանց իրավունքների ու շահերի պաշտպանությամբ առանց լիազորագրի հանդես են գալիս ֆիզիկական և իրավաբանական անձանց հետ ցանկացած հարաբերություններում, ինչպես նաև դատարանում:

ՀՀ ընտանեկան օրենսգրքի 56-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ երեխայի պապերը, տատերը, եղբայրները, քույրերը և այլ ազգականներն իրավունք ունեն

շվիկում երեխայի հետ:

ՀՀ ընտանեկան օրենսգրքի 57-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ծնողները կարող են պահանջել վերադարձնել իրենց երեխային այն անձից, ով նրան իր մոտ է պահում առանց օրինական հիմքի կամ առանց դատարանի որոշման: Վեճի առկայության դեպքում ծնողներն իրենց ծնողական իրավունքները պաշտպանելու համար կարող են դիմել դատարան: Հաշվի առնելով տասը տարին լրացած երեխայի կարծիքը՝ դատարանը կարող է մերժել ծնողների հայցի բավարարումը, եթե հանգի այն եզրակացության, որ ծնողներին վերադարձնելը չի բխում երեխայի շահերից:

ՀՀ ընտանեկան օրենսգրքի 67-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ խնամակալության և հոգաբարձության մարմինը պարտավոր է անցկացնել երեխայի և այն անձի (անձանց) կյանքի հետազոտություն, ովքեր հավակնում են նրա դաստիարակությանը և դատարան ներկայացնել հետազոտության ակտն ու դրա հիման վրա վեճի էության մասին եզրակացությունը:

«Երեխայի իրավունքների մասին» ՀՀ օրենքի 12-րդ հոդվածի համաձայն՝ յուրաքանչյուր երեխա ունի ծնողներին ձանաչելու և նրանց հետ համատեղ ապրելու իրավունք՝ բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված այն դեպքերի, երբ դատարանի որոշմամբ ծնողներից կամ ծնողից երեխայի բաժանումը համարվում է անհրաժեշտություն՝ ելնելով երեխայի շահերից:

«Երեխայի իրավունքների մասին» ՀՀ օրենքի 13-րդ հոդվածի համաձայն՝ երեխայի խնամքն ու դաստիարակությունն իրականացվում են հիմնականում ընտանիքում, որոնց պատասխանատվությունը կրում են ծնողները կամ այլ օրինական ներկայացուցիչները, ինչպես նաև պետության կողմից լիազորված պետական մարմինները: Նրանք ստեղծում են անհրաժեշտ պայմաններ երեխայի լիարժեք զարգացման, դաստիարակության, կրթության, առողջության պահպանման, ընտանիքում և հասարակության մեջ ինքնուրույն կյանքի նախապատրաստման համար: Ընտանիքում երեխայի լիարժեք խնամքը և դաստիարակությունն ապահովելու նպատակով պետությունը և նրա համապատասխան մարմիններն օգնություն են ցույց տալիս ծնողներին կամ այլ օրինական ներկայացուցիչներին՝ երեխայի բարեկեցությունն ապահովելու համար, խրախուսում են ընտանիքին աջակցող հոգեբանական, մանկավարժական խորհրդատվական ծառայությունների գործունեությունը:

«Երեխայի իրավունքների մասին» ՀՀ օրենքի 14-րդ հոդվածի համաձայն՝ երեխայի իրավունքների և օրինական շահերի պաշտպանությունը նրա ծնողների կամ այլ օրինական ներկայացուցիչների հիմնական պարտականություններից է:

Սույն քաղաքացիական գործով Վերաքննիչ դատարանը, վկայակոչելով ՀՀ ընտանեկան օրենսգրքի 44-րդ հոդվածի 1-ին, 2-րդ մասերը, 57-րդ հոդվածի 1-ին մասը, որպես իր դիրքորոշման հիմնավորում նշել է, որ «Զինա և Խանում Գույյանները, (երկուսի 10 տարին էլ լրացած է) չեն ցանկանում բնակվել իրենց մոր՝ հայցվոր Նիսա

Գույյանի հետ»:

ՀՀ ընտանեկան օրենսգրքի 44-րդ հոդվածով օրենսդիրն ամրագրել է երեխայի իրավունքն իր շահերը շոշափող ցանկացած հարցի լուծման դեպքում ունկնդիր լինելու հարցի քննությանը և արտահայտելու սեփական կարծիքն ինչպես ընտանիքում, այնպես էլ **դատական** և այլ մարմիններում: Ընդ որում, տասը տարին լրացած երեխայի կարծիքը հաշվի առնելը պարտադիր է՝ կապված խղձի ազատության

հետ, որոշակի միջոցառումներին մասնակցելու, արտադարձական կրթություն ստանալուց հրաժարվելու, **ծնողներից որևէ մեկի հետ սպրեղու, հարազատների հետ շփվելու**, օրենքով նախատեսված այլ դեպքերում: Հատկանշական է, որ սույն օրենսգրքով նախատեսված դեպքերում տասը տարին լրացած երեխայի վերաբերյալ խնամակալության և հոգաբարձության մարմինը կամ դատարանը կարող են որոշում ընդունել միայն նրա համաձայնությամբ:

Վերոգրյալի հիման վրա Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Վերաքննիչ դատարանը տվյալ պարագայում տասը տարին լրացած երեխաների կարծիքը հաշվի առնելու հիմքով վերջիններիս խնամակալությունը հարազատներին հանձնելու պայմաններում ըստ էության, խախտել է ծնողի՝ Նինա Գոլյանի՝ այլ անձանց հանդեպ **երեխային դաստիարակելու նախապատվության**, երեխաների դաստիարակության, առողջության, լիարժեք ու ներդաշնակ զարգացման և կրթության համար հոգ տանելու իրավունքները և պարտականությունները:

Հետևաբար, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Վերաքննիչ դատարանի նշված պատճառաբանություններն անհիմն են:

Միաժամանակ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ սույն քաղաքացիական գործն անհրաժեշտ է ուղարկել նոր քննության՝ ՀՀ Արագածոտնի մարզի Միջնատուն համայնքի խնամակալության և հոգաբարձության խորհրդի եզրակացությունը գործում եղած բոլոր ապացույցների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտության վրա հիմնված ներքին համոզմամբ գնահատելու համար:

Այսպես՝ Վերաքննիչ դատարանը բողոքարկվող դատական ակտն անփոփոխ թողնելու որոշումը հիմնավորել է նաև այն հանգամանքով, որ Միջնատուն համայնքի խնամակալության և հոգաբարձության խորհրդի եզրակացությամբ չի հիմնավորվում, որ հայցվորն ունի բավարար պայմաններ՝ երեխաների՝ իր հետ բնակության և նրանց խնամքն իրականացնելու համար:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 53-րդ հոդվածի առաջին կետի համաձայն՝ դատարանը յուրաքանչյուր ապացույց գնահատում է գործում եղած բոլոր ապացույցների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտության վրա հիմնված ներքին համոզմամբ:

Մինչդեռ, Վերաքննիչ դատարանը, բողոքարկվող դատական ակտը թողնելով անփոփոխ, չի իրականացրել նաև վերոհիշյալ ապացույցի բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտություն, քանի որ տվյալ ապացույցը չի գնահատել օբյեկտիվ՝ ծնողի՝ երեխային դաստիարակելու նախապատվության իրավունքի հաշվառմամբ:

Վերոգրյալի հիման վրա Վճռաբեկ դատարանը փաստում է, որ բողոքարկվող որոշումը նշված մասով անհիմն է:

Միաժամանակ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ սույն վճռաբեկ բողոքի հիմքը վերաբերում է դատական ակտի՝ հայցը մերժելու և հակընդդեմ հայցի՝ անչափահաս Ջինա և Խանում Գոլյանների պապի՝ Ալի Ղուլչյանի և տատի՝ Զինա Ղուլչյանի հետ համատեղ Միջնատուն գյուղ 4-րդ փողոց թիվ 1 տանը բնակվելու և խնամքը վերջիններիս հանձնելու մասին, հետևաբար դատական ակտը ենթակա է բեկանման միայն այդ մասով:

Այսպիսով, սույն վճռաբեկ բողոքի հիմքի առկայությունը Վճռաբեկ դատարանը դիտում է բավարար՝ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 227-րդ և 228-րդ հոդվածների ուժով Վերաքննիչ դատարանի որոշումը մասնակիորեն բեկանելու

համար:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 240-241²-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

ՈՐՈՇԵՑ

1. Վճռաբեկ բողոքը բավարարել մասնակիորեն: Բեկանել ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 16.09.2011 թվականի որոշման՝ հայցը մերժելու և հակընդդեմ հայցը մասնակիորեն բավարարելու մասերով վճիռն օրինական ուժի մեջ թողնելու մասը և գործն այդ մասով ուղարկել ՀՀ Արագածոտնի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարան՝ նոր քննության: ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 16.09.2011 թվականի որոշման մնացած մասը թողնել օրինական ուժի մեջ:

2. Վճռաբեկ բողոքի համար սահմանված և հետաձգված պետական տուրքի հարցին անդրադառնալ գործի նոր քննության ժամանակ:

3. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

*ՆԱԽԱԳԱՀՈՂ՝ պրորազրոյթյուն
ԴԱՏԱՎՈՐՆԵՐ՝ պրորազրոյթյուններ*

**ԸՆՏԱՆԻՔԻ ԱՆԴՄԱՆԵՐԻ ԱԼԻՄԵՆՏԱՅԻՆ
ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ**

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական Քաղաքացիական գործ թիվ ԵԱԲԴ/0823/02/10
դատարանի որոշում 2011թ.
Քաղաքացիական գործ թիվ ԵԱԲԴ/0823/02/10
Նախագահող դատավոր՝ Ն. Հովսեփյան
Դատավորներ՝ Ա. Մկրտչյան
Ն. Բարսեղյան

**ՈՐՈՇՈՒՄ
ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**

Հայաստանի Հանրապետության Վճռաբեկ դատարանի քաղաքացիական
և վարչական պալատը (այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

*նախագահությամբ
մասնակցությամբ դատավորներ*

Ե. ԽՈՒՆԴԿԱՐՅԱՆԻ
Ե. ՍՈՂՈՄՈՆՅԱՆԻ
Վ. ԱԲԵԼՅԱՆԻ
Ս. ԱՆՏՈՆՅԱՆԻ
Վ. ԱՎԱՆԵՍՅԱՆԻ
Ա. ԲԱՐՍԵՂՅԱՆԻ
Մ. ԴՐՄԵՅԱՆԻ
Գ. ՀԱԿՈԲՅԱՆԻ
Է. ՀԱՅՐԻՅԱՆԻ
Տ. ՊԵՏՐՈՍՅԱՆԻ

2011 թվականի ապրիլի 01-ին
դոնրաց դատական նիստում, քննելով Էլվիրա Գրիգորյանի վճռաբեկ բողոքը
ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 03.12.2010 թվականի որոշման դեմ՝ ըստ
Արմեն Գրիգորյանի հայցի ընդդեմ Էլվիրա Գրիգորյանի՝ ալիմենտի չափը փոփոխելու
պահանջի մասին,

ՊԱՐՉԵՑ

1. Գործի դատավարական նախապատմությունը

Դիմելով դատարան՝ Արմեն Գրիգորյանը պահանջել է նվազեցնել hoգուտ
Էլվիրա Գրիգորյանի որպես երեխաների՝ Դավիթ և Լիյա Գրիգորյանների բոնագանձ-

վելիք ալիմենտի չափը և սահմանել այն յուրաքանչյուր երեխայի համար ամսական 100.000 ՀՀ դրամ:

Երևանի Արաբկիր և Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի (այսուհետ՝ Դատարան) 17.07.2010 թվականի վճռով հայցը բավարարվել է:

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի (այսուհետ՝ Վերաքննիչ դատարան) 03.12.2010 թվականի որոշմամբ Էլվիրա Գրիգորյանի վերաքննիչ բողոքը բավարարվել է՝ որոշվել է Դատարանի 17.07.2010 թվականի վճիռը բեկանել և փոփոխել՝ Արմեն Գրիգորյանից հօգուտ Էլվիրա Գրիգորյանի որպես նրանց անչափահաս երեխաների՝ Դավիթ և Լիյա Գրիգորյանների բռնագանձվելիք ալիմենտի չափ սահմանել յուրաքանչյուր երեխայի համար ամսական 150.000 ՀՀ դրամ:

Սույն գործով վճռաբեկ բողոք է ներկայացրել Էլվիրա Գրիգորյանը:

Վճռաբեկ բողոքի պատասխան է ներկայացրել Արմեն Գրիգորյանը:

2. Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը

Սույն վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

Վերաքննիչ դատարանը չի կիրառել ՀՀ Սահմանադրության 36-րդ հոդվածը, ՀՀ ընտանեկան օրենսգրքի 71-րդ հոդվածի 2-րդ մասը, որոնք պետք է կիրառեր, սխալ է կիրառել ՀՀ ընտանեկան օրենսգրքի 69-րդ հոդվածի 2-րդ մասը:

Բողոք բերած անձը նշված պնդումը պարձառաքանել է հեղուկալ փաստարկներով.

Վերաքննիչ դատարանն անտեսել է, որ Արմեն Գրիգորյանն ամուսնացել է 22.05.2009 թվականին, այսինքն՝ ալիմենտ բռնագանձելու մասին Երևանի Արաբկիր և Քանաքեռ-Զեյթուն համայնքների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի 22.04.2009 թվականի վճռի կայացման պահից մեկ ամիս հետո: Ամուսնության պետական գրանցումն իրականացվում է քաղաքացիական կացության ակտերի գրանցման մարմին համատեղ դիմում տալու օրվանից մեկ ամիս անցնելուց հետո: Նշվածից հետևում է, որ Արմեն Գրիգորյանը 1.400 ԱՄՆ դոլարի չափով ալիմենտ վճարելու պատրաստակամությունը հայտնելու պահին գիտեր, որ ամուսնանալու է, ավելին, արդեն իսկ դիմում էր ներկայացրել ամուսնության գրանցման համար:

Վերաքննիչ դատարանն Արմեն Գրիգորյանի մոր՝ Ռիմմա Տարասովայի հիվանդության հանգամանքը ևս դիտել է որպես Արմեն Գրիգորյանի գույքային ու ընտանեկան դրության փոփոխություն, ինչը բոլորովին անհիմն է, քանի որ Ռիմմա Տարասովան 2001 թվականից հաշմանդամ է, և Արմեն Գրիգորյանն այդ մասին ալիմենտի չափի վերաբերյալ առաջարկություն ներկայացնելու պահին նույնպես գիտեր:

Այսպիսով, Վերաքննիչ դատարանը հաշվի չի առել, որ Արմեն Գրիգորյանի գույքային ու ընտանեկան դրությունը 22.04.2009 թվականից՝ ալիմենտի բռնագանձման մասին վճռի կայացման պահից մինչ այժմ չի փոփոխվել, ինչպես նաև առկա չեն ուշադրության արժանի շահեր:

Բացի այդ, Վերաքննիչ դատարանը հաշվի չի առել նաև, որ ալիմենտի չափի կտրուկ նվազումը բացասական կանդրադաժնա ինչպես երեխաների կենսամակարդակի, այնպես էլ նրանց հոգեկան աշխարհի վրա:

Վերոգրյալի հիման վրա բողոք բերած անձը պահանջել է Վերաքննիչ դատարանի 03.12.2010 թվականի որոշումը մասնակիորեն բեկանել և փոփոխել՝ Արմեն Գրիգորյանից հոգուտ էլվիրա Գրիգորյանի որպես նրանց անչափահաս երեխաների՝ Դավիթ և Լիյա Գրիգորյանների բռնազանձվելիք ալիմենտի չափ սահմանելով յուրաքանչյուր երեխայի համար ամսական 700 ԱՄՆ դոլարին համարժեք 250.000 ՀՀ դրամ կամ նշված որոշումն ամբողջությամբ բեկանել և գործն ուղարկել նոր քննության:

2.1. Վճարել բողոքի պատասխանի փաստարկները

Անձն ամուսնացած է համարվում քաղաքացիական կացության ակտերի գրանցման մարմնում ամուսնության գրանցման պահից, իսկ սույն գործի փաստերով հաստատվում է, որ 22.04.2009 թվականին Արմեն Գրիգորյանն ամուսնացած չէր: Բացի այդ, Արմեն Գրիգորյանն ալիմենտ վճարելու պատրաստակամության մասին հայտարարությունն արել է ոչ թե 22.04.2009 թվականին, այլ դրանից բավական ժամանակ առաջ, երբ նոր ընտանիք կազմելու որևէ մտադրություն չի ունեցել:

Ինչ վերաբերում է Արմեն Գրիգորյանի մոր՝ Ռինմա Տարասովայի խնամքի կարիք ունենալուն, ապա այդ հանգամանքը հիմնավորվում է նաև Երևանի Արաբկիր և Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի 12.04.2010 թվականի վճռով:

Այսպիսով, նշված հանգամանքներն արդեն իսկ վկայում են Արմեն Գրիգորյանի ընտանեկան և գույքային դրության փոփոխության փաստի մասին:

3. Վճարել բողոքի քննության համար նշանակություն ունեցող փաստերը

Վճարել բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

1) Երևանի Արաբկիր և Քանաքեռ-Զեյթուն համայնքների ընդհանուր իրավասության առաջին աստիճանի դատարանի 22.04.2009 թվականի վճռով որոշվել է Արմեն Գրիգորյանից հոգուտ էլվիրա Գրիգորյանի որպես վերջինիս խնամքին գտնվող նրանց երեխաների՝ Դավիթ Գրիգորյանի (ծնված՝ 03.09.1997 թվականին) և Լիյա Գրիգորյանի (ծնված՝ 07.08.2002 թվականին) բռնազանձել ալիմենտ կայուն դրամական գումարով՝ յուրաքանչյուր երեխայի համար ամսական 700 ԱՄՆ դոլարին համարժեք ՀՀ դրամի չափով (**գ.թ. 6-7**):

2) 22.05.2009 թվականի ամուսնության թիվ 127579 վկայականի համաձայն՝ Արմեն Գրիգորյանը և Քրիստինե Բարսեղյանն ամուսնացել են, որի մասին ամուսնության վերաբերյալ ակտերի գրանցման գրքում 22.05.2009 թվականին կատարվել է թիվ 221 գրանցումը (**գ.թ. 8**):

3) Երևանի Արաբկիր և Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի 12.04.2010 թվականի վճռով Արմեն Գրիգորյանից հոգուտ Ռինմա Տարասովայի որպես ալիմենտ բռնազանձվել է ամսական 200.000 ՀՀ դրամ (**գ.թ. 49-50**):

4. Վճարել դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումները

Քննելով վճարել բողոքը նշված հիմքի սահմաններում՝ Վճարել դատարանը գտնում է, որ այն հիմնավոր է հետևյալ պատճառաբանությամբ.

ՀՀ ընտանեկան օրենսգրքի 71-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին պարբերության համաձայն՝ ծնողների միջև երեխաների համար ալիմենտ վճարելու վերաբերյալ

համաձայնության բացակայության դեպքում դատարանն իրավունք ունի բռնագանձվող ալիմենտի ամենամսյա չափը սահմանելու կայուն դրամական գումարով կամ միաժամանակ և՛ դրամական կայուն գումարով, և՛ բաժիններով:

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ կայուն դրամական գումարի չափը որոշում է դատարանը՝ ելնելով երեխայի նախկին կենսաապահովման մակարդակի առավելագույն պահպանման հնարավորությունից՝ հաշվի առնելով կողմերի **գույքային** ու ընտանեկան **դրությունը** և ուշադրության արժանի շահերը:

ՀՀ ընտանեկան օրենսգրքի 69-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին պարբերության համաձայն՝ երեխաների համար ալիմենտ վճարելու վերաբերյալ նրա ծնողների միջև համաձայնության բացակայության դեպքում ծնողներից ալիմենտի բռնագանձումը կատարվում է դատական կարգով ...:

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ նույն հոդվածի 1-ին մասով նախատեսված բաժինների չափերը կարող են դատարանով նվազեցվել կամ ավելացվել՝ հաշվի առնելով կողմերի **գույքային** ու ընտանեկան **դրությունը** և ուշադրության արժանի շահերը:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 48-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ գործին մասնակցող յուրաքանչյուր անձ պետք է ապացուցի իր վկայակոչած փաստերը:

Նույն հոդվածի 6-րդ կետի համաձայն՝ եթե բոլոր ապացույցների հետազոտումից հետո վիճելի է մնում փաստի առկայությունը կամ բացակայությունը, ապա դրա բացասական հետևանքները կրում է այդ փաստի ապացուցման պարտականությունը կրող կողմը:

Նշված նորմերի վերլուծությունից հետևում է, որ դատարանն ալիմենտի չափը նվազեցնելու կամ ավելացնելու դեպքում պարտավոր է հաշվի առնել ոչ միայն կողմերի ընտանեկան, այլ նաև նրանց **գույքային դրության՝ վաստակի և (կամ) այլ եկամտի** փոփոխությունը, որի ապացուցման պարտականությունը, ինչպես նաև չապացուցման դեպքում դրա բացասական հետևանքները պետք է կրի այդ փաստը վկայակոչած կողմը: Այսինքն՝ նշված հանգամանքներն ինքնուրույն ապացուցման ենթակա են, և միայն կողմի ընտանեկան դրության փոփոխությունը դեռևս բավարար չէ նրա գույքային դրության՝ վաստակի և (կամ) այլ եկամտի փոփոխության վերաբերյալ որևէ փաստ հաստատված համարելու և եզրահանգում կատարելու համար:

Սույն գործով Վերաքննիչ դատարանն ալիմենտի չափը նվազեցնելու և յուրաքանչյուր երեխայի համար ամսական 150.000 ՀՀ դրամ սահմանելու հիմքում դրել է Արմեն Գրիգորյանի ընտանեկան դրության փոփոխությունը: Մասնավորապես՝ Վերաքննիչ դատարանը հիմք է ընդունել Արմեն Գրիգորյանի և Քրիստինե Բարսեղյանի 22.05.2009 թվականին գրանցված ամուսնությունը, ինչպես նաև Երևանի Արաբկիր և Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի 12.04.2010 թվականի վճռով Արմեն Գրիգորյանից հօգուտ Ռիմմա Տարասովայի որպես ալիմենտ ամսական 200.000 ՀՀ դրամ բռնագանձելու հանգամանքը:

Մինչդեռ, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Վերաքննիչ դատարանն անտեսել է, որ միայն Արմեն Գրիգորյանի ընտանեկան դրության փոփոխությունը չի կարող հաստատել նաև վերջինիս գույքային դրության փոփոխությունը, քանի որ այդ փաստը կարող էր հաստատվել միայն Արմեն Գրիգորյանի վաստակի և (կամ) այլ եկամտի վերաբերյալ համապատասխան ապացույցներով, որպիսիք սույն գործով չեն

ներկայացվել, ինչի բացասական հետևանքները պետք է կրի վերջինս:

Ինչ վերաբերում է Վերաքննիչ դատարանի վկայակոչած Երևանի Արաբկիր և Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի 12.04.2010 թվականի վճռին, ապա այն վկայում է Արմեն Գրիգորյանի կողմից լրացուցիչ ծախսեր կրելու հանգամանքը, որը սակայն չի կարող հիմք հանդիսանալ Երևանի Արաբկիր և Քանաքեռ-Զեյթուն համայնքների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի 22.04.2009 թվականի վճռով վերջինիս նկատմամբ սահմանված կայուն դրամական գումարով ալիմենտի չափի նվազեցման համար՝ Արմեն Գրիգորյանի գույքային դրության՝ վաստակի և (կամ) այլ եկամտի վերաբերյալ ապացույցի բացակայության պայմաններում:

Վերոգրյալի հիման վրա Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Վերաքննիչ դատարանը թույլ է տվել ՀՀ ընտանեկան օրենսգրքի 69-րդ հոդվածի 2-րդ մասի խախտում, քանի որ նշված նորմի կիրառման համար անհրաժեշտ իրավական հիմքի՝ Արմեն Գրիգորյանի գույքային դրության՝ վաստակի և (կամ) այլ եկամտի վերաբերյալ համապատասխան ապացույցի բացակայության պայմաններում նվազեցրել է վերջինիս նկատմամբ սահմանված ալիմենտի չափը:

Վճռաբեկ դատարանը վճռաբեկ բողոքի մյուս փաստարկներին չի անդրադարձնում, քանի որ տվյալ դեպքում Արմեն Գրիգորյանի գույքային դրության՝ վաստակի և (կամ) այլ եկամտի փոփոխության վերաբերյալ ապացույցի բացակայության պայմաններում դրանք սույն գործի լուծման համար չունեն որևէ իրավական նշանակություն:

Նշված պատճառաբանություններով հերքվում են վճռաբեկ բողոքի պատրասխանով ներկայացված փաստարկները:

Այսպիսով, սույն վճռաբեկ բողոքի հիմքի առկայությունը Վճռաբեկ դատարանը համարում է բավարար՝ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 227-րդ և 228-րդ հոդվածների ուժով Վերաքննիչ դատարանի որոշումը բեկանելու համար:

Միաժամանակ, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ սույն գործով անհրաժեշտ է կիրառել ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 240-րդ հոդվածի 1-ին կետի 4-րդ ենթակետով սահմանված՝ ստորադաս դատարանի դատական ակտը փոփոխելու Վճռաբեկ դատարանի լիազորությունը հետևյալ հիմնավորմամբ.

ՀՀ Սահմանադրության 19-րդ հոդվածի և «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի ողջամիտ ժամկետում իր գործի քննության իրավունք: Սույն գործով վեճի լուծումն էական նշանակություն ունի գործին մասնակցող անձանց համար: Վճռաբեկ դատարանը գտնում է, որ գործը ողջամիտ ժամկետում քննելը հանդիսանում է ՀՀ Սահմանադրության և «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի նշված հոդվածներով ամրագրված՝ անձի արդար դատաքննության իրավունքի տարր: Հետևաբար, գործի անհարկի ձգձգումները վտանգ են պարունակում նշված իրավունքի խախտման տեսանկյունից: Տվյալ դեպքում Վճռաբեկ դատարանի կողմից ստորադաս դատարանի դատական ակտը փոփոխելը բխում է արդարադատության արդյունավետության շահերից, քանի որ սույն գործով վերջնական դատական ակտ կայացնելու համար նոր հանգամանք հաստատելու անհրաժեշտությունը բացակայում է:

Դատական ակտը փոփոխելիս Վճռաբեկ դատարանը հիմք է ընդունում սույն որոշման պատճառաբանությունները, ինչպես նաև գործի նոր քննության անհրաժեշտության բացակայությունը:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 240-241²-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

ՈՐՈՇԵՑ

1. Վճռաբեկ բողոքը բավարարել մասնակիորեն: Բեկանել ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 03.12.2010 թվականի որոշումը և այն փոփոխել: Արմեն Գրիգորյանի հայցը մերժել:

2. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

*ՆԱԽԱԳԱՀՈՂ՝ ստորագրություն
ԴԱՏԱՎՈՐՆԵՐ՝ ստորագրություններ*

ԱՆԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆՔ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

ՀՀ վարչական դատարանի վճիռ
Վարչական գործ թիվ ՎԴ-2/0090/05/10
Նախագահող դատավոր՝ Հ. Թորոսյան

Վարչական գործ թիվ ՎԴ-2/0090/05/10
2011թ.

ՈՐՈՇՈՒՄ ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Հայաստանի Հանրապետության Վճռաբեկ դատարանի քաղաքացիական
և վարչական պալատը (այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

*նախագահությամբ
մասնակցությամբ դատավորներ*

Ե. ԽՈՒՆԴԿԱՐՅԱՆԻ
Ե. ՍՈՂՈՄՈՆՅԱՆԻ
Վ. ԱՔԵԼՅԱՆԻ
Վ. ԱՎԱՆԵՍՅԱՆԻ
Ա. ԲԱՐՍԵՂՅԱՆԻ
Մ. ԴՐՄԵՅԱՆԻ
Գ. ՀԱԿՈՔՅԱՆԻ
Տ. ՊԵՏՐՈՍՅԱՆԻ

2011 թվականի հուլիսի 01-ին

դոնրաց դատական նիստում, քննելով ՀՀ աշխատանքի պետական տեսչության
Գեղարքունիքի մարզային կենտրոնի (այսուհետ՝ Մարզային կենտրոն) վճռաբեկ
բողոքը ՀՀ վարչական դատարանի 27.04.2010 թվականի վճիռ դեմ՝ ըստ Մարզային
կենտրոնի հայցի ընդդեմ «Սևանի պոլիկլինիկա» ՊՓԲԸ-ի (այսուհետ՝ Ընկերություն)
տնօրեն Ռիտա Ժամհարյանի՝ գումար բռնագանձելու պահանջի մասին, և ըստ
Ընկերության տնօրեն Ռիտա Ժամհարյանի հակընդդեմ հայցի ընդդեմ Մարզային
կենտրոնի՝ վարչական ակտն առ ոչինչ ճանաչելու պահանջի մասին,

ՊԱՐԶԵՑ

1. Գործի դատավարական նախապատմությունը

Դիմելով դատարան՝ Մարզային կենտրոնը պահանջել է արձակել վճարման
կարգադրություն՝ Ընկերության տնօրեն Ռիտա Ժամհարյանից 500.000 ՀՀ դրամ
բռնագանձելու վերաբերյալ:

Հակընդդեմ հայցով դիմելով դատարան՝ Ընկերության տնօրեն Ռիտա
Ժամհարյանը պահանջել է առ ոչինչ ճանաչել Մարզային կենտրոնի պետի 24.11.2009
թվականի «Վարչական տույժ նշանակելու մասին» թիվ 829 որոշումը:

ՀՀ վարչական դատարանի (այսուհետ՝ Դատարան) 27.04.2010 թվականի վճռով
հայցը մերժվել է, իսկ հակընդդեմ հայցը՝ բավարարվել:

Սույն գործով վճռաբեկ բողոք է ներկայացրել Մարգային կենտրոնը:
Վճռաբեկ բողոքի պատասխան է ներկայացրել Ընկերության տնօրեն Ռիտա Ժամհարյանը:

2. Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը

Սույն վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքերի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

1) *Դատարանը սխալ է մեկնաբանել ՀՀ աշխատանքային օրենսգրքի 83-րդ հոդվածը, 85-րդ հոդվածի 2-րդ, 4-րդ մասերը, 99-րդ հոդվածի 1-ին, 2-րդ մասերը, 102-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետը:*

Բողոք բերած անձը նշված պնդումը պարզապես և հերկյալ փաստարկներով.

Դատարանն անտեսել է ստուգմամբ հիմնավորված այն հանգամանքը, որ անորոշ ժամկետով կնքված աշխատանքային պայմանագրեր ունեցող 10 աշխատող նույն գործատուի մոտ աշխատում են նաև համատեղությամբ՝ առանց աշխատանքային պայմանագրեր կնքելու: Բացի այդ, նշված աշխատողները համատեղությամբ աշխատանքը կատարել են իրենց հիմնական աշխատաժամանակում և ոչ թե դրանից դուրս:

Դատարանն անտեսել է նաև, որ ՀՀ աշխատանքային օրենսգրքի 102-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի համաձայն՝ անօրինական է համարվում նույն օրենսգրքի, օրենքի և այլ իրավական ակտերի խախտումով կնքված աշխատանքային պայմանագրի հիման վրա կատարվող աշխատանքը: Մինչդեռ, Դատարանը գտել է, որ Ընկերության 10 աշխատող նույն գործատուի մոտ աշխատում են համատեղությամբ և նշել է, որ Ընկերության տնօրեն Ռիտա Ժամհարյանը ներկայացրել է նշված աշխատողների դիմումները՝ Ընկերությունում աշխատանքի անցնելու մասին, վերջիններիս աշխատանքի նշանակելու մասին հրամանները, ինչպես նաև նրանց «համատեղությամբ աշխատելու մասին համաձայնագրերը»:

Դատարանը հաշվի չի առել ստուգմամբ հիմնավորված այն հանգամանքը, որ Ընկերության 10 աշխատող համատեղությամբ կատարում են նաև այլ աշխատանք, որն իր բնույթով և վերջիններիս համար սահմանված գործառնություններով նոր աշխատանք է, որի դեպքում գործատուն պարտավոր էր նշված աշխատողների հետ կնքել աշխատանքային պայմանագրեր, դրանք գրանցել աշխատանքային պայմանագրերի գրանցամատյանում, նրանց գրավոր ծանոթացնել նոր աշխատանքային իրավունքներին, պարտականություններին, գործառնություններին և այլ աշխատանքներ կանոնակարգող գործատուի ներքին կարգապահական կանոններին:

2) *Դատարանը խախտել է ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 108-րդ հոդվածը:*

Բողոք բերած անձը նշված պնդումը պարզապես և հերկյալ փաստարկներով.

Դատարանը հակընդդեմ հայցը վարույթ է ընդունել 07.04.2010 թվականի որոշմամբ, գործը դատաքննության է նշանակել 22.04.2010 թվականին, իսկ վճիռը հրապարակել է 27.04.2010 թվականին: Մինչդեռ, Դատարանը, անտեսելով գործում առկա ապացույցների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտման պահանջը, անհրաժեշտ չի համարել անգամ հրավիրել նախնական դատական

նիստ, որպեսզի ճշտի կողմերի դիրքորոշումները և վերջիններիս հնարավորություն ընձեռի ներկայացնել լրացուցիչ ապացույցներ: Այսինքն՝ Դատարանն ըստ էության իրականացրել է արագացված դատաքննություն՝ չունենալով դրա համար ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 108-րդ հոդվածով սահմանված հիմքերից որևէ մեկը:

3) Դատարանը խախտել է Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 169.5-րդ հոդվածը:

Բողոք բերած անձը նշված պնդումը պարձառաքանել է հետևյալ փաստարկներով.

Դատարանը վճռում վկայակոչել է Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 169.5-րդ հոդվածի՝ մինչև 17.01.2008 թվականը գործող խմբագրությունը: Մինչդեռ, Դատարանն անտեսել է, որ 17.01.2008 թվականից նշված հոդվածն ունի այլ բովանդակություն: Մասնավորապես՝ տվյալ դեպքում խնդիրը վերաբերում է ոչ թե առանց ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով ձևակերպելուն, այլ առանց աշխատանքային պայմանագրի կնքման աշխատող պահելուն: Ստուգման ակտում հստակ նշված է, որ Ընկերության 10 աշխատող աշխատում են ոչ թե առանց ձևակերպման, այլ առանց աշխատանքային պայմանագիր կնքելու: Հետևաբար, Դատարանը վճռում կատարել է ակնհայտ չիմնավորված եզրահանգում նշելով, որ Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 169.5-րդ հոդվածի 1-ին մասով վարչական տուգանք է սահմանվում ոչ թե աշխատանքային պայմանագրում որևէ պայման կամ պայմաններ ներառած չլինելու, այլ առանց սահմանված կարգով ձևակերպելու աշխատող պահելու համար:

Վերոգրյալի հիման վրա բողոք բերած անձը պահանջել է բեկանել Դատարանի 27.04.2010 թվականի վճիռը:

2.1. Վճռաբեկ բողոքի պատասխանի փաստարկները

Բողոք բերած անձը նշել է, որ Դատարանը գործի քննության ընթացքում խախտել է մի շարք նյութական և դատավարական նորմեր, ինչպես նաև գործը քննել է արագացված դատաքննության կարգով, որոնք չեն համապատասխանում իրականությանը:

Այսպես, վճարման կարգադրություն արձակելու մասին հայցադիմումը թվագրված է 22.03.2010 թվականով, որպիսի ամսաթվով Դատարանն արձակել է վճարման կարգադրություն: 06.04.2010 թվականին ներկայացվել է հակընդդեմ հայցադիմում, որի հիման վրա Դատարանը 07.04.2010 թվականին կայացրել է որոշում՝ վճարման կարգադրության վարույթից հայցային վարույթի անցում կատարելու և գործը դատաքննության նշանակելու մասին: Շախմատական դատական նիստ իրավիճակի անհրաժեշտություն չի առաջացել այնքանով, որքանով որ հստակ էին ինչպես հայցի, այնպես էլ հակընդդեմ հայցի հիմքերը, առարկան և վեճի լուծման համար կիրառելի իրավական նորմերը: Գործի դատաքննությունն իրականացվել է 22.04.2010 թվականին, իսկ վճիռը հրապարակվել է 27.04.2010 թվականին: Այդ ընթացքում Դատարանը որևէ դատավարական նորմ չի խախտել, ինչպես պնդում է բողոք բերած անձը:

Բողոք բերած անձը, թվարկելով Ընկերության 10 աշխատողի անուն-ազգանունները, պնդում է, որ վերջիններս համատեղությամբ աշխատանքը կատարել

են իրենց հիմնական աշխատաժամանակում և ոչ թե դրանից դուրս: Մինչդեռ, նշված պնդումը հիմնագուրկ է և այդ առումով որևէ ապացույց Դատարան չի ներկայացվել:

Բողոք բերած անձը պնդել է նաև, որ Դատարանը խախտել և սխալ է կիրառել ՀՀ աշխատանքային օրենսգրքի 83-րդ, 85-րդ և 102-րդ հոդվածների պահանջները: Մինչդեռ, վճռի թե՛ նկարագրական և թե՛ պատճառաբանական մասերում Դատարանն անդրադարձ է կատարել նշված նորմերին և դրանք մեկնաբանել է դրանցում տեղ գտած բառերի տառացի նշանակությամբ, ինչի արդյունքում եկել է այն եզրահանգման, որ նույն գործատուի մոտ աշխատանքային պայմանագրով աշխատող նույն աշխատողի համար ՀՀ աշխատանքային օրենսգրքը չի նախատեսում, որ համատեղությամբ կատարվող աշխատանքի համար պետք է կնքվի բոլորովին ինքնուրույն, հիմնական աշխատանքային պայմանագրից անկախ և դրա հետ կապ չունեցող պայմանագիր, այլ ոչ թե հիմնական աշխատանքային պայմանագրի անբաժանելի մասը կազմող մեկ այլ փաստաթուղթ:

Բողոք բերած անձը նշել է նաև, որ Դատարանը խախտել է Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 169.5-րդ հոդվածը: Մինչդեռ, նման պնդումն անհիմն է, քանի որ նշված իրավանորմը կիրառողը հանդիսացել է ոչ թե Դատարանը, այլ որպես վարչական մարմին գործող բողոք բերած անձը: Իսկ Դատարանի վճռում տեղ գտած հոդվածի տեքստի խմբագրական վրիպակը չի կարող համարվել դատական սխալ, քանի որ այն չի ազդել և չէր էլ կարող ազդել գործի ելքի վրա: Վճռաբեկ բողոքի նշված մասը կրում է միայն ձևական բնույթ, որի հետևանքով վճիռը չի կարող բեկանվել:

3. Վճռաբեկ բողոքի քննության համար նշանակություն ունեցող փաստերը

Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

1) ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի 29.09.2009 թվականի «Ծրագրային ստուգում անցկացնելու» թիվ 512 հանձնարարագրի հիման վրա Ընկերությունում իրականացվել է ծրագրային ստուգում, որի արդյունքում 09.11.2009 թվականին կազմվել է թիվ 512 ստուգման ակտը և «Վարչական իրավախախտման վերաբերյալ» արձանագրությունը (**գ.թ. 2-7**):

2) Մարզային կենտրոնի պետը, քննարկելով նշված ստուգման ակտը և արձանագրությունը, ինչպես նաև ստուգման ընթացքում ձեռք բերված նյութերը, վերլուծելով և գնահատելով գործում առկա փաստական հանգամանքները, 24.11.2009 թվականի «Վարչական տույժ նշանակելու մասին» թիվ 829 որոշման «Հաստատված հանգամանքներ» մասի 5-րդ կետով հաստատված է համարել, որ Ընկերության 10 աշխատողի հետ համատեղությամբ աշխատանքի վերաբերյալ աշխատանքային պայմանագրեր չեն կնքվել: ՀՀ աշխատանքային օրենսգրքի 99-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ համատեղությամբ աշխատանքը հիմնական աշխատանքային ժամանակից դուրս, միևնույն գործատուի կամ այլ գործատուի մոտ աշխատանքային պայմանագրի հիման վրա աշխատողի կատարած աշխատանքն է: Գործատուի կողմից ՀՀ աշխատանքային օրենսգրքի 99-րդ հոդվածի հատկանիշները խախտելը հիմք է ՀՀ աշխատանքային օրենսգրքի 102-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի կիրառման համար, որի համաձայն՝ անօրինական է համարվում այն աշխատանքը, որը կատարվում է առանց աշխատանքային պայմանագրի կնքելու, չնայած առկա են նույն օրենսգրքի 83-րդ հոդվածով սահմանված աշխատանքային պայմանագրի հատկանիշները: Նույն

որոշման եզրափակիչ մասի 5-րդ կետով Ընկերության տնօրեն Ռիտա Ժամհարյանը ՀՀ աշխատանքային օրենսգրքի 99-րդ հոդվածի 1-ին մասի պահանջը խախտելու համար Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 169.5-րդ հոդվածով ենթարկվել է 500.000 ՀՀ դրամ վարչական տուգանքի (խախտման յուրաքանչյուր դեպքի՝ յուրաքանչյուր աշխատողի հետ համատեղությամբ աշխատանքի վերաբերյալ աշխատանքային պայմանագիր չկնքելու համար 50.000 ՀՀ դրամ) (գ.թ. 13-19):

3) Ընկերությունը՝ ի դեմս տնօրեն Ռիտա Ժամհարյանի, Ընկերության 10 աշխատողից յուրաքանչյուրի հետ համատեղ աշխատանքի վերաբերյալ կնքել է հիմնական աշխատանքային պայմանագրերի հավելվածների տեսքով համաձայնագրեր (գ.թ. 29-68):

4. Վճարելի դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումները

Քննելով վճարելի բողոքը նշված հիմքերի սահմաններում՝ Վճարելի դատարանը գրնում է, որ՝

1) Վճարելի բողոքն առաջին հիմքով անհիմն է հեղինակ պատճառաբանությամբ.

Վիճելի իրավահարաբերության ծագման պահին գործող խմբագրությամբ ՀՀ աշխատանքային օրենսգրքի 83-րդ հոդվածի համաձայն՝ աշխատանքային պայմանագիրը համաձայնություն է աշխատողի և գործատուի միջև, ըստ որի՝ աշխատողը պարտավորվում է գործատուի համար կատարել որոշակի մասնագիտությամբ, որակավորմամբ աշխատանք կամ մատուցել որոշակի ծառայություններ՝ պահպանելով աշխատավայրում սահմանված աշխատանքային կարգապահությունը, իսկ գործատուն պարտավորվում է աշխատողին տրամադրել պայմանագրով որոշված աշխատանքը, վճարել նրա կատարած աշխատանքի համար պայմանավորված աշխատավարձը և ապահովել Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ, այլ նորմատիվ իրավական ակտերով, կոլեկտիվ պայմանագրով, կողմերի համաձայնությամբ նախատեսված աշխատանքային պայմաններ:

Վիճելի իրավահարաբերության ծագման պահին գործող խմբագրությամբ ՀՀ աշխատանքային օրենսգրքի 84-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ աշխատանքային պայմանագրում նշվում են աշխատանքային պայմանագիր կնքող աշխատողի անունը, ազգանունը (նրա ցանկությամբ՝ նաև հայրանունը) և գործատուի անվանումը (անունը, ազգանունը (նրա ցանկությամբ՝ նաև հայրանունը), եթե գործատուն քաղաքացի է):

Աշխատանքային պայմանագիրը պետք է ներառի հետևյալ պայմանները.

- 1) աշխատանքի վայրը՝ նշելով կառուցվածքային ստորաբաժանումը.
- 2) աշխատանքն սկսելու տարին, ամիսը, ամսաթիվը.
- 3) պաշտոնի, մասնագիտության անվանումը՝ նշելով որակավորմանը ներկայացվող պահանջները կամ աշխատանքային գործառույթները.
- 4) աշխատողի իրավունքներն ու պարտականությունները.
- 5) գործատուի իրավունքներն ու պարտականությունները.
- 6) աշխատանքի վարձատրության պայմաններն ու չափը.
- 7) աշխատանքի պայմանների նկարագրությունը, ծանր, վնասակար և (կամ) վտանգավոր պայմաններում աշխատանքի դեպքում աշխատողների արտոնություններն ու հատուցումները.
- 8) աշխատանքային պայմանագրի գործողության ժամկետը.
- 9) աշխատանքային պայմանագիրը կնքելու տարին, ամիսը, ամսաթիվը:

Վիճելի իրավահարաբերության ծագման պահին գործող խմբագրությամբ ՀՀ աշխատանքային օրենսգրքի 85-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ աշխատանքային պայմանագիրը կնքվում է գրավոր ձևով՝ կողմերի ստորագրությամբ մեկ փաստաթուղթ կազմելու միջոցով:

ՀՀ աշխատանքային օրենսգրքի 99-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ **համատեղությամբ աշխատանքը** հիմնական աշխատանքային ժամանակից դուրս, **միննույն գործատուի** կամ այլ գործատուի **մոտ աշխատանքային պայմանագրի հիման վրա աշխատողի կատարած աշխատանքն է:**

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ աշխատանքային պայմանագրում նշվում է, որ աշխատանքը կատարվում է համատեղությամբ:

Վիճելի իրավահարաբերության ծագման պահին գործող խմբագրությամբ ՀՀ աշխատանքային օրենսգրքի 102-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ անօրինական է համարվում՝

1) այն աշխատանքը, որը կատարվում է **առանց աշխատանքային պայմանագրի կնքելու**, չնայած առկա են նույն օրենսգրքի 83-րդ հոդվածով սահմանված աշխատանքային պայմանագրի հատկանիշները.

2) նույն օրենսգրքի, օրենքի և այլ իրավական ակտերի խախտումով կնքված աշխատանքային պայմանագրի հիման վրա կատարվող աշխատանքը:

Նշված նորմերի վերլուծությունից հետևում է, որ հիմնական աշխատանքային պայմանագիրն աշխատողի և գործատուի միջև և նրանց ստորագրությամբ մեկ փաստաթուղթ կազմելու միջոցով գրավոր կնքված համաձայնություն է, որում պարտադիր պետք է նշվեն որոշակի տվյալներ և ներառվեն որոշակի պայմաններ, իսկ առանց աշխատանքային պայմանագրի կնքելու կամ խախտումով կնքված աշխատանքային պայմանագրի հիման վրա կատարվող աշխատանքը համարվում է անօրինական աշխատանք: Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ իրավահարաբերության ծագման պահին ՀՀ աշխատանքային օրենսգրքի գործող խմբագրությունը չի պարունակել նաև համատեղությամբ կատարվող աշխատանքի համար առանձին պայմանագրի կնքելու ձևական պահանջ, այլ զուտ սահմանվել է, որ համատեղությամբ աշխատանքը պետք է կատարվի աշխատանքային պայմանագրի հիման վրա:

Սույն գործի փաստերի համաձայն՝ Ընկերությունը՝ ի դեմս տնօրեն Ռիտա Ժամհարյանի, Ընկերության 10 աշխատողից յուրաքանչյուրի հետ համատեղությամբ աշխատանքի վերաբերյալ կնքել է հիմնական աշխատանքային պայմանագրերի հավելվածների տեսքով համաձայնագրեր, որոնց համաձայն՝ դրանք համապատասխան աշխատանքային պայմանագրերի անբաժանելի մասերն են:

Տվյալ դեպքում կնքված հիմնական աշխատանքային պայմանագրերը և հիմնական աշխատանքային պայմանագրերի հավելվածների տեսքով կնքված համաձայնագրերը պարունակում են իրավահարաբերության ծագման ժամանակ գործող ՀՀ աշխատանքային օրենսգրքի 84-րդ հոդվածի 1-ին մասի՝ աշխատանքային պայմանագրի բովանդակությանը վերաբերող բոլոր դրույթները: Հետևաբար, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ նշված հավելվածներով նախատեսված աշխատանքը չի կարող իրավահարաբերության ծագման պահին գործող ՀՀ աշխատանքային օրենսգրքի 102-րդ հոդվածի 1-ին մասի իմաստով գնահատվել որպես անօրինական աշխատանք:

Սույն գործով Դատարանը հայցը մերժելու, իսկ հակընդդեմ հայցը բավարարելու

հիմքում դրել է այն հիմնավորումները, որ Ընկերության տնօրեն Ռիտա Ժամհարյանը ներկայացրել է Ընկերության 10 աշխատողից յուրաքանչյուրի հետ անորոշ ժամկետով կնքված աշխատանքային պայմանագրեր: Յուրաքանչյուր աշխատողի հետ կնքվել են նաև գրավոր համաձայնագրեր, որոնցով սահմանվել են, որ վերջիններս Ընկերությունում նույն գործատուի մոտ, համատեղությամբ կատարելու են նաև այլ աշխատանք: Այդ համաձայնագրերն աշխատանքային պայմանագրերի անբաժանելի մասն են: Ինչպես աշխատանքային պայմանագրերը, այնպես էլ համատեղությամբ աշխատելու վերաբերյալ համաձայնագրերը կնքվել են ՀՀ աշխատանքային օրենսգրքի 85-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերի պահանջներին համապատասխան: Նշվածից հետևում է, որ Ընկերության տնօրեն Ռիտա Ժամհարյանն Ընկերության 10 աշխատողի հետ կնքել է աշխատանքային պայմանագրեր, այդ թվում նույն գործատուի մոտ համատեղությամբ կատարվող աշխատանքի վերաբերյալ աշխատանքային պայմանագրեր, որոնք համաձայնագրերի տեսքով կազմել են հիմնական աշխատանքային պայմանագրերի անբաժանելի մասը, իսկ համատեղությամբ աշխատանքը գրավոր համաձայնագրերի հիման վրա կատարելը որևէ կերպ չի կարող անդրադառնալ դրանք աշխատանքային պայմանագրերի բաղկացուցիչ մասեր չհամարելու և համատեղությամբ աշխատանքը որպես անօրինական աշխատանք դիտելու համար: ՀՀ աշխատանքային օրենսգիրքը չի նախատեսում, որ համատեղությամբ աշխատանք կատարելու համար պետք է կնքվի բոլորովին ինքնուրույն, հիմնական աշխատանքային պայմանագրից անկախ և դրա հետ կապ չունեցող աշխատանքային պայմանագիր, այլ նշված օրենսգրքի պահանջն այն է, որ աշխատանքային պայմանագրի կնքումը ձևակերպվի գրավոր, որը կարող է կատարվել նաև հիմնական աշխատանքի վերաբերյալ կնքված աշխատանքային պայմանագրում, ինչպես նաև դրա բաղկացուցիչ մասը կազմող որևէ այլ գրավոր փաստաթղթում:

Վերոգրյալ նկատառումներով Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Դատարանի նշված պատճառաբանությունները հիմնավոր են:

2) Վճռաբեկ բողոքը երկրորդ հիմքով անհիմն է հեղկյալ պատճառաբանությամբ.

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 86-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ գործը դատաքննության նախապատրաստելիս դատավորը պատասխանողի կողմից հայցադիմումի պատասխանն ստանալուց հետո, իսկ այդպիսին չստանալու դեպքում՝ պատասխան ուղարկելու համար նախատեսված ժամկետի ավարտից հետո, դատաքննությունն արդյունավետ իրականացնելու համար **կարող է** հրավիրել նախնական դատական նիստ: Կողմերը և դատավարության այլ մասնակիցներ պատշաճ ծանուցվում են նախնական դատական նիստի վայրի և ժամանակի մասին:

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ ներկայացված վճռաբեկ բողոքում չի հիմնավորվել սույն վարչական գործով նախնական դատական նիստ անցկացնելու անհրաժեշտությունը:

Ինչ վերաբերում է արագացված դատաքննություն իրականացնելու մասին վճռաբեկ բողոքի փաստարկին, ապա Վճռաբեկ դատարանն այն նույնպես անհիմն է համարում, քանի որ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 109-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ արագացված դատաքննություն կիրառելու մասին դատարանը կայացնում է միջանկյալ դատական ակտ: Մինչդեռ, սույն վարչական գործի քննության ընթացքում գործն արագացված դատաքննությամբ քննելու մասին որոշում չի կայացվել:

3) *Վճռաբեկ բողոքը երրորդ հիմքով հիմնավոր է հեղույս պարձառաքանությանը.*

Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 169.5-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ **առանց պայմանագրի կնքման աշխատող պահելը** կամ աշխատանքային պայմանագրում Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 84-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 4-րդ, 5-րդ, 6-րդ և 7-րդ կետերով նախատեսված պայմանները չներատելը՝ առաջացնում է տուգանքի նշանակում խախտում թույլ տված անձի նկատմամբ՝ սահմանված նվազագույն աշխատավարձի հիսնապատիկի չափով՝ խախտման յուրաքանչյուր դեպքի համար:

Վիճելի իրավահարաբերության ծագման պահին գործող խմբագրությամբ Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 169.5-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ կազմակերպությունում կամ անհատ ձեռնարկատիրոջ մոտ **առանց Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ձևակերպելու աշխատող պահելը**՝ առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի հիսնապատիկի չափով՝ յուրաքանչյուր չձևակերպված աշխատողի համար:

Սույն գործով Գատարանը վճռում վկայակոչել և կիրառել է Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 169.5-րդ հոդվածի 1-ին մասը նախկին խմբագրությամբ: Մասնավորապես՝ «Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության 2007 թվականի դեկտեմբերի 6-ի թիվ ՀՕ-296-Ն օրենքով Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 169.5-րդ հոդվածի 1-ին մասը շարադրվել է նոր խմբագրությամբ:

Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Գատարանը, վկայակոչելով և կիրառելով Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 169.5-րդ հոդվածի 1-ին մասը նախկին խմբագրությամբ, կիրառել է այն օրենքը, որը չպետք է կիրառեր:

Այնինչ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 227-րդ հոդվածի 2-րդ կետը սահմանում է, որ նյութական իրավունքի նորմի խախտումը կամ սխալ կիրառումը վճռի բեկանման հիմք է, **եթե հանգեցրել է գործի սխալ լուծման:**

Հիմք ընդունելով վերոգրյալը և հաշվի առնելով այն հանգամանքը, որ վերոնշյալ դատական սխալը չի ազդել գործի ելքի վրա, հետևաբար Վճռաբեկ դատարանը գտնում է, որ այն հիմք չէ դատական ակտը բեկանելու համար:

Այսպիսով, սույն վճռաբեկ բողոքի հիմքի առկայությունը Վճռաբեկ դատարանը բավարար չի համարում Գատարանի վճիռը բեկանելու համար:

Այսպիսով, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ սույն գործով Գատարանը կայացրել է ըստ էության ճիշտ դատական ակտ, հետևաբար տվյալ դեպքում անհրաժեշտ է կիրառել ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 240-րդ հոդվածի 1-ին կետի 1-ին ենթակետով սահմանված՝ ստորադաս դատարանի սխալ պատճառաբանված դատական ակտն անփոփոխ թողնելու Վճռաբեկ դատարանի լիազորությունը:

Վերոգրյալից ելնելով՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ վճռաբեկ բողոքը պետք է մերժել և դատական ակտը թողնել օրինական ուժի մեջ սույն որոշման պատճառաբանություններով:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության վարչական դատավարության օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության 2010 թվականի հոկտեմբերի 28-ի թիվ ՀՕ-135-Ն օրենքի 21-րդ հոդվածի 4-րդ մասով, ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 118-րդ հոդվածով, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 240-241²-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

ՈՐՈՇԵՑ

1. Վճռաբեկ բողոքը մերժել: ՀՀ վարչական դատարանի 27.04.2010 թվականի վճիռը թողնել օրինական ուժի մեջ սույն դրոշման պատճառաբանություններով:

2. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

*ՆԱԽԱԳԱՀՈՂ՝ ստորագրություն
ԴԱՏԱՎՈՐՆԵՐ՝ ստորագրություններ*

ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱՊԱՀՈՎՈՒԹՅՈՒՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի որոշում
Քաղաքացիական գործ թիվ ԵԱՆԴ/1131/02/10
Նախագահող դատավոր՝ Դ. Խաչատրյան
Դատավորներ՝ Ն. Տավարացյան
Ս. Միքայելյան

Քաղաքացիական գործ թիվ ԵԱՆԴ/1131/02/10
2011թ.

ՈՐՈՇՈՒՄ

ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քաղաքացիական
և վարչական պալատը (այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

նախագահությամբ

մասնակցությամբ դատավորներ

Ե. ԽՈՒՆԴԿԱՐՅԱՆԻ
Վ. ԱՎԱՆԵՍՅԱՆԻ
Վ. ԱԲԵԼՅԱՆԻ
Ա. ԲԱՐՍԵՂՅԱՆԻ
Մ. ԴՐՄԵՅԱՆԻ
Գ. ՀԱԿՈԲՅԱՆԻ
Տ. ՊԵՏՐՈՍՅԱՆԻ
Ե. ՍՈՂՈՄՈՆՅԱՆԻ

2011 թվականի հուլիսի 01-ին

դռնբաց դատական նիստում, քննելով Մայրան Շահբազյանի վճռաբեկ բողոքը
ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 01.03.2011 թվականի որոշման դեմ՝ ըստ
դիմումի Մայրան Շահբազյանի՝ իրավաբանական նշանակություն ունեցող փաստի
հաստատման պահանջի մասին,

ՊԱՐԶԵՑ

1. Գործի դատավարական նախապատմությունը

Դիմելով դատարան՝ Մայրան Շահբազյանը պահանջել է հաստատել
իրավաբանական նշանակություն ունեցող այն փաստը, որ ինքը 1976 թվականից մինչ
1988 թվականն աշխատել է Երևանի 5-րդ մանկական պոլիկլինիկայում:

Երևանի Ավան և Նոր Նորք վարչական շրջանների ընդհանուր իրավասության
դատարանի 09.12.2010 թվականի վճռով դիմումը մերժվել է:

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի (այսուհետ՝ Վերաքննիչ
դատարան) 01.03.2011 թվականի որոշմամբ Մայրան Շահբազյանի վերաքննիչ բողոքը
մերժվել է, և Դատարանի 09.12.2010 թվականի վճիռը թողնվել է օրինական ուժի մեջ:

Սույն գործով վճռաբեկ բողոք է ներկայացրել Մայրան Շահբազյանը:

Վճռաբեկ բողոքի պատասխան չի ներկայացվել:

2. Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը

Սույն վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

Վերաքննիչ դատարանը խախտել է «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածը, ՀՀ Սահմանադրության 37-րդ հոդվածը, «Պետական կենսաթոշակների մասին» ՀՀ օրենքի 12-րդ և 47-րդ հոդվածները, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 47-49-րդ հոդվածները, 51-րդ, 53-րդ, 130-րդ, 132-րդ և 192-րդ հոդվածները:

Բողոք բերած անձը նշված պնդումը պարզապես անտեղի է հետևյալ փաստարկներով.

Վերաքննիչ դատարանն անտեսել է Նվարդ Չոբյանի և Նվարդ Գոմիկյանի ցուցմունքներն այն մասին, որ Մայրան Շահբազյանը 1976 թվականից մինչև 1988 թվականն ընկած ժամանակահատվածում աշխատել է Երևանի 5-րդ մանկական պոլիկլինիկայում (ներկայիս Սուրբ Գրիգոր Լուսավորիչ բժշկական կենտրոն):

Բացի այդ, Վերաքննիչ դատարանը պատշաճ իրավական գնահատականի չի արժանացրել նաև այն հանգամանքը, որ Դատարանը վճռի իրավական վերլուծության մատուցել է, որ Մայրան Շահբազյանը չի հիմնավորել իր կողմից վկայակոչած փաստերը, սակայն վճիռ կայացնելիս որևէ կերպ չի պատճառաբանել, թե ինչու է վերջինիս կողմից ներկայացրած ապացույցները, մասնավորապես՝ վկաների ցուցմունքները, պոլիկլինիկայում աշխատած տարիներին աշխատավարձի հաշվարկման անձնական քարտը, մերժել: Ավելին՝ Դատարանը վճռի իրավական վերլուծության մատուցելու ընդհանրապես որևէ գնահատական չի տվել և որևէ կերպ չի անդրադարձել վերը նշված ապացույցներին:

Վերոգրյալի հիման վրա բողոք բերած անձը պահանջել է բեկանել Վերաքննիչ դատարանի 01.03.2011 թվականի որոշումը և գործն ուղարկել ստորադաս դատարան՝ նոր քննության:

3. Վճռաբեկ բողոքի քննության համար նշանակություն ունեցող փաստերը

Վճռաբեկ բողոքի քննության համար նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

1. ՀՀ Երևանի «Սուրբ Գրիգոր Լուսավորիչ» բժշկական կենտրոն ՓԲԸ-ի տնօրենի 24.06.2010 թվականի թիվ 01-14/1296 գրության համաձայն՝ Մայրան Շահբազյանը 1993 թվականին ընդունվել է աշխատանքի նախկին N 5 մանկական պոլիկլինիկայում՝ որպես մատենագիր, ապա 14.08.1997 թվականի N 100 հրամանի համաձայն՝ մատենագրի պաշտոնից տեղափոխվել է գանձապահի և պահեստապետի պաշտոնին: 19.09.2003 թվականի թիվ 98 հրամանի համաձայն՝ իր անձնական դիմումի հիմքով Մայրան Շահբազյանն ազատվել է աշխատանքից, իսկ 1976 թվականից մինչև 1988 թվականն ընկած ժամանակաշրջանում Մայրան Շահբազյանի ընդունման և ազատման մասին գրառումներ հրամանագրքերում չկան: Հիվանդանոցի արխիվային գործերում տվյալներ նույնպես չեն պահպանվել (գ. թ. 6)

2. «Հայաստանի ազգային արխիվ» ՊՈԱԿ-ի տնօրենի 13.07.2010 թվականի թիվ Գ-2906 գրության համաձայն՝ նախկին 5-րդ մանկական պոլիկլինիկան, ներկայումս գործում է «Սուրբ Գրիգոր Լուսավորիչ» բժշկական կենտրոնի կազմում, իր

գործունեությամբ առաջացած փաստաթղթերը երբևէ պետական արխիվ չի հանձնել (գ. թ. 7):

3. Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության սոցիալական ապահովության պետական ծառայության պետի առաջին տեղակալի 08.11.2010 թվականի թիվ 04/1422 գրության համաձայն՝ ՀՀ կառավարության 12.05.2005 թվականի թիվ 938-Ն որոշումով անհատական (անձնավորված) հաշվառման համակարգը ներդրվել է 2004 թվականից, հետևաբար 1976 թվականից մինչև 1988 թվականն ընկած ժամանակահատվածի համար 5-րդ մանկական պոլիկլինիկայում գործունեության և Մայրան Շահբազյանի վերաբերյալ տեղեկություն չեն կարող տրամադրել (գ. թ. 42):

4. ՀՀ Երևանի «Սուրբ Գրիգոր Լուսավորիչ» բժշկական կենտրոն ՓԲԸ-ի տնօրենի 17.11.2010 թվականի թիվ 01-14/2348 գրության համաձայն՝ ներկայացրել են 1976 թվականից մինչև 1983 թվականն ընկած ժամանակահատվածում 5-րդ մանկական պոլիկլինիկայում (ներկայումս «Սուրբ Գրիգոր Լուսավորիչ» բժշկական կենտրոն) աշխատողների թիվը՝ ըստ տարեթվերի՝ 1977 թվականին-232, 1978 թվականին-255, 1979 թվականին-235, 1980 թվականին-252, 1981 թվականին-221, 1982 թվականին-230, 1983 թվականին-240: Միաժամանակ հայտնել են, որ 1984 թվականից մինչև 1988 թվականը գրառումները չեն պահպանվել (գ. թ. 43):

5. ՀՀ Երևանի «Սուրբ Գրիգոր Լուսավորիչ» բժշկական կենտրոն ՓԲԸ-ի տնօրենի 18.11.2010 թվականի թիվ 01-14/2362 գրության համաձայն՝ ներկայացրել են Մայրան Շահբազյանի 1982-1983 թվականների, 1985-1987 թվականների աշխատավարձի հաշվարկման անձնական քարտերի պատճենները, իսկ 1984 թվականի և 1988 թվականի գրառումները չեն պահպանվել (գ. թ. 44):

6. Նվարդ Զոբյանի, Էլզիկ Ապիկյանի և Նվարդ Գոմիկյանի հայտարարության, Նվարդ Զոբյանի և Նվարդ Գոմիկյանի ցուցմունքների համաձայն՝ Մայրան Շահբազյանը 1976 թվականին ընդունվել է աշխատանքի Երևանի 5-րդ մանկական պոլիկլինիկայում՝ որպես մատենագիր, և մինչև 1988 թվականն աշխատել է այնտեղ (գ. թ. 14):

7. ՀՀ Երևանի «Սուրբ Գրիգոր Լուսավորիչ» բժշկական կենտրոն ՓԲԸ-ի տնօրենի 18.11.2010 թվականի թիվ 01-14/1688 գրության և դրան կից ներկայացված աշխատավարձի անձնական քարտերի պատճենների համաձայն՝ Մայրան Շահբազյանը 1982-1983, 1985-1987 թվականներին ստացել է աշխատավարձ, իսկ 1984 և 1988 թվականների գրառումները չեն պահպանվել (գ. թ. 44-46):

8. Մայրան Շահբազյանի աշխատավարձի հաշվարկման անձնական քարտում առկա է գրառում այն մասին, որ Մայրան Շահբազյանն աշխատանքի է ընդունվել 23.08.1976 թվականին (գ. թ. 45-46):

4. Վճռարեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը

Քննելով վճռարեկ բողոքը նշված հիմքի սահմաններում՝ Վճռարեկ դատարանը գտնում է, որ այն հիմնավոր է հետևյալ պարձառաբանությամբ.

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 53-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ դատարանը յուրաքանչյուր ապացույց գնահատում է գործում եղած բոլոր ապացույցների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտության վրա հիմնված ներքին համոզմամբ:

Սույն գործն առաջին ատյանի դատարանում քննության պահին գործող «Պետական կենսաթոշակների մասին» ՀՀ օրենքի 47-րդ հոդվածի համաձայն՝ մինչև նույն օրենքն ուժի մեջ մտնելը և անհատական հաշվառման բազայի ձևավորումն ապահովագրված անձի ունեցած աշխատանքային ստաժը հաստատող հիմնական փաստաթուղթն աշխատանքային գրքույկն է, իսկ 1992 թվականի հունվարից սկսած՝ նաև սոցիալական վճարներ կատարելը կամ աշխատավարձ ստանալը հաստատող փաստաթուղթը: Աշխատանքային գրքույկի կամ դրանում համապատասխան գրառումների կամ ստաժը հաստատող՝ օրենսդրությամբ սահմանված այլ փաստաթղթերի բացակայության դեպքում աշխատանքային ստաժը հաստատվում է արխիվային տեղեկանքով, իսկ դրա բացակայության դեպքում՝ դատական կարգով:

Վերոնշյալ հոդվածից հետևում է, որ աշխատանքային գրքույկի կամ դրանում համապատասխան գրառումների կամ ստաժը հաստատող այլ փաստաթղթերի բացակայության դեպքում աշխատանքային ստաժը հաստատվում է արխիվային տեղեկանքով, իսկ եթե նշված փաստաթղթերը բացակայում են, ապա՝ դատական կարգով:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 47-րդ հոդվածի համաձայն՝ գործով ապացույցներ են սույն օրենսգրքով և այլ օրենքներով նախատեսված կարգով ձեռք բերված տեղեկությունները, որոնց հիման վրա դատարանը պարզում է գործին մասնակցող անձանց պահանջները և առարկությունները հիմնավորող, ինչպես նաև վեճի լուծման համար նշանակություն ունեցող այլ հանգամանքների առկայությունը կամ բացակայությունը: Այդ տեղեկությունները հաստատվում են գրավոր և իրեղեն ապացույցներով. փորձագետների եզրակացություններով. վկաների ցուցմունքներով. գործին մասնակցող անձանց ցուցմունքներով:

Սույն գործում առկա ՀՀ Երևանի «Սուրբ Գրիգոր Լուսավորիչ» բժշկական կենտրոն ՓԲԸ-ի տնօրենի 18.11.2010 թվականի թիվ 01-14/1688 գրության և դրան կից ներկայացված աշխատավարձի անձնական քարտերի պատճենների համաձայն՝ Մայրան Շահբազյանը 1982-1983, 1985-1987 թվականներին ստացել է աշխատավարձ, Նվարդ Զոբյանի, Էլզիկ Ասիկյանի և Նվարդ Գոմիկյանի հայտարարության, Նվարդ Զոբյանի և Նվարդ Գոմիկյանի ցուցմունքների համաձայն՝ Մայրան Շահբազյանը 1976 թվականին ընդունվել է աշխատանքի Երևանի 5-րդ մանկական պոլիկլինիկայում որպես մատենագիր և մինչև 1988 թվականն աշխատել է այնտեղ, ինչպես նաև Մայրան Շահբազյանի աշխատավարձի հաշվարկման անձնական քարտում առկա է գրառում այն մասին, որ Մայրան Շահբազյանն աշխատանքի է ընդունվել 23.08.1976 թվականին:

Սույն գործով Վերաքննիչ դատարանը, դատական ակտը թողնելով օրինական ուժի մեջ, պատճառաբանել է, որ Մայրան Շահբազյանի՝ 1976 թվականից մինչև 1988 թվականը Երևանի 5-րդ մանկական պոլիկլինիկայում որպես մատենագիր աշխատելու փաստը հավաստող որևէ պատշաճ ապացույց գործում առկա չէ:

Մինչդեռ, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Վերաքննիչ դատարանը, հաստատված համարելով, որ Դատարանը կատարել է գործում առկա բոլոր ապացույցների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտություն և գնահատում, անտեսել է Դատարանի կողմից ՀՀ Երևանի «Սուրբ Գրիգոր Լուսավորիչ» բժշկական կենտրոն ՓԲԸ-ի տնօրենի 18.11.2010 թվականի թիվ 01-14/1688 գրությունը, Մայրան Շահբազյանի աշխատավարձի հաշվարկման անձնական քարտը, Նվարդ Զոբյանի, Էլզիկ Ասիկյանի և Նվարդ Գոմիկյանի հայտարարությունը, Նվարդ Զոբյանի և Նվարդ Գոմիկյանի ցուցմունքները և չի նշել այդ ապացույցների մերժման հիմքերը:

Հիմք ընդունելով վերոգյալը՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ ստորադաս դատարանների կողմից չի կատարվել գործում առկա բոլոր ապացույցների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտություն:

Վճռաբեկ դատարանն իր որոշումներում անդրադարձել է դատական ակտերի հիմնավորվածության հարցին (*տե՛ս Անժելյա Ղազարյանը, Արսիկ և Արմինե Գասպարյաններն ընդդեմ Շուշանիկ Սարգսյանի, Ոսկեհայր, Նունե, Հրանուշ Գասպարյանների՝ ժառանգական գույքը ժառանգների միջև բաժանելու պահանջի մասին ՀՀ վճռաբեկ դատարանի 25.12.2007 թվականի որոշում, քաղաքացիական գործ թիվ 3-1843(ՎԴ)*): Ուստի սույն որոշմամբ կրկին չի անդրադառնում տվյալ հարցին:

Նման պայմաններում Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Վերաքննիչ դատարանի որոշումը հիմնավոր չէ:

Այսպիսով, վերը նշված հիմքի առկայությունը Վճռաբեկ դատարանը դիտում է բավարար՝ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 227-րդ և 228-րդ հոդվածների ուժով Վերաքննիչ դատարանի 01.03.2011 թվականի որոշումը բեկանելու համար:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 240-241²-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

ՈՐՈՇԵՑ

1. Վճռաբեկ բողոքը բավարարել: Բեկանել ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 01.03.2011 թվականի որոշումը և գործն ուղարկել Երևանի Ավան և Նոր Նորք վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին աստիճանի դատարան՝ նոր քննության:

2. Պետական տուրքի բաշխման հարցին անդրադառնալ գործի նոր քննության ընթացքում:

3. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

*ՆԱԽԱԳԱՀՈՂ՝ ստորագրություն
ԴԱՏԱՎՈՐՆԵՐ՝ ստորագրություններ*

ՏՆՏԵՍԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական
դատարանի որոշում
Քաղաքացիական գործ թիվ ՏԴ1/0214/02/10
Նախագահող դատավոր՝ Գ. Մատինյան
Դատավորներ՝ Լ. Գրիգորյան
Ա. Թումանյան

Քաղաքացիական գործ թիվ ՏԴ1/0214/02/10
2011թ.

ՈՐՈՇՈՒՄ

ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քաղաքացիական
և վարչական պալատը (այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

Նախագահությամբ

մասնակցությամբ դատավորներ

Ե. ԽՈՒՆԴԿՎԱՐՅԱՆԻ

Վ. ԱՐԵԼՅԱՆԻ

Վ. ԱՎԱՆԵՍՅԱՆԻ

Մ. ԴՐՄԵՅԱՆԻ

Գ. ՀԱԿՈՐՅԱՆԻ

Տ. ՊԵՏՐՈՍՅԱՆԻ

Ե. ՍՈՂՈՍՏՈՆՅԱՆԻ

2011 թվականի հուլիսի 01-ին

դռնբաց դատական նիստում, քննելով Ռաֆիկ Այվազյանի վճռաբեկ բողոքը
ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 18.11.2010 թվականի որոշման դեմ՝ ըստ
հայցի Ռաֆիկ Այվազյանի ընդդեմ ՀՀ Տավուշի մարզի Լուսաձոր համայնքի ղեկավար
Սուրեն Քոչարյանի (այսուհետ՝ Համայնքի ղեկավար) սեփականության իրավունքը
ձանաչելու պահանջի մասին,

ՊԱՐԶԵՑ

1. Գործի դատավարական նախապատմությունը

Դիմելով դատարան՝ Ռաֆիկ Այվազյանը պահանջել է ձանաչել սեփականության
իրավունքը ՀՀ Տավուշի մարզի Լուսաձոր համայնքում գտնվող անասնապահական
համալիրի նկատմամբ:

ՀՀ Տավուշի մարզի ընդհանուր իրավասության դատարանի (այսուհետ՝
Դատարան) 03.09.2010 թվականի վճռով հայցը մերժվել է:

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի (այսուհետ՝ Վերաքննիչ
դատարան) 18.11.2010 թվականի որոշմամբ Դատարանի 03.09.2010 թվականի վճռի դեմ
Ռաֆիկ Այվազյանի վերաքննիչ բողոքը մերժվել է, և Դատարանի վճիռը թողնվել է
օրինական ուժի մեջ:

Սույն գործով վճռաբեկ բողոք է ներկայացրել Ռաֆիկ Այվազյանը:

Վճռաբեկ բողոքի պատասխան է ներկայացրել Համայնքի ղեկավարը:

2. Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը

Սույն վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

Վերաքննիչ դատարանը կիրառել է ՀՀ կառավարության 28.09.2005 թվականի թիվ 1786-Ն որոշումը, «Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին» ՀՀ օրենքի 23-րդ հոդվածը, որոնք չպետք է կիրառեր, խախտել է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 53-րդ հոդվածի և 220-րդ հոդվածի 5-րդ կետի պահանջները:

Բողոք բերած անձը նշված պնդումը պարզապես անհիմն է հետևյալ փաստարկներով.

Վերաքննիչ դատարանը բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտման հիման վրա չի գնահատել գործում առկա բոլոր ապացույցները: Մասնավորապես, այն, որ Լուսաձորի հողի սեփականաշնորհման և բարեփոխումների հանձնաժողովի 12.03.1992 թվականի նիստում կայացված որոշմամբ Լուսաձորի տնտեսությանը պատկանող երկու տիպային ֆերման, խոտի նավեւը, փայտյա նավեւը և երկու հատ սիլոսային խրամատները սեփականաշնորհվել են Ռաֆիկ Այվազյանին: Սեփականաշնորհված գույքի ընդհանուր արժեքը կազմել է ընդհանուր 216.230 ռուբլի: Մինչդեռ, Վերաքննիչ դատարանը կիրառել է ՀՀ կառավարության 28.09.2005 թվականի թիվ 1786-Ն որոշումը և հաստատված է համարել այն հանգամանքը, որ Ռաֆիկ Այվազյանին սեփականաշնորհված 2 հատ տիպային ֆերմայի, խոտի և փայտյա շվաքարանների, ինչպես նաև դրանց սպասարկման համար նախատեսված տարածքների նկատմամբ սեփականության իրավունքը փոխանցվել է Տավուշի մարզի Լուսաձոր համայնքին և համայնքային սեփականություն է՝ անտեսելով այն հանգամանքը, որ Ռաֆիկ Այվազյանի սեփականության իրավունքը վիճելի գույքի նկատմամբ ծագել է դեռևս 1992 թվականին:

Վերոգրյալի հիման վրա բողոք բերած անձը պահանջել է բեկանել Վերաքննիչ դատարանի 18.11.2010 թվականի որոշումը:

2.1 Վճռաբեկ բողոքի պատասխանի հիմնավորումները

Վերաքննիչ դատարանը, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 53-րդ հոդվածի համաձայն, գործում առկա յուրաքանչյուր ապացույց գնահատել է գործի բոլոր ապացույցների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտության վրա հիմնված ներքին համոզմամբ, պարզել է վերաքննիչ բողոքի քննության համար նշանակություն ունեցող փաստերը և կայացրել է հիմնավորված որոշում: Մինչդեռ, Ռաֆիկ Այվազյանը չի ներկայացրել որևէ ապացույց այն մասին, որ «Գյուղացիական և գյուղացիական կոլեկտիվ տնտեսությունների մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի համաձայն՝ վիճելի գույքն աճուրդային կարգով գնել է: «Միաժամանակ հայտնում ենք, որ Ռաֆիկ Այվազյանը դատարանում օգտագործել է կեղծ փաստաթղթեր, որոնց մասին համայնքապետարանը 18.03.2011թ-ի թիվ 25 գրությամբ դիմել է ՀՀ Տավուշի մարզի դատախազ Ա. Մանթաշյանին՝ խնդրելով կատարել անհրաժեշտ ուսումնասիրություններ և ստուգումներ Ռաֆիկ Այվազյանի կողմից ներկայացված փաստաթղթերի վավերականությունը ճշտելու նպատակով և ձեռնարկել համապատասխան միջոցառումներ»:

3. Վճուարեկ բողոքի քննության համար նշանակություն ունեցող փաստերը

Վճուարեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունի հետևյալ փաստը՝

ՀՀ ազգային արխիվ Տավուշի մարզային մասնաճյուղի 24.12.2007 թվականի «Լուսաձորի հողի սեփականաշնորհման և բարեփոխումների հանձնաժողովի 12.03.1992 թվականի նիստի թիվ 2 արձանագրությունից» քաղվածքի համաձայն՝ Լուսաձորի տնտեսությանը պատկանող 2 տիպային ֆերման, խտտի փայտյա նավենները, 2 հատ սիլոսի խրամատները սեփականաշնորհվել է Լուսաձոր գյուղի բնակիչ Ռաֆիկ Այվազյանին (գ.թ. 17):

4. Վճուարեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումները

Քննելով վճուարեկ բողոքը վերը նշված հիմքի սահմաններում Վճուարեկ դատարանը գտնում է, որ վճուարեկ բողոքը հիմնավոր է մասնակիորեն հետևյալ պատճառաբանությամբ.

22.01.1991 թվականին ընդունված «Գյուղացիական և գյուղացիական կոլեկտիվ տնտեսությունների մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածի համաձայն՝ գյուղատնտեսական հողերը քաղաքացիներին որպես սեփականություն տրամադրվում են մասնակի հատուցմամբ, որի գումարը կարող է վճարվել նաև միանվագ կարգով:

Նույն հոդվածի 3-րդ պարբերության համաձայն՝ հողամասերի հատկացման վերաբերյալ հարցերի լուծման համար կազմվում են հողային բարեփոխումների և սեփականաշնորհման կենտրոնական, ճյուղային, շրջանային և տեղական հանձնաժողովներ: Հողային բարեփոխումների և սեփականաշնորհման կենտրոնական հանձնաժողովը կազմվում է Հայաստանի Հանրապետության Նախարարների խորհրդի կողմից: Մյուս հանձնաժողովները կազմվում են Հայաստանի Հանրապետության Նախարարների խորհրդի կողմից սահմանվող կարգով: Հողային բարեփոխումների և սեփականաշնորհման կենտրոնական հանձնաժողովի որոշումը վերջնական է և կարող է փոփոխվել կամ վերացվել միայն դատական կարգով:

Վերոնշյալ հոդվածից հետևում է, որ դրանով կարգավորվում է գյուղատնտեսական հողերը քաղաքացիներին որպես սեփականություն մասնակի հատուցմամբ տրամադրելու պայմանները, որի կատարման համար կազմվել են հողային բարեփոխումների և սեփականաշնորհման կենտրոնական, ճյուղային, շրջանային և տեղական հանձնաժողովներ:

Նույն օրենքի 8-րդ հոդվածի համաձայն՝ լուծարվող կոլտնտեսությունների, խորհտնտեսությունների և գյուղատնտեսական այլ ձեռնարկությունների հիմնական ֆոնդերի իրացումն առավելապես կատարվում է դրանց տեխնոլոգիական ամբողջականության պահպանմամբ: Անասնապահական շինությունները, տեխնիկական միջոցները, տեխնոլոգիական համալիրները և մյուս գույքը, եթե որոշում է ընդունվում դրանք բաժանելու մասին, իրացվում են **աճուրդային վաճառքի կարգով**, առաջին հերթին տվյալ բնակավայրի բնակիչներին կամ նրանց խմբերին: Աճուրդը հայտարարելուց հետո երեք ամսվա ընթացքում հիշյալ միջոցները և մյուս գույքը չիրացվելու դեպքում դրանք անհատույց տրամադրվում են պատգամավորների համապատասխան տեղական խորհուրդների տնօրինությանը: Լուծարվող կոլտնտեսությունների և խորհտնտեսությունների հիմնական ֆոնդերի և մյուս գույքի իրացումը կատարվում է համապատասխան **լուծարքային հանձնաժողովների կողմից**: Լուծարվող կոլտնտեսությունների և խորհտնտեսությունների ընդհանուր

նշանակության սոցիալ-մշակութային և կոմունալ օբյեկտներն իրենց գույքով անհատույց հանձնվում են պատգամավորների համապատասխան խորհրդին: Լուծարվող կոլտնտեսությունների և խորհտնտեսությունների հիմնական ֆոնդերի և այլ գույքի իրացումից գոյացած միջոցների բաշխման կարգը սահմանում է Հայաստանի Հանրապետության Նախարարների խորհուրդը:

Նշված հոդվածը կարգավորում է լուծարվող կոլտնտեսությունների հիմնական ֆոնդերի (անասնազվի, տեխնիկական միջոցների, տեխնոլոգիական համալիրների և այլն) իրացման պայմանները՝ նախատեսելով պարտադիր պահանջ, որ այն պետք է կատարվի համապատասխան լուծարքային հանձնաժողովների կողմից՝ աճուրդային վաճառքի կարգով:

Սույն գործով Ռաֆիկ Այվազյանը, որպես պահանջը հիմնավորող ապացույց վկայակոչել է 12.03.1992 թվականին Լուսաձոր համայնքի **հողի սեփականաշնորհման և բարեփոխումների հանձնաժողովի արձանագրությունը**, որի համաձայն՝ Լուսաձորի տնտեսությանը պատկանող 2 տիպային ֆերման, խտտի փայտյա նավեսները, 2 հատ սիրուխ խրամատները սեփականաշնորհվել է Ռաֆիկ Այվազյանին:

Վերաքննիչ դատարանը Ռաֆիկ Այվազյանի վերաքննիչ բողոքի մերժման հիմքում դրել է այն հանգամանքը, որ «ՀՀ կառավարության 2005 թվականի սեպտեմբերի 28-ի՝ «Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Լուսաձորի գյուղական համայնքի վարչական սահմանների նկարագիրը հաստատելու և Լուսաձորի գյուղական համայնքի վարչական սահմաններում գտնվող պետական սեփականություն հանդիսացող **հողամասերն** անհատույց սեփականության իրավունքով համայնքին փոխանցելու մասին» թիվ 1786-Ն որոշմամբ ի թիվս այլ գույքի, Ռաֆիկ Այվազյանին սեփականաշնորհված 2 հատ տիպային ֆերմայի, խտտի և փայտյա շվաքարանների, ինչպես նաև դրանց ապասարկման համար նախատեսված տարածքների նկատմամբ սեփականության իրավունքը փոխանցվել է Տավուշի մարզի Լուսաձոր համայնքին և հանդիսանում է համայնքային սեփականություն», և գտել է, որ «գործում առկա չէ հողի սեփականաշնորհման և բարեփոխումների հանձնաժողովի որևէ որոշում վիճելի գույքը Ռաֆիկ Այվազյանին սեփականաշնորհելու վերաբերյալ, առկա չէ նաև վիճելի գույքի համար հայցվորի կողմից կատարված վճարման վերաբերյալ որևէ ապացույց»:

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ 22.01.1991 թվականին ընդունված «Գյուղացիական և գյուղացիական կոլեկտիվ տնտեսությունների մասին» ՀՀ օրենքը վերաբերում է գյուղատնտեսական հողերը քաղաքացիներին որպես սեփականություն տրամադրելու կարգին, ինչպես նաև լուծարվող կոլտնտեսությունների, խորհտնտեսությունների և գյուղատնտեսական այլ ձեռնարկությունների հիմնական ֆոնդերի իրացման կարգին: **Գյուղացիական և գյուղացիական կոլեկտիվ տնտեսությունների հողամասերի տրամադրման վերաբերյալ հարցերի լուծման համար կազմված հողային բարեփոխումների և սեփականաշնորհման կենտրոնական, ժյուրային, շրջանային և տեղական հանձնաժողովներն օրենքով սահմանված կարգով իրավասու էին կատարել միայն հողհատկացումներ սեփականաշնորհման ձևով, իսկ լուծարվող կոլտնտեսությունների և խորհտնտեսությունների հիմնական ֆոնդերի և մյուս գույքի իրացումը պետք է կատարվեր միայն համապատասխան լուծարքային հանձնաժողովների կողմից**: Սույն վեճը վերաբերում է Լուսաձորի կոլտնտեսությանը պատկանող անասնապահական շինությունների իրացման, այլ ոչ թե պետական սեփականություն

հանդիսացող հողամասերի իրացման կարգին: Վերոնշյալից հետևում է, որ հողային բարեփոխումների և սեփականաշնորհման հանձնաժողովի որոշումը սույն վեճի լուծման համար չի կարող առաջացնել որևէ իրավական հետևանք, քանի որ լուծարվող կոլտնտեսությունների և խորհտնտեսությունների հիմնական ֆոնդերի և մյուս գույքի իրացման լիազորություն ունեցել են միայն **լուծարքային հանձնաժողովները**, այն էլ աճուրդային վաճառքի կարգով:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 48-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ գործին մասնակցող յուրաքանչյուր անձ պետք է ապացուցի իր վկայակոչած փաստերը: Նույն հոդվածի 2-րդ կետի համաձայն՝ գործի լուծման համար էական նշանակություն ունեցող ապացուցման ենթակա փաստերը որոշում է դատարանը՝ գործին մասնակցող անձանց պահանջների և առարկությունների հիման վրա, իսկ սույն հոդվածի 6-րդ կետի համաձայն՝ եթե բոլոր ապացույցների հետազոտումից հետո վիճելի է մնում փաստի առկայությունը կամ բացակայությունը, ապա դրա բացասական հետևանքները կրում է այդ փաստի ապացուցման պարտականությունը կրող կողմը:

Վճռաբեկ դատարանն իր՝ սախկինում կայացրած որոշումներում անդրադարձել է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 48-րդ հոդվածի իրավական վերլուծությանը:

Մասնավորապես Վճռաբեկ դատարանը նշել է, որ յուրաքանչյուր գործով կողմերի միջև ապացուցման պարտականությունը ձիշտ բաշխելու համար դատարանն առաջին հերթին պետք է պարզի յուրաքանչյուր գործի լուծման համար էական նշակություն ունեցող փաստերը՝ ելնելով գործին մասնակցող անձանց պահանջներից և առարկություններից: Ընդ որում, գործի լուծման համար էական նշանակություն ունեցող փաստի առկայությունը կամ բացակայությունը վիճելի լինելու դեպքում դրա բացասական հետևանքները կրում է այդ փաստի ապացուցման պարտականությունը կրող կողմը (*տես՝ Էդգար Մարկոսյանի և Զարուհի Գևորգյանի հայցն ընդդեմ Սեդա Սարգսյանի՝ գրավադրված գույքն արգելանքից հանելու պահանջի մասին, և Սեդա Սարգսյանի հակընդդեմ հայցն ընդդեմ Էդգար Մարկոսյանի և Զարուհի Գևորգյանի՝ գումարի բռնագանձման և բռնագանձումը գրավի առարկայի վրա տարածելու պահանջների մասին քաղաքացիական գործով Վճռաբեկ դատարանի 13.02.2009 թվականի թիվ ԵԱՆԿ/0479/02/08 որոշումը*):

Վերոնշյալից հետևում է, որ սույն գործով դատարանի կողմից պարզման ենթակա է, իսկ հայցվորի կողմից ապացուցման ենթակա է վեճի առարկա անասնապահական շինությունները՝ որպես լուծարվող տնտեսությանը պատկանող գույք, օրենքով սահմանված կարգով Ռաֆիկ Այվազյանին աճուրդային կարգով վաճառելու փաստը:

Հիմք ընդունելով վերոգրյալը, Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ ստորադաս դատարանները վեճի առարկա գույքը հայցվորին ի սեփականություն հանձնելու փաստը հիմնավորելու համար կիրառել են ՀՀ կառավարության 2005 թվականի սեպտեմբերի 28-ի՝ «Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Լուսաձորի գյուղական համայնքի վարչական սահմանների նկարագիրը հաստատելու և Լուսաձորի գյուղական համայնքի վարչական սահմաններում գտնվող պետական սեփականություն հանդիսացող հողամասերն անհատույց սեփականության իրավունքով համայնքին փոխանցելու մասին» թիվ 1786-Ն որոշումը, որը սույն գործով կիրառելի չէ:

Այսպիսով, վճռաբեկ բողոքի հիմքի առկայությունը Վճռաբեկ դատարանը դիտում է բավարար՝ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 227-րդ հոդվածի համաձայն Վերաքննիչ դատարանի որոշումը բեկանելու համար:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 240-241²-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

ՈՐՈՇԵՑ

1. Վճռաբեկ բողոքը բավարարել մասնակիորեն: Բեկանել ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 18.11.2010 թվականի որոշումը և գործն ուղարկել ՀՀ Տավուշի մարզի ընդհանուր իրավասության առաջին աստիճանի դատարան՝ նոր քննության:

2. Պետական տուրքի բաշխման հարցին անդրադառնալ գործի նոր քննության ընթացքում:

3. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

*ՆԱԽԱԳԱՀՈՂ՝ ստորագրություն
ԴԱՏԱՎՈՐՆԵՐ՝ ստորագրություններ*

ՀՈՂԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆՔ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական Քաղաքացիական գործ թիվ ԵԿԴ/2343/02/08
դատարանի որոշում 2011թ.
Քաղաքացիական գործ թիվ ԵԿԴ/2343/02/08
Նախագահող դատավոր՝ Ն. Տավարացյան
Դատավորներ՝ Ս. Միքայելյան
Դ. Խաչատրյան

ՈՐՈՇՈՒՄ ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Հայաստանի Հանրապետության Վճռաբեկ դատարանի քաղաքացիական
և վարչական պալատը (այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

*նախագահությամբ
մասնակցությամբ դատավորներ*

Ե. ԽՈՒՆԴԿԱՐՅԱՆԻ
Ե. ՍՈՂՈՍՈՆՅԱՆԻ
Վ. ԱՔԵԼՅԱՆԻ
Ս. ԱՆՏՈՆՅԱՆԻ
Վ. ԱՎԱՆԵՍՅԱՆԻ
Ա. ԲԱՐՍԵՂՅԱՆԻ
Մ. ԴՐՄԵՅԱՆԻ
Գ. ՀԱԿՈՔՅԱՆԻ
Է. ՀԱՅՐԻՅԱՆԻ
Տ. ՊԵՏՐՈՍՅԱՆԻ

2011 թվականի մայիսի 27-ին

դռնբաց դատական նիստում, քննելով Հմայակ Մարտիրոսյանի վճռաբեկ բողոքը
ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 03.11.2010 թվականի որոշման դեմ
ըստ Հմայակ Մարտիրոսյանի հայցի ընդդեմ Արարատ և Արտաշես Մկրտչյանների,
Քնարիկ Բաբայանի, ՀՀ Կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի
պետական կոմիտեի (այսուհետ՝ Կոմիտե) Կենտրոն տարածքային ստորաբաժանման
(այսուհետ՝ Կադաստր) ընդհանուր հողամասում Հմայակ Մարտիրոսյանի բաժինը
որոշելու, գույքի նկատմամբ պետական գրանցում կատարելուն պարտավորեցնելու
պահանջների մասին, և ըստ Արարատ և Արտաշես Մկրտչյանների, Քնարիկ
Բաբայանի հակընդդեմ հայցի ընդդեմ Հմայակ Մարտիրոսյանի՝ դրամական
փոխհատուցման դիմաց Հմայակ Մարտիրոսյանի բաժնային սեփականության
իրավունքը դադարեցնելու պահանջի մասին,

ՊԱՐԶԵՑ

1. Գործի դատավարական նախապատմությունը

Դիմելով դատարան՝ Հմայակ Մարտիրոսյանը պահանջել է որոշել իր բաժինը Երևանի Ալիխանյան փողոցի 1-ին փակուղու թիվ 7^ա հասցեում գտնվող ընդհանուր հողամասից 1/2 չափով, առանձնացնել այն, վերադարձնել նշված գույքն Արարատ և Արտաշես Մկրտչյանների ապօրինի տիրապետումից, պարտավորեցնել Կադաստրին գրանցել իր սեփականության իրավունքը վերոգրյալ հասցեի տան և հողամասի՝ իրեն պատկանող մասի նկատմամբ:

Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ համայնքների ընդհանուր իրավասության դատարանի 18.04.2008 թվականի վճռով հայցը բավարարվել է մասնակիորեն. վճռվել է Արարատ և Արտաշես Մկրտչյանների ապօրինի տիրապետումից ազատել Հմայակ Մարտիրոսյանին սեփականության իրավունքով պատկանող Երևանի Ալիխանյան փողոցի 1-ին նրբանցքի (փակուղու) թիվ 7^ա հասցեում գտնվող տան 17քմ մակերեսով սենյակը, 4,8քմ մակերեսով օժանդակ շինությունը և նկուղը (ըստ Կադաստրի գրության՝ 21,9քմ մակերեսով բնակելի տունը)՝ այն թողնելով Հմայակ Մարտիրոսյանի տիրապետմամբ: Հայցը մնացած մասով մերժվել է:

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 25.07.2008 թվականի որոշմամբ Հմայակ Մարտիրոսյանի վերաքննիչ բողոքը բավարարվել է մասնակիորեն. որոշվել է Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ համայնքների ընդհանուր իրավասության դատարանի 18.04.2008 թվականի վճիռն ընդհանուր հողամասում Հմայակ Մարտիրոսյանի բաժինը որոշելու և առանձնացնելու, գույքի նկատմամբ պետական գրանցում կատարելուն պարտավորեցնելու պահանջների մասով բեկանել և գործն այդ մասով ուղարկել նոր քննության:

Հակընդդեմ հայցով դիմելով դատարան՝ Արարատ և Արտաշես Մկրտչյանները, Քնարիկ Բաբայանը պահանջել են իրենց կողմից տրամադրվող դրամական փոխհատուցման դիմաց դադարեցնել Հմայակ Մարտիրոսյանի բաժնային սեփականության իրավունքը Երևանի Ալիխանյան փողոցի 1-ին նրբանցքի (փակուղու) թիվ 7^ա հասցեում գտնվող անշարժ գույքի նկատմամբ:

Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի (այսուհետ՝ Դատարան) 26.07.2010 թվականի վճռով հայցը բավարարվել է մասնակիորեն. վճռվել է Երևանի Վոդոյանովի (այժմ Ալիխանյան) փողոցի 1-ին փակուղու թիվ 7^ա հասցեում գտնվող հողամասի նկատմամբ (փաստացի առկա է 390քմ մակերես) բաժնային սեփականությունում Հմայակ Մարտիրոսյանի բաժինը սահմանել 1/2 չափով, պարտավորեցնել Կոմիտեին գրանցելու Հմայակ Մարտիրոսյանի բաժնային սեփականության իրավունքը նշված մասի և 05.04.1974 թվականի ըստ կտակի ժառանգության իրավունքի թիվ 0-5 վկայագրով ժառանգած նույն հասցեում գտնվող տան 17քմ մակերեսով բնակտարածության, սենյակին կից պատշգամբի և պատշգամբի տակ գտնվող նկուղի նկատմամբ: Գործի վարույթը սեփականության իրավունքով պատկանող բաժինն առանձնացնելու պահանջի մասով կարճվել է: Հակընդդեմ հայցը մերժվել է:

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի (այսուհետ՝ Վերաքննիչ դատարան) 03.11.2010 թվականի որոշմամբ Կոմիտեի, ինչպես նաև Արարատ և Արտաշես Մկրտչյանների, Քնարիկ Բաբայանի վերաքննիչ բողոքները բավարարվել են մասնակիորեն. որոշվել է մասնակիորեն բեկանել և փոփոխել Դատարանի

26.07.2010 թվականի վճիռը՝ հայցը բավարարել մասնակիորեն՝ պարտավորեցնել Կոմիտեին գրանցելու Հնայակ Մարտիրոսյանի բաժնային սեփականության իրավունքը Երևանի Վոդոյայանովի (այժմ Ալիխանյան) փողոցի 1-ին փակուղու թիվ 7^ա հասցեում գտնվող հողամասի 1/6 մասի և 17,1քմ մակերեսով բնակելի սենյակի ու նկուղի նկատմամբ: Հայցը մնացած մասով մերժվել է: Վճիռը մնացած մասով թողնվել է օրինական ուժի մեջ:

Սույն գործով վճռաբեկ բողոք է ներկայացրել Հնայակ Մարտիրոսյանը:

Վճռաբեկ բողոքի պատասխան են ներկայացրել Արարատ և Արտաշես Սկրտչյանները, Քնարիկ Բարայանը:

2. Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը

Սույն վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

Վերաքննիչ դատարանը խախտել է ՀՀ Սահմանադրության 8-րդ հոդվածի 1-ին մասը, 31-րդ հոդվածի 1-ին, 2-րդ մասերը, «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի 13.1-րդ հոդվածը, «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի 11-րդ արձանագրության 1-ին հոդվածի 1-ին պարբերությունը, ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին կետը, 163-րդ հոդվածի 1-ին կետի 1-ին պարբերությունը, 2-րդ կետը, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 48-րդ հոդվածի 1-ին կետը, 52-րդ հոդվածի 2-րդ կետը, 53-րդ հոդվածի 1-ին կետը, չի կիրառել ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 199-րդ հոդվածի 2-րդ կետը, ՀՍՍՀ հողային օրենսգրքի 84-րդ հոդվածը, որոնք պետք է կիրառեր, սխալ է մեկնաբանել ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 190-րդ հոդվածի 1-ին կետը:

Բողոք բերած անձը նշված պնդումը պարձառաբանել է հետևյալ փաստարկներով.

Վերաքննիչ դատարանը չի կատարել գործում եղած ապացույցների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտություն:

Այսպես՝ Երևանի 26 Կոմիսարների շրջանի ժողդատարանի 15.02.1967 թվականի թիվ 2/52 վճռով Աշոտ Սկրտչյանը և Աստղիկ Մարտիրոսյանն ամուսնալուծվել են: Նույն վճռով լուծվել է նաև վերջիններիս համատեղ կյանքի ընթացքում ձեռք բերված բնակարանի բաժանման հարցը, այն է՝ 53քմ մակերեսով բնակելի սենյակներից Աստղիկ Մարտիրոսյանին է հատկացվել 17,1քմ մակերեսով սենյակը, 4,8քմ մակերեսով պատշգամբը և նկուղը, իսկ մնացած 36քմ մակերեսով բնակելի սենյակը և օժանդակ տարածությունները թողնվել են Աշոտ Սկրտչյանին: Աստղիկ Մարտիրոսյանի մահից հետո՝ 05.04.1974 թվականին, Հնայակ Մարտիրոսյանը ստացել է ըստ կտակի ժառանգության իրավունքի թիվ 0-5 վկայագիրը, որի հիման վրա Երևանի քաղտվետի բնակարանային տնտեսության վարչության 19.12.1955 թվականի թիվ XXX տոմարի թիվ 278 գույքային թերթում 16.04.1974 թվականին կատարվել է համապատասխան գրառում, որի արդյունքում էլ 11.09.1974 թվականին Հնայակ Մարտիրոսյանին տրվել է Երևանի Վոդոյայանովի (այժմ Ալիխանյան) փողոցի 1-ին փակուղու թիվ 7^ա հասցեում գտնվող տան 17քմ մակերեսով սենյակի, սենյակին կից պատշգամբի և պատշգամբի տակ գտնվող նկուղի, ինչպես նաև նույն հասցեում գտնվող հողամասի թիվ 23418 հատակագիծը: Կադաստրի գրություններով և տեխնիկական եզրակացությամբ նույնպես հաստատվում է, որ կադաստրային գործի տվյալների համաձայն՝ Երևանի

Ալիխանյան փողոցի 1-ին փակուղու թիվ 7^ա հասցեում գտնվող հողամասն ընդհանուր սեփականություն է:

Մինչդեռ, Վերաքննիչ դատարանը պատճառաբանել է, որ Հնայակ Մարտիրոսյանին անցել է վիճելի հողամասի օգտագործման իրավունքն իր ունեցած բաժնետնասին համամասնորեն, որպիսի պատճառաբանությունն անընդունելի է, քանի որ ՀՄՍՀ հողային օրենսգրքով հողամասերը պետական սեփականություն էին, դրանք քաղաքացիներին տրվում էին օգտագործման իրավունքով, և դրանց նկատմամբ սեփականության իրավունքի բաժանում տեղի ունենալ չէր կարող:

Ավելին, Վերաքննիչ դատարանն անտեսել է, որ ինչպես Աստղիկ Մարտիրոսյանին, այնպես էլ նրա ժառանգության ընդունումից հետո Հնայակ Մարտիրոսյանին տրված հատակագծում առկա չէ վիճելի հողամասի օգտագործման բաժանման վերաբերյալ որևէ նշում, և վիճելի հողամասի վրա գտնվող գույքի բաժանումը չէր կարող նշանակել, որ այն տարածվել էր նաև վիճելի հողամասի վրա:

Ինչ վերաբերում է Վերաքննիչ դատարանի այն պատճառաբանությանը, որ Հնայակ Մարտիրոսյանը, կտակի հիման վրա Աստղիկ Մարտիրոսյանից ժառանգելով 21,9քմ մակերեսով գույքը, ժառանգել է նաև վիճելի հողամասի 1/6 մասը, ապա նշված պատճառաբանությունը նույնպես անընդունելի է, քանի որ եթե առկա լիներ վիճելի հողամասի մասի առանձնացման վերաբերյալ համաձայնություն, ապա դեռևս 1974 թվականին Հնայակ Մարտիրոսյանին կտրվեր վիճելի հողամասի առանձնացված հատակագիծ կամ առկա հատակագծում կկատարվեր համապատասխան նշում:

Վերոգրյալի հիման վրա բողոք բերած անձը պահանջել է բեկանել Վերաքննիչ դատարանի 03.11.2010 թվականի որոշումը և օրինական ուժ տալ Դատարանի 26.07.2010 թվականի վճռին:

2.1. Վճռաբեկ բողոքի պատասխանի փաստաթղթերը

Հնայակ Մարտիրոսյանին որպես ժառանգական գույք անցել է միայն ժառանգության բացման պահին նրա իրավանախորդին պատկանող 17քմ մակերեսով սենյակը, սենյակին կից պատշգամբը և պատշգամբի տակ գտնվող նկուղը, իսկ վիճելի հողամասի նկատմամբ օգտագործման իրավունքը չէր կարող փոխանցվել, քանի որ կտակարարն իր գործողություններով այդ իրավունքն ունենալու ցանկություն չի ցուցաբերել և իր մահվան պահին այն փաստացի չի պահպանել:

Ավելին, Հնայակ Մարտիրոսյանը ժառանգության իրավունք ձեռք բերելուց հետո վիճելի հողամասն օգտագործելու և տիրապետելու, ընդհանուր օգտագործման իրավունք ունենալու համար որևէ գործողություն չի իրականացրել, որը նրան իրավունք կտար ՀՀ նախկին հողային օրենսգրքի 9-րդ հոդվածի ուժով դրա նկատմամբ ձեռք բերել սեփականության իրավունք:

Բացի այդ, Երևանի 26 Կոմիսարների շրջանի ժողդատարանի 15.02.1967 թվականի թիվ 2/52 վճռի հիման վրա կատարված գույքի բաժանումից հետո Աստղիկ Մարտիրոսյանին հատկացված 17քմ մակերեսով սենյակը և կից պատշգամբն ունեցել են առանձին մուտք, որը որևէ առնչություն չի ունեցել շինություններից ազատ հողամասի հետ: Այդ հիմքով ևս Հնայակ Մարտիրոսյանը չէր կարող ՀՀ նախկին հողային օրենսգրքի 9-րդ հոդվածի ուժով ձանաչվել իր կողմից չօգտագործվող հողամասի համասեփականատեր:

3. Վճարել քողոքի քննության համար նշանակություն ունեցող փաստերը

Վճարել քողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

1) Երևանի քաղաովետի բնակարանային տնտեսության վարչության 19.12.1955 թվականի թիվ XXX տոմարի թիվ 278 գույքային թերթի համաձայն՝ Երևանի Վոդոայանովի (այժմ՝ Ալիխանյան) փողոցի 1-ին նրբանցքի (փակուղու) թիվ 7^ա հասցեում գտնվող տունը պատկանում է Աշոտ Մկրտչյանին: Նույն գույքային թերթում որպես հիմք նշվել են Երթաղովետի գործկոմի 04.04.1950 թվականի թիվ 7 որոշումը՝ հողամաս հատկացնելու մասին, և Միկոյանի ուսյուվետի կողմից 17.10.1955 թվականին տրված շահագործման ակտը: Նույն գույքային թերթում 24.04.1967 թվականին կատարվել է գրառում այն մասին, որ Երևանի 26 Կոմիսարների շրջանի ժողդատարանի 15.02.1967 թվականի վճռով Երևանի Վոդոայանովի (այժմ՝ Ալիխանյան) փողոցի 1-ին փակուղու թիվ 7^ա հասցեում գտնվող շենքի 17^բ մակերեսով բնակատարածությամբ սենյակը, սենյակին կից պատշգամբը և պատշգամբի տակ գտնվող նկուղը հատկացվել է Աստղիկ Մարտիրոսյանին, իսկ 16.04.1974 թվականին կատարվել է գրառում այն մասին, որ Երևանի 26 Կոմիսարների շրջանի նոտարի 05.04.1974 թվականի ժառանգական իրավունքի թիվ 0-5 վկայագրի հիման վրա Աստղիկ Մարտիրոսյանի մահից հետո նրա գույքի նկատմամբ ժառանգ է Հմայակ Մարտիրոսյանը (**հատոր 1-ին, գ.թ. 19-21**):

2) Երևանի 26 Կոմիսարների շրջանի ժողդատարանը, քննելով ըստ հայցի Աշոտ Մկրտչյանի ընդդեմ Աստղիկ Մարտիրոսյանի՝ բնակարանի և ապահարգանի պահանջների մասին քաղաքացիական գործը, 15.02.1967 թվականի թիվ 2/52 վճռով թույլ է տվել Աշոտ Մկրտչյանին լուծել ամուսնությունն Աստղիկ Մարտիրոսյանի հետ: Նույն վճռով Երևանի Վոդոայանովի (այժմ՝ Ալիխանյան) փողոցի 1-ին փակուղու թիվ 7^ա հասցեում գտնվող շենքից 17^բ բնակատարածությամբ սենյակը հատկացվել է Աստղիկ Մարտիրոսյանին սեփականության իրավունքով: Վերջինիս հատկացվել է նաև այդ սենյակին կից պատշգամբը և պատշգամբի տակ գտնվող նկուղը: Մնացածը թողնվել է Աշոտ Մկրտչյանին՝ իր մոր և տղայի ընտանիքի հետ միասին բնակվելու համար (**հատոր 1-ին, գ.թ. 10-11**):

3) Երևանի 26 Կոմիսարների շրջանի ավագ նոտարի կողմից 05.04.1974 թվականին տրված ըստ կտակի ժառանգության իրավունքի թիվ 0-5 վկայագրի համաձայն՝ Աստղիկ Մարտիրոսյանի՝ մահացած 08.05.1973 թվականին, գույքի նկատմամբ ժառանգ է հանդիսանում Հմայակ Մարտիրոսյանը: Ընդ որում, նկատի է ունեցվել հետևյալ գույքը՝ հանգուցյալի անվամբ տնատիրությունը, որը գտնվում է Երևանի Վոդոայանովի (այժմ՝ Ալիխանյան) փողոցի 1-ին նրբանցքի (փակուղու) թիվ 7^ա հասցեում (**հատոր 1-ին, գ.թ. 9**):

4) Կադաստրի 11.06.2007 թվականի պատասխանով հայտնվել է, որ կադաստրային գործում եղած տվյալների համաձայն՝ Երևանի Ալիխանյան փողոցի 1-ին նրբանցքի (փակուղու) թիվ 7^ա հասցեում գտնվող 577,8^բ մակերեսով ընդհանուր սեփականությունն հողամասում հաշվառված են երկու տնատիրություններ. 97,6^բ մակերեսով բնակելի տունը պետնոտարի 04.09.1990 թվականի ըստ կտակի ժառանգության իրավունքի թիվ 5-3263 վկայագրի հիման վրա սեփականության իրավունքով հաշվառված է Մուրեն Մկրտչյանի անվամբ, իսկ 21,9^բ մակերեսով բնակելի տունը պետնոտարի 05.04.1974 թվականի ըստ կտակի ժառանգության իրավունքի թիվ 4437 (0-5) վկայագրի հիման վրա հաշվառված

է Հնայակ Մարտիրոսյանի անվամբ: Նույն պատասխանի համաձայն՝ տեղում կատարված չափագրման աշխատանքների արդյունքում պարզվել է, որ ընդհանուր սեփականություն 577,8քմ մակերեսով հողամասի չափերը փոփոխվել են և այն փաստացի կազմում է 390քմ մակերես, որից 4քմ մակերեսը հատկացված հողամասի սահմաններից դուրս է, ինչպես նաև 21,9քմ օրինական շինությունից 4,8քմ մակերեսով օժանդակ շինությունը քանդված է (**հատոր 1-ին, գ.թ. 38**):

5) ՀՀ Կենտրոն նոտարական տարածքի նոտարի կողմից 10.04.2007 թվականին տրված ըստ օրենքի ժառանգության իրավունքի վկայագրի համաձայն՝ Սուրեն Աշոտի Մկրտչյանի՝ մահացած 29.09.2006 թվականին, գույքի նկատմամբ ժառանգներ են հավասար բաժիններով կինը՝ Քնարիկ Բաբայանը, որդիները՝ Արարատ և Արտաշես Մկրտչյանները: Ժառանգական գույքը, որի համար տրվել է նույն վկայագիրը, բաղկացած է Երևանի Ալիխանյան փողոցի 1-ին նրբանցքի (փակուղու) թիվ 7^ա հասցեում գտնվող գույքից՝ բաղկացած 97,6քմ մակերեսով բնակելի տնից և 577,8քմ մակերեսով ընդհանուր համատեղ սեփականություն հողամասից (**հատոր 4-րդ, գ.թ. 90**):

4. Վճուրբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումները

Քննելով վճուրբեկ բողոքը նշված հիմքի սահմաններում՝ Վճուրբեկ դատարանը գրնում է, որ այն հիմնավոր է հետևյալ պարձառաբանությամբ.

Նախկինում գործող ՀՀ քաղաքացիական օրենսգրքի (ուժի մեջ է մտել 01.01.1965 թվականին, ուժը կորցրել է 01.01.1999 թվականին) 95-րդ հոդվածի համաձայն՝ **հողը**, նրա ընդերքը, ջրերն ու անտառները **պետության բացառիկ սեփականությունն են** և հատկացվում են միայն օգտագործման համար ...:

Նախկինում գործող ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 106-րդ հոդվածի համաձայն՝ որպես անձնական սեփականություն քաղաքացին կարող է ունենալ մեկ բնակելի տուն (կամ դրա մի մասը) ...:

Նախկինում գործող ՀՀ հողային օրենսգրքի (ուժի մեջ է մտել 15.03.1991 թվականին, ուժը կորցրել է 15.06.2001 թվականին) 9-րդ հոդվածի 1-ին պարբերության «դ» ենթակետի համաձայն՝ հողային բարեփոխումների ընթացքում պետական ֆոնդի հողերը որպես սեփականություն տրամադրվում են քաղաքներում և քաղաքատիպ ավաններում բնակելի տան շինարարության ու դրա սպասարկման համար՝ Հայաստանի Հանրապետության Նախարարների խորհրդի կողմից որոշվող սահմանային գների վճարմամբ ըստ հողի կադաստրային գնահատման արժեքի կամ այլ կարգով:

Նույն հոդվածի 5-րդ պարբերության համաձայն՝ տնամերձ հողամասերը, ինչպես նաև այգեգործության (ամառանոցի) և բնակելի տան շինարարության ու դրա սպասարկման համար Հայաստանի Հանրապետության քաղաքացիների ունեցած հողամասերը անհատույց կարգով թողնվում են նրանց որպես սեփականություն:

Նախկինում գործող ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 117-րդ հոդվածի համաձայն՝ ընդհանուր սեփականության իրավունքով գույքը կարող է պատկանել երկու կամ մի քանի կոլտնտեսությունների կամ այլ կոոպերատիվ և մյուս հասարակական կազմակերպությունների, կամ պետությանը և մեկ կամ մի քանի կոլտնտեսությունների, կամ այլ կոոպերատիվ և մյուս հասարակական կազմակերպությունների, կամ երկու կամ մի քանի քաղաքացիների:

Ընդհանուր սեփականության տարբեր տեսակներ կան, այն է՝ երբ որոշված են

մասնակիցների բաժինները (բաժնային սեփականություն), կամ **երբ որոշված չեն բաժինները (համատեղ սեփականություն):**

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 5-րդ հոդվածի 2-րդ կետի համաձայն՝ մինչև քաղաքացիական օրենսդրության ակտի կամ այլ իրավական ակտի ուժի մեջ մտնելը ծագած հարաբերություններով այն կիրառվում է դրա ուժի մեջ մտնելուց հետո ծագած իրավունքների և պարտականությունների նկատմամբ:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 199-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ համատեղ սեփականության մասնակիցների միջև ընդհանուր գույքը բաժանվում կամ նրանցից մեկի բաժինն առանձնացվում է ընդհանուր գույքի նկատմամբ իրավունքում մասնակիցներից յուրաքանչյուրի բաժինը նախապես որոշելուց հետո:

Նույն հոդվածի 2-րդ կետի համաձայն՝ ընդհանուր գույքը բաժանելիս և դրանից բաժին առանձնացնելիս համատեղ սեփականության մասնակիցների բաժինները համարվում են հավասար, եթե այլ բան նախատեսված չէ օրենքով կամ մասնակիցների համաձայնությամբ:

Նույն հոդվածի 3-րդ կետի համաձայն՝ ընդհանուր գույքը բաժանելու և դրանից բաժին առանձնացնելու հիմքերը և կարգը սահմանվում են նույն օրենսգրքի 197-րդ հոդվածի կանոններով:

Նշված նորմերի վերլուծությունից հետևում է, որ մինչև նախկինում գործող ՀՀ հողային օրենսգրքի ուժի մեջ մտնելը՝ 15.03.1991 թվականը, քաղաքացի նրպես անձնական սեփականություն կարող էր ունենալ բնակելի տուն (բնակելի տան մաս), իսկ հողը **պետության բացառիկ սեփականությունն էր** և հատկացվում էր բացառապես օգտագործման իրավունքով: Բնակելի տան շինարարության և դրա սպասարկման համար քաղաքացիների ունեցած հողամասերն անհատույց՝ որպես սեփականություն, նրանց են թողնվել միայն ՀՀ նախկին հողային օրենսգրքի ուժի մեջ մտնելուց հետո՝ 15.03.1991 թվականից: Միաժամանակ, ՀՀ նախկին հողային օրենսգրքի համաձայն՝ այն բոլոր դեպքերում, երբ բաժինները որոշված չէին, ընդհանուր սեփականությունը համարվում էր որպես **համատեղ սեփականություն**: Ինչ վերաբերում է տվյալ պահին համատեղ սեփականության ներքո գտնվող գույքը բաժանելու և դրանից բաժին առանձնացնելու հետ կապված իրավահարաբերություններին, ապա դրանք կարգավորվում են ՀՀ քաղաքացիական օրենսգրքով, որի կանոնակարգման ուժով ընդհանուր գույքը բաժանելիս և դրանից բաժին առանձնացնելիս համատեղ սեփականության մասնակիցների **բաժինները համարվում են հավասար**, եթե այլ բան նախատեսված չէ օրենքով կամ մասնակիցների համաձայնությամբ:

Սույն գործով Դատարանը հայցը մասնակիորեն բավարարելու հիմքում դրել է այն հիմնավորումը, որ Երևանի Վոդոայանովի (այժմ Ալիխանյան) փողոցի 1-ին փակուղու թիվ 7^ա հասցեում գտնվող տան բաժնային սեփականատերերը հողը տիրապետել են օգտագործման իրավունքով, քանի որ ՀՀ նախկին քաղաքացիական օրենսգրքի 95-րդ հոդվածի ուժով այն պետության բացառիկ սեփականությունն էր և հատկացվում էր միայն օգտագործման համար: Հետևաբար, Հմայակ Մարտիրոսյանը, Ասողիկ Մարտիրոսյանի ժառանգության ընդունմամբ դառնալով Երևանի Վոդոայանովի (այժմ Ալիխանյան) փողոցի 1-ին փակուղու թիվ 7^ա հասցեում գտնվող տան բաժնային սեփականատեր, ՀՀ նախկին հողային օրենսգրքի 9-րդ հոդվածի ուժով դարձել է նաև նշված հասցեում գտնվող ամբողջ բնակելի տան կառուցման և դրա սպասարկման համար հատկացված հողամասի ընդհանուր սեփականության

մասնակից, և քանի որ կողմերի միջև համաձայնություն առկա չէ, նրա բաժինը ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 190-րդ հոդվածի 1-ին կետի ուժով կազմում է վիճելի հողամասի 1/2 մասը:

Վերաքննիչ դատարանը վերաքննիչ բողոքները մասնակիորեն բավարարելու հիմքում դրել է այն հիմնավորումը, որ Հնայակ Մարտիրոսյանը ժառանգել է Աստղիկ Մարտիրոսյանին պատկանող Երևանի Վոդոյայանովի (այժմ Ալիխանյան) փողոցի 1-ին փակուղու թիվ 7^ա հասցեում գտնվող 21,9քմ մակերեսով շինությունը: Հետևաբար, վերջինս ՀՀ նախկին հողային օրենսգրքի 9-րդ հոդվածի ուժով դարձել է նշված հասցեում գտնվող փաստացի առկա 386քմ մակերեսով հողամասի 1/6 մասի համասեփականատերը՝ հաշվի առնելով, որ այդ հասցեում գտնվող անշարժ գույքն արդեն բաժանվել է Աշոտ Մկրտչյանի և Աստղիկ Մարտիրոսյանի միջև նրանց համաձայնությամբ, ինչը նշանակում է, որ Հնայակ Մարտիրոսյանի բաժինը ևս որոշված է, և այն կազմում է վիճելի հողամասի 1/6 մասը:

Մինչդեռ, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Վերաքննիչ դատարանն անտեսել է, որ մինչև ՀՀ նախկին հողային օրենսգրքի ուժի մեջ մտնելը՝ 15.03.1991 թվականը, հողը պետության բացառիկ սեփականությունն էր և հատկացվում էր բացառապես օգտագործման իրավունքով: Բնակելի տան շինարարության և դրա սպասարկման համար քաղաքացիների ունեցած հողամասերն անհատույց որպես սեփականություն նրանց են թողնվել միայն ՀՀ նախկին հողային օրենսգրքի ուժի մեջ մտնելուց հետո՝ 15.03.1991 թվականից:

Հետևաբար, Վերաքննիչ դատարանի պատճառաբանությունն այն մասին, որ Երևանի Վոդոյայանովի (այժմ Ալիխանյան) փողոցի 1-ին փակուղու թիվ 7^ա հասցեում գտնվող անշարժ գույքն արդեն բաժանվել է Աշոտ Մկրտչյանի և Աստղիկ Մարտիրոսյանի միջև նրանց համաձայնությամբ, ինչը նշանակում է, որ Հնայակ Մարտիրոսյանի բաժինը ևս որոշված է, և այն կազմում է վիճելի հողամասի 1/6 մասը, անհիմն է, քանի որ Երևանի 26 Կոմիսարների շրջանի ժողդատարանի 15.02.1967 թվականի վճիռը վերաբերել է բացառապես Աշոտ Մկրտչյանի և Աստղիկ Մարտիրոսյանի միջև նշված հասցեում գտնվող շենք-շինությունների բաժանմանը, որը չէր կարող իրավական հիմք դառնալ ՀՀ նախկին հողային օրենսգրքի 9-րդ հոդվածի ուժով վերջիններիս բաժիններին համամասնորեն վիճելի հողամասի նկատմամբ սեփականության իրավունք ձեռք բերելու համար, քանի որ նույն օրենսգրքով այդպիսի կարգ սահմանված չէր, իսկ այդ պահին գործող ՀՀ քաղաքացիական օրենսգրքի ուժով այն դեպքում, երբ բաժինները որոշված չէին, ընդհանուր սեփականությունը համարվում էր որպես համատեղ սեփականություն:

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ սույն գործի փաստերով հաստատվում է, որ վիճելի հողամասի համատեղ սեփականության մասնակիցների բաժինները համարվում են հավասար, քանի որ այլ բան նախատեսված չէ օրենքով կամ մասնակիցների համաձայնությամբ:

Վերոգրյալի հիման վրա Վճռաբեկ դատարանը գտնում է, որ վիճելի հողամասի բաժինների որոշման մասով Դատարանի պատճառաբանությունը հիմնավոր է, իսկ Վերաքննիչ դատարանի պատճառաբանությունն անհիմն է և հակասում է ՀՀ նախկին քաղաքացիական օրենսգրքի 95-րդ հոդվածի, ՀՀ նախկին հողային օրենսգրքի 9-րդ հոդվածի և ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 199-րդ հոդվածի դրույթներին:

Միաժամանակ, Վճռաբեկ դատարանը հիմնավոր է համարում Վերաքննիչ

դատարանի պատճառաբանությունն այն մասին, որ Երևանի Ալիխանյան փողոցի 1-ին փակուղու թիվ 7^ա հասցեում գտնվող տան 17քմ մակերեսով սենյակին կից պատշգամբի նկատմամբ պետական գրանցում կատարելն անհնարին է, քանի որ տվյալ պահին այն առկա չէ: Այսպես՝ սույն գործում առկա Կադաստրի 03.11.2006 թվականի թիվ ԵԼ-7662 գրությամբ, 11.06.2007 թվականի պատասխանով և 13.09.2007 թվականի թիվ ԵԼ-7609 տեխնիկական եզրակացությանը կից առկա նշված հասցեի վերաբերյալ հատկազծում արված գրառմամբ հաստատվում է, որ Հնայակ Մարտիրոսյանին պատկանող 21,9քմ օրինական շինությունից 4,8քմ մակերեսով օժանդակ շինությունը քանդված է:

Այսպիսով, սույն վճռաբեկ բողոքի հիմքի առկայությունը Վճռաբեկ դատարանը համարում է բավարար՝ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 227-րդ հոդվածի ուժով Վերաքննիչ դատարանի որոշումը բեկանելու համար:

Միաժամանակ, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ սույն գործով անհրաժեշտ է կիրառել ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 240-րդ հոդվածի 1-ին կետի 6-րդ ենթակետով սահմանված՝ առաջին ատյանի դատարանի դատական ակտին օրինական ուժ տալու՝ Վճռաբեկ դատարանի լիազորությունը հետևյալ հիմնավորմամբ.

ՀՀ Սահմանադրության 19-րդ հոդվածի և «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի ողջամիտ ժամկետում իր գործի քննության իրավունք: Սույն գործով վեճի լուծումն էական նշանակություն ունի գործին մասնակցող անձանց համար: Վճռաբեկ դատարանը գտնում է, որ գործը ողջամիտ ժամկետում քննելը հանդիսանում է ՀՀ Սահմանադրության և «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի նշված հոդվածներով ամրագրված՝ անձի արդար դատաքննության իրավունքի տարր: Հետևաբար, գործի անհարկի ձգձգումները վտանգ են պարունակում նշված իրավունքի խախտման տեսանկյունից: Տվյալ դեպքում Վճռաբեկ դատարանի կողմից ստորադաս դատարանի դատական ակտին օրինական ուժ տալը բխում է արդարադատության արդյունավետության շահերից:

Առաջին ատյանի դատարանի վճռին օրինական ուժ տալիս Վճռաբեկ դատարանը հիմք է ընդունում սույն որոշման պատճառաբանությունները, ինչպես նաև գործի նոր քննության անհրաժեշտության բացակայությունը:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 70-րդ, 73-րդ և 240-241²-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

ՈՐՈՇԵՑ

1. Վճռաբեկ բողոքը բավարարել մասնակիորեն: Բեկանել ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 03.11.2010 թվականի որոշման՝ Երևանի Ալիխանյան փողոցի 1-ին փակուղու թիվ 7^ա հասցեում գտնվող հողամասի նկատմամբ Հնայակ Մարտիրոսյանի բաժնային սեփականության իրավունքը գրանցելուն պարտավորեցնելու պահանջի մասը և այդ մասով օրինական ուժ տալ Երևանի

Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի 26.07.2010 թվականի վճիռ: Որոշման մնացած մասը թողնել օրինական ուժի մեջ:

2. Արարատ և Արտաշես Մկրտչյաններից, Քնարիկ Բաբայանից, ՀՀ Կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի Կենտրոն տարածքային ստորաբաժանումից հօգուտ Հմայակ Մարտիրոսյանի բռնագանձել 20.000 ՀՀ դրամ որպես վճուաբել բողոքի համար վճարված պետական տուրք:

3. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

*ՆԱԽԱԳԱՀՈՂ՝ ստորագրություն
ԴԱՏԱՎՈՐՆԵՐ՝ ստորագրություններ*

ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

ԱՊԱՑՈՒՅՑՆԵՐ ԵՎ ԱՊԱՑՈՒՑՈՒՄ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի որոշում	Քաղաքացիական գործ թիվ ԵՄԴ/0091/02/10	2011թ.
Քաղաքացիական գործ թիվ ԵՄԴ/0091/02/10		
Նախագահող դատավոր՝	Ն. Տավարացյան	
Դատավորներ՝	Ս. Միքայելյան	
	Ա. Մկրտչյան	

ՈՐՈՇՈՒՄ

ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Հայաստանի Հանրապետության Վճռաբեկ դատարանի քաղաքացիական և վարչական պալատը (այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

նախագահությամբ

մասնակցությամբ դատավորներ

Ե. ԽՈՒՆԴԿԱՐՅԱՆԻ

Ե. ՍՈՂՈՄՈՆՅԱՆԻ

Վ. ԱԲԵԼՅԱՆԻ

Վ. ԱՎԱՆԵՍՅԱՆԻ

Ա. ԲԱՐՍԵՂՅԱՆԻ

Մ. ԴՐՄԵՅԱՆԻ

Գ. ՀԱԿՈՔՅԱՆԻ

Տ. ՊԵՏՐՈՍՅԱՆԻ

2011 թվականի հուլիսի 01-ին

դոնրաց դատական նիստում, քննելով ՀՀ գլխավոր դատախազի տեղակալի վճռաբեկ բողոքը ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 23.12.2010 թվականի որոշման դեմ՝ ըստ ՀՀ գլխավոր դատախազության հայցի ընդդեմ Արսեն Ադիլխանյանի՝ գումարի բռնագանձման պահանջի մասին,

ՊԱՐԶԵՑ

1. Գործի դատավարական նախապատմությունը

Դիմելով դատարան՝ ՀՀ գլխավոր դատախազությունը պահանջել է բռնագանձել Արսեն Ադիլխանյանից 1.036.669 ՀՀ դրամ:

Երևանի Մալաթիա-Մեքաստիա վարչական շրջանի ընդհանուր իրավասության դատարանի (այսուհետ՝ Դատարան) 08.06.2010 թվականի վճռով հայցը բավարարվել է:

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի (այսուհետ՝ Վերաքննիչ դատարան) 23.12.2010 թվականի որոշմամբ Արսեն Ադիլխանյանի վերաքննիչ բողոքը բավարարվել է՝ որոշվել է բեկանել Դատարանի 08.06.2010 թվականի վճիռը և գործը

ուղարկել նոր քննության:

Սույն գործով վճռաբեկ բողոք է ներկայացրել ՀՀ գլխավոր դատախազի տեղակալը:

Վճռաբեկ բողոքի պատասխան չի ներկայացվել:

2. Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը

Սույն վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

Վերաքննիչ դատարանը խախտել է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 52-րդ հոդվածի 3-րդ կետը:

Բողոք բերած անձը նշված պնդումը պարզապես անհիմն է հեղինակալ փաստարկներով.

Վերաքննիչ դատարանը հաշվի չի առել, որ Երևանի Մալաթիա-Սեբաստիա համայնքի ընդհանուր իրավասության դատարանի 17.11.2008 թվականի դատավճռով հաստատվել է Արսեն Ադիլխանյանի կողմից ՀՀ քրեական օրենսգրքի 188-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված արարք կատարելու փաստը, այն է՝ Արսեն Ադիլխանյանն առանց պետական գրանցման Հայաստանի Հանրապետության տարածք է ներկրել և իրացրել 1.770.804 ՀՀ դրամ մաքսային արժեքով 7.276կգ քաշով մանդարին, ինչի արդյունքում պետությանը պատճառել է 1.036.669 ՀՀ դրամի չափով վնաս: Այսինքն՝ տվյալ դեպքում քրեական գործով օրինական ուժի մեջ մտած դատավճռի առկայության պայմաններում հանցագործություն կատարած անձի կողմից պետությանը պատճառված վնասի չափի պարզումը ենթակա չէ վերստին քննության:

Ինչ վերաբերում է ստուգման ակտն անվավեր ճանաչելու մասին վճռի առկայությանը, ապա այդ վճիռն ամենևին էլ չի հաստատում Արսեն Ադիլխանյանի հարկային պարտավորությունների բացակայության փաստը, քանի որ ստուգման ակտն անվավեր է ճանաչվել ձևական նկատառումներով, ինչը որևէ առնչություն չունի սույն գործի հանգամանքների հետ:

Վերոգրյալի հիման վրա բողոք բերած անձը պահանջել է բեկանել Վերաքննիչ դատարանի 23.12.2010 թվականի որոշումը և օրինական ուժ տալ Դատարանի 08.06.2010 թվականի վճռին:

3. Վճռաբեկ բողոքի քննության համար նշանակություն ունեցող փաստերը

Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

1) Երևանի Մալաթիա-Սեբաստիա համայնքի ընդհանուր իրավասության դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած 17.11.2008 թվականի դատավճռով Արսեն Ադիլխանյանը հանցավոր է ճանաչվել ՀՀ քրեական օրենսգրքի 188-րդ հոդվածի 2-րդ մասով և դատապարտվել տուգանքի՝ նվազագույն աշխատավարձի երեքհարյուրապատիկի չափով: Նույն դատավճռի համաձայն՝ նախաքննության մարմնի կողմից Արսեն Ադիլխանյանին մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 188-րդ հոդվածի 2-րդ մասով այն բանի համար, որ նա, առանց պետական գրանցման, իրականացրել է ապօրինի ձեռնարկատիրական գործունեություն: Արսեն Ադիլխանյանը 28.12.2007 թվականին Վրաստանի Հանրապետությունից Հայաստանի Հանրապետության տարածք է ներկրել և իրացրել 1.770.804 ՀՀ դրամ ընդհանուր

մաքսային արժեքով 7.276կգ քաշով մանդարին: Արսեն Ադիլխանյանը եկամուտների վերաբերյալ հարկային մարմիններին հայտարարագիր չի ներկայացրել, չի վճարել հարկերը և պարտադիր սոցիալական վճարները, ինչի հետևանքով պետությանը պատճառել է խոշոր չափի՝ 1.036.669 ՀՀ դրամի վնաս: Նույն դատավճռով ապացուցված է համարվել Արսեն Ադիլխանյանի մեղավորությունը տվյալ հանցանքը կատարելու մեջ (**հատոր 1-ին, գ.թ. 20-25**):

2) ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայի «Փորձաքննությունների ազգային բյուրո» ՊՈԱԿ-ի (այսուհետ՝ Կազմակերպություն) 13.09.2008 թվականի փորձագետի թիվ 08-1136 եզրակացության «Հետևություններ» բաժնի 3-րդ կետի համաձայն՝ Արսեն Ադիլխանյանի կողմից ապօրինի ձեռնարկատիրական գործունեություն իրականացնելու ընթացքում պետությանը պատճառված վնասը կազմում է 1.036.669 ՀՀ դրամ (**հատոր 1-ին, գ.թ. 8-17**):

3) ՀՀ Կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի Շահումյանի հարկային տեսչության (այսուհետ՝ Տեսչություն) 10.07.2008 թվականի թիվ 2328545 ստուգման ակտով Արսեն Ադիլխանյանին առաջադրվել է հարկային պարտավորություն՝ ապօրինի ձեռնարկատիրական գործունեության իրականացման համար:

4) ՀՀ վարչական դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած 09.09.2009 թվականի վճռով անվավեր է ճանաչվել Տեսչության 10.07.2008 թվականի թիվ 2328545 ստուգման ակտը՝ հարկվող օբյեկտը և հարկային պարտավորություններն օրենքով սահմանված կարգի խախտմամբ հաշվարկելու հիմքով (**հատոր 1-ին, գ.թ. 40-47**):

4. Վճարել դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումները

Քննելով վճարել բողոքը նշված հիմքի սահմաններում Վճարել դատարանը գրնում է, որ այն հիմնավոր է հեղինակ պարձատարանությամբ.

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 52-րդ հոդվածի 3-րդ կետի համաձայն՝ քրեական գործով օրինական ուժի մեջ մտած դատավճիռը պարտադիր է դատարանի համար միայն այն փաստերով, ըստ որոնց հաստատված են **որոշակի գործողություններ և դրանք կատարած անձինք**:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 53-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ դատարանը յուրաքանչյուր ապացույց գնահատում է գործում եղած բոլոր ապացույցների **բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտության վրա հիմնված ներքին համոզմամբ**:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 220-րդ հոդվածի 2-րդ կետի 5-րդ ենթակետի համաձայն՝ վերաքննիչ դատարանի որոշման մեջ պետք է նշվեն **գործով պարզված և վերաքննիչ բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը**, ինչպես նաև այն օրենքները, Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերը և այլ իրավական ակտերը, որոնցով ղեկավարվել է վերաքննիչ դատարանը որոշում կայացնելիս:

Նշված նորմերի վերլուծությունից հետևում է, որ ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանը **բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտության վրա հիմնված ներքին համոզման** հանգելու համար պարտավոր է յուրաքանչյուր ապացույց գնահատել գործում եղած բոլոր ապացույցների համակցությամբ, ինչի արդյունքում միայն հնարավոր կլինի պարզել **գործի լուծման համար էական նշանակություն ունեցող փաստերը**: Միաժամանակ, ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանը

պարտավոր է հաշվի առնել, որ քրեական գործով օրինական ուժի մեջ մտած դատավճռով **որոշակի գործողությունների և դրանք կատարած անձանց** վերաբերյալ հաստատված փաստերը նախադատելի են:

Սույն գործով Դատարանը հայցը բավարարելու հիմքում դրել է այն հիմնավորումը, որ Երևանի Մալաթիա-Մեքաստիա համայնքի ընդհանուր իրավասության դատարանի 17.11.2008 թվականի դատավճռով հաստատվել է Արսեն Ադիլխանյանի կողմից ՀՀ քրեական օրենսգրքի 188-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված հանցավոր արարք կատարելու հետևանքով պետությանը խոշոր չափի նյութական վնաս պատճառելու փաստը: Մասնավորապես՝ նշված դատավճռով հաստատված է համարվել, որ Արսեն Ադիլխանյանն առանց պետական գրանցման իրականացրել է ապօրինի ձեռնարկատիրական գործունեություն. 28.12.2007 թվականին Վրաստանի Հանրապետությունից Հայաստանի Հանրապետության տարածք է ներկրել և իրացրել 1.770.804 ՀՀ դրամ ընդհանուր մաքսային արժեքով 7.276կգ քաշով մանդարին, իսկ պատճառված վնասի չափը որոշվել է Կազմակերպության 13.09.2008 թվականի փորձագետի թիվ 08-1136 եզրակացությամբ: Հետևաբար, Արսեն Ադիլխանյանի հիմնավորումն այն մասին, որ ՀՀ գլխավոր դատախազության պահանջը ենթակա է մերժման, քանի որ այն բխում է Տեսչության 10.07.2008 թվականի թիվ 2328545 ստուգման ակտից, որը ՀՀ վարչական դատարանի 09.09.2009 թվականի վճռով ձանաչվել է անվավեր, անհիմն է, քանի որ սույն գործում բացի նշված ստուգման ակտից առկա են այլ ապացույցներ, ինչպիսիք են Երևանի Մալաթիա-Մեքաստիա համայնքի ընդհանուր իրավասության դատարանի 17.11.2008 թվականի դատավճիռը և Կազմակերպության 13.09.2008 թվականի փորձագետի թիվ 08-1136 եզրակացությունը:

Վերաքննիչ դատարանը վերաքննիչ բողոքը բավարարելու հիմքում դրել է այն հիմնավորումը, որ ՀՀ գլխավոր դատախազությունը, իր պահանջի հիմքում դնելով Կազմակերպության 13.09.2008 թվականի փորձագետի թիվ 08-1136 եզրակացությունը, չի ապացուցել Արսեն Ադիլխանյանի կողմից պետությանը 1.036.669 ՀՀ դրամի չափով վնաս պատճառելու փաստը, քանի որ նշված եզրակացության հիմքում որպես ելակետային տվյալ դրվել է Տեսչության 10.07.2008 թվականի թիվ 2328545 ստուգման ակտը, իսկ այն անվավեր է ձանաչվել ՀՀ վարչական դատարանի 09.09.2009 թվականի վճռով: Միաժամանակ, Վերաքննիչ դատարանն արձանագրել է, որ սույն գործով անհրաժեշտ է իրականացնել նոր քննություն, և որպես նոր քննության ծավալ սահմանել է վնասի չափի պարզումը:

Մինչդեռ, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Վերաքննիչ դատարանը հաշվի չի առել ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքով սահմանված այն պահանջը, որի համաձայն՝ քրեական գործով օրինական ուժի մեջ մտած դատավճռով որոշակի գործողությունների և դրանք կատարած անձանց վերաբերյալ հաստատված փաստերը պարտադիր են:

Այսպես՝ սույն գործի փաստերի համաձայն՝ Երևանի Մալաթիա-Մեքաստիա համայնքի ընդհանուր իրավասության դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած 17.11.2008 թվականի դատավճռով հաստատված է համարվել այն փաստը, որ Արսեն Ադիլխանյանն առանց պետական գրանցման իրականացրել է ապօրինի ձեռնարկատիրական գործունեություն, այն է՝ 28.12.2007 թվականին Վրաստանի Հանրապետությունից Հայաստանի Հանրապետության տարածք է ներկրել և իրացրել 1.770.804 ՀՀ դրամ ընդհանուր մաքսային արժեքով 7.276կգ քաշով մանդարին, ինչի

հետևանքով պետությանը պատճառել է խոշոր չափի՝ 1.036.669 ՀՀ դրամի վնաս:

Հետևաբար, Երևանի Մալաթիա-Մեքաստիա համայնքի ընդհանուր իրավասության դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած 17.11.2008 թվականի դատավճռով Արսեն Ադիլխանյանի գործողությունների վերաբերյալ հաստատված փաստերը Վերաքննիչ դատարանի համար սույն գործը քննելիս պարտադիր էին, քանի որ նշված դատավճիռն իր ապացուցողական ուժով նախադատելի է որոշակի գործողությունների և դրանք կատարած անձանց վերաբերյալ հաստատված փաստերի առումով, իսկ վերը նշված դատավճռով հաստատվել է, որ ապօրինի ձեռնարկատիրություն հանցագործությունը կատարվել է Արսեն Ադիլխանյանի կողմից, իսկ ՀՀ քրեական օրենսգրքի 188-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ անձի արարքը կարող է որակվել նշված նորմի դիսպոզիցիայի սահմաններում որպես հանցագործություն, եթե նրա արարքում առկա են՝ 1. առանց պետական գրանցման, հաշվառման կամ առանց հատուկ թույլտվության (լիցենզիայի) լիցենզավորման ենթակա կամ օրենքով արգելված ձեռնարկատիրական գործունեություն իրականացնելը, և 2. նշված գործողությունը զուգորդվել է անձանց կամ կազմակերպություններին կամ պետությանը խոշոր վնաս պատճառելով:

Սույն գործի փաստերի համաձայն՝ Տեսչության 10.07.2008 թվականի թիվ 2328545 ստուգման ակտով Արսեն Ադիլխանյանին առաջադրվել է հարկային պարտավորություն՝ ապօրինի ձեռնարկատիրական գործունեության իրականացման համար: Ստուգման ակտը ՀՀ վարչական դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած 09.09.2009 թվականի վճռով անվավեր է ճանաչվել հարկվող օբյեկտը և հարկային պարտավորություններն օրենքով սահմանված կարգի խախտմամբ հաշվարկելու հիմքով:

Վերոգրյալի հիման վրա Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Վերաքննիչ դատարանի եզրահանգումն այն մասին, որ ՀՀ գլխավոր դատախազությունը չի ապացուցել Արսեն Ադիլխանյանի կողմից պետությանը 1.036.669 ՀՀ դրամի չափով վնաս պատճառելու փաստը, անհիմն է և չի բխում սույն գործի տվյալներից, քանի որ Արսեն Ադիլխանյանի կողմից պետությանը խոշոր չափի՝ 1.036.669 ՀՀ դրամի վնաս պատճառելու փաստը հաստատված է համարվել Երևանի Մալաթիա-Մեքաստիա համայնքի ընդհանուր իրավասության դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած 17.11.2008 թվականի դատավճռով:

Այսպիսով, սույն վճռաբեկ բողոքի հիմքի առկայությունը Վճռաբեկ դատարանը համարում է բավարար՝ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 228-րդ հոդվածի ուժով Վերաքննիչ դատարանի որոշումը բեկանելու համար:

Միաժամանակ, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ սույն գործով անհրաժեշտ է կիրառել ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 240-րդ հոդվածի 1-ին կետի 6-րդ ենթակետով սահմանված՝ առաջին ատյանի դատարանի դատական ակտին օրինական ուժ տալու՝ Վճռաբեկ դատարանի լիազորությունը հետևյալ հիմնավորմամբ.

ՀՀ Սահմանադրության 19-րդ հոդվածի և «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի ողջամիտ ժամկետում իր գործի քննության իրավունք: Սույն գործով վեճի լուծումն էական նշանակություն ունի գործին

մասնակցող անձանց համար: Վճռաբեկ դատարանը գտնում է, որ գործը ողջամիտ ժամկետում քննելը հանդիսանում է ՀՀ Սահմանադրության և «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի նշված հոդվածներով ամրագրված՝ անձի արդար դատաքնության իրավունքի տարր: Հետևաբար, գործի անհարկի ձգձգումները վտանգ են պարունակում նշված իրավունքի խախտման տեսանկյունից: Տվյալ դեպքում Վճռաբեկ դատարանի կողմից ստորադաս դատարանի դատական ակտին օրինական ուժ տալը բխում է արդարադատության արդյունավետության շահերից:

Առաջին ատյանի դատարանի վճիռն օրինական ուժ տալիս Վճռաբեկ դատարանը հիմք է ընդունում սույն որոշման պատճառաբանությունները, ինչպես նաև գործի նոր քննության անհրաժեշտության բացակայությունը:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 240-241²-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

ՈՐՈՇԵՑ

1. Վճռաբեկ բողոքը բավարարել: Բեկանել ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 23.12.2010 թվականի որոշումը և օրինական ուժ տալ Երևանի Մալաթիա-Մեքաստիա վարչական շրջանի ընդհանուր իրավասության դատարանի 08.06.2010 թվականի վճիռն:

2. Արսեն Ադիլխանյանից հօգուտ Հայաստանի Հանրապետության բռնագանձել 31.100 ՀՀ դրամ՝ որպես վճռաբեկ բողոքի համար սահմանված պետական տուրք:

3. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

*ՆԱԽԱԳԱՀՈՂ՝ արտրագրություն
ԴԱՏԱՎՈՐՆԵՐ՝ արտրագրություններ*

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական Քաղաքացիական գործ թիվ ԵԱԴԴ/0832/02/09
դատարանի որոշում 2011թ.
Քաղաքացիական գործ թիվ ԵԱԴԴ/0832/02/09
Նախագահող դատավոր՝ Կ. Հակոբյան
Դատավորներ՝ Տ. Սահակյան
Տ. Նազարյան

ՈՐՈՇՈՒՄ ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քաղաքացիական
և վարչական պալատը (այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

*նախագահությամբ
մասնակցությամբ դատավորներ*

Ե. ԽՈՒՆԴԿԱՐՅԱՆԻ
Մ. ԴԻՄԵՅԱՆԻ
Վ. ԱԲԵԼՅԱՆԻ
Ս. ԱՆՏՈՆՅԱՆԻ
Վ. ԱՎԱՆԵՍՅԱՆԻ
Ա. ԲԱՐՍԵՂՅԱՆԻ
Գ. ՀԱԿՈԲՅԱՆԻ
Է. ՀԱՅՐԻՅԱՆԻ
Տ. ՊԵՏՐՈՍՅԱՆԻ
Ե. ՍՈՂՈՄՈՆՅԱՆԻ

2011 թվականի հոկտեմբերի 14-ին
դռնբաց դատական նիստում, քննելով Գոմիդաս Հարթունյանի վճռաբեկ բողոքը
ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 27.01.2011 թվականի որոշման դեմ՝ ըստ
հայցի «Ազուր-Քոմի» ՍՊԸ-ի (այսուհետ՝ Ընկերություն) հիմնադիր անդամ Գոմիդաս
Հարթունյանի ընդդեմ Ընկերության, Ընկերության հիմնադիր անդամ և տնօրեն
Ռաֆայել Մկրտչյանի (այսուհետ՝ Տնօրեն), Ընկերության հիմնադիր անդամ Գուրգեն
Մարտիրոսյանի՝ Ընկերությունից դուրս գալու, բաժնեմասն առանձնացնելու և որպես
դրա հետևանք նրա գրանցման վայրն իր տարածքից հանելու պահանջի մասին,

ՊԱՐԶԵՑ

1. Գործի դատավարական նախապատմությունը

Դիմելով դատարան՝ Գոմիդաս Հարթունյանը պահանջել է իրեն թույլատրել
դուրս գալ Ընկերության հիմնադիր անդամությունից, պարտավորեցնել վճարելու 40%
բաժնեմասը և սեփական տարածքից հանել Ընկերության գտնվելու վայրը: Այսուհետև
լրացնելով հայցի հիմքն ու առարկան՝ պահանջել է պարտավորեցնել Ընկերությունում
կատարել մասնակիցների և կանոնադրության փոփոխություններ. Իրեն՝ որպես 40%
բաժնեմասով մասնակցի, համարել դուրս եկած և լուծել բաժնեմասի հարցը, ինչպես

նաև պարտավորեցնել Ընկերության կանոնադրության 1.6 կետում փոխել և գրանցել Ընկերության գտնվելու վայրի իրական հասցեն:

Երևանի Աջափնյակ և Դավթաշեն վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանը (դատավոր Ա. Մխիթարյան) (այսուհետ՝ Դատարան) 29.10.2010 թվականին վճռել է. «Ըստ հայցի «Ագուր-Քոնփ» ՍՊԸ-ի հիմնադիր անդամ Գոմիդաս Հարթունյանի ընդդեմ «Ագուր-Քոնփ» ՍՊԸ-ի, «Ագուր-Քոնփ» ՍՊԸ-ի հիմնադիր անդամ և տնօրեն Ռաֆայել Մկրտչյանի, «Ագուր-Քոնփ» ՍՊԸ-ի հիմնադիր անդամ Գուրգեն Մարտիրոսյանի՝ «Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների մասին» ՀՀ օրենքի 9, 10, 12, 21, 23 հոդվածներով պարտավորեցնել «Ագուր-Քոնփ» ՍՊԸ-ում կատարել մասնակիցների և կանոնադրության փոփոխություններ՝ 40 տոկոս բաժնեմասով մասնակից Գոմիդաս Հարթունյանին համարել դուրս եկած: Պարտավորեցնել Ընկերության կանոնադրության 1.6 կետում փոխել և գրանցել Ընկերության գտնվելու վայրի իրական հասցեն, պահանջների մասով թիվ ԵԱԴԴ/0832/02/09 քաղաքացիական գործի վարույթը՝ կարձել՝ վեճը ենթակա չէ քննության հիմքով: Ըստ հայցի «Ագուր-Քոնփ» ՍՊԸ-ի հիմնադիր անդամ Գոմիդաս Հարթունյանի ընդդեմ «Ագուր-Քոնփ» ՍՊԸ-ի, «Ագուր-Քոնփ» ՍՊԸ-ի հիմնադիր անդամ և տնօրեն Ռաֆայել Մկրտչյանի, «Ագուր-Քոնփ» ՍՊԸ-ի հիմնադիր անդամ Գուրգեն Մարտիրոսյանի՝ պատասխանողներին իր 40 տոկոս բաժնեմասը վճարելուն պարտավորեցնելու մասին պահանջի մասով թիվ ԵԱԴԴ/0832/02/09 քաղաքացիական գործի վարույթը կարձել՝ հայցվորի դատաքննության նախապատրաստական փուլում հայցից հրաժարվելու հիմքով: «Ագուր-Քոնփ» ՍՊԸ-ի հիմնադիր անդամ Գոմիդաս Հարթունյանի հայցն ընդդեմ «Ագուր-Քոնփ» ՍՊԸ-ի, «Ագուր-Քոնփ» ՍՊԸ-ի հիմնադիր անդամ և տնօրեն Ռաֆայել Մկրտչյանի, «Ագուր-Քոնփ» ՍՊԸ-ի հիմնադիր անդամ Գուրգեն Մարտիրոսյանի՝ «Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների մասին» ՀՀ օրենքով բաժնեմասի հարցը լուծելու պահանջի մասով, մերժել»:

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի (այսուհետ՝ Վերաքննիչ դատարան) 27.01.2011 թվականի որոշմամբ Գոմիդաս Հարթունյանի վերաքննիչ բողոքը մերժվել է, և Դատարանի 29.10.2010 թվականի վճիռը թողնվել է օրինական ուժի մեջ:

Սույն գործով վճռաբեկ բողոք է ներկայացրել Գոմիդաս Հարթունյանը:

Վճռաբեկ բողոքի պատասխան է ներկայացրել Ռաֆայել Մկրտչյանը:

2. Վճռաբեկ բողոքի հիմքերը, փաստարկները և պահանջը

Սույն վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքերի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

1) Վերաքննիչ դատարանը խախտել է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 6-րդ, 49-րդ, 53-րդ հոդվածները, 109-րդ հոդվածի 1-ին կետը, 130-րդ, 131-րդ, 132-րդ հոդվածները, 219-րդ հոդվածի 2-րդ կետը:

Բողոք բերած անձը նշված պնդումը պարձառաքանում է հետևյալ փաստարկներով.

Վերաքննիչ դատարանը պատճառաքանել է, որ գործում առկա չէ թույլատրելի և վերաբերելի ապացույց, որով կհաստատվեր Գոմիդաս Հարթունյանի՝ Ընկերությունից դուրս գալու դիմում ներկայացնելու փաստը: Մինչդեռ, գործում առկա է Գոմիդաս Հարթունյանի 24.11.2008 թվականի՝ Տնօրենին և Ընկերության մյուս հիմնադիր Գուրգեն Մարտիրոսյանին ներկայացված դիմումի պատճենը, որում նշվում է

նրա՝ Ընկերությունից դուրս գալու ցանկությունը: Ներկայացրել է նաև 20.11.2008 թվականի հարցման պատճենը, որով խնդրել է տալ տեղեկատվություն Ընկերության գործունեության, նրա շահույթի, աշխատակիցների և կնքած պայմանագրերի մասին: Առկա են նաև Տսօրենին և Ընկերությանը դիմելու փոստային անդորրագրերի պատճենները և բնօրինակները:

Վերաքննիչ դատարանը հաշվի չի առել, որ փոստային առաքման անդորրագրերի բնօրինակները Վերաքննիչ դատարանում ներկայացվել են այն պատճառով, որ Գոմիդաս Հարթունյանը հնարավորություն չի ունեցել դրանք առաջին ատյանի դատարանում ներկայացնելու: Մասնավորապես, Դատարանում ժամկետ չի տրամադրվել նշված անդորրագրերի բնօրինակները ներկայացնելու համար, ինչն էլ Վերաքննիչ դատարանում չի ընդունվել այն պատճառաբանությամբ, որ բողոքաբերը, ծանուցված լինելով դատական նիստի վերաբերյալ, զրկված չի եղել դրանց բնօրինակը ներկայացնելու հնարավորությունից: Այնինչ, Դատարանը ժամանակ չի տրամադրել փոստային անդորրագրերի բնօրինակները Գոմիդաս Հարթունյանի ներկայացուցչին ուղարկելու համար, ինչն էլ հաստատում է, որ Գոմիդաս Հարթունյանն իրենից անկախ պատճառներով չի կարողացել ներկայացնել նշված ապացույցը:

Այսպիսով, Վերաքննիչ դատարանը ճիշտ չի գնահատել ապացույցները և սխալ եզրահանգման է եկել՝ կրկնելով Դատարանի պատճառաբանությունները:

2) *Վերաքննիչ դատարանը սխալ է կիրառել ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 109-րդ հոդվածի 1-ին կետը:*

Բողոք բերած անձը նշված պնդումը պարզապես անհիմն է հետևյալ փաստարկներով.

Վերաքննիչ դատարանն իրավաչափ է համարել այն, որ սույն վեճը ենթակա չէ դատարանում քննության և եզրահանգել է, որ կողմերի միջև առկա իրավահարաբերության բովանդակության մեջ ներառված չէ հայցվորի՝ իրեն Ընկերությունից դուրս եկած համարելու, Ընկերության կանոնադրության և մասնակիցների փոփոխություններ կատարելու և գրանցման վայրը հայցվորի տարածքից հանելու պահանջի իրավունքը: Մինչդեռ, Գոմիդաս Հարթունյանի իրավունքների խախտումն ակնհայտ է, և ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 2-րդ հոդվածի համաձայն՝ ինքն իրավունք ունի սահմանված կարգով դիմել դատարան՝ ՀՀ Սահմանադրությամբ, օրենքներով և այլ իրավական ակտերով սահմանված կամ պայմանագրով նախատեսված իր իրավունքների, ազատությունների և օրինական շահերի պաշտպանության համար: Փաստորեն, խախտվել են իր իրավունքները, և ինքը չի կարողանում Ընկերության գրանցման վայրը հանել իր սեփական տան հասցեից:

Բացի այդ, Ընկերությունը որպես այդպիսին չի գործում Երևանի Դավթաշեն 4-րդ թաղամաս 41/1 հասցեում, որն էլ հաստատված է Երևանի Աջափնյակ և Դավթաշեն բաժնի ԴԱՀԿ-ի կողմից կազմված երեք ակտերով: Բացի այդ, Ընկերությունը չի գործում, և գործունեությունը դադարեցվել է Տսօրենի դիմումի համաձայն: Հետևաբար ընդհանուր ժողով հրավիրելու հնարավորությունը բացառվում է:

Վերոգրյալի հիման վրա վճռաբեկ բողոք բերած անձը պահանջել է բեկանել Վերաքննիչ դատարանի 27.01.2011 թվականի որոշումը և գործն ուղարկել նոր քննության:

2.1. Վճարելի բողոքի պատասխանի հիմնավորումները

Վերաքննիչ դատարանն իր որոշման մեջ իրավացիորեն նշել է, որ Գումիդաս Հարթունյանը Դատարանում պատշաճ ծանուցված է եղել դատական նիստերի մասին, գրկված չի եղել մինչև դատաքննությունը փոստային անդորրագրերի բնօրինակները Դատարան ներկայացնելու հնարավորությունից, սակայն չի ներկայացրել դրանք: Նման պայմաններում փոստային անդորրագրի բնօրինակի չներկայացնելը չի կարող համարվել կողմի կամքից անկախ հանգամանքներում կատարված: Ուստի Վերաքննիչ դատարանն իրավացիորեն չի ընդունել վերաքննիչ բողոքին կից ներկայացված ապացույցները՝ փոստային անդորրագրերը:

Ընկերությունից դուրս գալու մասին դիմումը պետք է ներկայացվի ոչ թե Ընկերության մյուս մասնակիցներին, այլ Ընկերությանը: Տվյալ դեպքում հայցվորի ներկայացրած փոստային անդորրագրերից երևում է, որ նամակներն ուղարկվել են Գուրգեն Մարտիրոսյանին և Ռաֆայել Մկրտչյանին, մինչդեռ Ընկերությունից դուրս գալու մասին դիմումը պետք է ներկայացվեր Ընկերությանը: Բացի այդ, Գումիդաս Հարթունյանի ներկայացրած անդորրագրերի վրա չկա ուղարկման ամսաթիվ և պարզ չէ, թե այն երբ է ուղարկվել, ինչպես նաև անդորրագրերի վրա բացակայում են հասցեատերերի լրիվ հասցեները:

Սույն քաղաքացիական գործում առկա են բազմաթիվ ապացույցներ, որոնցից երևում է, որ Ընկերությունը գրանցվել է ՀՀ ԱԾ իրավաբանական անձանց պետական ռեգիստրի գործակալությունում և գտնվում է Երևանի Դավթաշեն 4-րդ թաղամաս թիվ 41/1 հասցեում, իսկ գործում բացակայում է որևէ ապացույց Ընկերության լուծարման վերաբերյալ, և այն համարվում է գործող:

3. Վճարելի բողոքի քննության համար նշանակություն ունեցող փաստերը.

Վճարելի բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

1. ՀՀ ԿԱ ԱԳԿՊԿ Դավթաշենի տարածքային ստորաբաժանման կողմից տրված 13.05.2004 թվականի թիվ 1130402 սեփականության իրավունքի գրանցման վկայականի համաձայն՝ Գումիդաս Հարթունյանը Երևանի Դավթաշեն 4-րդ թաղամասի թիվ 41/1 հասցեում գտնվող ավտոկայանատեղի, ավտոտեխսպասարկման և կայանի սեփականատերն է (հատոր 1-ին, գ.թ.13-14):

2. Ընկերության հիմնադիրների ընդհանուր (հիմնադիր) ժողովի 17.05.2004 թվականի թիվ 1 արձանագրության համաձայն՝ ժողովը որոշել է.

ա) «ՀՀ-ում հիմնադրել «Ագուր-Բումի» անվանումով ՍՊԸ: Ընկերության գտնվելու վայր ընդունել Հայաստանի Հանրապետություն, ք. Երևան, Դավթաշեն 4-րդ թաղամաս, շենք 41/1 հասցեն: Հաստատել Ընկերության կանոնադրությունը: Ընկերության կանոնադրական կապիտալի չափը սահմանել 50.000 ՀՀ դրամ: Հաստատել Ընկերության հիմնադիրների (մասնակիցների) ցանկը ըստ հետևյալի. Հիմնադիրների (մասնակիցների) տվյալները՝ Կոմիտաս Հարթունյան (ԱՄԾ անձնագիր 093616029, տրված 06.11.96թ., Ֆիլադելֆիայի անձնագրային գործակալության կողմից, հասցե՝ 360 Սքոլար, Ֆրանկլին Լեյքս Նյու Ջերսի 07417 ԱՄՆ), բաժնեմասերի չափը՝ 40%, գումարը՝ 20.000 ՀՀ դրամ, Ռաֆայել Մկրտչյան, բաժնեմասերի չափը՝ 30%, գումարը՝ 15.000 ՀՀ դրամ, Գուրգեն Մարտիրոսյան բաժնեմասերի չափը՝ 30%, գումարը՝ 15.000 ՀՀ դրամ բ) Ընկերության տնօրեն նշանակել Ռաֆայել Մկրտչյանին... (հատոր 1-ին, գ.թ.15):

3. Ընկերության կանոնադրության 4.3 կետի համաձայն՝ Ընկերության մասնակիցն իրավունք ունի ցանկացած ժամանակ դուրս գալ ընկերությունից (անկախ մյուս մասնակիցների համաձայնությունից) (հատոր 1-ին, գ.թ. 21-22):

4. 24.11.2008 թվականի դիմումով Ընկերության հիմնադիր անդամ Գոմիդաս Հարթունյանը Ընկերության տնօրեն Ռաֆայել Մկրտչյանին հայտնել է, որ Ընկերության հիմնադիր անդամ է և ունի 40% բաժնեմաս: Համաձայն «Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների մասին» ՀՀ օրենքի 21 և 23 հոդվածների՝ ցանկանում է դուրս գալ Ընկերությունից (հատոր 1-ին, գ.թ.28):

5. Գոմիդաս Հարթունյանի ներկայացուցիչ Սիրվարդ Բաղդասյանի գրության համաձայն՝ ուղղված Ընկերության տնօրեն Ռաֆայել Մկրտչյանին, Գոմիդաս Հարթունյանն Ընկերության 40% բաժնետերն է: Հինք ընդունելով «Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների մասին» ՀՀ օրենքի 12-րդ հոդվածը՝ խնդրել է իրեն տրամադրել տեղեկություններ Ընկերության գործունեության մասին, քանի որ ցանկանում է դուրս գալ Ընկերությունից՝ օգտվելով վերը նշված օրենքի 12-րդ հոդվածի «ե» ենթակետի և նույն օրենքի 14-րդ հոդվածով ամրագրված և իրենց կանոնադրությամբ նախատեսված 4.3 կետի իր իրավունքներից:

ա. Հաշվարկել և տալ տեղեկություն, թե որքան է կազմում ընկերության շահույթը և դրանից առանձին հաշվարկել իր 40% բաժնեմասի արժեքը: Հայտնել՝ ինչու իրեն չի հատկացվել Ընկերության շահույթից ստացված իր հասանելիք մասը: Պատասխանել, թե ինչ արժեքի և ինչ գույք է գնվել իր կողմից բանկերի միջոցով ուղարկված Ընկերությունն ստեղծելու համար ներդրված գումարներով: Ինչ հաշիվներ ունի ընկերությունն օտարերկրյա և ՀՀ բանկերում: Ընկերությունը քանի աշխատակից ունի և ինչպիսի պայմանագրեր է կնքել նրանց հետ: Նշել նաև աշխատատեղերը և նրանց վճարված աշխատավարձի չափը: Խնդրել է պատասխանն ուղարկել իր ներկայացուցչի հասցեով (հատոր 1-ին, գ.թ.31, 54):

6. Համաձայն ՀՀ ԱՆ ԳԱՀԿ ծառայության Կենտրոնական մարմնի հարկադիր կատարման օպերատիվ բաժնի առաջատար խորհրդատու Կ. Խուդյանի կողմից 23.01.2009 թվականին կազմված Կատարողական գործողությունների վերաբերյալ արձանագրության՝ Երևանի Աջափնյակ և Դավթաշեն համայնքների ընդհանուր իրավասության դատարանի կողմից 18.12.2008 թվականի թիվ ԵԱԳԴ/0805/02/08 կատարողական թերթի համաձայն պետք է Գոմիդաս Հարթունյանի սեփականության իրավունքի իրականացման խոչընդոտները վերացնել՝ Ռաֆայել Մկրտչյանին պարտավորեցնել ազատել Երևանի Դավթաշեն 4-րդ թաղամասի թիվ 41/1 հասցեում գտնվող անշարժ գույքը՝ այն ամբողջությամբ հանձնելով սեփականատիրոջ տնօրինմանը (հատոր 1-ին, գ.թ.84-86):

7. Ընկերության տնօրենի 21.07.2010 թվականի տեղեկանքի համաձայն՝ Ընկերությունն իր հիմնադիրներից կամ մասնակիցներից, այդ թվում նաև Գոմիդաս Հարթունյանից երբևէ Ընկերությունից դուրս գալու դիմում չի ստացել (հատոր 2-րդ, գ.թ. 102):

8. Գոմիդաս Հարթունյանը հայցադիմումին կից ներկայացրել է 24.11.2008 թվականի փոստային անդորրագրերի պատճենները՝ հասցեագրված հիմնադիրներ Ռաֆայել Մկրտչյանին և Գուրգեն Մարտիրոսյանին (հատոր 1-ին, գ.թ. 29, հատոր 3-րդ, գ.թ. 55):

9. Սույն գործի քննությունն իրականացվել է դատաքննության նախապատրաստական փուլով:

10. Գործում առկա 18.10.2010 թվականի դատական նիստի արձանագրության համաձայն՝ պատասխանողի ներկայացուցիչը միայն դատաքննության ընթացքում է վիճարկել Գումիդաս Հարթունյանի կողմից հայցադիմումին կից ներկայացված 24.11.2008 թվականի փոստային անդորրագրերի պատճենները և միջնորդել հանել դրանք ապացույցների շարքից, որպես ոչ պատշաճ ապացույցներ (հատոր 3-րդ, գ.թ. 12)։

11. Դատարանը գործի քննության ժամանակ, այդ թվում նաև 18.10.2010 թվականի դատաքննության ընթացքում նշված պատճենները հետազոտելիս Գումիդաս Հարթունյանից չի պահանջել ներկայացնել այդ փոստային անդորրագրերի ինչպես բնօրինակը, այնպես էլ դրա վավերացված պատճենը։ Գումիդաս Հարթունյանը 24.11.2008 թվականին առաքված փոստային անդորրագրերի բնօրինակները ներկայացրել է վերաքննիչ բողոքին կից (հատոր 3-րդ, գ.թ. 55-56)։

12. Սույն գործում առկա չեն Լկերության հիմնադիր անդամ Գումիդաս Հարթունյանի 24.11.2008 թվականի դիմումը և Գումիդաս Հարթունյանի ներկայացուցիչ Միրվարդ Բաղդամյանի գրությունն Ընկերության Տնօրենի և Գորգեն Մարտիրոսյանի կողմից ստանալու փաստը հավաստող ապացույցներ։

4. Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումները.

Քննելով վճռաբեկ բողոքը նշված հիմքերի սահմաններում՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ՝

1. վճռաբեկ բողոքն առաջին հիմքով հիմնավոր է մասնակիորեն հեղեղյալ պարձառաբանությամբ՝

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 48-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ գործին մասնակցող յուրաքանչյուր անձ պետք է ապացուցի իր վկայակոչած փաստերը։ Նույն հոդվածի 2-րդ կետի համաձայն՝ գործի լուծման համար էական նշանակություն ունեցող ապացուցման ենթակա փաստերը որոշում է դատարանը՝ **գործին մասնակցող անձանց** պահանջների և **առարկությունների հիման վրա**։

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 53-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ դատարանը յուրաքանչյուր ապացույց գնահատում է գործում եղած բոլոր ապացույցների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտության վրա հիմնված ներքին համոզմամբ։

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 149⁸-րդ հոդվածի 2-րդ կետի 5-րդ և 6-րդ ենթակետերի համաձայն՝ դատարանը նախնական դատական նիստում կողմերի հետ քննարկում է ապացուցում պահանջող փաստերի շրջանակը և ապացուցման պարտականության բաշխման կանոններին համապատասխան՝ կողմերի միջև բաշխում է ապացուցման պարտականությունը, ինչպես նաև սահմանում է ապացույցներ ներկայացնելու ժամկետները, կողմերի միջնորդությամբ, իսկ նույն օրենսգրքով նախատեսված դեպքում՝ իր նախաձեռնությամբ, պահանջում է անհրաժեշտ ապացույցներ, լուծում է փորձաքննություն նշանակելու, դատական նիստին փորձագետներ, վկաներ կանչելու, թարգմանիչ ներգրավելու, տեղում իրեղեն և գրավոր ապացույցներն ուսումնասիրելու հարցերը։

Վճռաբեկ դատարանն իր՝ նախկինում կայացրած որոշումներում անդրադարձել է վերը նշված նորմերի իրավական վերլուծությանը։

Մասնավորապես, Վճռաբեկ դատարանը նշել է, որ գործի քննությունը դատաքննության նախապատրաստական փուլով իրականացնելիս դատարանը

պարտավոր է կողմերի հետ քննարկել ապացուցում պահանջող փաստերի շրջանակը և ապացուցման պարտականությունը կողմերի միջև բաշխել ապացուցման պարտականության բաշխման կանոններին համապատասխան: Ընդ որում, գործի լուծման համար էական նշանակություն ունեցող ապացուցման ենթակա փաստերի շրջանակը որոշելն անմիջական կախվածության մեջ է գտնվում գործին մասնակցող անձանց վկայակոչած փաստերի վերաբերյալ մյուս կողմի ներկայացրած առարկություններից:

Միաժամանակ, Վճռաբեկ դատարանը նշել է, որ գործը դատաքննության նախապատրաստելու ինստիտուտը նպատակաուղղված է ապահովելու գործի արդյունավետ քննությունը: Այդ նպատակով օրենսդիրը գործը դատաքննության նախապատրաստելու ժամանակ սահմանում է ոչ միայն կողմերի, այլև դատարանի գործողությունները: Այսինքն՝ դատարանն այդ փուլով դատավարությունը պետք է անցկացնի իր առջև դրված խնդիրներն իրականացնելու համար, և գործը դատաքննության նախապատրաստելու ժամանակ դատարանի գործողությունները պետք է ուղղված լինեն ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 53-րդ հոդվածով նախատեսված ապացույցների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտության համար համապատասխան պայմանների ապահովմանը, գործի համար նշանակություն ունեցող ապացուցման ենթակա փաստերի որոշմանը և գործը լուծելու համար ձիշտ իրավանորմերի կիրառմանը (*տես՝ Երևանի քաղաքապետարանի «Երևանի Էլեկտրապրանսպորտ» ՓԲԸ-ի հայցն ընդդեմ Դավիթ Մարտիրոսյանի ու ՀՀ ոստիկանության անձնագրային և վիզաների վարչության Էրեբունի անձնագրային բաժնի՝ հաշվառումից հանելու և առանց փոխհարցուման ապօրինի գրադեցրած տարածքից վտարելու պահանջների մասին ու Դավիթ Մարտիրոսյանի հակընդդեմ հայցը՝ քնակելի տարածության օգտագործման իրավունքը ձանաչելու պահանջի մասին գործով Վճռաբեկ դատարանի 27.05.2011 թվականի թիվ ԵԷԳ/1637/02/09 որոշումը*):

Բացի այդ, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 54-րդ հոդվածի 2-րդ կետի համաձայն՝ գրավոր փաստաթղթերը ներկայացվում են բնօրինակով կամ պատշաճ վավերացված պատճենի ձևով: Փաստաթղթերի բնօրինակները ներկայացվում են այն դեպքում, եթե գործի հանգամանքները, օրենքներին կամ այլ իրավական ակտերին համապատասխան, կարող են հաստատվել միայն նման փաստաթղթով, իսկ անհրաժեշտության դեպքում՝ **դատարանի պահանջով**:

Վերոնշյալ հոդվածից հետևում է, որ գրավոր ապացույցները դատարան ներկայացվում են երկու ձևով՝ բնօրինակով կամ պատշաճ վավերացված պատճենի ձևով: Ընդ որում, դատարանը, պարզելով գործով ապացուցման ենթակա փաստերը, կողմից կարող է պահանջել համապատասխան գրավոր ապացույցներ, իսկ անհրաժեշտության դեպքում՝ փաստաթղթերի բնօրինակները:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 219-րդ հոդվածի 2-րդ կետի համաձայն՝ վերաքննիչ դատարանն իրավունք չունի նոր ապացույց ընդունելու և բողոքը քննելիս հիմնվում է միայն այն ապացույցների վրա, որոնք ներկայացվել են առաջին ատյանի դատարանին: Եթե առաջին ատյանի դատարանում գործի քննության ժամանակ ապացույցը չի ներկայացվել կողմերի կամքից անկախ հանգամանքներով, ապա վերաքննիչ դատարանը բեկանում է գործը և այն ուղարկում համապատասխան առաջին ատյանի դատարան՝ նոր քննության, եթե գտնում է, որ ապացույցն էական նշանակություն ունի գործի լուծման համար:

Տվյալ նորմի վերլուծությունից հետևում է, որ Վերաքննիչ դատարանում նոր

ապացույցների ընդունումն օրենսդիրը պայմանավորել է որոշակի բացառությամբ, այն է՝ եթե

- առաջին ատյանի դատարանում գործի քննության ժամանակ ապացույցը չի ներկայացվել կողմերի կամքից անկախ հանգամանքներով և

- ապացույցն էական նշանակություն ունի գործի լուծման համար:

Սույն գործով Դատարանն արձանագրել է, որ փոստային առաքման անդորրագրերը ներկայացվել են պատճենների տեսքով, ինչի պարագայում դատարանը գնահատում է որպես ոչ պատշաճ ապացույցներ, քանի որ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 54-րդ հոդվածի 2-րդ կետի համաձայն՝ գրավոր փաստաթղթերը ներկայացվում են բնօրինակով կամ պատշաճ վավերացված պատճենի ձևով:

Սույն գործով Վերաքննիչ դատարանը, դատական ակտը թողնելով օրինական ուժի մեջ, պատճառաբանել է, որ բողոքաբերն ընդհանուր իրավասության դատարանում ներկայացրել է փոստային անդորրագրերը պատճենի ձևով և ծանուցված լինելով դատական նիստերի վերաբերյալ՝ զրկված չի եղել դրանց բնօրինակը ներկայացնելու հնարավորությունից, ուստի Վերաքննիչ դատարանում նրա ներկայացված փոստային անդորրագրերի բնօրինակները չեն կարող ընդունվել:

Մինչդեռ, սույն գործի փաստերի համաձայն՝ սույն գործի քննությունն իրականացվել է դատաքննության նախապատրաստական փուլով, 18.10.2010 թվականի դատական նիստի արձանագրությամբ պատասխանողի ներկայացուցիչը դատաքննության ընթացքում է միայն վիճարկել Գոմիդաս Հարթունյանի կողմից հայցադիմումին կից ներկայացված 24.11.2008 թվականի փոստային անդորրագրերի պատճենները և միջնորդել հանել դրանք ապացույցների շարքից, որպես ոչ պատշաճ ապացույցներ: Դատարանը գործի քննության ժամանակ, այդ թվում նաև 18.10.2010 թվականին նշանակված դատաքննության ընթացքում նշված պատճենները հետազոտելիս Գոմիդաս Հարթունյանից չի պահանջել ներկայացնել այդ փոստային անդորրագրերի ինչպես բնօրինակը, այնպես էլ դրանց վավերացված պատճենները: Գոմիդաս Հարթունյանը 24.11.2008 թվականին առաքված փոստային անդորրագրերի բնօրինակները ներկայացրել է վերաքննիչ բողոքին կից:

Նման պայմաններում Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Դատարանը, գործը դատաքննության նախապատրաստելիս պարզելով գործով ապացուցման ենթակա փաստերը, ընդունել է Գոմիդաս Հարթունյանի կողմից հայցադիմումին կից ներկայացրած 24.11.2008 թվականի փոստային անդորրագրերի պատճենները՝ հասցեագրված հիմնադիրներ Ռաֆայել Մկրտչյանին և Գուրգեն Մարտիրոսյանին, գործի դատաքննության ընթացքում հետազոտել է այդ ապացույցները, սակայն վճռի հիմքում դրել է դրա բնօրինակը կամ պատշաճ վավերացված պատճենը չներկայացնելու հանգամանքը՝ խախտելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 54-րդ հոդվածը:

Հետևաբար, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ հիմնավոր է բողոք բերած անձի այն փաստարկը, որ 24.11.2008 թվականին առաքված փոստային անդորրագրերի բնօրինակները առաջին ատյանի դատարանում գործի քննության ժամանակ չի ներկայացվել իր կամքից անկախ:

Միաժամանակ, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ այդ ապացույցները ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 219-րդ հոդվածի 2-րդ կետի ուժով գործի լուծման համար էական նշանակություն չունեն, քանի որ սույն գործում

Ընկերության հիմնադիր անդամ Գոմիդաս Հարթունյանի 24.11.2008 թվականի դիմումը և Գոմիդաս Հարթունյանի ներկայացուցիչ Միրվարդ Բադրամյանի գրությունն Ընկերության Տնօրենի և հիմնադիր անդամ Գուրգեն Մարտիրոսյանի կողմից ստանալու փաստը հավաստող ապացույցների բացակայության պայմաններում, միայն այդ փոստային անդորրագրերի բնօրինակները բավարար չեն հաստատված համարելու Ընկերությունից դուրս գալու վերաբերյալ Գոմիդաս Հարթունյանի կամքն արտահայտող դիմումն Ընկերություն ներկայացված և դրանք Ընկերությունում ստացված լինելու հանգամանքները:

Ինչ վերաբերում է բողոք բերած անձի այն փաստարկին, որ Վերաքննիչ դատարանը խախտել է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 109-րդ հոդվածի 1-ին կետը, ապա Վճռաբեկ դատարանը գտնում է, որ այն անհիմն է հետևյալ պատճառաբանությամբ՝

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 109-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ դատարանը կարձում է գործի վարույթը, եթե վեճը ենթակա չէ դատարանում քննության:

«Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների մասին» ՀՀ օրենքի 12-րդ հոդվածի «ե» կետի համաձայն՝ ընկերության մասնակիցներն իրավունք ունեն՝ անկախ մյուս մասնակիցների համաձայնությունից, ցանկացած պահի դուրս գալ ընկերությունից:

Սույն օրենքի 21-րդ հոդվածի համաձայն՝ ընկերության մասնակիցն իրավունք ունի ցանկացած ժամանակ դուրս գալ ընկերությունից՝ անկախ ընկերության կամ նրա մասնակիցների համաձայնությունից: Ընկերության մասնակցի՝ ընկերությունից դուրս գալու հետ կապված հաշվարկները կատարվում են սույն օրենքի 23-րդ հոդվածի 1-ին կետով սահմանված կարգով:

Տվյալ նորմերից ուղղակիորեն բխում է, որ ընկերության մասնակցի նշված իրավունքի իրացման համար որևէ նախապայման չի պահանջվում, և դա կախված է բացարձակապես մասնակցի կամահայտությունից: Սա նշանակում է, որ մասնակցի (սույն գործով հայցվորի) նշված իրավունքի իրացման հիմքում ընկած չէ այս կամ այն սուբյեկտի (սույն գործով պատասխանողների) պարտականությունը՝ դրսևորելու որոշակի վարքագիծ (գործողություն, անգործություն), որի կատարումն անհրաժեշտ կլինի մասնակցի այդ իրավունքի իրացման համար:

Սույն գործում առկա չէ որևէ ապացույց այն մասին, որ Ընկերությունից դուրս գալու վերաբերյալ Գոմիդաս Հարթունյանի կամքն արտահայտող դիմումը ներկայացվել և Ընկերության կողմից ստացվել է:

Հետևաբար, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Գոմիդաս Հարթունյանի կողմից չի պահպանվել վեճի լուծման, այն է՝ 40 տոկոս բաժնեմասով Գոմիդաս Հարթունյանին Ընկերությունից դուրս եկած համարելու հայցապահանջի արտադատարանական կարգը, որպիսի պայմաններում վեճն այդ մասով ենթակա չէ դատարանում քննության:

Ման պայմաններում Վճռաբեկ դատարանը գտնում է, որ մերժման է ենթակա Գոմիդաս Հարթունյանի՝ պատասխանողներին իր 40 տոկոս բաժնեմասը վճարելուն պարտավորեցնելու պահանջի մասը հետևյալ պատճառաբանությամբ.

«Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների մասին» ՀՀ օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ Ընկերության մասնակցի՝ ընկերությունից դուրս գալու դիմումը ներկայացնելու պահից նրա բաժնեմասը

փոխանցվում է ընկերությանը: **Ընկերությունը պարտավոր է ընկերությունից դուրս գալու դիմումը ներկայացնելու պահից՝ 6 ամսվա ընթացքում**, մասնակցին վճարել բաժնետնայի (կանոնադրական կապիտալում նրա ավանդի ոչ լրիվ վճարման դեպքում՝ վճարված մասին համապատասխան բաժնետնայի) արժեքը, որը որոշվում է ընկերությունից դուրս գալու մասին դիմումը ներկայացնելու պահին ընկերության վերջին հաշվետու ժամանակաշրջանի հաշվապահական հաշվետվությունների հիման վրա:

Վերը նշվածը հաշվի առնելով և սույն գործի փաստերը համադրելով՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Ընկերությունից դուրս գալու վերաբերյալ Գումիդաս Հարթունյանի կամքն արտահայտող դիմումը ներկայացված և Ընկերության կողմից ստացված լինելու փաստերը պարզված չլինելու պայմաններում հնարավոր չէ հաստատված համարել և արձանագրել «Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների մասին» ՀՀ օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի ուժով Ընկերության կողմից Գումիդաս Հարթունյանի իրավունքի խախտման փաստը:

Տվյալ դեպքում Վճռաբեկ դատարանը հիմնավոր է համարում Վերաքննիչ դատարանի այն պատճառաբանությունը, որ սույն գործով չի հաստատվել Ընկերության կողմից «Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների մասին» ՀՀ օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի ուժով իր պարտականության կատարման հիմքերի առկայությունը:

2. վճռաբեկ բողոքը երկրորդ հիմքով հիմնավոր է հեղինակ պարձառաբանությամբ՝

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 2-րդ հոդվածի համաձայն՝ շահագրգիռ անձն իրավունք ունի սույն օրենսգրքով սահմանված կարգով դիմել դատարան՝ ՀՀ Սահմանադրությամբ, օրենքով և այլ իրավական ակտերով սահմանված կամ պայմանագրով նախատեսված իր իրավունքների, ազատությունների և օրինական շահերի պաշտպանության համար:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 163-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ սեփականության իրավունքը սուբյեկտի՝ օրենքով և այլ իրավական ակտերով ձանաչված ու պահպանվող իրավունքն է՝ իր հայեցողությամբ տիրապետելու, օգտագործելու և տնօրինելու իրեն պատկանող գույքը:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 277-րդ հոդվածի համաձայն՝ սեփականատերն իրավունք ունի պահանջել վերացնելու իր իրավունքների ամեն մի խախտում, թելուզ և այդ խախտումները գուգորդված չեն եղել տիրապետումից զրկելու հետ:

Վերը նշված նորմերի վերլուծությունից հետևում է, որ սեփականատերն օժտված է իրեն պատկանող գույքն իր հայեցողությամբ տիրապետելու, օգտագործելու և տնօրինելու իրավունքներով և իրավունք ունի պահանջել վերացնելու իր **իրավունքների ամեն մի խախտում**, որոնք կապված են և խոչընդոտում են այդ իրավունքների իրականացմանը:

Սույն գործում առկա ՀՀ ԿԱ ԱԳԿՊԿ Դավթաշենի տարածքային ստորաբաժանման կողմից տրված 13.05.2004 թվականի թիվ 1130402 սեփականության իրավունքի գրանցման վկայականի համաձայն՝ Գումիդաս Հարթունյանը Երևանի Դավթաշեն 4-րդ թաղամասի թիվ 41/1 հասցեում գտնվող ավտոկայանատեղի, ավտոտեխսպասարկման կայանի սեփականատերն է, Ընկերության հիմնադիրների ընդհանուր (հիմնադիր) ժողովի 17.05.2004 թվականի թիվ 1 արձանագրությամբ՝ ժողովը որոշել է Ընկերության գտնվելու վայր ընդունել Հայաստանի Հանրապետություն, ք.

Երևան, Դավթաշեն 4-րդ թաղամաս, շենք 41/1 հասցեն:

Տվյալ դեպքում սեփականատեր Գոմիդաս Հարթունյանը պահանջել է իր սեփականությունը հանդիսացող Երևանի Դավթաշեն 4-րդ թաղամասի թիվ 41/1 հասցեից հանել Ընկերության գրանցման հասցեն:

Հետևաբար, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Գոմիդաս Հարթունյանի պահանջը Ընկերության գրանցման վայրն իր սեփականությունը հանդիսացող տարածքից հանելու մասով բխում է ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 277-րդ հոդվածից:

Ուստի հիմնավոր չէ Վերաքննիչ դատարանի պատճառաբանությունն այդ մասով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 109-րդ հոդվածի 1-ին կետի հիմքով գործի վարույթի կարճելու վերաբերյալ:

Վճռաբեկ բողոքի պատասխանում բերված փաստարկները մասնակիորեն հերքվում են վերոնշյալ պատճառաբանությամբ:

Այսպիսով, վճռաբեկ բողոքի երկրորդ հիմքի առկայությունը Վճռաբեկ դատարանը դիտում է բավարար՝ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 227-րդ և 228-րդ հոդվածների ուժով Վերաքննիչ դատարանի որոշումը մասնակիորեն բեկանելու համար:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 240-241²-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

ՈՐՈՇԵՑ

1. Վճռաբեկ բողոքը բավարարել մասնակիորեն: Բեկանել ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 27.01.2011 թվականի որոշման՝ «Ազուր-Քոմփ» ՍՊԸ-ի գրանցման վայրն իր տարածքից հանելու պահանջի մասը և այդ մասով գործն ուղարկել Երևանի Աջափնյակ և Դավթաշեն վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարան՝ նոր քննության: Որոշումը մնացած մասով թողնել օրինական ուժի մեջ:

2. Դատական ծախսերի բաշխման հարցին անդրադառնալ գործի նոր քննության ընթացքում:

3. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

*ՆԱԽԱԳԱՀՈՂ՝ ստորագրություն
ԴԱՏԱՎՈՐՆԵՐ՝ ստորագրություններ*

ԴԱՏԱԿԱՆ ԾԱԽՍԵՐ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական
դատարանի որոշում

Քաղաքացիական գործ թիվ ԼԴ/0777/02/09
2011թ.

Քաղաքացիական գործ թիվ ԼԴ/0777/02/09

Նախագահող դատավոր՝ Ա.Խառատյան

Դատավորներ՝ Կ.Զիլինգարյան

Ա.Պետրոսյան

ՈՐՈՇՈՒՄ

ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քաղաքացիական և
վարչական պալատը (այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

*նախագահությամբ
մասնակցությամբ դատավորներ*

Ե.ԽՈՒՆԴԿԱՐՅԱՆԻ
Է.ՀԱՅՐԻՅԱՆԻ
Վ.ԱԲԵԼՅԱՆԻ
Ս.ԱՆՏՈՆՅԱՆԻ
Վ.ԱՎԱՆԵՍՅԱՆԻ
Ա.ԲԱՐՍԵՂՅԱՆԻ
Մ.ԴՐՄԵՅԱՆԻ
Գ.ՀԱԿՈԲՅԱՆԻ
Տ.ՊԵՏՐՈՍՅԱՆԻ
Ե.ՍՈՂՈՄՈՆՅԱՆԻ

2011 թվականի մարտի 4-ին

դռնբաց դատական նիստում, քննելով Արմեն, Ալվինա և Նաիրա Մինասյանների
վճռաբեկ բողոքը ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 06.10.2010 թվականի
որոշման դեմ՝ ըստ «Արդշինինվեստորանկ» ՓԲ ընկերության (այսուհետ՝ Ընկերություն)
ներկայացուցիչ Վանաձորի մասնաձյուղի կառավարիչ Միեր Մարտիրոսյանի հայցի
ընդդեմ Արամայիս, Արմեն և Ալվինա Մինասյանների՝ վարկային պայմանագրով
պարտքն ամբողջությամբ բռնագանձելու, բռնագանձումը գրավի առարկայի և այլ
գույքի վրա տարածելու, վարկային պայմանագրով նախատեսված տոկոսները
հաշվեգրելու պահանջների մասին,

ՊԱՐԶԵՑ

1. Գործի դատավարական նախապատմությունը

Դիմելով դատարան՝ Ընկերությունը պահանջել է Արամայիս, Արմեն և Ալվինա Մինասյաններից համապարտության կարգով բռնագանձել 1.269.845,30 ՀՀ դրամ, որից վարկի մնացորդը՝ 1.263.575,70 ՀՀ դրամ, ժամկետային տոկոս՝ 5.100,10 ՀՀ դրամ, ժամկետանց վարկի տոկոս՝ 1.169,50 ՀՀ դրամ, ինչպես նաև բռնագանձել վճարված 29.396,90 ՀՀ դրամ պետական տուրքը և 1.263.575,70 ՀՀ դրամ վարկի վրա 19.06.2009 թվականից մինչև պարտավորության փաստացի կատարման օրը հաշվարկել տոկոսներ՝ թիվ 141 վարկային պայմանագրի 16 կետով նախատեսված տարեկան 44 տոկոսադրույքով, բռնագանձումը տարածել Արամայիս, Արմեն և Ալվինա Մինասյաններին սեփականության իրավունքով պատկանող գրավադրված՝ Վանաձորի Չուխաջյան փողոցի 60 շենքի թիվ 23 հասցեում գտնվող 95,08քմ մակերեսով բնակարանի և բնակարանի հետ օրենքի ուժով գրավադրված հողամասի և բազմաբնակարան շենքի ընդհանուր գույքի բաժնային սեփականության իրավունքում համապատասխան բաժնի վրա և պատասխանողներին սեփականության իրավունքով պատկանող այլ գույքի վրա:

ՀՀ Լոռու մարզի ընդհանուր իրավասության դատարանի (այսուհետ՝ Դատարան) 24.09.2009 թվականի վճռով հայցը բավարարվել է մասնակիորեն: Վճովել է Արամայիս, Արմեն և Ալվինա Մինասյաններից համապարտության կարգով հոգուտ Ընկերության «բռնագանձել 1.308.140,20 ՀՀ դրամ, որից 1.207.585,60 ՀՀ դրամ հիմնական վարկի պարտքի գումար, 5.704,30 ՀՀ դրամ ժամկետային տոկոսների գումար, 30.248,70 ՀՀ դրամ ժամկետանց տոկոսների գումար, 30.615,80 ՀՀ դրամ ժամկետանց վարկի տոկոսների գումար, 4.588,90 ՀՀ դրամ տույժի գումար և 29.396,90 ՀՀ դրամ հայցվորի կողմից նախապես վճարված պետական տուրքի գումար: 1.207.585,60 ՀՀ դրամ վարկի հիմնական պարտքին հաշվեգրել և բռնագանձել տոկոսներ՝ սկսած 03.02.2009 թվականից մինչև պարտավորության փաստացի կատարման օրը, ՀՀ կենտրոնական բանկի սահմանած բանկային տոկոսի հաշվարկային դրույքներով: Գումարի բռնագանձումը տարածել գրավի առարկայի՝ Արամայիս Մինասյանին, Արմեն Մինասյանին և Ալվինա Մինասյանին սեփականության իրավունքով պատկանող Վանաձոր քաղաքի Չուխաջյան 60 շենքի 23 հասցեում գտնվող 95,08 քմ մակերեսով բնակարանի, բնակարանի հետ միասին օրենքի ուժով գրավ դրված հողամասի և բազմաբնակարան շենքի ընդհանուր գույքի բաժնային սեփականության իրավունքում համապատասխան բաժնի վրա: Գրավի առարկայի անբավարարության դեպքում բռնագանձումը տարածել նաև համապատասխանողներին սեփականության իրավունքով պատկանող այլ գույքի վրա: Մնացած մասով հայցապահանջը մերժել»:

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի (այսուհետ՝ Վերաքննիչ դատարան) 06.10.2010 թվականի որոշմամբ Արմեն և Ալվինա Մինասյանների ու գործին մասնակից չդարձված անձ Նաիրա Մինասյանի վերաքննիչ բողոքը մերժվել է, և Դատարանի 24.09.2009 թվականի վճիռը թողնվել է օրինական ուժի մեջ: Միաժամանակ, Արմեն, Ալվինա և Նաիրա Մինասյաններից հոգուտ պետական բյուջեի որպես վերաքննիչ բողոքի համար սահմանված պետական տուրք բռնագանձվել է 39.244 ՀՀ դրամ:

Սույն գործով վճռաբեկ բողոք են ներկայացրել Արմեն, Ալվինա և Նաիրա Մինասյանները:

Վճռաբեկ բողոքի պատասխանն չի ներկայացվել:

2. Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը

Սույն վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքերի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

1. Վերաքննիչ դատարանը կիրառել է ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 360-րդ հոդվածը, որը չպետք է կիրառեր, սխալ է մեկնաբանել ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 10-րդ հոդվածը, խախտել է ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 305-րդ հոդվածը, 346-րդ հոդվածի 2-րդ կետը, 375-րդ, 368-րդ հոդվածները, 437-րդ հոդվածի 4-րդ և 5-րդ կետերը, 438-րդ, 450-րդ և 447-րդ հոդվածների 1-ին կետերը, «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 86-րդ հոդվածի 1-ին մասը, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 47-րդ հոդվածի 1-ին, 2-րդ կետերը, 51-րդ հոդվածի 1-ին կետը և 132-րդ հոդվածը:

Բողոք բերած անձինք նշված պնդումը պարձառաբանել են հետևյալ փաստարկներով.

Վերաքննիչ դատարանը գործում առկա ապացույցները բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ չի գնահատել համակցության մեջ և անտեսել է այն հանգամանքը, որ Դատարանը սխալ է մեկնաբանել կողմերի միջև կնքված վարկային պայմանագիրը և ի ապահովումն ստանձնած պարտավորության կատարման կնքված գրավի պայմանագիրը:

Վերաքննիչ դատարանը պատշաճ իրավական գնահատական չի տվել այն հանգամանքին, որ գրավի պայմանագրով նախատեսված չէ համապարտ պարտականություն, հետևաբար գրավի պայմանագիրը դեռևս համապարտ պատասխանատվության ծագման հիմք չէ:

Սիաժամանակ, Վերաքննիչ դատարանն Արմեն, Ալվինա և Նաիրա Մինասյաններից վերաքննիչ բողոք բերելու համար սահմանված պետական տուրքը բռնագանձելիս անտեսել է այն հանգամանքը, որ բողոք բերած անձանց վերաքննիչ բողոքը վերաբերել է ոչ գույքային բնույթի պահանջին, այսինքն՝ չի վիճարկվել բռնագանձված գումարը, այլ համապարտ պատասխանատվության առկայությունը կամ բացակայությունը:

2. Վերաքննիչ դատարանը խախտել է ՀՀ Սահմանադրության 18-րդ, 19-րդ հոդվածները, «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածի, 1-ին արձանագրության 1-ին հոդվածը, ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 23-րդ, 170-րդ, 225-րդ հոդվածները, 276-րդ հոդվածի 3-րդ կետը, 278-րդ հոդվածը, 346-րդ հոդվածի 2-րդ կետը, ՀՀ ընդհանրական օրենսգրքի 4-րդ, 5-րդ հոդվածները, 6-րդ հոդվածի 2-րդ, 3-րդ կետերը, 7-րդ, 26-րդ, 32-րդ, 43-րդ, 52-րդ հոդվածները, 53-րդ հոդվածի 1-ին կետը, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 34-րդ, 35-րդ, 78-րդ հոդվածները:

Բողոք բերած անձինք նշված պնդումը պարձառաբանել են հետևյալ փաստարկներով.

Վերաքննիչ դատարանն անտեսել է այն հանգամանքը, որ գրավադրված գույքը ձեռք է բերվել ամուսնության ընթացքում, հետևաբար այն համատեղ սեփականություն է, մինչդեռ գրավի պայմանագիրը կնքվել է առանց Նաիրա Մինասյանի համաձայնության և ի խախտումն անչափահաս զավակների շահերի: Բացի այդ, Վերաքննիչ դատարանն անտեսել է, որ Դատարանը Նաիրա Մինասյանին մասնակից չի դարձրել գործի քննությանը, ինչի արդյունքում գրվել է արդար դատաքննության

իրավունքի իրականացման հնարավորությունից:

Բացի այդ Վերաքննիչ դատարանն անտեսել է այն հանգամանքը, որ գրավադրված գույքի սեփականության իրավունքի ձեռքբերման հիմքը ժառանգությունն է:

Վերոգրյալի հիման վրա բողոք բերած անձինք պահանջել են բեկանել Վերաքննիչ դատարանի 06.10.2010 թվականի որոշումը և գործն ուղարկել նոր քննության:

3. Վճռաբեկ բողոքի քննության համար նշանակություն ունեցող փաստերը

Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1. 10.04.2008 թվականի թիվ 141 վարկային պայմանագրով Ընկերությունն Արամայիս Մինասյանին տրամադրել է 2.000.000 ՀՀ դրամ սպառողական վարկ տարեկան 22 տոկոս տոկոսադրույքով՝ մինչև 10.04.2010 թվականը վճարելու պայմանով (հատոր 1-ին, գ.թ.11):

2. Նոտարական կարգով վավերացված 10.04.2008 թվականի ընդհանուր սեփականության ներքո գտնվող անշարժ գույքի գրավի (հիփոթեքի) թիվ 141 պայմանագրով Արամայիս, Արմեն և Ալվինա Մինասյանները գրավադրել են սեփականության իրավունքով պատկանող Վանաձորի Չուխաջյան 60-րդ շենքի թիվ 23 հասցեում գտնվող 95,08 քմ մակերեսով բնակարանը, որից ծագող իրավունքները ենթարկվել են պետական գրանցման (հատոր 1-ին, գ.թ.14-17):

3. Արմեն Մինասյանը և Նաիրա Մինասյանն ամուսնացել են 24.08.1996 թվականին (հատոր 2-րդ, գ.թ. 15), ունեն երկու զավակ՝ 1996 թվականին և 1999 թվականին ծնված (հատոր 2-րդ, գ.թ. 13-14):

4. Վանաձորի Չուխաջյան փողոցի 60-րդ շենքի թիվ 23 հասցեի գրավադրված անշարժ գույքը համատեղ ամուսնության ընթացքում ձեռք բերված լինելու վերաբերյալ Նաիրա Մինասյանը որևէ պատշաճ ապացույց չի ներկայացրել: Դատարան չի ներկայացվել նաև անշարժ գույքի սեփականության իրավունքի ձեռքբերման հիմքը հիմնավորող ապացույց:

4. Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումները.

Քննելով վճռաբեկ բողոքը նշված հիմքերի սահմաններում՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ՝

1) Վճռաբեկ բողոքն առաջին հիմքով հիմնավոր է մասնակիորեն հետևյալ պատճառաբանությամբ.

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 53-րդ հոդվածի համաձայն՝ դատարանը յուրաքանչյուր ապացույց գնահատում է գործում եղած բոլոր ապացույցների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտության վրա հիմնված ներքին համոզմամբ:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 345-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ պարտավորության ուժով մի անձը (պարտապանը) պարտավոր է մեկ այլ անձի (պարտատիրոջ) օգտին կատարել որոշակի գործողություն. այն է՝ վճարել դրամ, հանձնել գույք, կատարել աշխատանք, մատուցել ծառայություն և այլն, կամ ձեռնպահ մնալ որոշակի գործողություն կատարելուց, իսկ պարտատերն իրավունք ունի պարտապանից պահանջել կատարելու իր պարտականությունը: Նույն հոդվածի

2-րդ կետի համաձայն՝ պարտավորությունները ծագում են պայմանագրից, վնաս պատճատելու հետևանքով և սույն օրենսգրքում նշված այլ հիմքերից:

Վերաքննիչ դատարանը, կիրառելով ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 360-րդ և 447-րդ հոդվածները, Արմեն և Ալվինա Մինասյանների վերաքննիչ բողոքը մերժելիս հիմք է ընդունել այն հանգամանքը, որ Ընկերության և Արամայիս, Արմեն և Ալվինա Մինասյանների միջև 10.04.2008 թվականին կնքվել է ընդհանուր սեփականության ներքո գտնվող անշարժ գույքի գրավի (հիփոթեքի) թիվ 141 պայմանագիրը և ըստ այդ պայմանագրի՝ Վանաձորի Չուխաջյան փողոցի 60-րդ շենքի թիվ 23 հասցեի անշարժ գույքի համասեփականատերեր Արամայիս, Արմեն և Ալվինա Մինասյաններն ի սպառնալուսն Արամայիս Մինասյանի ստանձնած պարտավորության գրավադրել են ընդհանուր համատեղ սեփականության իրավունքով պատկանող գույքը: Ընդ որում, 10.04.2008 թվականի ընդհանուր սեփականության ներքո գտնվող անշարժ գույքի գրավի (հիփոթեքի) թիվ 141 պայմանագրի 14-րդ կետով գրավատուն և/կամ պարտապանը համապարտության կարգով պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ և Պայմանագրով ստանձնած պարտավորությունների խախտման համար, թեկուզ դրանք տեղի են ունեցել իր/իրենց կամքից անկախ պատճառներով (մեղքի բացակայություն): Այսպիսով, բողոք բերած անձինք՝ Արմեն և Ալվինա Մինասյանները, պարտավորվել են համապարտության կարգով կատարել Ընկերության հանդեպ Արամայիս Մինասյանի ստանձնած պարտավորությունը, հետևաբար, Դատարանը 10.04.2008 թվականին կնքված ընդհանուր սեփականության ներքո գտնվող անշարժ գույքի գրավի (հիփոթեքի) թիվ 141 պայմանագիրը ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 447-րդ հոդվածի պահպանմամբ մեկնաբանել է տառացի և վճիռը կայացնելիս իրավամբ կիրառել ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 360-րդ հոդվածը:

Մինչդեռ, Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 226-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ գրավի իրավունքը (այսուհետ՝ գրավը) գրավատուի գույքի նկատմամբ գրավատուի գույքային իրավունքն է, որը միաժամանակ միջոց է գրավատուի հանդեպ պարտապանի ունեցած դրամական կամ այլ պարտավորության կատարման ապահովման համար: Նույն հոդվածի 2-րդ կետի համաձայն՝ գրավը լրացուցիչ (ակցեսոր) պարտավորություն է գրավատուի (պարտատիրոջ) հանդեպ գրավատուի (պարտապանի) հիմնական պարտավորության կատարման ապահովման համար: Նույն հոդվածի 3-րդ կետի համաձայն՝ գրավով ապահովված պարտավորության պարտատերը (գրավատուն) պարտապանի կողմից այդ պարտավորությունը չկատարելու դեպքում գույքի տիրոջ (գրավատուի) մյուս պարտատերերի հանդեպ գրավ դրված գույքի արժեքից բավարարում ստանալու նախապատվության իրավունք ունի: Գրավի պայմանագրից ծագող իրավունքը լիազորված մարմնի կողմից վարվող գրավի գրանցման մատյանում առավել վաղ գրանցած գրավատուն, մյուս՝ գրավի պայմանագրերից ծագող իրենց իրավունքներն առավել ուշ գրանցած կամ չգրանցած գրավատուների հանդեպ գրավ դրված գույքի արժեքից բավարարում ստանալու նախապատվության իրավունք ունի:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 261-րդ հոդվածի համաձայն՝ հիփոթեքի պայմանագրով մի կողմը՝ գրավատուն, որը հիփոթեքով ապահովված վարկային պայմանագրով կամ այլ պարտավորությամբ (հիմնական պարտավորությամբ) պարտատերն է, այդ պարտավորությամբ գրավ դրված գույքի արժեքից գրավատուի մյուս պարտատերերի հանդեպ իր դրամական պահանջները բավարարելու նախապատվության իրավունք ունի:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 262-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ հիփոթեքի պայմանագրում պետք է նշված լինեն կողմերի անունները (անվանումները) և բնակության վայրերը (գտնվելու վայրերը), հիփոթեքի առարկան, հիփոթեքով ապահովված պարտավորության էությունը, չափը և կատարման ժամկետը: Նույն հոդվածի 3-րդ կետի համաձայն՝ հիփոթեքի պայմանագրում պետք է նշվեն հիփոթեքով ապահովված պարտավորությունը, դրա գումարը, ծագման հիմքերը և դրա կատարման ժամկետը: Եթե պարտավորությունը հիմնված է որևէ պայմանագրի վրա, ապա պետք է նշվեն պայմանագրի կողմերը, կնքելու տարին, ամիսը, ամսաթիվը և վայրը:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 346-րդ հոդվածի 3-րդ կետի համաձայն՝ պարտավորությունը պարտականություններ չի ստեղծում որպես կողմ չմասնակցող անձանց (երրորդ անձանց) համար:

Վերոգրյալ նորմերի վերլուծությունից հետևում է, որ գրավը հիմնական պարտավորության կատարման ապահովման միջոց է, որը համարվում է լրացուցիչ (ակցեսոր) պարտավորություն: Ընդ որում, պարտավորությունը պարտականություններ չի ստեղծում որպես կողմ չմասնակցող անձանց համար: Տվյալ դեպքում գրավատուն գրավով ապահովված հիմնական պայմանագրով պարտապան չէ, հետևաբար, նրա մոտ բացակայում է նաև հիմնական պարտավորությունը կատարելու պարտականությունը:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 447-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ պայմանագրի պայմանները մեկնաբանելիս դատարանը պետք է ելնի նրանում պարունակվող բառերի և արտահայտությունների տառացի նշանակությունից: Պայմանագրի պայմանի տառացի նշանակությունը պարզ չլինելու դեպքում այն սահմանվում է պայմանագրի մյուս պայմանների և պայմանագրի ամբողջական իմաստի հետ համադրելու միջոցով:

Սույն գործի փաստերի համաձայն՝ 10.04.2008 թվականի ընդհանուր սեփականության ներքո գտնվող անշարժ գույքի գրավի (հիփոթեքի) թիվ 141 պայմանագրի ներածական մասում նշվել է, որ Կողմերը, ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական օրենսգրքով, կնքեցին սույն պայմանագիրը, այսուհետ՝ «Պայմանագիր», իսկ 14-րդ կետով սահմանվել է, որ գրավատուն և/կամ պարտապանը համապարտության կարգով պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ և Պայմանագրով ստանձնած պարտավորությունների խախտման համար:

Տվյալ դեպքում «Պայմանագիր» արտահայտությունը վերաբերում է գրավի պայմանագրին, այսինքն՝ գրավի պայմանագրով են Արմեն և Ալվինա Մինասյաններն Արամայիս Մինասյանի հետ ստանձնել համապարտ պատասխանատվություն՝ գրավի պայմանագրով ստանձնած պարտավորությունների խախտման համար:

Հետևաբար, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ սույն գործի փաստերի համաձայն՝ Վերաքննիչ դատարանը, խախտելով ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 447-րդ հոդվածը, սխալ է մեկնաբանել 10.04.2008 թվականի ընդհանուր սեփականության ներքո գտնվող անշարժ գույքի գրավի (հիփոթեքի) թիվ 141 պայմանագրի պայմանները, որի արդյունքում 10.04.2008 թվականի թիվ 141 վարկային պայմանագրով կողմ չմասնակցող անձանց՝ Արմեն և Ալվինա Մինասյանների համար սահմանել է պարտավորություններ:

Հիմք ընդունելով վերոգրյալը՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ Վերաքննիչ դատարանի կողմից սխալ է մեկնաբանվել պարտավորության ծագման հիմքերը:

Միաժամանակ, Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ սույն վճռաբեկ բողոքի հիմքը Արմեն և Ալվինա Մինասյանների մատով վերաբերում է դատական ակտի՝ Արմեն և Ալվինա Մինասյաններից համապարտության կարգով հոգուտ Ընկերության 1.308.140,20 ՀՀ դրամ բռնագանձելու և գրավի առարկայի անբավարարության դեպքում բռնագանձումը Արմեն և Ալվինա Մինասյաններին սեփականության իրավունքով պատկանող այլ գույքի վրա տարածելու, ինչպես նաև Արմեն, Ալվինա և Նաիրա Մինասյաններից հոգուտ պետական բյուջեի որպես վերաքննիչ բողոքի համար սահմանված պետական տուրք 39.244 ՀՀ դրամ բռնագանձելու մասին, հետևաբար դատական ակտն այդ մասերով ենթակա է բեկանման:

Ինչ վերաբերում է վճռաբեկ բողոքի այն փաստարկին, որ Վերաքննիչ դատարանն Արմեն, Ալվինա և Նաիրա Մինասյաններից վերաքննիչ բողոք բերելու համար սահմանված պետական տուրքը բռնագանձելիս անտեսել է, որ բողոք բերած անձանց վերաքննիչ բողոքը վերաբերել է ոչ գույքային բնույթի պահանջին, այսինքն՝ չի վիճարկվել բռնագանձված գումարը, այլ համապարտ պարտասխանատվության առկայությունը կամ բացակայությունը, Վճռաբեկ դատարանը գտնում է անհիմն, հետևյալ պատճառաբանությամբ.

«Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի 8-րդ կետի համաձայն՝ առաջին ստյանի դատարաններ տրվող հայցադիմումների, դիմումների ու գանգատների, դատարանի դատական ակտերի դեմ վերաքննիչ և վճռաբեկ բողոքների համար, ինչպես նաև դատարանի կողմից տրվող փաստաթղթերի պատճեններ (կրկնօրինակներ) տալու համար պետական տուրքը գանձվում է հետևյալ դրույքաչափերով. դատարանի դատական ակտերի դեմ վերաքննիչ բողոքների համար՝ **գույքային պահանջի գործերով՝** վերաքննիչ բողոքում նշված **վիճարկվող գումարի 3 տոկոսի** չափով, իսկ եթե վիճարկվում են առաջին ստյանի դատարանի կողմից բավարարված կամ չբավարարված պահանջներն ամբողջությամբ կամ բավարարված կամ չբավարարված պահանջները չեն վիճարկվում, ապա առաջին ստյանի դատարան հարուցված և բողոքարկվող հայցի հայցագնի 3 տոկոսի չափով:

Սույն քաղաքացիական գործով Ընկերությունը, դիմելով դատարան, պահանջել է Արամայիս, Արմեն և Ալվինա Մինասյաններից համապարտության կարգով բռնագանձել գումար, որը Դատարանի կողմից բավարարվել է:

Արմեն և Ալվինա Մինասյանները վերաքննիչ բողոքով վիճարկել են գումարի՝ համապարտության կարգով բռնագանձումը՝ հիմք ընդունելով համապարտ պատասխանատվության իրավահարաբերության բացակայությունը:

Շիմք ընդունելով վերոգրյալը՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ վերաքննիչ բողոքով վիճարկվել է հայցվող գումարի համապարտության կարգով բռնագանձումը, այսինքն՝ գումարային պահանջը, իսկ համապարտ պատասխանատվության իրավահարաբերության բացակայությունը դատական սխալի հիմնավորումն է:

Այսպիսով, սույն վճռաբեկ բողոքի հիմքի առկայությունը բավարար է՝ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 227-րդ և 228-րդ հոդվածների ուժով Վերաքննիչ դատարանի որոշումը մասնակիորեն բեկանելու համար:

2) *Վճռաբեկ բողոքը երկրորդ հիմքով անհիմն է հետևյալ պատճառաբանությամբ.*

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 201-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ ամուսնության ընթացքում ամուսինների ձեռք բերած գույքը նրանց համատեղ սեփականությունն է, եթե այլ բան նախատեսված չէ նրանց միջև կնքված պայմանագրով:

Սույն գործի փաստերի համաձայն՝ Վերաքննիչ դատարանը բողոք բերած անձ Նաիրա Մինասյանի վերաքննիչ բողոքը մերժելիս իրավացիորեն նշել է, որ Նաիրա Մինասյանը, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 48-րդ հոդվածի պահանջներին համապատասխան, չի ներկայացրել որևէ պատշաճ ապացույց գրավի առարկա Վանաձորի Չուխաջյան փողոցի 60-րդ շենքի թիվ 23 հասցեի անշարժ գույքը համատեղ ամուսնության ընթացքում ձեռք բերված լինելու մասին, հետևաբար, Դատարանը գործին մասնակից չդարձված անձ Նաիրա Մինասյանի իրավունքների վերաբերյալ վճիռ չի կայացրել:

Վերոգրյալի հիման վրա Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Վերաքննիչ դատարանի որոշումը բողոք բերած անձ Նաիրա Մինասյանի մասով հիմնավոր է, իսկ վճռաբեկ բողոքը՝ անհիմն:

«Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքի 21-րդ հոդվածի «ա» կետի համաձայն՝ պետական տուրքի գծով կարող է սահմանվել պետական տուրքի վճարումից ազատման տեսքով արտոնությունը:

«Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքի 31-րդ հոդվածի «դ» կետի համաձայն՝ առանձին վճարողների կամ վճարողների խմբերի համար պետական տուրքի գծով արտոնություններ կարող են սահմանել դատարանները կամ դատավորները՝ նույն օրենքի 9-րդ հոդվածում նշված առանձին գործերով **եղևելով կողմերի գույքային դրությունից:**

Վերը նշված հոդվածներից հետևում է, որ դատարաններում պետական տուրքի գծով արտոնություն, **այդ թվում պետական տուրքի վճարումից ազատման տեսքով**, կարող են սահմանել նաև դատարանները կամ դատավորները՝ **հաշվի առնելով կողմերի գույքային դրությունը**, որն էլ ուղղված է «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին մասով և ՀՀ Սահմանադրության 18-րդ հոդվածի 1-ին մասով երաշխավորված՝ յուրաքանչյուր անձի դատական պաշտպանության իրավունքի լիարժեք իրականացմանը:

Սույն գործով հաշվի առնելով Նաիրա Մինասյանի գույքային դրությունը, այն հանգամանքը, որ Նաիրա Մինասյանի խնամքին են անչափահաս զավակները, ինչպես նաև այն, որ Նաիրա Մինասյանը ստանում է սոցիալական նպաստ, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ նրան անհրաժեշտ է ազատել պետական տուրքի վճարումից:

Միաժամանակ, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ տվյալ դեպքում անհրաժեշտ է կիրառել ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 240-րդ հոդվածի առաջին կետի 4-րդ ենթակետով սահմանված՝ ստորադաս դատարանի դատական ակտը փոփոխելու՝ վճռաբեկ դատարանի լիազորությունը հետևյալ հիմնավորմամբ.

«Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի ողջամիտ ժամկետում իր գործի քննության իրավունք: Սույն քաղաքացիական գործով վեճի լուծումն էական նշանակություն ունի գործին մասնակցող անձանց համար: Վճռաբեկ դատարանը գտնում է, որ գործը ողջամիտ ժամկետում քննելը հանդիսանում է «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի նույն հոդվածով ամրագրված անձի արդար դատաքննության իրավունքի տարր: Հետևաբար գործի անհարկի ձգձգումները վտանգ են պարունակում նշված իրավունքի խախտման տեսանկյունից: Տվյալ դեպքում Վճռաբեկ դատարանի կողմից ստորադաս դատարանի դատական ակտը փոփոխելը

բխում է արդարադատության արդյունավետության շահերից, քանի որ սույն գործով վերջնական դատական ակտ կայացնելու համար նոր հանգամանք հաստատելու անհրաժեշտությունը բացակայում է:

Դատական ակտը փոփոխելիս Վճռաբեկ դատարանը հիմք է ընդունում սույն դրոշման պատճառաբանությունները, ինչպես նաև գործի նոր քննության անհրաժեշտության բացակայությունը:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 240-241²-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

ՈՐՈՇԵՑ

1. Նաիրա Մինասյանի վճռաբեկ բողոքը մերժել, իսկ Արմեն և Ալվինա Մինասյանների վճռաբեկ բողոքը բավարարել մասնակիորեն: Բեկանել ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 06.10.2010 թվականի որոշման՝ Արմեն և Ալվինա Մինասյաններից համապարտության կարգով հոգուտ «Արդշինինվեստբանկ» ՓԲ ընկերության 1.308.140,20 ՀՀ դրամ, ինչպես նաև 1.207.585,60 ՀՀ դրամ վարկի հիմնական պարտքի նկատմամբ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 411-րդ հոդվածով սահմանված տոկոսները բռնագանձելու և գրավի առարկայի անբավարարության դեպքում բռնագանձումը Արմեն և Ալվինա Մինասյաններին սեփականության իրավունքով պատկանող այլ գույքի վրա տարածելու, ու Արմեն և Ալվինա Մինասյաններից հոգուտ Հայաստանի Հանրապետության 39.244 ՀՀ դրամ պետական տուրք բռնագանձելու մասերը և այդ մասերով այն փոփոխել՝ հայցը մերժել: ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 06.10.2010 թվականի որոշման մնացած մասը թողնել օրինական ուժի մեջ:

2. «Արդշինինվեստբանկ» ՓԲ ընկերությունից հոգուտ Հայաստանի Հանրապետության բռնագանձել 39.244 ՀՀ դրամ որպես վերաքննիչ բողոքի համար սահմանված պետական տուրքի գումար և 39.244 ՀՀ դրամ որպես վճռաբեկ բողոքի համար սահմանված պետական տուրքի գումար:

3. Նաիրա Մինասյանին ազատել վճռաբեկ բողոք բերելու համար սահմանված պետական տուրքը վճարելու պարտականությունից:

4. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

*ՆԱԽԱԳԱՀՈՂ՝ արտրագրություն
ԴԱՏԱՎՈՐՆԵՐ՝ արտրագրություններ*

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական Քաղաքացիական գործ թիվ ԵԱՔԴ/1149/02/09
դատարանի որոշում 2011թ.
Քաղաքացիական գործ ԵԱՔԴ/1149/02/09
Նախագահող դատավոր՝ Ա. Մկրտչյան
Դատավորներ՝ Ն. Հովսեփյան
Ն. Բարսեղյան

ՈՐՈՇՈՒՄ ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քաղաքացիական
և վարչական պալատը (այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

*նախագահությամբ
մասնակցությամբ դատավորներ*

Ե. ԽՈՒՆԴԿԱՐՅԱՆԻ
Ս. ԱՆՏՈՆՅԱՆԻ
Վ. ԱԲԵԼՅԱՆԻ
Վ. ԱՎԱՆԵՍՅԱՆԻ
Ա. ԲԱՐՍԵՂՅԱՆԻ
Մ. ԴՐՄԵՅԱՆԻ
Է. ՀԱՅՐԻՅԱՆԻ
Տ. ՊԵՏՐՈՍՅԱՆԻ
Ե. ՍՈՂՈՍՈՆՅԱՆԻ

2011 թվականի մարտի 04-ին
դռնբաց դատական նիստում, քննելով Մարինա Պողոսյանի վճռաբեկ բողոքը
ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 30.04.2010 թվականի որոշման դեմ՝ ըստ
Մարինա Պողոսյանի հայցի ընդդեմ «Դ-Տելեկոմ» ՓԲԸ-ի (այսուհետ՝ Ընկերություն) և
Վոլոդյա Անթատանյանի՝ պայմանագիրն անվավեր ճանաչելու և վնասը հատուցելու
պահանջների մասին,

ՊԱՐԶԵՑ

1. Գործի դատավարական նախապատմությունը.

Դիմելով դատարան՝ Մարինա Պողոսյանը պահանջել է անվավեր ճանաչել
Ընկերության և Վոլոդյա Անթատանյանի միջև 01.05.2008 թվականին կնքված թիվ
YER_116 պայմանագիրը (այսուհետ՝ Պայմանագիր), ինչպես նաև պարտավորեցնել
պատասխանողին հատուցելու 30.000.000 ՀՀ դրամ՝ որպես իր և իր ընտանիքի
անդամների առողջությանը և պատվին ու արժանապատվությանը պատճառված
վնասներ:

Երևանի Արաբկիր և Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի (այսուհետ՝ Դատարան) 16.02.2010 թվականի վճռով հայցը մերժվել է:

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի (այսուհետ՝ Վերաքննիչ դատարան) 30.04.2010 թվականի որոշմամբ Դատարանի 16.02.2010 թվականի վճիռը թողնվել է օրինական ուժի մեջ:

Սույն գործով վճռաբեկ բողոք է ներկայացրել Մարինա Պողոսյանը:

Վճռաբեկ բողոքի պատասխան է ներկայացրել Ընկերությունը:

2. Վճռաբեկ բողոքի հիմքերը, փաստարկները և պահանջը.

Սույն վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքերի սահմաններում՝ ներքոհիշյալ հիմնավորումներով.

1) Սույն գործով առկա է նոր երևան եկած հանգամանք

Բողոք բերած անձը նշված պնդումը պարձառարանում է հետևյալ փաստարկներով.

ՀՀ Ազգային ժողովի և Երևանի քաղաքապետարանի N 45/Պ-393 29.04.2010 թվականի համատեղ պաշտոնական պատասխանը սույն գործով նոր երևան եկած հանգամանք է: Այդ փաստաթղթով ապացուցվում է, որ Պայմանագիրը կնքելու իրավունք ունի միայն բազմաբնակարան շենքի կառավարման մարմինը, իսկ կառավարման մարմնի բացառիկ լիազորությունները չեն կարող փոխանցվել այլ անձանց: Օրենքով կամ այլ իրավական ակտերով այլ բացառիկ լիազորություններ կառավարման մարմնին չեն կարող տրվել, իսկ նշված կետի խախտմամբ տրված լիազորություններն անվավեր են: Հետևաբար, Վոլոդյա Անթառնյանը Պայմանագիրը կնքելու իրավունք չունի:

2) Վերաքննիչ դատարանը խախտել է ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 10-րդ հոդվածի 2-րդ կետը, 135-րդ հոդվածը, «Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին» ՀՀ օրենքի 2-րդ, 11-րդ, 23-րդ հոդվածները:

Բողոք բերած անձը նշված պնդումը պարձառարանում է հետևյալ փաստարկներով.

Վերաքննիչ դատարանը գտել է, որ Պայմանագրով Ընկերությունն իրավունք է ստացել որոշակի տարածքում սարքավորումներ տեղադրել և շահագործել, հետևաբար անշարժ գույքի նկատմամբ իրավունքներ ձեռք չի բերում, ուստի Պայմանագրի նկատմամբ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 10-րդ հոդվածի 2-րդ կետի և 135-րդ հոդվածի պահանջները կիրառելի չեն: Մինչդեռ, Ընկերությունը, Երևանի Վ. Համբարձումյան փողոցի 47 շենքի կտուրին 50 սմ հաստությամբ բետոնապատված հիմքերի վրա ստացիոնար գործարկմամբ սարքավորումները տեղադրելով և օգտագործելով, օգտագործում և ամսական նույն շենքի թիվ 3 բնակարանի բնակիչ Վոլոդյա Անթառնյանին է վճարում 180.000 ՀՀ դրամ, հետևաբար Ընկերության կողմից այդ շենքի կտուրին զբաղեցրած տարածքի նկատմամբ իրավունքը համարվում է պետական գրանցման օբյեկտ: Չնայած դրան՝ Պայմանագիրը նոտարական վավերացում չի ստացել, պետական գրանցման ևս չի ենթարկվել:

Վերոգրյալի հիման վրա վճռաբեկ բողոք բերած անձը պահանջել է բեկանել Վերաքննիչ դատարանի 30.04.2010 թվականի որոշումը և փոփոխել՝ հայցը բավարարել:

2.1. Վճարելի բողոքի պատասխանի հիմնավորումները

Հայցվորի կողմից ներկայացված այն փաստարկը, որ Ընկերությունը անշարժ գույքի նկատմամբ իրավունքներ ձեռք չի բերել, այլ ընդամենն իրավունք է ստացել սեփականատերերի տիրապետման ներքո գտնվող տարածքում տեղադրել և շահագործել սարքավորումներ, ենթակա չէ Վճարելի դատարանում քննության, քանի որ առաջին ատյանի դատարանում գործի քննության ժամանակ հայցի հիմքում այն չի դրվել:

Ինչ վերաբերում է հայցվորի վկայակոչած նոր երևան եկած հանգամանքներին, ապա այն, ըստ էության, չի համապատասխանում ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքով նախատեսված նոր երևան եկած հանգամանքի բնորոշմանը, քանի որ վճարելի բողոքում չի հիմնավորվել, թե ինչու ներկայացված գրությունը չէր կարող ձեռք բերվել և ներկայացվել առաջին ատյանի դատարանում գործի քննության ժամանակ, ինչ էական նշանակություն ունի այն գործի քննության համար:

3. Վճարելի բողոքի քննության համար նշանակություն ունեցող փաստերը.

Վճարելի բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1) Մարինա Պողոսյանը Երևանի Վ. Համբարձումյան փողոցի 47-րդ շենքի թիվ 89 բնակարանի սեփականատերն է (**հատոր 1-ին, գ.թ. 113**):

2) Վոլոդյա Անթառանյանը Երևանի Վ. Համբարձումյան փողոցի 47-րդ շենքի թիվ 3 բնակարանի սեփականատերն է (**հատոր 1-ին, գ.թ. 15**):

3) Երևանի Վ. Համբարձումյան փողոցի 47-րդ շենքի ընդհանուր ժողովի 23.04.2008 թվականի հարցման միջոցով ընդունված որոշման համաձայն՝ Ընկերությանը տրվել է թույլտվություն՝ այդ շենքի ընդհանուր բաժնային սեփականություն հանդիսացող տանիքային որոշ հատվածներ օգտագործելու բջջային հեռախոսակապի ցանցի կառուցման համար, իսկ դրա դիմաց ստացված գումարները պետք է ուղղվեն շենքի կառավարման բյուջե, դրանից 20 տոկոսը կարող է օգտագործվել վարչական նպատակներով: Այդ որոշմամբ Վոլոդյա Անթառանյանը լիազորվել է ստորագրել համապատասխան պայմանագիրը և այլ անհրաժեշտ փաստաթղթեր (**հատոր 1-ին, գ.թ. 98**):

4) 01.05.2008 թվականին Ընկերության և սեփականատերերի կողմից լիազորված անձ Վոլոդյա Անթառանյանի միջև կնքվել է Պայմանագիրը, որի 1.1-րդ կետի համաձայն՝ պատվիրատուն պատվիրում է, իսկ կատարողը հանձն է առնում վճարի դիմաց ապահովել հնարավորություն՝ ՀՀ, ք. Երևան, Վ. Համբարձումյան 47 հասցեում գտնվող շենքի տանիքային հատվածում նույն պայմանագրի Հավելված «Ա»-ում նկարագրված սարքավորումները տեղադրելու և շահագործելու համար՝ համաձայն նույն պայմանագրի պայմանների: Պայմանագրի 3.1-րդ կետի համաձայն՝ Պայմանագրով նախատեսված ծառայությունների դիմաց Ընկերությունը կատարողին /Վոլոդյա Անթառանյանին/ ամսական վճարելու է 180.000 ՀՀ դրամ (**հատոր 1-ին, գ.թ. 12-16**):

5) Սույն գործով որպես նոր երևան եկած հանգամանք ներկայացված Երևանի քաղաքապետարանի 29.04.2010 թվականի թիվ 45/Պ-393 գրությամբ հայտնվել է, որ Մարինա Պողոսյանի դիմումում բարձացված հարցերը կարգավորվում են «Բազմաբնակարան շենքի կառավարման մասին» ՀՀ օրենքի 11-րդ, 15-րդ և 21-

րդ հողվածներով: Մարինա Պողոսյանի կողմից նշված «Բազմաբնակարան շենքի կառավարման մասին» ՀՀ օրենքի 11-րդ հոդվածի 7-րդ կետի ե) ենթակետը վերաբերում է օտարման, գրավադրման մասին որոշում ընդունելուն և կարող է ընդունվել ժողովի գումարման կամ հարցման միջոցով՝ միաձայն:

4. Վճարել դատարանի պատճառարանությունները և եզրահանգումները.

Քննելով վճարելի բողոքը նշված հիմքերի սահմաններում՝ Վճարել դատարանը գտնում է, որ

1. վճարելի բողոքն առաջին հիմքով անհիմն է հետևյալ պատճառարանությամբ.

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 204.32-րդ հոդվածի համաձայն՝ նոր երևան եկած հանգամանքները հիմք են դատական ակտի վերանայման համար, եթե

1) բողոք ներկայացրած անձն ապացուցում է, որ այդ հանգամանքները հայտնի չեն եղել և չէին կարող հայտնի լինել գործին մասնակցող անձանց, կամ այդ հանգամանքները հայտնի են եղել գործին մասնակցող անձանց, բայց նրանցից անկախ պատճառներով չեն ներկայացվել դատարան, և այդ հանգամանքները գործի լուծման համար ունեն էական նշանակություն.

2) դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած դատավճռով հաստատված՝ վկայի ակնհայտ կեղծ ցուցմունքները, փորձագետի ակնհայտ կեղծ եզրակացությունը, թարգմանչի ակնհայտ սխալ թարգմանությունը, փաստաթղթերի կամ իրեղեն ապացույցների կեղծված լինելը հանգեցրել են ապօրինի կամ չհիմնավորված դատական ակտ կայացնելուն.

3) դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած դատավճռով հաստատվել է, որ գործին մասնակցող անձինք կամ նրանց ներկայացուցիչները կամ դատավորը, գործի քննության հետ կապված, կատարել են հանցավոր արարք, կամ

4) վերացվել է այն դատական ակտը, դատավճիռը, վարչական կամ տեղական ինքնակառավարման մարմնի որոշումը, որը հիմք է ծառայել վճռի կայացման համար :

Մինչդեռ, բողոք բերած անձը չի հիմնավորել և ապացուցել վերոնշյալ հիմքերից որևէ մեկի առկայությունը: Մասնավորապես, վճարելի բողոք բերած անձը չի հիմնավորել, որ ներկայացված՝ Երևանի քաղաքապետարանի 29.04.2010 թվականի թիվ 45/Պ-393 գրությամբ նշված հանգամանքները գործին մասնակցող անձին չէին կարող հայտնի լինել կամ դատարան չեն ներկայացվել իր կամքից անկախ պատճառներով և չէին կարող ներկայացվել Վերաքննիչ դատարանում այն պայմաններում, երբ դրանում լույս «Բազմաբնակարան շենքի կառավարման մասին» ՀՀ օրենքի իրավական վերլուծությունն է:

2. Վճարելի բողոքի երկրորդ հիմքին Վճարելի դատարանը չի անդրադարձնում հետևյալ պատճառարանությամբ.

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 208-րդ հոդվածի 3-րդ կետի համաձայն՝ վերաքննիչ բողոքը (կամ դրա մասը) ենթակա է քննության, եթե բողոք բերող անձը տվյալ հարցի վերաբերյալ բողոքում արտահայտած իր դիրքորոշումը հայտնել է առաջին ատյանի դատարանում գործի քննության ժամանակ: Բացառություն է այն դեպքը, երբ բողոք բերող անձը գրկված է եղել այդ հարցի վերաբերյալ առաջին ատյանի դատարանում գործի քննության ժամանակ իր դիրքորոշումը հայտնելու հնարավորությունից:

Սույն գործով հայցվորը վճարելի բողոքում ներկայացրած փաստարկները

ներկայացրել է Վերաքննիչ դատարանում: Վերաքննիչ դատարանն իրավացիորեն արձանագրել է, որ հայցվորը նման փաստարկ Դատարանում չի ներկայացրել և չի նշել դրա անհնարինության վերաբերյալ որևէ հիմնավորում:

Հետևաբար, Վճռաբեկ դատարանը նույնպես չի անդրադառնում բողոքի այդ հիմքին և դրա վերաբերյալ բողոք բերած անձի ներկայացրած փաստարկներին:

Պետական տուրքի հարցին անդրադառնալիս Վճռաբեկ դատարանը հարկ է համարում նշել, որ գանձման ենթակա է միայն Պայմանագիրն անվավեր ճանաչելու համար սահմանված պետական տուրքը: Ինչ վերաբերում է հայցվորի և իր ընտանիքի անդամների առողջությանը պատճառված վնասների հատուցման պահանջի մատվ պետական տուրքի գանձմանը, ապա Վճռաբեկ դատարանը գտնում է, որ այդ մատվ պետական տուրքը պետք է համարել լուծված հետևյալ պատճառաբանությամբ.

Առողջությանը պատճառված վնասի հատուցման պահանջով դատարանն ղիմելիս պետական տուրք չի գանձվում «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքի 22-րդ հոդվածի «գ» կետի ուժով, համաձայն որի՝ դատարաններում պետական տուրքի վճարումից ազատվում են հայցվորները՝ խեղման կամ առողջության այլ վնասման, ինչպես նաև կերակրողի մահվան հետևանքով պատճառված վնասի փոխհատուցման վերաբերյալ հայցերով:

Ինչ վերաբերում է բարոյական վնասի հատուցման պահանջի մատվ պետական տուրքին, ապա Վճռաբեկ դատարանը հարկ է համարում նշել, որ սույն իրավահարաբերության ծագման պահին գործող ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 17-րդ հոդվածով օրենսդիրը հստակ սահմանել է, թե ինչն է համարվում վնաս, և ակնհայտ է, որ դրանց շարքում բացակայում է բարոյական վնասը: Այսինքն՝ ՀՀ օրենսդրությամբ բարոյական վնասի, ինչպես նաև դրա փոխհատուցման ինստիտուտ սախատեսված չէ:

Ենելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 240-241²-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

ՈՐՈՇԵՑ

1. Մարինա Պողոսյանի վճռաբեկ բողոքը մերժել: ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 30.04.2010 թվականի որոշումը թողնել օրինական ուժի մեջ:
2. Մարինա Պողոսյանից հօգուտ ՀՀ պետական բյուջեի բռնագանձել 20.000 ՀՀ դրամ որպես վճռաբեկ բողոքի համար հետաձգված պետական տուրք:
3. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

*ՆԱԽԱԳԱՀՈՂ՝ ստորագրություն
ԴԱՏԱՎՈՐՆԵՐ՝ ստորագրություններ*

ԴԱՏԱԿԱՆ ԾԱՆՈՒՑՈՒՄՆԵՐ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական
դատարանի որոշում

Քաղաքացիական գործ թիվ 08-1442
2011թ.

Քաղաքացիական գործ թիվ 08-1442

Նախագահող դատավոր՝ Ս. Նազարյան

Դատավորներ՝ Կ. Հակոբյան

Ս. Սահակյան

ՈՐՈՇՈՒՄ

ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քաղաքացիական
և վարչական պալատը (այսուհետ՝ վճռաբեկ դատարան)

նախագահությամբ

մասնակցությամբ դատավորներ

Ե. ԽՈՒՆԴԿԱՐՅԱՆԻ

Ս. ԱՆՏՈՆՅԱՆԻ

Վ. ԱԲԵԼՅԱՆԻ

Ա. ԲԱՐՍԵՂՅԱՆԻ

Մ. ԴՐՄԵՅԱՆԻ

Գ. ՀԱԿՈԲՅԱՆԻ

Է. ՀԱՅՐԻՅԱՆԻ

Տ. ՊԵՏՐՈՍՅԱՆԻ

Ե. ՍՈՂՈՍՏՈՆՅԱՆԻ

2011 թվականի մարտի 04-ին

դրնրաց դատական նիստում, քննելով Մարիամ Մանուկյանի, երրորդ
անձինք Ալիսա և Քրիստինե Հասարայանների վճռաբեկ բողոքը ՀՀ վերաքննիչ
քաղաքացիական դատարանի 22.07.2010 թվականի որոշման դեմ՝ ըստ Մարիամ
Մանուկյանի հայցի ընդդեմ Արմեն, Անահիտ, Ռուզաննա, Գևորգ, Արման
Առաքելյանների, Քնարիկ Համբարձումի Առաքելյանի, Քնարիկ Արմենի Առա-
քելյանի, Նելլի և Ալբերտ Բելմելյանների, Լիլիկ Դավթյանի, երրորդ անձինք Ալիսա,
Հասմիկ, Կարեն, Վարդան, Հակոբ, Քրիստինե և Քնարիկ Հասարայանների՝
բնակելի տարածության անհատույց օգտագործման իրավունքը փոխհատուցմամբ
դադարեցնելու և տարածքից վտարելու պահանջների մասին,

ՊԱՐԶԵՑ

1. Գործի դատավարական նախապատմությունը

Դիմելով դատարան՝ Մարիամ Մանուկյանը պահանջել է 217.000 ՀՀ դրամ
փոխհատուցմամբ դադարեցնել Երևանի Ներքին Շենգավիթ 11 փողոցի թիվ 40

տան նկատմամբ Արմեն Առաքելյանի և Լիլիկ Դավթյանի՝ բնակելի տարածության անհատույց օգտագործման իրավունքը և Արմեն, Անահիտ, Ռուզաննա, Քնարիկ, Գևորգ, Քնարիկ, Արման Առաքելյաններին, Նելլի և Ալբերտ Քելմելյաններին, Լիլիկ Դավթյանին վտարել նշված հասցեի տնից:

Երևանի Ծենգավիթ համայնքի առաջին ատյանի դատարանի (այսուհետ՝ Դատարան) 12.06.2007 թվականի վճռով Մարիամ Մանուկյանի հայցը բավարարվել է:

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 11.03.2009 թվականի որոշմամբ Քնարիկ Առաքելյանի և Անահիտ Մարտիրոսյանի վերաքննիչ բողոքը բավարարվել է՝ Դատարանի 12.06.2007 թվականի վճիռը բեկանվել է, և գործն ուղարկվել է նոր քննության:

ՀՀ վճռաբեկ դատարանի քաղաքացիական և վարչական պալատի 25.12.2009 թվականի որոշմամբ Մարիամ Մանուկյանի, երրորդ անձինք Ալիսա և Քրիստինե Հասարթյանների վճռաբեկ բողոքը բավարարվել է՝ ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 11.03.2009 թվականի որոշումը բեկանվել է, և գործն ուղարկվել է նույն դատարան՝ նոր քննության:

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի (այսուհետ՝ Վերաքննիչ դատարան) 22.07.2010 թվականի որոշմամբ Քնարիկ Առաքելյանի վերաքննիչ բողոքը մերժվել է, իսկ Անահիտ Մարտիրոսյանի վերաքննիչ բողոքը՝ բավարարվել է: Դատարանի 12.06.2007 թվականի վճիռը բեկանվել է և գործն ուղարկվել է նոր քննության:

Սույն գործով վճռաբեկ բողոք են ներկայացրել Մարիամ Մանուկյանը, երրորդ անձինք Ալիսա և Քրիստինե Հասարթյանները:

Վճռաբեկ բողոքի պատասխան չի ներկայացվել:

2. Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը

Սույն վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

Վերաքննիչ դատարանը խախտել է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 48-րդ հոդվածի 2-րդ կետը, 53-րդ հոդվածը, 219-րդ հոդվածի 1-ին կետը, չի կիրառել ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 163-րդ, 225-րդ, 274-րդ և 1225-րդ հոդվածները, որոնք պետք է կիրառեր:

Բողոք բերած անձինք նշված պնդումը պարզապես անհիմն են հետևյալ փաստարկներով.

Քնարիկ Առաքելյանի և Անահիտ Մարտիրոսյանի վերաքննիչ բողոքի հիմքը Դատարանի 12.06.2007 թվականի վճռի կայացումն է՝ առանց նրանց պատշաճ ծանուցելու: Մինչդեռ Վերաքննիչ դատարանը, չկատարելով ապացույցների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննություն, պատշաճ գնահատման չի արժանացրել այն հանգամանքը, որ Անահիտ Մարտիրոսյանը վերաքննիչ բողոքում հստակ նշել է, որ հնարավորություն չի ունեցել ներկա լինել դատական նիստին:

Վերոգրյալի հիման վրա բողոք բերած անձինք պահանջել են բեկանել Վերաքննիչ դատարանի 22.07.2010 թվականի որոշումը և այն փոփոխել:

3. Վճռաբեկ բողոքի քննության համար նշանակություն ունեցող փաստերը

Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունի հետևյալ փաստը՝ Անահիտ Մարտիրոսյանը վերաքննիչ բողոքի հիմքում դրել է այն հանգամանքը, որ

երեխային երկար ժամանակով միայնակ թողնելու անհնարինության պատճառով չէր կարող մասնակցել դատական նիստին (հատոր 2-րդ, գ.թ. 5):

4. Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումները

Քննելով վճռաբեկ բողոքը նշված հիմքի սահմաններում՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ *այն հիմնավոր է հետևյալ պարձառաբանությամբ:*

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 48-րդ հոդվածի 2-րդ կետի համաձայն՝ գործի լուծման համար էական նշանակություն ունեցող ապացուցման ենթակա փաստերը որոշում է դատարանը՝ գործին մասնակցող անձանց պահանջների և առարկությունների հիման վրա:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 219-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ վերաքննիչ դատարանը դատական ակտը վերանայում է վերաքննիչ բողոքի հիմքերի և հիմնավորումների սահմաններում:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 78-րդ հոդվածի համաձայն՝ գործին մասնակցող անձիք դատական ծանուցագրերով **տեղեկացվում են** դատական նիստի կամ առանձին դատավարական գործողություններ կատարելու ժամանակի և վայրի մասին:

Վճռաբեկ դատարանը գտնում է, որ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 78-րդ հոդվածով նախատեսված՝ դատական նիստի ժամի և վայրի մասին գործին մասնակցող անձանց **տեղեկանալու իրավունքը** և դատարանի տեղեկացնելու պարտականությունն ուղղակիորեն կապված են ՀՀ Սահմանադրությամբ երաշխավորված օրենքի առջև բոլորի հավասարության համընդհանուր սկզբունքի և դրանից բխող ու ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքով սահմանված մրցակցության և կողմերի հավասարության սկզբունքների հետ: Նշված սկզբունքներն ամբողջ ծավալով կարող են իրականացվել միայն այն դեպքում, երբ գործին մասնակցող անձանցից յուրաքանչյուրին ընձեռված է դատական նիստին ներկա գտնվելու հնարավորություն (*տե՛ս Վարդան Նավասարդյան ընդդեմ ՀՀ կատավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի Արմավիրի տարածքային տրոսթաբաժանման, երրորդ անձ Համլետ Ավդալյանի՝ սեփականության իրավունքի գրանցման վկայականը մասնակիորեն անվավեր ձանաչելու պահանջի մասին, թիվ 3-1867 (Ա) քաղաքացիական գործով 25.12.2007 թվականի որոշումը*):

Սույն գործի փաստերի համաձայն՝ Անահիտ Մարտիրոսյանը վերաքննիչ բողոքի հիմքում դրել է այն հանգամանքը, որ հնարավորություն չի ունեցել մասնակցել դատական նիստին:

Վերաքննիչ դատարանը 22.07.2010 թվականի որոշմամբ բեկանել է Դատարանի 12.06.2007 թվականի վճիռը և գործն ուղարկել է նոր քննության այն պատճառաբանությամբ, որ Անահիտ Մարտիրոսյանը պատշաճ չի ծանուցվել դատական նիստերի ժամանակի և վայրի մասին:

Մինչդեռ, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Վերաքննիչ դատարանն անտեսել է այն հանգամանքը, որ Անահիտ Մարտիրոսյանը վերաքննիչ բողոքում հստակ նշել է, որ հնարավորություն չի ունեցել մասնակցել դատական նիստին և որևէ անդրադարձ չի կատարել դատական նիստի մասին ծանուցված չլինելու հարցին:

Այսինքն՝ Վերաքննիչ դատարանը հաստատված է համարել, որ Անահիտ

Մարտիրոսյանը պատշաճ չի ծանուցվել դատական նիստերի ժամանակի և վայրի մասին այն պայմաններում, երբ Անահիտ Մարտիրոսյանը վերաքննիչ բողոքում նման փաստարկ չի նշել և Դատարանի վճիռը բողոքարկել է այն հիմքով, որ հնարավորություն չի ունեցել ներկա գտնվելու դատական նիստին:

Հիմք ընդունելով վերոգրյալը Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ Վերաքննիչ դատարանը դուրս է եկել վերաքննիչ բողոքի հիմքերի և հիմնավորումների սահմաններից:

Այսպիսով, սույն վճռաբեկ բողոքի հիմքի առկայությունը Վճռաբեկ դատարանը դիտում է բավարար ՇՇ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 228-րդ հոդվածի ուժով Վերաքննիչ դատարանի որոշումը բեկանելու համար:

Միաժամանակ, Վճռաբեկ դատարանը հարկ է համարում արձանագրել, որ Վերաքննիչ դատարանը, որոշման հիմքում դնելով այն հանգամանքը, որ Անահիտ Մարտիրոսյանը պատշաճ չի ծանուցվել դատական նիստերի ժամանակի և վայրի մասին, բողոքի մյուս հիմքերին չի անդրադարձել: Հետևաբար Վճռաբեկ դատարանը գտնում է, որ սույն գործն անհրաժեշտ է ուղարկել նույն դատարան՝ բողոքի մյուս հիմքերը քննելու համար:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՇՇ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 240-241²-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

ՈՐՈՇԵՑ

1. Վճռաբեկ բողոքը բավարարել մասնակիորեն: Բեկանել ՇՇ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 22.07.2010 թվականի որոշումը և գործն ուղարկել նույն դատարան՝ նոր քննության:

2. Պետական տուրքի բաշխման հարցին անդրադառնալ գործի նոր քննության ընթացքում:

3. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

*ՆԱԽԱԳԱՀՈՂ՝ ստորագրություն
ԴԱՏԱՎՈՐՆԵՐ՝ ստորագրություններ*

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական
դատարանի որոշում

Քաղաքացիական գործ ԵԱԲԴ/0996/02/10
2011թ.

Քաղաքացիական գործ թիվ ԵԱԲԴ/0996/02/10

Նախագահող դատավոր՝ Կ. Չիլինգարյան

Դատավորներ՝ Ա. Խատատյան

Ա. Պետրոսյան

ՈՐՈՇՈՒՄ

ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քաղաքացիական և վարչական
պալատը (այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

նախագահությամբ

մասնակցությամբ դատավորներ

Ե. ԽՈՒՆԴԿԱՐՅԱՆԻ

Է. ՀԱՅՐԻՅԱՆԻ

Վ. ԱԲԵԼՅԱՆԻ

Ս. ԱՆՏՈՆՅԱՆԻ

Վ. ԱՎԱՆԵՍՅԱՆԻ

Ա. ԲԱՐՍԵՂՅԱՆԻ

Մ. ԴՐՄԵՅԱՆԻ

Գ. ՀԱԿՈԲՅԱՆԻ

Տ. ՊԵՏՐՈՍՅԱՆԻ

Ե. ՍՈՂՈՄՈՆՅԱՆԻ

2011 թվականի մայիսի 27-ին

դռնբաց դատական նիստում, քննելով Արման Ավետիսյանի և Սաթենիկ Դալլաքյանի վճռաբեկ բողոքը ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 27.01.2011 թվականի որոշման դեմ՝ ըստ Հովիկ Դալլաքյանի հայցի ընդդեմ Սաթենիկ Դալլաքյանի, Արման և Նորիկ Ավետիսյանների՝ վտարելու պահանջի մասին,

ՊԱՐԶԵՑ

1. Գործի դատավարական նախապատմությունը

Դիմելով դատարան՝ Հովիկ Դալլաքյանը պահանջել է սեփականության իրավունքով իրեն պատկանող Երևանի Քանաքեռի 16-րդ փողոցի թիվ 5/1 հասցեում գտնվող տնից վտարել Սաթենիկ Դալլաքյանին, Նորիկ Ավետիսյանին, Արման Ավետիսյանին և ընտանիքի անդամներին:

Երևանի Արաբկիր և Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի (այսուհետ՝ Դատարան) 13.10.2010 թվականի վճռով հայցը բավարարվել է:

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի (այսուհետ՝ Վերաքննիչ դատարան)

27.01.2011 թվականի որոշմամբ Արման Ավետիսյանի և Սաթենիկ Դալլաքյանի վերաքննիչ բողոքը մերժվել է, և Դատարանի 13.10.2010 թվականի վճիռը թողնվել է օրինական ուժի մեջ:

Սույն գործով վճռաբեկ բողոք են ներկայացրել Արման Ավետիսյանը և Սաթենիկ Դալլաքյանը:

Վճռաբեկ բողոքի պատասխան է ներկայացրել Հովիկ Դալլաքյանը:

2. Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը

Սույն վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

Վերաքննիչ դատարանը չի կիրառել ՀՀ Սահմանադրության 18-րդ, 19-րդ հոդվածները, «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածը, որոնք պետք է կիրառեր, ինչի արդյունքում խախտել է ՀՀ դատական օրենսգրքի 7-րդ, 8-րդ հոդվածները, 90-րդ հոդվածի 4-րդ մասը, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 2-րդ, 47-րդ, 53-րդ, 78-րդ, 116-րդ հոդվածները:

Բողոք բերած անձինք նշված պնդումը պարձառաքանել են հետևյալ փաստարկներով.

Վերաքննիչ դատարանն անտեսել է, որ Դատարանը գործը քննել է Սաթենիկ Դալլաքյանի, Արման և Նորիկ Ավետիսյանների բացակայությամբ, որոնք չնայած տեղեկացվել են 05.10.2010 թվականի ժամը 10⁰⁰-ին նշանակված դատական նիստի ժամանակի և վայրի մասին, սակայն նշված ժամին դատական նիստ տեղի չի ունեցել: Դատական նիստը սկսվել է ժամը 10¹⁹-ին, ինչի արդյունքում Սաթենիկ Դալլաքյանը, Արման և Նորիկ Ավետիսյանները զրկվել են ՀՀ Սահմանադրությամբ ամրագրված արդար դատաքննության իրավունքից :

Վերոգրյալի հիման վրա բողոք բերած անձինք պահանջել են բեկանել Վերաքննիչ դատարանի 27.01.2011 թվականի որոշումը և գործն ուղարկել նոր քննության:

2.1. Վճռաբեկ բողոքի պատասխանի հիմնավորումները

Վերաքննիչ դատարանի կողմից որոշումը կայացվել է գործում առկա բոլոր ապացույցների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտության հիման վրա, հետևաբար բերված վճռաբեկ բողոքը ենթակա է մերժման:

3. Վճռաբեկ բողոքի քննության համար նշանակություն ունեցող փաստերը

Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1. Դատարանի 05.10.2010 թվականի ժամը 10⁰⁰-ին նշանակված դատական նիստի ժամանակի և վայրի մասին Սաթենիկ Դալլաքյանը, Արման և Նորիկ Ավետիսյանները ծանուցագրերով ծանուցվել են (հատոր 1-ին, գ.թ. 49-54):

2. Դատական նիստի արձանագրության համաձայն՝ սույն գործով դատական նիստը սկսվել է 05.10.2010 թվականի ժամը 10³⁹-ին: Դատարանը, հիմք ընդունելով այն հանգամանքը, որ պատասխանողները պատշաճ ձևով տեղեկացվել են դատական նիստի ժամանակի և վայրի մասին, սակայն չեն ներկայացել, որոշել է գործը քննել նրանց բացակայությամբ: Նույն օրը դատարանը գործի քննությունը հայտարարել է ավարտված (հատոր 1-ին, գ.թ. 56):

3. Սաթենիկ Դալլաքյանը, Արման և Նորիկ Ավետիսյանները պատշաճ ձևով չեն տեղեկացվել 05.10.2010 թվականի ժամը 10³⁹-ին տեղի ունենալիք դատական նիստի ժամանակի և վայրի մասին:

4. Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումները

Քննելով վճռաբեկ բողոքը նշված հիմքի սահմաններում Վճռաբեկ դատարանը գտնում է, որ վճռաբեկ բողոքը հիմնավոր է հետևյալ պատճառաբանությամբ.

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 78-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ գործին մասնակցող անձինք դատական ծանուցագրերով տեղեկացվում են դատական նիստի կամ առանձին դատավարական գործողություններ կատարելու ժամանակի և վայրի մասին, իսկ նույն հոդվածի 2-րդ կետի համաձայն՝ ծանուցագիրն ուղարկվում է պատվիրված նամակով՝ հանձնման մասին ծանուցմամբ կամ հաղորդագրության ձևակերպումն ապահովող կապի այլ միջոցների օգտագործմամբ կամ հանձնվում է ստացականով (այսուհետ՝ պատշաճ ձևով):

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 79-րդ հոդվածի համաձայն՝ ծանուցագիրը պետք է պարունակի դատարանի անվանումը և ստույգ հասցեն, նշում **ներկայանալու ժամանակի և վայրի մասին**, գործը, որի վերաբերյալ անձը ծանուցվում է, նշում դատարան կանչվող կամ ծանուցվող անձի մասին, նշում, թե անձը որպես ինչ է ծանուցվում կամ կանչվում, նշում չներկայանալու հետևանքների մասին:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 116-րդ հոդվածի համաձայն՝ գործի քննության համար նշանակված ժամին նախագահողը բացում է դատական նիստը, հայտարարում է դատարանի կազմը և այն գործը, որը քննության է առնվելու:

Սա ենթադրում է գործին մասնակցող անձանց դատական նիստի ժամանակի և վայրի մասին իրազեկելու կապակցությամբ դատարանի ակտիվ գործողություններ, որոնք պետք է իրականացվեն միայն վկայակոչված հոդվածներով նախատեսված միջոցների և եղանակների օգտագործմամբ: Ընդ որում, նախագահողը **դատական նիստը բացում է գործի քննության համար նշանակված ժամին**: Այսինքն՝ դատական նիստը սահմանված ժամին սկսելը գործին մասնակցող անձանց դատական նիստի ժամանակի և վայրի մասին պատշաճ տեղեկացված լինելու տարրերից է:

Վճռաբեկ դատարանն իր նախկին որոշումներում անդրադարձել և գնահատման առարկա է դարձրել այն դեպքերը, երբ դատարանը գործը քննել է գործին մասնակցող անձանցից որևէ մեկի բացակայությամբ: Մասնավորապես, Վճռաբեկ դատարանը, հիմք ընդունելով ՀՀ Սահմանադրության 19-րդ հոդվածը և «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածը, արձանագրել է կողմերի իրավահավասարության և մրցակցության դատավարական սկզբունքների խախտում և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 228-րդ հոդվածի 2-րդ կետի 2-րդ ենթակետով, բեկանել է դատական ակտը (*իրավական հիմնավորումները տե՛ս ըստ Ծենզավիթի թաղապետարանի ընդդեմ Ալվինա, Լիանա Կազկունների, Արամ, Ֆրունզ և Շարեկ Մարկոսյանների՝ բնակելի տարածության օգտագործման իրավունքը փոխհատուցմամբ դադարեցնելու պահանջի մասին 21.12.2006 թվականի քաղաքացիական գործ թիվ 3-2236/Ա Վճռաբեկ դատարանի որոշումների ընդդեմի, հայտոր 1-ին, էջ 473-476*):

Վերը նշվածի հիման վրա՝ Վճռաբեկ դատարանը նպատակահարմար չի համարում կրկին անդրադառնալ նշված իրավական հարցի գնահատականին:

Սույն գործով Վերաքննիչ դատարանն անտեսել է, որ սույն գործով դատական նիստը սկսվել է 05.10.2010 թվականի ժամը 10³⁹-ին, այնինչ սույն գործում առկա չէ որևէ ապացույց այն մասին, որ Դատարանը պատասխանողներին պատշաճ տեղեկացրել է 05.10.2010 թվականի ժամը 10³⁹-ին տեղի ունենալիք դատական նիստի ժամանակի և վայրի մասին:

Այսինքն՝ Դատարանը, խախտելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 78-րդ, 79-րդ և 116-րդ հոդվածների պահանջները, գործը քննել է Սաթենիկ Դավաթյանի, Արման և Նորիկ Ավետիսյանների բացակայությամբ, որպիսի հանգամանքն անտեսվել է Վերաքննիչ դատարանի կողմից:

Այսպիսով, սույն վճռաբեկ բողոքի հիմքի առկայությունը բավարար է՝ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 228-րդ հոդվածի ուժով Վերաքննիչ դատարանի որոշումը բեկանելու համար:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 240-241²-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

ՈՐՈՇԵՑ

1. Վճռաբեկ բողոքը բավարարել: Բեկանել ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 27.01.2011 թվականի որոշումը և գործն ուղարկել Երևանի Արաբկիր և Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանների առաջին աստիանի ընդհանուր իրավասության դատարան՝ նոր քննության:
2. Պետական տուրքի բաշխման հարցին անդրադառնալ գործի նոր քննության արդյունքում:
3. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

*ՆԱԽԱԳԱՀՈՂ՝ սրորագրություն
ԴԱՏԱՎՈՐՆԵՐ՝ սրորագրություններ*

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական
դատարանի որոշում

Քաղաքացիական գործ թիվ ԵԿԴ/0964/02/10
2011թ.

Քաղաքացիական գործ թիվ ԵԿԴ/0964/02/10

Նախագահող դատավոր՝ Ն. Տավարացյան

Դատավորներ՝ Ս. Միքայելյան
Դ. Խաչատրյան

ՈՐՈՇՈՒՄ

ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քաղաքացիական
և վարչական պալատը (այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

*նախագահությամբ
մասնակցությամբ դատավորներ*

Ե. ԽՈՒՆԴԿԱՐՅԱՆԻ
Վ. ԱԲԵԼՅԱՆԻ
Ս. ԱՆՏՈՆՅԱՆԻ
Վ. ԱՎԱՆԵՍՅԱՆԻ
Ա. ԲԱՐՍԵՂՅԱՆԻ
Մ. ԴՐՄԵՅԱՆԻ
Գ. ՀԱԿՈԲՅԱՆԻ
Է. ՀԱՅՐԻՅԱՆԻ
Տ. ՊԵՏՐՈՍՅԱՆԻ
Ե. ՍՈՂՈՄՈՆՅԱՆԻ

2011 թվականի հուլիսի 29-ին

դռնբաց դատական նիստում, քննելով Աշոտ Սալազարյանի վճռաբեկ բողոքը
ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 22.02.2011 թվականի որոշման դեմ
ըստ հայցի Երևանի Շենգավիթ վարչական շրջանի ղեկավարի ընդդեմ Աշոտ
Սալազարյանի՝ գումարի բռնագանձման պահանջի մասին,

ՊԱՐԶԵՑ

1. Գործի դատավարական նախապատմությունը

Դիմելով դատարան՝ Երևանի Շենգավիթ վարչական շրջանի ղեկավարը
պահանջել է Աշոտ Սալազարյանից հոգուտ Երևան համայնքի բռնագանձել 2.741.742
ՀՀ դրամ, որից 900025100034 հաշվեհամարին գույքահարկ՝ 101.290 ՀՀ դրամ,
գույքահարկի գծով տույժ՝ 50.662 ՀՀ դրամ, իսկ 900025100117 հաշվեհամարին
բռնագանձել 2.589.790 ՀՀ դրամ, որից հողի վարձ՝ 608.223 ՀՀ դրամ, հողի վարձի
տույժ՝ 1.981.567 ՀՀ դրամ:

Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր
իրավասության դատարանի (այսուհետ՝ Դատարան) 22.09.2010 թվականի վճռով

հայցը բավարարվել է մասնակիորեն, վճովել է՝ հոգուտ Երևան համայնքի Աշոտ Սալազարյանից բռնագանձել 151.952 ՀՀ դրամ:

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի (այսուհետ՝ Վերաքննիչ դատարան) 22.02.2011 թվականի որոշմամբ Երևանի Շենգավիթ վարչական շրջանի ղեկավարի վերաքննիչ բողոքը բավարարվել է, և Դատարանի 22.09.2010 թվականի վճիռը բեկանվել և փոփոխվել է. Երևանի Շենգավիթ վարչական շրջանի ղեկավարի հայցը բավարարվել է:

Սույն գործով վճռաբեկ բողոք է ներկայացրել Աշոտ Սալազարյանը:
Վճռաբեկ բողոքի պատասխան չի ներկայացվել:

2. Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը

Սույն վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքերի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

1) *Վերաքննիչ դատարանը խախտել է «Սարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածը, ՀՀ Սահմանադրության 19-րդ հոդվածը, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 78-րդ հոդվածի պահանջները:*

Բողոք բերած անձը նշված պնդումը պատճառաբանում է հետևյալ փաստարկներով՝

Վերաքննիչ դատարանը գործը քննել է պատասխանողի բացակայությամբ, որը պատշաճ ձևով չի տեղեկացվել դատական նիստի ժամանակի և վայրի մասին: Նման պայմաններում Վերաքննիչ դատարանը խախտել է «Սարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածով և ՀՀ Սահմանադրության 19-րդ հոդվածով երաշխավորված արդար դատաքննության իրավունքը:

2) *Վերաքննիչ դատարանը չի կիրառել ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 331-րդ, 332-րդ և 335-րդ հոդվածները, «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 30.1-րդ հոդվածը, որոնք պետք է կիրառել, սխալ է մեկնաբանել ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 608-րդ հոդվածի 1-ին կետը, 619-րդ հոդվածի 1-ի կետը, ՀՀ հողային օրենսգրքի 87-րդ հոդվածի 1-ին մասը:*

Բողոք բերած անձը նշված պնդումը պատճառաբանում է հետևյալ փաստարկներով.

Դատարանը, Աշոտ Սալազարյանին պատշաճ կերպով չձանուցելով, նրան գրկել է հայցային վաղեմություն կիրառելու մասին դիմում ներկայացնելու հնարավորությունից, քանի որ գույքահարկի պարտավորությունը պետք է հաշվարկվեր 2007 թվականից, մինչդեռ այն հաշվարկվել է 2004 թվականից:

Վերոգրյալի հիման վրա բողոք բերած անձը պահանջել է բեկանել Վերաքննիչ դատարանի 22.02.2011 թվականի որոշումը և գործն ուղարկել նոր քննության:

3. Վճռաբեկ բողոքի քննության համար նշանակություն ունեցող փաստերը

Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

1. Աշոտ Սալազարյանը հաշվառված է Երևանի Սայաթ-Նովա շենք 39, բնակարան 18 հասցեում (գ.թ. 23):

2. Մեփականության իրավունքով Աշոտ Սալազարյանին պատկանող շինությունը և վարձակալության իրավունքով պատկանող հողամասը գտնվում են Երևանի Նորագավիթ 1-ին փողոց թիվ 2/5 հասցեում (գ.թ. 20):

3. Հայցադիմումում Աշոտ Սալազարյանի հասցեն նշվել է Երևանի Սայաթ-Նովա 39 շենք, 18 բնակարան (գ.թ. 4):

4. Դատարանը Երևանի Կենտրոն համայնքի ղեկավարին, որպես Աշոտ Սալազարյանի վերջին հայտնի բնակության վայրի հասցե, նշել է Երևանի Վարդանանց 28 շենք, թիվ 82 բնակարանը (գ.թ. 39):

5. Երևանի Կենտրոն վարչական շրջանի ղեկավարի 27.07.2010 թվականի գրությամբ հայտնվել է, որ «Երևանի Վարդանանց 28 շենք, թիվ 82 բնակարանը մշտապես փակ է, ուստի հնարավոր չէ պարզել Աշոտ Մենիկի Սալազարյանի գտնվելու վայրը» (գ.թ. 41):

6. 16.02.2011 թվականի դատական նիստի ժամանակի և վայրի մասին Վերաքննիչ դատարանը Աշոտ Սալազարյանին ծանուցել է Երևանի Սայաթ-Նովա 39 շենք, 18 բնակարան հասցեով: Ծանուցումը վերադարձվել է և որոշվել է դատական նիստը շարունակել Աշոտ Սալազարյանի բացակայությամբ (գ.թ. 113 և 115):

7. Դատարանների ուղարկված ծանուցագրերն Աշոտ Սալազարյանի կողմից ստանալու փաստը հաստատող որևէ ապացույց գործում առկա չէ:

4. Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումները

Քննելով վճռաբեկ բողոքը նշված հիմքերի սահմաններում՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ՝

1) Վճռաբեկ բողոքն առաջին հիմքով հիմնավոր է հետևյալ պատճառաբանությամբ՝

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 78-րդ հոդվածի համաձայն՝ գործին մասնակցող անձինք դատական ծանուցագրերով տեղեկացվում են դատական նիստի ժամանակի և վայրի մասին: Ծանուցագիրն ուղարկվում է պատվիրված նամակով՝ հանձնման մասին ծանուցմամբ կամ հաղորդագրության ձևակերպումն ապահովող կապի այլ միջոցների օգտագործմամբ կամ հանձնվում է ստացականով:

Նշված նորմը ենթադրում է գործին մասնակցող անձանց՝ դատական նիստի օրվա, ժամի և վայրի մասին իրազեկելու կապակցությամբ դատարանի ակտիվ գործողություններ, որոնք պետք է իրականացվեն նույն հոդվածով նախատեսված միջոցների և եղանակների օգտագործմամբ: Ընդ որում, անկախ ծանուցման եղանակից, ծանուցումը պետք է լինի այնպիսին, որով հնարավոր է ապացուցել գործին մասնակցող անձին դատական նիստի մասին տեղեկացնելու փաստը:

Միաժամանակ, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 94-րդ հոդվածի 1-ին կետը հնարավորություն է ընձեռում դատարանին պատասխանողի փաստացի գտնվելու վայրն անհայտ լինելու դեպքում գործը քննել պատասխանողի վերջին հայտնի բնակության վայրի համայնքի ղեկավարի կամ նրա վերջին հայտնի աշխատավայրի տնօրինության կողմից ծանուցում ստանալու փաստը հավաստող մակագրությամբ հաղորդագրություն ստանալուց հետո:

Վճռաբեկ դատարանն իր նախկին որոշումներում անդրադարձել և գնահատման առարկա է դարձրել այն դեպքերը, երբ դատարանը ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 94-րդ հոդվածի 1-ին կետով սահմանված ծանուցման ընթացակարգի պահպանմամբ գործը քննելով՝ խախտել է անձի՝ ՀՀ

Սահմանադրության 19-րդ հոդվածով երաշխավորված արդար դատաքննության իրավունքը:

Մասնավորապես, Վճռաբեկ դատարանը նշել է, որ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 94-րդ հոդվածի 1-ին կետի կիրառումը չպետք է և չի կարող սահմանափակել կամ ի չիք դարձնել անձի արդար դատաքննության սահմանադրական իրավունքը:

Միաժամանակ, հիմք ընդունելով ՀՀ Սահմանադրության 19-րդ հոդվածը և «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածը, Վճռաբեկ դատարանն արձանագրել է կողմերի իրավահավասարության և մրցակցության դատավարական սկզբունքների խախտում և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 228-րդ հոդվածի 2-րդ կետի 2-րդ ենթակետով, բեկանել է դատական ակտը (*տես՝ Վճռաբեկ դատարանի 26.01.2007 թվականի թիվ 3-24(Ա) որոշումը՝ քաղաքացիական գործով ըստ Արմեն Մարգարյանի հայցի ընդդեմ Աշոտ Մարգարյանի՝ բաժնային սեփականության գույքից բաժինն առանձնացնելու և փոխհատուցում վճարելով սեփականության իրավունքը դադարեցնելու պահանջների մասին*):

Սույն գործով դիմելով դատարան՝ Երևանի Շենգավիթ վարչական շրջանի ղեկավարը պահանջել է Աշոտ Սալազարյանից հօգուտ Երևան համայնքի բնագանձել գույքահարկի ու գույքահարկի գծով տույժի գումարները, ինչպես նաև հողի վարձի ու հողի վարձի տույժի գումարները: Գույքահարկի գծով պարտավորությունն առաջացել է սեփականության իրավունքով Աշոտ Սալազարյանին պատկանող Երևանի Նորագավիթ 1-ին փողոց թիվ 2/5 հասցեում գտնվող գույքի մասով, իսկ հողի վարձի գծով պարտավորությունն առաջացել է նույն հասցեում գտնվող հողամասի նկատմամբ: Դատարանը կիրառել է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 94-րդ հոդվածի 1-ին կետը և բավարարվել Երևանի Կենտրոն վարչական շրջանի ղեկավարի 27.07.2010 թվականի գրությամբ, որի համաձայն՝ «Երևանի Վարդանանց 28 շենք, թիվ 82 բնակարանը մշտապես փակ է, ուստի հնարավոր չէ պարզել Աշոտ Սենիկի Սալազարյանի գտնվելու վայրը»:

Փաստորեն Դատարանը, ունենալով Աշոտ Սալազարյանին սեփականության իրավունքով պատկանող այլ գույքի հասցե (այն է՝ Երևանի Նորագավիթ 1-ին փողոց թիվ 2/5), պատշաճ և բավարար միջոցներ չի ձեռնարկել Աշոտ Սալազարյանին այդ հասցեով ծանուցելու ուղղությամբ:

Հիմք ընդունելով վերոգրյալը, Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ սույն գործով Դատարանն Աշոտ Սալազարյանին վերոնշյալ հասցեով չծանուցելու արդյունքում վերջինիս գրկել է դատարանում իր դատավարական իրավունքներից օգտվելու հնարավորությունից:

2) Վճռաբեկ բողոքի երկրորդ հիմքում նշված փաստարկներին Վճռաբեկ դատարանը չի անդրադառնում, քանի որ դրանք Վերաքննիչ դատարանում քննության առարկա չեն դարձել կողմի դատավարական իրավունքի սահմանափակման արդյունքում:

Այսպիսով, սույն բողոքի առաջին հիմքի առկայությունը Վճռաբեկ դատարանը դիտում է բավարար ՀՀ քաղաքացիական դատավարություն օրենսգրքի 228-րդ հոդվածի ուժով Վերաքննիչ դատարանի որոշումը բեկանելու համար:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 240-241²-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Վճռաբեկ բողոքը բավարարել: Բեկանել ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 22.02.2011 թվականի որոշումը և գործն ուղարկել Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության ստաջին ստյանի դատարան՝ նոր քննության:

2. Վճռաբեկ բողոքի համար սահմանված և հետաձգված պետական տուրքի բաշխման հարցին անդրադառնալ գործի նոր քննության ընթացքում:

3. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

*ՆԱԽԱԳԱՀՈՂ՝ ստորագրություն
ԴԱՏԱՎՈՐՆԵՐ՝ ստորագրություններ*

ՀԱՅՑԻ ՀԱՐՈՒՑՈՒՄԸ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական Քաղաքացիական գործ թիվ ԵԱԲԴ/0481/02/10
դատարանի որոշում 2011թ.
Քաղաքացիական գործ թիվ ԵԱԲԴ/0481/02/10
Նախագահող դատավոր՝ Ա. Մկրտչյան
Դատավորներ՝ Ն. Հովսեփյան
Ն. Բարսեղյան

ՈՐՈՇՈՒՄ

ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Հայաստանի Հանրապետության վճարելի դատարանի քաղաքացիական
և վարչական պալատը (այսուհետ՝ վճարելի դատարան)

նախագահությամբ

մասնակցությամբ դատավորներ

Ե. ԽՈՒՆԴԿԱՐՅԱՆԻ

Տ. ՊԵՏՐՈՍՅԱՆԻ

Վ. ԱԲԵԼՅԱՆԻ

Ս. ԱՆՏՈՆՅԱՆԻ

Վ. ԱՎԱՆԵՍՅԱՆԻ

Ա. ԲԱՐՍԵՂՅԱՆԻ

Մ. ԴՐՄԵՅԱՆԻ

Գ. ՀԱԿՈԲՅԱՆԻ

Է. ՀԱՅՐԻՅԱՆԻ

Ե. ՍՈՂՈՍՈՆՅԱՆԻ

2011 թվականի մարտի 04-ին
դռնբաց դատական նիստում, քննելով Թերեզա Քոչարյանի վճարելի բողոքը
ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 17.09.2010 թվականի որոշման դեմ՝
ըստ հայցի Թերեզա Քոչարյանի ընդդեմ Անահիտ Հարությունովայի՝ գումարի
բռնագանձման պահանջի մասին,

ՊԱՐՉԵՑ

1. Գործի դատավարական նախապատմությունը.

Դիմելով դատարան՝ Թերեզա Քոչարյանը պահանջել է բռնագանձել Անահիտ
Հարությունովայից 9.000 ԱՄՆ դոլարին համարժեք ՀՀ դրամ, ինչպես նաև այդ
գումարի նկատմամբ հաշվարկել ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 411-րդ հոդվածով
նախատեսված տոկոսները:

Երևանի Արաբկիր և Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանների առաջին

ատյանի ընդհանուր իրավասության դատարանի (այսուհետ՝ Դատարան) 01.06.2010 թվականի վճռով հայցը բավարարվել է:

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի (այսուհետ՝ Վերաքննիչ դատարան) 17.09.2010 թվականի որոշմամբ Դատարանի 01.06.2010 թվականի վճիռը բեկանվել է, և գործն ուղարկվել է նոր քննության:

Սույն գործով վճռաբեկ բողոք է ներկայացրել Թերեզա Քոչարյանը:

Վճռաբեկ բողոքի պատասխան է ներկայացրել Անահիտ Հարությունովան:

2. Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը.

Սույն վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

Վերաքննիչ դատարանը խախտել է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 53-րդ և 78-րդ հոդվածները:

Բողոք բերած անձը նշված պնդումը պարձառաքանում է հետևյալ փաստարկներով.

Վերաքննիչ դատարանի այն պատճառաբանությունը, որ Անահիտ Հարությունովան չի իրագեկվել իր դեմ հարուցված գործի մասին, հերքվում է Անահիտ Հարությունովայի կողմից հայցադիմումը վարույթ ընդունելու մասին որոշումը ստանալու հանգամանքով և Դատարանի հետագա դատավարական գործողություններով: Ընդ որում, Վերաքննիչ դատարանը, նշելով «Հարությունյան» և «Հարությունովա» ազգանունների տարբերության մասին, չի անդրադարձել այն հարցին, թե ինչի հիման վրա է «Հարությունովա»-ն ստացել «Հարությունյան»-ին պատկանող ծանուցումը:

Վերոգրյալի հիման վրա բողոք բերած անձը պահանջել է բեկանել Վերաքննիչ դատարանի 17.09.2010 թվականի որոշումը և օրինական ուժ տալ Դատարանի 01.06.2010 թվականի վճիռն:

2.1. Վճռաբեկ բողոքի պատասխանի հիմնավորումները.

Անահիտ Հարությունովան՝ որպես պատշաճ պատասխանող, չի ստացել հայցադիմումը վարույթ ընդունելու մասին որոշումը, հայցադիմումը և դրան կից փաստաթղթերը: Ավելին, Դատարանը, խախտելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 78-րդ հոդվածի պահանջները, գործը քննել և ավարտել է Անահիտ Հարությունովայի բացակայությամբ, իսկ Վերաքննիչ դատարանը, բեկանելով Դատարանի վճիռը, կայացրել է օրինական դատական ակտ:

3. Վճռաբեկ բողոքի քննության համար նշանակություն ունեցող փաստերը.

Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1) Գործում առկա հայցադիմումի համաձայն՝ սույն գործով հայցվորը Թերեզա Քոչարյանն է, իսկ պատասխանողը՝ **Անահիտ Հարությունովան**: Հայցի առարկան 9.000 ԱՄՆ դոլարին համարժեք ՀՀ դրամ գումար բռնագանձելու պահանջն է, իսկ հայցի հիմքը՝ հայցադիմումին կցված 24.07.2007 թվականի ստացականը, ըստ որի՝ **Անահիտ Հարությունովան** Թերեզա Քոչարյանից պարտքով վերցրել է 9.000 ԱՄՆ դոլար և պարտավորվել է մաս-մաս վերադարձնել 2008 թվականի փետրվարի վերջին:

Պատասխանողի հասցեն նշվել է ք. Երևան Բաղիշևի թիվ 9 տուն (գ.թ. 9-10, 13-14):

2) Դատարանի 17.03.2010 թվականի որոշմամբ Թերեզա Քոչարյանի ներկայացրած հայցադիմումն ընդունվել է վարույթ: Որոշման մեջ որպես պատասխանող նշվել է Անահիտ Հարությունյանը (գ.թ. 2):

3) «Հայցադիմումը վարույթ ընդունելու մասին» որոշումը, հայցադիմումը, հայցադիմումի պատասխան ներկայացնելու կարգի մասին ծանուցումը, 21.05.2010 թվականի և 01.06.2010 թվականի դատական նիստերի ժամանակի և վայրի մասին ծանուցագրերն ուղարկվել են Անահիտ Հարությունովային ք. Երևան Բաղիշևի 9 հասցեով և պատշաճ կերպով ստացվել են (գ.թ. 5-7, 22-24, 32-34):

4) Դատարանի 07.06.2010 թվականի որոշմամբ ուղղվել է «Հայցադիմումը վարույթ ընդունելու մասին» որոշման մեջ թույլ տրված վրիպակը, այն է՝ «Հարությունյանի» փոխարեն նշվել է «Հարությունովայի» (գ.թ. 51):

4. Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը.

Քննելով վճռաբեկ բողոքը նշված հիմքի սահմաններում՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ բողոքը հիմնավոր է մասնակիորեն հեղեղյալ պարզաբանությամբ:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 78-րդ հոդվածի համաձայն՝ գործին մասնակցող անձինք դատական ծանուցագրերով տեղեկացվում են դատական նիստի ժամանակի և վայրի մասին: Ծանուցագիրն ուղարկվում է պատվիրված նամակով՝ հանձնման մասին ծանուցմամբ կամ հաղորդագրության ձևակերպումն ապահովող կապի այլ միջոցների օգտագործմամբ կամ հանձնվում է ստացականով (այսուհետ՝ պատշաճ ձևով):

Վերոգրյալը ենթադրում է գործին մասնակցող անձանց՝ դատական նիստի օրվա, ժամի և վայրի մասին իրազեկելու կապակցությամբ դատարանի ակտիվ գործողություններ, որոնք պետք է իրականացվեն սույն հոդվածով նախատեսված միջոցների և եղանակների օգտագործմամբ: Ընդ որում, անկախ ծանուցման եղանակից, ծանուցումը պետք է լինի այնպիսին, որով հնարավոր է ապացուցել գործին մասնակցող անձին (անձանց) դատական նիստի մասին տեղեկացնելու փաստը (*յրենս ըստ հայցի «Հայկապ» բանկ ՓԲԸ-ի ժամանակավոր առլինիստրացիայի ղեկավարի ընդդեմ Շահեն Բարսյանի՝ 10.748.853,30 ՀՀ դրամի պահանջի մասին ՀՀ վճռաբեկ դատարանի քաղաքացիական պալատի 26.10.2006 թվականի թիվ 2-2128(Ա) որոշումը*):

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 53-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ դատարանը յուրաքանչյուր ապացույց գնահատում է գործում եղած բոլոր ապացույցների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտության վրա հիմնված ներքին համոզմամբ:

Սույն գործով Վերաքննիչ դատարանը պատճառաբանել է, որ Անահիտ Հարությունովյան տեղեկացված չի եղել իր դեմ հարուցված գործի մասին (չնայած ստացել է Անահիտ Հարությունյանի դեմ հարուցված գործի մասին ծանուցումը):

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ սույն գործով հայցադիմումի համաձայն՝ հայցվորը Թերեզա Քոչարյանն է, իսկ պատասխանողը՝ **Անահիտ Հարությունովյան**: Սույն գործով հայցի առարկան 9.000 ԱՄՆ դոլարին համարժեք ՀՀ դրամ գումար բռնագանձելու պահանջն է, իսկ հայցի հիմքը՝ հայցադիմումին կցված 24.07.2007 թվականի ստացականը, ըստ որի՝ **Անահիտ Հարությունովյան** Թերեզա Քոչարյանից պարտքով վերցրել է 9.000 ԱՄՆ դոլար և պարտավորվել է մաս-մաս վերադարձնել 2008 թվականի փետրվարի վերջին: Պատասխանողի հասցեն

նշվել է ք. Երևան Բաղիշևի թիվ 9 տուն: Դատարանի 17.03.2010 թվականի որոշմամբ Թերեզա Քոչարյանի ներկայացրած հայցադիմումն ընդունվել է վարույթ: Որոշման մեջ որպես պատասխանող է նշվել Անահիտ Հարությունյանը: «Հայցադիմումը վարույթ ընդունելու մասին» որոշումը, հայցադիմումը, հայցադիմումի պատասխան ներկայացնելու կարգի մասին ծանուցումը, 21.05.2010 թվականի և 01.06.2010 թվականի դատական նիստերի ժամանակի և վայրի մասին ծանուցագրերն ուղարկվել են **Անահիտ Հարությունովային՝** ք. Երևան Բաղիշևի 9 հասցեով, և դրանք պատշաճ կերպով ստացվել են: Դատարանի 07.06.2010 թվականի որոշմամբ ուղղվել է «Հայցադիմումը վարույթ ընդունելու մասին» որոշման մեջ թույլ տրված վրիպակը, այն է՝ «Հարությունյանի» փոխարեն նշվել է «Հարությունովայի»:

Հիմք ընդունելով վերոգրյալը և սույն գործի փաստերը համադրելով՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ հայցադիմումը, հայցադիմումի պատասխան ներկայացնելու կարգի մասին ծանուցումը, 21.05.2010 թվականի և 01.06.2010 թվականի դատական նիստերի ժամանակի և վայրի մասին ծանուցագրերն Անահիտ Հարությունովայի հասցեով ուղարկված լինելու և պատշաճ կերպով ստացվելու պայմաններում Անահիտ Հարությունովան տեղեկացված է եղել իր դեմ հարուցված գործի մասին:

Մասնավորապես, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ սույն գործով **Անահիտ Հարությունովայի** բնակության վայր, այն է՝ ք. Երևան Բաղիշևի 9 հասցեով **ուղարկված** հայցադիմումում «**պատասխանող Անահիտ Հարությունովա**» **նշված լինելու հանգամանքը**, ինչպես նաև հայցի հիմքը կազմող **Անահիտ Հարությունովայի կողմից տրված 24.07.2007 թվականի ստացականը**, ըստ որի՝ **Անահիտ Հարությունովան** Թերեզա Քոչարյանից պարտքով վերցրել է 9.000 ԱՄՆ դոլար և պարտավորվել է մաս-մաս վերադարձնել 2008 թվականի փետրվարի վերջին, Անահիտ Հարությունովայի համար բավարար էին համոզված լինելու, որ ստացված հայցը հարուցված է իր դեմ: Հետևաբար, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ «Հայցադիմումը վարույթ ընդունելու մասին» 17.03.2010 թվականի որոշման մեջ պատասխանողի ազգանունը «Հարությունովայի» փոխարեն թյուրիմացաբար «Հարությունյան» նշվելու հանգամանքը Անահիտ Հարությունովային հիմք չէր կարող տալ կարծելու, թե սույն գործն իր դեմ հարուցված չէ:

Նման պայմաններում Վճռաբեկ դատարանը գտնում է, որ գործի քննությունը ՀՀ Սահմանադրության 19-րդ հոդվածի, «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածի և ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 78-րդ հոդվածի պահանջների խախտումներով իրականացնելու մասին Վերաքննիչ դատարանի հետևությունը հիմնավոր չէ:

Միաժամանակ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ գործը ենթակա է Վերաքննիչ դատարանում նոր քննության, քանի որ Վերաքննիչ դատարանը, բավարարելով վերաքննիչ բողոքը և գործն ուղարկելով նոր քննության, չի անդրադարձրել վերաքննիչ բողոքի մյուս փաստարկներին:

Այսպիսով, վճռաբեկ բողոքի հիմքի առկայությունը բավարար է, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 228-րդ հոդվածի համաձայն, Վերաքննիչ դատարանի որոշումը բեկանելու համար:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 240-241²-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

ՈՐՈՇԵՑ

1. Վճռաբեկ բողոքը բավարարել մասնակիորեն: Բեկանել ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 17.09.2010 թվականի որոշումը և գործն ուղարկել նույն դատարան՝ նոր քննության:

2. Վճռաբեկ բողոքի համար սահմանված պետական տուրքի հարցին անդրադառնալ գործի նոր քննության ընթացքում:

3. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

*ՆԱԽԱԳԱՀՈՂ՝ ստորագրություն
ԴԱՏԱՎՈՐՆԵՐ՝ ստորագրություններ*

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական
դատարանի որոշում

Քաղաքացիական գործ թիվ ԵՇԴ/0473/02/10
2011թ.

Քաղաքացիական գործ թիվ ԵՇԴ/0473/02/10
Նախագահող դատավոր՝ Ս. Նազարյան
Դատավորներ՝ Կ. Հակոբյան
Ս. Սահակյան

ՈՐՈՇՈՒՄ

ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քաղաքացիական և
վարչական պալատը (այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

*նախագահությամբ
մասնակցությամբ դատավորներ*

Ե. ԽՈՒՆԴԿԱՐՅԱՆԻ
Վ. ԱԲԵԼՅԱՆԻ
Ս. ԱՆՏՈՆՅԱՆԻ
Վ. ԱՎԱՆԵՍՅԱՆԻ
Ա. ԲԱՐՍԵՂՅԱՆԻ
Մ. ԴՐՄԵՅԱՆԻ
Գ. ՀԱԿՈԲՅԱՆԻ
Է. ՀԱՅՐԻՅԱՆԻ
Տ. ՊԵՏՐՈՍՅԱՆԻ
Ե. ՍՈՂՈՄՈՆՅԱՆԻ

2011 թվականի մայիսի 27 -ին

դռնբաց դատական նիստում, քննելով Սուրիկ Սեդրակյանի վճռաբեկ բողոքը
ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 03.12.2010 թվականի որոշման դեմ՝ ըստ
հայցի Վիգեն Ուրուշանյանի ընդդեմ Սուրիկ Սեդրակյանի՝ գումարի բռնագանձման
պահանջի մասին, և ըստ հայցի Սուրիկ Սեդրակյանի ընդդեմ Վիգեն Ուրուշանյանի՝
անհիմն հարստացմամբ ստացած գումարը վերադարձնելու պահանջի մասին,

ՊԱՐԶԵՑ

1. Գործի դատավարական նախապատմությունը

Դիմելով դատարան՝ Վիգեն Ուրուշանյանը պահանջել է Սուրիկ Սեդրակյանից
բռնագանձել 500.000 ՀՀ դրամ, ինչպես նաև ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 411-րդ
հոդվածով սահմանված տոկոսների հաշվարկը շարունակել մինչև պատասխանողի
կողմից վճարային պարտավորության փաստացի կատարման օրը:

Դիմելով դատարան՝ Սուրիկ Սեդրակյանը պահանջել է որպես անհիմն
հարստացման հետևանքով ծագած պարտավորություն Վիգեն Ուրուշանյանին
պարտավորեցնել վերադարձնել 1.500 ԱՄՆ դոլար:

ՀՀ Շենգավիթ վարչական շրջանի ընդհանուր իրավասության դատարանի (այսուհետ՝ Դատարան) 21.06.2010 թվականի վճռով Վիզեն Ուրուշանյանի հայցը բավարարվել է, իսկ Սուրիկ Սեդրակյանի հայցը՝ մերժվել:

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի (այսուհետ՝ Վերաքննիչ դատարան) 03.12.2010 թվականի որոշմամբ Սուրիկ Սեդրակյանի վերաքննիչ բողոքը մերժվել է, և Դատարանի 21.06.2010 թվականի վճիռը թողնվել է օրինական ուժի մեջ:

Սույն գործով վճռաբեկ բողոք է ներկայացրել Սուրիկ Սեդրակյանը:

Վճռաբեկ բողոքի պատասխան է ներկայացրել Վիզեն Ուրուշանյանը:

2. Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը

Սույն վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

Վերաքննիչ դատարանը սխալ է մեկնաբանել ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 17-րդ, 1058-րդ, 1092-րդ և 1094-րդ հոդվածները, խախտել է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 52-րդ, 53-րդ, 91-րդ և 109-րդ հոդվածների պահանջները:

Բողոք բերած անձը նշված պնդումը պարզապարզապես է հերքել և փաստարկներով.

Վերաքննիչ դատարանն անտեսել է այն հանգամանքը, որ Վիզեն Ուրուշանյանի և Սուրիկ Սեդրակյանի միջև նույն առարկայի մասին մինչև նույն հիմքերով վեճի վերաբերյալ առկա է դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած վճիռ, ինչը նշանակում է, որ նախկինում քննված՝ քաղաքացիական գործով օրինական ուժի մեջ մտած դատարանի վճռով հաստատված հանգամանքները նույն անձանց միջև դատարանում այլ գործ քննելիս կրկին չեն ապացուցվում: Մասնավորապես, քաղաքացիական գործում առկա է ըստ հայցի Վիզեն Ուրուշանյանի ընդդեմ Սուրիկ Սեդրակյանի՝ գումարի բռնագանձման պահանջի մերժման վերաբերյալ Երևանի Շենգավիթ վարչական շրջանի ընդհանուր իրավասության դատարանի՝ 26.11.2009 թվականի օրինական ուժի մեջ մտած վճիռը: Որպես նշված հայցապահանջի ապացուցման պարտականությունը կրող կողմ Վիզեն Ուրուշանյանը ներկայացրել է ՀՀ Ոստիկանության Երևան քաղաքի վարչության Շենգավիթի բաժնի 02.05.2009 թվականի գրությունը, ինչը, սակայն, Երևանի Շենգավիթ վարչական շրջանի ընդհանուր իրավասության դատարանի կողմից չի գնահատվել որպես հացապահանջը հիմնավորող ապացույց և կողմերի միջև պարտավորության ծագման հիմք: Հետագայում Վիզեն Ուրուշանյանը կրկին նույն հայցապահանջն է ներկայացրել ընդդեմ Սուրիկ Սեդրակյանի՝ հիմքում դնելով նոր ապացույց, ինչն էլ Դատարանի 21.06.2010 թվականի վճռով բավարարվել է:

Ինչ վերաբերում է Սուրիկ Սեդրակյանի հայցի մերժմանը, ապա անհրաժեշտ է հաշվի առնել այն հանգամանքը, որ 01.05.2009 թվականի պարտավորագիրն իրավագուրվել է, ուստի «Վիզեն Ուրուշանյանն առանց որևէ գործարքով սահմանված հիմքերի, առանց օրենքին կամ այլ իրավական ակտերին համապատասխան հայցվոր՝ Սուրիկ Սեդրակյանի հաշվին ձեռք է բերել գույք, տվյալ դեպքում 1.500 ԱՄՆ դոլար գումար», հետևաբար «Սուրիկ Սեդրակյանից ստացած գումարն անհիմն հարստացման հետևանքով ձեռք բերած գույք է», և այն ենթակա է վերադարձման:

Վերոգրյալի հիման վրա բողոք բերած անձը պահանջել է բեկանել Վերաքննիչ դատարանի 03.12.2010 թվականի որոշումը և այն փոփոխել՝ Վիզեն Ուրուշանյանի

հայցը մերժել, իսկ Սուրիկ Սեդրակյանի հայցը բավարարել:

2.1 Վճարել բողոքի պատասխանի հիմնավորումները

Վերաքննիչ դատարանը, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 53-րդ հոդվածի համաձայն, գործում առկա յուրաքանչյուր ապացույց գնահատել է գործի բոլոր ապացույցների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտության վրա հիմնված ներքին համոզմամբ, պարզել է վերաքննիչ բողոքի քննության համար նշանակություն ունեցող փաստերը և կայացրել է հիմնավորված որոշում: Ելնելով վերոգրյալից՝ ներկայացված վճարել բողոքն անհիմն է և ենթակա է մերժման:

3. Վճարել բողոքի քննության համար նշանակություն ունեցող փաստերը

Վճարել բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1. 01.05.2009 թվականի պարտավորագրով Սուրիկ Սեդրակյանը պարտավորվել է որդու՝ Անդրանիկ Սեդրակյանի կողմից պարտքով վերցված 1.500 ԱՄՆ դոլարը և 500.000 ՀՀ դրամը վերադարձնել 60-օրյա ժամկետում (հատոր 1-ին, գ.թ. 10):

2. 02.05.2009 թվականի ՀՀ Ոստիկանության Երևան քաղաքի վարչության Ծենգավիթի բաժնի պետի՝ Վիգեն Ուրուշանյանին ուղղված գրության (այսուհետ՝ ՀՀ ոստիկանության գրություն) համաձայն՝ Սուրիկ Սեդրակյանը պարտավորվել է **որդու փոխարեն** 1.500 ԱՄՆ դոլարը և 500.000 ՀՀ դրամը 60 օրվա ընթացքում վերադարձնել Վիգեն Ուրուշանյանին (հատոր 1-ին, գ.թ. 46):

3. 31.08.2009 թվականին Վիգեն Ուրուշանյանը դիմել է Երևանի Ծենգավիթ վարչական շրջանի ընդհանուր իրավասության դատարան և պահանջել Սուրիկ Սեդրակյանից բռնագանձել 500.000 ՀՀ դրամ (հատոր 2-րդ, գ.թ. 48):

4. Երևանի Ծենգավիթ վարչական շրջանի ընդհանուր իրավասության դատարանի՝ 26.11.2009 թվականի օրինական ուժի մեջ մտած վճռով Վիգեն Ուրուշանյանի հայցն ընդդեմ Սուրիկ Սեդրակյանի՝ գումարի բռնագանձման մասին մերժվել է, պատճառաբանվել է, որ պահանջն «անհիմն է և անօրինական», իսկ հայցապահանջի հիմքում դրված 02.05.2009 թվականի ՀՀ ոստիկանության գրությունը գնահատվել է որպես հայցապահանջը չհաստատող ապացույց (հատոր 1-ին, գ.թ. 42):

5. ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 25.02.2010 թվականի որոշմամբ Երևանի Ծենգավիթ վարչական շրջանի ընդհանուր իրավասության դատարանի 26.11.2009 թվականի վճիռը թողնվել է օրինական ուժի մեջ:

6. 29.04.2010 թվականին Վիգեն Ուրուշանյանը կրկին նույն հայցապահանջով դիմել է Դատարան ընդդեմ Սուրիկ Սեդրակյանի, այս անգամ որպես պահանջը հիմնավորող ապացույց ներկայացրել է 01.05.2009 թվականի պարտավորագիրը, ինչը որպես պահանջը հաստատող ապացույց նախորդ գործի քննության ժամանակ չէր ներկայացվել (հատոր 1-ին, գ.թ. 2):

4. Վճարել դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումները

Քննելով վճարել բողոքը նշված հիմքի սահմաններում՝ Վճարել դատարանը գրնում է, որ այն հիմնավոր է մասնակիորեն հերկյալ պարճատարանությանը.

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 53-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ դատարանը յուրաքանչյուր ապացույց գնահատում է գործում եղած բոլոր

ապացույցների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտության վրա հիմնված ներքին համոզմամբ:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 48-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ գործին մասնակցող յուրաքանչյուր անձ պետք է ապացույցի իր վկայակոչած փաստերը:

Սույն գործի փաստերի համաձայն՝ 31.08.2009 թվականին Վիգեն Ուրուշանյանը դիմել է Երևանի Շենգավիթ վարչական շրջանի ընդհանուր իրավասության դատարան ընդդեմ Սուրիկ Սեդրակյանի՝ պահանջելով բռնագանձել 500.000 ՀՀ դրամ՝ հայցի հիմքում դնելով Սուրիկ Սեդրակյանի՝ իր որդու փոխարեն որոշակի գումար վճարելու պարտավորության առկայությունը, և որպես պահանջը հիմնավորող ապացույց ներկայացրել է ՀՀ ոստիկանության 02.05.2009 թվականի գրությունը, որը գնահատվել է որպես պահանջը չհիմնավորող ապացույց:

29.04.2010 թվականին Վիգեն Ուրուշանյանը կրկին դիմել է Դատարան ընդդեմ Սուրիկ Սեդրակյանի՝ պահանջելով բռնագանձել 500.000 ՀՀ դրամ, այս անգամ որպես պահանջը հիմնավորող ապացույց ներկայացրել է 01.05.2009 թվականի պարտավորագիրը, որը նախորդ գործի քննության ժամանակ չի ներկայացվել:

Սույն գործով Վերաքննիչ դատարանը որոշում կայացնելիս պատճառաբանելով, որ «տվյալ պարագայում 31.08.2009 թվականին և 29.04.2010 թվականին Վիգեն Ուրուշանյանի կողմից դատարան ներկայացված հայցադիմումների բովանդակության ուսումնասիրությունից պարզ է դառնում, որ **հայցի իրավական հիմքը ևս համընկնում է**, երկու դեպքում էլ որպես վիճելի իրավահարաբերությունը կարգավորող իրավական նորմեր նշվել են ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 347-րդ և 411-րդ հոդվածները, արձանագրել է, որ 31.08.2009 թվականին ներկայացված հայցապահանջի հիմքում Վիգեն Ուրուշանյանը դրել է ՀՀ ոստիկանության Երևան քաղաքի վարչության Շենգավիթի բաժնի պետի 02.05.2009 թվականի թիվ 41/5-Ս-9 գրությունը, մինչդեռ սույն քաղաքացիական գործով պահանջի հիմքում դրված է Սուրեն Սեդրակյանի կողմից գրված և ստորագրված պարտավորագիրը, ինչի հիման վրա էլ կողմերի միջև ծագել են որոշակի իրավահարաբերություններ», ուստի «25.02.2010 թվականի ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի որոշմամբ ոչ թե հաստատվել է այն հանգամանքը, որ Սուրեն Սեդրակյանը դրամական պարտավորվածություն չունի Վիգեն Ուրուշանյանի նկատմամբ, այլ այն, որ վերջինիս կողմից որպես հայցը հիմնավորող ապացույց ներկայացված ոստիկանության գրությունը չի կարող հանդիսանալ պարտավորության ծագման հիմք: Ինչից հետո կրկին հայց ներկայացնելով՝ Վիգեն Ուրուշանյանը **փոխել է հայցի փաստական հիմքը**՝ նշելով, որ Ս. Սեդրակյանը գրել է պարտավորագիր և դրանով ստանձնել է որդու պարտավորությունը, և գտել է, որ «սույն գործով, թեև առկա է օրինական ուժի մեջ մտած դատական ակտ սույն անձանց միջև, մինչև սույն առարկայի մասին վեճի վերաբերյալ, սակայն նույնը չէ վեճի փաստական հիմքը»:

Վերաքննիչ դատարանը պատճառաբանել է նաև, որ «քաղաքացիական գործի վարույթի կարճման համար պարտադիր պետք է առկա լինի դատարանի օրինական ուժի մեջ մտած վճիռ՝ **1. նույն անձանց միջև, 2. նույն առարկայի մասին, 3. միևնույն հիմքերով** վեճի վերաբերյալ», և գտել է, որ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 109-րդ հոդվածի 2-րդ կետը չի կարող կիրառելի լինել սույն գործով, որպիսի իրավաչափ եզրահանգման է եկել նաև Դատարանը:

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ սույն գործով անհրաժեշտ է մեկնաբանել ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 91-րդ հոդվածի 1-ին

կետի 2-րդ ենթակետով սահմանված «միննույն հիմքերով» օրենսդրական եզրույթը և պատասխանել հետևյալ իրավական հարցադրմանը՝ *արդյոք հայցի հիմքում դրված ապացույցի ներկայացումը նոր հայցով կարող է համարվել այլ հիմքով հայցի ներկայացում:*

Վերոնշյալ իրավական հարցադրմանը պատասխանելու համար նախ հարկ ենք համարում անդրադառնալ և քննարկման առարկա դարձնել հետևյալ իրավական հարցերը.

ա) Ինչ է իրենից ներկայացնում հայցի հիմքը և որոնք են դրա տարրերը:

բ) Արդյոք հայցի փաստական հիմքը նույնանում է փաստը հաստատող ապացույցի հետ:

ա) Վճռաբեկ դատարանը հարկ է համարում արձանագրել, որ չնայած ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգիրքն անմիջականորեն չի սահմանում **հայցի փաստական և իրավական հիմքերի** տարբերակիչ հատկանիշները, այնուամենայնիվ, այն բխում է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի այլ նորմերից:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 87-րդ հոդվածի 2-րդ կետի 4-րդ և 5-րդ ենթակետերի համաձայն՝ հայցադիմումում պետք է նշվեն **հանգամանքները**, որոնց վրա հիմնվում են հայցապահանջները և դրանք հաստատող **ապացույցները**:

Նույն օրենսգրքի 48-րդ հոդվածի 2-րդ կետի համաձայն՝ **գործի լուծման համար էական նշանակություն ունեցող փաստերը** որոշում է դատարանը՝ գործին մասնակցող անձանց պահանջների և առարկությունների հիման վրա:

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ հայցի փաստական հիմքն այն հանգամանքներն են, որոնց հետ նյութական իրավունքի նորմը կապում է իրավահարաբերությունների առաջացումը, փոփոխումը կամ դադարումը:

Հայցի փաստական հիմքն ըստ էության իրավաբանական փաստերն են, հանգամանքները, որոնք հիմք են հանդիսացել հայցվորի պահանջի համար: Միաժամանակ, հայցի փաստական հիմքը վերջնականորեն որոշում է դատարանը՝ հիմնվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 48-րդ հոդվածի վրա:

Վճռաբեկ դատարանը գտնում է, որ հայցի փաստական հիմքից բացի հայցի տարրերի մեջ ներառվում է նաև հայցի իրավական հիմքը, որն այն իրավական նորմերն են, որոնք կարգավորում են վիճելի իրավահարաբերությունը: Չնայած ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգիրքը հայցվորից չի պահանջում հայցադիմումում նշել այն իրավական նորմերը, որոնց վրա հիմնվում է հայցապահանջը, այնուամենայնիվ, հայցվորը բացի փաստական հանգամանքներից, կարող է հայցադիմումում նշել այն իրավական նորմերը, որոնց հիման վրա կողմերի միջև ծագել են համապատասխան իրավահարաբերություններ, և որը վերջինիս հիմք է տալիս առկա փաստական հանգամանքների հետ միասին ներկայացնել համապատասխան պահանջ:

բ) Հայցի փաստական հիմքում դրված իրավաբանական փաստերը միայն վերացական հիմք են պահանջ ներկայացնելու համար: Քաղաքացիական դատավարության շրջանակներում դրանք պետք է նաև հիմնավորվեն: Այդ գործընթացը ներառվում է ապացուցման գործընթացում: Այդ տրամաբանությամբ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 87-րդ հոդվածի 2-րդ կետի

4-րդ ենթակետը, բացի հայցի փաստական հիմքերից, նախատեսում է նաև, որ հայցադիմումում նշվում են նաև հայցապահանջները հաստատող ապացույցները: Վճռաբեկ դատարանը գտնում է, որ դրանք, ըստ էության, հայցի փաստական հիմքը հիմնավորող ապացույցներն են: Հետևաբար, ՀՀ քաղաքացիական դատավարության շրջանակներում պետք է տարբերակել հայցի փաստական հիմքը, հայցի հիմքը և պահանջը հիմնավորող ապացույցները: Ապացույցները հիմնավորում են հայցի հիմքը կազմող իրավաբանական փաստերը և ի վերջո հայցվորի պահանջը:

Վճռաբեկ դատարանը գտնում է, որ հայցի հիմքում ընկած փաստական հանգամանքների մատնանշումը հայցադիմումի մեջ համարվում է տվյալ հիմքով հայցի ներկայացում: Հայցի հիմքում դրված փաստերի հիմնավորումը կապված է ապացուցման գործընթացի հետ և չի կարող նույնացվել հայցի հիմքի հետ:

Հետևաբար հայցի փաստական հիմքերի ներկայացումը և դրանք հիմնավորող ապացույցները չներկայացնելը տարբեր իրավաբանական նշանակություն և հետևանքներ ունեն: Հայցի հիմքում դրված փաստերի վերաբերյալ ապացույցներ չներկայացնելը հիմք է հայցը մերժելու համար, իսկ հայցի փաստական հիմքի ներկայացումն անձին գրկում է այդ հիմքով նորից դատարան դիմելու հնարավորությունից:

Նման պայմաններում Վճռաբեկ դատարանը գտնում է, որ հայցի հիմքում դրված որոշակի փաստական հանգամանքները հիմնավորող ապացույցը տվյալ դատավարության շրջանակներում չներկայացնելու պարագայում նույն փաստական հանգամանքների հիման վրա հայց ներկայացնելու դեպքում տվյալ ապացույցը ներկայացնելը չի կարող որակվել որպես **այլ հիմքով** հայցի ներկայացում:

Այսպիսով, Վճռաբեկ դատարանը եզրակացնում է, որ նույն հիմքերով օրենսդրական եզրույթը ներառում է հայցի փաստական և իրավական հիմքերը, այլ ոչ թե դրանք հիմնավորող ապացույցները:

Հիմք ընդունելով վերոգրյալը և հաշվի առնելով այն հանգամանքը, որ ինչպես օրինական ուժի մեջ մտած վճռի, այնպես էլ տվյալ դեպքում որպես հայցի փաստական հիմք է ներկայացվել Սուրիկ Սեդրակյանի՝ իր որդու փոխարեն որոշակի գումար վճարելու պարտավորության առկայության հարցը, Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ երկու գործով ներկայացվել է հայցի նույն իրավական և փաստական հիմքը, իսկ սույն գործով ընդամենը փոխվել է այդ փաստական հիմքը հիմնավորող ապացույցների կազմը:

Միաժամանակ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ սույն գործով ըստ էության իրականացվել է դատարանի կողմից արդեն մեկ անգամ լուծված գործի կրկնակի քննություն, և գտնում է, որ սույն գործով դատարանների կողմից խախտվել է նաև իրավական որոշակիության սկզբունքը:

Մասնավորապես, իրավական որոշակիության սկզբունքի վերաբերյալ իրավական դիրքորոշում է հայտնել Եվրոպական դատարանը Բրունարեսկուն ընդդեմ Թուրինիայի 28.10.1999 թվականի թիվ 28342/95 գործով, արձանագրելով, որ Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին մասով երաշխավորված արդար դատաքննության իրավունքը պետք է մեկնաբանվի Կոնվենցիայի նախաբանի լույսի ներքո, որի համաձայն պայմանավորվող կողմերի ընդհանուր ժառանգության մասն է իրավունքի գերակայությունը, որի բաղկացուցիչ մասն է իրավական որոշակիության սկզբունքը: Իրավական որոշակիության սկզբունքն ենթադրում է res judicata սկզբունքի, այն է՝ դատական ակտերի վերջնական լինելու սկզբունքի պահպանում: Այդ սկզբունքը

պահանջում է, որպեսզի կողմերից ոչ մեկը չունենա իրավունք պահանջելու վերջնական և պարտադիր դատական ակտի վերանայում ուղղակի գործի կրկնակի քննության և գործով նոր ակտի կայացման նպատակով: Այսինքն, հարցի առնչությամբ երկու կարծիքի առկայության հնարավորությունը չպետք է հիմք հանդիսանա կրկնակի քննության համար: Նահանջն այդ սկզբունքից արդարացված է միայն այն դեպքում, երբ դա անհրաժեշտ է էական և անհերքելի բնույթ ունեցող հանգամանքներում:

Իրավական որոշակիության սկզբունքի բովանդակության մեջ ներառվում են հետևյալ դրույթները.

- դատարանների կողմից կայացված վերջնական, այսինքն՝ օրինական ուժի մեջ մտած դատական որոշումները ենթակա չեն վերանայման,

- անթույլատրելի է դատարանի կողմից արդեն մեկ անգամ լուծված գործի կրկնակի քննություն,

- կողմերից ոչ մեկը չի կարող պահանջել վերջնական, այսինքն՝ օրինական ուժի մեջ մտած, դատական ակտերի վերանայում միայն կրկնակի քննության իրականացման և նոր ակտի կայացման նպատակով:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 109-րդ հոդվածի 2-րդ կետի համաձայն՝ Դատարանը կարճում է գործի վարույթը, եթե նույն անձանց միջև, նույն առարկայի մասին միևնույն հիմքերով վեճի վերաբերյալ առկա է դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած վճիռ:

Սույն գործի փաստերի համադրության արդյունքում Վճռաբեկ դատարանը գտնում է, որ քաղաքացիական գործը գումարի բռնագանձման պահանջի մասով ենթակա է կարճման, քանի որ նույն անձանց միջև նույն առարկայի մասին և միևնույն հիմքով վեճի վերաբերյալ առկա է դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած վճիռ:

Ինչ վերաբերում է անհիմն հարստացման պահանջի վերաբերյալ բողոքի հիմքին, ապա այն անհիմն է հետևյալ պատճառաբանությամբ.

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1092-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ անձը, ով առանց օրենքով, այլ իրավական ակտերով կամ գործարքով սահմանված հիմքերի ուրիշ անձի (տուժողի) հաշվին ձեռք է բերել գույք կամ ինչայել է այն (ձեռք բերողը), պարտավոր է տուժողին վերադարձնել անհիմն ձեռք բերած կամ խնայած գույքը (անհիմն հարստացումը), բացառությամբ սույն օրենսգրքի 1099-րդ հոդվածով նախատեսված դեպքերի:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1092-րդ հոդվածից հետևում է, որ անհիմն հարստացման առկայության համար անհրաժեշտ է հետևյալ պայմանների միաժամանակյա առկայությունը.

1. անձը (ձեռք բերողը) այլ անձի (տուժողի) հաշվին պետք է ձեռք բերի կամ խնայի գույք, այսինքն՝ ձեռք բերողի մուր գույքի ավելացումը պետք է պայմանավորված լինի տուժողի մուր գույքի պակասեցմամբ,

2. գույքը պետք է ձեռք բերվի կամ խնայվի առանց օրենքով, այլ իրավական ակտերով կամ գործարքով սահմանված հիմքերի, այսինքն՝ հարստացումն անօրինական ձևով (տես՝ Անժեյիկա Գասպարյանի հայցն ընդդեմ Զեյիմ Միմոնյանի՝ գումար բռնագանձելու պահանջի մասին քաղաքացիական գործով Վճռաբեկ դատարանի 13.02.2009 թվականի թիվ ԵԱԲԴ/0455/02/09 որոշումը):

Տվյալ դեպքում Սուրեն Սեդրակյանը, Վիգեն Ուրուշանյանին վճարելով 1.500 ԱՄՆ դոլար, այդ մասով ընդունել է իր պարտավորությունը և կատարել վճարումը:

Ըստ էության Սուրեն Սեդրակյանն ընդունել է պարտք լինելու հանգամանքն ու պարտավորությունը կատարել է պատշաճ և սեփական կամքով: Այսինքն, սույն իրավահարաբերության մեջ օրենքով սահմանված անհիմն հարստացման հատկանիշներ առկա չեն: Հետևաբար, վերաքննիչ դատարանի որոշումն այդ մասով օրինական է, և վճռաբեկ բողոքն անհիմն հարստացման մասով ենթակա է մերժման:

Այսպիսով, վճռաբեկ բողոքի հիմքի առկայությունը Վճռաբեկ դատարանը դիտում է բավարար՝ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 227-րդ և 228-րդ հոդվածների համաձայն Վերաքննիչ դատարանի որոշումը մասնակիորեն բեկանելու համար:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 240-241²-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

ՈՐՈՇԵՑ

1. Վճռաբեկ բողոքը բավարարել մասնակիորեն: Բեկանել ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 03.12.2010 թվականի որոշման՝ Վիզեն Ուրուշանյանի հայցի մասը և այդ մասով գործի վարույթը կարձել: Որոշման մնացած մասը թողնել օրինական ուժի մեջ:

2. Վիզեն Ուրուշանյանից հօգուտ Սուրիկ Սեդրակյանի բռնագանձել վճռաբեկ բողոքի համար վճարված 10.000 ՀՀ դրամ, ինչպես նաև վերաքննիչ բողոքի համար վճարված 10.000 ՀՀ դրամ պետական տուրքի գումարները:

3. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

*ՆԱԽԱԳԱՀՈՂ՝ սպորազրույթուն
ԴԱՏԱՎՈՐՆԵՐ՝ սպորազրույթուններ*

ԳՈՐԾԻ ՎԱՐՈՒՅԹԻ ԿԱՍԵՑՈՒՄԸ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական
դատարանի որոշում

Քաղաքացիական գործ թիվ ԵԷԴ/1048/02/08
2011թ.

Քաղաքացիական գործ թիվ ԵԷԴ/1048/02/08

Նախագահող դատավոր՝ Ս. Նազարյան

Դատավորներ՝ Կ. Հակոբյան

Ս. Սահակյան

ՈՐՈՇՈՒՄ

ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քաղաքացիական և վարչական
պալատը (այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

նախագահությամբ

մասնակցությամբ դատավորներ

Ե. ԽՈՒՆԴԿԱՐՅԱՆԻ

Գ. ՀԱԿՈԲՅԱՆԻ

Վ. ԱԲԵԼՅԱՆԻ

Ս. ԱՆՏՈՆՅԱՆԻ

Վ. ԱՎԱՆԵՍՅԱՆԻ

Ա. ԲԱՐՍԵՂՅԱՆԻ

Մ. ԴԻՄԵՅԱՆԻ

Է. ՀԱՅՐԻՅԱՆԻ

Տ. ՊԵՏՐՈՍՅԱՆԻ

Ե. ՍՈՂՈՄՈՆՅԱՆԻ

2011 թվականի մայիսի 27-ին

դոնրաց դատական նիստում, քննելով Բաբկեն Մելքոնյանի վճռաբեկ բողոքը
ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 05.11.2010 թվականի որոշման դեմ՝
ըստ հայցի Կարեն Հարությունյանի ընդդեմ Բաբկեն Մելքոնյանի՝ հիփոթեքի
պայմանագրով գրավադրված անշարժ գույքի վրա բռնագանձում տարածելու և այն
հրապարակային սակարկություններով վաճառելու պահանջների մասին,

ՊԱՐԶԵՑ

1. Գործի դատավարական նախապատմությունը

Դիմելով դատարան՝ Կարեն Հարությունյանը պահանջել է բռնագանձում
տարածել Բաբկեն Մելքոնյանին սեփականության իրավունքով պատկանող՝
հիփոթեքի պայմանագրով գրավադրված Երևանի Սարի թաղի 12-րդ փողոցի թիվ 11
հասցեի անշարժ գույքի վրա և այն վաճառել հրապարակային սակարկություններով:

Երևանի Էրեբունի և Նուբարաշեն համայնքների ընդհանուր իրավասության դատարանի (այսուհետ՝ Դատարան) 08.01.2009 թվականի վճռով հայցը բավարարվել է:

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի (այսուհետ՝ Վերաքննիչ դատարան) 05.11.2010 թվականի որոշմամբ Բաբկեն Մելքոնյանի վերաքննիչ բողոքը մերժվել է, և Դատարանի 08.01.2009 թվականի վճիռը թողնվել է օրինական ուժի մեջ:

Սույն գործով վճռաբեկ բողոք է ներկայացրել Բաբկեն Մելքոնյանը:

Վճռաբեկ բողոքի պատասխան է ներկայացրել Կարեն Հարությունյանը:

2. Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը

Սույն վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

Վերաքննիչ դատարանը խախտել է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 5-րդ, 16-րդ, 21-րդ, 23-րդ, 53-րդ և 105-րդ հոդվածները:

Բողոք բերած անձը նշված պնդումը պարձառաքանում է հետևյալ փաստարկներով.

Վերաքննիչ դատարանը, Բաբկեն Մելքոնյանի միջնորդության հիման վրա կասեցնելով քաղաքացիական գործի վարույթը, որոշման հիմքում դրել է երկու հիմնավորում՝ թիվ 69105308 քրեական գործով որոշման, ինչպես նաև լիազորագիրը և հիփոթեքի պայմանագիրն անվավեր ճանաչելու պահանջների վերաբերյալ առաջին ատյանի դատարանում քննվող քաղաքացիական գործով վերջնական որոշման բացակայությունը: Մինչդեռ, Վերաքննիչ դատարանը, անտեսելով նշված հանգամանքը, քաղաքացիական գործի վարույթը Կարեն Հարությունյանի դիմումի հիման վրա վերսկսելու մասին որոշումը կայացրել է այն հիմքով, որ թիվ 69105308 քրեական գործով կայացվել է դատական ակտ, որը մտել է օրինական ուժի մեջ՝ համարելով, որ վերացել է գործի վարույթի կասեցման համար հիմք հանդիսացած հանգամանքը:

Վերաքննիչ դատարանն անտեսել է, որ Դատարանը վճիռը կայացնելիս հիմք է ընդունել միայն Կարեն Հարությունյանի ներկայացրած ապացույցները, անտեսել և չի հետազոտել իր կողմից ներկայացված ՀՀ ոստիկանության քննչական գլխավոր վարչության հատուկ կարևոր գործերի քննության վարչության 12.11.2008 թվականի թիվ 7/66ԿԳ գրությունը, հայցադիմումի պատասխանը և 23.12.2008 թվականին նշանակված դատական նիստում իր տված ցուցմունքները:

Վերոգրյալի հիման վրա բողոք բերած անձը պահանջել է բեկանել Վերաքննիչ դատարանի 05.11.2010 թվականի որոշումը և գործն ուղարկել նոր քննության:

2.1. Վճռաբեկ բողոքի պատասխանի հիմնավորումները

Բաբկեն Մելքոնյանի վճռաբեկ բողոքը ենթակա է մերժման, քանի որ դրանում նշված բողոք բերելու հիմքերը և բողոքի հիմնավորումներն անհիմն են:

3. Վճռաբեկ բողոքի քննության համար նշանակություն ունեցող փաստերը

Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1. Վերաքննիչ դատարանը 01.04.2009 թվականին որոշում է կայացրել սույն քաղաքացիական գործի վարույթը ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի

105-րդ հոդվածի 1-ին կետի հիմքով կասեցնելու մասին՝ որոշման մեջ նշելով, որ «Տվյալ պարագայում սույն գործի քննության անհնարինությունը պայմանավորված է նրանով, որ սույն գործով հայցի բավարարման հիմքը հանդիսանում է Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ համայնքների ընդհանուր իրավասության դատարանում վիճարկվող անշարժ գույքի գրավի պայմանագիրը: Բացի այդ, քրեական դատավարության կարգով քննվում է Բ. Մելքոնյանին պատկանող անշարժ գույքին խաբեությամբ տիրանալու վերաբերյալ հարցը» (գ.թ. 103,104).

2. 28.07.2010 թվականին Կարեն Հարությունյանի ներկայացուցիչը դիմում է ներկայացրել Վերաքննիչ դատարան սույն քաղաքացիական գործի վարույթը վերսկսելու մասին՝ միջնորդության հիմքում դնելով այն, որ վերացել է գործի վարույթի կասեցումն առաջացրած հանգամանքը՝ Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանը թիվ 69105308 քրեական գործով 18.11.2009 թվականին կայացրել է դատավճիռ, որը 27.05.2010 թվականին մտել է օրինական ուժի մեջ (գ.թ. 112).

3. Վերաքննիչ դատարանը 30.07.2010 թվականին որոշում է կայացրել սույն քաղաքացիական գործի վարույթը ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 107-րդ հոդվածի 1-ին կետի հիմքով վերսկսելու մասին՝ որոշման մեջ նշելով, որ «Ծանոթանալով Կարեն Հարությունյանի ներկայացուցչի դիմումին՝ Վերաքննիչ դատարանը գտնում է, որ վերոգրյալ դիմումով վերացել է սույն գործի վարույթի կասեցման համար հիմք հանդիսացած հանգամանքը, ուստիև քաղաքացիական գործի վարույթը պետք է վերսկսել» (գ.թ. 154).

4. Սույն գործի վարույթը վերսկսելու վերաբերյալ Վերաքննիչ դատարանի 30.07.2010 թվականի որոշման կայացման պահին չէր վերացել գործի վարույթի կասեցման մյուս հիմքը, այն է՝ Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ համայնքների ընդհանուր իրավասության դատարանում քաղաքացիական գործի քննությունն ավարտված չէր.

5. 27.10.2010 թվականին նշանակված դատական նիստում Բաբկեն Մելքոնյանի ներկայացուցիչ Սերգեյ Մկրտչյանը կրկին միջնորդել է կասեցնել գործի վարույթը, քանի որ «երկրորդ հանգամանքը չի վերացել՝ վիճարկվող անշարժ գույքի գրավի պայմանագրի վերաբերյալ որոշում չի կայացվել»: Նշված միջնորդությունը Վերաքննիչ դատարանը մերժել է:

4. Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումները

Քննելով վճռաբեկ բողոքը վերը նշված հիմքի սահմաններում՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ այն հիմնավոր է հեղկյալ պարձառաբանությամբ.

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 105-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ դատարանը պարտավոր է կասեցնել գործի վարույթը, եթե անհնարին է տվյալ գործի քննությունը մինչև սահմանադրական, քաղաքացիական, քրեական կամ վարչական դատավարության կարգով քննվող այլ գործով կամ հարցով որոշում կայացնելը:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 107-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ գործի վարույթը վերսկսվում է դրա կասեցումն առաջացրած հանգամանքների վերանալուց հետո:

Վերը նշված հոդվածների վերլուծությունից հետևում է, որ քաղաքացիական

դատավարության ընթացքում գործի վարույթը կասեցված լինելու դեպքում դատարանը գործի վարույթը կարող է վերսկսել միայն այն դեպքում, երբ վերանում են դրա կասեցումն առաջացրած հանգամանքները: Ընդ որում, եթե դատարանը, կասեցնելով գործի վարույթը, գտնում է, որ դրա քննությունն անհնար է մինչ այլ քաղաքացիական կամ քրեական դատավարության կարգով քննվող գործով որոշում կայացնելը, ապա դատարանի համար կասեցումն առաջացրած հանգամանքների վերացումն ըստ էության տվյալ գործի լուծումն է և համապատասխան դատական ակտի ուժի մեջ մտնելը: Վճռաբեկ դատարանը հարկ է համարում նշել նաև, որ այն դեպքերում, երբ դատարանի համար գործի վարույթի կասեցման հիմք են ոչ թե մեկ, այլ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 105-րդ հոդվածով նախատեսված մի քանի հիմքեր, դատարանը գործի վարույթը վերսկսելու հարցին անդրադառնալիս պետք է քննարկի ոչ միայն մեկ, այլ այն բոլոր հիմքերը, որոնց հիման վրա կասեցվել է գործի վարույթը:

Սույն գործի փաստերի համաձայն՝ Վերաքննիչ դատարանը 01.04.2009 թվականին որոշում է կայացրել գործի վարույթը կասեցնելու մասին՝ որոշման հիմքում դնելով այն, որ «սույն գործի քննության անհնարինությունը պայմանավորված է նրանով, որ սույն գործով հայցի բավարարման հիմքը հանդիսանում է Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ համայնքների ընդհանուր իրավասության դատարանում վիճարկվող անշարժ գույքի գրավի պայմանագիրը: Բացի այդ, քրեական դատավարության կարգով քննվում է Բ. Մելքոնյանին պատկանող անշարժ գույքին խաբեությանը տիրանալու վերաբերյալ հարցը»: Այսինքն՝ Վերաքննիչ դատարանը որոշում կայացնելիս ղեկավարվել է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 105-րդ հոդվածի 1-ին կետով՝ հիմք ընդունելով սույն քաղաքացիական գործի քննության անհնարինությունը մինչև **քաղաքացիական և քրեական դատավարությունների կարգով քննվող վերը նշված գործերով որոշումներ** կայացնելը:

Մինչդեռ, Վերաքննիչ դատարանը գործի վարույթի կասեցումն առաջացրած **միայն մեկ հանգամանքը** վերանալու պայմանում (այն է՝ թիվ 69105308 քրեական գործով 18.11.2009 թվականին կայացվել է դատավճիռ, որը 27.05.2010 թվականին մտել է օրինական ուժի մեջ) Կարեն Հարությունյանի ներկայացուցչի դիմումի քննության արդյունքում 30.07.2010 թվականին որոշում է կայացրել գործի վարույթը վերսկսելու մասին՝ որոշման հիմքում դնելով այն, որ «վերոգրյալ դիմումով վերացել է սույն գործի վարույթի կասեցման համար հիմք հանդիսացած հանգամանքը, ուստիև քաղաքացիական գործի վարույթը պետք է վերսկսել»:

Վերոգրյալի հիման վրա Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Վերաքննիչ դատարանը խախտել է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 105-րդ հոդվածի 1-ին կետի և 107-րդ հոդվածի 1-ին կետի պահանջները՝ անտեսելով իր իսկ կողմից 01.04.2009 թվականին կայացված որոշմամբ հաստատված իրավական դիրքորոշումն այն մասին, որ սույն քաղաքացիական գործի քննությունն անհնարին է մինչև քաղաքացիական դատավարության կարգով քննվող վերը նշված գործով որոշում կայացնելը, և գործի վարույթը վերսկսել է առանց նշված գործով որոշման կայացման փաստի առկայության:

Այսպիսով, սույն վճռաբեկ բողոքի նշված հիմքի առկայությունը Վճռաբեկ դատարանը դիտում է բավարար՝ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 228-րդ հոդվածի ուժով Վերաքննիչ դատարանի 05.11.2010 թվականի որոշումը բեկանելու համար:

Վերոնշյալի հիման վրա Վճռաբեկ դատարանը վճռաբեկ բողոքի մյուս փաստարկներին չի անդրադառնում:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 240-241²-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

ՈՐՈՇԵՑ

1. Վճռաբեկ բողոքը բավարարել: Բեկանել ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 05.11.2010 թվականի որոշումը և գործն ուղարկել ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարան՝ նոր քննության:

2. Վճռաբեկ բողոքի համար վճարման ենթակա պետական տուրքի հարցին անդրադառնալ գործի նոր քննության ընթացքում:

3. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

*ՆԱԽԱԳԱՀՈՂ՝ ստորագրություն
ԴԱՏԱՎՈՐՆԵՐ՝ ստորագրություններ*

ՎԱՐՉԱԿԱՆ ԳՈՐԾԵՐ

ՊԵՏԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՀԻՄՈՒՆՔՆԵՐ

ՍՏՈՒԳՈՒՄՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄ ԵՎ ԱՆՅԿԱՅՈՒՄ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

ՀՀ վարչական դատարանի վճիռ
Վարչական գործ թիվ ՎԴ/0280/05/10
Նախագահող դատավոր՝ Ռ. Հակոբյան

Վարչական գործ թիվ ՎԳ/0280/05/10
2011թ.

ՈՐՈՇՈՒՄ

ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Հայաստանի Հանրապետության Վճռաբեկ դատարանի քաղաքացիական
և վարչական պալատը (այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

*նախագահությամբ
մասնակցությամբ դատավորներ*

Ե. ԽՈՒՆԴԿԱՐՅԱՆԻ
Ե. ՍՈՂՈՄՈՆՅԱՆԻ
Վ. ԱԲԵԼՅԱՆԻ
Ս. ԱՆՏՈՆՅԱՆԻ
Վ. ԱՎԱՆԵՍՅԱՆԻ
Ա. ԲԱՐՍԵՂՅԱՆԻ
Մ. ԴՐՄԵՅԱՆԻ
Գ. ՀԱԿՈԲՅԱՆԻ
Է. ՀԱՅՐԻՅԱՆԻ
Տ. ՊԵՏՐՈՍՅԱՆԻ

2011 թվականի մարտի 04-ին

դռնբաց դատական նիստում, քննելով ՀՀ Կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի (այսուհետ՝ Կոմիտե) Մյասնիկյանի հարկային տեսչության (այսուհետ՝ Տեսչություն) վճռաբեկ բողոքը ՀՀ վարչական դատարանի 04.06.2010 թվականի վճիռի դեմ՝ ըստ անհատ ձեռնարկատեր Լուսինե Ավանյանի հայցի ընդդեմ Տեսչության՝ 25.12.2009 թվականի թիվ 1304158 ակտն անվավեր ճանաչելու (վերացնելու) պահանջի մասին,

ՊԱՐԶԵՑ

1. Գործի դատավարական նախապատմությունը

Դիմելով դատարան՝ Լուսինե Ասլանյանը պահանջել է անվավեր ճանաչել (վերացնել) Տեսչության 25.12.2009 թվականի թիվ 1304158 ակտը:

ՀՀ վարչական դատարանի (այսուհետ՝ Դատարան) 04.06.2010 թվականի վճռով հայցը բավարարվել է:

Սույն գործով վճռաբեկ բողոք է ներկայացրել Տեսչությունը:

Վճռաբեկ բողոքի պատասխան է ներկայացրել Լուսինե Ասլանյանը:

2. Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը

Սույն վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

Դատարանը սխալ է մեկնաբանել «Հայաստանի Հանրապետությունում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» ՀՀ օրենքը, «Արժույթային կարգավորման և արժույթային վերահսկողության մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասը:

Բողոք բերած անձը նշված պնդումը պարձատարանել է հետևյալ փաստարկներով.

Դատարանն անտեսել է, որ Տեսչության 25.12.2009 թվականի թիվ 1304158 ակտում մանրամասնորեն նկարագրված են արձանագրված խախտումները, այն իրավական նորմերը, որոնց պահանջները չեն կատարվել, խախտումների կոնկրետ ժամանակը, ինչպես նաև հղում է կատարվել համապատասխան փաստաթղթերին:

Այսպիսով, Տեսչության 25.12.2009 թվականի թիվ 1304158 ակտը կազմվել է ՀՀ օրենսդրության, մասնավորապես՝ «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի պահանջներին համապատասխան և այն պարունակում է նշված օրենքի 57-րդ հոդվածով պահանջվող փաստական և իրավական հիմնավորումները, իսկ դրանով արձանագրված իրավախախտումները փաստացի կատարվել են, ինչը և արձանագրել են ստուգումն իրականացնող պաշտոնատար անձինք:

Բացի այդ, «Հայաստանի Հանրապետությունում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» ՀՀ օրենքի 2-րդ հավելվածով սահմանված է հսկիչ գնումների իրականացման կարգը: Նշված կարգով հսկիչ գնում է համարվում հարկային պարտավորությունների հաշվարկման (գնահատման) նպատակով հարկային մարմնի կողմից իրականացվող ապրանքների, առարկաների, աշխատանքների, ծառայությունների գների, Հայաստանի Հանրապետությունում ռեզիդենտների ու ոչ ռեզիդենտների կողմից իրականացվող արժույթային գործարքների վերահսկողության և հսկիչ-դրամարկղային մեքենաների շահագործման կանոնների պահպանման ուսումնասիրությունը: «Հայաստանի Հանրապետությունում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» ՀՀ օրենքի 1-ին հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ ուսումնասիրությունների արդյունքներն օգտագործվում են Հայաստանի Հանրապետության հարկային օրենսդրությամբ նախատեսված դեպքերում հարկային մարմնի կողմից տնտեսվարող սուբյեկտի հարկային պարտավորությունների հաշվարկման (գնահատման) նպատակով, իսկ «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 22-րդ

և 28-րդ հոդվածները կիրառելիս հսկիչ գնման արդյունքները կիրառվում են միայն հսկիչ գնմամբ արձանագրված արտադրատեսակների և ապրանքների նկատմամբ: Իրականացվող ուսումնասիրությունների արդյունքում լրացուցիչ հարկային կամ պարտադիր սոցիալական ապահովագրության վճարների պարտավորություններ չեն առաջադրվում:

Վերոգրյալի հիման վրա բողոք բերած անձը պահանջել է բեկանել Դատարանի 04.06.2010 թվականի վճիռը և այն փոփոխել՝ հայցը մերժել:

2.1. Վճռաբեկ բողոքի պատասխանի փաստարկները

Բողոք բերած անձի մատնանշած փաստերը Դատարանը սույն գործով հաստատված չի համարել, այլ դատաքննությամբ պարզել է այն հանգամանքները, որոնք ակնհայտորեն հաստատում են Տեսչության կողմից օրենսդրության խախտմամբ ստուգման իրականացման և վիճարկվող ակտը կազմելու հանգամանքները:

Կոմիտեի նախագահի 23.12.2009 թվականի թիվ 1304158 հանձնարարագրի շրջանակներում Լուսինե Ասլանյանի մոտ որևէ ստուգում չի իրականացվել, այլ մինչ այդ՝ 19.12.2009 թվականին, կատարվել է ուսումնասիրություն՝ հսկիչ գնում, որի ղեկավարում «Հայաստանի Հանրապետությունում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» ՀՀ օրենքի 1-ին հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ լրացուցիչ հարկային պարտավորություն չի առաջադրվում: Ավելին, նշված գնումն իրականացնող պաշտոնատար անձինք դուրս են եկել դրա իրականացման վերաբերյալ հանձնարարագրում նշված նպատակների շրջանակներից, մասնավորապես՝ հսկիչ գնման իրականացման հանձնարարագրում նշված էր՝ Լուսինե Ասլանյանի մոտ իրականացնել օրենսդրությամբ հարկային մարմիններին վերապահված իրավասության սահմաններում հսկիչ գնումների իրականացման ուսումնասիրություն՝ ապրանքների, առարկաների, աշխատանքների, ծառայությունների գների ուսումնասիրման նպատակով, կանխիկ եղանակով: Այսինքն՝ այդ հանձնարարագիրը նախատեսված չէր հսկիչ-դրամարկղային մեքենաների շահագործման կանոնների պահպանման և արժույթային գործարքների վերահսկողության ուսումնասիրության նպատակով, այլ զուտ հետապնդում էր գների ուսումնասիրման նպատակ:

«Հայաստանի Հանրապետությունում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» ՀՀ օրենքի 2-րդ հավելվածի 1.3-րդ կետով հստակ սահմանված են հսկիչ գնման իրականացման հիմքերը, սակայն սույն գործի քննության ընթացքում Տեսչությունը չի ներկայացրել հսկիչ գնում իրականացնելու հստակ հիմք և հիմնավորում: Այսինքն՝ տվյալ ղեկավարում հսկիչ գնումն իրականացվել է առանց պատշաճ հիմքերի:

Ստուգման հանձնարարագրում ստուգման ժամկետը նշվել է 10 անընդմեջ աշխատանքային օր, սակայն նշված ժամկետում Լուսինե Ասլանյանի մոտ որևէ ստուգում չի կատարվել, այլ հիմք է ընդունվել 19.12.2009 թվականի ուսումնասիրության արդյունքը, հետևաբար, ակնհայտ է, որ տվյալ ղեկավարում ստուգումն իրականացնող պաշտոնատար անձինք չեն ապահովել փաստական հանգամանքների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննարկում, այդ թվում՝ վարույթի մասնակիցների օգտին առկա հանգամանքները:

3. Վճռաբեկ բողոքի քննության համար նշանակություն ունեցող փաստերը

Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

1) Տեսչության պետի 18.12.2009 թվականի թիվ 2602538 հանձնարարագրի հիման վրա Լուսինե Ասլանյանի մոտ կատարվել է հսկիչ գնումների իրականացման ուսումնասիրություն՝ ապրանքների, առարկաների, աշխատանքների, ծառայությունների գների ուսումնասիրման նպատակով, կանխիկ եղանակով **(գ.թ. 59)**:

2) Նշված ուսումնասիրության արդյունքում Տեսչությունը 19.12.2009 թվականին կազմել է «Հսկիչ գնման արդյունքների մասին» արձանագրություն, որի համաձայն՝ Երևանի Խորենացի թիվ 24 հասցեում «ս 16» տաղավարում գործող Լուսինե Ասլանյանից գնվել է 1 կանացի մատանի ադամանդով, նրան վճարվել է 300 ԱՄՆ դոլար և 20.000 ՀՀ դրամ, որը չի մուտքագրվել հսկիչ-դրամարկղային մեքենա, և հետ է վերադարձվել 13.000 ՀՀ դրամ «մանրը» **(գ.թ. 60)**:

3) Կոմիտեի նախագահի 23.12.2009 թվականի թիվ 1304158 հանձնարարագրի հիման վրա Լուսինե Ասլանյանի մոտ կատարվել է հսկիչ-դրամարկղային մեքենաների կիրառման և «Արժույթային կարգավորման և արժույթային վերահսկողության մասին» ՀՀ օրենքի և արժույթային հարաբերությունները կարգավորող այլ իրավական ակտերի պահանջների կատարման ճշտության ստուգում, որն ընդգրկել է 17.10.2008 թվականից մինչև ստուգման ավարտն ընդգրկող ժամանակաշրջանը **(գ.թ. 61)**:

4) Նշված ստուգման արդյունքում Տեսչությունը 25.12.2009 թվականին կազմել է թիվ 1304158 ակտը, որի 2-րդ և 6-րդ կետերով արձանագրվել է, որ 19.12.2009 թվականին Երևանի Խորենացի թիվ 24 հասցեում գտնվող ոսկու տոնավաճառում Լուսինե Ասլանյանին պատկանող տաղավարից իրականացվել է հսկիչ գնում՝ ոսկյա մատանի ադամանդով, որի դիմաց վճարվել է 300 ԱՄՆ դոլար և 7.000 ՀՀ դրամ, որը չի մուտքագրվել հսկիչ-դրամարկղային մեքենա և չի տրամադրվել հսկիչ-դրամարկղային մեքենայի կտրոն **(գ.թ. 11-12)**:

4. Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումները

Քննելով վճռաբեկ բողոքը նշված հիմքի սահմաններում՝ Վճռաբեկ դատարանը գրնում է, որ այն հիմնավոր է հետևյալ պատճառաբանությամբ.

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 63-րդ հոդվածի 1-ին մասի «ա» կետի համաձայն՝ անվավեր է առ ոչինչ չհանդիսացող այն ոչ իրավաչափ վարչական ակտը, որն ընդունվել է **օրենքի խախտմամբ**, այդ թվում՝ օրենքի սխալ կիրառման կամ սխալ մեկնաբանման հետևանքով:

«Հայաստանի Հանրապետությունում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» ՀՀ օրենքի 1-ին հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ ստուգումն օրենքի հիման վրա իրականացվող ընթացակարգ է, որով պարզվում է տնտեսավարող սուբյեկտի ներկայացրած հաշվետվությունների, Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված հայտարարագրերի, հարկերի և պարտադիր այլ վճարների գծով նախատեսված հաշվարկների, ելակետային տվյալների, այլ փաստաթղթերի (այսուհետ՝ հաշվետվություն) արժանահավատությունը և վերջինիս ծավալած փաստացի գործունեության համապատասխանությունն օրենքների և այլ

իրավական ակտերի պահանջներին:

«Հայաստանի Հանրապետությունում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ ստուգումն սկսելուց առաջ համապատասխան պետական մարմնի ղեկավարը (փոխարինող պաշտոնատար անձը) ստուգում իրականացնելու մասին հրապարակում է հրաման կամ հանձնարարագիր, որտեղ նշվում են ստուգում իրականացնող մարմնի անվանումը, ստուգվող տնտեսավարող սուբյեկտի լրիվ անվանումը, ստուգումն իրականացնող պաշտոնատար անձի (անձանց) պաշտոնը, անունը, ազգանունը, ստուգման հարցերը, **ստուգմամբ ընդգրկվող ժամանակաշրջանը**, ստուգման նպատակը, ժամկետը, ստուգման իրավական հիմքերը ...:

Վերոգրյալ նորմերի վերլուծությունից հետևում է, որ ստուգումը տնտեսավարող սուբյեկտի ծավալած փաստացի գործունեության՝ օրենքների և այլ իրավական ակտերի պահանջներին համապատասխանությունը պարզելուն ուղղված հանձնարարագրի հիման վրա իրականացվող ընթացակարգ է: Ստուգում իրականացնելու մասին հանձնարարագրում այլ տվյալներից բացի պետք է նշվի նաև **ստուգմամբ ընդգրկվող ժամանակաշրջանը**, որն ունի էական նշանակություն, քանի որ տնտեսավարող սուբյեկտի ծավալած փաստացի գործունեությունը ստուգվում է միայն հանձնարարագրում նշված **ստուգմամբ ընդգրկվող ժամանակաշրջանի համար**: Այսինքն՝ այն դեպքում, երբ խախտումը կատարվում է **մինչև ստուգումը, սակայն ընդգրկում է ստուգման ժամանակաշրջանը**, ապա ստուգմամբ այդպիսի խախտման արձանագրումը և դրա համար պատասխանատվության առաջադրումը չի կարող դիտվել որպես ստուգումից դուրս իրականացվող գործողություն:

Սույն գործով Դատարանը հայցը բավարարելու հիմքում դրել է այն հիմնավորումը, որ տվյալ դեպքում ստուգումը սկսվել է 24.12.2009 թվականին և ավարտվել է 25.12.2009 թվականին, իսկ հսկիչ գնումն իրականացվել է մինչև ստուգման հանձնարարագրի հրապարակվելը՝ 19.12.2009 թվականին: Այսինքն՝ նշված գնումը ստուգումից դուրս կատարված գործողություն է, հետևաբար, այն չէր կարող հիմք հանդիսանալ հետագայում իրականացված ստուգման արդյունքում ակտ ընդունելու համար:

Մինչդեռ, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Դատարանն անտեսել է այն հանգամանքը, որ Տեսչության 25.12.2009 թվականի թիվ 1304158 ակտով արձանագրված խախտումները կատարվել են ստուգմամբ ընդգրկվող ժամանակաշրջանում:

Այսպես, սույն գործի փաստերի համաձայն՝ Կոմիտեի նախագահի 23.12.2009 թվականի թիվ 1304158 հանձնարարագրի հիման վրա անհատ ձեռնարկատեր Լուսինե Ասլանյանի մոտ կատարված հսկիչ-դրամարկղային մեքենաների կիրառման և «Արժութային կարգավորման և արժութային վերահսկողության մասին» ՀՀ օրենքի և արժութային հարաբերությունները կարգավորող այլ իրավական ակտերի պահանջների կատարման ճշտության ստուգման արդյունքում կազմված Տեսչության 25.12.2009 թվականի թիվ 1304158 ակտի 2-րդ և 6-րդ կետերում նշված խախտումների արձանագրման համար հիմք է հանդիսացել 19.12.2009 թվականին Երևանի Խորենացի թիվ 24 հասցեում գտնվող ոսկու տոնավաճառի՝ Լուսինե Ասլանյանի պատկանող տաղավարից կատարված հսկիչ գնումը, որի արդյունքում Տեսչությունը 19.12.2009 թվականին կազմել է «Հսկիչ գնման արդյունքների մասին» արձանագրությունը:

Վերոգրյալի հիման վրա Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Տեսչության 25.12.2009 թվականի թիվ 1304158 ակտն անվավեր ճանաչելու որևէ իրավական հիմք

տվյալ դեպքում առկա չէ:

Ինչ վերաբերում է Դատարանի այն հիմնավորմանը, որ տվյալ դեպքում ուսումնասիրությունն իրականացնող պաշտոնատար անձինք հսկիչ գնումը կատարել են ոչ աշխատանքային օրը՝ 19.12.2009 թվականին՝ չունենալով իրավասություն, իսկ Կոմիտեի նախագահի 18.12.2009 թվականի թիվ 2/1929 հրամանը, որով նշված անձանց համար 19.12.2009 թվականը համարվել է աշխատանքային օր, չի կարող հիմք հանդիսանալ այդ օրը վերջիններիս կատարած գործողություններն իրավաչափ համարելու համար, ապա Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ սույն գործով Լուսինե Ասլանյանը Տեսչության պետի 18.12.2009 թվականի թիվ 2602538 հանձնարարագրի հիման վրա կատարված հսկիչ գնումների իրականացման ուսումնասիրության գործընթացն ընդհանրապես չի վիճարկել, հետևաբար, նշված հսկիչ գնման գործընթացի իրականացման վերաբերյալ Դատարանի հետևությունները չէին կարող սույն գործի քննության առարկա դառնալ, քանի որ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 64-րդ հոդվածի համաձայն՝ **վարչական դատարանում գործը հարուցվում է հայցի հիման վրա**, ինչը վերոգրյալ մասով տվյալ դեպքում առկա չէ:

Նշված պարզապահանջություններով հերքվում են վճռաբեկ բողոքի պարասիանով ներկայացված փաստարկները:

Այսպիսով, սույն վճռաբեկ բողոքի հիմքի առկայությունը Վճռաբեկ դատարանը համարում է բավարար՝ «Հայաստանի Հանրապետության վարչական դատավարության օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության 2010 թվականի հոկտեմբերի 28-ի թիվ ՀՕ-135-Ն օրենքի 21-րդ հոդվածի 4-րդ մասի, ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 118-րդ և 118.3-րդ հոդվածների, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 227-րդ և 228-րդ հոդվածների ուժով Դատարանի վճիռը բեկանելու համար:

Միաժամանակ, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ սույն գործով անհրաժեշտ է կիրառել ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 240-րդ հոդվածի 1-ին կետի 4-րդ ենթակետով սահմանված՝ ստորադաս դատարանի դատական ակտը փոփոխելու Վճռաբեկ դատարանի լիազորությունը հետևյալ հիմնավորմամբ.

ՀՀ Սահմանադրության 19-րդ հոդվածի և «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի ողջամիտ ժամկետում իր գործի քննության իրավունք: Սույն գործով վեճի լուծումն էական նշանակություն ունի գործին մասնակցող անձանց համար: Վճռաբեկ դատարանը գտնում է, որ գործը ողջամիտ ժամկետում քննելը հանդիսանում է ՀՀ Սահմանադրության և «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի նշված հոդվածներով ամրագրված՝ անձի արդար դատաքննության իրավունքի տարր: Հետևաբար, գործի անհարկի ձգձգումները վտանգ են պարունակում նշված իրավունքի խախտման տեսանկյունից: Տվյալ դեպքում Վճռաբեկ դատարանի կողմից ստորադաս դատարանի դատական ակտը փոփոխելը բխում է արդարադատության արդյունավետության շահերից, քանի որ սույն գործով վերջնական դատական ակտ կայացնելու համար նոր հանգամանք հաստատելու անհրաժեշտությունը բացակայում

է:
Դատական ակտը փոփոխելիս Վճռաբեկ դատարանը հիմք է ընդունում սույն որոշման պատճառաբանությունները, ինչպես նաև գործի նոր քննության անհրաժեշտության բացակայությունը:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 118-րդ և 118.3-րդ հոդվածներով, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 240-241²-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

ՈՐՈՇԵՑ

1. Վճռաբեկ բողոքը բավարարել: Բեկանել ՀՀ վարչական դատարանի 04.06.2010 թվականի վճիռը և այն փոփոխել. Լուսինե Ասլանյանի հայցը մերժել:
2. Լուսինե Ասլանյանից հօգուտ ՀՀ Կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի Մյասնիկյանի հարկային տեսչության բռնագանձել 20.000 ՀՀ դրամ՝ որպես վճռաբեկ բողոքի համար վճարված պետական տուրք:
3. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

*ՆԱԽԱԳԱՀՈՂ՝ ստորագրություն
ԴԱՏԱՎՈՐՆԵՐ՝ ստորագրություններ*

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

ՀՀ վարչական դատարանի վճիռ
Վարչական գործ թիվ ՎԴ/5848/05/08

Վարչական գործ թիվ ՎԴ/5848/05/08
2011թ.

Նախագահող դատավոր՝ Ա. Ղազարյան
Դատավորներ՝ Ա. Աբովյան
Կ. Մաթևոսյան

ՈՐՈՇՈՒՄ
ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Հայաստանի Հանրապետության Վճռաբեկ դատարանի քաղաքացիական
և վարչական պալատը (այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

*նախագահությամբ
մասնակցությամբ դատավորներ*

Ե. ԽՈՒՆԴԿԱՐՅԱՆԻ
Ե. ՍՈՂՈՄՈՆՅԱՆԻ
Վ. ԱԲԵԼՅԱՆԻ
Ս. ԱՆՏՈՆՅԱՆԻ
Վ. ԱՎԱՆԵՍՅԱՆԻ
Ա. ԲԱՐՍԵՂՅԱՆԻ
Մ. ԴՐՄԵՅԱՆԻ
Գ. ՀԱԿՈԲՅԱՆԻ
Է. ՀԱՅՐԻՅԱՆԻ
Տ. ՊԵՏՐՈՍՅԱՆԻ

2011 թվականի մարտի 04-ին
դուրաց դատական նիստում, քննելով ՀՀ Կառավարությանն առընթեր
պետական եկամուտների կոմիտեի (այսուհետ՝ Կոմիտե) Սպանդարյանի 1 հարկային
տեսչության (այսուհետ՝ Տեսչություն) վճռաբեկ բողոքը ՀՀ վարչական դատարանի
31.05.2010 թվականի վճռի դեմ ըստ «Սթար Դիվայդ» ՓԲԸ-ի (այսուհետ՝ Ընկերություն)
հայցի ընդդեմ Կոմիտեի՝ ՀՀ կառավարությանն առընթեր հարկային պետական
ծառայության (այսուհետ՝ Ծառայություն) 06.08.2008 թվականի թիվ 1308062 ակտն
անվավեր ճանաչելու պահանջի մասին,

ՊԱՐԶԵՑ

1. Գործի դատավարական նախապատմությունը

Դիմելով դատարան՝ Ընկերությունը պահանջել է անվավեր ճանաչել
Ծառայության 06.08.2008 թվականի թիվ 1308062 ակտը և Ծառայության պետի
07.08.2008 թվականի թիվ 00085 որոշումը:

ՀՀ վարչական դատարանի 14.04.2009 թվականի վճռով հայցը՝ Ծառայության
06.08.2008 թվականի թիվ 1308062 ակտն անվավեր ճանաչելու պահանջի մասով,

բավարարվել է, իսկ Ծառայության պետի 07.08.2008 թվականի թիվ 00085 որոշումն անվավեր ճանաչելու պահանջի մասով գործի վարույթը կարճվել է:

Վճռաբեկ դատարանի 06.11.2009 թվականի որոշմամբ Կոմիտեի վճռաբեկ բողոքը բավարարվել է՝ բեկանվել է ՀՀ վարչական դատարանի 14.04.2009 թվականի վճռի՝ Ծառայության 06.08.2008 թվականի թիվ 1308062 ակտն անվավեր ճանաչելու մասը, և այդ մասով գործն ուղարկվել է նույն դատարան՝ նոր քննության:

ՀՀ վարչական դատարանի (այսուհետ՝ Դատարան) 31.05.2010 թվականի վճռով հայցը բավարարվել է:

Սույն գործով վճռաբեկ բողոք է ներկայացրել Տեսչությունը:

Վճռաբեկ բողոքի պատասխան չի ներկայացվել:

2. Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը

Սույն վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

Դատարանը կիրառել է «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 63-րդ հոդվածը, որը չպեղք է կիրառել, սխալ է մեկնաբանել «Հայաստանի Հանրապետությունում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 3-րդ մասը:

Բողոք բերած անձը նշված պնդումը պարձառաքանել է հետևյալ փաստարկներով.

Դատարանն անտեսել է այն հանգամանքը, որ «Հայաստանի Հանրապետությունում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 3-րդ մասի համապատասխան՝ Ծառայության պետի 04.08.2008 թվականի թիվ 1308062 հանձնարարագրի օրինակը հանձնվել է Երևանի Գայի պողոտա թիվ 16 հասցեում գործող «Սթար-5» խանութի տնօրեն Արմեն Օհանյանին: Խանութը պատկանում է Ընկերությանը, իսկ Արմեն Օհանյանի՝ նշված խանութի տնօրեն լինելը հաստատվում է Ընկերության կողմից տրված տեղեկանքով:

Դատարանն անտեսել է նաև, որ «Հայաստանի Հանրապետությունում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 3-րդ մասը հսկիչ-դրամարկղային մեքենաների կիրառման ճշտության ստուգումից առաջ տնտեսվարող սուբյեկտին դրա կատարման մասին ծանուցելու պարտականություն չի սահմանում:

Ինչ վերաբերում է «Հայաստանի Հանրապետությունում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածով սահմանված հանձնարարագրի մեկ օրինակի վրա տնտեսվարող սուբյեկտի կողմից ստորագրելու դրույթին, ապա այդ մասով Դատարանը հաշվի չի առել, որ հսկիչ-դրամարկղային մեքենաների շահագործման հետ կապված խախտումների բացահայտումը պահանջում է վարչական մարմնի արագ գործելու անհրաժեշտություն, և նման ստուգումից առաջ տնտեսվարող սուբյեկտին դրա կատարման մասին ծանուցելու դեպքում անհնար կդառնա օրենքով սահմանված ստուգման նպատակների իրագործումը:

Վերոգրյալի հիման վրա բողոք բերած անձը պահանջել է Դատարանի 31.05.2010 թվականի վճիռը բեկանել և փոփոխել՝ հայցը մերժել:

3. Վճուարել բողոքի քննության համար նշանակություն ունեցող փաստերը

Վճուարել բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

1) Ծառայության պետի 04.08.2008 թվականի թիվ 1308062 հանձնարարագրի հիման վրա Ընկերությունում կատարվել է հսկիչ-դրամարկղային մեքենաների կիրառման ճշտության ստուգում: Նույն հանձնարարագիրը ստորագրել, դրան ծանոթացել և դրա մեկ օրինակը ստացել է «տնօրեն Ա. Օհանյան»-ը (հատոր 1, գ.թ. 15):

2) Ստուգման արդյունքում Ծառայությունը 06.08.2008 թվականին կազմել է թիվ 1308062 ակտը, որի 2-րդ կետի համաձայն՝ Ընկերությանը պատկանող Երևանի Գայի պողոտա թիվ 16 հասցեում գործող խանութից 06.08.2008 թվականին ժամը 14:39-ին իրականացված 18.760 ՀՀ դրամ առևտրի դիմաց հսկիչ-դրամարկղային մեքենայի կտրոն չի տրամադրվել: Նույն ակտով Ընկերությանն առաջարկվել է վճարել 300.000 ՀՀ դրամ: Նույն ակտը ստորագրել և դրա մեկ օրինակը ստացել է «տնօրեն Ա. Օհանյան»-ը (հատոր 1, գ.թ. 16-19):

3) Ընկերության 09.03.2010 թվականի թիվ ԿԲ-Ե 1577 տեղեկանքի համաձայն՝ Արմեն Օհանյանը 2008 թվականի օգոստոսին զբաղեցրել է Ընկերության Երևանի Գայի պողոտա թիվ 16 հասցեում գտնվող «Սթար-5» խանութի տնօրենի պաշտոնը (հատոր 2, գ.թ. 27):

4. Վճուարել դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումները

Քննելով վճուարել բողոքը նշված հիմքի սահմաններում՝ Վճուարել դատարանը գրնում է, որ այն հիմնավոր է հետևյալ պարձառաբանությամբ.

«Հայաստանի Հանրապետությունում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 3-րդ կետի համաձայն՝ հրամանի կամ հանձնարարագրի երկու օրինակը, ստուգումն սկսելուց առնվազն երեք աշխատանքային օր առաջ, տրվում է տնտեսավարող սուբյեկտի ղեկավարին կամ նրան փոխարինող պաշտոնատար անձին, **բացառությամբ հսկիչ-դրամարկղային մեքենաների կիրառման խախտումների բացահայտմանն ուղղված ղեկավարում իրականացվող ստուգումների:** Վերջինս պարտավոր է ստորագրել մեկ օրինակի վրա՝ հաստատելով, որ ծանուցված է ստուգման անցկացման մասին: Ստորագրված օրինակը վերադարձվում է ստուգող պետական մարմնի պաշտոնատար անձին:

Վճուարել դատարանն իր նախկին որոշումներում արդեն իսկ անդրադարձել է հսկիչ-դրամարկղային մեքենաների կիրառման խախտումների բացահայտմանն ուղղված ստուգումների ընթացքում ստուգման հանձնարարագիր ներկայացնելու բացառությանը՝ նշելով. «Հայաստանի Հանրապետությունում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 3-րդ կետը տնտեսավարող սուբյեկտին հսկիչ-դրամարկղային մեքենաների կիրառման խախտումների բացահայտմանն ուղղված **ստուգումներից առաջ** ստուգման անցկացման մասին ծանուցելու պարտավորություն չի նախատեսում: Իսկ ինչ վերաբերում է վերոնշյալ հոդվածով նախատեսված հանձնարարագրի մեկ օրինակի վրա տնտեսավարող սուբյեկտի կողմից ստորագրելու դրույթին, որը նախատեսվում է որպես ստուգվող տնտեսավարող սուբյեկտի կողմից ստուգման մասին ծանուցված լինելը հավաստող հանգամանք, և որը Դատարանի կողմից մեկնաբանվել է որպես հսկիչ-դրամարկղային մեքենաների շահագործման կանոնների պահպանման վերաբերյալ **ստուգում իրականացնելուց առաջ** տնտեսավարող սուբյեկտին

ստուգման անցկացման մասին ծանուցելու պարտավորություն, ապա իրականում հողվածի այդ կարգավորումը հանդիսանում է ստուգումների անցկացման ընդհանուր կանոնի տրամաբանական շարունակությունը և չի վերաբերում հսկիչ-դրամարկղային մեքենաների շահագործման կանոնների ստուգման դեպքերի համար նախատեսված բացառությանը:

Վճռաբեկ դատարանը նման եզրահանգման համար հիմք է ընդունում նաև այն հանգամանքը, որ «Հայաստանի Հանրապետությունում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 3-րդ կետը պետք է մեկնաբանվի՝ հաշվի առնելով հսկիչ-դրամարկղային մեքենաների շահագործման կանոնների պահպանության հետ կապված ստուգումների առանձնահատուկ բնույթը և դրանց արդյունավետ իրականացումն ապահովելու համար որոշ պայմանների պարտադիր առկայության անհրաժեշտությունը (*լրե՛ս, օրինակ՝ ՀՀ կառավարությանն առընթեր հարկային պետական ծառայությունն ընդդեմ «Ուրարտու-Ալեն» ՍՊԸ-ի՝ 811 350 ՀՀ դրամ բռնագանձելու պահանջի մասին, գործով Վճռաբեկ դատարանի 06.07.2007 թվականի թիվ 3-951/ՏԴ որոշումը*):

Վերոնշյալից հետևում է, որ «Հայաստանի Հանրապետությունում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 3-րդ կետով նախատեսված ստուգման անցկացման մասին ծանուցելու պարտականությունը հսկիչ-դրամարկղային մեքենաների շահագործման կանոնների պահպանության հետ կապված ստուգումներին չի վերաբերում, սակայն դա չի նշանակում, որ ստուգում իրականացնող անձը ընդհանրապես չպետք է տնտեսվարող սուբյեկտին ներկայացնի ստուգման հանձնարարագիրը: Մասնավորապես, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ այնուամենայնիվ տնտեսվարող սուբյեկտը մինչ **ստուգումը** փաստացի սկսելը իրավունք ունի ծանոթանալու ստուգման հանձնարարագրին, ստուգելու համար ստուգում իրականացնող համապատասխան անձի լիազորությունների առկայությունը:

«Հայաստանի Հանրապետությունում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի «գ» ենթակետի համաձայն՝ տնտեսվարող սուբյեկտի պաշտոնատար անձինք պարտավոր են **անհրաժեշտ պայմաններ ստեղծել ստուգումն իրականացնող անձանց գործունեության համար**:

Նշված նորմի վերլուծությունից հետևում է, որ Հայաստանի Հանրապետությունում ստուգումների կազմակերպման և անցկացման վարույթի ընթացքում պարտականություններ են դրված ոչ միայն ստուգում իրականացնող անձի, այլ նաև տնտեսվարող սուբյեկտի պաշտոնատար անձի վրա: Մասնավորապես՝ վերջինս պարտավոր է ստուգում իրականացնող անձի համար ստեղծել անհրաժեշտ պայմաններ, այդ թվում՝ **իր բացակայության ժամանակ ապահովել փոխարինող պաշտոնատար անձի ներկայությունը**: Առանց նշված պահանջի պատշաճ կատարման ստուգում իրականացնող անձը չի կարող ապահովել հսկիչ-դրամարկղային մեքենաների կիրառման ճշտության ստուգման մասին ծանուցելու պահանջը, որի դեպքում դրա բացասական հետևանքները պետք է կրի տնտեսվարող սուբյեկտը:

Սույն գործով Գատարանը հայցը բավարարելու հիմքում դրել է այն հիմնավորումը, որ գործում առկա ապացույցներով հաստատվում է, որ 20.04.2006 թվականից առ այսօր Ընկերության տնօրենը Վահան Քերոբյանն է, իսկ Արմեն Օհանյանը 2008 թվականի օգոստոսին զբաղեցրել է Ընկերության Երևանի Գայի պողոտա թիվ 16 հասցեում գտնվող «Մթար-5» խանութի տնօրենի պաշտոնը, որն

ինքնին չի կարող դիտվել որպես Ընկերության տնօրենին փոխարինող պաշտոնատար անձի պաշտոն: Այսինքն՝ գործում առկա չէ որևէ ապացույց, որով կհաստատվեր, որ Արմեն Օհանյանը ստուգման ընթացքում Ընկերության տնօրեն էր, կամ նրան փոխարինող պաշտոնատար անձ:

Մինչդեռ, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Դատարանը, հաստատված համարելով, 20.04.2006 թվականից առ այսօր Ընկերության տնօրենը Վահան Բերոբյանն է, իսկ Արմեն Օհանյանը 2008 թվականի օգոստոսին զբաղեցրել է Ընկերության Երևանի Գայի պողոտա թիվ 16 հասցեում գտնվող «Սթար-5» խանութի տնօրենի պաշտոնը, անտեսել է այն հանգամանքը, որ վերջինս նշված խանութի մասով Ընկերության անունից հանդես եկող պատասխանատու անձ է:

Այսպես, սույն գործի փաստերի համաձայն՝ Ծառայության պետի 04.08.2008 թվականի թիվ 1308062 հանձնարարագիրը ստորագրել, դրան ծանոթացել և դրա մեկ օրինակը ստացել է «տնօրեն Ա. Օհանյան»-ը, Ծառայության 06.08.2008 թվականի թիվ 1308062 ակտը ստորագրել և դրա մեկ օրինակը նույնպես ստացել է վերջինս, իսկ նրա՝ Ընկերության Երևանի Գայի պողոտա թիվ 16 հասցեում գտնվող «Սթար-5» խանութի տնօրեն հանդիսանալու փաստը հաստատվում է Ընկերության 09.03.2010 թվականի թիվ ԿԲ-Ե 1577 տեղեկանքով:

Այսինքն՝ սույն գործում առկա ապացույցներով հաստատվում է, որ Ծառայության պետի 04.08.2008 թվականի թիվ 1308062 հանձնարարագիրն Ընկերությանը ներկայացնելու ժամանակ որպես Ընկերությունը ներկայացնող պաշտոնատար անձ հանդես է եկել Ընկերության Երևանի Գայի պողոտա թիվ 16 հասցեում գտնվող «Սթար-5» խանութի տնօրեն Արմեն Օհանյանը:

Հետևաբար, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ սույն գործով Ծառայությունը Ծառայության պետի 04.08.2008 թվականի թիվ 1308062 հանձնարարագրի հիման վրա Ընկերությունում հսկիչ-դրամարկղային մեքենաների կիրառման ճշտության ստուգման մասին ծանուցել է տնտեսավարող սուբյեկտին:

Միաժամանակ, Վճռաբեկ դատարանը հարկ է համարում անդրադառնալ այն հարցադրմանը, թե հսկիչ-դրամարկղային մեքենաների շահագործման կանոնների ստուգման ղեպքում որն է համարվում ստուգումը սկսելու պահը:

«Հայաստանի Հանրապետությունում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» ՀՀ օրենքի 1-ին հոդվածի 2-րդ կետի համաձայն՝ ստուգումն օրենքի հիման վրա իրականացվող ընթացակարգ է, որով պարզվում է տնտեսավարող սուբյեկտի ներկայացրած հաշվետվությունների, Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված հայտարարագրերի, հարկերի և պարտադիր այլ վճարների գծով նախատեսված հաշվարկների, ելակետային տվյալների, այլ փաստաթղթերի (այսուհետ՝ հաշվետվություն) արժանահավատությունը և վերջինիս ծավալած փաստացի գործունեության համապատասխանությունն օրենքների և այլ իրավական ակտերի պահանջներին:

Նույն հոդվածի 3-րդ կետի համաձայն՝ ուսումնասիրությունը տնտեսավարող սուբյեկտի ֆինանսական ու փաստացի գործունեության վիճակը՝ վերջինիս ներկայացրած հաշվապահական հաշվեկշռի, ֆինանսական և Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված այլ հաշվետվությունների հիման վրա, ստուգումն իրականացնող մարմնի կողմից ստուգող մարմնում պարզաբանելու նպատակով իրականացվող ներքին ընթացակարգ է, բացառությամբ սույն կետի իններորդ պարբերությամբ նախատեսված դեպքերի:

Նույն հոդվածի 9-րդ կետի համաձայն՝ հսկիչ գնումների իրականացման նպատակով հարկային մարմինները կարող են իրականացնել ուսումնասիրություններ:

Նույն հոդվածի 10-րդ կետի համաձայն՝ նույն կետի իններորդ պարբերությամբ սահմանված ուսումնասիրությունների անցկացման ընթացակարգերը (այսուհետ՝ ուսումնասիրությունների անցկացման կարգերը) սահմանվում են նույն օրենքի բաղկացուցիչ մասը կազմող հավելվածներով: Հսկիչ գնումների անցկացման կարգը սահմանվում է նույն օրենքի 2-րդ հավելվածով:

«Հայաստանի Հանրապետությունում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» ՀՀ օրենքի հավելված 2-ի 1.2-րդ կետի համաձայն՝ հսկիչ գնում է համարվում հարկային պարտավորությունների հաշվարկման (գնահատման) նպատակով հարկային մարմնի կողմից իրականացվող ապրանքների, առարկաների, աշխատանքների, ծառայությունների գների, Հայաստանի Հանրապետությունում ռեզիդենտների ու ոչ ռեզիդենտների կողմից իրականացվող արժույթային գործարքների վերահսկողության և հսկիչ-դրամարկղային մեքենաների շահագործման կանոնների պահպանման ուսումնասիրությունը:

Սույն գործով Դատարանը հայցը բավարարելու հիմքում դրել է այն հիմնավորումը, որ գործի քննության ընթացքում Կոմիտեի ներկայացուցիչները հայտնել են, որ Ծառայության պետի 04.08.2008 թվականի թիվ 1308062 հանձնարարագիրն Ընկերության Երևանի Գայի պողոտա թիվ 16 հասցեում գտնվող «Սթար-5» խանութի տնօրեն Արմեն Օհանյանին է հանձնվել գնումը կատարելուց հետո, այսինքն՝ նշված հանձնարարագիրը տրվել է ստուգումը փաստացի սկսվելուց հետո:

Մինչդեռ, հիմք ընդունելով վերոնշյալ օրենքի հոդվածները, Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ հսկիչ գնումը հսկիչ-դրամարկղային մեքենաների շահագործման կանոնների պահպանման նպատակով իրականացվող **ուսումնասիրություն է:**

Հետևաբար, Դատարանը, հաստատված համարելով այն հանգամանքը, որ Ծառայության պետի 04.08.2008 թվականի թիվ 1308062 հանձնարարագիրն Ընկերության Երևանի Գայի պողոտա թիվ 16 հասցեում գտնվող «Սթար-5» խանութի տնօրեն Արմեն Օհանյանին է հանձնվել գնումը կատարելուց հետո, այն է՝ ստուգումն իրականացնելուց հետո, անտեսել է այն հանգամանքը, որ հսկիչ գնում կատարելու գործընթացը չի կարող դիտվել որպես հսկիչ-դրամարկղային մեքենաների կիրառման ճշտության ստուգում, այլ այն իրենից ներկայացնում է ուսումնասիրություն, որի արդյունքում Ծառայությանը հայտնի են դարձել հսկիչ-դրամարկղային մեքենաների կիրառման ճշտության ստուգման նպատակի հետ առնչվող հարցեր, որոնց հիման վրա էլ վերջինս կատարել է ստուգումը:

Այսինքն՝ հսկիչ-դրամարկղային մեքենաների ստուգումն սկսվում է ոչ թե հսկիչ գնման պահից, այլ հսկիչ-դրամարկղային մեքենաների կիրառման, շահագործման կանոնների ստուգման (հսկիչ-դրամարկղային մեքենայի հետ կապված գործողությունների կատարման) պահից, որը ենթադրում է նաև համապատասխան ստուգվող տնտեսվարող սուբյեկտի տեղեկացվածություն ստուգման մասին:

Հետևաբար, Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ Դատարանի այն պատճառաբանությունը, որ Ծառայության պետի 04.08.2008 թվականի թիվ 1308062 հանձնարարագիրն Ընկերության Երևանի Գայի պողոտա թիվ 16 հասցեում գտնվող «Սթար-5» խանութի տնօրեն Արմեն Օհանյանին է հանձնվել ստուգումը սկսվելուց

հետո, անհիմն է:

Այսպիսով, սույն վճարեկ բողոքի հիմքի առկայությունը Վճարեկ դատարանը համարում է բավարար՝ «Հայաստանի Հանրապետության վարչական դատավարության օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության 2010 թվականի հոկտեմբերի 28-ի թիվ ՀՕ-135-Ն օրենքի 21-րդ հոդվածի 4-րդ մասի, ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 118-րդ և 118.3-րդ հոդվածների, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 227-րդ հոդվածի ուժով Դատարանի վճիռը բեկանելու համար:

Միաժամանակ, Վճարեկ դատարանը գտնում է, որ սույն գործով անհրաժեշտ է կիրառել ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 240-րդ հոդվածի 1-ին կետի 4-րդ ենթակետով սահմանված՝ ստորադաս դատարանի դատական ակտը փոփոխելու Վճարեկ դատարանի լիազորությունը հետևյալ հիմնավորմամբ.

ՀՀ Սահմանադրության 19-րդ հոդվածի և «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի ողջամիտ ժամկետում իր գործի քննության իրավունք: Սույն գործով վեճի լուծումն էական նշանակություն ունի գործին մասնակցող անձանց համար: Վճարեկ դատարանը գտնում է, որ գործը ողջամիտ ժամկետում քննելը հանդիսանում է ՀՀ Սահմանադրության և «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի նշված հոդվածներով ամրագրված՝ անձի արդար դատաքննության իրավունքի տարր: Հետևաբար, գործի անհարկի ձգձգումները վտանգ են պարունակում նշված իրավունքի խախտման տեսանկյունից: Տվյալ դեպքում Վճարեկ դատարանի կողմից ստորադաս դատարանի դատական ակտը փոփոխելը բխում է արդարադատության արդյունավետության շահերից, քանի որ սույն գործով վերջնական դատական ակտ կայացնելու համար նոր հանգամանք հաստատելու անհրաժեշտությունը բացակայում է:

Դատական ակտը փոփոխելիս Վճարեկ դատարանը հիմք է ընդունում սույն դրոշման պատճառաբանությունները, ինչպես նաև գործի նոր քննության անհրաժեշտության բացակայությունը:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 118-րդ և 118.3-րդ հոդվածներով, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 240-241²-րդ հոդվածներով՝ Վճարեկ դատարանը

ՈՐՈՇԵՑ

1. Վճարեկ բողոքը բավարարել: Բեկանել ՀՀ վարչական դատարանի 31.05.2010 թվականի վճիռը և այն փոփոխել. «Մթար Դիվայդ» ՓԲԸ-ի հայցը մերժել:

2. «Մթար Դիվայդ» ՓԲԸ-ից հօգուտ ՀՀ Կառավարությանն աղըթեր պետական եկամուտների կոմիտեի Սպանդարյանի 1 հարկային տեսչության բռնագանձել 20.000 ՀՀ դրամ՝ որպես վճարեկ բողոքի համար վճարված պետական տուրք:

3. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

*ՆԱԽԱԳԱՀՈՂ՝ ստորագրություն
ԴԱՏԱՎՈՐՆԵՐ՝ ստորագրություններ*

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

ՀՀ վարչական դատարանի վճիռ
Վարչական գործ թիվ ՎԴ4/0278/05/09
Նախագահող դատավոր՝ Ա. Ծատուրյան

Վարչական գործ թիվ ՎԴ4/0278/05/09
2011թ.

ՈՐՈՇՈՒՄ
ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Հայաստանի Հանրապետության Վճռաբեկ դատարանի քաղաքացիական
և վարչական պալատը (այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

*նախագահությանը
մասնակցությանը դատավորներ*

Ե. ԽՈՒՆԴԿԱՐՅԱՆԻ
Ե. ՍՈՂՈՍՈՆՅԱՆԻ
Վ. ԱԲԵԼՅԱՆԻ
Ս. ԱՆՏՈՆՅԱՆԻ
Վ. ԱՎԱՆԵՍՅԱՆԻ
Ա. ԲԱՐՍԵՂՅԱՆԻ
Մ. ԴՐՄԵՅԱՆԻ
Գ. ՀԱԿՈԲՅԱՆԻ
Է. ՀԱՅՐԻՅԱՆԻ
Տ. ՊԵՏՐՈՍՅԱՆԻ

2011 թվականի ապրիլի 01-ին

դռնբաց դատական նիստում, քննելով ՀՀ գլխավոր դատախազի տեղակալի
վճռաբեկ բողոքը ՀՀ վարչական դատարանի 24.06.2010 թվականի վճռի դեմ՝ ըստ
«Գյուղատնտեսական ասոցիացիաների ֆեդերացիա» իրավաբանական անձանց
միության (այսուհետ՝ Միություն) հայցի ընդդեմ ՀՀ Կառավարությանն առընթեր
պետական եկամուտների կոմիտեի (այսուհետ՝ Կոմիտե) Էջմիածնի տարածքային
հարկային տեսչության (այսուհետ՝ Տեսչություն)՝ 14.10.2009 թվականի թիվ 1001846
ակտը մասնակի անվավեր ճանաչելու պահանջի մասին, և ըստ Տեսչության
հակընդդեմ հայցի ընդդեմ Միության՝ 18.093.600 ՀՀ դրամ բռնագանձելու պահանջի
մասին,

ՊԱՐԶԵՑ

1. Գործի դատավարական նախապատմությունը

Դիմելով դատարան՝ Միությունը պահանջել է անվավեր ճանաչել Տեսչության
14.10.2009 թվականի թիվ 1001846 ակտը՝ առանց լիցենզիայի լիցենզավորման

ենթակա գործունեությանը զբաղվելու համար առաջադրված 18.093.600 ՀՀ դրամի պարտավորության մասով:

Հակընդդեմ հայցով դիմելով դատարան՝ Տեսչությունը պահանջել է բռնագանձել Միությունից 18.093.600 ՀՀ դրամ:

ՀՀ վարչական դատարանի (այսուհետ՝ Դատարան) 24.06.2010 թվականի վճռով հայցը բավարարվել է, իսկ հակընդդեմ հայցը՝ մերժվել:

Սույն գործով վճռաբեկ բողոք է ներկայացրել ՀՀ գլխավոր դատախազի տեղակալը:

Վճռաբեկ բողոքի պատասխան է ներկայացրել Միությունը:

2. Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը

Սույն վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

Դատարանը սխալ է մեկնաբանել «Հայաստանի Հանրապետությունում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածի 2-րդ կետը:

Բողոք բերած անձը նշված պնդումը պատճառաբանել է հետևյալ փաստարկներով.

Դատարանը գտել է, որ ստուգումն իրականացնող պաշտոնատար անձինք ստուգման ընթացքում խախտել են «Հայաստանի Հանրապետությունում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածի 2-րդ կետի պահանջը՝ պատճառաբանելով, որ ստուգման հանձնարարագրով սահմանված ժամկետը կարող էր կա՛ն կասեցվել կա՛ն երկարաձգվել, մինչդեռ, Տեսչությունը 3 անգամ կասեցրել է ստուգումը, իսկ հետո՝ երկարաձգել է Դատարանը պատճառաբանել է նաև, որ ստուգումը կասեցումներից հետո երկարաձգվել է միայն 10 աշխատանքային օրով, հետևաբար այն պետք է ավարտվեր 12.10.2009 թվականին, սակայն շարունակվել է մինչև 14.10.2009 թվականը, բացի այդ, 1-ին և 2-րդ կասեցումների միջև՝ 01.07.2009 թվականից մինչև 03.07.2009 թվականը, ստուգումը կասեցված չի եղել և ոչ էլ վերսկսվել է:

Մինչդեռ, Դատարանն անտեսել է, որ «Հայաստանի Հանրապետությունում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածի 2-րդ կետի բովանդակությունից հետևում է, որ ստուգման ժամկետը երկարաձգելը կամ կասեցնելն իրարից տարբերվող գործընթացներ են, որոնց կիրառումը պայմանավորված է ստուգման ընթացքում ծագող խնդիրների բնույթով, և դրանցից որևէ մեկի կիրառումը չի կարող բացառող հանգամանք հանդիսանալ մյուսի կիրառման համար:

Բացի այդ, Դատարանը սխալ է հաշվարկել նաև ստուգման փաստացի ժամկետի տևողությունը: Այսպես, ստուգման հանձնարարագրով 15 աշխատանքային օր նախատեսված լինելու պայմաններում ստուգումը փաստացի սկսվել է 05.05.2009 թվականին և տևել է 10 անընդմեջ աշխատանքային օր, որից հետո՝ 19.05.2009 թվականին, այն կասեցվել է մինչև 30.06.2009 թվականը, այնուհետև 3 աշխատանքային օրով վերսկսվել է: Այսինքն՝ մինչև 2-րդ կասեցումը ստուգումն իրականացնող պաշտոնատար անձինք ստուգման հանձնարարագրով ստուգման համար նախատեսված աշխատանքային օրերից օգտագործել են միայն 13 աշխատանքային օր և 3-րդ կասեցումից հետո այն շարունակելու համար ունեցել

են 2 աշխատանքային օր, որին գումարվել է նաև ստուգումը երկարաձգելու մասին հրամանով տրամադրված 10-օրյա ժամկետը, որի արդյունքում 3-րդ կասեցումից հետո ստուգումը տևել է 12 աշխատանքային օր: Հետևաբար, ստուգման ընդհանուր ժամկետը չի գերազանցել ստուգման հանձնարարագրով և այն երկարաձգելու մասին հրամանով սահմանված 25 աշխատանքային օրը, և ստուգում իրականացնելիս ժամկետի խախտում թույլ չի տրվել:

Ինչ վերաբերում է ստուգումն իրականացնող մարմնի կողմից ստուգումը կասեցնելուց հետո այն չվերսկսելուն, ապա «Հայաստանի Հանրապետությունում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» ՀՀ օրենքը ստուգումը վերսկսելու կարգ չի նախատեսում:

Վերոգրյալի հիման վրա բողոք բերած անձը պահանջել է Դատարանի 24.06.2010 թվականի վճիռը բեկանել և փոփոխել՝ հայցը մերժել, իսկ հակընդդեմ հայցը բավարարել:

2.1. Վճռաբեկ բողոքի պատասխանի փաստարկները

Բողոք բերած անձը նշել է, որ տեղի չի ունեցել «Հայաստանի Հանրապետությունում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածով սահմանված ժամկետների խախտում կասեցումների միջև ընկած ժամանակահատվածը, որը չի ձևակերպվել որևէ հրամանով՝ համարելով ստուգման վերսկսում: Մինչդեռ, իրականում ստուգման վերսկսում տեղի չի ունեցել: Այսինքն՝ 30.06.2009 թվականից մինչև 06.07.2009 թվականն ընկած ժամանակահատվածը բաց թողնված ժամկետ է, որի ընթացքում որևէ ստուգում չի իրականացվել: Հետևաբար, կասեցումը տևել է 95 աշխատանքային օր 90 օրվա փոխարեն՝ 19.05.2009 թվականից մինչև 28.09.2009 թվականը:

Բողոք բերած անձը նշել է նաև, որ 29.09.2009 թվականին ստուգման ժամկետը երկարաձգվել է 10 աշխատանքային օրով և տևել է մինչև 14.10.2009 թվականը՝ համարելով, որ ստուգման ժամկետի խախտում տեղի չի ունեցել: Մինչդեռ, իրականում 28.09.2009 թվականին ստուգման ժամկետը երկարաձգվել է 10 աշխատանքային օրով, այսինքն՝ մինչև 12.10.2009 թվականը, սակայն վիճարկվող ակտը ժամկետի խախտմամբ կազմվել է 14.10.2009 թվականին:

3. Վճռաբեկ բողոքի քննության համար նշանակություն ունեցող փաստերը

Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

1) Կոմիտեի նախագահի 10.04.2009 թվականի թիվ 1001846 հանձնարարագրի հիման վրա Ընկերությունում կատարվել է բյուջեի հետ փոխհարաբերությունների և հարկային մարմնի կողմից վերահսկվող օրենսդրության առանձին պահանջների կատարման ճշտության ստուգում: Նույն հանձնարարագրով ստուգման ժամկետը սահմանվել է 15 անընդմեջ աշխատանքային օր (**հատոր 1, գ.թ. 34**):

2) Կոմիտեի նախագահի 19.05.2009 թվականի թիվ 1-07/837-Ա հրամանով Ընկերությունում Կոմիտեի նախագահի 10.04.2009 թվականի թիվ 1001846 հանձնարարագրով իրականացվող բյուջեի հետ փոխհարաբերությունների ճշտության ստուգումը 19.05.2009 թվականից 30 աշխատանքային օրով կասեցվել է (**հատոր 1, գ.թ. 71**):

3) Կոմիտեի նախագահի 06.07.2009 թվականի թիվ 1-07/1178-Ա հրամանով Ընկերությունում Կոմիտեի նախագահի 10.04.2009 թվականի թիվ 1001846 հանձնարարագրով իրականացվող բյուջեի հետ փոխհարաբերությունների ճշտության ստուգումը 06.07.2009 թվականից 30 աշխատանքային օրով կասեցվել է (**հատոր 1, գ.թ. 70**):

4) Կոմիտեի նախագահի 15.08.2009 թվականի թիվ 1-07/1514-Ա հրամանով Ընկերությունում Կոմիտեի նախագահի 10.04.2009 թվականի թիվ 1001846 հանձնարարագրով իրականացվող բյուջեի հետ փոխհարաբերությունների ճշտության ստուգման՝ Կոմիտեի նախագահի 06.07.2009 թվականի թիվ 1-07/1178-Ա հրամանով կասեցման ժամկետը երկարաձգվել է 30 աշխատանքային օրով (**հատոր 1, գ.թ. 69**):

5) Կոմիտեի նախագահի 28.09.2009 թվականի թիվ 1-07/1786-Ա հրամանով Ընկերությունում Կոմիտեի նախագահի 10.04.2009 թվականի թիվ 1001846 հանձնարարագրով իրականացվող բյուջեի հետ փոխհարաբերությունների ճշտության ստուգման ժամկետը երկարաձգվել է 10 անընդմեջ աշխատանքային օրով (**հատոր 1, գ.թ. 72**):

6) Նշված ստուգման արդյունքում Տեսչությունը 14.10.2009 թվականին կազմել է թիվ 1001846 ակտը, որի 14-րդ կետով Ընկերությանն առաջադրվել է 18.093.600 ՀՀ դրամի պարտավորություն: Նույն ակտի համաձայն՝ ստուգումը փաստացի սկսվել է 05.05.2009 թվականին (**հատոր 1, գ.թ. 25-33**):

4. Վճարելի դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումները

Քննելով վճարելի բողոքը նշված հիմքի սահմաններում՝ Վճարելի դատարանը գտնում է, որ այն հիմնավոր է հետևյալ պարձառաբանությամբ.

«Հայաստանի Հանրապետությունում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածի 1-ին կետի 1-ին պարբերության համաձայն՝ տնտեսավարող սուբյեկտի մոտ **մեկ ստուգման ժամկետը կարող է սահմանվել ոչ ավելի, քան 15 անընդմեջ աշխատանքային օր**՝ յուրաքանչյուր տարվա համար, ընդ որում, ստուգման առաջին օր է համարվում ստուգումը փաստացի սկսելու օրը: Ստուգումը փաստացի սկսելու օր է համարվում ստուգվող օբյեկտում պահվող ստուգման մատյանում համապատասխան գրառում կատարելու օրը:

Նույն հոդվածի 2-րդ կետի 1-ին պարբերության համաձայն՝ ստուգման ժամկետը չպետք է գերազանցի ստուգում իրականացնելու մասին համապատասխան պետական մարմնի ղեկավարի (փոխարինող պաշտոնատար անձի) հրամանում կամ հանձնարարագրում նշված ժամկետը: **Անհրաժեշտության դեպքում ստուգումն իրականացնող պաշտոնատար անձի գրավոր հիմնավորմամբ՝** համապատասխան պետական մարմնի ղեկավարի (փոխարինող պաշտոնատար անձի) հրամանով կամ հանձնարարագրով, **նույն հոդվածի 1-ին կետով սահմանված ժամկետը կարող է երկարաձգվել**, իսկ հաշվետու տարվա արդյունքներով 3,0 մլրդ դրամ և ավելի իրացման շրջանառության կամ համախառն եկամուտ հայտարարագրած տնտեսավարող սուբյեկտների մոտ մինչև 75 անընդմեջ աշխատանքային օր: Դրա մասին պետք է տեղեկացվի ստուգվող օբյեկտի ղեկավարին կամ նրան փոխարինող անձին: Ստուգման ընթացքում առանձին տեղեկությունների ճշման անհրաժեշտություն առաջանալու կամ ստուգմանն առնչվող փաստաթղթերը հետաքննության, նախաքննության կամ դատարանի վճիռի հիման վրա ազդարարված լինելու կամ տարերային աղետի պատճառով կամ ստուգման իրականացումն

անհնարին դարձնող այլ անկանխատեսելի հանգամանքի բերմամբ **ստուգում իրականացնող պաշտոնատար անձի (անձանց) գրավոր զեկուցագրի հիման վրա ստուգում իրականացնելու մասին հրաման տվող պաշտոնատար անձի հրամանով ստուգման ընթացքը կասեցվում է՝ մինչև կասեցման հիմքի վերացումը, բայց ոչ ավելի, քան 90 աշխատանքային օրով**, իսկ օտարերկրյա պետություններ հարցումներ կատարելու դեպքում՝ հարցման պատասխանը ստանալուց հետո ոչ ավելի, քան 10 աշխատանքային օրով: **Ստուգման փաստացի ժամկետի ընդհանուր տևողությունը չի կարող գերազանցել 30 անընդմեջ աշխատանքային օրը**, իսկ հաշվետու տարվա արդյունքներով 3,0 մլրդ դրամ և ավելի իրացման շրջանառություն կամ համախառն եկամուտ հայտարարագրած տնտեսավարող սուբյեկտների մոտ՝ 90 աշխատանքային օրը **(չհաշված կասեցման ժամկետը)**:

Նշված նորմերի վերլուծությունից հետևում է, որ ստուգման ժամկետը սահմանվում է ոչ ավելի, քան **15 անընդմեջ աշխատանքային օր**, իսկ անհրաժեշտության դեպքում ստուգումն իրականացնող պաշտոնատար անձի գրավոր հիմնավորմամբ այն կարող է երկարաձգվել, որի դեպքում ստուգման փաստացի ժամկետի ընդհանուր տևողությունը չի կարող գերազանցել **30 անընդմեջ աշխատանքային օրը (չհաշված կասեցման ժամկետը)**: Միաժամանակ, որոշակի հանգամանքների առկայության պայմաններում ստուգումն իրականացնող պաշտոնատար անձի (անձանց) գրավոր զեկուցագրի հիման վրա ստուգման ընթացքը ոչ ավելի, քան **90 աշխատանքային օրով** կասեցվում է՝ մինչև կասեցման հիմքի վերացումը, որից հետո ստուգման ընթացքը համարվում է վերսկսված, քանի որ ստուգման ընթացքի վերսկսման համար առանձին իրավական ակտ կայացնելու պարտականություն սահմանված չէ: **Այսինքն՝ ստուգման ժամկետի երկարաձգումը և ստուգման ընթացքի կասեցումն ինքնուրույն ընթացակարգեր են, որոնցից յուրաքանչյուրի կիրառման համար անհրաժեշտ են համապատասխան իրավական և փաստական հիմքեր, և մեկ ստուգման ընթացքում դրանցից որևէ մեկի կիրառումը չի կարող բացառել մյուսի կիրառման հնարավորությունը**:

Սույն գործով Դատարանը հայրը բավարարելու, իսկ հակընդդեմ հայրը մերժելու հիմքում դրել է այն պատճառաբանությունները, որ ստուգման հանձնարարագրով նախատեսված 15 անընդմեջ աշխատանքային օրվա ժամկետը կարող էր կա՛մ երկարաձգվել, կա՛մ կասեցվել: Մինչդեռ, Տեսչությունը նախ կասեցրել է ստուգումը, այն էլ 3 անգամ, ապա դրանից հետո այն երկարաձգել է ևս 10 աշխատանքային օրով: Բացի այդ, առաջին կասեցումից հետո՝ 01.07.2009 թվականին, Տեսչությունը պարտավոր էր վերսկսել ստուգումը, սակայն ևս 3 աշխատանքային օր ընդմիջում տալուց հետո՝ 06.07.2009 թվականին, վերջինս նոր հրամանով երկրորդ անգամ 30 աշխատանքային օրով կասեցրել է դրա ընթացքը: Միաժամանակ, ստուգումը կասեցնելուց հետո ևս 10 աշխատանքային օրով դրա ժամկետը երկարաձգելու հրաման արձակելուց հետո Տեսչությունը, խախտելով նաև այդ 10-օրյա ժամկետը, որն ավարտվում էր 12.10.2009 թվականին, ստուգումը շարունակել է նաև 13.10.2009 թվականին և 14.10.2009 թվականին:

Մինչդեռ, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Դատարանի նշված պատճառաբանություններն անհիմն են, քանի որ «Հայաստանի Հանրապետությունում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածի 2-րդ կետով ստուգման ժամկետի երկարաձգման և ստուգման ընթացքի կասեցման գործողությունները դիտվում են որպես ստուգման անցկացման հետ կապված

ինքնուրույն ընթացակարգեր, որոնցից յուրաքանչյուրի կիրառման համար անհրաժեշտ են համապատասխան իրավական և փաստական հիմքեր, և մեկ ստուգման ընթացքում դրանցից որևէ մեկի կիրառումը չի կարող բացառել մյուսի կիրառման հնարավորությունը:

Հետևաբար, Դատարանի պատճառաբանությունն այն մասին, որ ստուգման հանձնարարագրով նախատեսված 15 անընդմեջ աշխատանքային օրվա ժամկետը կարող էր կա՛մ երկարաձգվել, կա՛մ կասեցվել, անհիմն է և չունի որևէ իրավական հիմք:

Վերոգրյալի հիման վրա Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Դատարանը սխալ է մեկնաբանել «Հայաստանի Հանրապետությունում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածի 2-րդ կետը:

Միաժամանակ, Վճռաբեկ դատարանն անհիմն է համարում նաև Դատարանի պատճառաբանությունն այն մասին, որ ստուգումը կասեցնելուց հետո ևս 10 աշխատանքային օրով դրա ժամկետը երկարաձգելու հրաման արձակելուց հետո Տեսչությունը, խախտելով նաև այդ 10-օրյա ժամկետը, որն ավարտվում էր 12.10.2009 թվականին, ստուգումը շարունակել է նաև 13.10.2009 թվականին և 14.10.2009 թվականին:

Այսպես, սույն գործի փաստերի համաձայն՝ Կոմիտեի նախագահի 10.04.2009 թվականի թիվ 1001846 հանձնարարագրով ստուգման ժամկետը սահմանվել է 15 անընդմեջ աշխատանքային օր, այն Ընկերությունում փաստացի սկսվել է 05.05.2009 թվականին, ապա Կոմիտեի նախագահի 19.05.2009 թվականի թիվ 1-07/837-Ա հրամանով 19.05.2009 թվականից 30 աշխատանքային օրով՝ մինչև 30.06.2009 թվականը, դրա ընթացքը կասեցվել է, այսինքն՝ այդ ժամանակահատվածում ստուգումը կատարվել է 10 անընդմեջ աշխատանքային օր: 01.07.2009 թվականից ստուգումը համարվել է վերսկսված և տևել է 3 աշխատանքային օր, որից հետո Կոմիտեի նախագահի 06.07.2009 թվականի թիվ 1-07/1178-Ա հրամանով 06.07.2009 թվականից 30 աշխատանքային օրով դրա ընթացքը կրկին կասեցվել է, ապա Կոմիտեի նախագահի 15.08.2009 թվականի թիվ 1-07/1514-Ա հրամանով կասեցման ժամկետը ևս 30 աշխատանքային օրով երկարաձգվել է, այսինքն՝ այդ ժամանակահատվածում ստուգումը կատարվել է ընդամենը 3 անընդմեջ աշխատանքային օր: Կոմիտեի նախագահի 28.09.2009 թվականի թիվ 1-07/1786-Ա հրամանով ստուգման ժամկետը երկարաձգվել է 10 անընդմեջ աշխատանքային օրով և տևել է մինչև 14.10.2009 թվականը, որը կազմում է 12 աշխատանքային օր: Այսինքն՝ 10.04.2009 թվականից մինչև 14.10.2009 թվականն ընկած ժամանակահատվածում Ընկերությունում կատարված ստուգումը տևել է ընդհանուր 25 աշխատանքային օր:

Հետևաբար, սույն գործում առկա ապացույցներով միանշանակ հաստատվում է, որ Տեսչության կողմից Ընկերությունում ստուգումը կատարվել է Կոմիտեի նախագահի 10.04.2009 թվականի թիվ 1001846 հանձնարարագրով և 28.09.2009 թվականի թիվ 1-07/1786-Ա հրամանով սահմանված ժամկետներում, որոնք ընդհանուր կազմում են 25 աշխատանքային օր:

Վերոգրյալի հիման վրա Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Դատարանը սխալ է հաշվարկել ստուգման ժամկետի տևողությունը:

Նշված պարճառաբանություններով հերքվում են նաև վճռաբեկ բողոքի պատրասխանով ներկայացված փաստարկները:

Այսպիսով, սույն վճռաբեկ բողոքի հիմքի առկայությունը Վճռաբեկ դատարանը համարում է բավարար՝ «Հայաստանի Հանրապետության վարչական դատավարության օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության 2010 թվականի հոկտեմբերի 28-ի թիվ ՀՕ-135-Ն օրենքի 21-րդ հոդվածի 4-րդ մասի, ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 118-րդ և 118.3-րդ հոդվածների, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 227-րդ հոդվածի ուժով Դատարանի վճիռը բեկանելու համար:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 118-րդ և 118.3-րդ հոդվածներով, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 240-241²-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

ՈՐՈՇԵՑ

1. Վճռաբեկ բողոքը բավարարել մասնակիորեն: Բեկանել ՀՀ վարչական դատարանի 24.06.2010 թվականի վճիռը և գործն ուղարկել նույն դատարան՝ նոր քննության:

2. Դատական ծախսերի բաշխման հարցին անդրադառնալ գործի նոր քննության ընթացքում:

3. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

*ՆԱԽԱԳԱՀՈՂ՝ սրորսագրություն
ԴԱՏԱՎՈՐՆԵՐ՝ սրորսագրություններ*

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

ՀՀ վարչական դատարանի վճիռ
Վարչական գործ թիվ ՎԳ3/0011/05/10
Նախագահող դատավոր՝ Ա. Պողոսյան

Վարչական գործ թիվ ՎԳ3/0011/05/10
2011թ.

ՈՐՈՇՈՒՄ
ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Հայաստանի Հանրապետության Վճռաբեկ դատարանի քաղաքացիական
և վարչական պալատը (այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

*Նախագահությամբ
մասնակցությամբ դատավորներ*

Ե. ԽՈՒՆԴԿԱՐՅԱՆԻ
Ե. ՍՈՂՈՍՈՆՅԱՆԻ
Վ. ԱՐԵԼՅԱՆԻ
Վ. ԱՎԱՆԵՍՅԱՆԻ
Ա. ԲԱՐՍԵՂՅԱՆԻ
Մ. ԴՐՄԵՅԱՆԻ
Գ. ՀԱԿՈՐՅԱՆԻ
Տ. ՊԵՏՐՈՍՅԱՆԻ

2011 թվականի հուլիսի 01-ին

դոնբաց դատական նիստում, քննելով ՀՀ Կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի Եղեգնաձորի տարածքային հարկային տեսչության (այսուհետ՝ Տեսչություն) վճռաբեկ բողոքը ՀՀ վարչական դատարանի 31.05.2010 թվականի վճռի դեմ՝ ըստ Տեսչության հայցի ընդդեմ անհատ ձեռնարկատեր Արթուր Հովսեփյանի՝ գումար բռնագանձելու պահանջի մասին, և ըստ Արթուր Հովսեփյանի հակընդդեմ հայցի ընդդեմ Տեսչության՝ ակտը և որոշումն անվավեր ճանաչելու պահանջների մասին,

ՊԱՐԶԵՑ

1. Գործի դատավարական նախապատմությունը

Դիմելով դատարան՝ Տեսչությունը պահանջել է արձակել Արթուր Հովսեփյանից 165.000 ՀՀ դրամ բռնագանձելու վերաբերյալ վճարման կարգադրություն:

ՀՀ վարչական դատարանը 17.12.2009 թվականին արձակել է վճարման կարգադրություն:

Հակընդդեմ հայցով դիմելով դատարան՝ Արթուր Հովսեփյանը պահանջել է անվավեր ճանաչել Տեսչության 31.07.2009 թվականի թիվ 2311343 ակտը և Տեսչության պետի 03.09.2009 թվականի «Վարչական իրավախախտման գործի վերաբերյալ» թիվ 106558 որոշումը:

ՀՀ վարչական դատարանի 02.03.2010 թվականի որոշմամբ վճարման կարգադրության վարույթից անցում է կատարվել հայցային վարույթի:

ՀՀ վարչական դատարանի (այսուհետ՝ Դատարան) 31.05.2010 թվականի վճռով

հայցը մերժվել է, իսկ հակընդդեմ հայցը՝ բավարարվել:
Սույն գործով վճռաբեկ բողոք է ներկայացրել Տեսչությունը:
Վճռաբեկ բողոքի պատասխանն չի ներկայացվել:

2. Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը

Սույն վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

Դատարանը սխալ է մեկնաբանել «Հսկիչ-դրամարկղային մեքենաների կիրառման մասին» ՀՀ օրենքը:

Բողոք բերած անձը նշված պնդումը պարզապես անհիմն է հետևյալ փաստարկներով.

Դատարանը որպես հսկիչ գնում է որակել վիճարկվող ակտով արձանագրված գնումը: Մինչդեռ, Դատարանն անտեսել է, որ տվյալ դեպքում կատարվել է ոչ թե հսկիչ գնում, այլ հսկիչ-դրամարկղային մեքենաների շահագործման կանոնների պահպանման ճշտության ստուգում: Նշված ստուգմամբ արձանագրվել է, որ Արթուր Հովսեփյանի առևտրի կետում տեղադրված հսկիչ-դրամարկղային մեքենան կապարակնքված չէ: Որպես ապացույց Տեսչությունը Դատարան է ներկայացրել Արթուր Հովսեփյանի կողմից Տեսչություն ներկայացված 19.05.2009 թվականի և 20.08.2009 թվականի հայտարարությունները, որոնցից առաջինով Արթուր Հովսեփյանը հայտնել է, որ իր առևտրի կետում տեղակայված հսկիչ-դրամարկղային մեքենան խափանվել է, այն տանում է վերանորոգման և պարտավորվում է առևտրի կետը չշահագործել մինչև դրա վերանորոգումից վերադարձնելը, իսկ երկրորդով տեղեկացրել է, որ հսկիչ-դրամարկղային մեքենան վերադարձրել է վերանորոգումից և խնդրել է այն կապարակնքել:

Դատարանը հաշվի չի առել, որ Արթուր Հովսեփյանը ստուգման պահին առևտրի կետում չի եղել, և այդ մասին արձանագրվել է վիճարկվող ակտում, իսկ խախտման փաստն արձանագրվելուց հետո վերջինս չի ցանկացել ծանոթանալ հանձնարարագրին և վիճարկվող ակտին, ինչպես նաև տալ բացատրություններ:

Դատարանն անտեսել է նաև, որ վիճարկվող ակտն Արթուր Հովսեփյանին է ուղարկվել պատվիրված նամակով, և վերջինս այն ստացել է 05.08.2009 թվականին: Այսինքն՝ վիճարկվող ակտը «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 60-րդ հոդվածի 1-ին մասի ուժով 06.08.2009 թվականին մտել է ուժի մեջ:

Դատարանն ընդհանրապես գնահատական չի տվել այն հանգամանքին, թե ինչու Արթուր Հովսեփյանն անմիջապես ստուգողներին չի ներկայացրել «կապարակնքված» հսկիչ-դրամարկղային մեքենան:

Վերոգրյալի հիման վրա բողոք բերած անձը պահանջել է Դատարանի 31.05.2010 թվականի վճիռը բեկանել և փոփոխել՝ հայցը բավարարել, իսկ հակընդդեմ հայցը մերժել:

3. Վճռաբեկ բողոքի քննության համար նշանակություն ունեցող փաստերը

Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

1) Տեսչության պետի 15.05.2009 թվականի թիվ 2311343 հանձնարարագրի հիման վրա Արթուր Հովսեփյանի մոտ կատարվել է հսկիչ-դրամարկղային մեքենաների

կիրառման և դրանց շահագործման կանոնների պահպանման ճշտության ստուգում (գ.թ. 4):

2) Նշված ստուգման արդյունքում Տեսչությունը 31.07.2009 թվականին կազմել է թիվ 2311343 ակտը, որով արձանագրվել է, որ Վայքի Ջերմուկի խճուղի թիվ 15 հասցեի հարևանությամբ գտնվող Արթուր Հովսեփյանին պատկանող առևտրի կետից 28.07.2009 թվականին ժամը 17:52-ին իրականացվել է 8.000 ՀՀ դրամ արժողությամբ մեկ գույգ տղամարդու կոշիկի գնում: Վաճառողը տրամադրել է հսկիչ-դրամարկղային մեքենայի կտրոն: Միաժամանակ պարզվել է, որ Արթուր Հովսեփյանի խանութում տեղադրված հսկիչ-դրամարկղային մեքենան ՀՀ Կառավարության սահմանած կարգով հարկային մարմնի կողմից կապարակնքված չէ: Նույն ակտում նշվել է, որ այն ներկայացվել է Արթուր Հովսեփյանին՝ ծանոթանալու և ստորագրելու համար, սակայն վերջինս հրաժարվել է ստորագրելուց և բացատրություն տալուց՝ չնշելով շարժառիթները: Ակտով առաջադրվել է 75.000 ՀՀ դրամի տուգանք (գ.թ. 5-7):

3) Տեսչության պետի 03.09.2009 թվականի «Վարչական իրավախախտման գործի վերաբերյալ» թիվ 106558 որոշմամբ Արթուր Հովսեփյանը Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 169.1-րդ հոդվածով ենթարկվել է 15.000 ՀՀ դրամ վարչական տուգանքի (գ.թ. 10):

4) Արթուր Հովսեփյանը Տեսչության պետին հասցեագրված 19.05.2009 թվականի հայտարարությամբ խնդրել է թույլտվություն՝ Վայքի Ջերմուկի խճուղի թիվ 14 հասցեում գտնվող հսկիչ-դրամարկղային մեքենան վերանորոգելու համար, և պարտավորվել է մինչև դրա վերանորոգումը դադարեցնել առևտրի կետի գործունեությունը (գ.թ. 78):

5) Արթուր Հովսեփյանը Տեսչության պետին հասցեագրված 20.08.2009 թվականի հայտարարությամբ հայտնել է, որ Վայքի Ջերմուկի խճուղի թիվ 14 հասցեում գտնվող հսկիչ-դրամարկղային մեքենան տարել է վերանորոգման, այն վերանորոգված է և գտնվում է սարքին վիճակում, ուստի խնդրել է նշված հսկիչ-դրամարկղային մեքենան կապարակնքել (գ.թ. 79):

6) Գործում առկա երկու լուսանկարից երևում է, որ որպես դրանցում պատկերված հսկիչ-դրամարկղային մեքենայի կապարակնքելու ամսաթիվ է նշված 21.06.2009 թվականը (գ.թ. 80-81):

4. Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումները

Քննելով վճռաբեկ բողոքը նշված հիմքի սահմաններում՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ այն հիմնավոր է հետևյալ պարձառաբանությամբ.

«Հայաստանի Հանրապետությունում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» ՀՀ օրենքի 1-ին հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ ստուգումն օրենքի հիման վրա իրականացվող ընթացակարգ է, որով պարզվում է տնտեսավարող սուբյեկտի ներկայացրած հաշվետվությունների, Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված հայտարարագրերի, հարկերի և պարտադիր այլ վճարների գծով նախատեսված հաշվարկների, ելակետային տվյալների, այլ փաստաթղթերի (այսուհետ՝ հաշվետվություն) արժանահավատությունը և վերջինիս ծավալած փաստացի գործունեության համապատասխանությունն օրենքների և այլ իրավական ակտերի պահանջներին:

«Հայաստանի Հանրապետությունում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ ստուգումն

սկսելուց առաջ համապատասխան **պետական մարմնի ղեկավարը (փոխարինող պաշտոնատար անձը) ստուգում իրականացնելու մասին հրապարակում է հրաման կամ հանձնարարագիր ...:**

«Հայաստանի Հանրապետությունում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» ՀՀ օրենքի 2-րդ հավելվածի «Հսկիչ գնումների անցկացման» կարգի 1.2-րդ կետի համաձայն՝ հսկիչ գնում է համարվում հարկային պարտավորությունների հաշվարկման (գնահատման) նպատակով հարկային մարմնի կողմից իրականացվող ապրանքների, առարկաների, աշխատանքների, ծառայությունների գների, Հայաստանի Հանրապետությունում ռեզիդենտների ու ոչ ռեզիդենտների կողմից իրականացվող արժույթային գործարքների վերահսկողության և հսկիչ-դրամարկղային մեքենաների շահագործման կանոնների պահպանման ուսումնասիրությունը ...:

«Հայաստանի Հանրապետությունում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» ՀՀ օրենքի 2-րդ հավելվածի «Հսկիչ գնումների անցկացման» կարգի 1.4-րդ կետի համաձայն՝ հսկիչ գնումն իրականացվում է **հարկային մարմնի ղեկավարի կամ հարկային տեսչության պետի կողմից տրված գրավոր հանձնարարագրի հիման վրա ...:**

Նշված նորմերի վերլուծությունից հետևում է, որ հսկիչ գնումը ստուգումից տարբերվում է ինչպես հետապնդվող նպատակով, այնպես էլ այն իրականացնելու համար անհրաժեշտ իրավական հիմքով: Մասնավորապես՝ ստուգումը համապատասխան պետական մարմնի ղեկավարի (փոխարինող պաշտոնատար անձի) հրամանի կամ հանձնարարագրի հիման վրա իրականացվող ընթացակարգ է, որով պարզվում է տնտեսվարող սուբյեկտի ներկայացրած հաշվետվությունների արժանահավատությունը և վերջինիս ծավալած փաստացի գործունեության համապատասխանությունն օրենքների և այլ իրավական ակտերի պահանջներին: Իսկ հսկիչ գնումը հարկային մարմնի ղեկավարի կամ հարկային տեսչության պետի գրավոր հանձնարարագրի հիման վրա հարկային պարտավորությունների հաշվարկման (գնահատման) նպատակով իրականացվող ապրանքների, առարկաների, աշխատանքների, ծառայությունների գների, Հայաստանի Հանրապետությունում ռեզիդենտների ու ոչ ռեզիդենտների կողմից իրականացվող արժույթային գործարքների վերահսկողության և հսկիչ-դրամարկղային մեքենաների շահագործման կանոնների պահպանման ուսումնասիրություն է: Այսինքն՝ **հսկիչ գնում իրականացնելու համար դրա վերաբերյալ հարկային մարմնի ղեկավարի կամ հարկային տեսչության պետի կողմից պարտադիր կերպով պետք է տրվի գրավոր հանձնարարագիր**, որի բացակայության դեպքում հարկային մարմնի կողմից իրականացվող որևէ գործողություն, այդ թվում նաև՝ համապատասխան պետական մարմնի ղեկավարի (փոխարինող պաշտոնատար անձի) հրամանի կամ հանձնարարագրի հիման վրա իրականացվող ստուգումը որևէ դեպքում չի կարող համարվել հսկիչ գնում:

Սույն գործով Դատարանը պատճառաբանել է, որ Տեսչության պետի 15.05.2009 թվականի թիվ 2311343 հանձնարարագրի վերջնամատում նշվել է, որ Արթուր Հովսեփյանը 28.07.2009 թվականին հրաժարվել է այն ստորագրելուց և բացատրություն տալուց՝ չնշելով շարժառիթները, ինչը չի համապատասխանում «Հայաստանի Հանրապետությունում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» ՀՀ օրենքի 2-րդ հավելվածի «Հսկիչ գնումների անցկացման» կարգի 1.5-

րո՞ղ կետի պահանջին, քանի որ հանձնարարագիրը չի ներկայացվում տնտեսվարող սուբյեկտին՝ ծանոթանալու և ստորագրելու համար, այլ միայն ներկայացվում է դրա երկրորդ օրինակը: Նշված հանձնարարագրում բացակայում են նաև նույն կարգի 1.4-րդ կետով նախատեսված պարտադիր վավերապայմանները: Բացի այդ, ո՞չ հանձնարարագրում և ո՞չ էլ վիճարկվող ակտում չի նշվել հսկիչ գնում իրականացնողի տվյալները (անունը, ազգանունը, պաշտոնը կամ անձնագրային տվյալները և այլն):

Մինչդեռ, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Դատարանն անտեսել է այն հանգամանքը, որ Տեսչության պետի 15.05.2009 թվականի թիվ 2311343 հանձնարարագրի հիման վրա Արթուր Հովսեփյանի մոտ կատարվել է ոչ թե հսկիչ գնում, այլ հսկիչ-դրամարկղային մեքենաների կիրառման և դրանց շահագործման կանոնների պահպանման ճշտության ստուգում: Այսինքն՝ տվյալ դեպքում Արթուր Հովսեփյանի մոտ հսկիչ գնում չի իրականացվել: Հետևաբար, Դատարանի կիրառած «Հայաստանի Հանրապետությունում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» ՀՀ օրենքի 2-րդ հավելվածի «Հսկիչ գնումների անցկացման» կարգը սույն գործով կիրառելի չէ:

Վերոգրյալի հիման վրա Վճռաբեկ դատարանը գտնում է, որ հսկիչ գնում կատարելու վերաբերյալ Դատարանի հետևությունները և եզրահանգումները սույն գործի ձիշտ լուծման համար չունեն որևէ իրավական նշանակություն և չեն կարող իրավական հիմք հանդիսանալ՝ Տեսչության 31.07.2009 թվականի թիվ 2311343 ակտի իրավաչափության ստուգման համար:

Վիճելի իրավահարաբերության պահին գործող խմբագրությամբ «Հսկիչ-դրամարկղային մեքենաների կիրառման մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին պարբերության «բ» ենթակետի համաձայն՝ Հայաստանի Հանրապետությունում հսկիչ-դրամարկղային մեքենաների պարտադիր կիրառմամբ գործունեություն իրականացնող կազմակերպությունները և անհատ ձեռնարկատերերը կանխիկ դրամով դրամական հաշվարկները պետք է իրականացնեն Հայաստանի Հանրապետության Կառավարության սահմանած կարգով հարկային մարմնի գրանցած և կապարակնքած հսկիչ-դրամարկղային մեքենայով:

Վիճելի իրավահարաբերության պահին գործող խմբագրությամբ «Հսկիչ-դրամարկղային մեքենաների կիրառման մասին» ՀՀ օրենքի 11-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին պարբերության համաձայն՝ հսկիչ-դրամարկղային մեքենաների գրանցման կարգի և/կամ շահագործման կանոնների խախտմամբ հսկիչ-դրամարկղային մեքենաների կիրառման համար կազմակերպությունը կամ անհատ ձեռնարկատերը տուգանվում են յոթանասունհինգ հազար դրամի չափով:

«Հսկիչ-դրամարկղային մեքենաների կիրառման մասին» ՀՀ օրենքի 11-րդ հոդվածի 2-րդ մասի 5-րդ պարբերության համաձայն՝ նույն հոդվածով սահմանված տուգանքը, Հայաստանի Հանրապետության Կառավարության լիազորած պետական կառավարման մարմնի կողմից խախտման փաստն արձանագրելուց հետո երկամսյա ժամկետում չմոծելու դեպքում, կրկնապատկվում է:

Նշված նորմերի վերլուծությունից հետևում է, որ վիճելի իրավահարաբերության պահին հսկիչ-դրամարկղային մեքենաների պարտադիր կիրառմամբ գործունեություն իրականացնող անհատ ձեռնարկատերերը կանխիկ դրամով դրամական հաշվարկները ՀՀ Կառավարության սահմանած կարգով հարկային մարմնի գրանցած և կապարակնքած հսկիչ-դրամարկղային մեքենայով չիրականացնելու համար

տուգանվում էին 75.000 ՀՀ դրամի չափով: Միաժամանակ, հսկիչ-դրամարկղային մեքենաների գրանցման կարգի և (կամ) շահագործման կանոնների խախտմամբ հսկիչ-դրամարկղային մեքենաների կիրառման համար նշանակված տուգանքը խախտման փաստն արձանագրվելուց հետո երկամսյա ժամկետում չմոծելու հետևանքով կրկնապատկվում է:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 22-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ դատարանը նույն օրենսգրքով սահմանված կարգով հավաքված ապացույցների հետազոտման և գնահատման միջոցով պարզում է գործի լուծման համար էական նշանակություն ունեցող բոլոր փաստերը:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 24-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ դատարանը, անմիջականորեն գնահատելով գործում եղած բոլոր ապացույցները, որոշում է **փաստի հաստատված լինելու հարցը՝ բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտման վրա հիմնված ներքին համոզմամբ:**

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ Դատարանը վճռի մեջ պետք է պատճառաբանի նման համոզմունքի ձևավորումը:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 113-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ վարչական դատարանը գործն ըստ էության լուծող դատական ակտ կայացնելիս՝

1) գնահատում է ապացույցները.

2) որոշում է, թե գործի համար նշանակություն ունեցող որ հանգամանքներն են պարզվել, և որոնք չեն պարզվել.

3) որոշում է տվյալ գործով կիրառման ենթակա օրենքները և այլ իրավական ակտերը.

4) որոշում է հայցը լրիվ կամ մասնակի բավարարելու կամ այն մերժելու հարցը:

Նշված նորմերի վերլուծությունից հետևում է, որ դատարանը որևէ **փաստի հաստատված լինելու հարցը բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտման վրա հիմնված ներքին համոզմամբ** որոշելու համար պարտավոր է գործում եղած բոլոր ապացույցները հետազոտել և գնահատել անմիջականորեն, դրա միջոցով պարզել գործի լուծման համար էական նշանակություն ունեցող բոլոր փաստերը, պատճառաբանել նման համոզմունքի ձևավորումը և միայն այդ բոլոր պահանջների պահպանման արդյունքում որոշել հայցը լրիվ կամ մասնակի բավարարելու կամ այն մերժելու հարցը:

Սույն գործով Դատարանը հայցը մերժելիս, իսկ հակընդդեմ հայցը բավարարելիս պատճառաբանել է, որ գործում առկա երկու լուսանկարների զննությունից պարզվել է այն փաստական հանգամանքը, որ Արթուր Հովսեփյանի կողմից շահագործվող հսկիչ-դրամարկղային մեքենայի վրա առկա երկու կապարակնիքները հարկային մարմնի կողմից դրվել են դեռևս 21.06.2009 թվականին և առ այսօր չեն փոխարինվել: Մինչդեռ, վիճելի ակտով արձանագրվել է, որ 28.07.2009 թվականի դրությամբ վերջինիս կողմից շահագործվող հսկիչ-դրամարկղային մեքենան կապարակնիքված չէ: Ինչ վերաբերում է Արթուր Հովսեփյանի 19.05.2009 թվականի և 20.08.2009 թվականի հայտարարություններին, ապա առաջին հայտարարությամբ նա խնդրել է թույլտվություն՝ իր հսկիչ-դրամարկղային մեքենան վերանորոգելու համար, ինչից հետո այն կապարակնիքվել է 21.06.2009 թվականին, իսկ երկրորդ հայտարարությամբ խնդրել է վերանորոգված հսկիչ-դրամարկղային մեքենան կապարակնիքել, որպիսի գործողությունն այդպես էլ չի կատարվել, քանի որ վերջին

կապարակնիքները թվագրված են 21.06.2009 թվականով:

Մինչդեռ, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Դատարանը, հաստատված համարելով այն փաստը, որ Արթուր Հովսեփյանի կողմից շահագործվող հսկիչ-դրամարկղային մեքենայի վրա առկա երկու կապարակնիքները հարկային մարմնի կողմից դրվել են դեռևս 21.06.2009 թվականին, անտեսել է, որ հսկիչ-դրամարկղային մեքենայի կապարակնքման ամսաթվի հետ կապված առկա է հակասություն, իսկ նշված ամսաթվի պարզումը սույն գործի լուծման համար ունի էական նշանակություն:

Մասնավորապես՝ սույն գործում առկա երկու լուսանկարներից երկում է, որ հսկիչ-դրամարկղային մեքենան կապարակնքվել է 21.06.2009 թվականին, որպիսի փաստը գործի քննության ընթացքում ընդունել է նաև Տեսչության ներկայացուցիչը (**գ.թ. 80-81**), սակայն 20.08.2009 թվականի հայտարարությամբ իր հերթին հաստատվում է, որ հսկիչ-դրամարկղային մեքենան կապարակնքելու պահանջը ներկայացվել է միայն 20.08.2009 թվականին, որպիսի փաստն էլ հաստատվում է Տեսչության 31.07.2009 թվականի թիվ 2311343 ակտով, որում որպես խախտման ամսաթիվ է արձանագրված 28.07.2009 թվականը:

Վերոգրյալի հիման վրա Վճռաբեկ դատարանը գտնում է, որ սույն գործն անհրաժեշտ է ուղարկել նոր քննության, քանի որ Դատարանի հետևությունն այն մասին, որ հսկիչ-դրամարկղային մեքենան կապարակնքվել է 21.06.2009 թվականին, իսկ 20.08.2009 թվականի հայտարարությամբ պահանջված գործողությունն այդպես էլ չի կատարվել, չի կարող նշված ապացույցների միջև հակասությունների պայմաններում համարվել հաստատված:

Ինչ վերաբերում է Դատարանի այն պատճառաբանությանը, որ սույն գործով վիճելի են մնում Տեսչության 31.07.2009 թվականի թիվ 2311343 ակտն Արթուր Հովսեփյանի կողմից ստանալու, հետևաբար նաև դրա ուժի մեջ մտնելու փաստերը, ապա Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ այդ մասով Դատարանը բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ չի հետազոտել և չի գնահատել Տեսչության 31.07.2009 թվականի թիվ 2311343 ակտում կատարված նշումն այն մասին, որ նշված ակտը ներկայացվել է Արթուր Հովսեփյանին՝ ծանոթանալու և ստորագրելու համար, սակայն վերջինս հրաժարվել է այն ստորագրելուց և բացատրություն տալուց, ինչպես նաև գործում առկա է փոստային հետստացման ծանուցագիրը, որով հաստատվում է, որ Տեսչության 31.07.2009 թվականի թիվ 2311343 ակտն Արթուր Հովսեփյանը ստացել է 05.08.2009 թվականին:

Վերոգրյալի հիման վրա Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Տեսչության 31.07.2009 թվականի թիվ 2311343 ակտի ուժի մեջ մտնելու հանգամանքի վերաբերյալ սույն գործով որևէ վիճելի փաստ առկա չէ, քանի որ այն ուժի մեջ մտած վարչական ակտ է:

Այսպիսով, սույն վճռաբեկ բողոքի հիմքի առկայությունը Վճռաբեկ դատարանը համարում է բավարար՝ «Հայաստանի Հանրապետության վարչական դատավարության օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության 2010 թվականի հոկտեմբերի 28-ի թիվ ՀՕ-135-Ն օրենքի 21-րդ հոդվածի 4-րդ մասի, ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 118-րդ և 118.3-րդ հոդվածների, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 227-րդ և 228-րդ հոդվածների ուժով Դատարանի վճիռը բեկանելու համար:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 118-րդ և 118.3-րդ հոդվածներով, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 240-241²-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

ՈՐՈՇԵՑ

1. Վճռաբեկ բողոքը բավարարել մասնակիորեն: Բեկանել ՀՀ վարչական դատարանի 31.05.2010 թվականի վճիռը և գործն ուղարկել նույն դատարան՝ նոր քննության:

2. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

*ՆԱԽԱԳԱՀՈՂ՝ ստորագրություն
ԴԱՏԱՎՈՐՆԵՐ՝ ստորագրություններ*

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

ՀՀ վարչական դատարանի վճիռ
Վարչական գործ թիվ ՎԳ/0240/05/09
Նախագահող դատավոր՝ Ա. Միրզոյան

Վարչական գործ թիվ ՎԳ/0240/05/09
2011թ.

ՈՐՈՇՈՒՄ ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Հայաստանի Հանրապետության Վճռաբեկ դատարանի քաղաքացիական
և վարչական պալատը (այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

*նախագահությամբ
մասնակցությամբ դատավորներ*

Ե. ԽՈՒՆԴԿԱՐՅԱՆԻ
Ե. ՍՈՂՈՄՈՆՅԱՆԻ
Վ. ԱԲԵԼՅԱՆԻ
Ս. ԱՆՏՈՆՅԱՆԻ
Վ. ԱՎԱՆԵՍՅԱՆԻ
Ա. ԲԱՐՍԵՂՅԱՆԻ
Մ. ԳՐՄԵՅԱՆԻ
Գ. ՀԱԿՈԲՅԱՆԻ
Է. ՀԱՅՐԻՅԱՆԻ
Տ. ՊԵՏՐՈՍՅԱՆԻ

2011 թվականի մայիսի 27-ին

դռնբաց դատական նիստում, քննելով ՀՀ Կառավարությանն առընթեր պետական
եկամուտների կոմիտեի (այսուհետ՝ Կոմիտե) վճռաբեկ բողոքը ՀՀ վարչական
դատարանի 15.01.2010 թվականի վճռի դեմ ըստ Երևանի քաղաքապետարանի «Կարեն
Դեմիրճյանի անվան Երևանի մետրոպոլիտեն» ՓԲԸ-ի (այսուհետ՝ Ընկերություն) հայցի
ընդդեմ Կոմիտեի՝ Կոմիտեի Արաբկիրի-1 հարկային տեսչության (այսուհետ՝ Տեսչություն)
28.11.2008 թվականի թիվ 1002597 ակտն անվավեր ճանաչելու պահանջի մասին, ըստ
Տեսչության հայցի ընդդեմ Ընկերության՝ 115.385.109 ՀՀ դրամ բռնագանձելու պահանջի
մասին, և ըստ Ընկերության հակընդդեմ հայցի ընդդեմ Տեսչության՝ «պատասխանողի
վարչական ակտերը վերացնելու» պահանջի մասին,

ՊԱՐԶԵՑ

1. Գործի դատավարական նախապատմությունը

Դիմելով դատարան՝ Ընկերությունը պահանջել է անվավեր ճանաչել Տեսչության
28.11.2008 թվականի թիվ 1002597 ակտը:

Դիմելով դատարան՝ Տեսչությունը պահանջել է արձակել Ընկերությունից 115.385.109 ՀՀ դրամ բռնագանձելու վերաբերյալ վճարման կարգադրություն:

ՀՀ վարչական դատարանը 26.01.2009 թվականին արձակել է վճարման կարգադրություն:

Հակընդդեմ հայցով դիմելով դատարան՝ Ընկերությունը պահանջել է վերացնել «պատասխանողի վարչական ակտերը»:

ՀՀ վարչական դատարանի 23.02.2009 թվականի որոշմամբ վճարման կարգադրության վարույթից անցում է կատարվել հայցային վարույթի:

ՀՀ վարչական դատարանի 24.03.2009 թվականի որոշմամբ նշված գործերը միացվել են մեկ վարույթում:

ՀՀ վարչական դատարանի (այսուհետ՝ Դատարան) 15.01.2010 թվականի վճռով Ընկերության հայցը բավարարվել է մասնակիորեն՝ անվավեր է ճանաչվել Տեսչության 28.11.2008 թվականի թիվ 1002597 ակտի 1-ին՝ շահութահարկի բաժինը, 4-րդ՝ ավելացված արժեքի հարկի բաժնի 1-ին մասը՝ 129.400.000 ՀՀ դրամից 113.674.400 ՀՀ դրամի մասով, և ավելացված արժեքի հարկի գծով պարտավորության գումարի վրա հաշվարկված տուգանքների և տույժերի մասը՝ 96.562.400 ՀՀ դրամից 87.127.040 ՀՀ դրամի մասով: Ընկերության հայցը մնացած մասով, Տեսչության հայցը և Ընկերության հակընդդեմ հայցը մերժվել են:

Սույն գործով վճռաբեկ բողոք է ներկայացրել Կոմիտեն:

Վճռաբեկ բողոքի պատասխան է ներկայացրել Ընկերությունը:

2. Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը

Սույն վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքերի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

1) Դատարանը սխալ է մեկնաբանել «Ճահութահարկի մասին» ՀՀ օրենքի 13-րդ հոդվածի 2-րդ կետը, ՀՀ Կառավարության 11.04.2000 թվականի «Հիմնական միջոցների (այդ թվում՝ վարձակալված) վրա կատարված ծախսերն ըստ ընթացիկ և կապիտալ բնույթի տարբերակելու հայտանիշները և չափերը սահմանելու մասին» թիվ 161 որոշումը:

Բողոք բերած անձը նշված պնդումը պարզապես անհիմն է հետևյալ փաստարկներով.

Դատարանը, հիմնվելով ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայի «Փորձաքննությունների ազգային բյուրո» ՊՈԱԿ-ի 05.08.2009 թվականի թիվ 09-1022 եզրակացության վրա, միայն վագոնների տանիքների նորոգման աշխատանքների իրականացման տեղամասում 2007 թվականին կատարված 3.308.763 ՀՀ դրամի ծախսն է դասել ՀՀ Կառավարության 11.04.2000 թվականի թիվ 161 որոշմամբ սահմանված հաշվետու տարում կատարված այն ծախսերին, որոնք ենթակա են հիմնական միջոցների սկզբնական արժեքի հետ համադրման՝ գերազանցող 10 տոկոսի չափը որոշելու համար: Մնացած տեղամասերում 2007 թվականին կատարված, ինչպես նաև օգտագործված էլեկտրաէներգիայի ծախսերը Դատարանը հիմնական միջոցների սկզբնական արժեքի հետ համադրման և հաշվապահական հաշվառման տեսանկյունից չի դասել հաշվետու ժամանակաշրջանի ծախսերին և վերագրել է հաշվետու ժամանակաշրջանի ֆինանսական արդյունքներին:

Մինչդեռ, Դատարանը հաշվի չի առել, որ և՛ վագոնների տանիքների նորոգման աշխատանքների իրականացման տեղամասը, և՛ մնացած տեղամասերն

իրականացնում են նույնատիպ աշխատանքներ, այն է՝ շարժակազմի առանձին հատվածների վերանորոգում, և քանի որ մետրոպոլիտենի շարժակազմը բաղկացած է ոչ միայն վագոնների տանիքներից, այլ նաև անվագույզերից, նստատեղերից, ավտոմատ համակարգերից և այլ հատվածներից, անհրաժեշտ էր հաշվարկել դրա բոլոր հատվածների վրա կատարված վերանորոգման և արդիականացման ծախսերը:

Տվյալ դեպքում, ըստ տեղամասերի, կատարվել են հետևյալ ծախսերը. «APC» տեղամաս՝ 10.650.700 ՀՀ դրամի ծախս, վերամբարձ վերանորոգման տեղամաս՝ 27.391.900 ՀՀ դրամի ծախս, վագոնների տանիքների նորոգման աշխատանքների իրականացման տեղամաս՝ 3.308.700 ՀՀ դրամի ծախս, կոմպլեքսավերանորոգման և տեխնիկական գնման տեղամաս՝ 42.184.800 ՀՀ դրամի ծախս և նշված տեղամասերի էլեկտրաէներգիա՝ 71.432.800 ՀՀ դրամի ծախս, ընդամենը՝ 154.968.900 ՀՀ դրամի ծախս: Ստուգման ընթացքում միայն 154.968.900 ՀՀ դրամի ծախսն է համադրվել շարժակազմի սկզբնական արժեքի հետ՝ գերազանցող 10 տոկոսի չափը որոշելու համար: Ընկերության հիմնական միջոցների հաշվառումն իրականացնող հաշվապահի ներկայացրած տվյալների համաձայն՝ շարժակազմի սկզբնական արժեքը կազմում է 558.528.000 ՀՀ դրամ, այսինքն՝ սկզբնական արժեքի 10 տոկոսը կազմում է 55.852.800 ՀՀ դրամ (558.528.000x10%), իսկ 10 տոկոսը գերազանցող ծախսը կազմում է 99.116.100 ՀՀ դրամ (154.968.900–55.852.800):

2) Դատարանը սխալ է մեկնաբանել «Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքի 7-րդ հոդվածի 9-րդ կետը, 27-րդ հոդվածը:

Բողոք բերած անձը նշված պնդումը պարզապես և հերկյալ փաստարկներով.

Դատարանն անտեսել է, որ յուրաքանչյուր ամիս ուղևորափոխադրման ծառայության մատուցումից Ընկերության ստացած եկամուտները ձևավորվում են երկու աղբյուրից՝ մետաղանիշերի վաճառքից ստացված հասույթից և պետական բյուջեից ստացված սուբսիդիայից, սակայն Ընկերությունը նշված եկամուտները հաշվարկելիս հաշվի չի առնում նախորդ ամսում պետական բյուջեից ստացված սուբսիդիան:

Մինչդեռ, ուղևորափոխադրումը մեկ ամբողջական ցիկլ է, և հնարավոր չէ դրա իրականացման համար ձեռքբերվող ապրանքները և ստացված ծառայությունները տարբերակել որպես ավելացված արժեքի հարկով հարկվող կամ չհարկվող գործարք իրականացնելու համար կատարված ձեռքբերումներ:

Ինչ վերաբերում է Դատարանի կողմից փորձաքննությանը պարզաբանման համար առաջադրված հարցերին, ապա դրանք անհիմն են և չեն առնչվում վիճարկվող ակտով արձանագրված «Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքի 27-րդ հոդվածով սահմանված կարգի պահանջներին: Մասնավորապես՝ փորձագետները եզրակացրել են, որ սուբսիդիայի գումարներն ուղղվել են աշխատավարձերի, սոցիալական վճարների, հարկերի վճարումներին, և ընդամենը 75.000.000 ՀՀ դրամ գումարն է վճարվել մատակարարներից ստացված նյութերի արժեքի դիմաց: Նշված գումարի նկատմամբ հաշվարկվող ավելացված արժեքի հարկը՝ 15.000.000 ՀՀ դրամը, դիտարկվել է որպես ավելացված արժեքի հարկի կրեդիտային շրջանառության նկատմամբ հաշվարկված ավելացված արժեքի հարկի գումարներից չհաշվանցվող գումար: Սակայն «Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքի 27-րդ հոդվածում նշված չէ, որ ավելացված արժեքի հարկից ազատված կամ դրանով չհարկվող օբյեկտ

հանդիսացող գործարքների իրականացումից ստացված ֆինանսական միջոցները չեն կարող ուղղվել ապրանքների ձեռքբերմանը կամ ծառայությունների ստացմանը:

Այսպիսով, փորձագետներն ի սկզբանե օգտագործել են այնպիսի մեթոդիկա, որը հակասում է «Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքի 27-րդ հոդվածի պահանջներին, քանի որ նրանք հիմք են ընդունել այն մոտեցումը, թե որ միջոցների հաշվին են կատարվել նյութական ծախսերը, այնինչ օրենքը հստակ սահմանում է հակառակը:

«Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքի 27-րդ հոդվածով սահմանված է, որ ընդհանուր շրջանառության մեջ (ավելացված արժեքի հարկով հարկվող գործարքներ+դրանով չհարկվող գործարքներ) հարկվող գործարքների շրջանառության տեսակարար կշիռը որոշելու համար կատարվում է պարզ թվաբանական գործողություն. օրինակ՝ հաշվետու ժամանակաշրջանում (ամիս) կատարվել են ավելացված արժեքի հարկով հարկվող գործարքներ՝ 50.000.000 ՀՀ դրամի չափով, կատարվել են դրանով չհարկվող գործարքներ՝ 70.000.000 ՀՀ դրամի չափով, կատարված գործարքների ընդհանուր շրջանառությունը կազմում է 120.000.000 ՀՀ դրամ (50.000.000+70.000.000), ընդհանուր գործարքների մեջ հարկվող գործարքների տեսակարար կշիռը որոշելու համար կատարվում է հետևյալ հաշվարկը. $50.000.000:120.000.000 \times 100 = 41,7$, այսինքն՝ ընդհանուր շրջանառության մեջ հարկվող գործարքների շրջանառությունը կազմում է 41,7 տոկոս:

Տվյալ դեպքում Ընկերությունը գործարքներն իրականացնելու համար կատարել է ձեռքբերումներ, որոնց գծով մատակարարներին վճարված ավելացված արժեքի հարկի գումարը կազմում է 10.000.000 ՀՀ դրամ: Նշված ավելացված արժեքի հարկի գումարից հարկվող գործարքներին տեսակարար կշռով բաժին ընկնող ավելացված արժեքի հարկի գումարը կազմում է 4.170.000 ՀՀ դրամ ($10.000.000 \times 41,7\%$): Արդյունքում ձեռքբերումների գծով մատակարարներին վճարված ավելացված արժեքի հարկի գումարից 4.170.000 ՀՀ դրամն էր ենթակա հաշվանցման, իսկ մնացած 5.830.000 ՀՀ դրամ ($10.000.000 - 4.170.000$) ավելացված արժեքի հարկի գումարը հաշվանցման ենթակա չէր: Ընկերության կողմից հաշվետու ժամանակաշրջանի (ամսվա) համար Տեսչություն ներկայացված ավելացված արժեքի հարկի հաշվարկներում ներառված չէին ավելացված արժեքի հարկով չհարկվող գործարքները (սուբսիդիան), ինչի արդյունքում մատակարարներին վճարված ավելացված արժեքի հարկի գումարները հաշվանցվել են ամբողջությամբ: Դրա հետևանքով Ընկերությունը ստուգվող ժամանակաշրջանի վերջում ավելացված արժեքի հարկի գծով ստեղծել է անհիմն գերավճար: Ստուգվող ժամանակաշրջանում հարկվող շրջանառության նկատմամբ հաշվարկվող ավելացված արժեքի հարկի գումարը չի գերազանցել ընդհանուր ձեռքբերումների շրջանառության գծով հաշվարկված ավելացված արժեքի հարկի գումարներին: Դա հետևանք է ընդհանուր ձեռք բերված շրջանառության մեջ չհարկվող գործարքների տեսակարար կշռին բաժին ընկնող ձեռքբերումները չառանձնացնելու և ընդհանուր ձեռքբերման շրջանառության նկատմամբ հաշվարկված ավելացված արժեքի հարկի գումարների ամբողջությամբ հաշվանցման:

3) *Դադարանը չի կիրառել «Շահութահարկի մասին» ՀՀ օրենքի 47.1-րդ հոդվածը, որը պետք է կիրառել:*

Բողոք բերած անձը նշված պնդումը պարզապես անհիմն է և հերքելի փաստարկներով.

Դատարանը վիճարկվող ակտի 1-ին՝ շահութահարկի բաժնի 2-րդ մասը համարել է անհիման, քանի որ այն կազմվել է՝ հիմք ընդունելով նույն ակտի 1-ին՝ շահութահարկի բաժնի 1-ին մասը և 4-րդ՝ ավելացված արժեքի հարկի բաժինը:

Մինչդեռ, Դատարանն անտեսել է, որ «Շահութահարկի մասին» ՀՀ օրենքի 47.1-րդ հոդվածով սահմանված կարգի համաձայն՝ կատարվող շահութահարկի նվազագույն գումարների հաշվարկը բացարձակապես չի առնչվում ավելացված արժեքի հարկի գումարների հաշվանցման առանձնահատկություններին կամ հիմնական միջոցների վրա կատարված կապիտալ և ընթացիկ բնույթի ծախսերի տարբերակմանը:

4) Դատարանը խախտել է ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 6-րդ հոդվածը:

Բողոք բերած անձը նշված պնդումը պարձառաքանել է հետևյալ փաստարկներով.

Դատարանը խախտել է ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 6-րդ հոդվածը, քանի որ գործի փաստերը չի պարզել ի պաշտոնե:

Վերոգրյալի հիման վրա բողոք բերած անձը պահանջել է բեկանել Դատարանի 15.01.2010 թվականի վճիռը և այն փոփոխել. Ընկերության հայցը բավարարված մասով՝ մերժել, իսկ Տեսչության հայցը՝ բավարարել:

2.1. Վճռաբեկ բողոքի պատասխանի փաստարկները

Շահութահարկի գծով պարտավորությունների հաշվարկման հիմքում դրվել է ինչ-որ սևագրության թուղթ, որի ընդունումն արդեն իսկ գործող օրենսդրության կոպիտ խախտում է: Դրանից հետևում է, որ ստուգումն իրականացնող անձինք ընդհանրապես չեն ուսումնասիրել ո՛չ Ընկերության սկզբնական հաշվապահական փաստաթղթերը, ո՛չ շրջանառության տեղեկագրերը և ո՛չ էլ հաշվառման գլխավոր գիրքը:

Ավելացված արժեքի հարկի գծով բողոք բերած անձի բոլոր պատճառաբանությունները և փաստարկները բացարձակապես անտեղի և անընդունելի են: Այդ հարցի շուրջ իրականացված բոլոր երեք փորձաքնությունները եկել են նույն եզրահանգման, որով մեկ անգամ ևս հիմնավորվում է Ընկերության իրականացրած առանձնացված հաշվառման ճշտությունը և օրինականությունը:

3. Վճռաբեկ բողոքի քննության համար նշանակություն ունեցող փաստերը

Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

1) Կոմիտեի նախագահի 13.10.2008 թվականի թիվ 1002597 հանձնարարագրի հիման վրա Ընկերությունում կատարվել է բյուջեի հետ փոխհարաբերությունների և հարկային մարմնի կողմից վերահսկվող օրենսդրության առանձին պահանջների կատարման ճշտության ստուգում (հատոր 1, գ.թ. 26):

2) Նշված ստուգման արդյունքում Տեսչությունը 28.11.2008 թվականին կազմել է թիվ 1002597 ակտը, որով Ընկերությանը շահութահարկի, ավելացված արժեքի հարկի և պարտադիր սոցիալական ապահովության վճարների գծով առաջադրվել է 241.712.800 ՀՀ դրամի պարտավորություն:

Նույն ակտի 1-ին՝ շահութահարկի բաժնի 1-ին մասով արձանագրվել է, որ

Ընկերությունը 2007 թվականի համար Տեսչություն ներկայացրած շահութահարկի հաշվարկում ներառել է 80.000.000 ՀՀ դրամի ծախսեր (շարժակազմի վերանորոգման գծով), որոնք ամբողջովին նվազեցրել է տվյալ տարվա համախառն եկամտից: Հիմք ընդունելով «Շահութահարկի մասին» ՀՀ օրենքի 13-րդ հոդվածի 2-րդ կետի և ՀՀ Կառավարության 11.04.2000 թվականի թիվ 161 որոշման պահանջները, այն է՝ հիմնական միջոցի վրա կատարված կապիտալ բնույթի ծախսերն ավելացվում են այն հիմնական միջոցի հաշվեկշռային արժեքին, որի վրա այդ ծախսերը կատարվել են, և նվազեցվում են օրենքով սահմանված ժամկետներում, Ընկերությունը նշված վերանորոգման ծախսերը, որոնք բաղկացած են նյութերից, աշխատավարձից, էլեկտրաէներգիայից և այլն, չպետք է նվազեցնեն 2007 թվականի համախառն եկամտից: Հաշվի առնելով նույն ակտի 4-րդ՝ ավելացված արժեքի հարկի բաժնի 1-ին մասը՝ 2007 թվականին չհաշվարկված ավելացված արժեքի հարկի գումարները, որոնք, «Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 2-րդ կետի համաձայն, պետք է միացվեն նույն տարվա ծախսերին, Ընկերությունը 2007 թվականի համար ավել ծախս է ներկայացրել (ավել վնաս է հաշվարկել) 35.974.900 ՀՀ դրամի չափով (80.000.000-44.025.200 ավելացված արժեքի հարկի գումար), ամորտիզացիան ներառված է:

Նույն բաժնի 2-րդ մասով արձանագրվել է, որ Ընկերությունը, «Շահութահարկի մասին» ՀՀ օրենքի 47.1-րդ հոդվածի 4-րդ մասի և ՀՀ Կառավարության 14.11.2004 թվականի թիվ 549-Ն որոշման համաձայն, հաշվարկել և բյուջե է վճարել նվազագույն շահութահարկի գումարներ, որոնց հաշվարկն արտացոլված է Ընկերության կողմից 2007 թվականի համար Տեսչություն ներկայացված շահութահարկի հաշվարկի հաշվետու տարվա՝ ըստ ամիսների հաշվարկված նվազագույն շահութահարկի գումարների աղյուսակում (աղյուսակ 1): Նույն ակտի 4-րդ՝ ավելացված արժեքի հարկի բաժնի 1-ին մասին համապատասխան հաշվարկված և վճարված նվազագույն շահութահարկի գումարները ենթակա են վերահաշվարկման: Նույն մասում կատարվել է վերահաշվարկ: Վերահաշվարկը կատարվել է՝ հիմնվելով «Շահութահարկի մասին» ՀՀ օրենքի 47.1-րդ հոդվածի 4-րդ մասի և ՀՀ Կառավարության 14.11.2004 թվականի թիվ 549-Ն որոշման դրույթների վրա, ինչպես նաև հաշվի է առնված Ընկերության կողմից 2008 թվականի ընթացքում հաշվարկված և վճարված նվազագույն շահութահարկի գումարները:

Նույն ակտի 4-րդ՝ ավելացված արժեքի հարկի բաժնի 1-ին մասով արձանագրվել է, որ Ընկերությունը 2007 թվականին պետական բյուջեից ստացել է սուբսիդիա՝ 619.987.000 ՀՀ դրամի չափով, իսկ 2008 թվականի հունվարից մինչև հուլիսն ընկած ժամանակահատվածի համար՝ 1.342.898.000 ՀՀ դրամի չափով: Նշված սուբսիդիայի գումարներն Ընկերության կողմից 2007 թվականի համար ձանաչվել են որպես եկամուտ և ներառվել 2007 թվականի շահութահարկի հաշվարկում համախառն եկամտի տողում: Նշված ժամանակահատվածում ստացված սուբսիդիաների գումարները «Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքի 7-րդ հոդվածի 9-րդ կետին համապատասխան ավելացված արժեքի հարկով չեն հարկվում (հարկման օբյեկտ չեն համարվում), սակայն Ընկերության կողմից 01.01.2007 թվականից 30.06.2008 թվականի համար Տեսչություն ներկայացված ավելացված արժեքի հարկի հաշվարկներում սուբսիդիայի գումարներն ավելացված արժեքի հարկի հաշվարկի լրացման կարգին համապատասխան չեն ներառվել այդ հաշվարկի 8-րդ տողում (ավելացված արժեքի հարկից ազատված, հարկման օբյեկտ չհամարվող), որի

արդյունքում խախտվել են «Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքի 27-րդ հոդվածի պահանջները, որի համաձայն՝ ավելացված արժեքի հարկ վճարող անձինք, եթե միաժամանակ իրականացնում են ավելացված արժեքի հարկով հարկվող և ավելացված արժեքի հարկով չհարկվող գործարքներ (ներառյալ՝ ավելացված արժեքի հարկից ազատված, հարկման օբյեկտ չհամարվող, հաստատագրված վճարներով, պարզեցված հարկով հարկվող գործարքներ, ինչպես նաև այնպիսի գործարքներ, որոնց վրա չի տարածվում նույն օրենքի գործողությունը), ապա նրանք կարող են հաշվանցել (պակասեցնել պետական բյուջե վճարման ենթակա ավելացված արժեքի հարկի գումարներից) միայն հարկվող գործարքների (գործառնությունների) իրականացման համար ձեռք բերված ապրանքներին և ծառայություններին վերաբերող (այդ թվում՝ մաքսային մարմինների կողմից գանձված) ավելացված արժեքի հարկի գումարները: Հաշվի առնելով, որ Ընկերության կողմից չի վարվել առանձնացված հաշվառում չհարկվող և հարկվող գործարքների մասով, և կիրառելով տեսակարար կշռով ավելացված արժեքի հարկի հաշվարկման սկզբունքը՝ տվյալ ժամանակահատվածում ավել հաշվարկված (պակասեցված) ավելացված արժեքի հարկի գումարները կազմել են 129.400.000 ՀՀ դրամ:

3) ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայի «Փորձաքննությունների ազգային բյուրո» ՊՈԱԿ-ի 05.08.2009 թվականի փորձագետի թիվ 09-1022 եզրակացության «Հետևություններ» բաժնի 3-րդ կետի համաձայն՝ պետական բյուջեից ստացված սուբսիդիայից 78.628.000 ՀՀ դրամն ուղղվել է մատակարարներից նյութերի ձեռք բերման և ստացված ծառայությունների արժեքի վճարմանը, և «մատակարարների կողմից նյութերի մատակարարման և ծառայությունների մատուցման համար Ընկերության անվամբ դուրս են գրվել հարկային հաշիվներ: Սա հաշվապահական և հարկային հաշվառման տեսանկյունից նշանակում է, որ 78.628.000 ՀՀ դրամ գումարը մասնակցություն է ունեցել Ընկերությունում ավելացված արժեքի հարկի դեբետային շրջանառության առաջացմանը, հետևաբար և մասնակցություն է ունեցել 15.725.600 (78.628.000x20%) ՀՀ դրամ գումարի չափով ավելացված արժեքի հարկի դեբետի առաջացմանը: Հետևաբար, նման պայմաններում 17.10.2008 թվականի դրությամբ ավելացված արժեքի հարկի գծով Ընկերության ունեցած 103.452.480 ՀՀ դրամ գումարի գերավճարը ենթակա է նվազեցման 15.725.600 ՀՀ դրամ գումարի չափով: Ծարադրվածից երևում է, որ Ընկերությունում վերջնական արդյունքում ավելացված արժեքի հարկի գծով տուգանքի ձևով առաջանում է 9.435.360 (15.725.600x(10%+50%)) ՀՀ դրամ գումարի լրացուցիչ հարկային պարտավորություն»:

4. Վճարելի դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումները

Քննելով վճարելի բողոքը նշված հիմքերի սահմաններում՝ Վճարելի դատարանը գտնում է, որ՝

1) Վճարելի բողոքն առաջին հիմքով հիմնավոր է հեղկյալ պայրճառաբանությամբ.

«Շահութահարկի մասին» ՀՀ օրենքի 12-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ հարկվող շահույթը որոշելիս համախառն եկամուտը նվազեցվում է գործունեության մեջ օգտագործվող և մաշվածքի ենթակա հիմնական միջոցների և ոչ նյութական ակտիվների ամորտիզացիոն մասհանումների գումարի չափով՝ նույն հոդվածի 2-րդ, 3-րդ կամ 4-րդ կետերով սահմանված ժամկետներում:

Նույն հոդվածի 5-րդ կետի համաձայն՝ ամորտիզացիոն մասհանումների

տարեկան մեծությունը հաշվարկվում է որպես հիմնական միջոցի սկզբնական արժեքի, իսկ օրենքով սահմանված կարգով վերագնահատման իրականացման դեպքում՝ վերագնահատված արժեքի և նույն հոդվածի 2-րդ, 3-րդ կամ 4-րդ կետերում հիմնական միջոցի տվյալ խմբի կամ ոչ նյութական ակտիվի համար սահմանված ամորտիզացիոն ժամկետի հարաբերություն:

Վիճելի իրավահարաբերության պահին գործող խմբագրությամբ «Շահութահարկի մասին» ՀՀ օրենքի 13-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ հարկվող շահույթը որոշելիս համախառն եկամուտը նվազեցվում է՝

ա) հիմնական միջոցների վրա կատարված ընթացիկ ծախսերի չափով:

բ) վարձակալի մոտ՝ վարձակալված հիմնական միջոցի վրա կատարված ընթացիկ ծախսերի չափով:

Վիճելի իրավահարաբերության պահին գործող խմբագրությամբ նույն հոդվածի 2-րդ կետի համաձայն՝ հիմնական միջոցի վրա կատարված կապիտալ բնույթի ծախսերն ավելացվում են այն հիմնական միջոցի հաշվեկշռային արժեքին, որի վրա այդ ծախսերը կատարվել են, և

1) եթե այդ ծախսերը չեն գերազանցում հիմնական միջոցի՝ ընթացիկ տարվա հունվարի 1-ի դրությամբ հաշվեկշռային արժեքը, ապա ամորտիզացվում են նույն օրենքի 12 հոդվածով սահմանված կարգով,

2) եթե այդ ծախսերը գերազանցում են հիմնական միջոցի՝ ընթացիկ տարվա հունվարի 1-ի դրությամբ հաշվեկշռային արժեքը, ապա ամորտիզացվում են նույն օրենքի 12 հոդվածով սահմանված կարգով, բայց ոչ պակաս, քան հինգ տարվա ընթացքում: Եթե հիմնական միջոցի ամորտիզացիոն նվազագույն ժամկետը սահմանված է հինգ տարուց պակաս, ապա այդ հիմնական միջոցի վրա կատարված կապիտալ բնույթի ծախսերն ամորտիզացվում են այդ հիմնական միջոցի համար սահմանված ամորտիզացիոն նվազագույն ժամկետում:

Նույն հոդվածի 4-րդ կետի համաձայն՝ նույն օրենքի իմաստով՝ հիմնական միջոցների (այդ թվում՝ վարձակալված) վրա կատարված ծախսերի տարբերակումն ըստ ընթացիկ և կապիտալ ծախսերի կատարվում է Հայաստանի Հանրապետության Կառավարության սահմանած հայտանիշների և (կամ) չափերի հիման վրա:

Վիճելի իրավահարաբերության պահին գործող խմբագրությամբ ՀՀ Կառավարության 11.04.2000 թվականի «Հիմնական միջոցների (այդ թվում՝ վարձակալված) վրա կատարված ծախսերն ըստ ընթացիկ և կապիտալ բնույթի տարբերակելու հայտանիշները և չափերը սահմանելու մասին» թիվ 161 որոշման համաձայն՝ «Շահութահարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 13 հոդվածի 4-րդ կետին համապատասխան՝ Հայաստանի Հանրապետության Կառավարությունը որոշում է.

Սահմանել, որ շահութահարկը որոշելիս՝

ա) հիմնական միջոցների վրա կատարված ծախսերը համարվում են կապիտալ ծախսեր, եթե դրանց արդյունքում վերակառուցման, վերազինման, արդիականացման, հիմնանորոգման կամ ընդլայնման միջոցով վերափոխվում է հիմնական միջոցների վիճակը և (կամ) տվյալ հիմնական միջոցի վրա հաշվետու տարվա ընթացքում կատարված ծախսերի մեծությունը գերազանցում է այդ հիմնական միջոցի սկզբնական արժեքի (օրենքով սահմանված կարգով իրականացված վերագնահատման դեպքում՝ վերագնահատված արժեքի) 10 տոկոսը:

բ) հիմնական միջոցների վրա կատարված ծախսերը համարվում են ընթացիկ

ծախսեր, եթե դրանք նույն որոշման «ա» կետի համաձայն չեն համարվում կապիտալ ծախսեր:

«Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 45-րդ հոդվածի 10-րդ մասի 2-րդ պարբերության համաձայն՝ այն պայմանների թվարկման ժամանակ, երբ բոլոր թվարկված պայմաններից բավական է միայն մեկի առկայությունը, չի կարող կիրառվել «և» կամ «ու» շաղկապը, կամ դրանք չեն կարող բաժանվել ստորակետով կամ կետադրական այլ նշանով: Այս դեպքում պետք է կիրառվի «կամ» շաղկապը:

Նշված նորմերի վերլուծությունից հետևում է, որ հարկվող շահույթը որոշելիս համախառն եկամուտը նվազեցվում է հիմնական միջոցների վրա կատարված ընթացիկ ծախսերի չափով, իսկ հիմնական միջոցի վրա կատարված կապիտալ բնույթի ծախսերն ավելացվում են այն հիմնական միջոցի հաշվեկշռային արժեքին, որի վրա կատարվել են, և ամորտիզացվում են «Շահութահարկի մասին» ՀՀ օրենքի 12-րդ հոդվածով սահմանված կարգով և ժամկետներում: Ամորտիզացիոն մասհանումների տարեկան մեծությունը հաշվարկվում է որպես հիմնական միջոցի սկզբնական արժեքի և տվյալ խմբի կամ ոչ նյութական ակտիվի համար սահմանված ամորտիզացիոն ժամկետի հարաբերություն: Հիմնական միջոցների վրա կատարված ընթացիկ ծախսերի չափով համախառն եկամուտը նվազեցնելու կամ կապիտալ բնույթի ծախսերը հիմնական միջոցի հաշվեկշռային արժեքին ավելացնելու կանոնակարգումներն իրականացնելու տեսանկյունից էական նշանակություն ունի հիմնական միջոցների վրա կատարված ծախսերն ընթացիկ կամ կապիտալ բնույթի ծախսերի տարանջատելու պահանջը: Մասնավորապես՝ հիմնական միջոցների վրա կատարված ծախսերը համարվում են կապիտալ ծախսեր, եթե դրանց արդյունքում վերակառուցման, վերազինման, արդիականացման, հիմնանորոգման կամ ընդլայնման միջոցով վերափոխվում է հիմնական միջոցների վիճակը և (կամ) հիմնական միջոցի վրա հաշվետու տարվա ընթացքում կատարված ծախսերի մեծությունը գերազանցում է այդ հիմնական միջոցի սկզբնական արժեքի 10 տոկոսը, իսկ հիմնական միջոցների վրա կատարված ծախսերը համարվում են ընթացիկ ծախսեր, եթե դրանք չեն համարվում կապիտալ ծախսեր: Այսինքն՝ հիմնական միջոցների վրա կատարված ծախսերի արդյունքում վերակառուցման, վերազինման, արդիականացման, հիմնանորոգման կամ ընդլայնման միջոցով հիմնական միջոցների վիճակը վերափոխելու պայմանից բացի հիմնական միջոցի վրա հաշվետու տարվա ընթացքում կատարված ծախսերի մեծությունը հիմնական միջոցի սկզբնական արժեքի 10 տոկոսը գերազանցելու պայմանի առկայության դեպքում այդպիսի ծախսերը նույնպես համարվում են կապիտալ ծախսեր, ինչը հաստատվում է նաև կապիտալ ծախսերը բնութագրող սահմանման մեջ «կամ» շաղկապի առկայությամբ:

Սույն գործով Դատարանը, վիճարկվող ակտի 1-ին՝ շահութահարկի բաժնի 1-ին մասով արձանագրված խախտման վերաբերյալ վերլուծելով Ընկերության հավաքակալյան (դեպո) մասնաձյուղում ըստ ստորաբաժանումների, 2007 թվականի ընթացքում կատարված ծախսերը և այդ ստորաբաժանումների իրականացրած գործառնությունները, միայն վագոնների տանիքների նորոգման աշխատանքների իրականացման տեղամասում կատարված 3.308.763 ՀՀ դրամի ծախսն է դասել ՀՀ Կառավարության 11.04.2000 թվականի թիվ 161 որոշմամբ սահմանված հաշվետու տարում կատարված այն ծախսերին, որոնք ենթակա են հիմնական միջոցների սկզբնական արժեքի հետ համադրման՝ գերազանցող 10 տոկոսի չափը որոշելու համար:

Մինչդեռ, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Դատարանը կատարված ծախսերի՝ կապիտալ կամ ընթացիկ բնույթն Ընկերության ստորաբաժանումների իրականացրած գործառնություններով պայմանավորելու մասով սխալ է մեկնաբանել ՀՀ Կառավարության 11.04.2000 թվականի թիվ 161 որոշումը, քանի որ անկախ վերակառուցման, վերազինման, արդիականացման, հիմնանորոգման կամ ընդլայնման միջոցով հիմնական միջոցների վիճակը վերափոխելու հանգամանքից հիմնական միջոցի վրա հաշվետու տարվա ընթացքում կատարված ծախսերի մեծությունը հիմնական միջոցի սկզբնական արժեքի 10 տոկոսը գերազանցելու դեպքում կատարված ծախսերը նույնպես համարվում են կապիտալ ծախսեր, որոնք «Շահութահարկի մասին» ՀՀ օրենքի 13-րդ հոդվածի 2-րդ կետին համապատասխան պետք է ավելացվեն այն հիմնական միջոցի հաշվեկշռային արժեքին, որի վրա կատարվել են և ամորտիզացվեն նույն օրենքի 12-րդ հոդվածով սահմանված կարգով:

Հետևաբար, հաշվի առնելով այն հանգամանքը, որ վիճարկվող ակտի 1-ին՝ շահութահարկի բաժնի 1-ին մասի փաստերի համաձայն՝ հիմնական միջոցների վրա հաշվետու տարվա ընթացքում կատարված ծախսերի մեծությունը գերազանցում է հիմնական միջոցների սկզբնական արժեքի 10 տոկոսը, ապա դրա իրավաչափության ստուգման տեսանկյունից առաջին հերթին անհրաժեշտ է պարզել ստուգման առարկա հանդիսացող Ընկերության հիմնական միջոցների սկզբնական արժեքի և 2007 թվականին վերջինիս կողմից դրանց վրա կատարված ընդհանուր ծախսերի չափի հարաբերակցությունը, ինչի արդյունքում միայն հնարավոր կլինի պարզել ՀՀ Կառավարության 11.04.2000 թվականի թիվ 161 որոշմամբ սահմանված հաշվետու տարում կատարված ծախսերի՝ հիմնական միջոցների սկզբնական արժեքի 10 տոկոսը գերազանցելու փաստը: Միաժամանակ, Ընկերության ստորաբաժանումների իրականացրած գործառնությունն անհրաժեշտ է բացահայտել հիմնական միջոցների հետ առնչության առումով: Այսինքն՝ արդյոք այդ ստորաբաժանումներում կատարված ծախսերը կարող են դիտվել որպես հիմնական միջոցների վրա կատարված ծախսեր: Նշվածից հետևում է, որ միայն նշված փաստի չհաստատման դեպքում է անհրաժեշտ անդրադառնալ Ընկերության ստորաբաժանումներում կատարված ծախսերի արդյունքում վերակառուցման, վերազինման, արդիականացման, հիմնանորոգման կամ ընդլայնման միջոցով հիմնական միջոցների վիճակի վերափոխման հանգամանքին:

2) Վճռաբեկ բողոքը երկրորդ հիմքով հիմնավոր է հեղուկալ պարձատարանությամբ.

«Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքի 7-րդ հոդվածի 9-րդ կետի համաձայն՝ ԱԱՀ-ով չեն հարկվում (հարկման օբյեկտ չեն համարվում) տիրագործի, ժառանգության իրավունքով պետությանն անցած արժեքների, գանձերի իրացման շրջանառությունը, ինչպես նաև սահմանված կարգով պետության կամ լիազորված մարմնի կողմից հաստատված սակագների կիրառման հետ կապված՝ **պետական բյուջեից արվող սուբսիդիաները**, սուբվենցիաները, դրամաշնորհները:

«Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքի 27-րդ հոդվածի 1-ին պարբերության համաձայն՝ եթե նույն օրենքի համաձայն ԱԱՀ վճարող անձինք միաժամանակ իրականացնում են ԱԱՀ-ով հարկվող և ԱԱՀ-ով չհարկվող գործարքներ (ներառյալ՝ ԱԱՀ-ից ազատված, հարկման օբյեկտ չհամարվող, հաստատագրված վճարներով, պարզեցված հարկով հարկվող գործարքներ, ինչպես նաև այնպիսի

գործարքներ, որոնց վրա չի տարածվում նույն օրենքի գործողությունը), ապա նրանք կարող են հաշվանցել (պակասեցնել պետական բյուջե վճարման ենթակա ԱԱՀ-ի գումարից) միայն հարկվող գործարքների (գործառնությունների) իրականացման համար ձեռք բերված ապրանքներին և ծառայություններին վերաբերող (այդ թվում՝ մաքսային մարմինների կողմից գանձված) ԱԱՀ-ի գումարները: Այդ նպատակով ԱԱՀ վճարողները պարտավոր են վարել հարկվող և ԱԱՀ-ից ազատված (ինչպես նաև հարկման օբյեկտ չհանդիսացող) գործառնությունների, ինչպես նաև դրանց իրականացման համար ձեռք բերվող ապրանքների ու ծառայությունների առանձնացված հաշվառում: Եթե նման առանձնացված հաշվառման իրականացումն անհնար է, ապա յուրաքանչյուր հաշվետու ժամանակաշրջանում հաշվանցման (պակասեցման) ենթակա ԱԱՀ-ի գումարը հաշվարկվում է՝ ելնելով նույն հաշվետու ժամանակաշրջանում իրականացված բոլոր գործարքների (գործառնությունների) ընդհանուր շրջանառության մեջ (առանց ԱԱՀ-ով հարկվող գործարքների համար հաշվարկված ԱԱՀ-ի գումարների) հարկվող գործարքների (գործառնությունների, այդ թվում՝ գոյական դրույքաչափով հարկվող) շրջանառության (առանց ԱԱՀ-ով հարկվող գործարքների համար հաշվարկված ԱԱՀ-ի գումարների) տեսակարար կշիռի:

ՀՀ Կառավարության 24.12.2003 թվականի «Հայաստանի Հանրապետության պետական բյուջեից իրավաբանական անձանց սուբսիդիաների և դրամաշնորհների հատկացման կարգը հաստատելու մասին» թիվ 1937-Ն որոշման 1-ին կետով հաստատված՝ «Հայաստանի Հանրապետության պետական բյուջեից իրավաբանական անձանց սուբսիդիաների և դրամաշնորհների հատկացման» կարգի 2-րդ կետի համաձայն՝ կազմակերպությանը սուբսիդիա կամ դրամաշնորհ տրամադրվում է նույն կարգի համաձայն կնքված քաղաքացիաիրավական պայմանագրերի հիման վրա:

Նույն կարգի 3-րդ կետի համաձայն՝ նույն կարգի իմաստով սուբսիդիան՝ պետության հանձնարարությամբ և որոշած գնով կազմակերպության կողմից որպես նվազագույն շահավետ գնից ցածր գնով ապրանքների արտադրության, արտահանման, ներմուծման, աշխատանքների կատարման և ծառայությունների մատուցման արդյունքում այդ կազմակերպության կրած վնասի կամ դրա մի մասի փոխհատուցումն է: Սուբսիդիան ուղղված չէ կազմակերպության համար կապիտալ ակտիվների ձեռքբերմանն ու հիմնական ֆոնդերի կամ դրամագլխի ավելացմանը և կազմակերպության ընթացիկ գործունեության արդյունքում գոյացող եկամուտների հավելում է:

Նույն կարգի 7-րդ կետի համաձայն՝ կազմակերպությանը սուբսիդիա հատկացվում է տվյալ ոլորտը կարգավորող պետական մարմնի և կազմակերպության միջև կնքված սուբսիդիայի տրամադրման մասին պայմանագրի հիման վրա:

Նշված նորմերի վերլուծությունից հետևում է, որ սուբսիդիան պետական մարմնի և կազմակերպության միջև դրա տրամադրման վերաբերյալ կնքված քաղաքացիաիրավական պայմանագրի հիման վրա պետության հանձնարարությամբ և որոշած գնով կազմակերպության կողմից որպես նվազագույն շահավետ գնից ցածր գնով ապրանքների արտադրության, արտահանման, ներմուծման, աշխատանքների կատարման և ծառայությունների մատուցման արդյունքում վերջինիս կրած վնասի կամ դրա մի մասի փոխհատուցումն է, որը նրա ընթացիկ գործունեության արդյունքում գոյացող եկամուտների հավելում է և ավելացված արժեքի հարկով չի հարկվում: Այն դեպքում, երբ ավելացված արժեքի հարկ վճարող անձը միաժամանակ

իրականացնում է ավելացված արժեքի հարկով հարկվող և չհարկվող գործարքներ, ապա վերջինս կարող է պետական բյուջե վճարման ենթակա ավելացված արժեքի հարկի գումարից հաշվանցել միայն հարկվող գործարքների իրականացման համար ձեռք բերված ապրանքներին և ծառայություններին վերաբերող ավելացված արժեքի հարկի գումարները, որի իրականացման նպատակով նա պարտավոր է վարել հարկվող և ավելացված արժեքի հարկից ազատված գործառնությունների, ինչպես նաև դրանց իրականացման համար ձեռքբերվող ապրանքների ու ծառայությունների առանձնացված հաշվառում: Միաժամանակ, եթե նման առանձնացված հաշվառման իրականացումն անհնար է, ապա յուրաքանչյուր հաշվետու ժամանակաշրջանում հաշվանցման ենթակա ավելացված արժեքի հարկի գումարը հաշվարկվում է՝ ելնելով նույն ժամանակաշրջանում իրականացված բոլոր գործարքների ընդհանուր շրջանառության մեջ հարկվող գործարքների շրջանառության տեսակարար կշռից:

Սույն գործով Դատարանը վիճարկվող ակտի 4-րդ՝ ավելացված արժեքի հարկի բաժնի 1-ին մասով արձանագրված խախտման վերաբերյալ պատճառաբանել է, որ «Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքի 7-րդ հոդվածի 9-րդ կետով սահմանված հարկազատումը վերաբերում է դրանում թվարկված այն հարկման օբյեկտներին, որոնցով արտոնության չտրամադրման պարագայում հարկ վճարող կարող է հանդես գալ պետությունը: Հետևաբար, պետական բյուջեից տրվող սուբսիդիայի գործարքներով ավելացված արժեքի հարկի արտոնությունը վերաբերում է տրամադրողին, այլ ոչ թե ստացողին, և ավելացված արժեքի հարկից ազատված գործառնություն իրականացնողը սուբսիդիա տրամադրող պետական մարմինն է, այլ ոչ թե ստացողը: Նման պայմաններում «Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքի 27-րդ հոդվածը որոշակի ձեռքբերումների գծով ավելացված արժեքի հարկի հաշվանցումներ չիրականացնելու և սուբսիդիայի ծախսման առանձնացված հաշվառում վարելու պահանջներով ընդհանրապես կիրառելի չէ սուբսիդիա ստացողի նկատմամբ, քանի որ վերջինս չի հանդիսանում ավելացված արժեքի հարկով չհարկվող գործարքներ իրականացնող, այլ սուբսիդիայի պարագայում այդպիսի գործարք իրականացնող սուբյեկտ է հանդիսանում այն տրամադրող պետական մարմինը: Տվյալ դեպքում Ընկերությունը 2007 թվականի հաշվետու տարում և 2008 թվականի հունվարից մինչև հուլիսն ընկած ժամանակահատվածում պետական բյուջեից ստացած սուբսիդիան՝ 1.380.767.000 ՀՀ դրամ գումարով, չի ներառել ստուգվող ժամանակաշրջանի համար կազմված և Տեսչություն ներկայացված ավելացված արժեքի հարկի հաշվարկների 8-րդ տողում որպես ավելացված արժեքի հարկից ազատված գործարքներից առաջացած շրջանառություն, ինչը հիմնավոր է, քանի որ սուբսիդիայի ստացումն Ընկերության համար չի համարվում հարկման օբյեկտ չհամարվող գործարքի իրականացում կամ դրանից առաջացած շրջանառություն:

Միաժամանակ, Դատարանը եզրահանգել է, որ վիճարկվող ակտի 4-րդ կետը, բացառությամբ հաշվարկված 15.725.600 ՀՀ դրամ ավելացված արժեքի հարկի գումարի, դրա վրա հաշվարկված 9.435.360 ՀՀ դրամ տուգանքի և 15.000 ՀՀ դրամ տուգանքի գումարի մասերի, անհիմն է, կազմվել է օրենքի սխալ կիրառման և մեկնաբանման արդյունքում:

«Փորձաքննությունների ազգային բյուրո» ՊՈԱԿ-ի 05.08.2009 թվականի փորձագետի թիվ 09-1022 եզրակացության համաձայն՝ 78.628.000 ՀՀ դրամ գումարը մասնակցություն է ունեցել Ընկերությունում ավելացված արժեքի հարկի դեբետային

շրջանառության առաջացմանը, հետևաբար և մասնակցություն է ունեցել 15.725.600 (78.628.000x20%) ՀՀ դրամ գումարի չափով ավելացված արժեքի հարկի դեբետի առաջացմանը: Հետևաբար, նման պայմաններում 17.10.2008 թվականի դրությամբ ավելացված արժեքի հարկի գծով Ընկերության ունեցած 103.452.480 ՀՀ դրամ գումարի գերավճարը ենթակա է նվազեցման 15.725.600 ՀՀ դրամ գումարի չափով: Շարադրվածից երևում է, որ Ընկերությունում վերջնական արդյունքում ավելացված արժեքի հարկի գծով տուգանքի ձևով առաջանում է 9.435.360 (15.725.600x(10%+50%)) ՀՀ դրամ գումարի լրացուցիչ հարկային պարտավորություն:

Դատարանը, վճռի հիմքում դնելով վերոնշյալ փորձագիտական եզրակացությունը, որով արձանագրված է, որ 78.628.000 ՀՀ դրամ սուբսիդիայի գումարը մասնակցություն է ունեցել Ընկերությունում ավելացված արժեքի հարկի դեբետային շրջանառության առաջացմանը 15.725.600 ՀՀ դրամի չափով, հետևաբար Ընկերության ունեցած գերավճարը ենթակա է նվազեցման այդ գումարի չափով, այնուամենայնիվ, հաստատված է համարել, որ հիմնավոր է Ընկերության կողմից պետական բյուջեից ստացված սուբսիդիան ստուգվող ժամանակաշրջանի համար կազմված և Տեսչություն ներկայացված ավելացված արժեքի հարկի հաշվարկների 8-րդ տողում չներառելը:

Վերոգրյալից հետևում է, որ Դատարանի եզրահանգումներում առկա են հակասական դատողություններ այն տեսանկյունից, որ մի դեպքում Դատարանը գտնում է, որ որոշակի ձեռքբերումների գծով ավելացված արժեքի հարկի հաշվանցումներ չիրականացնելու և սուբսիդիայի ծախսման առանձնացված հաշվառում վարելու պահանջներն ընդհանրապես կիրառելի չեն սուբսիդիա ստացողի նկատմամբ, քանի որ վերջինս ավելացված արժեքի հարկով չհարկվող գործարքներ իրականացնող չէ, այլ սուբսիդիայի պարագայում այդպիսի գործարք իրականացնող սուբյեկտ է այն տրամադրող պետական մարմինը, այնուհանդերձ ընդունել է նաև փորձագետի կողմից առաջ քաշված եզրահանգումը, որով հարկային պարտավորության հաշվարկման հիմքում դրվել է այլ մոտեցում, քան սահմանել է Դատարանն իր դատական ակտում:

Վճռաբեկ դատարանն իր որոշումներում անդրադարձել է դատական ակտերի հիմնավորվածության հարցին (*լրե'ս' Անժելա Դազարյանը, Արիիկ և Արմինե Գասպարյաններն ընդդեմ Շուշանիկ Սարգսյանի, Ոսկեհայր, Նունե, Հրանուշ Գասպարյանների՝ ժառանգական գույքը ժառանգների միջև բաժանելու պահանջի մասին* ՀՀ Վճռաբեկ դատարանի 25.12.2007 թվականի որոշումը, քաղաքացիական գործ թիվ 3-1843(ՎԴ)): Ուստի, սույն որոշմամբ կրկին չի անդրադառնում տվյալ հարցին:

Հիմք ընդունելով վերոգրյալը՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ Դատարանի վճիռը նշված մասով հիմնավորված չէ:

3) *Վճռաբեկ բողոքը երրորդ հիմքով հիմնավոր է հեղկյալ պարզաառարանությամբ.*

«Շահութահարկի մասին» ՀՀ օրենքի 47.1-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ նույն օրենքի 47 հոդվածով սահմանված կարգով որոշված շահութահարկի կանխավճարի գումարը յուրաքանչյուր ամսվա ընթացքում նույն հոդվածի 3-րդ մասով սահմանված մեծության 1 տոկոսից պակաս լինելու դեպքում հարկատուն պարտավոր է կատարել նվազագույն շահութահարկի ամսական վճարումներ:

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ նվազագույն շահութահարկը վճարվում է նույն հոդվածի երրորդ մասով սահմանված կարգով հաշվարկված մեծությունից 1 տոկոս դրույքաչափով:

Վիճելի իրավահարաբերության պահին գործող խմբագրությամբ նույն հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ նվազագույն շահութահարկը հաշվարկվում է նախորդ ամսվա ընթացքում ապրանքների (բացառությամբ հիմնական միջոցների, ինչպես նաև արժեթղթերի և ֆոնդային ապրանքների), արտադրանքի իրացումից և ծառայությունների մատուցումից հաշվեգրման եղանակով հաշվարկված եկամտի (որը չի ներառում նշված եկամուտների ստացման համար վճարված անուղղակի հարկերը) և նույն ժամանակահատվածում այդ եկամտի 50 տոկոսը չգերազանցող մասով՝ հիմնական միջոցների համար հաշվարկված ամորտիզացիոն մասսահանումների տարբերության նկատմամբ:

Նշված նորմերի վերլուծությունից հետևում է, որ հարկատուի համար նվազագույն շահութահարկի ամսական վճարումներ կատարելու պարտավորությունն առաջանում է շահութահարկի կանխավճարի գումարը յուրաքանչյուր ամսվա ընթացքում սահմանված մեծության 1 տոկոսից պակաս լինելու դեպքում, որը հաշվարկվում է նախորդ ամսվա ընթացքում ապրանքների, արտադրանքի իրացումից և ծառայությունների մատուցումից հաշվեգրման եղանակով հաշվարկված եկամտի և նույն ժամանակահատվածում այդ եկամտի 50 տոկոսը չգերազանցող մասով՝ հիմնական միջոցների համար հաշվարկված ամորտիզացիոն մասսահանումների տարբերության նկատմամբ՝ 1 տոկոս դրույքաչափով:

Սույն գործով Դատարանը, վիճարկվող ակտի 1-ին՝ շահութահարկի բաժնի 2-րդ մասով արձանագրված խախտման վերաբերյալ պատճառաբանել է, որ այն կազմվել է՝ հիմք ընդունելով նույն ակտի 1-ին՝ շահութահարկի բաժնի 1-ին մասում և 4-րդ՝ ավելացված արժեքի հարկի բաժնում արձանագրված խախտումները, և հաշվի առնելով, որ դրանք անհիմն են, անհիմն է համարել նաև այդ խախտումը:

Մինչդեռ, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Դատարանի նշված պատճառաբանությունն անհիմն է, քանի որ նվազագույն շահութահարկի ամսական վճարումներ կատարելու պարտավորությունն իրենից ներկայացնում է ինքնուրույն պարտավորություն և վիճարկվող ակտի 1-ին՝ շահութահարկի բաժնի 1-ին մասի և 4-րդ՝ ավելացված արժեքի հարկի բաժնի հետ առնչվում է միայն դրա չափի հաշվարկման առումով:

Մասնավորապես՝ նվազագույն շահութահարկի ամսական վճարումներ կատարելու պարտավորությունն առաջանում է այն դեպքում, երբ շահութահարկի կանխավճարի գումարը լինում է յուրաքանչյուր ամսվա ընթացքում սահմանված մեծության 1 տոկոսից պակաս, որի հաշվարկման համար հիմք է ընդունվում նախորդ ամսվա ընթացքում ապրանքների, արտադրանքի իրացումից և ծառայությունների մատուցումից հաշվեգրման եղանակով հաշվարկված եկամտի և նույն ժամանակահատվածում այդ եկամտի 50 տոկոսը չգերազանցող մասով՝ հիմնական միջոցների համար հաշվարկված ամորտիզացիոն մասսահանումների տարբերությունը:

Հետևաբար, Դատարանի այն պատճառաբանությունը, որ վիճարկվող ակտի 1-ին՝ շահութահարկի բաժնի 1-ին մասում և 4-րդ՝ ավելացված արժեքի հարկի բաժնում արձանագրված խախտումների անհիմն լինելու հետևանքով անհիմն է նաև նույն ակտի 1-ին՝ շահութահարկի բաժնի 2-րդ մասով արձանագրված խախտումը, իրավաչափ չէ:

4) *Վճռաբեկ բողոքը չորրորդ հիմքով հիմնավոր է հետևյալ պատճառաբանությամբ.*

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 6-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ գործի փաստերը վարչական դատարանը պարզում է ի պաշտոնէ:

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ դատարանը մատնանշում է այն փաստերը, որոնք, իր կարծիքով, էական են վեճի լուծման համար, և անհրաժեշտության դեպքում կողմերից պահանջում է ներկայացնել այդ փաստերի ապացույցներ:

Նույն հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ դատարանը վեճի լուծման համար անհրաժեշտ ներքին համոզմունք ձևավորելու նպատակով իրավասու է, չսահմանափակվելով վարչական դատավարության մասնակիցների միջնորդություններով, նրանց ներկայացրած ապացույցներով և գործում առկա այլ նյութերով, ձեռնարկելու ողջամիտ միջոցներ, մասնավորապես, պահանջելու վարչական վարույթի նյութեր, տեղեկություններ, ապացույցներ, լրացուցիչ բացատրություններ, հանձնարարելու կողմերին անձամբ ներկայանալ դատական նիստի:

Վճռաբեկ դատարանը նախկինում կայացրած որոշումներով արդեն իսկ արտահայտել է իրավական դիրքորոշում այն մասին, որ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 6-րդ հոդվածի 2-րդ և 3-րդ մասերով սահմանված վեճի լուծման համար էական փաստերը մատնանշելու և դրանց վերաբերյալ ապացույցներ պահանջելու, անհրաժեշտ ներքին համոզմունք ձևավորելու նպատակով ողջամիտ միջոցներ ձեռնարկելու վերաբերյալ դատավարական գործողությունների իրականացումը թեև դատարանի իրավունքն է, սակայն դատարանի այդ իրավունքը սահմանափակված է նույն օրենսգրքի 24-րդ հոդվածով սահմանված բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտման վրա հիմնված պատճառաբանված ներքին համոզման հանգելու դատարանի պարտականությամբ և պետք է բխի արդարության բոլոր պահանջների պահպանման սահմանադրական հիմնադրույթից (*տե՛ս, օրինակ՝ ՀՀ Կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի Արարկիրի հարկային տեսչությունն ընդդեմ «Զորջ ընդ Բրանդ» ՍՊԸ-ի՝ 131.200 ՀՀ դրամ բռնագանձելու պահանջի մասին վարչական գործով Վճռաբեկ դատարանի 17.04.2009 թվականի թիվ ՎԴ/5525/05/08(2009թ.) որոշումը*):

Սույն գործով Դատարանը վիճարկվող ակտի 1-ին՝ շահութահարկի բաժնի 1-ին մասով և 4-րդ՝ ավելացված արժեքի հարկի բաժնով արձանագրված խախտումների վերաբերյալ պատճառաբանել է նաև հետևյալը.

- շահութահարկի գծով լրացուցիչ հարկային պարտավորության առաջադրման համար հիմք հանդիսացած հիմնական միջոցների սկզբնական արժեքը՝ 558.528.000 ՀՀ դրամը, զուտ հարկային հաշվառման տեսանկյունից չի կարող դիտվել որպես արժանահավատ ելակետային տվյալ, քանի այն, ըստ էության, ենթակա է ձգգրտման,

- շահութահարկի գծով արձանագրված խախտումների հետ կապված ընթացիկ և կապիտալ բնույթի ծախսերի տարբերակման մասով պարզ չէ, թե ստույգ ինչ սկզբունքով կամ որ փաստաթղթային տվյալի հիման վրա են 424.918.100 ՀՀ դրամի ծախսերից միայն 155.000.000 ՀՀ դրամի ծախսերը դիտվել և հաշվարկվել որպես հիմնական միջոցների սկզբնական արժեքի հետ համադրման ենթակա ծախսեր,

- վիճարկվող ակտը չի պարունակում ավելացված արժեքի հարկի գծով

առաջադրված տուգանքների հաշվարկման համար հիմք հանդիսացած 129.400.000 ՀՀ դրամ գումարի հիմնավորումը:

Մինչդեռ, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Դատարանը, վերը նշված հանգամանքները հաստատված համարելու համար պարտավոր էր Կոմիտեից պահանջել ներկայացնել նշվածի վերաբերյալ ապացույցներ: Այսինքն՝ Դատարանը պարտավոր էր հիմնական միջոցների սկզբնական արժեքի և կատարված ծախսերի տարբերակման, ինչպես նաև ավելացված արժեքի հարկի գծով առաջադրված տուգանքների հաշվարկման վերաբերյալ բոլոր փաստերը պարզել ի պաշտոն:

Հետևաբար, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ նշված ապացույցները պահանջելու և գործի բոլոր փաստերն ի պաշտոն պարզելու համար սույն գործն անհրաժեշտ է ուղարկել նոր քննության:

Նշված պայրճառաբանություններով հերքվում են վճռաբեկ բողոքի պայրասխանով քերված փաստարկները:

Այսպիսով, սույն վճռաբեկ բողոքի հիմքերի առկայությունը Վճռաբեկ դատարանը համարում է բավարար՝ «Հայաստանի Հանրապետության վարչական դատավարության օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության 2010 թվականի հոկտեմբերի 28-ի թիվ ՀՕ-135-Ն օրենքի 21-րդ հոդվածի 4-րդ մասի, ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 118-րդ և 118.3-րդ հոդվածների, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 227-րդ և 228-րդ հոդվածների ուժով Դատարանի վճիռը բեկանելու համար:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 118-րդ հոդվածով, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 240-241²-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

ՈՐՈՇԵՑ

1. Վճռաբեկ բողոքը բավարարել մասնակիորեն: Բեկանել ՀՀ վարչական դատարանի 15.01.2010 թվականի վճռի՝ Երևանի քաղաքապետարանի «Կարեն Դեմիրձյանի անվան Երևանի մետրոպոլիտեն» ՓԲԸ-ի հայցը բավարարելու և ՀՀ Կատավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի Արաբկիրի-1 հարկային տեսչության հայցը մերժելու մասերը և այդ մասերով գործն ուղարկել նույն դատարան՝ նոր քննության:

2. Դատական ծախսերի բաշխման հարցին անդրադառնալ գործի նոր քննության ընթացքում:

3. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

*ՆԱԽԱԳԱՀՈՂ՝ ստորագրություն
ԴԱՏԱՎՈՐՆԵՐ՝ ստորագրություններ*

Հակընդդեմ հայցով դիմելով դատարան՝ Կոմիտեն պահանջել է բռնագանձել Ընկերությունից 300.000 ՀՀ դրամ:

ՀՀ վարչական դատարանի (դատավոր՝ Հ. Բեդեյան) (այսուհետ՝ Դատարան) 19.10.2010 թվականի վճռով հայցը բավարարվել է, իսկ հակընդդեմ հայցը՝ մերժվել:

ՀՀ վարչական վերաքննիչ դատարանի (այսուհետ՝ Վերաքննիչ դատարան) 19.04.2011 թվականի որոշմամբ վերաքննիչ բողոքը մերժվել է, և Դատարանի 19.10.2010 թվականի վճիռը թողնվել է անփոփոխ:

Սույն գործով վճռաբեկ բողոք է ներկայացրել Տեսչությունը:

Վճռաբեկ բողոքի պատասխան է ներկայացրել Ընկերությունը:

2. Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը

Սույն վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

Վերաքննիչ դատարանը չի կիրառել «Վճարահաշվարկային համակարգերի և վճարահաշվարկային կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի «ա», «գ», «ե» ենթակետերը, ՀՀ Կառավարության 30.11.2006 թվականի «Փոստային կապի ազգային օպերատորի կողմից իրականացվող գործունեության տեսակների ցանկը հաստատելու մասին» թիվ 1656-Ա որոշումը, որոնք պետք է կիրառեր, կիրառել է «Փոստային կապի մասին» ՀՀ օրենքի 3-րդ, 6.1-րդ հոդվածները (6.1-րդ հոդվածն ուժը կորցրել է 11.05.2011 թվականի թիվ ՀՕ-157-Ն օրենքով), որոնք չպետք է կիրառեր, սխալ է մեկնաբանել «Հսկիչ-դրամարկղային մեքենաների կիրառման մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածի 1-ին, 2-րդ մասերը:

Բողոք բերած անձը նշված պնդումը պարձառաքանել է հետևյալ փաստարկներով.

Վերաքննիչ դատարանը եկել է այն եզրահանգման, որ բջջային կապի օպերատորների կանխավճարային քարտերին առնչվող Ընկերության գործարքները ենթակա են գնահատման որպես «այլ տեսակի գումարների ընդունման, մշակման, փոխադրության և քարտերի հանձնման գծով» գործարքներ, և որ Ընկերության նշված գործարքներն իրականացվել են փոստային գործունեության շրջանակներում: Մինչդեռ, լիցքավորման քարտերի վաճառքից առաջացած գումարները չի կարելի դիտել որպես «այլ տեսակի գումարների ընդունման, մշակման, փոխադրության և քարտերի հանձնման գծով» գործարքներ, քանի որ դրանք առաջացել են ոչ թե գումարների ընդունման, մշակման, փոխադրության կամ քարտերի հանձնման գործարքներով, այլ բջջային հեռախոսների լիցքավորման քարտերի վաճառքի արդյունքում:

Վերաքննիչ դատարանը եկել է նաև այն եզրահանգման, որ կանխավճարային քարտերը ապրանք չեն, քանի որ այդ քարտերը չունեն ինքնուրույն սպառողական արժեք, այլ դրանք ընդամենը վճարային փաստաթղթեր են: Մինչդեռ, տնտեսագիտության տեսանկյունից ապրանք է այն արտադրանքը կամ իրը, որն արտադրվում է վաճառքի նպատակով և վաճառվում է, իսկ Ընկերությունն իրականացրել է լիցքավորման քարտերի կանխիկ դրամով վաճառք:

Վերոգրյալի հիման վրա բողոք բերած անձը պահանջել է Վերաքննիչ դատարանի 19.04.2011 թվականի որոշումը բեկանել և փոփոխել:

2.1. Վճռաբեկ բողոքի պատասխանի փաստաթղթերը

Բողոք բերած անձը, հղում կատարելով «Փոստային կապի մասին» ՀՀ օրենքի 6.1-րդ հոդվածին (ուժը կորցրել է 11.05.2011 թվականի թիվ ՀՕ-157-Ն օրենքով) և դրա հիման վրա ընդունված ՀՀ Կառավարության 30.11.2006 թվականի «Փոստային կապի ազգային օպերատորի կողմից իրականացվող գործունեության տեսակների ցանկը հաստատելու մասին» թիվ 1656-Ա որոշմանը, փորձել է հիմնավորել, որ Ընկերությունը, մատուցելով վճարահաշվարկային ծառայություններ, իրականացրել է սպրանքների մանրածախ և մեծածախ վաճառք: Մինչդեռ, վճարահաշվարկային ծառայությունները չեն կարող մատուցվել սպրանքների մանրածախ կամ մեծածախ առուվաճառքի ձևով:

Բողոք բերած անձն անտեսել է, որ բջջային օպերատորների կողմից թողարկված կանխավճարային գործիք հանդիսացող լիցքավորման քարտերը չեն կարող դիտարկվել որպես սպրանք՝ դրանց անվանական արժեքով, քանի որ լիցքավորման քարտի վրա նշված անվանական արժեքը բջջային ծառայության դիմաց փոխանցվող (վճարվող) կանխավճարի գումարն է, և այդ քարտն ինքնին նման անվանական արժեքով չի կարող դիտարկվել որպես սպրանք:

3. Վճռաբեկ բողոքի քննության համար նշանակություն ունեցող փաստերը

Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

1) Կոմիտեի նախագահի 25.03.2010 թվականի թիվ 1305804 հանձնարարագրի հիման վրա Ընկերությունում կատարվել է հսկիչ-դրամարկղային մեքենաների կիրառման ճշտության ստուգում (**գ.թ. 30**):

2) Նշված ստուգման արդյունքում 01.04.2010 թվականին կազմվել է թիվ 1305804 ակտը: Նույն ակտում որպես խախտում արձանագրվել է, որ Ընկերության թիվ 5 փոստային բաժանմունքից 26.03.2010 թվականին՝ ժամը 11:15-ից մինչև 11:25-ն ընկած ժամանակահատվածում, կատարվել են կանխիկ դրամով գնումներ (գնվել են տարբեր օպերատորների լիցքավորման քարտեր), որոնց դիմաց հսկիչ-դրամարկղային մեքենայի կտրոններ չեն տրամադրվել (հատկացվել), քանի որ հսկիչ-դրամարկղային մեքենաներ տեղադրված չեն եղել: Նույն ակտով Ընկերությունը ենթարկվել է 300.000 ՀՀ դրամ տուգանքի (**գ.թ. 5-15**):

3) «ԱրմենՏել» ՓԲԸ-ի և Ընկերության՝ դիլերի միջև 03.08.2009 թվականին կնքվել է թիվ ARM-C329/09 պայմանագիրը, որի 2-րդ՝ «Պայմանագրի առարկան» կետի 2.1-րդ ենթակետի համաձայն՝ «ԱրմենՏել» ՓԲԸ-ն հանձնարարում է, իսկ Ընկերությունը՝ դիլերը, պարտավորվում է Հայաստանի Հանրապետության տարածքում «ԱրմենՏել» ՓԲԸ-ի անունից և վերջինիս հաշվին կատարել նույն պայմանագրով նախատեսված իրավաբանական և (կամ) այլ գործողություններ՝ «ԱրմենՏել» ՓԲԸ-ի կողմից կապի ծառայությունների մատուցման հետ կապված բաժանորդային պայմանագրեր կնքելու և (կամ) վճարման քարտերի իրացման համար՝ առանց լիցենզիոն իրավունքների փոխանցման: Նույն պայմանագրի 1-ին՝ «Հիմնական սահմանումները» կետի 1.17-րդ ենթակետով «ԱրմենՏել» ՓԲԸ-ի կապի ծառայության վճարման քարտը բնորոշվում է որպես «ԱրմենՏել» ՓԲԸ-ի ցանկացած սովորաբար լիցենզիայի պայմանագրի կամ ինֆորմացիայի ցանկացած կրիչ, որը պարունակում է որոշակիորեն կողմնորոշված ինֆորմացիա, ինչն օգտագործվում է բաժանորդի կողմից «ԱրմենՏել» ՓԲԸ-ի կապի ծառայությունների դիմաց վճարման տեղեկությունների ստացման համար (**գ.թ. 70-99**):

4. Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումները

Քննելով վճռաբեկ բողոքը նշված հիմքի սահմաններում Վճռաբեկ դատարանը գտնում է, որ այն հիմնավոր է հերկյալ պարճառաբանությամբ.

Վիճելի իրավահարաբերության ծագման պահին գործող խմբագրությամբ «Հսկիչ-դրամարկղային մեքենաների կիրառման մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 1-ին մասի համաճայն՝ նույն օրենքի գործողությունը տարածվում է Հայաստանի Հանրապետության տարածքում գործող իրավաբանական անձանց, դրանց առանձնացված ստորաբաժանումների (մասնաճյուղերի, ներկայացուցչությունների), Հայաստանի Հանրապետության տարածքում գործող օտարերկրյա կազմակերպությունների առանձնացված ստորաբաժանումների (մասնաճյուղերի, ներկայացուցչությունների) (այսուհետ՝ կազմակերպություններ) և անհատ ձեռնարկատերերի վրա:

Նույն հոդվածի 2-րդ մասի համաճայն՝ նույն օրենքը չի տարածվում Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի, Հայաստանի Հանրապետության տարածքում գործող բանկերի (ներառյալ՝ դուստր բանկերի), դրանց մասնաճյուղերի, ներկայացուցչությունների, գործառնական գրասենյակների (կետերի), օտարերկրյա բանկերի՝ Հայաստանի Հանրապետության տարածքում գործող մասնաճյուղերի և ներկայացուցչությունների, վարկային կազմակերպությունների, արժեթղթերի շուկայում մասնագիտացված գործունեություն իրականացնող անձանց՝ այդ գործունեության մասով, ֆոնդային բորսաների և Կենտրոնական դեպոզիտարիայի վրա:

Վիճելի իրավահարաբերության ծագման պահին գործող խմբագրությամբ «Հսկիչ-դրամարկղային մեքենաների կիրառման մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածի 1-ին մասի համաճայն՝ Հայաստանի Հանրապետության տարածքում կազմակերպությունների և անհատ ձեռնարկատերերի կողմից առևտրի օբյեկտների, առևտրի իրականացման վայրերում վաճառատեղերի միջոցով մանրածախ վաճառք իրականացնելիս կամ բնակչությանը ծառայություններ մատուցելիս կանխիկ դրամով իրականացվող դրամական հաշվարկների բոլոր դեպքերում հսկիչ-դրամարկղային մեքենաների կիրառումը, նույն հոդվածի 3-րդ մասում նշված ժամանակացույցին համապատասխան, պարտադիր է, բացառությամբ նույն հոդվածի 2-րդ մասով նախատեսված դեպքերի:

Նույն հոդվածի 2-րդ մասի «ժդ» ենթակետի համաճայն՝ գործունեության կամ գործունեության իրականացման (գտնվելու) վայրի առանձնահատկություններից ելնելով՝ կանխիկ դրամով դրամական հաշվարկներ կատարելիս կազմակերպությունների համար հսկիչ-դրամարկղային մեքենաների կիրառումը պարտադիր չէ հետևյալ գործունեության տեսակների մասով՝ **փոստային** և սուրհանդակային **գործունեության իրականացման**:

Վիճելի իրավահարաբերության ծագման պահին գործող խմբագրությամբ «Փոստային կապի մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի համաճայն՝ նույն օրենքում օգտագործվող հիմնական հասկացություններն են՝

փոստային կապ՝ փոստային առաքանու, ինչպես նաև դրամական միջոցների փոստային փոխադրությունների ընդունումը, մշակումը, փոխադրումը և հանձնումը ապահովող կապի տեսակ, որն իրենից ներկայացնում է տեխնիկական և տրանսպորտային միջոցների միասնական արտադրատեխնոլոգիական համալիր.

դրամական միջոցների փոստային փոխադրություններ՝ փոստային կապի օպերատորի կողմից մատուցվող ծառայություն դրամական միջոցների, ինչպես նաև գանձված կոմունալ վարձերի և այլ տեսակի գումարների ընդունման, մշակման, փոխադրության և քարտերի հանձնման գծով, որոնք ոչ բանկային գործարքներ են, սակայն հավասարեցվում են դրամական (փողային) փոխանցումներին՝ փոստային կապի և հեռահաղորդակցության ցանցերի օգտագործմամբ:

փոստային կապի ծառայություններ՝ գործողություն կամ գործունեություն փոստային առաքանու ընդունման, մշակման, փոխադրման և հանձնման, ինչպես նաև դրամական միջոցների փոստային փոխադրությունների իրականացման և պարբերականների բաժանորդագրության գծով:

Վիճելի իրավահարաբերության ծագման պահին գործող «Փոստային կապի մասին» ՀՀ օրենքի 6.1-րդ հոդվածի համաձայն՝ փոստային կապի ազգային օպերատորը՝ որպես վճարահաշվարկային կազմակերպություն, կարող է իրականացնել առևտրային և ցանկացած այլ գործունեություն, որի ցանկը սահմանում է Հայաստանի Հանրապետության Կառավարությունը:

ՀՀ Կառավարության 30.11.2006 թվականի «Փոստային կապի ազգային օպերատորի կողմից իրականացվող գործունեության տեսակների ցանկը հաստատելու մասին» թիվ 1656-Ս որոշման 1-ին կետով հաստատված «Փոստային կապի ազգային օպերատորի կողմից իրականացվող գործունեության տեսակների» ցանկում ներառված է նաև «մեծածախ և մանրածախ առևտուր, ապրանքների ներկրում և արտահանում» գործունեության տեսակը:

Նշված նորմերի վերլուծությունից հետևում է, որ վիճելի իրավահարաբերության ծագման պահին փոստային կապի ազգային օպերատորին՝ որպես վճարահաշվարկային կազմակերպության, իրավունք էր վերապահված իրականացնել առևտրային և ցանկացած այլ գործունեություն, այդ թվում՝ մեծածախ և մանրածախ առևտուր, ապրանքների ներկրում և արտահանում, որոնց իրականացման հետ կապված հսկիչ-դրամարկղային մեքենաների կիրառման վերաբերյալ վերջինիս մատվ որևէ բացառություն սահմանված չէր: Այսինքն՝ փոստային կապի ազգային օպերատորի՝ որպես վճարահաշվարկային կազմակերպության կողմից Հայաստանի Հանրապետության տարածքում առևտրի օբյեկտների, առևտրի իրականացման վայրերում վաճառատեղերի միջոցով մանրածախ վաճառք իրականացնելիս կամ բնակչությանը ծառայություններ մատուցելիս կանխիկ դրամով իրականացվող դրամական հաշվարկների բոլոր դեպքերում հսկիչ-դրամարկղային մեքենաների կիրառումը պարտադիր էր: Նշված կանոնից բացառություն էր սահմանված միայն փոստային և սուրհանդակային գործունեության իրականացման մատվ: Մասնավորապես՝ վիճելի իրավահարաբերության ծագման պահին գործող կանոնակարգմամբ փոստային կապը բնորոշվում էր որպես փոստային առաքանու, ինչպես նաև դրամական միջոցների փոստային փոխադրությունների ընդունումը, մշակումը, փոխադրումը և հանձնումը ապահովող կապի տեսակ՝ տեխնիկական և տրանսպորտային միջոցների միասնական արտադրատեխնոլոգիական համալիր, իսկ **դրամական միջոցների փոստային փոխադրությունները բնորոշվում էին որպես փոստային կապի օպերատորի կողմից մատուցվող ծառայություն՝ դրամական միջոցների, ինչպես նաև գանձված կոմունալ վարձերի և այլ տեսակի գումարների ընդունման, մշակման, փոխադրության և քարտերի հանձնման գծով՝ փոստային կապի և հեռահաղորդակցության ցանցերի օգտագործմամբ:**

Սույն գործով Վերաքննիչ դատարանը վերաքննիչ բողոքը մերժելու հիմքում դրել է այն հիմնավորումը, որ բջջային կապի օպերատորների կանխավճարային քարտերին առնչվող Ընկերության գործարքները ենթակա են գնահատման որպես «այլ տեսակի գումարների ընդունման, մշակման, փոխադրության և քարտերի հանձնման գծով» գործարքներ՝ փոստային կապի և հեռահաղորդակցության ցանցերի օգտագործմամբ:

Այսինքն՝ Վերաքննիչ դատարանը վերաքննիչ բողոքը մերժել է այն հիմնավորմամբ, որ Ընկերության վերոգրյալ գործարքներն իրականացվում են փոստային գործունեության շրջանակներում:

Մինչդեռ, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Վերաքննիչ դատարանի նշված պատճառաբանությունը հիմնավոր չէ, քանի որ սույն գործի փաստերի համաձայն՝ Ընկերությունը դրամական միջոցների փոստային փոխադրություններ չի կատարել, այլ ընդամենն իրականացրել է բջջային կապի տարբեր օպերատորների կողմից թողարկված կանխավճարային քարտերի մանրածախ վաճառք, ինչը որևէ իրավական նորմով չի կարող դիտարկվել որպես Ընկերության կողմից փոստային կապի և հեռահաղորդակցության ցանցերի օգտագործմամբ «այլ տեսակի գումարների ընդունման, մշակման, փոխադրության և քարտերի հանձնման գծով» ծառայության մատուցում:

Այսպես, սույն գործով Կոմիտեի 01.04.2010 թվականի թիվ 1305804 վիճարկվող ակտով արձանագրվել է, որ Ընկերության թվով 5 փոստային բաժանմունքից 26.03.2010 թվականին ժամը 11:15-ից մինչև 11:25-ն ընկած ժամանակահատվածում կատարվել են կանխիկ դրամով գնումներ (գնվել են տարբեր օպերատորների լիցքավորման քարտեր), որոնց դիմաց հսկիչ-դրամարկղային մեքենայի կտրոններ չեն տրամադրվել (հատկացվել), քանի որ հսկիչ-դրամարկղային մեքենաներ տեղադրված չեն եղել, իսկ գործում առկա «ԱրմենՏել» ՓԲԸ-ի և Ընկերության՝ դիլերի միջև 03.08.2009 թվականին կնքված թիվ ARM-C329/09 պայմանագրի 2-րդ՝ «Պայմանագրի առարկան» կետի 2.1-րդ ենթակետի համաձայն՝ «ԱրմենՏել» ՓԲԸ-ն հանձնարարում է, իսկ Ընկերությունը՝ դիլերը, պարտավորվում է Հայաստանի Հանրապետության տարածքում «ԱրմենՏել» ՓԲԸ-ի անունից և վերջինիս հաշվին կատարել նույն պայմանագրով նախատեսված իրավաբանական և (կամ) այլ գործողություններ՝ «ԱրմենՏել» ՓԲԸ-ի կողմից կապի ծառայությունների մատուցման հետ կապված բաժանորդային պայմանագրեր կնքելու և (կամ) վճարման քարտերի իրացման համար:

Հետևաբար, անհիմն է Վերաքննիչ դատարանի պատճառաբանությունն այն մասին, որ Ընկերության վերոգրյալ գործարքներն իրականացվում են փոստային գործունեության շրջանակներում:

Ինչ վերաբերում է Վերաքննիչ դատարանի պատճառաբանությանն այն մասին, որ կանխավճարային քարտերն ապրանք չեն հանդիսանում, քանի որ այդ քարտերը չունեն ինքնուրույն սպառողական արժեք, այլ դրանք ընդամենը վճարային փաստաթղթեր են, ինչպես նաև այն մասին, որ կանխավճարային քարտերը հանդիսանում են վճարային գործիք, ապա Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ Վերաքննիչ դատարանի նշված պատճառաբանությունն անհիմն է և չունի որևէ իրավական հիմք հետևյալ պատճառաբանությամբ.

«Վճարահաշվարկային համակարգերի և վճարահաշվարկային կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի «գ» ենթակետով **վճարահաշվարկային փաստաթուղթը** բնորոշվում է որպես Հայաստանի Հանրապետության օրենքներով, Կենտրոնական բանկի նորմատիվ իրավական

ակտերով և դրանց համապատասխան՝ բանկային կանոններով սահմանված կարգով կազմված և հավաստված (վավերացված) ցանկացած թղթային կամ էլեկտրոնային փաստաթուղթ, որը պարունակում է կարգադրություն վճարահաշվարկային համակարգի մասնակցին՝ դրամական միջոցները մուտքագրելու, ելքագրելու կամ փոխանցելու վերաբերյալ, իսկ նույն հոդվածի «ե» ենթակետով **վճարային գործիքը** բնորոշվում է որպես թղթային, էլեկտրոնային, ձայնային (կամ այլ եղանակով ներկայացված) հաղորդագրություն, փաստաթուղթ կամ համաձայնություն, որը, անկախ օգտագործման, կիրառման կամ իրականացման ձևից ու եղանակից, հնարավորություն է ընձեռում դրա տիրապետողին և (կամ) օգտագործողին կատարելու վճարումներ:

Վիճելի իրավահարաբերության ծագման պահին գործող խմբագրությամբ «Վճարահաշվարկային համակարգերի և վճարահաշվարկային կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի «գ» ենթակետով **քլիրինգը** բնորոշվում էր որպես վճարահաշվարկային փաստաթղթերի հավաքագրումը, համաձայնեցումը, խմբավորումը, փոխանակումը, ինչպես նաև վերջնահաշվարկի համար վճարահաշվարկային համակարգի մասնակիցների դիրքերի հաշվարկումը կամ դրանց մի մասը ներառող գործընթաց, իսկ նույն հոդվածի «ժ» ենթակետով **պրոցեսինգը** բնորոշվում էր որպես վճարահաշվարկային փաստաթղթերի հավաքագրումը, պահպանումը, դրանցում պարունակվող տեղեկատվության մշակումը, փոխանցումը, որոշ դեպքերում նաև մասնակցող կողմերի նույնականացումը, վճարահաշվարկային փաստաթղթի (վճարային գործիքի) վավերության ստուգումը, միջոցների փոխանցման հավաստագրումը կամ դրանց մի մասը ներառող գործընթաց:

Վիճելի իրավահարաբերության ծագման պահին գործող խմբագրությամբ «Վճարահաշվարկային համակարգերի և վճարահաշվարկային կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքի 19-րդ հոդվածի 2-րդ մասի «բ» ենթակետի համաձայն՝ նույն օրենքի և վճարահաշվարկային կազմակերպությունների գործունեությունը կարգավորող՝ Հայաստանի Հանրապետության այլ օրենքների և նորմատիվ իրավական ակտերի իմաստով վճարահաշվարկային կազմակերպությունների տեսակներն են՝ վճարային գործիքների և վճարահաշվարկային փաստաթղթերի պրոցեսինգ և քլիրինգ իրականացնող կազմակերպությունները, որոնք իրականացնում են պրոցեսինգ և (կամ) քլիրինգ երրորդ անձանց համար, ինչպես նաև Կենտրոնական բանկի խորհրդի թույլատրած այլ վճարահաշվարկային ծառայություններ, որոնք կապված են տվյալ տեսակի վճարահաշվարկային ծառայությունների մատուցման հետ:

Մինչդեռ, տվյալ դեպքում իրականացնելով բջջային կապի տարբեր օպերատորների կողմից թողարկված կանխավճարային քարտերի մանրածախ վաճառք՝ Ընկերությունը վերոգրյալ նորմերի իմաստով չի իրականացրել վճարային գործիքների և վճարահաշվարկային փաստաթղթերի պրոցեսինգ և քլիրինգ:

Վերոգրյալի հիման վրա Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Ընկերությունն իրականացրել է մանրածախ վաճառք, սակայն կանխիկ դրամով իրականացվող դրամական հաշվարկները կատարել է առանց հսկիչ-դրամարկղային մեքենաների կիրառման, ինչը պարտադիր էր, և նման պայմաններում Կոմիտեի 01.04.2010 թվականի թիվ 1305804 ակտն իրավաչափ վարչական ակտ է, և այն ենթակա է կատարման:

Նշված պարզառարարություններով հերքվում են վճռաբեկ բողոքի պարասխանով բերված փաստարկները:

Այսպիսով, սույն վճռաբեկ բողոքի հիմքի առկայությունը Վճռաբեկ դատարանը համարում է բավարար՝ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 118.9-րդ հոդվածի, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 227-րդ հոդվածի ուժով վերաքննիչ դատարանի որոշումը բեկանելու համար:

Միաժամանակ, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ սույն գործով անհրաժեշտ է կիրառել ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 118.15-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով սահմանված՝ ստորադաս դատարանի դատական ակտը փոփոխելու Վճռաբեկ դատարանի լիազորությունը հետևյալ հիմնավորմամբ.

ՀՀ Սահմանադրության 19-րդ հոդվածի և «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի ողջամիտ ժամկետում իր գործի քննության իրավունք: Սույն գործով վեճի լուծումն էական նշանակություն ունի գործին մասնակցող անձանց համար: Վճռաբեկ դատարանը գտնում է, որ գործը ողջամիտ ժամկետում քննելը հանդիսանում է ՀՀ Սահմանադրության և «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի վերոգրյալ հոդվածներով ամրագրված՝ անձի արդար դատաքննության իրավունքի տարր: Հետևաբար, գործի անհարկի ձգձգումները վտանգ են պարունակում նշված իրավունքի խախտման տեսանկյունից: Տվյալ դեպքում Վճռաբեկ դատարանի կողմից ստորադաս դատարանի դատական ակտը փոփոխելը բխում է արդարադատության արդյունավետության շահերից, քանի որ սույն գործով վերջնական դատական ակտ կայացնելու համար նոր հանգամանք հաստատելու անհրաժեշտությունը բացակայում է:

Դատական ակտը փոփոխելիս Վճռաբեկ դատարանը հիմք է ընդունում սույն որոշման պատճառաբանությունները, ինչպես նաև գործի նոր քննության անհրաժեշտության բացակայությունը:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 118.15-118.18-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

ՈՐՈՇԵՑ

1. Վճռաբեկ բողոքը բավարարել: Բեկանել ՀՀ վարչական վերաքննիչ դատարանի 19.04.2011 թվականի որոշումը և այն փոփոխել. «Հայփոստ» ՓԲԸ-ի հայցը մերժել: ՀՀ Կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի հակընդդեմ հայցը բավարարել՝ «Հայփոստ» ՓԲԸ-ից հօգուտ Հայաստանի Հանրապետության բռնագանձել 300.000 ՀՀ դրամ:

2. «Հայփոստ» ՓԲԸ-ից հօգուտ ՀՀ Կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի բռնագանձել 6.000 ՀՀ դրամ՝ որպես հակընդդեմ հայցադիմումի և 30.000 ՀՀ դրամ՝ որպես վճռաբեկ բողոքի համար վճարված պետական տուրքի գումարներ:

3. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

*ՆԱԽԱԳԱՀՈՂ՝ արտրագրություն
ԴԱՏԱՎՈՐՆԵՐ՝ արտրագրություններ*

ՄԱՔՍԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆՔ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

ՀՀ վարչական դատարանի վճիռ
Վարչական գործ թիվ ՎԳ6/0365/05/08
Նախագահող դատավոր՝ Ա. Ալավերդյան

Վարչական գործ թիվ ՎԳ6/0365/05/08
2011թ.

ՈՐՈՇՈՒՄ ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Հայաստանի Հանրապետության Վճռաբեկ դատարանի քաղաքացիական
և վարչական պալատը (այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

*Նախագահությամբ
մասնակցությամբ դատավորներ*

Ե. ԽՈՒՆԴԿԱՐՅԱՆԻ
Ե. ՍՈՂՈՄՈՆՅԱՆԻ
Վ. ԱԲԵԼՅԱՆԻ
Ս. ԱՆՏՈՆՅԱՆԻ
Վ. ԱՎԱՆԵՍՅԱՆԻ
Ա. ԲԱՐՍԵՂՅԱՆԻ
Մ. ԴՐՄԵՅԱՆԻ
Գ. ՀԱԿՈԲՅԱՆԻ
Է. ՀԱՅՐԻՅԱՆԻ
Տ. ՊԵՏՐՈՍՅԱՆԻ

2011 թվականի մարտի 04-ին

դռնբաց դատական նիստում, քննելով ՀՀ Կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի (այսուհետ՝ Կոմիտե) վճռաբեկ բողոքը ՀՀ վարչական դատարանի 25.05.2010 թվականի վճռի դեմ՝ ըստ Կոմիտեի հայցի ընդդեմ Էդգար Թադևոսյանի, Արգիշտի Հովսեփյանի՝ 2.183.034 ՀՀ դրամ բռնագանձելու և ՀՀ մաքսային օրենսգրքի 132-րդ հոդվածի 2-րդ կետի «ա» ենթակետով նախատեսված մաքսային պարտավորությունը կատարելուն պարտավորեցնելու պահանջների մասին, և ըստ Էդգար Թադևոսյանի, Արգիշտի Հովսեփյանի հակընդդեմ հայցի ընդդեմ Կոմիտեի՝ ՀՀ Կառավարությանն առընթեր մաքսային պետական կոմիտեի հետաքննության և իրավաբանական վարչության պետի (այսուհետ՝ Վարչության պետ) 08.08.2008 թվականի «Քրեական գործի հարուցումը մերժելու և վարչական տույժ նշանակելու մասին» որոշումը փոփոխելու պահանջի մասին, ինչպես նաև ըստ Էդգար Թադևոսյանի, Արգիշտի Հովսեփյանի հայցի ընդդեմ Կոմիտեի՝ Վարչության պետի 08.08.2008 թվականի «Քրեական գործի հարուցումը մերժելու և վարչական տույժ նշանակելու մասին» որոշումն անվավեր ճանաչելու, Էդգար Թադևոսյանին, Արգիշտի Հովսեփյանին ապրանքի պահպանության հետ կապված ծախսերից ազատելու և դրանք Կոմիտեի վրա թողնելու պահանջների մասին,

ՊԱՐԶԵՑ

1. Գործի դատավարական նախապատմությունը

Դիմելով դատարան՝ Կոմիտեն պահանջել է համապարտության կարգով բռնագանձել Էդգար Թադևոսյանից, Արգիշտի Հովսեփյանից 2.183.034 ՀՀ դրամ և պարտավորեցնել վերջիններիս կատարել ՀՀ մաքսային օրենսգրքի 132-րդ հոդվածի 2-րդ կետի «ա» ենթակետով նախատեսված մաքսային պարտավորությունը, այն է՝ մաքսային մարմին ներկայացնել ապրանքի՝ Հայաստանի Հանրապետություն ներմուծված 420 հատ MicroSD 1GB, 316 հատ MicroSD 512MB, 50 հատ Transcend 2GB, 20 հատ Transcend 4GB տեսակի հիշողության սարքի, 10 հատ Bluetooth Model SY-630, 96 հատ Bluetooth Model SY-690 հիշողության քարտ կարդացող սարքի և 81 հատ Bluetooth USB ES-388 2.0 ինֆորմացիա փոխանցող սարքի վերաբերյալ հայտարարագիր:

Հակընդդեմ հայցով դիմելով դատարան՝ Էդգար Թադևոսյանը, Արգիշտի Հովսեփյանը պահանջել են փոփոխել Վարչության պետի 08.08.2008 թվականի «Քրեական գործի հարուցումը մերժելու և վարչական տույժ նշանակելու մասին» որոշումը, այն է՝ սարքերի մաքսային արժեքը սահմանել 1.407.349,3 ՀՀ դրամ և նշված որոշման 2-րդ կետում «2.183.034 ՀՀ դրամ» բառերը փոխարինել «1.407.349,3 ՀՀ դրամ» բառերով:

Դիմելով դատարան՝ Էդգար Թադևոսյանը, Արգիշտի Հովսեփյանը պահանջել են անվավեր ճանաչել Վարչության պետի 08.08.2008 թվականի «Քրեական գործի հարուցումը մերժելու և վարչական տույժ նշանակելու մասին» որոշումը, Էդգար Թադևոսյանին, Արգիշտի Հովսեփյանին ազատել ապրանքի պահպանության հետ կապված ծախսերից և դրանք թողնել Կոմիտեի վրա:

ՀՀ վարչական դատարանի 25.01.2010 թվականի որոշմամբ նշված գործերը միացվել են մեկ վարույթում:

ՀՀ վարչական դատարանի (այսուհետ՝ Դատարան) 25.05.2010 թվականի վճռով Կոմիտեի հայցը մերժվել է, Էդգար Թադևոսյանի, Արգիշտի Հովսեփյանի հայցը բավարարվել է մասնակիորեն՝ Վարչության պետի 08.08.2008 թվականի «Քրեական գործի հարուցումը մերժելու և վարչական տույժ նշանակելու մասին» որոշման 2-րդ կետն անվավեր ճանաչելու պահանջի մասով, իսկ Էդգար Թադևոսյանի, Արգիշտի Հովսեփյանի հակընդդեմ հայցի, ինչպես նաև վերջիններիս հայցի՝ Վարչության պետի 08.08.2008 թվականի «Քրեական գործի հարուցումը մերժելու և վարչական տույժ նշանակելու մասին» որոշման 1-ին կետն անվավեր ճանաչելու, Էդգար Թադևոսյանին, Արգիշտի Հովսեփյանին ապրանքի պահպանության հետ կապված ծախսերից ազատելու և դրանք Կոմիտեի վրա թողնելու պահանջների մասով գործի վարույթը կարճվել է:

Սույն գործով վճռաբեկ բողոք է ներկայացրել Կոմիտեն:

Վճռաբեկ բողոքի պատասխան են ներկայացրել Էդգար Թադևոսյանը և Արգիշտի Հովսեփյանը:

2. Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը

Սույն վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

Դատարանը չի կիրառել ՀՀ մաքսային օրենսգրքի 2-րդ, 25-րդ, 128-րդ, 130-րդ, 132-րդ, 141-րդ, 189-րդ հոդվածները, «Ավելացված արժեքի հարկի մասին»

ՀՀ օրենքը, ՀՀ Կառավարության 21.11.2003 թվականի «Մաքսային հսկողություն իրականացնելու համար անհրաժեշտ փաստաթղթերի ու տեղեկությունների ցանկերը և դրանք մաքսային մարմիններին տրամադրելու կարգը սահմանելու մասին» թիվ 1779-Ն որոշումը, ՀՀ մաքսային վարչության 11.06.1998 թվականի «Հայաստանի Հանրապետության մաքսային սահմանով տեղափոխվող ապրանքների և այլ առարկաների մաքսային ձևակերպման մասին» թիվ 70-ՄՎԸ, 10.07.1998 թվականի ««ՀՀ մաքսային սահմանով անցնող քաղաքացիների կողմից հայտարարագրման ենթակա տեղեկությունների ցանկի մասին» հրահանգը հաստատելու մասին» թիվ 86-ՄՎԸ հրամանները, որոնք պետք է կիրառել, սրապ է մեկնաբանել ՀՀ Կառավարության 21.11.2003 թվականի «Հայաստանի Հանրապետության միջազգային օդանավակայաններով մեկնող և ժամանող ֆիզիկական անձանց կողմից ուղեկցվող բեռների մաքսային հսկողության իրականացման ժամանակ երկրորային համակարգի կիրառման կարգի մասին» թիվ 1927-Ն որոշումը, իսկառել է ՀՀ վարչական դատարարության օրենսգրքի 24-րդ հոդվածը:

Բողոք բերած անձը նշված պնդումը պարզապես և՛ է հերքելյալ փաստարկներով.

Դատարանն անտեսել է, որ ապրանքներ տեղափոխող անձ է համարվում դրանց սեփականատեր, գնորդ կամ ապրանքների նկատմամբ տիրապետման կամ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով դրանք իր անունից ՀՀ մաքսային օրենսգրքով նախատեսված կարգով տնօրինման լիազորություններով օժտված անձը: Տվյալ դեպքում Էդգար Թադևոսյանի և Արգիշտի Հովսեփյանի բացատրությունների համաձայն՝ վերջիններս մինչև 27.06.2008 թվականը Միացյալ Արաբական Էմիրություններ մեկնելը միասին պայմանավորվել են համատեղ գումարով այնտեղից ձեռքբերել և վերադառնալիս Հայաստանի Հանրապետություն ներմուծել հիշողության և ինֆորմացիա փոխանցող սարքեր՝ վերավաճառելու նպատակով: Նշվածից հետևում է, որ Արգիշտի Հովսեփյանը նույնպես համարվում է ապրանքներ տեղափոխող անձ, քանի որ ապրանքների գնորդ և գնման իրավունքով՝ սեփականատեր է: Հետևաբար, Էդգար Թադևոսյանը և Արգիշտի Հովսեփյանը կրում են համապարտ պատասխանատվություն:

Դատարանը հաշվի չի առել, որ Էդգար Թադևոսյանի և Արգիշտի Հովսեփյանի պատճառաբանությունն այն մասին, որ վերջիններս ապրանքները հայտարարագրելու պատրաստակամություն են ունեցել, սակայն մաքսային մարմինները չեն ունեցել բավարար պայմաններ կամ թերացել են իրենց պարտականություններում, անհիմն է, քանի որ Էդգար Թադևոսյանը և Արգիշտի Հովսեփյանը կարող էին և պարտավոր էին իմանալ ՀՀ Կառավարության 21.11.2003 թվականի թիվ 1927-Ն որոշման մասին: Բացի այդ, ապրանքների հայտարարագրումը և հայտարարագրի ներկայացումը հայտարարատուի, այլ ոչ թե մաքսային մարմինների պարտականությունն է: Ինչ վերաբերում է մաքսային մարմինների կողմից մաքսային միջնորդների (բրոքերների) ծառայությունից օգտվելու և դրա գտնվելու վայրի մասին Էդգար Թադևոսյանի և Արգիշտի Հովսեփյանի չտեղեկացնելուն և «Զվարթնոց» մաքսատանը այդպիսի ծառայություն չունենալուն, ապա նշված ծառայության առկայություն օրենքը չի պարտադրում:

Դատարանն անտեսել է նաև, որ սույն գործով ձեռքբերված ապացույցներով հիմնավորվում է, որ Էդգար Թադևոսյանի և Արգիշտի Հովսեփյանի կողմից Հայաստանի Հանրապետության մաքսային սահմանով տեղափոխված ապրանքները

չհայտարարագրելու փաստը՝ կատարված զանցանքը, վերջիններիս կողմից երբևէ չի ժխտվել:

Դատարանը հաշվի չի առել նաև, որ Վարչության պետի 08.08.2008 թվականի «Քրեական գործի հարուցումը մերժելու և վարչական տույժ նշանակելու մասին» որոշումը բովանդակում է ՀՀ մաքսային օրենսգրքի 221-րդ հոդվածով նախատեսված բոլոր պահանջները:

Դատարանի պատճառաբանությունն այն մասին, որ մաքսային կանոնների խախտման վերաբերյալ արձանագրությունը ստորագրվել է նաև ընթերակաների կողմից, ինչն օրենքը չի պահանջում, հիմնավոր չէ, քանի որ օրենքը նշվածը նաև չի արգելում:

Այսպիսով, Կոմիտեի հայցի մերժման վերաբերյալ Դատարանի պատճառաբանությունները կրում են ձևական բնույթ:

Դատարանը վճռով չի անդրադարձել Կոմիտեի հայցի՝ Էդգար Թադևոսյանին, Արգիշտի Հովսեփյանին ՀՀ մաքսային օրենսգրքի 132-րդ հոդվածի 2-րդ կետի «ա» ենթակետով նախատեսված մաքսային պարտավորությունը կատարելուն պարտավորեցնելու պահանջին և այդ մասով հայցն ընդհանրապես քննության առարկա չի դարձրել, ինչպես նաև չի գնահատել իրավախախտման փաստի առկայությունը հաստատող գործում եղած բոլոր ապացույցները:

Վերոգրյալի հիման վրա բողոք բերած անձը պահանջել է բեկանել Դատարանի 25.05.2010 թվականի վճռի՝ Կոմիտեի հայցը մերժելու, Էդգար Թադևոսյանի, Արգիշտի Հովսեփյանի հայցը բավարարելու մասերը և այդ մասերով այն փոփոխել:

2.1. Վճռաբեկ բողոքի պատասխանի փաստարկները

Դատարանը բազմակողմանի, հիմնավոր վերլուծությամբ գնահատել է գործում եղած բոլոր ապացույցները և Էդգար Թադևոսյանի, Արգիշտի Հովսեփյանի հայցը բավարարել է արդարացիորեն:

3. Վճռաբեկ բողոքի քննության համար նշանակություն ունեցող փաստերը

Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

1) ՀՀ Կառավարությանն առընթեր մաքսային պետական կոմիտեի «Զվարթնոց» մաքսատան ՈւՄՀ բաժնի 2-րդ բաժանմունքի մաքսային տեսուչի կողմից 04.07.2008 թվականին կազմվել է «Մաքսային կանոնների խախտման վերաբերյալ» արձանագրություն, որի համաձայն՝ Շարժա-Երևան թիվ 237 չվերթով ուղևոր Էդգար Թադևոսյանը, հատելով մաքսային հսկողության կանաչ ուղին, առանց հայտարարագրելու անցել է, նա ետ է հրավիրվել և կատարվել է ուղեբեռի գնում, որի ընթացքում հայտնաբերվել են համակարգչային հիշողության սարքավորումներ **(հատոր 1-ին, գ.թ. 8)**: Նշված արձանագրությունը չի պարունակում Արգիշտի Հովսեփյանի կողմից մաքսային կանոնների խախտման մասին որևէ նշում:

2) Վարչության պետի 08.08.2008 թվականի «Քրեական գործի հարուցումը մերժելու և վարչական տույժ նշանակելու մասին» որոշման եզրափակիչ մասի 1-ին կետով Էդգար Թադևոսյանի և Արգիշտի Հովսեփյանի նկատմամբ քրեական գործի հարուցումը մերժվել է՝ արարքում հանցակազմի բացակայության պատճառաբանությամբ: Նույն որոշման եզրափակիչ մասի 2-րդ կետով Էդգար

Թաղևույսանը, Արգիշտի Հովսեփյանը ՀՀ մաքսային օրենսգրքի 203-րդ հոդվածով ձանաչվել են զանցառու և տուգանվել են առանց հայտարարագրելու Հայաստանի Հանրապետության տարածք տեղափոխված 420 հատ MicroSD 1GB, 316 հատ MicroSD 512MB, 50 հատ Transcend 1GB, 50 հատ Transcend 2GB, 20 հատ Transcend 4GB տեսակի հիշողության սարքի, 10 հատ Bluetooth Model SY-630, 96 հատ Bluetooth Model SY-690 հիշողության քարտ կարդացող սարքի և 81 հատ Bluetooth USB ES-388 2.0 ինֆորմացիա փոխանցող սարքի մաքսային արժեքի չափով՝ 2.183.034 ՀՀ դրամ (**հատոր 1-ին, գ.թ. 25-28**):

3) Էդգար Թաղևույսանը և Արգիշտի Հովսեփյանը 16.07.2008 թվականին տվել են բացատրություններ, որոնցով հաստատվում է այն հանգամանքը, որ վերջիններս Վարչության պետի 08.08.2008 թվականի «Քրեական գործի հարուցումը մերժելու և վարչական տույժ նշանակելու մասին» որոշման մեջ նշված ապրանքը գնել են համատեղ (**հատոր 1-ին, գ.թ. 13-14, 16**):

4. Վճուրբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումները

Քննելով վճուրբեկ բողոքը նշված հիմքի սահմաններում՝ Վճուրբեկ դատարանը գրնում է, որ այն հիմնավոր է մասնակիորեն հերկյալ պարճառաբանությանը.

ՀՀ մաքսային օրենսգրքի 38-րդ գլխի 205-րդ հոդվածի համաձայն՝ մաքսային կանոնների խախտման վերաբերյալ գործերի վարույթը կարգավորվում է նույն գլխով և Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքի նույն գլխին չհակասող մասով:

ՀՀ մաքսային օրենսգրքի 207-րդ հոդվածի 1-ին մասի «ա» ենթակետի համաձայն՝ մաքսային կանոնների խախտման վերաբերյալ գործերի վարույթ սկսելու հիմքերն են՝ իրենց լիազորություններն իրականացնելիս մաքսային մարմինների պաշտոնատար անձանց կողմից մաքսային կանոնների խախտման դեպքերի հայտնաբերումը:

ՀՀ մաքսային օրենսգրքի 209-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ մաքսային կանոնների խախտման վերաբերյալ գործի վարույթն սկսվում է մաքսային կանոնների խախտման վերաբերյալ արձանագրություն կազմելով:

ՀՀ մաքսային օրենսգրքի 226-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ վարչական պատասխանատվության ենթարկվող անձն իր նկատմամբ վարույթ սկսվելու պահից իրավունք ունի՝

ա) տալ բացատրություններ.

բ) հարուցել միջնորդություններ.

գ) օգտվել փաստաբանի կամ մասնագետի ծառայությունից.

դ) ելույթ ունենալ մայրենի լեզվով և օգտվել թարգմանչի ծառայություններից, եթե չի տիրապետում հայերենին.

ե) ծանոթանալ գործի նյութերին.

զ) բողոքարկել վարչական տույժ նշանակելու մասին որոշումը.

է) իմանալ, թե ինչի համար է իր նկատմամբ վարույթ հարուցվել.

ը) վարույթն իրականացնող մարմնից ստանալ վարույթի ընթացքում իր իրավունքների մասին պարզաբանումներ.

թ) առարկել վարույթն իրականացնող մարմնի գործողությունների դեմ և պահանջել իր առարկությունները մտցնել արձանագրության մեջ.

ժ) հայտնել բացարկներ.

ժա) ծանոթանալ արձանագրություններին, որոնց նա մասնակցել կամ ներկա է

գտնվել, դիտողություններ ներկայացնել արձանագրությունում գրառումների ճշտության և լրիվության կապակցությամբ, պահանջել արձանագրության մեջ գրառումներ կատարել այն հանգամանքների մասին, որոնք իր կարծիքով պետք է նշվեն:

Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 252-րդ հոդվածի համաձայն՝ մարմինը (պաշտոնատար անձը) ապացույցները գնահատում է իր ներքին համոզմունքով, որը հիմնված է գործի՝ իրենց ամբողջությամբ վերցված բոլոր հանգամանքների համակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտման վրա, ղեկավարվելով օրենքով:

Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 275-րդ հոդվածի 2-րդ կետի համաձայն՝ վարչական իրավախախտման վերաբերյալ գործը քննության նախապատրաստելիս մարմինը (պաշտոնատար անձը) լուծում է հետևյալ հարցերը՝ ճիշտ են կազմվել արդյոք, վարչական իրավախախտման վերաբերյալ գործի արձանագրությունը և մյուս նյութերը:

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 63-րդ հոդվածի 1-ին մասի «ա» կետի համաձայն՝ անվավեր է առ ոչինչ չհանդիսացող այն ոչ իրավաչափ վարչական ակտը, որն ընդունվել է օրենքի խախտմամբ, այդ թվում՝ օրենքի սխալ կիրառման կամ սխալ մեկնաբանման հետևանքով:

Նույն հոդվածի 5-րդ մասի 1-ին և 2-րդ պարբերությունների համաձայն՝ որպես կանոն, վարչական ակտն անվավեր է ճանաչվում ամբողջությամբ:

Վարչական ակտը մի մասով անվավեր կարող է ճանաչվել, եթե անվավեր չճանաչված մասը կարող է ուժի մեջ մնալ առանց անվավեր ճանաչված մասի:

Նշված նորմերի վերլուծությունից հետևում է, որ մաքսային կանոնների խախտման հայտնաբերման ժամանակ կազմվում է մաքսային կանոնների խախտման վերաբերյալ արձանագրություն: Այդ պահանջի կատարումը կրում է պարտադիր բնույթ և մաքսային կանոնների խախտման վերաբերյալ իրականացվող վարույթի ընթացքում ունի առանցքային նշանակություն, քանի որ այդպիսի վարույթը սկսված է համարվում արձանագրության կազմման պահից, որից անմիջապես հետո էլ վարչական պատասխանատվության ենթարկվող անձի համար ՀՀ մաքսային օրենսգրքով երաշխավորվում են այնպիսի իրավունքներ, որոնց իրականացումն անխզելիորեն կապված է նաև արձանագրություն կազմելու գործընթացի հետ:

Մաքսային կանոնների խախտման վերաբերյալ վարույթ իրականացնող պաշտոնատար անձը պարտավոր է ապացույցները գնահատել իր ներքին համոզմունքով՝ հիմնված գործի՝ իրենց ամբողջությամբ վերցված բոլոր հանգամանքների համակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտման վրա: Այդ պահանջի կատարումն ապահովելու համար վերջինս պարտավոր է նաև լուծել այն հարցը, թե արդյոք ճիշտ է կազմվել վարչական իրավախախտման վերաբերյալ արձանագրությունը:

Վերոգրյալ պահանջների խախտմամբ իրականացված մաքսային կանոնների խախտման վերաբերյալ վարույթը որևէ դեպքում չի կարող դիտվել որպես գործի՝ իրենց ամբողջությամբ վերցված բոլոր հանգամանքների համակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտման վրա հիմնված վարույթ, իսկ դրա արդյունքում ընդունված վարչական ակտը պետք է դիտվի որպես օրենքի խախտմամբ ընդունված վարչական ակտ:

Սույն գործով Դատարանը Կոմիտեի հայցը մերժելու, իսկ Էդգար Թադևոսյանի, Արգիշտի Հովսեփյանի հայցը մասնակիորեն բավարարելու հիմքում դրել է այն պատճառաբանությունը, որ Արգիշտի Հովսեփյանի նկատմամբ մաքսային կանոնների

խախտման վերաբերյալ արձանագրություն չի կազմվել, սակայն Վարչության պետը 08.08.2008 թվականի «Քրեական գործի հարուցումը մերժելու և վարչական տույժ նշանակելու մասին» որոշմամբ նրան նույնպես ենթարկել է վարչական պատասխանատվության:

Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Դատարանի նշված պատճառաբանությունը հիմավոր է, քանի որ սույն գործի փաստերի համաձայն՝ Վարչության պետի 08.08.2008 թվականի «Քրեական գործի հարուցումը մերժելու և վարչական տույժ նշանակելու մասին» որոշման մեջ նշված մաքսային կանոնների խախտման վերաբերյալ արձանագրություն կազմվել է միայն Էդգար Թադևոսյանի նկատմամբ, իսկ Արգիշտի Հովսեփյանի նկատմամբ այդպիսի արձանագրություն չի կազմվել, սակայն վերջինս նույն որոշմամբ նույնպես ենթարկվել է վարչական պատասխանատվության: Նշվածի արդյունքում Արգիշտի Հովսեփյանը զրկվել է ՀՀ մաքսային օրենսգրքով երաշխավորված իր իրավունքների իրականացումից:

Այսինքն՝ Արգիշտի Հովսեփյանի նկատմամբ մաքսային կանոնների խախտման վերաբերյալ վարույթ չի սկսվել և չի իրականացվել, սակայն վերջինիս նկատմամբ ընդունվել է վարչական պատասխանատվության ենթարկելու մասին որոշում:

Վերոգրյալի հիման վրա Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Վարչության պետի 08.08.2008 թվականի «Քրեական գործի հարուցումը մերժելու և վարչական տույժ նշանակելու մասին» որոշումը միայն Էդգար Թադևոսյանի մասով ուժի մեջ մնալու հանգամանքը պարզելու համար սույն գործն անհրաժեշտ է ուղարկել նոր քննության, քանի որ Դատարանն այդ մասով որևէ վերլուծություն չի կատարել:

Միաժամանակ, Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարում արձանագրել հետևյալը.

ՀՀ մաքսային օրենսգրքի 105-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ֆիզիկական անձինք կարող են առանց մաքսատուրք վճարելու որպես ուղեկցող բեռ Հայաստանի Հանրապետության մաքսային սահմանով տեղափոխել ապրանքներ, որոնց ներմուծման համար մաքսատուրքի դրույքաչափը նույն օրենսգրքով սահմանված չէ 0 տոկոս և որոնց ընդհանուր քաշը չի գերազանցում 50 կիլոգրամը, իսկ ընդհանուր մաքսային արժեքը՝ 150.000 դրամը:

ՀՀ Կառավարության 21.11.2003 թվականի «Հայաստանի Հանրապետության միջազգային օդանավակայաններով մեկնող և ժամանող ֆիզիկական անձանց կողմից ուղեկցվող բեռների մաքսային հսկողության իրականացման ժամանակ երկուդային համակարգի կիրառման կարգի մասին» թիվ 1927-Ն որոշման 1-ին կետով հաստատված՝ «Հայաստանի Հանրապետության միջազգային օդանավակայաններով ժամանող ֆիզիկական անձանց կողմից ուղեկցվող բեռների մաքսային հսկողության իրականացման ժամանակ երկուդային համակարգի կիրառման» կարգի 7-րդ կետի 1-ին պարբերության համաձայն՝ «Կարմիր» ուղին նախատեսված է այն ուղևորների համար, ովքեր տեղափոխում են հայտարարագրման ենթակա ապրանքներ:

Նույն կարգի 13-րդ կետի համաձայն՝ «Կանաչ» ուղին նախատեսված է այն ուղևորների համար, որոնք չունեն հայտարարագրման ենթակա ապրանքներ:

Նույն կարգի 14-րդ կետի համաձայն՝ ուղևորի կողմից «Կանաչ» ուղին ընտրելը և նույն կարգի 4.2-րդ կետում նշված «Կանաչ» ուղու ելքը հատելը համարվում է բանավոր հայտարարագրում:

Նույն կարգի 15-րդ կետի համաձայն՝ եթե բավարար հիմքեր կան ենթադրելու, որ «Կանաչ» ուղի ընտրած ուղևորի մոտ առկա են հայտարարագրման ենթակա

ապրանքներ, ապա մինչև ուղևորի կողմից «Կանաչ» ուղու մուտքը հատելը մաքսային մարմնի պաշտոնատար անձը կարող է կանգնեցնել նրան և առաջարկել տեղափոխվել «Կարմիր» ուղի:

Նույն կարգի 16-րդ կետի համաձայն՝ եթե բավարար հիմքեր կան ենթադրելու, որ «Կանաչ» ուղու ելքը հատած ուղևորն իր հետ տեղափոխում է հայտարարագրման ենթակա կամ Հայաստանի Հանրապետության մաքսային սահմանով տեղափոխման համար արգելված ապրանքներ, ապա մաքսային մարմնի պաշտոնատար անձն իրականացնում է մաքսային հսկողության գործողություններ:

Նշված նորմերի վերլուծությունից հետևում է, որ այն դեպքում, երբ տեղափոխվում են հայտարարագրման ենթակա ապրանքներ, ապա դրանք տեղափոխող անձը պարտավոր է ընտրել «Կարմիր» ուղին, իսկ հակառակ դեպքում նախատեսված է «Կանաչ» ուղին, որի ընտրության դեպքում այն հատելը համարվում է հայտարարագրման ենթակա ապրանքներ չունենալու մասին բանավոր հայտարարագրում: Այսինքն՝ «Կանաչ» ուղու ընտրության դեպքում բանավոր հայտարարագրումը կդիտվի որպես իրավաչափ միայն այն դեպքում, երբ ապրանքներ տեղափոխող անձն իր մոտ չունենա հայտարարագրման ենթակա ապրանքներ:

Հետևաբար, անհիմն է Գատարանի պատճառաբանությունն այն մասին, որ Էդգար Թադևոսյանի և Արգիշտի Հովսեփյանի կողմից «Կանաչ» ուղու ելքը հատելը կարող է գնահատվել որպես հայտարարագրման ենթակա ապրանքներ ունենալու մասին բանավոր հայտարարագրում:

Այսպիսով, սույն վճռաբեկ բողոքի հիմքի առկայությունը Վճռաբեկ դատարանը համարում է բավարար՝ «Հայաստանի Հանրապետության վարչական դատավարության օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության 2010 թվականի հոկտեմբերի 28-ի թիվ ՀՕ-135-Ն օրենքի 21-րդ հոդվածի 4-րդ մասի, ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 118-րդ և 118.3-րդ հոդվածների, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 227-րդ և 228-րդ հոդվածների ուժով Գատարանի վճիռը բեկանելու համար:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 118-րդ և 118.3-րդ հոդվածներով, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 240-241²-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

ՈՐՈՇԵՑ

1. Վճռաբեկ բողոքը բավարարել մասնակիորեն: Բեկանել ՀՀ վարչական դատարանի 25.05.2010 թվականի վճիռ՝ ՀՀ Կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի հայցը մերժելու, Էդգար Թադևոսյանի և Արգիշտի Հովսեփյանի հայցը բավարարելու մասերը և այդ մասերով գործն ուղարկել նույն դատարան՝ նոր քննության: Վճռի մնացած մասը թողնել օրինական ուժի մեջ:

2. Գատարանի ծախսերի բաշխման հարցին անդրադառնալ գործի նոր քննության ընթացքում:

3. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

*ՆԱԽԱԳԱՀՈՂ՝ արորագրություն
ԴԱՏԱՎՈՐՆԵՐ՝ արորագրություններ*

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

ՀՀ վարչական դատարանի վճիռ
Վարչական գործ թիվ ՎԳ/3633/05/09
Նախագահող դատավոր՝ Ա. Ղազարյան

Վարչական գործ թիվ ՎԳ/3633/05/09
2011թ.

ՈՐՈՇՈՒՄ
ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քաղաքացիական
և վարչական պալատը (այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

*նախագահությամբ
մասնակցությամբ դատավորներ*

Ե. ԽՈՒՆԴԿԱՐՅԱՆԻ
Մ. ԴՐՄԵՅԱՆԻ
Վ. ԱԲԵԼՅԱՆԻ
Ս. ԱՆՏՈՆՅԱՆԻ
Վ. ԱՎԱՆԵՍՅԱՆԻ
Ա. ԲԱՐՍԵՂՅԱՆԻ
Գ. ՀԱԿՈԲՅԱՆԻ
Է. ՀԱՅՐԻՅԱՆԻ
Տ. ՊԵՏՐՈՍՅԱՆԻ
Ե. ՍՈՂՈՍՈՆՅԱՆԻ

2011 թվականի մարտի 04-ին

դռնբաց դատական նիստում, քննելով ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի (այսուհետ՝ Կոմիտե) վճռաբեկ բողոքը ՀՀ վարչական դատարանի 23.07.2010 թվականի վճռի դեմ՝ ըստ հայցի Ալեքսանդր Դերձակյանի ընդդեմ Կոմիտեի՝ միջամտող ոչ իրավաչափ վարչական ակտն անվավեր ճանաչելու պահանջի մասին, ինչպես նաև ըստ Կոմիտեի հայցի ընդդեմ Ալեքսանդր Դերձակյանի՝ տուգանքի, պետական տուրքի գումարների բռնագանձման և մաքսային պարտավորության կատարմանը պարտավորեցնելու պահանջների մասին,

ՊԱՐԶԵՑ

1. Գործի դատավարական նախապատմությունը.

Դիմելով դատարան՝ Ալեքսանդր Դերձակյանը պահանջել է անվավեր ճանաչել Կոմիտեի հետաքննության վարչության 05.06.2009 թվականի որոշումը:

Դիմելով դատարան՝ Կոմիտեն պահանջել է Ալեքսանդր Դերձակյանից բռնագանձել Կոմիտեի հետաքննության վարչության պետի 05.06.2009 թվականի որոշմամբ նշանակված վարչական տույժի և պետական տուրքի գումարները, նաև պարտավորեցնել կատարելու մաքսային պարտավորությունը:

ՀՀ վարչական դատարանի 13.08.2009 թվականի որոշմամբ նշված գործերը միացվել են մեկ վարույթում:

ՀՀ վարչական դատարանի 23.07.2010 (այսուհետ՝ Դատարան) թվականի վճռով Ալեքսանդր Դերձակյանի հայցը բավարարվել է, իսկ Կոմիտեի հայցը բավարարվել է մասնակիորեն: Վճռվել է անվավեր ճանաչել Կոմիտեի հետաքննության վարչության պետի 05.06.2009 թվականի՝ վարչական տույժ նշանակելու մասին որոշումը: Միաժամանակ, Ալեքսանդր Դերձակյանը պարտավորեցվել է ՀՀ մաքսային օրենսգրքի 40-րդ հոդվածի դրույթներին համապատասխան «Յագուար» մակնիշի ZZZ 500 պետհամարանիշի ավտոմեքենան վերահայտարարագրել «ներմուծում՝ ազատ շրջանառության համար» կամ «վերաներմուծում» մաքսային ռեժիմով: Կոմիտեի հայցը մնացած մասով մերժվել է:

Սույն գործով վճռաբեկ բողոք է ներկայացրել Կոմիտեն:

Վճռաբեկ բողոքի պատասխան չի ներկայացվել:

2. Վճռաբեկ բողոքի հիմքերը, փաստարկները և պահանջը.

Սույն վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

Վարչական դատարանը սխալ է մեկնաբանել ՀՀ մաքսային օրենսգրքի 37-րդ, 38-րդ, 39-րդ, 198-րդ հոդվածների պահանջները, խախտել է ՀՀ վարչական դատարարության օրենսգրքի 113-րդ հոդվածի 1-ին մասի պահանջները:

Բողոք բերած անձը նշված պնդումը պարձառաբանում է հետևյալ փաստարկներով.

Վարչական դատարանի կողմից հաստատվել է այն փաստը, որ «Յագուար» մակնիշի ավտոմեքենան Ալեքսանդր Դերձակյանի կողմից հանձնվել է վարելու այլ անձի՝ Գեորգի Դերձակյանին: Սակայն մի շարք իրավական նորմերի վերլուծության արդյունքում Դատարանը եկել է այն եզրահանգման, որ «տրանսպորտային միջոցը միայն վարելու համար այլ անձի հանձնելը չի կարող դիտվել ՀՀ մաքսային օրենսգրքի 198-րդ հոդվածով սահմանված կանոնների խախտում»:

Դատարանը «հանձնել» հասկացությունը դիտարկել է երկու տեսանկյունից՝ ա) որպես ֆիզիկական գործուղություն և բ) որպես իրավական կատեգորիա՝ իր հետևանքներով:

Դատարանը եկել է այն եզրահանգման, որ մաքսային հսկողության տակ գտնվող ապրանքների և տրանսպորտային միջոցների ֆիզիկական հանձնումը այլ անձանց, եթե չի խոչընդոտել մաքսային հսկողության և վերահսկողության իրականացմանը, չի հանգեցնում ՀՀ մաքսային օրենսգրքի 198-րդ հոդվածով նախատեսված մաքսային կանոնների խախտմանը: Ըստ Դատարանի՝ մաքսային կանոնների խախտում կարող է առաջացնել միայն այնպիսի հանձնումը, որը հանգեցնում է իրավական հետևանքի, մասնավորապես դժվարացնում կամ կարող է դժվարացնել «ժամանակավոր ներմուծում» մաքսային ռեժիմով ներմուծված ապրանքների նույնականացման գործընթացը՝ «վերաարտահանում» մաքսային ռեժիմով հայտարարագրելիս:

Վճռի պատճառաբանական մասում «հանձնման» հասկացությունը մեկնաբանելիս Դատարանն այն մեկնաբանել է յուրովի՝ մասնավորապես այդ գործողությունը կապելով որոշակի հետևանքների առաջացման հետ:

Դատարանն իր եզրահանգումներում սխալ մեկնաբանություն է տվել «հանձնման» գործողությանը նաև այն առումով, որ մաքսային հսկողության ներքո գտնվող ապրանքներն ու տրանսպորտային միջոցները հենց այլ անձի հանձնելու

փաստն ինքնին դժվարացնում է մաքսային հսկողության իրականացումը:

Վերոգրյալի հիման վրա բողոք բերած անձը պահանջել է բեկանել Դատարանի 23.07.2010 թվականի վճիռը և այն փոփոխել՝ Կոմիտեի միջամտող ոչ իրավաչափ վարչական ակտն անվավեր ճանաչելու վերաբերյալ Ալեքսանդր Դերձակյանի հայցապահանջը մերժել, իսկ Կոմիտեի հայցը բավարարել:

3. Վճռաբեկ բողոքի քննության համար նշանակություն ունեցող փաստերը.

Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1. Ալեքսանդր Դերձակյանը 18.04.2009 թվականին Բագրատաշենի մաքսային կետով F-20531 ԲՄՀ-ով «Ժամանակավոր ներմուծում» մաքսային ռեժիմով, 30 օր ժամկետով Հայաստանի Հանրապետության տարածք է ներմուծվել «Յագուար» մակնիշի ZZZ 500 պետհամարանիշի ավտոմեքենան (գ.թ.74, 75, 76):

2. «Յագուար» մակնիշի ZZZ 500 պետհամարանիշի ավտոմեքենան գտնվում է մաքսային հսկողության ներքո (գ.թ. 136-138):

3. Ալեքսանդր Դերձակյանի ավտոմեքենան վարել է նրա որդին՝ Գեորգի Դերձակյանը: Ալեքսանդր Դերձակյանի նկատմամբ 06.05.2009 թվականին Կոմիտեի հետաքննության վարչությունում կազմվել է մաքսային կանոնների խախտման վերաբերյալ արձանագրություն՝ ՀՀ մաքսային օրենսգրքի 198-րդ հոդվածի հատկանիշներով (գ.թ.31):

4. «Վարչական տույժ նշանակելու մասին» 05.06.2009 թվականի որոշմամբ Ալեքսանդր Դերձակյանը ճանաչվել է զանցառու՝ ՀՀ մաքսային օրենսգրքի 198-րդ հոդվածով և տուգանվել մաքսային հսկողության ներքո գտնվող և առանց մաքսային մարմնի թույլտվության այլ անձի հանձնած «Յագուար» մակնիշի ZZZ 500 պետհամարանիշի ավտոմեքենայի մաքսային արժեքի հիսուն տոկոսի չափով՝ 5.638.800 ՀՀ դրամ (գ.թ. 27-29):

5. Ալեքսանդր Դերձակյանը տրանսպորտային միջոցը սահմանված ժամկետում չի արտահանել, մինչև ժամանակ այդ ապրանքն արտահանման համար սահմանված ժամկետի լրանալուն հաջորդող տասն օրվա ընթացքում չի վերահայտարարագրել «ներմուծում՝ ազատ շրջանառության համար» կամ «վերաներմուծում» մաքսային ռեժիմով:

4. Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումները.

Քննելով վճռաբեկ բողոքը վերը նշված հիմքի սահմաններում Վճռաբեկ դատարանը գտնում է, որ այն հիմնավոր է մասնակիորեն հեղկյալ պատճառաբանությամբ.

ՀՀ մաքսային օրենսգրքի 37-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ «ժամանակավոր ներմուծում» մաքսային ռեժիմը կարգավորում է ապրանքների հետագա արտահանման պայմանով ներմուծումը Հայաստանի Հանրապետության մաքսային տարածք: Նույն օրենսգրքի 39-րդ հոդվածը սահմանում է, որ «ժամանակավոր ներմուծում» ռեժիմով ներմուծման ժամկետները հսկվում են մաքսային մարմինների կողմից:

ՀՀ մաքսային օրենսգրքի 139-րդ հոդվածի 1-ին կետի «գ» ենթակետի համաձայն՝ Հայաստանի Հանրապետության մաքսային սահմանով տեղափոխվող ապրանքները

և տրանսպորտային միջոցները, ըստ մաքսային ռեժիմների, գտնվում են մաքսային հսկողության տակ, ընդ որում «ժամանակավոր ներմուծում» և «ժամանակավոր ներմուծում» վերամշակման համար» ռեժիմների դեպքում մաքսային հսկողության տակ են գտնվում ներմուծման պահից մինչև այլ մաքսային ռեժիմով բացթողնման պահը:

ՀՀ մաքսային օրենսգրքի 189-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ մաքսային կանոնների խախտում է համարվում անձի կողմից կատարված անօրինական գործողությունը կամ անգործությունը, որն ուղղված է Հայաստանի Հանրապետության մաքսային օրենսդրությամբ և մաքսային ոլորտին առնչվող Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերով Հայաստանի Հանրապետության մաքսային սահմանով տեղափոխվող ապրանքների և տրանսպորտային միջոցների **մաքսային հսկողության և մաքսային ձևակերպման սահմանված կարգի դեմ**, և որի համար նույն օրենսգրքով նախատեսված է պատասխանատվություն: Նույն հոդվածի 2-րդ կետը սահմանում է, որ ֆիզիկական և պաշտոնատար անձինք մաքսային կանոնները դիտավորյալ կամ անզգուշորեն խախտելու համար ենթակա են պատասխանատվության:

ՀՀ մաքսային օրենսգրքի 198-րդ հոդվածի համաձայն՝ մաքսային հսկողության ներքո գտնվող ապրանքներն առանց մաքսային մարմնի թույլտվության հանձնելը, օտարելը, ոչնչացնելը կամ կորցնելը՝ առաջացնում է տուգանքի նշանակում՝ այդ ապրանքների մաքսային արժեքի հիսուն տոկոսի չափով:

Վճռաբեկ դատարանը նախկինում կայացրած որոշումներում անդրադարձել է վերը նշված հոդվածների իրավական վերլուծությանը:

Մասնավորապես, Վճռաբեկ դատարանը նշել է, որ «ժամանակավոր ներմուծում» մաքսային ռեժիմի ներքո ներմուծված ապրանքները և տրանսպորտային միջոցները ներմուծման պահից մինչև այլ մաքսային ռեժիմով բացթողնման պահը գտնվում են մաքսային հսկողության տակ, և այդ ժամանակահատվածում առանց մաքսային մարմնի թույլտվության նշված ապրանքները կամ տրանսպորտային միջոցներն այլ անձի հանձնելը որակվում է մաքսային կանոնների խախտում, և նման իրավախախտում կատարած անձը ենթակա է պատասխանատվության ապրանքների կամ տրանսպորտային միջոցների մաքսային արժեքի հիսուն տոկոսի չափով տուգանքի տեսքով (*տես՝ Արթուր Մարտիրոսյանի հայցն ընդդեմ ՀՀ կառավարությանն առընթեր մաքսային պետական կոմիտեի՝ կոմիտեի հետաքննության և իրավաբանական վարչության պետի «Վարչական փուլի նշանակելու մասին» 10.07.2008 թվականի որոշումն անվավեր ծանուցելու, ավերումն արձեան «Ապավեն» ՍՊԸ-ի մաքսային պահեստը հանձնելու հետևանքով մեքենայի պահպանության արժեքը վճարելուց ազատելու պահանջների մասին, ինչպես նաև Կոմիտեի հայցն ընդդեմ Արթուր Մարտիրոսյանի՝ տուգանքի և պետական փուլի գումարները բռնագանձելու պահանջի մասին վարչական գործով Վճռաբեկ դատարանի 13.02.2009 թվականի թիվ ՎԳ/4709/05/08 որոշումը*):

Սույն գործի փաստերից հետևում է, որ Ալեքսանդր Դերձակյանը Հայաստանի Հանրապետության տարածք է ներմուծել «Յագուար» մակնիշի ZZZ 500 պետհամարանիշի ավտոմեքենան, որը 22.04.2009 թվականին՝ ժամը 19.00-ի սահմաններում, գտնվել է քաղաքացի Գեորգի Դերձակյանի տիրապետման ներքո, ինչն էլ պարզվել է ՀՀ ոստիկանության պետավտոտեսչության և Կոմիտեի մաքսանենգության դեմ պայքարի վարչության աշխատակիցների համատեղ միջոցառումների իրականացման ժամանակ: Գործում ամկա Գեորգի Դերձակյանի

կողմից տրված 25.04.2009 թվականի բացատրության համաձայն՝ Գեորգի Դերձակյանն ունեցել է հոր՝ Ալեքսանդր Դերձակյանի կողմից տրված հավատարմագիր:

Վճարել դատարանը գրնում է, որ սույն գործով Ալեքսանդր Դերձակյանի կողմից ՀՀ մաքսային օրենսգրքի 198-րդ հոդվածով նախատեսված զանցանք կատարած լինելու փաստը հաստատված համարելու համար անհրաժեշտ է պարզել, թե արդյոք Ալեքսանդր Դերձակյանի կողմից «Յագուար» մակնիշի ZZZ 500 պերհամարանիշի ավտոմեքենան հանձնվել է Գեորգի Դերձակյանին, թե՛ ոչ:

Սույն գործով Դատարանը, պատճառաբանելով, որ Ալեքսանդր Դերձակյանի կողմից ավտոմեքենան Գեորգի Դերձակյանին միայն վարելու համար հանձնելը չի կարող դիտարկվել որպես մաքսային կանոնների խախտում, քանի որ հանձնման այդ եղանակով մաքսային մարմինների համար մաքսային հսկողության տակ գտնվող ապրանքի նկատմամբ մաքսային հսկողություն իրականացնելու հարցում որևէ խոչընդոտ չի հարուցվել, այն դուրս չի եկել մաքսային մարմնի վերահսկողությունից, քանի որ, թե այն ժամանակ, և թե ներկայումս տրանսպորտային միջոցը գտնվել և գտնվում է ՀՀ մաքսային տարածքում և ՀՀ մաքսային մարմինների վերահսկողության ներքո, գտել է, որ այդ հանձնումը համարվում է ֆիզիկական գործողություն և չի կարող առաջացնել ՀՀ մաքսային օրենսգրքի 198-րդ հոդվածով նախատեսված պատասխանատվություն:

Միաժամանակ, Դատարանն արձանագրել է, որ եթե ավտոտրանսպորտային միջոցների հանձնումը չի խոչընդոտում ՀՀ մաքսային օրենսգրքի 138-րդ և 139-րդ հոդվածների կանոնակարգումների համադրմամբ մաքսային մարմինների կողմից իրականացվող մաքսային հսկողության իրականացմանը, ապա այդ հանձնումը համարվում է ֆիզիկական գործողություն և չի կարող առաջացնել 198-րդ հոդվածով նախատեսված պատասխանատվություն:

Բացի այդ, Դատարանը նշել է, որ տրանսպորտային միջոցներն առանց մաքսային մարմնի թույլտվության մասնակի կամ ամբողջությամբ հանձնելն այլ անձի կդիտարկվի խախտում միայն այդ հանձնմամբ մաքսային հսկողության տակ գտնվող ապրանքի մաքսային մարմնի վերահսկողությունից դուրս մնալու պարագայում: Հակառակ դեպքում փոխադրամիջոցների խափանման դեպքում տեխսպասարկման կետի արհեստավորին հանձնելը կամ կայանման նպատակով գիշերային ավտոկայանատեղիի պահակին հանձնելը, կամ ավտովագման կետի աշխատակցին հանձնելը (ֆիզիկական հանձնում) ևս կհամարվի խախտում, իսկ այդպիսի մոտեցումը կհակասի ՀՀ Սահմանադրությամբ և ՀՀ քաղաքացիական օրենսգրքով երաշխավորված գույքը պահպանելու, օգտագործելու և տնօրինելու կանոններին:

ՀՀ մաքսային օրենսգրքի 2-րդ հոդվածի «ժգ» կետի համաձայն՝ **մաքսային հսկողություն է** համարվում Հայաստանի Հանրապետության օրենքներով և այլ **իրավական ակտերով**, ինչպես նաև միջազգային պայմանագրերով **ամրագրված դրույթների պահպանման նպատակով մաքսային մարմինների կողմից իրականացվող միջոցառումների համակարգը:**

ՀՀ մաքսային օրենսգրքի 138-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ ապրանքների և տրանսպորտային միջոցների տեղափոխման կարգի պահպանումն ապահովելու նպատակով իրականացվում է մաքսային հսկողություն: Մաքսային հսկողության ենթակա են Հայաստանի Հանրապետության մաքսային սահմանով տեղափոխվող բոլոր ապրանքներն ու տրանսպորտային միջոցները, եթե սույն օրենսգրքով այլ բան նախատեսված չէ:

Նույն հոդվածի 2-րդ կետի համաձայն՝ մաքսային հսկողությունն իրականացվում է մաքսային մարմինների պաշտոնատար անձանց կողմից՝

ա) մաքսային նպատակներով անհրաժեշտ տեղեկությունների և փաստաթղթերի ստուգմամբ.

բ) մաքսային զննմամբ (ապրանքների և տրանսպորտային միջոցների զննում, անձի քննում որպես մաքսային հսկողության առանձնահատուկ ձև).

գ) ապրանքների և տրանսպորտային միջոցների հաշվառմամբ.

դ) ֆիզիկական անձանց բանավոր հարցմամբ.

ե) հաշվառման և հաշվետվության համակարգերի կիրառման ստուգմամբ.

զ) մաքսային պահեստների, ազատ մաքսային պահեստների և ազատ տնտեսական գոտիների, անմաքս առևտրի խանութների, մաքսային հսկողության գոտիների և այլ շինությունների ու տարածքների զննմամբ, որտեղ կարող են գտնվել մաքսային հսկողության ենթակա ապրանքներ և տրանսպորտային միջոցներ կամ իրականացվել այնպիսի գործողություններ, որոնք ենթակա են մաքսային հսկողության.

է) մաքսային ապահովումների կիրառմամբ.

ը) օրենքով նախատեսված հսկողության այլ ձևերով.

թ) ապրանքների և տրանսպորտային միջոցների հետքացոլումային հսկողությամբ:

Հիմք ընդունելով վերոգրյալը՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ մաքսային հսկողության իրականացումը նպատակ ունի ապահովել Հայաստանի Հանրապետության օրենքներով և այլ **իրավական ակտերով**, ինչպես նաև միջազգային պայմանագրերով **ամրագրված դրույթների պահպանումը**, ինչպես նաև պահպանել ապրանքների և տրանսպորտային միջոցների տեղափոխման կարգը:

Վճռաբեկ դատարանը գտնում է, որ օրենսդիրը, ՀՀ մաքսային օրենսգրքի 139-րդ հոդվածի 1-ին կետի «գ» ենթակետի ուժով ամրագրելով, որ «ժամանակավոր ներմուծում» մաքսային ռեժիմով գրանցված տրանսպորտային միջոցները ներմուծման պահից մինչև այլ մաքսային ռեժիմով բացթողնման պահը գտնվում են մաքսային հսկողության տակ, միաժամանակ ՀՀ մաքսային օրենսգրքի 198-րդ հոդվածով սահմանել է արգելք, այն է՝ մաքսային հսկողության տակ գտնվող տրանսպորտային միջոցն առանց մաքսային մարմնի թույլտվության այլ անձի չհանձնելու տեսքով:

Հիմք ընդունելով վերոգրյալը՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ մաքսային հսկողության ապահովմանն ուղղված իրավական ակտով նախատեսված պահանջ է նաև ՀՀ մաքսային օրենսգրքի 198-րդ հոդվածով նախատեսված՝ մաքսային հսկողության ներքո գտնվող ապրանքներն առանց մաքսային մարմնի թույլտվության հանձնելու արգելքը:

Այսինքն՝ օրենսդրորեն տվյալ նորմով սահմանվել է կանոն, ըստ որի՝ «ժամանակավոր ներմուծում» մաքսային ռեժիմով ներմուծված ապրանքները և տրանսպորտային միջոցներն իրավունք ունի **փաստացի տիրապետել և օգտագործել** միայն այն անձը, որը ստացել է թույլտվություն ապրանքները և տրանսպորտային միջոցները տվյալ ռեժիմով ներմուծելու համար: Ընդ որում, տվյալ նորմի պահպանման նպատակով էլ իրականացվում է մաքսային հսկողություն:

Ինչ վերաբերում է Դատարանի վճռի հիմքում դրված այն հանգամանքին, որ եթե ավտոտրանսպորտային միջոցների հանձնումը չի խոչընդոտում ՀՀ մաքսային օրենսգրքի 138-րդ հոդվածով նախատեսված մաքսային մարմինների կողմից իրականացվող մաքսային հսկողության իրականացմանը, այդ հանձնումը

համարվում է ֆիզիկական գործողություն և չի կարող առաջացնել նույն օրենսգրքի 198-րդ հոդվածով նախատեսված պատասխանատվություն, ապա Վճռաբեկ դատարանն այն անհիմն է համարում, քանի որ օրենսդիրը ՀՀ մաքսային օրենսգրքի 138-րդ հոդվածի 2-րդ կետով սահմանել է մաքսային հսկողության իրականացման ձևերը, այլ ոչ թե մաքսային հսկողության նպատակը և խնդիրները: Հետևաբար, անհիմն է Դատարանի պատճառաբանությունը, որով մաքսային հսկողության իրականացումը և դրա խախտման համար նախատեսված պատասխանատվության առաջացումը կախվածության մեջ է դնում ՀՀ մաքսային օրենսգրքի 138-րդ հոդվածով նախատեսված մաքսային հսկողության ձևերի իրականացման հետ:

Հիմք ընդունելով վերոգրյալը և սույն գործի փաստերը համադրելով՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ սույն գործով Ալեքսանդր Դերձակյանը, «Ժամանակավոր ներմուծում» մաքսային ռեժիմով ներմուծած «Յագուար» մակնիշի ZZZ 500 պետհամարանիշի ավտոմեքենան **հավատարմագրով** 22.04.2009 թվականին առանց մաքսային մարմնի թույլտվության **հանձնելով** որդու՝ Գեորգի Դերձակյանի **փաստացի տիրապետմանը և օգտագործմանը**, թույլ է տվել ՀՀ մաքսային օրենսգրքի 198-րդ հոդվածով սահմանված խախտում:

Ինչ վերաբերում է Դատարանի այն փաստարկին, որ հակառակ դեպքում փոխադրամիջոցների խափանման դեպքում տեխսպասարկման կետի արհեստավորին հանձնելը կամ կայանման նպատակով գիշերային ավտոկայանատեղիի պահակին հանձնելը կամ ավտովագման կետի աշխատակցին հանձնելը (ֆիզիկական հանձնում) ՀՀ մաքսային օրենսգրքի 198-րդ հոդվածի ուժով նույնպես կհամարվի խախտում, ապա Վճռաբեկ դատարանը գտնում է, որ նշված նպատակներով ապրանքների և տրանսպորտային միջոցների հանձնումը ՀՀ մաքսային օրենսգրքի 198-րդ հոդվածի ուժով «հանձնում» չէ և չի առաջացնում օրենքով նախատեսված պատասխանատվություն, քանի որ նման գործողություններով ավտոմեքենան ներմուծողը ավտոմեքենան չի հանձնում այլ անձի **տիրապետմանը և օգտագործմանը**:

Բացի այդ, ՀՀ մաքսային օրենսգրքի 37-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ «Ժամանակավոր ներմուծում» մաքսային ռեժիմը կարգավորում է ապրանքների հետագա արտահանման պայմանով ներմուծումը Հայաստանի Հանրապետության մաքսային տարածք:

ՀՀ մաքսային օրենսգրքի 38-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ ժամանակավոր ներմուծումը թույլատրվում է պայմանով, որ ապրանքները կարող են նույնականացվել մաքսային մարմնի կողմից «վերաարտահանում» մաքսային ռեժիմով դրանց հետագա արտահանման ժամանակ:

Վերը նշված հոդվածներից հետևում է, որ «Ժամանակավոր ներմուծում» մաքսային ռեժիմը կոչված է ապահովելու ներմուծված ապրանքների հետագա արտահանումը, որի համար էլ ներմուծման ժամկետները հսկվում են մաքսային մարմինների կողմից: Ընդ որում, տվյալ ռեժիմով ներմուծված ապրանքները պետք է գտնվեն անփոփոխ վիճակում (բացառությամբ՝ օգտագործման կամ պահպանման կամ տեղափոխման հետևանքով բնական մաշվածության կամ բնական կորստի), որը հնարավորություն կտա ապահովել այդ ապրանքների նույնականացումը մաքսային մարմինների կողմից:

Հետևաբար, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ հայտարարատուի կողմից ներմուծված ապրանքների պահպանվածությունն ապահովելու համար

թույլատրվում է այդ ապրանքները ժամանակավոր այլ անձանց հանձնել առանց մաքսային մարմինների թույլտվության: Մասնավորապես, ապրանքները բարվոք վիճակում պահպանելու համար ներմուծված ապրանքներն առանց մաքսային մարմնի թույլտվության կարող են հանձնվել տվյալ ապրանքների սարքին լինելու հանգամանքը պարզելու համար տեխնիկական սպասարկման, վերանորոգման կետեր, ավտովացման կետեր կամ կարող են կայանման նպատակով գիշերային ավտոկայանատեղիի պահակին հանձնել, որը նույնպես չի կարող գնահատվել ներմուծողի կողմից ավտոմեքենան այլ անձի **տիրապետմանը և օգտագործմանը** հանձնում:

Այսպիսով, սույն վճռաբեկ բողոքի հիմքի առկայությունը Վճռաբեկ դատարանը դիտում է բավարար՝ «ՀՀ վարչական դատավարության օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» 28.10.2010 թվականի թիվ ՀՕ-135-Ն ՀՀ օրենքի 21-րդ հոդվածի 4-րդ մասի, ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 118-րդ հոդվածի, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 227-228-րդ հոդվածների ուժով Դատարանի վճիռը մասնակիորեն բեկանելու համար:

Միաժամանակ, հաշվի առնելով այն հանգամանքը, որ սույն գործով Ալեքսանդր Դերձակյանը վարչական ակտը վիճարկել է նաև նշանակված վարչական վարույթին պատշաճ ձևով ծանուցված չլինելու հիմքով, ինչպես նաև ավտոմեքենայի մաքսային արժեքի չափի հետ համաձայն չլինելու հիմքով և հաշվի առնելով այն հանգամանքը, որ Դատարանը չի անդրադարձել Ալեքսանդր Դերձակյանի հայցի վերը նշված հիմքերին, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ սույն գործը պետք է ուղարկվել նոր քննության՝ վերոնշյալ հանգամանքները պարզելու համար:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 118-րդ հոդվածով, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 240-241²-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

ՈՐՈՇԵՑ

1. Վճռաբեկ բողոքը բավարարել մասնակիորեն: Բեկանել ՀՀ վարչական դատարանի 23.07.2010 թվականի վճի՛ Ալեքսանդր Դերձակյանի հայցը բավարարելու մասը և ՀՀ կառավարությանն աղընթեր պետական եկամուտների կոմիտեի հայցը մերժելու մասը և գործն այդ մասերով ուղարկել նույն դատարան՝ նոր քննության: Վճի՛ մնացած մասը թողնել օրինական ուժի մեջ:
2. Պետական տուրքի բաշխման հարցին անդրադառնալ գործի նոր քննության ընթացքում:
3. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

*ՆԱԽԱԳԱՀՈՂ՝ ստորագրություն
ԴԱՏԱՎՈՐՆԵՐ՝ ստորագրություններ*

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

ՀՀ վարչական դատարանի վճիռ
Վարչական գործ թիվ ՎԳ/0927/05/10
Նախագահող դատավոր՝ Ռ. Հակոբյան

Վարչական գործ թիվ ՎԳ/0927/05/10
2011թ.

ՈՐՈՇՈՒՄ

ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քաղաքացիական և
վարչական պալատը (այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

*նախագահությամբ
մասնակցությամբ դատավորներ*

Ե. ԽՈՒՆԴԿԱՐՅԱՆԻ
Տ. ՊԵՏՐՈՍՅԱՆԻ
Վ. ԱԲԵԼՅԱՆԻ
Վ. ԱՎԱՆԵՍՅԱՆԻ
Ա. ԲԱՐՍԵՂՅԱՆԻ
Մ. ԴՐՄԵՅԱՆԻ
Գ. ՀԱԿՈԲՅԱՆԻ
Ե. ՍՈՂՈՄՈՆՅԱՆԻ

2011 թվականի հուլիսի 01-ին

դռնբաց դատական նիստում, քննելով ՀՀ կառավարությանն առընթեր պետական
եկամուտների կոմիտեի (այսուհետ՝ Կոմիտե) վճռաբեկ բողոքը ՀՀ վարչական
դատարանի 08.07.2010 թվականի վճիռ դեմ՝ ըստ հայցի Գևորգ Աղրյանի ընդդեմ
Կոմիտեի, երրորդ անձինք «Էյր Արմենիա» ՓԲԸ-ի, «Արմենիա Տելեֆոն Կոմպանի»
ՓԲԸ-ի՝ Կոմիտեի 05.03.2010 թվականի «Վարչական տույժ նշանակելու մասին»
որոշումն առոչինչ ձանաչելու պահանջի մասին,

ՊԱՐԶԵՑ

1. Գործի դատավարական նախապատմությունը

Դիմելով դատարան՝ Գևորգ Աղրյանը պահանջել է առոչինչ ձանաչել Կոմիտեի
05.03.2010 թվականի «Վարչական տույժ նշանակելու մասին» որոշումը:

ՀՀ վարչական դատարանի (այսուհետ՝ Դատարան) 08.07.2010 թվականի վճռով
հայցը բավարարվել է:

Սույն գործով վճռաբեկ բողոք է ներկայացրել Կոմիտեի:

Վճռաբեկ բողոքի պատասխան է ներկայացրել Գևորգ Աղրյանը:

2. Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը

Սույն վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքի սահմաններում ներքոհիշյալ
հիմնավորումներով.

Դատարանը չի կիրառել ՀՀ մաքսային օրենսգրքի 2-րդ հոդվածի «ժ» և «ժա» կետերը, ՀՀ մաքսային վարչության պետի 12.06.1998 թվականի թիվ 78-ՄՎԸ հրամանը, որոնք պետք է կիրառեր, սխալ է մեկնաբանել ՀՀ մաքսային օրենսգրքի 128-րդ, 131-րդ, 132-րդ հոդվածները, խախտել է ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 113-րդ հոդվածը:

Բողոք բերած անձը նշված պնդումը պարզապես անհիմն է հերկյալ փաստարկներով:

Դատարանը հաշվի չի առել, որ 10.02.2010 թվականի թիվ C-2345 բեռնամաքսային հայտարարագիրն անմիջականորեն լրացվել և մաքսային մարմին է ներկայացվել Գևորգ Աղոյանի կողմից: Սույն գործով միայն Գևորգ Աղոյանը կարող էր հայտարարագրել «Արմենիա Տելեֆոն Կոմպանի» ՓԲԸ-ի անվամբ ստացված բեռը, միայն նա իրավունք ուներ գնել և չափել մաքսային հսկողության ներքո գտնվող ապրանքները, որի արդյունքում կհայտնաբերվեր փաստացի ներմուծված ապրանքի և փաստաթղթերի միջև առկա անհամապատասխանությունը և կկանխվեր մաքսային կանոնների խախտումը:

Բացի այդ, 30.12.2009 թվականի թիվ AA-296 լիազորագրով «Էյր Արմենիա» ՓԲԸ-ն լիազորել է Գևորգ Աղոյանին Կոմիտեում կատարել ցանկացած տեսակի գործողություն, այդ թվում և մաքսային ձևակերպումները, իսկ հայտարարագրումը մաքսային ձևակերպման փուլերից է: Այսինքն՝ Գևորգ Աղոյանը, լիազորված լինելով կատարելու մաքսային ձևակերպումներ, այդ թվում՝ ներկայացնելու հայտարարագիր, ՀՀ մաքսային օրենսգրքի 131-րդ հոդվածի 1-ին մասի ուժով հանդես է եկել որպես հայտարարատու, ստանձնել է հայտարարատուի իրավունքներն ու պարտականությունները, ներառյալ՝ նույն օրենսգրքի 132-րդ հոդվածի 2-րդ մասի «ա» կետով սահմանված ապրանքների հայտարարագրում իրականացնելու պարտականությունը, որի ոչ պատշաճ կատարումը հանգեցրել է նույն օրենսգրքի 203-րդ հոդվածով նախատեսված պատասխանատվությանը:

Վերոգրյալի հիման վրա բողոք բերած անձը պահանջել է բեկանել Դատարանի 08.07.2010 թվականի վճիռը և այն փոփոխել՝ հայցը մերժել:

2.1. Վճռաբեկ բողոքի պատասխանի հիմքերը և փաստարկները

ՀՀ մաքսային օրենսգրքի 131-րդ հոդվածի 1-ին մասում նշված է, որ որպես հայտարարատու կարող է հանդես գալ ապրանքներ տեղափոխողը կամ նրա լիազորված անձը: Տվյալ դեպքում ապրանքներ տեղափոխողը «Արմենիա Տելեֆոն Կոմպանի» ՓԲԸ-ն է, «Էյր Արմենիա» ՓԲԸ-ն ապրանքներ տեղափոխող չէ, իսկ վերջինիս լիազորված անձը Գևորգ Աղոյանն է: Այսինքն՝ Գևորգ Աղոյանը ոչ մի կերպ չի կարող դիտվել որպես հայտարարատու:

3. Վճռաբեկ բողոքի քննության համար նշանակություն ունեցող փաստերը

Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1) «Արմենիա Տելեֆոն Կոմպանի» ՓԲԸ-ի և «Էյր Արմենիա» ՓԲԸ-ի միջև 01.12.2009 թվականին կնքված ծառայությունների մատուցման պայմանագրի համաձայն՝ «Էյր Արմենիա» ՓԲԸ-ն պարտավորվել է կատարել «Արմենիա Տելեֆոն Կոմպանի» ՓԲԸ-ի ապրանքների մաքսազերծման հետ կապված անհրաժեշտ գործողությունները՝ ներմուծվող և արտահանվող ապրանքների մաքսազերծումը (գ.թ. 32-38):

2) 30.12.2009 թվականի թիվ AA-296 լիազորագրի համաձայն՝ «Էյր Արմենիա» ՓԲԸ-ն լիազորել է Գևորգ Աղոյանին ներկայացնելու ընկերությանը Կոմիտեում և մաքսային կետերում, ընկերության անունից կատարելու վճարումներ, ինչպես նաև ցանկացած տեսակի ձևակերպումներ **(գ.թ. 31)**:

3) Կոմիտեի 05.03.2010 թվականի «Վարչական տույժ նշանակելու մասին» որոշման համաձայն՝ «Էյր Արմենիա» ՓԲԸ-ի լիազոր անձ Գևորգ Աղոյանը «Արմենիա Տելեֆոն Կոմպանի» ՓԲԸ-ի անվամբ 28.01.2010 թվականի թիվ 9209057189 հաշիվ-ապրանքագրով, 04.02.2010 թվականի թիվ 730-46000205 ավիաբեռնագրով Շվեդիայից ՀՀ ներմուծված և 11.02.2010 թվականին «Զվարթնոց» մաքսատանը թիվ C-2345 բեռնամաքսային հայտարարագրով հայտարարագրված ԱՏԳ ԱԱ 85442000 ծածկագրի տակ դասվող, 4.078,3 կգ նետոտ քաշով կոաքսիլային մալուխից 3.822,25 կգ-ը ԲՄՀ-ի թիվ 1 ապրանքային դիրքում հայտարարագրել է ոչ իր անվանմամբ և ԱՏԳ ԱԱ սխալ ծածկագրով՝ որպես ԱՏԳ ԱԱ 85176100 ծածկագրի տակ դասվող կոմունիկացիոն համակարգ լրակազմ:

Նշված իրավախախտման համար Գևորգ Աղոյանը ձանաչվել է գանցառու ՀՀ մաքսային օրենսգրքի 203-րդ հոդվածով և տուգանվել 3.822,25 կգ նետոտ քաշով կոաքսիլային մալուխի մաքսային արժեքի չափով՝ 11.256.526 ՀՀ դրամ **(գ.թ. 7-9)**:

4. Վճարելի դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը

Քննելով վճարելի բողոքը վերը նշված հիմքի սահմաններում՝ Վճարելի դատարանը գտնում է, որ բողոքն անհիմն է հետևյալ պարձառաբանությամբ.

ՀՀ մաքսային օրենսգրքի 203-րդ հոդվածի համաձայն՝ Հայաստանի Հանրապետության մաքսային սահմանով տեղափոխվող ապրանքները և տրանսպորտային միջոցները չհայտարարագրելը, այսինքն՝ դրանց մասին ճշգրիտ տեղեկությունները սահմանված ձևով չհայտարարագրելը, ինչպես նաև հայտարարագրումը ոչ իրենց անվանմամբ՝ հանցագործության հատկանիշների բացակայության դեպքում, առաջացնում է տուգանքի նշանակում՝ այդ ապրանքների և տրանսպորտային միջոցների մաքսային արժեքի չափով:

ՀՀ մաքսային օրենսգրքի 2-րդ հոդվածի «ժա» կետի համաձայն՝ հայտարարատու է համարվում ապրանքներ տեղափոխող կամ մաքսային բրոքեր (միջնորդ) հանդիսացող անձը, որը մաքսային մարմիններում հայտարարագրում և ներկայացնում է ապրանքները և տրանսպորտային միջոցները:

ՀՀ մաքսային օրենսգրքի 131-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ որպես հայտարարատու կարող է հանդես գալ ապրանքներ տեղափոխող անձը կամ նրա կողմից լիազորված անձը: Նույն հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ հայտարարատուն նույն օրենսգրքի համաձայն կրում է պատասխանատվություն՝ հայտարարագրված տեղեկությունների հավաստիության համար:

Նշված դրույթների վերլուծությունից հետևում է, որ հայտարարագրված տեղեկությունների հավաստիության համար պատասխանատվություն է կրում հայտարարատուն, որպիսին համարվում է ապրանքներ տեղափոխող կամ մաքսային բրոքեր (միջնորդ) հանդիսացող անձը, կամ ապրանքներ տեղափոխող անձի լիազորված անձը:

Սույն գործով հայցը բավարարելիս Դատարանը պատճառաբանել է, որ ՀՀ մաքսային օրենսգրքի 132-րդ հոդվածով սահմանված իրավունքները և պարտականությունները վերաբերում են բացառապես հայտարարատուին և ոչ

թե հայտարարատուի լիազոր անձին: Հայտարարագրված տեղեկությունների հավաստիության համար պատասխանատվությունը ՀՀ մաքսային օրենսգրքի 131-րդ հոդվածի 3-րդ մասի հիմքով կրում է հայտարարատուն: Հետևաբար, ՀՀ մաքսային օրենսգրքի 203-րդ հոդվածով նախատեսված վարչական պատասխանատվության սուբյեկտն օրենսդիրն արդեն իսկ որոշել է, որը, նույն օրենսգրքի 131-րդ հոդվածի 3-րդ կետի համաձայն, հանդիսանում է հայտարարատուն: Գևորգ Աղոյանը ՀՀ մաքսային օրենսգրքի իմաստով հայտարարատու չի հանդիսացել: Վերջինս ընդամենը հանդիսացել է հայտարարատու «Էյր Արմենիա» ՓԲԸ-ի լիազորված անձը: Արդյունքում Դատարանը գտել է, որ վարչական ակտով Գևորգ Աղոյանի վրա դրվել է այնպիսի պարտականություն, որը կարող էր դրվել ՀՀ մաքսային օրենսգրքով նախատեսված իրենց պարտականությունները չկատարած միայն որոշակի սուբյեկտների վրա, մինչդեռ այդ սուբյեկտների մեջ հայտարարատուի լիազորված անձը չի մտնում:

Սույն գործի փաստերի համաձայն՝ «Արմենիա Տելեֆոն Կոմպանի» ՓԲԸ-ի և «Էյր Արմենիա» ՓԲԸ-ի միջև 01.12.2009 թվականին կնքված ծառայությունների մատուցման պայմանագրով «Էյր Արմենիա» ՓԲԸ-ն պարտավորվել է կատարել «Արմենիա Տելեֆոն Կոմպանի» ՓԲԸ-ի ապրանքների մաքսագերծման հետ կապված անհրաժեշտ գործողությունները՝ ներմուծվող և արտահանվող ապրանքների մաքսագերծումը, իսկ 30.12.2009 թվականի թիվ AA-296 լիազորագրի համաձայն՝ «Էյր Արմենիա» ՓԲԸ-ն լիազորել է Գևորգ Աղոյանին ներկայացնելու ընկերությանը Կոմիտեում և մաքսային կետերում, ընկերության անունից կատարելու վճարումներ, ինչպես նաև ցանկացած տեսակի ձևակերպումներ: Կոմիտեի 05.03.2010 թվականի «Վարչական տույժ նշանակելու մասին» որոշման համաձայն՝ «Էյր Արմենիա» ՓԲԸ-ի լիազոր անձ Գևորգ Աղոյանը «Արմենիա Տելեֆոն Կոմպանի» ՓԲԸ-ի անվամբ 28.01.2010 թվականի թիվ 9209057189 հաշիվ-ապրանքագրով, 04.02.2010 թվականի թիվ 730-46000205 ավիաբեռնագրով Շվեդիայից ՀՀ ներմուծված և 11.02.2010 թվականին «Զվարթնոց» մաքսատանը թիվ C-2345 քեռնամաքսային հայտարարագրով հայտարարագրված ԱՏԳ ԱԱ 85442000 ծածկագրի տակ դասվող, 4.078,3 կգ նետտո քաշով կոաքսիլային մալուխից 3.822,25 կգ-ը ԲՄՀ-ի թիվ 1 ապրանքային դիրքում հայտարարագրել է ոչ իր անվանմամբ և ԱՏԳ ԱԱ սխալ ծածկագրով՝ որպես ԱՏԳ ԱԱ 85176100 ծածկագրի տակ դասվող կոմունիկացիոն համակարգ լրակազմ, որի համար ճանաչվել է զանցառու ՀՀ մաքսային օրենսգրքի 203-րդ հոդվածով և տուգանվել 3.822,25 կգ նետտո քաշով կոաքսիլային մալուխի մաքսային արժեքի չափով՝ 11.256.526 ՀՀ դրամ:

Հիմք ընդունելով վերոգրյալը՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ տվյալ դեպքում ապրանքներ տեղափոխողը «Արմենիա Տելեֆոն Կոմպանի» ՓԲԸ-ն է, որը ներմուծած և արտահանած ապրանքների մաքսագերծման հետ կապված անհրաժեշտ գործողությունների կատարման համար լիազորել է «Էյր Արմենիա» ՓԲԸ-ին, իսկ Գևորգ Աղոյանը «Էյր Արմենիա» ՓԲԸ-ի լիազորված անձն է: Այսինքն՝ Գևորգ Աղոյանը «Արմենիա Տելեֆոն Կոմպանի» ՓԲԸ-ի լիազորված անձը չէ, հետևաբար ՀՀ մաքսային օրենսգրքի 2-րդ հոդվածի «ժա» կետի և 131-րդ հոդվածի 1-ին մասի ուժով չի կարող համարվել հայտարարատու, այսինքն՝ պատասխանատվություն չի կարող կրել հայտարարագրված տեղեկությունների հավաստիության համար:

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 62-րդ հոդվածի դ) կետի համաձայն՝ առ ոչինչ է այն վարչական ակտը, որում առկա են, մասնավորապես՝ հետևյալ ակնառու կոպիտ սխալները. ակտով դրա հասցեատիրոջ վրա դրվում է ակնհայտ ոչ իրավաչափ պարտականություն, կամ նրան տրամադրվում է

ակնհայտ ոչ իրավաչափ իրավունք:

Նման պայմաններում Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Գևորգ Աղրյանը ՀՀ մաքսային օրենսգրքի 203-րդ հոդվածով նախատեսված վարչական պատասխանատվության սուբյեկտ չէ, այսինքն՝ նրա վրա դրվել է ակնհայտ ոչ իրավաչափ պարտականություն, հետևաբար Կոմիտեի 05.03.2010 թվականի «Վարչական տույժ նշանակելու մասին» որոշումն առ ոչինչ վարչական ակտ է:

Այսպիսով, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ սույն գործով Դատարանը կայացրել է ըստ էության ճիշտ դատական ակտ, հետևաբար տվյալ դեպքում անհրաժեշտ է կիրառել ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 240-րդ հոդվածի 1-ին կետի 1-ին ենթակետով սահմանված՝ ստորադաս դատարանի թերի պատճառաբանված դատական ակտն անփոփոխ թողնելու Վճռաբեկ դատարանի լիազորությունը:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «ՀՀ վարչական դատավարության օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության 2010 թվականի հոկտեմբերի 28-ի թիվ ՀՕ-135-Ն օրենքի 21-րդ հոդվածի 4-րդ մասով, ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 118-րդ և 118.3-րդ հոդվածներով, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 240-241²-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

ՈՐՈՇԵՑ

1. Վճռաբեկ բողոքը մերժել: ՀՀ վարչական դատարանի 08.07.2010 թվականի վճիռը թողնել օրինական ուժի մեջ սույն որոշման պատճառաբանություններով:

2. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

*ՆԱԽԱԳԱՀՈՂ՝ ստորագրություն
ԴԱՏԱՎՈՐՆԵՐ՝ ստորագրություններ*

ԳՈՒՅՔԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱՆՑՈՒՄ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

ՀՀ վարչական վերաքննիչ
դատարանի որոշում

Վարչական գործ թիվ ՎԳՅ/0150/05/10
2011թ.

Վարչական գործ թիվ ՎԳՅ/0150/05/10

Նախագահող դատավոր՝ Ա. Աբովյան
Դատավորներ՝ Գ. Ղարիբյան
Ա. Առաքելյան

ՈՐՈՇՈՒՄ ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քաղաքացիական
և վարչական պալատը (այսուհետ՝ վճռաբեկ դատարան)

*նախագահությամբ
մասնակցությամբ դատավորներ*

Ե. ԽՈՒՆԴԿԱՐՅԱՆԻ
Ս. ԱՆՏՈՆՅԱՆԻ
Վ. ԱԲԵԼՅԱՆԻ
Վ. ԱՎԱՆԵՍՅԱՆԻ
Ա. ԲԱՐՍԵՂՅԱՆԻ
Մ. ԴՐՄԵՅԱՆԻ
Գ. ՀԱԿՈԲՅԱՆԻ
Է. ՀԱՅՐԻՅԱՆԻ
Տ. ՊԵՏՐՈՍՅԱՆԻ
Ե. ՍՈՂՈՄՈՆՅԱՆԻ

2011 թվականի դեկտեմբերի 27-ին

դռնբաց դատական նիստում, քննելով Դավիթ Խաչատրյանի վճռաբեկ բողոքը ՀՀ վարչական վերաքննիչ դատարանի 07.06.2011 թվականի որոշման դեմ՝ ըստ Դավիթ Խաչատրյանի հայցի ընդդեմ Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի Արտաշատի տարածքային ստորաբաժանման (այսուհետ՝ Կադաստր)՝ պետական գրանցման մերժումն անիրավաչափ և անվավեր ձանաչելու, անշարժ գույքի սեփականության իրավունքը գրանցելուն պարտավորեցնելու պահանջների մասին,

ՊԱՐԶԵՑ

1. Գործի դատավարական նախապատմությունը

Դիմելով դատարան՝ Դավիթ Խաչատրյանը պահանջել է անիրավաչափ

և անվավեր ճանաչել Կադաստրի կողմից նվիրատվության պայմանագրից ծագող իրավունքների պետական գրանցման մերժումը, պարտավորեցնել Կադաստրին գրանցելու 23.03.2010 թվականին նոտարական վավերացում ստացած նվիրատվության պայմանագրից ծագող սեփականության իրավունքը:

ՀՀ վարչական դատարանի (այսուհետ՝ Դատարան) 20.12.2010 թվականի վճռով հայցը մերժվել է:

ՀՀ վարչական վերաքննիչ դատարանի (այսուհետ՝ Վերաքննիչ դատարան) 07.06.2011 թվականի որոշմամբ Դավիթ Խաչատրյանի վերաքննիչ բողոքը մերժվել է՝ Դատարանի 20.12.2010 թվականի վճիռը թողնվել է անփոփոխ:

Սույն գործով վճռաբեկ բողոք է ներկայացրել Դավիթ Խաչատրյանը:

Վճռաբեկ բողոքի պատասխան չի ներկայացվել:

2. Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը

Սույն վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

Վերաքննիչ դատարանը սխալ է մեկնաբանել «Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին» ՀՀ օրենքի 43-րդ հոդվածի 1-ին մասի «ա» կետը, կիրառել է «Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին» ՀՀ օրենքի 23-րդ և 54-րդ հոդվածները, որոնք չպետք է կիրառել, չի կիրառել նույն օրենքի 43-րդ հոդվածի 2-րդ մասը, որը պետք է կիրառել:

Բողոքը բերած անձը նշված պնդումը պարզապես անհիմն է հետևյալ փաստարկներով.

Վերաքննիչ դատարանը «Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին» ՀՀ օրենքի 43-րդ հոդվածի 1-ին մասի «ա» կետը մեկնաբանելիս պարտավոր էր ղեկավարվել «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 86-րդ հոդվածի 1-ին մասի պահանջով և իրավական նորմը մեկնաբանել դրանում պարունակվող բառերի և արտահայտությունների տառացի նշանակությամբ: Նշված հոդվածում օգտագործվում է «գրանցման համար ներկայացված փաստաթղթերը» բառերը, իսկ գրանցման համար ներկայացվում են անշարժ գույքի նկատմամբ սեփականության կամ օգտագործման իրավունք, դրա սահմանափակումները, ծագումը, փոփոխումը, դադարումը հաստատող փաստաթղթերը, որոնց շարքում դիմումը, որի միջոցով ներկայացվում են այդ փաստաթղթերը, թվարկված չէ:

«Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին» ՀՀ օրենքի 23-րդ և 54-րդ հոդվածները, սահմանելով գույքի նկատմամբ իրավունքի գրանցման ներկայացնելու 30-օրյա ժամկետ, այդ ժամկետի խախտման համար չեն նախատեսել որևէ հետևանք, իսկ նույն օրենքի 43-րդ հոդվածը 23-րդ և 54-րդ հոդվածներին հղում չի պարունակում:

Բացի այդ, ՀՀ վճռաբեկ դատարանը 18.09.2009 թվականի թիվ ՀՅԲԳ4/0002/02/08 քաղաքացիական գործով գտել է, որ անշարժ գույքի վերաբերյալ կնքված գործարքներից ծագող իրավունքների պետական գրանցման ներկայացնելու 30-օրյա ժամկետն իրավական հետևանքներ չառաջացնող է, հետևաբար Կադաստրը 30-օրյա ժամկետը բաց թողնված լինելու հիմքով մերժելով անձի սեփականության իրավունքը գրանցելու մասին դիմումը, սխալ է մեկնաբանել «Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին» ՀՀ օրենքի 23-րդ հոդվածը, ինչի

արդյունքում մերժվել է անձի սեփականության իրավունքի պետական գրանցումն այնպիսի հիմքով, որպիսին նախատեսված չէ նույն օրենքի 43-րդ հոդվածով:

Վերոգրյալի հիման վրա բողոք բերած անձը պահանջել է բեկանել Վերաքննիչ դատարանի 07.06.2011 թվականի որոշումը և այն փոփոխել՝ հայցը բավարարել:

3. Վճռաբեկ բողոքի քննության համար նշանակություն ունեցող փաստերը

Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1) 23.03.2010 թվականին Արտաշատ քաղաքում ստորագրված և նոտարական կարգով վավերացված բնակելի տան, կից շինությունների և տնամերձ հողամասի նվիրատվության պայմանագրով հայցվոր Դավիթ Արտակի Խաչատրյանը Կարապետ և Խաչատուր Խաչատրյաններից նվիրատվության կարգով ձեռք է բերել ՀՀ Արարատի մարզի Ոստան գյուղում գտնվող 431,3 քառակուսի մետր մակերեսով բնակելի տուն, 33,2 քառակուսի մետր մակերեսով կից շինություններ և 0,043 հեկտար տնամերձ հողամաս (գ.թ. 48): 2) 30.04.2010 թվականի թիվ 1190 դիմումով Դավիթ Խաչատրյանը դիմել է Կադաստրի ստորաբաժանմանը՝ նվիրատվության պայմանագրից ծագած իրավունքի պետական գրանցում կատարելու համար: Վերջինս 30.04.2010 թվականի թիվ 723 գրությամբ պատասխանել է, որ «Ձեր կողմից խախտվել է «Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին» ՀՀ օրենքի 23-րդ հոդվածի, ինչպես նաև նվիրատվության պայմանագրի 2.12-րդ կետի պահանջները» (գ.թ. 44):

3) Ի պատասխան Դավիթ Խաչատրյանի 11.05.2010 թվականի թիվ 3556-10 դիմումի, ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի նախագահի տեղակալի 25.05.2010 թվականի թիվ ԱՄ/7-1/1610-10 գրությամբ նշվել է, որ «... 30.04.2010 թվականի թիվ 723 գրությամբ տրված մերժումը համապատասխանում է «Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին» ՀՀ օրենքի 23-րդ հոդվածի պահանջներին, ուստի Ձեր խնդրանքը բավարարել հնարավոր չէ» (գ.թ. 46-47):

4. Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը

Քննելով վճռաբեկ բողոքը նշված հիմքի սահմաններում՝ Վճռաբեկ դատարանը գրնում է, որ վճռաբեկ բողոքը հիմնավոր է հետևյալ պարճառաբանությամբ.

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 302-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ գործարքներից ծագող իրավունքների պետական գրանցման պահանջը չպահպանելը հանգեցնում է դրա անվավերության: Ման գործարքն առոչինչ է: Մույն հոդվածի 2-րդ կետի համաձայն՝ եթե գործարքը կնքվել է պատշաճ ձևով, իսկ կողմերից մեկը հրաժարվում է գործարքից ծագող իրավունքների գրանցումից, դատարանն իրավունք ունի մյուս կողմի պահանջով վճիռ կայացնել այդ իրավունքների գրանցման մասին: Այդ դեպքում գործարքից ծագող իրավունքները գրանցվում են դատարանի վճռի հիման վրա:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 304-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ անվավեր գործարքը չի հանգեցնում իրավաբանական հետևանքների, բացառությամբ այն հետևանքների, որոնք կապված են գործարքի անվավերության հետ: Ման գործարքն անվավեր է կնքելու պահից:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 449-րդ հոդվածի 3-րդ կետի համաձայն՝ այն պայմանագիրը, որից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման, կնքված է համարվում այդ իրավունքի գրանցման պահից:

«Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին» ՀՀ օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ գույքի հետ կատարվող գործարքներից ծագող իրավունքները՝ սեփականության իրավունքը, օգտագործման իրավունքը, գրավը, հիփոթեքը, սերվիտուտները, այլ սահմանափակումները, շարժական գույքի նկատմամբ իրավունքները, բացառությամբ տրանսպորտային միջոցների նկատմամբ իրավունքների, ինչպես նաև, օրենքով նախատեսված դեպքերում, այլ իրավունքները ենթակա են (պետք է ներկայացվեն) պետական գրանցման՝ գործարքների նոտարական վավերացման օրվանից սկսած 30-օրյա ժամկետում՝ անշարժ գույքի պետական ռեգիստրի տարածքային ստորաբաժանումներում ըստ անշարժ գույքի գտնվելու վայրի:

«Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին» ՀՀ օրենքի 43-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ պետական գրանցումը մերժվում է, եթե գրանցման համար ներկայացված փաստաթղթերը չեն համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրության պահանջներին, այսինքն՝

ա) չեն համապատասխանում օրենսդրությանը, կամ դրանցով խախտվել են օրենսդրության պահանջները, կազմված են օրենքով սահմանված կարգին ոչ համապատասխան,

բ) բացակայում է պետական գրանցման վճարի անդորրագիրը,

գ) ներկայացվել են մատիտով գրված, ջնջումներով, ուղղումներով, ինչպես նաև ոչ պատշաճ ձևակերպված փաստաթղթեր:

«Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին» ՀՀ օրենքի 43-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ արգելվում է այլ պատճառներով գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մերժումը, այդ թվում՝ աննպատակահարմարության պատճառաբանությամբ:

ՀՀ դատական օրենսգրքի 15-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ որոշակի փաստական հանգամանքներ ունեցող գործով **վճարելի դատարանի** կամ Մարդու իրավունքների եվրոպական դատարանի **դատական ակտի հիմնավորումները (այդ թվում՝ օրենքի մեկնաբանությունները) պարտադիր են դատարանի համար նույնանման փաստական հանգամանքներով գործի քննության ժամանակ**, բացառությամբ այն դեպքի, երբ վերջինս ծանրակշիռ փաստարկների մատնանշմամբ հիմնավորում է, որ դրանք կիրառելի չեն տվյալ փաստական հանգամանքների նկատմամբ:

Սույն գործի փաստերի համաձայն՝ 30.04.2010 թվականի թիվ 1190 դիմումով Դավիթ Խաչատրյանը դիմել է Կադաստրի ստորաբաժանմանը՝ նվիրատվության պայմանագրից ծագած իրավունքի պետական գրանցում կատարելու համար, սակայն Կադաստրը մերժել է գրանցումը «Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին» ՀՀ օրենքի 23-րդ հոդվածով սահմանված 30-օրյա ժամկետն անցնելու պատճառաբանությամբ:

Վերաքննիչ դատարանը մերժել է Դավիթ Խաչատրյանի վերաքննիչ բողոքը՝ սույն պատճառաբանությամբ՝ հավելելով, որ սույն գործով ՀՀ վճարելի դատարանի 02.03.2007 թվականի թիվ 3-65(ՎԳ) որոշումը կիրառելի չէ, քանի որ այդ գործի փաստական հանգամանքները սույն գործի փաստական հանգամանքների հետ

չի համընկնում: Ավելին, գտել է, որ Դավիթ Խաչատրյանի վկայակոչած Վճռաբեկ դատարանի 02.03.2007 թվականի 3-65/ՎԳ/ որոշմամբ մեկնաբանված է «Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին» ՀՀ օրենքի 23-րդ հոդվածի՝ տվյալ ժամանակահատվածում գործող խմբագրությունը: Վերջինս, սակայն, փոփոխվել է «Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին ՀՀ օրենքում փոփոխություն կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով, որն ընդունվել է 10.04.2008 թվականին և ուժի մեջ է մտել 31.05.2008 թվականին: Այդ փոփոխության արդյունքում պահանջի նախկին խմբագրության կապակցությամբ տրված մեկնաբանությունն այլևս չի կարող կիրառելի համարվել նոր խմբագրության նկատմամբ, քանի որ նշված մեկնաբանության հիմքում ընկած էր «գործարքների կնքման օրվանից» բառակապակցությունը, որը նոր խմբագրության մեջ փոխարինվել է «գործարքների նոտարական վավերացման օրվանից» բառակապակցությամբ:

Մինչդեռ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ անշարժ գույքի հետ կատարվող գործարքներից ծագող իրավունքների պետական գրանցման հարցին անդրադարձել է ոչ միայն Արմեն Շահբազյանը և Քրիստինա Տոնտյանն ընդդեմ ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի Ընդգավիթի տարածքային ստորաբաժանման՝ պետական մարմնի գործողությունը վիճարկելու պահանջի մասին, ՀՀ վճռաբեկ դատարանի թիվ 3-65(ՎԳ) քաղաքացիական գործով 02.03.2007 թվականի որոշմամբ, այլ նաև «Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին ՀՀ օրենքում փոփոխություն կատարելու մասին» ՀՀ օրենքի ուժի մեջ մտնելուց հետո ընդունված որոշումներով: Մասնավորապես Վճռաբեկ դատարանը մի շարք օրենքների և իրավական ակտերի մեկնաբանման արդյունքում հանգել է այն եզրակացության, որ անշարժ գույքի վերաբերյալ կնքված գործարքներից ծագող իրավունքները պետական գրանցման ներկայացնելու 30-օրյա ժամկետը իրավական հետևանքներ չառաջացնող է, հետևաբար Կադաստրը, 30-օրյա ժամկետը բաց թողած լինելու հիմքով մերժելով անձի սեփականության իրավունքը գրանցելու մասին դիմումը, սխալ է մեկնաբանել «Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին» ՀՀ օրենքի 23-րդ հոդվածը, ինչի արդյունքում մերժել է անձի սեփականության իրավունքի պետական գրանցումը այնպիսի հիմքով, որպիսին նախատեսված չէ նույն օրենքի 43-րդ հոդվածով (տե՛ս Աշոտ Սարգսյանն ընդդեմ Վարդան Հայրապետյանի, Լուսինե և Սոնա Մխիթարյանների՝ բաժնային սեփականության ներքո գտնվող գույքից բաժինն առանձնացնելու, ինչպես նաև Վահագն Ղազարյանն ընդդեմ ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի Արուսյանի տարածքային ստորաբաժանման՝ պետական մարմնի գործողությունը վիճարկելու և անշարժ գույքի առուվաճառքի պայմանագրից ծագող սեփականության իրավունքի պետական գրանցում կատարելուն պարտավորեցնելու պահանջների մասին, ՀՀ վճռաբեկ դատարանի 18.09.2009 թվականի որոշում, քաղաքացիական գործ թիվ ՀՅԲԳ4/0002/02/08):

Ի հավելումն վերոգրյալի՝ Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարում նշել նաև հետևյալը.

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 302-րդ հոդվածը սահմանում է իրավունքների պետական գրանցում պահանջող գործարքներից ծագող իրավունքների պետական գրանցման պահանջները չպահպանելու հետևանքները: ՀՀ քաղաքացիական

օրենսգրքի 302-րդ հոդվածով նախատեսված իրավական կարգավորումները զարգացվել են նույն օրենսգրքի 449-րդ հոդվածով, որոնց համակարգային վերլուծության և ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 304-րդ հոդվածի բովանդակության համադրման արդյունքում վճռաբեկ դատարանը հանգեց հետևյալ եզրակացության.

Անշարժ գույքի հետ կապված գործարքների համար օրենսդիրը սահմանել է հետևյալ հատուկ պահանջները՝ նոտարական կարգով վավերացող պայմանագիր և դրանից բխող իրավունքների պետական գրանցում: Բացառապես այս պայմանների կատարման արդյունքում են պայմանագրի կողմերի համար առաջանում քաղաքացիաիրավական իրավունքներ և պարտականություններ:

Ընդ որում, ի տարբերություն այլ պայմանագրերի, այն պայմանագրերի համար, որոնցից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման օրենսդիրը տվել է պայմանագրի կնքման պահը որոշելու այլ կարգավորում, որը բխում է ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 302-րդ հոդվածի կարգավորումից՝ այսինքն պայմանագիրը կնքված է համարվում, իսկ գործարքը վավեր՝ իրավունքի պետական գրանցման պահից:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 302-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ գործարքներից ծագող իրավունքների պետական գրանցման պահանջը չպահպանելը հանգեցնում է դրա անվավերության: Նման գործարքն առոչինչ է:

Մինչույն ժամանակ նույն հոդվածի 2-րդ կետը կարգավորում է այն դեպքը, երբ գործարքի կողմերից մեկը հրաժարվում է պատշաճ ձևով կնքված գործարքից ծագող իրավունքների պետական գրանցումից: Այս դեպքի համար օրենսդիրը սահմանել է, որ դատարանն իրավունք ունի մյուս կողմի պահանջով վճիռ կայացնել այդ իրավունքների գրանցման մասին: Այդ դեպքում գործարքից ծագող իրավունքները գրանցվում են դատարանի վճռի հիման վրա:

Վերոգրյալից բխում է, որ անշարժ գույքի հետ կապված գործարքները վավեր են, իսկ անշարժ գույքին առնչվող պայմանագրերը կնքված են համարվում իրավունքների պետական գրանցման պահից: Այսինքն մինչև իրավունքների պետական գրանցումը չի կարող լինել վավեր գործարք և կնքված պայմանագիր:

Այս առումով էլ սույն գործով քննարկման առարկա հանդիսացող «Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին» ՀՀ օրենքի 23-րդ և 54-րդ հոդվածներում նշված ժամկետների խախտումը չի կարող հանգեցնել գործարքի անվավերության /առոչինչության/, և հետևաբար դառնալ գործարքից ծագող իրավունքների պետական գրանցման մերժման հիմք, քանի որ գործարքն առոչինչ, իսկ պայմանագիրը չկնքված է համարվում մինչև դրանից ծագող իրավունքների պետական գրանցումը, այլ ոչ թե «Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին» ՀՀ օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասով պետական գրանցման համար նախատեսված 30-օրյա ժամկետն անցնելու արդյունքում:

Հիմք ընդունելով վերոգրյալը՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ վերը նշված իրավական դիրքորոշումը կիրառելի է նաև «Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին» ՀՀ օրենքի 23-րդ հոդվածում կատարված փոփոխությունից հետո, քանի որ Վճռաբեկ դատարանի նախադեպային որոշման հիմքում ընկած իրավական վերլուծությունները վերաբերում են անշարժ գույքի հետ կատարվող գործարքների՝ ՀՀ քաղաքացիական օրենսգրքով կարգավորվող առանձնահատկություններին, որի էությունը կայանում է նրանում, որ գործարքը վավեր է, եթե կնքված է պայմանագրի ձևով, իսկ պայմանագիրը կնքված է

համարվում դրանից բխող իրավունքների պետական գրանցման պահից:

Վերաքննիչ դատարանը վերաքննիչ բողոքը մերժել է՝ հիմք ընդունելով «Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին» ՀՀ օրենքի 43-րդ հոդվածի 1-ին մասի «ա» կետն այն պատճառաբանությամբ, որ սույն գործով նվիրատվության պայմանագրին կից ներկայացված դիմումը 30-րյա ժամկետի խախտմամբ ներկայացնելու հետևանքով այդ դիմումը չի համապատասխանում ՀՀ օրենսդրության պահանջներին: Մինչդեռ Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարում նշել, որ այդ փաստաթղթերի շարքին դիմումը չի դասվում այն պարզ տրամաբանությամբ, որ նշված հոդվածը վերաբերում է բացառապես այն փաստաթղթերին, որոնցից ծագող իրավունքները ենթակա են գրանցման՝ տվյալ դեպքում նվիրատվության պայմանագրից ծագող իրավունքներին, իսկ դիմումն ընդամենն այն փաստաթուղթն է, որի միջոցով սկսվում է նշված իրավունքների գրանցման գործընթացը:

Այսպիսով՝ սույն գործի փաստերի և համապատասխան իրավական նորմերի ուսումնասիրման արդյունքում Վճռաբեկ դատարանը եզրահանգում է, որ սույն գործով նվիրատվության պայմանագրից ծագող իրավունքների գրանցումը մերժվել է մի հիմքով, որը նախատեսված չէ «Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին» ՀՀ օրենքի 43-րդ հոդվածի 1-ին մասում, քանի որ վերջինս է սպառիչ նշում պետական գրանցումը մերժելու երեք հիմքերը: Ընդ որում, մերժման այս հիմքերը բխում են ՀՀ քաղաքացիական օրենսգրքի՝ անշարժ գույքին առնչվող իրավահարաբերությունների կարգավորումից:

Այսպիսով, սույն վճռաբեկ բողոքի հիմքի առկայությունը Վճռաբեկ դատարանը համարում է բավարար՝ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 118.9-րդ հոդվածի, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 227-րդ և 228-րդ հոդվածների ուժով Դատարանի վճիռը բեկանելու համար:

Միաժամանակ, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ տվյալ դեպքում անհրաժեշտ է կիրառել ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 118.15-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով սահմանված՝ ստորադաս դատարանի դատական ակտը փոփոխելու ՀՀ վճռաբեկ դատարանի լիազորությունը հետևյալ հիմնավորմամբ.

ՀՀ Սահմանադրության 19-րդ հոդվածի և «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի (այսուհետ՝ Կոնվենցիա) 6-րդ հոդվածի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի ողջամիտ ժամկետում իր գործի քննության իրավունք: Վճռաբեկ դատարանը գտնում է, որ գործը ողջամիտ ժամկետում քննելը հանդիսանում է ՀՀ Սահմանադրության և Կոնվենցիայի վերը նշված հոդվածով ամրագրված անձի արդար դատաքննության իրավունքի տարր, հետևաբար գործի անհարկի ձգձգումները վտանգ են պարունակում նշված իրավունքի խախտման տեսանկյունից: Տվյալ դեպքում, Վճռաբեկ դատարանի կողմից ստորադաս դատարանի դատական ակտը փոփոխելը բխում է արդարադատության արդյունավետության շահերից:

Դատական ակտը փոփոխելիս Վճռաբեկ դատարանը հիմք է ընդունում սույն որոշման պատճառաբանությունները, ինչպես նաև գործի նոր քննության անհրաժեշտության բացակայությունը:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 118.15-118.18-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

ՈՐՈՇԵՑ

1. Վճռաբեկ բողոքը բավարարել: Բեկանել ՀՀ վարչական վերաքննիչ դատարանի 07.06.2011 թվականի որոշումը և այն փոփոխել՝ հայցը բավարարել՝ ոչ իրավաչափ ճանաչել ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի նախագահի տեղակալի 25.05.2010 թվականի թիվ ԱՄ/7-1/1610-10 գրությունը և պարտավորեցնել Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի Արտաշատի տարածքային ստորաբաժանմանը գրանցելու Կարապետ Խաչատրյանի, Խաչատուր Խաչատրյանի, Խաչատուր Կարապետի Խաչատրյանի լիազորությամբ Կարապետ Խաչատուրի Խաչատրյանի և Դավիթ Արտակի Խաչատրյանի միջև կնքված և 23.03.2010 թվականին նոտարական վավերացում ստացած նվիրատվության պայմանագրից ծագող սեփականության իրավունքը:

2. Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի Արտաշատի տարածքային ստորաբաժանումից հոգուտ ՀՀ պետական բյուջեի բոնագանձել 20.000 ՀՀ դրամ՝ որպես վճռաբեկ բողոքի համար վճարման ենթակա հետաձգված պետական տուրքի գումար:

3. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

*ՆԱԽԱԳԱՀՈՂ՝ արտրագրություն
ԴԱՏԱՎՈՐՆԵՐ՝ արտրագրություններ*

ՎԱՐՉԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

ԱՊԱՅՈՒՅՑՆԵՐ ԵՎ ԱՊԱՅՈՒՅՈՒՄ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

ՀՀ վարչական դատարանի վճիռ
Վարչական գործ թիվ ՎԴ/4971/05/09
Նախագահող դատավոր՝ Ա. Առաքելյան

Վարչական գործ թիվ ՎԳ/4971/05/09
2011թ.

ՈՐՈՇՈՒՄ

ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քաղաքացիական
և վարչական պալատը (այսուհետ՝ վճռաբեկ դատարան)

*Նախագահությամբ
մասնակցությամբ դատավորներ*

Ե. ԽՈՒՆԴԿԱՐՅԱՆԻ
Ս. ԱՆՏՈՆՅԱՆԻ
Վ. ԱԲԵԼՅԱՆԻ
Վ. ԱՎԱՆԵՍՅԱՆԻ
Ա. ԲԱՐՍԵՂՅԱՆԻ
Մ. ԴՐՄԵՅԱՆԻ
Գ. ՀԱԿՈԲՅԱՆԻ
Է. ՀԱՅՐԻՅԱՆԻ
Տ. ՊԵՏՐՈՍՅԱՆԻ
Ե. ՍՈՂՈՄՈՆՅԱՆԻ

2011 թվականի մարտի 04-ին

դռնբաց դատական նիստում, քննելով «Էյչ-Էս-Բի-Սի Բանկ Հայաստան» ՓԲԸ-ի (այսուհետ՝ Բանկ) վճռաբեկ բողոքը ՀՀ վարչական դատարանի 14.06.2010 թվականի վճիռի դեմ՝ ըստ Բանկի հայցի ընդդեմ Հայաստանի Հանրապետության՝ ի դեմս ՀՀ ֆինանսների նախարարության և ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի (այսուհետ՝ Կոմիտե)՝ գերավճարը ՀՀ պետական բյուջեից վերադարձնելուն ուղղված բարենպաստ վարչական ակտ ընդունելուն պարտավորեցնելու պահանջի մասին,

ՊԱՐԶԵՑ

1. Գործի դատավարական նախապատմությունը

Դիմելով դատարան՝ Բանկը պահանջել է պարտավորեցնել Հայաստանի Հանրապետությանը կայացնելու 1997-2006 թվականներին Բանկի կողմից ԱԱՀ-ի գծով 61.532.760 ՀՀ դրամ ավել վճարված գումարը (գերավճարը) ՀՀ պետական բյուջեից Բանկին վերադարձնելու վերաբերյալ բարենպաստ վարչական ակտ:

ՀՀ վարչական դատարանի 14.06.2010 թվականի վճռով հայցը մերժվել է:

Սույն գործով վճռաբեկ բողոք է ներկայացրել Բանկը:

Վճռաբեկ բողոքի պատասխան է ներկայացրել Կոմիտեն:

2. Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը

Սույն վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքերի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

1) *Դատարանը խախտել է ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 24-րդ հոդվածի 1-ին մասը, 27-րդ հոդվածի 2-րդ մասը, ՀՀ դատական օրենսգրքի 15-րդ հոդվածի 3-րդ մասը:*

Բողոք բերած անձը նշված պնդումը պարձառաքանում է հետևյալ փաստարկներով.

Հայցապահանջի հիմքում դրված այն հանգամանքը, ըստ որի՝ ՀՀ վարչական դատարանի 03.12.2008 թվականի օրինական ուժի մեջ մտած վճռով արդեն իսկ հաստատված է համարվել այն փաստը, որ 2006 թվականի հարկային արտոնությունները դադարելու օրվա դրությամբ առկա էր ԱԱՀ-ի գծով 61.532.760 ՀՀ դրամ ավել վճարված գումար (գերավճար) և որ նշված հանգամանքը կրկին ապացուցման կարիք չունի, Դատարանն անհիմն է համարել: Դա պատճառաբանել է նրանով, որ այդ վճռի պատճառաբանական մասի «Դատաքննությամբ պարզված հանգամանքները» բաժնում շարադրված փաստերը «վճռով հաստատված փաստեր» չեն, քանի դեռ դրանք բառացիորեն անվանված չեն որպես հաստատված փաստեր, այլ համարվում են միայն որպես դատաքննությամբ պարզված փաստեր, մինչդեռ Դատարանի նման դիրքորոշումն անտրամաբանական է, քանի որ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 132-րդ հոդվածի իմաստից հետևում է, որ դատարանի կողմից պարզված գործի հանգամանքները նշվում են վճռի պատճառաբանական մասում, այսինքն՝ այն, ինչը դատարանը համարում է հաստատված, շարադրվում է դատական ակտերի այսպես կոչված «պարզեց» մասում:

2) *Դատարանը չի կիրառել «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 2-րդ հոդվածի 2-րդ մասը, 13-րդ հոդվածի 4-րդ մասը, «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 24-րդ հոդվածի 7-րդ մասը, 71-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ պարբերությունը, 72-րդ հոդվածի 2-րդ մասը, 78-րդ հոդվածի 3-րդ մասի 3-րդ պարբերությունը, 94-րդ հոդվածի 2-րդ, 6-րդ և 8-րդ մասերը, որոնք պետք է կիրառել, կիրառել է «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 24-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերը, որոնք չպետք է կիրառել:*

Բողոք բերած անձը նշված պնդումը պարձառաքանում է հետևյալ փաստարկներով.

Դատարանը կիրառել է «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 24-րդ հոդվածի 2-րդ մասը և գտել, որ «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 2-րդ հոդվածը կարող

է գործել միայն հավասար իրավաբանական ուժ ունեցող իրավական ակտերի միջև հակասության դեպքում, մինչդեռ նշված դրույթների միջև առկա է մասնակի հակասություն և քանի որ տվյալ դեպքում բողոք բերած անձի համար առավել նախընտրելի են «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 2-րդ հոդվածի 2-րդ մասի դրույթները, ապա «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 24-րդ հոդվածի 7-րդ մասի պահանջների համաձայն՝ դրանք պետք է գերակայեն «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 24-րդ հոդվածի 2-րդ մասի պահանջների նկատմամբ: Հետևաբար, ՀՀ կառավարության 15.01.1996 թվականի թիվ 8 որոշման դրույթները պետք է գերակայեն «Հարկերի մասին» ՀՀ օրենքի և «Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքի դրույթների նկատմամբ:

Դատարանը նշել է նաև, որ «ավելացված արժեքի հարկի արտոնություններ տրամադրող ՀՀ կառավարության որոշմամբ սահմանված արտոնությունները դադարել են գործել «Հարկերի մասին» ՀՀ օրենքի ուժի մեջ մտնելու պահից՝ 1997 թվականի մայիսի 30-ից, **անկախ նշված որոշման ուժը կորցրած ձանաչելու վերաբերյալ 2008 թվականին ընդունված որոշումից**», մինչդեռ «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 72-րդ հոդվածից բխում է, որ իրավական ակտն ուժը կորցրած է ձանաչվում իրավաստեղծ մարմնի հատուկ որոշմամբ, որը ՀՀ կառավարության 25.04.2008 թվականի թիվ 397-Ն որոշումն է, որով ուժը կորցրած է ձանաչվել ՀՀ կառավարության 15.01.1996 թվականի թիվ 8 որոշումը:

Վերոգրյալի հիման վրա բողոք բերած անձը պահանջել է բեկանել Դատարանի 14.06.2010 թվականի վճիռը և այն փոփոխել՝ հայցը բավարարել կամ բեկանել Դատարանի 14.06.2010 թվականի վճիռը և գործն ուղարկել համապատասխան ստորադաս դատարան՝ նոր քննության:

2.1. Վճարել բողոքի պատասխանի հիմնավորումները

ՀՀ վարչական դատարանի վճռի դատաքննությամբ պարզված մատուցված հանգամանքների շարքում նշված արտահայտությունը, որ Բանկի՝ ԱԱՀ-ի գծով հարկային արտոնությունները դադարելու օրվա դրությամբ Բանկի մոտ առկա էր ԱԱՀ-ի գծով 61.532.760 ՀՀ դրամ ավել վճարված գումար (գերավճար), շարադրված է որոշ այլ հանգամանքների շարքում, որոնք վարչական մարմնի պաշտոնատար անձանց հետ գրագրության որոշ մասնավոր հատվածներ են, հայցվորի առարկություններից քաղվածքներ և վիճարկվող հարցի իրավական գնահատականի համար էական նշանակություն չունեն, հետևաբար, դրանք վճռով հաստատված փաստեր չեն և այդ պատճառով էլ տեղ չեն գտել վճռով հաստատված փաստերի շարքում:

3. Վճարել բողոքի քննության համար նշանակություն ունեցող փաստերը

Վճարել բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1) Ըստ Բանկի հայցի ընդդեմ ՀՀ Ֆինանսների նախարարության, Կոմիտեի՝ անհիմն կերպով օրենսդրությամբ սահմանվածից ավել գանձված ԱԱՀ-ի գումարները 61.532.760 ՀՀ դրամի չափով ՀՀ պետական բյուջեից հետ ստանալու Բանկի իրավունքը ձանաչելու պահանջի մասին, ՀՀ վարչական դատարանի օրինական ուժի մեջ մտած 03.12.2008 թվականի թիվ ՎԴ 0741/05/08 վճռով հաստատվել են հետևյալ փաստերը՝

- ՀՀ կառավարության 15.01.1996 թվականի թիվ 8 որոշման 1-ին կետի «գ» ենթակետի համաձայն՝ Բանկի իրավաստիրոջ հանդիսացող «Միդլենդ Արմենիա Բանկ» ՓԲԸ-ն 10 տարի ժամկետով ազատվել է ԱԱՀ վճարումից:

- 1997 թվականից սկսած՝ մաքսային մարմինների պահանջով ընկերությունն սկսել է վճարել ավելացված արժեքի հարկ Բանկի կողմից ներմուծվող ապրանքների համար:

- 2006 թվականին՝ Բանկի ԱԱՀ գծով հարկային արտոնությունները դադարելու օրվա դրությամբ, Բանկի մոտ առկա էր ԱԱՀ-ի գծով 61.532.760 ՀՀ դրամ ավել վճարված գումար /գերավճար/:

- 1997-2006 թվականներն ընկած ժամանակամիջոցում Բանկից մաքսային մարմինների կողմից գանձված մոտ 61.532.750 ՀՀ դրամ ԱԱՀ-ի գումարն ընկերության կողմից չի օգտագործվել, ինչը դատարանը համարեց հաստատված ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 27-րդ հոդվածի 4-րդ մասի ուժով՝ նկատի ունենալով նշված փաստը պատասխանողների կողմից չվիճարկելու և հակառակը հիմնավորող ապացույցներ չներկայացնելու հանգամանքը (գ.թ. 9-17):

2) ՀՀ կառավարության՝ «Միդլենդ-Արմենիա բանկ» բաժնետիրական ընկերությանը հարկային արտոնություններ տալու մասին 15.01.1996 թվականի թիվ 8 որոշումն ուժի մեջ է մտել 15.01.1996 թվականին և ուժը կորցրել է 25.04.2008 թվականին թիվ 397-Ն որոշմամբ:

4. Վճարելի դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը

Քննելով վճարելի բողոքը նշված հիմքերի սահմաններում՝ Վճարելի դատարանը գտնում է, որ՝

1) վճարելի բողոքն առաջին հիմքով հիմնավոր է հեղկյալ պարձառաբանությամբ.

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 22-րդ հոդվածի համաձայն՝ դատարանը ապացույցների հետազոտման և գնահատման միջոցով պարզում է **գործի լուծման համար նշանակություն ունեցող բոլոր փաստերը:**

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 24-րդ հոդվածի համաձայն՝ դատարանը, անմիջականորեն գնահատելով գործում եղած բոլոր ապացույցները, որոշում է փաստի հաստատված լինելու հարցը՝ բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտման վրա հիմնված ներքին համոզմամբ:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 27-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ նախկինում քննված **քաղաքացիական** կամ վարչական **գործով օրինական ուժի մեջ մտած դատարանի վճռով հաստատված փաստերը միևնույն կողմերի մասնակցությամբ** սույն օրենսգրքով նախատեսված որևէ գործ քննելիս վերստին ապացուցման կարիք չունեն:

Վերը նշված հոդվածների վերլուծությունից հետևում է, որ դատարանը գործի լուծման համար էական նշանակություն ունեցող բոլոր փաստերը պարզում է ապացույցների հետազոտման և գնահատման միջոցով: Գործի լուծման համար **էական նշանակություն ունեցող փաստի** հաստատված լինելու հարցը դատարանը պարզում է գործում եղած բոլոր ապացույցների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտման վրա հիմնված ներքին համոզմամբ: Ընդ որում, միևնույն կողմերի մասնակցությամբ նախկինում քննված **քաղաքացիական գործով օրինական ուժի մեջ մտած դատարանի վճռով հաստատված փաստերն ապացուցման կարիք չունեն**

(տե՛ս՝ Դոնարա Սարգսյանն ընդդեմ Երևանի Կենտրոն թաղապետարանի, Հակոբ Կարապետյանի, երրորդ անձինք Իզաբել Փարսադանյանի, Բրաբրոն Շահինյանի՝ Երևանի Սպանդարյանի շրջխորհրդի գործկումի 13.10.1994 թվականի թիվ 37/38 որոշումը մասնակի անավարձ անասելու և բնակարանի ամբողջ տարածքի նկատմամբ նոր որոշում կայացնելուն պարտավորեցնելու պահանջների մասին գործով ՀՀ վճարելի դատարանի 16.10.2009 թվականի թիվ ՎԴ/4166/05/08 որոշումը):

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 112-րդ հոդվածի համաձայն՝ վարչական դատարանի՝ գործն ըստ էության լուծող և միջանկյալ դատական ակտերին ներկայացվող պահանջների, դրանք կայացնելու կարգի, դրանց կառուցվածքի և բովանդակության, գործն ըստ էության լուծող դատական ակտի հրապարակման, այն մասնակիցներին ուղարկելու, դատական ակտում առկա վրիպակների, գրախախտների և թվաբանական սխալների ուղղման, լրացուցիչ վճռի կայացման, վճռի պարզաբանման նկատմամբ տարածվում են Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքի համապատասխան նորմերը:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 132-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ վճռի նկարագրական մասը պետք է պարունակի հայցադիմումի, դրա պատասխանի, գործին մասնակցող անձանց դիմումների և միջնորդությունների համառոտ շարադրանքը: **Վճռի պատճառաբանական մասում պետք է նշվեն դատարանի կողմից պարզված գործի հանգամանքները, ապացույցները, որոնց վրա հիմնված են դատարանի հետևությունները**, այս կամ այն ապացույցները մերժելու փաստարկները, ինչպես նաև այն օրենքները, Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերը և այլ իրավական ակտերը, որոնցով դատարանը ղեկավարվել է վճիռ կայացնելիս:

Վերոգրյալ հոդվածից հետևում է, որ վճռի պատճառաբանական մասում ի թիվս այլ պայմանների, պետք է նշվեն համապատասխան ապացույցների հետազոտման և գնահատման արդյունքում դատարանի կողմից պարզված, այսինքն՝ հաստատված գործի հանգամանքները, փաստերը:

Սույն գործում առկա ՀՀ վարչական դատարանի 03.12.2008 թվականի վճռի՝ «Դատաքննությամբ պարզված հանգամանքները» բաժնում նշվել է, որ 2006 թվականին՝ Բանկի ԱԱՀ գծով հարկային արտոնությունները դադարելու օրվա դրությամբ, Բանկի մոտ առկա էր ԱԱՀ-ի գծով 61.532.760 ՀՀ դրամ **ավել վճարված գումար /գերավճար/**: 1997-2006 թվականներն ընկած ժամանակամիջոցում Բանկից մաքսային մարմինների կողմից գանձված մոտ 61.532.750 ՀՀ դրամ ԱԱՀ-ի գումարն ընկերության կողմից չի օգտագործվել, ինչը դատարանը հաստատված համարեց ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 27-րդ հոդվածի 4-րդ մասի ուժով՝ նկատի ունենալով նշված փաստը պատասխանողների կողմից չվիճարկելու և հակառակը հիմնավորող ապացույցներ չներկայացնելու հանգամանքը:

Դատարանը հայցը մերժել է՝ պատճառաբանելով, որ ՀՀ վարչական դատարանի 03.12.2008 թվականի վճռով հայցադիմումում վկայակոչված հանգամանքները նշվել են միայն որպես դատաքննությամբ պարզված, այլ ոչ թե հաստատված հանգամանքներ, ուստի դրանք չեն կարող դիտվել որպես ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 27-րդ հոդվածի հիմքով վերստին ապացուցման կարիք չունեցող փաստեր:

Մինչդեռ, Վճարելի դատարանը գտնում է, որ հայցադիմումում վկայակոչված հանգամանքները շարադրվում են ոչ թե վճռի պատճառաբանական, այլ նկարագրական մասում: ՀՀ վարչական դատարանի 03.12.2008 թվականի

վճռի՝ «Դատաքննությամբ պարզված հանցանքները» մասում տեղ են գտել համապատասխան ապացույցների հետազոտման և գնահատման արդյունքում դատարանի կողմից պարզված, այսինքն՝ հաստատված գործի հանցանքները, փաստերը, որն ըստ էության համարվում է վճռի պատճառաբանական մասը: Այսինքն՝ «դատարանի կողմից պարզված հանցանքներ» և «դատարանի կողմից հաստատված հանցանքներ» հասկացություններն ընդհանուր առմամբ նույնն են: Հետևաբար ՀՀ վարչական դատարանի 03.12.2008 թվականի վճռի՝ «Դատաքննությամբ պարզված հանցանքները» մասում նշված այն փաստը, որ Բանկի ԱԱՀ գծով հարկային արտոնությունները դադարելու օրվա դրությամբ Բանկի մոտ առկա էր ԱԱՀ-ի գծով 61.532.760 ՀՀ դրամ ավել վճարված գումար /գերավճար/, պետք է համարել որպես նույն վճռով հաստատված փաստ:

Այսպիսով, Վճռաբեկ դատարանը եզրակացնում է, որ Դատարանը չի իրականացրել գործում եղած բոլոր ապացույցների, մասնավորապես՝ ՀՀ վարչական դատարանի 03.12.2008 թվականի վճռի, դրանով հաստատված հանցանքների օբյեկտիվ հետազոտություն, ինչի արդյունքում անտեսվել են այդ վճռով հաստատված սույն գործի լուծման համար էական նշանակություն ունեցող հանցանքները:

2) վճռաբեկ բողոքը երկրորդ հիմքով հիմնավոր է մասնակիորեն հերկյալ պարձատարանությամբ.

Վճռաբեկ դատարանը գտնում է, որ բողոքի հիմքում բարձրացված իրավական հարցին պատասխանելու համար վճռաբեկ բողոքի շրջանակներում պետք է քննարկման առարկա դարձվեն հետևյալ հարցադրումները.

1. Արդյո՞ք ՀՀ կառավարության որոշումը կարող է կիրառվել և ունենալ գերակայություն օրենքի նկատմամբ, եթե այն առավել բարենպաստ պայմաններ է սահմանում անձի համար,

2. Արդյո՞ք սույն գործով առկա է հակասություն ՀՀ կառավարության 15.01.1996 թվականի թիվ 8 որոշման և 30.05.1997 թվականից գործող «Հարկերի մասին» ՀՀ օրենքի միջև:

1. «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ պարբերության համաձայն՝ օրենքները պետք է համապատասխանեն Սահմանադրությանը: Այլ իրավական ակտերը պետք է համապատասխանեն Սահմանադրությանը և օրենքներին:

«Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 24-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ Հայաստանի Հանրապետության իրավական ակտերը գործում են ՀՀ Սահմանադրության և նույն օրենքով սահմանված՝ առավել բարձր իրավաբանական ուժ ունեցող ակտերի գերակայության սկզբունքի հիման վրա:

«Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 24-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ իրավական ակտերի միջև հակասությունների դեպքում գործում են Հայաստանի Հանրապետության Սահմանադրության և սույն օրենքով նախատեսված ավելի բարձր իրավաբանական ուժ ունեցող իրավական ակտերը, բացառությամբ նույն հոդվածի յոթերորդ մասով նախատեսված դեպքերի:

Վերոնշյալ հոդվածներից հետևում է, որ Հայաստանի Հանրապետությունում օրենքի գերակայության սկզբունքը երաշխավորվում է, իսկ այն դրսևորվում է ՀՀ Սահմանադրությունից հետո օրենքների բարձրագույն իրավաբանական ուժով և մյուս իրավական ակտերի նկատմամբ գերակայությամբ: Ընդ որում, հակասությունների

լուծման հիմքը նույնպես օրենքի գերակայության սկզբունքն է:

Միաժամանակ, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ անձի համար նախընտրելի իրավական ակտի կիրառման կանոնը սահմանված է «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 24-րդ հոդվածի 7-րդ մասով, որի համաձայն՝ հավասար իրավաբանական ուժ ունեցող նորմատիվ իրավական ակտերի կամ նույն իրավական ակտի տարբեր մասերի միջև հակասության դեպքում պետական և տեղական ինքնակառավարման մարմինները ֆիզիկական ու իրավաբանական անձանց հետ հարաբերություններում պետք է կիրառեն ֆիզիկական և իրավաբանական անձանց համար նախընտրելի նորմատիվ իրավական ակտը կամ դրա մասը:

Նշված հոդվածից հետևում է, որ 1. անձի համար նախընտրելի իրավական ակտի կիրառման կանոնը վերաբերում է հավասար իրավաբանական ուժ ունեցող նորմատիվ իրավական ակտերին կամ դրա տարբեր մասերին, 2. այդ կանոնը վերաբերում է նորմատիվ իրավական ակտերի միջև հակասությունների լուծմանը: Հետևաբար այն սույն գործով կիրառելի չէ, քանի որ տվյալ դեպքը վերաբերում է տարբեր իրավաբանական ուժ ունեցող իրավական ակտերին:

Նման պայմաններում Վճռաբեկ դատարանը գտնում է, որ «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 2-րդ հոդվածում նախատեսված՝ հարկ վճարողի օգտին հարկային օրենսդրությամբ սահմանված դրույթները կիրառելու կանոնը նույնպես պետք է գործի օրենքի գերակայության սկզբունքի հիման վրա, հետևաբար ՀՀ կառավարության որոշումը չի կարող գերակայություն ունենալ օրենքի նկատմամբ, թեկուզև այդ ակտով անձի համար առավել բարենպաստ պայմաններ են սահմանված:

Ուստի անհիմն է բողոք բերող անձի այն փաստարկը, որ ՀՀ կառավարության 15.01.1996 թվականի թիվ 8 որոշման դրույթները պետք է գերակայեն «Հարկերի մասին» ՀՀ օրենքի և «Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքի դրույթների նկատմամբ:

2. Սույն հիմքի շրջանակներում բարձրացված երկրորդ հարցադրմանը պատասխանելու համար Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարում քննարկման առարկա դարձնել իրավական ակտերի ստորադասության և ժամանակի մեջ իրավական ակտի գործողության դրույթները և դրանց հարաբերակցությունը:

«Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 78-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ իրավական ակտը տարածվում է մինչև դրա ուժի մեջ մտնելը ծագած հարաբերությունների վրա, այսինքն՝ ունի հետադարձ ուժ միայն նույն օրենքով և այլ օրենքներով, ինչպես նաև տվյալ իրավական ակտով նախատեսված դեպքերում:

Օրենքի վերոնշյալ նորմը սահմանում է ժամանակի մեջ իրավական ակտի գործողության ընդհանուր կանոնը, որի համաձայն՝ իրավական ակտը տարածվում է ուժի մեջ մտնելուց հետո ծագած հարաբերությունների վրա: Նույն հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ ուժը կորցրած իրավական ակտի գործողությունը տարածվում է մինչև դրա ուժը կորցնելու օրը ծագած հարաբերությունների վրա, եթե սույն օրենքով կամ ակտն ուժը կորցրած ձանաչելու մասին իրավական ակտով այլ բան նախատեսված չէ:

01.07.1993-01.07.1997 թվականները գործող «Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքի 23-րդ հոդվածի համաձայն՝ առանձին վճարողների կամ վճարողների խմբի համար **Հայաստանի Հանրապետության կառավարությունը** Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի ֆինանսավարկային, բյուջետային և տնտեսական հարցերի մշտական հանձնաժողովի համաձայնությամբ կարող է սահմանել ավելացված արժեքի հարկի հաստատագրված վճարումներ, դրույքաչափեր ու չափեր, հաշվարկման ու վճարման կարգ և **արտոնություններ**:

Վերոնշյալ օրենքի գործողության ժամանակ ընդունված՝ ՀՀ կառավարության՝ «Միդլենդ-Արմենիա բանկ» բաժնետիրական ընկերությանը հարկային արտոնություններ տալու մասին 15.01.1996 թվականի թիվ 8 որոշման 1-ին կետի «գ» ենթակետի համաձայն՝ «Միդլենդ-Արմենիա բանկ» բաժնետիրական ընկերությունը նույն որոշումն ուժի մեջ մտնելու պահից ազատվել է ավելացված արժեքի հարկի վճարումից՝ առաջիկա տասը տարում:

Հիմք ընդունելով վերոնշյալը՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Բանկի՝ հարկային արտոնություններ սահմանելու վերաբերյալ հարաբերությունների ծագման՝ 15.01.1996 թվականի թիվ 8 որոշման ընդունման պահին ՀՀ կառավարությունը լիազորված էր ընդունելու հարկային արտոնություններ սահմանող որոշում:

30.05.1997 թվականից գործող «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 13-րդ հոդվածի համաձայն՝ հարկային արտոնությունները սահմանվում են օրենքով, եթե առանձին հարկատեսակների մասին օրենքներով այլ բան նախատեսված չէ:

01.07.1997 թվականից ուժի մեջ մտած և ներկայումս գործող «Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքը որևէ դրույթ չի պարունակում ՀՀ կառավարության կողմից ավելացված արժեքի հարկի արտոնություններ տրամադրելու վերաբերյալ:

Վերը նշված իրավական ակտերից երկուսն է, որ 30.05.1997 թվականից գործող «Հարկերի մասին» ՀՀ օրենքի և 01.07.1997 թվականից ուժի մեջ մտած «Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքի ընդունումից հետո ՀՀ կառավարությունն իրավասու չէր իր որոշմամբ սահմանել հարկային արտոնություն: Այսինքն, վերոնշյալ դրույթները կիրառելի են «Հարկերի մասին» և «Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքների ուժի մեջ մտնելուց հետո ծագած հարաբերությունների նկատմամբ, քանի որ այդ ակտերով այլ բան սահմանված չէ:

Հիմք ընունելով վերոնշյալը և սույն գործի փաստերը համադրելով՝ Վճռաբեկ դատարանը եզրակացնում է, որ ՀՀ կառավարության՝ «Միդլենդ-Արմենիա բանկ» բաժնետիրական ընկերությանը հարկային արտոնություններ տալու մասին 15.01.1996 թվականի թիվ 8 որոշումը ենթակա է կիրառման, և այն չի հակասում «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 13-րդ հոդվածին, քանի որ «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 13-րդ հոդվածը սույն գործով կիրառելի է դրա ուժի մեջ մտնելուց հետո ծագած՝ հարկային արտոնությունների տրամադրման հարաբերությունների նկատմամբ, իսկ ՀՀ կառավարության 15.01.1996 թվականի թիվ 8 որոշումն ընդունվել է այդ պահին գործող օրենսդրության հիման վրա և դրան համապատասխան:

Նման պայմաններում Վճռաբեկ դատարանը գտնում է, որ սույն գործով կիրառելի են ոչ թե իրավական ակտերի միջև հակասությունների վերաբերյալ դրույթները, այլ ժամանակի մեջ իրավական ակտերի գործողությունը սահմանող «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 78-րդ հոդվածի նորմերը:

Ինչ վերաբերում է Դատարանի այն պատճառաբանությանը, որ 15.01.1996 թվականի թիվ 8 որոշմամբ սահմանված արտոնությունները դադարել են գործել «Հարկերի մասին» ՀՀ օրենքի ուժի մեջ մտնելու պահից՝ 30.05.1997 թվականից՝ անկախ նշված որոշման ուժը կորցրած ճանաչելու վերաբերյալ 2008 թվականի որոշումից, ապա Վճռաբեկ դատարանը գտնում է, որ այն անհիման է հետևյալ պատճառաբանությամբ.

«Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 72-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի համաձայն՝ իրավական ակտն ուժը կորցրած է ճանաչվում իրավաստեղծ մարմնի,

դրա իրավահաջորդի կամ համապատասխան լիազորություններով օժտված վերադաս մարմնի որոշմամբ, իսկ նույն օրենքի 78-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ ուժը կորցրած իրավական ակտի գործողությունը տարածվում է մինչև դրա ուժը կորցնելու օրը ծագած հարաբերությունների վրա, եթե նույն օրենքով կամ ակտն ուժը կորցրած ձանաչելու մասին իրավական ակտով այլ բան նախատեսված չէ:

Վերոնշյալ նորմից հետևում է, որ անկախ իրավական ակտն ուժը կորցրած ձանաչելու մասին օրենքով սահմանված հիմքերի առկայությունից, այն այդպիսին համարվում է բացառապես իրավաստեղծ մարմնի, դրա իրավահաջորդի կամ համապատասխան լիազորություններով օժտված վերադաս մարմնի որոշմամբ, իսկ մինչև ուժը կորցրած ձանաչելու օրը ծագած հարաբերությունների վրա տարածվում են տվյալ ակտի նորմերը, եթե նույն օրենքով կամ ակտն ուժը կորցրած ձանաչելու մասին իրավական ակտով այլ բան նախատեսված չէ:

Հետևաբար Վճռաբեկ դատարանը գտնում է, որ 01.07.1993-01.07.1997 թվականները գործող «Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքի 23-րդ հոդվածը տարածվում է ՀՀ կառավարության 15.01.1996 թվականի թիվ 8 որոշման վրա, որը գործում է մինչև ՀՀ կառավարության 25.04.2008 թվականի թիվ 397-Ն որոշումն ուժի մեջ մտնելը:

Այսպիսով, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ սույն գործով կիրառելի է ՀՀ կառավարության 15.01.1996 թվականի թիվ 8 որոշումը, իսկ դրա 1-ին կետի «գ» ենթակետով նախատեսված արտոնությունը գործում է դրանով սահմանված տասը տարի ժամկետով:

Այսպիսով, սույն վճռաբեկ բողոքի հիմքի առկայությունը Վճռաբեկ դատարանը համարում է բավարար՝ «Հայաստանի Հանրապետության վարչական դատավարության օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության 2010 թվականի հոկտեմբերի 28-ի թիվ ՀՕ-135-Ն օրենքի 21-րդ հոդվածի 4-րդ մասի, ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 118-րդ և 118.3-րդ հոդվածների, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 227-րդ և 228-րդ հոդվածների ուժով Դատարանի վճիռը բեկանելու համար:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 118-րդ հոդվածով, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 240-241²-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

ՈՐՈՇԵՑ

1. Վճռաբեկ բողոքը բավարարել մասնակիորեն: Բեկանել ՀՀ վարչական դատարանի 14.06.2010 թվականի վճիռը և գործն ուղարկել նույն դատարան՝ նոր քննության:

2. Պետական տուրքի բաշխման հարցին անդրադառնալ գործի նոր քննության ընթացքում:

3. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

ՆԱԽԱԳԱՀՈՂ՝ ստորագրություն
ԴԱՏԱՎՈՐՆԵՐ՝ ստորագրություններ

ԴԱՏԱԿԱՆ ԾԱԽՍԵՐ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

ՀՀ վարչական դատարանի վճիռ
Վարչական գործ թիվ ՎԳ6/0035/05/10
Նախագահող դատավոր՝ Ա. Ալավերդյան

Վարչական գործ թիվ ՎԳ6/0035/05/10
2011թ.

ՈՐՈՇՈՒՄ ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Հայաստանի Հանրապետության Վճռաբեկ դատարանի քաղաքացիական
և վարչական պալատը (այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

*Նախագահությամբ
մասնակցությամբ դատավորներ*

Ե. ԽՈՒՆԴԿԱՐՅԱՆԻ
Ե. ՍՈՂՈՄՈՆՅԱՆԻ
Վ. ԱԲԵԼՅԱՆԻ
Վ. ԱՎԱՆԵՍՅԱՆԻ
Ա. ԲԱՐՍԵՂՅԱՆԻ
Մ. ԴՐՄԵՅԱՆԻ
Գ. ՀԱԿՈՐՅԱՆԻ
Տ. ՊԵՏՐՈՍՅԱՆԻ

2011 թվականի հուլիսի 01-ին

դոնրաց դատական նիստում, քննելով ՀՀ ոստիկանության «Ճանապարհային ոստիկանություն» ծառայության (այսուհետ՝ Ոստիկանություն) վճռաբեկ բողոքը ՀՀ վարչական դատարանի 30.07.2010 թվականի վճիռի դեմ՝ ըստ Ոստիկանության հայցի ընդդեմ Գարեգին Գալոյանի՝ գումար բռնագանձելու պահանջի մասին,

ՊԱՐԶԵՑ

1. Գործի դատավարական նախապատմությունը

Դիմելով դատարան՝ Ոստիկանությունը պահանջել է արձակել Գարեգին Գալոյանից 25.000 ՀՀ դրամ բռնագանձելու վերաբերյալ վճարման կարգադրություն:

ՀՀ վարչական դատարանը (այսուհետ՝ Դատարան) 26.12.2009 թվականին արձակել է վճարման կարգադրություն:

Գարեգին Գալոյանի կողմից հակընդդեմ հայց ներկայացնելու հիմքով Դատարանի 11.02.2010 թվականի որոշմամբ վճարման կարգադրության վարույթից անցում է կատարվել հայցային վարույթի, իսկ այսուհետև հակընդդեմ հայցադիմումը վերադարձվել է:

Դատարանի 30.07.2010 թվականի վճռով հայցը մերժվել է և Ոստիկանությունից հոգուտ Հայաստանի Հանրապետության բռնագանձվել է 1.500 ՀՀ դրամ որպես

դատական ծախս՝ պետական տուրքի գումար:

Սույն գործով վճռարեկ բողոք է ներկայացրել Ոստիկանությունը:

Վճռարեկ բողոքի պատասխան չի ներկայացվել:

2. Վճռարեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը

Սույն վճռարեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքերի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

1) *Դատարանը խախտել է ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 159-րդ, 160-րդ հոդվածները:*

Բողոք բերած անձը նշված պնդումը պարձառաքանել է հետևյալ փաստարկներով.

Դատարանը հակընդդեմ հայցը վերադարձրել է և հակընդդեմ հայց չլինելու պայմաններում անցում է կատարել հայցային վարույթի:

Մինչդեռ, Դատարանը, վերադարձնելով հակընդդեմ հայցը, չպետք է անցում կատարեր հայցային վարույթի և պետք է թողներ, որպեսզի վճարման կարգադրությունը ստանար օրինական ուժի մեջ մտած՝ գործն ըստ էության լուծող դատական ակտի ուժ:

2) *Դատարանը խախտել է ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 59-րդ հոդվածը:*

Բողոք բերած անձը նշված պնդումը պարձառաքանել է հետևյալ փաստարկներով.

Դատարանն անտեսել է, որ Գարեգին Գալոյանը Ոստիկանության 08.08.2009 թվականի թիվ ԱԲ 051836 որոշման հիման վրա 25.000 ՀՀ դրամը վճարել է Ոստիկանության կողմից դատարան դիմելուց հետո:

Հետևաբար, Դատարանը հայցային վարույթի անցնելու դեպքում պետք է հայցը բավարարեր, իսկ պետական տուրքի վճարման պարտականությունը դնել Գարեգին Գալոյանի վրա, քանի որ հայցը հիմնավոր է եղել:

Վերոգրյալի հիման վրա բողոք բերած անձը պահանջել է Դատարանի 30.07.2010 թվականի վճիռը բեկանել և այն փոփոխել՝ հայցը բավարարել, իսկ պետական տուրքի վճարման պարտականությունը դնել Գարեգին Գալոյանի վրա:

3. Վճռարեկ բողոքի քննության համար նշանակություն ունեցող փաստերը

Վճռարեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

1) Ոստիկանության 08.08.2009 թվականի թիվ ԱԲ 051836 որոշմամբ Գարեգին Գալոյանը Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 123-րդ հոդվածի 4-րդ մասով ենթարկվել է 5.000 ՀՀ դրամ վարչական տուգանքի, որը նույն օրենսգրքի 305-րդ հոդվածի 4-րդ պարբերության համաձայն՝ հնգապատկվել է և կազմում է 25.000 ՀՀ դրամ (**գ.թ. 3**):

2) Ոստիկանությունը ՀՀ վարչական դատարան է դիմել 22.12.2009 թվականին (**գ.թ. 2**):

3) 17.02.2010 թվականի թիվ 1156 մուտքի օրդերի համաձայն՝ Գարեգին Գալոյանը Ոստիկանության 08.08.2009 թվականի թիվ ԱԲ 051836 որոշման հիման վրա վճարել է 25.000 ՀՀ դրամ (**գ.թ. 23**):

4. Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումները

Քննելով վճռաբեկ բողոքը նշված հիմքերի սահմաններում՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ՝

1) Վճռաբեկ բողոքն ստաջին հիմքով հիմնավոր չէ հեղինակ պարճառաբանությամբ.

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 159-րդ հոդվածի համաճայն՝ դատարանը վճարման կարգադրության վարույթից անցում է կատարում հայցային վարույթի, **եթե պատասխանողը հակընդդեմ հայց է ներկայացրել:** Այս դեպքում վճարման կարգադրությունը վերանում է:

Նշված նորմի վերլուծությունից հետևում է, որ վճարման կարգադրության վարույթից հայցային վարույթի անցում կատարելու և վճարման կարգադրությունը վերանալու համար անհրաժեշտ է **պատասխանողի կողմից հակընդդեմ հայց ներկայացնելու փաստի առկայությունը:**

Սույն գործով Դատարանը 11.02.2010 թվականի որոշմամբ վճարման կարգադրության վարույթից անցում է կատարել հայցային վարույթի, որով վերացել է 26.12.2009 թվականի վճարման կարգադրությունը, իսկ հակընդդեմ հայցադիմումը վերադարձրել է:

Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Դատարանի նշված գործողություններն իրավաչափ են, քանի որ տվյալ դեպքում վճարման կարգադրության վարույթից հայցային վարույթի անցում կատարելու և վճարման կարգադրությունը վերանալու համար հիմք է հանդիսացել Գարեգին Գալոյանի կողմից հակընդդեմ հայցադիմում ներկայացնելու հանգամանքը: Այսինքն՝ հակընդդեմ հայցադիմում ներկայացնելն արդեն իսկ բավարար է՝ վճարման կարգադրության վարույթից հայցային վարույթի անցում կատարելու և վճարման կարգադրությունը վերանալու համար:

Վերոգրյալի հիման վրա Վճռաբեկ դատարանը գտնում է, որ բողոք բերած անձի փաստարկն այն մասին, որ Դատարանը, վերադարձնելով հակընդդեմ հայցը, չպետք է անցում կատարեր հայցային վարույթի և պետք է թողներ, որպեսզի վճարման կարգադրությունը ստանար օրինական ուժի մեջ մտած՝ գործն ըստ էության լուծող դատական ակտի ուժ, անհիմն է և չունի որևէ իրավական հիմք:

2) Վճռաբեկ բողոքը երկրորդ հիմքով հիմնավոր է մասնակիորեն հեղինակ պարճառաբանությամբ.

«Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքի 22-րդ հոդվածի 1-ին մասի «իբ» ենթակետի համաճայն՝ դատարաններում պետական տուրքի վճարումից ազատվում են դիմողները՝ վճարման կարգադրություններ արձակելու մասին դիմումներով:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 154-րդ հոդվածի համաճայն՝ ֆիզիկական և իրավաբանական անձից վարչական ակտի հիման վրա որոշակի դրամական գումարներ բռնագանձելու նպատակով վարչական մարմինը հայցով դիմում է դատարան՝ ստանալու վճարման կարգադրություն:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 159-րդ հոդվածի համաճայն՝ դատարանը վճարման կարգադրության վարույթից անցում է կատարում հայցային վարույթի, եթե պատասխանողը հակընդդեմ հայց է ներկայացրել: Այս դեպքում վճարման կարգադրությունը վերանում է:

Վերը նշված նորմերից հետևում է, որ վճարման կարգադրություն արձակելու դիմում ներկայացնող անձինք օրենքի ուժով ազատված են պետական տուրք վճարելու պարտականությունից, իսկ հակընդդեմ հայց ներկայացնելու փաստով վճարման

կարգադրության վարույթից անցում է կատարվում հայցային վարույթի:

Սույն գործով Դատարանը, մերժելով հայցը, Ոստիկանությունից հոգուտ Հայաստանի Հանրապետության բռնազանձել է 1.500 ՀՀ դրամ որպես պետական տուրքի գումար՝ պատճառաբանելով, որ նշանակված վարչական տուգանքի գումարի հնգապատիկը վճարելու փաստով Գարեգին Գալոյանի պարտավորությունը դադարել է, և այդ գումարը դատական կարգով բռնազանձելու մասին Ոստիկանության պահանջն անհիմն է: Հետևաբար, հայցը մերժելու պարագայում ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 59-րդ հոդվածի կարգով Ոստիկանությունից ենթակա է բռնազանձման 1.500 ՀՀ դրամ որպես դատական ծախս՝ պետական տուրքի գումար:

Հիմք ընդունելով այն հանգամանքը, որ վճարման կարգադրություններ արձակելու մասին դիմումներով դիմողներն ազատված են պետական տուրք վճարելու պարտականությունից, իսկ անցումը հայցային վարույթի կատարվում է վճարման կարգադրության վարույթում հակընդդեմ հայց ներկայացնելու հիմքով, Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ տվյալ դեպքում հայցային վարույթը վճարման կարգադրության վարույթի շարունակությունն է, հետևաբար, այդ դեպքում նույնպես արդեն իսկ հայցվորի կարգավիճակ ստացած անձը չի կարող կրել պետական տուրքի վճարման պարտականություն: Հետևաբար, սույն գործով պետական տուրքի հարցը պետք է համարել լուծված:

Այսպիսով, սույն վճռաբեկ բողոքի երկրորդ հիմքի առկայությունը Վճռաբեկ դատարանը համարում է բավարար՝ «Հայաստանի Հանրապետության վարչական դատավարության օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության 2010 թվականի հոկտեմբերի 28-ի թիվ ՀՕ-135-Ն օրենքի 21-րդ հոդվածի 4-րդ մասի, ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 118-րդ և 118.3-րդ հոդվածների, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 227-րդ և 228-րդ հոդվածների ուժով Դատարանի վճիռը մասնակիորեն բեկանելու համար:

Միաժամանակ, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ սույն գործով անհրաժեշտ է կիրառել ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 240-րդ հոդվածի 1-ին կետի 4-րդ ենթակետով սահմանված՝ ստորադաս դատարանի դատական ակտը փոփոխելու Վճռաբեկ դատարանի լիազորությունը հետևյալ հիմնավորմամբ.

ՀՀ Սահմանադրության 19-րդ հոդվածի և «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի ողջամիտ ժամկետում իր գործի քննության իրավունք: Սույն գործով վեճի լուծումն էական նշանակություն ունի գործին մասնակցող անձանց համար: Վճռաբեկ դատարանը գտնում է, որ գործը ողջամիտ ժամկետում քննելը հանդիսանում է ՀՀ Սահմանադրության և «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի նշված հոդվածներով ամրագրված՝ անձի արդար դատաքննության իրավունքի տարր: Հետևաբար, գործի անհարկի ձգձգումները վտանգ են պարունակում նշված իրավունքի խախտման տեսանկյունից: Տվյալ դեպքում Վճռաբեկ դատարանի կողմից ստորադաս դատարանի դատական ակտը փոփոխելը բխում է արդարադատության արդյունավետության շահերից, քանի որ սույն գործով վերջնական դատական ակտ կայացնելու համար նոր հանգամանք հաստատելու անհրաժեշտությունը բացակայում է:

Դատական ակտը փոփոխելիս Վճռաբեկ դատարանը հիմք է ընդունում

տույն որոշման պատճառաբանությունները, ինչպես նաև գործի նոր քննության անհրաժեշտության բացակայությունը:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 118-րդ և 118.3-րդ հոդվածներով, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 240-241²-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

ՈՐՈՇԵՑ

1. Վճռաբեկ բողոքը բավարարել մասնակիորեն: Բեկանել ՀՀ վարչական դատարանի 30.07.2010 թվականի վճռի՝ ՀՀ ոստիկանության «Ճանապարհային ոստիկանություն» ծառայությունից հոգուտ Հայաստանի Հանրապետության 1500 ՀՀ դրամ պետական տուրք բռնագանձելու մասը և այդ մասով այն փոփոխել պետական տուրքի հարցը համարել լուծված: Վճռի մնացած մասը թողնել օրինական ուժի մեջ:

2. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

*ՆԱԽԱԳԱՀՈՂ՝ ստորագրություն
ԴԱՏԱՎՈՐՆԵՐ՝ ստորագրություններ*

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

ՀՀ վարչական վերաքննիչ
դատարանի որոշում

Վարչական գործ թիվ ՎԳՆ/0082/05/10
2011թ.

Վարչական գործ թիվ ՎԳՆ/0082/05/10

Նախագահող դատավոր՝ Լ. Սոսյան
Դատավորներ՝ Ա. Սարգսյան
Հ. Բեդկյան

ՈՐՈՇՈՒՄ
ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Հայաստանի Հանրապետության Վճռաբեկ դատարանի քաղաքացիական
և վարչական պալատը (այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

*նախագահությամբ
մասնակցությամբ դատավորներ*

Ե. ԽՈՒՆԴԿԱՐՅԱՆԻ
Ա. ԲԱՐՍԵՂՅԱՆԻ
Վ. ԱԲԵԼՅԱՆԻ
Ս. ԱՆՏՈՆՅԱՆԻ
Վ. ԱՎԱՆԵՍՅԱՆԻ
Մ. ԴՐՄԵՅԱՆԻ
Գ. ՀԱԿՈԲՅԱՆԻ
Է. ՀԱՅՐԻՅԱՆԻ
Տ. ՊԵՏՐՈՍՅԱՆԻ
Ե. ՍՈՂՈՄՈՆՅԱՆԻ

2011 թվականի հոկտեմբերի 14-ին

դռնբաց դատական նիստում, քննելով ՀՀ ոստիկանության «Ճանապարհային ոստիկանություն» ծառայության (այսուհետ՝ Ոստիկանություն) վճռաբեկ բողոքը ՀՀ վարչական վերաքննիչ դատարանի 18.05.2011 թվականի որոշման դեմ՝ ըստ հայցի Ոստիկանության ընդդեմ Ավագ Սաֆրազյանի՝ գումար բռնագանձելու պահանջի մասին, և ըստ Ավագ Սաֆրազյանի հակընդդեմ հայցի ընդդեմ Ոստիկանության՝ տուգանքի գումարը բռնագանձելուն ուղղված գործողություններն անօրինական ճանաչելու և վճարման կարգադրության մասին հայցադիմումը մերժելու պահանջի մասին,

ՊԱՐԶԵՑ

1. Գործի դատավարական նախապատմությունը

Դիմելով դատարան՝ Ոստիկանությունը պահանջել է արձակել Ավագ Սաֆրազյանից 245.000 ՀՀ դրամ բռնագանձելու վերաբերյալ վճարման կարգադրություն:

ՀՀ վարչական դատարանը (դատավոր՝ Կ. Բաղդասարյան) (այսուհետ՝ Դատարան) 21.06.2010 թվականին արձակել է վճարման կարգադրություն:

Հակընդդեմ հայցով դիմելով դատարան՝ Ավագ Սաֆրազյանը պահանջել է անօրինական ճանաչել 245.000 ՀՀ դրամ տուգանքի գումարը բռնագանձելուն ուղղված գործողությունները և մերժել վճարման կարգադրության մասին հայցադիմումը:

Դատարանի 20.07.2010 թվականի որոշմամբ վճարման կարգադրության վարույթից անցում է կատարվել հայցային վարույթի:

Ոստիկանությունը, 29.09.2010 թվականի հակընդդեմ հայցի պատասխանով փոխելով հայցապահանջի չափը, պահանջել է Ավագ Սաֆրազյանից բռնագանձել 235.000 ՀՀ դրամ:

Դատարանի 24.12.2010 թվականի վճռով հայցը բավարարվել է մասնակիորեն՝ Արամ Սաֆրազյանից բռնագանձվել է 175.000 ՀՀ դրամ, հակընդդեմ հայցը նույնպես բավարարվել է:

ՀՀ վարչական վերաքննիչ դատարանի (այսուհետ՝ Վերաքննիչ դատարան) 18.05.2011 թվականի որոշմամբ Դատարանի 24.12.2010 թվականի վճռի դեմ Ոստիկանության վերաքննիչ բողոքը բավարարվել է մասնակիորեն: Որոշվել է մասնակիորեն բեկանել և փոփոխել Դատարանի 24.12.2010 թվականի վճիռը, այն է՝ Ոստիկանության հայցը՝ մերժված մասով, բավարարել՝ Ավագ Սաֆրազյանից բռնագանձել 60.000 ՀՀ դրամ տուգանքը, իսկ հակընդդեմ հայցը մերժել: Վճիռը մնացած մասով թողնվել է անփոփոխ: Միաժամանակ Ոստիկանությունից հօգուտ Հայաստանի Հանրապետության բռնագանձվել է 5.250 ՀՀ դրամ՝ որպես վերաքննիչ բողոքի համար չվճարված պետական տուրք:

Սույն գործով վճռաբեկ բողոք է ներկայացրել Ոստիկանությունը:

Վճռաբեկ բողոքի պատասխան չի ներկայացվել:

2. Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը

Սույն վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

Վերաքննիչ դատարանը խախտել է ՀՀ վարչական դատարարության օրենսգրքի 59-րդ հոդվածը, ՀՀ քաղաքացիական դատարարության օրենսգրքի 130-րդ հոդվածի 1-ին կետը, 132-րդ հոդվածի 1-ին կետի 4-րդ ենթակետը:

Բողոք բերած անձը նշված պնդումը պարզապես և հեղինակապարկներով.

Վերաքննիչ դատարանը հաշվի չի առել այն հանգամանքը, որ վերաքննիչ բողոքի էությունից և տրամաբանությունից հետևում է, որ վերաքննիչ բողոքը բերվել է հայցի չբավարարված մասի և հակընդդեմ հայցը բավարարելու դեմ: Հետևաբար, վերաքննիչ բողոքը մասնակիորեն անհիմն համարելու ու դրա հետևանքով պետական տուրքի վճարման պարտականությունը Ոստիկանության վրա դնելու Վերաքննիչ դատարանի եզրահանգումն իրավաչափ չէ:

Վերոգրյալի հիման վրա բողոք բերած անձը պահանջել է բեկանել և փոփոխել Վերաքննիչ դատարանի 18.05.2011 թվականի որոշման՝ Ոստիկանությունից պետական տուրք բռնագանձելու մասը և այն բռնագանձել Ավագ Սաֆրազյանից:

3. Վճարել բողոքի քննության համար նշանակություն ունեցող փաստերը

Վճարել բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

1) Ոստիկանության 19.12.2009 թվականի թիվ ԱԲ 341866 որոշմամբ Ավագ Սաֆրազյանը Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 123⁴-րդ հոդվածի 2-րդ մասով ենթարկվել է 50.000 ՀՀ դրամ վարչական տուգանքի, որը նույն օրենսգրքի 305-րդ հոդվածի 4-րդ պարբերության համաձայն հնգապատկվել է և կազմում է 250.000 ՀՀ դրամ (**գ.թ. 3**):

2) 22.12.2009 թվականի թիվ 91222055699031 և 15.01.2010 թվականի թիվ 100115033791031 անդորրագրերի համաձայն՝ Ավագ Սաֆրազյանը Ոստիկանության 19.12.2009 թվականի թիվ ԱԲ 341866 որոշման հիման վրա վճարել է համապատասխանաբար 5.000 ՀՀ դրամ և 10.000 ՀՀ դրամ (**գ.թ. 12-13**):

4. Վճարել դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումները

Քննելով վճարել բողոքը նշված հիմքերի սահմաններում Վճարել դատարանը գտնում է, որ վճարել բողոքը հիմնավոր է հետևյալ պարձառաբանությամբ.

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 55-րդ հոդվածի համաձայն՝ **դատական ծախսերը կազմված են պետական տուրքից** և գործի քննության հետ կապված այլ ծախսերից:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 59-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ կողմը, որի դեմ կայացվել է վճիռ, կամ որի բողոքը մերժվել է, կրում է Հայաստանի Հանրապետության դատական դեպարտամենտի կողմից վկաներին և փորձագետներին վճարված գումարների հատուցման պարտականությունը, ինչպես նաև մյուս կողմի կրած դատական ծախսերի հատուցման պարտականությունն այն ծավալով, ինչ ծավալով դրանք անհրաժեշտ են եղել դատական պաշտպանության իրավունքի արդյունավետ իրականացման համար: Դատական պաշտպանության այն միջոցի ծախսերը, որն իր նպատակին չի ծառայել, դրվում են այդ միջոցն օգտագործած կողմի վրա, անգամ եթե վճիռը կայացվել է այդ կողմի օգտին:

Նշված նորմերի վերլուծությունից հետևում է, որ դատական ծախսերի, այդ թվում նաև՝ պետական տուրքի հատուցման պարտականությունը կրում է այն կողմը, որի դեմ կայացվել է վճիռ:

Սույն գործով Վերաքննիչ դատարանը մասնակիորեն բեկանելով և փոփոխելով Դատարանի 24.12.2010 թվականի վճիռը պատճառաբանել է, որ Ոստիկանության վերաքննիչ բողոքի պահանջը եղել է ամբողջությամբ բեկանել և փոփոխել Դատարանի վճիռը, այն է՝ հայցը բավարարել, իսկ հակընդդեմ հայցը մերժել, այսինքն՝ բողոքի պահանջը՝ վճիռն ամբողջությամբ բեկանելու մասին, հիմնավոր չէ: Միաժամանակ Վերաքննիչ դատարանը Ոստիկանությունից հօգուտ Հայաստանի Հանրապետության բռնագանձել է 5.250 ՀՀ դրամ որպես վերաքննիչ բողոքի համար չվճարված պետական տուրքի գումար:

Մինչդեռ Վճարել դատարանը գտնում է, որ Վերաքննիչ դատարանի կողմից հայցի մերժված մասը բավարարելու, իսկ հակընդդեմ հայցը մերժելու պայմաններում ըստ էության Ոստիկանության հայցը բավարարվել է ամբողջությամբ, իսկ Ավագ Սաֆրազյանի հայցը մերժվել է: Հետևաբար, Ոստիկանության հայցը բավարարվելու պայմաններում վերջինիս վրա պետական տուրքի պարտավորություն չէր կարող դրվել:

Բացի այդ, Վճարել դատարանը հարկ է համարում նշել, որ ՀՀ վարչական

դատավարության օրենսգրքի 59-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետի համաձայն՝ եթե պատասխանող է հանդիսացել պետական կամ տեղական ինքնակառավարման մարմինը կամ պաշտոնատար անձը, ապա **դատական ծախսերը դրվում են Հայաստանի Հանրապետության կամ համապատասխան համայնքի վրա**, եթե պատասխանողի որոշումը, գործողությունը կամ անգործությունը դատարանը ճանաչել է ոչ իրավաչափ:

Վերոնշյալ նորմից հետևում է, որ՝

1. եթե պատասխանողը պետական մարմին է, ապա դատական ծախսերը դրվում են Հայաստանի Հանրապետության վրա,

2. Հայաստանի Հանրապետության վրա դատական ծախսերը դրվում են, եթե պատասխանողի որոշումը, գործողությունը կամ անգործությունը դատարանը ճանաչել է ոչ իրավաչափ:

Սույն գործով 245.000 ՀՀ դրամ տուգանքի գումարը բռնագանձելուն ուղղված գործողություններն անօրինական ճանաչելու և վճարման կարգադրության մասին հայցադիմումը մերժելու պահանջի մասին հակընդդեմ հայցն արդյունքում մերժվել է:

Նման պայմաններում Վճռաբեկ դատարանը եզրակացնում է, որ դատական ծախսը չէր կարող դրվել Ոստիկանության վրա, քանի որ վերջինիս որոշումը, գործողությունը կամ անգործությունը ոչ իրավաչափ չի ճանաչվել:

Վերոգրյալի հիման վրա Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Վերաքննիչ դատարանը սույն գործով սխալ է բաշխել դատական ծախսերը, ինչի արդյունքում խախտել է ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 59-րդ հոդվածը:

Այսպիսով, սույն վճռաբեկ բողոքի հիմքի առկայությունը Վճռաբեկ դատարանը դիտում է բավարար՝ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 118.9-րդ հոդվածի, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 228-րդ հոդվածի ուժով Վերաքննիչ դատարանի որոշումը մասնակիորեն բեկանելու համար:

Միաժամանակ, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ սույն գործով անհրաժեշտ է կիրառել ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 118.15-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով սահմանված՝ ստորադաս դատարանի դատական ակտը փոփոխելու Վճռաբեկ դատարանի լիազորությունը հետևյալ հիմնավորմամբ.

ՀՀ Սահմանադրության 19-րդ հոդվածի և «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի ողջամիտ ժամկետում իր գործի քննության իրավունք: Սույն գործով վեճի լուծումն էական նշանակություն ունի գործին մասնակցող անձանց համար: Վճռաբեկ դատարանը գտնում է, որ գործը ողջամիտ ժամկետում քննելը հանդիսանում է ՀՀ Սահմանադրության և «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի նշված հոդվածներով ամրագրված՝ անձի արդար դատաքննության իրավունքի տարր: Հետևաբար, գործի անհարկի ձգձգումները վտանգ են պարունակում նշված իրավունքի խախտման տեսանկյունից: Տվյալ դեպքում Վճռաբեկ դատարանի կողմից ստորադաս դատարանի դատական ակտը փոփոխելը բխում է արդարադատության արդյունավետության շահերից, քանի որ սույն գործով վերջնական դատական ակտ կայացնելու համար նոր հանգամանք հաստատելու անհրաժեշտությունը բացակայում է:

Դատական ակտը փոփոխելիս Վճարել նատարանը հիմք է ընդունում սույն որոշման պատճառաբանությունները, ինչպես նաև գործի նոր քննության անհրաժեշտության բացակայությունը:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 118.15- 118.18-րդ հոդվածներով՝ Վճարել նատարանը

ՈՐՈՇԵՑ

1. Վճարել բողոքը բավարարել: Բեկանել ՀՀ վարչական վերաքննիչ դատարանի 18.05.2011 թվականի որոշման՝ ՀՀ ոստիկանության «Ճանապարհային ոստիկանություն» ծառայությունից հոգուտ Հայաստանի Հանրապետության 5.250 ՀՀ դրամ պետական տուրք բռնագանձելու մասը և այդ մասով այն փոփոխել: Ավագ Սաֆրազյանից հոգուտ Հայաստանի Հանրապետության բռնագանձել 5.250 ՀՀ դրամ՝ որպես վերաքննիչ բողոքի և 10.000 ՀՀ դրամ՝ որպես վճարել բողոքի համար չվճարված պետական տուրք:

2. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

*ՆԱԽԱԳԱՀՈՂ՝ ստորագրություն
ԴԱՏԱՎՈՐՆԵՐ՝ ստորագրություններ*

ՎԱՐՈՒՅԹԸ ՎԵՐԱՔՆՆԻՉ ԴԱՏԱՐԱՆՈՒՄ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

ՀՀ վարչական վերաքննիչ
դատարանի որոշում

Վարչական գործ թիվ ՎԴ/4047/05/09

Նախագահող դատավոր՝ Ա. Առաքելյան

Դատավորներ՝

Ա. Աբովյան

Գ. Ղարիբյան

Վարչական գործ թիվ ՎԴ/4047/05/09

2011թ.

ՈՐՈՇՈՒՄ

ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Հայաստանի Հանրապետության Վճռաբեկ դատարանի քաղաքացիական
և վարչական պալատը (այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

նախագահությամբ

մասնակցությամբ դատավորներ

Ե. ԽՈՒՆԴԿԱՐՅԱՆԻ

Ա. ԲԱՐՍԵՂՅԱՆԻ

Վ. ԱԲԵԼՅԱՆԻ

Ս. ԱՆՏՈՆՅԱՆԻ

Վ. ԱՎԱՆԵՍՅԱՆԻ

Մ. ԳՐՄԵՅԱՆԻ

Գ. ՀԱԿՈԲՅԱՆԻ

Է. ՀԱՅՐԻՅԱՆԻ

Տ. ՊԵՏՐՈՍՅԱՆԻ

Ե. ՍՈՂՈՄՈՆՅԱՆԻ

2011 թվականի հոկտեմբերի 14-ին

դռնբաց դատական նիստում, քննելով ՀՀ գլխավոր դատախազի տեղակալի
վճռաբեկ բողոքը ՀՀ վարչական վերաքննիչ դատարանի 19.05.2011 թվականի
որոշման դեմ՝ ըստ հայցի «Գազվազ» ՍՊԸ-ի (այսուհետ՝ Ընկերություն) ընդդեմ ՀՀ
կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի (այսուհետ՝ Կոմիտե)
Կոմիտեի Արթիկի տարածքային հարկային տեսչության (այսուհետ՝ Տեսչություն)
03.08.2009 թվականի թիվ 1007375 ակտը մասնակի անվավեր ճանաչելու (վերացնելու)
պահանջի մասին, և ըստ Տեսչության հակընդդեմ հայցի ընդդեմ Ընկերության՝
Տեսչության 03.08.2009 թվականի թիվ 1007375 ակտն անփոփոխ թողնելու և
Ընկերությունից 14.767.700 ՀՀ դրամ բռնագանձելու պահանջների մասին,

ՊԱՐԶԵՑ

1. Գործի դատավարական նախապատմությունը

Դիմելով դատարան՝ Ընկերությունը պահանջել է անվավեր ճանաչել (վերացնել) Տեսչության 03.08.2009 թվականի թիվ 1007375 ակտի 1-ին, 4-րդ և 15-րդ կետերը:

Հակընդդեմ հայցով դիմելով դատարան՝ Տեսչությունը պահանջել է անփոփոխ թողնել Տեսչության 03.08.2009 թվականի թիվ 1007375 ակտը և Ընկերությունից բռնագանձել 14.767.700 ՀՀ դրամ:

ՀՀ վարչական դատարանի (դատավոր՝ Էդ. Նահապետյան) (այսուհետ՝ Դատարան) 10.12.2010 թվականի վճռով հայցը և հակընդդեմ հայցը բավարարվել են մասնակիորեն՝ վճռվել է Տեսչության 03.08.2009 թվականի թիվ 1007375 ակտը մասնակիորեն ճանաչել անվավեր և Ընկերությունից հոգուտ պետական բյուջեի բռնագանձել 3.089.948 ՀՀ դրամ:

ՀՀ վարչական վերաքննիչ դատարանի (այսուհետ՝ Վերաքննիչ դատարան) 19.05.2011 թվականի որոշմամբ Տեսչության վերաքննիչ բողոքը բավարարվել է մասնակիորեն՝ որոշվել է բեկանել Դատարանի 10.12.2010 թվականի վճիռը, և գործն ուղարկել նոր քննության:

Սույն գործով վճռաբեկ բողոք է ներկայացրել ՀՀ գլխավոր դատախազի տեղակալը:

Վճռաբեկ բողոքի պատասխան չի ներկայացվել:

2. Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը

Սույն վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

Վերաքննիչ դատարանը խախտել է ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 117.12-րդ հոդվածի 1-ին մասը:

Բողոք բերած անձը նշված պնդումը պարզապես չի հերքել:

Վերաքննիչ դատարանը վերաքննիչ բողոքն ըստ էության քննելիս իրավունք չունի դուրս գալ դրանում նշված պահանջի սահմաններից, այսինքն՝ պետք է վերաքննիչ բողոքը քննի միայն դրանում նշված ծավալով:

Տվյալ դեպքում Տեսչությունը վերաքննիչ բողոքով պահանջել է «Բեկանել Դատարանի 10.12.2010 թվականի վճիռը, մերժել Ընկերության հայցն ամբողջությամբ, փոփոխել Տեսչության հակընդդեմ հայցը մերժված՝ 11.677.800 ՀՀ դրամ գումարի չափով՝ բավարարելով Տեսչության հայցն ամբողջությամբ»:

Նշվածից հետևում է, որ Տեսչությունը վերաքննիչ բողոքով պահանջել է փոփոխել Դատարանի 10.12.2010 թվականի վճիռը միայն հակընդդեմ հայցը մերժելու մասով և այն մերժված գումարի չափով բավարարել, այսինքն՝ հակընդդեմ հայցի բավարարված մասով դատական ակտը բեկանելու պահանջ չի դրվել, մինչդեռ Վերաքննիչ դատարանը դուրս է եկել վերաքննիչ բողոքի պահանջի սահմաններից և Դատարանի վճիռը բեկանել է ամբողջությամբ:

Վերոգրյալի հիման վրա բողոք բերած անձը պահանջել է բեկանել Վերաքննիչ դատարանի 19.05.2011 թվականի որոշումը և գործն ուղարկել նոր քննության:

3. Վճռաբեկ բողոքի քննության համար նշանակություն ունեցող փաստը

Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունի հետևյալ փաստը.

Տեսչությունը վերաքննիչ բողոքով պահանջել է «Բեկանել Դատարանի 10.12.2010 թվականի վճիռը, մերժել Ընկերության հայցն ամբողջությամբ, փոփոխել Տեսչության հակընդդեմ հայցը մերժված՝ 11.677.800 ՀՀ դրամ գումարի չափով՝ բավարարելով Տեսչության հայցն ամբողջությամբ» (**հատոր 2-րդ, գ.թ. 198-204**):

4. Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումները

Քննելով վճռաբեկ բողոքը նշված հիմքի սահմաններում՝ Վճռաբեկ դատարանը գործում է, որ այն հիմնավոր է հետևյալ պարձառաբանությամբ.

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 117.12-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ վերաքննիչ դատարանը դատական ակտը վերանայում է **վերաքննիչ բողոքում ներկայացված պահանջի սահմաններում՝** ձեռնարկելով անհրաժեշտ միջոցներ բողոքն ըստ էության քննելու համար:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 117.13-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի 1-ին պարբերության համաձայն՝ գործն ըստ էության լուծող դատական ակտի վերաքննության արդյունքում վերաքննիչ դատարանը՝ այն դեպքում, երբ վարչական դատարանը թույլ է տվել գործի լուծման վրա ազդող էական խախտումներ, ելնելով արդարադատության արդյունավետության շահերից՝ ամբողջությամբ կամ մասնակիորեն բավարարում է վերաքննիչ բողոքը՝ համապատասխանաբար ամբողջությամբ կամ մասնակիորեն բեկանելով դատական ակտը: Բեկանված մասով գործն ուղարկվում է վարչական դատարան՝ նոր քննության՝ սահմանելով նոր քննության ծավալը, իսկ չբեկանված մասով դատական ակտը թողնվում է անփոփոխ:

Նշված նորմերի վերլուծությունից հետևում է, որ ՀՀ վարչական վերաքննիչ դատարանը դատական ակտը պետք է վերանայի և գործն ըստ էության լուծող դատական ակտի վերաքննության արդյունքում իր լիազորություններն իրականացնի բացառապես **վերաքննիչ բողոքում ներկայացված պահանջի սահմաններում:** Այսինքն՝ կախված այն հանգամանքից, թե գործով ներկայացված պահանջների որ մասն է բողոքարկվում վերաքննության կարգով, այդ մասի շրջանակներում էլ Վերաքննիչ դատարանը պետք է իրականացնի ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 117.13-րդ հոդվածով նախատեսված իր լիազորությունները:

Սույն գործով Տեսչությունը, ներկայացնելով վերաքննիչ բողոք, պահանջել է. «Բեկանել Դատարանի 10.12.2010 թվականի վճիռը, մերժել Ընկերության հայցն ամբողջությամբ, փոփոխել Տեսչության հակընդդեմ հայցը մերժված՝ 11.677.800 ՀՀ դրամ գումարի չափով՝ բավարարելով Տեսչության հայցն ամբողջությամբ»:

Մինչդեռ, Վերաքննիչ դատարանը, Տեսչության վերաքննիչ բողոքը բավարարելով մասնակիորեն, որոշել է բեկանել Դատարանի 10.12.2010 թվականի վճիռը և գործն ուղարկել ամբողջ ծավալով նոր քննության:

Վերոգրյալի հիման վրա Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Վերաքննիչ դատարանը, Տեսչության վերաքննիչ բողոքի հիման վրա վերանայելով Դատարանի 10.12.2010 թվականի վճիռը և բեկանելով նաև վերաքննիչ բողոք բերած անձի հակընդդեմ հայցի բավարարված մասը, դուրս է եկել դրանում ներկայացված պահանջի սահմաններից, ինչի արդյունքում թույլ է տվել ՀՀ վարչական

դատավարության օրենսգրքի 117.12-րդ հոդվածի 1-ին մասի խախտում, ինչը հանգեցրել է գործի սխալ լուծման:

Այսպիսով, սույն վճռաբեկ բողոքի հիմքի առկայությունը Վճռաբեկ դատարանը համարում է բավարար՝ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 118.9-րդ հոդվածի, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 228-րդ հոդվածի ուժով Վերաքննիչ դատարանի որոշումը մասնակիորեն բեկանելու համար:

Միաժամանակ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ տվյալ դեպքում անհրաժեշտ է կիրառել ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 118.15-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետով սահմանված՝ առաջին ատյանի դատարանի դատական ակտին օրինական ուժ տալու՝ Վճռաբեկ դատարանի լիազորությունը հետևյալ հիմնավորմամբ:

«Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի ողջամիտ ժամկետում իր գործի քննության իրավունք: Սույն գործով վեճի լուծումն էական նշանակություն ունի գործին մասնակցող անձանց համար: Վճռաբեկ դատարանը գտնում է, որ գործը ողջամիտ ժամկետում քննելը հանդիսանում է Կոնվենցիայի նույն հոդվածով ամրագրված անձի արդար դատաքննության իրավունքի տարր, հետևաբար, գործի անհարկի ձգձգումները վտանգ են պարունակում նշված իրավունքի խախտման տեսանկյունից:

Տվյալ դեպքում, Վճռաբեկ դատարանի կողմից ստորադաս դատարանի դատական ակտին օրինական ուժ տալը բխում է արդարադատության արդյունավետության շահերից, քանի որ սույն գործով վերջնական դատական ակտ կայացնելու համար նոր հանգամանք հաստատելու անհրաժեշտությունը բացակայում է:

Առաջին ատյանի դատարանի դատական ակտին օրինական ուժ տալով՝ Վճռաբեկ դատարանը հիմք է ընդունում սույն որոշման պատճառաբանությունները, ինչպես նաև գործի նոր քննության անհրաժեշտության բացակայությունը:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 118.15- 118.18-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

ՈՐՈՇԵՑ

1. Վճռաբեկ բողոքը բավարարել մասնակիորեն: Բեկանել ՀՀ վարչական վերաքննիչ դատարանի 19.05.2011 թվականի որոշման՝ ՀՀ վարչական դատարանի 10.12.2010 թվականի վճռի՝ «Գագվազ» ՍՊԸ-ից 3.089.948 ՀՀ դրամ բռնագանձելու մասով բեկանելու մասը և այդ մասով օրինական ուժ տալ ՀՀ վարչական դատարանի 10.12.2010 թվականի վճռին: Որոշման մնացած մասը թողնել անփոփոխ:

2. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

ՆԱԽԱԳԱՀՈՂ՝ ստորագրություն
ԴԱՏԱՎՈՐՆԵՐ՝ ստորագրություններ

Տպագրությունը՝ օֆսեթ: Թուղթը՝ օֆսեթ:
Ծավալը՝ 39.5 տպ. մանուկ:
Տպաքանակը՝ 350 օրինակ:

ՏՊԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ 
www.printinfo.am

ՀՀ, Երևան, Ծարուփի 37/1
հեռ.՝ (374 10) 465 382, 465 385
Էլ. փոստ՝ info@printinfo.am